Universitäts- und Landesbibliothek Bonn

Warkh eu wkajabanouthiunkh srboç

hatęntir khałealkh i čaṛęntraç

1874

urn:nbn:de:hbz:5:1-9817

Visual Library

Bibl. Goussen ~~3045~~

Goussen 3045 (1)

533
534

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՆԱԽՆԵԱՑ

ՎԱՐՔ ԵՒ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆՔ ՍՐԲՈՑ

ՅԻՇԱՏԱԿ

ՄԱՂԱՔԵԱՆ

ՏՈՀՄԻՆ

ՎԱՐՔ

ԵՒ

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆՔ

ՍՐԲՈՅ

ՀԱՏԼՆՏԻՐ ՔԱՂԵԱԼՔ Ի ՀԱՌԼՆՏՐԱՅ

ՀԱՏՈՐ Ա.

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

ՅԱՄՍ - 1874 - ՌՅԻԳ

3045

EX BIBLIOTHECA DR. JO. GOUBBEN
BONNAE (BIBL. UNIV.)

ԶԵԿՈՒՅՈՒՄՆ

Զարմանալի և երկնահրաշ էր հանդէս աստուածախրախոյս սիրոյն և մրցանաց, զոր անդստին յառաջին ժամանակաց քրիստոսական կրօնիցս ուղղութեան՝ զինուորեալս երևեցուցանէր եկեղեցի, յառաջնորդն և 'ի հանդիսադիրն ակնկառոյց, 'ի միածին Որդին Աստուծոյ, և փոխանակ անպարտական և փրկագործ արեան նորա՝ զարիւն և զկեանս մտադիր յօժարութեամբ նուիրելով։

Ցիրաւի էր ապաքէն հաւատացելոց նախնի ժամանակացն՝ ոչ միայն ընդ առաքինակրօն հանդէս վրկայութեան նոցա սիրանալ, տօնս և յիշատակս 'ի պատիւ նոցա սահմանել, վկայարանս 'ի վերայ գերեզմանաց նոցա բարձրացուցանել, այլ և 'ի խրախոյս և 'ի յորդոր նմանութեան առ յապա եկեղոցն՝ դրոշմել տալ 'ի մատենի և զպատմութիւն աստուածահաճոյ վարուց նոցա և զփառաւոր նահատակութեան։ Եւ վկայեն եկեղեցապատում դպրութիւնք և յիշատակարանք, զի 'ի մոլեգնել շամբշութեամբ կայսերաց և բռնաւորաց՝ ոխերիմ թշնամեաց հաւատոցն Քրիստոսի և ճշմարտութեան աւետարանին, և 'ի կարծել՝ արեամբ վկայից շիջուցանել զսէրն զայն աստուածահրատ, յորժամ ատեանս և ժողովս կարգէին, հրամանս պատուիրանաց ընդ ամենայն աշխարհ առաքէին, զսաստ ընդ ողոքանաց խառնէին, զպատիւ և զփառս՝ ընդ տանջանաց և անարգութեան, որք աղնուականի ի մեն և երկնաւորաց ցանկա-

ցեալքն էին փառաց քրիստոնեայք, ոչ 'ի սպառնա-
լեաց նոցա ահաբեկեալք և ոչ յողոքանացն տկարա-
ցեալ, դիմէին խայտալով յասպարէզ անդր՝ քան
զգրգանս աշխարհավար կենաց՝ զմահն վասն Քրիս-
տոսի ընտրելով։ Անդ 'ի խռան բազմութեան հանդի-
սատեսացն՝ գոյին և վկայագիր նօտարք առ 'ի յե-
կեղեցւոյ կարգեալք, որոց գործ էր հաւատարիմ
զգուշութեամբ տալ 'ի քարտի զոր լսէին և տեսա-
նէին, զբանս և զհրապոյրս դատաւորաց, և զսրբոցն
առ նոսա պատասխանիս, զազգս ազգս տանջանաց և
զմահ վկայութեան, զորս յունկն հաւատացելոց ըն-
թերցեալ՝ ամփոփէին ապա 'ի դիւանս եկեղեցւոյ։
Այս սկիզբն եղև Մարտիրոսաց կոչեցեալ գրոց կամ
Վկայաբանութեանց, զոր երկիւղած զգուշութեամբ
պահպանեալ եկեղեցեացն արևելից և արևմտեայց՝
հասուցին մինչև առ մեզ։

Եւ զի նոյնպիսի կարգաւ բարեպաշտութեան պայ-
ծառացաւ և Հայաստան եկեղեցի, յորում աշխարհի
և բազումք ձգնեցան երկնից վկայական մահուամբ,
յայտ անտի է՝ զի եհաս մեզ ընթեռնուլ և զգեղե-
ցիկ վկայաբանութիւն սրբոյ առաքելոյն Թադէի, և
զվկայակցի նորա՝ զարքայադստերն Սանդըխտոյ, զար-
ձանագրեալն՝ որպէս հաւանութեան թուի, 'ի ժա-
մանակակցաց անտի նոցա։ Ապա և յայլոց ազգաց
սովորեցան յեղուլ 'ի մերս, և առաւել 'ի յունէն և
յասորւոյն, և մատուցանել տալ 'ի վայելս սրբասէր
բարեպաշտից։ Զորս ահաւասիկ հատընտիր քաղեալ
խնամով 'ի ճառընտիր մատենից, կամ եղև մեզ հրա-
տարակել տպագրութեամբ, և ակն ունիմք զի հա-
ճոյական ընծայեսցին՝ յիշատակարանքն պանծալիք,
յուշարարք յաղթանակացն հաւատոց, յանդիմանու-
թիւնք տխուր ժամանակացս մերոց, յորում օր ըստ
օրէ նուազեալ պակասեն հաւատք և թուլացեալ
տկարանան հրահանգք բարեպաշտութեան։

Եւ զի յայլեայլ ժամանակս և 'ի զանազանից լեալ են թարգմանութիւնքս, վասն որոյ և չկարեմք ինչ ստուգութեամբ ասել թէ երբ կամ յորոց փոխաբերեցան 'ի մերս. զի թէպէտ յոմանց և 'ի հնութենէ լեզուին մարթ է կարծել զոմանց թէ անդստին 'ի հինգերորդ դարէ թարգմանեցան, ապա և յԱտոմայ՝ Գագկայ վանիցն առաջնորդէ, այլ շատք 'ի Գրիգորէ կաթողիկոսէ Պահլաւունւոյ՝ որ Վկայասէրն կոչեցաւ, և յաշակերտէ նորա 'ի Կիրակոսէ։ Վասն որոյ և զանուանս նոցա, մանաւանդ զԳրիգորոյ, կրեն ոմանք 'ի յիշատակարանս։ Զի և ինքն իսկ Վկայասէր ասէ ուրեք յինքնագիր յիշատակարանին, թէ «(Զսրբոց) զվարս քաղաքավարական պատմութեանց՝ զոր ոչ գոյր առ մեզ հայ գրով, մեծ աշխատութեամբ թարգմանեցաք 'ի յունականէն 'ի մերս գիր և բառ»։

Մարթ, նա և արժան էր, յաւելուլ 'ի գիրս յայս և ծանօթութիւնս բազումն և քննութիւնս կարեւորս. այլ մեք զանհրաժեշտսն ևեթ ամփոփեցաք 'ի ստորեւս ինչքն տեղեկութիւնս համառօտս, զի մի յոյժ ծանրասցի մատեանս. և զի արդէն յառաջեալ կանխեալ էր 'ի սոյն վաստակ՝ բարւոյ յիշատակաց արժանաւոր՝ Հ. Մկրտիչ Վ. Աւգերեան, ուր և առաքեմք զցանկացողսն, 'ի յօրինեալն առ 'ի նմանէ Վիակատար վարս և վկայաբանութիւնս Սրբոց։

Իբրև յերեսուն ձառընտրաց հաւաքեցաք զամփոփեալսն 'ի մատենիս։ Թէպէտ և բազումք 'ի գրչագրաց աստի հինք էին և ընտիրք, այլ որիշ և այլեւայլս 'ի միմեանց ունելով ձառս և վկայաբանութիւնս, յաձախ 'ի վերայ միոյ եւեթ օրինակի ստիպեցաք առնել զտոպագիրս, յորմէ ուրեք մթին կամ անիմանալի մնալ բանիցն։

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆՔ ՍՐԲՈՅ

Վկայաբանութիւն Սրբոյն Աբդայի Եպիսկոպոսի և Որմզդանայ և Սահիի և Բեհիրամիի Սարկաւագի։

Ի ժամանակս Թագաւորութեան Հռոմոյ Թէոդոսի Փոքրու, և 'ի բռնակալութեան ամպարիշտ արքային Պարսից Յազկերտի, շարժեաց սատանայ պատերազմ 'ի ձեռն անօրէն Թագաւորին՝ 'ի վերայ եկեղեցւոյն Աստուծոյ։ Եւ լուաւ Աբդայ եպիսկոպոսն Պարսից, և շարժեցաւ աստուածային նախանձուն, և հրով վառեաց զպիւռիոնն (1) Պարսից, զոր տաճար հրոյ անուանէին, յորում զՀուրն բորբոքէին հրապաշտքն։ Եւ զայն լուեալ մոգուցն Պարսից՝ պատմեցին արքային. և նորա կոչեցեալ զսուրբ եպիսկոպոսն, և նախ հանդարտութեամբ մեղադիր նմա վասն գործոյն այնորիկ լինէր. և ապա հրամայէր նմա միւսանգամ շինել զպիւռիոնն զոր այրեաց։ Իսկ սուրբ եպիսկոպոսն հակառակաբանէր առաջի արքայի և ասէր, թէ՝ Անհնար է դարձեալ վերստին շինել զնա ինձ, զոր այրեցի, զմնոտի տեղի մոխրապաշտից, և մանաւանդ թէ անաստուածից։

Եւ 'ի նմին ժամու առաջի Թագաւորին սպանին զսուրբ եպիսկոպոսն Աբդայ, և զամենայն եկեղեցիսն աւերեցին, և զամն երեսուն զմրրիկ հալածականացն 'ի քրիստոնէից ոչ վերացոյց։ Եւ հրամայեաց մոգուցն զբարեպաշտութեան դաւանողսն ըմբռնել, և հատանել

(1) Ի Յունէն Πυρεῖον որ է Աւորուշան։

զոմանց զձեռս և զոտս, և զոմանց զականջս և զունչս, և զոմանց զերկոսին աչսն խաւարեցուցանել. և զոմանց իսկ զվկայիցն սրբոց, 'ի գլխոյն մինչև 'ի լանջսն մորթել. և զոմանս եղեգամբք ձեղքեալ զմարմինսն՝ քանցէին. և զոմանց զձեռս և զոտս կապէին և ձարպով օծանէին, և ընկենուին 'ի խորափիտս գբոց, և արկանէին անդ մկունս բազումս և աքիսս, և զգուշանային խորութեան գբին, զի մի կարասցեն կայտառքն փախչել. և 'ի քաղցոյն զկծեալք կրծէին զմարմինս սրբոցն։ Եւ զայս առնելով անօրինացն՝ ոչ կարացին երկեցուցանել զերանելի վկայսն Քրիստոսի. այլ մանաւանդ յորժամ տեսանէին զայնպիսի խստամբերութիւն տանջանաց՝ ինքնակամ յօժարութեամբ, և փափաքմամբ մեծաւ ընթանային 'ի մահ, և գոհանալով զԱստուծոյ՝ կատարէին զընթացս իւրեանց։

Եւ ոմն մի 'ի մեծամեծ իշխանացն Պարսից, մեծատուն յոյժ և քրիստոնեայ հաւատով, որումանուն էր Որմզդան, զնմանէ լուաւ արքայ՝ եթէ քրիստոնեայ է. կոչեաց զնա զառաջեաւ, և պատուիրեաց նմա, զի մի անուանեսցէ զինքն քրիստոնեայ, այլ զի ուրասցի զՔրիստոս։ Եւ ասէ Որմզդան ցարքայ. Ո՛վ արքայ, եթէ ոք 'ի քո ծառայիցդ ուրասցի զքեզ՝ որ մահկանացուդ ես, և ապստամբեալ առ այլազգի թագաւոր երթիցէ, մեծաց տանջանաց և մահու արժանի է, ոչչափ ևս առաւել մանաւանդ պատուհասից արժանի է՝ որ զԱստուածն երկնից և երկրի ուրանայցէ, զանմահ թագաւորն յաւիտենական, անշէջ հրոյն մատնեսցի։

Զայս լուեալ արքայի ընկէց զնա 'ի պատուոյ իշխանութեան, և արտաքերժեաց զնա 'ի տանէ և 'ի ստացուածոց իւրոց. և հրամայեաց մերկացուցանել զնա 'ի պատմուճանաց իւրոց, զի արածեսցէ զուղտերամանկն։ Եւ յետ աւուրց բազմաց ետես զնա թագաւորն մերկ և աշխատեալ զկնի ուղտուցն, և առաքեաց նմա շապիկս, և ասէ. Ցիշեա՛ զքո զառաջին աղնուականութեան մեծութիւն և զփափկութիւն, և զքաղցր կեանքն, և ուրացիր զքրիստոնէութիւնդ, և հաւատա՛ պաշտամանց մերոց։ Եւ նորա լուեալ զմահաշունչ բանս թագաւորին, և առեալ զշապիկն պատառեաց բազում ծուէնս։ Իսկ արքայի բարկացեալ սրտմտութեամբ 'ի

վերայ նորա, հրամայեաց 'ի տեղւոջն սպանանել զնա. և կատարեցաւ 'ի նմին ժամու սրով վասն 'ի Քրիստոս հաւատոցն։

Եւ զոմն մի այլ 'ի մեծատուն իշխանացն Պարսից քրիստոնեայ, որ ունէր ծառայս հազար, որոյ անուն էր Սաին, զոր բազում անգամ ջանաց արքայն 'ի քրիստոսական հաւատոցն 'ի մոգութիւն դարձուցանել. և յորժամ ոչ կարաց ածել 'ի հաւանութիւն՝ զատոյց 'ի հազար ծառայիցն, և զմինն՝ որ քան զամենեսեան անարգ էր և անպիտան և աղտեղի և գարշատեսիլ դիմաք՝ մեծացոյց, և ետ նմա զտէրն իւր 'ի ծառայ, և զտիկինն 'ի կնութիւն նմա. և հրամայեաց նոցա ծառայել նմա հնազանդութեամբ. և այն ամենայն նեղութիւնք արհամարհանաց եկին 'ի վերայ նորա, և ոչ եկաց 'ի բաց 'ի յուսոյն Քրիստոսի։ Կալան և զոմն 'ի սարկաւագաց եկեղեցւոյն՝ որում անուն էր Բենիամին, և արկին 'ի բանդ զերկուս ամս։

Եւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ առաքեցան դեսպանք 'ի Թագաւորէն Հոռոմոց 'ի Թէոդոսէ 'ի Պարսս։ Եւ լուան զսարկաւագէն զԲենիամինէ, եթէ վասն Քրիստոսի արգելեալ կայ 'ի բանդի, խնդրեցին Յազկերտէ արքայէն հանել զնա 'ի բանդէն։ Եւ ասէ արքայն. Վստահացուսցէ զմեզ ձեռնագրով իւրով, զի 'ի Պարսից մոգ մի դարձուսցէ 'ի հաւատս իւր. և ոչ վարդապետութեամբն իւրով ուսուսցէ զոք յերկրիս մերում, և ապա վասն խնդրոյ ձերոյ ազատեցից զնա 'ի կապանացն։ Եւ լուեալ զայս Բենիամին, ոչ առ յանձն առնել զհրամանս արքային, ասելով. Անհնար է ինձ արգելուլ զշնորհն Աստուծոյ իմոյ 'ի մարդկանէ. այլ որչափ կարող իցեմ՝ լուսաւորեմ զխաւարեալսն 'ի մոլորութենէ, զի մի պատիժս կրեցից ընդ Թաքուցանողին զտաղանդ տեառն իւրոյ։ Եւ արքայն Պարսից վասն աղերսանաց և խնդրոյ դեսպանացն կայսերն Հոռոմոց Թէոդոսի՝ ազատեաց զերանելի խոստովանողն Քրիստոսի զսարկաւագն Բենիամին։ Իսկ նորա ելեալ ոչ դադարէր յուսուցանելոյ և 'ի մկրտելոյ զկրակին պաշտօնեայսն և զմոգսն Պարսից։ Եւ յետ ամի միոյ անցանելոյ, յորժամ դարձան դեսպանքն Հոռոմոց, աղաղեցին վասն նորա արքային Յազկերտի զոր առնէր, և

հրամայեաց բերել զնա. և կալեալ տարան զառաջեաւ, և ստիպէին զնա ուրանալ 'ի հաւատոցն, և երկիր պա-գանել արեգական և կրակի։ Եւ նա աստուածիմաստ բանիւք յանդիմանէր զանհաւատութիւն նոցա և ա-սէր. Աստուածք՝ որ զերկինս և զերկիր ոչ արարին՝ կորիցեն 'ի ներքոյ երկնից։ Եւ զտարերս աստուած ոչ խոստովանիմ, և ոչ մոխրոյ և հրոյ զոհ մատուցանեմ։ զոր ինչ կամիս՝ արա՛ վաղվաղակի։

Յայնժամ հրամայեաց անօրէն արքայն Յազկերտ, ընդ քսանեսին եղնգունս ձեռացն և ոտիցն սրեալ եղեգունս վարել. իսկ արիւնն իբրև գյորդաբուխ ա-ռու հոսէր 'ի ձեռացն և յոտիցն և ոռոգանէր զեր-կիրն։ Եւ դարձեալ սրեցին երկայնագոյն եղեգն, և արկին 'ի յարութիւն ներքին անդամոցն. և ստէպ հանէին և արկանէին. և յայնչափ դառն և չարակրս-կիծ կտտանացն՝ ոչ զանգիտեալ զարհուրեցաւ. այլ փառաւորէր զԱստուած և գոհանայր, և 'ի գոհանա-լոյ և յաղօթելոյ ոչ դադարէր։ Եւ աղաչեաց զդա-հիճսն փոքր ինչ թուլացուցանել զտանջանսն, և ասէ. Ներեցէք վայր մի, զի ունիմ ինչ խօսել ընդ ձեզ. և նոքա թոյլ ետուն նմա։ Իսկ նա ամբարձեալ զձեռս իւր յերկինս ընդ արևելս և սկսաւ աղօթել և ասել այս-պէս. Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Տէրդ և արարիչդ ամենայն արարածոց, որ առաքեցեր զմիածին Որդիդ քո, զՃառագայթդ և զնկարագիր էութեան քո, որ կրէ զամենայն բանիւ զօրութեամբ իւրով, որ եկն և էջ յարգանդ Կուսին կամաւ քո, և մարմին զգեցաւ Ճշմարտապէս և առանց կարծեաց, որ 'ի յեր-կրի երևեցաւ և ընդ մարդկան շրջեցաւ, և Ճանապար-հորդեաց ընդ ամենայն մարմնական կիրս կենցաղոյս, և խաչի և մահու համբերեաց. թաղեցաւ և յարեաւ յաւուր երրորդի, և համբարձաւ առ քեզ, Հայր, յեր-կինս, ուր էրդ յառաջ. և զսուրբ զՀոգին զեակիցն և զմշտնջենաւորակիցն առաքեաց յաշխարհ, որով ծա-նոյց զաստուածութիւն քո։ Աղաչեմ զքեզ, Տէր իմ և Աստուած, տուր ինձ զպսակն՝ զոր խնդրեցի, զի դու ինքնին գիտես, զի ես ինձէն խնդրեցի. զի ամենայն մտօք և ոգւովք և կենօք սիրեցի զքեզ, զի տեսից զքեզ և ուրախ եղէց և հանգեայց. և այլ մի՛ ևս կացից յաշ

խարհի, և տեսանիցեմ զչարչարանս ժողովրդեանն, և զաւերն եկեղեցեաց քոց, զկործանումն սեղանոյն, և զնեղութիւն սրբոյ ուխտին, զվհատութիւն հաւատացելոցն, զզանգիտանս դարձելոցն 'ի Ճշմարտութենէն. այլ յոր կոչեցայս՝ 'ի սմին հաստատուն կացցից, և յոր հրաւիրեցայն՝ զնոյն և կատարեցից արդեամբք։ Եւ եղէց օրինակ ամենայն ժողովրդեան քում՝ որ յարևելս, և տայց զարիւն իմ առաջի նոցա, և առիցս ընդ նոսա զկեանս իմ, ուր ոչ հոգն է և ոչ ծուփք, ոչ տրտմութիւն և ոչ յոյզք խորհրդոց, ոչ սպառնալիք և ոչ ահք թագաւորաց. ոչ որ կոչէ և երկեցուցանէ, և ոչ որ տագնապէ, և զարհուրեցուցանէ։ Լուծութիւն ոտիցս քեւ զօրասցի, Ճանապարհդ ամենայն. վաստակք անդամոցս քև հանգիցէ, օծեալդ. վիշտք սրտիս քև մոռասցին, բաժակ փրկութեան մերոյ. վտակք արտասուաց աչացս քև արգելցին, միխիթարութիւն ցնծութեան մերոյ։

Եւ իբրև ասաց զայս, և մինչդեռ կամէր յերկարել զաղօթսն, վաղվաղակի եկ հրաման յարքայէ ներել նմա եթէ երկիր պագանիցէ արեգական և կրակի, ապա թէ ոչ՝ մի թողացուցանել նմա զտանջանսն, և այնու տանջել զնա ընդ երկար։ Եւ հարցեալ թէ զո՞հիցէ, և նորա ոչ հաւանեալ և ոչ համարեալ զտանջանսն, հրամայեաց արքայն երկայն գաւազան ցցել երկասայր սլաքով, և հարկանել ընդ որովայն նորա։ Եւ այնպէս անպարտելի զօրականն Քրիստոսի աւանդեաց զՀոգին 'ի ձեռս հրեշտակաց, 'ի մարտի ամսոյ 'ի քսան և չորս. փառաւորելով զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Աբդլմսեհի։

Սկիզբն արասցուք նահատակութեան սրբոյն Աբդլմսեհի, որ Թարգմանի Ծառայ Քրիստոսի. նոյնպէս և յաղագս աքանչելի զօրութեանցն և բժշկութեանցն՝ զոր առնէր Աստուած յանուն նորա՝ ամենեցուն որ ապաւինէին 'ի նա։ Քանզի արդարև աքանչելի է Աստուած 'ի սուրբս իւր, և փառաւորեալ է մահ նոցա՝ առաջի նորա. և աղօթիւ նոցա լսէ հանապազ, և փրկէ զժողովուրդ իւր 'ի ձեռն բարեխօսութեան նոցա, և նահատակութեամբ նոցա յամօթ առնէ զբանական դիւաց, և զխորամանկութիւն վիշապին խորտակեալ խափանէ, որ մարտնչին ընդ սուրբս իւր։ Նոքա արմատ կենաց են, և տան առողջութիւն ախտացելոց, ըստ անսուտ բանին Տեառն, թէ՝ Որ հաւատայ յիս՝ զգործսն զոր ես գործեմ և նա գործեսցէ։ Եւ այժմ ընդ ամենայն տիեզերս են յիշատակք նոցա, և երանելիք են 'ի կեանս իւրեանց, և 'ի մահու նոցա փառաւորի անուն Տեառն, և եկեղեցիք սրբոց նոքօք պայծառանան, և զարդարեն զմանկունս իւրեանց պսակաւն Քրիստոսիւ։ Նոքա են ակունք պատուական բանաւոր, փայլեալ առաւել քան զլուսաւորս, 'ի Թագ երկնաւոր Թագաւորին Քրիստոսի անմահ արքային։ Զոր և աղաչեմք աղօթիւք նոցա օգնել մեզ յամենայն նեղութիւնս մեր, և փրկել զմեզ յամենայն փորձութենէ։ Աստանօր սկիզբն արասցուք պատմութեան սրբոյն Աբդլմսեհի, որ Թարգմանի Ծառայ Քրիստոսի։

Յամին չորրորդի առաջներորդի (1) Թուականին Հայոց, մինչև իսպառ նուազեալ էր մոգութիւն իշխանութեան Պարսից, և Հրեայքն համարձակագոյն էին 'ի Շիգարացւոց աշխարհին. այր ոմն էր Հրեայ 'ի Շիգար քաղաքէ մեծատուն յոյժ, որոյ ստացուածք բազում էին, և անուն Ճանաչիւր առնն՝ Ղևի. նախագլուխ էր Հրէիցն 'ի ժամանակին յայնմիկ. նորա էին որդիք բազումք, և առաքէր զմի 'ի նոցանէ արածել զխաշինս իւր։ Եւ զի 'ի նոցանէ էր կրտսերագոյն ամաց մետասանից, որոյ անուն էր Աբեր. սա արածէր զհոյլս եզանց հօր իւր, և ածէր արբուցանել ջուր, ուր ամենայն հովիւքն գային պատրաստել զարբումն խաշանցն իւրեանց. և բազում հասակակիցք նորա գային և ժողովէին յայն տեղին. ոմանք 'ի նոցանէ էին 'ի զաւակաց քրիստոնէից, և ոմանք ի մոգուց։ Եւ մինչ բազում տուարածականք ժողովէին յայն տեղւոջ ուտել հաց, որոշ 'ի նոցանէ առանձինն նստէին քրիստոնեայք, և սակաւիկ մի հեռագոյն 'ի նոցանէ որդիք մոգուցն. և Աբեր մնայր 'ի նոցանէ միայն, զի ոչ գոյր հրեայ ընկեր նորին։ Եւ ցանկայր ուտել ընդ մանկանցն քրիստոնէիցն. և նոքա զարշ համարէին յաղագս հրէութեան. և էր սիրեցեալ 'ի քրիստոնէիցն։ Եւ խնդրէին հնարս, եթէ զիա՞րդ կարասցեն մերձեցուցանել զնա առ իւրեանս, և զոր հանապազ պատմէին նմա վասն Քրիստոսի հաւատոյն, և զՀգնութիւն սրբոց մարտիրոսացն, զոր լուեալ էին 'ի ծնողացն իւրեանց։ Յետ այսորիկ ժողովեալ էին ըստ սովորութեան իւրեանց 'ի մեծաւոր տեղիս ուտել հաց. և յարուցեալ Աբեր՝ փութապէս ընթացաւ առ նոսա, և ասէ. Ո՞վ եղբարք իմ սիրելիք, պատմեցէք, եթէ զի՞նչ է հնար մերձենալ ինձ առ ձեզ, և ուտել կերակուր, և ոչ լինիմ գարշելի յաչս ձեր։ Պատասխանի եառուն միաբան մանկունքն և ասեն. Եթէ հաւատաս բոլորով սրտիւ քով, և մկրտիս յանուն Յիսուսի Քրիստոսի՝ առ ժամայն խառնիս 'ի գունդս մեր, և մերձենաս առ

(1) Յայտնի վրիպակ գրչի է 'ի Թուականդ. Թերևս չափոթեալ ՂԱ ընդ ԴԻ. որով լինի ՂԱ կամ 91 Թուական Հայոց որ է 642 ամ Փրկչին, արդարև ժամանակ նուազելոյ իշխանութեան Պարսից։

մեզ անյապաղ, և 'ի կերակուրս մեր և յըմպելիս և յամենայն ինչ, զի չէ պարտ քրիստոնէից ընդ հրեայս ուտել և ըմպել։ Պատասխանի ետ Աստեր և ասէր. Ահա ջուր, զինչ արգելու զիս 'ի մկրտելոյ։ Աստեն մանկունքն. Ոչ այդպէս, այլ պարտ է յեկեղեցւոջն 'ի ձեռն քահանային մկրտել։ Աստեր ասէ. Այժմ մինչ եկեղեցի հեռագոյն է և քահանայ ոչ գոյ ընդ մեզ, և ես յաղագս երկիւղի հօրն և եղբարց իմոց՝ յայտնապէս ոչ կարեմ մկրտել, և ահա զրկեալ լինիմ 'ի միաբանութենէդ ձերմէ, և լինիցին խորհուրդք իմ ունայն. եթէ արդարև Աշմարիտ է Աստուածն ձեր Քրիստոս, և հոգի խոնարհ ընդունելի է առաջի նորա, առաւել քան զողջակէզս, որպէս ուսուցանէք զիս, ընդունի զպատարագ խորհրդոց իմոց, և ոչ անտես առնէ զյօժարութիւն կամաց իմոց, և կատարէ զիս 'ի ձեռն ձեր մկրտել. արդ մի՛ յապաղէք, այլ յարուցեալ մեծաւ զօրութեամբ և յուսով Քրիստոսի, մկրտեցէք զիս յանուն նորա, և նա կատարեսցէ զամենայն։ Յայնժամ իբրև տեսին մանկունքն զյօժարութիւն նորա և կատարեալ հաւատն՝ որ 'ի Քրիստոս, մերկացին զհանդերձսն որ զնովաւ, և իջուցեալ զնա 'ի ջուրն, և միաբան ասէին այսպէս. Մկրտի ծառայս Քրիստոսի յանուն Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն. և յաղօթելն իւրեանց՝ ասէին 'ի ժամ մկրտութեանն. Դու Քրիստոս Աստուած, հաստատեա՛ զօրհնութիւնսն ամենայն՝ զոր ասեն քահանայքն 'ի ժամ լուսաւոր մկրտութեանն, և ընկալ զսա կատարեալ մկրտութեամբ ընդ ամենայն հաւատացեալս 'ի քեզ։ Եւ երիցս ընկղմեցուցին զնա 'ի ջուրն, ըստ որում յառաջագոյն տեսեալ և ուսեալ էին։

Իսկ յորժամ հանին զնա 'ի ջրոյն, մատուցեալք մի մի առ նա համբուրէին զնա, և վերամբարձեալ զնա 'ի գիրկս իւրեանց պատուէին մեծաւ պատուով, նա և 'ի հանդերձից իւրեանց նորոց զգեցուցանէին զնա. և նստան մեծաւ ուրախութեամբ ուտել կերակուր հանդերձ նովաւ. և պատուէին զնա որպէս փեսայ յառաջագոյնս։ և պայծառացան երեսք նորա և լուսաւորեալ Ճառագայթք հատանէին 'ի նմանէ, քանզի ընկալաւ զշնորհս Հոգւոյն սրբոյ, 'ի ձեռն բանից մանկանցն. և

կոչեցին նմա անուն Աբդլմսեհ, որ թարգմանի Ծառայ Քրիստոսի։ Իսկ ժողովք հովուացն և որդիք մոգուցն, աքանչացեալ զարմանային ընդ հրաշալի գործն՝ որ 'ի ձեռն մանկանցն կատարեցաւ. քանզի հոտ անուշ բուրեաց նոցա, և ասեն. Մեծ է խորհուրդս այս քրիստոնէից։ Եւ մինչդեռ նստէին մանկունքն ցնծութեամբ, պատուէր տային ծառային Քրիստոսի զգուշութեամբ պահել զաւանդն զոր առ'ի Տեառնէ, և մի՛ խառնել ընդ Հրեայսն, և մի՛'ի կերակուրս նոցա։ Եւ նորա հաւանեալ մեծամեծս խոստանայր առնել զասացեալսն'ի նոցանէ ջերմեռանդն սրտիւ՝ յանուն Քրիստոսի։

Մի ոմն 'ի նոցանէ ունէր գինդ ոսկի յականջս իւր։ Նա ասէ ցընկերսն իւր. Արդ մինչ զայսպիսի գործս հաւատոյ համարձակեցաք առնել, պարտ է մեզ առանց երկիւղի հաստատուն կալ։ Ահա գիտեմք զի Հրեայք ոչ ծակեն զունկն արուի 'ի յինքեանց, արդ եկայք հատցուք զդառնալ դորա 'ի հրէութիւն, ծակեսցուք զունկն սորա և արկցուք 'ի նեղքս զգինդս ոսկի. և հաճոյ թուեցաւ մանկանցն։ Ասեն ցնա. Բարւոք է զոր խօսեցար, այդպէս արժան է առնել. և ծակեցին զաջոյ ունկն նորա և արկին զգինդն ոսկի. և յաբեան ըստ սովորութեան արածել զհօտս իւրեանց. և ասէին ընդ միտս իւրեանց եթէ զի՞արդ հանդիպի ծնողացն, և կամ ո՞րպէս ընդունիցին զնա՝ յորժամ տեսանեն զգինդն։

Ցայնժամ ծառայն Քրիստոսի ընդ մտանել արևուն գայ 'ի տուն մօր իւրոյ հանդերձ խաչամբքն. և 'ի մտանել նորա ի տունն՝ ետես զնա մայր իւր, և ամբարձեալ զձայն իւր հառաչմամբ, և ասէ. Որդեակ իմ, Ասեր, զի՞ եղև քեզ. զի՞նչ է այդ յականջս քո. կամ ո՞վ խաբեաց զքեզ, և ածեր 'ի վերայ տան հօր քո զայսպիսի չարիս մեծամեծս. ո՞չ ապաքէն լուեալ էիր յօրինացն՝ զոր Մովսէս պատուիրեաց, թէ մի՛ ծակեսցի ունկն արուի յԽորայելէ, բայց որ կամիցի ծառայ բնակել ընդ տեառն իւրում յաւիտեան. արդ եթէ գիտացէ հայր քո՝ նա ինքն լինի վրէժխնդիր օրինացն 'ի քէն, և թէ զի՞նչ արարիս զքեզ՝ ո՛չ գիտեմ, զի անծածկելի է նշանդ՝ յականջս քո։ Ցայնժամ խօսել սկսաւ սուրբն ցմայր

իւր քաղցրութեամբ, և ասէ. Մի՛ երկնչիր, մայր իմ, և մի՛ ստիպեսցեն զքեզ խորհուրդք քո վասն այսորիկ, քանզի ես այժմ քրիստոնեայ եմ և ծառայ Քրիստոսի. և յաւիտեան պաշտեմ զնա, և նա է իմ Տէր և Աստուած. օրէնքն Մովսէսի ոչ պատժեն զծառայս՝ որք սիրեն զտէրս իւրեանց. այլ և որ հրամայեաց զունկն առ դրան գաւթին ծակել, զի ծառայեսցէ տեառն իւրում յաւիտեան, սոյնպէս և ինձ պատահեաց յայսմ աւուր, առ դրան մկրտութեան ծակեցաւ ունկն իմ. և հաստատեցաւ ուխտ իմ ընդ նմա յաւիտեան։ Ասէ ցնա մայրն իւր. Զիա՞րդ եղեր այդպէս վաղվաղակի քրիստոնեայ, և կամ՞ով արար զքեզ ծառայ Քրիստոսի, և կամ՞ով ուսոյց քեզ զայդպիսի բանսդ՝ զոր խօսիսդ. Սուրբն ասէ. Որ ասաց ցաշակերտսն իւր, թէ՝ Որ հաւատայ յիս մի՛ ամաչեսցէ յաւիտեան, և դարձեալ ասէ. թէ՝ Յորժամ տանիցին զձեզ առաջի դատաւորաց, մի՛ հոգայցէք զի՞նչ խօսիցիք. զի ես տայց ձեզ՝ի ժամուն յայնմիկ բան, որ ոչ կարեն կալ հակառակ թշնամիքն ձեր. նա է որ ուսոյցն զիս, և խոստացաւ այլ ևս բազումն ուսուցանել։ Եւ պատմեաց մօրն իւրում զամենայն զոր լուեալ էր՝ի մանկանցն, և թէ զի՞արդ մկրտեցին զնա ջրով, և կամ զի՞արդ վերացաւ՝ի նմանէ աղտեղութիւն նեխութեան, և բուրեաց հոտ անուշութեան՝ի Քրիստոս։ Իսկ մայրն նորա խնամութեամբ լսէր զասացեալսն՝ի նմանէ, և՝ի միտ առեալ զքանչանայր ընդ տեսիլ գեղոյ նորա, և թագուցանէր զնա՝ի տան իւրում աւուրս երեսուն, և խանդաղատէր զնովաւ, և լինէր յերկիւղի թէ մի՛ գուցէ արդեօք գիտասցէ հայր նորա, և բարկացեալ սպանցէ զնա յաղագս նախատանաց ազգին իւրոյ և երկիւղի Հրէիցն։ Իսկ սուրբն օր ըստ օրէ կանխեալ ընդ առաւօտն երթայր՝ի դաշտն արածել զխաշինս իւր ընդ նոսա, և ուսանէր յընկերացն իւրոց հաստատուն կալ՝ի հաւատսն որ՝ի Քրիստոս։ Եւ ընդ մութն երեկոյին դառնայր առ մայր իւր. և հայր նորա քանզի զբաղեալ էր զհոգովք աշխարհականօք տան իւրոյ, ոչ առնէր փոյթ վասն որդւոյն իւրոյ զաւուրսն զայնոսիկ։

Ոմանք՝ի հարց մանկանցն այնոցիկ, որք առիթ եղեն փրկութեան նորա՝ պատահեցին՝ի վանս ուրեմն որ էր

'ի վերին Շիգարայ, 'ի տան սրբոյն Պողոսի (1), և երից մանկանցն որ ընդ նմա վկայեցին. և լուան զպատմութիւն սրբոյն այնոցիկ, և եկեալ պատմեցին 'ի տունս իւրեանց առ իրեարս զնահատակութիւն սրբոյն, և օրհնէին զԱստուած. և մանկանցն լուեալ զայն 'ի հարցն իւրեանց՝ խօսէին առ միմեանս 'ի տեղւոջն ուր սովոր էին ժողովել 'ի միասին։ Եւ սուրբն իբր լսէր զայն՝ առաւել ևս հաստատէր 'ի հաւատսն, և էր բորբոքեալ 'ի սէրն Աստուծոյ. զի ծագեալ էր 'ի նա լոյսն Քրիստոսի, և 'ի միտ առեալ զՀգնութիւն սրբոյ՝ աղօթէր սրբութեամբ արժանի լինել պսակաց սրբոյն այնոցիկ։

Եւ 'ի միում գիշերի մինչդեռ ննջէր 'ի տան մօր իւրոյ, տեսանէր զինքն որպէս թէ լինել 'ի գբի խաւարի, և չարչարեալ տանջէր ընդ ժողովրդեանն Դադանայ և Աբիրոնի։ Եւ մինչէր հառաչանօք և լայր դառնապէս 'ի ներքս 'ի խաւարն, ուր ըմբռնեալն էր. ածէր զմտաւ զասացեալսն 'ի մանկանցն, և զլոյսն Քրիստոսի։ Եւ մինչդեռ տագնապէր 'ի տանջանսն, և խորհէր 'ի միտս իւր թէ զի՞նչ լինիցի, յանկարծակի երևեցաւ երիտասարդ մի լուսաւոր կերպարանօք, և իշխանաբար բախեաց զխաւարային գուբն, և կալեալ զաջոյ մանկանն հանէր 'ի գբոյն. և կացոյց զնա 'ի մէջ մանկանցն՝ որ շուրջ էին զնովաւ, և ամբարձեալ զձայնս իւրեանց օրհնէին զԱստուած։ Եւ եղեալ 'ի միտս իւր՝ ասէ. Ո՞վ ես Տէր. որպէս վերակացու եղեր ինձ 'ի նեղութեանս և փրկեցեր զիս։ Ասէ երիտասարդն. Ես եմ Քրիստոսն յոր յուսացարդ դու յիս, և կարդացեր զանուն իմ։ արդ զօրացիր և մի երկնչիր, զի օթևանք պատրաստեալ են քեզ ընդ մանկանցս այսոցիկ, և կան և պահին քեզ պսակքն անապականք և յաւիտենականք։ Եւ յետ փոքր մի աւուրց ընկալայց զքեզ առ իս, յորմէ հետէ զգեցար զիս՝ 'ի ձեռն մանկանցս այսոցիկ, և հաստատեցից զերեսս իմ 'ի վերայ քո՝ առնել զքեզ ժառանգորդ արքայութեան իմոյ։ Յայնժամ սուրբն ըմբռնեալ երկիւղիւ, անկեալ 'ի վերայ երեսաց իւրոց փառաւորէր զԱստուած, և ասէր. Գոհանամ զքէն Քրիստոս Տէր

(1) Ի նմանօրինակ վկայաբանութեան՝ Սրբոյ Վկային Պաւլայի։

իմ և Աստուած իմ, որ փրկեցեր զիս 'ի խաւարային կապարանէն, և 'ի չարաչար տանջանացն, աղաչեմ զքեզ, Տէր իմ, պատմեա լինձ զայնցանէ՝ որք տանջէին ընդ իս թէ ո՛վ իցեն. զի ահա ընդ ելանելն իմում 'ի գբոյն՝ դարձեալ կափոյց խորխորատն զբերան իւր անդրէն 'ի վերայ նոցա։ Այսպէս ցնա Քրիստոս. Նոքա են այնոքիկ՝ որք խաչեցին զիս, ազգ տան հօր քո։ Սուրբն ասէ. Տէր Յիսուս, մի՛ հեռի առներ զիս յողորմութենէ քումմէ, այլ հաստատեա՛ զիս առնել զկամս քո, լինել քարոզ ճշմարտութեան քում։ զի տեսից և յագեցայց լուսով աստուածութեան քո յերևել փառաց քոց։ Եւ մինչ զայս ամենայն սուրբն խօսէր, զարթեաւ մայր նորա 'ի բարբառ բանից նորա. զարթոյց զորդին իւր և ասէ. Ո՞ւր է քեզ որդեակ իմ, և կամ զի՞նչ են բանքդ, զոր իբրև ընդ սիրելւոյ խօսիս։ Պատասխանի ետ սուրբն գոհութեամբ, և ասէ ցմայր իւր. Քրիստոս է յոր հաւատացի և մկրտեցայ յանուն նորա, և Եհան զիս 'ի գբոյ խաւարին, և յանդնդոց դժոխոց, և 'ի տանէ կապանաց. նա էր որ խօսէրն ցիս. Այսպէս ցնա մայրն իւր. Ո՞ւր է նմանութիւն նորա. Սուրբն ասէ. Երիտասարդ գեղեցիկ տեսլեամբ, զոր ոչ բաւեմ պատմել, և փայլատակունք հատանէին յերեսաց նորա. և ձորձ իւր պատառեալ, և կողն խոցեալ և ձեռք և ոտք իւր ծակեալ բեւեռօք, և գիր 'ի վերայ նորա, թէ՝ Սա է Քրիստոս Յիսուս՝ զոր Հրեայքն խաչեցին յԵրուսաղէմ։ որ յանձն առ զայնցանսն Ադամայ. և սա է գառնն Աստուծոյ՝ որ բառնայ զմեղս աշխարհի. և ինքն է օրէնսդիր, և ժողովարան սրբոց, և պսակիչ նահատակաց։ Եւ տեսի ես զհասակակիցս իմ շուրջ զինև, որք օրհնէին զնա և ասէին. Ո՛վ Տէր, փրկեա՛, ո՛վ Տէր, առաջնորդեա՛. օրհնեալ որ գասդ յանուն Տեառն, ովսաննայ 'ի բարձունս, օրհնութիւն որդւոյ Դաւթի։ Եւ մինչդեռ նոքա զանազան պսակօք փայլէին, ոմանք 'ի նոցանէ ունէին 'ի ձեռս իւրեանց ոստս ալմաւենեաց, և այլք 'ի նոցանէ ոսկի բաժակաւ մատուցանէին զարիւնս իւրեանց, առաջի երկնաւոր Թագաւորին ցրնծալից ուրախութեամբ, և ասէին. Սա է Աստուած մեր՝ յոր յուսացեալն էաք, ցնծասցուք և ուրախ լիցուք 'ի փրկութեան սորա։ Այնպէս և ես, մայր իմ, ցանկացայ

դասակից լինել լուսոյ մանկանց առագաստին, և ընդ նոսա երգել զերգս օրհնութեան, և ոչ տային ինձ առ ժամայն մերձենալ 'ի նոսա։ Եւ արդ խառնիլ 'ի նոսա կարօտի անձն իմ։ և երանի թէ մնացեալ էի 'ի տեսլեանն ուրախանալ 'ի մէջ սրբոցն այնոցիկ. առաւել քան զարթնութիւն՝ լաւագոյն էր քունն այն։ Զի եթէ 'ի տեսլեանն այնպէս լուսաւոր և հեշտալի էր երևումն այն, ո՞րչափ ևս առաւել եթէ դէմ յանդիման լինիցիմ տեսանել զլոյսն անմուաղելի և զանսպառելի։ Եւ ստիպէ զիս բաղձանք հոգւոյս իմոյ լինել ընդ բազմութեան նոցա, և յոյժ հարեալ եմ 'ի սէր նոցա. և լաւ էր ինձ մեռանել ընդ նոսա՝ քան ստանալ զվայելչութիւն լայնատարած աշխարհիս։

Արդ յորժամ լուաւ մայրն զայս ամենայն յորդւոյ իւրմէ, տագնապեալ պղտորեցաւ սիրտ նորա վասն բանիցս այսոցիկ, և ջանայր թաքուցանել զբանն. զի մի՛ լուիցէ հայրն և եղբարք նորա։ Եւ ասէ. Որդեակ, պղտորեցին զիսորհուրդս իմ բանք քո, զի շատ ևս այն են երազք որ սուտ են։ Սուրբն ասէ. Առաւելագոյն այն է որ Ճշմարիտ է, որպէս առ Իսրայէլացւովքն, և կամ յայնժամ Յովսէփայն առ Փարաւոնի, և Դանիէլին առ Բաբելացւովքն, 'ի ձեռն մեկնութեան արդարանային. այլ ես դէմ յանդիման տեսի զսքանչելիս նորա՝ զոր Տէր Յիսուս Քրիստոս ինձ յայտնեաց։ Արդ դու եղիցիս սկիզբն քարոզութեանս իմոց, ո՛վ մայր իմ, և հաւատա՛ յոր են հաւատացի, և պատրաստեցի զիս մեռանել ընդ նմա։ Արդ յորժամ մեռանել լուաւ յորդւոյն իւրմէ, յայնժամ յորդաբուխ արտասուօք լալ սկսաւ։ Ասէ ցնա սուրբն. Ո՞վ մայր իմ մի՛ լար, և մի՛ խռովեսցի սիրտ քո, զի ահա ոսկերքն Յովսէփայ յետ մեռանելոյ իւրոյ, պարիսպ ամուր եղեն ազգին իւրոյ, և թէ ոչ էին կենդանիք Աբրահամ և Սահակ և Յակոբ, ոչ ասէր Աստուած ցՄովսէս. Ես եմ Աստուած Աբրահամու և Սահակայ և Յակոբայ, և ոչ է Աստուած մեռելոց այլ կենդանեաց. արդ Ճշմարիտ կենդանի են առ Աստուած՝ որք մեռանին յուսով նորա։ Արդ աղաչեմ զքեզ, մայր իմ, լո՛ւր բանից իմոց, և հաւատա՛ 'ի Քրիստոս, և մկրտեա՛ յանուն նորա, և փրկեսցիս 'ի չարաչար տանջանացն այնոցիկ՝ որ խաչելոցին

գնա. և կատարեալ լիցի անուն քո առ որդի քո բեր-
կրանօք՝ յանանցական աշխարհին, և լինել ինձ մայր
յերկոցունց յաւիտեանցս։ Արդ մի՛ թողուր 'ի մտաց
քոց զբանս և զպատուէրս իմ, այլ հաւատա՛ ճշմար-
տութեան նորա, որ 'ի վեր է քան զամենայն զմիտս
և զխորհուրդս։

Յայնժամ ծագեաց լոյս աստուածդիտութեան 'ի
խաւարեալ միտս նորա, և պատասխանի տուեալ որ-
դւոյն՝ ասէ. Հաւատամ յԱստուած յոր դու հաւատա-
ցեր, որդեակ իմ։ և 'ի պատշաճ ժամանակի արդիւ-
նացուցից զբանս իմ։ առ այժմ ծածկեսցին խորհուրդք
մեր 'ի հօրէն և յեղբարց քոց, զի մի՛ լուիցեն և սպան-
ցեն զիս և զքեզ։ Արդ առեալ սրբոյն զմախաղն, և
զցուպ հովուութեան իւրոյ, և ասէ. Ո՛ղջ լեր մայր
իմ, յանձն արարիցս զքեզ Քրիստոսի։ Ես գնացեալ եր-
թամ առ ընկերս իմ, և եթէ յապաղեմ՝ եկեսջիր և
դու զկնի իմ։ Զայս ասէր նշանակեալ զմահ իւր, և
զհաւատս մօրն։

Եւ եղեալ ըստ սովորութեան գնաց զկնի հօտից իւ-
րոց. և իբրև մեկնեցաւ սակաւիկ մի, հանդիպեցաւ
եպիսկոպոս մի, և ընթացեալ սուրբն անկաւ առ ոտս
նորա, և ասէ. Աղաչեմ զքեզ, տէր իմ, օրհնեա՛ զիս
և կնքեա՛ նշանաւ սուրբ խաչին, և կատարեա՛ զմկըր-
տութիւն իմ։ Ասէ եպիսկոպոսն. Ուստի՞ ճանաչես զիս,
և կամ ո՞ պատմեաց քեզ զինէն, զի ահա ոչ ունիմ
զգեստ եպիսկոպոսութեան։ Ասէ սուրբն. Որ զիս քեզ
յայտնեաց, և կարգեաց քեզ ճանապարհ գալ առ իս,
նա ծանոյց զքեզ ինձ։ Զարմացեալ եպիսկոպոսն, ասէ
ցնա. Եւ իմ առեալ պատուէր օրհնել զքեզ նախ քան
զպսակելն քո, և եղիցիս օրհնեալ։ Եւ եդեալ զալ ձեռն
իւր 'ի վերայ գլխոյ նորա՝ աւանդեաց 'ի նա զշնորհս Հո-
գւոյն սրբոյ, և ասէ. Երթ 'ի խաղաղութիւն, անուամբ
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, հաճոյ եղեալ առա-
ջի նորա, և արժան լեր չարչարանաց մահուն Քրիս-
տոսի. և մանկունքն՝ որք մկրտեցին զքեզ՝ հրաւիրեալ
եղիցին 'ի կարգս հրեշտակաց։ Եւ այսպէս արարեալ
ծերոյն՝ գնաց զճանապարհս իւր։

Իսկ սուրբն գնաց առ մանկունս առ ընկերս իւր, և
պատմեաց նոցա զտեսիլն իւր զոր ետես, և զամենայն

եղեալն. և զարմացան ընդ սքանչելիսն և լցան երկիւղիւ 'ի վերայ այնոցիկ զոր լուանն. քանզի կատարեցաւ խորհուրդ մկրտութեան նորա, և թէ որպէս զօրութիւն զգեցաւ ծառայն Քրիստոսի՝ տեսլեամբն զոր ետես: Եւ էր օրն այն ուրբաթ, և տօն մեծ էր Հրէից, և առնէր հայր նորա ուրախութիւն մեծ յաւուր յայնմիկ, և հրաւիրեաց զազգատոհմն իւր և զսիրելիսն յընթրիս, և առաքեաց կոչել զորդին իւր. և զեղբարս նորա 'ի շաբաթամտին՝ ժողովել 'ի հրաւիրեալ տեղին: Իբրև մնաց եղև Աստեր, խոտորեցաւ մտանել 'ի տուն մօր իւրոյ, և հետամուտ եղեալ ծառայքն ըմբռնեցին զնա, և առեալ տարան 'ի ժողովն Հրէից:

Իբրև ետես հայր նորա և այլ Հրեայքն՝ զգինդն յականջս նորա, բարկացեալ խռովեցաւ հայր նորա, և ասէ ցնա. Աստեր, ո՞վ խաբեաց զքեզ, և արար այդպէս խայտառակ. ո՞չ ապաքէն այդ կերպարանք ծառայից են՝ որ մնացեալ են յաղատութեան իւրեանց: Սուրբն ասէ. Մի՛ խռովիր հայր, քանզի գիտեմ զասացեալդ, զի ես գրեցի զանձն իմ ծառայ Քրիստոսի և քրիստոնեայ եմ: Իսկ յորժամ լուաւ զայս հայրն՝ զայրացեալ լի ցասմամբ, զա՛րկ զերեսս նորա, ընկէց 'ի մէջ ժողովրդեանն, և կոխէր ոտիւքն: Յարեան Թափել զնա ժողովեալքն, և ասեն. Մի՛ խսպառ բարկանար, եղբայր, զի մանուկ է, և ունի զղջանալ և գալ յուղղութիւն. մանաւանդ՝ յաւուր յայսմիկ, թոյլ տուր դմա, զի մի՛ խափան լիցի ուրախութեան մերոյ, քանզի զաւիկ մեծ է օրս այս:

Յայնժամ լռեցին ամենեքեան և նստան յուտել և յըմպել և ուրախ լինել: Եւ կոչէին զնա ողջանօք զի կերիցէ ընդ նոսա. և նա ասէ ցնոսա. Մի՛ խռովիք, զի ես քրիստոնեայ եմ, և ոչ է արժան քրիստոնէի ուտել ընդ հրէի: Եւ ամօթալից եղեալ հայրն յաղագս բանիցս այսոցիկ, յարեաւ դարձեալ հարկանել զնա, և ոչ թողին:

Աստեն ցսուրբն երիցս անգամ: Ե՛կ, որդեակ, կե՛ր ընդ մեզ, և ցածո՛ զսրտմտութիւն հօր քո, քանզի թողաք քեզ զարհամարհանս պատուիրանացն Մովսէսի՝ վասն այդորիկ որ յականջսդ քո, յաղագս տգիտութեանքո, և պատուոյ տօնիս. արդ լո՛ւր, որդեակ, և ե՛կ կե՛ր ընդ

մեզ։ Սուրբն ասէ. Եթէ գիտէիք զեղեալ զքանչելիսն, ոչ բռնադատէիք զիս ուտել ընդ ձեզ. այլ զի դեռ նոյն առագաստ օրինացն Մովսէսի կայ 'ի վերայ սրտից ձերոց, վասն այնորիկ խորհիք զայդ։ Իսկ նոքա իբրև լուան՝ զարմանային ընդ կորովութիւն բանիցն, և ասէին ցմիմեանս. Մի՞թէ տեսի՞լ ինչ եղև առ դմա, զի այդպիսի բանք ոչ են Հրէի, այլ ոչ տկարանայ այդ առաջի Աստուծոյ։ Քանզի բազում փառաւորութիւն եղև առ մարգարէսն 'ի մանկութեան ժամանակին, որպէս առ Մովսէսիւն, և Յեսուայն, և Գեդէոնին, և Սամիսոնին, և Դաւթին, Սողոմոնին, Երեմիային, և Դանիէլին, և Անանիանցն, և ոչք սոցին նմանք են։ Այսպէսն ոչ ինչ է մեծ, եթէ լինիցի այժմ 'ի յաղագս մերմէ. քանզի ոչ փոքր ինչ եմք 'ի մէջ ցեղիցդ Իսրայէլի, և օրէնքն Աստուծոյ պարծանք մեր։ Այսպէս ցնոսա սուրբն. Զոր խաչեցին հարքն մեր յԵրուսաղէմ՝ զնա տեսի, և գիտեմ զի նա է գառն Աստուծոյ, յորոյ վերայ վկայեաց Յովհաննէս 'ի Յորդանան, և ես մկրտեցայ յանուն նորա, և փոխանակ Ճշմարտութեան նորա մերանիմ։ Եւ դուք եթէ ոչ քաւիցիք մկրտութեամբ նորա՝ պարտականք էք դործոց հարցն ձերոց, քանզի արիւն արդար հեղին և ինքեանք կորեան յանօրէնութեան իւրեանց։ Իսկ ոչք հաւատացինն 'ի նա՝ փրկեցան. ահա ասացի ձեզ. առէք զպատրուակդ որ կայ 'ի վերայ սրտից ձերոց, և հաւատասջիք և մկրտեսջիք, և քաւեսցին մեղքն ձեր։

Յայնժամ լցեալ ամենեքին ցասմամբ վասն բանիցս այսոցիկ և գրգռէին զՀայր նորա զի կորուսցէ զնա։ Իսկ ծառայք նորա յորժամ տեսին զաղմուկն՝ թողին զսուրբն զի փախիցէ։ Յայնժամ յարուցեալ Ղևի Հայր նորա, գաղանաբար յարձակեալ դառնացեալ սրտիւ, առեալ զդանակն 'ի սեղանոյն ընթացաւ զՀետ նորա, և մանուկն երթայր առաջի նորա արագ արագ մինչև 'ի ջրհորն ուր մկրտեցաւ, և էր ընդ երեկս։ Եւ դարձեալ առ Հայրն՝ ասէ. Ո՛վ գաղան արիւնարբու, պահեա՛ զշաբաթ քո, և դարձի՛ զսուր քո 'ի տեղի իւր. եթէ աշակերտ ես Մովսէսի, մի՛ պարտաւորեր զանձն քո, և լինիս օրինազանց. ապա թէ քրիստոնեայ ես իբրև զիս, մի՛ շաղախեր զձեռն քո յարիւն ծառա-

յիս Քրիստոսի։ Ոչ եթէ վասն սպանման իմոյ ա-
սեմ զայս, այլ զի մի լինիցիս դու որդի գեհենի։ Եւ
յորժամ լսէր հայրն նորա զայս ամենայն՝ առաւել ևս
զայրանայր, և կրճտէր զատամունս իւր 'ի վերայ նո-
րա։ Իսկ սուրբն հասեալ 'ի տեղին՝ ուր մկրտեցաւ,
ծունր կրկնեալ լալով կայր յաղօթս և ասէր. Ո՛վ
Քրիստոս, յոր հաւատացի, ընկալ զիս 'ի թիւ մկրտե-
լոցն յանուն քո սուրբ. և 'ի վերայ ջրհորոյս այսորիկ
բաց ինձ դուռն մտանել առ վկայսն քո, և խառնիլ 'ի
դասս նահատակաց քոց. ահա մատուցանեմ քեզ զա-
րիւնս իմ պատարագ սուրբ, զի եղիցի հաճոյ տէրու-
թեան քում 'ի հոտ անուշիլոյ. և 'ի թիւ ընկերաց իմոց,
զոր ցուցեր ինձ, փառաբանել զքեզ արժանաւորեա և
զիս, փառաւորել զքեզ և մտանել առաջի սեղանոյդ
Աստուծոյ իմոյ, որ ուրախ առնես զմանկութիւն իմ։
Խոստովան եղեց քեզ օրհնութեամբ, Աստուած, Աս-
տուած իմ։ և թշուառական և նենգաւոր հօր իմոյ
մի համարիր զայս մեղս, զի ոչ գիտէ զինչ գործէ. և
մօր իմոյ որ ծնաւ զիս՝ արա չարչարակից լինել մա-
հուան իմոյ՝ պսակակից հատուցմանց քոց։ Եւ ոյք կա-
տարեն զյիշատակ իմ և յիշեն զիս 'ի նեղութեան,
լուր և ողորմեա, և օգնեա նոցա և բժշկեա զախտս և
զցաւս հոգւոյ և մարմնոյ։ Ահա զխորհուրդ սրտի իմոյ
և զարիւն իմ մատուցից քեզ պատարագ, փոխանակ
զի անուանեցեր զիս եղբայր քեզ, և հաներ զիս 'ի
գբոյն տղմոյ և ցուցեր ինձ զճշմարտութիւն քո, և ա-
ւարեր զիս քարոզ անուանդ քո. և ոչ գարշեցար 'ի
հայրենի պղծութենէ իմմէ։ Ահա որպէս գառն 'ի
սպանդ մատուցի զիս քեզ. վասն քո ետու զպարանոց
իմ ընդդէմ սրոյ, և եղէ օտար յեղբարց իմոց, և հե-
ռացեալ յորդւոց մօր իմոյ։ Ո՞ւր էք, եղբարք իմ սի-
րելիք, եկայք տեսէք զպատերազմն իմ։ փոխանակ քա-
րոզութեանս ձերոյ՝ եկայք ուրախ լերուք ընդ պտուղ
վարդապետութեան ձերոյ. ահա այժմ արդեամբ կա-
տարեմ զճանապարհս իմ՝ զոր հորդեցէք ինձ։ Եկայք
զուարճակիցք եղերուք ինձ յաւուր փեսայութեան
իմոյ, և ուրախացուք 'ի բղխման արեան իմոյ, որ հե-
ղու 'ի վերայ սուրբ անուանն Քրիստոսի։ Ընկերակիցք
իմ և մնընդակիցք, ո՞վ թաքոյց 'ի ձէնջ զոր պսակման

իմոյ. այս է ժամանակ յայտնել սիրելեաց, և որք ճա-
նաչենն զեղբարս։ Ո՞վ ցուցցէ ձեզ զՀեղումն արեանս
իմոյ, և նահատակակից լինել ճգնութեանս։ Ո՛ղջ լե-
րուք այժմ, և աղօթեցէք արժանի լինել ինձ տեսանել
զձեզ յառաջաստի թագաւորին։ Ո՛ղջ լեր, ասէ, մայր
իմ որ ծնար զիս և 'ի գիրկս քո կրեցեր զիս։ Ո՛ղջ լե-
րուք եղբարք իմ, որդիք մօր իմոյ. երանի՜ թէ յար-
գանդէն կենաց լեալ էիք եղբարք ինձ։

Եւ մինչ սուրբն զայս ամենայն խօսէր, յայնժամ
գազանաբար յարձակեալ հայրն 'ի վերայ նորա, և խո-
նարհեցուցեալ զսրբոյն զգլուխն 'ի վերայ վիմին՝ որ
կայր յափն ջրհորոյն, և եհատ զպարանոցն՝ սրո

ՀՇՄԱՐՏԻՒ գիտեմք ԵԹԷ հաՀԵցաւ ՏԷր ընդ պսակեալդ քո, որ ԵՀան զքեզ'ի գբոյ տղմոյն, որպէս պատմեցեր մեզ։ Ա.Հա անդ եղբարք բազում են քո զորս դուն տեսեր, և այժմ մեք որ աստ՝ անջատեալ են լսելիք մեր լսել զքաղցրաբարբառ բանս քո։ Ծառայ Քրիստոսի և վկայ ՀՇՄԱՐԻՏ, աղաչեա՛ վասն մեր որ այժմ մերձ ես առ նա, արժանաւորիլ տեսլեան քոսմ'ի վերին Երուսաղէմ; և ցնծալ ընդ քեզ յորժամ խառնիս'ի դասս ՀՀՆԱՒՈՐԱՑՆ. և ընդ առաջ ելանել գալստեան նորա պատրաստեալ և յաղթական պըսակօք։

Բազում և այլ այսպիսի բանիւք լային և ողբային զնա։ Եւ առեալ իւրաքանչիւր զցուպ՝ բրեցին զերկիրն, և թաղեցին զմարմին երանելւոյն, և ժողովեալ զՀողն արիւնախառն՝ արկին'ի հանգիստն. և հառաչմամբ հայէին ընդ երկինս, և ասէին. Ա.ՐԴ քաջալերեցաք, Քրիստոս, կարդալ առ քեզ. լուր այժմ; կատարեա զՕրՀնութիւնս, որ լինին'ի վերայ հրաւիրելոց'ի ժամ թաղման, 'ի ձեռն քահանայից, կատարեա այժմ 'ի վերայ թաղման սրբոյս։ Եւ եդին կափարիչ զվէմն յորոյ վերայ զենաւ ծառայն Քրիստոսի, և գնացին տըրտմագին 'ի տունս իւրեանց։ Զայս ամենայն արարին փութանակի, վասն զի ընդ երեկս էր օրն, և երկիրն բնակութիւն էր գազանաց. և ոչ ոք'ի նոցանէ պատմեաց'ի տուն իւր զեղեալն, զի մի՛ ասիցեն ցնոսա, ԵԹԷ՝ Դուք եղերուք պարտականք մահուան նորա յաղագս մկրտելոյն զնա. այլ նոքա ոչ դադարէին օր ըստ օրէ գա՛լ'ի հանգիստ նորա, և լային ողբալով։

Իսկ յետ սակաւ աւուրց, գային անցաւորք վաՀառականաց Հանդերձ ուղտուք իւրեանց, և երթային յարևելից յարևմուտս. և 'ի գիշերի եկեալ մօտ 'ի դիրս Հանգստի սրբոյն, տեսանէին զի հուր վառեալ կայր 'ի վերայ գերեզմանի սրբոյն, և լուսաւորէր զամենայն վայրն։ Ոմանք 'ի վաՀառականացն խոտորեցան տեսանել զմեծ սքանչելիսն. և յորժամ հասին 'ի դիրս սրբոյն, տեսանէին զվէմն զի ելանէր 'ի ներքոյ նորա լոյս, որպէս զՀառագայթս արեգական՝ և սքանչացան. և հոտ անոյշ բուրէր 'ի տեղւոջէն յայնմանէ, առաւել քան զամենայն խունկս անուշունս։ Եւ քանզ

զի հաւատացեալք էին որ չոգան 'ի գերեզման սրբոյն, խնայեալ 'ի միտս իւրեանց՝ ասեն. Գանձ մեծ է այս. և ոմն 'ի սրբոց վկայից և ոչ յայտնեցաւ յաշխարհիս այսորիկ. եկայք առցուք զդա և տարցուք յաշխարհն մեր, և ստասցուք շահս հոգևորս 'ի Քրիստոս, յոր հաւատացաքն. քանզի նա պատմեաց մեզ և եղոյց և կամեցաւ շահաւէտ առնել պատուական ոսկերօք վկայիս։ Եւ 'ի բաց արարեալ զՀողն՝ առին զվէմն կապարիչ 'ի գերեզմանէն, և առեալ զմարմին սրբոյն աբիւնաթաթախ, և տեսեալ զմանկագոյն տիսն՝ գիտացին եթէ առ ժամայն է կատարեալ սուրբն։ Եւ սկսեալ հանդերձս պատուականս պատեցին զնա և առեալ գնացին առ ընկերս իւրեանց՝ աւետիս տալով, եթէ գանձ մեծ գտաք յաւուր յայսմիկ։ Եւ առ խնդութեան ոչ հետևէին 'ի տեղիսն՝ յոր և երթալոց էին, այլ դարձան յաշխարհն իւրեանց. և ահա այլ ոչ ևս երևեցաւ լոյս 'ի գերեզմանն, և հաստատեցան 'ի հաւատս իւրեանց յաղագս սրբոյն։

Այլ ոմն էր 'ի նոցանէ հաւատացեալ, յոյժ մեծատուն բազում ստացուածովք, և անուն նորա Նաթեր, և կին նորա ամուլ էր. նա ուխտեաց յայտնապէս առաջի ընկերացն իւր, և ասէ. Եթէ տացէ ինձ Աստուած աղօթիւք սրբոյս այսորիկ զաւակ արու, և միխիթարեսցէ զիս և զամուսինն իմ, շինեցից սմա տուն աղօթից յընչից իմոց, և պատուեցից 'ի նմա զոսկերս սորա զամենայն աւուրս կենաց իմոց, և զարդարեցից ամենայն երևելի սպասուք՝ որ ինչ պէտս է նմա. և զինքս զսուրբս՝ արարից ինձ որդի և ժառանգորդ փոխանակ ծննդոց իմոց. և յորժամ ստուգեցից վասն անուան սորա, արարից սմա տուն առ 'ի յիշատակ անուան սորա, և կոչեցից զորդին իմ զոր տացէ ինձ Աստուած 'ի ձեռն աղօթից սրբոյս՝ յանուն դորա, և էզիցի սուրբդ ինձ որդի, և ես եղէց աշակերտ և ծառայ դորա. և հանցէ Քրիստոս ինձ ընդ դմա մասն յանանցական աշխարհին։

Իսկ յորժամ հասին յաշխարհն իւրեանց՝ առեալ առն այնորիկ զմարմին սրբոյ վկային, եդ 'ի տան իւրում՝ մեծաւ պատուով. եղոյց տան ընտանեացն, և պատմեաց զուխտն զոր դաւանեցաւ առաջի Աստուծոյ

յանուն սրբոյն։ Եւ յորժամ լուան՝ ցնծացան և փա-
ռաւորեցին զԱստուած, զի ընկալցի զուխտն և կատա-
րեսցէ զխնդրուածս նոցա աղօթիւք սրբոյն։ Եւ եբաց
Աստուած զարգանդ կնոջ նորա, և յղացաւ և եղև ու-
րախութիւն 'ի մէջ նորա։ Յայնժամ այրն հաւատա-
ցեալ փութացաւ վկայարան շինել սրբոյն, և վաղվա-
ղակի կատարեաց և զարդարեաց պէսպէս սպասուք, և
կանխեալ լինքն և ընտանիք իւր անդ յաղօթս կային,
և աղաչէին զԱստուած, զի շնորհեսցէ զխնդրուածս
նոցա, և գիտասցեն զանուն նահատակին Քրիստոսի։

Իսկ մանկունք՝ ընկերք սրբոյն, յորժամ եկին 'ի տե-
ղին ըստ սովորութեան ողբալ, տեսին զվէմն թաւա-
լեալ, և զգերեզմանն ունայն 'ի մարմնոյն, բայց միայն
հոտ անոյշ բուրէր 'ի տեղւոջէն. հիացան երկիւղիւ
մեծաւ առ հասարակ, մեծաբարբառ հառաչէին։
Ոմն ասէր. Գազան յափշտակեաց. Եւ ոմն ասէր, թէ՝
Հայր իւր տարաւ թաղել զնա։ Եւ սքանչացեալք գնա-
ցին յարկս իւրեանց, և պատմեցին ամենեցուն զե-
ղեալսն, եթէ զիարդ մկրտեցին զնա, կամ զիարդ նա
խօսէր ընդ նոսա, կամ զիարդ գտին զնա անկենդա-
նի (1) լեալ, կամ որպէս թաղեցին զնահատակն։ Եւ
կանխեալ յառաջագոյն էլ համբաւ նորա ընդ ամե-
նայն աշխարհն, եթէ Ղևի սպան զորդին իւր վասն
քրիստոնեայ լինելոյ նորա։ Ի համբաւէս յայսմանէ և
'ի բանից մանկանցն գիտացին Աշմարտութեամբ, թէ
վասն Քրիստոսի սպանաւ Աբեր 'ի հօրէն իւրմէ. և ար-
դարև այժմ Աբեր հարուստ է և հարստացուցիչ. քան-
զի Աբեր՝ հարստութիւն թարգմանի։ Յարեան հաւա-
տացեալքն այնոքիկ ջերմեռանդն հաւատով՝ չոգան 'ի
տեղին յայն, և տեսին զվէմն ներկեալ արեամբ նորա,
և հետ գնդին 'ի քարին, որ նշանակեալ ունէր զգիծ
չափոյ գնդին և ասեն. Արդարև գանձ մեծ հեռացաւ
յաշխարհէս մերմէ։ Եւ շինեցին վկայարան փոքրիկ 'ի
վերայ գերեզմանին, և եդին զվէմն զայն 'ի մէջ վկա-
յարանին։ Եւ զնշան տէրունական խաչին 'ի վերայ վի-
մին կանգնեցին և գրեցին 'ի նմա, թէ՝ Այս տեղի
կատարման վկային Քրիստոսի սրբոյն Աբդլմսեհի։ Եւ

(1) Յօր. ՀԷնդանի։

գային հաւատացեալք աշխարհին այնորիկ 'ի կողմանց կողմանց հանապազ յանուն նորա, և բժշկէին յախտից իւրեանց. և սիրեցաւ համբաւ բժշկութեան զոր առնէր Տէր 'ի ձեռն սրբոյն՝ ընդ ամենայն աշխարհն արևելից։ Եւ 'ի գալ միւս տարւոյն՝ եկեալ վաճառականացն այնոցիկ անցանել ընդ նոյն Ճանապարհաւ հանգստիւ սրբոյն. իսկ յորժամ հասին 'ի վերայ անուան երանելւոյն՝ մեծաւ փափագանօք մտին աղօթել 'ի վկայարան սրբոյն։ Եւ տեսին զվէմն 'ի մէջ վկայարանին եդեալ, և զնշան սուրբ խաչին 'ի վերայ նորա. հարցին ցանցաւորսն, թէ՝ Զինչ անուն է սրբոյդ, և զիարդ եղև պսակել դորա. և պատմեցին նոցա զամենայն Ճշմարտութեամբ։

Իսկ նոցա խնդութեամբ լցեալ պատմեցին զեղեալ սքանչելիսն, եթէ զիարդ հուրն բորբոքեր 'ի վերայ գերեզմանին և կամ որպէս առեալ զմարմին սրբոյն՝ տարան յաշխարհ իւրեանց, և շինել վկայարան 'ի ձեռն հաւատացելոյ առնն, և բժշկութիւնք որ լինէին 'ի ձեռն սուրբ վկային։ Իսկ սպասաւորքն խնդրէին մանն ինչ 'ի նշխարաց սրբոյն, առ 'ի պատիւ վկայարանին. զոր յետ սակաւ աւուրց շնորհեցին զըղձալին՝ սպասաւորացն։ Իսկ այրն հաւատացեալ՝ որ առ զմարմին սրբոյն, յորժամ դարձաւ 'ի տուն իւր՝ եգիտ զկին իւր ծնեալ որդի գեղեցկատեսակ և զուարթ երեսօք. և առեալ զորդին մկրտեաց 'ի վկայարանի սրբոյն, և անուանեաց զանուն նորա Աբդլմսեհ՝ յանուն սրբոյն, որպէս և ետես զգրեալսն 'ի վերայ վիմին. և արար ուրախութիւն մեծ յաւուր յայնմիկ ամենայն ժողովրդեանն։ Իսկ սուրբն երևէր 'ի տեսլեան կնոջ նորա՝ նախ քան զծնանելն, և ասէր. Ահա ծնցիս որդի ըստ նմանութեան կերպարանաց իմոց, և կոչեսցես զնա յանուն իմ։ Այլ ցնա կինն. Եւ ո՞վ ես, տէր իմ, որ կոչեցից յանուն քո զորդի իմ։ Այլ ցնա սուրբն. Յորժամ դառնայ այրն քո 'ի Ճանապարհէն, և դայ խաղաղութեամբ յաշխարհէն՝ ուր են եմ մնալ, նա պատմեսցէ զանուն իմ։ Եւ զարթուցեալ կինն սքանչանայր. և յորժամ եկն այր իւր պատմեաց նմա զտեսիլն. և եղև այն ամենայն 'ի հրաշութիւն և յուրախութիւն ամենայն հաւատացելոց. և անուն սրբոյն

հռչակեցաւ ընդ ամենայն աշխարհս, յարևելս և յա-
րևմուտս. և ամենեքին ոյք խնդրէին յանուն նորա՝
առաքէր Աստուած զբժշկութիւն և զառողջութիւն
հիւանդաց. և բուրէր հոտ Ճգնութեան նորա ընդ ա-
մենայն տիեզերս, առաւել քան զամենայն խունկս ա-
նոյշս. և նահատակութիւն նորա լսելի լինէր յամենայն
բերանոյ, առաւել քան զթագաւորաց և զօրավա-
րաց զախոյանիցն՝ որք յաղթութեամբ դառնայցեն 'ի
պատերազմէն. և ամենայն քրիստոնեայք պարծէին
նովաւ, և ահէր անուն նորա հաւատո

ցաւ, և ասէ. Բաւական է սրբոյն տասն ուղտ միայն, քանզի ոչ աշխատեցաւ 'ի ժողովելն, և ոչինչ ծախեաց վասն նոցա։ Եւ ասեն ցնա բարեկամքն իւր. Ոչ այդպէս, ո՛վ մեծդ, այլ զոր խոստացար՝ հատո նմա, գուցէ այլ ինչ պատահիցէ քեզ, և կարդասցես և ոչ օգնեսցէ քեզ։ Այլ նա ոչ կամեցաւ, զմտաւ ածեալ զբազմութիւն ուղտուցն՝ որ պակասէին 'ի նմանէ, և տագնապէր. և որոշեաց 'ի նոցանէ տասն ուղտ զորս ինքն կամեցաւ, և առաքեաց զնոսա 'ի վկայարան սրբոյն։ Իսկ 'ի միում աւուր հանեալ զուղտսն յարօտ, և ընդ ելանելն առ ժամայն ցրուեցան և տարան զծառայսն որ հեծեալ էին յուղտսն, և հետք նոցա ոչ ևս ուրեք յայտնեցան. և լուեալ առնն զկորուստ ուղտուցն իւրոց՝ զգեցաւ ամօթ, և աղաչէր զբարեկամսն իւր, զի երթիցեն առ սուրբն, և լինիցին երաշխաւոր վասն որոյ ուխտեացն։ Եւ եղև իբրև չոգան 'ի տեղին՝ տեսեալ 'ի հեռաստանէ զի ժողովեալ էին ուղտքն, և գային 'ի վկայարան սրբոյն։ Իսկ նոցա տեսեալ զբազմութիւն ուղտուցն՝ լցան երկիւղիւ, համարեցան թէ գունդ թշնամեաց իցէ. և յորժամ մօտ եղեն և տեսին զնշանսն ուղտուցն իւրեանց՝ աքանչացեալ ասէին. Արդարև մեծ և զօրաւոր է նահատակս այս. փոխանակ զի ստեցին յուխտէ նորա, ահաւասիկ զամենայն ուղտս առ ինքն ամիսիսեաց։ Եւ արդ աղաչեցէք՝ զի առցէ զիւրն ըստ առաջին խոստմանն, և թողցէ զմերն երթալ զկնի մեր։ Եւ որոշեցին և ետուն տասանորդս 'ի լաւացն և 'ի վատթարացն, և 'ի ծառայիցն ետուն արածել զուղտսն. և յորժամ կարդեցին զայս, աղօթեցին (1) առ Աստուած, և կարդացին զանուն սրբոյն, և ասեն. Ո՛վ սուրբ ծառայ Քրիստոսի և քաջ նահատակ, մեռ զքոյդ և արձակեա զմերն գալ զկնի մեր։ Եւ դարձուցեալ ուղտուցն զերեսս իւրեանց՝ երթային զկնի նոցա։

Բազում և այլ աքանչելիս առնէր Տէր 'ի ձեռն սրբոյն. բժշկութիւն այսահարաց և նեղելոց յիւրաքանչիւր ցաւոց. և փառաւորէր 'ի նա սուրբ անունն Քրիստոսի։ Վասն որոյ և մեք հաւատացեալքս կատարելով զքիշատակ սրբոյն Աբդլմեհի, օրհնեմք զՀայր

(1) Ցօր. աղօթէաց։

արարիչ արարածոց, և զՈՐԴԻՆ հաստիչ և համագոյ, և զՀՈԳԻՆ սուրբ՝ զօրացուցիչ և պարգևաբաշխ ամենեցուն. և զնոյն ինքն զծառայն Քրիստոսի, և զամենայն սուրբս, բարեխօս ունելով առ բոլորիցն Աստուած. զի խոստացելոց բարեացն հասցուք, 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր. որում վայել է փառք և զօրութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն Ս. Ադրիանոսի եւ կնոջ նորա Անիտոլեայ։

Եւ եղև յերկրորդումն գալստեանն Մաքսիմիանոսի Թագաւորին՝ի Նիկոմիդացւոց քաղաքն, և սպան զամենեսեան որք ըստ տեղեաց տեղեաց հաւատացեալք էին՝ի Քրիստոս. և դիմեալ՝ի տաճարն՝ երկիր պագանէր աստուածոցն. և հրամայեաց զիւր զոհսն մատուցանել յառաջ, և յետ այնորիկ զքաղաքին։ Լուեալ այնուհետև ամենեցուն՝ գայլին՝ի մատուցանել, ոմանք ցուլս և զուարակս, և ոմանք գառինս և խոյս և հաւս, քանզի կռապաշտ էր քաղաքն։ Եւ զենուին յամենայն հրապարակս և՝ի փողոցս և՝ի տունս. մինչև ամենայն քաղաքն հոտեալ՝ի շարաւոյ և՝ի ճենճերոյ զոհից. և պատուիրակքն շրջէին քարոզել ամենեցուն՝ի զոհել մնոտի աստուածոցն. քանզի պատուհասել հրամայեաց Թագաւորն զայնոսիկ որք ոչ զոհեսցեն, և զգտեալ քրիստոնեայսն հրով այրել։ Կարգեցին յայտնապէս արք ոմանք քննել զհրապարակսն և զամենայն քաղաքն. զի եթէ գտանիցեն արս կամ կանայս հաւատացեալս՝ի Քրիստոս, ածցեն առ Թագաւորն առ՝ի խոշտանգել սաստիկ տանջանօք և բոցակէզ հրով. որք և ինչս բազումս տային գուշակելոցն դահիճքն։ Մատնէին այնուհետև դրացիք զդրացիս և սիրելիք զսիրելիս և ազգականք զազգականս,՝ի տուրս ընչից հայեցեալք. ոմանք վասն երկիւղի Թագաւորին մատնէին զհաւատացեալսն առ՝ի յինքեանց. վասն զի պատուհաս սահմանեալ էր այնոցիկ որք թաքուցանէին զքրիստոնեայսն։

Յայնժամ ազդ լինէր որք զինդիրն առնէին 'ի Թագաւորէն, եթէ են ոմանք յայրի ումեմն Թագուցեալ. քանզի լուան զձայն սաղմոսի սրբոցն 'ի գիշերի մօտակայ եղեալ, և եկեալ գուշակեցին. և նոցա վաղվաղակի առեալ զբազմութիւն զինուորացն՝ հասին 'ի վերայ այրին. և ըմբռնեալ զնոսա ածին 'ի քաղաքն ուր էր Թագաւորն, կապեալ զամենեսեան երկաթի կապանս։ Եւ եղև յորժամ ել Թագաւորն երկիր պագանել և զոհել 'ի տաճարի աստուածոցն, և ահա զինուորքն մատուցին զնոսա առաջի Թագաւորին և ասեն. Թագաւոր, յաւիտեան կաց. գտաք զամենայն քաղաքս և շուրջ զգեօղսն՝ յերկրպագութիւն աստուածոցն, հաւանեալ քոյոյ հրամանացդ, բայց միայն սոքա Թշնամանեցին զաստուածսն, չհաւանեալք քոյոյ պատուիրանացդ։

Եւ տեսեալ զսուրբսն առժամայն հրամայեաց կացուցանել զկառսն, և մերձեցուցանել զնոսա 'ի կառսն. ասէ ցնոսա. Ուստի՞ էք, աստի՞ եթէ այլ ուստեք։ Եւ նոքա ասեն. Ազգաւ աստի իմք, այլ հաւատովք գալիլէացիք։

Ասէ ցնոսա Թագաւորն. Եւ ո՞չ լուարուք եթէ որպիսի՞ պատիժս սահմանեալ է որք յայդպիսի հաւատդ գտանին, և կամ ո՞րպէս դառն վախճանիւ զբաւեցան 'ի բուռն անկեալք։ Սուրբքն ասեն. Լուաք և ծիծաղեցաք զանմիտ հրամանաւդ քով. ծիծաղեցաք և զսատանայիւ որ զօրացեալ է յոգիսն անհաւատութեան, որոց և զօրագլուխն դու ես։ Թագաւորն ասէ. Եւ յիմա՞ր իշխեցէք ասել զմեր հրամանն. մեծովք աստուածովքն երդուեալ, դառն և անհնարին տանջանօք մաշեցից զմարմինս ձեր։ Եւ ասէ. Պրկեսցին և տանջեսցին բրօք, և եկեալ աստուածն դոցա օգնեսցէ դոցա, և փրկեսցէ զդոսա 'ի ժամէս յայսմանէ։ Եւ սկսան երեք դահիճքն ջալոտիւք տանջել զնոսա։ Սուրբքն ասեն. Յաւել և այլ ևս տանջիչք, ո՞վ աստուածամարտ, քանզի որչափ յաւելուս զտանջիչքդ՝ այնչափ առաւելումք զպրսակն։ Եւ բռնաւորն ասէ ցնոսա. Ա՛յ թշուառականք, այժմ զգլուխս ձեր բառնամ, և դուք պսակաց ակն ունիք. այլ մանաւանդ դարձիք յայդպիսի յամառ կամացդ, և մի՛ ընդ վայր կորուսանէք զձեզ։

Սուրբքն ասեն. Կորուսցէ զքեզ Աստուած, զի զծառայս նորա 'ի զուր և 'ի նանիր խոշտանգես, առանց միոյ իրիք յանցանաց։ Եւ բարկացեալ Թագաւորն հրամայեաց բռնաքարամբք բեկանել զկզակս նոցա. և դահճացն առեալ քարինս՝ ջարդեցին զբերանս նոցա. և սրբոցն ընկալեալ զտանջանսն՝ ասացին. Իբրև 'ի չարագործութեան ըմբռնեալս՝ ընդ այսպիսի դառն և անողորմ տանջանօք արկեր զմեզ. հարցէ զքեզ հրեշտակ Աստուծոյ, և զամենայն ամբարիշտ տուն քո, ո՛վ անօրէն և թշնամի Աստուծոյ. ո՞չ արդեօք յագեցար տանջանօքս զոր ածեր 'ի վերայ մեր, և ո՞չ ձանձրացար յայնչափ յերկար ժամն ձգեալ զազգի ազգի տանջանս քո. և ո՞չ զմտաւ ածեր եթէ և մեք մարմին զգեցեալ եմք որպէս և դու, թէպէտ և քոյդ անօրէն է և ամբարիշտ. զքարինսդ արդեօք ապառաժս աղաւաղ ևս առներ այսչափ տանջանքս քո, ո՛վ որդի սատանայի։

Բարկացեալ Թագաւորն և ասէ. Մեծովք աստուածովքն երդուեալ, զլեզուս ձեր հատից, զի ձեօք ուսցին մարդիկ մի՛ կալ հակառակ տերանց իւրեանց։ Սուրբքն ասեն. Եւ ատե՞ս զայնոսիկ որ հակառակ կան տերանց իւրեանց։ Եւ ասէ. Այո՛, ատեմ, և պատուհաս ևս առնեմ։ Սուրբքն ասեն. Լուր և դու, ո՛վ ամբարիշտ, զի եթէ դու զանհնազանդս երկրաւոր տերանց իւրեանց ատես և պատուհասես, ապա զի՞նչ բռնադատես զմեզ ընդդիմանալ Աստուծոյն մերոյ, ապստամբել 'ի Տեառնէ մերմէ և 'ի Փրկչէն. զի չարչարեսցուք և մեք զայն՝ որ քեզն է պատրաստեալ։ Եւ նա ասէ ցնոսա. Զի՞նչ պատրաստեալն է ինձ, այ դատապարտք։ Սուրբքն ասեն. Այն որ պատրաստեալն է սատանայի և հրեշտակաց նորա, և անօթոց նորա, որ էք դուք ամբարիշտք. հուր անշէջ և որդն անքուն, տանջանքն անվախճանք և պատուհասքն յաւիտենականք. գուբն ապականութեան և խաւարն արտաքին, ուր լալ աչացն է և կրճել ատամանցն, և այլ ևս տանջանարանք, զորոց տեսին գիտէ այն որ պատրաստեացն ձեզ զայն։ Եւ նա ասէ ցնոսա. Աստուածովքն, զի զլեզուս ձեր հատանեմ այժմիկ։ Սուրբքն ասեն. Ո՛վ անմիտ և ամբարիշտ, թէպէտ և հատցես զգործի փառաբանութեանս, կարող է հեծութիւն սրտից առաւել աղա-

զակել առ Աստուածն մեր. և արիւնս այս զոր հե-
ղեալ ունի բերանս մեր՝ մեծաբարբառ ևս քան զսրինդ
գոչէ առ Աստուածն մեր, վասն որոյ և չարչարիմք։
Բարկացեալ Թագաւորն և ասէ. Նշանակեցէք զա-
նուանս դոցա գրով զամենեցուն, և կապեալ զդոսա
երկաթի կապանօք և տարէք 'ի բանտարան դատա-
պարտելոցն, և ամենևին նեղեցէք. և որպէս ինձ կամ
է՝ այնպէս խոշտանգեցից զդոսա. ոչ եթէ սրոյ պա-
տուհասի միայն արժանի են, այլ և պարտ է դոքօք
խրատել և զգաստացուցանել զամենայն գաւառս։

Այր ոմն մեծ և երևելի իշխան 'ի դրան արքունի,
որոյ անուն Ադրիանոս, իբրև ետես զտանջանացն խրա-
տութիւն, և զնոցա ժուժկալութիւն, ասէ ցսուրբ
վկայսն. Երդմնեցուցանեմ զձեզ յաստուածն ձեր՝ վասն
որոյ չարչարիքդ, ասացէք ինձ զՀմարիտն, զի՞նչ է այն
որում դուք ակն ունիք առնուլ արժանի ընդ այդչափ
տանջանացդ. Թուի ինձ եթէ մեծ և սքանչելի իմն ե-
րևի։ Այսեն ցնա սուրբքն. Ոչ մեր բերանք բաւական են
պատմել վասն այնորիկ, և ոչ քո լսելիքդ կարող են ըն-
դունել։ Այսէ ցնոսա Ադրիանոս. Բնաւ ամենևին ոչ
ինչ լուարուք վասն այսոցիկ, ոչ յօրինաց և ոչ 'ի մար-
գարէից և ոչ յայլոց գրոց։ Սուրբքն ասեն. Եւ ոչ նո-
քին իսկ մարգարէքն որպէս պարտ է գիտել, քանզի
և նոքա մարդիկ էին աստուածապաշտք, և որչափ կա-
րացին առնուլ 'ի Հոգւոյն սրբոյ՝ զնոյն և խօսեցան. այլ
վասն այնորիկ գրեալ է, թէ՝ Զոր ակն ոչ ետես և ունկն
ոչ լուաւ և 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զոր պատրաս-
տեաց Աստուած սիրելեաց իւրոց սրբոց։ Զայս լուեալ
Ադրիանոսի՝ վաղվաղակի 'ի նեղքս դիմեաց. և կացեալ 'ի
մէջ ատենին ասէ ցդպիրսն. Գրեցէք և զիմ անունս ընդ
սուրբ նահատակսդ, քանզի և ես քրիստոնեայ եմ։ Իսկ
իբրև ետես բռնաւորն յանդիմանակաց՝ կարծեաց եթէ
չարախօսութիւն զսրբոցն մատուցանիցէ. և ասէ ցդպիր-
սն. Գրեցէք վաղվաղակի և զպատուականիդ Ադրիա-
նոսի ձեռնարկեալ զնոցանէ ամբաստանութիւն։ Այսեն
ցնա դպիրքն. Ոչ զնոցանէ չարախօսէ, այլ զինքն քրիս-
տոնեայ անուանէ, և աղաչէ զանուն իւր գրել ընդ մա-
հապարտսն։ Իբրև լուաւ Թագաւորն բարկացաւ և
ասէ ցնա. Մոլորեցա՞ր, Ադրիանէ, կամի՞ս և դու չա-

բաչար կորնչիլ։ Եւ նա պատասխանի տուեալ ասէ. Ոչ մոլորեցայ, Թագաւոր, այլ՝ի բազում մոլորութենէ այժմ զգաստացայ։ Սէ ցնա Թագաւորն. Խնդրեա յինէն Թողութիւն, և ասա առաջի ամենեցուն եթէ ընդ խաբս խաբեցայ. և չոգ ընկեա՛ զանուն քո՝ի միջոց դատապարտելոցն։ Ադրիանոս ասէ. Յայսմհետէ յԱստուծոյն իմոյ խնդրեմ զԹողութիւն վասն անուղղայ կենաց իմոց, և վասն առաջին և անօրէն գնացից իմոց։ Եւ բարկացեալ Մաքսիմիանոս հրամայեաց կապել զնա և տանել՝ի բանտն ընդ սուրբ վկայսն, օր յայտ արարեալ՝ յորում հարցանիցէ զնա և զնոսա։ Մի ոմն՝ի նոցանէ՝ի ծառայիցն Ադրիանոսի իբրև ետես զայն՝ ընթացեալ վաղվաղակի՝ի տուն և պատմեաց կնոջ նորա Անիտոլեայ և ասէ. Զտէրն իմ կապեցին երկաթի կապանօք և արկին՝ի բանտ։

Նա իբրև զայն լուաւ, պատառեաց զպատմուճանն իւր և սկսաւ լալ դառնապէս և ողողանել. և ՀԻՒ բարձեալ ասէ ցպատանին. Այսա՛ ինձ, այր դու, վասն որոյ պատճառանաց կապեցաւ տէրն իմ։ Եւ ասէ ցնա պատանին. Ետես զոմանս խոշտանգեալս վասն անուանն այնորիկ զոր Քրիստոս ասեն, ոչ հաւանեալ ըստ հրամանի Թագաւորին առ՝ի չզոհել կռոցն, և վաղվաղակի առանց բռնադատելոյ ասէ ցդպիրսն. Գրեցէք և զիմ անունս ընդ արսն ընդ այնոսիկ, քանզի մեծաւ ցանկութեամբ ախորժեմ մեռանել ընդ նոսա։ Սէ ցնա կինն. Եւ ո՞չ գիտացեր թէ վասն էր տանջեցան արքն այնոքիկ։ Եւ պատանին ասէ. Այացի՛քեզ թէ ոչ կամեցան զոհել աստուածոցն։ Իբրև նա զայն լուաւ, վաղվաղակի յարեաւ և խնդալից եղեալ փոխեաց զպատառեալ պատմուճանն իւր, և մեծաւ փութով դիմեաց՝ի բանտն առ նա, քանզի էր՝ի ծնօղաց հաւատացելոց և սրբոց դուստր, և երկնչէր խոստովանել վասն ամբարշտութեանն զօրացելոյ յայնժամ։ Եւ հասեալ՝ի բանտն եմուտ՝ի ներքս և անկաւ առ ոտս առն իւրում, համբուրէր զկապանս նորա և ասէր. Երանելի՛ ես դու, տէր իմ Ադրիանէ, զի գտեր զայն ինչ զոր ոչ թողին հարքն քո քեզ. արդարև այսպէս օրհնեսցի ամենայն մարդ որ երկնչի՝ի ՅԵառնէ. և այժմ, տէր իմ, հաւաքեցեր՝ի մանկութեան քում՝ զոր ոչ արդեօք

գտանելոց էիր 'ի ծերութեան քում. արդարև, տէր իմ, անհոգ երթիցես յայն յաշխարհն, համբարեալ քեզ զայն մեծութիւն բազում՝ զոր գտցես 'ի ժամանակի պիտոյից, յորժամ կարօտանայցեն բազումք մեծատունք. յորժամ չիք փոխորդւոյ ժամանակ և ոչ յանօթառնլոյ. յորժամ ոչ փրկեսցէ ոք զոք 'ի տանջանաց, և ոչ ոք ումեք երևեսցի, ոչ հայր որդւոյ և ոչ մայր դրստեր, և ոչ ինչք ժողովելեաց իւրեանց, և ոչ ծառայք տեառն, և սիրելիք ոչ երևին սիրելեաց, այլ ամենեքեան զիւրաքանչիւր բեռանց հոգասցեն. դու տէր իմ, միայն զքոյսն առքեզ առեալ երթաս խաղաղութեամբ՝ ընկալեալ զխոստումն յԱստուծոյ. դու երթաս վստահութեամբ չերկուցեալ ամենևին յահագին յառաջիկայիցն. դու իբրև զպարտս զվարձն քո պահանջեսցես յԱստուծոյ. տկարացեալ է այսուհետև բանսարկուն ընդդէմ քո։ Արդ աղաչեմ զքեզ, տէր իմ, հաստատուն կալ 'ի կոչմանդ քում յոր կոչեցարդ, և մի ինչ ամենևին զքեզ 'ի գեղեցիկ առաջիկայիցդ վրիպեցուսցէ, մի ազգ և մի տոհմ, մի ծնօղք և մի ինչք, մի ստացուածք և մի ծառայք և աղախնայք, և մի այլ ինչ յերկրաւորացս. զի ամենայն ինչ անցանելոց է և ապականելոց. յաւիտենականին միայն թեւարկեա, զոր յետ սակաւ ժամու տեսցես զանանցանելոյն. (1) և մի զքո ոլորդ մեղկացուցանեն աղերս բանք բարեկամաց քոց, և գողասցեն զհաւատս քո գեղեցիկ՝ նոզկտալի և հրապուրիչ բանք նոցա. ատեա զողոքանս նոցա, ուրացիր զամբարիշտ խրատս նոցա։ Ընդ սուրբս ընդ այնոսիկ միայն հայեաց, նմանեա ժուժկալութեան նոցա, նմանեա համբերութեան դոցա։ Մի խռովեսցէ զքեզ մոերմութիւն թագաւորին. մի զարհուրեցուսցէ զքեզ տեսիլք տանջանացն. մի զանգիտեցուսցէ զքեզ հուրս այս, որովհետև խրոխտացար 'ի վերայ՝ յաւիտենական անշէջ բոցոյն։

Եւ յորժամ կատարեաց զբանս զայսոսիկ՝ լռեաց, քանզի երեկոյ իսկ էր այնուհետև։ Յայնժամ ասէ ցնա Ադրիանոս. Երթ 'ի տուն քո և անդ լեր. և յորժամ գիտացիս զմուտ դատաստանին մերոյ՝ կո-

(1) Յօր. զանանցանելոյն։

չեցիս զքեզ առաջի Թագաւորին, զի եկեալ տեսցես զվախճանն մեր։ Եւ յարուցեալ Անիտոլի շուրջ եկն զբոլորովքն, և համբուրելով զիւրաքանչիւր կապանս նոցա, քանզի էին Թուով արք իբրև քառասուն և երեք. և մեծաւ աղաչանօք ասէ ցնոսա. Փոխանակ ձեր, տեարք ծառայք Աստուծոյ, ձեռնտուք լերուք ոչխարիդ Քրիստոսի, ուսուցէք դմա զնշանակ համբերութեանդ, խելամուտ արարէք անանց պարգևաց, զորոց ժուժկալութիւն առիթ լինի. սա է պտուղ ձերոց տանջանացդ. ահաւասիկ շահեցարուք զսորա հոգիս ընդ ձերումդ. փոխատու լիցի ձեզ և յայսմ Քրիստոս. լերուք դմա հարք փոխանակ մարմնական ամբարիշտ ծնօղացն. հաւատարմացուցէք վասն երանելի վախճանին, զի անյագ եղեալ այնու փափագանօք՝ կարասցէ տեսել՝ի նահատակութեանն։

Եւ զայս ասացեալ անկաւ առ ոտս նոցա և երկիր եպագ նոցա, և դարձաւ ջոգաւ առ Ադրիանոս, քանզի էր՝ի ներքնումն բանտին պնդեալ՝ի կոձեղ, և ասէ ցնա. Տես քաջ տէր իմ։ մի՛ հայիր՝ի գեղեցկութիւն մարմնոյ քո, և մի՛՝ի բարձրութիւն հասակիդ քո, զի այդ ամենայն կերակուր որդանց է. մի՛ զբաղեցուսցէ զքեզ ոսկի կամ արծաթ կամ հանդերձս կամ ստացուածս, կամ այլ իրք պալատականք, զի ոչ ինչ ամենևին մնտակաց լինի՝՝ի ժամուն յայնմիկ, այլ ամենայն աստէն մոռացեալ կայ. չէք անդ կաշառ ումեք տալ վասն անձին իւրոյ, այլ միայն սուրբ հոգւովդ կաշառի Աստուած։ Եւ զայս ասացեալ ողջոյն ետ նմա և եկ գնաց՝՝ի տուն իւր. և անդ աղաչէր զԱստուած զտիւ և զգիշեր զի հաստատուն կացցէ՝՝ի խոստովանութեան այր իւր։

Յետ աւուրց ինչ յորժամ գիտաց երանելին Ադրիանոս եթէ՝՝ի հարց և՝՝ի փորձ դատաստանաց մնտնելոց էր, ասէ ցսուրբսն. Հրամայեցէք ինձ երթալ ածել զաղախինն ձեր, զի առընթեր կացցէ՝՝ի վկայութեանս մերում, և տեսցէ զվախճանն մեր. քանզի զայս խոստացայ նմա երդմամբ հանդերձ։ Եւ նոցա հրամայեալ, և ետ ինչս բանտապետացն և եկ գնաց, և ետ երաշխաւոր ընդ ինքեան զժողովս սրբոցն։ Եւ մինչդեռ երթայր՝՝ի ճանապարհի, ետես զնա ոմն ծանօթ՝՝ի քա-

զաքացեացն և ընթացեալ պատմեաց Անիտոլեայ ա-
մուսնոյ իւրոյ և ասէ. Արձակեցաւ Ադրիանոս 'ի կա-
պանաց և գայ մօտ 'ի տուն. 'ի Ճանապարհի թողն զնա։
Իսկ նա ոչ հաւատաց և ասէ. Ո՞վ արձակէ զնա յայնց
կապանաց. քաւ լիցի նմա թուլանալ և որոշիլ 'ի սըր-
բոցն յայնցանէ։ Եւ մինչդեռ զայն խօսէին, ահա այլ
ոմն ծառայ նորին եկն եմուտ թափ 'ի դրէ և ասէ.
Տէրն իմ արձակեցաւ և ահաւասիկ գայ։ Իբրև լուաւ
կինն կարծեաց եթէ 'ի մարտիրոսութենէ փախու-
ցեալ է. տրտմեցաւ յոյժ և լայր դառնապէս։ Եւ իբրև
ետես զնա՝ յոտն եկաց, և թողեալ զգործն զոր ունէր
'ի ձեռաց անտի, և ընթացեալ վաղվաղակի փակեաց
զդուրս տանն և աղաղակ բարձեալ ասէ. Հեռի լիցի
յինէն անկեալն յԱստուծոյ, և որ ստեաց տեառն Աս-
տուծոյ իւրոյ. քաւ լիցի ինձ խօսել ընդ բերանոյ՝ որ
ուրացեալ է զԱստուած, և լսել բան 'ի լեզուէ նենգա-
ւորէ՝ որ դժնեաց արարչին իւրոյ։ Եւ ասէ ցայրն իւր
առ դուրսն. Ա՛յ թշուառական և անաստուած այր, ո՞
արար քեզ հարկ ձեռնամուխ լինել յիրս՝ որում չէիր
ատակ կատարել. ո՞ տոռն արձակեալ ձգեաց Եհան ըզ-
քեզ յայնպիսի խաղաղական և հանգստական կայանէ.
աղէ ասա դու, զիա՞րդ փախեար չև Ճակատեալ 'ի պա-
տարազմի. զիա՞րդ զէնընկէց եղեր չև տեսեալ զնահա-
տակն. զիա՞րդ վիրաւորեցար չև նետս 'ի գրկաց ոստու-
ցեալ. զիա՞րդ յաղգէ սպանողաց պատարագ մաքուր
Աստուծոյ մատչիցի. հնա՞ր էր արդեօք յարիւնահեղ
տեղւոջէ և 'ի շաղախեալ օդոյ անուշահոտ խունկ մա-
տուցանել Աստուծոյ։ Այլ ես հեղգս զի՞նչ գործեցից որ
դիպեցայ առն ամբարշտի և յամբարշտաց զաւակէ. և
ոչ մի ժամ կոչեցայ կին մարտիրոսի, այլ վաղվաղակի
եղէ ուրացողի. առ սակաւ ժամն եղէն պարծանքս իմ,
և ահա յաւիտեանս յաւիտենից նախատինք իմ։ առ
մի ժամ պարծեցայ 'ի կանայս, և արդ զնամ կորակոր
ամաչեցեալ 'ի մէջ նոցա։

Իսկ երանելին Ադրիանոս լսէր 'ի դրացն և համբե-
րէր. քանզի յոյժ ուրախ էր ընդ բանս նորա. առաւել
ևս ձեպէր կատարել զայն յորս փութայրն. և զարմա-
ցեալ էր զի կին մարդ այնպէս խօսէր, և այն ևս զի
մանուկ էր և նորահարսն. քանզի չև ևս էր երեքտա-

սան ամիս հարսանեաց նոցա։ Ա.յլ յորժամ ետես կարի տագնապեալ զկինն՝ ասէ ցնա. Բաց ինձ զդուրս, տիկին իմ Անիտոլի. ոչ որպէս դու կարծես եթէ փախուցեալ եմ՝ ի մարտիրոսութենէն, քաւ լիցի. այլ եկի առնուլ ըզքեզ, զի մօտակաց եղեալ տեսցես զվախճանն մեր, որպէս և բանս իսկ եդի ընդ քեզ։ Եւ նա ոչ հաւատայր նմա, այլ ասէր. Ահա և զիս ևս նենգէ անօրէնս. ահա ստէ միւս ևս Յուդա. 'ի բաց գնա յինէն, ապա թէ ոչ՝ անձամբ անձին դաւ առնեմ, քանզի այդ առաջի կայ ինձ։ Իսկ իբրև կարի յամեաց և ոչ եբաց, ասէ ցնա. Բա՛ց. ապա թէ ոչ՝ գնամ և ոչ ևս տեսանես զիս. յայնժամ սուգ առնուցուս զի ոչ տեսեր զիս յառաջ քան զելս իմ յաշխարհէս. քանզի երաշխաւոր ընդ իմ ետու զգունդ սրբոցն. և եթէ խնդիր լինիցի ինձ և ոչ գտցեն՝ կրեալոց են և զիմ տանջանսն 'ի վերայ իւրեանց վիրացն. և ոչ կարեն ժուժել, քանզի գրէ թէ մեռեալ իսկ են 'ի տանջանաց բռնաւորին։

Եւ յորժամ լուաւ եթէ նեղին սուրբքն, վաղվաղակի եբաց զդուրսն, և անկեալ զմիմեամբք փարէին. և ասէ ցնա սուրբն Ադրիանոս. Երանելի ես դու 'ի կանայս, զի դու միայն գիտացեր շահել զայր քո. արդարև դու միայն երևեցար յերկրի այրասէր. օրհնեսցի պսակ քո. դու ուղերձեցեր զպտուղ յաղթութեան, քանզի և դու մարտիրոսանաս, թէպէտ և ոչ չարչարիս։ Եւ առեալ զնա գնաց. և մինչդեռ երթային 'ի Ճանապարհին, ասէ ցնա Ադրիանոս. Ո՛վ կին, զիա՞րդ յանձն արարեր զինչս տանն քո։ Եւ նորա պատասխանի տուեալ ասէ. Մի՛, տէր իմ, մի՛ փոյթ առներ զերկրաւորացս, զի մի՛ զբաղեցուցանէն զքեզ զինքեամբք. զմինն միայն հոգա, թէ որպէս կատարեսցես յոր կոչեցարդ։ Ի բաց արա 'ի քէն զաշխարհս զայս՝ որ ապականելոց է. զայն միայն փութա կատարել որ առանց ապականութեանն է, զառաջիկայն քեզ և սրբոցն այնոցիկ ընդորս Ճանապարհորդես։

Եւ մտեալ նոցա 'ի բանտն, դիմեաց աղախինն Քրիստոսի Անիտոլի առ սուրբն, և անկեալ երկիր պագանէր կապանաց նոցա. և ետես զմարմինս նոցա տրոբեալս 'ի տանջանացն, մինչև որդանցն եռալ 'ի նոցանէ և գնալ 'ի գետնի. և հրաշացեալ ընդ սաստկու-

թիւնն, և յղեաց մի'ի ծառայից իւրոց 'ի տունն և հրամայեաց բերել զամենայն բարակ կտաւս զզգենլիս իւր՝ բազում և մեծագնի, քանզի էր յազատ յազգէ և մեծ. և առեալ պատառեաց զկտաւն զայն և մաքրեաց զթաքրախ վիրաց նոցա, և պատեաց զձեռս նոցա և զոտս, քանզի էին լուծեալք և ընդարմացեալք յերկաթոյն. և մնաց առ նոսա 'ի բանտին աւուրս եօթն, և ամենայն իրօք դարմանէր զսուրբսն։

Եւ եկեալ հասեալ աւուրն յորում զհարցուփորձն առնէր բռնաւորն, և հրամայեաց ածել զսուրբսն զառաջեաւն. և վաղվաղակի երթեալ'ի բանտն հանին զամենեսեան, և բարձեալ բերէին 'ի վերայ տրամուղդրաստից, քանզի էին լուծեալք 'ի տանջանացն, և ամենեքեան կապեալք շղթայիւք. բայց միայն Ադրիանոս երթայր գնայր կապեալ ձեռս 'ի յետս. և երանելին Անիտոլի երթայր զկնի նորա աղաչելով և ասէր. Տէր իմ Ադրիանէ, ախոյան լեր ընդդէմ սատանայի վառեալ զինուքն Քրիստոսի. մի՛ երկնչիր 'ի տանջանացն, ահա մօտակաց է փրկիչն Յիսուս և օգնէ քեզ։ Եւ իբրև մերձ եղեն 'ի տեղի դատաստանին, տեսեալ զնոսա դահճապետին՝ եմուտ և ասէ ցթագաւորն. Ահաւասիկ հասեալ կան մօտ յատեան դատապարտեալքն։ Եւ իբրև լուաւ բռնաւորն, ասէ. Մերկացուցէք զամենեսեան և ածէք 'ի նեղքս, զի տեսցեն զմիմեանց տանջանսն։ Եւ ասէ դահճապետն. Ա.յնոքիկ որ յառաջագոյն տանջեցան՝ ոչ կարեն հարցանել, զի կարի նուաղեալ են. այլ կայ Ադրիանոս մատաղագոյն և բաւական 'ի համբերել ամենայն հարցմանց. այլ այնոցիկ շօշեալ ամենայն մարմինքն, մինչև կողք նոցա երևին արտաքոյ. արդ եթէ հարցցին՝ թալանան. և ահա բուժին յայլոց ևս յառաջիկայ տանջանացն։ Ա.յլ մեք ոչ կամիմք համառօտ տանջանօք դատաստանին վճարել զնոսա յայս կենացս իբրև զսակաւամեղս. կազդուրեսցին սակաւ ինչ աւուրս, որպէս զի արժանի ընդ յանցանացն փոխարէնս կրեսցեն. արդ եթէ հրամայեսցէ ձեր քաջութիւնդ՝ Ադրիանոս եկեսցէ յառաջ'ի հարց։ Բռնաւորն ասէ. Մերկացուցէք զնա և ածէք 'ի նեղքս։ Եւ վաղվաղակի մերկացուցին զնա և ածին զառաջեաւ, բարձեալ ըզ-

փայտ իւր։ Եւ յերթալն նորա ասէն սուրբքն ցնա. Ադրիանէ, ահա արժանի եղեր առնուլ զխաչ քո և երթալ զհետ Քրիստոսի. զգոյշ լեր մի դառնայցես 'ի նանիր առ 'ի յետոյն քո. մի զգանձդ քո կապտեսցէ բանսարկուն. մի երկիցես յորոց տեսանեսդ. ծաղը արա զհրամանս բռնաւորին, զի չեն արժանի չարչարանք այժմեան ժամանակիս՝ հանդերձեալ փառացն որ յայտնելոց են 'ի մեզ։ Եւ երանելին Անիտոլի հուպ լեալ 'ի նա ասէ. Տես քաջ, տէր իմ, առ Աստուած միայն դիր զուշդ քո. մի զարհուրեցուսցէ զքեզ տեսիլ տանջանացն. սակաւ ինչ է երկիւղդ և յաւիտեանս յաւիտենից է հանդիստն. խուն են խոշտանգանքն և յաւիտենական գովութիւնքն. փոքր մի չարչարիս, և ընդ հրեշտակս ուրախանաս յաւիտեան. զի եթէ յորժամ մարմնապէս զինուորեալն էիր, բազում անգամ յիշխանաց և 'ի զօրագլխաց ճաղկէիր վասն սակաւ մի թոշակի, զիաւրդ ոչ առաւել ևս համբերեսցես եկելոց տանջանացդ 'ի վերայ քո՝ որ վասն երկնից արքայութեանն։ Եւ զայս ասացեալ երանելոյն Անիտոլեայ՝ մուծին 'ի նեղքս զԱդրիանոս։

Իբրև ետես զնա բռնաւորն ասէ. Զի՞ է Ադրիանէ, տակաւին 'ի մոլորութե՞ան քում կաս և կամիս չարաւ կորնչել։ Եւ ասէ Ադրիանոս. Ասացի քեզ թէ 'ի մոլորութենէ այժմ զգաստացայ, այսուհետև ոչ կամիմ կորնչել։ Ասէ ցնա բռնաւորն. Ուրեմն ո՞չ կամիս զոհել աստուածոցն, և ո՞չ երկիր պագանել նոցա որպէս ես և ամենեքեան։ Ադրիանոս ասէ. Ընդէ՞ր մոլորիս և զայլս մոլորեցուցանես, և զանձդ կորուսանես և զբազմութիւնս զայս, երկիր պագանելով անշնչոցն, թողեալ զԱստուած զարարիչն երկնի և երկրի և ծովու և ցամաքի և ամենայն որ 'ի նոսա։ Ասէ ցնա բռնաւորն. Եւ զմեծ աստուածսն՝ փոքո՞ւնս համարիս։ Ադրիանոս ասէ. Քանզի ոչիսկ են և ոչինչ։ Եւ բարկացեալ թագաւորն հրամայեաց տանջել զնա բրօք։ Եւ լուեալ երանելոյն Անիտոլեայ թէ սկսաւ[1] տանջիլ, ընթացաւ առ սուրբն, և աւետիս ետ նոցա և ասէ. Տէրն իմ սկիզբն արար վկայութեան։ Եւ նոցա լուեալ վաղվա-

1 Յօր. սակաւ փանջեալ։

զակի յաղօթս կացին վասն նորա։ Եւ 'ի տանջել սրբոյն Ադրիանոսի՝ ասէ բռնաւորն ցդահիճսն. Ասացէք դմա թէ մի՛ հայհոյեր զաստուածսն։ Ադրիանոս ասէ. Զի եթէ ես այսչափ ատանջիմ հայհոյել զոչինչսն, քեզ արդեօք որպիսի՞ տանջանք ամբարեալ պահին՝ հայհոյելով զմիտանջենաւորն Աստուած։ Ասէ ցնա բռնաւորն. Մոլորեցուցիչքն այն ուսուցին քեզ զբանդ զայդ։ Ադրիանոս ասէ. Ընդէ՞ր մոլորեցուցիչս կոչես զառաջնորդսն կենաց. դուք էք մոլորեցուցիչք որք պատրէք զմարդիկ 'ի հրապոյրս կորստեան։

Ապաւել'ի ցասումն բարկութեան շարժեալ թագաւորն, հրամայեաց չորից դահճաց տանջել զնա ստուար ջալոտիւք։ Ադրիանոս ասէ. Որչափ յաւելուս զազգն տանջանաց՝ բազմապատիկ յօրինես զքեզ պսակացն։ Իսկ երանելին Անիտոլի զամենայն զբանս թագաւորին և զպատասխանիսն Ադրիանոսի՝ որչափ և լսէր՝ երթայր պատմէր սրբոցն։ Ասէ ցնա բռնաւորն. Խնայեա 'ի քեզ և 'ի մանկութիւն քո. ընդէ՞ր ընդ վայր կորընչիս. մեծովք աստուածովքն երդուեալ, զի տեսանեմ զքեզ քո և ողորմիմ քեզ։ Ադրիանոս ասէ. Ահաւասիկ խնայեմ յիս յայսմ՞ետէ, զի մի՛ և իսպառ կորեայց։ Բռնաւորն ասէ. Խոստովանեա յաստուածսն՝ զի քաւիչ լիցին քեզ, և ես մեծարեցից զքեզ և 'ի քո յառաջին կարգն հաստատեցից. քանզի ոչ դու իբրև զնոսա ես, այլ ազատ ես և մեծատան որդի. զի թէպէտ և մանուկ ես, այլ մեծ պատիւ ունիս. նոքա շինականք են և որդիք տնանկաց և անմտաց։ Ադրիանոս ասէ. Ասեմ[1] և ես եթէ գիտես դու զգաւառն իմ. և ճանաչես զազգն իմ և զնախնիսն. այլ եթէ զնոցա զազատութիւնն գիտէիր և զմեծութիւնն, և զգաւառն որում ակն ունին անկանէիր արդեօք առ ոտս նոցա և աղաչէիր աղօթս առնել վասն քո, և քոյին ձեռօքդ փչէիր զպատկերս աստուածոցն քոց։ Զայրացեալ դարձեալ բռնաւորն հրամայեաց տանջել զնոսոյ տեղի նորա՝ չորից զինուորաց. և յորժամ եռեսն այնուհետև վայրեալ զաղիսն նորա, հրամայեաց թեթևացուցանել զտանջանսն. քանզի էր փափուկ յոյժ և մանուկ իբրև քսան և ու-

1 Յօր. ասէմ։

թից ամաց։ Եւ ասէ ցնա բռնաւորն. Տեսանէս զրչափ խնայեմ՝ի քեզ. եթէ միայն անուանէիր զաստուածն՝ կոչէի զբժիշկն և հրամայէի բժշկել զքեզ, և յայնմ օրէ ընդ իս շրջէիր՝ի ներքս՝ի դրան արքունի։ Ադրիանոս ասէ. Որովհետև խոստացար բժշկել զիս և պատուել և մուծանել՝ի թագաւորական ապարանս քո, պատմեսցեն ինձ աստուածքն քո թէ զի՞նչ կամեսցին ինձ առնել և խոստացին ինձ զհաշտութիւն իւրեանց, և ես երկիր պագից նոցա և զոհեցից որպէս և դու կամիս։ Այսէ ցնա թագաւորն. Այլ նոքա ոչ խօսին։ Ադրիանոս ասէ. Ո՛վ ամբարիշտ և անօրէն, և դու զի՞ զոհես զխօսունս՝ անխօսիցն։ Եւ բարկացեալ թագաւորն հրամայեաց կապել զնա և տանել՝ի բանտ. օր յայտ արարեալ՝ յորում դարձեալ զամենեսեան միանգամայն ածցէ՝ի դատաստան։ Եւ առեալ զինուորացն զնոսա տարան՝ի բանտն, զոմանս՝ի ձիգ և զոմանս՝ի քարշ, որք՝ի տանջանաց անտի լուծեալք էին։

Իսկ երանելին Անիտոլի օժանդակէր սրբոյն Ադրիանոսի, և եդեալ զձեռանն՝ի ներքոյ պարանոցի նորա և ասէ ցնա. Երանելի ես դու, տէր իմ, զի արժանի եղեր թուել՝ի գունդս սրբոցն. երանելի ես դու տէր իմ, զի արժանի եղեր և չարչարեցար փոխանակ այնորիկ որ վասն քո չարչարեցաւ. ահա արդարև երթաս տեսանես զփառս նորա, զի որք կցորդ եղեն չարչարանաց նորա՝ հաղորդ լինին և փառաց նորա։ Եւ իբրև մտին՝ի բանտն արգելան, ժողովեալ ամենայն սրբոցն ողջոյն տային Ադրիանոսի, մինչև անգամ որ լուծեալ անկեալքն էին և կային՝ի գետնի, սողելով՝ի ձեռս՝ գնային տալ նմա զխաղաղութիւն և համբուրէին զնա ողջունիւ սրբութեան։ Իսկ երանելին Անիտոլի մաքրէր զարիւնն՝ի սրբոյն Ադրիանոսէ և օծանէր զինքն. և սուրբքն ողջոյն տուեալ Ադրիանոսի և ասեն ցնա. Ուրախ լեր՝ի Տէր, քանզի գրեցաւ անուն քո ընդ առաքինի նահատակն։ Այսէ ցնոսա Ադրիանոս. Եւ դուք ուրախ լերուք, քանզի ձեր է վաստակդ և ձեր է պսակն. այլ աղօթս արարէք զի մի՛ չար ինչ սերմանեսցէ յիս բանսարկուն, քանզի յոյժ նուաղեալ եմ։ Այսեն ցնա սուրբքն. Քաջալերեաց, ոչ յաղթահարէ զքեզ

սատանայ, քանզի փախեաւ 'ի քէն յորժամ ետես զմեծ ժուժկալութիւն քո. և մեք երկնչեաք յորժամ էիր մարդ, այլ յորժամ 'ի վերոյ եղեր քան զմարդկային բնութիւն՝ ոչ կարէ այլանդակս ինչ իմանալ վասն քո բանսարկուն. մի՛ այսուհետև յերկուանալ ինչ։

Կանայք ոմանք պաշտօնեայք և այլ ևս բազումք 'ի ծանօթ կանանց էին ցանկորդեալք առ սուրբն, սպաս տանելով նոցա, և այլք կտաւով մաքրէին զթաքրախ վիրացն. և այսպէս ամենեքեան բաժանէին ըզսուրբն 'ի միջի իւրեանց, վշտակից լինել չարչարանաց նոցա արբանեկութեամբն իւրեանց։ Եւ լուեալ զայն Թագաւորին՝ եթէ Թափեցաւ 'ի քաղաքէն բազմութիւն կանանց մանաւանդ ազատաց 'ի տես սրբոցն, սրտմտեցաւ յոյժ և հրամայեաց մի՛ զոք ամենևին 'ի կանանց Թողացուցանել մտանել առ սուրբն։ Իբրև գիտաց երանելին Անիտոլի Թէ արգելան կանայք մտանել 'ի բանտն առ 'ի սպասաւորել սրբոցն, յարուցեալ մաքրեաց զՀերս իւր և զգեցաւ զգեստ առնացի, մտանէր առ նոսա իբրև զայր մարդ և սպասաւորէր նոցա՝ միայն, որպէս յառաջն ամենայն կանայքն. և յորժամ ընայր զպէտս ամենեցուն՝ նստէր առ ոտն Ադրիանոսի և մեծաւ աղերսանօք ասէր ցնա. Աղաչեմ զքեզ, տէր իմ, յուշ լիցի քեզ զոյգ բնակութիւն մեր. յիշեա, տէր իմ, զի գործակից եղէ քեզ 'ի մարտիրոսութեանդ. յիշեա զի ես կրթեցի 'ի նահատակութիւնդ զքեզ. յիշեա զի ես եղէ առիթ պսակացդ այդոցիկ. աղաչեա զտէր մեր Քրիստոս՝ առնուլ միանգամայն ընդ քեզ զիս. զի որպէս կցորդ եղաք յայսմ աշխարհիս՝ 'ի վշտագին և 'ի մեղսասէր կեանս, նոյնպէս և հաղորդ լիցուք յայսմ երանելի վախճանիս։ Այլ աղաչեմ զքեզ, տէր իմ, զայդ հատուցումն ինձ նախ հայցեա 'ի Փրկչէն, և լիցի քեզ սկիզբն խնդրուածոց այդ. և գիտեմ Թէ տայ քեզ, քանզի ախորժէ հայցել 'ի ձէնջ. զի դու քեզէն տեղեակ ես և գիտես զանառակութիւն քաղաքիս և զամբարշտութիւն Թագաւորին. զգոյշ, եթէ ուրուք 'ի բանս անկեալ բռնաւորն՝ զուգեսցէ զիս ընդ ումեք անաստուած անօրինացն. մի՛ պղծեսցեն ամբարիշտք զսուրբ անկողին քո. զայդ իսկ ուսար յերանելի առաքելոյն։ Տուր ինձ զանձն զոգաստութեան՝ զվախճա-

նիլն[1] զկնի քո. ուսցին և այլ կանայք երախտաւոր լինել արանց իւրեանց, տեսանելով զքո գութդ որ առ իս է։

Եւ զայս ասացեալ՝ դարձեալ յարեաւ առնի կերպարանօք, և շուրջ եկն զսրբովքն դարմանելով զնոսա, որպէս զիարդ ումեք պիտոյ էր. կերակրէր զնոսա դոյզն և սուղ ինչ աղապէտօք, քանզի յոյժ տկարացեալ էին. և սկսան այնուհետև ճաշակ լինել վիրացն։ Լուեալ և այլոց կանանցն եթէ մաքրեաց Անատոլի զհերս իւր և առնի կերպարանօք սպասաւորէ սրբոցն, նախանձեցան զբարիոք նախանձն և մաքրեցին զիւրաքանչիւր հերս, և այնպէս առնի զգեստիւ մտանէին և սպասաւորէին սրբոցն, մինչև անգամ յաշխարհականացն ոմանք և յազատացն ոչ սակաւք զնոցն առնէին։

Իսկ իբրև լուաւ բռնաւորն զոր առնէին կանայքն, և զի այնուհետև մերձ 'ի մահ էին սուրբքն՝ հրամայեաց տանել սալ դարբնական 'ի բանտն և դնել 'ի ներքոյ ոտից նոցա և նգաւ մեծաւ բեկանել զսրունս նոցա. և ասէր թէ՝ Մի՛ ըստ օրինակի այլոց մարդկան վճարեսցին 'ի կենացս։ Եւ զայն լուեալ վաղվաղակի գային բերէին դահիճքն զհրամայեալ գործին 'ի կապարանն։

Իբրև գիտաց երանելին Անիտոլի զվճիռ մահուն, յարուցեալ ընդ առաջ ընթանայր դահճացն և ասէր ցնոսա. Աղաչեմ զձեզ, տեարք, աստի յԱդրիանոսէ ըսկիզբն արարէք. զգոյշ, եթէ տեսանելով զսրբոցն զայնպիսի զդառն տանջանսն՝ զարհուրեսցի ինչ և զանգիտեսցի։ Եւ յորժամ եդին զսալն առ ոտս նորա, առեալ երանելոյն Անիտոլեայ զոտս սրբոյն Ադրիանոսի պնդեր 'ի վերայ սալին. և մեծաւ ուժով բախեալ դահճացն նգաւ՝ 'ի բաց կտրեցին զոտս նորա ջախջախելով զամենայն ոսկերսն։ Ասէ ցնա Անիտոլի. Աղաչեմ զքեզ, ծառայ Քրիստոսի, մինչդեռ յոգւոջ ես՝ ձգեա զձեռն քո և հատցես 'ի քէն զայդ ևս, զի հաւասար սրբոցդ լինիցիս և դու. քանզի դոքա աւելի չարչարեցան քան զքեզ։ Եւ նորա կարկառեալ զբազուկն, և նա դնէր 'ի վերայ սալին. և դահճին զարկեալ 'ի բաց կտրէր 'ի սալէն. և սուրբն վաղվաղակի աւանդեաց զոգին։ Եւ դահճացն շուրջ եկեալ հանդերձ սալիւն[2] և կեդիւ[3] ջարդեցին

1. Յօր. զվերոյնն էլին։
2. Յօր. սայլիւն։
3. Յոյն բնագիրն նգաս ասէ որպէս 'ի վեր անգր։

զսրունսն ամենեցուն. մինչև հասեալ առ նոսա դահ-
ճացն, սուրբքն յառաջագոյն պարզեին զոտսն՝ գոչելով
և ասելով. Տէր Յիսուս ընկալ զհոգիս մեր։ Եւ ամենե-
քեան աւանդեցին զհոգիս իւրեանց։

Յայնժամ խորհուրդ 'ի մէջ առեալ բռնաւորին հան-
դերձ պղծովք և անիրաւաք՝ հրամայեաց 'ի հուր ար-
կանել զմարմինս նոցա. ասէ. Գայցեն Գալիլեացիքն և
առնուն զնոսա։ Իսկ երանելւոյն Անիտոլեայ դիմեալ
կաշկանդեաց զհատեալ ձեռնն Ադրիանոսի և ընկէց
'ի ծոց իւր։ Բարձին այնուհետև դահիճքն զմարմինս
սրբոցն և տարան արկանել 'ի հուրն, քանզի էր յառա-
ջագոյն ջեռուցեալ զհնոցն. զկնի երթայր և երանելին
Անիտոլի և ընդունէր զկաթս արեան սրբոյն 'ի ձեռս
իւր և օծանէր զինքն. նոյնպէս և այլ բարեպաշտ կա-
նայք զկնի երթային, և յաղատաց ոչ սակաւք, ընդու-
նելով պատուական կտաւովք և ծիրանեօք զինջեալ ա-
րիւնն 'ի մարմնոց սրբոցն, և թաքուցանէին 'ի ծոցս
իւրեանց. մինչև զհանդերձս անգամ դահճացն բա-
զում ոսկւով և ակամբք պատուականօք զարդու գնէին,
քանզի թաթաւեալ էին արեամբ սրբոցն։ Եւ հասեալ
'ի հնոց անդր՝ ընկեցին 'ի ներքս 'ի վերուստ կողմանէ.
կային և մօտ անդր բարեպաշտ կանայք որ և մեծաւ
գոչմամբ լային և ասէին. Յիշեցէք զմեզ, տեարք, 'ի
հանդիստեան ձերում։ Իսկ երանելին Անիտոլի կամէր
ընկենուլ զինքն 'ի հնոցն, և ձիչ բարձեալ ասէր. Աղա-
չեմ զձեզ, ծառայք Աստուծոյ, եկիք և ես ընդ ձեզ։ Եւ
իբրև ընկեցին զսուրբսն 'ի հնոցն, յանկարծակի որո-
տումն եղև և անձրև սաստիկ և փայլատակունք և շար-
ժումն մեծ, մինչև սասանել քաղաքին և ամենայն տե-
ղեացն, և շինանել հնոցի հրոյն 'ի բազմութենէ ջուրց
անձրևացն։ Իբրև տեսին դահիճքն զարհաւիրսն զայ-
նոսիկ՝ փախեան. և ոմանք 'ի նոցանէ մեռան, անկեալք
յերեսս առ փախստեանն. և դիմեցին հաւատացեալքն
որ անդ կային, հանդերձ երանելեաւն Անիտոլիւ և այ-
լովք ևս կանամբք, յափշտակեցին զնշխարս վկայիցն, և
գտին անվնաս, մինչև մազ անգամ ոչ էր այրեցեալ 'ի
հրոյ անտի։

Այր ոմն բարեպաշտ և երկիւղած յԱստուծոյ հան-
դերձ կնաւ իւրով մատուցեալ առ երանելին Անիտոլի

և առ այլ էղբարսն, աղաչէր և ասէր. Մեք յայնկոյս քա-
ղաքիս այսորիկ լինիմք, քանզի տեսեալ զամբարշտու-
թիւն քաղաքիս և զարիւնհեղութիւն անօրէն Թագա-
ւորին, 'ի բաղում ժամանակաց հետէ փափագէաք 'ի
Բիւզանդիոն, ատելի համարելով զմեր վայրս. արդ
եթէ կամ է ձեզ՝ տուք 'ի մեզ զսուրբ վկայսդ, և դի-
ցուք 'ի նաւի, և երթեալ յայնկոյս՝ պահեսցուք առ մեզ
մինչև 'ի վախճանել անօրէն Թագաւորին. և ապա յայն-
ժամ կատարեալ դիրս արասցուք դոցա 'ի տեղւոջ եր-
կրպագութեան. քանզի սովորութիւն է մեզ այսպէս
առնել. ապա եթէ ասա թողումք, լսէ Թագաւորն և
հրամայէ դարձեալ միւսանգամ այրել զդոսա, և գտա-
նիմք մեք մատնիչք այնոցիկ զորս Աստուած փրկեաց 'ի
հրոյն՝ հանդերձ շարժմամբ և որոտմամբ և անձրևաց։
Եւ հաճոյ թուեցաւ բանն առաջի նոցա. և առեալ եդին
զնոսա 'ի նաւի և տարան 'ի Բիւզանդիոն, աջողակ հող-
մոյ ուղեկից լեալ նոցա։ Իսկ երանելին Անիտոլի ճնաց
անդէն ունելով զձեռն Ադրիանոսի. քանզի ասէր, գու-
ցէ յափշտակեսցին մարմինք սրբոցն և գտայց մատնիչ
եղեալ յուսոյն իմոյ։ Առեալ այնուհետև զձեռն և
պատեաց 'ի ծիրանւոջ խնկօք և իւղովք և եդ 'ի մա-
հիճն իւր 'ի մնարիոց կողմանէն, առանց ուրուք գի-
տելոյ։

Եւ յետ սակաւ ինչ աւուրց այր մի քաղաքացի հա-
զարապետ մատուցեալ առ Թագաւորն, խնդրեաց իւր
'ի կնութեան զերանելին Անիտոլի, քանզի էր ընչաւէտ
և առաջին յազատ կանանց և ամենևին պարկեշտ։ Ա-
ռաքէ այրն զոմանս 'ի ծանօթ կանանցն խօսել ընդ
Անիտոլեայ։ Իսկ նորա պատասխանի տուեալ ասէ ցե-
կեալ կանայսն. Եւ ես իբրև լուայ յոյժ ուրախ եղէ.
քանզի ո՞ տայր ինձ արդեօք զուգել ընդ այնպիսւոյ
առնն. այլ թողացուցէք ինձ ամիս երիս, որպէս զի
պատրաստեցայց, քանզի ոչ եթէ փոքր ինչ է որ խընդրէն զիս։ Եւ զայս հնարէր, քանզի կամէր փախչել
անդր ուր մարմինք սրբոցն էր. և առ անգամ մի առաքեաց հաճելով զմիտս կանանցն։ Եւ իբրև գնացին
կանայքն՝ յարեաւ երանելին Անիտոլի, և չոգաւ մօտ 'ի
մահիճն ուր կայր ձեռն երանելոյն Ադրիանոսի, և անկեալ 'ի վերայ երկրի՝ ասէր. Տէր Աստուած իմ, Աս-

տուած նեղելոց, որ օգնականդ ես անօգնականից, որ մերձ ես առ մաշեալս սրտիւք. հայեաց յիս 'ի մեղաւոր աղախին քո, և մի՛ տար 'ի պղծութիւն զմարմնակիցս Ադրիանոսի վկային քո. մի՛ Տէր իմ, մի՛ մոռանար զտանջանս Ադրիանոսի ծառայի քո. քաւ լիցի Տէր, եթէ մոռացիս զկապանսն զայնոսիկ՝ զորոյ զփորձ առվասն անուանդ քո. քաւ լիցի Տէր, եթէ մոռացիս զբեկումն բարձիցն և զհատումն ձեռացս այսորիկ. քաւ լիցի Տէր, եթէ ընդունայն առնիցես զջանս և զտանջանս զոր տեսին ծառայքն քո վասն անուանդ քո. այլ զայնոսիկ յիշեա Տէր, և ազատեա զիս 'ի պատահարից թշնամեաց քոց. մի՛ պղծեսցէ նենգոտ բանսարկուն զանկողինս Ադրիանոսի ծառայի քո։ Դու ես որ փրկեցեր զծառայսն քո 'ի հրոյն բորբոքելոյ, փրկեա և զիս յակընկալութենէ ամբարշտացն։ Եւ յասել նորա զայս 'ի ձանձրութենէ և 'ի խանդաղատութենէ սրտին 'ի քուն մտեալ, և ահա մի ոմն 'ի սրբոցն յայնցանէ երևէր նմա և ասէր. Խաղաղութիւն ընդ քեզ, Անիտոլի աղախին Քրիստոսի. քաջալերեաց, ոչ անտես արար զքեզ Աստուած, և ոչ մեք մոռացաք զվաստակն քո զոր ցուցեր մեզ. այլ վաղվաղակի յերևելն մեզ Քրիստոսի, աղաչեցաք վասն քո զի եկեսցես առ մեզ, և գրեցաւ անուն քո 'ի գիրս սրբոցն։ Ասէ ցնա երանելին Անիտոլի. Երևեցա՞ւ քեզ Քրիստոս և տեառն իմում։ Ասէ. Ա՛յո՛, և յառաջ քան զմեզ երևեցաւ Քրիստոսի տէրն քո Ադրիանոս. այլ դու յարուցեալ մուտ 'ինաւ և եկ առ մեզ. քանզի անդ այց արասցէ քեզ Աստուած և ածցէ առ մեզ։

Եւ 'ի միտս իւր աղօթեալ յարեաւ 'ի քնոյն, և թողեալ զամենայն ինչ, զձեռնն Ադրիանոսի առ ընդ իւր և նաւեաց. և փութացեալ երթայր ուր էին մարմինք սրբոցն. եգիտ և զայլս ոմանս հաւատացեալս փախուստականս յերեսաց թագաւորին, և նաւեաց ընդ նոսա։ Իբրև լուաւ հաղարապետն որ խնդրէր զնա իւր 'ի կընութեան՝ եթէ փախեաւ, և մտեալ առ թագաւորն խնդրեաց իւր օգնականութիւն. և զոլոր բազում առեալ ընդ իւր՝ եմուտ նոքօք 'ի նաւ և երթայր զհետ նորա. և նաւեալ ասպարէզս իբրև հաղար, հողմ ընդդիմակաց յարեաւ և ընկէց զնոսա անդրէն յետս կոյս

ուստի նաւեցան. և ոմանք 'ի նոցանէ մեռան 'ի սաստ-
կութենէ ալեացն ընկղմեալք։ Եւ իբրև 'ի մէջ գի-
շերի եղեալ, հոգի մոլորութեան սատանայ երևեցաւ
Անիտոլեայ և որոց ընդ նմա 'ի կերպարանս նաւի, յո-
րում էին նաւապետք և նաւավարք յոյժ խելամուտք.
և ասէ ցնոսա նաւապետն մեծաձայն. Ուստի՞ եղէք, և
կամ յո՞ ուշ ունիք երթալ։ Եւ նոքա ասեն. Ի Նիկոմի-
դեայ եկաք, և 'ի Բիւզանդիոն նաւեմք։ Այսէ ցնոսա.
Մոլորեալ էք, չէ այդ Հանապարհն, յայն կողմն եր-
թայք, 'ի ձախակողմն խոտորեցարուք։ Քանզի կամէր
զնոսա յանդունդս տանել, զի անդ կորուսցէ. և կար-
ծեալ նոցա թէ հաւաստիւ նաւորդք իցեն՝ յարեան և
փոխեցին զառագաստն՝ զի դիմեսցեն ընդ որ ասաց մոլ-
որեցուցիչն այն։ Եւ ահա յանկարծակի սուրբն Ադրիա-
նոս երևեցաւ իբրև 'ի նաւարկի[1], և Հիչ բարձեալ
ասէր. Եկայք որպէս և գայիքն, և մի՛ լսէք նմա, քանզի
նա ինքն է սատանայ. կորուսանել կամի զձեզ։ Եւ նոյն
ժամայն չիք եղև այն պիղծ։ Եւ երանելոյն Անիտոլեայ
յարուցեալ ետես զսուրբն Ադրիանոս զի երթայր ա-
ռաջի նոցա։ Եւ խնդալոյ եղեալ ասէ մեծաձայն. Ահա
տէր իմ. և նա ոչ ևս երևեցաւ նոցա։ Եւ այնուհետև
հողմոյ աջողակի յարուցեալ՝ տարաւ Եհան զնոսա 'ի
Բիւզանդիոն ընդ արշալուսն. և ելեալ 'ի նաւէն՝ դիմե-
ցին 'ի տունն ուր էին մարմինք սրբոցն. և անկեալ առ
նոքօք երանելոյն Անիտոլեայ և երկիր եպագ համբե-
րող և տեղական ոսկերաց նոցա. և բերեալ զհատեալ
ձեռն եդ մօտ առ Ադրիանոս. և ծունր խոնարհեցու-
ցեալ յաղօթս կայր։ Եւ իբրև յարեաւ յաղօթիցն՝ ե-
մուտ և ետ ողջոյն ամենայն եղբարց և քերց սրբոցն,
և աղաչեաց զնոսա աղօթս առնել վասն նորա. քանզի
անդ էին ժողովեալ ամենայն հաւատացեալքն Քրիստո-
սի և օրհնէին զԱստուած. որք և աղաչէին զերանե-
լին Անատոլի հանգչել սակաւիկ մի, քանզի էր աշխա-
տեալ յոյժ։ Եւ 'ի մտանելն 'ի քուն՝ ահա երևէր նմա
սուրբն Ադրիանոս յանուրջս և ասէ. Ողջ եկիր, Անա-
տոլի, աղախին Քրիստոսի և դուստր մարտիրոսաց. եկ
այսուհետև 'ի հանգիստ քո, և ընկալ զվարձս վաստա-
կոց քոց։ Եւ նոյնժամայն աւանդեաց զոգին։ Եւ յետ

1. Ցոյն բնագիրն 'ի նաւակի։

սակաւ ժամու էկեալ եղբարց զարթուցանել զնա, և գտին վախճանեալ. և յարեան ամենեքեան կացին յաղօթս, և առեալ եդին զնա ընդ սուրբ վկայսն. և խընդրեցին աղօթս առնելի դիրս սրբոցն. և այնպէս կնքեցին զտունն։ Եւ բազմութիւն արանց և կանանց մնացին անդէն ամենևին յամենայնէ հրաժարեալք, ծառայելով Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որում զօրութիւն և փառք ընդ Հօր և սուրբ Հոգւոյն, այժմ և միշտ։

Վկայաբանութիւն Սրբոյն Աթանագինեայ եպիսկոպոսի։

Սուրբս այս Աթանագինէս եղև քրիստոնեայ 'ի քրիստոնէից ծնողաց՝ յԵպիկացւոց գաւառէն. այսպէս կոչեցեալ գեղջ սորա՝ Փիլաքթովէ, ըստ որում և սահմանեն ասացեալ Սագրուպինէ [1], ընդ հարկաւ անկեալ Սեբաստեայ քաղաքին քաղաքացւոց՝ գիւղ սորա։ Իսկ եղեալ այր՝ միաբանեաց ընդ ամուսնութեան. զայս և ծնողաց նորա կամեցեալ հաւանելոյ [2]։ Եւ ծնեալ որդի՝ անուանեաց զնա Պատրոփիւլոս [3]։ Կեայր կեանս բարեպաշտականս. Սեբաստու եպիսկոպոսին զնա քահանայ օծեալ։ Եւ դարձեալ 'ի յիշեցելոյ գաւառին քորեպիսկոպոս կացուցեալ. և վարեալ նորա զքորեպիսկոպոսութիւնն ըստ պատուիրանին։

Եւ պատահեաց այնուհետև 'ի ժամանակին յայնմիկ բարբարոսական ազգին Գոթաց գալ հասանել 'ի բոլոր աշխարհն, և բազում արս և կանայս և մանկունս գերեալ՝ տարան յաշխարհն իւրեանց։ Իսկ սուրբս այս Աթանագինէս՝ իբրև Աստուծոյ հաւատարիմ քահանայապետ 'ի վերայ գերելոցն տրտմէր։ Եւ ժողովեալ ինչս բազումս ամենաբարեպաշտութեամբ, գնայ յաշխարհն բարբարոսաց փրկել զգերեալսն, և անդրէն դարձուցանել զիւր ոչխարսն. քանզի էր հո-

1. Ա.յլ օր. Սագոսպինէ։
2. Ա.յլ օր. Ի ծնողաց նորա խամեցելոյ։
3. Ա.յլ օր. Պապրիկոզոս։

վիւ բարի և առաքինի. զոր բազում անգամ արար։ Երթայր՝ի Ճանապարհն արդարութեամբ, և պատուիր բանացն Աստուծոյ կատարիչ։ Եւ հասեալ՝ի գիւղ մի, և մերձ՝ի նա էր լեառն մի, և ծովակ խորին յոյժ։ Եւ յայս տեղի բնակեալ էր մեծագոյն վիշապ մի ահաւոր, և ապականէր զմերձակայ բնակիչսն. յափշտակէր զանասունս նոցա և զմանկտի։ Եւ բնակիչք գաւառին այնորիկ երկիւղիւ բազմաւ ըմբռնեալք, որպէս թէ դիւական ինն խտրանաց մոգութեամբ՝ վիճակս արկանէին. և ում հասանէր՝ մանուկ կապէին ժամանակաւ և ընկենուին՝ի տեղին յայն վիշապին. որպէս զի մահուամբ նորա հաշտեսցի գազանն ընդ նոսա, յորժամ սպանանէր զմանուկն։ Զայս տեսեալ սրբոյն Ա.Թանագինի, և զարմացեալ ընդ իրսն, և ուսեալ՝ի մանկանէն թէ վասն որոյ պատճառանաց կապեալ և ընկեցեալ կայ, և զի հանդերձեալ էր ծախիլ՝ի վիշապէն. և աղօթեալ ասէ. Տէր Աստուած, օգնական լեր։ Եւ կնքեալ զմանուկն, ելոյծ զկապանսն։ Եւ մերձ կացեալ առ մանուկն աղաչէր և կարդայր զանուն Տեառն Յիսուսի. և պատրաստեալ ձգեաց զձեռն հանդերձ մանկամբն, և ոչք ընդ նմայն էին. և ասէ այսպէս. Տէր Աստուած յաւիտենից, որ հրամայեցեր ինձ հասանել՝ի տեղիս յայս, և տեսանել զմանուկս զայս՝ որ հանդերձեալ էր ծախիլ՝ի գազանէն, լուր ծառայի քում, Տէր, և առաւել ևս մանկանս բարբառեցելոյ առ քեզ՝ի սուրբ սրտէ։ Ե՛կ Տէր յօգնականութիւն, և ցոյց աստ զզօրութիւն բարերարութեան քո, և զկոչեցեալ վիշապն հզօր հարեալ՝ արա՛ անարի անզօր, հերձանելով զնա. որպէս զի ամենեքեան տեսողք և բնակիչք աշխարհիս այսորիկ՝ ուսեալ զանբաւ և զանհասանելի զօրութիւնդ քո, փառաւորեսցեն զմեծ և զսքանչելի անուն քո՝ յաւիտեանս։ Եւ ես ծառայ քո ուրախ եղեալ գնացից ընդ Ճանապարհս անուան քում։ Իսկ՝ի յաղօթելն նորա սողեցաւ վիշապն արտաքս, և երևեցաւ սարսափելի և ահաւոր տեսլեամբ։ Եւ սուրբն Ա.Թանագինէս հայեցեալ յերկինս, և մեծագոյն հառաչեալ առ Տէր, ասէր երիցս՝ի վերայ գլխոյ վիշապին ըստ իւրակէ գաւազանաւն զոր ունէր՝ի ձեռին իւրում, քանզի կրէր

սովորաբար. և առ ժամայն հերձեալ գազանն ապա-
կանեցաւ։ Յայնժամ երանելոյն սքանչելի զարմանս
արարեալ, և ծնօղաց մանկանն իմացեալ, 'ի բաց ե-
տուն այնուհետև զմանուկն ցՍուրբն. և պատրաստեաց
հաւատացեալ զամենայն բնակիչս վայրին. գոհանալով
զՏեառնէ Յիսուսէ՝ որ ծանուցաւ նոցա։

Զայս տեսեալ եպիսկոպոսի աշխարհին, և յաստուա-
ծային յայտնութենէն իմացեալ զարժանաւորութիւն
նորա, ձեռնադրեաց քահանայապետ զաստուածա-
զգեաց այրն, տուեալ նմա զեպիսկոպոսական իշխանու-
թիւնն։ Արդ արժանի լեալ այս երանելիս Աթանագի-
նէս երիցս այսպիսի շնորհաց, գնաց զՀանապարհ իւր.
և զբազումս դարձուցեալ ետ իւրաքանչիւրոցն 'ի բար-
բարոսական աշխարհէն, և ածեալ ետ յիւրաքանչիւր
տեղիս եղբարց և ծնօղաց իւրեանց։ Եւ ինքն եկեալ
յիւր գեօղն որ անուանեալ կոչէր Փիլաքթովէ, թա-
գուցանելով զտուեալ եպիսկոպոսական շնորհսն. որ-
պէս զի մի տրտմեցուսցէ զՍեբաստիա քաղաքին եպիս-
կոպոսն, որոյ արարեալ էր զնա քորեպիսկոպոս։ Եւ
անդ լինէր հանդերձ որդւովն իւրով կոչեցելոյ Պատ-
րոյփիւլոս, որ և զկնի մահուան հօրն զաթոռ քորե-
պիսկոպոսութեանն և զիսոստովանութեան արժանի
եղև ընդունել։ Եւ մինչդեռ էր իսկ 'ի նմին գեօղն
Փիլաքթովէ, մեծագոյն ընկալաւ շնորհս 'ի Տեառնէ։
Եւ էլ հողմ ջրախառն 'ի հարուածս այլազգեացն.
զի դարձեալ հասեալ բարբարոսական գնդին, և
առեալ զաշխարհն, զեկեղեցի նորա որ էր 'ի գեօղն
զոր իւր իսկ շինեալ սրբոյն՝ այրեցին։ Եւ մինչդեռ լու-
ցեալ էր, ետես և խնդրեաց 'ի Տեառնէ, և էլ հողմ
ջրախառն 'ի միջոյ սրա՛հի եկեղեցւոյն և շինջոյց զՀուրն.
և մինչև ցայժմ յեկեղեցւոջն և 'ի տեղին տեսանի ուս-
տի էլ հողմն. և առ նմին տեղւոջ և մարդակք եկե-
ղեցւոյն կան կիսայրեացք։ Բազում և այլ ինչ 'ի ձեռն
շնորհին զոր էառ 'ի Տեառնէ Քրիստոսէ՝ կատարէր
զարմանս. զոմանս յանդիմանելով ածէր 'ի հաւան,
առաւել տուելոյ իմաստութեամբն իւրով և մտաւ-
որութեամբ. իսկ զայլս խրատելով, և զամենայն բա-
րիս գործելով, առ 'ի խաղաղացուցանել զամենեսեան
առ միմեանս սիրոմբ Աստուծոյ։

Իսկ 'ի Սագրուպինեցւոց[1] սահմանին եցոյց այսպիսի զարմանս։ Գողոյէ ագարակի անուն է, հեռի է հինգ կամ վեց մղոնաւ 'ի Փեղաքթովէ. յոմանց՝ 'ի միջի ագարակին՝ յաղագս մատակաց ընդ միմեանս ոխութիւն եղև խռովութեամբ. և մեծ հակառակութիւն էր 'ի մէջ նոցա։ Երբեմն 'ի դատ եկեալ առ սրբոյն Աթանագինիս, և ոչ միացեալք առ 'ի նմանէն կարգեցելոց, այնչափ բորբոքեցան 'ի թշնամութիւն՝ մինչև զէնս 'ի վերայ միմեանց մերկացուցեալ, և կատաղութեամբ ընդ միմեանս խառնեալ. և այնչափ վախճան հակառակութեան նոցա վառեցաւ, մինչ զի ոմանք 'ի նոցանէ սրով վիրաւորեալ վախճանեցան։ Զայս տեսեալ երիցս երանելւոյ նահատակին Աթանագինին, և տրտմեալ 'ի վերայ այսչափ հակառակութեան և խակամտութեան, ձգեաց զսուրբ ձեռս իւր առ Աստուած, և աղաչեաց որպէս զի սատակել զնոյն իսկ ագարակի զմատակսն, վասն որոյ իսկ և կռուէին, և յայնմ հետէ մի՛ ևս լինել 'ի նմա վտառք մատակաց։ Եւ այսոքիկ վաղվաղակի առ ժամայն դիմեալք և դիպեալք. և զոր խնդրեաց յԱստուծոյ զշնորհսն, անդէն տուաւ նմա փութապէս։ Այլ զոմանս անկաւ 'ի տեարսն մատակացն՝ յաղագս չար գործելոյն. և ժողովեալք բազմութիւնն անկանէին առ ոտս Սրբոյն, և աղաչէին զի դարձեալ աղօթս արասցէ 'ի բաց բառնալ զնեղումն։ Իսկ Սուրբն ոչ հաւանեցաւ խոնարհել յաղաչանս նոցա, ասէ. Զլեալն առ Աստուած խնդրուածս յաղագս արդար պատճառին՝ լուծանել ոչ կարեմ։ բայց խնդրեցէք 'ի Տեառնէ Աստուծոյ տալ ձեզ ընդ մատակացն այլ մեծ մխիթարութիւն, զյաջողումն ծննդոց ամենայն անասնոց։ Արդ և այժմ 'ի յագարակին 'ի Գողոյէ յաղագս այսպիսի շնորհս ընդունելոյ 'ի Սրբոյն աղօթից՝ յոյժ աջողաբար կեան[2]. իսկ եթէ ձեռնարկիցէ ոք մատակ ստանալ[3], մեծ ինասու պատահէ վաղվաղակի, և այլ անասունքն ևս մեռանին. և ևս աքանչելագոյն զարմանք այս են, որ մինչև ցարդ իսկ կայ մնայ. քանզի յայլոց ագարակացն սահմանորդացն

1. Մի օր. Սապուպէցւոց. և միւս այլ օր. Սագուպէմացւոց։
2. Այլ օր. յոյժ աջողաբար կեանս յաջողեցաս։
3. Այլ օր. Իսկ եթէ յեռաս ոչ արյանիցէ մատակ գնիել։

Գ.ողոյէ՝ հանապազ տեսանեմք ոչ սակաւ վտառք մա-
տակաց գալ Ճարակել 'ի խարձին Գ.ողոյէ. և ոչ ինչ
փնասեալք յաղագս չեղելոյ նղովիցն 'ի նոսա իրաւա-
բար, ոչ ազդեալ և զնոցայն սատակել։ Այս ամենայն
եղեալ է 'ի ձեռն սրբոյն Ա.Թանագինէի։

Եւ խաղաղութիւն եղեալ 'ի բարբարոսացն, այնու-
հետև Թագաւորէ Դիոկղետիանոս և Մաքսիմիանոս,
կոչեցեալն Հերկուղիա [1]։ Եւ 'ի ժամանակս Ագրիկո-
ղայոսի հեգեմոնի բազում հալածանս զքրիստոնէից
գաւառս ունէր 'ի Թագաւորացն՝ յաղագս 'ի Քրիստոս
հաւատոցն, և նոցին ատելութեանն. և հրաման
տուեալ, եթէ ոք ըմբռնեսցի քրիստոնեայ և ոչ կա-
մեսցի զոհել Աստուածոցն, տանջեսցի և չարչարես-
ցի։ Եւ կալեալ լինէին քրիստոնեայք արք հինգ, որոց
էին անուանքն այսոքիկ, Թէոփրատոս, Մաքսիմիա-
նոս, Պատրոփիլոս, Հեսեքիոս, և Կղէոնիկոս. և երկա-
թիւք կապեալ տարան առ անօրէնսն, զոր չարաչար չար-
չարեալ սպանանէին։ Զայս ծանուցեալ սրբոյն Ա.Թա-
նագինէի՝ չոգաւ տեսանել զսուրբսն մինչդեռ էին 'ի
բանդին. և բանիւք մխիթարութեամբ լցոյց զնոսա,
և գնաց անդրէն. և դարձեալ անդրէն Թուղթ առա-
քեաց առ սուրբսն՝ հաստատել զնոսա 'ի հաւատսն և
պինդ կալ, զայս ունելով օրինակ գրոյն.

Տերանց իմոց երանելեաց, ընտրելոց վկայից Քրիս-
տոսի, որոց անուանքն 'ի գրին կենաց գրեալ են, Թէո-
փրատոս, Մաքսիմիանոս, Պատրոփիլոս, Հեսեքիոս,
Կղէոնիկոս, Ա.Թանագինէս՝ Տերամբ խնդալ։

Ուսեալ ձեր իւրաքանչիւր զԱստուծոյն երկնաւորի
զշնորհութիւնն և զզանազանութիւն հատուցման վա-
րուց վաստակոց զոր ընդունիք, և փորձեալ ծաներուք
եթէ ոչ ինչ մեծագոյն յԱստուծոյ քան զայդ յար-
գաւոր լինել կամ ընտիր և երանաւոր, եթէ ոչ վըշ-
տանալ և կապիլ և չարչարիլ վասն Տեառն. և հաղոր-
դակից լինել նոյնպիսի աշխատութեանց, և նշաւակ
և տեսիլ լինել վասն երկնաւորին. և ձաղանաք և աշ-
խատանաք և նեղութեամբ հաճոյ լինել բարերարին
Աստուծոյ։ Արդ ուրախ լերուք, և երանի է ձեզ. վասն

1. Այսինքն՝ Հերակլէս։

որոյ և ես յօժարութեամբ՝ ոչ միայն եկեալ առ ձեզ ցուցի զիմ սէրն, այլև 'ի ձեռն գրելոցս զցանկութիւնդ ձեր լցի։ Արդ և դուք զփոխարէնս այսորիկ առնիցէք յաւուրն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ առ մեզ։ Իսկ ձեր բարի գործոցդ և ընդ լաւ ընտրութեանդ՝ յորժամ վախճանիցիք՝ 'ի մերձակայումն յայտնեսցի. և բազմաց լուեալ զձեր համբաւ լաւութեան զայդպիսի ճգնութեան՝ հաստատեսցին 'ի հաւատս։ Եւ զի՞նչ պարտ էր ինձ առնել որ գրեմն, եթէ ոչ այսպիսի յօժարական գրով հաստատել զձեր ոգիս, զձեր ևս ընդեալդ ամենայն բարութեամբ և զառաւելեալդ գիտութեամբ, և զկարողդ և զյաղթողդ, նայելով 'ի ձեր համբերութիւնդ՝ որով և այլք խրատին։ Եւ արդ մեք այսուհետև աղօթեմք անդադար վասն ձեր առ երկնաւորն Աստուած, տալ ձեզ զկատարեալ շընորհսն. որպէս թէ առնուլ ձեզ զյաղթանակ վերին շնորհացն, ըստ ձերում յօժարական կամացդ. և որպէս աղաչեցաք 'ի գալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ յորժամ արժանի լինիցիք նահատակական պսակացն, բարեխօսեցէք առ Տէրն Փրկիչ Յիսուս Քրիստոս, արժանի լինել և մեզ մասին ձերոյ։

Այսոքիւք գրեցելովք առ սուրբ վկայսն՝ իրաւացի համարեցաւ պատրաստել նոցա 'ի Փիլաքթովէ՝ տուն հանգստեան, և զայս զմտաւ ածեալ սկսաւ շինել յառաջ քան զվախճանել նոցա տուն աղօթարանի [1], ուԹանկիւնի սրահաձեղուն ձևով, որ մինչև ցայժմ Գումբեթաձև կոչի. և համբաւեալ եթէ լոկ ապարանս շինէ իւր, յաղագս այսորիկ ոչ 'ի միում կողմանց զդէմն արևելից նշանակեաց. քանզի 'ի նմին գեօղ զյառաջասացեալ եկեղեցին շինեալ էր իսկ. 'ի ներքոյ գումբեթին շինեաց գետնափոր դիրս սրբոցն, ուր էդ զասացեալ վկայսն. և ինքն իսկ սուրբ վկայն Աթանագինէս այժմիկ 'ի նոյն դիրս կայ սրբեալով զտունն։

Եւ այսոցիկ այսպէս եղելոց, հնչեցեալ համբաւ բարեպաշտութեան առնն սրբոյ, եհաս մինչև յանօրէն Թագաւորն. և դժկամակ լինէին ընդ նմա իշ-

1. Մի օր. զտուն աղօթարանութեան։

խանքն վասն այսորիկ, եթէ զաղանդ քրիստոնէից մեծացուցանէ։ Եւ հրաման տուեալ զանուանի և զառաքինի վկայն և զնահատակն զԱ.Թանագինէս՝ զօրականացն գտանել և ածել առ Ագրիկողոս հեգեմոն 'ի Սեբաստիա, զի չարչարեալ սպանցէ զնա։ Եւ լուեալ զայս երանելւոյն և ոչ կամեցեալ 'ի բուռն անկանել անօրինացն, թաքուցանէր զինքն յիւրում իսկ գեօղն Փիլաքթովէ. և 'ի բազմանալ ևս խնդրականացն, գնայեալ անտի հասանէր 'ի լեառն բարձր՝ որ էր հանդէպ գեղջն, վիմուտ և ամենևին անապատ, և բաղում ժամս ժուժկալեալ 'ի տեղւոջն և 'ի յոյժ տօթոյն ծարաւեալ յանջուր վայրին, կարդաց առ Տէր և ասէ. Յիսուս Քրիստոս, ցոյց յիս 'ի քում ծառայիս զմեծազօր շնորհ քո, և հան ջուր 'ի վիմէս յայսմանէ. որպէս զի ըմպեալ իմ և զովացեալ՝ փառաւորեցից զքեզ։ Եւ այսպէս աղօթեալ 'ի բոլոր հաւատոց 'ի բազում ժամս, արժանի եղև շնորհին զոր հայցեաց։ Եւ բերանացեալ վէմն Եհան զջուր բազմամամն, ուստի արբեալ գոհացաւ զտուողէն՝ և մինչև ցայժմ կայ յայտնապէս ջուր 'ի փապար քարին։ Եւ փոքր ինչ ցածուցեալ զնովաւ խառվուԹեանցն, էջ 'ի լեռնէն, և ժողովս սրբոց կատարէր յագարակին, որ կոչէր Մովասուն. և լուեալ աշակերտաց նորա ժողովեցան առ նա. և նոքօք եկ 'ի խարձն որ էր մերձ 'ի Փիլաքթովէ ագարակ. կամեցեալ անդ փոքր մի հանգչել, և աշակերտացն հրամայեաց պահ ունել Ճանապարհին, վասն կասկածին խնդրականաց իշխանին։ Եւ նիրհեալ սրբոյն՝ ետես յանուրջս 'ի հասարակ աւուր աստղ փայլեալ 'ի վերայ նորա. և յայտնանէ ծանեաւ այրն Աստուծոյ աստուածասէր, եթէ իւր առաջի կացեալ վկայութիւնն է։ Եւ հրամայեաց ոչք ընդ իւրն էին՝ աղօթել. և անդէն ննջեալ, ետես դարձեալ մըրջեանց բազմութիւն յուղելոց խառվել զնա ըստ հանդերձելոյն հասանել նմա խառվուԹեանցն. և զարթուցեալ գոհանայր զՏեառնէ։ Եւ իբրև անսացին փոքր մի, տեսանէն 'ի դիմաց կողմանէ կապեալ զոմանս քրիստոնեայս, ածեալ զօրականացն ընդ Ճանապարհն Սեբաստեայ, որոց տեսեալ զսուրբ այրն 'ի խարձին հանգուցեալ մերձ 'ի Ճանապարհն, փոքր մի խոտորե-

ցան առ նա և ասէն. Եթէ գիտիցէս ուր բնակեալ
իցէ այրն Աթանագինէսն, ցոյց մեզ։ Եւ սորա ուրա-
ցեալ զայս եթէ ես ոչ գիտեմ, երթայք յանդաստանն
Փիլաքթովէ, և անդ վասն այսորիկ հարցեալ ուսանիք։
Եւ նոքա այսպէս հանդերձ կապելովք գնացին ոչ ինչ
մեղուցեալք։ Իսկ տեղին այն մինչև ցայժմ անուն ժա-
ռանգեաց 'ի պատահմանէն, զի կոչի Ուր տէրն ըմբռ-
նեցաւ։ Իսկ սուրբն Աթանագինէս զղջացեալ մի՛ գու-
ցէ երթեալ խռովութիւն արասցէն երկրագործացն,
յարուցեալ հասանէր նոցա փութապէս. և աղաչէր
հանդչել 'ի Փիլաքթովէ և ճաշակել կերակուր յիւ-
րում տանն. և նոցա ոչ կամելով հաղիւ ուրեմն խո-
նարհեալք պատկառեալք 'ի պատուաւոր տեսլենէ
առն և 'ի շքեղաշուք ծերունի հասակէն, և ինքեալ առ
նա առին կերակուր. ապա արի և քաջ նահատակն ոչ
ևս թաքոյց զինքն, այլ ասէ. Որդեակք, Աթանագի-
նէսն զոր խնդրէքն՝ ես եմ, արարէք ընդ իս որպէս իշ-
խանն հրամայեաց։ Եւ նոքա ունէին երկաթի կապանս,
և արկանել զնա 'ի շղթայսն դանդաղէին, պատկա-
ռեալք 'ի ծերութենէ նորա. մանաւանդ իբրև տե-
սանէին ևս զառաջինն եղեալ զպատուասիրաբար պա-
տուական սեղանն. աղաչէին զնա մնալ անդէն, և ա-
սէին. Եթէ Երթամք ասեմք այնմիկ որ առաքեացն ըզ-
մեզ՝ Եթէ զնա ոչ գտաք։ Իսկ սուրբն ոչ հաւանեցաւ
մնալ, ասացեալ զայս. Եթէ Մինչ 'ի սահման գեղջս
իմոյ ելանեմ՝ մի՛ կապէք զիս. և յորժամ ընդ այս անց
ցանեմ, յայնժամ արկէք ընդ ինև զշղթայսդ, և տա-
բայք որպէս և հրամայեալ է ձեզ, զի մի՛ և դուք անկանիք
ցինք ընդ ցասմամբ իշխանին ձերոյ. և ես պատրաստ և
կազմ եմ նեղիլ և չարչարիլ և խոշտանգիլ վասն
Տեառն։ Եւ այնուհետև գնացեալ նոցա և հասեալ 'ի
գեօղ մի որում անուն կոչէին Սադոպոն [1], և եղեալ
անդ աւուրս, կոչեաց սուրբն զգաւառին երիցունսն և
խրատէր զնոսա աղաչելով, ասէ. Եղբարք և հարք,
աղատք և պատուաւորք, ազգակիցք և բարեկամք իմ,
սիրելիք և որդիք, ամենայն ժողովուրդք, աղօթս ա-
բարէք վասն իմ հանդերձ պահօք, որպէս զի տայէ

1. Երկու օր. Սոփոպոլն։

ինձ Աստուած զբարի յօժարութիւն նահատակութեանս կատարել, և ցանկութեամբ գտանել շնորհս առաջի նորա. որպէս զի և ես այնուհետև միշտ բարեխօսեմ վասն ձեր ամենեցուն. իսկ եթէ դիպեսցի ինձ իբրև զմարդ դասալիք լինել, և փախչիցիմ 'ի մարտիրոսութենէն, աղաչեմ զձեզ զի պատեալ զինև քարամբք և փշովք հալածեցէք զիս. բայց յուսամ 'ի Տէր իմ Յիսուս Քրիստոս, զի ոչ թողցէ զիս նորա մարդասիրութիւնն։

Եւ զայս ասացեալ՝ կամեցաւ զոր յառաջագոյն ծածկեալն էր յայտնել, այսինքն է զպատիւ եպիսկոպոսութեանն. և կոչեաց մօտ առ ինքն զմերձակայ երիցունսն և ասէ. Այժմ յայտնեմ ձեզ եղբարք և հարք և տեարք իմ, քանզի 'ի վաղնջուց հետէ արժանի եղեայ աստիճանի եպիսկոպոսութեան, և ոչ կամեցայ զայս յայտնել, զի զերծայց 'ի մնապարծութենէ. բայց յիշեցէք տեարք իմ և եղբարք խրատու իմում խօսեցելոյ առ ձեզ, և հաւանեցուցանելոյ զձեր սերդ, որպէս զի զամենայն կանոնականն գործաւորութիւն և զսպասաւորութիւն պինդ ունիցիք զեկեղեցւոյ, ըստ կարգս նախապտղոց և պատարագաց և այլոց զանազան իրաց, եկեղեցական իրաց կարգաց. յիւրաքանչիւր գեօղ հանդերձ բաղում փութով և անդբօս ցանկութեամբ լցիք, զոր կարգեալ է իմ կրտսերոյ և նուաստի. և հանդերձ երկիւղածութեամբ սիրով և փութով մեծացուսցիք զշինութիւն եկեղեցւոյ, և սպասս ունել սրբութեամբ, և դարձուցանել զաշխարհականն 'ի ճանապարհէ չարէ. և մի ինչ նուազեսցի յիմոց կարգելոցդ. որպէս զի մի և դուք ընդ դատապարտութեամբ անկանիցիք 'ի հանդերձեալ արդար դատաստանին. այլ յամենայն 'ի կարգեալսն բարի կամք և յօժարական վաստակովք յաւելուլ քան թէ նուազեցուցանել. որպէս զի և դուք մեծագոյն վարձս ընդունիցիք 'ի Քրիստոսէ Աստուծոյ։ Եւ այսպիսի բանիւք խրատէր զնոսա. դարձեալ ասէ. Զի մի ամենևին կուրասցին որ յիս շնորհքն, զոր առի, արժանի լեալ եպիսկոպոսութեանն, կամիմ երկուս ոմանս 'ի վիճակաւորութիւն ածել՝ զորս փորձեցի, և թողուլ ձեզ։ Եւ գրեաց առ քաղաքին եպիսկոպոսն ողջացուցանելով և

հաւանելով զմիտս նորա, եթէ ոչ փառաւորելով և ոչ աչառելով, այլ զի մի դատարկեսցի՝ որպէս ասացի՝ որ յիս շնորհքն, որ տուեալ են ինձ 'ի Տեառնէ. և ընկալեալ սոցա յինէն զպատիւ քահանայութեանն, հովուեսցեն զձեզ ըստ իմում հրամանին։

Զայս նորա ասացեալ, ամենեքեան առ ոտս նորա անկանէին հանդերձ արտասուօք և ասէին. Աղաչեմք զքեզ, հայր ծերունի, աղօթս արա 'ի վերայ մեր, որպէս և հոգալով ընդ մեր զՀաճոյն Տեառն արարեր. և մեք ամենեքեան հաւանիմք քում սրբութեանդ 'ի վերայ կանոնելոցս 'ի քումմէ աստուածասիրութենէն. և դարձեալ, այժմուցս 'ի քէն յառաջ եկելոցս 'ի ժառանգաւորութիւն՝ հնազանդիմք։ Եւ յանձնեաց զնոսա և զգաւառն ամենայն եպիսկոպոսի քաղաքին. բայց առաւել զանդաստանն Փիլաքթովէ։ Եւ ողջունեալ զնոսա գնաց այնուհետև։

Եւ զայրացեալ էր որպէս յառաջագոյն ասացաք իշխանն Ագրիկողոս[1] Սրբոյն, յաղագս այսպիսի պատճառանաց, եթէ աղանդոյն քրիստոնէից գլուխ է. առ որ տարան իսկ զՍուրբն։ Եւ մինչ չև հասեալ էր երանելոյն 'ի քաղաքն Սեբաստիա, աշակերտք երանելոյն սրբոյն Աթանագինեայ՝ Արիստոն և Սևերիանոս անուն, յորոց մինն գրակարդաց նորա, և միւսն սաղմոսերգող, և իմացեալ նոցա զՀալածումն քրիստոնէից, նախանձող եղեն պսակին մարտիրոսութեան. և յօժարեցուցին զինքեանս 'ի նահատակութիւն, առանց գիտելոյ առնն Աստուծոյ. և դիմեալք 'ի Սեբաստացւոց քաղաքն, գիր յիւրեանց անուն մատուցին ամպարիշտ իշխանին Ագրիկողոսի, բազում թշնամանս գրել ընդդէմ թագաւորաց և իշխանաց, որպէս թէ ամպարշտաբար հալածեն զքրիստոնեայս, և ոչ են արժանի թագաւորութեանն։ Զայս, և ևս չարագոյնս մատուցին իշխանին. որպէս թէ նորա ընթերցեալ զթուղթն՝ վաղվաղակի սպանցէ զնոսա և մարտիրոսանան։ Եւ առեալ իշխանին Ագրիկողոսի զթուղթն, և տեսեալ զ'ի նմայն, զայրացաւ 'ի վերայ նոցա, առաւել 'ի վերայ սրբոյն Աթանագինէի, յոր-

1. Երկու օր. Աֆրիկողայոս։

ժամ դիտաց եթէ աշակերտք նորա էին. քանզի կարծեաց եթէ նորա կամաք եղեալ է դիրն ամբաստանի։

Եւ նստեալ յատենի նախ քան զՀինգ կուղանդին յունուարի[1], հրամայեաց ածել 'ի ներքս զԱրիստոն և զԱեերիանոս. և ասէ. Զգիրս զոր հրապարակաւ առաջի բերէք, ո՞ այսպէս չարաբան գրեաց։ Սուրբն Արիստոն ասէ. Ես։ Իշխանն ասէ. Եւ Սեերիանոս ընդ քե՞զ էր։ Արիստոն ասէ. Այո՛ ընդ իս էր. քանզի դա ասաց և ես գրեցի։ Աբրիկոզոս ասաց. Քանզի գրեցիք 'ի գրին բազում ինչ ընդդէմ Թագաւորաց և իշխանաց՝ զոր ոչ է պարտ ասել և կամ լսել, և անպատեհս գրեցիք. և դրոշմեալ ևս էր 'ի Թղթին, եթէ մեհեանս այրեցաք, ստո՞յգ է Թէ ոչ։ Սուրբն Արիստոն ասաց. Ընդ որ անցաք և գտաք, այրեցաք. բայց զտեղեացն անուանն ոչ գիտեմք։ Իշխանն ասէ ցսպասաւորսն. Կախեցէք զդա և քերեցէք։ Եւ բազում ժամն քերեալ, ասէ ցսպասաւորսն. Խնայեցէք 'ի դա, զի ասասցէ Թէ ուստա՞ի է և կամ յումմի՞ խրատեալ և գրգռեալ գրդեցաւ յայս կամն գալ։ Սուրբն Արիստոն ասաց. Ես ոչ յումեքէ յորդորեալ առաքեցայ, այլ ինձէն իսկ եկի մեռանել վասն Տեառն։ Իշխանն ասէ. Հարկ է քեզ ասել և զայս ևս, եթէ զո՞ր մեհեանս այրեցէքն։ Սուրբն Արիստոն ասէ. Ոչ գիտեմ։ Իշխանն ասէ. Քանզի անկար 'ի մոռաց քոց։ Սուրբն Արիստոն ասէ. Ես զմիտս իմ առ իս ունիմ։ Իշխանն ասէ. Ի դիմաց քոց յայտ է, եթէ ոչ ես 'ի քեզ ինքեան։ Արիստոն ասէ. Ողջ եմ ոգւով։ Եւ սրտմտեալ իշխանն հրամայեաց կրկին քերել զնա։ Իսկ սուրբն Արիստոն 'ի քերելն աղօթէր առ Աստուած և ասէր. Տէր Յիսուս Քրիստոս, օգնեա ինձ։ Ասէ իշխանն. Իջուցէք զդա, և կախեսցի Սեեերիանոս։ Եւ կախեալ զնա, ասէ իշխանն. Պատմեա յառաջ մեզ մինչև քերեալ լցես, և ասա զո՞ր մեհեանս այրեցէք։ Սեերիանոս ասէ. Ոչ գիտեմ։ Իշխանն ասէ. Ո՞յր որդի ես։ Սեերիանոս ասէ. Ոչ հայր ունիմ և ոչ մայր։ Իշխանն ասէ. Ապա զիա՞րդ ծնար։ Սեերիանոս ասէ. Ոչ գիտեմ։ Յայնժամ բարկացեալ իշխանն 'ի վերայ նորա, հրա-

1. Երկու օր. յոռնի։

մայեաց քերել զնա և ասէ. Այս, զմի մեհեան այրեցէք։ Սեբերիանոս ասէ. Ուր և գտաք այրեցաք։ Իշխանն. Ո՞ր հարկ վտանգեաց զքեզ առնել զայս։ Սեբերիանոս ասէ. Գնալով 'ի Ճանապարհորդութիւնս քրիստոնէութեան՝ արարաք զայս։ Իշխանն ասէ. Ո՞ հաւանեցոյց զձեզ առնել և զայդ։ Սեբերիանոս ասէ. Եւ ոչ ոք։ Իշխանն ասէ ցսպասաւորսն. Արդ հրամայեալ իմ խստագոյն քերել զնա։ Եւ մինչդեռ քերէին՝ ասէ Սեբերիանոս. Իմացէք զիս և ես ասեմ ձեզ թէ ո՛րպէս եղև։ Աբրիկողոս ասէ. Զայս միայն խընդրեմ, ասա. ընդէ՞ր զմեհեանսն այրեցէք։ Սեբերիանոս ասէ. Ասացի քեզ, եթէ 'ի Ճանապարհի մինչ գայաք ասա՝ այրեցաք։ Իշխանն ասէ. Եւ ո՞ յորդորեաց զձեզ զայդ առնել։ Սեբերիանոս ասէ. Եւ ոչ ոք։ Իշխանն ասէ. Եւ տակաւին ևս յամառեա՞լ ես 'ի նոյնս. արդ խստագոյնս քերեցէք զդա ուժգին ևս։ Եւ քերեալ երկիցս անգամ, ասէ. Թողէք զիս և ես ասացից. և թողացուցին։ Այսէ Իշխանն. Այս զՀիմարիան, ո՞ առաքեաց զքեզ այսր, կամ ո՞ հաւանեցոյց կամ ո՞ զգիրն բաղմամամն գրեաց։ Սեբերիանոս ասէ. Յանդաստանի բնակեալ է որ յորդորեացն զմեզ, օթիւ [1] հեռի է 'ի Գամրաց։ Իշխանն ասէ. Եւ զի՞նչ անուն կոչի անդաստանն։ Սեբերիանոս ասէ. Սագուպինէ սահմանակիցն, իսկ անդաստանն Փիլաքթովէ [2]։ Իշխանն ասէ. Այրն որ յորդորեաց զքեզ՝ զի՞նչ կոչի։ Սեբերիանոս ասէ. Ամթանագինէս եպիսկոպոս։ Իշխանն ասէ. Յորմէ՞ գեղջէ է։ Սեբերիանոս ասէ. Ի Փիլաքթովէ։ Իշխանն ասէ. Եւ զի՞նչ Ամթանագինէսն՝ զոր ասեսն լինել եպիսկոպոս, ասէր՝ որ առաքեացն զձեզ։ Սեբերիանոս ասէ. Այսպէս ասաց, եթէ երթայք և որպէս ասեմ ձեզ և մարտիրոսանայք։ Իշխանն ասէ. Զգիրն ո՞ շարադրեաց, և ընդէ՞ր ձեր անուանքդ են 'ի գիրս և ոչ նորայն։ Սեբերիանոս ասէ. Զգիրն Ամթանագինէս գրեաց, բայց թէ զիա՞րդ զմեր անուանս շարադրեաց 'ի գիրն՝ զայն ոչ գիտեմք։ Իշխանն ասէ. Արիստոն ընկեր քո գիտէ՞։ Սեբերիանոս ասէ. Այո՛, Ամթանագինէս գրեաց և ետ

1. Մի օր. Ե անդասդանն անիկա հեռագոյն է։
2. Մի օր. Սագուպին իսկի անդասդանն, իսկ սահմանն Փիլաքինովէ։

ցմեզ։ Իշխանն ասէ. Սեւերիանէ՛, եթէ կամիս կեալ՝ զոհեա։ Սեւերիանոս ասէ. Եկեսցէ նա որ ընդ իմն էր։ Իշխանն ասէ. Դու հրամանաց մերոց հաւանեա, երթ ընդ Կոռնելի գաւառապետի, զոհեա։ Եւ նոցա երթեալ զոհել, հրամայեաց ածել զԱրիստոն և ասէ ցնա. Ամբարտաւան քո բարքդ և չար մտածութիւնքդ՝ թաքչել ոչ կարացին։ Սուրբն Արիստոն ասէ. Աստուած այնպէս հրամայեաց։ Իշխանն ասէ. Ահա ընկեր քո զոհեաց, դու զի՞ յապաղես։ Սուրբն Արիստոն ասէ. Վասն զի ոչ կարաց համբերել հաւատոցն որ 'ի Քրիստոս։ Իշխանն ասէ. Իսկ քո մարմինդ անցա՞ւ է։ Արիստոն ասէ. Կամօքն Աստուծոյ։ Իշխանն ասէ. Մի թէ յերկնից ես դու։ Սուրբն Արիստոն ասէ. Այո՛, յերկնից եմ։

Յայնժամ իշխանն ծանուցեալ զանփոխելի հաստատութիւն մտացն՝ եհատ զվՃիռ 'ի վերայ նորա. ասէ. Վասն զի ոչ ժամանեցին[1] քննութիւնք, և ոչ մարդասիրութիւն ամենայաղթ տերանց ինքնակալաց կարացին ածել զքեզ 'ի լաւութիւն 'ի վերայ այսպիսի դժպատեհութեան գրոց՝ զոր մատուցեր իմում պատուասիրութեանս, և զպաշտօն Աստուածոցն Ճանաչել ոչ կարացեր, և յանդգնեցար 'ի նմին յամառութեան մնալ, ընկալ դու զայսպիսի վՃիռ։ Եւ 'ի քարտանէն զայսոսիկ ընթերցեալ գիր ասէ. Որ քան զամենայն անպատեհն էր, եւ ինձ, զոր ոչ ոք 'ի մարդկանէ զպատուաւորաց ասել կամ լսել յօժարէ, վասն այսր ամենայնի զսա հրոյ մատնել հրամայեցի։ Եւ այսպիսի օրինակաւ եղև նահատակութիւն սրբոյն Արիստոնի, նախ քան զտասն կաղանդացն օգոստեայ։

Պարապեալ այնուհետև դատաւորն առ Սեւերիանոս և ասէ ցնա. Զոհեցէ՞ր աստուածոցն, Սեւերիանէ։ Եւ նա ասէ. Այո՛։ Ասէ իշխանն. Պարկեշտ մարդասիրութիւնն տերանց մերոց և քաջութիւն Աստուածոցն զքեզ 'ի լաւութիւն ածին, իսկ զԱրիստոն վասն յամառութեան իւրոյ և մոլորութեան, հատուցի նմա ըստ արժանեաց իւրոց. ուստի 'ի բանդ հրամայեմ դնել և զքեզ խնամակալութեամբ, մինչև 'ի դալն

1. Յոր. ժամեցին։

Ա.Թանագինի, որպէս զի ստուգիւ քննեցիս վասն գրոյն։

Սուրբն Ա.րիստոն այսպէս կատարեցաւ 'ի Սեբաստիա. այլ կարծեն ոմանք անգիտութեամբ զՀռեգինոս լինել, որ և սա 'ի սպասաւորաց Ա.Թանագինի էր. այլ գիտէ իւրաքանչիւր ոք զի սուրբն Հռեգինոս ոչ 'ի Սեբաստիա կատարեցաւ, այլ 'ի Կեսարիա քաղաքի, և անդ է վկայարան նորա մինչև ցայսօր. զի վասն յոյժ և սաստիկ հալածանաց եկեղեցւոյ՝ անդ էր առաքեալ զնա սրբոյն Ա.Թանագինի, որպէս զի ուսանիցի զքրիստոնէիցն պատուհասն, և զելն պատմեսցէ նմա։ Եւ իմացեալ 'ի քաղաքին զգալուստ զՀռեգինոսի՝ հալածողացն, և ըմբռնեալ չարչարեցին. և ուրախացեալ գոհանայր զՏեառնէ Աստուծոյ, և բարի վկայութեամբ կատարեցաւ։ Եւ լուեալ զնահատակութիւն նորա սրբոյն Ա.Թանագինի, մինչդեռ էր 'ի Սակուպինիա, և փառաւորեաց զԱստուած. բայց 'ի Սեբաստիա կարծեալն ամենեցուն՝ Ա.րիստոն է, և ոչ Հռեգինոս։

Իսկ ապա ածեալ զինուորացն զսուրբն Ա.Թանագինէս 'ի քաղաքն Սեբաստիա. և լուեալ կնոջ Ագրիկողոսի վասն առաքինասէր վարուց աստուածասէր առնն, և ընդ առաջ ելեալ պատահեաց սրբոյն, և անկեալ առ ոտս նորա և ասէ. Ուսայ, տէր իմ, և առաւել հաւատացեալ եմ զի արժանաւոր ծառայ ես կոչեցելոյն Քրիստոսի. և զոր ինչ խնդրես 'ի նմանէ՝ վաղվաղակի տայ քեզ. արդ աղաչելով անկանիմ առաջի քո, որպէս զի և ինձ շնորհեսցես զինդիրս իմ աննախանձաբար. քանզի ունիս դու զամենայն 'ի Տեառնէ քումմէ և 'ի վարդապետէն յոր յուսաս։ Դուստր է իմ, և բաղում ժամանակք են որ ըմբռնեցաւ 'ի դիւոյ պղծոյ. արդ աղօթեա 'ի բաց կալ 'ի նըմանէ պիղծ ոգւոյն. և թախանձեցիս ես զայր իմ և հաւանեցուցիս արձակել զքեզ, և չարկանել ընդ մեղադրութեամբ։ Ասէ Սուրբն. Եթէ հաւատաս զիս արժանի լինել Տեառն իմում՝ տացին խնդրուածք քո. բայց եթէ խօսեսցիս 'ի գործս իմ խափան լինել կոչմանս իմոյ, հանապազ վտանգէ զնա դևն առաւել քան զառաջինն. այլ ընկալեալ զքոյդ՝ երթ գնա 'ի

տուն քո. և նորա մեծաւ արտասուօք յուղարկեալ զսուրբն 'ի քաղաքն՝ դարձաւ 'ի տուն իւր։

Եւ յորժամ գիտաց Իշխանն Ագրիկողոս, ածեալ զայրն արդար՝ կապանօք, որպէս հրամայեալ էր. և իբրև ածին, հրամայեաց նմա յառաջ գալ։ Եւ ասէ. ԶԱրիստոն Ճանաչէ՞ս և զԱՒերիանոս։ Ամանագինէս ասէ. Զո՛ր։ Իշխանն ասէ. Արիստոն յաղագս յանդգնութեան իւրոյ անխնայ սպանման պատուհասի ըմբռնեցաւ. իսկ ՍՒերիանոս ըստ իւրում յիշատակագրութեան դեռ 'ի միջի կայ. զոր ամենայն իրօք տեսեալ՝ կարիցես իմանալ թէ զի՞նչ է հանգամանքն իցեն. քանզի ետ մեզ գիր լցեալ չարութեամբ քո բանիւք, որ ունէր հայհոյութիւն զԱստուածոյն, և զթագաւորացն, զոր և կրկնել ոչ է պարտ։ Ամանագինէս ասէ. Այդ անուանք աշակերտաց իմոց են վասն որոյ հարցեր, և ոչ ուրանամ։ բայց գրոյդ գործոյ ամենևին օտար եմ։ զի Տէր մեր Յիսուս Քրիստոս ուսոյց մեզ այսպիսի ինչ չգործել. վասն որոյ և գրել իսկ ոչ պարտէի։ Իշխանն ասէ. Լուա՛ր զի՞նչ արարի։ Ամանագինէս ասէ. Ոչ գիտեմ։ Իշխանն ասէ. Ոչ վայելէ քեզ ստել. մանաւանդ զի լուայ իսկ եթէ եպիսկոպոս ես։ Ամանագինէս ասէ. Ուսուցանել վարժէ զմեզ աստուածային գիրն, ոչ ստել. քանզի գրեալ է, Կորուսանէ զամենեսեան ոչք խօսին սուտս. և եթէ ես ստեմ՝ ընդ նովին կորստեամբ եմ իբրև զսուտ։ Իշխանն ասէ. Արդ յանդիմանեա զՒԵրիանոս, սուտ լինել։ Եւ ասէ. Կոչեսցի ՍՒերիանոս։ Եւ իբրև ածին, ասէ ցՒԵրիանոս. Զծերս զայս Ճանաչէ՞ս։ Պատասխանի ետ ՍՒերիանոս և ասէ. Ա՛յո։ Իշխանն ասէ. Զի՞նչ կոչի։ Ասէ ՍՒերիանոս. Ամանագինէս։ Իշխանն ասէ. Զգիրս զոր առաջի իմ բերէք՝ դու և Արիստոն, սա՞ ետ ձեզ։ ՍՒերիանոս ասէ. Ոչ։ Իշխանն ասէ. Ապա ուրեմն մուռացա՞ր զոր յառաջագոյն սորա յիշատակաւ գրեցեր։ ՍՒերիանոս ասէ. Նա արար որ ընդ իսն էր։ Իշխանն ասէ. Կամի՞ս ընթեռնուլ զբան քո։ ՍՒերիանոս ասէ. Ա՛ռ վտանգին ասացի։ Իշխանն սրտմտեալ ասէ. Կախեսցի։ Իսկ նորա պատասխանի տուեալ ասէ. Սա ետ ինձ։ Իշխանն ասէ. Մի՞ այն ընդ միայն ետ քեզ։ ՍՒերիանոս ասէ. Ա՛յո։ Դատաւորն ասէ.

Ո՞չ ոք ետես յորժամ ետ զգիրն զայն, և զինչ ասաց։ Սևերիանոս ասաց. Յորժամ ետ՝ չետես ոք. և ասաց եթէ երթա՛ք և մարտիրոսանայք։ Դատաւորն ասէ. Ընթերցա՛ւ առաջի ձեր զգրեալն, զի գիտասջիք եթէ զինչ մատուցէք դատաւորին։ Սևերիանոս ասէ. Ա՛յո՛ ընթերցա։ Դատաւորն ասէ. Ապա ուրեմն լուար զայն պիսի չարաչար զգրեալն, և զիա՞րդ յանդգնեցար բերել առ իս։ Սևերիանոս ասէ. Ոչ կարացի իմանալ։ Դատաւորն ասէ. Դու ինքնին ես յասել եթէ ընթերցա՛ւ, ապա զիա՞րդ ոչ իմացար. կամ մարդ յայդպիսի հասակի եղեալ՝ դեռ ևս մանկագոյն ընդէ՞ր հեշտաբար առ՝ի մահ դիմեցեր, կամ ընդէ՞ր ոչ ասացեր դմա, եթէ այր ծեր ես՝ի մահ մերձեալ, երթ դու վկայեա։ Սևերիանոս ասէ. Ա՛յո՛, ասացի դմա։ Դատաւորն ասէ. Գուցէ յումեքէ դրդեալ ստես յառնէս յայսմանէ։ Դատաւորն ասէ. Զի՞նչ ասես, Ա՛թանագինէս. ցքեզ ասեմ ընդէ՞ր յանդգնեցար։ Ա՛թանագինէս ասէ. Օտար եմ՝ի շատխօսութենէդ յայդմանէ, և ոչ գիտեմ զինչ ասես, և ոչ այդպիսի ինչ լուայ։ Դատաւորն ասէ. Ոչ է այն վայրապար մեղադրութիւն որ՝ի քո վերայ բերեալ լինի. և քո թէ կամեցեալ էր զանձնդ անմեղադիր առնել, դիւրին էր քեզ։ Ա՛թանագինէս ասէ. Որպէս և կամիս դատեա զիս, զի յիմում գիտութեանս այսպիսի ինչ ոչ է գործեալ։ Դատաւորն ասէ. Սևերիանոս, յիշէ՞ս յորժամ զգիրն մատուցանէիք և ասէիք յերկնից իջեալ զանձինս ձեր, վասն է՞ր յանդգնեցայք զայս առնել։ Սևերիանոս ասէ. Շինական էի և ոչ գիտէի զինչ ասէի։ Դատաւորն ասէ. Ա՛թանագինէս, ահա լուար զամենայն թէ ոչ ինչ պակաս թողի՝ի հարցափորձ առնելոյ և՝ի պատուհասից, և՝ի նմին պնդեաց դա։ Ա՛թանագինէս ասէ. Որպէս կամիս դատեա զիս առաւել քան զդա, բայց ասացի քեզ եթէ յայսպիսի ինչ իրս ես ոչ գտանիմ։ իսկ եթէ դև ունի և մոլի, ես զինչ առնեմ։ Դատաւորն ասէ. Սևերիանէ, լսե՞ս զի՝ի վերայ քո բերեալ լինի Ա՛թանագինէս, և ուրանայ թէ ոչ գիտեմ զոր ինչ դա ասէ։ Տես այսուհետև մի՛ դրդեալ յումեքէ ստես զառնէս։ Սևերիանոս ասէ. Ոչ ստեմ, սա ետ ցիս։ Դատաւորն ասէ. Յորո՞ւմ տեղւոջ ետ, կամ

յորմ՝ ժամու, կամ ետէս զք յորժամ զամբաստանութիւնն առնէիք։ Սեբերիանոս ասէ. Զգիրն այդուն վաղագոյն ետ, բայց ետես ոչ զք։ Դատաւորն ասէ. Ի միջէ գեղջէ՞ էիք դու և Աթանագինէս։ Սեբերիանոս ասէ. Ոչ, այլ Հնգետասան մղոնաք հեռի են 'ի միմեանց գեօղքն։ Դատաւորն ասէ. Եւ առաքեա՞ց զոմն առ քեզ զի երթիցես առ դա։ Սեբերիանոս. Զմայր իմ առաքեաց զՄակեդոնիա։ Դատաւորն ասէ. Ի մարդո՞յ ուրեմն ծնեալ ես և մայր ունիս արդեօք, որ երբեմն յուրաստ լինէիր, և յերկնից իջեալ ասէիր զքեզ։ Սեբերիանոս ասէ. Այն խորհուրդն սպառեցաւ։ Այսէ դատաւորն ցԱթանագինէս. ԶՄակեդոնիա ճանաչե՞ս։ Աթանագինէս ասէ. Ոչ գիտեմ։ Դատաւորն ցՍեբերիանոս ասէ. Այժմ յընտրութեան եղեալ, ասա մեզ առանց երկիւղի զճշմարիտն. սա՞ ետ զգիրն եթէ ոչ. և զինչ ասաց 'ի տալն։ Սեբերիանոս ասաց. Սա ետ և ասաց. Երթայք և մարտիրոսանայք։ Դատաւորն ասէ. Արդ դու ոչ իբրև զվկայ մեռանիս, այլ իբրև զամբարիշտ և զհայհոյող։ Եւ դարձեալ առ սուրբն Աթանագինէս ասէ. Ցայդպիսի հասակի և յայդպիսի պատուի եղեալ՝ ոչ պարտէիր այնպիսի գիր շարագրել, և հաւանեցուցանել առ իս բերել։ Աթանագինէս ասէ. Իբրև զամբարիշտ ունիմ դատել յԱստուծոյ, եթէ գտեալ լինիմ ստուտ զումեքէ ասել, կամ յայնպիսի գիր ինչ ձեռն արկեալ եմ։ Դատաւորն ասէ. Իսկ ասա որ 'ի տանջանսն է Սեբերիանոսի՝ ստել, և ընդ քեզ ճշմարտել[1]. արդ գոնեա 'ի քեզ ինքեան խորհեսջիր, զի այդպիսի վարդապետ ես, որպէս ասես գրել և պատմել՝ կարես, և ուսուցանել զքրիստոնեայս. և 'ի դէպ է թէ դու գրեալ ցես զայդպիսի շատխօսութեան ամբաստանութիւն. ապա թէ ոչ յանդիմանեա զդա որ ստեացն։ Աթանագինէս ասէ. Նա ըստ իւրում յամառելոյն ինքն գիտէ. ես ոչ լինիմ նմա պատճառ աւելի տանջանաց. բաղում ասացի քեզ, եթէ սուրբ գիտակցութեամբն կացի 'ի տղայական հասակին. և եթէ կամիս, զլսոլոր Պոնտոս քննեա եթէ զիարդ կացի, և ըստ հրամանի Տեառն իմոյ ուսուցի

1. Մի օր. Իսկ դա ասէս որ 'ի տանջանսդ է սրել՝ զքեզ ճշմարիտ։

տալ զկայսերն կայսեր և զԱստուծոյն Աստուծոյ. ուստի
ոչ կարելի է զստահական իմանալ։ Դատաւորն ասէ.
Թէ արդարև սրբութեամբ կեցեր, և 'ի լաւ վարուց
զքեզ լինել հաստատես, ըստ կարգի թագաւորական
հրամանաց, ըստ որում հրամայեալ էն գնալ ըստ սի-
րելի օրէնսն, արդ մեք ընդունիմք ընդ մեօք զուղղու-
թիւնս քո. արա զոհել որպէս ամենեքեան, և կեաց
ընդ մեզ։ Սուրբն Աթանագինէս ասէ. Յայդպիսի օ-
րէնս ոչ կացի, և ոչ այլ կեամ։ բայց զօրէնս երկնա-
ւորին բաղում անգամ ուսուցի և ուսուցանեմ և 'ի
նոյն մեռանիմ։ բայց Սեւերիանոս ստեաց զինէն բոլո-
րովին։ Դատաւորն ասէ. Ոչ իբրև զքրիստոնեայ մեռա-
նիս նախ քան զսրբեալն զքեզ 'ի մեղադրութենէ գրոյն
ամենայն ամպարշտութեամբ լցելոյ։ Աթանագինէս
ասէ. Դատեսցէ զիս Աստուած, թէ ոչ զՀնշմարիտն ա-
ստացի ձեզ։ Դատաւորն ասէ. Իսկ յանդիմանեա զՍե-
ւերիանոս սուտ լինել։ Աթանագինէս ասէ. Կարծես
ունել իմաստութիւն մեծ, և ընդ իրսդ անցանել ոչ
կարես, և գտանել զպատճառս աշխարհական կրօնիւք։
Իսկ ես օտար և պարզամիտ 'ի տեսութենէ հնարից,
զիարդ կարեմ զնորա դատել մտածութիւնն։ Դատա-
ւորն ասէ. Հրաժարեա յառաջին մոլորութենէն, և
զթագաւորական հրամանն արա։ Սուրբն ասէ. Զի՞նչ
արարից. որպէս հրամայեցաւ նոցա յերկնից։ Ասէ ա-
նօրէնն. Զի քրիստոնեայք չարաչար կորիցեն, և մի
ուրեք երևեսցին։ Սուրբն Աթանագինէս ասէ. Ապա
ես քրիստոնեայ եմ ծնեալ, և քրիստոնեայ մնեալ
և կեցեալ, և քրիստոնեայ մեռանիմ։ Դատաւորն ա-
սէ. Ոչ ասացի քեզ զի մեռանիս, այլ զի կեցցես թո-
ղեալ զմոլորութիւնդ։ Սուրբն ասէ. Վաթսուն ամ ա-
ւելի ունիմ որ 'ի քրիստոնէութեանս եմ։ և ունիմ
քսան ամ, յորս եպիսկոպոս եմ։ վասն որոյ այլ ինչ ոչ
յօժարիմ լինել, այլ քրիստոնեայ մեռանել։ Դատա-
ւորն ասէ. Ասացի քեզ, եթէ ոչ իբրև զքրիստոնեայ
մեռանիս ցորքան ընդ այդպիսի պարտաւորութեամբդ
ես։ Սուրբն ասէ. Գիտէ նա որ զծածուկսն տեսանէ,
զի 'ի զուր ստաբանէք զինէն. և մի մնոտի խաբիք, ե-
թէ յայդմանէ խախտեալ կործանեցայց 'ի սուրբ հա-
ւատոյս որ 'ի Տէր մեր Յիսուս Քրիստոս։ Դատաւորն

ասէ. Թագաւորական հրամանացն և բարեկարգ օրի-
նացն աստուածոցն՝ ոչ հնազանդիս որպէս և մեք։
Սուրբն ասէ. Զօրէնս անօրէնս, և զԹագաւորս նոքօք
վճարեալս [1] ոչ ճանաչեմ։ և աստուածք որ զերկինս և
զերկիր ոչ արարին կորիցեն 'ի ներքոյ երկնից։ Դատա-
ւորն ասէ. Եւ զի՞նչ էին գրեալքն 'ի քէն, եթէ ոչ այ-
դոքիկ զոր բերան քո խոստովանեաց։ Սուրբն ասէ.
Զգրեալսն ոչ գիտեմ, բայց վասն անխոտոր սրտի իմոյ
որ առ Աստուած՝ ընդ անձին պատասխանիք այդ էն
զոր լուարդ, և 'ի դմին մեռանիմ։ աւելի աշխատ մի
լինիր։

Յայնժամ դատաւորին տեսեալ զանշարժ և զհաս-
տատուն միտս զերանելւոյն, յետ այսչափ հարց և
փորձից փութացաւ վճիռ առնել գործոցն այսպէս.
և ասէ. ՁԱԹանագինէս եպիսկոպոս որ ձեռնադրու-
թեամբ հայհոյեաց զԱստուածն և զԹագաւորն և
զմեզ զամենեսեան՝ այսպէս բանիւք՝ զորս և լռել չէ
արժան. զոր և 'ի ձեռն տանջանաց խոստովանեաց Սե-
ւերիանոս՝ ԱԹանագինի գրեալ, և տակաւին ևս 'ի
նմին յամառեաց, զսա կենդանւոյն այրել հաճոյ եղև
ինձ, արդ գիտացէք ամենայն բազմութիւն տերանց
Աստուածոց մերոց։ Եւ զայս ընթերցեալ ամենեցուն
'ի լսելիս 'ի քարտէն։ Իսկ անօրէն սպասաւորացն ըզ-
բանսն քան զգործն արագ կատարէին։ Լուցին զհրոյ
վառումն 'ի տեղւոջն յորում այժմ է 'ի Սեբաստիա
փոքր աղօթատուն, յորում տեղւոջ կատարեալ սուրբ
× եպիսկոպոսն Սեբաստիայ Պետրոս՝ բարեկամ ԱԹանա-
գինի. և բորբոքեալ զհուրն տարան զսուրբն. և նորա
խնդրեալ ներումն, եկաց յաղօթս առ Աստուած մե-
ծաւ գոհութեամբ, և բազում խնդրուածս հայցեաց,
որ յետոյ յայտնի երևէր շնորհն 'ի սուրբ նշխարս նո-
րա։ Եւ մինչդեռ աղօթէր, կին ոմն մեծատուն և լաւ,
× ազգաւ հեթանոս, անուն Եւսեբիա, անկաւ առաջի
նորա մեծաւ հառաչմամբ և ասէ. Աղօթեա վասն իմ,
զի թեթևասցին մեղք իմ։ Իսկ սուրբ վկայն ասէ.
Հաւատայ 'ի Տէր Յիսուս Քրիստոս սուրբ սրտիւ, և զոր
պատուիրեմ քեզ արա, և կատարին խնդրուածք քո

1. Մի օր. վարեցեալս։

յամենատեառնէն. առ զմարմին իմ անխախուտ և ամբողջ, հասո յագարակն Փիլաքթովէ, և դիր 'ի տանն զոր ինձէն աշխատեալ շինեցի 'ի հանգիստ սրբոցն, որոց անուանքն են այս. Թէոփրատոս, Հիւսիքիոս, Մաքսիմիանոս, Պատրոփիլոս, Կղէոնիկոս. անդ տուր տանել և զիմ մարմինս։ Եւ նորա յօժարութեամբ ընկալեալ զբանն՝ ողջունեաց զսուրբն։

Եւ զինուորքն մատուցին զերանելին 'ի տեղի կատարմանն։ Իսկ նորա մեծաւ ուրախութեամբ կնքեալ զամենայն անդամն նշանաւն Քրիստոսի, և մտեալ 'ի հուրն՝ աւանդեաց զհոգին յանուն Տեառն։ Եւ նոյն ժամայն Եւսեբիա գնաց առ դատաւորն Ագրիկողոս և խնդրեաց զմարմին վկային. և նորա շնորհեալ գաղտ 'ի բազմութենէն վասն պատուին զոր ունէր առ կինն. զոր և ընկալեալ պատեաց ազնիւ պատանօք և իւղովք անուշիւք, և եդ 'ի կառս. և հաւատարիմ ծառայիւք իւրովք ետ տանել 'ի Փիլաքթովէ, 'ի հրամայեալ սրբարանն. և հանգուցին ընդ սուրբսն։

Բայց պարտ է ոչ զանց առնել զշնորհօքն զոր առ 'ի Տեառնէ երանելին ըստ որում խնդրեալ առաջի մտերմացն որք յուղարկէին զնա 'ի հրայրեցութիւնն. նախ զփրկութիւն կնոջն՝ որ պաղատեցաւն առ նա. և այլ ևս մեծագոյն, զի թէ ոք 'ի մարդկանէ յերազի տեսցէ սխալանս ինչ և զարհուրեսցի, և բարեխօս կալցի զսուրբն առ Աստուած, վճարեալ լինի 'ի փորձութենէ երազոցն, և փոփոխեսցի 'ի բարի լաւագոյն պատահեալ իրի։ Եւ զայս վասն այնր հոգացաւ, զի յորժամ նստէր նա 'ի Թաքստեան 'ի ներքոյ վիմին զոր աղբերացոյց, նիրհեալ 'ի քուն եմուտ. և թուէր երազ տեսանել, որպէս թէ տարեալ գնա առ իշխանն և 'ի զոհելոյն Ճաշակել նմա. և զարթուցեալ նմա խռովեցաւ 'ի վերայ այսորիկ. և կրկնեալ ծունր աղօթեաց բոլորով սրտիւ փոխել 'ի բարի երազոյն. որ և եղևն իսկ։ Եւ յորժամ հանդերձեալն էր կատարիլ՝ յիշեաց և զայս, և խնդրեաց վասն ամենայն մարդոյ զարհուրելոյ յանուրջս։ Ըստ այնմ օրինակի և այլ բազում և հրաշալի շնորհօք երևեալ երանելի վկայն. քանզի յամենանն յուլիսի [1] կատարի յիշատակ նորա, և բազում տօթ

1. Երկու օր. յոռնիսի։

լինի, զի ամառն է. և ամենևին ոչ լինի 'ի մնավանաՀ-
ռութեանն ՃանՃ կամ այլ ինչ 'ի կերակուրն. իսկ
եթէ երևեսցի 'ի տան ուրեք՝ անղօր իմն լինի, և իբրև
'ի ձմերայնի ընդարմացեալ. և եթէ ոք տարցի 'ի մնոյն
որ 'ի յիշատակ սրբոյն՝ բանիւ օրհնութեան, անխա-
խուտ պահիցի մինչև ցուր կամիցինն տանել. և տա-
րեալ՝ եթէ ոչ առժամայն ծախեսցէ, ապականի վաղ-
վաղակի. և որ ոք փութասցի 'ի յիշատակ նորա և պէտս
ունիցի ջրոյ, քանզի սակաւագոյն է ջուր 'ի տեղւոջն
յայնմիկ, և 'ի յիւրում տաղաւարին փորեսցէ ոք ջըր-
հոր, տայ ըստ բաւականին ջուր յաւուր յիշատակի
նորա, և ապա պակասի։ Եւ զկնի կատարելոյ տօնին
խմբեալ բազում ամպոց, բազում ևս անձրև իջանէ
'ի շնորհս սուրբ Հոգւոյն, և ոռոգանէ զերաշտութիւն
գաւառին, և զանմաքրութիւն կենդանեացն և զմարդ-
կան. և զմերձաւոր մօտակայսն գետն 'ի վայր բերէ, և
լուանին տեղիք. և ամենայն խնդրուածք ուխտաւո-
րացն կատարին բարեխօսութեամբ սրբոյն։

Բայց և ոչ զբարեպաշտութիւն կնոջն Եւսեբեայ
եթող նահատակն առանց շնորհակալութեան, այլ
ըստ խոստմանն մերձ եկաց առ նա 'ի տեսլեանն և ա-
սէ. Յառաջնումն կարգի մաղթանաց իմոց պաղատե-
ցայ մարդասիրին Քրիստոսի վասն քո, և տուաւ ինձ
խնդրուածք իմ 'ի Տեառնէ, և թողան մեղք քո
քեզ, վասն մտերմութեամբ հաւատալոյն քո 'ի նա ի-
մով բանիւ։ Եւ զամենայն ժամանակս կենաց իւրոց
ամ յամէ գայր կինն 'ի տեղին մեծաւ պաղատանօք,
իւղովք և խնկովք անուշօք, և զարժանաւոր պատիւն
հատուցանէր, և զբաղումն հաստատէր 'ի հաւատս
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Արդ վասն զի ոչ արժան էր պակասեցուցանել 'ի
կարգեցելոց սրբոյն՝ զոր 'ի կենդանութեան իւրում
արար նշանս, և զոր 'ի վախճանին եթող օրհնութիւն,
այնորիկ աղագաւ սակաւուք նշանակեցաք զսուրբ
վկային Աթանագինի, որ պայծառ և համարձակ կեն-
ցաղավարեալ պսակեցաւ։ Այլ զպատուէր և զկարգ
նորա 'ի Սագուպինաս և շուրջ զգաւառաւն պահեն
մինչև ցայսօր. քանզի կարգեաց զանաղան բարիս 'ի
Սագուպինիա և եկեղեցեացն և Սեբաստայոց քա-

զաքին խորհրդակցացն. և օրհնեալ զամենեսեան յանձն արար զորդին իւր զՊատրոփիլոս, և նստուցեալ զնա յաթոռ քորեպիսկոպոսութեան, և արժանի իսկ եղև յամենայն ժամ պայծառ ունել զկարգս եկեղեցւոյ, զսուրբ տունն որ 'ի Փիլաքթովէ յանձնեաց նմա։

Ոմն Հեղիարոս[1] լաւ և աստուածասէր, որ յայնժամ խորհրդականութեան գլխաւոր էր, որդի Հիպաղաքեայ[2] մեծափառի և պատուաւորի, որ մնեալ ուսաւ զկարգս և զվկայաբանութիւն սրբոյն Աթանագինի. և ժողովեալ խնամակալութեամբ և ճշմարտապէս դրոշմեաց զամենայն պատմութիւնս զայս. և այսպէս թղթով ուղղափառեաց զՀառեցեալսն։ Նոյն Հեղիարոս խնդրեալ էր յերանելւոյն Աթանագինէ 'ի կենդանութեան նորա զմի 'ի հնգից օրհնութեանց գլուխ, զոր արարեալ երանելւոյն. և մինչև ցայսօր պաշտեն որդիքն և տունն Հեղարեայ՝ ուսեալք 'ի միմեանց վասն յիշատակի երանելւոյն վկայութեան։

Կատարեցաւ սուրբն Աթանագինէս 'ի հուր՝ մարտիրոսական վկայութեամբ՝ 'ի հոտ անուշից, 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր. որում փառք յաւիտեանս. ամէն։

1. Մի օր. Հեղարիոն։
2. Այլ օր. Հիպաւայ փահանայի։

Վկայաբանութիւն Սրբոյն Ակակիոսի Վկային։

Մաքսիմիանոսի ամպարշտի առեալ զիշխանութիւն թագաւորութեանն Հռովմայեցւոց, օր ըստ օրէ 'ի չարասէր բանսարկուէն բորբոքեալ՝ ահագին որոտմամբ և դժնդակ սպառնալեօք, վերամբարձեալ հալածանս յարուցանէր 'ի վերայ եկեղեցւոյն Աստուծոյ։ Եւ 'ի մտի եդեալ զամենայն հաւատացեալս անուան նորա կորուսանել և բառնալ ջնջել 'ի միջոյ։ Եւ չարութիւնն ոչ միայն 'ի նոցանէ էր, այլ և 'ի համախոհից նորին՝ աստուածամարտութիւն առաւելեալ լինէր։ Քանզի քաղաքք ամենայն և գաւառք՝ իբրև ծովածուփ մրրկով պարառեալ իսկ 'ի սոցունց՝ ընկղմեալ լինէր յայնժամ և կործանեալ։

Արդ որով բանիւք ոք հաւաստեաւ պատմել կարասցէ զայնմ ժամանակի վրդովումն նաւակոծութեանցն և խռովութեանցն. որ իբրև զմէջ խաւարային և մառախլապատ ամպովք տարածեալ լինէր երկիւղածացն Աստուծոյ։ Քանզի խռովեալ լինէին քաղաքք և դղրդեալ գեօղք և աւանք. և որք 'ի բարեպաշտութեանն գտեալք լինէին՝ այնոքիկ որ զհետ երթային աստուածապաշտութեան կրօնիցն, ըմբռնեալ լինէին յանաստուած դահճացն, և վաղվաղակի հանդերձ կապանօք ածեալ լինէին յատեանի։ Յորոց զայնոսիկ՝ որք հաւանէին՝ զվսեմական զարդարև և զՀնմարիտ հաւատս ուրանալ, և ընդ Հնմարտութիւնն՝ առողջութիւնք մնոտի կենցաղոյս և պատիւք մեծա-

գոյնք և բազում բարութեանց հատուցմունք պարգևեալ լինէր։ Իսկ զայնոսիկ որ զհետ արդարութեան զբարի մասն ընտրելով և զամենայն տանջանարանս չարչարանաց համբերութեամբ յանձն առնուին, հաստատուն և անխոտորնակ հաւատովք կալ՝ի բարեպաշտութեան և՝ի սէր աստուածպաշտութեան մինչև՝ի սպառ, այնոցիկ՝ տոյժք տուգանաց գոյից, և չարաչար և դառն տանջանօք մահ անարգանաց և ամենայն տեսակք դժնդակ պատուհասից պատրաստեալք լինէին։

Ընդ այնմիկ ժամանակին այնուհետև Քրիստոսի անարատ գառնն, Կապպադովկեցւոց շառաւիղն, մեծ վկայն Քրիստոսի՝ Ակակիոս, ՝ի զինուորական դասս ընտրեալ ընդ ձեռամբ Փլաբիոսի հազարապետի, և յաղագս արիական յառաջադիմութեան նորա պարգևով պատիւս ընկալեալ՝ի թագաւորացն։ Ի սոյն իսկ ժամանակի եկն եհաս՝ի զինուորական դասն յայն յուրում սուրբ վկայն էր զինուորեալ. անմաքուր աւանդիցն այնորիկ՝ առ ամենայն տիեզերս՝ զօրէն ցաւոց ուրուք ընթանալով. հանդիպեցաւ՝ի դասն յայնմիկ հասանել յորում Քրիստոսի զինուորն էր դասակարգեալ։

Յայնժամ հրաման տայր զօրապետն ամենայն զօրականացն որք ընդ ձեռամբ նորա էին՝ անցանել՝ի հանդիսի, զի զիւրաքանչիւր կրօնն գիտել մարթասցէ։ Ընդ այնուհետև բազումք յաղթահարեալք յերկիւղէ մահու՝ զհետ ամպարշտութեանն գնալով, ուրանային զՔրիստուն, մթացեալք՝ի կենաց լուսոյն։ Եւ ոմանք թագնաբար ունէին՝ի միտս իւրեանց զուխտ սուրբ հաւատոցն։

Արդ այնուհետև՝ի մէջ ածեալ արիագոյն նահատակն Քրիստոսի և աստուածաբանողն համագոյ Երրորդութեանն. սա հարցեալ լինէր՝ի հազարապետէն զտեսակ հաւատոյն, եթէ որոյ պաշտամանն և բախտի ի՞նչ հաղորդեալ կամ հաւանեալ։ Իսկ սրբոյ վկային ոչ զանգիտեալ և ոչ զարհուրեալ՝ի սպառնալեաց իշխանին, համարձակութեամբ յառաջ մատուցեալ, և քաղցրագոյն բարբառով ձայն արձակեալ՝ասէր. Քրիստոնեայ եմ և ծառայ բարձրելոյն Աստուծոյ, արարո-

զին զերկինս և զերկիր և որ 'ի նոսա արարածք են։ Յայնժամ դատաւորն ցասմամբ մեծաւ և բարկութեամբ լցեալ և խեթիւ նայեցեալ 'ի նա՝ ասէ. Ուստի՞ կամ յորմէ՞ զայդպիսի ուսեալ և բարբառեալ, այ չարագլուխ այր. կամ ո՞ ետ Քրիստոսն այն՝ զորոյ զանուն իշխեցեր 'ի յիշատակ բերել բերանովդ առաջի իմ։ պատասխանի տուր փութով ինձ մի ըստ միոջէ առաջի ամենայն դատարանիս. երդուեալ յաստուածն ամենայն՝ զի ոչ խնայեցից 'ի մանկութիւն գեղեցկագոյն հասակիդ այդորիկ, վասն բանիդ այդորիկ։

Պատասխանի ետ սուրբն Ակակիոս և ասէ ցնա. Եթէ ոչ էիր խորին և խաւարային միգով ամբարշտութեան պարուսակեալ, թերևս ցուցանէի քեզ զլոյս Քրիստոս՝ Աստուած գոլով, Տէր և Թագաւոր, արարիչ երևելեաց և աներևութից։

Ա՛ռ այսոսիկ ասէ դատաւորն. Տեսանելով զքեզ համակ գեղեցիկ և վայելուչ հասակաւ, և վասն այդորիկ յոյժ խանդաղատիմ 'ի վերայ քո։ Արդ 'ի յերկար շաղփաղփութեանցդ հրաժարեալ՝ սուղ և դուզնաքեայ բանիւք ասեմ քեզ. լուր ինձ և մատուցեալ զոհեա աստուածոցն, և լեր երանելի 'ի վերայ երկրի, և ընկալցիս պարգևս յինքնակալէն։

Սուրբն Ակակիոս ասէ. Որո՞յ աստուածոցն հրամայես զոհ մատուցանել։ Հաղարապետն ասէ. Ա՛յնոցիկ որոց ինքնակալքն զպաշտօն երկրպագութեանն մատուցանեն, և ամենայն հնազանդեալքն նոցա։ Եւ ցուցանէր ձեռամբ իւրով զաստուածսն որ շուրջ կային զինքեամբ, և ասէր. Եթէ Սոքա են որ շնորհեն զխաղաղութիւն և զշինութիւն աշխարհի. որոց եթէ ոչ զոհեսցես և ոչ յանձն առցես զհրաման ինքնակալին՝ 'ի չարաչար և յանընմբռնելի տանջանս մատնեցից զքեզ. և ոչ ոք է այլ աստուած որ կարող իցէ հանել զքեզ 'ի ձեռաց իմոց։

Պատասխանի ետ սուրբ վկայն և ասէ ցհաղարապետն. Կարող է իմ Աստուածն ոչ միայն 'ի ձեռաց քոց փրկել զիս, այլ և զոր դու աստուածս անուանես՝ սատակել. և զքեզ 'ի նոցա մնոտի յուսոյն 'ի բաց կորզել, և առ ինքն վերացուցանել զկամս սրտի քո՝ 'ի ձեռն Ճշմարիտ գիտութեան իւրոյ։

Դարձեալ ասէ ցնա հաղարապետն. Երդուեալ յաստուածն ամենայն և 'ի բախտ ինքնակալին. զի եթէ ոչ ըստ հաճոյից ինքնակալին տացես պատասխանի, կամ անմահից դիցն զոհս երկրպագութեան ոչ մատուցանիցես՝ չարաչար և դառն պատուհաս կալցեն զքեզ։

Սուրբն Ակակիոս ասէ. Ուղղապէս լուր ինձ, ո՛վ դատաւոր, քանզի անշունչ դիւաց խլից և կուրաց և կոտոց մեռելոց ոչ երբէք զոհեցից. քանզի գրեալ է. Աստուածք որ զերկինս և զերկիր ոչ արարին՝ կորիցեն 'ի ներքոյ երկնից. և դարձեալ, եթէ Երկիր պագցես Տեառն Աստուծոյ քում, և զնա միայն պաշտեսցես։

Յայնժամ հաղարապետն ասէ ցնա. Ո՛վ Ակակիէ, յանդուգն ոմն երևիս դու և պաճուճաբան. և ոչ վայել է այդպիսի հասակիդ՝ զամբարհաւաճութեան և զնոտիս բարբառելոյ զհետ երթալ. ո՞չ գիտես եթէ ընդ իշխանի խօսիս. մանաւանդ քոյոյ գլխոյդ իշխանութիւն ունողի, այր մի գոլով 'ի բազմաց որ ընդ իմով ձեռամբ անկեալ են։

Սուրբն ասէ. Ո՛վ դատաւոր, ոչ եմ տգէտ այդմ ամենայնի և անտեղեակ, այլ 'ի Քրիստոս բարեպաշտելուսայ. զի նա շնորհեաց ինձ համարձակութիւն և համբերութիւն, յաղթել քեզ և հօրն քում սատանայի. քանզի զօրութիւն ձայնի նորա սասանեցոյց զամուրս բանտարկուին և խորտակեաց զբռնութիւն մահու։

Յայնժամ հաղարապետն հրամայեաց զինուորացն առ ժամայն թողացուցանել զնա 'ի տանջանացն, և խորհեր ողբական բանիւք հաւանեցուցանել զնա, և միանգամայն ընկենուլ զնա 'ի կորստեան խորխորատն։ Եւ մերձ առ ինքն կոչեալ զսուրբ վկայն, խօսեր ողբական և հեշտալի բանիւք՝ և ասեր. Լուր ինձ, հօր քում, ո՛վ Ակակիէ, քաջ և անպարտելի զինուոր ինքնակալին. զոհեա անմահ աստուածոցն, և արարից զքեզ աթոռակից ինձ. և ինչս և ստացուածս բազումս պարգևեցից քեզ, և եղիցիս առաջին 'ի բարեկամաց ինքնակալին։ Այլ թէ ոչ լուիցես բանից իմոց, և ոչ լինիցիս հպատակ օրինաց Հռովմայեցւոց և հրամանի թագաւորին, կարծրագոյն և դառն կապանօք առա-

քեցից զքեզ առ Բիբիանոս իշխան Եթոպայեցւոց՝ յա-
մենիմաստն և 'ի հանճարեղն, 'ի հռչակաւորն և 'ի
պաճուճաբանն, որ և զանշունչ արձանսն կարող է ա-
ծել յուզղութիւն, և ոչ ևս լիցի քեզ հնար ճողոպրիլ
'ի ձեռաց նորա։ Արդ ողորմեա անձին քում և մի՛ ան-
կանիր յանաչառ ատեան դատաստանի նորա։ Առ այս
պատասխանի ետ սուրբ վկայն և ասէ. Ինձ ոչ ինչ
զանազանեալ է առ 'ի քէն կամ առ 'ի Բիբիանոսէ
մեռանելն. քանզի եթէ դու և եթէ նա տանջիցէք
զիս, նոյն վախճան մահու ինձ սպասեալ առաջի կայ։
Քանզի և երկոցունց նոյն կամք են դիտողութեան,
տանջելն և սպանանելն զխորհողն բարեպաշտութեան
և զխոստովանողն անմահ Աստուծոյ իմոյ։

Արդ իբրև ետես դատաւորն զանպարտելի հաւատն
վկային Քրիստոսի, տարակուսեալ 'ի միտս իւր, պատ-
շաճ համարեցաւ առաքել զնա առ իշխանն Բիբիանոս,
գրեալ առ նա թուղթ որ ունէր օրինակ զայս.

Ի Փլաբիանոսէ դատապետէ զինուորական՝ մեծա-
փայփաքելի խաղաղութեամբ և ըղձալի սիրով ողջոյն.

Զբարեյաղթ թագաւորաց մերոց ամենայն իրաք գի-
տելով զառ 'ի յաստուածս բարեպաշտութիւն, և ըզ-
հաճոյս արարողաց նոցա զփոյթ յօժարական խնա-
մոցն, և զքրիստոնէից դժուարահաւան չարաբարու-
թիւնն՝ որ ոչ երբէք սովոր են ողջակէզ բանից հա-
ւանել և կամ պատրիլ 'ի ձեռն պարգևաց, և կամ
պատուոց մեծարանաց ինքնակալին զհետ երթալ,
եթէ ոչ արհաւիրս տանջանաց առ նոսա 'ի կիր արկ-
ցուք. այլ մեք ոչ ունելով այդոցիկ համարձակութիւն,
առ քոյդ զդա արձակեցաք անպարտելի և ահեղ դա-
տարան. զի դա է մի 'ի զինուորացս յայսցանէ՝ որ ընդ
ձեռամբ իմով են. զոր ճշմարտապէս հետազօտեալ
մեր՝ գտաք զդա հետևեալ աղանդոյն Գալիլիացւոց. և
բազում ողջանս աղաչանաց և սպառնալիս տանջանաց
առ 'ի մէնջ ընկալեալ, զի ընտանասցի աստուածոցն
բարեպաշտութեան, և արհամարհեաց զզօրութիւն
փառաց նոցա, և իբրև անօթ բրտի համարեցան յաչս
դորա։ Այլ մեք երևեցաք դմա իբրև յականջս մեռե-
լոց խօսելով։ Արդ զդա որ ամպարիշտ կրօնիցդ հաւա-
նեալ է, և ոչ 'ի բաց կացեալ 'ի մնոտեաց, առաքեցի

առ քեզ կապանօք և անարգութեամբ. զի ընդ դատարանօք հարուածոց արասցես զդա, և խելամուտ արասցես զդա առ աստուածն բարեպաշտել. և ընծայաբեր լինել զոհիւք և ձօնմամբք։ Այլ զոր ինչ պատշաճ վարկանես վասն դորա՝ արասցես, զհետ երթալով հրամանի ինքնակալին. Ողջ լեր։

Արդ առեալ զհրովարտակն զինուորացն և զմեծ վկայն Քրիստոսի զԱկակիոս՝ չարաչար կապանօք, յուզի անկեալ հասանէին յԵթովպէ, առ դատաւորն Բիբիանոս։ Եւ յանդիման լեալ իշխանին՝ մատուցին և զհրովարտակն Փլաբիանոսի հազարապետի՝ հանդերձ երանեալ սուրբ վկային Ակակիոսիւ։

Արդ իբրև ընթերցան զթուղթն առաջի իշխանին և քննեալ վերահասու եղև ամենայն իրացն և դործոցն եղելոց. յայնժամ հրամայեաց 'ի բանդ արկանել զնա և զգուշութեամբ պահել մինչև 'ի վաղիւն։ Եւ իսկոյն հրամայեաց քարոզ կարդալ 'ի քաղաքին և շուրջ զամենայն բնակչօք նորա, զի ամենեքեան առ հասարակ 'ի տեսարանն ժողովեսցին։

Եւ ինքն յարուցեալ ընդ այգն ընդ առաւօտն, հրամայեաց բեմն բարձրագոյնս կազմել 'ի մէջ թէատրոնին. և ամբոխ բազմութեան ժողովոյն իբրև զամպս 'ի մրրկէ բերեալ լինէին։ Եւ իշխանն Բիբիանոս նստեր բազմաշուք ճոխութեամբ 'ի վերայ բեմին. և հրամայեաց ածել զերանելին Ակակիոս և կացուցանել առաջի իւր. և զդատավճիռ նամակին Փլաբիանոսի հրամայէր միւսանգամ ընթեռնուլ առաջի հրապարակին։ Յայնժամ դատաւորն Բիբիանոս խոժոռադիմաք և ցասմնալի սպառնալեօք հայեցեալ 'ի սուրբն՝ ասէ ցնա. Դու՞ ես Ակակիոս վկայ խաչելոյն Յիսուսի։ Եւ սուրբ վկայն ասէ. Ես եմ ծառայն Քրիստոսի Ճշմարտին Աստուծոյ, յոր հաւատացեալքն 'ի նա յամօթոչ լինին։ Պատասխանի ետ դատաւորն ցսուրբ վկայն. Զիա՞րդ կաս և մնաս 'ի նոյն յամառութեանդ, և զմեծ անունն զայն կարդաս յօգնականութիւն քեզ, որ զանձն իւր ոչ կարաց փրկել 'ի մահուանէ, այլ և բազմաց ևս պատճառ եղև մահու. այլ թէպէտ և յառաջագոյն ոչ զգացեր և ոչ եկիր յուղղութիւն, դէթ այժմիկ լուր ինձ և 'ի բաց լեր մեռոտի յուսոյն յայն-

մանէ, և զոհեա աստուածոյն և Հողոպրեա 'ի տանջանաց։

Պատասխանի ետ արիագոյն նահատակն և ասէ ցբռնաւորն. Յառաժամանակեայ մահուանէս թէպէտ և բազում անգամ կամեցայց՝ ոչ կարացիր Հողոպրել. զի բնութիւնս զնոյն պահանջէ հատուցանել զպարտս հարցն, մարդ գոլով. այլ պարտ է ապականացու մարմնոյս այսուիկ և անցաւոր կենաւքս ստանալ զմշտնջենաւոր և զյաւիտենական և զանապական կեանսն, զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ և 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց. զոր և ես այժմիկ կենդանութեան սպասեալ ակն ունիմ ժառանգորդ լինել։ Այլ և բազում ևս արդեաք շնորհ ունիմ քեզ, եթէ նպաստ լինիս ինձ առ յաղթանակ վերին բրաբիոնին հատուցմանց. արագ ժամանել ինձ 'ի նաւահանգիստն անսուտ խոստմանցն և անսպառ բարեացն կենացն յաւիտենից։

Առ այսոսիկ ցաստմամբ մեծաւ և անհնարին որոտմամբ սպառնալեաւք լցեալ անօրէն իշխանն Բիբիանոս, հրամայեաց տանջանաւք հատանել զբանս 'ի բերանոյ նորա։ Եւ զինուորացն մերկացուցեալ զերանելին տապանէին քառակուսի պրկմամբ, արհեստաւորեալ տանջանարանաւքն, և լարիւք ուժգնակի քարշէին զյոդուածս ոտիցն և ձեռաց նորա, և կարծրագոյն արքառաջաւք հարկանէին զթիկունս և զորովայն նորա։ Եւ մինչդեռ այնպէս հարկանէին զնա, ձայն արձակեալ առ նա դատաւորն աղաղակեաց և ասէ. Ո՛վ Ակակիէ, քաջ զինուոր ինքնակալին, միայն ասա բանիւ թէ զոհեմ, և 'ի նմին ժամու ազատեսցիս 'ի տանջանացդ։

Զայսոսիկ լուեալ սուրբն, քամահելով զբանն ծիծաղեր 'ի վերայ չարաբարութեան անօրէն դատաւորին և ասէր. Ոչ երբեք, ո՛վ դատաւոր, յանձն առից ուրանալ զմին Աստուած, զկենդանին և զՀշմարիտն, որ կարողն է յամենայնի կեցուցանել և կորուսանել։ Արդ եթէ քեզ դիւրին թուի ստեղծագործել զմարդիկ, և այլս յայլոց այլակերպ առնել, սոյնպէս և յինէն ակնկալութիւն լցի քեզ 'ի ներհակացն ինչ թերևս լինել. քանզի ես նոյն Ակակիոս գոլով որպէս այժ-

միկ եմ՝ ոչ փոփոխեմ զբանս իմ, և ոչ հրաժարեմ 'ի գոյացուցչէն իմմէ և յարարողէն, որ վասն պարտեաց մարդկան՝ կրեաց զայն ամենայն կիրս մարմնով, բայց 'ի մեղաց. և եկն կամաւորութեամբ 'ի չարչարանս խաչի և մահու։

Դատաւորն ասէ ցնա. Իբրու թէ ողոքանաց ինչ բանս և հեշտալիս խօսէաք առ քեզ, ո՛վ Ակակիէ, և այնու ոչ 'ի բաց լինէիր 'ի խոստովանութենէ քոյոցդ հաւատոց, այլ 'ի նոյն կացեր և մնացեր, քրիստոնէութեան խնամ տանելով։ Եւ առ դահիճսն դարձեալ՝ ասէր ուժգնակի բարբառով. Փութացուցանէք և արագագոյն հասուցանէք 'ի վերայ դորա զտանջանսդ, զի մորմոքեալ 'ի դառնութենէ հարուածոցն՝ անագան ուրեմն 'ի բաց կացցէ 'ի շաղփաղփութեան բանից իւրոց։

Եւ սուրբ վկային մարմինք այնուհետև 'ի սաստկութենէ տանջանացն քանցեալ և վատնեալ լինէին. այլ 'ի վերին զօրութենէն զօրացեալ լինէր հոգւոփն և զուարթանայր ջերմութեամբ սիրոյն Քրիստոսի. և բորբոքեր միշտ առ բարեպաշտութիւնն։ Արդ մինչդեռ ստէպ 'ի վերայ մարմնոյ վկային զօրանային հարուածքն տանջանացն, յայնժամ խօսել սկսաւ դատաւորն Բիբիանոս իբրև խաղ ինչ առնելով, ասէ. Ո՞չ ես իմացար զտանջանսդ, ո՛վ Ակակիէ. և ո՞չ ես առեր զչափ զօրութեան անմահից աստուածոցն. և ո՞չ ես զանգիտեցեր գէթ այժմիկ 'ի հրամանէ քաջարանց ինքնակալաց։

Պատասխանի ետ սուրբ վկայն և ասէ. Յայդմ ամենայնէ ոչ զգացի, և ոչ երբէք զգացայց. բայց գիտեմ զի դու իմացեալ ծանեար զախտալից տկարութիւն քո, և զի ոչ կարացեր շրջել զմիտս իմ 'ի բարեպաշտութենէ աւանդիցն, ձգել զիս զկնի գարշելի և ամպարիշտ բանից քոց, և մի՛ այլ լիցի որչափ 'ի մարմնի աստ իցեմ կենդանի գոլով։ Եւ մինչդեռ զայս խօսէր երանելի վկայն Քրիստոսի, դահիճքն զմիմեանս փոփոխելով 'ի հարկանելն, ծանրագոյն նմա զցաւսն հասուցանէին. և նա աղաղակէր և ասէր. Աստուած յաւիտենական անսկիզբն, Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, հայեաց յերկնից 'ի պատրաստ

բնակութենէ քումմէ և փրկեա զիս յորոգայթէ յորսողաց. զի դու ես համբերութիւն իմ և յոյս 'ի ժամանակի նեղութեան։ Զօրացո զտկարութիւնս իմ, և տուր համբերութիւն անձին իմոյ, զի հաստատուն և անշարժ կացից 'ի խոստովանութեանդ որ 'ի քեզ. և արժանի եղէց ժառանգել զխոստացեալ պարգևսն ընդ ամենայն սուրբս և ընդ սիրելիս անուանդ քում սրբոյ. և քեզ փառք յաւիտեանս։

Արդ իբրև ետես դատաւորն զանփոփոխելի և ըզհաստատուն միտս սրբոյ վկային որով արհամարհէր զվիշտս չարչարանացն զոր ածէին 'ի վերայ նորա, տարակուսեալ վարանէր յանձն իւր անօրէնն. հրամայէր անօրէն դահճացն թողացուցանել զնա 'ի բանտն։ Յայնժամ առեալ զինուորացն զսուրբ վկայն Քրիստոսի՝ ըստ հրամանի դատաւորին, տարին զնա յարգելանս բանտին. և նա բերկրալի ցնծութեամբ և անպատում ուրախութեամբ հետևէր զկնի նոցա։ Եւ մինչդեռ անցանէր սուրբն ընդ փողոցամէջ քաղաքին՝ հանդերձ կապանօք և գանալից վիրաւորեալ անդամօք, արիաբար աղաղակէր մեծաձայն 'ի լուր ամենայն բազմութեանն և ասէր. Ոչք զվերս տեսանէք զնահատակացս Քրիստոսի, 'ի միտ առէք զձիրս փոխարինացն այնոցիկ, եթէ ո՛չքան և որպիսի՛ բարութիւնք պատրաստեալ ամբարեալ պահի այնոցիկ՝ յանապառելի յաւիտեանսն յանմահ թագաւորէն՝ վասն նորա չարչարելոցն, զոր ոչ է մտաց հասանելի և բանից ճառելի։ Վասն որոյ և չարչարեալս վասն նորա եւս քան զեւս քաղցրագոյն քան զամենայն բարութիւնս երևելի մեծութեանց աշխարհիս։

Արդ առ այսոսիկ քաղցրահնչիւն ձայնս փրկական բարբառոյ՝ շարժեալ լինէին ամենայն բազմութիւն քաղաքին յիւրաքանչիւր տեղւոջէ՝ զկնի սրբոյ վկային մինչև 'ի դրունս բանտին, լսէին 'ի նմանէ զբանն կենաց. և նա ոչ դադարէր անփակ բերանով և անհանգիստ բարբառով զսերմանս արդարութեան հաւատոյն տարածանել 'ի լսելիս բազմութեան։ Մինչև ածին մուծին յարգելանս խաւարչտին բանտին, կապեալ ոտիւք և պարաւանդեալ ձեռօք. և փակեալ զդուրս բանտին կնքեցին մատանեաւ իշխանին. և նո-

ըա կալով 'ի կապարանի անդ ուրախութեամբ և ցընծութեամբ բաղմաւ, գոհութիւն և օրհնութիւն ամենատեառնն անյաղական ձայնիւ յերկինս առաքէր։

Յայնժամ և 'ի բարձանց երկնից եկեալ հասեալ լինէր առ նա զօրացուցիչն Քրիստոս, և անձառելի ճառագայթիւք իւրովք զխորս խաւարին մթութեանն լուսաւորէր, և զաստուածային ձայնն առ նա առաքեալ՝ արիանալ անպարտելի վկային հրամայէր, և հաստատուն կալ յերանաւէտ կոչումն, ասելով. Ընդ քեզ եմ, և միշտ էի, և եղէց անմեկնելի մինչև 'ի սպառ. արդ մի՛ վհատիր այլ համբերեա քաջութեամբ, զի արժանի լիցիս զմշտնջենաւոր հանգիստն ժառանգել յաղթայութեան իմում, զոր ես և Հայր իմ պատրաստեցաք քեզ։ Իսկ յայսպիսի բարբառոյս խրախացեալ հրճուանօք զուարճանայր սուրբ վկայն։ Եւ նոյն ժամայն երևէին գունդ հրեշտակաց շուրջ զնովաւ երգակից լինել նորա գիշերային պաշտամանցն. իսկ երբեմն խրախուսակից լինելով նմա, և զուարթացեալք քաջալերէին զնա, զօրացուցանելով յառաջիկայ մրցմունս հանդիսի նահատակութեան. և ոմանք 'ի սրբոց զըւարթնոցն 'ի կերպարանս բժշկաց երևելով՝ բժշկէին զվէրս ցաւոցն. սպեղանիս իմն արկանէին 'ի վերայ քանցեալ մարմնոյն, և զաւուրս բազումս այնպէս անմեկնելի լինէին 'ի նմանէ բանակք անմահիցն, և ողջանդամ և անարատ զմարմին նորա կազմէին։

Յայնժամ իբրև գիտաց անօրէն իշխանն եթէ դեռևս կենդանի է սուրբ վկայն Քրիստոսի, հրամայեաց զինուորացն ածել զնա յատեան դատարանին։ Եւ իբրև ածին՝ կացուցին զնա առաջի բեմին յորում նստէր իշխանն. և հայեցեալ հիանայր ընդ արագագոյն բժշկութիւն վիրաց մարմնոյ նորա. և հեզութիւն կեղծաւորեալ՝ խորամանկութեամբ փոխաբերել հնարաւորէր զմիտս 'ի բարեպաշտութեան աւանդիցն, ասելով. Գիտեն աստուածքն ամենայն, ո՛վ Ակակիե, զի յոյժ զարմացեալ զարհուրեալ եմ, զմտաւ ածելով թէ զիարդ այդպիսի բարեվայելուչ գեղեցկութիւն հասակի և զարիական քաջութիւն... զինուորական կարգի և զխոհեմութիւն իմաստութեան յանձին բերելով, և յայտնապէս կամայորդոր մտաք

ընտրեաս զչարագործաց մահ մեռանել, և զրկիլ՝ի քաղցր լուսոյ աշխարհիս այսորիկ։ Յոյժ գովեմ զքո հաստատուն և անփոփոխելի միտդ և զարիական մրցմունդ. այլ այնպէս էր գովելի թէ ընդդէմ թշնամեաց ինքնակալին վարեալ լինէր քո այդպիսի ջան աշխատութեանդ. այլ ընդ երկաթոյ և ընդ հրոյ և գազանաց և ընդ վիմաց մարտնչելն՝ յոյժ յիմարութեան գործ է, և՝ի մոլորութենէ ոչ ազատ։ Արդ ոչ տեսանես թէ ո՛րքան նուազեալ է զօրութիւն ազնուականութեան քո, և թառամեալ նոյն իսկ մարմնդ և թուլացեալ է յօդք անդամոցդ, և գունատեալ ես՝ի բարեվայելչութենէ գեղոյ երիտասարդութեանդ։ Արդ ողորմիմ յոյժ և խանդաղատիմ՝ի վերայ մանկական տիոցդ, մանաւանդ և սիրեմ իսկ յաղագս քաջ և պինդ հաստատութեանդ։ Եւ եթէ լուիցես ինձ և հաւանեսցիս բանից իմոց, մեծաց բարութեանց և պարգևաց առիթ եղէց քեզ։ Եւ գրեցից առ ինքնակալն, զի բարձրագոյն պատիւ դատաւորական իշխանութեան տացէ քեզ, և եղիցիս երևելի յաշխարհիս, և մերձաւոր և բարեկամ անմահից աստուածոցն։ Եւ այսպիսի խորամանկ խորագիտութեամբ կամէր դաւաճանել զտուրբ վկայն Քրիստոսի, և քակել՝ի ժրութենէ արիական հանդիսիցն։

Առ այսոսիկ պատասխանի ետ տուրբ վկայն, և ասէ. Մի՛ մեքենաւոր բանիւք դառնութեան ջանար խաբել զիս և արկանել՝ի խորխորատ կորստեան, քակելով զիս՝ի բարձրութենէ հաւատոցն Քրիստոսի, և մերժելով զիս՝ի քարոզութենէ կենսաբեր աւետարանին Փրկչին մերոյ Աստուծոյ և Տեառն Յիսուսի Քրիստոսի։ Վասն որոյ ասեմ քեզ, ո՛վ դատաւոր, զի ոչ կարասցես մնոտի և չարիմաց բանիւք քո պատրել և մերժել զիս՝ի սիրոյն Քրիստոսի, և տարագիր առնել յորդեգրութենէ Հօրն երկնաւորի։ Եւ արդ զոր ինչ առնելոց ես, արա վաղվաղակի. զի փութամ ելանել՝ի մարմնոյ աստի և մտանել առ Աստուած, առ որ անձկացեալն եմ։ Եւ պատրաստ եմ յամենայն տանջարանս քո, ՝ի սուր, ՝ի հուր, ՝ի քարկոծանս, ՝ի քերանս, ՝ի յոշումն անդամոց, գազանակուր լինելով. և զամենայն մեքենաւոր ձգունս աշխատութեանց՝ զոր ինչ կամիս ածել

'ի վերայ իմ, մի՛ յապաղեր. վասն զի ոչ հնազանդիմ ես անօրինաց Թագաւորաց քոց, և զոհս աղտեղութեան մատուցանեմ դիւաձոյլ և ապականագործ պատկերաց աստուածոց նոցա։ Եւ պարսպեալ եմ զՀոգի իմ ամենակարող զօրութեամբ Աստուծոյն իմոյ անմահ Թագաւորին յաւիտենից. և ոչ կարէ բանսարկու չարանախանձն իբրև զաղախին ոմն գերի տանել զիս յանգիւտ կորուստն։

Արդ իբրև զայս ամենայն և որ սոցին նման էր՝ խօսեցաւ սուրբ վկայն, և ամենապիղծ իշխանն Բիբիանոս զկեղծաւորութիւն խորամանկութեանն վաղվաղակի՛ի բաց ընկեցեալ, և չարաբարութեամբ և սրրտմրտութեամբ դարձեալ լցեալ լինէր և անողորմութեամբ. և հրամայէր անօրէն դահճացն կապարեայ գնտիւք խորտակել զբերան սրբոյ վկային Քրիստոսի, և այնչափ սաստկացուցանել՝'ի վերայ նորա զՀարուածս տանջանացն, մինչև Թափումն լինել ասէն ամենայն ատամանց նորա և ջարդել մորոց բերանոյ նորա։ Եւ համանգամայն բողոքեալ առ նա՝ ասէր դատաւորն հանդերձ ամենայն ատենական խառնիճաղանճ բազմութեամբ. Ո՛վ եղկելի և արբեալդ յիմարութեամբ խորհրդոց՝ Ակակիէ, մի՛ առ լեզուդ քո շրջեցուցաներ զխաչելեալն Քրիստոս, և մի՛ զանուն նորա յիշելով՝ զիմն տաղտկացուցաներ զլսելիս։ Իսկ սուրբ նահատակն Ակակիոս՝ ընդ այնպիսի տանջանօք լինելով՝ պատճառս պատուհասից իւրոց յաւելոյր, Թշուառական և դիւաց բնակարան զնա կարդալով, և շտեմարան ամենայն չարեաց բանսարկուին։ Ցիրաւի ոչ կարեն ամենապիղծ լսելիք ականջաց քոց ընդունել՝'ի յինքեան զահաւոր և զսարսափելի անուն Աստուծոյ իմոյ, զայն որ ահաւոր ձայն հրամանի նորա դողացուցանէ զերկինս և զերկիր։

Ա՛ռ այսոսիկ դարձեալ ասէ իշխանն առ վկայն. Ես ողջախոհագոյն կամեցայ քեզ լինել և զերծանել յառաջիկայ տանջանացն, և բանի ևս հաղորդ արարի զքեզ, և որպէս պարտ և պատշաճ էր մարդասիրութիւն ցուցանելով՝ ողոքեցի զքեզ խանդաղատելով՝'ի վերայ մանկական գեղոյ քոյ. այլ քանզի դու մանաւանդ յաղթել փութաս ինձ, արդ այսուհետև վաղ-

վաղակի ցուցից քեզ զզօրութիւն Քրիստոսին քո. և ծանիցես եթէ ո՞վ է Բիբիանոս իշխան, և ո՞վ Ակակիոս. և փորձիս ցուցանեմ քեզ թէ և ոչ սուղ ինչ կարիցէ օգնել քեզ Քրիստոսն քո յոր յուսացեալ ես։

Աստանօր երանելի վկայն լցեալ աստուածային հոգւով, ընդ Պաւղոսի գոչէր ասելով. Ոչ գիտեմք զերևելիսս այլ զաներևոյթսն, զի երևելիքս առ ժամանակ մի են, և աներևոյթքն յաւիտենականք. զի թէպէտև առ ժամայն տաճար շինուածոյս մերոյ քակտեսցի, շինած յԱստուծոյ ունիմք տաճար առանց ձեռագործի յաւիտենական յերկինս. և եկեսցէ սուրբն յերկնից և այց արասցէ և զեկեալ հասեալ տանջանաց որ 'ի քէն 'ի վերայ իմ՝ մնոտի և ունայն ցուցանիցէ, և անվթար և անարատ պահեսցէ զիս 'ի խոստովանութեան որ առ սուրբ անուն նորա։

Զայսոսիկ սրբոյն պատասխանատրելով դատաւորին, անհնարին ցասումն բարկութեան շարժելով, դարձեալ ասէ դատաւորն այնոցիկ որ շուրջն կային զնովաւ. Քանզի Ակակիոս բռնամահս այս և չարաբաստի պատահեալս, այլ ևս յոլովից քան զառաջին եկեալ հաւեալ տանջանսն կամեսցի թէ եկեսցէ 'ի վերայ նորա, զի մեծաց վարձուց և փոխարինաց լիցի ժառանգորդ, որում և ակն ունի հասանել վաղվաղակի, զոր և փառք անձին իւրում համարի. արդ տարածեսցի դարձեալ 'ի գետնի, և զմարմին նորա ամենայն գործիք տանջանաց ճարակեսցեն, և եղիցին շուրջ զդովաւ բազմութիւն ժողովրդոց զինուորաց. զի և տանջանքն ուժգնակի լինիցին, թերևս առաւելագոյն չնորհս մեզ խոստովանեսցի, յոլովագոյնս այսպիսի բարութեանց պատճառ սմա եղելոց։

Զայսոսիկ անօրէն իշխանն Բիբիանոս հենգնելով ինն ասացեալ, և բազմութիւն դահճացն շուրջ զնովաւ լինելով, և պարզեալ զնա քառակուսի պրկմամբ 'ի վերայ գետնոյ, և ստուար արջառաջղօք զորովայնն և զթիկունսն գազանաբար յանխնայ հարկանէին։ Իսկ երանելի քաջ նահատակն Քրիստոսի, առ սէր արարչին իւրոյ Յիսուսի՝ զամենայն տանջանս չարչարանացն առ ոչ ինչ համարէր։

Յայնժամ դատաւորն Բիբիանոս ձայն արձակեալ առ նա՝ ասէր. Զոհեա, ո՛վ Ակակիէ, աստուածոցն։ Իսկ բարեյաղթ վկայն ոչ ինչ փոյթ առնէր բանից նորա, և ոչ ինչ արժանի համարէր զնա պատասխանւոյ. այլ միայն քաղցր և հեզ ասէր. Ոչ ինչ են արժանի չարչարանք ժամանակիս առ հանդերձեալ փառացն որ յայտնելոցն է։

Արդ որո՞վ բանիւք ոք կամ լեզուաւ զքաջ համարձակութիւն սրբոյ վկային պատմել կարասցէ՝ որ յայնժամ. քանզի տանջեալ լինէր, և համբերէր վասն յուսոյն. խոցոտեալ սրով, և հանդուրժէր. շրջապատեալ մեքենայիւքն, քամահեալ ծիծաղէր։ Ընդդիմակաց լինելով մատաղ բնութեամբն բռնութեան խստագոյն տանջանացն, և անողորմ լկանօք քերանացն յերկիր տարածեալ լինէր, և հոգւոյն ուղղութեամբ ոչ դիմադուէր. այլ հրճուեալ լինէր և ցնծացեալ, մանաւանդ Տեառն չարչարանօքն։

Գոչէր մեծաձայն այսպէս և ասէր. Յաւել ևս, ասէ, ո՛վ բռնաւոր, և այլ ևս տանջանարանս. զի ես առ հուր պատրաստ եմ, և առ սուր, և 'ի գազանս վայրենիս և ևս պատրաստագոյն. ոչ սիրեմ զկենդանութիւն առաւել քան զարարիչն իմ, ոչ յօժարիմ փառաց ապականացուի։ Հանգիստ լինձ յօդիցս քակտումն. բանդք քո պատրաստեալ են լինձ իբրև զդրախտ փափկութեան՝ առ որ փութացեալն եմ։

Մի ոմն 'ի նախարարացն որ առաջի կայր Իշխանին, իբրև շնորհս առնելով սրբոյն, մատուցեալ յունկն նորա՝ ասէ այսպէս. Զի՞նչ ունիս շահել, ո՛վ եղկելի, և զի՞նչ եդեալ ես 'ի մտի. զի յորժամ վատնի մարմինդ բնաւին և 'ի վերջին հասանիցես շունչ, յայնժամ իմասցիս զպատշաճն՝ յորմէ ոչ ինչ օգտեսցիս։ Արդ մինչդեռ կայ ևս հնար մնալ քեզ 'ի կենդանութիւն, լուր բանից խորհրդակցութեան իմոյ, և ամփոփեա և փոխադրեա զմիտս քո 'ի մնոտի յուսոյն յայնմանէ. և հնազանդ լեր հրամանաց ինքնակալին, և զոհեա բարեբար աստուածոց մերոց, և մեծաձիր պարգևաց արժանի լինիս։ Ո՞չ տեսանես զիշխանին առ քեզ ըներողութիւն, և զխանդաղատանս ջերմագոյն սիրոյն, եթէ ո՛րպէս տրտմագին արտասուօք և հառաչ-

մամբ սրտի յոգւոց հանէ 'ի վերայ քոյոց թշուառութեանց։

Յայնժամ զիաբէութիւն ստեղծաբանութեան նորա իմացեալ սուրբ վկայն՝ ասէ. Ի բաց կացէք յինէն ամենեքին ոչք գործէք զանօրէնութիւն. զի Տէր է իմ օգնական և ես ոչ երկեայց, զի՞ արասցէ ինձ մարդ։

Արդ իբրև լուաւ զբանս զայսոսիկ դատաւորն, տարակուսեալ 'ի միտս իւր՝ թողացուցանել զնա 'ի տանջանացն հրամայէր, և արկանել զնա միւսանգամ 'ի կապարանս բանտին. և անտուաղ թողուլ զնա 'ի դարմանոց մարմնական պիտոյից, և զոտս նորա պնդել 'ի կոճեղս, և անուր երկաթի արկանել 'ի պարանոց նորա, և անապատ թողուլ զնա յամենայն նախախնամութենէ։ Այլ ստուգապէս կատարէր առ նա բան մարգարէութեանն Դաւթայ. թէ Ոչ տեսի զարդարն արհամարհեալ, և ոչ զաւակ նորա մուրացիկ հացի. քանզի փրկիչն Յիսուս՝ վասն որոյ յանձն առեալ կրէր զչարչարանսն, երևեալ 'ի բանտի անդ խօսէր ընդ նմա և փարէր զնովաւ. և քաղցրագոյն խոստմամբ զմիտս նորա զարթուցանէր՝ ասելով ցնա. Ակակիէ, անպարտելի և անյաղթ զինուորդ իմ, զօրացիր և քաջալերեա 'ի հոգևոր ասպարիզիդ, զի ես ընդ քեզ եմ զամենայն աւուրս կենաց քոց. զի որպէս կցորդ եղեր յանցաւ և յապականացու յաւիտենից՝ իմոց չարչարանաց, նոյնպէս և հաղորդս արարից յանսպառ և մշտնջենաւոր կեանս աղքայութեան իմում, և անեղծ և անթառամ պսակացն և անպատում փառացն յաւիտենից ընդ ամենայն սուրբս և սիրելիս անուան իմոյ։

Արդ սրբոյ վկային զաստուածային զուրախարար զբանս զայսոսիկ լուեալ՝ ուրախ լինէր, և ցնծացեալ ուրախանայր 'ի սրտի իւրում, և մոռանայր զամենայն վիշտս նեղութեանցն այնուհետև, և փառաւոր առնէր զԱստուած 'ի վերայ անպատումն աքանչելեացն որ երևեցաւ նմա։ Եւ սկսաւ սաղմոսել և օրհնել զանձառ մարդասիրութիւն ամենակալին Աստուծոյ, և զարագահաս օգնականութիւնն և զզօրութիւնն։ Յայնժամ և բազումք ի՛ջեալ յերկնային զօրութեանց հրեշտակաց 'ի հանդերձս լուսափայլ սպիտակութեան՝ երգակից լինէին սրբոյ վկային։

Իսկ բանտապետն յարուցեալ փութանակի առ դուրս բանտին հասանէր. և տեսեալ զի ամենայն ըզգուշութեամբ կնքեալ կային դրունք բանտին, և տեսանէր 'ի ներքս անդ բազմութիւն զօրաց երկնաւորաց և հանդերձս լուսափայլս, որք քաղցրաձայն հնչմամբ երգակից լինէին սրբոյն, և 'ի զարմացման եղեալ և յերկիւղէ ահին ըմբռնեալ։

Եւ զկնի աւուրց եօթանց անցելոց, կոչեալ լինէր իշխանն Բիբիանոս 'ի քաղաքն Բիւզանդիոն՝ յաղագս իրաց ինչ պիտոյից. և նորա յուղի անկեալ հրամայէր զինուորացն զկնի բերել զԱկակիոս. զայս ինչ ածելով զմտաւ, որպէս զի թէ ինքն ոչ կարիցէ հաւանեցուցանել զնա, առ այլ ոմն չարաբաստ և ամպարիշտ և անողորմ արձակիցէ դատաւոր. զի այսպէս դժուարին և անըմբերելի արասցէ զվախճան պատուհասի նորա։ Այսուհետև խաղացեալ գնայր դատաւորն, և Ակակիոս ընդ նմա հետևեալ գնայր բազում և դառն նեղութեամբ և տառապանօք. քանզի սաստիկ նեղէին զնա վերք հարուածոցն և ծանրութիւն կապանաց, և վաստակք աշխատութեանց ճգանց ճանապարհին. և դահճացն սպառնալիք և կարօտութիւն կերակրոցն և պասքումն ծարաւոյն, և արհաւիրք առաջիկայ տանջանացն, և ոչ տեսանել զոմանս 'ի սովորական սիրելեաց։ Այսպիսի և այսքան նեղութիւնք փորձութեանց շուրջ եղև զերանելեաւն, և նա հրճուանօք և անձառ գոհութեամբ ըղձացեալ գոհանայր և օրհնէր զԱստուած։

Եւ զկնի վեցերորդ աւուր վճարելով զերկայնութիւն ճանապարհին՝ գային հասանէին 'ի քաղաքն Բիւզանդացւոց։ Եւ դարձեալ հրամայէր դատաւորն նովին կապանօք 'ի բանտ արկանել. և յետ ոչ բազում ինչ աւուրց, հրամայէր յարդարել զԹէատրոնն բազմահանդէս 'ի մէջ քաղաքին, մերձ 'ի վաճառաց փողոցն։ Յայնժամ նստաւ դատաւորն 'ի վերայ բեմին, և հրամայեաց ածել զառաջեաւ զսուրբն Ակակիոս. և այսպիսի բանիւք ասէ ցնա. Ո՛վ Ակակիե, յայսմ հետէ լինիցի՞ս հպատակ հրամանաց ինքնակալին և երկիր պագանիցե՞ս աստուածոցն, եթէ ստէպ կաս և մնաս 'ի քումդ յամառութեան։ Սուրբն Ակակիոս ասէ.

Աւաւել քան զամենայն մոլեկանս դուք մոլորեալ էք 'ի Ճշմարիտ գիտութենէն. զի զմարդիկ որ զկնի արդար և Ճշմարիտ օրինացն Աստուծոյ գնան, և նմա զպաշտօն երկրպագութեան մատուցանեն, և հաւատան յայն՝ որ արար զերկնելն և զաներևոյթ արարածս, և դուք հնարիք զպաշտօն և զպատիւ այնր անեղ բնութեան՝ դիւաց մատուցանել և կռոց մեռելոտեաց և մոլորեցուցանողաց. և վասն այսպիսի իրաց զմեզ 'ի զուր և 'ի նանիր դատեալ սպանանէք։

Զայս իբրև լուաւ անօրէն Բիբիանոս, լի եղև սրտմտութեամբ. և հրամայեաց բերել գաւազան փշալից 'ի նռնենեաց, և նոքօք հարկանել չարաչար զԹիկունս և զորովայն սրբոյ վկային. որոյ տեսիլն էր դժուարին և անհանդուրժելի ամենայն տեսողացն. քանզի այնպէս սաստիկ չարութեամբ վարեցան առ նա անաստուած դահիճքն անօրինին Բիբիանոսի, իբրև ոչ և մի ինչ խանդաղատանս կամ խնայումն բերեալ 'ի միտս, և կամ հայեցեալ 'ի հասարակաց բնութեանս տկարութիւնս, այլ իբրև ընդ անշունչ արձանաց մարտին էին, մինչ գրեթէ ամենայն մարմինք նորա քանցեալ պատառ պատառ յերկիր անկանէին։

Իսկ սուրբ վկայն կայր և մնայր մեծաւ զօրութեամբ 'ի նահատակութեանն, և արիական խորհրդով զանց արարեալ զնոցա գազանաբարութեամբն, և առ բրոնաւորն ոչ ինչ բարբառեալ, այլ հանդարտութեամբ հայեցեալ յերկինս, ասէր. Քրիստոս փրկիչ, օգնական լեր ծառայից քոց, և տուր համբերութիւն տկարութեանս իմոյ, և յամօթ արա զպաշտօնեայս քոնս արկուին, և մի՛ տար յապականութիւն զքո ժառանգութիւնս։

Եւ տան անգամ փոփոխէին զմիմեանս դահիճքն ողք հարկանէին զսուրբն։ Յայնժամ առ որովայնին հարկանէին զսուրբն սաստկապէս գաւազանաւ, որ իբրև տիգաւ խոցոտէին. և նա յոյժ անհնարին ցաւագնեալ լինէր, և առ վշտին նեղութեան ցաւոցն մեծաձայն աղաղակեաց. Տէր Աստուած, ասելով, հայեաց յերկնից 'ի պատրաստ բնակութենէ քումմէ և հաս լնձ յօգնականութիւն. զի դու ես յոյս և ապաւէն ամենեցուն՝ ոյք կարդան առ քեզ։ Եւ իբրև զայս

ասաց երանելի վկայն, վաղվաղակի թուլացան ձեռք դահճացն, և ափշեալք 'ի հրաշէն՝ ոչ կարէին շարժել։

Արդ յետ այսր ամենայնի բազում քննութեանց և հարցափորձութեանց, դատաւորն 'ի մէջ առեալ՝ ասէ ցնա. Զի՞նչ կամիս այսուհետև, այ թշուառական և եղկելի, ընդ մե՞զ լինել՝ թէ ընդ Քրիստոսին քում։ Զայս լուեալ սրբոյ վկային և ոչ դուշնաքեայ ինչ պատասխանի տայր դատաւորին առ ժամայն, այլ միայն համարձակապէս գոչէր մեծաւ ձայնիւ 'ի մէջ հրապարակին և ասէր. Ընդ Քրիստոսին իմում եմ, և էի և եղէց յաւիտեան։

Արդ իբրև գիտաց դատաւորն զհամբերութիւն սրբոյ վկային, և զանպարտելի և զհաստատուն հաւատն որ 'ի Տէր մեր Յիսուս Քրիստոս, և վաստակեալ պարտեցաւ 'ի հարցափորձ լինելոյ, մանաւանդ զի տաղտկացաւ սիրտ ամպարշտին յանընդմբերելի տանջանացն զոր ած 'ի վերայ սրբոյն։ Յայնժամ խորհեցաւ առաքել զնա առ Փիղկիանոս անթիպատոս, և խորհեցաւ գրել առ նա զամենայն անցս չարչարանաց զոր անցոյց ընդ սուրբ վկայն, և ընդ հարցմունս և ընդ պատասխանին։ Արդ ընկալեալ անթիպատոսին Փիլկիանոսի զվերաբերական գիրս Բաբիանոսի իշխանին, և հրամայեաց զերանելին 'ի բանդ արկանել առանց կապանաց, վասն աղաչանաց ամուսնոյ իւրոյ. քանզի քրիստոնեայ էր և պարսպեալ աստուածային հաւատովն և երկիւղիւ. և բազում անգամ հայցուածս մաղթանաց առնէր առ նա, զի մի՛ չարաչար տանջեսցէ զհաւատացեալն 'ի Տէր, այլ արագագոյն և փութանակի հասուցէ նոցա զվախճան կատարածին. զոր և խոնարհեալ յաղաչանս ամուսնոյ իւրոյ՝ խորհեցաւ առնել այնպէս։ Եւ յետ հինգերորդ աւուրն հանեալ զսուրբ վկայն 'ի բանտէ անտի և առաջի բեմին կացուցեալ, տայր ընթեռնուլ զնամակ Բիբիանոսի։ Եւ իբրև ընթերցան, դարձեալ հայհոյեաց անթիպատոսն զամպարիշտ հոգեմոնն Բիբիանոս, զի զայնպիսի այր ընդ ձեռամբ անկեալ անյաղթելի և հաստատուն և անշարժ, ոչ սպան վաղագոյն, այլ այնչափ 'ի կիր արկ առ նա զՀարտարութիւն։ Յայնժամ անթիպատոսն

ասէ ցերանելին. Ո՛վ Ակակիէ, ես զամենայն գործի տանջանարանացն զոր առ քեզ մերձեցուցեալ են, և զհարցափորձութիւնսն և զպատասխանիսն՝ իմացեալ ծանեայ 'ի ձեռն գրոյն Բիբլիանոսի. և քան զերկաթ ես կարծրագոյն երևի ինձ անձն քո, և կամՁքդ անփոփոխելի։ Բայց այժմ ասա 'ի կատարածիս, զինչ եղեալ ես 'ի մտի. գալ առ աստուածոյն բարեպաշտութիւն, և զոհել և հնազանդել ինքնակալին հրամանաց, եթէ չարաչար զբաւումն կենաց ընդունել. քանզի և ոչ նոր ինչ է այս զոր հրամայեմ քեզ, այլ յառաջ քան զբաղում ժամանակս սկսեալ է 'ի նախնեաց մերոց, զոր անհնար է արձակել զքեզ առանց պատժոյ, զարհամարհողդ հրամանաց ինքնակալին և զանարգիչդ աստուածոց մերոց։

Յայնժամ բարձր բարբառով աղաղակեաց սուրբն և ասէ. Ո՛վ յանդուգն խորութեան խաւարային սրբոտիդ, և կուրութեան իմանալի աչացդ որ պարունակեալ է զքեզդ. որ այդպիսի աղՁամղՁին մթութեան ախորժէք լինել առաՁնորդ այլոց, և առ կորստեան խորխորատն յուղարկէք զունկնդիրսն ձերոց չարախորհուրդ կամացդ։ Արդ ո՞ ոք 'ի բարեխորհ մարդկանէ 'ի յիմաստնոց՝ որ զհոգի գիտութեան յանձին ունիցի, 'ի բաց կարասցէ լինել 'ի Ճշմարտութենէն Աստուծոյն՝ որոյ գործք ձեռաց են երկինք և երկիր և որ 'ի նոսա արարածք իցեն, և գործոց ձեռաց մարդկային նուիրել զերկրպագութիւն և զպաշտօն։ Արդ գործեա յիս զինչ և կամիցիս այսուհետև, և արա զինչ և խորհիցիս վաղվաղակի. արդ զի՞ յապաղես և ցնորեցուցանես զմիտս քո, զոր ոչ ինչ եմ ամենևին լսելոց կորստական բանից քոց։

Արդ իբրև լուաւ անթիպատոսն զհամարձակութիւն բանից սրբոյ վկային, միանգամայն և զպարտութիւն 'ի նմանէ, հիանայր զարմանայր. եթէ յետ այնչափ տանջանաց՝ դեռ ևս հաստատուն կաց և մնաց յինքնահաճոյ յամառութեաննն։ Յայնժամ դատավՃիռ մահու հատանէր 'ի վերայ սրբոյն, զի 'ի ձեռն սրոյ առաՁի ամենայն բազմութեան քաղաքին բիւզանդացւոց զվախՃան մահու ընկալցի. և այսպէս հրամայէր գրել զդատակնիքն նորա. ԶԱկակիոս, ասէ, անհաւան

լեալ հրամանաց անյաղթ ինքնակալացն, և անհնա-
զանդ լեալ առ պատիւ և պաշտօն բարերար աստուա-
ծոցն մերոց, մանաւանդ զհետ գնացեալ չար աղան-
դոյն Նազովրացւոցն, և հաւատացեալ 'ի խաչելեալն,
Նազովրացի զանձն կոչելով, հրամայեմք ըստ օրինակի
Հռովմայեցւոց՝ սուսերաւ հատանել զանխոնարհելի
զպարանոց նորա։

Այդ իբրև ընթերցեալ եղև դատակնիքս այս 'ի
մէջ հրապարակին բազմամբոխ ռամկի քաղաքացւոցն,
փութանակի շուրջ եղեալ զնովաւ անօրէնութեան
դահճացն անթիպատոսին, և ածին նովին կապանօք
ընդ մէջ քաղաքին 'ի տեղին որ կոչի Ծառ-ընկուզի։
Եւ իբրև եկն եհաս 'ի տեղին յայն, աղաչեաց զդա-
հիճսն՝ թոյլ տալ նմա առ սակաւ մի զի յաղօթս կաց-
ցէ. և առեալ համարձակութիւն 'ի նոցանէ, և համ-
բարձեալ զաչս իւր սկսաւ աղօթել, և ասէր այսպէս.
Տէր Աստուած ամենակալ, Հայր Տեառն մերոյ Յիսու-
սի Քրիստոսի՝ սիրելի որդւոյ քո, 'ի ձեռն որոյ զգի-
տութիւն ընկալայ, Աստուած զօրութեանց, Աստուած
ամենայն արարածոց, և Աստուած ամենայն ազգաց,
կենդանեաց և մեռելոց. գոհանամ զքէն զի հովանի
և պաշտպան եղեր ինձ յամենայն 'ի մրցմունս հան-
դիսի չարչարանացս որ վասն քո. և ծածկեցեր զիս ա-
ջովդ քո, և ոչ ետուր յորս ատամանց զանձն ծառայի
քո՝ այնոցիկ որ խնդրէին կորուսանել զիս 'ի խորս
գժոխոց. այլ հաստատուն պահեցեր 'ի վերայ վիմի հա-
ւատոյ անշարժ խոստովանութեան քո, և ուղղեցեր
զգնացս իմ 'ի ճանապարհս արդարութեան 'ի կեանս
յաւիտենից։ Եւ այժմ աղաչեմ զքեզ Տէր Աստուած,
որ տարածեցեր զանարատ և զաշխարհաստեղծ ձեռս
քո 'ի վերայ կենաբեր փայտին՝ վասն կենաց և փրկ-
ութեան մերոյ, ընկալ զհոգի իմ խաղաղութեամբ,
և անցո աներկիւղ ընդ իշխանութիւնս և պետու-
թիւնս որ յօդս են, ընդ այսս չարութեան. և յիշեա
զի մարմինս տկարութեամբ զդածեալ է. և զոր ան-
գիտութեամբ յանցեալ եմ՝ զկամայ և զակամայ յան-
ցանսն, և զհոսումն արեան որ վասն անուան քո սրբոյ.
յորժամ կայցեմ սովաւ հանդերձ առաջի ահաւոր
բեմի աստուածութեանդ քո, ներեա և թողութիւն

շնորհեա և անտես արա։ Շնորհեա, Տէր, և այնոցիկ ոլք կարդան զանուն իմ 'ի ժամանակի նեղութեանց և փորձութեանց, 'ի ձեռն աղաչանաց և բարեխօսութեան իմոյ, զամենայն հայցուածս շահաւէտս 'ի պէտս հոգւոյ և մարմնոյ՝ կատարեա. զի 'ի ձեռն ամենեցունց փառաւորեսցի անուն քո սուրբ, այժմ և յաւիտեանս. ամէն։ Եւ ահա ձայն լսելի լինէր 'ի զօրաց երկնաւորաց ձայնակից լինելով նորա, ասէին զամէնն։ Եւ իբրև կատարեաց զաղօթսն, յորդորէր զլինուորսն կատարել զհրամայեալսն 'ի բռնաւորէն. և խոնարհեցուցեալ զպարանոցն՝ հատին զամենասուրբ գլուխն նորա, և աւանդեաց զհոգին 'ի ձեռս Աստուծոյ։

Կատարեցաւ Ճգնաղգեաց սուրբ վկայն Քրիստոսի Ակակիոս 'ի հիւպատոսէն Մաքսիմիանոսի, յանթիպատութեանն Փիլիկիանոսի, 'ի Բիւթանացւոց նահանգին, 'ի մայրաքաղաքին Բիւզանդիոն՝ որ այժմ կոչի Կոստանդիանուպօլիս, յամսեանն մայիս, յաւուր ութերորդի. և ընկալաւ զպսակն անեղծութեանն 'ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. որում վայել է փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Եւ զկնի դադարման հալածանաց եկեղեցւոյն, թագաւորեաց մեծն Կոստանդիանոս, և շինեաց 'ի նմին քաղաքի վկայարան սրբոյն՝ մեծապայծառ յօրինմամբ, և եդ 'ի նմա զմարմին անյաղթ վկային Քրիստոսի, որ կայ ամբողջ մինչև ցայսօր ժամանակի. և բժշկութիւն բազում կատարէ Տէր 'ի ձեռն նորին բարեխօսութեան՝ ոլք հաւատով 'ի նա ապաւինին. զի Աստուած զփառաւորիչս իւր փառաւորէ, այժմ և 'ի հանդերձելումն. նմա փառք յաւիտեանս. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Ակիփսիմեայ և Այիթալայ և Յովսեփայ։

Աքանչելի է Աստուած 'ի վերայ սրբոց իւրոց. Այս-պէս բարբառի աստուածահայր մարգարէն և նուա-գարան Հոգւոյն սրբոյ՝ արքայն Դաւիթ։ Եւ դար-ձեալ. Պարծեսցին սուրբքն փառաւք և ցնծասցեն 'ի հանգիստս իւրեանց։ Եւ ես զկնի հետևելով նորին բանից, և նուաստ մտաւք առ խորս ծովացեալ անբաւ իմաստից նորա՝ նրբաձայն լեզուաւ բարբառ արձա-կեցից, լինելով գրիչ Հոգւոյն սրբոյ արագագիր դպրի Ճարտարի. և այսպէս աղաղակելով ասեմ, թէ Աքան-չելի է Աստուած 'ի վերայ սրբոց իւրոց։ Եւ որպիսի՞ է բանս. զի ոչ եթէ Աստուած աքանչելի է սրբովք իւ-րովք. և յորժամ ոչ էին սուրբք՝ ո՞չ էր աքանչելի։ Ի բաց տար զբանդ ապիրատութեան. այլ յորժամ աքանչելիս գործէին 'ի Նեռն սրբոց իւրոց, յայնժամ անուն նորա փառաւոր և աքանչելի երևեալ լինի 'ի մէջ սրբոց իւրոց. որպէս և 'ի ժամանակս Նաբուգո-դոնոսորայ արքայի, յորժամ կամեցաւ հակառակ Աս-տուծոյ կանգնել զպատկերն ոսկի, յորդորեաց զնա Աստուած հրով փորձել զերիս մանկունսն, զի զայն զոր ինքն Աստուած պաշտէր՝ տեսանէր արհամարհեալ 'ի ծառայիցն Աստուծոյ. և այնպէս աքանչելի երևէր Աստուած 'ի սուրբս իւր։ Այլ ես որ տրուպս եմ ամե-նեցունց և տգէտ 'ի դպրութենէ իմաստից, աղաչեմ զերանելին Ակիփսիմա՝ զի տայցէ ինձ զօրութիւն բա-նից, զԱյիթալա՝ շնորհել պարզութիւն մտաց, և

զսուրբն Յովսէփ՝ զի օժանդակեսցէ տկարութեանս իմոյ, գրել և յօրինել զփառս պատմութեան վկայութեան նոցին։ Եւ զձեզ աղաչեմ զի զարթուցանիցէք զականջս մտաց ձերոց՝ առ 'ի լսել յօժարութեամբ զնահատակութիւնս նոցա, և փառաւորել զԱստուած որ փառաւորէ զփառաւորիչս իւր։

Յերեքհարիւրորդի եօթներորդի յամի հալածանաց մերոց՝ զկնի անձառ ծագման բանին Աստուծոյ, եւ հրաման գառնութեան յարքայէն Շապհոյ, և տուաւ իշխանութիւն մոգուց և մոգպետաց 'ի վերայ ամենայն ազգին քրիստոնէից, որպէս զի ամենայն օրինակօք տանջանաց պատժեսցին և չարչարեսցին հաւատացեալքն, և սպանմամբ և չարչարանօք վճիռ մահու ընկալցին։

Յայնմ ժամանակի հօտապետք և դլխաւորք ժողովրդոց քրիստոսական հաւատոյն՝ առաջնորդք եկեղեցւոյ, արիաբար համարձակութեամբ յայտնապէս ոչ թագուցանէին զանձինս իւրեանց վասն հալածանաց անօրինացն և սպասաւորաց ամբարշտութեան։ Իսկ այնուհետև մատնէին զնոսա մոգակոյտ բազմութիւնն 'ի ձեռս դատաւորացն, և չարախօս լինէին զնոցանէ և ասէին. թէ Արհամարհեալ լինի հանապազ վարդապետութիւն հաւատոյս մերոյ 'ի նոցանէ։ Եւ ուսուցանեն զմարդիկ զմի Աստուած պաշտել, և արեգական ոչ երկիր պագանել, և զհուր ոչ պատուել և զջուր։ Եւ զամենայն չորքոտանիս և զթռչունս առանց խորհրդական զոհից զենուլ և ուտել։ Եւ ոչ այս միայն, այլ և զմեռեալս թաղել 'ի հող և պղծել զերկիր. և ասել թէ զամենայն կենդանիս Աստուած արար և ոչ այլ ոք։ Իսկ իբրև լուան զայս դատաւորքն ամբարշտութեան 'ի մոգուց անտի, բորբոքեցան սրտմտութեամբ մեծաւ։ Եւ 'ի ժամանակին յայնմիկ ըմբռնեցաւ սուրբ եպիսկոպոսն Ակիփսիմա, ծեր յոյժ ամաց իբրև ութսնից, այլ մարմնական ուժովն պնդութեամբ և հաւատովն ջերմ և պնդակազմ, և ևս գեղեցիկ տեսլեամբ. ազգաւ ազնուական և երևելի և մեծատուն յոյժ. արդարադատ և ողորմած առ աղքատս և տնանկս։ Եւ 'ի ձեռն աստուածային շնորհաց և երկիւղին որ բնակեալ էր 'ի նմա, բազումք 'ի հեթանոսաց դառնային

առ Աստուած 'ի ձեռն վարդապետութեան նորա և ճշմարիտ և ամբիծ քաղաքավարութեան. քանզի էր բանիւ կատարեալ և հոգւով լցեալ: Եւ միշտ և հանապազ յաստուածայինն խոկայր և եթ, և յաղօթս կայր արտասուօք զցայգ և զցերեկ: Եւ նախ քան զըմբռնելն ամբարիշտ զինուորացն զերանելին, 'ի միում աւուրցն դէպ եղև եղբօր միոյ մաքրել զգլուխ նորա. և քանզի կունտ էր բնութեամբ, իսկ որ մաքրէրն համբուրէր զնա և ասէր. Երանի է գլխոյս այսմիկ՝ զի վասն Քրիստոսի վկայութեամբ զհատուածն ընդունելոց է: Իսկ նա գիրկս առեալ համբուրէր զնա և ասէր. Եղիցի ճշմարիտ մարգարէութիւն քո, որդեակ, և լուիցէ Աստուած բանից բերանոյ քո, և պարգևեսցէ Աստուած ինձ զմասն բարեացդ այդոցիկ որ ելին 'ի բերանոյ քումմէ:

Եւ էր նստեալ անդ այլ ոմն եպիսկոպոս, եկեալ առ 'ի տեսանել զերանելին Ակիփսիմա: Եւ իբրև լուաւ զայս՝ ասէ ցեղբայրն ցայն, իբրև ընդ ծաղր անցուցանելով զբանն, և ասէ. Իսկ եթէ գիտիցես զայդ՝ ասա ինձ, ընդ իս զինչ անցք անցանելոց իցեն: Եւ ասէ ցնա. Յերթալն քում ընդ Ճանապարհն որ տանի յաշխարհն որ կոչի Ադրանա, անդ վախճանելոց ես դու: Եւ որպէս ասացն այնպէս եղև. Երանելի եպիսկոպոսն Ակիփսիմաս անդ կատարեցաւ վասն Քրիստոսի վկայութեամբ. իսկ միւս այն յերթալն իւրում վախճանեցաւ յԱդրանա:

Իսկ յորժամ ըմբռնեցաւ սուրբ եպիսկոպոսն Ակիփսիմաս, և տանէին զնա կապեալ երկաթեղէն կապանօք, և մինչդեռ գայր անցանէր ընդ դրունս տան իւրոյ, ոմն մի յայնցանէ որ ընդ նմայն էին, ասէ ցնա խորհրդաբար. Ո՛վ երանելի 'ի վկայս, ահաւասիկ մերձեալ է ժամանակ ելից քոց յանցաւոր կենաց աստի առ հանդերձեալ աշխարհն. պատուիրեա վասն տան և ընչից քոց, զի մի աւար հարկանիցեն: Եւ նորա տարածեալ զձեռս իւր 'ի վեր՝ ասէ. Տունս այս ոչ է տուն իմ, և ժառանգութիւնս այս ոչ է ժառանգութիւն իմ, այլ տուն իմ և ժառանգութիւն իմ Քրիստոս է, զի ոչ սիրեցի զոք բայց 'ի նմանէ:

Եւ յորժամ տարան 'ի քաղաքն, որ անուանի կոչի

Արբիլ, և կային առաջի մոգպետին՝ որոյ անուն էր Ադրաքուսիթ, և նա եհարց զնա և ասէ. Քրիստոնեայ ես։ Պատասխանի ետ ձայնիւ մեծաւ և ասէ. Այո, Ճշմարիտ քրիստոնեայ եմ, երկիր պագանեմ Աստուծոյ Հօր և Որդւոյ որպէս միածնի, և Հոգւոյն սրբոյ։ Եւ ասէ մոգպետն. Այս ուրեմն Ճշմարիտ էր ասացեալքն վասն քո զոր լուաքն, զի ուսուցանես ըզմարդիկ հակառակ կալ օրինաց մերոց, և արհամարհել զհրամանս Թագաւորին։ Երանելին Ակիփսիմաս ասաց. Զոր ինչ լուար զայդպիսի իրսդ զամենայն վասն մեր՝ արդարև այդպէս Ճշմարիտ են. զի զմի Աստուած միայն քարոզեմք մարդկան, որպէս զի զղջացին և դարձցին առ նա 'ի չար Ճանապարհաց իւրեանց առնել զհաճոյս նորա յամենայն ժամ, որպէս և գրեալ է յաստուածապատում կտակարանս մեր։

Մոգպետն ասէ. Լուայ ես վասն քո թէ այր իմաստուն ես դու, կեցեալ ամն բազումն, և զիարդ որպէս մանուկ մոլորեալ ոչ երկիր պագանես արեգական և ոչ պատուես զհուր և զջուր, որպէս պատուեն Թագաւորքն և ամենայն աշխարհ Պարսից և պատուեն զնոսա։

Սուրբ եպիսկոպոսն Ակիփսիմա ասաց. Բազում յիմարութեամբ լցեալ են երկիր Պարսից, զի թողեալ զարարիչն իւրեանց զԱստուած և երկիր պագանեն արարածոց նորա։ Քանզի դուք նախ մոլորեցայք և մոլորեցուցիք զնոսա՝ չար և անօրէն վարդապետութեամբ ձերով, 'ի թիւ արկանել ձեզ աստուածս բազումս, որ են արարածք միոյ արարչի՝ որ է Աստուած 'ի վերայ ամենայնի։

Մոգպետն ասէ. Անօրէ՞ն կոչես զՃշմարիտ վարդապետութիւնս մեր, որով 'ի հաստատութիւն կայ և մնայ այսպիսի Թագաւորութիւն յաղթող լեալ ամենայն Թագաւորութեանց որ 'ի վերայ երկրի, ով չարածեր և պրժանի մահու։

Եպիսկոպոսն ասէ. Ո՞ւր է Ճշմարտութիւն վարդապետութեան ձերոյ, զի ահաւասիկ ուրանայք զՃշմարտութիւն, և զարարածս և զստեղծուածս[1] վարկանիք աստուածս, և նոցա երկիր պագանէք։

Մոգպետն ասէ. Արժանայս լուր ինձ և երկիր պագ

1. Մի օր. զստեղծուածս։

արեգական, և կաց և Ճողոպրեաց 'ի տանջանաց որ կան և պահին քեզ. քանզի խնայեմ ես 'ի ծերութիւն քո, զի մի ինչանիցես արեամբ 'ի դժոխս։

Սուրբն Ակիփսիմաս ասաց. Խիզ զամենամբարիշտ բերան քո, և մի յաւելցես խօսել կամ երկրորդել առիս զբան անօրէնութեան, ոչ բռնաւոր. քանզի ես 'ի մայրական խանձարրոցն 'ի մանկութենէ իմմէ մինչև ցայժմ 'ի հաւատս յայս մնեալ եմ և զարգացեալ. իսկ այժմ 'ի ժամանակի ծերութեան առաւել պարտ է ինձ քաջութեամբ և բարոյ խոստովանութեամբ հաստատուն կալ և մնալ 'ի հաւատս, զի պսակեցայց 'ի Ճշմարտէն Աստուծոյ իմոյ։

Յայնժամ լցեալ սրտմտութեամբ և բարկութեամբ ամբարիշտ մոգպետն, հրամայեաց չարչարել զնա քառակուսի պրկմամբ, և ապտակել զնա չարաչար հարուածովք մինչև արիւնն ոռոգանէր զերկիրն։ Պատասխանի ետ ամբարիշտն և ասէ ցսուրբն. Ո՞ւր է Աստուած քո զի եկեսցէ փրկեսցէ զքեզ 'ի ձեռաց իմոց։ Իսկ երանելի եպիսկոպոսն Ակիփսիմաս ասէ. Գոյ իմ Աստուած յերկինս և յերկրի որ կարող է փրկել զիս 'ի ձեռաց քոց, ոչ ամենապիղծդ և գարշելիդ։ Եւ մի դու պարծիր, քանզի իբրև զծաղիկ թարշամելոց ես, և փառք քո որպէս խոտոյ վայրի անցանելոց է։ Եւ մի ամբարհաւաձեալ ամբարտաւանիս՝ որ մեռեալդ ես 'ի կենդանութենէ և հեռացեալդ յԱստուծոյ կենդանւոյ, որ ոչ հաւատացեալ երկիր պագանես Ճշմարտին Աստուծոյ մերոյ։ Քանզի այս ժամանակեան մահս՝ ոչ է յաւիտենական, և ոչ կենդանութիւնս անվախճան. նոյնպէս և կեանքն այն և հատուցմունք բարեացն որ մեզ պատրաստեալ է յԱստուծոյ մերոյ՝ անվախճան են։ Իսկ որ ձեզն է պատրաստեալ՝ ոչ ևս ունի վախճան. հուրն անշէջ փոխանակ շինանուտ հրոյդ՝ զոր դուք պաշտէք, որ մնաչէ զհոգիդ ձեր և զմարմին։

Յայնժամ սրտմտեալ մոգպետն հրամայեաց զնա ծանր շղթայիւք կապել և 'ի խաւարչտին բանտի հանդերձ կապանօք արկանել։ Իսկ 'ի վաղիւն կալեալ զսուրբ քահանայն Յովսէփ 'ի գեղէն որ կոչի Բիթլաթուբա, որ թարգմանի Գեօղ դպրաց. և նա էր ծեր յոյժ ամաց եօթանասանից, պատուեալ յամենեցունց.

և ունէր նախանձ մեծ առ Աստուած և ջան. և անպարսաւելի քաղաքավարութեամբ կայր 'ի սպասաւորութիւն քահանայութեան իւրոյ։ Եւ յաւուր յայնմիկ ըմբռնեցաւ դարձեալ Այլիթալա սարկաւագ, 'ի գեղջէ որ կոչի Բիլթնէբրի [1]. որ էր այր ծերունի ամաց իբրև վաթսնից, և էր լցեալ երկիւղիւն Աստուծոյ։ Եւ յամենայն անձնէ և զօրութենէ սիրէր զԱստուած ջերմաջերմ հաւատովք. և երեսօք և դիմօք պայծառ և զուարթ, և յանդիմանող բանիւք։ Որոյ համարձակութեամբ առաջի կացեալ մոգպետին՝ 'ի քաղաքին որ կոչի Աբրիլ, և ասէ ցնա. Ո՛վ անօրէնք և չարամահք. ընդէ՞ր զմարդիկ պատրէք սատանայական աղանդաւորութեամբ և անօրէն և մնոտի վարդապետութեամբ, և առնէք որդի գեհենին կրկին ևս քան զձեզ։

Մոգպետն ասէ. Եւ ո՞ր վարդապետութիւն մեծ ի՞նչ է և սքանչելի, ո՛վ անմիտք. մե՞րս՝ զոր աղքայից աղքայ ամենայն երկրի՝ հանդերձ մեծամեծ իշխանօք և զօրօք պաշտէ, եթէ ձերդ՝ որ նուազունքդ էք և յաղթեալքդ 'ի մէնջ և ընդ լծով հարկի մերոյ անկեալ էք։ Պատասխանի ետ երանելին Յովսէփ և ասէ ցնա. Աստուածն մեր ոչ հաճի ընդ հպարտութիւն, այլ հակառակ է ամբարտաւանից և սիրէ զխոնարհութիւն։ Վասն այնորիկ և մեք արհամարհեմք զմեծութիւն աշխարհի և զփառս, և սիրեմք զաղքատութիւն, զի անանց փառացն արժանի եղիցուք և կենացն յաւիտենից։

Մոգպետն ասէ. Վասն զի ոչ սիրէք [2] գործել և վաստակօք կերակրել՝ վասն հեղգութեան ձերոյ. այլ շրջել տանէ 'ի տուն և մուրանալ զհացն և աղքատութեամբ պարծիլ։

Երանելին Յովսէփ ասէ. Եւ վասն զի նախատեցեր զմեզ՝ կոչելով հեղգս և ծոյլս և վատս, ո՛վ թշուառականք. եթէ կամեցեալ էաք վաստակոց և ձեռագործաց զհետ երթալ, մեծք և փարթամք լինէաք քան զձեզ՝ որ 'ի յափշտակութենէ և 'ի ղրկանաց աղքատաց էք մեծացեալ։ Մեք զոր ինչ ժողովեալ էաք՝ Քրիս-

1. Այլ օր. Բէրեբիոնի։
2. Մի օր. գիտէք։

տոսի նուիրեցաք, աղքատաց բաշխելով զամենայնն. իսկ դուք վասն աղքատութեան կողոպտեք զաղքատս և զտնանկս։ Մոգպետն ասէ. Բազմաց ըղձալի և սիրելի է հարստութիւն, և ոչ ոք է որ ատէ զնա, այլ սիրեցեալ լինի յամենեցունց. և ոչպէս արդեօք հաւատայ ոք ձեզ և ատէ զնա։

Յովսէփ ասէ ցնա. Իմացեալ ծանեաք Ձշմարտութեամբ, զի ոչ կայ և մնայ առ ումեք հարստութիւն և մեծութիւն երկրաւորացս. այլ իբրև ստուերը անցանէ, և իբրև զանիւ հոլովի. և ոչ մնայ և ոչ առ քեզդ՝ որ սիրես զնա։ Նոյնպէս և իշխանութիւն և թագաւորութիւն փախչի 'ի նոցանէ, և իջանէն 'ի դժոխս և դառնան 'ի հող. վասն այսորիկ և մեք ոչ ցանկամք փառացս որ անցանէ, այլ յաւիտենականին որ կայն և պահի յաւիտեան, զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց։

Մոգպետն ասէ. Թոյլ տուր այդմ ամենայնի՝ զի աւելորդ է և շաղփաղփանք և առասպելք անմիտ մարդկան, և զոր հարցանեմն ասա ինձ, թէ առնէս զկամս իմ և զհրամանս արքայի, և երկիր պագանէս արեգական մեծի և ապրեցուցանէս զանձն քո 'ի դառնագոյն տանջանացն՝ զոր պատրաստեալն եմք մատնել զքեզ, և ածել 'ի վերայ ևս չարաչար և դառն տանջանք։ Պատասխանի ետ սուրբն Յովսէփ և ասէ. Մի՛ մոլորիր այսու, ո՛վ ամենամպարիշտ, և մի՛ ակն ունիր թէ ես արեգական երկիր պագանեմ։ վասն զի ոչ է աստուած՝ այլ արարած Աստուծոյ։

Յայնժամ սրտմտութեամբ մեծաւ լցեալ իշխանն՝ հրամայեաց պրկել զնա լարիւք 'ի գետնի, և երկոտասան արանց չարչարել զնա արջառաջլոք և դժնիկ փշալից գաւազանօք. և այսպէս հարկանէին զնա չարաչար տանջանօք, մինչև փոքր մի յաւանդել նորա զՀոգին։ Իսկ արիաբար համբերէր տանջանացն քաջամարտիկ վկայն Քրիստոսի, և ոչ ինչ բարբառելով 'ի տանջանսն, այլ միայն յերկինս հայելով և կարդայր զԱստուած 'ի սրտի իւրում կոչելով յօգնականութիւն ինքեան, զի տացէ զօրութիւն նմա համբերել տանջանացն։ Յայնժամ 'ի բաղում և 'ի չարաչար տանջանացն և յարենէն ներկեալ լինէին ամենայն ան-

դամբ մարմնոյն։ Յայնժամ ձայնիւ մեծաւ սկսաւ սուրբն յաղօթս կալ, և ասէ այսպէս. Գոհանամ զքէն Քրիստոս յոյս իմ և ապաւէն, որդի Աստուծոյ կենդանւոյ. զի արժանի արարեր զիս երկրորդ մկրտութեանս, զի լուացայց վկայութեամբ և արեամբ մաքրեալ յամենայն անօրէնութեանց իմոց, զի եղէց տաճար և բնակարան սրբոյ Երրորդութեանդ։

Եւ զայս իբրև լուան՝ կարի յոյժ 'ի բարկութիւն ցասման շարժեցան անօրէնքն. և հրամայեաց դահճացն կրկին ևս տանջանօք զքեզանս երկաթոյն մինչև 'ի ներքին անդամն հասուցեն, մինչև ոչ ևս մնաց առողջ տեղի 'ի մարմին սրբոյ վկային։ Եւ երկաթի կապանօք կապեցին զնա, և անուր երկաթի արկին 'ի պարանոց նորա. և տարեալ արկին զնա 'ի բանտ, յորում տեղւոջ արգելեալ կայր սուրբ եպիսկոպոսն և վկայն Ակիփսիմաս։

Ասէ անօրէն մոգպետն ցերանելի վկայն Ամիթալաս. Եւ դու զինչ խորհիս, ո՛վ Ամիթալէս, առնէ՞լ զկամս արքայի և երկիր պագանել արեգական և Հաշակել յարենէ զոհիցն, և ամուսնանալ ըստ օրինաց մերոց, և ապրել մեծափառ [1], և վայելել ընդ մեզ կենօք, եթէ կրկին ևս չարաչար մեռանել տանջանօք դժարագործաց մահ [2]։

Պատասխանի ետ Ամիթալաս ձայնիւ մեծաւ և ասէ ցբռնաւորն. Ո՛վ անսուրբ և պիղծ շուն դու, դու երկիր պագ անշունչ աստուածոյն քո արեգական, և դու Հարակեա յաղտեղի արենէ զոհից նորա, որ այգպէս կուրացեալ ես անմտութեամբ. զի ոչ կարացեր հայել և տեսանել զպայծառութիւն և զմշտնջենաւորութիւն անՀառ և անաղօտ լուսոյն Քրիստոսի, որ ծագեաց ամենայն տիեզերաց, և զքարոզութիւն սուրբ աւետարանին՝ որ լսելի եղև մինչև 'ի ծագս երկրի. զի ինձ լաւ է մեռանել 'ի ձեռաց քոց, զի ապրեցայց յաւիտենից մահուանէն և յանշէջ հրոյ գեհենոյն, քան սպասս տանել շինչանուտ հրոյ և մոխրոյ աստուածոց քոց։

1. Մի օր. խալ մեծաս խառօփ։
2. Մի օր. եթե երկին ևս լարարիլ պանջանօփ ևս մեռանել։

Իսկ իբրև լսէր զայս անօրէն բռնաւորն՝ 'ի սաստիկ զայրացմանէն փոխեալ լինէր գոյն երեսաց նորա, և ասէ. Ո՛հ անմիտ և շուայտեալ դառնածեր. ահաւասիկ զդլուխ քո վաղվաղակի բառնալ հրամայեմ 'ի քէն և զրկեալ լինիս 'ի քաղցր լուսոյ աշխարհի, ըստ անմտութեան բարբառոյդ զոր խօսիսդ։

Սուրբն Ա.յիթալաս ասէ ցնա. Զքեզ կոչեմ յանուանէ յիմար և անմիտ, որ ոչ ծանեար զՀշմարտութիւնն Քրիստոսի։ Քանզի Փրկիչն մեր Աստուած այսպէս գրեալ է մեզ, սիրել զկեանս՝ զոր դուք մահ կոչէք, և ատել զմահ՝ զոր դուք կեանս անուանէք. զի առժամանակեայ մահս այս՝ գյաւիտենական կենացն մատակարարէ մեզ զփրկութիւն։ Զի որք մեռանին վասն բարեպաշտութեան, զմշտնջենաւոր և զանանց զբարիսն ընդ սուրբս ընդունելոց են։

Յայնժամ դաժանամիտ [1] և անօրէն մոգպետն հրամայեաց անօրէն դահճացն կապել զձեռս նորա 'ի ներքոյ ծնգաց նորա, և վեցից արանց զօրաւորաց կախել փայտ ստուար 'ի ներքոյ ձեռացն՝ որ կապեալ էր 'ի ներքոյ ծնգացն, և 'ի միւս կողմանէ այլ ևս վեց արանց ապտակել զանձն նորա փշալից գաւազանօք։ Եւ չարաչար և անագորոյն էին հարուածքն այն տանջանաց և առանց գթութեան և խնայելոյ։

Իսկ Հշմարիտ վկայն Քրիստոսի Ա.յիթալաս՝ 'ի ձայն բարձր աղաղակէր և անարգէր զմոգպետն, և ասէր այսպէս. Պիղծ և անօրէն կատաղի շուն և վայրենամիտ գազան անսուրբ, որ ուտես զմարմինս անմեղաց. ոչ երկնչիմ ես 'ի տանջանաց քոց, և զաստուածսն քո ես ոչ պաշտեմ. և կրակի և մոխրոյ երկիր ոչ պագանեմ, ո՛վ վայրենամիտ և անաստուած և երիցս թշուառական։

Իսկ անօրէն բռնաւորն զայրացեալ կրճտէր զատամունս 'ի վերայ նորա, և բարկանայր դահճացն և ասէր. Վասն էր անխայելով տանջէք զթշնամանողդ աստուածոցն մերոց։

Իսկ երիցս երանելի վկային 'ի սաստկութենէ չարաչար կապանացն մանրեցան բազուկք ձեռաց նորա,

1. Այլ օր. դժնեամիտ։

և ջարդեցան ամենայն յօդուած ոսկերացն, և բաժանեցան 'ի միմեանց անդամք մարմնոյն. և ապա տարեալ ընկեցին զնա 'ի բանտն ուր էին ընկերք նորա։

Եւ զկնի հինգ աւուր հանին զնոսա 'ի բանտէ անտի։ Եւ հրամայեաց մուծանել զնոսա 'ի բուրաստանն՝ յոր մերձ էր տաճար հրոյն՝ յորում երկիր պագանէին։ Եւ անդ նստեալ յատեան դատաստանի անօրէն մոգպետն հարցափորձել զնոսա, և ասէ. Ասացէք ինձ, ով անմիտք, եթէ դեռ ևս պնդեալ կայք 'ի նմին յամառութեան, ոչ հնազանդելով հրամանաց Թագաւորին, և 'ի նոյն չար աղանդն յիմարեալ մնայք, եթէ յայսմհետէ զգաստացեալք առնէք զկամն նորա։ Իսկ սուրբքն իբրև ընդ մի բերան պատասխանի ետուն և ասեն. Մեք միով խորհրդով և միով մտօք կացեալ եմք հաստատուն և անշարժք 'ի հաւատս յայս, և սոյնպէս կամք և մնամք 'ի հաւատս յայս մինչև 'ի վախճան. և ՀՀմարտին Աստուծոյ երկիր պագանեմք, արարչին երկնի և արեգական և որ ինչ յերկրի արարածք են։ Իսկ հրամանաց ամբարիշտ և անաստուած Թագաւորաց՝ ոչ հնազանդիմք և ոչ լսեմք քեզ. արդ զոր կամիս՝ արա վաղվաղակի, և ամենայն մեքենաւոր նեղութեամբ զոր խորհեալ ես՝ տանջեա զմեզ. և մեք պատրաստ եմք յաղթել քեզ և խորհրդակցին քում բանսարկուին։

Յայնժամ ևս առաւել զայրացեալ 'ի վերայ սրբոցն անօրէնն, հրամայեաց բերել տոռունս յայծէից բարակս մանեալս, և պատել նոքօք զԹիկունս և զկողս սրբոցն, և փայտիւք պնդել չարաչար այնչափ՝ մինչև ՀարՀատէին ոսկերքն նոցա և փշրէին։ Եւ ասէր ցնոսա. Ամենաթշուառք և չարաբախտք, արարէք զկամն Թագաւորին, և ապրեցուցէք զանձինս ձեր 'ի չար և 'ի դառն տանջանացն։ Իսկ սուրբ վկայքն պատասխանի ետուն ձայնիւ մեծաւ և ասեն. Մեք զկամն Աստուծոյ և զՓրկչին անձանց մերոց արասցուք, իսկ զկամն անօրէն Թագաւորին ոչ արասցուք։ Եւ յերրորդ ժամէ աւուրն մինչև ցինն ժամն տանջեալք լինէին սուրբքն նուվին տանջանօքն հարց և փորձ լինելով 'ի բռնաւորէն։ Այլ սակայն համբերէին այնչափ տանջանացն, և աքանչելի երևէին սուրբքն 'ի մէջ ան-

հաւատիցն. և Աստուած փառաւորեալ լինէր 'ի նոսա։ Իսկ անօրէնն դահճացն բարձեալ զնոսա իբրև ըզմեռեալս՝ և միւսանգամ տարան 'ի բանտն, և ոչ թոյլ տային ումեք մտանել 'ի բանտն առ նոսա և կերակրել մարմնական կերակրօք նոցա։ Զայն հրաման ընկալեալ 'ի մոգպետէն բանտապահացն՝ զի սպառնացեալ ասէր. Թէ ոք մտցէ առ նոսա, այս պատուհաս սահմանեալ լիցի 'ի վերայ նոցա. զի բրօք դալարօք ընդ երկարս տանջեսցին հարուածովք, և հատեալ լիցին ռնկունք և ականջքն։ Այլ արիագոյն վկայքն Քրիստոսի յօժարութեամբ ներէին ազգի ազգի տանջանացն. մերկք և քաղցեալք և ծարաւիք զերիս ամս 'ի բանտին արգելեալք։ Իսկ առ սաստիկ նեղութեան սովոյն, որ ընդ նոսա կալանաւորք էին 'ի բանտին՝ ելանէին և մուրանային զհացիկն և տանէին նոցա և կերակրէին դուշնաքեայ կերակրօք, սուղ ինչ պիտոյիւք։ Մինչև բանտապահացն տեսեալք զանհնարին նեղութիւնսն և զողորմելի կեանսն՝ լային և աշխարէին զնոսա իբրև զընտանի։

Իսկ զկնի երից ամաց չարչարանաց սրբոց վկայիցն, եկն արքայն 'ի կոչեցեալ գաւառն 'ի Դաբիդմադան, և արձակեալ զնոսա 'ի կապանացն. և ահա 'ի բազում նեղութենէ կապանացն էին նոքա նման մեռելոց որ 'ի գերեզմանսն են, մինչև անգութ հեթանոսացն լալ և աշխարել զնոսա։ Եւ տարեալ զնոսա 'ի պալատն, և կացուցեալ զնոսա առաջի մոգպետին ամենայն Արեաց աշխարհին, որում անուն կոչէր Դերսաբուր։ Եւ նստան ամենայն մեծամեծք մերձ առ նա աւագանոյն Պարսից աշխարհին և այլ մոգք բազումք։ Եւ մի տեալ սրբոցն առաջի նոցա՝ երկիր պագին նմա։ Եւ ասէ ցնոսա. Ասացէք ինձ եթէ որոյ պաշտաման հնազանդեալ էք դուք, և կամ թէ որպէս լուայ՝ քրիստոնեայք էք դուք։ Պատասխանի ետուն արիագոյն վկայքն և ասեն. Այո, քրիստոնեայք եմք, և միայնոյ Աստուծոյ պաշտօն մատուցանեմք և երկիր պագանեմք։

Մոգպետն ասէ դարձեալ ցնոսա. Որպէս տեսանեմ զձեզ ահա արք ծերք էք, և բազում ճգանց տանջանաց զփորձ առեալ անձինք ձեր. վասն այսորիկ խրատ տամ ձեզ, և իբրև զբարեկամ ձեր՝ լուարուք ինձ,

յայսմ հետէ խնայեցէք յանձինս ձեր և մի՛ տարապարտուց մեռանիք։ Հնազանդեցարուք օրինաց Թագաւորին, և երկիր պագէք արեգական և ապրեսջիք։ Քանզի վճիռ մահու սահմանեալ է 'ի վերայ ամենեցուն՝ որք գնան 'ի Ճանապարհս քրիստոնէից։

Պատասխանի ետ երանելին Ակիփսիմաս և ասէ ցնա. Գիտեմ զի բաղում փոյթ յօժարութեան ունիս դու վասն ջախջախեալ իշխանութեանդ քո վրէժխնդիր լինել աստուծոյն քո զոր պաշտես. արդ մի՛ յամեր և մի՛ յապաղեր յանօրէն խորհրդոցդ՝ զոր խրոխտանաս դու 'ի վերայ մեր. զոր ինչ առնելոց ես արա վաղվաղակի. զի ոչ զարհուրիմք 'ի սպառնալեաց քոց, և ոչ երկնչիմք 'ի տանջանաց քոց. զի հաստատուն է յոյս մեր առ Քրիստոսի Աստուծոյն մերոյ, և զհրամանս անօրէն Թագաւորի ոչ առնումք յանձն։

Ասէ ցնոսա ամբարիշտն. Գիտեմ զի զմահ խնդրէք դուք քրիստոնեայքդ, զոր և հանդիսաց կոչէք. այլ զոր ցանկայք ոչ արարից վաղվաղակի, մինչև դարձեալ դառն տանջանօք կտտամահ արարից զձեզ. և ապա զդլուխս ձեր հատից սրով. զի ամենայն աղանդաւոր քրիստոնեայքդ տեսեալ զարհուրեսցին, և մի՛ կացցեն հակառակ օրինաց մերոց։ Ասէ ցնա երանելի եպիսկոպոսն Ակիփսիմաս. Ոչ 'ի տանջանաց քոց երկնչիմք և ոչ 'ի սրոյ քումմէ, և 'ի վճիռ տալոյ վասն մահու՝ ոչ զարհուրիմք։ Վասն այսորիկ որ զօրացոյցն զմեզ Քրիստոս, որպէս մինչև ցայսօր ետ մեզ զօրութիւն ժուժկալութեան՝ համբերել վշտաց և նեղութեանց, և դարձեալ և այժմ նա է որ օգնէ մինչև 'ի նա յուսացեալ եմք։ Եւ արդ փորձեա զծերութիւնս մեր որ է Աստուծով զօրացեալ, և ծանիր զհանդէս աստուածութեան նորա, ո՛վ թշուառական, զի յաղթեալ եղեր համբերութեամբ յուսոյն մերոյ և ամաչեցեալ լինիցես ունայն խորհրդովք քո. և յանդիմանեսցի մոլորութիւն քո 'ի Ճշմարիտ հաւատոց մերոց։

Ցայնժամ ամբարիշտ և անօրէն իշխանն լի եղև սրտմտութեամբ և ցասմամբ մեծաւ, և հրամայեաց բերել ջալոտիս ատուար և արջառաջիլս չորացեալս, և ասէ ցնա. Երդուեալ եմ 'ի մեծ աստուածն արեգակն և 'ի բախտ և 'ի Ճակատագիր մեծ արքայից արքայ

քային Շապհոյ, զի թէ ոչ առնէք զկամն Թագաւորին, ապականեմ տանջանօք զմարմինս ձեր, և թաթաւեցից արեամբ զալիս ձեր, և ոչ ամենևին խնայեցից 'ի ձեզ, մինչև 'ի ձեռն չարաչար տանջանացն արձակիցէք զՀոգիս ձեր։ Պատասխանի ետ երանելին Ակիփսիմաս՝ և ասէ ցնա. Վասն որոյ երդուար յաստուած, տրտմեցայ, զի ոչ է աստուած. և 'ի թշուառական բախտ բռնաւորին, երկնչիմ թէ ոչ կատարես զերդմունս քո և լինիցիս օրինազանց և սուտ։ Ահասիկ ասացաք եթէ մեք 'ի Ճշմարիտ հաւատս յոր կացեալ եմք՝ ոչ ուրանամք, այլ մատնեմք զմարմինս մեր 'ի ձեռս քո տանջանացդ. իսկ զՀոգիս մեր 'ի ձեռս Աստուծոյ աւանդեմք՝ որ ետ զսա։ Զոր առնելոց ես մի՛ յապաղեր, այլ կատարեա վաղվաղակի զի մեք պատրաստ եմք։

Յայնժամ աղաղակեաց ամբարիշտ բռնաւորն, և հրամայեաց դահճացն քառակուսի պարզել 'ի գետնի զերանելին. և հրամայեաց արանց զօրաւորաց տանջել զորովայն նորա և զթիկունս, մինչև արիւնախառն մարմինն պատառ պատառ յերկիր անկանէր։

Իսկ ամբոխ մարդկանն աղաղակէին և ասէին, թէ Արա զկամն Թագաւորին և ապրեցո զանձն քո 'ի տանջանացդ։ Իսկ սուրբն ձայն արձակեալ մինչդեռ էր 'ի տանջանսն և ասէր ցբազմութիւնսն. Ես զկամն Աստուծոյ արարի 'ի մանկութենէ իմմէ և արարից, այլ ոչ զկամն բռնաւորաց։ Եւ 'ի սաստկութենէ տանջանացն զկծեալ՝ ոչ կարէր խօսել, այլ աչքն նկատէր և 'ի սրտի խորում աղաչելով զԱստուած՝ խոստովանէր զՃշմարիտ զՀաւատն։ Եւ մինչդեռ 'ի տանջանսն էր՝ աւանդեաց զՀոգին։

Եւ յետ վախճանելոյ նորա փոխեցան հարկանող դահիճքն, և տակաւին տանջէին զմեռեալ մարմինն. և 'ի բաղում ժամս տանջեալ զնա մինչև փշրեցան ամենայն ոսկերքք նորա, և ընկեցին զնա 'ի բարձանց 'ի խոնարհ և քակտեցան պարանոցք նորա, և քարշեալ ընկեցին զնա 'ի փողոցամէջս քաղաքին. և պահապանքն շուրջ նստեալ պահէին։

Եւ զկնի երից աւուրց գողացան զպատուական նշխարս նորա դաղտաբար, հրամանաւ Թագաւորա-

զինն դստեր Թագաւորին՝ որ էր յաղգէն Հայոց, տա-
լով Քրիստոսի զառհաւատչեայ խաղաղութիւն աշ-
խարհի։

Վկայեաց Երանելին Սկիպիսիմաս Եպիսկոպոս 'ի տաճ-
նեերորդում ամսեանն հոկտեմբերի, 'ի Թագաւորու-
թեանն Պարսից Շապհոյ. և 'ի մեզ Թագաւորելոյ
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում Հօր և
սուրբ Հոգւոյն վայելէ փառք, իշխանութիւն և պա-
տիւ. այժմ և յաւիտեանս. ամէն։

Վկայաբանութիւն Անդրէի Զօրավարի, և զօրաց նորա՝ երկու հազար և ութ հարիւրից։

Զաստուածային զանձառելի և զանիմանալի խորհուրդն, զանհասանելի և զանպարագրելի զսքանչելին, զանյաւ և զանպատմելի բարերարութիւնն, զանբաւ նորա մարդասիրութեանն զողորմութիւնն, զսքանչելի և զառատաձիր պարգևսն, ո՞ բաւական լիցի պատմել կամ իմանալ. զոր մտաց մերոց անտեսանելի է և մակաւծութեանց անիմանալի. որ ոչ լեզուաւ պատմի, և ոչ հանճարով մարդկան իմանի, ոչ բերանով ճառի, և ոչ տեսութեամբ աչաց բացայայտի. մեծահրաշ և սքանչելի բարին պատրաստեալն յԱստուծոյ սիրելեաց իւրոց. որոց ընկալեալք զպատուէր արարչական հրամանին. Եթէ ոք թողուցու զհայր կամ զմայր, զգեօղս և զագարակս, նոցա է ժառանգութիւն երկնից արքայութեանն. և խոստումն անճառելի բարեացն՝ զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ և՝ ի սիրտ մարդոյ ոչ անկաւ։ Զայս պատուէր, ևս առաւել քան զսոյն ընկալեալ երանելի սուրբ վկայքն. զի ոչ միայն զտունս և զգեօղս և զագարակս թողին, այլ և զաշխարհ ամենայն, ամենայն վայելչութեամբ իւրով. և ոչ միայն զհայր կամ զմայր և զազգ, այլ և զանձինս իւրեանց ետուն տանջանաց և մահու, զկեանս իւրեանց փոխանակ երկնային կենացն, և զարիւնս իւրեանց հեղին փոխանակ աբեան Փրկչին, և զխաչս իւրեանց բարձեալ ընթացան զհետ կոչման կենարարին։ Եւ այսպիսիս ոչ սակաւս և ոչ մի կողմն մանաւոր երկրի, այլ բազում անգամ

'ի բազում տեղիս անբաւ բազմութիւնք՝ որք սիրո

զօրութեամբ՝ ընդ սաստկացեալ հակառակորդացն, և վանէր զնոսա յաղթութեամբ մեծաւ, զօրութեամբն Քրիստոսի։ Եւ էր սիրեցեալ յաչս մեծին Անտիոքայ, և ամենայն նախարարացն և մեծամեծացն, և մեծարեալ լինէր յամենեցունց ըստ կարգի իւրեանց մոլար օրինացն։

Եւ եղև յաւուրսն յայնոսիկ յարուցմունք թշնամեաց բազմութեան զօրաց 'ի վերայ գաւառին, և յուզմունք պատերազմայ, հակառակ թագաւորութեանն Հռոմայեցւոց։ Եւ անկեալ երկիւղ մեծ 'ի վերայ աշխարհին կողմանցն այնոցիկ, և էին 'ի տագնապ մեծ։ Եւ ասէ Անտիոքոս ցզօրավարն իւր Անդրէաս. Արութեան և քաջութեան անուն քո՝ ամենայն ուրեք քարոզեալ է, զի վանումն ամենայն պատերազմաց 'ի ձեռն քո ծանուցաւ ամենայն մարդկան, վասն որոյ և յայդպիսի պատիւ վերամբարձար, և այժմ առաւել ցուցցես զքաջութիւն յաղթութեան քո յայսմ պատերազմի, զի առաւել պատուեսցիս և գովեսցիս և մեծարեսցիս։

Իսկ արին և առաքինի նահատակն զօրավարն Անդրէաս, յուսացեալ յԱստուած՝ որ խորտակէն զպատերազմունս, ետ զինքն Աստուծոյ և հրամանի բռնաւորին, ընտրեաց իւր արս հինգ հարիւր իններսուն և ինն, և դէմ եդեալ գնաց ընդ առաջ թշնամեացն, 'ի հանդիպումն մեծի պատերազմին։ Եւ տեսեալ զբազմութիւն թշնամեացն և զտկարութիւն իւրոց զօրացն, քանզի սակաւք էին, և զանգիտեցին 'ի բազմութենէ հակառակամարտիցն, քաջալերեցաւ յանձն իւր և սկսաւ քաջալերել զզօրս իւր, և զաստուածպաշտութեան հաւատս քարոզեալ ուսուցանէր նոցա, և այնու զյաղթութիւն 'ի վերայ թշնամեացն շնորհել Աստուծոյ խոստանայր նոցա՝ ասելով. Եղբարք, այժմ է ժամանակ աստուածածանութեան, դառնալ 'ի մոլորութենէ կռոցն, և հաւատալ յԱստուած երկնի և երկրի. և 'ի վերին օգնականութենէն հայցել զփրկութիւն անձանց մերոց. քանզի նա է Աստուած արարիչ ամենայնի և անյաղթելի թագաւոր, և օգնական լինի ամենեցուն՝ որ կարդան առ նա, և փրկեսցէ յամենայն նեղութեանց։ Արդ այսուհետև հաւատացէք յամե-

նասուրբ Երրորդութիւնն՝ 'ի Հայր և յՈրդի և 'ի սուրբ Հոգին, և այնպէս շարամերձեսցուք 'ի պատերազմն. և գիտեմ վստահութեամբ 'ի մարդասիրութիւնն Աստուծոյն իմոյ, զի գթասցի իբրև յիւր հաւատացեալ ժողովուրդ՝ զօրավիգ լինելով մեզ, մատնեսցէ զթշնամին 'ի ձեռս մեր հալածական առաջի մեր, զի կոխեսցուք որպէս կաւ գռեհից ըստ մարգարէական բանին։

Զայս լուեալ զօրացն՝ առժամայն ծագեաց 'ի նոսա լոյս աստուածգիտութեան և լուսաւորեաց զմիտս նոցա, և որպէս 'ի միոջէ բերանոյ աղաղակեցին և ասեն. Հաւատամք և մեք 'ի Հայր ամենակալ և յՈրդին միածին և 'ի սուրբ Հոգին՝ 'ի մի Աստուած, որ փառաւք և զօրութեամբ և իշխանութեամբ օրհնեալ գովի և փառաւորի յերկնաւորաց և յերկրաւորաց, և օգնական լինի հաւատացելոց իւրոց, որպէս և մեզ քարոզեցաւ, զի նորա զօրութեամբն յաղթեսցուք թշնամեացն։ Եւ ապա այսմ այսպէս լինելով՝ յուսացեալք յԱստուած զօրացան յանձինս իւրեանց. քաջալերելով զմիմեանս՝ յարձակեցան 'ի վերայ թշնամեացն։ Եւ խմբեցաւ պատերազմն, և եառ Տէր յաղթութիւն մեծ յաւուր յայնմիկ սրբոյն Անդրէի և իւրոց հաւատացեալ զօրականացն. և զամենայն զօրս թշնամեացն վանեալ 'ի փախուստ դարձուցին, զորս ընդդէմ սուրբ բանակին մարտնչէին. զբազումս 'ի նոցանէ սպանին, և զմնացեալսն ցրուեալ յիւրաքանչիւր տեղիս փախուստական վարէին. և արար Տէր յաղթութիւն մեծ նոքօք 'ի փառս անուան իւրոյ։ Եւ յետ յաղթութեանն՝ ասէ սուրբն Անդրէաս ցհաւատացեալ զօրսն իւր. Տեսէք զմեծամեծս Աստուծոյ, որպէս արար փրկութիւն այսօր, և ապրեցոյց զմեզ 'ի ձեռաց նեղչաց մերոց, և զհալածիչսն մեր հալածակոնս արար առաջի մեր։ Այսուհետև հաստատուն կացէք 'ի հաւատս, զի արժանաւորք լիցուք յաւիտենական երանութեանցն՝ որ պահի յուսացելոց իւրոց։

Իսկ բանսարկուն կերպարանեալ զինքն 'ի հրեշտակ լուսոյ, եկաց առաջի սրբոյն Անդրէի, բանս առ նա խօսելով հաւանելիս՝ որպէս յերկնից եկեալ։ Իսկ նա իմացեալ շնորհօքն Քրիստոսի ասէ. Ո՛վ բարիատեաց և ամենայն ճշմարտութեան թշնամի, ո՞չ դադարիս

'ի խորամանկութենէ, որ վասն այդորիկ յերկնայնոց դասուցն անկար 'ի վիհ կորստեան։ Յայժամ կրշտամբեալ բանսարկուն ասէ. Ոչ կացից յետս մինչև ցկատարումն փորձել զքեզ։ Իսկ սուրբն Անդրէաս ասէ. Դարձցիս յետս՝ Քրիստոսի զօրութեամբն։

Եւ եղև յետ յաղթութեան մեծի պատերազմին, և վանելոյ զբազմութիւն զօրաց թշնամեացն՝ դառնալ անդրէն առ խրոխտացեալ իշխանն Անտիոքայ, և ըզյաղթութեան գովութիւնն՝ Քրիստոսի ընծայեցուցանէին։ Եւ լուեալ մեծին Անտիոքայ՝ յարանց ոմանց չարաց, թէ ոչ նմին տան զփառս յաղթութեան՝ այլ Քրիստոսի, և 'ի խարդախութենէ բանսարկուին զչարեցաւ. սակայն զչարութիւն խորհրդոցն իւրոց 'ի սրտի իւրում պահէր։ Առաքէ զինուորս երկերիւր ընդ առաջ նորա սպասաւորել նմա, միանգամայն և գիտել վասն որոյ լուաւն. թէ զՔրիստոս փառաւորէ՛ հանդերձ զօրօքն իւրովք և զաստուածս նորա և զպաշտօնսն արհամարհէ։ Եւ իբրև հասին առ նա, և նա խօսեցաւ ընդ նոսա վասն հաւատոց ամենասուրբ Երրորդութեան, և առաքինի վարուց, և զյարութեան մեռելոց, և հատուցմանց արդարոց և մեղաւորաց. և եղև ահ մեծ 'ի վերայ նոցա, և հաւատացին յԱստուած, վասն զի ազդեցաւ նոցա 'ի վերուստ աստուածգիտութեան շնորհն. և օրհնէին գովէին և փառաւոր առնէին զԱստուած հանդերձ սուրբ բանակաւն և զօրավարաւն Անդրէիւ։ Եւ իբրև եկն սուրբն 'ի քաղաքն՝ իւրով սուրբ զօրականաքն, և պատմեաց իշխանին զյաղթութիւն պատերազմին և զկործանումն թշնամեացն, իսկ նա տայր զգոհութիւնն կռոցն իւրոց։ Իսկ սուրբն Անդրէաս ընդդէմ կայր և տայր զփառս ամենասուրբ Երրորդութեանն, և Քրիստոսիւ ասէր զյաղթութիւնն։ Իսկ նա հակառակէր դարձուցանել զնա 'ի Աշմարիտ խոստովանութենէն, և ասէ ցԱնդրէաս. Ո՞չ գիտես թէ քանի՛ բազմութիւնք, ո՞րպէս տանջանաք՝ որպէս մաշեցի, ողբ 'ի Քրիստոս հաւատացին, և ոչ ումեք ողորմեցայ։ Եւ արդ՝ դու զի՞ այդպէս յամառեալ պնդիս 'ի վերայ խաչեցելոյն՝ Աստուած զնա խոստովանելով, և նովաւ զյաղթութիւնն հռչակեցուցանես, որ ոչ փրկէ զհաւատացեալս իւր 'ի ձեռաց մերոց։

Իսկ սուրբն Անդրէաս ասէ. Ամենայն սուրբք որ վասն անուանն Քրիստոսի չարչարեցան և մեռան, դարձեալ վերստին նորոգին. և պսակին յաւուր յայտնութեանն և գալստեանն Քրիստոսի։ Այսմ յուսոյ ես ցանկացեալ սպասեմ, թերևս արժանի գտայց ընդ արժանաւորացն՝ յաւուրն այցելութեան։ Բարկութեամբ և սրտմտութեամբ լի եղև բռնաւորն, և ակնածեալ յառնէն՝ հրամայեաց գնալնմա, զի խորհեսցի թէ զինչ արասցէ վասն նորա։

Եւ այսոցիկ եղելոց այսպէս՝ 'ի խորհրդածութենէ չարին կամեցաւ հալածել զնա հանդերձ ամենեքումբք, որք ընդ նմա միաբանեցան 'ի հեռաբնակ աշխարհ։ Եւ հրամայեաց երկուց հաղարաց զինուորաց հանել զսուրբ բանակն 'ի քաղաքէն, զի գիտաց զանփոփոխելի միտս ամենեցուն։ Նաև ակն ունէր զղջանալ և դառնալ յիւրաքանչիւր յազգ իւր և յերկիր։

Իսկ նոքա յանձն առին զչարչարանս վասն արքայութեանն երկնից, քան առ ժամանակ մի վայելել 'ի մեղս, և յապականացու կեանս։ Եւ ամբարձ զձայն իւր սուրբն Անդրէաս՝ և ասէ ցսուրբ բանակն. Ցիշեցէք զաւետարանական բանն՝ որ ասաց Քրիստոս Փրկիչն աշխարհաց. Երանի, ասէ, որ հալածեալ իցեն վասն արդարութեանն, զի նոցա է արքայութիւնն երկնից։ Արդ՝ մի՞ ոք 'ի ձէնջ խորհրդո

իշխանին Անտիոքու. խռովեցաւ և զարհուրեցաւ յանձն իւր և ոչ գիտէր թէ զի՞նչ արասցէ եւ իրացն։ Կոչեաց առ ինքն զՍինկղիտոսն և զխորհրդականսն ամենայն, խորհեալ նոքօք գրել նամակ առ Սելևկիոս՝ օրինակ զայս. Անտիոքոս մեծ և հռչակելի և յաղթող, իշխեցող և հրամանատար ամենայն նահանգի կողմանց Ասորեստանի, սիրելի եղբօր մերոյ Սելևկիոսի մեծի կուսակալի, խնդա՛լ. Որպէս զի ոչ անգիտասցի քոյին զօրութիւնդ յաղագս Անդրէի զօրավարին մերոյ, մեծաւ պատուով պատուեալ՝ի մէնջ, ապստամբեալ արհամարհեաց զպատիւ մեր և զաստուածսն, հատուածեալ առ խաչեալն Քրիստոս. վասն որոյ հալածեալ՝ի մէնջ՝ զբազումս յինքն յարոյց, ամենեքումբք խոստովանել զՔրիստոս Աստուած և թագաւոր յաւիտենից, հակառակ ինքնակալ թագաւորացն կարծեցեալ զեղեալսն։ Արդ՝ յայսմ երևեսցի քաջութիւն եղբօր մերոյ, զի ուր և հանդիպեսցիս՝ մաշեսցես զնոսա սրով սուսերի. Ո՛ղջ լեր, քաջդ Սելևկիոս։

Եւ իբրև տարեալ եղև թուղթն և ընթերցան առաջի նորա, առժամայն իբրև զգազան չար զայրացեալ՝ի միտս իւր լի թունօք դառնութեան, ՝ի խորհուրդ մըտեալ՝ հնարէր թէ որո՞վ կերպիւ կամ որպիսի՞ հնարիւք կարասցէ որսալ զնոսա։ Պատրաստէր զինքն, և ամենայն զօրաց իւրոց պատրաստ լինել հրամայէր. իսկ երանելի զօրավարն Անդրէաս հալածական եղեալ սուրբ բանակաւն յաղագս Քրիստոսի՝ յԱնտիոքայ մայրաքաղաքէ Ասորւոց, եկեալ յԱղեքսանդրիա, և Ճանապարհ կալեալ առ ծովեզերքն Ովկիանոսի, ընդ սահմանս Կիլիկեցւոց գաւառին, հասանէն՝ի Տարսոն Կիլիկեցւոց, և հանդիպեցան եպիսկոպոսին Տարսոն քաղաքին, և Նունոսի եպիսկոպոսի Բերիայ քաղաքի. և մկրտեցան՝ի նոցանէ զօրավարն Անդրէաս, և զօրքն ամենայն առհասարակ՝ի Հայր և յՈրդի և՝ի սուրբ Հոգին, և լուսաւորեցան լուսով աստուածգիտութեանն։ Եւ նոյն ժամայն երևմամբ տեսեալ զլոյս՝ի վերայ անձանց՝ի վերուստ՝ի ջուրսն մկրտութեան, և զնահատակութեան պսակն որում հանդիպելոց էին առաջակայ երանութեանցն։ Եւ ողջունեալ օրհնեցան՝ի սուրբ եպիսկոպոսացն, և Ճանապարհ կալեալ ընդ

կողմն Տաւրոսի։ Ապա այնուհետև տեղեկացեալ Սելևկիոս այլագունեաց զդէմն իւր, որպէս զառիւծ մռընչող և յափշտակող. զհետ մտեալ հալածէր զսուրբ բանակն, և ուր հասանէին գազանաբար յարձակեալ 'ի վերայ, անխնայ կոտորել կամելով զամենեսեան։ Սակայն նոցա օգնականութիւն 'ի վերուստ ընկալեալ՝ յաղթահարէին զնոսա, մինչ զի ոչ զօրէին զդէմ ունել զերանելի նահատակացն. վասն զի Հոգին սուրբ առաջնորդէր նոցա մինչև ցսահմանեալ տեղին Աստուծոյ, ուր և կատարելոցն էին։ Եւ հասեալ մինչև 'ի Տարմեղինէ, և 'ի կողմ Եքսոնի, և բանակեցան 'ի տեղւոջն՝ որ կոչի Քափսորիոս և Քարափաթոն, 'ի դժուարին վայրս 'ի հովտի միում 'ի մէջ լերանց, գետի փոքու ընդ մէջ անցանելով։

Իսկ Սելևկիոս պնդեցաւ զհետ նոցա և հասանէ 'ի նեղուցս Քափսորայ [1]. և պաշարեաց զնա։ Իսկ սուրբ բանակն դիմեալ առ հասարակ յերիվարս և 'ի զէնս իւրեանց, պատերազմել ընդ նոսա, և ոչ կարէին յաղթահարել ունել զնոսա։ Քանզի Հոգին սուրբ առաջնորդեաց 'ի տեղւոջն ուր կատարելոցն էին. ուր և բանակեցան որպէս զբանակս Աստուծոյ։

Եւ սկսաւ սուրբ զօրավարն քաջալերել զօրս իւր՝ և ասէ այսպէս. Եղբարք իմ սիրելիք և քաջ նիզակակիցք իմ, ահաւասիկ ժամ արիաբար քաջանալ և հաճոյ գտանել երկնաւոր թագաւորին. ահաւասիկ ժամ մարտի և յաղթութեան, զի անթառամ պսակացն արժանասցուք. այսուհետև հաստատուն կացէք 'ի հաւատն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, պինդ կալջիք զշնորհն որ ընձեռեցաւ ձեզ. յիշեցէք զերանելիսն պարգևսն, զխոստացեալն ձեզ 'ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ։ Մի՛ ոք 'ի ձէնջ խորհրդոցն թիւրեսցի 'ի շնորհացն յոր ընկալարուք. մի՛ ոք երկրաւոր կենացս ցանկացեալ՝ 'ի յաւիտենական կենացն զրկեսցի։ Ի դուռն գաւթի հասեալ կամք, մի՛ ոք արտաքս դարձցի և 'ի հարսանեաց առագաստէն վրիպեսցի։ Զբարւոք պատերազմ պատերազմեցաք, զընթացսն կատարեցաք, և ահաւասիկ պատրաստեալ կամք վարձուցն

1. Յոր. 'ի Նեղուս փափորա։

հատուցման, և թագաւորն մերձ է երկնային փառաքն պակել զմեզ։ Բարիոք է մեռանել վասն անուան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զի ընդ նմա կենդանասցուք, և փառաւորեսցուք յանձառ և յանապական բարին։ Բարիոք է փոխանակել զայս մնոտի և զապականացու կեանս ընդ անմահական կենացն, բարւոք է ուրանալ զաշխարհական մեծութիւնս, զի զհանդերձելոյն շահեսցուք զբազմապատիկ արդիւնացեալն, ընդ միոյն երեսուն, ընդ միոյն վաթսուն, ընդ միոյն հարիւր. նաև առաւել ևս, որ ոչ ընդ թուով անկանի. զի և փոխանակ հալածական լինելոյ մեզ յերկրաւոր թագաւորաց, երկնաւոր թագաւորին մերձաւորք լիցուք, և ընդ նմա թագաւորեսցուք։ Եւ փոխանակ երկրական սիրելեաց եղբարց և ազգականաց՝ որոց թողաք յերկրի, ընդ զուարթունս երկնից խառնեալ միանամք, և ընդ նոսա զուարճացեալ պարեմք յանձառելի ուրախութիւնն։ Եւ փոխանակ հայրենի ժառանգութեանցն յորոց անջատեալ արտաքսացաք՝ յաքբայութիւնն երկնից ժառանգեսցուք, և յանպատումն բարութիւնն վայելեսցուք, 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր։

Զայս և առաւել քան զսոյն խօսեցաւ սուրբն Անդրէաս ցզօրս իւր. և նոցա քաջալերեալ շնորհօքն Քրիստոսի, զօրացան յանձինս իւրեանց, և դիմեցին առհասարակ ընդդէմ սրոյն՝ յօժարութեամբ մեռանել վասն մեծի յուսոյն որում ակն ունէին։

Իսկ Սելևկիոս զայրացեալ ցասմամբ մեծաւ, լի բարկութեամբ և սրտմտութեամբ, հրամայեաց կոտորել զամենեսեան։ Որ այսպէս ասէր 'ի ժամ կատարման իւրոյ սուրբ զօրավարն Անդրէաս հանդերձ սուրբ բանակաւն. Տէր Աստուած ամենակալ, որ կոչեցեր զմեզ յորդեգրութեան շնորհս, և զօրացուցեր զմեզ 'ի կամն ողորմութեան քո, արժանաւորեա զմեզ սրբոցն դասուց. զի վասն քո մեռանիմք՝ ածեալք որպէս զոչխարս 'ի սպանումն։ Մի թողուր զմեզ 'ի քումմէ բարերարութենէդ, զյուսացեալքս և զապաւինեալքս 'ի քեզ։ Տուր, Տէր, զողորմութեան շնորհս 'ի տեղի հանգստեան մերոյ. և բժշկեա զցաւս ախտաժետաց ըստ իւրաքանչիւր հայցուածոց հոգւոյ և մարմնոյ,

և հալածումն այսոց պղծոց, և յամենայն վտանգից զերծո զՀաւատացեալս 'ի քեզ, զի փառաւորեսցի անուն քո սուրբ։ Եւ զայս ասացեալ առհասարակ սպառեցան 'ի սուր սուսերի, բարի խոստովանութեամբ 'ի փառս ամենասուրբ Երրորդութեանն։ Եկն բարբառ 'ի վերուստ՝ որ ասէր. Եկայք ընկալարուք զմխիթարութիւն յարարչէն ամենեցուն, և 'ի տեղւոջ հեղման արեան ձերոյ բղխեսցէ աղբիւր բժշկութեան, և ամենայն վտանգելոց առողջութիւն յիւրաքանչիւր ախտից, և 'ի հալածումն այսոց պղծոց։

Այսպէս կատարեցան սուրբ նահատակքն Քրիստոսի, յիններևտասն օգոստոս ամսոյ։ Եւ էր թիւ սուրբ բանակին երկու հազար և ութ հարիւր։ Իսկ 'ի խնդիր եղեալ անօրէն թագաւորացն երանելի եպիսկոպոսացն Պետրոսի և Նունոսի՝ որք մկրտեցին զսուրբ բանակն, և նոքա փախստական եղեալ հանդերձ պաշտօնէիւքն իւրեանց երկիւղածովք Աստուծոյ՝ եկին մինչև 'ի տեղի կատարման սրբոցն. և տեսեալ զաղբիւր բժշկութեան և զնշխարսն սրբոյ բանակին, և ամփոփեցին 'ի տեղի հանգստեան անյայտաբար, փառաւորելով զամենասուրբ Երրորդութիւնն։ Եւ դարձան յիւրաքանչիւր տեղիս, և դադարեաց հալածումն։ Եւ զյիշատակ վկայութեան նոցա տօնախմբեն ամ յամէ 'ի փառս ամենասուրբ Երրորդութեանն, Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. որում վայելէ փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Անթիմոսի Եպիսկոպոսի։

Սրբոյ եկեղեցւոյն Աստուծոյ մայրաքաղաքին Նիկոմիդացւոյ աՀելով, և Քրիստոսի հօտին բազմանալով, բարիատեացն բանսարկուն և թշնամին արդարութեան և ապականիչն հոգւոյ մարդկան, գազան չարութեան, յեղանակաւ ոչխարի ծածկոյթ զգեցեալ, եմուտ՝ի հօտն Քրիստոսի՝ ըստ ներելոյն նորա։ Քանզի՝ի ժամանակին յայնմիկ եգիտ իւր արբանեակս և գործակիցս իւրոյ չարութեանն զամպարիշտն և զանօրէն թագաւորն զՄաքսիմիանոս՝ հանդերձ Դեոկղետիանոսիւ, խաւարայինք և վայրենամիտք, ապարատանք և խայտառակեալք մտօք և խաբեբայք սովորութեամբ։ Որոյ եկեալ՝ի քաղաքն Նիկոմիդացւոց կորուսանել խորհելով զազգն քրիստոնէից, մոլորութեան բանսարկուին հետեւելով առ՝ի մոլորութիւն կռոցն մեռելոտւոց։ Քանզի ձուլածու մնոտիապատիր աստուածոց ոմանց երկիր պագանէին, և անմտաբուր և պիղծ դիւացն զոհս ՀենՀերալիրս, ծխամած, միգախառն շամանդաղատեսակ մատուցանէին։ Եւ անդանօր եկեալ լինէին դատարանք պատուհասից, տանջանս հասուցանէին երկիւղածաց սիրելեացն Աստուծոյ։ Եւ յաւուրսն յայնոսիկ այրեցին կիզմամբ հրոյ արս և կանայս՝ի քրիստոնէից երկուս բիւրս։ Իսկ հաւատացելոց եղբարց տեսեալ զայսպիսի աղէտս տարակուսանացն որ լինէր՝ի ժամանակին յայնմիկ՝ յայնցանէ ոչք հակառակորդք էին Հշմարտութեանն և ոչ

Ճանաչէին զԱստուած, խոյս տուեալ 'ի քաղաքէ ան-
տի սփռեցան 'ի լերինս և յագարակս, զանձինս թա-
գուցանելով 'ի հալածանաց բռնաւորացն. համարե-
լով զագարակսն՝ քաղաք, և զլերինսն՝ որպէս վայրս
առ քաղաքի։ Քանզի ունէին ընդ իւրեանց զթագա-
ւորն անմահ Քրիստոս. համանմանեալք սրբոց աշա-
կերտաց նորա՝ հանդերձ Յիսուսիւ ելանելով 'ի լեառն։
Եւ անդանօր 'ի լերինսն և շուրջ յագարակսն ուսու-
ցանէին զբանն կենաց և զկրօնս բարեպաշտութեան։

Արդ 'ի ժամանակին յայնմիկ սուրբ այրն Աստուծոյ
վերատեսուչ և հովիւն բանաւոր հօտին Քրիստոսի ո-
րում անուն էր Անթիմոս, սա վասն երկիւղի հալա-
ծանացն ղօղեալ թագուցեալ էր զանձն իւր 'ի նմին
քաղաքի 'ի տուն ուրեմն, և անդ անյագական ձայնիւ
հանապազորդեալ էր 'ի պաշտամանն, և անհատական
աղօթիւք միշտ ընդ Աստուծոյ խօսակցելով։ Քանզի
էր զարդարեալ ամենայն գործովք արդարութեան
իմաստուն և խոհեմ բանիւք, պարկեշտ կենցաղա-
վարութեամբ. արագ առ 'ի հանդէս բարեպաշտու-
թեանն, պատրաստ առ 'ի վարդապետութիւնն, պատ-
կառելի տեսակաւ, քաղաքավարութեամբն անպար-
սաւ. ոչ և միոյ առաքինութեան պակաս գոլով գտեալ
'ի նմանէ։ Խոյս տուեալ 'ի քաղաքէ այտի վասն աղ-
տեղի գործոյ օրինացն, և գնացեալ 'ի տեղի ուրեք
թաքուցեալ 'ի լերինսն, նմանելով Տեառն իւրում և
վարդապետին, որ տեղի տայր գնալով յանապատ. և էր
անդ աղօթելով և սաղմոսելով այսպէս. Ի Տէր յուսա-
ցայ, որպէս ասէք ցանձն իմ թէ փոփոխեցիր 'ի լերինս
որպէս Ճնճղուկ։ Զի ահա մեղաւորք լարեցին զաղե-
ղունս իւրեանց. պատրաստ արարին զնետս 'ի կապարձս
իւրեանց առ 'ի սպանանել զանբիծս 'ի գաղտնիս։ Եւ
արարեալ տաղաւար ինքեան 'ի տեղւոջն տեսարանա-
ձև, բնակեալ լինէր անդանօր խոկալով զբանն Աս-
տուծոյ. բժշկելով զբաղումս 'ի հիւանդութեանց իւ-
րեանց, և զդևս հալածելով անուամբ Տեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի։ Եւ ունէր զտաղաւարն օթևանի
առ 'ի հանգիստ գիշերոյ. առ 'ի քաջալերութիւն տալ
և ուսուցանել զաւանդութիւն բարեպաշտութեանն
բնակչաց լեռնակողմանն այնորիկ. և 'ի տուընջեան ժա-

մանակի 'ի լերինս շրջէր, հրաձուելով սաղմոսերգութեամբ 'ի մէջ ոստոց ծառոց։ Եւ հանդերձ մարմնոյ աչօք և զհոգւոյ ակն 'ի վեր համբառնալով յերկինս ասէր. Համբարձի զաչս իմ 'ի լերինս՝ ուստի եկեսցէ ինձ օգնութիւն։ Եւ անընդհատ յաճախակի յաղօթս կալով նորա, գաղանք վայրենիք հանդարտէին նմա՝ ըստ գրեցելումն, թէ՝ Գաղանք վայրենականք խաղաղականք քեզ լինիցին։ Այլ սուրբն Անթիմոս հովիւն բանաւոր հօտին Քրիստոսի՝ ոչ եթէ սակս զանգիտելոյ 'ի մահուանէ փախուցեալ էր անդանօր, այլ ըղձմամբ մեծաւ ցանկայր պարգևի շնորհաց Հոգւոյն սրբոյ, առ 'ի յօժանդակութիւն և գործակցութիւն հանդերձելոյ առաջիկայ մրցանացն և չարչարանացն։ Զի յաղթեալ հակառակամարտին զօրութեան՝ պատրեսցէ զաներևոյթ գունդն Բելիարայ, և անարատ մնասցէ 'ի վկայական մրցման հանդիսին, և բարձցէ զխաչ իւր, հետևեսցէ խաչակցաբար խաչելոյն։ Այլ օր ըստ օրէ զօրանալով հալածանացն՝ որ յայնժամ չարաշրջուկ ժամանակի, այնուհետև մատնէին զմիմեանս բռնաւորին վասն երկիւղի չարաչար սպառնալեացն, հարք զորդիս և որդիք զհարս իւրեանց, դրացիք զդրացիս և բարեկամք զսիրելիս իւրեանց. զի կատարեսցի բանն տէրունական որ ասաց, եթէ՝ Մատնեսցէ եղբայր զեղբայր 'ի մահ, և հայր զորդի, և յարիցեն որդիք 'ի վերայ հարց և սպանանիցեն զնոսա, և եղիջիք ատելեալք յամենեցունց վասն անուան իմոյ։

Արդ 'ի չարասէր արքանէկաց բանսարկուին մի ոմն յայնցանէ որ նմին նման չձանաչէր զԱստուած երկնի և երկրի, հակառակորդն ճշմարտութեան, մատուցեալ յունկն ամպարշտին Մաքսիմիանոսի՝ ասէ ցնա. Թագաւոր, յաւիտեան կաց. զքրիստոնեայն զայն զոր խոստացար սպանանել, ահաւասիկ փախուցեալ է 'ի քաղաքէս յայսմանէ, մանաւանդ քահանայ գոլով՝ մոլորեցուցանէ զբազումս, ուսուցանելով նոցա զառասպել մոլորութեանս։ Արդ այժմ լուր ինձ, ո՛վ թագաւոր, և առաքեա զվնուորս, զի երթիցեն գտցեն զնա և ածեալ կացուցցեն առաջի քո յատենի։ Եւ ունկնդիր եղեալ արքայն Մաքսիմիանոս բանից առնն այնորիկ

դաւաճանող ամբարշտին, առաքեաց արս քսան 'ի զինուորաց իւրոց, և պատուէր տայր նոցա ասելով. Գնացէք դուք 'ի գեօղն այն, և խնդրեցէք զայրն քրիստոնեայ որ Անթիմոն կոչի, և գտեալ ածէք առաջի անմահական պետութեանս իմոյ։

Եւ նոքա վաղվաղակի ստիպով հրաժարեալք 'ի թագաւորէն՝ փութացին կատարել զհրամայեալսն. և հասեալք 'ի տեղին, հարցանէին զբնակիչս լերինն թէ ուր իցէ բնակեալ այրն քրիստոնեայ՝ որ անուանեալ կոչի Անթիմոս։ Այլ նոքա որք հարցեալք լինէին 'ի զինուորացն՝ ոչ ինչ կամեցան տալ պատասխանի, զի խորշէին 'ի սրբոյն այնորիկ. քանզի լուսաւորեալք էին լուսովն 'ի ձեռն վարդապետութեան նորա։ Զի էր լի և կատարուն շնորհօք Հոգւոյն, անթերի ունելով յինքեան զաստուածադիր պատուիրանացն զվարդապետութեան իմաստութիւնն. առնել և ուսուցանել, հանդերձ բանին իմաստութեանն։ Եւ ձև հասակին և նկարագիր պատկերի դիմաց նորա լի էր շնորհօք, տեսութիւն աչաց քաղցրահայեաց, քաղաքավարութիւն անբիծ և անարատ։ Զի հանդերձ Հոգւոյն ուղղութեամբ և մարմնոյն անդամօքն վայելչապէս էր շարադրեալ, և գեղեցկապէս զշարժութիւն ունելով զստեղծողին՝ զքաջաբնակութիւն արտափայլեալ ցուցանէր զսորայս։

Այսուհետև զպարկեշտ քաղաքավարութիւն և ըզյոգնահանձար վարդապետութիւնն տեսանելով բնակիչք այնմ վայրացն՝ մատնել զսուրբն ոչ յանձն առնուին որպէս զՅուդասն։ Իսկ զինուորքն բանս ինչ ոչ առեալ 'ի գեղջէիցն՝ զի պատմեացեն յորոց առաքեցանն։ Իբրև փոքր ինչ հեռացան 'ի շինէ անտի՝ գտին նրբագոյն շաւիղ ինչ ճանապարհի, և հետ ոտից արանց որ ինջուցանէր 'ի տեղին յայն՝ ուր սուրբն Անթիմոս զտաղաւարն ինքեան կառուցեալ էր։ Եւ շուրջանակի այսր անդր հայելով՝ տեսանելով զբնակութիւն սրբոյն 'ի մէջ անտառախիտ ծառոց, և խնդալից եղեալք հեծեալք յերիվարս իւրեանց հապշտապ փութանակի հասանէին ընդ զառիվայր լերինն՝ զի որսայցեն ըզսուրբն։

Իսկ այրն Աստուծոյ տեսանէր զհեծելազօրսն զի

գայլին առ նա, ասէ. Սոքա կառոք և սոքա երիվարոք, այլ ես զանուն Տեառն իմոյ Աստուծոյ կարդացից։ Եւ զայս ասացեալ սկսաւ երանելին աղօթել, և յաղօթելն ասէր այսպէս. Յիսուս, լոյսդ յառաջ քան զամենայն յաւիտեանս, որ զլոյսդ որ 'ի քեզ է՝ շնորհեցեր ամենայն մարդկան, և յայտնապէս աշակերտաց քոց ասացեր, թէ Որ խոստովանեսցի զիս առաջի մարդկան, խոստովանեցայց և ես զնմանէ առաջի Հօրն իմոյ որ յերկինս է։ Առ քեզ կարդամ, լցո զխոստումն քո, զմըխիթարիչդ առաքելով և զառաջնորդիչդ այնոցիկ՝ որ 'ի փորձութեան են։ Լուսաւորեա զիս լուսով ամենիմաստ գիտութեամբ քով, Տէր. եկ հանդերձ ինև յառաջիկայ մրցարան հանդիսական մարտին, որպէս և առ երեք մանկամբքն 'ի Բաբելոն. այսպէս և առ իմովս նահատակութեամբ։ Տուր համարձակութիւն յուսացելոցն 'ի քեզ, զի յաղթեսցեն 'ի ձեռն իմոց մաղթանաց բանսարկուին թշնամւոյն արդարութեան։ Վասն շուրջ եղելոց մարմնոյս տկարութեան զօրացո զիս Հոգւով սրբով։ Շնորհեա ինձ քաջալերութիւն զօրութեան, առ 'ի վանումն ընդդիմամարտին մեքենայիցն. և փառաւորեա զանուն քո, Տէր, զի ծանիցեն ամենայն թագաւորք երկրի եթէ դու ես տէր և թագաւոր մեծ 'ի վերայ ամենայն տիեզերաց։ Եւ վերառաքեալ զամէնն և գոհանալով[1] զՏեառնէ, սկսաւ յուտել։ Եւ էր կերակուր սրբոյն հաց գարեղէն և աղ, և լոկ ջուր ըմպելի. քանզի հրաժարեալ էր 'ի սպասաւորութենէ հրոյ 'ի մանկութենէ մինչև 'ի սուրբ կատարման իւրոյ ժամանակս, նովին կարգով վարեցեալ և կուսութեամբ նահատակեալ։ Իսկ արքն այնոքիկ որք 'ի թագաւորէն առաքեցանն, իբրև մերձ եղեն 'ի տաղաւար սրբոյն՝ գտին զերանելին Անթիմոս զի տակաւին Ճաշակէր զառանց աւելորդացն կերակուրն։ Եւ հարցանէին ցնա ասելով. Պատմեա մեզ, ընկեր, թէ արդեօք գիտէս զոմն յայսմ վայրի բնակեալ որոյ անուն Անթիմոս կոչի։ Ասէ ցնոսա. Գոհութիւն Տեառն Աստուծոյ իմոյ, եկայք եղբարք իմ և հանգերուք սակաւ ինչ ժամն 'ի տաղաւարիս իմում, և կանխաւ եկեսցէ զոր խնդրէքն դուք։

1. Յօր. գոհանալ։

Յայնժամ ուրախ եղէն արքն այնոքիկ և լցան բեր-
կրանօք. և մտին 'ի տաղաւարն և հանգեան. և եդ նո-
ցա կերակուր և կերան 'ի նոցին հացից կերակրոյ։ Իսկ
զկնի միոյ պահու անցանելոյ, հարցանէին զսուրբն ա-
սելով, թէ՝ Տակաւին յապաղէ՞ այրն զգալն այսրէն։
Իսկ ինքնին սուրբն էր որ խօսէրն ընդ նոսա և նոքա
ոչ գիտէին։ Պատասխանի ետ սուրբն և ասէ ցնոսա.
Ձիա՞րդ, և վասն է՞ր էք աշխատեալ գալ այսրէն վասն
առն այնորիկ Անթիմոսի։ Պատասխանի ետուն նոքա
և ասեն ցսուրբն. Ինքնակալ թագաւորն Մաքսիմիա-
նոս առաքեաց զմեզ, զի տարեալ կացուսցուք զնա յա-
տեան դատաստանի առաջի բեմին յորում նստեալ
լինի։ Յայնժամ սրբոյ վկային Անթիմոսի արարեալ
յինքեան զկնիքն Քրիստոսի, խոստովան եղև և ասէ
ցնոսա. Ես եմ ծառայն Քրիստոսի Անթիմոսն՝ զոր
խնդրէք։ Այլ նոքա ոչ կամէին հաւատալ նմա։ Եւ նա
ստէպ ստէպ ասէր ցնոսա դարձեալ, թէ՝ Ես եմ. և
այժմ եկից զկնի ձեր՝ ուր և կամիցիք յանուն Տեառն
զօրութեանց. և մի՛ ինչ լինիցիք ընդդէրկուացեալք։

Իսկ արքն այնոքիկ լսելով 'ի սրբոյն զայսոսիկ՝ թախ-
ծեալք տրտմէին, և իբրու նեռիւք խոցոտեալք լինէին.
և ասեն ցնա. Այր դու, համարեսցուք եթէ ոչ իցեմք
տեսեալ զքեզ և գնասցուք ասասցուք թագաւորին՝
թէ ոչ զմի ոք յայնցանէ գտաք. և դու ապրեսցիս 'ի
չարաչար սպառնալեաց ինքնակալին, և չարախօսքն
զքէն կորիցեն, և բարեպաշտապէս դու հանապազ
անմոռաց յիշող մեզ մնասցես։ Եւ երանելոյն վասն
յիշելոյն փառաւորեաց զՏէր Աստուած իւր. քանզի
ծանեաւ հոգւով զհանդերձեալ փրկութիւն նոցա։
Եւ սկսաւ ասել ցնոսա ըստ նմանութեան սրբոյ առա-
քելոյն այսպէս. Եղբարք իմ, մի՛ շրջիք ստութեամբ, զի
գրեալ է՝ Մի՛ ստէք միմեանց, այլ եղիցի ձեր այո՛ այո,
և ոչն ոչ. և առաւելն քան զայս 'ի չարէն է. այլ եթէ
հաւատովք խնդրէք յինէն զի յիշեցից զձեզ՝ հան-
դերձ կարգօք։ Հոգին սուրբ զշնորհս միածնին պար-
գևել ձեզ կամի. որպէս զի և դուք զերծեալք 'ի խա-
ւարային իշխանութեանց բանսարկուին, և 'ի բաց ձգ-
ղոպրեալ 'ի ժանեաց չարագլուխ վիշապին, լինիցիք
հանդերձ մեօք ՀՀմարիտ հովուին ոչխարք բանաւորք.

ժառանգորդ լինելով ձեր յանապականացու Թագաւորին զինուորութենէ. բնակիցք երկնայնոց հոգեղէնաց հրեշտակացն դասակցութեան։

Եւ իբրև լուան նոքա զայսպիսի զբանս երանելւոյն այնմիկ, յարտասուս հատեալ անկանէին առ ոտս սրբոյն, աղաչելով զնա զի խոյս տացէ և զողեալ զանխլասցի ուրեք, և մի գնասցէ զկնի նոցա։ Յայնժամ պատասխանի ետ և ասէ ցնոսա սուրբն Անտուծոյ Անթիմոս. Որդեակք իմ, մի տրտմութիւն երևեսցի ձեզ առաջիկայ հանդերձեալ ընթացն իմ 'ի Տէր. այլ եկից և ես զկնի ձեր, զի ոչ զանգիտեմ 'ի մահուանէ հանդուրժելով վասն Քրիստոսին իմոյ, որ վասն իմ չարչարանաց և մահու խաչի համբերեաց. և դատապարտեաց զմեզ 'ի մարմնի, գնելով արեամբն իւրով սրբով զմեզ յանիծից յառաջնոց նախաստեղծիցն։ Զի այս ապականացու կենդանութիւնս առժամանակեայ է, և այն որ կայ և մնայ՝ անվախճան և յաւիտենական, զոր պարգևէ Յիսուս հաւատացելոց 'ի նա։ Վասն որոյ ունելով զնա պաշտպան փրկութեան յուսոյ, գամ յօժարամիտ կամօք հանդերձ ձեօք առ Թագաւորն. սակայն Աստուած տացէ զշնորհս իւր և ըզխաղաղութիւն 'ի սիրտս ձեր, առ 'ի ընդունել զլոյսն գիտութեան միածնին։ Եւ նոյն ինքն Տէր մեր Յիսուս Քրիստոս որ հանձարաւորեաց զձեզ 'ի խորհուրդն փրկութեան կենացն յաւիտենից, հանձարեցս և իմաստունս արասցէ 'ի հոգի և 'ի մարմին, ընդունարան և բնակարան լինել Հոգւոյն սրբոյ, 'ի ձեռն հաւատոյ յուսոյ և յարութեան 'ի կեանսն յաւիտենից։ Եւ խոնարհեցուցեալ ծունր՝ կարդաց առ Տէր Աստուած զի տացէ նմա զՀոգւոյն օգնականութիւն 'ի Թիկունս հասանել 'ի Ճակատամարտին՝ յոր հանդերձեալ էր մտանել. և կատարեալ զաղօթսն եկ հանդերձ նոքօք յուղի անկեալ գնալով առ Թագաւորն։ Եւ 'ի գալն ընդ նոսա՝ սուրբն Անթիմոս խրատէր զնոսա և ասէր. Լուարուք ինձ մանկունք իմ, և հաւատացէք յԱստուածն իմ և 'ի Տէր. և ծաներուք զի նա է յաւիտենից Թագաւոր, յորոյ ձեռանէ ստեղծեալ եմք և շարժիմք և կեամք և կերակրիմք. յորմէ և զգիտութիւն շնորհաց ընկալեալ եմք 'ի ձեռն միածնի որդւոյ նորա Տեա-

ռըն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որ իջեալ յերկնից 'ի հայրական ծոցոյ՝ շնորհեաց մեզ ապաշխարութիւն 'ի թողութիւն մեղաց. տուեալ մեզ զմկրտութիւն փրկական՝ վկայութիւն և կնիք յինքն հաւատոց, զի ժառանգակիցք նորա լիցուք։ Արդ այժմիկ, եղբարք իմ, լուարուք ինձ և հաւատացէք 'ի նա, զի այնպէս անխարդախ և անբիծ լինիջիք յաւուրն յարութեան. որում պարտ է մեզ ամենեցուն յառնել և 'ի հանդիպումն գալ միածնի որդւոյն Աստուծոյ. զի պահանջեսցէ յիւրաքանչիւր յումեքէ զոր ինչ գործեալ է յառաջագոյն, եթէ բարի և եթէ չար։

Եւ յորժամ լուան նոքա վասն հանդերձեալ դատաստանացն 'ի սրբոյն, լի եղեն երկիւղիւ մեծաւ և սարսափմամբ. և որպէս 'ի խաւարային գբոյ տառապանաց ելեալք, կամ իբրև 'ի դոռոզէ ումեմնէ 'ի բանտարկուէն 'ի բաց զերծեալք և ազատեալք իսկ, այնպէս փարէին զսրբոյն Անթիմոսիւ. արտասուալից պաղատանօք անկանէին առ ոտս նորա ասելով. Արդ այժմ 'ի ձեռն աստուածախօս վարդապետութեան քո ծանեաք զարարիչն երկնի և երկրի, և հաւատացաք յայն՝ յոր դու քարոզեցեր մեզ. զի մինչև ցայսօր ժամանակի ոչ ևս երբէք այսպիսի վարդապետութիւն լուաք, բան կենաց. այլ 'ի խաւարի անգիտութեան մոլորեալ էաք։ Արդ այժմիկ հաւատացաք վարդապետութեանդ քո. աղաչեա վասն մեր զարարիչն Աստուած, զի և մեք ծանիցուք զՀանապարհն Ճշմարտութեան զոր ցուցեր մեզ։ Եւ այժմիկ իմացեալ ծանեաք զի ոչ վասն քո առաքեալ եմք, զի զքեզ առաջի բռնաւորին տարցուք, այլ զի դու զմեզ կացուցցես առաջի երկնաւոր և անմահ Թագաւորին։ Վասն որոյ աղաչեմք զքեզ ընկալ զմեզ զտգիտացեալքս, և տուր մեզ 'ի ձեռն վարդապետութեան քո Հանաչել զգիտութիւն Ճշմարտութեան. զի Ճշմարտապէս 'ի քեզ տեսանեմք հանգուցեալ զշնորհս Հոգւոյն սրբոյ։ Բարեխօսեա առ Տէր, զի զմեզ արժանի արասցէ լինել տաճար բնակութեան աստուածութեան իւրոյ. և ժառանգաւորս վերին Սիոնի, և հաղորդս լինել յայսմ աշխարհիս չարչարանաց խաչին նորա և յարութեան։ Եւ ամբարձեալ զաչս իւր յերկինս սուրբն Անթիմոս՝

տարածեալ զսուրբ ձեռս իւր գոհանալով զՏեառնէ, սկսաւ ասել այսպէս. Տէր Աստուած, հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ 'ի ձեռն մարգարէից քոց խոստացար մեզ զգալուստ միածնի քո. զոր և առաքեցեր կամօք քո 'ի փրկութիւն աշխարհի, որ եկն և առ մարմին յանարատ կուսէն Մարիամու Աստուածածնէն, 'ի ձեռն որոյ գոյացան ամենայն տարրեղէն արարածք։ Որ և 'ի յանցանելն մեր ընդ պատուիրանն քո՝ ոչ տարամերժեցեր զծառայս քո, այլ առաջնորդեցեր 'ի ձեռն նորին գիտութեան քոյոց աստուածադիր պատուիրանաց։ Որ և զերբեմն խաւարեալն վերստին կոչեաց, և զմոլորեալն դարձոյց, և զգերեալն փրկեաց, և զխորտակեալն առողջացոյց. զայսոսիկ փրկական նշանք սքանչելեաց ցուցեալ 'ի մարդանալն իւրում միածին որդին քո սիրելի։ Զքէն գոհանամ զերկնաւոր թագաւորէդ, որ և այժմ զմոլորեալ և զտարագրեալ ստեղծուածս անարատ ձեռաց քոց զայսոսիկ՝ դարձուցեր 'ի գիտութիւն ճշմարտութեան, փրկելով յունայնութենէ մոլար պաշտամանցն հեթանոսաց, և արժանի արարեր երկրպագութիւն մատուցանել քեզ արարչէդ երկնի և երկրի։ Վասն որոյ և այժմիկ, Տէր, առաքեա 'ի սոսա զշնորհս Հոգւոյդ սրբոյ. զի 'ի ձեռն լուացման մկրտութեան սրբութեանն՝ արժանի լինիցին պարգևաց Հոգւոյն, լինել տաճար օթևանի սրբոյ Երրորդութեանդ։ Հաստատուն և անխարդախ և անբիծ պահեա զսոսա 'ի հաւատս՝ յոր և կոչեցեր, զի աչալրջութեամբ արժանի լինիցին հանդիպել միածնի քո, յորժամ գայ փառօք քո դատել զկենդանիս և զմեռեալս։

Եւ իբրև կատարեաց զաղօթսն և վերառաքեաց զամէնն, յայնժամ ասէ ցնոսա. Կամիք ընդունել զշնորհս աստուածային պարգևացն՝ եթէ հաւատով խնդրեցէք յաղագս որոյ ասացէքն։ Եւ նոքա դարձեալ անկանէին առաջի նորա և աղաչէին տալ նոցա զպարգևս շնորհաց սուրբ մկրտութեանն։ Եւ իբրև եկին հանդերձ սրբոյն Անթիմոսիւ հասին մերձ 'ի գետ. յայնժամ կացեալ առ գետոյն՝ կարդայր առ Տէր տալով նոցա լուսաւորութիւն Հոգւոյն սրբոյ առ 'ի լուացումն մեղաց և յորդեգրութիւն շնորհաց Հօրն երկնաւորի։

Եւ եդեալ ձեռն 'ի վերայ նոցա, տեառնագրեաց ըզ-նոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, որ տուեալ է հաւատացելոց 'ի Միածնէն 'ի սրբութիւն և 'ի փրկութիւն անձանց։ Եւ կատարեալ զամենայն խորհուրդ մկրտութեանն տնօրինական խորհրդոյն և օրհնեաց զնոսա, և հանդերձ նոքօք փառաբանութիւն վերառաքեալ Աստուծոյ Հօր և միածնի որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի, և կենդանարար ամենազօր Հոգւոյն սրբոյ, քաջալերէր զնոսա և ասէր. Երթիցուք որդիք իմ և եղբարք, զոր 'ի Քրիստոս Յիսուս աւետարանաւն ծնայ, զի և դուք արժանի լինիցիք վկայական նահատակութեան, և ես պարծանս լինիմ հաւատացելոց 'ի Քրիստոս Յիսուս, ասելով համարձակութեամբ, թէ՝ Ահաւասիկ ես և մանկունք իմ, զոր ետ ինձ Աստուած։ Եւ հաւատացեալ եղբարքն հանդերձ նովաւ գնացին զՀանապարհայն բերկրալից ուրախութեամբ պատրաստեալ զինքեանս քաջ արիութեամբ, և զի և ինքեանք նմանապէս երանելոյն 'ի հանդէս նահատակութեան մտցեն, և վասն Քրիստոսի զամենայն չարաչար նեղութիւնս յանձն առցեն. որում և հասին իսկ բարւոք և գովելի ցանկութեան՝ որ յաղագս Աստուծոյ էր և աստուածայնոց երկնից բարութեանցն։ Եւ 'ի մտանելն նոցա ընդ դուռն քաղաքին՝ լուան չարախօսքն զգալուստ սրբոյն Անթիմոսի, և գնացեալք ընդ այգն ընդ առաւօտն մինչդեռ նստէր յատենական բեմին ամբարիշտն Մաքսիմիանոս, ծանուցին նմա թէ եկն այրն այն՝ որում 'ի խնդիր է ինքնակալութիւնդ քո։

Յայնժամ հրամայեաց թագաւորն բերել զսուրբն առաջի բեմին իւրոյ յատեան դատաստանի. այլ նա զմկրտեալն յինքենէ հաստատէր 'ի հաւատս Աշմարտութեան, յանձն առնելով զնոսա Տեառն և բանի շնորհացն յոր հաւատացին։ Եւ արարեալ զկնիքն Քրիստոսի 'ի դէմս իւր սուրբն Աստուծոյ, այնպէս եկեալ համարձակապէս մերձ 'ի բեմն Մաքսիմիանոսի անօրինի, առ ինքեան ունելով զձեռս իւր և խոնարհ զերեսն, և 'ի վեր յերկինս զյոյսն ստացեալ՝ բուռն հարկանէ զխոստովանութենէ օրհնելով զԱստուած և սաղմոս ասելով այսպէս. Ցնծութիւն իմ, փրկեա զիս

յայնցանէ՝ որք պաշարեցին զիս 'ի միասին։ Եւ շուրջ կալով բազմակոյտ ամբոխին 'ի հանդիսին յորում հարցափորձիւր սուրբն Անթիմոս։ Եւ եղև 'ի մեռանել ոմանց 'ի բազմութենէ ընթադրելով զվիմեանս, յայնժամ հրամայեաց Մաքսիմիանոս բերել զամենայն գործարանս տանջանացն։ Արդ բերեալ լինին յառաջագոյն անիւք հրացեալք երկաթիք, և զկնի սուսերք երկսայրի սայրասուրք ծայրիւք. և տապակք եռանդնապտոյտք բորբոքմամբ՝ լցեալ ճարպով և ձիթով. բեւեռք ստուարք երկայնագոյնք, ջալոտիք արջառաջլաց, և մահակք փշալիցք, կօշիկք պղնձիք հրացեալք արտաշիկագոյնք, սաղաւարտք հրատեսակք և այլ պէս պէս զանազան գործի տանջանաց։ Զորս իբրև ետես զայս ամենայն գործարանս մեքենայիցն սուրբն Անթիմոս, ծաղր առեալ արհամարհէր ասելով. Արդեօք պակասեա՞լ լինի 'ի քէն տանջարանացդ զորս եղբայրն քո Անտիոքոս հնարեցաւ ընդդէմ Մակաբայեցւոց, որով և ինքն յաղթեալ եղև. այլ այն որ առ նոքօք ներգործեաց՝ զի մի՛ զհայրենի աւանդն ուրասցի, և առ իմովս ևս առաւել ներգործեսցէ, զի այնպէս և ես յաղթեալ քում չարութեանդ՝ անխարդախ և անբիծ հաւատովք զքահանայութիւնս իմ պահեցից Աստուծոյն իմոյ։

Յայնժամ ցասմամբ և բարկութեամբ լցեալ ամպարիշտն Մաքսիմիանոս՝ ասէ ցսուրբն. Դո՛ւ ես Անթիմոսն այն չարամոլութեան կցորդակից և վարդապետ Գալիլիացւոց օրինացն, և հայհոյիչ անմահից աստուածոցն, որ մնոտիապատիր առասպելաբանիւք ուսուցանես զմարդիկ 'ի բաց կալ և ապստամբել յաստուածոցն բարերարութենէն։ Արդ կանխաւ լուր լինած, զի ես մարդ եմ յոյժ դժնդակ և լցեալ ցասմամբ, և ահաւադիկ տես զգործիսդ տանջանարանացդ զոր պատրաստեալ եմ վասն քո, և երկիր յինէն և մատուցեալ զոհեա բարերար և անմահ աստուածոցն։ Եւ սուրբն Անթիմոս բացեալ զբերան իւր՝ արարեալ զկնիք Քրիստոսի, ասէ. Թագաւոր Մաքսիմիանէ, ես իսկ կամէի և ոչ քեզ պատասխան տալ, այլ քանզի աստուածային առաքեալն ուսուցանէ մեզ պատրաստ գոլ ամենայնի որ հարցանէ, վասն այնորիկ և ես տայ քեզ պատաս-

խանի, ունելով զխոստովանութիւն Քրիստոսի որ ասէ. Մի՛ հոգայք զինչ խօսիցիք կամ զինչ ասիցէք. զի տացի ձեզ բերան և իմաստութիւն որում ոչ կարիցեն տալ պատասխանի ամենայն հակառակորդքն ձեր. քանզի ոչ եթէ դուք իցէք որ խօսիցիք այլ Հոգի Հօր ձերոյ խօսիցի 'ի ձեզ. վասն որոյ լուր ինձ, ո՛վ թագաւոր, զի սակս տանջանացդ որով սպառնաս ինձ, ոչ երկեայց 'ի քէն, քանզի ունիմ Աստուած յերկինս որ աբար զամենայն բանիս, որ և ասացն մարգարէին, թէ Աստուածք որ զերկինս և զերկիր ոչ արարին՝ կորիցեն յերեսաց իմոց. զորս խուլս և կոյրս կոչեմ և պղծութիւն աւերածոյ անուանեմ, և ոչ երբէք զնոսա աստուածս խոստովանեցայց։

Մաքսիմիլիանոս ասէ. Գիտեմ զի այժմ ոչ կամիս հաւանել և զոհել աստուածոցն. այլ յորժամ տեսանիցես զմարմինդ մաշեալ և ոչ ոչ կոտորեալ զամենայն անդամս մարմնոյդ՝ յայնժամ հաւանեսցիս իմոց հրամանացս։ Սուրբն ասէ. Մի՛ խաբիր, ո՛վ թագաւոր, եթէ զոհեմ մնոտի և խաբեբայ աստուածոցն քոց՝ որ դրոշեալ կռածոյք հաստատեալ են 'ի ձեռաց դիւապատիր և անպարիշտ մարդոց։ Յայս իբրև լուաւ անօրէնն Մաքսիմիանոս՝ հրամայեաց քարամբ խորտակել զկշակս նորա, և վէմս ստուարս դնել 'ի վերայ լանջաց նորա։

Յայնժամ սուրբն Անթիմոս բացեալ զբերան իւր սկսաւ անարգել զանօրէնն Մաքսիմիանոս և ասէ. Հարկանելոց է զքեզ Աստուած, ո՛վ գազան չարագոյն, արբանեակ սատանայի և նման եղբօրն քում Հերովդի՝ որ զնորին գործն ընձեռեցեր։ Եթէ ո՞չ գիտես զի 'ի ձեռն քարակոշկոճ լինելոյս՝ ետուր ինձ համարձակութիւն նմանող լինելով նախավկային Ստեփանոսի, որ զբազմութիւն քարանցն որպէս զծաղիկս վարդից ժողովէր, զի և ես 'ի ձեռն սոցունց զարկուածոց քարանցս՝ ՀՀոխացեալ լցայց անուշահոտութեամբ, 'ի բաց լքանելով զժահահոտութիւն դիւաց։ Դարձեալ ասէ ցնա Մաքսիմիանոս. Հաւատա ինձ այսուհետև, և զոհեա աստուածոցն, ապա թէ ոչ՝ առաւել ցասմամբ շարժեսցես զիս 'ի վերայ քո, և զայրացմամբ վարեցայց 'ի վերայ քո սաստկագոյն քան զառաջինն։ Պատաս-

խանի ետ սուրբ եպիսկոպոսն Անթիմոս և ասէ ցբռնաւորն. Արա վաղվաղակի զոր ինչ և կամիցիս և մի յապաղեր, այլ հպատակ լեր դու հօրն քում սատանայի. քանզի և նա 'ի սկզբանէ մարդասպան էր. աներևոյթ պատրանօք խաւարային, որ և 'ի քէն մահն ստուգապէս ոչ է հեռի, այլ մերձ ես 'ի վախճան։

Եւ բարկացեալ թագաւորն Մաքսիմիանոս հրամայեաց 'ի յօդս ոտից նորա հրացեալ երկաթս ագուցանել։ Իսկ երանելին Անթիմոս զձեռս և զաչս յերկինս ամբարձեալ՝ սկսաւ աղօթել այսպէս. Միածին Որդի Աստուծոյ Յիսուս Քրիստոս, լոյսդ նախայաւիտեան, փառք և ապաւինութիւն որոց զլոյսն եդեալ են 'ի քեզ, խաղաղական նաւահանգիստ նաւակոծելոց որք ծփեալ են 'ի ծովու մեղաց՝ պատրանօք յաւիտենիս այսորիկ, որ սրբոց քոց առաքելոցն 'ի ձեռն համբերութեան պարգևեցեր զչնորհս Հոգւոյն սրբոյ. առ քեզ կարդամք որ յամենայնի հասեալ ես 'ի թիկունս՝ քոյով անհասանելի և անպատելի զօրութեամբդ, և այժմ ևս աստանօր կասդ անմիջելի մերձաւոր, և զամենայն իսկ ընուս ամենաբաւական ողորմութեամբ քով։ Տուր ինձ համբերութիւն, զի յաղթեցից բանսարկու բռնաւորին, զի դու ես Տէր Աստուած միայն, որ ծանուցեր զաստուածութիւնդ քո ամենայն տիեզերաց, և դու յանգոյութենէ 'ի գոյութիւն ածեալ յօրինեցեր, և տաս յաղթութիւն երկիւղածաց յանուանէ քումմէ, ըստ խոստման քոյ ասելով. Ահա ետուս ձեզ իշխանութիւն կոխել զօձս և զկարիձս և զամենայն զօրութիւն թշնամւոյն։ Եւ զայս ասելով սրբոյ վկային ամենևին առ ոչինչ համարելով զտանջանսն բռնաւորին Մաքսիմիանոսի։

Յայնժամ դարձեալ հրամայէր ամպարիշտն խորտակել անօթ բրտի և տարածանել 'ի ներքոյ կողից նորա, և 'ի վերուստ մահակօք վայրենեօք հարկանել. և զայսպիսի տանջանս չարչարանաց կրելով նորա սկսաւ աղօթել այսպէս. Քրիստոս, գոհանամ զքէն՝ զի ածեր զգէցուցեր ինձ զօրութիւն 'ի պատերազմի, զի ընդդէմ նմին կապեսցես զոտս ամենայն յարուցելոցն 'ի վերայ իմ; և դիցես զնոսա 'ի ներքոյ իմ, և զթշնամիսն իմ տայես ինձ առ 'ի ներքոյ ոտից իմոց,

և զատելիսն արմատախլեալ խորասոյզ կորուսցես։ Պատասխանի տուեալ Թագաւորն ասէ ցնա. Ո՛վ պիղծ դու և երիցս Թշուառական, զիորձ առեր զտանջանացն և ոչ խրատեցար։ Եւ սուրբն ասէ. Այնենա- պիղծդ և մարդատեաց Թշնամի երկնից իրաւանցն, ոչ դադարես 'ի Թիւրելոյ զուղիղ ճանապարհն Աստուծոյ. արդ դու իսկ լուծեալ պարտեսցիս առ յինէն մարտակցաւն իմով Տերամբն Յիսուսիւ Քրիստոսիւ։ Այլ ես օր ըստ օրէ զօրացեալ լինիմ շնորհիւ նորա որ յիս. վասն որոյ և ոչ զգամ տանջանացս։ Եւ ամպարիշտն Մաքսիմիանոս լցեալ բարկութեամբ և սրտմտութեամբ, հրամայեաց հրացուցանել զկօշիկսն պղնձիս և արկանել յոտս նորա։ Եւ ծառայն Աստուծոյ Անթիմոս նահատակեսոն՝ համբարձեալ զաչս իւր յերկինս՝ ետես զփառսն Աստուծոյ զի հովանի լինէր նմա, և ձայն 'ի վերուստ լսելի լինէր բազմութեանն զի ասէր. Զօրացիր և քաջ լեր ծառայ իմ Անթիմոս, զի ես ընդ քեզ եմ մինչև յաղթեսցես բանսարկու բռնաւորին. Եւ երիցս երանելին զօրանայր 'ի ձայնէն որ եղևն առ նա 'ի վերուստ. և ուրախութեամբ ասէր. Դու ես համբերութիւն իմ Տէր, Տէր յոյս իմ 'ի մանկութենէ իմմէ, և քև օրհնութիւն իմ յամենայն ժամ։ Իսկ իբրև ետես բռնաւորն՝ խրախուսելով և համարձակելով Տեարբ՝ հիանայր, ափշեր 'ի սրտի իւրում և ասէր. Այրդ այդ չարագործ էր, զի յայնքան և յայնպիսի զանազանեալ տանջանաց ոչ առ ըզգայութիւն, այլ տակաւին զուարթացեալ է։

Եւ երանելի նահատակն Քրիստոսի ասէ ցնա. Անհանձար տմարդի և եղկելի քան զամենայն կենդանի, տեսանեմ ակն յանդիման զզօրացուցիչն իմ զԱստուած, զկարողն յամենայնի, զի կորուսանէ զքեզ և զաստուածսն քո 'ի միում աւուր, և վասն այնորիկ ծիծաղեցայ։ Եւ Մաքսիմիանոս լցեալ ցասմամբ մեծաւ, 'ի մոլորութիւն եկեալ՝ պատառեաց զթագաւորական պատմուճան իւր, և կրճտելով զատամունս իւր հրամայեաց զսուրբն մերձեցուցանել յանիւն. և պատասխանեալ սուրբն Անթիմոս ասէ. Ո՛վ թագաւոր, տրտմիս և զատամունդ կրճտես, զի լցի բանն մարգարէին որ ասէ, թէ՝ Զատամունս իւր կրճտեսցէ և հա-

լեսցի. և ցանկութիւն մեղաւորաց կորիցէ. այլ պա-
տառելով զպատմուճան թագաւորութեանդ քո, վասն
զի դու զսուրբ նահատակս նորա ընդ ճմլանօք և ընդ
դառն տանջանօք արկեր։

Յայնժամ հանին զսուրբն յանիւն. և հրաման տայր
բռնաւորն զինուորացն զամբարս ջահից ունել՝ ի ձեռս
իւրեանց, և՝ ի հոլովել անուոցն շարամերձեալ՝ ի մար-
մին նորա՝ զի անձկացեալ՝ ի դժնդակ տանջանացն և
՝ի տապոյ ջահի հրատիցն՝ վաղվաղակի աւանդեսցէ
զհոգին։ Եւ զինուորքն փութանակի կատարէին զհրա-
մայեալն յամպարշտէն։ Իսկ սուրբ վկայն Քրիստոսի
ցօղով սուրբ Հոգւոյն զուվացեալ ասէր. Գոհանամ ըզ-
քէն Աստուած Հնմարտութեան և հայր ողորմութեան,
որ զհրեշտակ քո առաքեցեր առ երիս մանկունսն՝ ի
Բաբելոն՝ ի միջոյ հրոյն՝ և փրկեցեր զնոսա, և զանօրէն
Քաղդէացիսն հրոյ աւանդեցեր՝ վասն անհաւատու-
թեան իւրեանց. այսպէս ցոյց և այժմ զնշան սքանչե-
լեաց քոց՝ ի մէջ անօրէն կռապաշտիցս, և դարձո զտապ
բոցոյս՝ ի պաշտօնեայս նորա. զի ծանիցեն և հաւա-
տասցեն զի դու ես պաշտպան իմ Տէր՝ որ փրկես զյու-
սացեալսն՝ ի քեզ։ Զայսոսիկ ասելով նորա դարձան
բոցք ջահիցն առ պաշտօնեայս անօրինին և այրէին
չարաչար կիզմամբ, և դադարեաց յանկարծակի ա-
նիւն, և զինուորքն զգետնի զարկան. և տեսեալ թա-
գաւորին զդադարումն անուոյն, համբարձ զգեղարդն
իւր՝ ի վերայ նոցա զի սպանցէ զնոսա, ասելով այսպէս.
Ո՛վ չարք և վատաշուէրք՝ ի պաշտօնեայսն իմ և ար-
համարհք՝ ի զինուորական կարգին, ընդէ՞ր ստունգա-
նեցէք պատուիրանաց իմոց և արհամարհեցէք զինք-
նակալ զօրութիւնսն իմ։ Եւ նոքա յարուցեալ՝ ի բաց
ընկեցին զջահսն՝ ի ձեռաց իւրեանց, և ասէն ցթագա-
ւորն. Ո՛վ արքայ քաջ և բարերար, տեսաք մեք արս
երիս՝ ի հանդերձս լուսաւորս ասելով մեզ. Զի՞ կայ ձեր
և վկայիդ Աստուծոյ. Թոյլ տուք ծառայիդ Քրիստոսի
Անթիմոսի. զի դա արդեօք յաղթող լիցի՝ ի վերայ բըռ-
նաւորիդ. քանզի՝ ի բաց ձգեալ թողու դա զառաջ-
մանակեայ կեանս և փափագող եղեալ կենացն յա-
ւիտենից։ Զի յորժամ անօրէն պաշտօնեայքդ պատ-
բաստ առնէիք ծառայիդ Աստուծոյ զտանջանարանսն

առ 'ի վանել զարդարն պէսպէս տանջանաց, անդուստ պատակ և բրաբիոնք առաքինութեան վկայիդ Աստուծոյ պատրաստեալ են։ Վասն որոյ, ո՛վ թագաւոր, ոչ համարձակիմք առնել զհրամայեալսն 'ի քումմէ ինքնակալութենէդ, զի բոց հրատիցս տուչորեալ հարկանէ զերեսս մեր, և լարք մարմնոց մերոց հատեալք լինին, և ուղիղք գլխոց մերոց խոցոտեալք, և հոգիք մեր արտաքս ելանեն 'ի մարմնոցս, և ոչ համբերեմք տանջանացս զոր կրեմք յաներևակի։ Իսկ այրս այս կրէ և ոչինչ, զի դու տեսանես զնա 'ի վերայ անուոյն ձգեալ, այլ մեք տեսանեմք հանդերձ երեք արամբք լուսազգեստիւք յաղթազգեաց եղեալ, ոչ ևս մի ինչ կրելով 'ի խոշտանգանս տանջանաց։ Այլ սակայն և վասն քոյ հրաման պատասխանւոյ ընկալաւ զի պատուհասեսցիս դու։

Եւ ծանուցեալ արքայի եթէ Ճշմարիտ են ասացեալքն 'ի զինուորացն՝ հրամայեաց զսուրբն իջուցանել 'ի գելարանաց անուոյն։ Յայնժամ սրբոյ եպիսկոպոսին Անթիմոսի ամբարձեալ զաչս իւր յերկինս՝ ետես ըզփառսն Աստուծոյ. և տարածեալ զսուրբ ձեռս իւր աղօթս մատուցանելով ամենատեառն մերոյ. Տէր երկնի և երկրի, որ 'ի ձեռն բազում գթութեան քոյ առաքեցեր զմիածին Որդիդ քո լուսատու և փրկիչ աշխարհի, զի այնպէս 'ի ձեռն նորա ծանեաք զքո անՃառ աստուածութիւնդ. վասն որոյ զատեալք յունայնութենէ պաշտամանց կռոցն մոլորութեանց՝ ընտանացեալք միածնին քոյ աստուածութեանն. որ վասն գթութեան և բարերար կամացն այսօր զհրեշտակն իւր սուրբ առաքեաց առ իս թեթևեցուցանել զաշխատութիւնս. զի յաղթելով անօրէն բանսարկու բռնաւորին՝ և այնպէս հասանիցեմ 'ի սրբոցն քաղաքավարութիւն, երևելով արժանաւոր զինուոր Քրիստոսի երկնաւոր թագաւորին։

Եւ Մաքսիմիանոս ցասուցեալ մեծաւ սրտմտութեամբ ասէ ցսուրբ վկայն Քրիստոսի. Մինչև յե՞րբ ոչ դադարես 'ի շաղակրատելոյ առասպելաբանութեանցդ, կարծելով շատխօսութեամբ Ճողոպրել 'ի ձեռաց իմոց. արդ հաւանեա և զոհեա աստուածոցն, ապա թէ ոչ որոյ մատնեցիս զքեզ։ Եւ սուրբն Աստու-

ծոյ յաղագս որոյ լուեալ՝ խնդալից եղեալ ասէ. Թուի քեզ 'ի ձեռն սրոյ սպառնալեաց զարհուրեցուցանել զիս, այլ ես առաւել վաղվաղակի ցանկամ ելանել յապականացու մարմնոյ աստի և մտանել առ Աստուած՝ առ որ անձկացեալն եմ; և մասն ժառանգութեան գտանել յարքայութեան արդարոց. վասն այնորիկ համբերեմ՝ զի նա որ չօրացուցանէ զիս, զի հանդերձ երկու բիւրօքն երթեալ առ նա պարծեցայց համարձակութեամբ ասելով, թէ՝ Ահաւասիկ ես և մանկունք իմ զոր ետ ինձ Աստուած. զի էին և նոքա 'ի հօտէն իմմէ, զոր կարծէիր թէ սպանեալ իցես. զոր երկնային Աստուած հովիւն քաջ՝ նուաստութեան իմոյ հաւատաց. զի այսպէս ասացից և ես համարձակութեամբ, թէ՝ Զորս ետուր ինձ՝ ոչ կորուսից 'ի նոցանէ և ոչ զոք։

Իսկ անօրէնն Մաքսիմիանոս իմացեալ թէ խնդալից եղեալ սուրբն Անթիմոս՝ վասն 'ի ձեռն սրոյ պատուհասին զոր հանդերձեալն էր կրել, ասէ ցնա բռնաւորն. Գիտեմ զի ուրախ եղեր վասն հանդերձելոյ զերծանել քեզ 'ի ձեռաց իմոց ըստ փոխելութեան քում. այլ ոչ տաց քեզ վաղվաղակի վճիռ մահու, այլ չարագոյն և անողորմ տանջանօք և հարուածօք մաշեցից զմարմին քո, որպէս և արժանի իսկ ես, և յայնժամ աւանդեմ զքեզ պատուհասի 'ի ձեռն սրոյ։ Պատասխանի ետ սուրբ եպիսկոպոսն և ասէ ցնա. Իբրու զանգիտելով 'ի մահուանէ խոստանաս զայդպիսիսդ. արա վաղվաղակի զոր ինչ կամիսդ, անօրէն։ Քանզի որչափ ես համբերութիւն ստանամ 'ի տանջանս, այնպէս յաճախապէս Աստուած փառաւորեալ լինի. և ինձ տացէ համբերութիւն՝ վասն յուսոյ իմոյ որ առ նայն է. այլ դու ոչ ես ճողոպրելոց 'ի դատաստանաց Աստուծոյ՝ այրմամբ գեհենոյն։ Եւ ասէ ցնա Մաքսիմիանոս. Արդ արդեօք ոչ կարիցեմ ձգել այսուհետև զքեզ առ պատշաճն՝ իշխանութիւն ունելով 'ի վերայ քո։ Եւ սուրբն Անթիմոս ասաց. Ոչ ունէիր իշխանութիւն 'ի վերայ իմ և ոչ մի ինչ՝ եթէ ոչ Աստուած ներեալ էր, զի ցուցցէ քեզ թէ որպիսի նահատակս ունի որ յաղթեսցեն քեզ, և բանսարկուին որ զգեցեալն է զքեզ. զի ծառայակից և արբանեակ ես դու նորա կամացն

օտարացեալդ 'ի Տեառնէ և Թշնամի արդարութեան. առ քոյին անօրէնութեան գործովդ գանձեցեր քեզ զանշէջ հուր գեհենին՝ որ կայ և պահի ամենայն ամ. պարշտաց և մեղաւորաց՝ քև հանդերձ, անանց և անվախճան տանջանացն։

Յայնժամ հրամայեաց անօրէնն դարձեալ տանջել զնա և միանգամայն դնել 'ի բանտ, և զոտս նորա պընդել ստուար երկաթիւք, և արկանել անուր 'ի պարանոց նորա և զգուշութեամբ պահել։ Եւ գնալով Քրիստոսի զինուորին 'ի բանտն՝ մեծաւ ուրախութեամբ և ցնծութեամբ, և աղօթէր յարգելանի բանտին այսպէս ասելով. Յիսուս Քրիստոս նախայաւիտեան ծընունդ Հօր, որ զամենայն յոչէից 'ի գոյութիւն ածեր, և հայրենի կամաք յերկնից ինջեալ և առեր մարմին 'ի սրբոյ կուսէն Մարիամայ, և 'ի ձեռն նորին մարմնոյն զգեցման աստուածային ներգործութեամբն ցուցեր արուեստս և նշանս աքանչելեաց քոց. և զգրեալսն ամենայն 'ի տառս մարգարէիցն լցեալ կատարեցեր, խաչեալ կամաւորաբար և խաչակցեալ զիմ զմեղս, յարուցեալ եռօրեայ աստուածային իշխանութեամբ, և մեզ յոյս յարութեան պարգևեցեր վասն բազում բարեգթութեան քո, ոչ անտես առնելով զազգս որդւոց մարդկան զմեղօք մահացեալքս։ Եւ այժմ, Տէր բարերար, 'ի հասեալ ժամուս յառաջեա նախ քան զմտանելն իմ 'ի բանտ, և տուր ինձ բան վարդապետութեան առ լուսաւորել զաստանօր զկալանաւոր զրմբռնեալ ծառայքս քո, զի խաւարն 'ի քէն ոչ խաւարեսցի, և գիշերն որպէս տիւ լուսաւոր եղիցի՝ հնազանդելով քոյոյ հրամանի։

Եւ ըմբռնեալ էին զերանելին անօրէն սպասաւորք բռնաւորին և կապեալ երկաթեղէն կապանօք։ Յայնժամ տեսանէին զնա լուծեալ 'ի կապարանէն և առաջնորդեալ 'ի լուսազգեստից ոմանց, զորոց և զդէմս տեսանելով զինուորացն՝ յերկիր անկանէին և ոչ կարէին հայել 'ի նոսա։ Ալ սուրբն Աստուծոյ Անթիմոս յարուցանէր զնոսա ասելով. Արիք, կատարեցէք զզհրամայեալսն ձեզ 'ի բռնաւորէն։ Եւ նոքա յարուցեալ զհետ նորա երթային հեռաստանէ դիտելով զնա, և զարհուրեալք յերկիւղէ սպառնալեաց բռնա-

ւորին. և մնեալ սուրբն Անթիմոս 'ի բանտն գոհու-
թիւն մատուցանէր, և յաղօթելն իւրում՝ այսպէս ա-
սէր. Տէր Աստուած արարիչ և հաստիչ ամենայն եղա-
նուութեանց, հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.
գոհանամ զքէն զի արժանի արարեր զանարժանու-
թիւնս իմ 'ի ձեռաց բռնաւորին զվՃիռ մահու ընդ-
ունել ըստ նմանութեան ամենորդւոյն երանեալ կա-
րապետին և Յովհաննու մկրտչին, զի ես հանդերձ նո-
վաւ 'ի ձեռն շնորհաց քոց համարձակութեամբ և ա-
չալրջութեամբ զուարթերես կացից ընդ սուրբս և ընդ
սիրելիս անուան քո՝ յաւուր գալստեանն Միածնի քո
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Եւ ամենեցուն որ
ընդ նմա 'ի բանտին արգելեալք էին վարդապետէր
սուրբն և ուսուցանէր զկարգ բարեպաշտութեանն, և
հաստատէր 'ի քրիստոսական հաւատն, ասելով, թէ
'ի ձեռն բաղում նեղութեանց պարտ է մեզ մտանել
յարքայութիւնն Աստուծոյ։ Եւ նոքա առ ոտս նորա
անկանէին, արտասուագոչ պաղատանօք աղաչէին՝ ասե-
լով. Ծառայ Աստուծոյ բարձրելոյն, դու 'ի դիպողու-
թեան քում հանդիպեցար որում ցանկացեալդ էիր 'ի
վաղուց հետէ, և զբարւոք զընթացսն կատարեցեր.
այլ մեք տակաւին դեռ ևս յաշխատութեան Ճգունս
կամք. վասն որոյ աղաչեա վասն մեր զՏէր՝ զի տացէ
մեզ զպարգևս Հոգւոյն սրբոյ, զի և մեք արժանաս-
ցուք զկնի բարիոք և քաջ հովուիդ հետևել, 'ի հան-
դիպումն Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ էր նա 'ի բանտին սաղմոսելով և գոհանալով
զանպատում պարգևացն Քրիստոսի Աստուծոյ, և քա-
ջալերելով զհաւատացեալսն 'ի Քրիստոս, որք էին ընդ
նմա արգելեալք 'ի բանտին։

Լուաւ Մաքսիմիանոս անօրէնն՝ թէ և անդ զկարգս
և զկրօնս քրիստոսական հաւատոցն ուսուցանէր սուր-
բն Անթիմոս, և առաքեաց կոչեաց զնոսա։ Եւ եկին
զինուորքն 'ի բանտն տանել զսուրբն յատեան դատա-
ւորին. և սուրբն Անթիմոս խոնարհեցուցեալ ծունր
հանդերձ այնոքիւք որ 'ի բանտին կալանաւորք էին,
աղօթս առնէր 'ի սրտի իւրում։ և ասացեալ սուրբն
զամէնն՝ եդ զձեռն 'ի վերայ և յանձն արարեալ զնո-
սա շնորհաց Հոգւոյն։ Եւ այնպէս արարեալ զկնիքն

Քրիստոսի՝ ելեալ 'ի բանտէն ցնծութեամբ և ուրախութեամբ եկն եկաց առաջի Մաքսիմիանոսի։

Ասէ ցնա պիղծ բռնաւորն. Եւ արդ ես ոչ դադարեցեր 'ի մոլորութենէդ քումմէ, և ոչ խրատեցար 'ի բանտին լինելով զայնքան աւուրս. արդ հաւանեա ինձ և զոհեա աստուածոցն, և արարիջ զքեզ բարձրագոյն քահանայապետ։

Ասէ ցնա սուրբն Անթիմոս. Քահանայապետ եմ ես Աստուծոյ բարձրելոյն՝ քահանայապետին յաւիտենից, և նմա զոհեմ զոհ օրհնութեան անարիւն և առանց ձենձերաց. այլ դիւաց որ մոլորեցուցանեն զքեզ 'ի ձեռն անշունչ քարանց՝ ոչ զոհեմ։ դու քար գոլով՝ քարանց երկիր պագանես, և դոքա 'ի դատաստան ոչ եկեսցեն զի անզգայք են. այլ դու անօրէն դատապարտեալ ինքնին 'ի գեհենն երթիցես, որ պատրաստեալ է հօրն քում սատանայի և հրեշտակաց նորա. զի բանաւոր գոլով թողեր զարարիչն քո և ըզտուողն թագաւորութեանդ քո, զոր վասն անօրէնութեանդ քո 'ի բաց բառնայ 'ի քէն Աստուած, և յորդունսն մատնէ զմարմինդ քո՝ որ առաքինութեամբ ոչ կամեցար վարիլ։

Եւ լուեալ զայս ամենայն անիծեալն Մաքսիմիանոս 'ի սրբոյ եպիսկոպոսէն Անթիմոսէ, ասէ ցնա. Երդուեալ 'ի փրկութիւն աստուածոցն, զի ոչ զերծցիս յայսմ աւուր 'ի մահուանէ. քանզի կարծես պաձուձեալ և մնոտի բանիւքդ պատրել զմեզ և ծիծաղել զմեօք։ Եւ պատրաստելով նորա հատուցանել զդատակնիքն ընդդէմ նորա, յայնժամ սկսաւ աղօթել սուրբն Անթիմոս, ասելով. Աստուած հարցն և Տէր ողորմութեանց, որ անձառելի բարերարութեամբ քո մատակարարես զամենայն, որ սրբոյ Հոգւոյդ քո շնորհըս՝ պարգևես հաւատացելոց 'ի քեզ, 'ի ձեռն ոլոյ և ինձ պարգևեցեր համբերութիւն, զքեզ աղաչեմ զամենեցուն զպատճառդ իսկ և զարարիչդ, և զիս արժանի արա կատարել զընթացս իմ ըստ կամաց քոց։ Եւ զհօտս զայս զոր հաւատացեր և ընձեռեցեր նուաստութեանս իմոյ՝ հաստատուն պահեա 'ի հաւատս յոր և կոչեցեր, և զամենայն մենաբենաւոր հնարս չարին և զպատրանս նորա խորտակեա, և նկուն արա առաջի

սոցա քոյին ամենակարող զօրութեամբդ, զի մի գողա-
ցեալ օձտեսցէ վարատելով 'ի սուրբ հօտէ քումմէ։
Տակաւին զծառայս քո զնորընծայեալքս քեզ յանձն
առնեմ, որ կարողդ ես պարգևել 'ի հնորհս քո, որ-
պէս և երկուց բիւրուցն պարգևեցեր զառ 'ի քեզ խոս-
տովանութիւնն. զի այնպէս անմոռաց զանուն քո, Տէր,
և զՄիածնի քո յանձինս իւրեանց պահեսցեն Հոգւովդ
քով սրբով։ Տէր Յիսուս Քրիստոս Աստուած մեր, գո-
հանամք զքո մարդասիրութենէդ, որ եկիր 'ի խնդիր
մեզ կորուսելոցս, և փրկեցեր զմեզ 'ի դիւապաշտ մո-
լորութենէ, և ետուր յաղթութիւն ընդդէմ անե-
րևոյթ թշնամւոյն. և արդ մեք զինչ կարասցուք հա-
տուցանել քումմ աստուածութեանդ, բայց զանձինս
մեր ընծայեմք 'ի հոտ անուշից։

Եւ կատարեալ նորա զաղօթսն։ Իսկ թագաւորն
գրգռեալ 'ի չարէն և մեծաւ ցասմամբ սրտմտեալ 'ի
վերայ դահճապետին և դահճացն, հրամայեաց տանել
զսուրբն 'ի տեղի կառափելոցն, և սուսերաւ հատա-
նել զպարանոց նորա. և վճիռ տայ առ նա գրով օրի-
նակ զայս. ԶԱնթիմոս վարդապետ քրիստոնէից և մո-
լորեցուցիչ Բիւթանացւոց նահանգիս, մանաւանդ Նի-
կոմիդացւոց մայրաքաղաքիս, վասն ընտրելոյ նորա
զսնոտի պաշտօն Գալիլիացւոցն և հաճոյանալ թո-
ղուլ զկեանս և յանկանալոյ մահու, սրով հրամայէ
ինքնակալութիւնս մեր բառնալ 'ի կենացս։ Իսկ զի-
նուորացն և դահճապետին ընկալեալ զայսպիսի վճիռ՝
փութացուցանէին զսուրբն տանել 'ի տեղի սպանմանն։
Եւ իբրև եհաս երանելին 'ի տեղին՝ աղաչէր զդահ-
ճապետն զինուորօքն հանդերձ՝ զի թողացուցեն նմա
սակաւիկ մի կալ յաղօթս և թոյլ ետուն նմա։ Յայն-
ժամ տարածեաց սուրբն զձեռս իւր յերկինս և սկը-
սաւ այսպէս աղօթել.

Տէր Աստուած, հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի, չեմ բաւական գոհանալոյ զառատ մարդասի-
րութենէդ քումմէ, որ կոչեցեր զանարժանութիւնս
իմ 'ի պատիւ և 'ի կարգ եպիսկոպոսութեան, և սրբ-
բեցեր զիս տաճար Հոգւոյդ սրբոյ, անարատ և անբիծ
պահելով զկուսութիւն սրբութեանս իմոյ. և ետուր
ինձ զառաքելական զքաղաքս զայս և շուրջ զսոքօք

զընակեալսն 'ի սմա, և ես 'ի միջի նոցունց ուղիղ հա-
մառօտեցի զբան կենսաբեր սուրբ աւետարանի քում։
Արդ որք հաւատացին յանուն քո սուրբ՝ պահեա զնո-
սա 'ի պատրանաց չարին, և խառնեա 'ի հրեշտակաց
երամն 'ի դասս վերին բանակացն, առնուլ զպսակն
լուսոյ ընդ ամենայն սուրբս քո. և զՀոգի իմ ընկալ
'ի հոտ անուշից պատարագ ընդունելի առաջի փառաց
աստուածութեան քո՝ յարկսն արդարոց յերկինս գրե-
լոց։ Տէր Աստուած հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի, հայր գթութեանց և Աստուած ամենայն միխ-
թարութեանց, պահեա անարատ զքո հաւատա-
ցեալքս, և յամօթ արա զչարն գործակցօք իւրովք
հանդերձ. և զիս ընկալ Տէր իմ։

Եւ կատարեալ զաղօթսն և ասացեալ զամէնն,
յայնժամ ասէ ցդահիճն. Արդ ընդէ՞ր հեղգայք,
փութացիք կատարեցէք զհրամայեալսն ձեզ 'ի քառնա-
ւորէն։ Եւ վերացուցեալ մի ոմն 'ի դահճացն զսուսերն
եհատ զպարանոց սրբոյն, և աւանդեաց զՀոգին 'ի
ձեռս Աստուծոյ. զի հոգիք արդարոց 'ի ձեռին Աս-
տուծոյ են։

Գործեցաւ այս 'ի հիւպատոսէն Մաքսիմիանոսի 'ի
Նիկոմիդա մայրաքաղաքին Բիւթանացւոց, յամսեանն
սեպտեմբերի որ օր երրորդ էր ամսոյն Թագաւորելոյ
'ի մեզ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում վա-
յելէ փառք իշխանութիւն և պատիւ, ընդ Հօր և ա-
մենասուրբ Հոգւոյն. այժմ և միշտ և յաւիտեանս յա-
ւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Անտիոքի, անարծաթ բժշկին։

Սուրբն Անտիոքոս և մեծ վկայն Քրիստոսի՝ էր բժիշկ բարեպաշտ հաւատով որ 'ի Քրիստոս, 'ի քաղաքէն Սեբաստիա. և շրջէր յամենայն գաւառսն և ձրի բժշկէր զամենայն հիւանդսն. ոչ դեղովք և արմատօք միայն, այլ անուամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ զբազումս բժշկէր, զՀրեայս և զՀեթանոսս. և փոխանակ վարձուցն զոր պարտ էր 'ի նոցանէ ընդունել՝ յորոց բժշկէր, տայր նոցա զպարգևս աստուածային լուսոյ սուրբ աւազանին հաւատոց՝ որ 'ի Քրիստոս. լուսաւորելով զամենեսեան դարձուցանէր 'ի մնոտի կռոցն մոլորութենէ։

Եւ էլ համբաւ բարեգործութեան սրբոյն ընդ երկիրն ամենայն, մինչև 'ի լսելիս Թագաւորացն։ Յայնժամ կալաւ զնա անօրէն դատաւորն Ադրիանոս, և բազում և ազգի ազգի տանջանօք չարչարէր զերանելին. բրովք դալարօք և քերանօք և սայրասուր եղեանգամք, հրկիզութեամբ այրեցին և խորովեցին զմարմին սրբոյն առհասարակ. և 'ի կաթսայիցն որ յեռանդան էր՝ արկին 'ի վերայ վիրաց նորա. և ստիպէին զնա 'ի բաց կալ 'ի Քրիստոսէ։ Եւ նա 'ի բազում վշտացն ոչ կարէր բանալ զբերան իւր, այլ միայն 'ի սրտին գոհանայր և օրհնէր զԱստուած։ Իբրև տեսին թէ ոչինչ գրէ զտանջանս, արկին զնա գազանաց ինձուց վայրենեաց. և գազանքն պատկառեալ 'ի հրաշալի դիմաց երանելւոյն՝ ոչ մերձեցան 'ի սուրբն, յանդիմանելով

զմոլորութիւն դատաւորին. մինչև զարհուրեալ դատաւորն շնորհեաց նմա ներումն աւուրս ինչ։

Իսկ սուրբն զօրացեալ 'ի սուրբ Հոգւոյն՝ եմուտ 'ի տաճար կռոցն 'ի գիշերի, և զամենայն բագինսն կործանեալ խորտակեաց։ Եւ զայն իմացեալ պաշտօնէից քրմաց տաճարի կռոցն՝ կալան զերանելին և ածին յատեան դատաւորին. և ոչ արկ զնա միւսանգամ ընդհարցափորձ տանջանաց. զի գիտէր զհամբերութիւն նորա և զպնդութիւն հաւատոցն որ 'ի Քրիստոս. այնուհետև հրաման ետ գլխատել զերանելին։ Եւ առեալ զնա դահճացն տարան 'ի տեղի սպանմանն. և սուրբն աղաչեաց զդահիճսն՝ ներել նմա մինչև կացցէ յաղօթս առ Տէր Աստուած իւր. և համբարձեալ սրբոյն զձեռս իւր յերկինս լի արտասուօք, և սկսաւ աղօթել այսպէս. Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Աստուած Աբրահամու, Աստուած Իսահակայ և Յակովբայ, Աստուած ամենայն մխիթարութեան, խոնարհեցո զունկն քո և լուր աղաչանաց ծառայիս քո։ Տուր, Տէր, ինձ անվեհեր կատարել զընթացս իմ։ տուր, Տէր, ինձ զվարձս վաստակոց, զոր սուղ ինչ վաստակեցի յայդի Տեառն իմոյ Յիսուսի Քրիստոսի, զոր գնեաց արեամբն իւրով։ Տուր, Տէր, ինձ զսակս զոր հատուցեր յետին մշակացն՝ առատ քո մարդասիրութեամբդ։ Լուր, Տէր, աղօթից խնդրուածաց ամենեցուն որ խնդրեն 'ի քէն՝ իմով բարեխօսութեամբ. հիւանդաց բժշկութիւն, դիւաց հալածումն, կուրաց տեսանել, կաղաց գնալ, խլից լսել, մեղուցելոցն թողութիւն։ Լուր, Տէր, ամենեցուն որք աղաչեսցեն զքեզ. եթէ ոք վտանգի 'ի ծովու և 'ի գետս և յամենայն տեղիս, օգնեա և փրկեա յամենայն վտանգից և նեղութեանց։ Տուր Տէր և օդոց բարեխառնութիւն և անդոց պտղաբերութիւն. փրկելով 'ի խորշակէ և յեղեմնաձին սառամանեաց։ Շնորհեա Տէր առողջութիւն շայեկանութեան մարդկան և անասնոց և թռչնոց, զի քո են արարածք. և քո են փառք, յաւիտեանս ամէն։

Եւ նոյնժամայն եկն ձայն յերկնից առ նա և ասէ. Ամենայն խնդրուածք քո եղիցին քեզ, և դու եկեսջիր յուրախութիւն Տեառն քո. բացեալ են դրունք

երկնից, և քեզ պատրաստեալ է պսակ փառաց, զոր պատրաստեցեր քոյով նահատակութեամբդ։ Եւ ըղբարբառն զայն ոչ ոք լուաւ, բայց միայն Կիւրակոս դահճապետն, և հաւատաց 'ի Քրիստոս, և նզովեաց զկուռսն։ Եւ 'ի նմին տեղւոջ հատան գլուխք երանելեացն, Անտիոքոս բժշկի և Կիւրակոսի դահճապետի. և բարձին զսուրբ մարմինս նոցա ժողովք Քրիստոնէիցն։ Եւ 'ի դադարել հալածանացն՝ շինեցին վայելուչ վկայարան սրբոցն 'ի Սեբաստիա մեծ մայրաքաղաքին, և կոչեցին սուրբ Անարծաթք, որ է մինչև ցայսօր։ Եւ է յիշատակ սրբոցն 'ի յօգոստոսի քսան և հինգ. 'ի փառս ամենասուրբ Երրորդութեանն, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Ապողոնի ձգնաւորի։

Որք զբարին խորհին և հաստատուն ունին զհաւատսն առ Աստուած, յամենատուրն Քրիստոսէ պատրաստինոցա արդարութեան պսակն. քանզի ընտրեալք Աստուծոյ յայս արդարութիւն կոչին, զի զպատերազմ բարւոք պատերազմեալ համբերութեամբ հասցեն խոստմանն՝ զոր խոստացաւ անսուտն Աստուած սիրելեաց իւրոց և հաւատացելոց 'ի նա յամենայն անձնէ։ Յորոց մի է և երանելի վկայն և առաքինի նահատակն Քրիստոսի Ապողոնիոս. զբարւոք ձգնութիւնն ձգնեալ 'ի մեծն Հռովմ, և փութացեալ յառհաւատչեայ վերին կոչումնն՝ ընդ սուրբ վկայսն Քրիստոսի համարեցաւ։ Վկայեաց երանելին առաջի սիւնկղիտոսին և Տերենտի հազարապետի, պատասխանի տուեալ համարձակութեամբ. որոյ յիշատակարանքն եղեն զայս օրինակ։

Տերենտիոս հազարապետ հրամայեաց ածել զնա առաջի սիւնկղիտոսին և ասէ. Ապողոնիէ, ընդէ՞ր ընդդիմանաս անյաղթ օրինաց և հրամանի թագաւորաց, և ոչ կամիս զոհել աստուածոցն։ Ապողոնիոս ասաց. Վասն զի քրիստոնեայ եմ, երկնչիմ յԱստուծոյ՝ որ արար զերկինս և զերկիր, և ոչ զոհեմ մնոտի կռոց։ Հազարապետն ասաց. Այլ պարտիս զղջանալ յայդպիսի մտաց՝ վասն հրամանաց թագաւորաց, և երդ-

նուլ 'ի բախտ ինքնակալին Կոմոդոսի։ Ապողոնիոս ասաց. Լուր իմաստութեամբ պատասխանուցս այսմիկ. Որ զղջանայ յարդար և 'ի բարի գործոց, ճշմարտութեամբ՝ այնպիսին անաստուած է և անյոյս. իսկ որ զղջանայ յանօրէն գործոց և 'ի չար խորհրդոց՝ և ոչ ևս դառնայ 'ի նոսա, այնպիսին աստուածասէր է, և յուսոյն ակն ունի. և ես այժմ յայս միտս հաստատեալ եմ, պահել զգէղեցիկ և զպայծառ պատուիրանն Աստուծոյ, զոր ուսայ 'ի Տեառնէ իմմէ Քրիստոսէ. որ գիտէ ըզխորհուրդս մարդկան, և տեսանէ որ ինչ 'ի ծածուկ և յայտնի գործի։ Բարւոք է ամենևին չերդնուլ. այլ ամենայնի խաղաղանալ և ճշմարտել. քանզի մեծ երդումն է ճշմարտութիւն. և այնր աղագաւ երդնուլ 'ի Քրիստոս տգեղծ է. այլ վասն ստութեան՝[1] անհաւատութիւն, և վասն անհաւատութեան՝ երդումն. կամիմ երդնուլ ճշմարտութեամբ 'ի ճշմարիտն Աստուած, եթէ և զթագաւորն սիրեմք, և վասն զօրութեան նորա աղօթս առնեմք։

Հազարապետն ասաց. Արդ մատիր զոհեա, Ապողոնի և այլոց աստուածոց և պատկերի թագաւորին։ Ապողոնիոս ասաց. Վասն զղջման և երդման ետու քեզ պատասխանի. այլ վասն զոհից՝ ես և ամենայն քրիստոնեայք զոհ անարիւն մատուցանեմք Աստուծոյ, Տեառն երկնի և երկրի և ծովու և ամենայն ինչոյ. վասն հոգևորաց և բանաւորաց պատկերաց ոչք կարգեցան 'ի խնամոցն Աստուծոյ թագաւորել 'ի վերայ երկրի. վասն որոյ ըստ հրամանի աստուածեղէն պատուիրանին աղօթս առնեմք առ բնակեալն յերկինս, որ միայնն է Աստուած, զի արդարութեամբ թագաւորեսցեն յաշխարհիս յայսմիկ. հաւաստի գիտացեալ եթէ ոչ յայլմէ ումեքէ այլ 'ի միայնոյ թագաւորէն՝ որ զամենայն 'ի ձեռին ունի Աստուած. և նա եկաց թագաւոր։

Հազարապետն ասաց. Մի թէ փիլիսոփայէ՞լ կոչեցար այսր. թոյլ տուեալ քեզ օր մի, զի զմտաւ ածեալ զօգուտն՝ խրատ տացես քեզ վասն կենաց քոց։ Եւ հրամայեաց տանել զնա 'ի բանդ։

1. Այլ օր. այլ վասն անհաւատութեան սպառնիւն։

Եւ յետ երից աւուրց Հրամայեաց ածել առաջի, և ասէ. Զի՞նչ խրատ ետուք՞ քեզ։ Ապողոնիոս ասաց. Կալ մնալ աստուածապաշտ՝ որպէս և յառաջն ասացի։ Հաղարապետն ասաց. Վասն Հրամանի սիւնկղիտոսին խրատ տամ՞ քեզ զղջանալ և զոհել աստուածոց՝ որոց ամենեքեան երկիր պագանեն և զոհեն. քանզի յոյժ օգուտ է քեզ կեալ ընդ մեզ քան չարաչար մեռանել. կարծեմ թէ չես անտեղեակ Հրամանի սիւնկղիտոսին։ Ապողոնիոս ասաց. Իմ զՀրաման ամենակալին Աստուծոյ գիտացեալ՝ կամ մնամ աստուածապաշտ. և ոչ պագանեմ երկիր կռոց ձեռագործաց. որք յոսկւոյ և յարծաթոյ և 'ի փայտից եղեն, և ոչ տեսանեն և ոչ լսեն. վասն զի ձեռագործք են մարդկան, և ըզՀշմարիտն Աստուծոյ զբարեպաշտութիւն ոչ գիտեն։ Այլ ես ուսայ պաշտել զերկնաւորն Աստուած, և նմա միայնոյ երկիր պագանել. որ յամենայն մարդիկ փչեաց զՀոգի կենդանի և հանապազ բաշխէ զկեանս ամենեցուն. և ոչ ևս խոնարհեցուցեալ զանձն իմ 'ի խորհուրատ ընկեցից. քանզի ամօթ մեծ է անարգաց երկիր պագանել. և ծառայական գործ է պաշտել զսնոտիսն. և մեղանչեն մարդիկ պաշտելով զայնպիսիսն. յիմար էին գտողք նոցա, և ևս անմտագոյն՝ պաշտօնեայք նոցա և երկրպագուք նոցա։ Եգիպտացիքն սոխոյ երկիր պագանեն, մոլորեալք. Աթենացիք մինչև ցայս օր զեզին կառափն պղնձի արարեալ պաշտեն, բախտ Աթենացւոց կոչելով զնա. զոր և կանգնեցին յերևելի տեղւոջ մօտ 'ի պատկերն Ադամազդայ և Հերակլի. զի յաղօթս կայցեն առ նոսա։ Եւ արդ զի՞նչ առաւել իցէ սա քան զկաւ չորացեալ և զխեցի այրեցեալ. աչս ունին և ոչ տեսանեն, ականջս ունին և ոչ լսեն, ձեռս ունին և ոչ ձգեն, ոտս ունին և ոչ գնան. քանզի լոկ ձևն զգայութիւն ոչ շնորհէ. կարծեմ թէ և Սոկրատէս ծաղը առնելով զԱթենացիսն՝ երդուաւ 'ի սօսոյ ծառն և 'ի շուն և 'ի փայտ չոր։ Նախ ինքեանց մեղանչեն մարդիկ պաշտելով զնոսա. երկրորդ անգամ՝ անպարշտեն յԱստուած, զի ոչ ճանաչեն զՀըշմարտութիւն։ Եգիպտացիք գարձեալ զսոխ և սխտոր աստուածս անուանեցին, և զպտուղս որով կերակրիմք, որք յորովայն մտանեն և յաղբիս ելանեն՝ զայնս պաշ-

տեցին. այլ և ձկան երկիր պագին և աղաւնոյ և շան և քարի և գայլոյ. և իւրաքանչիւր ոք ստեղծուածոյ մտաց իւրոց՝ երկիր պագին։ Երրորդ անգամ՝ մեղանչեն մարդիկ յորժամ երկիր պագանեն մարդկան և հրեշտակաց և դիւաց՝ աստուածս անուանելով։

Հազարապետն ասաց. Շատ փիլիսոփայեցեր և սխրացուցեր զմեզ. այլ զայն ոչ գիտացեր, Ապողոնիէ, եթէ հրաման սինկղիտոսին ամենևին քրիստոնեայ մի ուրեք երևել[1]։ Ապողոնիոս ասաց. Այլ չէ հնար մարդկեղէն հրամանի սինկղիտոսին՝ յաղթել հրամանին Աստուծոյ. քանզի որչափ մարդիկ զբարեգործսն ատեան 'ի նանիր և սպանանեն, նոյնպէս բազմապատիկ մարդիկ հեռանան յԱստուծոյ. այլ զայս գիտա, զի և 'ի վերայ թագաւորաց և տնանկաց, և իշխանաց և ծառայից և ազատաց, և փիլիսոփայից և տգիտաց՝ մահ սահմանեաց Աստուած, և դատաստան յետ մահուն 'ի վերայ ամենեցուն։ Այլ որոշութիւն է մահուն. վասն այնորիկ Քրիստոսի աշակերտքն հանապազ մեռանին, տանջելով զցանկութիւնս, և ձգնին ըստ աստուածեղէն գրոց. քանզի չիք ինչ ամենևին առ մեզ մասն անառակ ցանկութեանց, և ոչ տեսիլք աղտեղիք, և ոչ ակն յայրատ, և ոչ ունկն չարալուր. զի մի վիրաւորեսցին ոգիք մեր։ Արդ վասն զի այսպիսի գեղեցիկ կեանս կեամք, և բարի յօժարութեամբ վարիմք, ոչ ինչ դժնդակ համարիմք զմեռանել վասն ճշմարտին Աստուծոյ. քանզի որ եմք՝ վասն Աստուծոյ եմք, և համբերեմք տանջանաց վասն նորա, զի մի չարաչար մեռցուք զյաւիտենական մահն. այլ և ոչ ընդ յափշտակութիւն ընչից մերոց զչարիցիմք ինչ, գիտացեալ՝ եթէ կենդանի եմք, և եթէ մեռանիմք՝ Տեառն եմք։ Կարէ ջերմն և դալուկն, և այլ ինչ ախտ՝ սպանանել զմարդն, հապա մարեցայց եթէ 'ի միոջէ ումեքէ յայնցանէ մեռանիմ։

Հազարապետն ասաց[2]. Պնդեցար 'ի մեռանելդ։ Ապողոնիոս ասաց. Կամիմ կեալ 'ի Քրիստոս, այլ և 'ի մահուանէ չերկնչիմ վասն սիրոյ որ առ կեանսն. քանզի չիք ինչ պատուական քան զկեանսն յաւիտենա-

1. Մի օր. անուանել։
2. Մի օր. ասէ։

կանս, որ է անմահութեան մայր հոգւոյ՝ որ եկեաց աստ զգեղեցիկ կեանսն։ Հաղարապետն ասաց. Զիմացայ զինչ ասացերն։ Ապողոնիոս ասաց. Եւ զինչ արարիցս քեզ. քանզի տեսող սրտի է Բանն Աստուծոյ, որպէս տեսանող աչաց լոյս։

Փիլիսոփայ ոմն որ կայր մօտ անդ՝ ասաց. Ապողոնիէ, զքեզ թշնամանեա, քանզի յոյժ մոլորեալ ես, թէպէտ և կարծես խորհնս խօսել։ Ապողոնիոս ասաց. Ես աղօթս առնել ուսայ և ոչ թշնամանել. այլ քո կեղծաւորութիւնդ՝ զկուրութիւն սրտիդ քո խոստովանի. քանզի անմտաց՝ ձշմարտութիւնն թշնամանք թուին։ Իշխանն ասաց. Այս ինձ յայտնապէս զոր ասացերն։ Ապողոնիոս ասաց. Բանն Աստուծոյ Փրկիչ հոգւոց և մարմնոց, մարդ եղեալ 'ի Հրէաստանի, կատարեալ զամենայն արդարութիւնս, և լցեալ աստուածեղէն իմաստութեամբ պայծառապէս, ուսուցանէր պարկեշտ կրօնաւորութիւն որ պատշաձ էր որդւոց մարդկան. և լուեցուցանել զսկիզբն մեղաց։ Քանզի ուսոյց զբարկութիւն խաղաղացուցանել, զցանկութիւն չափաւորել, զախորժակսն մեղմացուցանել, զտրտմութիւն մերժել, հաղորդ լինել առ ողորմութիւն. զսէր աձեցուցանել, զմնափառութիւն ընկենուլ. 'ի վրէժ առնլոյ հեռանալ, քինախնդիր մի լինել, զմահ արհամարհել, ոչ անիրաւութեամբ այլ համբերելով անօրինացն. Աստուծոյ օրինացն հաւանել, զթագաւորս պատուել, զԱստուած պաշտել, զհոգի անմահ 'ի յԱստուծոյ հաւատալ, դատաստանի յետ մահու ակն ունել, պարգևաց սպասել յետ յարութեանն տալ յԱստուծոյ բարեպաշտութեամբ կեցելոցն։ Զայս ամենայն ուսուցանելով բանիւք և գործովք, հանդերձ մեծաւ հաստատութեամբ. և փառաւորեալ յամենեցունց վասն երախտեացն զոր առնէր, սպանաւ յետոյ, որպէս և յառաջ քան զնա իմաստունքն և արդարքն. քանզի արդարք անիրաւաց դժպհիք երևին, որպէս և աստուածեղէն գիրն ասէ. Կապեսցուք զարդարն՝ զի դժպհի եղև մեզ։ Այլ և յՆելլենացւոց իմաստնոց ոմն ասաց, թէ՝ Արդարն խոշտանգեսցի, թքեսցի, և յետոյ խաչեսցի. որպէս Աթենացիք անիրաւ եւտուն զվձիռ մահու. զրպարտեցին՝ հաւանեալ ռամ-

կին. նոյնպէս և Փրկչին մերոյ, յետոյ ետուն զվճիռ մահու անօրէնքն, նախանձեալ անօրէնքն ընդ նմա որ-պէս և ընդ մարգարէսն, որք յառաջ քան զնա, որ վասն նորա ասացին յառաջագոյն, եթէ՝ Եկեսցէ և բարի ա-րասցէ ամենեցուն, և հաւանեցուսցէ զամենայն մար-դիկ առաքինութեամբ. և պաշտել զԱստուած հայր ամենեցուն և զարարիչ. որում և մեր հաւատացեալ երկիր պագանեմք. վասն զի ուսաք 'ի նմանէ պարկեշտ պատուիրանս՝ զոր ոչ գիտէաք. և ոչ ևս մոլորիմք այսու-հետև. այլ բարուք կեանս կեցեալ՝ հանդերձեալ յուսոյն սպասեմք։

Իշխանն ասաց. Ես կարծէի եթէ 'ի գիշերին փո-խեցար յայդ մտաց։ Ապողոնիոս ասաց. Եւ ես ակն ունէի եթէ փոխեսցին խորհուրդք քո 'ի գիշերին և բացցին աչք հոգւոյդ պատասխանեօք իմովք, և սիրտդ քո պտղաբերեսցէ. և զԱստուածն արարիչ ամենայնի պաշտեսցես, և նմա հանապազ 'ի ձեռն ողորմութեան աղօթս մատուսցես. քանզի զոհ անարիւն և սուրբ է Աստուծոյ՝ ողորմութիւն առ մարդիկ եղեալ 'ի ձեռն մարդկան։

Իշխանն ասաց. Կամիմ արձակել զքեզ, այլ ոչ կա-րեմ՝ վասն հրամանի սիւնկղիտոսին. սակայն մարդա-սիրութեամբ տամ քեզ զվճիռն. և հրամայեաց սու-սերաւ հատանել զգլուխն։ Ապողոնիոս ասաց. Գոհա-նամ զԱստուծոյ իմոյ վասն վճռիդ քո։ Եւ տարեալ զնա դահճացն վաղվաղակի գլխատեցին. մինչդեռ փա-ռաւորէր զՀայր և զՈրդի և զՀոգին սուրբ. որում փառք յաւիտեանս. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Արքիպպայ եւ Փիլիմոնի։

Սուրբ վկայքն Քրիստոսի էին 'ի քաղաքէն Կողոսացւոց, աշակերտ լեալ սրբոյն Պօղոսի առաքելոյն, յաւուրս ամբարիշտ արքային Ներոնեայ։ Եւ եղև 'ի գնալն Յովհաննու առաքելոյ և աւետարանչի յԵփեսացւոց քաղաքն, հալածեաց անտի զդևսն և խորտակեաց զբագինսն Արտեմիդիոսի, և աւերեալ քանդեաց զտաճարս կռոցն. և դիցապաշտ մարդիկն որ աղանդեալ էին 'ի կռոցն մոլորութիւն՝ ոչ ունէին տեղի զդիւականն մատուցանել զզոհս, և երթային այնուհետև 'ի Կողոսացւոց քաղաքն զաղտեղի տօնն կատարել, զի դեռ ևս կայր տաճարն և բագինն Արտեմիդիոսի։ Եւ մինչդեռ կատարէին զզոհն պղծութեան, սուրբն Արքիպպաս և Փիլիմոն և այլ բազմութիւն քրիստոնէից կային յեկեղեցին յաղօթսն Աստուծոյ, զուխտսն կատարել։ Եւ յանկարծակի ժողովն որ եկեալ էին զոհել կռոցն՝ քինու նախանձու վառեալ՝ դիմեցին յեկեղեցին, և մտեալ կալան զսուրբն Արքիպպաս. և առեալ տարան զնա յատեանն Անդրոկղիտեայ դատաւորին, և պնդագոյն ամբաստանէին զնմանէ։ Իսկ նա լցեալ Հոգւով սրբով՝ յառաջ քան զհարցափորձ դատաւորին սկսաւ յանդիմանել զանպարշտութիւն նոցա և զմոտի կռոցն տկարութիւն։ Դատաւորն ասէ. Ոչ ինչ օգտիս յառաջաբան լինելով, զի եթէ ոչ զոհեսցես աստուածոցն՝ կեալ ոչ կարես։ Եւ բռնադատէր և ստիպէր զԱրքիպպաս զոհել կռոցն. և նա ևս առաւել անարգէր զկռապաշտութիւն նոցա։

Յայնժամ Հրաման եւ կապել զնա երկաթի կապանօք շղթայիւք, և քարշել մինչև 'ի դուռն մեհենին որ կոչիւր Մինաս. և անդ չարչարեցին զնա յոյժ ազգի ազգի տանջանօք, և նեղէին զոհել կռոցն. և սուրբն ոչ դադարէր 'ի կշտամբելոյ զդատաւորն և զաստուածս նորա։

Եւ նա ևս բարկացեալ, Հրաման եւ Հանին զնա արտաքոյ Կողոսացւոց քաղաքին մողոնաւ մի հեռի 'ի գեօղն իւր, որ կոչիւր Ակքիպիանա. և անդ փորեցին գուբ մի խոր, մինչև 'ի կիսաչափ առն մարդոյ, և արկին զնա 'ի գուբն և քարիւ պնդեցին մինչև ցգօտին, ձեռս յետս կապելով։ Եւ Հրաման եւ տուն մանկանց 'ի դպրոցէ զի գրչեաք երկաթեաք ծակեսցեն զգագաթն գլխոյն մինչև յուղիղն հասանել. և քարկոծ արարին զնա 'ի նմին տեղւոջ, մինչև աւանդեաց զոգին։ Եւ անտի գնացեալ կալան զՓիլիմոն և սպանին զնա։ Իսկ կին ոմն բարեպաշտ Սոփի անուն, արամբք երկիւղածովք բարձեալ զմարմին սրբոցն՝ եդ 'ի գերեզմանի 'ի պատուական և 'ի սուրբ տեղւոջ։

Ապա կատարեցան սուրբ վկայքն և աշակերտքն Քրիստոսի, 'ի նոյեմբերի ԻԲ, 'ի փառս Քրիստոսի Աստուծոյ, յաւիտեանս. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Աֆրասայ։

Ի քաղաքի միում որում անուն էր Օգոստեա [1], հրամայէր իշխանն ըմբռնել զքրիստոնեայսն և ածել, զի զոհեսցեն պիղծ դիւացն. և ելեալ սպասաւորքն յափշտակեցին կին մի պոռնիկ 'ի հրապարակէն, և ածին առ իշխանն՝ մինչդեռ զոհէր աստուածոցն. և տեսեալ զնա իշխանին՝ զառաջինն ողբական բանիւք կամէր հաւանեցուցանել զի զոհեսցէ։ Իսկ կինն ոչ հաւանէր հրամանին, այլ համարձակութեամբ ասէր. Ես քրիստոնեայ եմ։ Եւ դատաւորին տեսեալ թէ արհամարհեաց զհրամանս թագաւորին, ասէ ցնա. Զի՞նչ անուն է քո։ Եւ նա ասէ. Քրիստոնեայ եմ, և անուն իմ Աֆրաս [2]։ Դատաւորն ասէ. Որո՞յ բախտի ես։ Աֆրաս ասաց. Զարբախտի եմ վասն պիղծ գործոց իմոց, այլ սակայն ազատ եմ։ Դատաւորն ասէ. Որպիսի՞ են վարք քո։ Աֆրաս ասաց. Ի սատանայական գործոյ՝ յառաջ պոռնիկ [3]. իսկ այժմ 'ի ձեռն Քրիստոսի շնորհացն՝ որ ծագեալ են յիս՝ զգաստացեալ եմ։ Դատաւորն ասէ. Արդ՝ վասն զի զգաստացար, մատիր զոհեա բարեբար աստուածոցն, ըստ հրամանի թագաւորացն։ Աֆրաս ասաց. Զէ՞ ինչ աղտեղագոյն քան զաստուածք ձեր. քանզի յորժամ զամօթալիսն գործէի, հայեցեալ 'ի պղծութիւնն որ կրին 'ի նոսա, եթէ որպէս կամա-

1. Մի օր. Օգոստա։
2. Մի օր. Ադրա։
3. Այլ օր. Ի սատանայական խաբէութենէն յառաջ պոռնիկաւն. այլ այժմ 'ի յեռն շնորհացն Աստուծոյ որ փրկեցին զիս զգաստ և պարկեշտ։

կից [1] են աղտեղի գործոց, հեռացայ 'ի նոցանէ, և ընթացայ առ պարկեշտ վարդապետն իմ Քրիստոս, որ խլէ զարմատս մեղացն. քանզի լուայ 'ի նմանէ, թէ՝ Որ տեսանէ զկին մարդ առ 'ի ցանկանալոյ ընդ նմա՝ անդէն շնացաւ 'ի սրտի իւրում։

Դատաւորն ասէ. Մատիր զոհեա աստուածոցն, զի մի՛ վասն հայհոյութեանդ քո չարաչար տանջեցիս զքեզ. և այնպէս զգեղ մանկութեան քո ապականեալ հանիս 'ի քաղցր կենացս։ Սփրաս ասաց. Հաւատամ 'ի Քրիստոս, որ վասն բազում մարդասիրութեան իւրոյ հայեցաւ յիս, եթէ տացէ մարմնոյս իմոյ ժուժկալութիւն տանջանաց քոց, զի բարի գործովք մարմնոյս լցից [2] զմթերսն. քանզի պիղծ գործովք դառնացուցի զԱստուած, և տրտմեցուցի զերկնաւոր հրեշտակս. արդ՝ հրամայեա տանջել զմարմինս իմ վասն Քրիստոսի, զի հաշտեցուցից զԱստուած և ուրախ արարիցս զդասս հրեշտակաց։ Քանզի լուայ 'ի Տեառնէ՝ որ ասէր. Ամէն ասեմ ձեզ, զի ուրախութիւն լիցի առաջի Աստուծոյ և հրեշտակաց նորա վասն միոյ մեղաւորի՝ որ ապաշխարեսցէ։ Եւ լուեալ զայս դատաւորն՝ ասաց. Ապտակօք կոծեցէք զերեսս դորա սաստիկ, և ասացէք. Մի՛ ընդդիմանար հրամանաց թագաւորին։ Եւ հարին զնա յոյժ. և լայր ամենայն ամբոխն, և հանդերձ արտասուօք ասէին. Ընիրաւ դատիս, և արտաքս քան զօրէն և զվայելչութիւն քաղաքիս մերոյ՝ ապտակես [3]։ Եւ դատաւորն զարմացեալ ասաց. Ընդէ՞ր հակառակ կայք հրամանաց թագաւորաց։ Եւ ամբոխն աղաղակեալ ասաց. Աղաչեմք զքեզ, մի՛ ապականեր զգեղ դորա։

Դատաւորն ասաց. Տեսանե՞ս, Սփրաս, զի՞՝ արդ լան վասն քո քաղաքս ամենայն, անչափ սիրեն զքեզ։ Սփրաս ասաց. Ի բազում պոռնկութեան իմում՝ արբանեակք սատանայի որք էին իմ գործակիցք՝ ուրախ լինէին, և հրեշտակք տրտմէին ընդ պիղծ գործս իմ. այժմ նոքա լան և հրեշտակք յերկինս ցնծան, վասն

1. Մի օր. ընդնոցանէից։
2. Մի օր. լցայց։
3. Մի օր. արդարոց դան զօրենս գործես, զվայելչութիւնս քաղաքիս մերոյ ապականես։

հաւատոյս իմոյ որ յԱստուած՝ և բարի գործոցս։ Արդ՝ զոր ինչ կամիս առնել, արա վաղվաղակի, զի ես քրիստոնեայ եմ։ զի գրեալ է. Աստուածք՝ որ զերկինս և զերկիր ոչ արարին՝ կորիցեն։ Դատաւորն ասաց. Ա՛յ անամօթ, մատիր զոհեա աստուածոցն, ապա եթէ ոչ՝ երդուեալ յաղթութիւն և 'ի բախտ Թագաւորին և ամենայն աստուածոցն, առ սակաւ սակաւ հրով վատնեմ զքեզ 'ի ցոյցս ամենայն քրիստոնէից։ Սփրաս ասաց. Երդմնեցուցանեմ զքեզ 'ի Թագաւորն քո, զի հրամայեսցես այրել զմարմինս իմ։ վասն զի շաղախեցի զսա պոռնկութեամբք, և աղտեղեցի մեղօք. որպէս երկաթ [1] 'ի բազմաժամանակեայ հնացեալ և ժանգոտեալ, նորոգի 'ի ձեռն հրոյ և փայլէ, նոյնպէս և զիս հրամայեա հրով այրել. զի անբիծ և անարատ պատարագ մատիցէ մարմինս իմ Քրիստոսի։ Դատաւորն ասաց. Ահա պնդեցար չարաչար մեռանել, և կամեցար զի հրով գեղ քո խանգարեսցի։ Սփրաս ասաց. Այո պնդեցայ, և 'ի Քրիստոս հաւատացի, միայն թէ ողջակիզեսցի գեղեցկութիւնս իմ Քրիստոսի։ Եւ զարմացեալ դատաւորն ընդ պնդութիւն խոստովանութեանն, եթէ զիարդ արհամարհեաց զթագաւորն և զհրամանս նոցա, ետ վաղվաղակի հրաման՝ կապել զոտս և զձեռս նորա և քարշել արտաքոյ քաղաքին մինչև 'ի գետեղրն. և անդ այրել զնա կենդանւոյն առ սակաւ սակաւ դալար փայտիւ. և դահճացն զայն հրաման առեալ վաղվաղակի կատարեցին։ Եւ այնպէս վկայեաց սուրբ աղախինն Քրիստոսի Ճշմարիտ խոստովանութեամբ, որ 'ի Հայր և յՈրդի և 'ի սուրբ Հոգին. որում փառք և զօրութիւն յաւիտեանս. ամէն։

1. Մի օր. անդրի։

Վկայաբանութիւն Բաբելայ եպիսկոպոսի և երից մանկանցն։

Եկեալ 'ի քաղաքն անտիոքացւոյ Նոմերիանոս թագաւորն՝ և անդ զոհս պղծոց դիւացն մատուցանէր. կամեցաւ 'ի տուն Աստուծոյ մտանել։ Իսկ երիցս երանելին Բաբելաս՝ եպիսկոպոս եկեղեցւոյն Աստուծոյ որ յԱնտիոք, գեղեցիկ և հանձարեղ հովիւ հօտին Քրիստոսի, և գիտէր մեծաւ իմաստութեամբ հովուել որ ընդ ձեռամբ նորա էին. իբրև լուաւ եթէ կամի մտանել Նոմերիանոս 'ի տաճար Աստուծոյ, ձայն ամբարձեալ 'ի մէջ ժողովրդեանն մեծաւ բարբառով ասէր. Հաստատուն եղերուք, որդեակք, աստ 'ի ներքս կացէք մնացէք. վասն զի գայլ ապականիչ կամի մտանել 'ի տուն Աստուծոյ, եթէ ոչ Աստուած ժամանեսցէ մեզ՝ կորնչելոց եմք ամենեքեան։ Եւ նոցա լուեալ զայն՝ կացին մնացին 'ի ներքս. իսկ սուրբն առաջի դրացն նստեալ մնայր անօրինին։ Եւ եկեալ Նոմերիանոս ձեռնամուխ լինէր մտանել յեկեղեցին. իսկ սուրբ ծառայն Աստուծոյ Բաբելաս յառաջ մատուցեալ արգել զնա. Ո՛չ մտանես այսր՝ պիղծ և շաղախեալ ձեռօք։ Իսկ Նոմերիանոս բռնադատէր մտանել. և զարմացեալ ընդ համարձակութիւն առնն, միանգամ ակնածեալ ևս 'ի համբաւէն՝ որ վասն առնն լաւութեան, առժամայն լուռ եկաց, և հրամայեաց պահել զնա ամենայն զգուշութեամբ, և ինքն զայրագին դառնայր յարքունիսն։

Եւ 'ի վաղիւ անդր նստեալ յատեան, հրամայեաց ածել զնա առաջի ամենեցուն, և ասէ ցնա. Ա՛յ թշուառական այր, զի՞նչ զմտաւ ածեալ, և զի՞նչ առաջի աչաց եդեալ իշխեցեր արդելուլ զիս. և ո՞չ գիտես եթէ թագաւոր խօսի ընդ քեզ։ Գիտեն աստուածքն, զի ոչ փախչիս 'ի ձեռաց իմոյ. և տեսցուք թէ օգնէ քեզ աստուածն քո։ Բաբելաս ասաց. Ես այր տառապեալ էի, այլ Աստուած կամեցաւ առնել զիս հովիւ ժողովրդեան իւրոյ. վասն որոյ տեսեալ իմ եթէ գայլ ապականիչ մտանէ 'ի հօտն Քրիստոսի, փութացայ ոչ առնել անտես, զի մի՛ կորուսցից 'ի հօտէն, և համար տաց Աստուծոյ։ Նոմերիանոս ասաց. Եւ արդ՝ գայլ համարեցար զիս և ոչ թագաւոր։ Բաբելաս ասաց. Ըստ ներելոյն Աստուծոյ ես դու թագաւոր և ըստ մերոց մեղացն, զի գտնեայ այնպէս խրատեալ դարձցուք առ նա. այլ ես զքեզ ճշմարիտ թագաւոր ոչ ասեմ։ վասն զի ոչ գիտես զայն որ ետ քեզ զպատիւդ զայդ. զի թէ գիտէիր՝ նմա միայն երկիր պագանէիր, և զնա միայն պաշտէիր և ոչ զարարածս նորա։ Արդ՝ այսպիսի գործովք բարկացուցանես զարարիչն քո՝ որ ած 'ի չգոյութենէ 'ի գոյ, և ետ քեզ պատիւ զի փառաւորեսցես զնա։ Ասեմ քեզ իրս զոր ամենեքեան գիտեն. եթէ ոք 'ի քոց պաշտօնէից փախուցեալ 'ի քէն երթայր առ այլազգի թագաւոր, ո՞չ ցանուիր արդեօք. այդպէս ա՛ծ զմըտաւ և վասն Աստուծոյ. արարիչն երկնի և երկրի նախանձեալ 'ի վերայ այսպիսի իրաց։ Քանզի և Իսրայէլ յորժամ դառնացոյց զԱստուած, ասաց ցնոսա մարգարէին. Դուք նախանձեցուցէք զիս չաստուածովք, և ես նախանձեցուցից զձեզ ազգաւ, և ազգաւ անմըտաւ զայրացուցից զձեզ։ Արդ՝ և դու բարկացուսցես զԱստուած, և նա վաղվաղակի շորթէ 'ի քէն զթագաւորութիւնդ քո, և տայ այլում՝ որում ոչ կամիս։ Զի գիտասցես եթէ բարւոք է զԱստուած խոստովանել և ոչ զարարածս նորա աստուածացուցանել և երկիր պագանել նոցա. զի գրեալ է. Տեառն Աստուծոյ քում երկիր պագցես, և զնա միայն պաշտեսցես։

Նոմերիանոս ասաց. Աղճատիս թշնամանելովդ. և արդ ո՞չ թուի քեզ եթէ արարածքս այս մեծին Աստուծոյ են, և կամ թէ ո՞չ տեսանես զաղդմունս նոցա, և

զյառաջադիմութիւն՝ զոր առնէն. այլ ես կամիմ գիտել թէ զո՞ր ազգ ասէ գիրն անմիտ. վասն որոյ եթէ ասասցես՝ ախորժելով լուայց քեզ։ Բաբեղաս ասաց. Աստուած զմարդն անմեղ հաստատեաց. իսկ սատանայ անկեալ յերկնից 'ի վերուստ, և փոխեալ 'ի փառացն՝ զոր ստացեալ ունէր յԱստուծոյ, և նախանձեալ ընդ ազգի մարդկան՝ յափշտակեաց զնախնիսն մեր 'ի խորհրդոց իւրոց չարեաց, և այնպէս եղաք անմիտք։ Իսկ Միածին որդին Աստուծոյ Ճշմարիտն Աստուած՝ երկայնամիտ եղեալ 'ի վերայ այնչափ կռապաշտութեանց, և տեսեալ 'ի կորստեան զստեղծուածն իւր՝ երևեցաւ մեզ, և ողորմեալ կորզեաց 'ի մոլորութենէն. և այսուհետև ոչ ևս եմք անմիտ, վասըն զի գիտեմք զԱստուած, մանաւանդ զի գիտացաք 'ի նմանէ. քանզի չիք ոք յառաջագէտ՝ բայց միայն Աստուած։ Այլ այդ ամենայն զոր ասէ՞ք՝ առասպելք են և իմաստք բանաստեղծաց. անուամբ միայն անուանին աստուածք և ոչ գոյութեամբ. քանզի թէ չէր արուեստ առ մարդկան՝ աստուածս ոչ ունէիք։ Այդ եթէ կամիս լսել ինձ և փախուցեալ 'ի մոլորութենէդ՝ լինիս իմաստուն, և ընդունի զքեզ Աստուած. ապա եթէ ոչ կամիս՝ կաս և մնաս 'ի դմին անմտութեան։ Նոմերիանոս ասաց. Ձեր գիրքն առասպելք են, այլ մերն իրք և խորհուրդք, և զՃշմարտութեան օրինակ յինքեան ունին. զի աստուածեղէն զօրութիւն ինն է 'ի նոսա։ Վասն որոյ հրամայեմ քեզ զոհել նոցա. և զայդ գիտեա, եթէ ոչ լուիցես՝ անպատիժս ոչ լինիցիս. քանզի ոչ լաւ ես դու քան զայնոսիկ՝ որ յառաջ քան զքեզ յայդ եկին, և պատուի մեծի արժանի եղեն։

Բաբեղաս ասաց. Ոչք պարտեցանն՝ իբրև զմարդիկ պարտեցան. այլ զիս ոչ կարես խաբել, և ոչ եթէ զարքայութիւնն երկնից ինձ խոստանաս, յորմէ օտարացուցանել զիս կամիս, որում դու ոչ ես արժանի՝ վասն զի ոչ կամիս, այլ զտանջանս ունիս ժառանգել. քանզի պահանջէ 'ի քէն Աստուած զհոգիս մարդկան, զոր դու կորուսեր։ Նոմերիանոս ասաց. Զի՞նչ է Աստուած. զդոյն անուանդ իսկ ասա ինձ, զի՞նչ մեկնի։ Բաբեղաս ասաց. ԶԱստուծոյ մեծութիւնն ոչ գիտես,

թէ և թեւոք թռանիցիս. զԱստուծոյ անունն մի՛ խրն-
դրեր, զի ոչ գտանես. քանզի ամենայն անուն անուա-
նեալ՝ 'ի լաւէ իմեքէ անուանի. զի ոմն կոչիցէ և ոմն
լուիցէ. այլ ամենայն՝ որ կոչիցէ զԱստուած՝ Աստուած,
ոչ զանուն Աստուծոյ, այլ զփառն Աստուծոյ ասէ.
արդ՝ մի՛ ինչ խնդրեր որ Աստուծոյ չէ։ Աստուած ՀԱ-
նապարհ իմաստութեան է, առանց հասանելոյ է. Աս-
տուած՝ որ զամենայն ինչ արար վասն մարդկան։ Նո-
մերիանոս ասաց. Ձ՞ինչ է մարդ։ Բաբելաս ասաց.
Ընդունիչ կենաց, ըմբռչինիչ եղելոց։ Նոմերիանոս
ասաց. Աստուածովքն, զի 'ի կարգի ետուր զպատաս-
խանիսդ և կարի իմաստութեամբ, որպէս համբաւէր
զքէն. այլ մի միայն պակաս է 'ի քէն, գիտութիւն աս-
տուածոցն, քանզի կարէիր բարի այր լինել։

Բաբելաս ասաց. Անզգամ և ամպարիշտ և ամ-
բարհաւաճ բռնաւոր, պատիւդ որ 'ի քէն է՝ այդ թըշ-
նամանք են ինձ, և գովութիւնդ քո անարգանք ինձ
են։ Քանզի ես լի եմ ամենայն բարութեամբ, վասն
զի գիտեմ զԱստուածն իմ; և քարանց երկիր ոչ պա-
գանեմ։ Նոմերիանոս ասաց. Այլ անուր արկանեմ
'ի պարանոց քո՝ զի ոչ համբերեմ քեզ, և կապանս
յոտսդ իբրև զչար ծառայի և թշնամանողի զտէր իւր։
Բաբելաս ասաց. Ես զԱստուած ունիմ ինձ իշխան և
թագաւոր, տեարս և եղբարս զերկիւղածս Աստու-
ծոյ. արդ՝ հաւատա դու յԱստուած և համբուրեմ
զոտս քո. քանզի պատիւ է ինձ այդ զոր դուդ հման-
ելիս թշնամանս առնել։ Այլ և զայս չարչարեալ՝ չև
եւս եմ պիտանի ծառայ Աստուծոյ, այլ անպիտան.
քանզի երանելիք են՝ որ վասն Աստուծոյ չարչարին։
Նոմերիանոս ասաց ցԲիւկտորինոս դուքս. Կամիմ ըզ-
Բաբելաս զվարդապետն անզգամաց խրատել քև, և
անուր 'ի պարանոց նորա հրամայեմ արկանել, նոյն-
պէս և կապանս 'ի յոտսն, 'ի թշնամանս նորա. քանզի
ոչ եթէ սակաւ ինչ լուտացաւ մեզ։ Բիւկտորինոս
դուքսն ասաց. Քոյով քաջութեամբդ երդուեալ, 'ի
վաղուց հետէ կամեցայ հասուցանել յերկիւղ քո
վասն առնդ այդորիկ ամբարշտի. զի անօրէն և նոր
օրէնս իմն ուսուցանէ, և բազում աշխատութիւն հա-
սուցանէ մեզ ստունգանելով հրամանաց մերոց։ Նո-

մերիանոս ասաց. Դու առ ժամն զՀրամայեալդ ձեզ արա անհաւանիդ Բաբելասայ, և ես յետ այսորիկ առ սակաւ սակաւ զազգդ զայդ«սիկ ջնջեմ։

Իսկ դուքն արկ զանուրն 'ի պարանոց նորա և յոտսն, և հրամայեաց արտաքս հանել, զի լիցի տեսիլ ամենեցուն։ Բաբելաս ասաց. Գոհանամ զԱստուծոյ իմոյ, որ յայս պատիւ հասոյց զիս խոստովանութեամբս՝ որ 'ի նա. այլ քեզ և թագաւորին քում շնորհ ոչ ունիմ։ Եւ յետ այսորիկ Նոմերիանոս ասաց. Կոչեցէք զԲաբելաս վարդապետդ տղայոց, որ անզգամութեամբ վարին յամենայն ժամ։ Եւ եկեալ Բաբելաս՝ ասաց. Վարդապետ եմ տղայոց՝ որ յիրս իրս տղայանման մտօք, և յիրս իրս իմաստութեամբ պատահեն այնոցիկ՝ որ թիւրել կամին զՀշմարտութիւնն. այլ անզգամացդ ձեզ և նմանեացդ ձեզ՝ չեմ վարդապետ։ Նոմերիանոս ասաց. Աստուածովքն՝ զի վայելէ քեզ անուրդ և կապանքդ որ յոտսդ է։ Բաբելաս ասաց. Դու անզգամութեամբ շարժեալ խաղ առնես, այլ իմ երդուեալ Որդւոյն Աստուծոյ, այնչափ վայել է ինձ՝ որչափ և ոչ քեզ թագդ որ 'ի գլուխդ կայ։ Նոմերիանոս ասաց. Ա՛յ թշուառական, զոհեա և բուժեաց 'ի տանջանացդ՝ որ պահին քեզ. և մի պարծիր մանկտուով՝ զոր ուսուցանես։ Բաբելաս ասաց. Զի վարդապետ եմ տղայոց՝ և ահա ասացի քեզ. այլ կամիս տեսանել թէ զինչ է մնունդ տղայոց և վարդապետութիւն աստուածեղէն, ունիմ ընդ ինև տղայս երիս ըստ Աստուծոյ մնեալ, հրամայեա ածել զնոսա և տեսանես զքաջութիւն նոցա, եթէ Աստուած ընդ նոսա է. թերևս իմով փորձիւս ոչ հաւատացեր, այլ իբրև ընդ աղճատեալ և ընդ շատախօս հայիս ընդ իս։

Եւ Նոմերիանոս հրամայեաց ածել զտղայսն՝ զորոց ասաց Բաբելաս։ Եւ իբրև մտին, եհարց ցնոսա եթէ ունի՞ն մայր։ Եւ նոքա ասեն. Այո. այլ առաւել քան զմայրն մեր ունիմք զտէրն Բաբելաս զմնուցիչն մեր։ Հրամայեաց և զմայր նոցա ածել. և իբրև եմուտ, եհարց զնա, եթէ՝ Ի՞նչ անուն է քո։ Եւ նա ասէ. Թէոդուլէ։ Նոմերիանոս ասաց. Որդիք քո են դոքա։ Եւ նա ասէ. Այո, ես ծնայ զդոսա և ընծայեցուցի 'ի ձեռն հովուին իմոյ Բաբելայ, և նա ուսոյց նոցա աստուած-

պաշտուԹիւն։ Նոմերիանոս ասաց. Ապտակեցէք զԵ-
բեսս դորա սաստկագոյն առաջի մանկանց իւրոց, և
ասացէք դմա մի՛ յանդուգն բարբառիր։ Իսկ տղայքն
տեսեալ զմայրն իւրեանց 'ի տանջանս, միաբան աղա-
ղակեցին և ասեն. Բռնաւոր, մի՛ հարկաներ զմայրդ
մեր 'ի զուր, քանզի աղատ է, և բարիոք ասաց՝ զոր
ասացն, զի դա ծնաւ զմեզ, այլ մնոյց տէրն մեր Բա-
բելաս. ԹԷ և դարձեալ ցասչիս, տէր մեր է, քանզի
աստուածպաշտուԹիւն ուսուցանէ։ Եւ ցասուցեալ
Նոմերիանոս՝ հրամայեաց զտղայսն առնել ըստ ան-
ձին. և առաջնումն հրամայեաց փոկովն երկոտասան,
երկրորդին ինն և երրորդին եօԹն։ Իսկ մանկունքն
իբրև ընդ մի բերան ասացին. Օրհնեալ է Աստուած,
զի վասն նորա չարչարիմք։

Նոմերիանոս ասաց ցմայրն նոցա. Առաջին որդիդ քո
քանի՞ ամաց է։ Եւ նա ասէ. Երկոտասան։ Եւ երկրորդն
քանո՞ւ։ Եւ նա ասէ. Ինն։ Եւ երրորդն քանո՞ւ։ Եւ նա
ասէ. ԵօԹն։ Եւ յետ այսորիկ աղաղակեաց. Մի է Աս-
տուած քրիստոնէից. զի ըստ քանիսնուԹեան որդւոց
իմոց այնպէս տանջեցան վասն նորա, որ կատարէ զնո-
սա և պսակէ։

Նոմերիանոս հրամայեաց արտաքս հանել զմայրն
նոցա, և 'ի ներքս տանել զԲաբելաս, և ասէ ցնա. Վար-
դապետ անզգամաց և ուսուցիչ տղայոց, փորձեցի անդ
զոր պարծէիր 'ի ձեռն մանկտւոյն. սուտ դտար, քան-
զի եկեալ զառաջեաւ մանկտին խոստացան զոհել աս-
տուածոցն։ Բաբելաս ասաց. Զար՝ ստեցեր 'ի քում
գլուխդ, քանզի որդի ես հօրն քո սատանայի, որ
հանապազ ստէ, և ոչ կարէք յաղԹել ումեք, ոչ դու և
ոչ հայրն քո սատանայ, եԹէ ոչ ստէք։

Նոմերիանոս ասաց. Ասկլեպաւ, զի քամահեմ ըզ-
բանս քո և Թշնամանս, և տանջանօք սակաւ սակաւ
վատնեմ զքեզ՝ եԹէ ոչ հաւանեսցիս և զոհեսցես.
յետ այնր և զգլուխդ ևս հրամայեմ հատանել։ Բա-
բելաս ասաց ծիծաղելով. Արդ և ծաղու արժանի էք։
Նոմերիանոս ասաց. ԱղՀատիս. յորո՞ւմ եմք ծաղու
արժանի։ Բաբելաս ասաց. ԵԹէ լուիցեն այլ աս-
տուածքն քո եԹէ զԱսկլեպիս միայն անուանեցեր՝
ցասչել ունին քեզ, և մանաւանդ ԹէՏալ առողջու-

թիւն։ Արդարև ես ամաչեմ 'ի վերայ անզգամու-
թեանդ ձերոյ՝ զի ոչ կարէք իմանալ, այլ երկիր պա-
գանէք՝ որում ոչ մանկունք երկիր պագին կամ հա-
ւանեցան։ Նոմերիանոս ասաց. Եթէ լուեալ Քրիստո-
սին քո բարկասցի՝ զի Աստուած միայն անուանես,
զի՞նչ առնես։ Բաբելաս ասաց. Ահա չես արժանի լսե-
լոյ զգիտութիւն քրիստոնէից. բայց սակայն վասն ամ-
բոխիս որ շուրջս կան՝ ասեմ, զի մի՛ քո անօրէնու-
թեամբդ և դոքա զրկիցին 'ի գիտութենէ։ Յորժամ
քրիստոնեայք զՈրդի անուանեն, խոստովանին և զՀայր,
և յորժամ զՀայր անուանեն՝ խոստովանին և զՈրդի.
քանզի ոչ են որոշեալ, ոչ Հայր՝ յՈրդւոյ, և ոչ Որդի
'ի Հօրէ. և չէ համեմատութիւն Աստուծոյ ընդ դևս,
որում երկիր պագանես. և գրեալ է. Զի՞նչ հաղոր-
դութիւն է լուսոյ ընդ խաւարի։

Իսկ մանկունքն էին կախեալ ընդ Բաբելայ զայն-
չափ ժամն։ Նոմերիանոս ասաց, տանել զԲաբելաս
մինչդեռ էր զգեցեալ զկապանսն և զանուրն 'ի պա-
րանոցին. և վասն զի էին ծանր և ստուար՝ 'ի յերկար
կախելն նորա վիրաւորէին զնա։ Իսկ որ շուրջն կային
զնովաւ և էին ծանօթք նորա, չարչարակից լինելով
նմա ասէին ցնա. Խոստովանեա զՈՀել և բուժիլ 'ի
տանջանաց։ Բաբելաս ասաց. Ոչ այնչափ սգամ 'ի վե-
րայ անզգամիդ որ յաթոռ նստի, որչափ 'ի վերայ ձեր՝
որ դմայդ հաւանիք, որ և կորոյս զկեանս ձեր. այլ
դմա չհաւանիմ, և ձեզ հաւանիմ արդեօք. քա՛ւ լիցի.
տանջանք ձեր կեանք են, քանզի նա թեթևացուցանէ
ինձ՝ վասն որոյ չարչարիմն, և ոչ զգամ ամենևին։
Հրամայեաց այնուհետև տանջել զնա թագաւորն։ Իսկ
մանկունքն աղաղակէին մինչդեռ 'ի կախաղանին էր
երանելին Բաբելաս, և ասեն. Բռնաւոր և ամբարիշտ,
հիմ այդպէս զտէրդ մեր և զբարիոք հովիւ՝ առանց
մեսաս իրիք տանջես. վասն զի զամենեցուն տէրն
պաշտէ. այլ զայդ առնելով պատուի արժանի է մա-
նաւանդ և ոչ տանջանաց։ Դորին փրկութեանդ եր-
դուեալ, զի ոչ փախչիցես 'ի ձեռացն Աստուծոյ. այլ
հրոյ գեհենոյն մատնելոց ես։ Եւ ցասուցեալ Նոմե-
րիանոս հրամայեաց զնոսա տանջել։ Իսկ մանկունքն
իբրև միով բերանով ասացին. Ո՞չ ամաչես, ամպարիշտ,

'ի մանկանց յաղթահարիլ առաջի այդչափ բազմութեանդ, վասն զի դու առաւել տանջիս քան զմեզ. երդուեալ յայն որ ընդ հուպս կարող է հատուցանել քեզ, զի ոչ զդամք տանջանաց քոց։ Եւ թագաւորն հրամայեաց իջուցանել զԲաբելաս, և թաքուցանել 'ի տան, զի առանձինն հարցցէ զմանկունսն։ Եւ սկսաւ ասել ցնոսա. Որդեակք, հաւանեցարուք ինձ, և բազում պատիւս շնորհեմ ձեզ, զոր այլ ոք ոչ կարէ շնորհել ձեզ։ Իսկ նոքա իբրև միով ձայնիւ ասացին. Խորամանգ և նենգաւոր, մի՛ խորհիր մեզ մահ, քանզի ամենայն շնորհք քո լի են պատուով դեհենին. զի յորմէ հետէ ետ մեզ վարդապետն մեր զտէրունական կնիքն՝ կատարեալք եղաք, և ընկեցաք 'ի մէնջ զխորհուրդս չարութեան, և հաստատուն կերակրոյն հաղորդեալք, պատրաստ եմք 'ի մեռանել վասն անուանն Քրիստոսի. դու կարծէիր, թէ յորժամ մեկուսացուցանես 'ի մէնջ զվարդապետն մեր՝ յաղթես մեզ։ Յոր դին Աստուծոյ երդուեալ՝ որ կարող է հովուին մերոյ օգնել՝ ուր և է, և զմեզ բուժել 'ի պիղծ ձեռաց քոց. և զժամանակս զայս փոխել ընդ հուպս, թէ ոչ ուրացուք և ոչ յամօթ արասցուք զհովիւն մեր, որ աղօթս առնէ վասն հօտին իւրոյ։ Իսկ երանելին Բաբելաս լսեր զայն 'ի տանն ուր արգելեալն էր։ Նոմերիանոս ասաց. Ածցի զառաջեաւ Բաբելաս. և իբրև եկն ասէ ցնա. Մանկունքս այս որդիք են քո։ Բաբելաս ասաց. Ըստ Աստուծոյ արդարև որդիք իմ են. այլ ես վասն Աստուծոյն իմոյ յորմէ ծնայ՝ զկին ոչ գիտեմ։ Նոմերիանոս ասաց. Եւ զիա՞րդ նման են քեզ ամենևին։ Բաբելաս ասաց. Աղօթիւք խնդրեմ զի ամենևին նմանեսցին ինձ, բայց միայն 'ի մեղացն իմոց։ Նոմերիանոս ասաց. Ասացի քեզ, զերծանել 'ի տանջանացդ՝ որով հնազանդեալ ես չարչարիլ՝ և ոչ հաւանեցար ինձ, և աղաչեմ զքեզ հաճեա զմիտս քո վասն առաջին տանջանացն. միայն յայսմ հետէ շատեա զտանջանսդ, հաւանեցո զմանկունսդ, զի մի՛ այդպէս տղայք եղցեն 'ի քաղցր կենացս։ Իսկ Բաբելայ զայրացեալ ասաց. Ո՛վ անսիտ քան զամենայն մարդ և ամբարիշտ բռնաւոր. 'ի մե՞զ պարապեցեր՝ թողեալ զհոգ պատերազմաց, և թէ որպէս արժան է պատահել այլազգեաց. հաւա-

տամ Աստուծոյ հօր Քրիստոսի, թէ որպէս հերքեցար 'ի մէնջ, և 'ի թշնամեաց քոց յաղթահարեսցիս։ Այլ զխոստմունս քո տուր որդւոց քոց, և զպարգևս քո կալ քեզէն. քանզի և ոչ այնչափ կարես շնորհել մեզ, որչափ փութաս զրկել զմեզ։

Եւ բարկացեալ Թադաւորն ետ նմա վճիռ մահու և երից մանկանցն։ Իսկ երանելոյն Բաբելայ առեալ զվճիռն հանդերձ երեք մանկամբքն, երդմնեցոյց ըզմօտակայսն՝ և ասէ. Երդմնեցուցանեմ զձեզ Աստուծովն մերով՝ որ զամենայն ինչ տեսանէ, անուրս հանդերձ կապանօքս որ յոտս, դիք զիս 'ի վկայութիւն բռնաւորին, որ յաւիտեանս տանջել ունի յանվախճան հուրն։ Եւ մինչդեռ ելանէր ընդ դուռնն, սաղմոսէր այսպէս. Փրկեցեր զմեզ 'ի թշնամեաց մերոց, և զատելիս մեր յամօթ արարեր. ընդ նմա սաղմոսէին և մանկունքն։ Իսկ երանելին Բաբելաս աղաչէր զդահիճսն, որում հանդերձեալ էին գլխատել, զի նախ զմանկունսն սպանցեն, և ապա զնա։ Եւ կացուցեալ զնոսա յաջմէ և յահեկէ իւրմէ, ասաց. Ահաւասիկ ես և մանկունք իմ, զոր ետ ինձ Աստուած։ Եւ իբրև ետես զնոսա վախճանեալ, ասէ. Օրհնեալ Աստուած քրիստոնէից, որ արարեր ըստ բազում ողորմութեան քում։ զի արդարև 'ի բերանոյ մանկանց տղայոց ստնդիւեցաց հաստատեցեր զօրհնութիւն քո։ Այնպէս նորա ևս գլխատեալ, թաղեցաւ հանդերձ երեք մանկամբքն և շղթայիւքն։

Աստուած որ տայ յուսացելոց իւրոց զօրութիւն, և փառաւորէ զփառաւորիչս իւր, նմա փառք և զօրութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Մեծին Բաբելայ և ութսուն և չորից աշակերտացն։

Մաքսիմիանոս թագաւոր մտեալ 'ի քաղաքն Նիկոմիդեայ՝ զոհեաց Ապողոնի. և իբրև կատարեաց ըզգործ պղծութեանն՝ ել արտաքս 'ի տաճարէ կռոցն։ Եւ յելանելն նորա մատեան առ նա Արտեմիոս և Փիլիպիանոս քուրմքն Ապողոնի, և ասեն. Տէր ինքնակալ թագաւոր. դու բազում յօժարութեամբ փութաս 'ի զոհս աստուածոցն, և զբազումն զայլս ընդ քեզ ջանաս ձգել 'ի պաշտօն նոցա. յաղագս որոյ 'ի խաղաղութեան բնակէ աշխարհս մեր, միշտ և հանապազ ըզյաղթութիւն պարգևելով նոցա թագաւորութեանդ քում։ Եւ այժմ են ոմանք 'ի քաղաքիս, ոլք քրիստոնեայք կոչին, և ամբարշտութեամբն իւրեանց ոչ հընազանդին օրինաց թագաւորութեանդ ձերում։ այլ հայհոյեն զաստուածսն, և երկիր պագանեն խաչելոյ ուրումն զոր աստուած անուանեն. և ասեն, եթէ յերկինս ունի զբնակութիւն իւր, և իշխէ ամենեցուն՝ որ յերկրի իցեն. և այսպէս խաբեն զբազումն, և ոչ զոհեն աստուածոց մերոց, և ոչ պատուեն զտօնս մեր։ Բայց և հպարտանան հակառակ թագաւորութեանդ քում, և փոփոխումն աղօթեն լինել իշխանութեանդ ձերում։ Արդ՝ է աստ ծեր ոմն ժպիրհ Բաբելաս անուն նորա, որ հպարտութեամբն իւրով միշտ չարախօսէ զաստուածոց մերոց. և գրով ձեռաց իւրոց զբազում մանկունս աշակերտէ յուսումն չարաչար վարդապետութեանն իւրոյ։ Եւ պատրէ զմիտս նոցա՝ մի դնել

միտս կրօնից աստուածոցն, այլ միայն ստէպ կալ օրի-
նաց խաչելոյն, և յանուն նորա երդնուլ, և ոչ 'ի զօ-
րութիւնս դիցն։ Եւ փոխանակ Հելլենացի ուսմանցն,
որով մանկանցն վարդապետութիւնն յարդի, առաս-
պելս իմն ուսուցանէ զմանկունսն, զորս երգս սուրբս
և սաղմոսս անուանեն քրիստոնեայքն՝ մոլորութեամբն
իւրեանց. և յայսպիսի ուսումն ամենայն անզգամ
կանայք կրթեն զմանկունս իւրեանց՝ 'ի ձեռն առնն
այնորիկ. և այնչափ զօրացաւ մոլեգնութիւն ծերոյն
այնմիկ, մինչ զի և ոչ արու մանկունք միայն ընթա-
նան յուսումն նորա, այլ և աղջկունք ևս անգամ կան-
խեն 'ի վարդապետանոցն նորա։ Եւ արդ՝ դու տեր ինք-
նակալ, մի՛ տար թոյլ զօրանալ մոլորութեանն այն-
միկ. ապա թէ ոչ յանարգանս աստուածոցն և յար-
համարհութիւն թագաւորութեանդ ձեր լինիցի նա։

Զայս իբրև լուաւ թագաւորն 'ի քրմաց անտի, ՅԱՐ-
տեմիանոսէ և 'ի Փիբիանոսէ, լի եղև սրտմտութեամբ,
և առաքեաց վաղվաղակի զինուորս ըմբռնել զԲաբե-
լաս՝ հանդերձ մանկամբքն, և զամենեսեան զնոսա
արգելուլ անդէն 'ի վարդապետանոցն, և զգուշու-
թեամբ պահել, և զԲաբելաս միայն ածել առաջի
նորա։ Եւ իբրև կատարեցին զինուորքն զհրամայեալսն,
և ածաւ երանելի ծերն առաջի թագաւորին ձեռս
յետս կապեալ։ Իսկ թագաւորն իբրև սրտմտեալ նրա-
տեր առաջի դրաց տաճարին Ապողոնի, 'ի տեղւոջն՝
ուր լուաւ զառաջասացեալ զբանս 'ի քրմաց անտի։ Եւ
տեսեալ զսուրբն՝ խոժոռ դիմաք նայեցեալ ընդ նա՝
ասէ այսպէս. Դո՛ւ ես Բաբելան՝ որ արհամարհես
զզօրութիւն աստուածոցն, և ոչ զոհես նոցա. և ոչ
այս միայն, այլ և զմանկունս անմեղս յափշտակես 'ի
յանզգայ կանանց, և բարբանջանս իմն ուսուցանես
նոցա, զոր և աստուածային երգ անուանես. և ոչ յօ-
րինաց մերոց պատկառես, և ոչ 'ի սպառնալեաց զան-
գիտես, այլ նստիս 'ի հրապարակս և զողանջես զբանս
քո 'ի լսելիս այնոցիկ՝ որ զչարաչար տանջանս ածէ 'ի
'ի վերայ ընդունողացն զնոսա։ Կամ թէ ո՞չ իցէ լուեալ
քո, թէ ո՛րպէս՝ որ քոյին յիմարութեանդ տենչողք
եղեն՝ զանաչառ դատաստանս կրեցին 'ի դատաւորացն
մերոց։ Ոմանք հրոյ և ոմանք սրոյ մատնեցան, և կէսք

'ի ծոմն ընկեցան, և այլք գազանաց կերակուր եղեն, որ և ոչ գերեզմանաց արժանի եղեն դժուարաբախտ դիակունք նոցա։ Եւ արդ՝ դու զինչ ասես առ այս, ո՛վ չարագլուխ ծեր. փոփոխեսցիս 'ի յիմար կրօնիցդ քոց, և պաշտեսցես զանմահ աստուածն, և երկիր պագանիցես նոցա, և յաղագս օրոց մեզար նոցա՝ 'ի հանդարտ ներողութենէս մերմէ, հաշտեցուսցես զնոսա 'ի ձեռն զոհից, և լինիցիս բարեգործ ալեաց քոց, և 'ի հանգստեան և 'ի փափկութեան բնակեսցես։ Եւ ոչ այս միայն, այլ և 'ի դիմոսական գանձուցն որ պարգևին քեզ յառատաձիր թագաւորութենէս մերմէ, բաղում հարստութիւնս ընկալցիս. որպէս զի մի ասիցես եթէ ծեր եմ, և ոչ կարեմ ընձեռել անձին իմոյ զպէտս կենցաղոյս, և վասն այնորիկ յօժարիմ 'ի մահ. արդ զինչ ասես առ այս։ Եւ պատասխանի երանելին Բաբելաս և ասէ. Ես, ո՛վ թագաւոր, 'ի մանկութենէ իմմէ պաշտեմ զՀիմարիսն Աստուած, և նովին կրօնիւք հասի մինչև 'ի խորին ծերութիւնս այս, յորում տեսանես զիս նովին բարեպաշտութեամբ վառեալ. և արդ անցաւոր կենցաղոյս ցանկացեալ ուրացայց զՏէրն իմ և զԱստուածն, զայն՝ որ ստեղծ զիս յորովայնէ՝ ողորմութեամբն իւրով, և քարանց և փայտից 'ի ձեռաց մարդկան եղելոց և մեռելոտեաց անշնչոց երկիր պագից։ Մաքսիմիանոս ասէ. Ոչ ևս ներեցից քում զողանջանացդ՝ թշնամանելով զանմահ դիսն, այլ հրամայեմ փշրել զոսկերս քո քարամբք. զի գոնէ այսպէս իմաստնասցի խելագար ծերութիւնդ քո, եթէ այսպէս պարտ է խօսել առաջի թագաւորաց։

Եւ ետ հրաման նոյն ժամայն հարկանել զծնօտս նորա, մինչև ջաղջախեալ մանրեցաւ ոսկերք այտիցն, և հոսեր իջաներ արիւնն ընդ ծնօտսն և ընդ բերանն նորա։ Իսկ երանելի ծերն աղաղակեաց ձայնիւ մեծաւ և ասէ. Գոհանամ զքեզն Քրիստոս Աստուած իմ, զի այսպէս բարեհաճեալ յիս զօրացուցեր զծառայս քո 'ի նախկին մրցմանս յայսոսիկ, արիաբար մարտնչել ինձ 'ի հաւատոյ պատերազմիս՝ ընդդէմ անօրէն թագաւորիս. զի ահաւասիկ ամենազօրութեամբ քո՝ իբրև զձիթենի կանաչագեղ նորակերտ դալարացեալ զինի

հատանելոյն, և կամ իբրև զծաղիկս մատաղատունկս դրախտի, այնպէս համարիմ զզարկուածս քարանցս առ 'ի նորոգումն փառաց հնացեալ և ծերացեալ անդամոց մարմնոյս իմոյ. վասն զի հաւատամ նորոգ ընդունել զսա 'ի փառաւոր գալստեանդ քո։

Իսկ Մաքսիմիանոս իբրև ետես զնա զի այսպէս և 'ի տանջանսն գոհանալով կարդայր զՔրիստոս, ասէ. Ո՛վ պիղծ և յանդուգն ծեր. և դեռ ևս տակաւին զխաչեալն կարդաս մարտակից քեզ, և ոչ իմանաս զՋաղՋախումն ոսկերաց երեսաց քոց, և ոչ տեսանես զյորձանահոս կարկաՋումն արեան քո 'ի բերանոյ քումմէ. վասն որոյ և այլ բռնագոյն տանՋանս ածիս 'ի վերայ քո, զի գէթ այնու ծանիցես եԹէ այն որ 'ի քէն Աստուած ասի Քրիստոսն, ոչ կարէ օգնել այնոցիկ՝ որ 'ի Թագաւորաց դատապարտեալք լինիցին։

Եւ զայս ասացեալ՝ հրաման ետ և զշրՋանակս նորա և զԹիկունս ևս առաւել հարկանել նովին քարամբքն։ Իսկ երանելին Բաբելաս զայս ամենայն տանՋանս ընդունելով ոչ ինչ ցասչէր, այլ հեզ և անխռով ձայնիւ այսպէս սաղմոսէր. Տէր է իմ օգնական և ես ոչ երկեայց, զինչ արասցէ ինձ մարդ. Տէր է իմ օգնական, և ես տեսից զԹշնամիս իմ։ Բարի է յուսալ 'ի Տէր՝ քան յուսալ 'ի մարդիկ. բարի է յուսալ 'ի Տէր՝ քան յուսալ յիշխանս։ Մաքսիմիանոս ասէ. Ի փրկութիւն աստուածոյն երդուեալ, ոչ սուտ խօսեցան զքէն Աբտեմիոս և Փիբիանոս, եԹէ առասպելս իմն 'ի բերան առեալ, երգս սուրբս և սաղմոս անուանեալ կարդայ հնացեալն այն, որով զռամիկսն և զանզգայսն կարող է պատրել. արդ՝ աւասիկ և 'ի լսելիս մեր այսպիսի խորամանկութիւնս յառաՋ բերեալ բարբանՋէ, և զմեզ ևս պատրել կամելով նովին երգով, հեշտացուցանէ զականՋս մեր։ Եւ սրբոյն հայեցեալ 'ի նա ասէ. Բարւոք ասէ աստուածային գիրն, եԹէ յիմարն զյիմարութիւն խօսի, և սիրտ նորա զնանիրս իմասցի. և էր վասն ոչ դու իմանաս, ո՛վ Մաքսիմիանոս, եԹէ մեծ և հզօր է Աստուածն քրիստոնէից, և յոչինչ համարեալ են ամենայն աստուածք հեԹանոսաց, որոց դու սպասաւոր լինիս 'ի կործանումն Թագաւորութեանդ քում։ վասն զի ամենայն կուռք

հեթանոսաց, ասէ, դևք են, այլ Տէր մեր զերկինս արար։

Յայնժամ Մաքսիմիանոս թագաւորն բարկացեալ, ետ զնա 'ի ձեռս Պրիսկեղայ դատաւորին, և հրամայեաց դնել անուր ծանր 'ի պարանոց նորա, և զոտն նորա պնդել 'ի փայտի. և իբրև կատարեաց դատաւորն զասացեալսն, և տարան զերանելին Բաբելաս 'ի բանդ, ետ հրաման թագաւորն ածել զամենայն մանկունսն զաշակերտեալսն 'ի նմանէ առաջի իւր։ Եւ վաղվաղակի կատարեցին սպասաւորքն զհրամայեալսն. և իբրև զգառնամոլս զամենեսեան ջոլորեալ կացուցին առաջի թագաւորին, որք էին թուով ութսուն և չորս, ընդ արու և ընդ էգ. որոց անուանք են այսոքիկ. Թէոփիլոս, Պետրոս, Փիլիպպոս, Սերապիոն, Սեւերիոս, Յոլիանոս, Աղեքսանդրոս, Ագաթոն, Մովիտոս, Սատգիպնէոս, Տիրանէոս, Կիւրիա, Սոփի, Եւսեբիա, Թէոդոտի, Փափստուհի, Արտեմիոս, Մալիկիս, Մաքսիմոս, Ամոնիոս, Սերապիսոս, Նէոփիտոս, Տորիոն, Պիկիլիանոս, Կինաբիոս, Բիտոն, Դոնատոս, Բիքտորիոս, Դուլկիտիոս, Դորոթէոս, Եւտիքիոս, Փիլիպպոս, Զենոբիոս, Եւգրաբիոս, Անտոնիոս, Քրիստաբիոս, Լիբիոս, Անտիգոնոս, Գենեթլիոս, Թէոդուլէ, Աքոլաստիգոս, Թէոփիլուհի, Պատրիկուհի, Թեռիոս, Թէոդորա, Փլորենդիոս, Գլիգերիոս, Գելսիոս, Պատրիկիոս, Ստեփանոս, Բամբիանոս, Ուլլանլենդինոս, Թէոդորոս, Եւտիքոս, Եփսեբիոս, Եւագրիոս, Սեւերիանոս, Ղևոնդիոս, Մարկիանոս, Փոտիոս, Փիլիկիրոս, Դիոնիսուհի, Սիրմելիա, Դիոմիտիոս, Նէաւփիտոս, Իպատիոս, Ակակիոս, Զաւտիկոս, Տրիփենա, Փիմինոս, Դոմնա, Պանքարիոս, Մարկոս, Արքելիոս, Իրինոս, Հուպելիոս, Ասկանիոս, Ելեւթերիոս, Այետիոս, Ամվլիոս, Դաւնադոս, Անտիգոնոն, Իպատիոն, Փերմոն։

Արդ սոքա ամենեքեան իբրև ածան առաջի թագաւորին, գոլով զկնի նոցա և մարցն իւրեանց և արտասուք քաջալերէին զնոսա, զի հաստատուն կացցեն 'ի հաւատս վարդապետին իւրեանց. և իբրև ետես զնոսա Մաքսիմիանոս, ժպտեցաւ ընդդէմ նոցա, և խորամանկութեամբ իւրով քաղցր ձայնիւ սկսաւ ա-

սել ցնոսա այսպէս. Որդեակք իմ, լուարուք ինձ, որ-
պէս զի կեցջիք և 'ի բարութեան վայելեսջիք. վասն
զի թէպէտ և վարդապետն ձեր որ ուսուցանէրն ըզ-
ձեզ՝ անագան և հազիւ ծանեաւ զՀմարտութիւն աս-
տուածոյն, սակայն յետոյ երկիր եպագ նոցա, որպէս
և ամենայն մարդիկ. այլ վասն զի իմացեալ իմ իբ-
րու զի հարկանէր զձեզ և տանջէր յանդգնաբար,
հանապազ պահանջելով 'ի ձէնջ զհամարս նանիր ուս-
մանց գրոցն քրիստոնէից, և յաղագս այնորիկ բար-
կացեալ իմ 'ի վերայ նորա, արկի զնա 'ի բանդ, զի
մի՛ այլ ևս հանդերձեսցի հարկանել զձեզ։ Արդ մը-
տեալ 'ի տաճար աստուածոյն՝ երկիր պագէք նոցա,
և անցեալ գնասջիք խաղաղութեամբ առ մարս ձեր.
վասն զի տեսանէք թէ ո՛րպէս ողորմագինս կականին
կողկողելով զկնի ձեր։ Եւ առ այս ամենայն ողբա-
կան բանս Թագաւորին՝ ոչ ետուն պատասխանի սուրբ
մանկունքն. բայց միայն իւրաքանչիւր ոք 'ի նոցանէ
սկսաւ ասել, թէ՝ Ես քրիստոնեայ եմ։

Յայնժամ բարկացեալ Թագաւորն հրամայեաց 'ի
բաց տանել զնոսա յերեսաց իւրոց։ Եւ ապա ընտրեալ
'ի նոցանէ տասն մանուկ, որ թուէր թէ քան զայլսն
համեստագոյնք իցեն, առ 'ի կարող լինելոյ նոցա առ
հարցմունս նորա տալ պատասխանի, զորս և ածեալ
կացուցին առաջի նորա։ Պատասխանի ետ Մաքսիմիա-
նոս և ասէ ցնոսա. Գիտէ՞ք, որդեակք, եթէ վասն ո-
րոյ իրաց ընտրեցի զձեզ յամենայն ընկերաց ձերոց՝
իբրև զմանկունս իմաստունս, և կացուցի առաջի իմ։
արդ մի՛ նմանէք ապիրատութեան վարդապետին ձե-
րոյ, այլ մատուցեալ երկիր պագէք աստուածոցն, և
բաղում պարգևս ընկալջիք յինէն, գանձս ոսկւոյ և
արծաթոյ, և ուրախութեամբ մեծաւ արձակեսջիք
յինէն 'ի տունս ձեր. ապա թէ ոչ հնազանդիք ինձ,
հրամայեմ հատանել զգլուխս ձեր, և արկանել շանց
զդիակունս ձեր։ Պատասխանի ետ մի ոմն 'ի նոցանէ
որում անուն էր Ամովս, և ասէ. Մեք քրիստոնեայ
եմք, և դիւաց պղծոց երկիր ոչ պագանեմք. զոր ինչ
կամիս արա վաղվաղակի, զի աւասիկ պատրաստ եմք
ըստ օրինակի վարդապետին մերոյ։ Մաքսիմիանոս ա-
սէ. Ուէք զդա և հարէք զթիկունս և զկողս դորա,

որպէս զի ուսցի այրապէս և ոչ տղայաբար խօսել առաջի Թագաւորի։ Եւ իբրև տանջեցաւ նա այսպէս, յառաջ մատուցին զմիւսն՝ որում անուն էր Դաւնադոս։ Մաքսիմիանոս ասէ. Տեսէր զաշակերտակիցն քո, եթէ ո՞րպէս ոչ հաւանեալ ինձ՝ յանհնարին տանջանս մատնեցաւ. արդ դու մի՛ նմանիր նորա անմտութեանն, այլ հնազանդեա ինձ և պաշտեա զաստուածսն, և անցեալ գնասջիր առ ծնողսն քո խաղաղութեամբ. վասն զի գիտես թէ ո՞րպէս այժմ տըրտմեալ լինին նոքա վասն յամենայնի քո։ Եւ պատասխանի Դաւնադոս և ասէ. Ես քրիստոնեայ եմ, որպէս և Ամովսիոս աշակերտակիցն իմ, և ոչ խաբեցայց 'ի փաղաքշանացդ քոց, և ոչ երկեայց 'ի սպառնալեացդ քոց, և ոչ ուրացայց զԱստուած իմ և զՏէրն։ Յայնժամ լի եղև բարկութեամբ Մաքսիմիանոս, և գոյն երեսաց նորա շրջեցաւ, և ասէ. Առէք և զդա և ըստ առաջնոյն օրինակի կրկնապատիկ տանջեցէք, վասն զի սա ևս ըմբռնեալ է 'ի պատրանս ծերոյն այնորիկ։ Եւ իբրև տանջեցին զսուրբ մանուկն սպասաւորք Թագաւորին անողորմ, և հոսէր ինքնէր արիւն նորա յերկիր, և նա ոչինչ տայր պատասխանի առ բռնաւորն, այլ միայն աղաղակէր և ասէր. Ես քրիստոնեայ եմ։ Եւ հրամայեաց Թագաւորն ընկենուլ զնա յատակս տանն։ Եւ ետ ածել և զայլ ևս ընկերս նորա, և ասէ ցնոսա. Ո՛րպէս կամիք, հաւանե՞լ ինձ, և պարգևօք և ուրախութեամբ մեծաւ երթայք 'ի տունս ձեր, եթէ անհաւան գտանել և զայդպիսի տանջանս կրել որպէս տեսանէք զընկերս ձեր։ Իսկ մանկունքն իբրև լուան զբանս նորա՝ 'ի բաց ընկեցեալ զձորձս իւրեանց, միաբան աղաղակեցին և ասեն. Ա՛սասիկ պատրաստ եմք առ տանջանս քո, որպէս սուրբ եղբարքս մեր, որք անկեալ կան 'ի յատակս տանս առաջի մեր, Ամովսիոս և Դաւնադոս. և ոչ երբէք դադարեմք 'ի կոչելոյ զանձինս մեր քրիստոնեայս, և խոստովանելոյ զԱստուածն մեր, որպէս ուսոյց մեզ երանելի վարդապետն մեր։

Յայնժամ յարեաւ վաղվաղակի Մաքսիմիանոս, և գնաց բարկութեամբ մեծաւ 'ի պալատ իւր, և ետ հրաման Պրիսկիլլիանոսի դատաւորի արկանել միանգամայն զամենայն մանկունսն 'ի բանդ, և աւուրս ինչ

անսուաղ պահել. զի Թերևս, ասէ, 'ի սովոյ նքողեալ՝ ուրացցին զքրատ վարդապետին իւրեանց. ապա Թէ ոչ՝ հանդերձ վարդապետաւ իւրեանց ընկալցին սրով զվճիռ մահու։ Իսկ դատաւորին ընկալեալ զայսպիսի հրաման՝ ետ ածել առաջի իւր զերանելին Բաբելաս հանդերձ ուԹսուն և չորս մանկամՔքն և ասէ ցնոսա. Զի՞նչ կամիս ո՛վ Բաբելաս. զգաստացա՞ր 'ի փոխելու Թենէ յիմարուԹեանդ առ 'ի զոհել աստուածոցն և կեալ, եԹէ արդ ևս 'ի նմին յամառուԹեան կայցես, և չարաչար կորիցես դու հանդերձ աշակերտօքդ քո, որպէս և ինքնակալն հրամայեաց։ Ետ պատասխանի երանելին և ասէ. Պարտ էր իմանալ քեզ, ո՛վ դատաւոր, զհաստատուԹիւն հաւատոցն մեր յառաջին մրցարանէ անտի, եԹէ զի՛արդ զոր ոչ չարաչար ջաղջախումն ոսկերաց ծնօտիցս իմոց ուծացոյց զիս 'ի յԱստուծոյն իմոյ, արդ այլով իւիք տանջանօք հաւանեցուսցես զիս ուրանալ 'ի նմանէ. արդ արա վաղվաղակի որպէս հրամայեցար յինքնակալէն քումմէ. վասն զի ես պատրաստ իմ յամենայն տանջանս մտանել վասն բարեպաշտուԹեան՝ զոր ընկալայ 'ի մանկուԹենէ իմմէ, և պահեցի մինչև 'ի խորին ծերուԹիւնս յայս՝ յորում տեսանես զիս եղեալ։ Իսկ դատաւորն իբրև լուաւ զայս ասէ. Ես ակն ունէի Թերևս ողորմեսցիս դու ինքնին Թշուառական ալեաց քոց, և այդոցիկ այդքանեաց մանկանցդ՝ որ վասն քո հանդերձեալ են կորընչել. դու արդ ևս տակաւին 'ի նմին յամառուԹեան կաս, արդ ես աւասիկ կակղեցիս զյանդգնուԹիւնդ քո։ Եւ ետ հրաման պարզել ձգել զնա 'ի չորից կողմանց և արՔառաՔզօք հարկանել զԹիկունսն և զներբանս նորա։ Իսկ սուրբն ոչինչ գրեր զտանջանս, այլ միայն համբարձեալ զաչս մտաց իւրոց յերկինս՝ սկսաւ ասել այսպէս. Փառք քեզ զուգահաւասար սուրբ ԵրրորդուԹիւն, Հայր և Որդի և Հոգիդ սուրբ. փառք քեզ՝ Հայր սուրբ, որ զօրացուցեր զակարուԹիւն իմ՝ զօրուԹեամբ շնորհի Հոգւոյդ սրբոյ, և նորոգեցեր զապականուԹիւն ծերուԹեանս իմոյ՝ չարչարանօք Քրիստոսի քո. և արդ ես զի՞նչ տաց տրիտուր քեզ ըստ ամենայնի՝ զոր շնորհեցեր ինձ, այլ միայն գոհացողական ձայնիւ օրհնեցից և փառաւորեցից զանբա-

ժանելի և զանիմանալի զօրութիւն քո, այժմ և յաւիտեանս յաւիտենից։ Եւ սրբոց մանկանցն ասացեալ զամէնն, ետ Հրաման Պրիսկիլլիանոս դատաւորն զամենեցուն զգլուխսն հատանել, որպէս և Հրամայեցաւ 'ի Թագաւորէն։ Եւ դահճացն առեալ զայսպիսի Հրաման՝ նախ Հատին զգլուխ սրբոյն Բաբելասայ և ապա զայլոց մանկանցն մի ըստ միոջէ, միանգամայն զուԹսուն և չորիցն. որոց ամենեցուն զքրիստոնեայ անուն 'ի վերայ իւրեանց դաւանեալ՝ կատարեցան 'ի Քրիստոս. զոր առեալ զմարմինս նոցա արանց երկիւղածաց՝ Հանեալ արտաքոյ քաղաքին, և արարեալ երիս դիրս 'ի նշանաւոր տեղւոջն՝ որ կոչի Եզանդիոք, եդին անդ զնշխարս նոցա, տօն մեծ կատարեալ զօր յիշատակի նոցա յամսեանն սեպտեմբերի, որ օր չորս էր ամսոյն։

Արդ ոչք այսպէս կատարեցան 'ի Քրիստոս, 'ի Հիւպատոջն Դեոկղետիանոսի և Մաքսիմիանոսի, երկոցունց ՀեԹանոսական Թագաւորաց։ Իսկ ըստ մեզ Թագաւորելոյն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի միածնի որդւոյն Աստուծոյ. ընդ որում Հօր, միանգամայն և Հոգւոյն սրբոյ, վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Բագարատայ Տոռոմեանոյ եպիսկոպոսի։

Սուրբն Բագարատ աշակերտ էր սրբոյ առաքեալին [1], և ձեռնադրեցաւ 'ի սրբոյն Պետրոսէ՝ եպիսկոպոս, և առաքեաց յարևմուտս 'ի Սիկիլի կղզին 'ի քաղաքն Տոռոմենի։ Եւ մնեալ 'ի նաւ, վարդապետութեամբն իւրով դարձոյց զնաւապետն Ուղկանիտոս [2] և զղեկավարն զԱգրինոս և զայլ նաւապետսն՝ յաստուածգիտութիւն։ Եւ յորժամ նաւեցին 'ի կղզին՝ գտին զամենայն քաղաքսն և զգաւառսն 'ի կռապաշտութեան. և յոգւոց հանեալ հեծեծանօք երանելին Բագարատ՝ համբարձ զձեռն իւր և զաչս յերկինս, և աղաչեաց զԱստուած վասն մոլորեալ ժողովրդեանն այնմիկ. և ասէ ցՈւղկանիտոս և ցԱգրինոս. Եկայք, որդեակք, աներկիւղ քարոզեսցուք զանուն Աստուծոյ 'ի մէջ մոլորեալ ժողովրդեանս, որպէս առի հրաման յառաքելոյն Պետրոսէ։ Եւ սկսաւ Բագարատ քարոզել և ուսուցանել և առնել սքանչելիս անուամբն Աստուծոյ։ Եւ լուեալ քաղաքապետին Վոնիփոտոսի [3] զարմացաւ և հաւատաց յԱստուած՝ գաղտ 'ի ժողովրդենէն. և յորժամ գնաց 'ի քաղաքն Տոռոմենի՝ երթեալ 'ի գիշերի 'ի մեհեան կռոցն՝ յորում էր բագինն Փալկոնի և դից քաղաքին այնորիկ. և հայեցեալ 'ի բագինն՝ ասէր. Ո՛վ Փալկոն, անզգայ խուլ և համր և

1. Մի օր. սրբոյ առաքելոյն Պետրոսի։
2. Այլ օր. Ուղկանիտոս։
3. Այլ օր. Ունիֆոտոս։

կոյը, ով ես դու և կամ զի՞նչ գործես աստ. և քանի՞ ամք են յորում բնակեալ ես աստ և մոլորեցուցանես խաբէութեամբ զստեղծուածս Աստուծոյ իմոյ, և տաս զոհս մատուցանել քեզ, պիղծ և գարշելի դիւապատկեր։ Եւ ասէ դևն որ 'ի բագինն բնակեալն էր. Երկերիւր և վաթսուն ամ է որ բնակեալ եմ աստ, և ընդունիմ զոհս և նուէրս 'ի Տոռոմենի քաղաքէս. յամենայն ամի երեք տղայ անարատ և եօթանասուն և երեք զուարակս փափուկս և գեղեցիկս, և խոյս և նոխազս և գառինս բազումս։ Եւ երանելին Բագարատ մեծաւ բարբառով ասէ. Երդմնեցուցանեմ զձեզ պիղծ դևք, յանուն խաչելոյն Քրիստոսի Աստուծոյ մերոյ. ժողովեցարուք ամենեքեան աստ և զխուլ և զհամր բագինդ Փալկոնի վերացուցէք 'ի մեհենէս և ընկեցէք 'ի ծովն, երեսուն ասպարիզաւ հեռի 'ի ցամաքէն. և դուք ընդ նմին ընկղմեցարուք յանդունդս խորոց։ Եւ առժամայն հնչումն եղև իբրև սաստիկ հողմոյ, և լցաւ մեհեանն անգեղոք և ագռաւոք, և կալան աղաղակելով զբագինն Փալկոնի և ընկեցին 'ի ծովն. և ել գոչումն մեծ 'ի ծովէն, և եղև ձայն յերկնից. Զօրացիր Բագարատ, ես ընդ քեզ եմ, և ոչ թողից զքեզ մինչև դասեցից զքեզ ընդ առաքեալսն և ընդ մարտիրոսս. և ելեալք 'ի մեհենէն գնացին յօթևանս իւրեանց։ Եւ ընդ առաւօտն գնացին քուրմքն զոհել 'ի մեհեանն, գտին զդուռն բաց. և մտեալ 'ի ներքս՝ ըզբագինն Փալկոնի ոչ գտին. և ելեալք 'ի մէջ հրապարակին մեծաւ հառաչմամբ կոծէին. Վա՛յ մեզ, զի քաղաքս կործանի, քանզի մեծ աստուածն մեր Փալկոն՝ անյայտ եղև. և դիմեցին բազում ժողովք 'ի մեհեանն և զպիղծ բագինն ոչ գտին. գնացին յընթացս 'ի տուն Վոնիփոտոսի քաղաքապետին, և աղաղակէին արտաքոյ դրանն. Ո՛վ պատուական իշխան, և շինող և սիրելի մեծի աստուածոյն, եկ և տես զկորուստ քաղաքիս։ Եւ նորա խոնարհեալ 'ի պատուհանէն ասէ. Ո՛վ իմաստուն արք և քահանայք մեծին աստուծոյն Փալկոնի, զի՞նչ եղև ձեզ որ այդպէս աղաղակէք։ Եւ նոքա ասեն. Մեծ անցք անցին ընդ մեզ. քանզի բաղձալին Փալկոն կորեաւ, և պայծառ և վայելուչ բագինն իւր անյայտ եղև. և սեղանն և աւազանն և

ոսկեկազմ աթոռն՝ ունայն մնաց և խորանն ոչնչացաւ։ Ասէ Վոնիփոտոս. Ո՛վ հարկաւոր տանուտեարք և պատուեալ քահանայք, լուարուք ինձ և քննեցէք, միթէ ամբարտաւանացաւ աստուածն մեր և եթող զմեզ և գնաց յայլ քաղաք. միթէ երբէք զսովորական զոհն լիակատար ոչ մատուցէք և անընդունելի արար զպաշտօնն մեր, և վասն այնորիկ ատեաց զմեզ և փախեաւ 'ի մէնջ. արդ գնացէք 'ի յարկս ձեր և ես պարապով քննեցից և գտից զպատճառսն։ Եւ նոքա ասեն. Մեք զսովորական աւանդսն կատարեմք և ոչինչ պակասութիւն առնեմք 'ի զոհսն իւր, եթէ վասն էր խռովեցաւ՝ ոչ գիտեմք. արդ աղաչեմք զքեզ, ո՛վ փառաւոր պայծառ քաղաքապետ, զի պնդութեամբ քննեսցես. և եթէ խռովեցաւ 'ի մէնջ և գնաց յայլ քաղաք, մեք երթիցուք առ նա և երկիր պագցուք նմա, և նա հաշտեսցի ընդ մեզ և ասասցէ զպատճառն, և մեք յաւելուցումք 'ի զոհսն և 'ի պաշտամունսն։ Ասէ Վոնիփոտոս. Ասացի ձեզ, եթէ երթիջիք 'ի տունս ձեր, և թէ հզօր է աստուածն Փալկոն՝ յայտնեսցէ մեզ զՀնամարիտն։ Եւ նոքա աղաղակէին. Ո՛վ պատուական և շինող դատաւոր, որպէս օտար և անծանօթ աստուածոց մերոց խօսեցար. ոչ Ճանաչես զերիտասարդ և զգեղեցիկ աստուածն մեր զՓալկոն՝ որդի Փալկոնի. ոչ յամենայն ժամ 'ի գինարբուսն և 'ի խնդման աւուրս՝ դու ինքնին գովէիր և պատմէիր զգովելի գործսն նորա. և այժմ ասես, եթէ հզօր է աստուածն Փալկոն՝ [1] յայտնեսցէ զինքն մեզ։ Դարձեալ պատասխանի ետ Վոնիփոտոս և ասէ. Ասացի ձեզ, ո՛վ արք իմաստասէրք, եթէ համբերեցէք, և ես քննեցից զկորուստն Փալկոնի. կարծեմ եթէ գարշեցաւ 'ի ձէնջ, քանզի հպարտ աստուած էր։ Եւ իբրև լուան զայն, դադարեցին և գնացին 'ի գործս իւրեանց. և Վոնիփոտոս գաղտ կոչեաց զՈւղկանիտոս և ասաց նըմա զխռովութիւն ժողովրդեանն, և եթէ որպէս կորեաւ աստուածն իւրեանց. և եթէ զի՞նչ արարից ես ոչ գիտեմ։ Եւ սկսաւ Ուղկանիտոս պատմել զՀնամարիտն և ասէ. Լուր մտադիւրութեամբ, քաղաքապետ

1. Այլ օր. եթէ հզօր աստուած է Փալկոն։

և դատաւոր, գիտասջիր զի երեքանձնեան տէրու-
թիւնն յամօթ արար զգարշելի պաշտամունս մեր, և
ոչ ևս մատուցցուք զոհս այս պիղծ դիւաց, այլ միայն
Աստուծոյ կենդանւոյ, որ մնայ յաւիտեան. և այլ ոչ
ևս յառաջադիմի 'ի կռոցն պաշտելութիւն [1], և ոչ ե-
րազք և դիւթութիւնք գուշակեն մոլորեալ մարդկան,
քանզի երկնաւոր Աստուած առաքեաց զորդին իւր
յերկիր, և մարմնացեալ ծնաւ 'ի սրբոյ Կուսէն Մա-
րիամայ, զի սրբեսցէ զմեզ յամենայն անօրէնութե-
նէ։ Եւ յայսմ հետէ Փալկոն որդի Փալկոնիդայ ոչ
զոք կարէ խաբել։

Եւ ընդ առաւօտն ժողովեցան ամենայն քուրմքն 'ի
միասին, և սկսան լալ զՓալկոն, և լային ողբալով.
Ո՞ւր ելեալ վայելուչ գեղդ քո, ո՛վ բաղձալիդ Փալկոն.
ո՞րպէս յանկարծակի անյայտ եղեր 'ի քո փափաքո-
ղացս. երանի՛ եթէ ոչ էաք լեալ քահանայք քո։ Ամե-
նայն աստուածք խնդութեամբ ընդունին զոհս 'ի քըրը-
մաց իւրեանց, դու միայն անընդունող եղեր և ատեցեր
զմեզ. և քաղաքապետն մեր Վոնիփոտոս մոռացաւ զան-
չափ սէրն քո, և քեզ խնդիր ոչ արար։ Ո՞վ կողոպ-
տեաց զքեզ 'ի մէնջ. ո՛վ նախանձեցաւ ընդ անչափ
սէրն մեր, ո՛վ Լիւսիոն և Դիա փոքր աստուածք. և
Փապոնիդա [2] աստուածուհի՝ դուստր Իրինոսի և Ար-
տեմիայ քոյր աստուածուհւոյն. արդ ընդէ՞ր ոչ ողոր-
միք մեզ, և ողբայք ընդ մեզ զգեղեցիկ և զպայծառ
աստուածն զՓալկոն. ընդէ՞ր լռէք և ոչ խնդրէք զկո-
րուսեալն։

Եւ յորժամ եղև գիշեր, զգեցաւ Վոնիփոտոս զար-
քունական պատմուճանն իւր և զքղամիտն իւր, և
գնաց 'ի դուռն Բագարատայ, զի դեռևս չէր տեսեալ
զնա։ Նոյնպէս և նա զգեցաւ զեպիսկոպոսութեան փի-
լոնն և զեմիփորոնն և նստաւ 'ի Թիկնաթոռն, առեալ
'ի գիրկս իւր զաւետարանն և զխաչն և զտերունական
պատկերն, զոր ետ նմա Պետրոս առաքեալն։ Եւ մը-
տեալ Վոնիփոտոս ետես զերանելին Բագարատ իբրև
զբոց, և շուրջ զանձամբն իբրև զՀուր. անկաւ 'ի վե-

1. Այլ օր. կռոց պաշտամունս։
2. Այլ օր. Փալիանիդայ։

ըայ երեսաց իւրոց և երկիր եպագ ահիւ մեծաւ, և ասէ. Մեծ է Աստուածն քրիստոնէից՝ զոր քարոզէ Բագարատ. հաւատամ զի նա միայն է Աստուած երկնից և երկրի։ Եւ ասէ. Ո՞րպէս մերձեցայց 'ի քեզ. քանզի տեսանեմ զքեզ իբրև զբոց վառեալ և շուրջ զքև հուր, երկնչիմ գուցէ այրիմ ես։

Եւ գիտաց Բագարատ եթէ ետես զշնորհս Հոգւոյն սրբոյ որ են 'ի քահանայից սուրբ խորհրդեանն ըզգեստս, քանզի սուրբ են. և յարուցեալ Եհան զեմիփորոնն և զփիլոնն և զուրարն, և նստաւ. և այլ ոչ ետես Վոնիփոտոս զհուրն. և ողջունեաց զնա 'ի համբոյր սրբութեան և նստոյց մերձ առ իւր, և օրհնեաց զնա յոյժ. և ճաշեցին 'ի միասին զոր տարաւ Վոնիփոտոս 'ի տանէ իւրմէ զամենայն բարութիւնս։ Եւ յորժամ ուրախացան և յարեան, բացան ձեղունք տանն և լոյս պայծառ ծագեաց 'ի վերայ նոցա, և յահի լեալք անկան 'ի վերայ երեսաց իւրեանց յերկիր. և կալեալ զձեռանէ նոցա Բագարատ՝ կանգնեաց զնոսա, և նըստոյց մերձ առ ինքն. և սկսաւ պատմել նոցա մի ըստ միոջէ 'ի հին և 'ի նոր կտակարանաց յԱդամայ մինչև 'ի Քրիստոսի մարդեղութիւնն, և 'ի համբարձումն և 'ի գալուստ Հոգւոյն սրբոյ յառաքեալսն. և 'ի պատմութենէն լուսաւորեցան ամենեքեան որ անդ հանդիպեցան աստուածային վարդապետութեամբն. և ողջունեալ զամենեսեան յուղարկեաց 'ի յարկս իւրեանց։ Եւ յաւուրն յայնմիկ յերրորդ ժամու գիշերոյն գրեաց երանելին Բագարատ 'ի քարտիսի ձեռամբ իւրով այսպէս. Ես Լուսիոնն կռոց բագին. Ես Բագարատ ծառայ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ, գրեմ առ քեզ պիղծ և զազիր և գարշ Տոռոմենոյ քաղաքիս փոքր աստուածդ. յորժամ ընդունիս զգիրս իմ և ընթեռնուս՝ վաղվաղակի զոր հրամայեմ քեզ կատարեա. և երթիջիր դու 'ի կորստեան տեղին 'ի գեհեն հրոյն և յարտաքին խաւարն, յորում է քո աւագագոյն աստուածն Փալկոն, և 'ի միասին կոծեցարուք զձեր կորուստն, զի մի՛ այլ ևս տիրիցէք քաղաքիս այսորիկ։ Եւ տուեալ զթուղթն յԱգրինոս՝ յղարկեաց 'ի մեհեան կռոցն։ Եւ նորա երթեալ որպէս թէ յաղօթել և 'ի խնկել, եդ զքարտէսն 'ի բագինն, և գաղտ փախեաւ

և դարձաւ առ Բագարատ։ Եւ յետ երկու պահոյ եղև ձայն յաներևութից և ասէ. Ո՛վ Բագարատ ծառայ Աստուծոյ կենդանւոյ, զհրամայեալս մեզ 'ի քումմէ սրբութենէդ կատարեսցուք. և ինքնուք 'ի սանդարամետս անդնդոց. արդ խնդա և ուրախ լեր, և համարձակութեամբ եկ 'ի մէջ քաղաքիս, զի յայսմ հետէ քո է։ Եւ յորժամ լուաւ զձայնն Բագարատ՝ անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց և գոհանայր զԱստուծոյ. և առժամայն յարուցեալ եկն 'ի հրապարակ քաղաքին, և աստղանշանք յերկնից առաջնորդեաց նոցա մինչև 'ի տունն Վենիփոտոսի. և նորա եկեալ ընդ առաջ՝ եմոյծ զնոսա 'ի տուն իւր լուութեամբ, և ոչ ոք ամենեւին գիտաց, զի դեռ ևս գիշեր էր. և արար անդ աւուրս քառասուն։ Եւ 'ի միում աւուր ժողովեցան քուրմքն[1] 'ի դուռն Վենիփոտոսի և ասեն. Ո՛վ դատաւոր և շինող քաղաքապետ, մերձեալ է տօն Լիւսինայ աստուծոյն մերոյ. հրամայեա և արասցուք մեծաւ պայծառութեամբ, զի մի՛ և սա խռովեսցի մեզ և փախչիցի և կորնչեսցի որպէս Փալկոն, և լինիցիմք ծաղր ամենայն քաղաքացեաց և մերձակայիցս։ Կարծեմք, ո՛վ իշխան, եթէ յորմէ հետէ եմուտ Ուղկանիտոս ի Տոռոմենիոս քաղաքս յայս, յոյժ ատեցին զմեզ աստուածքն մեր, և զզոհսն մեր ոչ ընդունին. բազում անգամ դիւթութեամբք հարցանեմք վասն մեծ և մաքուր աստուածոյն Փալկոնի, և պատասխանի ոչ տան մեզ. և մեզ ինչ օգուտ ոչ է, 'ի զուր անուանիմք քուրմք աստուածոցն։ Ասէ Վենիփոտոս. Ո՛վ իմաստունք, քահանայք աստուածոց մերոց, երթայք պատրաստեցէք զամենայն զենլիս զոհիցն, և յաւուր տօնիցն եկիցս և ես 'ի զոհսն։ Եւ երթեալ պատմեաց Բագարատայ զասացեալսն 'ի քրմացն. և նորա զձեռսն յերկինս համբարձեալ աղաչեաց զԱստուած վասն մնացեալ կռոցն՝ զի կործանեսցին։ Եւ 'ի գիշերին յայնմիկ մինչդեռ քուրմքն 'ի տունս իւրեանց նիրհէին, կործանեցան բագինքն և խորտակեցան 'ի բազում մասունս. և յորժամ եհաս պիղծ տօնն՝ պատրաստեցին զամենայն զենլիս աւելի քան զՓալկոնին, տղայս

1. Այլ օր. փաղանգ։

անարատս և զուարակս և խոյս և նոխազս և գառինս, և զարդարեալ քրմացն՝ գնացին 'ի մեհեանն Ապողոնի և գտին զբագինն կործանեալ և խորտակեալ 'ի բազում մասունս. և սկսան բախել զերեսս իւրեանց, և ասեն մեծաւ հառաչմամբ. Վա՛յ մեզ, ո՛վ Ապողոն, չար պատերազմ շարժեցաւ 'ի վերայ քո, չեղև մեզ բաւական կորուստն Փալկոնի, այլ և դու մեծ չարի դիպար. վա՛յ մեզ, որ եթէ լուիցեն զայս յայլ քաղաքս՝ խոտեն և անարգս հանեն[1] զմեզ որպէս զաստուածաւ կորոյսք. Ո՛վ հզօր և պայծառ աստուած մեր Ապողոն, ընդէ՞ր կործանեցար և փշրեցար, և ոսկեկազմ աթոռ քո ունայն մնաց։ Եւ Եղեալանտի սրտաբեկեալք գնացին յայլ մեհեան Դիայ կռոցն. գտին և զայն կործանեալ և բեկտեալ. և սկսան մեծաբարբառ ողբալ և հառաչել, մինչև 'ի ձայնէն ժողովեցան ամբոխս բազում։ և ասեն քուրմքն. Լացէք ամենեքեան և ողբացէք ընդ մեզ, քանզի քաղցր և իմաստուն աստուածքն մեր կորեան և ջնջեցան 'ի սպառ. պատառեսցուք զոձիս մեր և հող և մոխիր արկցուք 'ի ծոց և 'ի գլուխս մեր, և զերեսս և զձակատս մեր բաղխեսցուք, և սուգ կալցուք ընդ կործանումն աստուածոց մերոց։ Եւ սկըսան ամենայն ժողովուրդքն լալ և ողբալ ընդ կործանումն կռոցն. և դիմեցին ամենեքեան հառաչմամբ և մեծաւ բարկութեամբ 'ի տուն Վոնիփոտոսի. և աղաղակէին արտաքոյ դրանն. Ո՛վ անարժան իշխան, 'ի չար ժամու եղեր դու քաղաքապետ. տեսանե՞ս դու զաստուածս կործանեալ և անփոյթ առնես, և ոչ յուզես և քննես վասն մեծ անցիցս որ ընդ մեզ անցին. ո՛վ անհաւատ և անպէտ դատաւոր և քաղաքաւեր, ելի՛ և գնա տես զքո սիրելի և զբարեկամ աստուածսն՝ եթէ որպէս յաղբևս 'ի կոխանս թաւալին, յայլ տեղի գլուխն, յայլ տեղի ձեռքն և յայլ տեղի ոտքն. և ո՞չ նոքա մեծացուցին զքեզ և փառաւորեցին և լցին զգանձատունս քո ոսկւով և արծաթով և դիպակով և ակամբք և մարգարտով, և զշտեմարանս քո ամենայն բարութեամբ։ Իսկ Վոնիփոտոս 'ի բարձր պատուհանէն ասէ. Ո՛վ իմաստուն և հարկաւոր քաղա-

[1] Այլ օր. համարին։

քացիք, զի՞նչ կամիք զի արարից. մի՞ երբէք շնորհք աստուածային պարգևացն եմուտ 'ի քաղաքս մեր և կործանեաց զաստուածան։ Եւ նոքա ասեն. Զի՞նչ իցէ շնորհք աստուածային շնորհացն [1], ոչ գիտեմք զի՞նչ խօսիս. եթէ սիրելի ես աստուածոցն մերոց՝ ասա մեզ զշնմարիտն։ Եւ նա ասէ. Շնորհք և զօրութիւնք 'ի բարձանց։ Եւ նոքա բարկացան յոյժ և ասեն. Ո՛վ անարժան և անպէտ քաղաքաւեր, և թշնամի աստուածոցն մերոց, կորուստ և մահն քո հասեալ է. ոչպէս տաս մեզ պատասխանի։ Ասէ Վոնիփոտոս. Ընդէ՞ր բարկանայք և ամբոխիք և դառնանայք 'ի վերայ իմ մոլութեամբ։ Եւ նոքա ասեն. Ոչ եթէ փոքր մեղաս եղև, այլ աստուածոց կորուստ. և արժան է այլ սաստկութեամբ բարկանալ և լալ և կոծել։ Ասէ Վոնիփոտոս. Ընտրեցէք արս հանճարեղս և իմաստունս, և 'ի հասարակ գիշերի 'ի մեհեանն դիւթութիւնս և աղանդինս մատուցանեն, և վիճակս արկցեն և հաւաստեաւ գիտասցեն, եթէ ընդէ՞ր կործանեցան աստուածքն. միթէ այլ Աստուած հզօրագոյն մարտեաւ ընդ նոսա, և վասն զի ոչ կարացին կալ ընդդէմ՝ կործանեցան։

Եւ ամենայն ժողովուրդն հաճեցան ընդ խրատն Վոնիփոտոսի. երթեալ ընտրեցին արս հմուտս դիւթութեան. և նոքա գնացին 'ի մեհեանս Լիւսիոնայ, զի նորա բագինն չէր կործանեալ. և սկսան դիւթել և առնել աղանդս 'ի հասարակ գիշերի, և վիճակս արկանէին անուամբ Լիւսիոնայ։ Եւ Վոնիփոտոս երթեալ պատմեաց Բագարատայ զամենայն. և նորա տարածեալ զձեռս յերկինս աղաչեաց զԱստուած՝ զի արասցէ սքանչելիս 'ի մոլորեալ ժողովուրդն։ Եւ բազում կանայք ժողովեցան, և շուրջ պատեալ զմեհեանն և ծափս արկանելով երգէին պարելով զդիւթական երգս, և դիւթք 'ի ներքս 'ի մեհեանն առնէին զաղանդինսն. աղաչէին զբագինն զի խօսեսցի ընդ նոսա։ Եւ եղև ձայն 'ի կռոցն Լիւսիոնայ և ասէր. Ո՛վ արք Տոռոմենոյ քաղաքիս, լուարուք յինէն զճշմարիտն. Մեք յայսմ հետէ ոչինչ եմք կարող առնել ինչ կամ գործել. մինչև ցայժմ զամենայն զոհն ընդու-

1. Այլ օր. պարգևացն։

նէաք և զինդիրս կատարէաք. այժմ զօրութիւն ոչ գոյ 'ի մեզ, քանզի յոյժ տկարացաք և ոչնչացաք. զի հրզօրագոյն աստուածն աստ երևեցաւ, և յահէ նորա Փալկոն կորեաւ և յանդունդս ընկղմեցաւ, նոյնպէս և Ապողոն և Դիա կործանեցան. և գիտասջիք ամենեքեան որ երեքանձեայ աստուածութիւնն առաքեաց զշնորհս ողորմութեան 'ի քաղաքս ձեր։ Ասեն աղանդաւոր դիւթքն. Եւ է՞ հզօրագոյն աստուած քան զձեզ. ասա և յայտնեա մեզ զՀմարիտն, թէ ո՞վ է մեծ աստուած՝ քան զձեզ և քան զՓալկոն։ Ասէ բագինն. Որ արար զերկինս և զերկիր, և որ ստեղծ 'ի սկզբանէ զմարդն՝ այժմ գթացաւ 'ի ստեղծուածս իւր և առաքեաց զՀրեղէն սուրն և կորոյս զՓալկոն, և զայլ աստուածսն խորտակեաց. և այրն զոր ած Ուղկանիտոս 'ի քաղաքս՝ նորա աշակերտ է։ Եւ նոքա ասեն. Յորժամ կորեաւ Փալկոն և եկաք առ քեզ և հարցաք՝ ընդէ՞ր ոչ ասացեր մեզ զայդ։ Ասէ բագինն. Եթէ կամիք որ դարձեալ զօրութիւն գայ 'ի մեզ և լինիմք որպէս յառաջն՝ մատուցէք ինձ զոհ զսիրելին իմ զՎոնիփոտոս։ Եւ նոքա յոյժ ուրախ եղեն, և գնացին փութով ոստովք 'ի տունն Վոնիփոտոսի, աւետիս տային նմա և ասէին. Երանի է քեզ, զի որպէս մեծացուցին զքեզ աստուածքն և փառաւորեցին, դարձեալ կամին որ զքեզ զոհ մատուցանեմք, և լինիցիս և դու աստուած փոխանակ կործանեալ աստուածոց, և կանգնեսցուք զքո բագինդ և պաշտեսցուք զքեզ։ Եւ իբրև լուաւ Վոնիփոտոս ըզբօթալից աւետեացն՝ զի զենուլ կամէին զնա և զոհս մատուցանել կռոցն, գնաց փութանակի առ երանելին Բագարատ, և լալով անկաւ յոտս նորա։ Եւ նա ասէ. Ընդէ՞ր լաս, որդեակ. միթէ բան չարութեա՞ն լուար և տրտմեցաւ սիրտ քո։ Ասէ Վոնիփոտոս. Երանի թէ չար բան և ոչ դառն մահ։ Ասէ երանելին. Մի՛ երկնչիր որդեակ. երթիջիր 'ի զենումն, և ես եկից զկնի քո, և աստուածային շնորհօքն համարձակութեամբ յանդիմանեցից և յաղթեցից անուամբն Աստուծոյ։

Իսկ պիղծ քուրմքն գոչեցին փողս մեծ և հնչիւնս, և ժողովեցան ամենայն ժողովուրդք քաղաքին զարդաւրեալ ոստովք արմաւենեաց վասն տօնին, և գնացին միահամուռ կալան զՎոնիփոտոս. և վասն զի ոչ խըն-

դայր, այլ մանաւանդ ողբայր և հառաչէր, մերկացու-
ցին զնա և ձեռս յետ կապեցին և տարան 'ի մեհեանն.
և կացուցին գլխիբաց և բոկ առաջի բագնին Լիւսիա-
նայ։ Եւ Վոնիփոտոս ածէր զաչսն իւր աստ և անդ զի
տեսցէ զԲագարատ. և յորժամ ոչ ետես՝ ողբալով ա-
սէր. Վայ ինձ, եթէ յո՞ր չար և դառն մահ մատնեցայ.
վայ ինձ որ 'ի խորս անդընդոց ընկղմեցայ։ Ո՞ւր ես հայր
Բագարատ, եկեսջիր փութով, որպէս ասացեր ինձ
եթէ գամ զկնի և փրկեմ զքեզ. զիս առաքեցեր և
դու ոչ եկիր։ Արդ օգնեա ինձ Տէր Յիսուս Քրիստոս,
զի 'ի քեզ հաւատացի և փրկեա զիս։ Իսկ երանելին
Բագարատ տուեալ յՈւղկանիտոս զխաչն և յԱգրի-
նոս զտերունական պատկերն, և ինքն զգեցաւ զփիլոն
և զեմիփորոնն, և առեալ 'ի ձեռս իւր զաւետարանն
սուրբ՝ գնաց 'ի տեղին։ Եւ տեսին 'ի մէջ ամբոխին
զՎոնիփոտոս առաջի Լիւսիոնայ կռոցն, մերկ, գլխի-
բաց և բոկ, և ձեռս յետս կապեալ։ Եւ տարածեաց
Բագարատ զձեռս իւր յերկինս և աղաչեաց զԱստուած,
և վառեցաւ ինքն իբրև զբոց. և տեսին զնա ժողովուրդքն
իբր զհուր լուցեալ, և յահէն անկան յերկիր 'ի վե-
րայ երեսաց իւրեանց. և նորա արարեալ 'ի վերայ
նոցա զնշան տերունական խաչին՝ կանգնեաց զնո-
սա, և ասէ ցբագինն. Երդմնեցուցանեմ զքեզ, այս
պիղծ, յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. փա-
խիր 'ի տեղւոջէդ յայդմանէ և երթիջիր ուր Փալկոն
է, 'ի խորս ծովուն։ Եւ առժամայն եղև ձայնաւոր
մեծ 'ի մեհեանն, և վերացաւ բագինն յօդս և անկաւ
'ի ծովն. և յոյժ երկեան ժողովուրդքն և անկան յոր-
սայս. և արարեալ 'ի վերայ նոցա զնշան խաչին և ասէ.
Մի երկնչիք, քանզի պիղծն Լիւսիոնա դիւաքն իւրովք 'ի
սպառ կորեաւ։ Եւ կանգնեցան ժողովուրդքն և տեսին
զահաւոր սքանչելիսն զոր արար Աստուած 'ի ձեռն ծա-
ռային իւրոյ Բագարատայ։ Աղաղակեցին մեծաւ բար-
բառով որպէս 'ի միոջէ բերանոյ և ասեն. Օրհնեալ
է Աստուածն Բագարատայ, հաւատամք 'ի նա՝ զի նա
միայն է Աստուած։ Եւ երթեալ լուծին զՎոնիփոտոս,
և շուրջ պատեցան զերանելեաւն, և պշուցեալ հա-
յէին ընդ երեսս նորա։ Եւ նորա ելեալ 'ի բարձր տե-
ղի՝ արար աղօթս 'ի վերայ ամենայն ժողովրդեանն. և

ընթացան քուրմք 'ի մեհեանսն, և զբեկորս կռոցն ժողովեցին և ընկեցին 'ի ծովն և զսեղանն կործանեցին։ Եւ հրամայեաց Երանելին և փողս գոչեցուցին, և ժողովեցան ամբաւ ժողովուրդք. և երթեալ նոքօք 'ի փոքր մատուռն զոր շինեալ էր Վենիփոտոսի՝ կատարեաց զխորհուրդ սուրբ պատարագին, և հրամայեաց նոցա զեօթն օր սրբել, և երախայեցոյց զնոսա և ուսոյց զբանն կենաց։

Եւ բերին իւրաքանչիւր ոք 'ի տանէ իւրմէ սպիտակ հանդերձս նորս և մաքուրս, որպէս պատուիրեաց նոցա սուրբն, և մոմեղէնս [1]. և տարաւ զնոսա 'ի մերձակայ գետն և մկրտեաց զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, քսան և չորք հազար հոգիք. և զգեցոյց նոցա նոր և սպիտակ զգեստ վառեալ մոմեղինօք. և հաղորդեցոյց զնոսա 'ի սուրբ և 'ի պատուական մարմին և արիւն Որդւոյն Աստուծոյ. և ամենեքին որք լուսաւորեցանն՝ տեսին զշնորհս Հոգւոյն սրբոյ 'ի նմանութիւն սպիտակ աղաւնոյ՝ իջեալ 'ի մաքրութիւն ջուրց, և դարձեալ թռեաւ յերկինս. և եղև ուրախութիւն մեծ 'ի քաղաքին յայնմիկ։ Եւ զաւուրս ութ [2] ուսուցանէր զլուսաւորեալս և յուղարկէր յարկսն իւրեանց. և առնէր սքանչելի նշանս առաջի ժողովրդեանն և բժշկէր աղօթիւք զկոյրս և զխուլս և զհամերս և ըզկաղս և զանդամալոյծս և զգօսացեալս և զայսահարս և զջերմնոտս և զամենայն հիւանդս։

Եւ էլ համբաւն նորա ընդ ամենայն քաղաքս և գաւառս կղզւոյն, և երթային առ նա. և նա վարդապետութեամբ ուսուցանէր զնոսա յաստուածգիտութիւն, և մկրտէր զնոսա. և դարձոյց զամենայն կղզին 'ի Ճշմարիտ հաւատն Քրիստոսի։ Եւ յամենայն օր մկրտէր և ուսուցանէր զնոսա. նոյնպէս և զկանայս և զտղայս մկրտէր առանձինն յայլ տեղիս գետոյն, և մկրտեաց անձինս անթիւս հազարաց. և մկրտեալ 'ի քաղաքէն Տոռոմենոյ քառասուն հազար, և յայլ քաղաքաց և գաւառաց հինգ հարիւր հազար։

Եւ 'ի միում աւուր մինչդեռ ուսուցանէր զժողո-

1. Ա.յլ օր. մոմեղէնս և ջահս և ինդրուակս։
2. Ա.յլ օր. զսուն ամ։

վուրդն, երևեցաւ սատանայ որպէս եթէովպացի՝ բա-
զում սեադէմ դիւօք, եկաց քարընկէց մի Հեռագոյն
և ասէ մեծաւ ձայնիւ. Ո՛վ Բագարատ, ընդէր եկիր,
կամ ո՞վ ած զքեզ՝ի քաղաքս իմ, և զրկեցեր զիս յի-
մոցս, և յափշտակեցեր յինէն զբարեկամս իմ և ըն-
ծայեցեր Աստուծոյ քում: զյարկս իմ աւերեցեր և
զպաշտելի կուռս իմ՝ի ծով ընկեցեր. վայ ինձ, սիրե-
լիք իմ և սպասաւորք, զի յորմէ հետէ եկն դա աստ՝
զիս գերի արար, և զսիրելին իմ զՎոնիփոտոս՝ զոր փա-
ռաւորեցի և մեծացուցի՝ ինձ թշնամի արար:

Եւ յորժամ լուաւ երանելին Բագարատ՝ ասէ ցժո-
ղովուրդն. Գիտասջիք, որդեակք իմ, եթէ վասն զի
եկիք՝ի կոչումն Քրիստոսի, կրճտէ սատանայ զատա-
մունս իւր վասն մեր, և որպէս առիւծ դարանէ գոչէ
՝ի վերայ մեր, և որպէս վիշապ բանայ զբերան՝ յահա-
ցուցանել զմեզ. բայց զի զինուորեցաք՝ի գունդս
Քրիստոսի՝ արիաբար կացցուք ընդդէմ թշնամւոյն:
Եւ հրամայեաց ժողովրդեանն դառնալ յարևմուտս
ընդդէմ սատանայի, և ասէ. Թքէք յերեսս նորա: Եւ
յորժամ թքին՝ ասէ. Հրաժարեցէք՝ի սատանայէ ե-
րիցս անգամ: Եւ յորժամ հրաժարեցին՝ երևեցան
հրեղէն սրեալ նետք, և հալածեցին զսատանայ դի-
ւաքն և անյայտ արարին: Եւ հրամայեաց ժողովրդեանն
դառնալ յարևելս և ասել. Խոստովանիմք զՔրիստոս
Աստուած, երիցս անգամ: և համբուրեցին
զաւետարանն և զտերունական պատկերն և զխաչն. և
լցեալք Հոգւովն սրբով՝ գնացին խնդութեամբ մե-
ծաւ լուսաւորեալք՝ի լուսաւորչէն Բագարատայ յար-
կըս իւրեանց: Եւ սուրբն Բագարատ ձեռնադրեաց
զԱգրինոս քահանայ և զՈւղկանիտոս սարկաւագ. և
ասէ ցՎոնիփոտոս. Ցետ իմոյ կատարման՝ առաքեա
զԱգրինոս՝ի Հռովմ՝ առ սուրբ առաքեալն Պետրոս,
և ձեռնադրեսցէ զնա եպիսկոպոս փոխանակ իմ յա-
թոռ իմ՝ի քաղաքիս յայսմիկ. և դարձաւ յԱգրի-
նոս և ասէ. Որդեակ, որպէս տեսեր զիս և ուսար յի-
նէն՝ նոյնպէս և դու հովուեա զՔրիստոսի նոր հօտս:

Վասն կատարման սրբոյն Բագարատայ.

Էր 'ի քաղաքին այր մի մեծատուն՝ որոյ անուն էր Արտագորոն, և սատանայ կապեաց զնա. և նա միայն պաշտէր գաղտուլթեամբ զկուռս, որ և արար պատկերս փոքրկունս, և 'ի Թաքստի պահէր յինքեան. և 'ի միտս իւր յամենայն ժամ մոլէր, և սպառնայր քահանայապետին Քրիստոսի սրբոյն Բագարատայ։ Եւ 'ի միում աւուր եգիտ առանձինն զերանելին՝ զի կայր յաղօթս, և հանեալ զսուսերն սպան զամենագով սուրբն Բագարատ, յուլիս ամսոյ չորեքտասան, և փախեաւ 'ի տուն իւր, զի մի ոք գիտասցէ։ Բայց Աստուածնոյնժամայն յայտնեաց Վոնիփոտոսի իշխանի. և կալեալ զանօրէնն Արտագորոն՝ կապեաց ձեռս յետս, և այնչափ գանեաց արՋառաՋլՋք զլանՋն և զԹիկունսն՝ մինչև կեղեքեցաւ ամենայն մարմինն. և հրով զգլուխն և զմորուսն այրեաց և սևեաց զերեսն. և առեալ ինքնին զսուրն և եզեն զնա սրոփն, և եհատ զգլուխ նորա և ընկէց 'ի ծով, և զմարմինն հրամայեաց ընկենուլ շանց և ագռաւուց։ Եւ արարեալ տապան արծաթի՝ մեծաւ պատուով և անուշահոտ խնկովք և մնքուր կտաւովք պատեաց զպատուական մարմինն, և եդ յարծաթի տապանին. և շինեաց 'ի վերայ գեղեցիկ մատուռն յանուն սրբոյն Բագարատայ։ Եւ զքահանայն Ագրիանոս ըստ հրամանի սրբոյն առաքեաց 'ի Հռովմ՝ առ Պետրոս առաքեալ. և երթեալ պատմեաց զամենայն մի ըստ միոՋէ, և ձեռնադրեաց զնա եպիսկոպոս. և նորա դարձեալ 'ի Տոռոմենի՝ նստաւ յաթոռն փոխանակ սրբոյն Բագարատայ։ Իսկ Վոնիփոտոս մինչև ցմահն իւր ծառայէր և սպասաւորէր եկեղեցւոյն և տապանին. և սուրբն բարեխօս առ Քրիստոս ոչ միայն Սիկիլոյ կղզւոյն, այլ և ամենեցուն որք կատարեն զյիշատակ սրբոյն, փառաւորելով զամենասուրբ Երրորդութիւնն, զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգին. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Բասասայ և որդւոց իւրոց Թէոգնի և Ագապի և Պիստիսի։

Մաքսիմիանոս Թագաւոր եկեալ 'ի քաղաք մի Երևելի՝ զոր կոչեն Բիւրով, որ է յարևմուտս, և կայ 'ի մէջ Գալլեայ [1] և Հռոմեայ. և կոչեցեալ զքուրմն ա-նուանելոց աստուածոցն՝ առնէր ուրախութիւն մեծ. և 'ի խնձոյսն ասէ ցոմն՝ որ էր առաջնորդ պիղծ պաշ-տամանն նոցա, առանց որոյ զոհք ոչ մատչէին աստուա-ծոցն, և անուն էր նորա Մարկեղինոս։ Ասէ ցնա Թա-գաւորն. Հայր մեծ աստուածոցն, ըստ կամաց քոց լի-ցին զոհքն աստուածոցն ընդ ամենայն աշխարհ, և մե-ծապէս կատարեսցին։ Մարկեղիանոս ասաց. Հրա-մայեսցէ քաջութիւնդ քո գրով օրէնս դնել, զի ամե-նայն մարդ զոհեսցէ աստուածոցն, առաւել ևս Ադա-մազդայ և Ապողոնի՝ որք զքաջութիւնդ քո պահեն 'ի խաղաղութեան։ Եւ արարեալ զայն Թագաւորին որ-պէս և ասացն, եւ գրով օրէնս 'ի Բիւրոյն՝ մնոտի մոլ-ղութեանն, քանզի էր քաղաքն երևելի. և անտի ա-ռաքեաց հրաման ընդ ամենայն տեղիս. և էր այնու-հետև տրտմութիւն յոյժ քրիստոնէիցն, քանզի բա-զումք անկանէին 'ի ձշմարիտ հաւատոցն և 'ի յուսոյն Քրիստոսի։

Եկն Եհաս հրաման և յԵդեսացւոց քաղաքն, որ է առաջին Մակեդոնիա, առ բդեշխն Ելլադայ և առ 'ի . . .[2] Մակեդոնիայ որ էր յԵդեսայ. և նոքա ընկա-

Nicopolis?

1. Այլ օր. Գալիլեայ։
2. Պակասի յօրինակին։

լեալ զՀրամանն՝ գրով առաքեցին ընդ ամենայն քաղաքսն, հրամայեցին մեծաւ պնդութեամբ կատարել զզոհս կռոցն. իսկ զանհաւանսն չարաչար տանջանօք սպանանել։ Բազումք 'ի քրիստոնէիցն այնուհետև ոչ բերելով զահ սպառնալեացն և այլք դառնային յամպարշտութիւն, որոց խաւարեալ էն միտք իւրեանց առ ստոյգ լոյսն. իսկ ճշմարտեալքն առ աստուածային սէրն 'ի Քրիստոս՝ խրախուսեալք համարձակէին խոստովանել զճշմարիտ Աստուածն։

Էր ոմն 'ի քաղաքին կին բարեպաշտօն և երկիւղած յԱստուծոյ և երևելի 'ի մեծ ազգէ, որում անուն էր Բասսա. ունէր և երիս որդիս, անուն առաջնոյն Թէոգնէ՝ որ ասի Աստուածապաշտ, և երկրորդին Ագապիս՝ որ է Սիրուն, և երրորդին Պիստիս՝ որ լսի Հաւատարիմ. իսկ հայր նոցա էր քրմապետ, և ծանօթ թագաւորին և սիրելի իշխանացն և մեծ 'ի քաղաքին, և անուն նորա Վաղերիոս, որ բազումս մարտուցեալ ընդ կնոջն՝ ոչ կարաց դարձուցանել զնա 'ի պաշտօն կռոցն։ Եւ յաւուր միում յերևելոջ՝ որ էր տօն հեթանոսաց, հրամայեցին իշխանքն զոհս մատուցանել կռոցն. իսկ Վաղերիոս այրն Բասսայ յառաջ կացեալ՝ նախ ինքն մատուցանէր զոհս կռոցն, և ապա այլք բազումք զկնի նորա։ Իսկ երանելին Բասսա, առեալ զմանկունս իւր մեկուսի՝ յուշ առնէր զյուսացեալսն 'ի Քրիստոս հաւատոցն, պաշտել զսուրբ զԵրրորդութիւնն՝ որով կեցին և խոստովանեցին և կատարեցին. և այլ աստուածք հեթանոսաց ոչինչ էն, և մարդիկ խաբեալք 'ի դիւաց պաշտեն զնոսա, և ոչ իմացան զճշմարիտն Աստուած և զպարգևատուն նոցա յերկնից և յերկինս, որ կան և մնան հատուցման 'ի դալստեանն Քրիստոսի. և հայրն ձեր Վաղերիոս խաւարեալ առ լոյս և առ ճշմարտութիւնն՝ անհանձար ժառանգութիւն նոցա, 'ի խորս կորստեան ընթանալ՝ ոչ հաւանեցաւ գալ առ լոյսն ճշմարիտ Քրիստոս։ Արդ մի՛ հաւանիք մոլորեցուցչին, և գութ արկեալ որպէս առ հայրն՝ հաւանեալ նմա ժառանգ լինել դժոխոցն. զի որ սիրէ ըզհայր կամ զմայր առաւել քան զՔրիստոս՝ չէն նմա արժանի, մանաւանդ Աստուծոյ ուրացողս։ Որդեակք իմ, յիշեցէք զՀոգևոր մնունդ իմ, որ զձեզ աւետա-

բանաւն ծնայ, թէպէտ և ես ըստ մարմնոյ ծնօղ և մնուցօղ և ածեալ յայդչափ հասակ, իմ ինչ ոչ համարիմ զձեզ՝ այլ արարողին ձերոյ և ամենայն արարածոց։

Եւ այժմ աղաչեմ զձեզ, որդեակք իմ, ընթացարուք 'ի յոյս կենացն յաւիտենականաց. չեն ինչ բբռնաւորացն սպառնալիքն. ամենայն երկրաւորքս որ երեւին՝ անցաւորք են և ժամանակաւորք, այլ ձեր և իմ ցանկութիւն լիցի խնդրել զկամն նորա և զպատուիրանին պահպանութիւն, և այսպէս մեռանել 'ի կամն նորա։

Եւ իբրև կատարեցին զզոհս կռոցն և զպղծութեան պաշտամունսն, և տեսեալ Պաղերիոս զկինն որդւովքն՝ ոչ հպել 'ի զոհսն, բարկացեալ ածէր զորդիսն իւր յատեանն և աղաչէր զիշխանսն զի զորդիս նորա .... եցուցանեն[1] 'ի պաշտօն ...[2] կռոցն. զի որպէս հնար լիցէ ողղքանօք կամ սպառնալեօք և կամ տանջանօք հաւանեցուցանել զնոսա 'ի պաշտօն դիցն մնոտեաց։ Եւ բռնաւորացն հարցաքննեալ թէ ընդէ՞ր ոչ կամեցան լսել և զոհել, իսկ երէց որդին նորա ասէ ցբբռնաւորն. Այս յայտնի լիցի ձեզ, զի միով օրինակաւ և նովին կրօնիւք զօրէնսն Քրիստոսի պահեմք և զպատուիրանս նորա առնեմք և զմայրենի խրատն և ոչ զհայրենին՝ որ ոչ գիտէ զԱստուած, որոյ խաւարեալ միտքն 'ի դիւաց պղծոց. և խմաստութիւնն Աստուծոյ առաջնորդեալ մեզ հրամանաց իւրոց, զի արդարացեալք 'ի հաւատոցն՝ որդիք լուսոյ եղիցուք, և երանելեաց սուրբ հարցն ժառանգակիցք յարքայութեանն երկնից, որք ՀՇմարիտ հաւատով զմեզ ծնան 'ի յոյսն յաւիտենից կենացն։ Ունիմք և զնոյն խրատս զպարկեշտ և զքրիստոսասէր մօրն մերոյ, և խոստովանիմք և փառաւորեմք զամենակալն Աստուած։ Արդ դուք փութացարուք 'ի ձեռն տանջանացն ընտիրս երևեցուցանել զմեզ. քանզի պատրաստ եմք մատուցանել զմարմինս մեր 'ի մահ վասն Քրիստոսի, զի յաւուրն դատաստանի խորհուրդ հոգւոց մերոց 'ի լուսաւոր յոյսն

1. Ակիզբն բառիս եղծեալ. թուի հաւանէցուցանէն կամ խոնարհէցուցանէն։
2. Անկեալ է բառ մի յօրինակէն։

եկեսցէ։ Եւ լուեալ իշխանացն հրամայեցին զնա կա-
խել և քերել, և զայլ եղբարսն հանդերձ մարքն կալ
մօտ անդ և հայել։ Եւ ցնա ասէր բդեաշխին. Զի՞նչ ա-
նուն է քեզ։ Եւ նա ասէ. Մայրդ իմ՝ գեղեցիկ անուն
եդեալ՝ Թէոդնիս կոչեաց, զորոյ անուան իրօք զՀետ
երթեալ՝ գիտութիւն նոր առ Աստուած 'ի ձեռն Ճըշ-
նութեան այսր ջանամ հաստատել, և հաւատամ հա-
ղորդ լինել մասին սրբոց։ Բդեաշխն ասաց. Ընդէ՞ր հա-
ւանական բանիւք խաբեալք իբրև զմանկունս կամիք
հանել զձեզ 'ի կենացս։ Եւ հրամայեաց քերել զնա.
և մինչդեռ քերէին՝ քարոզն աղաղակէր. Զոհեա մեծի
աստուածոցն Արամազդայ և Ապողոնի և կաց։ Իսկ
սուրբ նահատակն ասէ ցիշխանսն. Տկար են մեքե-
նայքդ ձեր, ո՛վ պիղծ արբանեկօքդ սատանայի. յերա-
նելի մահ նահատակացն Քրիստոսի երդուեալ՝ եթէ
ոչ երկեայց 'ի տանջանացդ ձերոց վասն Աստուծոյ Ճըշ-
մարտութեանն. այլ 'ի ձեռն մեծամեծ խոշտանգա-
նաց՝ յաղթեցիս չարահնար իմաստիցդ ձերոց։ Եւ հա-
սին քերանքն մինչև յոսկերս սրբոյն, մինչև մերկա-
նալ իսկ ոսկերացն։ Եւ տեսեալ երանելւոյն Բասսայ՝
ասաց. Նահատակեաց, որդեակ, ընդդէմ սատանայի,
զգեցեալ զզէնն Քրիստոս, զապականացու մարմինդ
քո տուր բռնաւորացդ, զի 'ի գալստեանն Քրիստոսի
միւսանգամ ընկալցիս զդա։ Նոյնպէս և եղբարքն ա-
սէին. Պինդ կաց, տէր, միաբանս ընկալեալ և զմեզ.
քանզի պատրաստ եմք և մեք ընդ Ճանապարհն Տեառն
գնալ զկնի քո, և ընդ շաւիղս քո գնալ. վասն զի 'ի
հօր տեղ դու ես այսուհետև մեզ։ Իսկ երանելւոյ
նահատակին Քրիստոսի զաչս 'ի բարձունս համբար-
ձեալ ասաց. Աստուած, տուր ինձ զկատարեալ համ-
բերութիւն և զընթացս իմ կատարեա, զի եղէց
ժառանգաւոր սուրբ խոստմանցն՝ զոր խոստացար սի-
րելեաց քոց։ Եւ զայս ասացեալ և փառաւորեալ զՀայր և զՈրդի և զՀոգին սուրբ, ասացեալ զամէնն, և
այնպէս աւանդեաց զՀոգին։

Եւ բդեշխին կոչեցեալ զերկրորդ եղբայրն՝ ասաց.
Զի՞նչ անուն է քեզ։ Եւ նա ասաց. Մտերիմ աղախին
Ճշմարտին Աստուծոյ մայրս իմ՝ Ագապիոս կոչեաց զիս,
զորոյ զանուն վիճակեալ՝ փութամ 'ի սիրոյն Աստու-

ծոյ իմոյ չանկանել, այլ սիրելի նմա երևել։ Իսկ բը-
դեաշխն հեզաբար վարելովառ մանկունսն՝ ասաց. Ընդ-
դեղդ քո՝ ով մանուկ, զարմացեալ 'ի գութ յորդորեն
զմեզ աստուածքն, քանզի դթան 'ի քեզ վասն ուղիղ
վարուց հօր քո. արդ մի՛ զմոլորութիւն եղբօրն քո մո-
լորիր, այլ հաւանեա և զոհեա աստուածոցն, զի սի-
րելի մեր լիցիս։ Իսկ սուրբն ծիծաղեցաւ և ասէ. Ո՛վ
ամբարիշտ և անաստուած, խրատուդ ձերոյ այսչափ
կարէ [1] պիղծ և ամենայն չարահնար [2] մեքենայից
հայրն ձեր սատանայ հրապոյրս մատուցանել, զի 'ի
ձեռն ողոք բանից խաբեսցէ զծառայս Աստուծոյ. երբ
դուեալ 'ի պատուական մահ սրբոյ եղբօրն իմոյ՝ որ հա-
ւատով կատարեաց զընթացսն իւր, և 'ի կարգաւոր
վարս մօր մերոյ սրբոյ, եթէ զմարմինս իմ սրոյ և հրոյ
և գաղանաց մատնիցէք, ոչ ուրացայց զբարեպաշտ շա-
ւիղս եղբօր իմոյ, այլ ընդ հետս խոստովանութեան
նորա գնայցից. և օտար համարեցայց զստուեր կենացս
այսոցիկ, զի անմահ զգայութիւն հոգւոյս իմոյ՝ առ
Աստուած կատարեալ երևեսցի։ Եւ ասացեալ նորա
զայս՝ հրամայեցին պիղծ իշխանքն կախել զնա, և 'ի
գլխոյն մինչև 'ի լանջսն մորթել։ Իսկ սրբոյն այնպիսի
գառն տանջանաց համբերեալ՝ յաղօթս կայր և ասէր.
Աստուած ամենակալ, որ կամօք քովք կեցուցեր զազգ
քրիստոնէից, 'ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի, զանգամն մարմնոյս իմոյ անապականս արա, որ
կոչեցեր զիս 'ի կարգ բարեպաշտութեանս. զի քաջու-
թեամբ համբերեալ մրցմանս՝ զանապական պսակն ընդ-
կալայց 'ի թագաւորէն Քրիստոսէ, վասն որոյ արհա-
մարհեմ զնոտի աշխարհս՝ մերկացեալ զմորթ մարմ-
նոյս իմոյ։ Եւ զայս ասացեալ նորա՝ անօրէն դահիճքն
կորզէին զմորթն իբրև զվայրենի գաղանս՝ մինչև ցկուր-
ծրս նորա. և այնպէս քաջութեամբ յանդ հանեալ
նորա զընթացսն իւր, մինչդեռ յաղօթս՝ կայր աւանդ-
դեաց զոգին։

Եւ նորա վախճանեալ, հրամայեաց բդեաշխն արձա-
կել զերրորդ մանուկն, և ասէ ցնա. Ցի՞նչ անուն է

1. Ա.յլ օր. կարի։
2. Ա.յլ օր. ամենալար։

քեզ, և նա ասաց. Զարդ զգաստութեան սուրբ մայրն իմ՝ հաւատովքն Քրիստոսի պահեալ զիս, և հաւատարմացուցեալ զխորհուրդս հոգւոյ իմոյ, և Քրիստոսի յանձն արարեալ, Պիստիս անուանեաց զիս. ուստի անուանակցութիւնս երևեցուցանէ զբարեպաշտ խորհուրդ մօրն մերոյ։ Իսկ անօրէն իշխանքն ողբանօք կամէին խաբել զքրիստոսազգեաց մանուկն։ Եւ ասէ ցնա բդեաշխն. Ցիմաստուն խանձարուրս մնար մանուկ դու, արբեր կաթն աղնուական. և աստուածքըն վասն գթոյ հօրն քո խնայեն 'ի քեզ. արդ մի՛ լինիր անհաւան, այլ եթէ և պատիր բանիւք մարբ քով խաբեցար իբրև զմանուկ, այժմ հաւանեաց մեզ և լեր սիրելի մեծի աստուծոյն Աբրամազդայ, և կատարեա զՀրաման թագաւորին, և լեր մեր բարեկամ. զի եթէ զոհեսցես մեծին Աբրամազդայ՝ բուժեսցիս 'ի տանջանաց. քանզի գիտեմք և մեք եթէ իբրև զմանուկ խաբեցար։

Իսկ քրիստոսազգեաց մանուկն հեզաբար պատասխանի տուեալ ասէր. Բարիոք կացուցանէք զիս 'ի վերայ Ճանապարհին Ճշմարտութեան, թէպէտ և չիմանայք, զի հաւանեցայց գթոց երկնաւոր Հօրն Յիսուսի Քրիստոսի, և ընթացեալ զասպարէզն յաղթեցից չարահնար զինուցդ ձերոց. քանզի Ճշմարիտն Աստուած առընթեր կայ իմ ունելով զարդարութեան պսակն։ Արդ մի՛ կարծէք եթէ իբրև զմանուկ հաւանեցայց ողբանացդ ձերոց և երկեայց յառաջիկայ տանջանացդ. քանզի թէպէտ և մանուկ երևիմ ձեզ, այլ խորհրդովք կատարեալ կամ առաջի, խրատեալ Քրիստոսի իմաստութեամբն՝ փութամ ընդ առաջկատարեալ սուրբ եղբարսն իմ գրիլ 'ի վիճակ սրբոց։

Իսկ չարահնար իշխանքն, հրամայեցին կապել զնա ձեռս յետս, և կապարէիւք մալել զջիղսն. և կորզել զկապանսն 'ի պարանոցն զի բեկեալ յետս կոյս յարմիկունսն, և լուծեալ յօդոցն և 'ի խաղալեացն՝ վաղվաղակի հանցէ զոգին։ Իսկ սուրբ նահատակն Քրիստոսի յայնպիսի չարչարանս զակն 'ի յերկինս համբարձեալ՝ ասէր մեծաձայն. Քրիստոս Փրկիչ, լսցդ իմ Ճշմարիտ, Ճառագայթ արդարութեան, որ մօտդ ես առ երկիւղածս քոյ, և ոչք պահեն զպատուիրանս քո,

գթած և ողորմած, դու Տէր և յիս առաքեա զօգնականութիւն քո. այո, Տէր իմ Յիսուս Քրիստոս, փրկեա զիս յապականութենէ հակառակորդին, և թուեա զիս ընդ Ճշմարիտ առաքինի նահատակսն, որ վասն սրբոյ անուանդ քո մատնեցին զանձինս 'ի մահ։

Եւ լուեալ Իշխանացն և չհամբերեալ այնպիսի համարձակութեան՝ հրամայեցին զնա գլխատել. և սուրբն ասաց. Թողացուցէք ինձ վայրկ մի, զի խորհեցայց։ Եւ առեալ թողութիւն՝ ասէր. Թագաւոր ամենայն յաւիտենից ամենակալ, որ 'ի ձեռն Քրիստոսի քո զամենայն իմաստութեամբ արարեր, որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի, որ զամենայն ինչ կատարեալ յօրինեցեր, որ զգունդս դիւացն 'ի տարտարոսն ընկղմեցեր, և զորս վասն անուան քո ձգնեցան՝ ընդ երկնաւոր քաղաքացիսն գրեցեր, և ընդ սուրբս քո տօնես 'ի յաւիտենական ցնծութիւնն. դու, Տէր, ընկալ և զիմ ոգիս, և գրեա ընդ երկնաւոր քաղաքացիսն 'ի վերինն Երուսաղէմ՝ այսու խոստովանութեամբ. և զսուրբ մայրն մեր համարեա 'ի դասս սրբոց, որ երիս որդիս ծնաւ պատուիրանօք քովք, և ծառայեաց քեզ սուրբ սրտիւ։ Եւ իբրև կատարեաց զաղօթսն՝ ասէ ցդահիճն. Ե՛կ կատարեա զհրամայեալն քեզ։ Եւ այնպէս կատարեցաւ առաքինի նահատակն Քրիստոսի։

Եւ յետ այնր հրամայեցին Իշխանքն զքրիստոսասէրն մայրն մանկանցն տանել 'ի բանդ. և զուշութեամբ հրամայէին պահել, և ոմանց մտանել առ նա 'ի սիրելեաց իւրոց, զի հաւանեցուսցեն զնա զոհել աստուածոցն։ Իսկ սուրբն 'ի բանդին անպակաս յաղօթս կայր և փառաւորէր զԱստուած. և խնդրէր անխափան կատարել զընթացս խոստովանութեամբն Քրիստոսի։ Եւ զայնս ողբ մտանէինն և ելանէին առնա՝ զի հաւանեցուսցեն զնա, մեծաւ թշնամանօք արձակէր։ Եւ յետ աւուրց բազմաց կամեցաւ չուել Իշխանն 'ի Մակեդոնիա. և խորհեալ այգուն զոհել դիւացս, հրամայեաց ածել և զսուրբն Բասսա՝ զի զոհեսցէ։ Եւ իբրև եկն առաջի՝ ասէ ցնա Իշխանն. Զի՞նչ անուն է քեզ։ Եւնա ասէ. Քրիստոնեայ եմ, և 'ի մարդկանէ Բասսա կոչիմ։ Իշխանն ասէ. Գիտացեր զտանջանս մանկանցն քոց՝ որ 'ի ստինս քո սնան և 'ի գիրկս

քո զարդացան, զի վասն անհաւանութեան իւրեանց դառն և անհնարին տանջանօք մեռան, և քո տեսեալ զչար մահն նոցա ժուժկալեցեր. արդ և դու եթէ ոչ հաւանեսցիս՝ և սա մեծագոյն և չարաչար տանջանօք վատնեսցիս։ Եւ սուրբն Բասսա ասաց. Այնօրէն և չարիմաց հոգւով և աղաջուր բարիւք. կարծես եթէ թողուցո՛ւմ զընթացս մանկանցն իմոց, և զայնպիսի նահատակութիւն զոր նահատակեցան՝ իմ մնուցեալ զարմանալի մանկունքն, որ այժմ ընդ Քրիստոսի յերկինս ցնծան, և մնոտի խրատուդ քո հաւանիցիմ, զի ոչ մեռայց. լռեա 'ի մոլորութենէդ, ո՛վ բռնաւոր. քանզի ասպարէզն Քրիստոսի պատրաստ է, և կայ մնայ ինձ նահատակել ընդդէմ հօրն քո սատանայի, և ընթանալ առ թագաւորն երկնաւոր. առեալ զառհաւատչեայ վերին կոչմանն. արդ տանջեա որպէս և կամիս, քանզի ես ոչ հաւանիմ զոհել անշունչ դիւաց։ Եւ զայրացեալ իշխանին հրամայեաց կապել զնա ձեռս յետս, և նախ կապարիւք ջարդել զամենայն անդամն նորա. և յետ ջարդելոյն ապա գլխատել զնա։ Բասսա ասաց. Գոհանամ զքէն Քրիստոս, որ միայնդ ունիս զանմահութիւն, զի արժանի արարեր զիս կոչմանս այսմ։ և աղաչեմ զքեզ, Տէր, ընկալ զխոստովանութիւնս իմ, և խառնեա զիս 'ի թիւս սրբոց քոց, զի փառաւորեալ է անուն Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ։ Եւ այնպէս խոնարհեցուցեալ զպարանոցն գլուխ խատեցաւ սուրբ և առաքինի վկայն՝ 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր. որում փառք և զօրութիւն 'ի յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոց Վկայիցն Բասսոսի, Եւսեբի, Եւտիքի և Բասլի՝ չորից զինուորացն։

Յետ վկայութեան սրբոյ եպիսկոպոսին Թէոպոմ-
պեայ և Թէոմնայ կախարդի, այս չորք զինուորքս Բաս-
սոս, Եւսեբիոս, Եւտիքոս և Բասիլիոս, եկին 'ի միա-
սին առաջի Թագաւորին, լուծեալք զգօտիս 'ի միջոց
իւրեանց, եդին առ ոտս նորա, աղաղակէին մեծա-
ձայն և ասէին. Քրիստոնեայ եմք։ Քանզի և նոքա
առաջաւորք և պատուականք 'ի դրան արքունի, և մե-
ծագոյն պատիւ ունէին քան զամենայն զինուորակիցս
իւրեանց։ Իսկ իբրև ետես Թագաւորն՝ բարկացաւ
յոյժ, և ասէ ցնոսա թէ՝ Արդարև քրիստոնեայք էք՝
որպէս ասացէքդ։ Յայնժամ ասեն ցնա. Քրիստոնեայք
եմք։ Պատասխանի ետ Թագաւորն և ասէ ցնոսա.
Զի՞նչ հաճեաց զձեզ զայդ ասել ինձ։ Յայնժամ պա-
տասխանի ետուն իբրև 'ի միոջէ բերանոյ և ասեն.
Շատ է մեզ զոր յանցեաք 'ի մանկութենէ մերմէ մին-
չև ցայսօր. կամիմք այսուհետև ապաշխարել վասն ա-
ռաջին յանցանաց մերոց, և խոստովանիմք 'ի Տէր մեր
Յիսուս Քրիստոս, 'ի Թագաւորն որ կայ և մնայ յաւի-
տեան. որ քաւիչ լինի մեզ վասն բազում ողորմու-
թեանն իւրոյ։ Եւ յայսմ առաւել ևս խռովեցաւ Թա-
գաւորն բարկութեամբ մեծաւ։ Եւ դարձեալ խոր-
հեցաւ անցուցանել զբարկութիւնն 'ի նոցանէ, քան-
զի սիրէր զնոսա յոյժ, և սկսաւ ասել ցնոսա գաղտ.
Զիարդ էք քրիստոնեայք, զի բերանովք և շրթամբ
խոստովանիք՝ թէ քրիստոնեայք եմք, և սիրտք ձեր 'ի

ստացուածս ձեր զանգեալ են. արդ՝ եթէ Ճշմարիտ քրիստոնեայք էք դուք, տուք ինձ զարարս ձեր զամենայն զոր ինչ և ունիք, զի շնորհեցից զայն ընկերաց ձերոց։ Զայս ասէր զի փորձէր զմիտս նոցա, եթէ պահեսցեն և ոչ տացեն նմա զինչս իւրեանց։ Փութացեալ երանելոյն Բասսոսի՝ եկն և եբեր ոսկի լտերս քսան, և եդառ ոտս նորա, և ասէ. Զամենայն ստացուածս իմ տամ քեզ։ Նման նմա Եւսեբիոս երանելի տեսեալ զյօժարութիւնն Բասսոսի՝ ինքն ընդ ինքեան եկն և եբեր ոսկի լտերս քառասուն։ Եւտիքոս այր ցանկալի եկն և եբեր ոսկի լտերս վաթսուն, և ասէ. Այս ոչ ինչ է վասն Աստուծոյ. զայս ասաց առաջի թագաւորին։ Իսկ երանելի ծառայն Քրիստոսի Բասիլիոս՝ հոգւով եռացեալ բազում զօրութեամբ, եկն և եբեր ոսկի լտերս եօթանասուն՝ և ասէ. Զայս ամենայն արհամարհեցաք վասն Աստուծոյ սիրոյն, զոսկի և զարծաթ և ըզհանդերձս պատուականս անարգ համարեսցուք. և ասեն ցթագաւորն. Այս ամենայն յոչինչ է և յոչինչ համարեալ է. եթէ զամենայն ինչ շահեսցուք՝ զինչ օգուտ է մեզ, որպէս և գրեալ է. Եթէ զամենայն աշխարհս շահեսցուք և զանձինս մեր կորուսցուք՝ զինչ շահ է. և դարձեալ ասէ, եթէ՝ Զինչ տացես փոխանակ ընդ անձին քում։ և Լաւ է անկանել 'ի ձեռս Աստուծոյ և մի՛ 'ի ձեռս մարդկան. զի ոչ կարեմք մեք մոռանալ զվաստակս և զնեղութիւնս հօր մերոյ զերանելւոյ վարդապետին զսուրբ եպիսկոպոսին Թէոպոմպեայ. քանզի զքսան և զերիս աւուրս եղև 'ի տան մերում, ոչ կերեալ և ոչ արբեալ, և ոչ նքթեցաւ անձն նորա, այլ համարձակութեամբ և բազում զօրութեամբ առնէր աքանչելիս. քանզի տեսաք 'ի գիշերի անդ լոյս մեծ՝ որ լուսաւորեաց զնա և զամենայն տունն, և շարժեալ զտունն 'ի հիմանէ. ոչ կարեմք մեք մոռանալ զՃշմարիտ հովիւն մեր որով գտաք զՀանապարհս Ճշմարտութեան։ Այլ վասն որոյ ասես դու եթէ զոհեցէք աստուածոյն, որ ոչ տեսանեն և ոչ լսեն, և ոչ խօսին, և ոչ կարեն բարի ինչ առնել կամ չար. քանզի երիս ամիս եղեն 'ի տան իմում, և ոչ տեսաք նշանս ամենևին և ոչ զօրութիւն. կային 'ի մէջ մոխրոյ լի. և յորժամ տեսանիցաք զփոշի՝ յերեսաց նոցա մաքրիցաք.

և ոչ զինքեանս բաւական էին բառնալ. քանզի ոչ կա-
րէին գնալ, բարձեալ կրէին զնոսա մեհենաբարձք. և
այսպէս խաբէին զբազումս 'ի մարդկանէ, և քարո-
զէին թէ այս են աստուածք։ Գիտասջիր զայս, ո՛վ Թա-
գաւոր, սոքա ինքեանք կորուսեալ են, և զբազումս կո-
րուսանեն. այլ դու ծանիր զԱստուած Ճշմարիտ որ
կայ և մնայ յաւիտեան. այլ վասն մեր իշխանութիւն
ունիս զինչ և կամիս արա. պատրաստ եմք շահել զո-
գուտն մեր վասն Աստուծոյն մերոյ։

Եւ լուեալ զայս Թագաւորն հրամայեաց արկանել
զնոսա 'ի բանդ. և եղէն անդ աւուրս եօթն, և գայլն
անդ փեսայք իւրեանց և քորք և աղաչէին զնոսա քա-
ջալերէին և ասէին. Եղբարք, փութացարուք և համ-
բերեցէք ամենայն փորձանացդ, քանզի Փրկիչն մեր
ասաց. Խնդրեցէք և տացի ձեզ. քանզի ոչ գոյ այլ հզօր
քան զՏէր, որ օգնական է մեր։ Յիշեցէք և զայս եղ-
բարք, զի զբարութիւն աշխարհիս այսորիկ վարեցա-
ցուք ընդունայն և զանցաւորս, պարտիմք այժմ նկըր-
տել մինչև հասցուք անապականութեան կենացն յա-
ւիտենից։ Քանզի հանգիստ աշխարհիս այսորիկ առ-
ժամանակ մի է, իսկ յուսացելոց աշխարհի կեանքն՝
յաւիտենից են։ Եւ այսպիսի բանիւք քաջալերէին
զնոսա աղդականքն իւրեանց։

Եւ յութերորդ աւուրն, հրամայեաց Թագաւորն
տանել զնոսա յապարանսն իւր, և կոչեաց զնոսա, և
անկաւ յոտս նոցա Թագաւորն և ասէ ցնոսա. Լուա-
ցուք ինձ, որդեակք իմ։ դուք ինքնին գիտէք զիս
և զթագաւորութիւնս իմ։ ոչ իսպառ բարկացայ ձեզ,
խնայեցէք և դուք 'ի ձեզ, զի մի՛ չարաչար մեռանիցիք.
քանզի մահ ամենայն մարդոյ առ դուրս հասեալ կայ,
ոմն պատուով և ոմն անարգութեամբ վախճանի. դուք
մի՛ հայիք ընդ մահ եպիսկոպոսին Թէոպոմպեայ. քան-
զի կախարդ էր և ինքն իւրովի խնդրեաց զանարգու-
թեան մահն։ Եւ լուեալ զայս բանս ոչ խռովեցան
աղատքն և ոչ խաբեցան 'ի բանս նորա, այլ միաբան
աղաղակէին, թէ՝ Քրիստոնեայք եմք, և ոչ դու կարես
խաբել զմեզ, քանզի հասեալ է շնորհքն Աստուծոյ
'ի վերայ մեր։ Զայս իբրև լուաւ Թագաւորն, և ոչ կա-
րաց 'ի հաւանութիւն ածել զնոսա, դարձեալ հրա-

մայեաց ածել զնոսա զառաջեաւ իւրով. և իբրև ա-
ծին զԲասսոս, ասէ ցնա Թագաւորն. Ընդէ՞ր ոչ զոհես
աստուածոցն իմոց։ Պատասխանի ետ սուրբն Բասսոս
և ասէ. Ոչ զոհեմ։ Բարկացաւ Թագաւորն և հրա-
մայեաց ձեռս յետս կապել զնա և զոտս նորա, և արար
զնա ցոյց բարեկամաց իւրոց, և զձեռս նորա հրամա-
յեաց կտրել կացնով. և այնպէս անդամ անդամ կո-
տորեցին զնա մինչև արձակեաց զոգին երանելի նա-
հատակն Քրիստոսի Բասսոս, և կատարեաց զվկայու-
Թիւնն իւր բարի խոստովանուԹեամբ 'ի Քրիստոս
Յիսուս 'ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս։

Յետ այսորիկ յառաջ մատուցին վաղվաղակի և զԵւ-
սեբիոս։ Ասէ Թագաւորն. Եւսեբիէ, խնայեա դու 'ի
քեզ և զոհեա աստուածոցն, զի մի՛ չարաչար մեռանի-
ցիս։ Պատասխանի ետ երանելի Եւսեբիոս և ասէ մե-
ծաձայն. Մի՛ լիցի ինձ Թողուլ զՏէր իմ, որ սիրեաց
զիս, և զսիրելի բարեկամս իմ՝ որ յառաջ կատարե-
ցաւ, որ խորհրդակիցն եղև իմ բարեացն։ Ասէ Թա-
գաւորն. Ոչ ոք կայ բարեկամ քո, և ոչ ոք կարէ ապրե-
ցուցանել զքեզ 'ի ձեռաց իմոց։ Պատասխանի ետ ե-
րանելին և ասէ ցնա. Պապանձեաց, և մի՛ ևս երկրոր-
դեսցես զբանս քոյ։ Բարկացեալ դատաւորն և հրա-
մայեաց կախել զնա գլխիվայր զերկոցունց ոտից և կա-
պել զիւրաքանչիւր զոտս նորա 'ի սիւնան. և այնպէս
պրկեալ չարչարանօք կատարեաց զվկայուԹիւնն իւր
խաղաղուԹեամբ։

Եւ յետ նորա կատարելոյ 'ի Տէրս, հրամայեաց ածել
զերրորդն. և կացեալ առաջի նորա Եւտիքիոս, ասէ ցնա
Թագաւորն. Գիտե՞ս, զի որ լսեն ինձ և առնեն զկամս
իմ՝ շնորհեմ նոցա պարգևս. և որք հակառակ կան
բանից իմոց՝ չարչարանօք հանեմ 'ի կենացս յայս. արդ՝
ընտրեա դու քեզ զպարգևսն կամ զմահ։ Պատասխա-
նի ետ Եւտիքիոս և ասէ. Պարգևք քո ընդ քեզ լիցի 'ի
կորուստ. մարդկան պատիւ առ ժամանակ մի է, և Աս-
տուծոյ զօրուԹիւնն և պատիւ անվախճան է. զի յոյս
երևելի չէ յոյս, զի քո պատիւդ և յոյսդ կորուստ է մեզ։
Զայս ասացեալ երանելւոյն յատենին, և հրամայեաց
արկանել ընդ ծամելիս նորա բևեռս, և այնպէս յե-
րիս բարժանել զմարմինս նորա. և կատարեաց զվկա-
յուԹիւնն իւր խաղաղուԹեամբ։

Այպա Հրամայեաց ածել զչորրորդն զառաջեաւ, ո-
րում անուն էր Բասիլիոս, որ պատուական էր և ա-
ռաջաւոր էր 'ի պալատ նորա. և ասէ ցնա Թագա-
ւորն. Աղաչեմ զքեզ, անսա բանից իմոց զոր ինչ ասեմ
քեզ, և յաւելցի պատիւ քո. և փառաւորեցից զքեզ
քան զամենեսեան՝ որ են 'ի պալատի իմում, և մի՛ ոք
խաբեսցէ զքեզ սնոտի բանիւք. յիշեա դու զի բարի
խորհուրդ խորհիմ քեզ, և արարից զքեզ իշխան 'ի
վերայ ամենայն զօրաց իմոց, զի ամենայն որ լսիցէ ե-
րանի տացէ քեզ, և 'ի քէն կատարեսցի ամենայն ար-
քունական հրաման. զի ոչ զոք ունիմ 'ի պալատի ի-
մում առաւել քան զքեզ. զի քան զամենայն ոք առա-
ւել սիրեմ զքեզ։ Լուր զոր ինչ ասացի քեզ, և հաշտի
ընդ քեզ Այսողոն մեծ աստուածն, և փրկէ զքեզ 'ի
կորստենէդ յայդմանէ։

Իսկ երանելին և մեծատոհմն Բասիլիոս ասէ. Ո՛վ
դու անզգայ և անմիտ, զինչ խօսիս. ոչ դու և ոչ Այս-
ղոնդ քո կարէ կեցուցանել զինքն և ոչ զքեզ, որ յու-
սացեալ ես 'ի նա. զի ինքն այրելոց է, և ամենայն որ
հաւատայ 'ի նա ընդ նա այրեսցի։ Զայս լուեալ Թա-
գաւորն բարկացաւ յոյժ, և հրամայեաց բերել սուր և
պատառեաց զորովայն նորա, և ասէ ցնա. Վասն զի
ստեցեր սիրոյ իմոյ՝ պատառեցից զքեզ իբրև զամբա-
րիշտ մի։ Պատասխանի ետ երանելին և ասէ, յառաջ
քան զաւանդել հոգւոյն. Այսօր կեցուցեր զիս, զի
ոչ օտարացայ 'ի պատուական մահուանէն, որ յառաջ
մեռան սուրբ եղբարքն իմ։ Եւ զայս ասացեալ վայե-
լուչն այն և բարեզարմն՝ ննջեաց խաղաղութեամբ,
կատարեալ և սորա զվկայութիւնն իւր. և 'ի միասին
Թաղեցան զինուորքն։ Այսպէս կատարեցան բարի
խոստովանութեամբ 'ի Քրիստոս, որ օր ուԹ էր արաց
ամոյ, և պսակեցան 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր,
որում փառք յաւիտեանս. ամէն։

Վկայաբանութիւն Երանելի եպիսկոպոսին Բարդիշոյ։

Յամն Տապկոյ արքայի արար հալածումն սաստիկ, դառնագոյն քան զամենայն թագաւորս, և անթիւք եղեն վկայք Քրիստոսի։ Եւ՝ ի ժամանակին յայնմիկ Բարդիշոյ [1] եպիսկոպոս ըմբռնեալ ածաւ առաջի թագաւորին Տապկոյ, որպէս զի առաւել տանջանս ընկալցի, որպէս զուսուցիչ հաւատացելոց քրիստոնէից, և յորդորիչ վկայից Քրիստոսի, արհամարհելով զտանջանս և զմահ վասն Քրիստոսի։

Ասէ արքայ ցԲարդիշոյ. Զի՞նչ է զոր լսեմն թէ ուսուցանես ընդդէմ օրինաց մերոց, և քամահես զաստուածս մեր՝ զարեգակն և զհուր, և հակառակ հրամանաց մերոց քարոզես աստուած, և ոչ զարհուրիս յահէ իմմէ թագաւորութեանս։ Ասէ սուրբ եպիսկոպոսն. Ես զտարերս աստուած ոչ գիտեմ, որ յամենեցունց արարչէն արարան. զի նա ասաց և եղեն ամենայն արարածք, և Աստուած բանն հրամայեաց և հաստատեցան արեգակն և լուսին և աստեղք, հուր և ջուր և որ ինչ յերկինս և յերկրի ամենայն զօրութիւնք [2], և Հոգւովն կենդանագրեցան՝ ի փառս և՝ ի գովեստ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, մի աստուածութիւն և զօրութիւն, անվախճան թագաւորութիւն. ողբ խոստովանեցին ամենայն սուրբք յամենայն ազգս,

1. Ա.յլ օր. Բարդէս։
2. Ա.յլ օր. զօրութեամբ հոգւոյն ենդանագրեցան։

և ես զնոյն խոստովանիմ և ուսուցանեմ զամենայն ոք. և որ ինձ լսէ՝ կեցցէ յուսով և դաղարեսցէ 'ի մոտի պաշտամանց և յամենայն ամպարշտութեանց։ Եւ բարկացեալ արքայ 'ի վերայ համարձակութեան երանելոյն, հրամայեաց գան սաստիկ հարկանել փշալից բրոք սպասաւորացն, և ասէին. Ուրացիր զաստուածն քո, և լեր պաշտօնատար աստուածոց արքայից արքայի։ Եւ սուրբն 'ի խորութենէ սրտին կարդայր առ Աստուած և գոհանայր, որ այնպիսի դառն տանջանաց մատնեցաւ վասն անուան Տեառն ամենակալի։ Եւ պատասխանի առ տանջողսն առնէր և ասէր. Ես ուրանամ զսնոտի աստուածս ձեր, այլ ոչ զՀշմարիտն Աստուած՝ որ արար զհրաշակերտս և զփառաւորս, որոց ոչ գոյ թիւ. որ և զիս կարող է զօրացուցանել 'ի չարաչար տանջանս, և ժառանգել զարքայութիւնն որում ցանկացեալն եմ զի փոխեցայց յերկրէս յերկինս։ Եւ իբրև այնպէս յերկար տանջեցին զսուրբն՝ արք բազումք ըստ հրամանաց արքայի, և ոչ ինչ լուան հաւանական բանս որոց յուսայինն, այլ ևս առաւել համարձակէր 'ի խոստովանութիւնն որ 'ի Քրիստոս և անարգէր զպաշտօնն նոցա, և ամենեքին զարմացեալ և հիացեալ կային [1], զի առ ոչ ինչ համարէր ըզբրածեծ գանիցն։ Այլ արքայ. Շփեցէք խոշորագունիւք զհարածդ [2], զի այնպէս [3] առաւել կսկծեսցի. և արարին այնպէս դահիճքն։

Իսկ սուրբն տոկայր և տևէր համբերութեամբ բազմաւ 'ի չարաչար տարժանմունս՝ [4] և ասէր. Ո՛վ ամենաչար թագաւոր, ոչ գիտես եթէ ոչ է զօրութիւն մարդոյ զայսպիսի դառն հարուածս և զչարչարանս ընդունել՝ եթէ ոչ յԱստուծոյ զօրանայ [5]. բայց զայս գիտասջիր, զի ոչ ինչ լսելոց եմ կորստական քոց հրամանացդ, թէպէտ և բիւրազգի տանջեսցես։

Արքայ ասէ. Վստահես 'ի զօրութիւն Աստուծոյ քոյ

1. Ա.յլ օր. էին։
2. Ա.յլ օր. զնարուածդդ։
3. Ա.յլ օր. այնպիսին։
4. Ա.յլ օր. պանջանս։
5. Ա.յլ օր. ոչ գիտես էնէ ոչ զզրուխիանն մարդոյ ոչ կարէ պէսանել զայսպիսի դառն հարուածս և զչարչարանս՝ էնէ ոչ յԱստուծոյ զրրանալ։

և 'ի համբերութիւն քոյ՝ յաղթել ինձ. և ես ոչ վրա-
տահանամ յաստուածն և յարքայութիւնս իմ, որ ա-
մենեցուն տէր եմ [1]։ Եւ ետ արքայ բերել հիւսանց
մամուլս, և դնել զոտս նորա 'ի մամուլս և խորտակել։
Եւ ետ բերել խունկս և հուր, զի արկցէ 'ի հուրն և
ծխեսցէ, և եղիցի որպէս պաշտօնատար հրոյ, այնպէս
խորամանկեալ զարդարն։ Իսկ նա զգայր չարութեանն
և զդաւաճանութիւնն ճանաչէր, և առեալ զխունկն
ցրուեաց յերկիր՝ և ասէ. Քաւ լիցի ինձ պաշտօն մա-
տուցանել արարածոց և խունկ ծխել հրոյ, բայց
միայն Աստուծոյն իմոյ զբանական պաշտօնն մատուցի
և մատուցից. զի նմա վայելէ փառք իշխանութիւն և
պատիւ այժմ և յաւիտեանս. ամէն։

Եւ բարկացեալ արքայ՝ հրամայեաց զմատունս ձե-
ռաց նորա կոճ կոճ լուծանել, փոխանակ ցրուելոյ ըզ-
խունկն։ Իսկ սուրբ եպիսկոպոսն բանայր զբերանն 'ի
գոհութիւն և 'ի փառաբանութիւն Աստուծոյ, և
յուսոյն մխիթարէր. զի թէպէտ և մատունքն կոճ-
կոճէին [2] և ցաւն վտանգէր, այլ առ Աստուած սէրն
անխզելի և անյաղթ մնայր. և նահատակէր առ խոր-
հուրդն և 'ի պատասխանին և 'ի համբերութիւնն։
Եւ դահիճքն վաստակէին և նա ոչ վհատէր. և հիա-
ցեալ և զարմացեալ կային ընդ համբերութիւն սրբ-
բոյն՝ արքայ և ամենայն ատեանն։

Եւ արք երեք երիտասարդք խրախուսեալք 'ի Քրիս-
տոս, մեծաւ համարձակութեամբ 'ի յարքունական
ատենին առաջի արքային և ամենայն մեծամեծացն,
աղաղակեցին միաբան և ասեն. Մեծ [3] է Աստուածն
քրիստոնէից և այլ ոք չիք, որ տայ զօրութիւն յուսա-
ցելոց իւրոց, և յամօթ առնէ զհպարտ և զամբարիշտ
թագաւորս, որք պաշտեն զարարածս և ոչ զարարիչն,
որ է օրհնեալ յաւիտեանս. և մեք խոստովանիմք ըզ-
Հայր ամենակալ, և զՈրդին համազօր, և զՀոգին հա-
մագործ, որպէս երանելի եպիսկոպոսն քարոզեաց,
աստուածութիւն մի փառաք 'ի փառս միաւորեալ՝ ան-
վախճան թագաւորութեամբ։ Եւ մեք խոստովանեալ

1. Այլ օր. փէրեմ։
2. Այլ օր. խոճոպէին։
3. Այլ օր. մի է Աստուածն։

այսմ, հաւատով և ճշմարտութեամբ փառաւորեմք միշտ, միայն ընկալցի զմեզ՝ որպէս բարերար Աստուած։

Եւ սրտմտեալ արքայ հրամայեաց արտաքս հանել զնոսա և տանել 'ի բանդ։ Եւ առաքեաց 'ի ձեռն մըտերիմ ծառայից իւրոց՝ խոստանալ նոցա պարգևս և պատիւս և իշխանութիւնս, և բազում ողբանօք դարձուցանել զնոսա անդէն 'ի մոլորութիւնն իւրեանց. որոյ ոչ հաւանեալք՝ անդէն 'ի բանդին գաղտ կատարեցին զերիտասարդսն սրով, բարիոք դաւանութեամբ 'ի Քրիստոս։

Եւ դարձեալ ողբքէր զսուրբ եպիսկոպոսն առանձնական բանիւք՝ և ասէր. Հաւանեա ինձ և պաշտեա զաստուածսն՝ զոր ես պաշտեմ, և փառաւորեմ զքեզ 'ի դրան արքունի՝ որպէս քաջասիրտ այր, և արարից զքեզ դատաւոր դատաւորաց և իրաւարար արքունի։ Իսկ սուրբ եպիսկոպոսն ասէ. Մի՛ նենգութեամբ որսար զիս 'ի կորուստ, զի վասն յուսոյն յաւիտենից մատնեցի զմարմինս իմ տանջանաց, որով կտտեցեր զիս հարուածովք և խորտակելով զանդամս իմ 'ի հիւսանց մամուլս, և կոձոպեալ զմատունս իմ, զի համբերեալ ամենայնի՝ անապական ստացայց զապականեալ մարմինս 'ի յարութեանն յարքայութեանն արդարոց, զոր պատրաստեաց ամենակալն Աստուած ամենայն սրբոց՝ որ զայսպիսի համբերութիւն 'ի մեղաւորաց հակառակութենէ անտի կրեցին. որպէս և Տէր մեր Յիսուս Քրիստոս, որ ետ զանձն 'ի մահ 'ի փրկանս ամենեցուն, որք կամեցան գալ 'ի կոչումն հոգևոր ուրախութեանն՝ վկայութեամբ Աստուծոյն աստուածոց [1]։ Եւ այժմ փութամ զերծանել 'ի մարմնոյս, և մտանել առ Քրիստոս առ որ անձկացեալն եմ։ Բայց քեզ և որ միանգամ իբրև զքեզդ են [2], պատրաստեալ է անշէջ հուրն, և պէտպէս դառն տանջանքն յաւիտենից, որ զհոգի և զմարմին տանջէ առհասարակ [3]. և ոչ ոք է որ փրկէ զմեղաւորս և զամբարիշտս 'ի բարկութենէն որ գալոցն է։ Բայց դու թէ կամիս, արքայ, դառնալ և պաշտել զԱստուած, ընդունի զքեզ 'ի ձեռն խոստո-

1. Այլ օր. աստուածայնոցն։
2. Այլ օր. իբրեւ զքեզդ իցեն։
3. Այլ օր. իրարանէ առհասարակ։

վանութեան և ապաշխարութեան, զի բարերար և անօրինակալ է առ մեղուցեալս, զի ոչ ըստ մեղս մեր առնէ և ոչ ըստ անօրէնութեան հատուցանէ՝ որք ճշմարտութեանն հետևին։

Զայս լուեալ արքայի, ևս առաւել 'ի ցասման եղեալ՝ ասէ. Ո՛վ ամենաչար խարդախող, զիմ ողոքանս քամահեալ, զիս կամիս ընկենուլ 'ի թագաւորութենէս 'ի ստրկութիւն ծառայութեան. բայց այլ ոչ ևս ներեցից քեզ, ողոքական բանք իմ ածին զքեզ յայդպիսի համարձակութիւն։

Երանելի եպիսկոպոսն ասէ. Ես զօրտակարան խօսեցայ որպէս առեալ հրաման 'ի Տեառնէ, զոր սուրբն Աստուած քարոզեաց յաշխարհի, որ ունիցի ականջս լսելոց լուիցէ զբանս կենաց։ Բայց դու՝ օտարացեալ յԱստուծոյ և թշնամի ամենայն արդարութեան, ոչ ես արժանի ճանաչել զիմաստութիւն և զհոգևոր խրատս, և 'ի միտ առնուլ զբանս հանճարոյ և ուղղել յաստուածգիտութիւն և յարդարութիւն ճշմարիտ, և հեռանալ 'ի բազմաստուածութեանն մոլորութենէ և 'ի պատրանաց չար դիւաց՝ որք ընկղմեն զքեզ 'ի խորս չարեաց անօրէնութեան, որդի գեհենի [1] և ժառանգորդ նոցին տանջանաց յաւիտենից։

Զայս իբրև լուաւ՝ բարկութեամբ լի եղև թագաւորն և հրամայեաց զլեզուն ընդ ծոծրակն հանել զի մի կարասցէ խօսել. և ամենաչար սպասաւորքն արարին զհրամայեալսն 'ի թագաւորէն։ Իսկ սուրբն ամբարձ զաչս իւր յերկինս և փառաւոր առնէր 'ի սրտի իւրում զԱստուած, և բարբառ իւր ոչ լինէր լսելի։ Եւ ձայն եղև 'ի վերուստ՝ որ ասէր. Քաջալերեաց, զի հասեալ է ժամ կատարման քոյոյ նահատակութեանդ, և կատարեցան խնդրուածք ըստ ամենայն ցանկութեան քո։ Եւ անդէն կազդուրեցաւ լեզու նորա 'ի տեղի իւր, և խօսէր ուղիղ, և օրհնէր զԱստուած առաջի ատելեաց իւրոց և ասէր.

Գոհանամ զքէն Տէր երկնի և երկրի, որ արժանի արարեր զիս զանարժանս [2] քոյոյ ամենառատ շնորհացդ

1. Ա.յլ օր. որ 'ի գեհենի։
2. Ա.յլ օր. զանարգս։

և յարգեցեր զտառապելութիւնս իմ չարչարանօք որ պէս զարծաթ 'ի բովս հրոյ զտեալ և պարզեալ 'ի կամայ և յակամայ սխալանաց. և արդ զի՞նչ տաց տրիտուր Տեառն ընդ ամենայնի զոր շնորհեցեր ինձ, այլ զանձն իմ 'ի մահ տաց վասն անուանդ քո սրբոյ 'ի վկայութիւն առաջի Թագաւորի [1] ամպարշտի և չար իշխանաց և ամենայն ատելեաց քոց, զի ծանիցեն ամենեքեան թէ դու միայն ես Ճշմարիտ Աստուած՝ որ 'ի սիրոյ քո ոչ երբեք մեկնեցայ խսպառ։ Եւ արդ փութամ, Տէր, ելանել 'ի մեղսասէր աշխարհէս, և յանդիման լինել փառաւոր երեսաց քոց, առ որ անձկացեալդ եմ։ զի և այդր քեզ հատուցիս զանձառելի օրհնութիւնս ընդ ամենայն սուրբս, որոց փառաւորեալ են մահք իւրեանց առաջի ահաւոր քո տէրութեանդ. զի դու ես Աստուած փառաւորեալ և օրհնեալ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։ Եւ ասացեալ զամէնն, երեքհարիւր և եօթանասուն և երեք արանց հաւատացին յԱստուած՝ և ասեն. Մեծ է Աստուածն քրիստոնէից և այլ ոք չիք. զի ոչ ոք ունի այսպիսի քաղցր յոյս որպէս քրիստոնեայք, որ զմահ և զտանջանս արհամարհեն, և 'ի թագաւորաց ոչ զարհուրին, այլ աներկիւղ համարձակութեամբ քարոզեն զԱստուած. և մեք այսմ հաւատով լուսաւորեալք 'ի սրբոյ եպիսկոպոսէս, խոստովանիմք զՀայր բարերար՝ որ գթացաւ 'ի մեզ, և զՈրդին բարեխնամող՝ որ կոչեաց զմեզ 'ի կոչումն սուրբ, և զՀոգին սուրբ՝ որ վերստին զշնութիւնս մեր նորոգէ 'ի յոյս կենացն յաւիտենից։ Որ է մի աստուածութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, փառաւորեալ և երկրպագեալ և օրհնեալ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Եւ զայս լուեալ արքայի ևս 'ի ցասումն շարժեալ 'ի չարէն, հրամայեաց սրով բառնալ զնոսա 'ի կենաց. և այնպէս կատարեցան բարի խոստովանութեամբ մկրտեալք յիւրեանց արիւնն, ժառանգորդք եղեն արքայութեանն երկնից աղօթիւք և բարեխօսութեամբ սրբոյ եպիսկոպոսին. որոց անուանք գրեալ են 'ի դիպրութեան կենաց։

1. Այլ օր. առն Ռափաորի։

Յետ ամենեցուն և զսուրբ եպիսկոպոսն Հրամայեաց գլխատել։ Եւ այսպէս կատարեցաւ սուրբ եպիսկոպոսն Բարդիշոյ, երեք հարիւր եօթանասուն և երեք արամբք 'ի տասն և եօթն սահմի ամսոյ. 'ի փառս և 'ի գովութիւն ամենասուրբ Երրորդութեանն, առաջի Շապհոյ արքայից արքայի և ամենայն Պարսից [1] արքունական ատենին, զարմանալին և սքանչելին հրեշտակաց և մարդկան։

Այսպէս առ Քրիստոս ամբարձաւ, և օրինակ բարեաց և քաջ նահատակութեան եթող յաշխարհի անուն. մանաւանդ զանստուերը և զանապական և զմշտնջենաւոր կեանսն ժառանգեաց, որ և բարեխօս իսկ է վասն մեր։

Եւ մինչդեռ էր 'ի կենցաղումն, յորդորէր 'ի սէր աստուածութեանն զբազումն, և յուղիղ հաւատս ամենասուրբ Երրորդութեանն և 'ի վարս արդարութեան ըստ պատուիրանաց և վարդապետութեան ուղղափառ սուրբ Հարց. զի յամենայնի Ճշմարտախորհ էր այրն և զգաստասէր, ոչ յումեքէ դրդուեալ և խոտորեալ 'ի հաւատոց և յարդարութենէ. այլ ամբիծ հաւատով և անարատ վարուք կրօնաւորեալ յայսմ աշխարհիս, վախճան կենաց առնէր 'ի Քրիստոս Յիսուս։ Որում և մեք մասնաւորեալք վարուց սրբոյն՝ փառաւորեսցուք զանփոփոխելի տէրութիւնն, զՀայր և զՈրդի և զՀոգին սուրբ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

1. Այլ օր. Ի ամենայն պարսից։

Վկայաբանութիւն սրբոյ առաքելոյն Բարդողոմէոսի։

Գլխաւորք սրբոյ առաքելոցն՝ երկոտասան աշակերտքն, վիճակեցան յազգս ազգս՝ յիշանելն 'ի նոսա Հոգւոյն սրբոյ 'ի վերնատանն, երկնագործել տարբերութեամբ լեզուացն հրեղինաց 'ի ձայն հողմոյ. և ընկալան ձեռնադրութիւն երիցութեան, առեալ իշխանութիւն զմեղս թողուլ և ունել, և առնել նշանս և արուեստս. և շնորհել լուծումն ախտից, և բարձումն ցաւոց, և հալածումն սատանայի, և քակտումն 'ի մեղաց և ազատութիւն 'ի ծառայութենէ ապականութեան՝ յազատութիւն փառաց որդւոյն Աստուծոյ, և գնալ 'ի պատուիրանս նորա, և արժանի լինել խոստացելոց պարգևացն, և որ անդ են բարութիւնքն։ Եւ ըստ առաջնորդելոյ Հոգւոյն սրբոյ՝ ամենեցան գնացին յազգս ընդհանուր լեզուաց քարոզել զբանն կենաց, և լուսաւորել զնոսա ծննդեամբ սուրբ աւազանին, և վերակացութեամբ Հոգւոյն սրբոյ արարչական զօրութեամբ։

Գնաց և երանելի առաքեալն Բարդողոմէոս, որ էր մի յերկոտասանից. երթեալ մտանէ յիւր վիճակ առաքելական ընտրութեանն. և 'ի սկզբան քարոզութեանն իւրոյ՝ եղև մտանել նմա 'ի քաղաքն Եղեմ կոչեցեալ՝ մերձ 'ի սահմանս Հնդկաց, ընդ Թովմայի առաքելոյ. և անցեալ ընդ շինամէջ քաղաքին՝ նստաւ առ աղբիւր մի, յորում ազդմունք դիւթականք հրամայեալ կատարէին. յայտնութիւնք դիւաց 'ի բաղա-

զանս պատիր խաբէութեան մոլար պաշտաման, ձայ-
նեալ յաղբերն իբրև աստուծոյ ումեմն. յորում տե-
ղւոջ բազում նուէրք և զոհք մատչէին յանուն աղ-
բերն։ Ուստի առասպելաբանելով՝ իբրև այն թէ ինքն
իշխանութեամբ ունիցի զբղխումն, և ընդ մնուցողա-
կան զօրութեամբ բուսոց և տնկոց և սերմանց, և
ազգի ազգի ծառոց և զանազան ծաղկանց, համովք
և հոտովք, և անուանէին զանուն աղբերն դուստրն Ե-
ղոսի։ Եւ իբրև օր մի լինէր յորում բազմութիւն քա-
ղաքին հասանէր 'ի զոհել, և ընծայել ծախս ոսկւոյ և
արծաթոյ և ականց պատուականաց, և հանդերձս
մեծագինս և պատուականս, և դիւացն բարբառ ար-
ձակեալ ընդ ակն աղբերն և պղպջակաձև զջուրն 'ի
վեր մղելով՝ յեռանդն հրոյ բարկութեան հողմոյ սաս-
տիկ հնչմամբ ահ արկանելով լսողացն և տեսողացն,
'ի փայլիւն հրոյ և 'ի հնչիւն հողմոյ. և 'ի լինել ար-
հաւրաց՝ զաղաղակ բարձեալ մեծաձայն և ուժգին
գոչմամբ կարդային զանուն աղբերն, իբրև զաստուած՝
որ կարիցէ օգնել և պարգևս ընդունել 'ի նմանէ։ Իսկ
սուրբ առաքեալն կայր հիացեալ և զարմացեալ ընդ
միտս իւր, մեծաւ տրտմութեամբ ըմբռնեալ վասն մո-
լորութեան նոցա և աղտեղի գործոյն, զուր աշխա-
տութեանցն և անուղղայ գնացիցն, և անօգուտ ծա-
խիցն և տարապարտ աղաղակին. զի ժղորեալ հոլո-
նեալ էին աչք և կանայքն իբրև զՀ՚Ճիս և զզազրատե-
սիլ զեռունս 'ի տղմուտ վայրս կայտռեալ խլրտէին 'ի
պատիւ աղբերն, 'ի պատրանս դիւաց կեղծաւորու-
թեան։ Յայնժամ երանելի առաքեալն դիմեաց 'ի
մէջ նոցա 'ի վերայ աղբերն. և հանեալ զաղաբողոնն՝
զոր արկեալ ունէր զինքեամբ, պարզեալ ձգեաց ընդ-
դէմ ջրոյն, և կարդաց յանուն Տեառն Յիսուսի Քրիս-
տոսի, և ասէր 'ի ձայն մեծ. Ջուրս այս ցամաքելով
ցամաքեսցի, և մի ամենևին կացցէ ունել ոյժ խոնա-
ւութեան։ Եւ առժամայն ցամաքեցաւ վտակն յորդա-
հոս ջրոյն և եղև իբրև զվէմ ապառաժ. և ձայն որոտ-
ման հրոյն, և փայլիւն կերպարանեալ հողմոյն 'ի ձև
լուսոյ, կորեաւ և դադարեաց։ Եւ դևքն զաղաղակ հա-
րեալ, ձիչ բարձին մեծակական ողբովք հառաչէին և
ասէին. Ո՛վ Յիսուս Նազովրեցի, մինչև յե՞րբ շտապ

տագնապի հասուցանես 'ի վերայ մեր, և ոչ տաս կալ մնալ յանդունդս ջրոց, և 'ի տեղւոջ բնակութեան մերոյ. յամենայն յերկրէ հալածականս արարեր զմեզ խաչիւ քով, և այժմ 'ի ձեռս աշակերտաց քոց նեղեալ հալածես, և չարչարես և վտանգես յառաջ քան զժամանակն՝ որ գալոց է 'ի վերայ մեր։ Յայնժամ սուրբ առաքեալն սաստեալ 'ի նոսա՝ ասէ. Ո՛վ պիղծք, դրժնեայք և մարդատեացք, թշնամիք արդարութեան, և վարդապետք մոլորութեան, ահա սաստեմ 'ի ձեզ յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, մի՛ կարիցէք մնալ 'ի տեղւոջս յայսմիկ։ Եւ իսկ և իսկ կորեան և սպառեցան, և ընջեցան և բարձան 'ի միջոյ, իբրև զմամ զի ոչ կարասցէ կալ առաջի հրոյ՝ այնպէս վատնեալ պակասեցան։ Եւ տեսեալ բազմակոյտ ամբոխին դարձան առ առաքեալն մեծաւ ահիւ ըմբռնեալ, անկան առաջի սրբոյ առաքելոյն վասն մեծաց սքանչելի իրացն՝ որ գործեցան յաղօթէն. և կէսքն ընթացեալ շուրջ զկողմամբքն և զտեղեաւն՝ հռչակէին զիրացն զայնոցիկ, զմեծ և զզարմանալի զգործն, և նշանացն հրաշափառագունից որ կատարեցան 'ի ձեռն առաքելոյն. և գայլին ամենեքեան 'ի տեսիլ սքանչելեացն. քանզի բազում ժամանակս ձայնեալ էին յաղօթէն, և զի այն ինչ յական քթթել ցամաքեալ սպառեցաւ յորդահոսք ջրոյն։

Եւ սկսան նեղիլ 'ի ծարաւոյ բազմութիւնք քաղաքին. և առեալ վիրգս 'ի ձեռն կամէին արկանել 'ի վերայ առաքելոյն, և հարեալ քարամբքն զմիմեանս սատակէին. և յանդուգն և 'ի խուռն քարանց ձգելոց սատակեցան ոգիք իբրև երեսուն։ Եւ մերձեցեալ սուրբ առաքեալն 'ի մեռեալսն եդ՝ ձեռն և աղօթս արարեալ 'ի վերայ նոցա՝ դարձան ոգիք նոցա 'ի նոսա, և կանգնեցան կացին կենդանիք. և փութացեալ իւրաքանչիւր ոք 'ի նոցանէ բերէին զՀիւանդս և զնեղեալս յայսոց, և 'ի պէսպէս ախտից և 'ի ցաւոց, և զանդամալոյծս և զկոյրս և զկաղս և զմիակողմանիս և զխուլս և զՀամերս և զլուսնոտս և զամենեսեան որ նեղեալ էին 'ի պէսպէս ցաւս, և բժշկեաց զամենեսեան։ Յայնժամ սկսաւ քարոզել նոցա զաւետարանն Մատթէոսի կարդաւ. և լուեալ խնդութեամբ ընդ-

ունէին զքարոզութիւն սուրբ աւետարանին։ Եւ է-
լեալ սուրբ առաքեալն յեզր քաղաքին 'ի տեղի մի
դաշտական յապառաժուտ վայրս, եդ ծունր, եկաց
յաղօթս և գոհանայր զՇնորհացն Քրիստոսի, որ է-
բաց զմիտս նոցա իմանալ և լսել, և ընդունել զբանն
կենաց, և հաւատալ 'ի Տէր Յիսուս Քրիստոս, որ է
Ճշմարիտ Աստուած և կեանք յաւիտենական։ Եւ ա-
ղաղակեալ անդ զնշան խաչին, և կարդաց 'ի ձայն մեծ.
և ահա շարժումն և թնդիւն ահեղ որոտման, և խախ-
տեալ տեղին պատառեցաւ, և բղխեալ աղբիւր ջրոյ
յորդաբուղխ քաղցրահամ վտակաց, և շուրջ բակ
առեալ հանդարտ և հեզ շարժմամբ, և սկսան ու-
րախ լինել։ Եւ իջուցեալ զնոսա 'ի ջուրն՝ մկրտեաց, և
լուսաւորեաց լուսով Հոգւոյն սրբոյ. և կատարեալ
զխորհրդական պատարագն՝ հաղորդեցոյց զնոսա կեն-
դանարար մարմնոյ և արեան որդւոյն Աստուծոյ 'ի թո-
ղութիւն մեղաց, որ է կեանք և կեցուցիչ, և հաւա-
տացուցիչ սուրբ Երրորդութեանն։ Եւ կացոյց անդ
երիցունս 'ի սպասնելոյն որ կենդանացան 'ի ձեռն սուրբ
առաքելոյն, և հաստատեաց զնոսա 'ի հաւատս Ճշմար-
տութեան։

Եւ գնաց 'ի կողմանս Մարաց և Ելիմացւոց, և ան-
ընդունակ եղեալ 'ի նոցանէ՝ ոչ կարաց անդ կատա-
րել զօրութիւնս, բայց սակաւուց 'ի նոցանէն՝ որոց
քարոզեաց զաւետարանն մատթէոսեան. և հաւա-
տացին բանին, և թողին զամենայն ինչս աշխարհիս,
և գնացին զհետ նորա յամենայն տեղիս ուր և եր-
թայր։ Եւ անտի դարձեալ եմուտ 'ի Բուստր քաղաք
Խորին Ասորւոց. և եղև 'ի մտանել նորա 'ի քաղաքն՝
բարձեալ բերին պատանի մի մեռեալ, որդի հաղա-
րապետին Բուստրացւոց, որում անուն Ճանաչիւր Ան-
դրոնիկոս, և էր ամաց երկոտասանից. և բազում լա-
լականք զհետ նորա փողովք և քնարիւք, և դասք
դասք պարուց, որ կոծելով մրմնջէին և յորդահոս ար-
տասուս հեղուին 'ի վերայ պատանւոյն։ Նոյնժամայն
ընթացեալ առաքեալն ընդ մէջ հրապարակին ձգեաց
զձեռն իւր՝ մերձեցաւ 'ի դագաղն ուր կայր պատա-
նին մեռեալ՝ և ասէ. Պատանի դու, քեզ ասեմ, արի
կաց յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Եւ առ-

ժամայն կանգնեցաւ մեռեալն. և որ բարձեալ տանէին՝ զտեղի առին։ Եւ հայեցեալ բազմութեանն ընդ երեսս սուրբ առաքելոյն, և տեսին զի հուր ցոլացաւ 'ի բերանոյ սուրբ առաքելոյն, և մտանէր 'ի բերան պատանւոյն, և կենդանացաւ. և աղաղակեցին միաբան և ասեն. Աստուած ոմն երևեցաւ 'ի միջի մերում. և բուռն հարեալ երիտասարդացն զսրբոյ առաքելոյն, բարձին 'ի վերայ բազկաց իւրեանց. և այլքն զոհս և պատարագս փութացուցանէին։ Իսկ սուրբ առաքեալն վազեաց 'ի ձեռաց նոցա, և փախեաւ յամբոխէ անտի, աղաղակեաց և ասէ. Ես ծառայ Տեառն ամենակալի եմ և որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի, և Հոգւոյն սրբոյ՝ յորոյ անուն կենդանացաւ պատանիդ այդ մեռեալ. և առաքեցայ ես առ ձեզ քարոզել զաւետարանն արքայութեան, զի ընկալեալ ձեր զբանն կենաց՝ կեցջիք և դարձջիք յընդունայն պաշտամանէդ ձերմէ, զոր պաշտէքդ առ տգիտութեան ձերոյ և անհաւատութեան. և ծանիջիք զմիայն Ճշմարիտն Աստուած զՏէր մեր Յիսուս Քրիստոս, որ արար զերկինս և զերկիր, զծով և զամենայն որ 'ի նոսա։ Եւ գրեաց նոցա զմատթէոսեան աւետարանն, զոր առեալ էր օժանդակ 'ի քարոզութեանն։ Եւ մինչև յաւուրս երիս հաղիւ լռեցոյց զժողովուրդն 'ի չզոհելոյ իւր։ Յայնժամ առեալ զպատանին՝ մկրտեաց զնա 'ի լուսաւորութիւն Հոգւոյն սրբոյ 'ի հուրն հոգևոր և 'ի մաքրութիւն ջրոյն, հանդերձ հազարապետաւ հարբ մանկանն, և ամենայն ընտանեօք նորա և ազգականօք։ Եւ կոչեաց զանուն պատանւոյն Մատթէոս՝ ըստ անուան սրբոյ աւետարանչին, և ետ նմա ձեռնադրութիւն յամն ուխտատան առաքելական որոշմանն։

Իսկ որ էին ելեալ 'ի քաղաքէն զհետ պատանւոյն, իբրև տեսին զսքանչելիսն, և եթէ հաղարապետն և ամենայն ազգն հաւատացին 'ի Քրիստոս՝ բանիւք և նշանօք սուրբ առաքելոյն, եկին և նոքա կամակար յօժարութեամբ, մկրտեցան 'ի Հոգին սուրբ և 'ի մահ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի 'ի ջուրս աւազանին։ Եւ էին 'ի քաղաքին յայնմիկ եօթն բագինք, և էին 'ի նոսա կուռք կռեալք և քանդակեալք 'ի նմանութիւն մարդոյ, 'ի ձև Արեսի և 'ի չափ Արամազդայ, զոր հա-

զարապետն ըստ հրամանի առաքելոյն խորտակեալ կործանեաց, և բաշխեաց տնանկաց և կարօտելոց։ Եւ բազում զօրութիւնս կատարեաց սուրբ առաքեալն 'ի վերայ հիւանդաց և ախտացելոց 'ի պէսպէս ցաւս և 'ի չարչարանս, և դեւս բազումս եհան, և արար հալածական 'ի քաղաքէն յայտնի տեսողացն։ Եւ ուղղեալ անդ սեղան՝ և եթող զմի ոմն անդ յաշակերտաց իւրոց քահանայանալ նոցա, և զպատանին՝ ըստ ձեռնադրութեանն զոր ընկալաւ 'ի լոյս Հոգւոյն սրբոյ։

Եւ եղև իբրև հաստատեաց զնոսա 'ի հաւատս կրօնից սրբութեան, եկ գնաց յաշխարհն Գերմանիկէացւոց ըստ վիճակի ընտրութեան Հոգւոյն սրբոյ. և եղև 'ի մտանել նորա անդր՝ եկ համբաւ զնմանէ ընդ ամենայն երկիրն ընդ այն. և նշանք և արուեստք որ կատարէին 'ի ձեռն սուրբ առաքելոյն, իբրև զճառագայթս արեգական սփռեալ տարածանէին ընդ ամենայն երեսս երկրին. և փութային ամենեքեան գալ առ նա, և բարձեալ բերէին զհիւանդս 'ի պէսպէս ցաւս, և զօրութիւն Տեառն էր 'ի բժշկել զնոսա։ Եւ բազումք 'ի յանցս ճանապարհացն նստէին, և սպասեալ ակն ունէին նմա. որպէս զի յանցանել նորա՝ գտցեն զառողջութիւն հարուածեալքն յախտից հիւանդութեանց և 'ի տանջանացն դիւականաց։ Եւ եղև իբրև լուաւ Թագաւոր նոցա զլուր անչափ սքանչելեաց նորա, խանդացաւ յոյժ, և առաքեաց զծառայս իւր և հրամայեաց դնել զնա 'ի բանդի մինչև յաւուրս հինգ։ Եւ յետ անցանելոյ հինգ աւուրցն նստաւ յատենի հանդերձ մեծամեծօք իւրովք, և գլխաւոր իշխանօք Գերմանիկեացւոց, և հրամայեաց ածել զնա։ Եւ իբրև չոգան 'ի բանտն՝ գային բազմութիւն շուրջ փակեալ զտեղօքն, և լոյս սաստիկ ծագեալ արտաքոյ բանտին՝ իբրև զլոյս արեգական 'ի միջօրէի, և ահ կալաւ զկոչողն որ եկեալ էին զսուրբն տանջել յատենի 'ի տեղի խոշտանգանաց։ Եւ դարձան անդրէն փութանակի ահիւ, և պատմեցին Թագաւորին և ոչք ընդ նմա՝ զմեծամեծ սքանչելիսն զոր տեսին։

Յայնժամ յարուցեալ Թագաւորն ցասմամբ մեծաւ՝ և ոչք ընդ նմա նստէին մեծամեծքն, և հրա-

ման ետուն զի հրկէզ արարեալ զբանդն՝ ընդ նմին այրեսցեն զսուրբն Աստուծոյ։ Իսկ նա աղօթս առ-նէր զամենայն աւուրսն 'ի բանդին, զի գթացեալ Աստուծոյ յարարածս իւր՝ և դարձցին 'ի մոլորու-թենէ անտի, յոր անկեալ դնէին 'ի խաւարի ան-գիտութեան 'ի խորս կորստեան՝ 'ի պատրանս սա-տանայական խաբեբայ մոլորութեան, զի պաշտէին զարարածս և զգործս ձեռաց իւրեանց։ Եւ մինչ նոքա զայս զմտաւ ածեալ խորհէին զսրբոյն, եղև յանկարծակի ահեղ որոտումն և ճայթումն յամպոց հրացան փայլատակմամբք, անկան յերկիր և յապուշ կրթե-ցան միտք նոցա. և եղեն իբրև զանխօս անասունս՝ որ ոչ գոյ 'ի նոսա իմաստութիւն։ Իսկ սուրբ առաքեալն ելեալ արտաքս 'ի բանդէն եդ ձեռն 'ի վերայ միոյ միոյ ուրուք 'ի նոցանէն, և կազդուրեցան կացին 'ի վերայ ոտից իւրեանց, և միտք իւրեանց դարձաւ 'ի նոսա. և խնդրեցին 'ի սրբոյ առաքելոյն գտանել ողորմութիւն, և հայցել զգթութիւն 'ի Տեառնէ Աստուծոյ, և ընդ-ունել զբժշկութիւն 'ի վերայ հարուածոցն՝ որ հա-սին նոցա։ Իսկ սուրբն Աստուծոյ ասէ. Որոց բաց են աչք մարմնոյս՝ զլոյս աշխարհիս միայն տեսանեն, այլ ոչ զլոյսն Ճշմարիտ՝ որ լուսաւորէ զամենայն մարդ որ գալոց է յաշխարհ։ Արդ եթէ հաւանիք բանից իմոց և հաւատասջիք քարոզութեան աւետարանին փառաց միածնի որդւոյն Աստուծոյ՝ զոր ես ձեզ աւետարա-նեմ, ընդունիջիք զբժշկութիւն հարուածոցդ՝ զոր հայցէք 'ի Տեառնէ 'ի ձեռն իմոյ բարեխօսութեան, և կեցցեն անձինք ձեր. և լինիջիք լուսոյն անստուերի ժառանգորդք և անանց կենացն յաւիտենից, զոր որ-դին Աստուծոյ Յիսուս տացէ ձեզ, եթէ հաւատասջիք յանուն նորա աներկբայ խոստովանութեամբ։ Պա-տասխանի ետուն և ասեն. Հաւատամք յԱստուածն քո, յոր դու հաւատացեալ պատմես մեզ. միայն կեց-ցեն անձինք մեր, և լուսաւորեսցես զմեզ։ Եւ առա-քեալն՝ որպէս յամենայն տեղիս, և անդ քարոզեաց զաւետարանն Մատթէոսի, և զմարգարէութիւնն Եսայեայ տեսանողի, և զմեկնութիւն նոցա որ կայր յառակսն, և զՀառս խորհնս որ էր 'ի մարգարէու-թեանն և 'ի սուրբ աւետարանի անդ։ Եւ անդէն

ստիպել սկսան զսուրբ առաքեալն՝ թագաւորքն և մեծամեծքն և նախարարքն, և ասեն. Փութա կատարեա 'ի մեզ զքարոզութիւն աւետարանին աւետեաց՝ զորմէ ասացեր մկրտութեամբ հասանել թողութեան մեղաց և երկնից արքայութեանն, զի եղիցի բժշկութիւն հարուածոցս հասելոց 'ի վերայ մեր։ Արդ մի՛ դանդաղիր զօգուտն՝ որ վասն մերոյ փրկութեան՝ տալ մեզ, զոր ուսաք բերանով քով, և խրատու պատուհասիս՝ որ ժամանեաց մեզ. զի դիտացաք այժմ և ծանեաք եթէ Աստուած քո՝ նա է Աստուած, և չիք ոք բայց 'ի նմանէ, և մեք նմա ծառայեսցուք և հնազանդեսցուք. զի նա է Աստուած Ճշմարիտ և կեանք յաւիտենական և փրկիչ աշխարհաց։ Յայնժամ սուրբ առաքեալն ած զնոսա 'ի վտակն որ ի ջանէր 'ի փոքր ձորակէ միոջ 'ի հարաւակողմ կուսէ, և ի ջուցեալ 'ի ջուրն մկրտեաց զնոսա. և նոցա բացան աչք և տեսին զՀոգին սուրբ զի շրջէր 'ի վերայ ջուրցն քաղցր օդով և պարզ լուսով. և լուսաւորեալ զնոսա՝ զգեցուցանէր նոցա զլոյսն իբրև զՀանդերձ. և իսկ և իսկ ուղղեաց սեղան, և կերակրեաց զնոսա յերկնաւոր հացէն և յարբենէ Որդւոյն Աստուծոյ. և աղօթս արարեալ՝ եդ ձեռն 'ի վերայ նոցա, զի կացցեն հաստատուն 'ի հաւատսն զոր ընկալան, և լուսաւորեցան 'ի լոյս Հոգւոյն սրբոյ։ Եւ նոքա աղաչէին զսուրբ առաքեալն լինել առ նոսա, և հովուել զնոսա զի անքակ լիցին 'ի նմանէ։ Իսկ նա պատասխանեալ ասէ. Եւ այլոց քաղաքաց պարտ է ինձ աւետարանել, որպէս ասաց Քրիստոս. Գնացէք յամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ Արդ ինքն Քրիստոս յոր հաւատացէք և լուսաւորեալ կնքեցայք Հոգւով նորա, նա եղիցի ընդ ձեզ. և մեք զի յանձն արար մեզ զՀեթանոսս՝ մի՛ ստունգանեսցուք հրամանին նորա։ Եւ ունկնդիր եղեալ թոյլ ետուն նմա։

Եւ գնացեալ անտի սրբոյն՝ եհաս յերկիրն Պարթեւաց և Մարաց և Ելիմացւոց և քարոզէր նոցա ըզբանն կենաց։ Բազումք 'ի Պարթեւացն դարձան 'ի Տէր զօրութեանց՝ նշանօք և արուեստիւք և պէսպէս բժշկութեամբ, զոր ընկալան 'ի սուրբ առաքելոյն, զառողջութիւն ախտից ողորմութեամբ և դթու-

թեամբ Տեառն։ Եւ լուսաւորեալ անդ զբաղումս, գնաց 'ի կողմանս Պարսից և Մոգուց, և սկսաւ քարոզել նոցա զսովորական վարդապետութեանն իւրոյ զմատթէոսեան աւետարանն, և որ ինչ վասն մոգուցն հանգամանք էին՝ եդ առաջի նոցա։ Եւ հասեալ մինչև 'ի տեղի պաշտամանն կրակարանի նոցա, զոր պաշտէին օրինօք մոգութեանն, և համբարձեալ զձեռս իւր յարևելս ընդդէմ արեգականն՝ զոր պաշտէին, և արգել զնա և զզօրութիւնն Ճառագայթից նորա պակասեցոյց մինչև ցվեց ժամ աւուրն։ Եւ նշան յերկնից սիւն հրոյ եկաց ընդ մէջ կրակարանին, յանդիմանել զմոլորութիւն նոցա՝ արհաւրօք և սաստիկ հիացմամբ, փոխանակ զի սպաս տանէին Հելիու, և Սեփայ, և Արեսի, և Պռենայ։ Այլ թէպէտ և այնչափ մեծ սքանչելիք և նշանք զարմանալիք ցուցան 'ի վերուստ, սակայն ոչ զանգիտեցոյց զնոսա դառնալ յերկրպագութենէ տարերցն, և յոր վրիպեալ էին մնոտի առասպելաբանութեամբ բարձրայօն պարծանօք. բայց միայն ոգիք ութ, զոր առեալ լուսաւորեաց, և հանեալ զնոսա 'ի միջոյ կործանելոցն խուժադուժ ազգին։

Եւ անցեալ գնաց 'ի Գողթն գաւառ Հայոց, և փութացաւ հասանել 'ի վիճակ Թադէոսի, ըստ հրամանի Հոգւոյն սրբոյ. և քարոզեալ անդ զբանն կենաց, և նոքա ընկալեալ խնդութեամբ և մեծաւ յօժարութեամբ, հաւանեցան և հնազանդեցան և լուսաւորեցան մկրտութեամբ աւազանին։ Եթող անդ նոցա երիցունս 'ի մոգուց անտի՝ որ աշակերտեցան սուրբ առաքելոյն. և բազում զօրութիւնս կատարէր Աստուած 'ի ձեռն արանցն այնոցիկ յամենայն տեղիս, ուր և հասանէին ոտք նոցա. և զբաղումս դարձուցին 'ի Տէր 'ի մնոտի պաշտամանէն, և շնորհք առաքելականք եղեն 'ի վերայ նոցա։

Ի քսանևիններորդ ամի Սանատրկոյ թագաւորին եմուտ սուրբ առաքեալն Բարդողոմէոս ըստ հրամանի Հոգւոյն սրբոյ 'ի Հայք, որ ընտրեաց զնա յառաքելութիւն կոչմանն հեթանոսաց. և Թովմայի ըստ վերակացութեան առաջնորդութեանն իւրոյ գրեալ առնա, զի մի զանց արասցէ զնոքօք, քարոզել զաւետա-

ըանն աղքայութեան, որպէս և յամենայն տեղիս, փոխանակ Թադէոսի առաքելոյն՝ որ էր յեօթանասնից անտի։

Եւ եկեալ սուրբ առաքեալն 'ի բլուրն Արտաշու, հանդիպեցաւ այլ ոմն յերկոտասանից՝ Յուդա Յակոբեան. և կանգնեցին 'ի տեղւոջն ուր պատահեցան միմեանց՝ զնշան տէրունական խաչին, և հրաժարեցին 'ի միմեանց մեծաւ ուրախութեամբ. և գնացեալ Յուդայի յիւր տեղիսն։ Բայց Բարդողոմէոս գնացեալ եմուտ 'ի Հեր և 'ի Զարևանդ գաւառ Հայոց, և արար նշանս և արուեստս 'ի վերայ հիւանդաց. և դևս բազումս եհան, և լուսաւորեալ անդ զբազումս և միթարեալ բանիւ վարդապետութեամբ սուրբ աւետարանին, և եդեալ նոցա վկայութիւն՝ զի կացցեն հաստատուն 'ի հաւատսն զոր ընկալան, և հաւատարիմ եղեն. և եդեալ միոյ միոյ ձեռն՝ յանձն արար զնոսա շնորհացն Աստուծոյ։ Եւ ինքն գնացեալ եկն յՈՒրբիանոս քաղաք Հայոց. և գայլին առ նա ամենայն նեղեալք որ 'ի պէսպէս ցաւս և 'ի տանջանս, և բժշկեաց զամենեսեան, և լուսաւորեաց մկրտութեամբ սուրբ աւազանին։

Լուաւ զնմանէ Ոգոհի քոյր Թագաւորին Սանատրուկոյ, որ էր որդի քեռ Աբգարու, և եկն առ նա 'ի ծածուկ, և լուեալ 'ի նմանէ զբանն կենաց՝ հաւատաց 'ի Տէր մեր Յիսուս Քրիստոս ինքն և իւրքն ամենայն. և զգեցեալ հանդերձ կուսութեան, 'ի բաց մերկացեալ զփառս աշխարհի և աշակերտեալ առաքելոյն՝ շրջէր զհետ նորա։ Եւ լուեալ Թագաւորին զիրսն որ եղեն, և զայրացեալ մեծաւ ցասմամբ իբրև զգազան կատաղեալ արիւնարբու, յղեաց զՀազարապետն Տերենտիոս, և որք ընդ նմա. և իբրև եկն առ նա Հազարապետն ըստ հրամանի Թագաւորին, և տեսեալ զսուրբն Աստուծոյ՝ գթացաւ 'ի նա. և նա սկսաւ քարոզելնմա զաւետարանն աղքայութեան. և Տէր եբաց զմիտս նորա անսալ բանից նորա։ Եւ ինքն անկեալ էր յախտ բորոտութեան. և առեալ զնա սրբոյ առաքելոյն՝ 'ի գիշերի մկրտեաց. և ահա ամպ լուսաւոր հովանի եղև 'ի վերայ տեղւոյն, և լոյս հրոյ շուրջ փակեալ զաւազանն սրբարար։ Եւ եղև ընդ ելանել նորա 'ի ջրոյն՝ անկաւ

'ի նմանէ մորթն խստացեալ իբրև զկեղև ծառոյ և իբրև զտերև որթոյ, և լոյս զգեցաւ իբրև զհանդերձ. և տեսեալ զքանչելիսն որ եղեն, բազումք հաւատացին 'ի Տէր։ Եւ եղև իբրև եհաս լուր սքանչելեացն այն առ Թադաւորն, առաւել զայրացեալ անհանդուրժելի բարկութեամբ, և փութացեալ յղեաց զայլ ոմն 'ի նախարարացն, զի փութով զրաւ արասցէ նոցա, և մի թուլասցին մնալ տեսել անսալ նոցա։ Եւ առեալ զսուրբ առաքեալն հանդերձ կուսիւն և հազարապետովն, և այլովք աշակերտելոքն ածին յատեանն։ Եւ տանջեալ զսուրբ առաքեալն քրքջօք իբրև ժամ մի աղք վեց, և համարէին զնա մեռեալ, և քարշեցին ընկեցին զնա արտաքոյ քաղաքին. բայց սուրբ առաքեալն կայր կենդանի զօրութեամբ և ուժով Տեառն իւրոյ յոր յուսացեալն էր։ Եւ իբրև ժամն երիս այսպէս անկեալ դնէր, և շուրջ զնովաւ յոյժ բազմութիւն 'ի քաղաքէն և յամենայն սահմանաց նորա. և յետ անցանելոյ երից ժամուցն, խլրտեաց ձեռամբն, և ձգեալ բուռն հարին զնմանէն, և յարեաւ նստաւ կանգուն, և համբարձեալ զձեռս իւր յերկինս՝ ասէ. Տէր Աստուած հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, մի թողուր 'ի ձեռանէ զվիճակս զայս խնդրուածովք Թադէոսի և Թովմայի և Յուդայի, և իմ Բարդողոմէոսի, որ հոգացաք վասն աշխարհիս այսորիկ. և մի ոտնհար լիցի 'ի թշնամւոյն. այլ տուր սոցա ըշնորհս ողորմութեան, և դարձցին յերկրպագութենէ կռոցն մնոտեաց, որ զուր և տարապարտ մոլորեալ են 'ի տգիտութենէ անհաւատութեան։ Եւ տուր սոցա հովիւ և առաջնորդ, զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտդ Աստուած, և զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս. և զիս ընկալ, Տէր իմ, և զհաւատացեալքս 'ի քեզ պահեա։ Զայս իբրև ասաց շարժեցաւ տեղին, և ահա կամար լուսեղէն եկեալ եկաց 'ի վերայ սրբոյն. և նորա հայեցեալ 'ի վեր յերկինս՝ աւանդեաց զհոգին, և բուրեաց հոտ անուշութեան. և սուրբ առաքեալն Թադէոս իբրև այն թէ մարմնաւոր տեսլեամբ գայր ընդ առաջ նորա. և դարձան ընդ նոյն ուստի եկն սուրբն Աստուծոյ Թադէոս։ Եւ ահ կալաւ զամենեսեան, և հաւատացին յաւուր յայնմիկ ոգիք երկու

հազարք, և ամենեքեան փառաւոր առնէին զՍ.ստուած 'ի վերայ եղելոցն. և եկաց լոյն կամարաձև 'ի վերայ մարմնոյն աւուրս երկոտասան։

Իսկ զերանելին Ոգոհի և զհազարապետն սպան սրով, և զայլս բազումս ընդ նոսա։ Եւ տեսեալ զմարմին սրբոյ առաքելոյն՝ փոխեցին 'ի հանգիստ 'ի նմին տեղւոջ, նոյնպէս և զայլոց վկայիցն 'ի փառս ամենասուրբ Երրորդութեանն։ Իսկ իբրև եղև որոտումն՝ լուան խուլքն և բժշկեցան, տեսին կոյրք և լուսաւորեցան, և համբարձն խօսեցան, և ամենեքեան յիւրաքանչիւր ախտից բուժեցան. որք հաւատացին 'ի Տէր մեր Յիսուս Քրիստոս 'ի ձեռն սրբոյ առաքելոյն Բարդողոմէոսի։ Եւ համբարձեալ զձեռս իւրեանց միաբան հաւատացելոցն, 'ի մի բերան փառաւորէին զՏէր մեր Յիսուս Քրիստոս. ընդ որում Հօր և Հոգւոյն սրբոյ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Բարդաւղի։

Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ թագաւորել Հռոմայեցւոց Նոմերիանոսի ամպարշտի. և յերկրորդում ամի արքայութեան իւրում՝ հալածանս յարոյց 'ի վերայ եկեղեցւոյն Աստուծոյ, 'ի մտի եդեալ ամենևին բառնալ զկարգս և զկրօնս քրիստոնէից, և չարաչար չարչարանօք սպառել զհաւատացեալսն որ 'ի Քրիստոս. և առաքեաց դատաւորս և իշխանս ընդ ամենայն իշխանութիւն տէրութեանն իւրոյ, զի դատապարտեսցեն զայնոսիկ որք ոչ պատուեն զդիսն մնոտի, և երկրպագութիւն ոչ մատուցանեն անուանեալ աստուածոցն։ Եւ 'ի ժամանակին յայնմիկ ամպրոպ խռովութեան և դառն սուգ հասեալ հաւատացելոցն Քրիստոսի [1]։ Ի սոյն իսկ ժամանակի եղև գալուստ անօրէնն իշխանին Պռիմիանոսի 'ի կողմանս Կիլիկեցւոց [2] մայրաքաղաքին Աստուոց 'ի մեծն Անտիոք, առեալ զեպարքոսական իշխանութիւնս նահանգին այնորիկ, քննել և մահուամբ դատապարտել զորս գտցէ անդր հաւատացեալ 'ի Տէր։ Արդ բազմաց 'ի միասին յափշտակեալ լինելով քրիստոնէից, և պատուհաս աւանդելով առ 'ի Հելլենացւոց անաստուած բռնաւորացն այնոցիկ, որ ընդ եկեղեցւոյն Աստուծոյ մարտուցեալ էին, պատահեցաւ ըմբռնիլ ընդ այլ կալանաւորսն և երանելին Բարդամ; և բանտարգել լինել 'ի քաղաքին Անտիոքայցոցն 'ի ձեռն այնմիկ՝ որոյ

1. Այլ օր. 'ի Քրիստոս՝ վասն եր էիւղի այնորիկ և հալածանաց։

2. Այլ օր. Կիւղէիկեցւոց։

յայնժամ ըմբռնեալ էր[1] զդատողական իշխանութիւնն. 'ի նմին քաղաքի չարաբարոյ և ապառուամ կարծրութեամբ գոլով նորա։ Եւ հրապարակաւ նըստեալ նորա 'ի վերայ դատողական բեմին, ասէ ցառաջիկայ զինուորսն. Ա՛ծէ՛ք մուծէք այսր զաղարտեալ ծերն զայն։ Եւ վաղվաղակի կացուցին զնա առաջի նորա։ Ասէ ցնա իշխանն. Զի՞նչ անուն է քո։ Եւ նա պատասխանի ետ և ասէ. Եթէ վասն Ճշմարիտ անուան իմոյ հարցանես, կատարեալ անուն իմ քրիստոնեայ է՝ զոր և կոչիմ; և նախ 'ի ծնողաց իմոց կոչեցայ Բարղամ։ Իշխանն ասէ. Բարուք կոչեցաւ անուն քո Բարղամ։ քանզի կարող է անունդ այդ հաւատարիմ զմեզ առնել, զի անունդ և ծերութիւնդ և հասակդ՝ 'ի բազում անզգամութիւն հասուցէ զքեզ։ Բարղամ ասաց. Եւ զանուն և զքաղաքավարութիւն գեղեցկագոյն ունիմ; քանզի խոստովանիմ Աստուած յԱստուծոյ ծնեալ նախ քան զամենայն յաւիտեանս, և մարմնացեալ 'ի վերջին աւուրս։ Դատաւորն ասէ. Ան-զգամ, ոչ հարցի զքեզ յաղագս այդորիկ. այլ թուիս ինձ զանուղղայս բարբառել թէպէտ և ծեր ես։ Բարղամ ասաց. Մի՛ բարկանար ինձ, ո՛վ իշխան, քանզի սիրելով զՔրիստոս, թէպէտ և ոչ առի հրաման 'ի քէն, սակայն ետու քեզ պատասխանի։ Դատաւորն ասէ. Ամենայն ստուգութեամբ կամիմ հարցանել քեզ, զի ամբոխս որ շուրջ զմեօք կան՝ զՃշմարիտ հարցուածն կամին լսել, և զքոյդ տեսանել դյամառումն։ Ամբոխն ասեն. Ահաւասիկ եմք ամենեքեան իբրև զնախնոյն մերոյ լսել զբանս քո, զի մեր կրօնքս բռնութեամբ ոչ է։ Դատաւորն ասէ. Արդ պարտ է քեզ ըստ կարգի տալ պատասխանի, և ոչ նախարարութեամբ բարբառել. այսուհետև գիտութիւն լիցի քեզ, զի թէ արտաքոյ հարցուածի իմոյ տացես պատասխանի, չարաչար զկենցաղդդ քո զվախճան ընկալցիս։ Բարղամ ասաց. Ըղձացեալ ցանկամ զի և դու Ճշմարտութեամբ հարցանես, և ես ամենայն ստուգութեամբ տամ պատասխանի. զի կամիմ և զհասեալ ամբոխս՝ մանաւանդ զքրիստոնէից՝ տեսողք ինձ

1. Ա.յլ օր. ընկեալ էր։

լինել. զի գիտեմ որ նախ քան թէ հակառակ Ճանապարհին քրիստոնէութեանն պատմեալ[1] եղև, և կամիմ քեզ հարցանել ստուգութեամբ զմերոյ կամաց իրաւունս, և դատաւոր յայսմիկ լինել զՀայրն Քրիստոսի[2]։ Արդ առաջին Ճշմարտութիւն է խոստովանել զՔրիստոս, և ապա մաքուր քաղաքավարութեամբ կենցաղավարիլ. հանդարտութիւն, հեզութիւն, սէր, քաղցրութիւն, արդարութիւն, երկայնմտութիւն, բարեգործութիւն, և զոր ինչ ատեայ՝[3] ընկերին ոչ առնել։ Դատաւորն ասէ. Երդնում յաստուածն և 'ի բախտն ինքնակալին, զի բարւոք ասացեր, թէ Ճշմարտութիւն և ուղիղ կենցաղ՝ յեղանակէ ազատութեան. այլ զայս ինչ ոչ հարցի ցքեզ։ Արդ՝ որոց իրիք ձևանաս երկիր պագանել։ Բարղամ ասաց. Ես վերագոյն ասացի, Հօր երկիր պագանեմ և Որդւոյ որ 'ի նմանէ ծնեալ, և սուրբ Հոգւոյն՝ նորուն էակցի և միտնջենաւոր փառակցի։ Պռիմիանոս դատաւորն ասէ. Ո՞չ ասացի քեզ՝ եթէ ծերութիւն հասակիդ քո 'ի շաղփաղփութիւն է զառաածեալ, և խելայեղեալ պատրաստէ զքեզ. ո՞չ թուին քեզ աստուածք գոլ ինքնակալին։ Բարղամ ասաց. Երդնում 'ի Յիսուս Որդին Աստուծոյ, որ ամաչեմ զգլուխս ամբառնալ և հայել 'ի քեզ՝ ասելով զարարեալդ մարդկան՝ Աստուած գոլ, և զայդոսիկ աստուածս անուանելով. քանզի ես ոչ հաւանիմ զարարած պաշտել և նոցա երկիր պագանել. այլ յամենայն ժամ խոստովանիմ զՈրդին Աստուծոյ, որ 'ի Հօրէ յառաջ քան զյաւիտեանս է ծնեալ։ Պռիմիանոս իշխանն ասէ. Անպարտելի ինքնակալքն հրամայեցին, որք ոչ երկիր պագանեն աստուածոցն՝ կենդանակէզ առնել։ Բարղամ ասէ. Պատրաստ եմ տալ զմարմինս իմ, զի արասցես զոր կամիս. քանզի ես 'ի ձեռն սակաւ տանջանաց և բաղմաց՝ հաւանեցուցանեմ զքեզ, զի արարածոց և ձեռակերտաց երկիր ոչ պագանեմ։ Դատաւորն ասէ. Կան և մեան քեզ պատուհասք, սակայն յառաջիկայս եկեսցուք, վասն ամբոխիս որ շուրջ զմեզք են. ասա,

1. Այլ օր. պատրաստեալ եղև։ լիներ յայսմիկ ասել զնամօրէն Քրիստոսի։
2. Մի օր. և դատաւորն լոեալ։ 3. Այլ օր. ասէ։

ոՐպէս Հայր որդի ընկալաւ, և Եբբ։ Բարղամ ասէ. Ոչ է հնար այնմ, որ յառաջ քան զյաւիտեանս էր՝ ընդ ժամանակաւ ստորանկիլ. զի ասէ. Յառաջ քան զյաւիտեանս ծնայ զքեզ. և զիաՐդ յաղագս Աստուծոյ հարցանես, թէ ոՐպէս և Եբբ։ Հեգեմոնն Պռիմիանոս ասէ. Ես լուեալ առ 'ի քէն թէ աստուածն քո որդի ունի, վասն այնորիկ հարցի զքեզ, թէ արդեօք այս ոՐպէս իցէ. զի աստուածոցն իմոց երկիր պագանեմ, որպէս տեարքն իմ և թագաւորքն հրամայեցին։ Բարղամ ասաց. Վերագոյն ասացի և այժմ զնոյն ասել քեզ ոչ հրաժարեմ, եթէ Որդւոյն Աստուծոյ երկիր պագանեմ, այնմ՝ որ անժամանակաբար ծնեալ է. այլ զստացուածս և զգործս ձեռաց մարդկան ոչ երբեք կալայ առ աստուած, և մի՛ այլ լիցի ունել, թէ և զամենայն փորոտիս իմ 'ի բաց հանցես, և կամ զմարմին իմ յօշյօշ կոտորեսցես։ Դատաւորն ասէ. Ոչ ևս ներեմ քեզ վասն շաղփաղփութեանդ քո և յամառկոտ մտացդ, այլ չարաչար հարուածովք պատուհասեցից զանզգամութիւնդ քո, և դանդանաւանդիւք մաշեցից զկարծրութիւն կզակաց քոց, զի հաւանեալ կատարեսցես զկամն հրամանաց ինքնակալաց մերոց թագաւորացն։ Քանզի բանիւք ողոքանաց կամեցեալ իմ դարձուցանել զմիտս քո յիմարութեան [1], և խնայելով 'ի ծերութիւնդ քո՝ երկայնամտաբար հարցափորձեցի զքեզ, այլ դու կացեր ստէպ 'ի քոյին մացառամիտ անզգամութեանդ [2]։ Բարղամ ասաց. Մի՛ բարկանար ինձ, ո՛վ դատաւոր, քանզի մարմնոյ իմոյ ունիս իշխանութիւն, իսկ հոգւոյս՝ Աստուած ունի, ապրարիչն համայնից՝ յոր հաւատացեալն եմ։ և կամ հաստատուն 'ի խոստովանութիւն նորա մինչև 'ի վախճան. և ոչ երբեք զոհեցից քոց մնոտեաց, և ոչ երկրպագեցից խուլից և կուրաց դիւաց, որք խաւարին տանջանաց մատնեն զհոգիս այնոցիկ՝ որք մոլորեալք հաւատան և երկիր պագանեն նոցա։ Ասէ դատաւորն. Կարծիցէ՞ս դու եթէ համառօտաբար զրաւեցից զքեզ 'ի կենացս, այլ ըստ փոքու փոքու առ սակաւ սակաւ

1. Ա,յլ օր. յիմասպառութիւն։ ցեր 'ի փոյին անիմաց առ անմիտ անզգամ.
2. Ա,յլ օր. այլ դու ոՐէպ մնա. մոռանեանդ։

խոշտանգեցիլ զամենայն անդամն մարմնոյ քո 'ի ցոյցս ամենեցուն. և տեսանեմ եթէ օգնէ՞ քեզ որդին Աստուծոյ քո զոր դու ասես։ Բարղամ ասաց. Օգնեաց և օգնեսցէ. և ոչ թողու զիս հեռանալ 'ի կամաց իւրոց և 'ի սիրոյ, և պաշտօն տանել աստուածոց հաստատելոց մարդկան մնոտիապատիր ձուլածոյ պատկերաց։ Սոկ դատաւորն. Ահաւասիկ 'ի կիր արկանեմ 'ի քեզ տանջանս չարաչարս, որոց ակն ոչ ունիս, ըստ քոյդ անզգամութեան. զի 'ի ձեռն տանջանաց հպատակ լիցիս հրամանաց ինքնակալացն և զոհես աստուածոցն։ Բարղամ ասաց. Ո՛վ իշխան, եթէ ոչ բարկասցիս՝ ես զՀշմարիտն ասեմ ստուգապէս. երկրպագուք աստուածոցն յիմարեալ են, զի արարողք նոցա անյայտ և համառօտ վախճանին, և զիաՀրդ առ 'ի սոցունց արարեալք իցեն յաւիտեան։ Դատաւորն ասէ. Վարեսջիք զդովաւ կաշուք անփեղթիւք, զի դեռն որ 'ի դմա շրջի՝ հաւանեալ անսայցէ մեզ։

Բարղամ ասաց. Ասացի քեզ յառաջագոյն, թէ ես մի Աստուած պաշտեմ՝ որ արար զամենայն, և նմա երկիր պագանեմ. վասն որոյ ոչ երկնչիմ 'ի սպառնալեաց քոց, զի առաջի աչաց քոց ունելով զերկիրս Աստուծոյ՝ ճնացայց առանց սասանելոյ. և ոչ միայն ես, այլ և ամենեքեան՝ որք օրինացս և կրօնիցս հետևեալ լինին։ Պռիմիանոս իշխանն ասէ. Զիարդ առցես 'ի ձեռաց քերելոյ տանջանարանացդ։ Բարղամ ասաց. Երդնում յՈրդին Աստուծոյ, զի ոչ զգացի 'ի քոց տանջանացդ, առ աչս իմ ունելով զԱստուած իմ. առաւել քան եթէ տանջանօք՝ վշտագնեալ եմ անզգամութեամբ ձերով, զի զկռեալս և զկոփեալս 'ի Ճարտարութենէ մարդկան՝ աստուածս անուանէք. վասն որոյ ըղձամ ազատիլ 'ի հասեալ կենցաղոյս, և ոչ լսեմ զայդպիսիդ ասելով քո։ Դատաւորն ասէ. Զի՞նչ ասես Բարղամ, հաւանեալ լեր ինձ և զոհեա. քանզի պատկառիմ 'ի պատուական ալեաց քոց, և 'ի վայելուչ դեղոյ պատկերիդ քո, և խնայելով 'ի քեզ, կամիմ շատանալ քեզ որովք ընկալար տանջանօքդ։ Բարղամ ասաց. Ես զտանջանացդ բնաւ ոչ առի զգայութիւն, վասն որոյ պատրաստ եմ տալ զմարմինս իմ 'ի տանջանս խստագոյնս, որչափ և ածես 'ի վերայ իմ։ և

հաւանեցուցանեմ զքեզ 'ի գործոց իմոց՝ թէ յԱստուած հաւատամ, և դիւաց ոչ զոհեմ. զի սէրն Քրիստոսի ոչ թողացուցանէ զիս մեկնել 'ի նմանէ. և եթէ ոչ բարկանայիր՝ ասէի քեզ բանս համառօտս զմերոյ բարեպաշտութենէ, ներբեա արդ երկայնմտաբար։

Իշխանն ասէ. Այսա զոր ունիս ասել. այլ՞ ոք յիմաստնոցն ոչ գիտասցէ, եթէ բանք ձեր առասպելք են պառաւանց, և ստութեան լինիք հետևեալք. սակայն ասա, միթէ զիս քրիստոնեայ կարասցէ՞ս առնել։ Սուրբն ասաց. Ըղձամ առ Աստուածն իմ, զի ոչ դու միայն իցես քրիստոնեայ, այլ և ամենեքեան՝ որ ասեն զՀաստուածս և զձեռակերտսն՝ Աստուած գոլ, զի զոչնացին և խոստովանեսցին զՈրդին Աստուծոյ Ճշմարտապէս ծնեալ 'ի Հօրէ։ Այլ յաղագս իմոյ հաւատոյս՝ որ ասէ. Ո՞ մեկնեսցէ զմեզ 'ի սիրոյն Քրիստոսի. նեղութիւնք, թէ անձկութիւնք, թէ հալածանք, թէ սով, թէ վիշտ, թէ սուր. վասն այսորիկ ոչ կարէ մեկնել 'ի սիրոյն Աստուծոյ, և զոհել դիւաց, և հաւատալ 'ի գործս ձեռաց մարդկան և յաբարածս։ Իշխանն ասէ. Բազում անգամ ներեցի քեզ, կարծելով թէ օգտակարագոյնս ինչ բարբառեալ խօսեսցիս, այլ դուք անուամնութեամբ զայդպիսիդ զոզանջեալ շաղփաղփիք 'ի լսելիս անիմաստից և տգէտ մարդկան։

Յայնժամ հրամայեաց առաջիկայ զինուորացն բուռն հարկանել և կախել գլխիվայր և քերել զնա, մինչև քանցեալ մերկացաւ ամենայն մարմին նորա։ Եւ ասէ ցնա Իշխանն. Ցոյց մեզ եթէ օգնեսցէ քեզ աստուածն քո և հաւատքդ։ Բարղամ ասաց. Օգնեաց և օգնեսցէ, ոչ միայն ինձ, այլ և ամենեցուն որ կան և մնան 'ի խոստովանութեանս յայսմիկ։ Քանզի աստանօր յայսմ աշխարհի ընդունելութեան և պատուոյ արժանանան, և 'ի հանդերձեալ յաւիտենին զարքայութիւնն երկնից ժառանգեսցեն։ Իշխանն ասէ. Ի բանդ արգելուլ հրամայեմ. զի զօրութիւն առեալ զօրեղապէս տանջեցիս զդա։ Բարղամ ասաց. Եւ այժմիկ նոյն Աստուած է, որ եղև ինձ օգնական. և յորժամ կամեսցիս չարչարել, պատրաստ եմ [1], զի ոչ

1. Այլ օր. չեսցէ՝ չարչարել՝ պարտեմ։

թողու զիս Աստուած մեկնիլ 'ի սիրոյն իւրոյ և յանրս-
պառ բարեացն՝ որ կայ և մնայ յուսացեալոցս 'ի նա։

Եւ յետ աւուրց սակաւուց նստեալ իշխանն անօ-
րէն Պռիմիանոս 'ի վերայ բարձրագոյն բեմին 'ի մէջ
քաղաքին, և ամենայն ամբոխ քաղաքին շուրջ զնո-
վաւ, և հրամայեաց զինուորացն զերանելին Բարղամ
ածել զառաջեաւ։ Յայնժամ չոգան զինուորքն 'ի
բանդն՝ ըստ հրամանի իշխանին, և հանեալ զնա
ածեալ կապանօք առաջի իշխանին յատեան հրապա-
րակին։ Յայնժամ ասէ ցնա իշխանն. Հաւանեցուցէր
զանձն քո՝ այսուհետև ազատիլ 'ի մնացեալ ևս տան-
ջանացն։ Բարղամ ասաց. Բազում անգամ լուար
յինէն թէ ոչ եմ զառածեալ[1] յիմաստիցս և ոչ զո-
հեմ դիւաց, և ոչ ուրացայց զԱստուածն իմ և արա-
րածոց երկիր պագից, և այժմիկ զնոյնդ ասել քեզ՝
ոչ հրաժարեմ։ արդ արա վաղվաղակի զոր ինչ կամիս։
Իշխանն ասէ. Կախեցէք զդա և քերեցէք երկաթի
եղընգամբք. զի դևն չար որ ըմբռնեալ է զդա՝ ել-
ցէ 'ի դմանէ։ Բարղամ ասաց. Ես դև ոչ ունիմ, այլ
և ոչ ամենևին իմանամ զտանջանս քո։ Իշխանն ասէ.
Զանձրացայ ես, և պաշտօնեայք իմ վաստակեալ 'ի
քաց եղեն, և ոչ հաւանիս. արդ տարածեսցի դա
յերկուց ոտիցն 'ի մէջ երկուց ծառոցդ։ Եւ արարին
վաղվաղակի որպէս հրամայեաց իշխանն զինուորացն։
Բարղամ ասաց. Ճշմարիտ ասեմ 'ի Տէր իմ Յիսուս
Քրիստոս, թէ բնաւ ոչինչ թուեցան տանջանք մեքե-
նաւոր հնարիցդ քոց, Աստուծոյ թեթևացուցանելով
ինձ զնոսա։ Իշխանն ասէ. Զի՞նչ ասես, Բարղամ, զո-
հե՞ս և ազատիս, եթէ ոչ։ Բարղամ ասաց. Ոչ գիտես
եթէ զի՞նչ է սէրն Քրիստոսի։ Իշխանն ասէ. Հաւա-
նեա ինձ. քանզի 'ի բազմաժամեայ կախմանէդ փա-
կանք բերանոյ քո թողացեալ են, և յօդք մարմ-
նոյդ քակեալ են, վասն որոյ խնայելով 'ի քեզ ողորմիմ
ալեաց քոց և ողոքեմ զքեզ, զի զոհեսցես և ազատես-
ցիս։ Բարղամ ասաց. Աստուծով իմով՝ որ յերկինս
բնակութիւն ունի, և յերկրի օգնական է նահատա-
կաց իւրոց՝ ասեմ, ոչ իմացայ զտանջանսդ. և ոչ զոհեմ

1. Այլ օր. զառանցեալ։

ապականացուաց մնոտեաց աստուածոց։ Աստուածք որ զերկինս և զերկիր ոչ արարին՝ կորիցեն 'ի ներքոյ երկնից, գրեալ է։

Իշխանն ասէ. Պարզեցէք զձեռս դորա և 'ի ներքոյ տարածեցէք հուր, և մատուցէք անդ բագին մի, և կնդրուկս արկէք 'ի ձեռս դորա. և եթէ անշարժ մնասցէ ձեռն դորա՝ տեսցուք. ապա եթէ թափէ առ բագինն զոր ինչ 'ի ձեռին է՝ զոհեաց։ Այլ արիագոյն զինուորն Քրիստոսի Բարղամ 'ի վեր ուղղելով զձեռն իւր և հեռացուցանելով 'ի բագնէն, և զաչս 'ի յերկինս համբարձեալ՝ ասէր. Քեզ Հօր և Քրիստոսիդ քոյ տաց զմարմին իմ։ Հայեաց հաշտ ակամբ յերկնից 'ի պատրաստ բնակութենէ քումմէ 'ի ցրուեալ և 'ի վաղատեալ ժողովուրդ քո, և զհեղումն արեան իմոյ 'ի մաքրութիւն սոցա համարեա։ Եւ զկնդրուկն առ բագնո

Պատմութիւն և խօսք Եղիազարեանի, յաղագս վարուց և աքանչելագործութեանց սուրբ և փառաւորեալ հայրապետին Բարսղի, արքեպիսկոպոսին Կեսարու Կապադովկացւոց։

Սիրելիք և բարեկամք, ոչ է անհաւատալի Աստուծոյ բանիս միամիտ որդւոց[1], որք հայրենատուր վարուց հետևին։ Այլ և իրաւունս համարիմ, զի արտասուօք և չարչարակցութեամբ գերեկիցք մեր լինիցիք. այլ մանաւանդ գոհութեամբ աղօթս մատուսցիք առ ամենեցուն մեր Աստուածն և Տէրն Քրիստոս[2], զի զոր խոստացայս՝ գեղեցկապէս սկիզբն առնել զանհասանկան[3] վարս և զաքանչելագործութիւն հովուապետին[4] մերոյ և վարդապետին Բարսղի գրել, զի մի անցեալ ժամանակաւ 'ի մոռացօնս խորոց մատնեսցի։ Այլ և զերիցս երանելեացն և զաքանչելի արանցն՝ զոր և ասեմ իսկ, զԳրիգորի՝ որ և աստուածաբանութեամբն գերազանցեալ Յոհաննայր, և զԳրիգորի անստացուածի Նիւսացւոյն քաղաքին. և ոչ միայն զսոսա, այլ զամենագովն[5] Եփրեմ, զորս շուրջ փարելով զմիմեամբքն փայլեցուսցուք[6]։ Կամ եղև ինձ ախորժելով, 'ի

1. Երկ. օր. որդեաց։

2. Մի օր. զի Ա արքաուսօք լարլարիցուսնեամբ գերբեիր լինիցիք մեզ։ Ե՝ զոր մատուցանել կամ յեզ յաղագս գրեցելոցս՝ մի դրդուիցիք, այլ գոհութեամբ աղաչանս մատուցուք առ ամենեցունց Տէրն Ա Քրիստոս Աստուած մեր։

Այլ օր. զի արքաուսօք լարլարիցուսնեամբ գերբեիր մեր լինիցիք, Ա զոր մատուցանել կամիմ յեզ յաղագս գրեցելոցս՝ մի դրդուիցիք, այլ գոհութեամբ աղաչանս մատուցուք առ ամենեցունց Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

3. Երկ. օր. զանուգայական վարս։

4. Մի օր. հայրապետին մերոյ։

5. Երկ. օր. զամենագովելին Եփրեմ։

6. Մի օր. զմիմեամբք զուրջ փարելով զվարս փայլեցին։

Այլ օր. զմիմեամբ փարելով զվարս փայլեցուք։

ձեռն տեսլեան Հոգւոյն սրբոյ [1], գրել զյօրինուած ժուժկալութեան սքանչելի արանցն, ընտրել զպատմութիւնս և զպակասութիւնսն կատարել. և որպէս մտերիմ որդի զպարտսն հատուցանել [2], որպէս վերագոյնն ասացի, զհետ գոլով և ձգմարտութեամբ յօրինեցից [3]։ Գիտէք իսկ գիտէք զարեգակն ծածկեալ յամպոց, և ժամանակաց անցելոց՝ զվայելուչ պատմութիւնս արկանել 'ի մուռացունս։ Վասն որոյ զմեծ հայրապետս մեր, զգոչումն աշխարհիս՝ զԲասիլիոս, որ երկնային զօրութեանցն էր խօսակից, որ փորձիւ եկեղեցեաց վարդապետն [4], որ զբնութիւնն իւր արիացոյց, որ առ երրորդական աղօթիւքն իւրօք խորտակեաց զՅուլիանոս զկործանեալն, որ զաղանդաւոր հայհոյչացն եխից զբերանսն, որ զարիանոսացն խզեաց զչարափառութիւն, որ քրիստոսական իմաստութեամբն բուռն հարեալ զուղղափառութենէ [5], որ հովիւն համօրէն եկեղեցեաց ժողովրդեանն Քրիստոսի, որ արքայութեան երկնից էր քահանայագործող, որ փարելին էր քրիստոսական հօտին, որ աստուածային հաւատոյն ժիր վարդապետն, որ 'ի կենդանութեանն և զկնի մահուանն մեծապէս փայլեցուցանէր զքանչելիսն [6], որ աղօթիւքն որպէս վերագոյնն ասացաք, զաստուածամարտսն Յուլիանոս [7] սատակեաց, զայն՝ որ ամբարձ 'ի բարձունս զեղջիւր իւր [8] և խօսեցաւ զԱստուծոյ անիրաւութիւն [9], զայն՝ որ անարժանն էր

1. Մի օր. կամ եղիր ես ինչ, որպէս 'ի փեսլենէ Հոգւոյն սրբոյ յանկարծակի գրել։

Ա.յլ օր. կամ եղիր ինչ յանկարծակի որպէս 'ի փեսլենէ Հոգւոյն սրբոյ՝ գրել։

2. Մի օր. զհայրենի պարտսն հատուցանել։

Ա.յլ օր. զհայրենի պարտսն վճարել։

3. Մի օր. ճշմարտիւ յօրինեցի։

Ա.յլ օր. ճշմարտիւ յօրինեցայ։

4. Մի օր. վասն որոյ զմեծ հայրապետին մերոյ զգոչումն աշխարհի զինուորեալ, որ երկնային զօրութեանցն փեսոշ եղեալ, զիւրոյ վարդապետին եկեղեցոյ։

Ա.յլ օր. վասն որոյ զմեծ հայրապետս մեր զԲասիլիոս, որ երկնային զինուորութեանցն հնարաւորութիւն վարդապետին եկեղեցեաց։

5. Մի օր. որ առ երրորդական աղօթիւքն զՅուլիանոս խորտակեաց. իրծանեալ զաղանդն, որ զհայհոյչացն խզեալ զբերանս արիոսացն զչարափառութիւն. և քրիստոսական իմաստիցն բուռն հարեալ զուղղափառութիւն։

6. Մի օր. առաւել փառաւորացանէր զքանչելիսն։

Ա.յլ օր. փայլեցուցանէր զնշանագործութիւնսն։

7. Մի օր. զամբարտաւանն Յուլիանոս։

8. Մի օր. զայն որ համբարձ 'ի բարձունս զբերան իւր։

9. Մի օր. անիրաւութեամբ։

թագաւորական պատուին [1], և արիանոսաց չարափառութեանն էր զօրավիգն, զայն՝ որ յաղագս կեսարութեանն՝ [2] զքաղաքս յամպարշտութիւն կամէր դարձուցանել [3]։ Եւ եթէ զիարդ կամ որպէս, ոչ է ժամանակ զայս պատմել [4]. այլ յառաջիկայն մեր վերստին երթիցուք, և 'ի ծննդենէ մինչև ցվաղճան զվարս սրբոյն պատմեսցուք։ Բարսեղ միայն որ եցոյց զվարս ճառիւք վայելչականօք, և զբանս աստուածային իմաստութեամբ և զգործս պայծառացոյց. զամենայն Քրիստոսի տալով՝ զհոգի և զմարմին բանիւք և արդեամբք, և զհելլենական մոլորութիւնն որպէս զսարդի ոստայն եղծանէր [5]։

Սա եօթնամեայ եղեալ տուեալ լինի յուսումն գրոց, և կացեալ անդ զհինգ ամ [6], և ոչ ընդդիմադարձեալ յուսմունսն [7], ցանկայր հմուտ լինել փիլիսոփայական արհեստիցն. զմտաւ ածէր թողուլ զենակութիւնն իւր, զի էր 'ի Կեսարիայ Կապադովկացւոց։ Եւ առ ժամայն յարուցեալ մայր նորա առեալ զնա գնաց [8] յԱթէնս, պարկեշտութեամբ բազմաւ և ժուժկալութեամբ, իմաստութեամբ զարդարեալ։ Եւ երթեալ առ իմաստութեան վարդապետն Հելլենացւոց [9] որում անուն էր Եւուղոս [10], և տուեալ զնա յուսումն փիլիսոփայութեան։ Իսկ նորա դիւրութեամբ հասու եղեալ այնչափ, մինչ զարմանալ ընդ նմա վարդապետին և աշակերտացն [11]։ Քանզի էր նորա աշակերտակից Գրիգորիոս Մեծն, որ ապա յետոյ եկաց Նազիանզու եկեղեցւոյն վերատեսուչ, և առաքելական աթոռոյն Սիայ [12]։

1. Մի օր. Բագաւորական պատուին։
Այլ օր. Բագաւորութեանն պատուի։
2. Մի օր. Կայսերութեան, զքաղաքն։
3. Մի օր. Կամէր դարձանել։
4. Մի օր. ոչ է ժամ պատմել։
Այլ օր. յայլ ժամու պատմեցից։
5. Մի օր. զսարդի ոստայն փաղեաց։
Այլ օր. զսարդի ոստայն լուծանէր։
6. Մի օր. Ե կրկնեալ յուսմանն զհինգ ամ։
Այլ օր. զԷօթն ամ։
7. Երկ. օր. Ե ոչ ընդդիմադրեալ յուսմանն։
8. Երկ. օր. էջ յԱթէնս։
9. Մի օր. Ե երթեալ առ խոհեմ վարդապետն Անինոսոյ Ե Հելլենացւոյ։
10. Մի օր. Եւդոս։
11. Մի օր. աշակերտացն։
12. Մի օր. առաքելական աթոռոյն Նախագահ։
Այլ օր. առաքելական աթոռոյն խնամակալ։

Իբրև երկոտասան ամ [1] հանդարտէր յուսումնն, Յուլիանոս՝ որ յառաջն փոքր մի քրիստոնեայ էր, և Լիբանոս՝ [2] խոտորեցան [3] յուղիղ ճանապարհէն։ Իսկ սուրբն Բարսեղ առաւել աքանչանայր ընդ արան [4], և եղեալ 'ի մտի մի՛ ճաշակել հաց կամ գինի, մինչև 'ի վերին տեսչութենէն իմաստի զաստուածային իմաստութեան զհանգամանս, փոյթ յանձին ունելով զամենայն խրատուց զհնգետասան ամ, և ընդ ամենայն հելլենացի իմաստութիւնս ընթացեալ, և 'ի կատար աստեղագիտութեանն հասեալ, զլաւագոյնն 'ի նոցանէ ընտրեալ, և ոչ կարացեալ գտանել մի ինչ 'ի նոցանէ հրաշագործող ամենեցուն։ Եւ եղև 'ի միում գիշերի տքնեալ նմա, ծագումն աստուածային եղեալ առ նա, զի թողցէ զաղանդաւորացն զգիրս։ Եւ յարուցեալ առ ժամայն էջ յԵգիպտոս. և եկեալ առ ոմն մի յառաջնորդացն [5] որում անուն ճանաչէր Պորփիւրոս. և նորա տուեալ նմա գիրս քահանայականս, յորում գրեալ էր աստուածային պատգամացն հանգամանս։ Իսկ նորա այսմ իրի հանդիպեալ, դադարեաց անդ ընթեռնուլ, և հաստատեալ զաստուածային պատգամն, ջուր և բանջար ճաշակելով և զմի ամ դադարելով անդ, և զՀշմարիտ հաւատոյն բանս իմանայր. մնայր անդէն, քննէր և ստուգէր յաղագս բանին Հշմարտութեան։ Եւ զկնի այսորիկ աղաչեաց զվանականն, զի արձակեսցէ զնա յԵրուսաղէմ՝ առ 'ի յաղօթել, տեսանել զքանչելիսն որ անդ եղեալ։ Իսկ նորա աղօթեալ արձակեաց զնա։

Դարձեալ վերստին եկն ուր զվարժումն փիլիսոփայութեանն էր ընկալեալ. սկսանէր ապա՝ ընթադրեալ զբազում փիլիսոփոսս [6] և զհելլենացիսն դարձուցանել առ Աստուած, ցուցանել նոցա զճանապարհն փրկութեան. խնդրէր զԵւուղոս վարդապետն

1. Մի օր. երկոտասանամեայ։
2. Անուանի հռետորն Լիբանիոս։
3. Մի օր. Ի յեպոյ խոտորեցան։
4. Մի օր. սուրբն Բասիլիոս ածեալ զմտաս առաւել զարմանայր ընդ արան։
5. Մի օր. էին առ նա ոմն յառաջնորդաց։
6. Մի օր. ուր յառաջն էր 'ի սիրելիսն, ապա ընդադրեալ փիլիսոփայութեան վարդապետն Հեւլենացոց դարձուցանէր յաստուածգիտութիւն։

իւր, վասն զի նա էր առաջնորդն բանին, փոխանակ աշխատութեան նորա բերելով նմա զամբիծ հաւատն, զի զնա դարձուցէ յուղիղ հաւատս։ Եւ գտեալ զնա յագարակի ընդ այլ փիլիսոփայս, զի վիճէին վասն բանի ինչ իրաց, ոչ այլ ինչ փոյթ ունելով նոցա, բայց միայն լսել ինչ կամ ասել նորագոյնս, հասարակաց հարցափորձելով զմիմեանս։ Մօտ կալով և ունկն դնելով Բասիլիոս [1], և սոգտանէր զնոսա։ Եւ ոմն մի յորոց անդ կային՝ ասէ. Սոգտանէ զքեզ ոմն մի, ով իմաստասէր։ Եւ նա ասէ. Կամ Աստուած է, կամ Բասիլիոս։ Իբրև ծանեաւ եթէ Բասիլիոս է, արձակեաց զարսն որ ընդ նմայն էին։ Եւ դադարեալ անդ Բասիլիոս զաւուրս երիս, ոչինչ ձաշակեալ հարցափորձելով զմիմեանս։ Եհարց Եւուղոս զԲասիլիոս և ասէ. Զի՞նչ է սահման իմաստութեան, Բասիլիէ։ Եւ նա ասէ. Առաջին սահման իմաստութեան՝ ընթերցումն մահու [2]։ Իսկ նորա զարմացեալ ասէ. Զի՞նչ 'ի վերս քան զաշխարհս քաղցրագոյն։ Եւ նա ասէ. Բանք՝ որ յաշխարհի. բայց դառն է յամենայնի աշխարհս որ գնան ընդ նա ախտիւք [3]. այլ է ճանապարհն որ ըստ մարմնոյ է, և այլ որ ըստ մարմնոյ բնութեանն, և միանգամ որք գնան ընդ նոսա, ոչ կարեն ընդունելի լինել, վասն զի ոչ կարէ երկուց տերանց ծառայել։ Բայց միայն որ կարօղն է բրդել քաղցելոց զհաց գիտութեան, և զանյարկս առաքինութեամբ ընդ յարկաւ ածել, և եթէ զմերկս տեսանէ՝ զգեցուցանէ, և յընտանեաց զաւակի զանկն ոչ դարձուսցէ։ Զայս ասացեալ առակօք սրէր զնա 'ի ճանապարհ փրկութեան և մարդասիրութեան ապաշխարութեան. Երիս ասէ գրաւորս, զոր եդեալ է յաջմէ սեմոց [4] դրանց կամաց մերոց. նախ զտրտմութեան [5] որ զառաքինութիւն բերէ, զիմաստութիւն, զօրութիւն, զարդարութիւն։ Իսկ որ ընդ ահեկէն լցեն [6], նախ զստութիւն՝ [7] որ

1. Մի օր. լսելով Բարսղի։
2. Մի օր. խոխոռմն մահու։
3. Մի օր. բանք որ յաշխարհի են. աշխարհ որ գնայ ընդ նա ոգիւք. այլ բանք որ յաշխարհի, բայց դառն է յամենայնի աշխարհս որ գնայ ընդ անոգիւք։
4. Մի օր. զոր եդեալ է առաջի սիմոց դրաց։
5. Մի օր. նախ ապաշխարութիւն։
6. Մի օր. իսկ որ ահեկին են։
7. Մի օր. նախ խոգութիւն։

կործանին վասն նորա. անբարեգթութիւնք, անաշխատութիւնք, անառակութիւնք, զօշաքաղութիւնք, բանսարկութիւնք[1], լեզուագարութիւնք անակնածելի, և որ այսմ չարութեան նման են։ Իսկ զապաշխարութիւն վայելչապէս կանգնել, անդրդուելի ծաղկեալ որոց վարին նովաւ. իսկ որոց ընդդէմն կան՝ դիմադարձ լինին։ Իսկ բնակչաց ակնածելի ժողովոյս՝[2] ըստացանել զնոսա ժուժկալութեամբ, լսողութեամբ, զգաստութեամբ, պարկեշտութեամբ, մարդասիրութեամբ, և բազում բարութեամբ. իսկ այսմ հմտութեանս միտք են և տեսանելեացս զգուշութիւնք[3]։ Իսկ որ լսէ բանիս իմոյ՝ նախանձի ընդ պատճառն. քանզի այնմ և այսմ ես եղէ տեսօղ և տեղեակ, և պատմեմ քեզ, ո՛վ Եւուղէ, եթէ առ մեզ ոչ է այլ ինչ օրինակ, բայց եթէ բուռն հարկանել զՀնմարտութենէն՝ որ առաջնորդէն մեզ 'ի փրկութիւն. յարիցեն սոքա 'ի կեանսն յաւիտենականս և կայցեն առաջի բեմին Քրիստոսի, որպէս ասեն մեզ մեծաձայն՝ մարգարէքն Եսայիաս, Երեմիաս, Եզեկիել, Դանիել, Դաւիթ թագաւոր, և առաքինին Պաւղոս։ Ըստ սոցա[4] և ինքն իսկ որ ապաշխարութեան էր պարգևատու՝ ամենեցուն Տէրն, որ զկորուսեալ ոչխարն խնդրեաց, և զորոշեալ մանուկն 'ի ծոցոյ հօրն և զբազում ստացուածս իւր անառակութեամբք[5] վատնեալ, և ինքն սովամահ եղև, վերստին ընկալաւ և մտերմութեամբ գիրկս արկեալ համբուրեաց, և պատմուճանաւ զարդարեաց և մատանեաւ բազմագնաւ[6] շքեղացոյց զնա, այնպէս որպէս թէ ոչ երբէք մեղուցեալ նորա 'ի Տէր, որ առաւել ունի զգթութիւն, և այսպէս հաստատութեամբ տայ զՀատուցումն[7]։ Որպէս և առ մշակս՝ որ զմետասան ժամն վաստակեցին,

1. Մի օր. բանսարկութեամբ։
2. Մի օր. իսկ բնակչաց ածել 'ի ծողով, ըստացանք զնոսա։
3. Մի օր. իսկ այսմ փնտանելի հմտութեանց միտք են զգուշութիւն։
4. Մի օր. առաքինին Պաւղոս. ընդ նոսին և ինքն որ ապաշխարութեանն է պարգևատու և ամենեցուն Տէր։
5. Մի օր. որ զբաղում ապաստաստ ծրս առատիներութեանն վատնեաց և ինքն սովամահ եղեալ։
Այլ օր. որ զբաղում ապաստաստ իւր անառակութեամբ ծախեալ։
6. Մի օր. բազմագնեաւ կամ բազմագնով։
7. Մի օր. հաստատութեամբ տայ զնոսա։
Այլ օր. առատանելոնի զգիպութիւն։

տուեալ նոցա զվարձան որպէս զառաջնոցն։ Այսպէս և զմեզ ընդունի՝ եթէ վերստին 'ի ջրոյ և 'ի Հոգւոյ ծնանիմք, և պարգևէ մեզ՝ զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, և 'ի սիրտ մարդոյ ոչ ել, վասն զի զայն պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոյ։—Զայս ամենայն լուեալ Եւուղոս, եկեալ 'ի միտս իւր՝ ասէ. Ո՛վ Բասիլիէ, երկնային զօրութեանցն տեսօղ, վասն քո հաւատամ՝ 'ի մի Աստուած՝ Հայր ամենակալ, յարարօղն երկնի և երկրի, և որ ինչ 'ի կարգին է, ակն ունիմ յարութեան մեռելոց և կենացն անվախճանից յաւիտեան։ Ես, ասէ, զիմ հաւատս ցուցից քեզ, և զամենայն որ ինչ իմ է՝ տաց 'ի ձեռն քո, և զմնացուածս ժամանակաց իմոց եղէց ընդ քեզ. և եթէ հաճոյ է Աստուծոյ՝ ընկալցի զիս 'ի սուրբ ջրոյս և յաստուածային Հոգւոյն վերստին ծննդեանն[1]։ Եւ Բասիլիոս ասէ. Օրհնեալ Տէր Աստուած մեր, յայսմ հետէ մինչև յաւիտեանս, ո՛վ Եւուղէ, որ ծագեաց զլոյս Աշխարհութեան[2] 'ի կամս քո, և փոխեաց 'ի բազմաստուած մոլորութենէ՝ 'ի գիտութիւն իւրոյ Աշխարհութեանն։ Արդ խորհուրդ մի ասեմ քեզ, եթէ որպէս զփրկութիւնն մեր գտցուք, և 'ի կենցաղոյս ազատեսցուք։ Տուր՝ որպէս ասացեր՝ զինչս քո, և վաճառեսցուք զայն և տացուք աղքատաց, և զամենայն որ ինչ է մեր՝ այնպէս արասցուք, և այնպէս երթիցուք 'ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, որպէս զի և տեսօղք լիցուք այնմ սքանչելեաց՝ որ անդր գործեցան, և առաջի կացցուք Աստուծոյ համարձակութեամբ։

Եւ այնպէս կարգեցին զամենայն ինչս իւրեանց բարեպաշտութեամբ, և սուրբ մկրտութեանն փափագէին։ Ապա յարուցեալ գէմ յանդիման Երուսաղեմի ակն կալեալ. և իբրև մտին յԱնտիոք քաղաք, ինչին 'ի պանդոկ մի[3]։ Իսկ որդի պանդոկապետին՝ որում

1. Մի օր. Ի նոնէ հաճոյ ինչ Աստուծոյ՝ ընկալայր 'ի սուրբ ջրոյ և յաստուածային հոգւոյն վերստին ծնունդն։

2. Մի օր. Ղլոյս աստուածութեանն, և փրկեաց 'ի բազմաստուած մոլորութենէ 'ի գիտութիւն իւրոյ բարերարութեանն։

Այլ օր. փոխեաց 'ի բազմաստուածութեանն։

3. Մի օր. Ի այնուհետև դէպ ամն ելեալ Երուսաղէմի. և իբրև հասին յԱնտիոք քաղաք։

Այլ օր. ապա յարուցեալ դէմ յԵրուսաղէմ ամն ելան. և իբրև հասին յԱնտիոք քաղաք, ինչին 'ի պանդոկի միջ։

անուն էր Փիլիքսիանոս[1], որ Թարգմանի Օտարասէր, նստէր առ դրանն բազում տրտմութեամբ. և էր նա աշակերտ Լիւիանեայ փիլիսոփայի, առեալ 'ի նմանէ տունս քերականս, որպէս զի մեկնեսցէ զնոսա 'ի հռետորականս. և 'ի բազում ծուփս և 'ի հոգս էր վարանեալ վասն չկարելոյ մեկնել զնոսա։ Եւ տեսեալ զնա Բասիլիոս՝ ասէ ցնա. Ընդէ՞ր այդպէս վարանեալ կաս, պատանի դու։ Ասէ ցնա պատանին. Զի՞նչ օգուտ իցէ ինձ՝ եթէ[2] ասացից քեզ։ Եւ ասաց նմա զպատճառս իրացն։ Իսկ Բասիլիոս մօտ կացեալ ընթեռնոյր զտունսն, և առեալ դրէր զմեկնութիւն նոցա յերիս դէմս։ Իսկ պատանին[3] ընկալեալ խնդութեամբ զնոսա, առեալ եկն առ Լիւիանիոս։ Եւ ընթերցեալ զլուծումն մեկնութեանցն խնդալից եղեալ ասէ. Աստուածուհւոյն նախախնամութեամբ, ոչ ոք կարէ յայժմու փիլիսոփայից մեկնել զլուծումն դոցա. ո՞վ է որ զայսպիսի իրս յօրինեաց։ Պատանին ասէ. Օտար ոմն եկն երեկ 'ի պանդոկն իմ[4], և պատուասիրաբար ի մատաստիրեաց ինձ զլուծումն դոցա։ Եւ նոյնժամայն Լիւիանիոս ոչինչ յապաղելով[5] եկն 'ի պանդոկին. և տեսեալ զԲասիլիոս հանդերձ Եւուղեաւ, և ծանուցեալ զնոսա զարմանայր ընդ իրսն. վասն որոյ ոչ ունելով ակն տեսանել զնոսա, աղաչէր զի արժանաւորեսցէ ընդունել զնոսա 'ի տուն իւր։ Եւ հաւանեալ նոցա եկին զկնի նորա. և եդեալ առաջի նոցա սեղան, և ճաշակեցին հաց և բանջար միայն, և ուրախութեամբ լցան. բուռն հարեալ զկարգաւորութենէն իւրեանց՝ գոհանալով զԱստուծոյ։ Իսկ Լիւիանիոս սկսանի 'ի խնդիրս ինչ անկանել 'ի բանս հռետորականս[6], և նոքա առաջի եդեալ բանս յաղագս հաւատոցն որ 'ի Քրիստոս։ Ունկն դնէր Լիւիանիոս ասացելոցն, և ասէ. Ե՞րբ է ժամանակ այդմ իրացս։ Բարսեղ ասէ. Յորժամ կամք հաստատին՝ ոչինչ կարէ խափանել։ Եւ նա ասէ. Ի մեծ օգուտ հասուցեր զմեզ,

1. Մի օր. Փիլիքսիանոս։
Այլ օր. Փիլիքսիանոս։
2. Մի օր. Եթէ զի՞նչ օգուտ ինչ ասացից քեզ։
3. Երկ. օր. պապանոցն։
4. Մի օր. 'ի պանդոկին իմոմ։
5. Մի օր. ոչինչ ֆոյն առանելով։
Այլ օր. ոչինչ ֆոյն ուանելով։
6. Մի օր. սկսանէր խնդիրս արքանել ընդ նոսա բանս հռետորականս։

ուվ Բասիլիէ, խօսեա և ընդ աշակերտեալ մանկունս իմ։ Իսկ բարեշուք այրն Աստուծոյ տեսեալ ժողով[1] զմանկունսն, ուսուցանէր նոցա՝ անձանց մաքրութիւն և անաղտութիւն մարմնոյ, գնացք հեզութեան, ձայն չափաւոր և խօսք բաւական, կերակուր անխըռով, առաջի ծերոց լռութիւն, առաջի իմաստնոց ունկընդրութիւն, առ վերակացուս հնազանդութիւն, առ ընկերակիցս սէր, առ կրսերականս անկեղծաւորութիւն, սակաւ խօսել և յոլով իմանալ. մի՛ յաճախել 'ի բանս, մի՛ յանդգնել 'ի խօսս ծաղրու[2], ամենախածութեամբ զարդարիլ, ընդ անպարկեշտ կանայս ամենևին մի՛ խօսել, 'ի վայր ունելով զակն և 'ի վեր զմիտսն, փախչել 'ի հակառակութենէ. մի՛ իշխանաբար ուսուցանել. մի՛ ընդունել հեշտաբար յամենեցունց պատիւ. և որ կարողն է 'ի ձէնջ՝ ընկերին փոխ տալ, մի՛ դարձեալ պահանջեսցէ զկշիռն, այլ Աստուծոյ վարձուցն ակն ունել[3], և զյաւիտենական կենացն հատուցումն ընդունել 'ի Քրիստոսէ։ Զայս ամենայն ասաց Բասիլիոս ցաշակերտսն Լիւիանեայ, և ինքն հրաժարեալ գնաց զճանապարհն իւր հանդերձ Եւուղեաւ։

Իբրև եհաս յԵրուսաղէմ՝ զամենայն հաւատս ուղղափառս փափաքանօք քննեալ, և 'ի վերայ այսր ամենայնի Աստուծոյ երկրպագութիւն մատուցեալ, եկին 'ի տես եպիսկոպոսի քաղաքին, որում անուն էր Մաքսիմինոս։ Եւ անկեալ առաջի նորա աղաչէին արժանի լինել վերատին ծննդեանն 'ի Յորդանան գետ։ Եւ տեսեալ զնոսա սրբոյ եպիսկոպոսին, առաւել ևս լցոյց զնոսա հաւատով, յանձն առեալ կատարել զհայցուածս նոցա։ Եւ առեալ զնոսա եպիսկոպոսին և զայլս ոմանս հաւատացեալս, եկն 'ի Յորդանան գետ։ Իսկ Բասիլիոս մերձ կալով յամբոխն՝ անկեալ յերկիր արտասուէր հառաչմամբ մեծաւ, և հայցէր յԱստուծոյ նշան ինչ տեսանել վասն հաւատոյն. և

1. Երկ. օր. ծողովքեալ զմանկոնսն։
2. Մի օր. գնայդ լաքաւոր, ձայն հէղ, բան բաւական, կերակուր ի ըմպելի անխառով... առաջի իմաստնոց լսողութիւն... առաջի երէցանց անկեղծութիւն... զայդ իմանալ... մի՛ յանդգնել 'ի ծաղր։
3. Երկ. օր. յԱստուծոյ վարձուցն ակն ունել։

դողութեամբ յարուցեալ մերկանայր զհանդերձն, ընդ նմին և զհին մարդն. և աղօթելոյն առ ժամայն եմուտ 'ի ջուրն։ Եւ առեալ քահանային մկրտեաց զնա[1]. և նոյն ժամայն սիւն հրեղէն եկաց 'ի վերայ նորա, և ելեալ աղաւնի մի 'ի լուսոյն՝ էջ 'ի Յորդանան և խառնեաց զջուրսն[2], և վերացաւ յերկինս։ Իսկ որ անդր կային, տեսեալ՝ փառաւոր առնէին զԱստուած։ Եւ իբրև մկրտեցաւ Բասիլիոս եւ 'ի ջրոյ անտի, զարմանայր եպիսկոպոսն Մաքսիմինոս ընդ սէրն Բարսղի որ առ Աստուած, և աղօթեալ նորա զգեցոյց նմա զՔրիստոսի վարշամակն[3]։ Մկրտեաց և զԵւուղոս. և օծեալ զնոսա սուրբ միւռոնաւն՝ տայր նոցա և 'ի կենդանարար հաղորդութենէն[4]։ Հայցեաց ապա և Բասիլիոս 'ի քահանայապետէն Աստուծոյ՝ աղօթիւք առնուլ կերակուր, որպէս և արար իսկ։ Իսկ Բասիլիոս ասէ. Յիսուս Քրիստոս Աստուած մեր, որպէս հաւատացի աւետարանական բանիդ քո, եւ յուսամ 'ի բարերարութիւնդ քո, եթէ ուտելով և ըմպելով յաղթեցիս հակառակողին[5] իմոյ սատանայի, գործակցութեամբ Հոգւոյդ սրբոյ։ Իսկ քահանայապետն Աստուծոյ շուրջ առեալ զհաւատացեալսն իւրովք՝ դարձաւ անդրէն 'ի սուրբ քաղաքն Երուսաղէմ։

Իսկ սուրբն Բասիլիոս շրջեալ հանդերձ Եւուղեաւ ընդ սուրբ տեղիսն[6], և զկնի ամի միոյ կամ եղև հասարակաց նոցա գալ յԱնտիոք։ Եկեալ առ նոսա եպիսկոպոսին որ անդ էր, ընթեռնոյր Բասիլիոս և մեկնէր զառակացն բանս[7] առաջի եպիսկոպոսին, մինչև զարմանալ նմա։ Ապա զկնի բազում ինչ աւուրց[8], դէմ եդեալ հանդերձ Եւուղեաւ երթալ յաշխարհն Կապադովկացւոց, իբրև կամեցան[9] մտանել ընդ դուռն Կեսարացւոց քաղաքին՝ յայտնեցաւ 'ի տեսլեան գիշերոյն եպիսկոպոսի քաղաքին, որում

1. Մի օր. զնոսա...նոցա։
2. Մի օր. ուղղեալ աղաւնի մի... խառնակիեաց զջուրսն։
3. Երկ. օր. զՔրիստոսի յարութիւնն զվարշամակն։
4. Մի օր. 'ի կենդանարար հացէն։
5. Մի օր. հակառակորդին։
6. Մի օր. հանդերձ Եւուղեաւ 'ի քաղաքինսն և յանապատանոցսն։
7. Մի օր. զառակաց գիրսն։
8. Մի օր. զինի բազում ինչ բանից։
9. Երկ. օր. կամեցաւ։

անուն էր Եւսեբիոս, եթէ Բասիլիոս հանդերձեալ է ունել զկնի քո զաթոռ եպիսկոպոսութեանդ։ Իբրև զարթեաւ՝ կոչեաց զառաջնորդս քաղաքին և զոմանս 'ի բարեպաշտ սպասաւորացն եկեղեցւոյն, և պատմեալ նոցա զտեսիլն՝ առաքեաց զնոսա ընդ արևելից դուռն քաղաքին[1]։ Եւ ծանեան զնոսա՝ որք երթեալ հանդիպեցան առ դրանն, և աղաչեալ տարան առ եպիսկոպոսն[2]։ Իբրև մտին, տեսեալ զնոսա սրբասէր քահանայապետին, նկատեր զնմանութիւն տեսլեանն, և զԱստուծոյ գոհացեալ՝ հարցանէր թէ ուստի գան, կամ յո՞ երթան, և զինչ ուսումն ունին։ Եւ իբրև ուսաւ զամենայն, հրամայեաց սպասաւորացն հանգուցանել զնոսա. եւ առեալ տարան զնոսա 'ի նշանաւոր տեղի, զամենայն կարիս նոցա պատրաստեցին։

Ի նմին ժամու առաքեաց բարեսէր[3] այրն Աստուծոյ, և կոչեաց զընտիրս եկեղեցւոյն և զքաղաքին, պատմէր նոցա զոր ինչ Աստուած եցոյց նմա։ Եւ նոցա միաբանեալ ասեն ցնա. Ճշմարտապէս և սա արժանի է վարուց քոց, յաղագս այնորիկ և Աստուած յայտնեաց քեզ, զի զկնի քո կալցէ զաթոռ արքեպիսկոպոսութեանդ պայծառապէս. յայսմ հետէ մի՛ ինչ զանգիտիցես, այլ արասցես զինչ հաճոյ թուի յաչս քո։ Իսկ նորա կոչեցեալ զԲասիլիոս հանդերձ եւուղեաւ՝ խօսէր ընդ նոսա 'ի գրոց, և սքանչացեալ 'ի վերայ իմաստութեան նոցա, ունէր զնոսա առ իւր իբրև զսեաման յաջոյ կողմանէ, մինչև փոխեալ լինէր յաշխարհէս սուրբ եպիսկոպոսն։

Ապա ժողովեալ սուրբ եպիսկոպոսաց՝ գործակցութեամբ Հոգւոյն, ձեռնադրեցին զԲասիլիոս յաթոռ եպիսկոպոսութեանն, ունելով զեկեղեցին ըստ կամացն Աստուծոյ։ Եւ զկնի աւուրց ինչ խնդրեաց յԱստուծոյ՝ որպէս զի տացէ նմա շնորհս և իմաստութիւն և հանճար, առ 'ի կարգաւորել բանիւք, և մատուցանել անարիւն պատարագ Աստուծոյ, և տնկել 'ի

1. Մի օր. ընդ արեւելից դռնի փաղաքին։

2. Մի օր. և երթեալ հանդիպեցան նոցա առ դռան փաղաքին, և ծանեան զնոսա և առեալ տարան առ եպիսկոպոսն։

3. Մի օր. սրբասէր այրն Աստուծոյ։ Այլ օր. սուրբն Աստուծոյ։

նմա 'ի Հոգւոյն սրբոյ[1]։ Եւ զկնի վեց աւուր՝ եկն Հոգին սուրբ 'ի նմա, և յեօթներորդ աւուրն սկսաւ պատարագ մատուցանել Աստուծոյ։ Եւ զկնի սակաւ ինչ աւուրց հաւատովք և աղօթիւք բազմօք՝ կամէր սկիզբն առնել և գրել իւրովք ձեռօքն զպատարագին խորհուրդն։ Եւ յայնմ դիշերի եկեալ Տէր 'ի տեսլեանն հանդերձ սուրբ առաքելովքն, և զառաջաւորութեան զհացն և զբաժակն պատրաստեաց 'ի խորանին[2], յարոյց զԲասիլիոս և ասէ ցնա. Ըստ խընդրուածոց քոց լցցի բերան քո գոհութեամբ, որպէս զի քո կարգաւորութեամբդ մատուցցեն ինձ անարիւն պատարագ։ Իբրև ոչ հանդուրժէր[3] տեսանել զքանչելիսն, յարուցեալ դողութեամբ եկն յեկեղեցին, և սկսանէր գրել 'ի քարտիսի այսպէս. Լից զբերան իմ գոհութեամբ, որպէս զի օրհնեցից զփառս քո, Տէր Աստուած մեր, որ ստացար զմեզ և ածեր 'ի կենդանութիւնս յայս. և զայլ աղօթանի[4] սրբոյ պատարագին։ Եւ զկնի կատարման աղօթիցն, վերացուցանէր զհացն համբարձմամբ, ասելով. Սրբութիւն սրբոց։ Եւ ժողովուրդն ասէին. Միայն սուրբ, միայն Տէր, միայն Յիսուս Քրիստոս 'ի փառս Աստուծոյ Հօր, ամէն։ Բաժանէր զհացն յերիս մասունս, զմինն հաղորդեցաւ ահիւ մեծաւ, իսկ զմիւսն պահեաց, զի թաղեսցի ընդ նմա, և զերրորդն՝ եդ յոսկեղէն աղաւնի և կախեաց 'ի սուրբ խորանին։ Իսկ Եւուղոս հանդերձ և այլ սպասաւորօքն և իշխանօք՝ կալով 'ի դուրս եկեղեցւոյն, տեսանէին իմանալի լոյս[5] 'ի խորանին, և արս փառաւորս սպիտակազգեստս[6], որ ձայնիւ մեծաւ փառաւորէին զԱստուած[7], և զԲասիլիոս՝ զի կայր 'ի մէջ նոցա. և հիացեալ ընդ տեսիլն անկան 'ի վերայ երեսաց իւրեանց, և արտասուագոչ հառաչմամբ փառաւորէին[8] զԱստուած։ Եւ իբրև եկ Բասիլիոս

1. Մի օր. Ն փպաւորէալ 'ի նմա Հոգւոյն սրբոյ։
2. Մի օր. 'ի սուրբ խորհուրդն։
3. Մի օր. ոչ հանդարտէր պեռանեն սպանէլեցոյն։
Ա.յլ օր. ոչ հանդարտէր պեռանել պոպանէլեցին։
4. Մի օր. զայլ աղօթեան։
5. Մի օր. անիմանալի լոյս։
6. Մի օր. սպիտակազգեստս։
7. Մի օր. փառաւոր առանէին... Ն Բասիլիոս 'ի մէջ նոցա։
8. Մի օր. արտասուագոչ յայնիւ օրհնէին զԱստուած։

արտաքս՝ անկեալ 'ի վերայ երեսաց իւրեանց՝ երկիր պագին նմա։ Հարցեալ զպատճառս երկրպագութեանն[1], եւ նոքա ասեն ցնա զփառաւոր զքանչելին՝ զոր տեսին 'ի խորանին։ Յայնժամ Բասիլիոս համբարձեալ զձեռս իւր գոհանայր զԱստուծոյ, պատմէր և նոցա զզարմանալի տեսիլն զոր ետես։

Եւ կոչեցեալ առ ինքն ոսկեգործ[2] հրամայեաց առնել նմա աղաւնի յոսկւոյ սրբոյ. և յայնմ[3] եղեալ զմանն՝ կախեաց 'ի վերայ սրբոյ սեղանոյն, ըստ նմանութեան այնմ աղաւնոյն որ երևեցաւ նմա 'ի Յորդանան 'ի մկրտութեանն Տեառն։ Զկնի այսմ եղելոյ, պատուէր տայր զի ժողովեսցին ամենեքեան յեկեղեցին. և ժողովեցան անթիւ բազմութիւն ժողովրդոց, ընդ որս էր և առաքինին մեծն Եփրեմ, զոր ապա յետոյ պատմեմք ձեզ եթէ ո՛րպէս աստուածային յայտնութեամբն ականատես եղև սուրբ հօրն Բարսղի։

Հրեայ ոմն միաբանեալ ընդ ժողովս քրիստոնէից, եկեալ յեկեղեցին դիտէր զկարգ պատարագին և զհաղորդութիւն սուրբ խորհրդոյն. և զկնի կատարման սուրբ պատարագին՝ տեսանէր Հրեայն զի մանուկ յօշէր ձեռովք իւրովք Բասիլիոս. և 'ի հաղորդեալ ամենեցուն՝ եկն և Հրեայն զի հաղորդեսցի, և տուաւ նմա ՀՇմարտապէս միս, և բաժակն՝ արիւն։ Իսկ նորա 'ի տուեցելոցն նմա մասն ինչ պահեալ՝ գնաց 'ի տուն իւր, և ցուցեալ զայն զուգակցին իւր առ 'ի հաստատել զասացեալսն զոր եթէ ետես աչօք իւրովք, և հաւատացեալ եթէ որպէս ՀՇմարիտ և փառաւորագոյն իցէ քրիստոնէից խորհուրդն[4]։ Եւ այգուն եղելոյ, եկն առ Բասիլիոս, աղաչէր զնա զի տացէ նմա զկընիքն Քրիստոսի։ Իսկ նորա լուեալ զայս՝ տայր փառս Աստուծոյ, որ կամի զի ամենայն մարդ կեցցէ և 'ի գիտութիւն ՀՇմարտութեան եկեսցէ. և առեալ մկրտեաց զնա հանդերձ ամենայն տամբն իւրով հաւատացեալ 'ի Տէր։

1. Մի օր. Եհարց Բասիլիոս զպատճառս երկրպագութեանն։
2. Երկ. օր. ոսկերիչ։
3. Մի օր. 'ի նմա։
4. Մի օր. Քրիստոսի խորհուրդն. և այգուոյն եղելոյ։
Ա.յլ օր. այգուն լինել։

Զկնի այսորիկ ելեալ երբեմն արտաքս Բասիլիոս՝ մատեաւ առ նա կին մի, աղաչէր զնա զի օգնեսցէ նմա, զի իշխանն նեղէր զնա վասն պարտուց հարկին։ Իսկ նա գրեալ՝ի թղթի այսպէս. Կին մի աղքատ եկեալ առ իս՝ ասելով թէ բռնադատի՝ի քէն, արդ վասն մեր որչափ կարող ես օգնեա դմա։ Եւ տուեալ զթուղթն ցկինն. իսկ նորա առեալ տարաւ առ իշխանն։ Իբրև ընթերցաւ, դարձեալ գրեաց և նա այսպէս. Վասն քո, ո՛վ հայր սուրբ, կամեցայ թողուլ կնոջդ, այլ ոչ կարացի, վասն զի զհարկս Թագաւորի պարտի։ Եւ նա դարձեալ գրէ առ նա. Եթէ խորհեցար և ոչ կարացեր՝ Թողցի քեզ, ապա եթէ կարող էիր և ոչ խորհեցար[1], ածցէ զքեզ Աստուած յայլ պատշաճ ժամու, զի յորժամ խորհիցիս՝ յայնժամ ոչ կարասցես։ Եւ առ ժամայն եղեն նմա իրքն. վասն զի Թագաւորական կապանօք արգելին զնա, զի հատուցէ զոր ինչ եթէ անիրաւեալն էր[2]։ Յայնժամ աղաչէր եղկելին զԲասիլիոս, որպէս զի աղօթիւք իւրովք իմացուսցէ Թագաւորին ներել նմա, որպէս և եղեն իսկ. քանզի էլ հրաման՝ի Թագաւորէն ազատանալ նմա[3]։ Եւ եղելոյ առ նա մարդասիրութեան ոչ անգիտանայր[4], այլ երթեալ առ Բասիլիոս՝ գոհանայր զնմանէ. և կոչեալ զկինն դիւրացոյց նմա[5] զամենայն զոր եթէ պարտ էր յարքունիսն։

Վասն Անատոլաս քահանայի։

Եւ այլ միւս ևս սքանչելիս պատմեմ զմեծարգոյ հայրապետին Բարսղի։ Կամեցաւ սուրբ հայրապետն՝ի միում աւուրց ելանել արտաքոյ քաղաքին, ոչ ումեք ասացեալ թէ ուր երթալոց է. և եկեալ մեր առաջի նորա, ասէ ցմեզ. Որդեակք իմ, եկայք զկնի

1. Մի օր. Ա լիմեցար։
2. Մի օր. Ա յայնժամ եղէա նմա փոքր նշան առաքմայն, վասն զի Բագաւորական ցասումն էին՝ի վերայ և ընդ կապանօք արգելին զնա, մինչև հատուցէ զոր ինչ անիրաւեալն էր։
3. Մի օր. ազատիլ զնա։
4. Մի օր. Ա եղելոյ առ նմա մարդասիրութեան ոչ անհայր։
5. Մի օր. կազդուրէցոյց նմա զամենայն, զոր պարտ էր յարքունիսն։

իմ, որպէս զի տեսջիք զփառսն Աստուծոյ, հանդերձ ինև. և ելեալ 'ի քաղաքէն մերմէ գնացաք։ Ազդ ա-բարեալ Հոգւոյն սրբոյ Անաստաս քահանայի, և ա-սէ ցկին իւր, որ անուամբ կին՝ իսկ գործովք քոյր. Ես երթամ գործել զերկիր, ով տիկին իմ և քոյր, և դու արի և զարդարեա զտուն քո. և յիններորդ ժա-մու ա՛ռ խունկս և մոմեղէնս, և ել 'ի հանդիպումն սրբոյն Բարսղի արքեպիսկոպոսի, զի գալոց է 'ի յարկս մեր մեղաւորացս։ Իսկ նորա 'ի գողման եղեալ ընդ փառաւորագոյն բանսն, արար որպէս և հրամայեաց նմա։ Էր ինքն կոյս, պարկեշտութեամբ վարեալ ըզ-կեանս իւր, զքառասուն ամ կացեալ ընդ առնն իւ-րում՝ իբրև տնակցութեամբ, և պահեալ զխորհուրդս իւր՝ ամուլ զինքն ասելով մարդկանն՝ թէ իցէ։ Եւ հան-դիպեալ մեզ 'ի Ճանապարհին՝ որպէս և վայել էր, և զպատշաճ երկրպագութիւնն տուեալ, նախ օրհնէր 'ի հօրէն մերմէ. ապա ասէ ցնա սուրբն. Ցիաւրդ կեաս տիկին Թէոկնի, որ Թարգմանի Աստուածածանուհի։ Իսկ նորա հիացեալ ընդ կոչումն անուանն իւրոյ՝ ասէ. Բարիոք կամ, սուրբդ Աստուծոյ։ Ասէ սուրբ հայրն մեր. Ո՞ւր է տէրն Անաստաս՝ քահանայն Աստուծոյ եղբայրն քո։ Ասէ ցնա կինն. Այր իմ է տէր, և երթեալ է յերկրագործութիւն։ Ասէ ցնա սուրբն. Եկեալ է 'ի տուն, մի՛ ինչ շփոթիր։ Հիանայր կինն ընդ բանսն յաղագս կոչման անուան նորա. և ոչ միայն ընդ այն, այլ ասաց ցնա, եթէ կին նորա ես, այլ ա-նուամբ միայն, իսկ գործովք քոյր ես. և 'ի հիացման եղեալ կալաւ զնա դողումն, և անկեալ 'ի վերայ ե-րեսաց իւրոց գոչէր ասելով. Սուրբդ Աստուծոյ, աղօ-թեա վասն իմ մեղաւորիս, զի մեծ և աքանչելի իրս տեսանեմ 'ի քեզ։ Եւ արարեալ աղօթս՝ անցեալ մեր ամենեցուն առաջի գնայր։ Իբրև եկաք մերձ 'ի տունն, ել երէցն 'ի հանդիպումն սրբոյն. և անկեալ առ ոտս նորա, ետ զաստուածային ողջոյնն։ Ասէ երէցն ցսուրբն. Ուստի՞ է ինձ այս զի եկեսցէ սուրբդ Աս-տուծոյ առ իս։ Իսկ սուրբն Աստուծոյ ասէ ցնա. Բարի գտի զքեզ աշակերտ Քրիստոսի. գնա, որպէս զի մա-տուցցես զսուրբ պատարագն Աստուծոյ։ Քանզի ե-րէցն զօրհնապաղ պահովք կատարէր, բայց 'ի շա-

բաթէ և 'ի կիւրակէէ, և այլ ոչինչ Ճաշակէր բայց միայն հաց և ջուր։

Եւ իբրև չոգաք յեկեղեցին, հրաման տայր սուրբ արքեպիսկոպոսն քահանային, զի մատուսցէ պատարագ։ Եւ նա ասէ. Սուրբդ Աստուծոյ, որպէս ուսուցանես, նուաղն 'ի լաւէն օրհնեսցի։ Ասէ ցնա երջանիկ հայրն մեր. Զկնի ամենայն առաքինի վարուց քոց կալջիր և զլսողութիւն։ Եւ ունկնդիր եղեալ երիցուն՝ մատուցանէր զսուրբ պատարագն. և 'ի ժամ վերացուցանելոյ զկենդանարար մարմին և զարիւն որդւոյն Աստուծոյ, տեսանէր սուրբն Բասիլիոս հանդերձ այլ ևս ոմամբք յարժանաւորաց՝ զամենասուրբ Հոգին՝ 'ի նմանութիւն լուսոյ շրջապատեալ զխորանաւն և զքահանայիւն, և զկնի հաղորդելոյն մերոյ՝ գոհութիւն մատուցեալ Տեառն Աստուծոյ, եկաք 'ի տուն քահանային, և Ճաշակեալ մեր կերակուր, ասէ ցնա արքեպիսկոպոսն. Պատմեա ինձ, ուստի՞ է գանձդ քո այդ, և զինչ են վարք քո։ Ասէ ցնա երէցն. Մարդ եմ մեղաւոր հնազանդեալ դիմոսական հարկի. ունիմ լուծս երկուս եզանց, զմին ես վարեմ և զմիւսն վարձկան ունին. և զոր ինչ տայ մեզ Աստուած՝ առնեմք երկուս մասունս, զմինն առնեմք 'ի պէտս օտարսիրութեան, և զմիւսն 'ի պէտս հարկահանաց. և ծառայակիցս այս որ ընդ իս է՝ կին իմ է, սպասաւորէ ինձ և օտարաց։ Ասէ ցնա սուրբն. Կոչեա զդա քոյր քո, որպէս և էդ իսկ, և պատմեա ինձ զվարս քո։ Ասէ ցնա երէցն. Ո՛չ եմ ստացեալ բարի յերկրի, օտար եմ յամենայն բարի վարուց։ Յայնժամ ասէ ցնա սուրբն. Յարուցեալ գնասցուք 'ի միասին. և առեալ զձեռանէ երիցուն, երթեր զմեզ 'ի խուց մի. և ասէ. Բա՛ց մեզ զդուրս տանդ։ Պատասխանի ետ երէցն և ասէ. Մի՛ տէր սուրբդ Աստուծոյ, մի՛ մտանէք այդր։ Ասէ ցնա սուրբն. Եւ ես վասն պիտոյիցդ այդոցիկ եկի։ Եւ ոչ կամելով երիցուն՝ աղէաքն բացան, և մտեալ 'ի ներքս տեսաք անդ այր մի գոդի, ոչ ունելով ամենևին ողջ տեղի. և ոչ ոք գիտէր եթէ անկեալ դնի անդ, բայց միայն քահանայն և զուգակիցն իւր։ Ասէ սուրբն ցերէցն. Վասն է՞ր կամեցար թաքուցանել զգանձս զայս։ Ասէ ցնա երէցն. Բարկասիրտ է, տէր իմ, և թշնամա-

նող և փտեալ է, վասն այսորիկ արգելի զսա զի մի անկցի 'ի բանս ինչ։ Ասէ ցնա սուրբ Հայրն մեր. Բարիոք աշխատեցար 'ի դմա, բայց հրամայեա ինձ զգիշերս զայս սպասաւորել դմա, զի ես վասն քո վարձս ընկալայց։ Եւ մուծեալ զսուրբն 'ի ներքս առ ուրուկն՝ որ այնպէս ապականեալն էր, որ և ձայն անգամ ոչ ունէր, զի պատմեսցէ զփորձութիւնս ախտիցն. և փակեալ զդուրսն գնացաք։

Իսկ բժիշկն վիրաւորելոց զամենայն զգիշերն աղօթեալ 'ի վերայ նորա առ Աստուած՝ որ զամենայն զցաւս և զհիւանդութիւնս բժշկէ, որպէս զի տացէ առողջութիւն նմա։ Իսկ քահանայն հոգւով զբժշկութիւն ախտիցն իմացեալ, առ մեզ կալով ասէ. Փառք քեզ Աստուած, որ առնես զկամս երկիւղածաց քոց և զինդրուածս նոցա կատարես։ Եւ ասէ ցմեզ. Ահաւասիկ բժիշկն հիւանդաց բժշկեաց զայրն։ Եւ նոյն ժամայն ձայնեալ սրբոյն ասէ. Բացէք մեզ ըզդուրսդ։ Եւ ընթացեալ մեր բացաք զդուրս տանն. և նորա հանեալ զփտեալ ուրուկն՝ ողջանդամ ամենևին, չունել վերս 'ի մարմնի իւրում, խօսելով մեծապէս և փառաւորելով զԱստուած։ Եւ եղեալ այսմ մեծի սքանչելեացս, դարձաք 'ի քաղաքն ցնծութեամբ օրհնելով զԱստուած յաւիտեան։

Վասն Եփրեմի ասորւոյ և ձգնաւորի։

Եղբարք իմ սիրելիք, և այլ ևս սքանչելիս պատմեմ ձեզ զերանելի հօրն մերոյ Բարսղի, զոր արար առ Եփրեմ անապատաւոր, որ է այսպէս։ Եփրեմ ոմն լեալ յանապատի ըսէր զհրաշագործութիւնս և զսքանչելիսն՝ զոր առնէր Աստուած 'ի ձեռն սրբոյն Բարսղի, և ցանկայր տեսանել զնա. և համբարձեալ զձեռս իւր յերկինս՝ աղաչէր զԱստուած, զի յայտնեսցէ նմա թէ յո՞ր չափս առաքինութեան ելցէ Բասիլիոս. և եղեալ առ նա ազդեցութիւն 'ի Հոգւոյն սրբոյ, տեսանէր 'ի տեսլեան գիշերոյ սիւն մի հրեղէն, որոյ գլուխն հասանէր մինչև յերկինս, և ձայն 'ի վերուստ որ ասէր. Եփրեմ, Եփրեմ, որպէս տեսանես զսիւնս հրեղէն՝ այնպէս և մեծն Բասիլիոս։ Եւ նորա յարուցեալ առ

ժամայն առ ընդ իւր Թարգման, վասն զի ոչ կարէր խօսել 'ի բարբառ հելլենացի. և հասեալ 'ի քաղաքն Կեսարացւոյ՝ 'ի տօն սրբոյ յայտնութեանն, և եկեալ 'ի կաթուղիկէ եկեղեցին, զետղ կալեալ որպէս զի տեսցէ զսուրբն Բասիլիոս։ Եւ գայր սուրբն սպիտակազգեստ զարդարեալ, և սպասաւորս զի գային առաջի և զկնի նորա, ամենեքեան 'ի զգեստս սպիտակութեան զարդարեալ և պաճուճեալ՝ գային յեկեղեցին։ Եւ տեսեալ զնոսա առաքինին Եփրեմ՝ ասէ ցայրն որ եկեալ էր զկնի նորա. Ի զուր վաստակեցաք, եղբայր, ոչ է սա զոր ետն տեսի։ Եւ գնացեալ դադարեալ 'ի տեղւոջ ուրեք յանկեան մի եկեղեցւոյն, հիացեալ ընդ միտս իւր ասէր, եթէ մեք որ բառնամք զծանրութիւն և զտօթ աւուրս, ոչ ինչ օգտեցաք, և սա յայսպիսի փառս և 'ի պատիւ սիւն հրեղէն է, աքանչանամ։

Զայս նորա զմտաւ ածեալ, առաքէ առ նա սուրբն զնախասարկաւագն իւր և ասէ. Երթ 'ի դուռն արևմտից, և յանկեան եկեղեցւոյն գտցես կրօնաւոր մի, որ ունի կնգուղ 'ի գլուխ, և այլ ոմն ընդ նմա, քարձ փոքրիկ այրուկ մի. և զայլ ևս նշանս տայր նմա և ասէր. Երթ և ասա ցնա, հրամայեցէք և մտէք 'ի խորանս, կոչէ զքեզ արքեպիսկոպոսն։ Իսկ նախասարկաւագն հերձոյր զամբոխն, և երթեալ 'ի տեղին ուր դադարեալ էր սուրբն Եփրեմ, ասէ ցնա. Օրհնեա հայր, հրամայեցէք, 'ի խորանն կոչէ զքեզ արքեպիսկոպոսն։ Եւ ուսեալ 'ի ձեռն Թարգմանի՝ զոր ասաց նմա, պատասխանի ետ և ասէ. Խաբեցար, եղբայր, մեք օտարականք եմք և անծանօթք 'ի նմանէ։ Եւ երթեալ նախասարկաւագն պատմեաց հայրապետին զոր ինչ ասաց նմա Եփրեմ։ Իսկ մեծն Բասիլիոս ընթեռնլով զքահանայական զգիրսն առ ժողովուրդն, տեսանէր երանելին Եփրեմ, զի հրեղէն լեզու խօսէր 'ի բերան նորա։ Ասէ դարձեալ զնախասարկաւագն իւր. Գնա և ասա ցնա. Տէր Եփրեմ, հրամայեցէք մտէք 'ի խորանն, կոչէ զքեզ արքեպիսկոպոսն։ Եւ երթեալ նախասարկաւագն, անկաւ առ ոտս նորա, ասէ ցնա, որպէս հրամայեաց նմա սուրբն Բարսեղ։ Եւ նոյա հիացեալ ընդ այս, փառաւորէր զԱստուած. է-

դեալ ծունր և ասէ. Ճշմարտութեամբ սուրբ Հոգին խօսի բերանով նորա։ Եւ աղաչեաց զսարկաւագն զի պատասխանի արասցէ նմա, եթէ զկնի արձակելոյ պատարագին 'ի սպասատունն ողջոյն տայ նմա։ Եւ զկնի արձակմանն եկեալ Բասիլիոս 'ի տուն սպասուն, կոչեաց զսուրբն Եփրեմ, և տուեալ նմա զքրիստոսական ողջոյնն՝ ասէ ցնա. Բարի եկիր, հայր որդւոց ա՝նապատի. բարի եկիր որ բաղմացուցեր զաշակերտսն Քրիստոսի 'ի նմա, և զդէս հալածեցեր Քրիստոսիւ. զի՞ եղև աշխատ սրբութիւնդ քո, հայր, և եկիր տեսանել զմարդ մեղաւոր. տացէ քեզ Տէր զվարձս վաստակոց քոց։ Պատասխանի ետ սուրբն Եփրեմ և ասաց զոր ինչ կայր 'ի սրտի իւրում, թարգմանելով այնր կրօնաւորի որ ընդ նմայն էր։ Եւ հաղորդեալ 'ի սուրբ ձեռաց նորա, և այնպէս սիրով ճաշակեցին։ Ասէ Երանելին Եփրեմ. Հայր սուրբ, մի ինչ խնդրեմ, և զայս աղաչեմ զի տացես ինձ։ Եւ նա ասէ. Հրամայեցէք զոր ինչ կամ է ձեր. վասն զի բազում ինչ պարտիմ քեզ վասն աշխատութեան քո՝ զոր աշխատեցար վասն իմ։ Ասէ Երանելին Եփրեմ. Գիտեմ, հայր սուրբ, եթէ զոր ինչ խնդրես դու յԱստուծոյ՝ տայ քեզ Աստուած. արդ՝ կամ է իմ զի հայցեսցես յԱստուծոյ, զի խօսեցայց ես հոռոմարէն։ Եւ նա ասէ. Առաւել քան զկարն է խնդիրդ, բայց որովհետև հաւատով հայցեցեր, եկ աղօթեսցուք առ Տէր, զի կարող է Աստուած առնել զկամն քո. գրեալ իսկ է. Զկամն երկիւղածաց իւրոց առնէ Տէր, աղօթից նոցա լսէ և կեցուցանէ զնոսա։ Եւ արարեալ նոցա աղօթս ցմեծ ժամն, և յարուցեալ ասէ սուրբն Բասիլիոս. Տէր Եփրեմ, ընդէ՞ր ոչ առնուս ձեռնադրութիւն քահանայութեան, զի պատշաճ է քեզ։ Ասէ ցնա 'ի ձեռն թարգմանին. Վասն զի մեղաւոր եմ։ Ասէ ցնա սուրբն. Զմեղս քո կամէի ունել, բայց դիցուք ծունր։ Եւ մինչդեռ կայր 'ի գետին անկեալ, եդ սուրբ հայրապետն զձեռս իւր 'ի վերայ նորա, և ասաց զաղօթս սարկաւագութեանն։ Եւ ասէ. Հրամայեցէք կանգնեցարուք։ Եւ իբրև կանգնեցաւ, զօրացաւ լեզու նորա և խօսէր 'ի բարբառն Հոռոմի. Ընկալ և կեցո՛, Զիսէ՛. ողորմեա՛, Եղէիսան. պահեա՛, Փիլաքս իմնաս, զմեզ, Աստուա՛ծ, քո շնոր-

հիւդ։ Եւ կատարեցաւ գիրն՝ որ ասէ. Վաղեսցէ կաղն իբրև զեղջերու, և պարզ լիցին լեզուք ծանրախօսից։ Եւ յայնմ հետէ խօսէր զբարբառն Հռոմոց, փառաւորելով զԱստուած՝ որ լսէ երկիւղածաց իւրոց. և հոգւով ուրախ եղէն ընդ միմեանս զերիս աւուրս։ Եւ ձեռնադրեաց զԹարգմանիչ նորա սարկաւագ, և զսուրբն Եփրեմ քահանայ. և արձակեաց զնոսա խաղաղութեամբ, փառաւորելով և օրհնելով զԱստուած յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վասն այրի կնոջն որ քաւեցաւ։

Կին ոմն մեծազգի եղեալ և մեծատուն յոյժ, 'ի քաղաքէն Կեսարեայ, ունելով ինչս բազումս, և մնացեալ այրի 'ի մատաղ հասակի. և պատրանօք սատանայի և չարարուեստ մարդկան՝ տուեալ զանձնն յանառակութիւն, ուտելով և ըմպելով, և զանցեալ ժամանակս իւր զամենայն յունայնութեան ծախեալ ոչ ինչ վարս ստացեալ ըստ կամացն Աստուծոյ։ Եւ յետ բազում ժամանակաց 'ի միում աւուր եղեալ առնա զղջումն 'ի Հոգւոյն սրբոյ, և զմտաւ ածեալ զբազմութիւն մեղացն իւրոց՝ հառաչէր ասելով. Վայ ինձ թշուառականիս, վայ ինձ մեղաւորիս և եղկելւոյս. զինչ պատասխանի տայց յաղագս անթիւ մեղաց իմոց զոր գործեցի. զտաճար հոգւոյ իմոյ ապականեցի, պղծեցի զմարմինս իմ։ Վայ ինձ, զինչ գործեցից. այլ թէ ասացից, որպէս զպոռնիկն եմ, կամ որպէս զմաքսաւորն, և մեղայ. բայց զկնի մկրտութեանն յանցեայ։ Եւ արդ զինչ՝ արարից. զի ահաւասիկ մնայ ինձ աններելի տանջանքն հրոյն յաւիտենից։ Եւ արդ օրպէս ունիմ ստուգել ճշմարտապէս, զի թէ զղջացայց ընդունի զիս Աստուած։

Եւ զայս նորա զմտաւ ածեալ, այն որ զամենայն մարդիկ կամի զի կեցցեն և 'ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն, բերեալ 'ի յիշատակ նորա զոր ինչ գործեալ էր 'ի մանկութենէ, եւ նստեալ գրէր 'ի թղթի զամենայն։ Եւ 'ի կատար թղթին գրէր զմեծ մեղն զոր գործեալ էր. և կնքեալ կապարով ըզ-

թուղթն. և եկեալ մնայր ինքն դէտակն կալեալ պատ-
շաճ ժամու։ Եւ յորժամ սուրբն Բասիլիոս գայր յե-
կեղեցին 'ի սովորական աղօթսն, ընթացեալ ընկե-
նոյր զթուղթն առ ոտս նորա, և անկեալ 'ի վերայ ե-
րեսաց իւրոց՝ դոչէր ասելով. Ողորմեա ինձ, սուրբդ
Աստուծոյ, ողորմեա ինձ ճարտարապետ բժիշկ՝ վերա-
ւորելոյս յախտից բանսարկուին, որ առաւել քան
զամենայն մարդ վերաւորեալ եմ մեղօք։ Իսկ երա-
նելի ծառայն Քրիստոսի զոտն կալեալ՝ հարցանէր
զպատճառս իրացն ճշմարտապէս։ Եւ նա ասէ. Ահա
ասիկ զամենայն զմեղս իմ գրեցի 'ի թղթի այդր, և
կնքեալ եմ զդա. իսկ դու ծառայ Աստուծոյ զկնիքդ
մի՛ լուծաներ, այլ աղօթիւք քովք ընջեա զդոսա.
վասն զի որ ետ ինձ զմիտս զայս՝ հաւատամ եթէ կա-
րող է լսել աղաչանաց քոց՝ որ վասն իմ։ Իսկ մեծն
Բասիլիոս առեալ զթուղթն 'ի սուրբ ձեռին իւրում՝
եմուտ յեկեղեցին, և համբարձեալ զձեռս իւր 'ի վեր
հայցելով 'ի Տեառնէ և ասելով զաղօթս այսպէս. Տէր
մեր Յիսուս Քրիստոս, ճշմարիտդ Աստուած, որ առա-
քեցար 'ի ծոցոյ Հօր, և առեր մարմին 'ի սուրբ և 'ի
փառաւորեալ յԱստուածածին կուսէն, առ 'ի բառ-
նալ զմեղս աշխարհի։ Եւ արդ ընջեա՛ զձեռագիր կը-
նոջս այսորիկ ըստ քոյին մարդասիրութեանդ. զի քո
միայն է կարողութիւն գործոյս այսորիկ։ Քանզի իւ-
րաքանչիւր ամենեցուն մեր յանցանք թուեալ են ա-
ռաջի քո, Տէր, և ոչ ինչ է ծածուկ 'ի քէն. իսկ ո-
ղորմութիւն քո անթիւ և անբաւ են՝ որք հաւատով
դառնան և խնդրեն 'ի քէն։ Եւ զայս ասացեալ ե-
մուտ յեկեղեցին. և ձգեաց զթուղթն 'ի խորանն, և
մնայր զգիշերն ամենայն աղօթելով. և 'ի վաղիւն հան-
դերձ բազմութեամբն աղաչէր զԱստուած։ Եւ զկնի
արձակման սուրբ պատարագին՝ կոչեաց զկինն, և
տուեալ ցնա զթուղթն՝ ասէ. Լուա՛լ է քո երբէք,
ո՛վ կին, եթէ ոչ ոք կարէ թողուլ զմեղս՝ բայց միայն
Աստուած։ Եւ նա ասէ. Այո, հայր սուրբ, վասն այ-
նորիկ դէմն արարի առ քո սրբութիւնդ. ունելով
զքեզ բարեխօս առ բազմագութ և մարդասէրն Աս-
տուած։ Եւ զայս ասացեալ արձակեաց զթուղթն, և
գտաւ ամենայնն անգիր. և մնայ միայն մեծ մեղսայն

գիր՝ որ ոչ ընկնէցաւ, և հարեալ ձեռօքն զերեսս իւր անկաւ առ ոտս սրբոյն Բարսղի, գոչէր ասելով. Ողորմեաց ինձ ծառայ Աստուծոյ բարձրելոյ, և որպէս վասն ամենայն մեղացն իմոց հանդէս արարեր, նոյնպէս և վասն այսր միոյս աղաչեա՝ զի ընկնեսցի։ Իսկ մեծն Բասիլիոս արտասուեաց ախտակցութեամբ, և ասէ. Արի՛ կին դու, զի ես մարդ եմ մեղաւոր և պէտս ունիմ թողութեան. զոր կամեցաւ Աստուած ընկնեաց զմեղս քո, կարող է և զայս բառնալ 'ի քէն՝ որ բառնայ զմեղս աշխարհի. եթէ զգուշասցիս այսուհետև զի մի՛ մեղիցես, ոչ միայն թողութիւն գտցես՝ այլ և փառաց արժանասցիս։ Այլ երթ յանապատն և գտանես անդ այր մի սուրբ և անուանի յամենեցունց և անուն նորա Եփրեմ. տար անդ զթուղթդ, և նա աղաչեսցէ զԱստուած և ընկնեսցէ զդա։

Իսկ կինն առ ոչինչ համարելով զերկայնութիւն ճանապարհին, եկն 'ի նշանակեալ նմա տեղին առ հայրապետն Եփրեմ, և բախեալ զդուրսն՝ գոչէր ասելով. Ողորմեաց ինձ՝ սուրբդ Աստուծոյ։ Իսկ նորա իմացեալ հոգւովն եթէ վասն ի՛նչ իրաց եկն, ասէ ցնա. Երթ 'ի բաց յինէն, կին դու, զի ես այր մի եմ մեղաւոր, և պէտս ունիմ օգնականութեան։ Եւ նորա ձգեալ զթուղթն 'ի նա՝ ասէ. Արքեպիսկոպոսն Բասիլիոս արձակեաց զիս առ քեզ, որպէս զի աղօթեսցես առ Աստուած, և ընկնեսցես զմեղսն որ 'ի թղթի այդր գրեալ է. վասն զի զայլսն սուրբն Բասիլիոս ընկնեաց աղօթիւքն իւրովք, իսկ դու վասն միոյդ մի՛ յապաղեր աղաչել զԱստուած, զի առ քեզ առաքեցայ։ Եւ սուրբն ասէ. Մի՛ քոյր, մի՛. զի որպէս վասն բազմացն կարող էր աղաչել զԱստուած, կարող էր և վասն միոյդ առնել առաւել քան զիս։ Գնա այսուհետև և մի՛ դադարիր, զի հասանիցես նմա նախ քան զելանելն նորա 'ի մարմնոյն, զի մերձեալ է վախճան երանելւոյն երթալ առ Տէր մեր Յիսուս Քրիստոս։

Զայս լուեալ կնոջն 'ի նմանէ բազում հառաչանօք դարձաւ անդրէն 'ի Կեսարիա։ Եւ իբրև մտանէր 'ի քաղաքն՝ հանդիպի դագաղացն, զի հանէին զսուրբն Բասիլ 'ի թաղումն։ Եւ կնոջն տեսեալ՝ սկսաւ աղաղակել դատ վարելով ընդ սրբոյն, և ասէր. Վա՜յ

ինձ, սուրբդ Աստուծոյ. վասն այնորիկ առաքեցեր զիս յանապատն, զի դու առանց աշխատութեան վախճաւ նեսցիս, և ահա ես ոչինչ օգտեցայ, 'ի նանիր վաստակեցի զերկայնութիւն ճանապարհին։ Տեսցէ Աստուած և արասցէ իրաւունս ընդ իս և ընդ քեզ. զի կարող էիր աղաչել զԱստուած և ջնջել զմեղս իմ, և յայլս արձակեցեր զիս։ Եւ զայս ասացեալ՝ ձգեաց զթուղթն 'ի վերայ մահճացն, և զամենայն եղեալսն պատմեաց առաջի ժողովրդեանն։ Իսկ սարկաւագացն կամելով տեսանել թէ որպիսի իցեն յանցանքն, առեալ զթուղթն և արձակեալ, գտին ամենևին անգիր, զի և ոչ նշանախեց մի էր մնացեալ 'ի նմա։ Եւ կոչեալ զկինն՝ ետուն ցնա զթուղթն, ցուցանելով ամենևին անգիր. և ասեն. Զի՞ կոծիս և աշխարես, անդիտանալով առ քեզ զեղեալսն յԱստուծոյ՝ զանբաւ մարդասիրութիւնն։ Եւ բազմութեան ժողովրդեանն տեսեալ զքանչելիսն, փառաւորէին զԱստուած, որ ունի իշխանութիւն 'ի վերայ երկրի թողուլ զմեղս, և տայ զնոյն շնորհս ծառայից իւրոց, զի 'ի կենդանութեան և զկնի մահու բժշկեն զամենայն ցաւս և զհիւանդութիւնս. և ողք հաւատով հայցեն՝ թողու նոցա զմեղս իւրեանց վասն բարերարութեան իւրոյ։ Որում և մեք հասցուք ողորմութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ որում փառք յաւիտեանս, ամէն։

Վասն Յովսեփայ հրեի և բժշկի։

Այս Յովսէփ, ով եղբարք, յոյժ հմուտ էր բժշկական արուեստի. փորձ էր կատարեալպէս առ որոշումն երակաց, և այլոց տեսութեանց հիւանդաց, մինչև անվրէպ իմանալ նախ քան զաւուրս երիս կամ զհինգ՝ զորս վախճանելոցն էր, մինչև նախանձել ընդ նմա և այլոց բժշկաց։ Իսկ աստուածազգեստ հայրն մեր Բասիլիոս, Հոգւոյն սրբով իմանայր յառաջ որ ինչ լինելոցն էր, և յամենայնի սիրէր զնա, և հանապազ կոչեալ խօսէր ընդ նմա, ուսուցանելով նմա զճանապարհս արքայութեան երկնից, գնալ նմա 'ի ճանապարհս ճշմարտութեան, և 'ի բաց կալ 'ի պիղծ աղանդոցն, և 'ի ձեռն մկրտութեան զգենուլ

զԲրիստոս։ Եւ նա ոչ հաւանէր, ասելով, թէ յոր հաւատ ծնեալ եմ՝ զայն պաշտեմ։ Եւ սուրբն ասէր. Հաւատա ինձ, ո՛վ Յովսէփ, զոր ասեմ քեզ. զի ոչ ես և ոչ դու՝ եթէ ոչ ծնցի 'ի Ջրոյ և 'ի Հոգւոյ՝ ոչ կարէ մտանել յարքայութիւնն երկնից։ Ո՞չ ապաքէն և հարքն ձեր մկրտեցան յամպն և 'ի ծովն, և ըմպէին 'ի հոգևոր վիմէն որ երթայր զհետ նոցա, և վէմն էր ինքն Քրիստոս. որ 'ի վերջին աւուրս 'ի կուսէն մարմնացաւ, և վասն մերոյ փրկութեան մարմնացեալ և չարչարեալ 'ի նախահարցն քոց մարմնով, թաղեալ և յերիր աւուր յարուցեալ, նստեալ ընդ աջմէ Հօր, և գալոց է բաղում փառօք հանդերձ սուրբ հրեշտակօք իւրովք դատել զկենդանիս և զմեռեալս և հատուցանել իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց։ Արդ անհնար է ամենայն մարդոյ զկեանսն յաւիտենից տեսանել՝ եթէ ոչ ջրով և Հոգւով, և հաղորդել յանարատ մարմնոյ և յարենէ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Եւ յայսպիսի բանս յաձախեալ անփորձ մշակն Քրիստոսի, ոչ կամէր լսել նմա հրեայն, որպէս զի ընկալցի զշնորհս սուրբ Հոգւոյն։

Արդ հանդերձեալ էր սուրբն փոխիլ յաշխարհէս։ Կոչեաց զնա իբրև պատճառանօք բժշկական արուեստին որպէս զի տեսցէ զնա։ Եւ ասէ ցնա. Ո՞րպէս տեսանես զիս։ Եւ նա յերակացն իմացաւ զնա եթէ մահու է, ասէ ցսպասաւորսն՝ որ շուրջն կային, զի պատրաստեսցեն զպատանս թաղման նորա։ Ասէ. Սա յանկարծակի մեռանի առ ժամայս։ Ասէ ցնա մեծն Բասիլիոս. Ոչինչ գիտես զինչ ասես։ Ասէ ցնա հրեայն Յովսէփ. Հաւատա տէր, զի արեգակն ընդ արևմուտս է այսօր։ Ասէ ցնա սուրբն. Ապա թէ ոչ մեռանիմ այսօր՝ զինչ։ Ասէ ցնա հրեայն. Ոչ է հնար այսմ լինել, բուռն թէ լցցի հոգիդ քո 'ի քեզ այսօր. այլ հրաման տուր վասն եկեղեցւոյ քո և վասն այլ իրաց, զի ոչ հասցէ քեզ երեկոյ այսօր։ Ասէ ցնա սուրբն. Իսկ եթէ ապրիմ մինչև ցայգուցն 'ի վերերորդ ժամն՝ զինչ առնես։ Եւ նա ասէ. Զի մեռայց ես։ Ասէ ցնա սուրբն. Այո, մեռանիցիս մեղացն և կենդանասցիս Քրիստոսին իմոյ։ Ասէ ցնա հրեայն. Գիտեմ զինչ ասես. արարիցէ զկամն քո, հայր սուրբ, եթէ զոր ա-

սեսդ լինի, երդմամբ՝ զի առից զկնիք սուրբ մկրտու-
թեան չնորհաց, եթէ ապրեսցի ծառայդ Աստուծոյ։
Իսկ սուրբն Բասիլիոս հայցեալ յԱստուծոյ որպէս զի
տացէ նմա կեանս՝ զի զնա շահեսցի և կեցցէ։ Եւ լուաւ
նմա Աստուած, և առաքեալ կոչէ զՀրեայն։ Իսկ նա
առանց յերկուանալոյ եկն կարծելով ամենևին թէ
վախճանեալ է. և տեսեալ զնա կենդանի՝ 'ի զարմաց-
ման եղեալ անկաւ առ ոտս նորա և ասէ. Ճշմարտիւ
ասեմ, եթէ ոչ գոյ մեծ Աստուած որպէս քրիստո-
նէից, և չիք այլ Աստուած բայց 'ի նմանէ. Հրաժա-
րեմ այժմ 'ի քրիստոսատեաց աղանդոյն Հրէից, և
ընթանամ հաւատով զհետ Ճշմարտութեանն. Հրա-
մայեա այսուհետև տալ ինձ զկնիք սուրբ մկրտու-
թեանն և ամենայն տան իմոյ։ Այսէ ցնա սուրբն. Ես
ձեռաք իմովք մկրտեմ զքեզ հանդերձ տամբ քո։ Եւ
եկեալ յանկարծակի բժշկին բուռն հարեալ զձեռաս
նէ նորա, որպէս զի տեսցէ զզօրութիւն երակացն, և
ասէ. Անկար 'ի զօրութենէ քումմէ, հայր սուրբ, և
բնութիւն քո 'ի սպառ նուաղեալ է։ Այսէ ցնա սուրբն.
Ունիմ զՀրաշագործողն բնութեանս՝ որ զօրացուցա-
նէ։ Եւ յարուցեալ եկն յեկեղեցին, եւ առաջի ժո-
ղովրդեանն մկրտեաց զնա ամենայն տամբն իւրով,
եւ կոչեաց զանուն նորա Յովհաննէս. եւ տուեալ նմա
զկենդանարար խորհուրդն, առեալ տարաւ զնա 'ի
սենեակն իւր. և տուեալ նմա կերակուր, ուսուցանէր
նմա յաղագս յաւիտենական կենացն. միաւորեաց
զնա 'ի հաւատն իւր հանդերձ կնաւն և որդւովք իւ-
րովք։ Եւ զայլ ևս աւուրսն գայր 'ի սուրբ եկեղեցին,
և տայր աղքատաց զինչս իւր, զոր ստացեալ էր 'ի
բժշկական արուեստէն, և զամենայն ստացուածս իւր
բարեպաշտութեամբ կարգէր։

Իսկ սուրբն Բասիլիոս կայր յիններորդ ժամուն 'ի
սուրբ եկեղեցւոջն 'ի պատարագի 'ի խորանին հան-
դերձ և այլ սպասաւորօքն և կատարէր զսուրբ խոր-
հուրդն։ Դարձեալ ՀՀաշակեաց ընդ նոսա հացիւ, և
արձակեաց զամենայն հաւատացեալ ժողովուրդն,
համբուրելով զնոսա 'ի հայրոյն սրբութեան, յանձն
արարեալ զընտիր և զնոր զօրականն Քրիստոսի և
զամենեսեան՝ Աստուծոյ Հօր և միածնի Որդւոյ նորա

և Հոգւոյն սրբոյ։ Եւ հրամայեաց զի Թաղեսցեն ընդ նմա զերրորդ մասն զտուեալն 'ի Տեառնէ 'ի հաղորդութիւն նմա. և բազմեալ 'ի վերայ մահճաց իւրոց, և ամբարձեալ զձեռս իւր՝ օրհնեաց զՏէր Աստուած, վասն որոշման Հոգւոյն 'ի մարմնոյն, եւ վասն հաւատալոյ բժշկին. և նոյն ժամայն աւանդեաց զոգին 'ի փառս Աստուծոյ։ Եւ տեսեալ հրէին որ հաւատաց, եթէ որպէս ասաց այրն Աստուծոյ՝ այնպէս եղև, և անկեալ 'ի վերայ լանջաց նորա ողբալով ասէր. Ճշմարտապէս ծառայ Աստուծոյ, Բասիլիէ, եթէ ոչ էր լեալ կամք քո՝ և ոչ արդ էիր վախճանեալ։

Եւ այգուն եղելոյ՝ ժողովեցան ամենայն բազմութիւնն, բերէին զպատուական սուրբ մարմինն յեկեղեցին, հանդերձ իւղովք և խնկօք։ Լուեալ էր և մեծին Գրիգորի աստուածաբանին Նազիանզու եպիսկոպոսին, եկն փութանակի և նա. և տեսեալ զսուրբ մարմին նորա, անկեալ 'ի վերայ նորա ելաց դառնապէս։ Ապա հրաման եառ ժողովրդեանն, զի սաղմոսիք և օրհնութեամբք զպատշաճ պատիւ փառաւոր յիշատակի մեծ հայրապետին կատարեսցեն, հանդերձ այլովք ևս եկեալովք՝ երկոտասան եպիսկոպոսօքն։ Եւ բազմութիւն քաղաքին եդին զսուրբն 'ի տապանի՝ ուր էին նշխարք սուրբ հայրապետին Ղևոնդի, 'ի սուրբ վկայարանն սրբոյն Սիւքիանոսի։

Հանգեաւ որ հրեշտակական վարք 'ի յերկրի քաղաքավարեաց երանելի հայրապետն սուրբն Բասիլիոս, յամսեանն յունուարի՝ որ օր մի էր ամսոյն, յաւուր հինգշաբաթւոջ, 'ի թագաւորութեանն Վաղեսի և Վաղենտիանոսի. յիշատակ բարի թողեալ յեկեղեցւոջ 'ի փառս Քրիստոսի։

Գործակցութեամբ սուրբ Հոգւոյն գրեցի զսուրբ հայրապետին վարսն, 'ի փառս և 'ի պատիւ ամենասուրբ Երրորդութեանն. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Գենարիոսի Պենեվենդոյ եպիսկոպոսի։

Ի ժամանակս Դիոկղետիանոսի թագաւորի ըմբ բռնեալ եղև սուրբ եպիսկոպոսն Գենարիոս 'ի ձեռն Տիմոթեայ անօրէն բռնաւորին. և հրամայեաց առաջի իւր ածել զսուրբ քահանայապետն. և յորժամ եկն առաջի նորա, ասէ ցնա դատաւորն. Տեսանեմ զվայելչութիւն հասակի քո և կարծեմ թէ յազատ ազգէ ես. վասն որոյ խորհրդակից լինիմ քեզ և աղաչեմ, ապրեցո զանձն քո և յափշտակեա զքեզ 'ի բազում տանջանաց. քանզի ոչ եթէ դու ինքնին բուժեսցիս 'ի տանջանաց՝ ոչ կարիցէ փրկել զքեզ աստուածն քո։ Իսկ աստուածիմաստն Գենարիոս ասէ ցնա. Կարկեա ոմ բռնաւոր, և մի՛ շարժեր զլեզուդ չարաչար ընդդէմ արարչին, թշնամանելով զամենազօր Աստուածն զայն՝ որ ամենայն ուրեք հրաշագործէ զիւր զօրութիւնն. կարծեմ թէ զերկայնմտութիւն նորա տկարութիւն վարկանիս, և որչափ վայելես յերկայնմտութեան՝ այնչափ յաւելուս յամբարհաւաճութիւնդ։ Այլ բռնաւորն. Միթէ այնչափ զօրութիւն առեալ ունիս՝ որչափ մեք տանջանարան քումանմտութեանդ պատրաստեմք։ Բայց կարծեմ թէ 'ի կախարդութիւնդ ես

Vgl. Die Passio d. h. Januarius v. Benev. u. s. Jünger Gennosum, Autor Adnotat. libers. v. Seb. Euringer. Theol. u. Glaube 5 (1913) 369-74.

վստահացեալ։ Այսէ երանելի եպիսկոպոսն. Զօրութիւն իմ Աստուած է, այն որ յերկինս է, որ զվհուկսըն և զաղանդաւորսն և զկախարդսն և զկռապաշտսն որ իբրև զքեզդ են՝ առաքէ 'ի հուրն անշէջ գեհենին։ Յայնժամ բռնաւորն հրամայեաց հնոց բորբոքել և անդ արկանել զերանելին, և ասէր. Ես ասէն զքեզ պրեցից, և տեսից թէ փրկէ զքեզ Աստուածն քո։ Իսկ սուրբն նշանաւ սուրբ խաչին կընքեաց զամենայն անդամս իւր ուրախութեամբ մեծաւ, և փառաւորելով զԱստուած՝ եմուտ 'ի մէջ հնոցին բորբոքեալ հրոյն. և սկսաւ ասել այսպէս. Ո՛վ Տէր իմ և Աստուած, որ Ճշմարտապէս քննես զծածուկս ամենայն մարդկան. դու գիտես զփափագանձին իմոյ, որ սեռն սիրով փափագեալ ցանկայ հոգի իմ դալ առ քեզ. բայց աղաչեմ զքեզ, յայտնեա զամենազօրութիւն քո, փոփոխելով զբնութիւն կիզանող բոցոյս՝ 'ի ցօղ քաղցրութեան քո, որպէս երբեմն սքանչելագործեցեր առ երեք մանկամբքն, զի ծանիցեն զքեզ միայն Ճշմարիտդ Աստուած, որպէս յամենայն ժամ։ Եւ իբրև կատարեաց զայս ամենայն առ Աստուած, ձայնք հրեշտակաց լսելի լինէին առ նա, և աղօթակից լինէին նմա։ Իսկ որ շուրջն կային զարհուրեալք յահագին հնչմանցն՝ փութանակի երթեալ պատմեցին զամենայն՝ եպարքոսին։ Յայնժամ հրամայէր բանալ զհնոցն և ստուգապէս տեսանել, եթէ ըստ արտաքոյ լսելոյ ձայնին և 'ի ներքս նոյնպէս իցէ։ Եւ իբրև բացին՝ տեսին զսուրբն ամենևին ոչ վնասեալ 'ի հրոյն։ Իսկ բոցն յանկարծակի յայսկոյս յայնկոյս հեղեալ, և զբազումս 'ի կռապաշտիցն որք մերձ կային՝ հրդեհեալ կիզոյր։ Եւ սուրբն զուարթերեսաք իբրև յաղթող նահատակ 'ի մրցարանէ ելեալ եկաց առաջի բռնաւորին։ Յայնժամ անօրէն բռնաւորին իբրև ոչինչ տեսեալ զքանչելիսն՝ մատն եղեալ իւրոյ փրկութեանն, 'ի միջօրեայ աստուածային Ճառագայթիցն կառուցեալ զաչս մտացն, փոխանակ պսակաց՝ հրամայէր զերանելին արկանել 'ի բանդ. և 'ի վաղիւ անդր հրամայեաց ածել զառաջեաւ։ Եւ իբրև եկն, ասէ ցնա. Մինչև յե՞րբ անհնազանդեալ՝ ոչ զոհես աստուածոցն. եթէ 'ի հրոյ և յայլ տանջա-

նաց 'ի ձեռն կախարդութեան զերծար, միթէ 'ի սրոյ կարիցէս ապրել։

Ասէ Երանելին. Ոչ եթէ վասն իմ ինչ ցուցանէ զսքանչելին, զոր դու դիւական խաբէութեամբ խելագարեալ՝ կախարդութիւն համարիս, այլ զի թերևս զընկղմեալ ոգիդ քո՝ խորին խաւարաւ կռապաշտութեամբ, լուսաւորեսցէ աստուածային Ճառագայթիւք սքանչելագործութեամբն։ Յայնժամ հրամայեաց չարիմաց բռնաւորն զՋիլս բոլոր զամենայն մարմնոյն արտաքս քարշել։ Իսկ Երանելին թէպէտ և այսպէս տանջեալ եղև, սակայն յօժարութեամբ ընդունէր զբարժանումն յօդուածոյ մարմնոյն, և սիրոմն որ առ Աստուած և աղօթիւք՝ զդառնութիւն տանջանացն քաղցրացուցանէր։ Դարձեալ հրամայեաց տանել 'ի բանդ զսուրբն. և մինչդեռ 'ի բանդին էր, երկու ոմանք 'ի սպասաւորաց եկեղեցւոյն եկին առ նա. և իբրև 'ի բանտն կամէին մտանել՝ պահապանքն արգելին զնոսա, և երթեալ պատմեցին դատաւորին. և հրամայեաց հանդերձ քահանայապետիւն ածել առաջի իւր։ Եւ իբրև ածին, ասէ դատաւորն ցեպիսկոպոսն. Ո՞յք են սոքա, կամ զինչ են անուանք սոցա, և կամ զինչ գործ ունին։

Իսկ սուրբն իբրև ասաց զանուանս նոցա և զգործս սպասաւորութեան եկեղեցւոյն, դարձեալ եհարց թէ դոքա քրիստոնեայք են իբրև զքեզ։ Իսկ Երանելին խաղաղաբար պատասխանեալ ասէր. Եթէ դու ինքնին հարցանես ցդոսա՝ այսպէս իմանաս։ Յայնժամ դատաւորն ասէ ցսուրբն, որում անուանեն միումն Փեստոս, և երկրորդին Փեսերիոդոս, և ասէ. Քրիստոնեայք էք. և նոքա բարձր ձայնիւ և զուարթ երեսօք պատասխանի ետուն առաջի ամենեցուն և ասեն. Այո, քրիստոնեայք, և պատրաստ եմք յաղագս Քրիստոսի ընդունել զմահ՝ որպէս սուրբ հովուապետս մեր։ Յայնժամ դատաւորն հրամայեաց կապել զԵրանելի եպիսկոպոսն հանդերձ նոքօք, և տանել 'ի Պաւտոլիոն քաղաք, և միաւորել ընդ այլ վկայսն, որ յառաջագոյն կապեալք էին ընդ սրբոյ եպիսկոպոսին, Պրոկլիոս, Տիւքիկոս, Աքուդիոս. սոքա էին սարկաւագունք գեղեցիկք սրբոյն Գենարիոսի, որք ուղղափառ

խոստովանութեամբ կացեալք յայսմ աշխարհիս, և 'ի վախճանին ոչ անջատեցան 'ի միմեանց, այլ 'ի միասին արժանի եղեն փառաւորիլ 'ի ձայն խոստովանական վկայութեանն։ Արդ յորժամ եկին 'ի միասին, սկսաւ երանելին փառաւորել զԱստուած այսպէս ասելով. Օրհնեալ է Աստուած՝ որ առնէ զքաջանչելիս միայն, որ 'ի տանջանս թշնամեաց վայելեցաք 'ի սէր միմեանց. քանզի ոչ եթող զհօտապետն առանց հօտին։ Եւ էին 'ի մեծի ուրախութեան։ Իսկ 'ի վաղիւն անօրէն իշխանն եղեալ յասպարէզ հանդիսից՝ ուր զգազանսն արձակէին, և անդր հրամայէր զերանելին մատուցանել։ Իբրև ածաւ քաջ հովիւն հանդերձնուիրեալ ոչխարօքն՝ սկսան դահիճքն զայրացուցանել զգազանսն հանդերձ հարուածովք՝ առ 'ի յարձակիլ ցասմամբ 'ի վերայ սրբոցն. և իբրև յարձակեցան՝ հրամայեաց առեալ յԱստուծոյ՝ ոչինչ մեղան սրբոցն, մոռանալով զբարս իւրեանց՝ հոլովէին առ ոտս սրբոցն, և փարէին զնոքօք։ Իսկ ամպարիշտ դատաւորն կուրացեալ 'ի ձառագայթից աստուածային լուսոյն, ոչ ծանեաւ զքաջանչելիսն։ Ասէ. Մինթէ 'ի սրոյ կարիցէ՞ աստուածն ձեր փրկել զձեզ։ Եւ յորժամ ընկալան զվըճիռն՝ խնդութեամբ փառաւոր առնէին զԱստուած. և առ ժամայն յարուցեալ սուրբ եպիսկոպոսն, տարածեաց զձեռս իւր՝ կայր յաղօթս այսպէս ասելով.

Դու Տէր սրտագէտ, արարիչ շտեմարանաց մերոց, որ քննես զսիրտս որդւոց մարդկան. գիտես զի ոչ վրէժխնդիր եմ չարչարանաց իմոց, որ կամաւ մատնեմ զանձն իմ վասն անուանդ քո, որ վասն իմ մեռար և յարեար, Աստուած իմ։ աղաչեմ յայտնել զաստուածային զօրութիւն քո հպարտացեալ իշխանիս, որ 'ի վեր քան զմարդկային սահման ամբարհաւաճեալ հայհոյէ զամենակարող բազուկ քո. ոչ 'ի բաց բառնալ աղաչեմ՝ որ եկիր 'ի փրկել և ոչ 'ի կորուսանել, այլ ծանիցէն զի դու միայն ես Աստուած։ Եւ իբրև կատարեաց զաղօթսն՝ յանկարծակի հարան աչք եպարքոսին կուրութեամբ, և տանջեալ լինէր աներևոյթ տանջանօք. և սկսաւ զողջու�հարկանել թշուառականն, եղուկ զինքն ասելով. և փութով եկեալ անկանէր առ ոտս սրբոյն, խնդրելով զթողու-

թիւն մեղայն զոր առ նա արար՝ չարչարանօք. խոստանայր հաւատալ յԱստուած Հշմարիտ։ Իսկ երանելին Թէպէտ և գիտէր հոգւով զանձնաձանչ խաւար ոգւոյ նորա, սակայն նմանող եղեալ Տեառն իւրոյ, որ զմոլեգնեալսն 'ի վերայ իւր յետս յետս զարկուցանել հարկանէր կուրութեամբ, այսպէս սուրբն Գենարիոս աղօթս արարեալ լուսաւորեաց զաչս նորա։ Եւ բազմութիւն քաղաքին իբրև տեսին զայն ամենայն սքանչելիսն, հաւատացին յաւուր յայնմիկ յԱստուած ոգիք իբրև հինգ հազարք. և սկսաւ ամենայն բազմութիւնն փառաւորել զԱստուած, և զաղաղակ բարձին, գոչէին այսպէս ասելով. Ո՛վ դատաւոր, յայսմ հետէ մի՛ ինչ մոլիս անզգամութեամբ, զի ոչ եթէ 'ի մարդկանէ, այլ յԱստուծոյ են սքանչելիքդ։ Իսկ արքեալն մոլեկան դիւական մոլորութեամբ՝ խաբողական բանիւք հաւանեցուցեալ զբազմութիւնն ըստ կամաց նոցա առնել։ Եւ կոչեալ զդահիճսն հրամայեն տայր յանապատ տեղի տանել, և անդ սպանանել առանց ուրուք գիտելոյ։ Իբրև լուան երանելիքն զհրամանսն՝ խնդութեամբ լցեալ երթային զճանապարհն սաղմոսելով։

Ծեր ոմն մերկ հանդիպեցաւ երանելեացն, առաջի անկեալ քահանայապետին խնդրէր 'ի զգեստուց նորա. պատասխանի ետ ծերոյն սուրբն, թէ յորժամ փոխիմ առ Տէրն իմ՝ զկրկնոցս իմ տաց քեզ։ Եւ սուրբքն հասեալ 'ի տեղի կատարմանն՝ խոնարհեցուցին զպարանոցս իւրեանց, և հատան գլուխք նոցա. բարի խոստովանութեամբ կատարեցին զընթացս իւրեանց, և պսակեցան 'ի Քրիստոսէ։ Յայնժամ երեւեալ ծերոյն՝ սուրբն Գենարիոս, տայր նմա զոր խոստացաւն. զոր առեալ ունէր՝ ոչ միայն 'ի պատսպարանս աղքատութեանն, այլ և գանձ մեծ վկայական արեամբ ներկեալ։ Եւ 'ի նմին աւուր դատաւորն չարաչար սատակեցաւ, և քրիստոնէիցն արարեալ երիս տապանս, եդին 'ի մինն զերանելին Գենարիոս, և տարան 'ի քաղաքն որ կոչի Երապոլիս, և շինեցին վկայարան և եդին զնշխարս սրբոյն, յորում բազում բժշկութիւնք լինէին նովաւ. և զերիսն 'ի միւս տապանի, զՊրոկլիոս և զՏիւքիկոս և զԱ.քուդիոս։ Իսկ 'ի յեր-

ըորդում տապանին՝ զԵրկուս սուրբսն, զՓեստոն և զԴիսիդորոն։

Այսպէս կատարեցաւ արի և քաջ նահատակն, սուրբ և երանելի հայրապետն Գենարիոս, հանդերձ այսոքիւք ընկերօքս, 'ի փառս անուան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. ընդ որում Հօր և Հոգւոյն սրբոյ՝ վայել է փառք, իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Գեորգայ Զօրավարին։

Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի թագաւորութեանն ոչ սկիզբն աւուրց է և ոչ վախճան ժամանակաց ունի. իսկ փառաւորեալ ծննդեանն 'ի մարդանալոյն 'ի Մարիամայ Աստուածածին կուսէն, որ յայտնեալ երևեցաւ ամենայն տիեզերաց՝ 'ի ձեռն սուրբ առաքելոյն Աշմարիտ քարոզութեանն, որք արժանաւոր գտան վիճակի սրբոցն և շնորհաց Աշմարիտ հաւատոյն[1]։ Իսկ բազումք զՀշմարտութիւն հաւատոյն անհաւատալի համարին, որք մոլորութեանն ծառայք են. զոր ըմբռնեալ է մնափառութիւն աշխարհիս այսորիկ, և շաղփաղփանս համարին զտնտեսութիւն[2] Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ է արդարև Հրէից գայթակղութիւն և հեթանոսաց յիմարութիւն. այլ Աստուած կամեցաւ ծառայից իւրոց ամենեցուն միաւորիլ 'ի փրկութիւն Աշմարիտ աստուածպաշտութեան։

Որ եղև 'ի ժամանակին յայնմիկ սաստիկ կռապաշտութիւն Դիոկղետիանոսի Հռոմայեցւոց աշխարհ-

1. Երկ. օր. ընդհաց սուրբ Հոգւոյն... զՀշմարտութիւնն անհաւատք հաւատային։

2. Երկ. օր. զանգիսուութեան խորհրդոյն։

հին [1], ժանդ ոմն և գաղանաբարոյ լեալ ընդդէմ քրիստոսական հաւատոյն, և յաղթեալ յոյժ 'ի մոլորութենէ մնոտի կռոցն խաբէութեան, ունելով սիրելի զոմն միախորհուրդ յանաստուածութեանն, որոյ անուն էր Մանգնենտիոս, երկրորդ Թագաւորութեան նորա. և մոլեգնէր 'ի վերայ քրիստոնէից զայրագնեալ կռոցն ամբարշտութեամբ։ Եւ սոցա խորհուրդ ժպրհութեան արարեալ ընդ միմեանս, բառնալ ամենևին զքրիստոնէից պաշտօնն. և բռնադատէին զամենեսեան պաշտել զկռոցն պատկերս։ Քանզի էր 'ի ծնընդեանէ իւրմէ ապականեալ 'ի կռոցն մոլորութիւնս, և մանաւանդ 'ի պատկերն Ապողոնի. և նստեալ 'ի միասին խորհել ընդ միմեանս՝ գրել հրովարտակ յերեսաց Թագաւորին այսպէս.

Դիոկղետիանոս Թագաւոր [2] ընդ ամենայն իշխանութիւնս և աշխարհս մեր, իշխանաց և զօրավարաց և ամենայն որ ընդ ձեռամբ մերով իցէք, ընդ ամենայն աշխարհս Հռովմայեցւոց, դատաւորաց և ամենայն պետաց իշխանութեանց խնդալ.

Վասն զի համբաւ ընթացաւ յաստուածեղէն լսելիս մեր, և անչափ խռովեցուցին զմեզ, զի հերձուածք ամպարշտութեան քրիստոնէից զօրանայ, զի զոր ծնաւ Մարիամ կին ոմն Հրեայ՝ զնա անուանեն Յիսուս, իբրև աստուծոյ երկիր պագանեն. իսկ զԱպողոն զմեծն աստուած, և զԵրմին, և զԴիոնեսիոս, և զԵրակլէս, և զԴիա, յորոց ձեռն աշխարհի մերոյ խաղաղութիւն պարգևի, թշնամանեն և հայհոյեն։ Իսկ զանուանեալն Քրիստոս, իբրև զաստուած պատուեն, զոր Հրեայքն որպէս զմահապարտ և զմոգ՝ խաչեցին։ Վասն այսորիկ հրամայեմք, զամենայն քրիստոնեայս՝ ուր և գտցին՝ զարս և զկանայս ըստ ամենայն քաղաքաց և գաւառաց 'ի խոշտանգանս դառն [3] արկանել, զի զոհեսցեն աստուածոցն մերոց, և ուրասցին զմոլորու-

1. Երկ. օր. 'ի ժամանակին յայնմիկ 'ի Ռաֆաուորութեան Դիոկղէփոնոսի Հռովմայեցւոց աշխարհին, որ 'ի հէրեանոսական խռապաշտութեան մոլեալ էր ուռուել փան պառուել, ժանդ և գաղանաբարոյ լեալ։

2. Երկ. օր. Դիոկղէփոնոս մեզ պատուէալ յաւիպենական և մեզ Ռաֆաուոր, ընդ ամենայն աշխարհս Հռովմայեցւոց զօրավարաց, դատաւորաց, պետաց։

3. Երկ. օր. դառին։

թիւնն զայն։ Իսկ որ հաւանին, արժանի առնել թողութեան. ապա եթէ ոչ՝ դժնդակ մահու սրոյ և հրոյ մատնել զնոսա, զի գիտասցեն եթէ անփոփոխելի են հրամանք մեր. և եթէ ոք մերոց աստուածեղէն հրամանաց հեղգասցի՝ զվՃիռ նոցին ընկալցի։

Եւ իբրև այսպիսի գիր և հրաման եդան ընդ ամենայն տեղիս, մեծ հալածումն յարուցին 'ի վերայ հօտին Քրիստոսի, որպէս զի բազումք 'ի նշանաւոր մարդկանէ 'ի սաստիկ տանջանացն թուլացեալք։ Եւ առաւել ևս մոլեգնեալ Դիոկղետիանոսի, կոչեալ առ ինքն զամենայն արքունի հրապարակն հանդերձ զօրօքն՝ դարձեալ խորհուրդ արարեալ, զի զամենայն ազգս քրիստոնէից սատակեսցէ։ Եւ ոչք առաջի կային թագաւորին՝ հանդերձ երկիւղիւ, իրաւամբք[1] գործել խորհէին։ Իսկ Դիոկղետիանոս հրապարակախօս եղեալ ասէր. Ինձ այսպէս թուի, սիրելիք իմ, եթէ չիք այլ ինչ պատուական, որպէս թէ զառ աստուածսն մեր զպաշտօնն կատարել. վասն զի 'ի ձեռն նոցա մեզ թագաւորութիւն, և ամենայն մարդկան փրկութիւն պարգևի. վասն որոյ յիրաւի համարիմ այսուհետև աստուածոցն մերոց հանապազորդ զզօն մատուցանել։ Իսկ եթէ գտցին քրիստոնեայք թշնամանողք աստուածոցն մերոց, ամենայն հնարիւք 'ի տանջանս արկանել. մինչև նոցա դժնդակ կրօնքն լուծցին, և յիշատակ նոցա 'ի ձեռն մահու կորիցէ։ Եւ առ այն միաբան պատասխանի ետուն թագաւորին և ասեն. Մեք յօժարութեամբ ընդունիմք զմեծ թագաւորութեան ձերոյ զաստուածանման հրամանսդ և զինամսդ, և կամիմք պատուել զանմահ աստուածսն մեր, որպէս և զձեր զօրութիւնդ. արդ այսուհետև եթէ գտցի ոք՝ որ լոկ 'ի միտս իւր անուանեսցէ զՔրիստոս, ամենևին 'ի մահ մատնեսցին։ Արդ զայս ամ պարշտութեան և զանիրաւութեան խորհուրդս խորհեցաւ բռնաւորն 'ի հրապարակին։ Հրաման թագաւորին առաջի եդեալ՝ ոչք գտանէին քրիստոնեայք՝ բազում թշնամիք գուշակէին թագաւորին, զի տանջեսցեն խոշտանգանօք։

1. Այլ օր. իրաւունք։

Յայնժամ ծագեաց որպէս 'ի խաւարային գիշերի աստղ լուսաւոր և մեծապայծառ՝ որ Քրիստոսի պատուական մարգարիտն էր Գեորգիոս անուն Քրիստոսի զօրական, փարատել զմէգ և զմառախուղ բազմատուաժութեանն, և զմոլորութիւն կռոցն մնոտեաց, երկնային խորհրդո

'ի տոհմէ ազատ և մեծատուն յոյժ, և աստուածեղէն իմաստութեամբ զարդարեալ, և բազում անգամ զտեղրունական իշխանութիւնն[1] վարեալ երևելի պատուով, 'ի գնդէ որում անուն էր Անիկորոն[2]: Եւ այնուհետև վասն բազում քաջութեան իւրոյ զկոմսութեանն պատիւ տուեալ նմա 'ի Թագաւորաց: Իբրև տեսեալ նորա զանչափ մոլորութիւնն՝ որ ընդդէմ Քրիստոսի գործէին, յայնցանէ՝ որ կռոցն պաշտօնեայքն էին, վաղվաղակի զինչս և զստացուածս իւր բաշխեաց և ետ աղքատաց և տնանկաց, և որպէս ձգնաւոր մերկացաւ զամենայն: Յօժարութեամբ 'ի մէջ Թագաւորական ատենին և արքունի հրապարակին, և ամենայն զօրավարաց՝ որք նստէին յատենին, և այլ իշխանաց՝ որք կային առաջի Թագաւորին, աղաղակեաց մեծաձայն և ասէ. Ես քրիստոնեայ եմ, Թագաւոր. վասն որոյ խօսեցաւ[3] Ձշմարիտ և երկնաւորն Աստուած և Թագաւորն մեր Յիսուս Քրիստոս. և կամ 'ի միջի ձերում զարմացեալ ընդ այդչափ մոլորութիւնդ ձեր՝ որ վասն կռոցն ունիք. և ոչ ճանաչէք զմիայն կենդանին Աստուած, և զարարիչն ամենայն արարածոց, որ և զԹագաւորութիւնդ իսկ ետ ձեզ: Արդ, ո՛վ Թագաւոր, և ամենայն աԹոռակիցդ, մի՛ մոլորիք 'ի պատրանաց դիւաց. քանզի աստուածք՝ որ զերկինս և զերկիր ոչ արարին՝ կորիցեն: Իսկ քրիստոնեայք միայն Աստուծոյ Հօր երկիր պագանեն, և միայնոյ Տեառն Յիսուսի Քրիստոսի Որդւոյն Աստուծոյ, որով ամենայն եղև, և մի Հոգի սուրբ Աստուծոյ, երրորդութիւն կատարեալ՝ 'ի միում աստուածութեան և Թագաւորութեան, որով աստ կեամք բարեպաշտութեամբ, և յետ վաղճանելոյն ակն ունիմք կենացն յաւիտենից: Բայց ձեր պաշտամունքդ ստուգութեամբ արժանի են այպանելոյ, քանզի բարբանջմունք դիւաց են, և չիք ինչ 'ի դա ճշմարտութիւն, զի գործք սատանայի են, որք ընկղմեն զերկրպագուս իւրեանց 'ի սատակումն և 'ի կորուստ:

1. Երկ. օր. պարիբոնական իշխանութիւն պատուել:
2. Երկ. օր. Անիբիան:
3. Երկ. օր. Եւ քրիստոնեայ եմ, թագաւոր, և խրախուսէր 'ի ճշմարիտ և յերկնաւորս:

Յայնժամ հայեցաւ 'ի նա Մանգնենտիոսն՝ որ էր երկրորդ թագաւորին և սիրելի, և ասէ ցսուրբն. Զինչ անուն է քո, և կամ ո՞ ես դու, որ այսչափ յանդգնութիւն ունիս։ Սուրբն Գեորգիոս պատասխանի ետ և ասէ. Նախ և առաջին անուն իմ քրիստոնեայ է. բայց 'ի մարդկանէ Գեորգիոս կոչիմ։ Հայեցեալ 'ի նա թագաւորին Դիոկղետիանոսի՝ անդընդային վիշապն, ասէ ցնա. Գեորգիոս, ուսեալ է մեր վասն քո՝ եթէ յիմաստութեան և 'ի քաջութեան ընտիր ես հանապազ, և պատուի արժանի լեալ ես յարքունական խնամոց մերոց։ Վասն որոյ մատուցեալ զոհեա աստուածոց, զի մի՛ չարաչար կորիցես, այլ մանաւանդ վայելեսցես 'ի սէր մեր պատուով, և առաւել ևս մեծութեամբ 'ի ձեռն մերոյ խնամածութեան[1], և առ մեզ համարձակութիւն ունելով. այլ այդ ընդունայն համարձակութիւնդ քո չէ ինչ քեզ յօգուտ։

Սուրբն Գեորգիոս ասէ. Երանի՛, թագաւոր, թէ լսէիր դու ինձ, և ճանաչէիր զմիայն Ճշմարիտն Աստուած, զի և երկնից արքայութեանն արժանաւոր լինէիր. բայց արդ իշխանութիւնդ քո առժամանակեայ է, և խոստմունքդ քո և ողբանքդ անզօրք են շարժել զիս 'ի բարեպաշտութենէն Աստուծոյ իմոյ. պատիւ քո քեզ լիցի, և խոստմունքդ քո՝ որ քեզ հաւանին. բայց ես զՔրիստոս ունիմ զերկնաւոր թագաւորն՝ որ տայ ինձ զփառս և զյաղթութիւն հակառակորդին և պաշտօնէից նորա։ Եւ սրտմտեալ թագաւորն հրամայեաց կախել զնա զփայտէ, և գեղարդեամբ հարկանել զնա[2], և ընկենուլ զնա 'ի գետնի։ Եւ իբրև զայն արարին, ցայտեաց արիւն զմարմնով նորա, բայց գեղարդն իբրև զանագ ծալեցաւ յետս։ Յայնժամ ասէ սուրբն Գեորգիոս. Գոհանամ զքէն Քրիստոս, զի զսուր պաշտօնէից սատանայի յետս դարձուցեր մինչև 'ի սպառ, և զսրտմտութիւն բռնաւորիս որ 'ի վերայ իմ՝ քակեցեր։

Եւ լցեալ բարկութեամբ Դիոկղետիանոս, հրամայեաց իջուցանել 'ի փայտէն և տանել 'ի բանդ, զո-

1. Երկ. օր. մերոյ խնամոց ապուսա-ծութեան։

2. Երկ. օր. զբովայն նորա։

տրս նորա չարաչար պնդել 'ի կոձեղ, և դնել քար մի մեծ 'ի վերայ կրծոց նորա, որպէս զի չորից արանց աշխատութեամբ բառնալ զքարն. և իբրև եդին զքարն 'ի վերայ կրծից նորա, 'ի ձայն մեծ աղաղակեաց սուրբն Գեորգիոս, և ասէ. Գոհանամ զքէն Աստուած բարձրեալ, զի արժանաւորեցայ բեռինս ծանունս ունել 'ի վերայ սրտի իմոյ, որ հաստատէ 'ի քեզ զանփոփոխելի խոստովանութիւնս։

Եւ 'ի վաղիւ անդր արկանէ սատանայ 'ի սիրտ Դիոկղետիանոսի և որ ընդ նմա աթոռակիցքն, և հրամայեցին առնել անիւ մեծ բովանդակ ամենայն հընարիւք կազմել. և արարին զնիւթն[1] իբրև զհիւսնական մամուլս յամենայն կողմանց սրով կազմեալ, և հրամայեաց անօրէն բռնաւորն ածել յանիւն. և իբրև ածին զնա քարշելով 'ի տեղին, հայեցեալ նորա 'ի դժնդակ մեքենայն յայն, այնպէս կազմեալ յարուեստից սատանայի, հայեցեալ յայն՝ ասէ. Տէր Յիսուս Քրիստոս, գոհանամ զքէն որ կոչեցեր զիս 'ի վիճակս յայս. արդ դու որ 'ի մէջ երկուց աւազակացն խաչեցար և զմահ ճաշակեցեր, զի փրկեսցես 'ի մահուանէ զմարդն, տուր ինձ անվեհեր զխոստովանութիւն 'ի ժամուս յայսմիկ, և պահեա զոգիս իմ 'ի հնարից բանսարկուին։ Եւ զայս ասացեալ ընկեցաւ յանիւն, և չարաչար ըմբռնեալ կոտորեցաւ մարմին նորա։

Եւ տեսեալ թագաւորն հանդերձ Մանգնենտիոսիւն, համբարձ զձայն իւր և ասէր. Գիտացէք ամենեքեան զի ոչ դոյ այլ աստուած բայց Ապողոն, և Պողիդոն, և Երակլէս, և Դիա, և մեծն Արտեմիս[2]. արդ ո՞ւր է աստուածն Գեորգեայ, ընդէ՞ր ոչ եկն և փրկեաց զնա 'ի ձեռաց իմոց։ Եւ հրամայեաց այնպէս թողուլ զնա 'ի տանջանարան անուին, և ինքն չոգաւ զի ճաշակեսցէ։ Իսկ 'ի տասներորդ ժամու եղև հընչիւն մեծ և ձայն յերկնից՝ որ ասէր. Քաջալերեաց Գեորգիոս, և լեր աներկիւղ. քանզի բազումք հաւատալոց են քեզ յիս։ Իսկ որք պահէին զնա դահիճքն՝

1. Երկ. օր. ղանիան։
2. Երկ. օր. Ապողոն և Երմէս և Արամազդ և Եգիպտոս և Պիսիդոն և Երակլէս, Դիա և մեծն Արտեմիս։

երկիւղիւ զարհուրեալ 'ի ձայնէ հնչմանն՝ փախեան։ Եւ հրեշտակ Տեառն ի՛ջեալ 'ի բաց ելոյծ զնա 'ի տանջանարանէն յայն, և ողջանդամ հաստատեաց զմարմին նորա։ Ողջունեաց զնա և ասէ. Ուրախ լեր Գեորգիոս, և հաւատա 'ի զօրացուցիչն քո, և զընթացս քո կատարեա. քանզի աւասիկ մեք անսամք տալ քեզ զպսակն զկատարեալ խոստովանութեանն։ Եւ յարեաւ սուրբն Գեորգիոս ուրախութեամբ և գոհանալով զՏեառնէ, և շրջէր սաղմոսելով. Բարձր առնեմ զքեզ Աստուած իմ և Թագաւոր իմ; և օրհնեմ զանուն քո յաւիտեան. և՝ Ուղիղ արա զգնացս իմ; Տէր, և մի՛ տիրեսցեն ինձ ամենայն անօրէնութիւնք։

Եւ եկեալ 'ի տեղի ինչ ուր կայր պատկերն Ապողոնի, և եգիտ անդ զԹագաւորն և զՄանգնենտիոսն, և զամենայն բարեկամն Թագաւորին, զոհս և երկրը պագութիւնս մատուցանելով կռոցն։ Եւ մերձ եղեալ Գեորգիոս աղաղակեաց ասելով. Ծանիր զիս Թագաւոր, և առ յինէն զաւետարանեալն Աստուած[1], որ փրկեաց զիս 'ի ձեռաց քոց, և 'ի մահաբեր տանջանարանացն, զոր պատրաստեցեր ինձ 'ի կորուստ, կարծելով կորուսանել. քանզի մոլորեալ ես կռոցդ զոհ մատուցանելով։

Իսկ Թագաւորն հայեցեալ 'ի նա՝ ասէ. Ո՞վ ես դու։ Եւ ասէ սուրբն. Ես եմ Գեորգիոս, որ հրամանաւ քո պրկեցայ յանիւն. զոր և Թողեր զիս յանիւն՝ կարծելով մեռեալ. և այժմ եկի ցուցանել քեզ՝ Թէ կարող է Աստուածն իմ փրկել զիս 'ի մահուանէ, զոր դու կարծեցեր իբրև Թշնամանել։ Յայնժամ Թագաւորն հրամայեաց ունել զնա և մերձ կացուցանել. հայեցեալ 'ի նա՝ ասէ. Թուի եԹէ ստուեր բռնամահին է, և խաբէ զմեզ։ Իսկ Մանգնենտիոսն. Նման նորա է։ Սուրբն Գեորգիոս ասէ. Ես եմ Գեորգիոս ծառայն Քրիստոսի. մի՛ մոլորիք 'ի կուռսդ, այլ գիտասջիք եԹէ կարող է Քրիստոս և 'ի մեռելոց յարուցանել զոք յուսան 'ի նա, և 'ի ձեռաց ձերոց փրկել։

Եւ տեսին զնա և լուան 'ի նմանէ զայս Անտոլիա և

1. Երկ. օր. Ե ինա զսա յինէն զաւետարանեալն։

Պրոտոդիոն[1] ստրատելատք՝ որ կոչին զօրավարք, հաւատացին յԱստուած ամենայն ընտանեօք իւրեանց, աղաղակէին և ասէին. Մեծ է Աստուած քրիստոնէից, և նա միայն է Աստուած, և չիք այլ ոք որ գոյ Աստուած. բայց նա միայն է Աստուած օրհնեալ յաւիտեան։ Եւ իբրև լուաւ զայս Թագաւորն՝ հրամայեաց զամենեսեան զնոսա արտաքոյ քաղաքին տանել յանապատ տեղիս և կոտորել զնոսա։ Եւ իբրև երթային նոքա 'ի տեղի կատարմանն, միաբան աղաղակէին ասելով. Տէր Յիսուս Քրիստոս, ընկալ զոգիս մեր խաղաղութեամբ, և կարգեա 'ի քո անփոփոխելի յանանց արքայութիւնդ, համարելով մեզ զփոքր մի խոստովանութեանս մերոյ զառ 'ի քեզ հաւատս՝ յարդարութիւն և 'ի թողութիւն մեղաց մերոց։ Եւ այնպէս կատարեցաւ վկայութիւն նոցա 'ի Քրիստոս Յիսուս։

Յայնժամ լուեալ և Թագուհւոյն Աղէքսանդրեայ վասն սրբոյն Գեորգեայ՝ հաւատաց ինքն 'ի Տէր. և եկեալ առ Թագաւորն համարձակութեամբ աղաղակեաց և ասէ. Ես քրիստոնեայ եմ, սրբոյն Աստուծոյ Գեորգեայ աղախին։ Եւ զայս ասելով Թագուհւոյն, պատասխանի ետ նմա Մանդնենտիոն և ասէ. Այս մեզ Թագուհի Աղէքսանդրիէ, ընդէ՞ր զՔրիստոս գովեցեր և զաստուածն արհամարհեցեր։ Իսկ նա ասէ. Մեծագունին փափաքեալ՝ զպակասն արհամարհեցի։ Եւ զայս ասելով գնաց՝ ունելով զԱստուծոյ երկիւղն 'ի մտի, և զհաւատն անշարժ։ Իսկ Թագաւորն սրտմտեալ՝ հրամայեաց արկանել զսուրբն Գեորգիոս 'ի գուբ կրոյ. զոր 'ի նոյն ժամ ինքնուցեալ և Թաղեալ 'ի կրի անդ զերիս տիւս և զերիս գիշերս. հրամանն տուեալ և պահապանացն զի պահեսցեն, զի մի՛ ոք 'ի խորհրդեանն լինիցի հանել զնա անտի։ Եւ յետ երից աւուրց ասէ Թագաւորն. Երթիցեն զօրականք և հանցեն զոսկերս բռնամահին, և զգուշութեամբ պահեսցեն, որպէս զի մի՛ ոք գիտասցէ զնմանէ։ Իբրև գնացին զօրականք 'ի գուբ կրոյն, եկին և այլք բազումք 'ի տեսանել. և իբրև 'ի բաց առին զկիրն, գտաւ սուրբ վկայն ոչ ինչ ունելով ամենևին արատ 'ի մարմնի իւ-

1. Երկ. օր. Անոպուլիոս և Պրոխպուլիոն։

րում: քանզի հրեշտակ Տեառն էր ընդ նմա, լինելով նմա օգնական 'ի հրամանէ Քրիստոսի: Իբրև տեսին զնա ամենեքեան՝ աղաղակէին ասելով. Մեծ է Աստուածն քրիստոնէից: Եւ լուեալ զայս Թագուհւոյն Աղէքսանդրեայ՝ եկեալ և նա 'ի տեղին աղաղակելով. Մեծ է Աստուած որ 'ի քրիստոնեայս, և ոչ գոյ այլ բայց 'ի նմանէ: Հաւատացին և զօրականքն՝ որք առաքեցան 'ի Թագաւորէն հանել զնա 'ի գբոյ կրոյն:

Եւ իբրև լուաւ զայս Թագաւորն, հրամայեաց զօրացն երթալ և ունել զսուրբն և ածել առաջի իւր: Իբրև ածին զսուրբն, նստեալ Թագաւորն յատենի հանդերձ մեծամեծօք իւրովք, և ասէ ցնա. Այսա մեզ ո՞ կենդանացոյց զքեզ: Ասէ ցնա սուրբ վկայն. Եթէ լսէք դարձեալ՝ ոչ հաւատայք. բայց գիտա Թագաւոր զի Յիսուս Քրիստոս որդին Աստուծոյ պահէ զիս յամենայն տանջանաց քոց, և զամենեսեան՝ որ կարդան առ նա՝ փրկէ յորոգայթից սատանայի: Յայնժամ Թագաւորն հրամայեաց առնել կօշիկս երկաթիս, որ ունէր բևեռս սուրս, ուղղորդս, և շողացուցանել և առնուլ ունելեօք և ագուցանել սրբոյն և ընթացուցանել զնա: Իսկ սուրբ վկայն ոչ կարելով գնալ յընթացսն, ասէ յինքեան. Ընթացիր Գեորգիէ, 'ի Թողեալ քեզ վիճակն. և հանդերձ արտասուօք աղօթէր. Տէր Աստուած իմ, փրկիչ նեղելոց, ապաւէն հալածելոց, համբերութիւն՝ որք վասն անուանդ քո են չարչարեալ. մի Թողուր զիս, այլ շնորհեա ինձ համբերութիւն մինչև 'ի սպառ: Եւ 'ի կատարել նմա զաղօթսն, եկն առ նա ձայն յերկնից որ ասէ. Քաջալերեա Գեորգիոս, զի ես ընդ քեզ եմ 'ի փրկել զքեզ. և նոյն ժամայն բժշկեցաւ մարմին նորա: Եւ հրամայեաց Թագաւորն տանել 'ի բանդն. և վաղիւն ասէ ցնա Թագաւորն. Մինչև ցե՞րբ սրտապնդեալ կախարդութեամբդ՝ տանջանացդ ժուժկալես, և մանաւանդ իսկ մոգութեամբ 'ի դիւաց օգնականութենէ. հաւանեաց ինձ այսուհետև, զոհեա աստուածոցն:

Իսկ սուրբն ասէ ցԹագաւորն, և որք ընդ նմայն էին. Ես ընդունելով զօգնականութիւնն Աստուծոյ իմոյ, զամենայն տանջանս ձեր ընդունելով, կացի առաջի ձեր ողջացեալ՝ վկայելով զօրութեան միայն Աս-

տուծոյ. և պատրաստ եմ դարձեալ առ ամենայն տանջանս ձեր, վասն առ 'ի Քրիստոս հաւատոյն։ Իսկ դուք որպիսի՞ յոյս ունիք, որք անշնչոցն պիղծ կռոցն որք ոչ ինչ են՝ յընդունայն պաշտիք, և կորստեանն նոցա հաղորդք լեալք. ամաչեցէք այսուհետև աստուածս անուանել զդոսա, որք գիշերութեամբք և արբեցութեամբ և պատերազմօք և սպանութեամբ, առ սակաւ մի կացեալ են յաշխարհիս յայսմիկ, և յաւիտեան տանջին յանշէջ հուրն, որ կայ ինայ ամենեցուն որք պաշտեն զնոսա։

Եւ լուեալ զայս Թագաւորին և ամենայն արքունականքն, հրաման ետուն արջառաջլոք յանխնայ զմարմին նորա հարկանել։ Եւ իբրև հարին զնա 'ի բազում ժամս, ասէ ցնա Թագաւորն. Մինչև յե՞րբ Թշուառական, ոչ հաւանիս և զոհես մեծ աստուածոցն, զի պատուի մեծի արժանի եղիցիս և կեցցես։ Իսկ սուրբն ասէ. Ես կենդանւոյն Աստուծոյ հանապազօր պատարագ օրհնութեան մատուցանեմ, որ փրկէ զիս 'ի ձեռաց ձերոց, և արժանի արասցէ փառաց և պատուի երկնաւորի։ Երանի՜ եթէ դուք ինձ հաւատայիք, և միայնոյ Ճշմարտին Աստուծոյ երկիր պագանէիք։

Յայնժամ հրաման ետ Թագաւորն արկանել զնա 'ի բանդ, և ինքն գնաց յարքունիսն։ Եւ իբրև էր սուրբն 'ի բանդին՝ ամենայն հաւատացեալքն գային առ նա 'ի գիշերի, տալով ինչս բանդապետին մտանէին և ուսանէին 'ի նմանէ զառ 'ի Քրիստոս հաւատն. և որք հիւանդութիւնս ունէին 'ի պէսպէս ցաւս ըմբռնեալք, և կոյրս բերէին առ նա, և նա աղօթիւք բժշկէր զնոսա։ Գլխաւորքն ամենայն աշխարհականի տեսեալ զբժշկութիւնս զոր առնէր, եկն անկաւ առաջի նորա, աղաղակեաց և ասէ. Հաւատամ յԱստուածն քո, զի նա է Աստուածն, և այլ չիք ոք բայց 'ի նմանէ։ Եւ նոյն ժամայն կալեալ զնա դահճացն և զօրականացն՝ ածին առ Թագաւորն, վասն իրացն որ եղև։ Իսկ Թագաւորն խռովեալ և զանուանն անդամ ոչ կամեցաւ հարցանել, այլ հրամայեաց զնա անդամ անդամ կոտորել։ Իսկ նա կատարելով 'ի խոստովանութիւնն Քրիստոսի, աղաղակեաց ասելով. ԱստուածՃշմարիտ,

որ արարեր զամենայն, մի՛ զիս անտես առներ[1] զանօթ անպիտան, վասն զի հաւատացի քեզ՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ, և երկնչիմ զի առանց սուրբ մկրտութեան եմ: կամեցայ մկրտել, այլ ոչ ժամանեցի, կամելով քո, Տէր, փրկեցայց. վասն որոյ աղաչեմ զքեզ Տէր Յիսուս, զարիւն կատարման իմոյ համարեա ինձ 'ի մկրտութիւն, զի Աստուած սրտագէտ ես, և քննիչ խորհրդոց և յօժարութեան մտաց: Եւ ելն նմա ձայն յերկնից ասելով. Եկ Գլխուկերի՝ ուրախութեամբ առ իս, քանզի կատարեալ ես յիս. և այսպէս կատարեցաւ սուրբն:

Եւ չոգան դարձեալ ասացին Դիոկղետիանոսի, թէ բազումք երթալով 'ի բանդն ուսանին 'ի Գեորգեայ, և զամենեսեան առ ինքն ձգէ բժշկելով զբազմութիւն յոյժ հիւանդաց. յայնժամ հրամայեաց ածել առ իւր զսուրբն Գեորգիոս: Իսկ Մանգնենտիոսն ասէ ցթագաւորն. Ազգ քրիստոնէից դժուարամահ են և վիճող, այլ մանաւանդ աղաչեա ողոքանօք զայրդ, զի թերևս խորհրդեամբ քո զոհէ աստուածոցն, բերկրացուցցես զնա պատուովք: Իսկ սուրբն Գեորգիոս գալով յարքունիսն՝ սաղմոսելով ասէր. Աստուած յօգնել ինձ նայեաց, և Տէր, յընկերել ինձ փութա:

Յայնժամ սկսաւ աղաչել զնա թագաւորն և ասել. Տերամբ արեգակամբ և ամենայն աստուածովք. եթէ լսես ինձ, Գեորգիոս, և մատուցեալ զոհես աստուածոցն մերոց, շնորհեմ քեզ ինչս բազում, և երկրորդ ինձ կոչեսջիր 'ի թագաւորութեանս իմում, քանզի խնայեմ 'ի քեզ և գթամ 'ի քեզ, կամելով զկեանս քո մանաւանդ՝ քան եթէ մեռանել չարաչար՝ ոչ հաւանելովդ ինձ: Իսկ սուրբ վկայն ասէ. Բարիոք ասացեր այժմ, ընդէ՞ր ոչ ասացեր ինձ յառաջագոյն այդպիսի բանս. այսչափ չարչարանաց արդ ո՞ւր խնդրեցիր զթշնամանս իմ: Ասէ թագաւորն. Շնորհեա ինձ հօր քո դյանցանս զայս, և զոհեա աստուածոցն, և ընդ ինև պատուեսցիս յարքունիս: Իսկ սուրբն Գեորգիոս ասէ. Որովհետև վասն իմ զղջացար, թագաւոր, արդ ես հաճեցից զմիտս քո. ո՞ւր են աստուածքն քո, եր-

1. Յօր. պակասի՝ առներ:

թիցուք առ նոսա։ Եւ ուրախ եղև Թագաւորն յոյժ, և հրամայեաց ամենայն պետացն և զօրացն՝ հանդերձ ամենայն հրապարակաւն գալ 'ի տաճար կռոցն, և քարոզ կարդացեալ այսպէս. Ահա խորհրդակից Գալիլեացւոց Գեորգիոս՝ մեծին Ապողոնի հաւանեցաւ զոհել։ Իսկ հեթանոսքն ամենեքեան ձախր առեալ աղաղակելով. Ապողոն յաղթեաց. Թագաւոր Դիոկղետիանոս, յաւիտեանս Թագաւորեա. մեծ են աստուածք Թագաւորի։

Մտեալ նոցա 'ի տաճար կռոցն և 'ի լուութիւն լինելոյ ամենեցուն առ հասարակ, եկաց սուրբն Գեորգիոս, և հայեցեալ 'ի պատկերն Ապողոնի, ասէ. Դո՞ւ ես աստուած, և զքեզ պարտ է պաշտել մարդկան։ Իսկ որ կայր ոգին պիղծ 'ի պատկերն, գոչեաց ասելով. Ոչ եմ ես աստուած և ոչ որ ընդ իս է, այլ մի է Աստուած Ճշմարիտ որ արար զամենայն, և որդի նորա Յիսուս Քրիստոս և սուրբ Հոգին. իսկ մեք հրեշտակք նորա, ապստամբք եղեալ[1] 'ի նմանէն՝ դևք անուանիմք։ Ասէ սուրբն Գեորգիոս. Եւ իբրև ոչ էք աստուածք ընդէ՞ր մոլորեցուցանէք զմարդիկ. զի՞արդ և այժմ համարձակիք կալ այսր, իմ ծառայի Աստուծոյ գալ աստ, յորոյ վերայ անուանեալ է անուն Քրիստոսի Ճշմարտի որդւոյ Աստուծոյ։ Եւ նոյնժամայն եղև խռովութիւն մեծ և գոչիւն դիւացն ողբալոյ. և ամենայն կուռք տաճարին անկեալ փշրեցան, զնշան Քրիստոսի առնելով նորա ձեռամբ իւրով հանդերձ բանիւ. և տեսեալ քրմացն հեթանոսաց զեղեալսն, ընթացեալ 'ի վերայ[2] սրբոյն Գեորգեայ, և կալեալ զնա աղաղակէին ասելով. Բարձ զկախարդս զայս, զի մոլեգնութեամբ զամենեսեան մոլորեցոյց և զաստուածսն կործանեաց։

Եւ սրտմտեալ Թագաւորն՝ դիւացն օգնականութեամբ և քրմացն առաջնորդելով, ասէ ցսուրբն. Զարագլուխ և ամենայն կախարդութեամբք և մոլորութեամբք լի, ո՞չ յանձն կալար ինձ՝ զոհել Ապողոնի։ Սուրբ վկայն ասէ. Անմիտ և անամոթ, ես զիմ պատարագ կատարեցի առ Քրիստոս Ճշմարիտ Աս-

1. Յօր. ապոստամբեալք եղեալ։ 2. Յօր. վասն։

տուածն իմ, վասն այնորիկ ամենայն աստուածքն ձեր ապականեցան. գոնեայ այժմ գիտեա, Թագաւոր, զի ոչ իւրեանց և ոչ այլ ումեք կարեն օգնել ինչ. քանզի կուռքն անմռունչք և դևք՝ մոլորեցուցիչք զանմիտ մարդիկ, իսկ այժմ 'ի Քրիստոսի ծառայէ կործանեցան։ Յայնժամ Թագուհին Աղէքսանդրի լուաւ զեղեալսն, ընթացաւ առ Թագաւորն և առաջի նորա աղաղակէր ասելով. Աստուած սրբոյն Գեորգեայ՝ անյաղթ զօրականի քո, քաւեա զիս զմեղաւորս, և մի յիշեր զանզգամութեան իմոյ զգործս, Տէր Աստուած. այլ յիշեա զկատարման իմոյ զփոփոխումնս, և տուր ինձ մասն և բաժին ընդ քրիստոնեայս և ընդ ծառայի քում Գեորգեայ։ Հաւատացին և այլ բազումք 'ի Տէր։

Յայնժամ բարկացեալ Թագաւորն եհատ վճիռ 'ի վերայ սրբոյն Գեորգեայ և Աղէքսանդրի, ասելով ցսուրբ վկայն. Ահա, ամենաչար Գեորգեա, և զԹագուհին մոլորեցուցեր և արկեր ընդ մահուամբ. արդ երթ և դու ընդ նմին զարժանի առ 'ի յաստուածսն հայհոյութեան դատաստան ընկալ։ Եւ ետուն այսպիսի վճիռ. Գեորգեայ խորհրդակցի Գալիլեացւոց, վասն ոչ երկրպագելով Ապողոնի, այլ և զԹագուհին ևս ընդ ինքեան մոլորեցոյց զաստուածսն հայհոյել, տամ զվճիռս զայս, սրով զգլուխ նորա կտրել հրամայեմ, հանդերձ Աղէքսանդրէիւ առ 'ի նմանէ մոլորելոյ։ Եւ նոյն ժամայն առեալ զնոսա զինուորացն՝ հանին արտաքոյ քաղաքին. երթալով յասպարէզ կատարմանն յօժարութեամբ՝ Աղէքսանդրեայ, սուրբ վկայիւն հանդերձ, և աղօթելով ընդ միտս իւր առ Տէր 'ի շարժել շրթանցն միայն, և աչօքն ընդ երկինս հայելով, նստաւ 'ի տեղւոջ միում, և արձակեաց զոգին խաղաղութեամբ։

Իսկ զսուրբն Գեորգիոս տարան 'ի տեղի կատարմանն, և ասէ ցզօրականսն. Անսացէք ինձ սակաւիկ մի, եղբարք, որպէս զի կացից յաղօթս. և իբրև թողացուցին նմա, հայեցեալ յերկինս տարածեաց զձեռս իւր՝ հառաչեաց մեծապէս և ասէ. Տէր Աստուած իմ, որ յառաջդ ես քան զամենայն յաւիտեանս, յոր ես ապաւինեցայ 'ի մանկութենէ իմմէ, 'ի գեղեցիկ և 'ի

Ճշմարիտ ակնկալութիւն քրիստոնէից, և յանսուտ խոստումն ծառայից քոց, անանց գանձ՝ որ յառաջ քան զինդրելն մեր շնորհես մեզ զպարգևս քո ձրիս՝ որք խնդրեսն զքեզ. լուր ինձ, Տէր, և տուր զվկայութեանս խոստովանութիւն մինչև 'ի սպառ համբերել. նոյն այժմ ընկալ զոգի իմ, և փրկեա զիս յօդային և 'ի պիղծ հոգւոյն. և հանպո զիս ընդ հաճոյս քո և ընդ սուրբս, և թողութիւն շնորհեա հեթանոսացս՝ զոր գործեցինս ընդ իս. և զծառայս քո՝ որ կարդան զանուն քո՝ լուսաւորեա զնոսա 'ի գիտութիւն ճշմարտութեան. զի զամենեսեան կամիս զի կեայցեն. առաքեա զօգնականութիւն այնոցիկ՝ որք կարդան զանուն քո. տուր նոցա զերկիւղ քո և ցանկութիւն, զառ 'ի սուրբս զսէրն, զի զյիշատակս նոցա կատարելով՝ նմանեսցեն հաւատոց նոցա. որպէս զի արժանի լիցին ընդ նոսա երկնաւոր կենացն և արքայութեանն յաւիտենից. զի քո է արքայութիւն և փառք Հօր և Հոգւոյն սրբոյ յաւիտեանս. ամէն։

Եւ յետ աղօթիցն խոնարհեցուցեալ ծունր, ձգեաց զպարանոցն՝ ասէ. Կատարեցէք զհրամանս թագաւորին։ Եւ հարեալ սրով 'ի զօրականէն՝ կատարեցաւ 'ի Տէր՝ սուրբ վկայն քրիստոսի Գեորգեա, յամեսանն մեհեկի ԻԳ, յաւուր ուրբաթու, յեօթներորդ ժամու, 'ի փառս ամենասուրբ Երրորդութեանն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

20. Հոկտ.
1 Մայիս

Ես Պասիկրատէս ծառայ սրբոյն Գեորգեայ, զհետ գնացեալ իմոյ տեառնն՝ ամենայն ստուգութեամբ կարգեցի զյիշատակարանս։

Սքանչելիք որ եղև 'ի ձեռն սրբոյն և մեծ վկային Քրիստոսի Գեորգեայ, զոր արարեալ է պատանւոյն Գեորգեայ գերեցելոյն յազգէն Գոթաց և 'ի ձեռն սրբոյն փրկելոյն։

Ոըք պարգևացն Աստուծոյ արժանի լինել փափաքէք, զքիշատակ և զտօն սրբոցն անյիշատակելի հաւատով և բազում գթով տօնել մի ձանձրասցուք։ Զայս ստուգապէս գիտելով՝ զի սուրբքն որ 'ի մէնջ գովին բանիւ, այլ արասցեն 'ի վերայ մեր, և հովանի և վերատեսուչ . . . . . .

. . . . . .

Զայս իբրև լսէին բարեկամքն և ազգայինքն ողբակից լինէին, և դարձեալ բանս միխթարականս խօսէին ընդ նոսա։ Գիտակ լինէր և մանուկն 'ի գերութեան անդ յերեկոյին յայնմիկ, յորում վաղիւն տօն էր սրբոյն։ Քանզի էր 'ի խոհարանոցին խարոյկ արկեալ յաղագս սպասաւորութեան թերմոնի. զի սովոր իսկ էր ազգապետն այն ջերմ ըմպել զգինին։ Կայր մանուկն թախծեալ արտասուելով, և տխրեալ խորհէր 'ի մտի իւրում թէ 'ի տանն իմում յաւուր յայսմիկ հանդերձեալ են կատարել զքիշատակ սրբոյն ծնողքն իմ, և ոըք մերձ են անդր բարեկամքն՝ այժմ 'ի սեղանի բազմեալ լինին. ես ողորմելի և գերի նշդեհս յանցեալ տօնին ընդ նոսա էի տօնելով և ուրախանալով ընդ այնոսիկ՝ որ յամենասեփհական տաճար սրբոյն ժողովէին, պաշտօնակից և եղանակակից լինէի. և այժմ յերկրի այլազգեացս 'ի գերութեան և 'ի ծառայութեան պանդխտիմ։ Ես միայն, սուրբդ Աստուծոյ, գտայ անարժան յայնցանէ ոըք մտանէին 'ի պատուական տաճար քո։ Արդ այսօր կատարեն ծնողքն իմ զքիշատակ քո սուրբ, և զիս ոչ տեսանեն. յոյժ տըխուր է և մայրն իմ, տեսանելով զազգականս և զբարեկամս մեր, զի ժողովին 'ի տօն քո և զիս ոչ տեսանեն. և ոչ լսեն զձայն սաղմոսելոյ իմոյ։ Զիա՞րդ ոչ տոչորի սիրտ նորա, և պատառէ զպատմուճան իւր, ցաւագին հարուածս ածելով 'ի վերայ անձին իւրոյ. ո՞ բարձցէ զհառաչանս հօր իմոյ, և կամ ո՞ կարիցէ կալ

ընդդէմ ողբալոյն նորա, և ո՞ փարատեսցէ զարտասուս տառապեալ մօր իմոյ։ Նաև ես այժմ զո՛ր օրհնութիւնս և կամ զո՛ր սաղմոս երգեցից 'ի տօնի քում, բայց միայն արտասուս անօգուտս, և հառաչանս ունայնս 'ի վշտացեալ սրտէ վերամատուցից։ Ողջ լեր մայր իմ, ողջ լերուք ամենայն ազգականք և սիրելիք և ծանօթք իմ, և յիշեցէք զիս 'ի գերութեանս։ Եթէ իբրև զկենդանի յիշէք, աղօթս արարէք վասն իմ։ և եթէ իբրև զմեռեալ, ողբացէք 'ի վերայ իմ։ Ողջ լեր և դու քահանայ պատուական, սպասաւոր սուրբ տաճարիդ, որ դաստիարակեալ ուսուցեր ինձ զաստուածաշունչ գիրսս. և արդ յիշեա զիս 'ի պատուական աղօթս քո։ Ողջ լերուք և դուք հասակակիցք իմ, և սաղմոսակիցք և եղանակակիցք, այժմ 'ի տօնի սուրբ վկայիս՝ մի՛ մոռանայք զօտարս յօտարութեան և ըզգերիս 'ի գերութեան։

Զայս ասելով լռութեամբ արտասուս հեղոյր գետաբար յաչաց իւրոց, զի ոչ համարձակէր հառաչանօք ողբալ յահէ այլազգեացն։ Այլ այժմ միտ դիք զարմանալոյ սքանչելեացս, տարածեցէք զսիրտս, և բացէք ընդարձակագոյն զլսելիս ձեր։ Մինչդեռ զայս խորհէր մանուկն Գեորգ, Ճեպէին զնա ծառայակիցքն զի փութացուսցէ զանօթ ջերմին, և բարձցէ 'ի կայծականցն. և նորա սրբեալ զարտասուս յերեսաց իւրոց և առեալ զանօթն 'ի խարուկէ անտի՝ յորժամ եռայր ուժգին յորձանօք, ո՛վ զարմանալոյ սքանչելեացս, հիանամ յոյժ, և հեր գլխոյ իմոյ խուզանէ զօրէն սրսացեալ[1] փշոց, և ոչ գիտեմ զի՞նչ ասացից. սակայն պարտ էր զի կատարեսցի բան Տեառն որ ասաց ցառաքեալսն. Որ հաւատայ յիս՝ զգործսն զոր ես գործեմ և նա գործեսցէ։ Մինչդեռ երթայր մանուկն և անօթն 'ի ձեռին իւրում, յանկարծակի յափշտակեցաւ 'ի բարձունս, և յական թօթափել բերեալ զնա սուրբն կացոյց 'ի մէջ տանն՝ յորում կոչեցեալքն բազմեալ էին, ունելով 'ի ձեռին իւրում զանօթն ջերմին, և այնպէս յորձանս առնոյր տակաւին իբրև թէ առբարձեալ է 'ի կայծականց հրոյն։ Զոր

1. Այսպէս յօրինակին։

իբրև տեսին ծնողքն նորա, և այնոքիկ որ բազմեալ էին, հիացան յոյժ և մեծաձայն բարբառ արձակեցին. և յառաւել ուրախութենէն և յանակնածելի խնդութենէն ծնողք նորա անկան անմռունչ 'ի վերայ երկրի, և այլքն գիրկս արկեալ համբուրէին զնա. և սկսան հարցանել վասն գալստեան նորա։ Եւ մանուկն ծանուցեալ զտուն իւր և զծնողսն, և զայնոսիկ որ բազմեալ էին, տարակուսեալ եղև և 'ի հիացման մեծի. ապա եկեալ 'ի միտս իւր՝ պատմէր վասն անձին իւրոյ՝ այսպէս ասելով. Զայս միայն գիտեմ, զի 'ի ժամուս յայսմիկ 'ի գերութեան և 'ի ծառայութեան էի յերկրին Բուլղարաց, և անօթս այս զոր տեսանէք 'ի ձեռին իմում՝ 'ի խոհարարանոցէ կայծականցն առի զսա և կամեցայ ելանել առ տէրն իմ։ և յելանելն իմ ընդ սանդուխս տաճարին՝ տեսի անդ այր մի 'ի վերայ երիվարի 'ի ձև զինուորի, որ առաւել քան զարեգակն պայծառացան շառաւեղք նորա. և յանկարծակի յափշտակեաց զիս, և ես եղէ իբրև 'ի հիացման մեծի, և ոչ գիտացի այլ ինչ՝ բայց միայն լուայ ձայն ինչ իբրև 'ի ծփանաց ջուրց որ հարկանէ զգարշապարս երիվարի, և յական թօթափել աստ գտայ՝ ուր տեսանէք զիս. քանզի էի 'ի մէջ ճառագայթից լուսոյ, և ոչ գիտէի թէ ուր եմ ես, մինչև հարցէք զիս։

Զայս իբրև լուան՝ վաղվաղակի արտաքս ելեալ 'ի տանէն խնդրէին գտանել զփրկիչ և զկեցուցիչ մանկանն. և քանզի անհնար էր տեսանել զարագահաս նահատակն, անդրէն դարձան 'ի տունս իւրեանց, և հիացեալ էին ընդ զարմանալի աքանչելիսն. մանաւանդ զի դեռ ևս եռայր անօթն 'ի ձեռին մանկանն։ Զարթեան ծնողք մանկանն, և գիրկս արկեալ համբուրէին զնա, և հանդերձ արտասուօք ասէին. Արդարև սա է որդեակն մեր, Ճշմարիտ արդեօք իցեմք եթէ յանուրջս. զի եթէ Ճշմարիտ՝ տեսաք զլոյս աչաց մերոց և զմխիթարիչն սրտից մերոց։ Գոհանամք զպարգևողէն Աստուծոյ և զմեծ վկայէ նորա. և որք լայիք ընդ մեզ յաղագս կորստեան որդւոյս մերոյ, այժմ ուրախացիք ընդ յայտնել լուսոյ մերոյ։ Զինչ ոչ ասէին և կամ զինչ ոչ գործէին արժանի գոհութեան եղելոյ 'ի վերայ նորաստեղծ գործոյն։ Լու եղև բանս

այս ընդ ամենայն երկիրն և փառաւորէին զԱստուած և գոհութիւն մատուցանէին սրբոյն, և հրամայեցին զի յեռացեալ ջրոյն յայնմանէ արբցեն ամենեքեան բազմեալքն. քանզի ոչ երբէք դադարէր յեռալոյ։

Արդ լուարուք և այլ սքանչելիքս 'ի վերայ սքանչելեաց. անօթն այն զոր ունէր մանուկն 'ի ձեռին իւրում, ոչ էր մեծ, այլ փոքր յոյժ, և որք ժողովեալ էին 'ի յիշատակ սրբոյն՝ էին բազմութիւն յոյժ, և ամենեցուն բաւական եղև որք հանդիպեցան անդ, և ոչ երբէք փոխեցաւ 'ի ցրտութիւն յայնքան երկարութեանն ժամուն. այլ այնպէս յորձանս առնոյր որպէս թէ 'ի բորբոքմանէ հրոյ ստիպեալ լինէր. և որպէս 'ի ժամանակս Եղիայի՝ կնոջ այրւոյն օտարասիրի կափսակ ձիթոյն ոչ նուազեաց և սափոր ալերն ոչ պակասեաց, այսպէս և անօթս այս ոչ նուազեաց յայնքան առատապէս բաշխմանէն, այլ ըստ օրինակի շերտից որ 'ի մէջ ջրոցն լինէին, և արտաքոյ բնութեանն բորբոքեսցի հուրն և ջուրն ոչ շիջուցանէ, այլ առաւելապէս բորբոքէ, այսպէս և աստուածային հրոյս զօրութիւն 'ի ձեռն սրբոյ վկային ազդման՝ զանօթ ջերմին բորբոքէր ուժգին։ Ո՛վ նոր և զարմանալի հիացմանս։ Ո՞ որք լսելով զսքանչելիս զայս և ոչ փառաւորեսցէ զայն՝ որ փառաւորեալ է 'ի սուրբս իւր։

Իսկ ծնողացն առեալ զմանուկն ընթացան յամենասեփհական տաճար սրբոյն. և խնդութեան արտասուօք թանային զատակ եկեղեցւոյն, և այսպիսի մատուցանէին գոհութիւն. Գոհանամք զքէն, սուրբդ Աստուծոյ, և զքոյին բարեխօսութենէդ և զօգնականութենէ, զի ոչ անտես արարեր զպաղատանս մեր։ Այլ զերաշխաւորութիւն քո կատարեցեր, և զորդիս մեր ամբողջ պահեալ հասուցեր առ մեզ. արդ պարգևեա քաւութիւն ծառայից քոց՝ յաղագս նախատանաց և չար բանից զոր խօսեցաք վասն քո. քանզի ցաւ գորովին խոցոտեր զհոգիս, և բնական գութն ծնողական գալարէր զաղիս, և բան անպատշաճ հարկաւորէր զիս խօսել։ Զայս և առաւել քան զայս գոհութիւն մատուցանէին սրբոյն։ Եւ ետուն զանօթն զայն 'ի տաճար սրբոյն 'ի պետս սպասաւորութեան անարատ մարմնոյ և արեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-

տոսի, 'ի հաւատարմութիւն տեսողաց և 'ի վկայութիւն սքանչելեացն՝ որ եղև առ մանուկն։ Լուան ամենայն բնակիչք կողմանցն այնոցիկ զզարմանալի զբաքանչելիսն, և եկեալ տեսանէին զանօթն 'ի տաճար սրբոյն, առաւել գոհութիւն մատուցանէին Աստուծոյ, որ զկամն երկիւղածաց իւրոց առնէ, և ասէին. Սքանչելի է Աստուած 'ի սուրբս իւր՝ որպէս Դաւիթ երգէ, և սքանչելի արար Տէր զսուրբս իւր 'ի վերայ երկրի։ Վա՛յ մեծի սքանչելեացս, վա՛յ հաւատոց ծնողացն, վա՛յ խնամոցն և բարեգութ օգնականութեանն։ Զի՞նչ սքանչելի քան զայսոսիկ Ամբակումայ մարգարէին, որ յափշտակեցաւ 'ի միգական երկրէն և մատոյց զՀաշն 'ի Բաբելոն՝ Դանիէլի մարգարէին 'ի մէջ առիւծուցն, և վաղվաղակի անդրէն դարձաւ 'ի տեղի իւր։ Իսկ պսակաւոր Ճգնաղգեաց վկայս Գեորգիոս 'ի ծառայութենէ զմանուկս յափշտակեաց ազատելով 'ի բարբարոսական գազանաբարութենէն, յական թօթափել կացուցեալ 'ի տան իւրում, որպէս սուրբ վկայքն Քրիստոսի Գուրիաս, Սամոնաս և Աբիբաս՝ զաղջիկն կենդանւոյն եղեալ 'ի գերեզմանի՝ յափշտակեալ և կացուցեալ յական թօթափելն 'ի տաճարն իւրեանց, և ետուն մօր իւրեանց ամբողջանդամք։ Այսպէս երանգահաս օգնականն Գեորգ՝ խոնարհեալ յաղաչանս ծնողաց մանկանն՝ ամբողջ պահեալ 'ի պատերազմէն և ազատեալ 'ի հեթանոսական ծառայութենէն հատոյց առ ծնողսն իւր։

Այլ դու, ո՛վ ամենազարդ և փափագելի վկայ, հաւատատուն և իր և անուն, յԱստուծոյ մշակեալ 'ի կենսաբեր տունկ. քաջազուարթ և պտղաբեր այգի՝ որ կերակրես զհոգիս և զմարմինս այնոցիկ՝ որք հաւատով կարդան զանուն քո. ո՛վ պարծանք մարտիրոսաց և պայծառութիւն Ճգնաղգեաց արանց, որ ամենայն վտանգելոց պատրաստական ապաւէն գտանիս, և հովանաւորեալ պահպանես, որք անյերկուանալի հաւատով խնդրեն զքո միջնորդութիւնդ. ժամանեա և մեզ յօգնականութիւն, որք փափագանօք կարդամք զերանգահաս անուն քո, և կատարեմք բաղձանօք գլուխատակ քո. ազատեա զմեզ յերևելի և յաներևոյթ թշնամեաց դաւաճանութենէ։ Զքեզ կարդայ և փա-

ռաւորէ ամենայն բերան, զքեզ օրհնէ ամենայն լեզու, և ցանկալի և աստուածազարդ անուն քո հռչակեալ է ընդ ամենայն տիեզերս. զքեզ սովորութիւն է կոչել յօգնականութիւն ամենայն հաւատացելոց, և փրկող և ապաւէն և անպատկառելի միջնորդ ստացեալ են։ Դու ինքն գերապայծառ և պսակազգեստ վկայ, մեծդ նահատակաց, որպէս ստացեալ ես համարձակութիւն առ նահատակադիրն և պսակապարգև արարիչն մեր, կոչեա յօգնականութիւն մեզ զնահատակակիցս քո զմարտիրոսս, զքրիստոնէից ապաւէնս և զառաջնորդս. զնախավկայն զանոխակալն զՍտեփանոս, զԹէոդորոս՝ զոր 'ի կարդալն յօգնականութիւն հաղորդ քեզ կոչեն զնա հանապազ, զՄերկուռիոս վկայ, զԴեմետրիոս Թեսաղոնիկեցին, զՊռոկաւիոս վկայ, զԵւստաթէոս և զմանկունս նորա, զԵստռատիոս և զընկերս նորա, զԵրեք վկայքն՝ որ ըստ օրինակի քո ապրեցուցին զդուստր այրոյն 'ի գերեզմանի եղեալ կենդանւոյն, զԱկինդինոս, զՊեգասիոս և զընկերս նորա, զՊռոբոս, զՏարաքոս և զԱնդրոնիկոս, և զամենայն սուրբս և զարի նահատակս. յաղագս հաստատութեան ինքնակալ թագաւորաց, խաղաղութիւն պարգևել աշխարհի, և յաղթութիւն ընդդէմ թշնամեաց. բարեխօսութեամբ ամենասրբուհի և միշտ կուսին Մարիամու. զի փառաւորեսցուք զամենասուրբն Աստուած, հանդերձ Հարբ և Հոգւովն սրբով, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Իրագործեցաւ գործ սքանչելեացս 'ի ժամանակս Փոկասու Տիւրանոսի կայսերն Յունաց։ Եւ թարգմանեաց 'ի Հռոմոց 'ի Հայս սուրբ քահանայապետն Հայոց մեծաց Գրիգորիոս Վկայասէր. զոր և պսակակից արասցէ Քրիստոս սրբոյ վկային և աղօթիւք ամենայն սրբոց. և ինքն եղիցի օրհնեալ յաւիտեանս. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Գուրիասայ եւ Սամոնայ։

Ի ժամանակս Դիոկղետիանոսի թագաւորին այր ոմն Գուրիաս անուն՝ 'ի գեղջէ որ կոչի Սարկիդիմիա, երկիւղած յԱստուծոյ և ամենայն առաքինութեամբ զարդարեալ, ունելով զոմն համաշունչ իւրոյ բարեպաշտութեանն 'ի նոյն գեղջէ, որում անուն Սամոնաս կոչէին, ամենայնիւ վարժք և հմուտք պատուիրանացն Աստուծոյ. որք ոչ դադարէին հանապազ սերմանել զբանն կենաց և զգուշացուցանել զհաւատացեալսն որ 'ի Քրիստոս՝ 'ի մոլորութենէ կռոցն, և մի զարհուրել և երկնչել յերկիւղէ մահու և սպառնալեաց բռնաւորացն։

Զայս լուեալ բռնաւորին՝ առաքեաց դասս զինուորաց բերել զսուրբ վկայսն։ Եւ ածեալ լինէին հանդերձ այլ ևս բազմութեամբ քրիստոնէից։ Եւ հրամայեաց արկանել 'ի բանտ և պահել զգուշութեամբ, մինչև պարապով քննեսցէ զնոսա։ Եւ յետ աւուրցն այնոցիկ եկ հրաման 'ի թագաւորէն զի արձակեսցեն զամենեսեան յիւրաքանչիւր տեղիս և 'ի գիւղս. իսկ զսուրբն Գուրիաս և զՍամոնաս ոչ արձակեցին, այլ արգելին զնոսա միայն 'ի բանդին։ Եւ նոքա ուրախ եղեն յոյժ, զի յաղագս բազմաց լուան որք յաւուրսն յայնոսիկ վկայեցին 'ի Քրիստոս։

Յայնժամ դատաւորն նստեալ յԵդեսացւոց քաղաքին, հրամայեաց ածել զսուրբն զառաջեաւ և ասէ. Զայս գիտասջիք՝ զի պարտ է ձեզ լսել քաջանցն հրամանաց ինքնակալին, և զոհել աստուածոցն, և լինել կարգաք և կրօնիւք Հելլենացւոց իբրև զմեզ. և 'ի բաց կալ 'ի մնոտի պաշտամանց և փրկել յառաջիկայ տանջանացն զոր կրելոցն են։ Սուրբքն ասացին. Որ քեզ ունայնութիւն թուի խաւարելոյդ մտաք՝ լոյսն Աստուածութեան, զի ոչ կարես հայել և նկատել, մեզ այն կեանք են յաւիտենական և տուողկենդանութեան, և 'ի տանջանացդ յոր սպառնասմեք ոչ երկնչիմք, և լսել քեզ երբէք ոչ կամիմք։

Դատաւորն ասէ. Ամենայն իրաք գիտէք զհրաման ինքնակալին, որ հրամայէ ձեզ քրիստոնէիցդ՝ կամ զոհել կամ մեռանել. արդ յառաջ քան զտանջանսն փութասջիք կատարել զհրամայեալսն ձեզ։ Սուրբքն ասացին. Մեք զաղականացու թագաւորին զհրամանս ոչ կատարեմք, մանաւանդ որ զտարերս աստուածս համարի. այլ զանմահ թագաւորին փութամք պահել զպատուիրանսն, որ ասէ. թէ՝ Որ ուրասցի զիս առաջի մարդկան, ուրացայց և ես զնա առաջի հօրն իմոյ որ յերկինս է։ Իշխանն ասէ. Եւ արդ ո՞չ կամիք առնել զկամս թագաւորաց մերոց։ Սուրբքն ասացին. Ո՛չ։ Իշխանն ասէ. Վասն յամառութեան ձերոյ բազում տանջանարանս պատրաստեմ ձեզ։ Սուրբքն ասացին. Թէպէտ և 'ի տանջանս մեռանիմք՝ զառժամանակեայ մահս, այլ անսատուերին հասանիմք լուսոյ, յաւիտենական և անվախճան կենացն, զոր խոստացաւ Աստուած սիրելեաց իւրոց։

Յայնժամ բարկացեալ դատաւորն հրամայեաց արկանել զնոսա 'ի բանտ։ Եւ յետ աւուրց դարձեալ ածեալ զնոսա զառաջեաւ և ասէ. Բազում ներողութիւն իմ և երկայնամտութիւն ոչ ածին զձեզ 'ի հաւան, արդ այսուհետև յաձախեմ 'ի վերայ ձեր նեղութիւնս և մատնեմ 'ի չարչարանս և 'ի տանջանս, որպէս արժանի էք, 'ի քանցումն քերանաց կողից ձերոց և 'ի կիզումն մարմնոց հրով, և կապիլ 'ի ձեռաց, և այլ զանազան տեսիլ տանջանաց կուտելոց 'ի վերայ ձեր։ Սուրբքն ասացին. Գրեալ է. Մի՛ երկնչիք յայնցա

նէ որ սպանանէն զմարմին և զհոգին ոչ կարէն սպանանել. արդ ոչ եմք հաւանելոց ձեր խաւարասէր կրօնիցդ, և մատնել անշէջ հրոյն տանջանացն. այլ պարտէ մեզ չարչարել, որպէս Տէրն մեր վասն մեր չարչարեցաւ. զի փառաց նորա լինիցիմք հաղորդք։ Ասէ դատաւորն. Մի՛ շաղակրատիք, այլ զոհեցէք և երթիջիք յիւրաքանչիւր տունս ձեր։ Սուրբքն ասացին. Մեք ունիմք տուն՝ տաճար առանց ձեռագործի յերկինս, զոր դու ոչ տեսանես։ Իսկ դատաւորն իբրև ետես զանշարժ հաւատս նոցա, ասէ ցդահիճսն. Կախեցէք զգոսա զմիոյ ձեռանէ, և յոտս նոցա կախեցէք քարինս ստուարս և մեծամեծս։ Եւ այնպէս կային 'ի կախաղանին յերրորդ ժամէ աւուրն մինչև յութերորդ ժամն. և ոչ էլ 'ի բերանոյ նոցա բան աղաչանաց, այլ այնպէս կային ժուժկալութեամբ որպէս թէ օտար մարմնով կրեցին զցաւս տանջանացն։ Ասէ դատաւորն ցմի ոմն. Մատիր առ Թշուառականսդ այդոսիկ՝ և հարց, եթէ արդեօք հաւանեցա՞յք առնել զկամս ինքնակալին թէ ոչ։ Իսկ ամենագով սուրբ վկայքն բանիւ ոչ կարացին տալ պատասխանի, այլ ձեռամբ նշանացի ցուցանէին ոչ հաւանել։ Եւ ապա հրամայեաց ինքնցանել և դնել 'ի խաւարչտին բանտին, և զոտս նոցա պնդել 'ի կոձեղս։ Եւ յետ երից աւուրց դարձեալ հարցեալ զնոսա վասն զոհելոյ աստուածոցն, և ոչ հաւանեալ. և ապա յօգոստոս ամսոյ մինչ ցնոյեմբեր ամիս թողեալ զնոսա այնպէս։ Եւ ապա հրամայեաց զառաջեաւ ածել և ասէ. Հաւանեցա՞յք յայսմ հետէ թագաւորաց մերոց։ Սուրբքն ասացին. Որպէս անփոխելի են միտք մեր, նոյնպէս անփոփոխելի և անշարժ՝ հաւատք խոստովանութեան մերոյ որ առ Քրիստոս։

Եւ ապա հրամայեաց կախել զնոսա զաջոյ ոտիցն, և զձախոյ ոտիցն կախել կապար ծանր. և թողեալ զնոսա յայնպիսի դժնդակ տանջանս զաւուրս հինգ, և ապա հրամայեաց հարցանել եթէ կամիցի՞ն զոհել։ Եւ վկայիցն ոչ լինչ տուեալ պատասխանի, բայց միայն 'ի կախաղանին սկսան աղօթել այսպէս. Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Աստուած Ճշմարտութեան և Տէր ողորմութեան. զօրացո զմեզ որպէս զօրացու-

ցեր զերիս մանկունսն 'ի հնոցին Բաբելոնի։ Տուր մեզ, Տէր, զօրութիւն ընդդիմակաց լինել չարիս՝ որ եկեալ հասեալ պաշարեսցէ զմեզ. զի մի՛ շինցի Ճրագ բարեպաշտութեան մերոյ. և մի՛ յաղթահարեսցէ զմեզ ազգի ազգի տեսիլ տանջանացս՝ որ զօրացեալ կուտեալ է 'ի վերայ մեր. Հայեաց, Տէր ամենակալ, և փրկեա զմեզ, և արա արժանի մեռանել վասն անուանդ քումդ սրբոյ։

Եւ ապա հրամայեաց բռնաւորն իջուցանել զնոսա 'ի կախաղանէն. և ոչ զօրէին գնալ, զի էին նման մեռելոց. և հրամայեաց 'ի վերայ ուսոց բառնալ և տանել 'ի բանդ։ Եւ 'ի հնգետասան ամսոյն յարուցեալ ընդառաւօտն էլ 'ի հրապարակն և նստաւ 'ի վերայ բեմի. և հրամայեաց զսուրբսն զառաջեաւ ածել. և սպասաւորքն վերամբարձեալ զսուրբսն 'ի վերայ ուսոց՝ ածին զառաջեաւ։ Դարձեալ ասէ դատաւորն. Խուարուք ինձ և զոհեցէք աստուածոցն, և մի՛ զրկիք 'ի քաղցր լուսոյ արեգականս և զչարագործաց մահ մեռանիք։ Արձակեցարուք 'ի կապանացդ և գնասջիք 'ի տունս ձեր. նա և 'ի վերայ այդր ամենայնի ընդունիցիք պարգևս յարքունուստ, և այդ լիցի եթէ առնիցէք զհրամայեալսն ձեզ. ապա եթէ ընդդիմանայք հրամանաց թագաւորին, այլ ոչ տեսանիցէք զլոյս արեգականս՝ զամենեցունց թագաւորի։ Սուրբքն ասացին. Զնախաստեղծ Ադամ յորժամ արար Աստուած՝ և զամենայն ծնունդս նորա, զարեգակն ստեղծեալ ետ 'ի ծառայութիւն նոցա, որ յարևելից մինչև 'ի մուտս արևու ընթացեալ ծառայակից մեր է. և արդ ո՞րպէս կոչէք զնա թագաւոր. բայց և զի՞նչ պէտք են քննութիւն, զի պատրաստ եմք 'ի մեռանել վասն անուան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Իշխանն ասէ. Դեռ ևս թէ կամիք՝ շահիք զկամն թագաւորին, և բաղում փառաց արժանաւորիք։ Սուրբքն ասացին. Յառաջ քան զտանջել մարմնոց մերոց ոչ լուաք քեզ, իսկ յորժամ ժամանակ է մշակութեան մերոյ առնուլ զվարձս հատուցմանց անդ երանութեանցն՝ արդ մոլորեցուցանե՞լ կամիս զմեզ, ո՛վ աստուածամարտ։ Բռնաւորն ասէ. Մերձեալ է ժամանակ յայսմ հետէ զվՃիռ մահու սրով ընդունել

ձեզ։ Եւ լուեալ զայս սուրբքն գոհացան զԱստուծոյ։ Իսկ դատաւորն իբրև ետես զհաստատուն միտս նոցա և զյօժարութիւն նոցա 'ի մահ, զարմացեալ և զձեռս 'ի վերայ աչացն եդեալ՝ բազում ժամն լուեալ կայր։ Եւ ապա ասէ. Երդուեալ 'ի փառս անմահից աստուածոցն, զի ոչ էր իմ կամ չարչարել ձեզ 'ի ձեռաց իմոց, բայց զկեանս ձեր դուք ոչ կամեցայք. ես զհրամանս թագաւորին առ ոտն հարկանել ոչ կարեմ։ Եւ հրամայեաց դահճացն 'ի գիշերի հանել զնոսա 'ի քաղաքէն 'ի տեղի մի և անդ գլխատել։ Եւ յորժամ տարան՝ երթային սուրբքն ցնծութեամբ. և իբրև հասին 'ի տեղին՝ դարձան յարևելս, եդին ծունր և տարածեալ զձեռս իւրեանց արտասուք ասեն. Տէր Աստուած ամենակալ, Յիսուս Քրիստոս, Աստուած Աշմարիտ, որ վասն մեր զմահ ճաշակեցեր, ընկալ զհոգիս մեր 'ի հոտ անուշից աստուածութեանդ քո, և զոսկերս մեր պահեա՝ քո ամրածածուկ աջովդ. և եթէ նեղեալ ոք ելցէ 'ի վշտաց վտանգից նեղութեանց, կամ յայսոց չարաց, և մեզ աղաչեսցեն զքեզ, լուր յերկնից 'ի սրբութենէ քումմէ, և զերծո յիւրաքանչիւր վտանգից։ Եւ կատարեալ զաղօթսն՝ խոնարհեցուցին զգլուխս իւրեանց. և դահիճն ձգեալ զսուրն՝ եհատ զպարանոց սրբոցն։ Այսպէս կատարեցան սուրբքն յամսեանն Նոյեմբերի, որ օր ինևևատասն էր։ Եւ 'ի վաղիւն եկեալ հաւատացելոցն հանդերձ դստերքն Սամոնեայ, անոյշ իւղովք և խնկօք պատեալ զմարմին սրբոյ վկային Քրիստոսի՝ եդին 'ի տապանի, 'ի փառս և 'ի պատիւ անուան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Պատմութիւն վարուց Սրբոյն Գրիգորի Աստուծամատեանի։

Աստուածահաճոյ և մեծ վարդապետն Գրիգորիոս էր յերկրէն Երկրորդ Կապադովկացւոց, 'ի քաղաքէն Անձիանձու, որդի Գրիգորի եպիսկոպոսի Անձիանձու. և է պատմութիւն նորա այսպէս։ Եւ վասն զի մայր նորա արու զաւակ ոչ ունէր, 'ի տուէ և 'ի փիշերի խնդրէր արտասուօք յԱստուծոյ տալ նմա արու զաւակ. և յանուրջս տեսանէր զպատկեր որդւոյն զոր հանդերձեալ էր ծնանել։ Եւ յորժամ եղև մանուկն՝ նուիրեաց զնա մայրն իւր Աստուծոյ. և աճեաց մանուկն, և եղև ուսումնասէր յոյժ. և գնաց 'ի Կեսարիա յուսումն. և անտի գնաց 'ի Պաղեստին, ապա յԱղեքսանդրիա. և անտի գնաց յիմաստութեանց մայրն յԱթէնս։ Եւ եղև գնալ Բասիլիոսի յԱթէնս, և բնակեցան 'ի միասին, հացակիցք միմեանց. և ուսան զամենայն հանճար իմաստութեան արտաքին գրոց. ուսան զաստուածաշունչ գիրս պատուիրանաց, և եղեն ժուժկալք 'ի ճգնութիւնս, որ և զարմանատեսք եղեն և աքանչելիք 'ի բնակչաց երկրին։ Եւ Բասիլիոս գնաց 'ի տուն իւր, և մնաց Գրիգորիոս յԱթէնս. և բռնադատեցին զնա լինել աթոռակալ քաղաքին այնմիկ, զոր յանձն ոչ էառ։

Եւ յորժամ եղև երեմնամեայ գնաց 'ի գաւառն

իւր և մկրտեցաւ, և ուխտ եդ անձին իւրում՝ որ ա-
մենևին ոչ երդնուցու. և անձին միայն կեալ, և զցայգ
և զցերեկ ընթեռնուլ զԱստուածաշունչ գիրս. և
զՔրիստոս յայտնապէս ետես 'ի տեսլեանն. և ապա
ձեռնադրի 'ի հօրէն իւրմէ քահանայ. և գնաց առ
Բասիլիոս և իմաստասիրեցին ընդ միմեանս զՀառս։ Եւ
եղև վախճանել Կեսարիոսի եղբօր իւրոյ, և գրեաց
հայրն իւր զի երթիցէ առ նա. քանզի յոյժ ծերա-
ցեալ էր հայրն և ինքնուն ամաց լեալ. և դարձաւ Գրի-
գորիոս առ հայրն իւր, և եղև հոգացող եկեղեցւոյն։

Իսկ Բասիլիոս նստաւ յաթոռ եպիսկոպոսութեան
Կեսարու. և ձեռնադրէ զԳրիգորիոս Աստուածա-
բանն եպիսկոպոս Աստմայ[1]. և նա վասն ժխորման տե-
ղւոյն և ժողովրդեանն անխաղաղ վիճմանն՝ չյօժարե-
ցաւ բնակել յԱստմա։ Գնաց 'ի տուն իւր. ապա բըռ-
նադատեցին զնա հայրն իւր և Բասիլիոս, և նստուցին
յաթոռ եպիսկոպոսութեան Անձիանձու։ Եւ յոր-
ժամ թագաւորեաց ուրացողն Յուլիանոս, հրամա-
յեաց զի քրիստոնէից որդիք ոչ ուսանիցին զՀանճարս
և զփիլիսոփայութիւն արտաքին գրոց. յայնժամ
գրեաց Աստուածաբանն Գրիգորիոս Հառս յանդիմա-
նութեան առ Յուլիանոս. և անպէտ բարբանջումն,
զարտաքին ուսմունս, և առասպելս և խոտանս, զոր
չիցեն պէտք քրիստոնէից՝ ուսանել։ Եւ գրեաց այլ
գիրս քերականս՝ պէսպէս իմաստիւք զանազանեալս,
որ և յոյժ իսկ օգտակար է առ բարեպաշտութեանն.
վասն զի աստուածաբանութիւն է առ ստոյգ դաւա-
նութիւն եռակի անձնաւորութեան, առ միոյ բնու-
թեան, և գովութիւն առաքինութեան. և հոգւոյ և
մարմնոյ սրբութեան, և խրատ հոգւոց և մտաց աղօ-
թից առ Աստուած. և փախչել յամենայն պակշո-
տութեանց և շաղփաղփութեանց ղօղանջելոյ առաս-
պելաց բազմաստուածութեան խաբէութեանցն. զայս-
պիսի իմաստութեամբ վարդապետութիւնս հաստա-
տէր առ 'ի յուսումն քրիստոնէից մանկանցն։ Եւ տե-
սեալ Յուլիանոսի զոր արար Գրիգորիոս, ընթերցաւ
զպատՀէնս Գրիգորի և յամօթ եղև. և թոյլ ետ

1. Ուղիղն Սաղէմայ։

դարձեալ քրիստոնէից ուսանել զարտաքին ստուգութեան հանձարս. քանզի յոյժ վեհագոյն էին Գրիգորի հանճարագիտութիւնքն քան զՊղատոնին և զՀոմերոսին և զԱրիստոտելին։ Եւ յետ մահուան հօրն իւրոյ Գրիգորի և մօրն Նունէի և եղբօրն Կեսարիոսի և քեռն իւրոյ Գորգոնիոյ, պատուեաց զնոսա ներբողական ճառիւք. և ապա գնաց 'ի Սելևկիա 'ի կուսանաց վանս սրբոյն Թեկղեայ վկային, և անդ դադարեաց, կացեալ լռութեամբ աւուրս բազումս։

Եւ յորժամ դարձաւ յԱնձիանձան՝ ոչ կամեցաւ կեալ կամ հոգալ զեպիսկոպոսարանն, այլ հոգայր զաղքատսն, գործակից եղեալ մեծին Բասիլիոսի եպիսկոպոսին. և շինեաց տաճարս 'ի հանգիստ աղքատաց, և գրեաց վասն աղքատսիրութեան ճառս։ Եւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ եղև բազմանալ բռնութեան արիանոսիցն. և հրամանաւ սրբոյն Բասիլիոսի գնաց 'ի Կոստանդնուպոլիս, և իջևանեցաւ 'ի մատուռն Անաստասեայ, և քաջանայր ընդդէմ հոգեմարտ հերձուածոցն և այլ հերետիկոսացն, որ էր նոցա միախոհ և օգնական՝ Եւիղոս[1] թագաւորն, որ նստաւ յետ Յուլիանոսի։ Եւ Գրիգոր աստուածաբանեալ վարդապետութեամբն իւրով՝ ուսուցանէր ժողովրդեանն զուղղափառ հաւատսն, արմատախիլ առնէր զհերձուածողացն զնոր բարբանջմունսն. իսկ Ապողինար անիմաստ ասորին, այլ նոր և դառն հերձուած տնկեաց, եթէ էառ Քրիստոս իմանալի հոգի 'ի կուսէն. և այլ հայհոյութեան բանիւք զբազումս պատրեաց և յաւրոյց 'ի վերայ սրբոյն Գրիգորի Աստուածաբանի, և քարկոծ առնէին զնա։ Հանդիպեցաւ Պետրոս հայրապետն որ յետ սրբոյն Աթանասի նստաւ յաթոռ Աղեքսանդրու. ժողովեցան առ նա ամենայն ուղղափառքն և արարին ընտրողութիւն հաճութեամբն Աստուծոյ. և նստուցին զԱստուածաբանն Գրիգոր յաթոռն Կոստանդնուպոլսի՝ հրամանաւ մեծին Թէոդոսի թագաւորին. և վայելեցաւ ուղղափառութեամբ ամն երկոտասան։ Եւ ոմն մի իմաստասէր աղէքսանդրացի որում անուն էր Մաքսիմոս, ճգնաւորի կերպ

1. Այն է Յովիանոս։

լեալ կեղծաւորութեամբ՝ մատեաւ առ Աստուածա-
բանն Գրիգորիոս, և եղև նմա ընկերակից 'ի միում սե-
նեկի և սեղանի. և ցանկացաւ Կոստանդնուպոլսի ա-
թոռոյն. եգիտ իւր օգնական երէց մի յեկեղեցւոյն,
և դարձուցին 'ի խորհուրդ և 'ի կամս իւրեանց զՊետ-
րոս զԱղէքսանդրու հայրապետն, որ նստոյց յայնժամ
զԳրիգորիոս յաթոռն, խոստանալով նմա գանձս բա-
զումս. և նա առաքեաց մետրապոլիտս և եպիսկոպո-
սունս, զի իջուսցեն զԳրիգորիոս յաթոռոյն և ձեռ-
նադրեսցեն զՄաքսիմոս։ Եւ երթեալ փութային
կատարել զգործն. և եղև խռովութիւն և աղմուկ
մեծ 'ի քաղաքին ընդ միմեանս, սիրելիք և թշնամիք.
և հանին զՄաքսիմոս յեկեղեցւոյն, և Աղէքսանդրա-
ցիքն տարան զՄաքսիմոս 'ի տուն փողահարի միոյ՝ և
ձեռնադրեցին զնա անդ. և գնացին 'ի Թեսաղոնիկէ
առ թագաւորն Թէոդոս, և աղաչեցին զնա զի տացէ
զաթոռն Կոստանդնուպոլսի Մաքսիմոսի. և նորա լը-
ւեալ բարկութեամբ եհան զնոսա յերեսաց իւրոց, և
դարձան տրտում և ամօթալից յԱղէքսանդրիա. և
խորհեցաւ սուրբն Գրիգորիոս թողուլ զաթոռն և
գնալ 'ի տուն իւր. և ժողովուրդքն արգելուին և ոչ
տային թոյլ գնալ։ Եւ դարձեալ թագաւորն 'ի Թե-
սաղոնիկոյ՝ և եկեալ ազատեաց զեկեղեցիսն 'ի հեր-
ձուածողացն, և առեալ զԳրիգորիոս գնաց յեկեղե-
ցին։ Եւ ամպ անցեալ 'ի նեղքոյ արեգականն, և եղև
տիւն իբրև զգիշեր. և սկսան խնդալ և խայտալ հեր-
ձուածողքն եթէ ոչ հաՀեցաւ Աստուած արտաքսել
զմեզ յեկեղեցեացն. և յորժամ մտին 'ի խորանն թա-
գաւորն և Աստուածաբանն, ցրուեցաւ ամպն, և ծա-
գեաց լոյս պայծառ, և եղեն ամօթալից հերձուա-
ծողքն։ Եւ նստուցին զԳրիգորիոս յաթոռն՝ Մելիտոս
Անտիոքու պատրիարքն, և Հարիւր և յիսուն եպիս-
կոպոսունքն որք ժողովեցան յԵրկրորդ սինհոդոսն.
յետոյ եկին և Եգիպտոսի եպիսկոպոսունքն և Աղէք-
սանդրու պատրիարքն՝ գժուարասրտեալք, եթէ ա-
ռանց մեր կամաց նստուցիք զԳրիգորիոս յաթոռ։ Եւ
եղև խռովութիւն 'ի մէջ Հարիւր և յիսուն[1] սիւն-

1. Այսպէս յօրինակին. պակասի եպիսկոպոսաց։

հոդոսին. ոչ եթէ ատէին զԳրիգորիոս կամ անարժան համարէին, այլ մեղադրէին եթէ ընդէր ոչ անսացիք գալստեան մերոյ։ Ասէ ցնոսա Գրիգորիոս. Եթէ վասն իմ է այդ խռովութիւնդ, ես չեմ լաւ քան զՅոանն, ընկեցէք զիս 'ի ծով և դադարեսցէ մրրիկդ 'ի ձէնջ։ Եւ հրաժարեաց 'ի թագաւորէն, և գրեաց ներբողեան Ճառս 'ի հարիւր յիսուն եպիսկոպոսունս 'ի ժողովոյն, և ողջունեալ զնոսա եւ գնաց 'ի Կապադովկիա յերկիր իւր, և դադարեաց 'ի գիւղ մի որ կոչէր Արուանզոն։ Եւ ժողովն ձեռնադրեցին յաթոռն Կոստանդնուպոլսի զՆեքտարիոս զտարսոնացին։

Եւ յորժամ սուրբն Բասիլիոս հանդերձեալ էր բաւրի մահուամբ ննջել, գնաց Գրիգոր Աստուածաբանն 'ի Կեսարիա առ նա. և գրեաց 'ի թաղումն նորա ներբողեան Ճառս. և դարձաւ 'ի գաւառ իւր յԱրուանզոն։

Այս երանելի Աստուածաբան վարդապետս Գրիգորիոս զերկոտասան ամ զոր եկաց 'ի Բուզանդիա, մաքրեաց զքաղաքն յամենայն հերձուածողաց, և 'ի մոլորութենէ Արիոսի և Ապողինարի և Նաւատիոսի։ Եւ նստոյց յաթոռ եպիսկոպոսութեան Անձիանձու զԵւլալիոս, այր կատարեալ առաքինութեամբ, որ և սպասաւորէր սրբոյն արժանապէս, վասն զի յոյժ տկարացեալ էր մարմնով. յետ այսորիկ ապա և ինքն երթեալ ընդդէմ կայր արիանոսացն, և այլոց հերձուածողացն. և անտի դարձեալ լռէր պարապելով յամենայնէ խաղաղական կենցաղս՝ ամ մի, միայն աղօթից հոգ տանելով։ Եւ ապա գրեաց այլ ևս թուղթս, յորոց բազում նիւթք տուաւ ինձ առ 'ի շինուած առաջի արկեալ իմաստիցն։

Արդ այսպէս բարձրագոյն և երկնից արժանաւոր իմաստութեամբ և ուղիղ դաւանութեամբ եկաց երանելին յաշխարհիս այսմիկ. զբազում լուսաւորեաց վարդապետութեամբ Հոգւոյն սրբոյ որ աւանդեցաւ նմա։ Եւ յետ այսորիկ փոխադրեալ եղև յաստեացս 'ի հանդերձեալս, յանցաւորէս 'ի մշտնջենաւորսն, 'ի ստուերէս 'ի Ճշմարիտն. և փառաւորեալ պսակեցաւ ընդ ամենայն սուրբս։ Արդ կատարեաց մեծն այն և արժանի յիշատակի Գրիգորիոս զկեանս իւր, որ օր քսան և հինգ էր յունուարի ամսոյ, 'ի փառս Քրիս-

տոսի։ Եւ ես ըստ կարի իմում շարադրեցի զվարս նո-
ցա. թէպէտ և ոչ զբովանդակն, այլ այնչափ զփա-
փաքումն իմ լցուցից, որչափ վայել է բարեմիտ որ-
դւոց՝ զգթասիրի հօր զիանդաղատանս ըստ չափոյ
հասակին փոխանորդաբար հատուցանել։ Որպէս զի և
մեք արժանի լիցուք՝ի ձեռն սորա յարաղչարձ բերկ-
րանօք փառաւորել զանսկիզբն Հայր, և զառ՝ի նմա-
նէ զանսկզբնաբար ծնեալն Որդի, և զանսկզբնակից
բղխումն՝ի նոցունց էութենէ զՀամաչոյակից սուրբ
Հոգին. անձինք երիս կատարեալ անորոշաբար, և
բնութիւն մի անշփոթաբար զուգակցեալ. որում
վայելէ փառք իշխանութեան և պատիւ, այժմ և
յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Այլ պատմութիւն վարուց Սրբոյն Գրիգորի Աստուածաբանի։

Այսօր հրաւիրեաց զմեզ, ով եղբարք, մեծն Գրիգորիոս աստուածաբանութեամբն Ճոխացեալն՝ 'ի հոգևոր խրախութիւնսն իւր Ճգնաւոր բարեպաշտութեան իմաստիցն հանդէս. և սեղանաւորեաց առաջի մեր զաննիւթ և զանուշահամ զիւրոյ առաքինութեանցն խորտիկս, առ 'ի փափկացուցանել զմեզ այնուկերակրով, որ վերացեալ բարձրացեալ քան զամենայն առաքինութիւնս. և դուք մի՛ աքանչանայք ընդ այսքան համարձակութիւնս մեր, մինչ զի խիզախեալ մերձենալ մեզ 'ի բարձրագոյնսն քան զմեզ։ Վասն զի այնքան փափագիմ նորա առաքինութեանցն՝ մինչ զի մոռացումն եղև իմում տկարութեանս. այլ և վստահացեալ 'ի Ճշմարիտ յոյսն Քրիստոս, որպէս զի օժանդակեսցէ իմոյ տկարութեանս՝ 'ի նորա յոյսն մեծաղօր իմաստիցն գիտութեանց, զի պատմել կարացից վասն անմատոյց առաքինութեանց նորա։ Եաև վասն այնորիկ մինչև ցայսօր պատշաՃ վարկայ լռութեան տալով մեզ զայս պատմելով կամեցեալ մեր, վասն զի և ոչ զմի ոք տեսի կարդ և հետևումն արարեալ յայս՝ պատմել զնորայն առաքինութեան վարս, առ 'ի յուղղութիւն զկնի եկելոցս. որպէս և նա ինքն պատմեաց վասն Բասիլիոսի և այլոց եպիսկոպոսաց և վկայից՝ ոլք կա-

տարեցան 'ի Քրիստոս։ Եւ արդ վասն զի ոչ գտաւ, որպէս վերագոյնն ասացաք, յայսոսիկ ձեռնամուխ լեալ, պարտ է մեզ որպէս սիրելի որդի փոխանակ հոգևորին[1]... զպարտոյ պարտսն հատուցանել նմա. մանաւանդ զի չէ իսկ արժան զայնքան առաքինութիւն այնպիսւոյ առն՝ անբանութեան տալ... հրատարակել, զի թերևս արժան լիցի բազմաց բ... նորա ելանել։

Բէր այսուհետև զյապաղանացն հատուցուք իբրև 'ի նորահունձ առաջին արմտեաց պտղով բանից մերոց պսակեսցուք զԱստուածաբանն. թէպէտ և ոչ ըստ արժանեաց նորա, սակայն 'ի մերմէ յօժարութենէ և 'ի փութոյ ոչ պակասեցուցանեմք։ Գիտեմ զի յամենայնի մեծախորհուրդ է այրն, և ներկ մեզ զտկարութեանն մերում։ քանզի և հայր գթած զտարախօսել զաւակի իւրոյ, որ յանարուեստ մտաց և յանկատար լեզուէ արտաքս գայ՝ զուարճութիւնս վարկանի. այսպէս և երանելիս այս, թուի թէ ընտանեգոյն վարկանի զասացելովքս 'ի մէնջ, ուրախանայ 'ի մեզ։ Զի եթէ մինչ կենդանի էր՝ այսպէս գիրկս արկեալ հոգևոր սիրով գրէր 'ի մեզ, զիարդ ոչ արդեօք յորժամ առ մաքուր լոյսն և բարձրագոյն կեանսն փոխադրեալ եղև։ Բայց և 'ի ձէնջ խնդրեմ, ով ժողովուրդք սուրբք, և մի պահանջէք զհաւաստիս իմաստիցն առ նորա ուղղութիւնսն։ Նախ, զի նուազեալ գտանիմ զօրութեամբ իմաստից առ նորայսն. և ապա, զի ոչ դք վասն նորա եթող ինչ մեզ գրով, այլ իբրև հասկ սերմանեաց ժողովեցից 'ի պարարտութենէ անդոց բանից նորա, որ ինչ միանգամ յաղագս նորա են։ Եւ նմանեցայց իմաստուն ճարտարապետի, որ զմանր քարինսն առ մեծամեծօք 'ի մի ժողովեալ դնէ առ պատրաստութիւն ոմոց, և այնու յարմարեալ կազմէ տուն կատարեալ թագաւորի։ Եւ արդ սկիզբն արասցուք ուստի սկսանելն վայելչապէս արժան է։

Էր սա ըստ հայրենեաց յԵրկրորդ 'ի գաւառէ Կապպադովկացւոց, ծնեալ 'ի քաղաքին Անձիանձու. վասն որոյ երևելի եղև քաղաքն այն յաղագս բազմազար-

1. Յօր. առղք ինչ խանգարեալ էին։

դութեան նորա. զի ոչ եթէ այնքան անուանի եղև 'ի տիեզերականութենէն Աղեքսանդրու՝ աշխարհն Մակեդոնացւոց, և կամ Պարսիկս 'ի ձեռն Կիւրոսի թագաւորի, որքան փառաւք ծաղկեալ զարդարեցաւ քաղաքն Անձիանձու 'ի ձեռն Գրիգորի. բայց թուի ինձ ոչ այլ ինչ պատճառ գոլ այսմ, այլ զի ընկալաւ զդայեկութիւնն սննդեանն յառաքինութենէ նորա։ Լուսրուք հարք և պատկառեսցուք, ընդունելով զպատմութիւն բարի հօրն, զի մի միայն մարմնոյ այլ և հոգւոյ լինիցիք հարք։ Որոյ և հայր նորա իբրև զԱբրահամ հնազանդեալ կամացն Աստուծոյ, թողեալ զաշխարհ իւր և զգաւառ, զգահագլուխ մեծութիւնս և զբազմաստուածութեանն մոլորութիւնն՝ փոխադրեալ եղև յաստուածպաշտութիւն, և հարազատ աշակերտ երևեցաւ շնորհացն Աստուծոյ։ Որ սուրբ ոչխար յառաջագոյն խառնեալ 'ի հօտն Քրիստոսի, ապա և հովիւ հանձարեղ հաստատեցաւ շնորհօք Հոգւոյն սրբոյ յեկեղեցի Անձիանձու։ Իսկ մայր նորա սուրբ և 'ի սուրբ նախնեաց, հանդերձ այլովք առաքինութեամբ պտղաբերեաց բարեպաշտութեամբ զբարի շառաւեղն 'ի բարի արմատոց. քանզի[1] տենչայր մանկան աբուի, և յաղաչս այնորիկ մաղթանս մատուցանէր այնքանեաց մեծաց բարեաց տուողին Աստուծոյ, այլ և հանդիպէր բաղձանացն։

Ո՛վ մեծի հաւատոյն, ո՛վ ջերմութեան սիրոյն. նախ քան զյղանալն՝ խոստանայր տուողին առաջի մատուցանել որպէս Անննա զՍամուէլ։ Եւ զի՞նչ ապա արդեօք. այլ այն որ զկամն երկիւղածաց իւրոց առնէ՝ լուաւ աղօթիս նորա, և 'ի ձեռն տեսլեան գիշերոյ եցոյց նմա զհանդերձեալ մանուկն, այլ և զտեսակն և զանունն, և զառաքինութեանց՝ որում նուիրեցաւ հանդէս։

Զայս ամենայն եցոյց նմա Բարձրեալն նախ քան զծնանելն. իսկ ապա ծնեալ և բարիոք սննդեամբ աճեցեալ, բարեպաշտութեան ժառանգորդ լինելոր բարի ծնողացն, զօրանայր քան զհասակակիցս իւր ըստ բարեպաշտութեան կարգի քրիստոնէից, ոչինչ խա-

1. Յոր. փոխ։

փան լինելով նմա անկատար հասակն 'ի կատարեալ ուսմանց և բարուց, ըստ օրինակի մանկանց զբաղնուլ։ Այլ զայս ամենայն արհամարհեր իբրև անօգուտս, փութայր ըստ լաւագունիցն. և փոյթ և յօժարութիւն նմա այս էր, ստանալ զառաքինութիւնս և զգուշանալ 'ի չարեաց. քանզի իւղ անուշ միգանայ՝ յորժամ մերձ գնի առ 'ի հոտս գարշութեան։

Իսկ յորժամ աճեցեալ եղև պատանեակն, մինչ զի կարող գոլ այնուհետև մտանել 'ի դպրոցս արտաքնոց իմաստիցն, երթեալ ապա 'ի Կեսարիա, և անդ քաջալերս գտեալ 'ի յուսումնակցացն, և ժողովեալ մանկունս ոչ սակաւս՝ նաւեաց 'ի Պաղեստինէ. քանզի յոյժ բաղձայր հռետորական իմաստից. և անտի յԵգիպտոս. և եկեալ յԱղեքսանդրիա և յայլ քաղաքսն, 'ի մի հաւաքելով յանձն իւր զբազում արանց իմաստութիւնն՝ ըստ սողովմոնեան իմաստութեանն խրատու։ Յայնժամ ապա յետ զբազումն յօգտակարաց իմաստից Եգիպտացւոցն ժողովելոյ, խորհեցաւ գնալ յԱթէնս. քանզի զայս իսկ պատուէր հրաման ունէր 'ի մօրէն իւրմէ. և մտեալ 'ի նաւ եգիպտացի, նաւէր 'ի Պարթենիոն ծովուն, ոչ 'ի ժամանակս նաւարկութեան։ Յայնժամ յանկարծակի հողմն սաստիկ յարուցեալ խռովէր զծովն, և խաւար թանձրամած եղ 'ի վերայ ծածկեաց զծովն, ըստ նմանութեան Եգիպտացւոց խաւարին յաւուրսն Մովսէսի։ Վտանգ ոչ սակաւք զամենեքումբք որ 'ի նաւին էին՝ անկանէր. բայց նա ոչ այնչափ զմարմնոյ որչափ զհոգւոյ վտանգս վարկանէր. վասն զի ամենեքին զմարմնոյ մահն կոծէին, իսկ նա զհոգւոյն. քանզի չև ևս էր առեալ զմկրտութիւն ջրոյն կենաց և փրկութեան, և ժամանեաց նմա ջուր մահու և կորստեան։ Եւ զինչ ապա արդեօք առնէր մեծն այն, որ նախ քան զվերջին ծնունդն զարդարեալ էր առաքինութեամբ։ Յարուցեալ 'ի բաց զերծուցանէր յինքենէ զզգեստն իւր, և ձայն աղաղակի ողորմ ուժգին գոչմամբ յերկինս բարձրացուցանէր. և այնչափ դառնացեալ ոգւով արտասուս հեղոյր, մինչև հիացուցանէր զամենեսին՝ որ 'ի նաւին էին, որպէս զի վասն անձանցն լրեալք՝ զնորայն հարցաքննէին զողբսն։ Իսկ նա զամե-

նայն մտածութիւնն յինքեան ամփոփեալ՝ զնա կարդայր յօգնականութիւն, որ միայն կարողն է սքանչելիս գործել։[1] ...ընդ ոմանց շշաւիւ... դրեաց... և ոմանն... փոխեաց զջուր... սդրեաց. և իւրոյ ժողո... գետ իւրով բնութեն... ոմն պահեաց։ Որ զԿարմիր ծովն իւրում ժողովրդեան եբաց, և զնոյն առ 'ի կորուստ խատին և ընդդիմամարտին պատրաստեաց. որ յանապատին զվէմն աղբերացոյց և զդառնութիւն ջուրցն քաղցրացոյց. որ տարածմամբ ձեռաց յօրինակ խաչի զԱմաղէկ մահացոյց, և նովին խորհրդով առանց պատերազմող ձեռաց և մեքենային՝ զբարձր պարիսպն Երիքովի յատակեաց։ Որ զկլեալ մարդարէն 'ի ջերմ որովայնի կիտին առանց հալման ամբողջ պահեաց, զնոյն նմա իբրև զնաւակ կազմեաց լի ոգով, և քարոզ հեթանոսաց առաքեաց։

Զայսոսիկ և որ սոցին նման գրեալ են յաստուածային գիրս, 'ի մի բերեր 'ի մաղթելն իւրում առաջի Աստուծոյ. այլ և դաշինս դնէր ոչ յապաղել զմկրտութիւնն՝ զկնի աղատելոյն 'ի կորստենէն. և նա ինքն բոլորովին պտուղ ապրեցուցանողին խոստանայր։ Եւ զինչ ապա յայնժամ. խնարհեցաւ 'ի պաղատանս նորա՝ այն որ ողորմածն է և արագ ժամանող 'ի խորոց սրտէ խնդրողացն զնա. և առժամայն զխռովութիւն ծովուն փարատէր, և զթանձրամած խաւարն 'ի յանօսր և 'ի յստակ օդս փոխէր։ Իսկ բարեպաշտ ծնողքն նորա զայս ամենայն անցս վտանգից յանուրջըս իմացեալ զգուշանային մանկանն, և յարաժամ աղօթիւք և յորդահոս արտասուօք աղաչէին զԱստուած օգնել այնմ վտանգելոյ անձինն. և վաղվաղակի տեսանէին տեսլեամբ գիշերոյ զորդեակն իւրեանց յետ պաղատանացն, զի յաղթէր զօրութեամբն Քրիստոսի՝ դիւացն դառնութեանն, որ յարուցին 'ի վերայ նորա զկործանումն, զոր յետոյ ինքն իսկ պատմեաց ծնողացն։ Իսկ որ 'ի նաւին էին, մի ոմն երիտասարդ որ խորհրդակից էր նորա, տեսանէր 'ի գիշերի 'ի սկզբանն խռովութեանն ծովուն՝ զերանելի մայր նորա, զի գայր 'ի վերայ ծովուն, և բուռն հարեալ

1. Յօր. այսպէս պակասաւոր էր։

զնաւէն հանէր 'ի ցամաքն։ Որ իբրև պատմեցաւ տեսին՝ վաղվաղակի հանդարտեաց ծովն։ Եւ որք 'ի նաւին էին ընթացեալք ընկեցին զանձինս առաջի Գրիգորի, խոստովանէին հաւատովք զԱստուած նորա օգնական լինել անձանց իւրեանց։ Զինչ նուազագոյն այս սքանչելիք քան զմեծին Եղիայի. զի որպէս նա աղօթիւքն իւրովք հուր յերկնից իջուցանէր 'ի պատարագն՝ զոր ընդդէմ մոլորելոցն 'ի կուռն Սիդովնացւոցն՝ մատուցանէր Աստուծոյ, մինչև սքանչանալ ժողովրդեանն և զՀշմարիտն Աստուած խոստովանել. այսպէս և Գրիգորիոս 'ի ձեռն պաղատանաց իւրոց, զաստիկ խռովութիւն ծովուն և զթանձրամած խաւարն 'ի յանօսր օդ և 'ի միջօրեայ փոփոխեաց։ Մինչ զի և որք 'ի նաւին էին՝ զՀշմարիտն Աստուած ծանուցեալ՝ փրկիչ և օգնական զնա միայն գոչ խոստովանէին։

Իսկ ապա վասն զի յոյժ տագնապէր զնա ուսմնասէր և իմաստասէր անուն Աթենացւոց, և վասն այնորիկ քաջալերեալ զուսումնակիցս իւր անդ հասանէր։ Նաև այլ ինն անապական խնդութեամբ, զոր պարտ է ասել, ընդոր անդ. վասն զի մեծն Բասիլիոս ելեալ 'ի Բիւզանդիայ յետ սակաւ ինչ ժամանակի եկն յԱթէնս. և տեսեալ զմիմեանս ուրախացան, յաղագս համագաւառք լինելոյ և զմի ուսումն ունելոյ։ Ցայնժամ ապա համաբնակք միմեանց լինէին և լծակիցք յառաքինութիւնս. վասն զի և զմի յոյս կոչմանն ունէին, և միով լուսով պայծառացեալք էին ճշմարիտ հաւատովն։ Իսկ առ իմաստիցն խնդիրս թէ որպէս 'ի միմեանց օգտութիւնս գտանէին՝ յայտնի ամենեցուն որք լծակիցք են իմաստութեան՝ երևի։ Վասն զի ոչ միայն 'ի միմեանց հարցաքննութենէ ծածկելոց իմաստիցն գիւտ յայտնի, այլ և ամրացեալ հաստատի։ Արդ սոքա որպէս իմաստուն երկրագործք 'ի միասին հանգանակեալք զեղն արօրաձիգ՝ պատառէին զքաղցր ակօսն պարարտ անդի մտաց իւրեանց, սերմանելով 'ի նմա զՀմտութիւն իմաստութեանն։ Իսկ առ հակառակութիւնս՝ զոր սիրէ մանկութիւնն՝ յոյժ համբերողք էին։ Եթէ 'ի դուռն ուրուք յայլոց քընտութիւնս հակառակութիւն հանդիպէր, սակայն և

յայն դժուարաշարժ լինէին. իսկ 'ի բարին դիւրաշարժք առ ամենեսեան ծագէին. և այնպիսի անուանի յամենեսեան երևեալք, մինչ գրեթէ և 'ի Հռոմայեցւոյ աշխարհն համբաւ նոցա հասեալ՝ մեծախորհ զնոսա անուանէին։ Զի թէպէտ և յայնքան բազմութեանց պատուեալ լինէին, և 'ի մէջ այնքան դիւրապատիր մարդկան միջի կային, սակայն զհոգւոյն առաքինութիւնն հաստատուն և անշարժ պահէին, և ոչ միոյ իրիք 'ի վայր քարշեալք 'ի հակառակացն, որպէս զի առ նոսա կատարեալ մարգարէականն ձայն. Վասն այսորիկ ոչ երկիցուք մեք 'ի խռովել երկրի, 'ի փոփոխել լերանց 'ի սիրտս ծովու։ Նաև ոչինչ նուազ ժուժկալութեամբն գտանէին քան զմեծն Հեղիաս և զերանելին Յովհաննէս Մկրտիչն՝ մեծն 'ի ծնունդս կանանց, վասն զի ծագիւ միով մատին միայն մերձենային 'ի կենցաղս։ Իսկ զփափկութիւնս մարմնոյ՝ որ առ հանդերձս է կամ առ կերակուրս, զայս ամենևին և ոչ միոյ իւիք արժանաւորք համարէին։ Եւ զինչ արդեօք ասացից, հանդերձ այլովք առաքինութեամբքն և զողջախոհութեանցն, որ մինչև 'ի վախճան անարատս զինքեանս Աստուծոյ ընծայեցին. հանդերձ այսու և անընչասիրութիւն նոցա յոյժ զարմանալի էր. զի թէպէտ և վասն համբաւոյ առաքինութեան մատուցանէին նոցա ինչս բազումս, սակայն նոքա իբրև յագահութենէ և յափշտակութենէ 'ի բաց փախչէին. զի ոչ, ասէին, 'ի վարձ առաք զիմաստութիւնս, եթէ 'ի վաճառաշահութիւնս զսա 'ի կիր արկանիցեմք։ Իսկ զանապատութիւն և զամբարհաւաճութիւնս՝ զայսոսիկ բնաւին իսկ հետակորոյս արարեալ 'ի բաց հալածէին իբրև զապականիչս իմաստութեան և զխափանիչս բարձրագունից իմաստութեան խորհրդոցն։

Իսկ վասն հանճարոյ նոցա զինչ պարտ է ասել, որոյ միաբան միախորհուրդ եղեալ ոչ դադարէին 'ի տուէ և 'ի գիշերի առ 'ի խոր բրել և գտանել զգանձս իմաստութեան, որպէս ասէ երանելին Յոբ։ Վասն զի յայսոսիկ փոյթ յանձին բերեալ առ 'ի զարդ անձանց և 'ի փարթամութիւն այնոցիկ որ նմանապէս կամիցին ստանալ. նաև զիմաստն արտաքնոցն, ոչ եթէ յա-

խուռն՝ի մի հաւաքել զչարս և զբարիս, որ մանաւանդ յանմտութիւն տանի, ժողովելին զոգտակարսն՝ի նոցանէ ամիոփեալ, որ ինչ ոչ ընդդէմ բերիւր աստուածեղէն իմաստութեանն, և զաւելորդսն զամենայն՝ որ ինչ միանգամ ըստ հեթանոսական աւանդութեանցն էր՝ ըմբոշխեալ՝ի բաց կտրէին. վասն զի զամենայն արուեստսն որ միաձայն է խրատուց գրոց սրբոց և քաղցրութիւն ոգւոց՝ միաբանութեամբ ուսան։ Իսկ զայնսն որ առ հեշտութիւնն բերէ, որ դառնութիւն ոգւոց է՝՝ի բաց լքին, այսինքն զթիւս խորհրդոց և զերկրաչափութեանն հաւասարութիւն, և զաստեղաց դրութիւնս և զշարժմունսն առ ծննդաբանութիւնս։ Իբրև նոր իմն զՄովսէս և զԴանիէլ յօտար աշխարհի զարդարեալք երևեցան աստուածային Հոգւոյն, մանաւանդ թէ առաւել քան զնոսա։ Վասն զի ոչ եթէ գերի տարեալք անդ ըստ հնոյ պատմութեանն, այլ մանաւանդ ըստ գրոց գերեալ զամենայն զնոցա միտսն՝՝ի հնազանդութիւնն Քրիստոսի. վասն զի զայս նախ առաջին գեղեցիկ պտուղս իւրեանց իմաստութեանն վարկանէին։ Եւ զինչ ևս այնուհետև. որպէս բանիցն կարդ է ասել, յայլմէ յայլ վազելով, և ոչ այս տկար առ գովութիւնս նոցա իցէ բանս մեր. այլ պարտ է աւանդել զնոսա իմաստութեանց գովութեանց Սողոմոնի, որ միշտ առ դրունս Դաւթի նստեալ գեգերին. և մեք յայլսն փութասցուք՝՝ի պատմութիւնն։

Արդ Բասիլիոս ընկալեալ զբարիոք գանձս իմաստութեան, ըստ նմանութեան իմաստուն վաճառականի վաճառաշահ եղեալ անդէն դարձաւ. իսկ Գրիգորիոս յաղագս այլ ուսումնակցացն՝ ոլք էին յԱթենացւոց անտի՝ յապաղեր զգնալն. վասն զի և ոչ իսկ տային թոյլ ելիցն նորա, այլ կալ անդէն և խրատել զնոսա յաստուածայինսն, այլ և յոյժ աղաչէին զնա ընդունել զաթոռ իմաստութեանն Աթենացւոց։ Իսկ նա սուղ ինչ կացեալ անդէն վասն հարկի աղաչանացն և վասն երախտաւոր բարեկամութեանն. և յետ այնորիկ՝՝ի ձեռն աղաչանացն հնազանդեցոյց ընդնոսա՝ գնալ առ ծնօղսն իւր։ Եւ էր այնուհետև ամաց իբրև երեսնից յորժամ եկն առ ծնողսն իւր։ Եւ իսկ և իսկ իբրև եկն՝ նախ ընկալաւ զաստուածային

մկրտութիւնն լուսաւորութեամբ սուրբ Հոգւոյն, և եդ սահման անձին իւրոյ ոչինչ խորհել 'ի կենցաղոյս իրս՝ որով 'ի վայր քարշի ամենայնն. նաև յառաջագոյն իսկ 'ի սոյն կրթեալ էր նախ քան զլուսաւորութիւնն։ Յետ այսորիկ որոշեաց զինքն 'ի քաղաքայնոց իրաց, յանապատն փութայր. զի թէպէտ և ցանկայր ընուլ զկարօտութիւն ծնօղացն, և լսել խրատու բարեպաշտութեան նոցա, սակայն զմտաւ ածելով զբաղմունսն՝ որ առ հոգս տանցն լինի, ոչ հաւանէր. և ապա այնուհետև կրօնաւորեալ ոչինչ ունելով յաշխարհէս, և թելադրէր զանձն իւր միայն աղօթից և ընթերցմանց սուրբ գրոց պարապելով։ Եւ յայսոսիկ յարաժամ հսկելով՝ սրբեալ զխորհուրդ սրտի իւրոյ, բազում անգամ տեսանէր զՔրիստոս, և խօսէր ընդ նմա տեսլեամբ գիշերոյ, և երանելի լինէր ըստ ձայնին. Երանելիք են այնոքիկ՝ որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն։ Ա. յոպիսի էր մեծն Գրիգորիոս. թողեալ զքաղաքաց գռեհս, զմասանոց հըպարտութիւն, զիշխանաց խստութիւն, զդատապարտելոց հակառակութիւնս, զգողոց զդաւաճանութիւնս, զհրապարակս սուտս, զմեծատանց ագահութիւնս, զվաճառողաց զերդմունս, զփարթամաց գոռոզութիւնս, զկարօտելոց տառապանս, զեղկեցելոց արբեցութիւնս, և զայլ ևս կարծեցեալ փառս մարդկան, որ պատրաստեալ պարաւանդեն զմարդիկ յերկնաչու ճանապարհէն, և պղտորեալ մթացուցանեն զմիտս, և ոչ տան թոյլ ընդունել զմուտս մաքուր լուսոյն։ Զայս ամենայն ոչ 'ի սկզբանէ կրօնաւորութեանն, այլ և 'ի մանկութենէ իսկ 'ի բաց լքանէր Գրիգորիոս։

Իսկ յորժամ հայր նորա հաղիւ ուրեմն բռնադատեալ զնա 'ի քահանայութիւն ձեռնադրէր, տես ապա զինչ գործէր. յայնժամ ապա թողոյր զեկեղեցին, փախստական լինէր 'ի Պոնտոս առ մեծն Բասիլիոս ուսմնակից իւր. վասն զի և ոչ վայելէր իսկ երկուց լուսաւորացս այսոցիկ բարժանեալս 'ի միմեանց լինել մարմնով, որք հոգւով և իմաստութեամբ ոչ էին բաժանեալք։ Յայնժամ ապա զոր առ միմեանս դաշնաւորեալք էին՝ 'ի վար արկանէին զառաքինութեան վարս, և միով հոգւով և միով դաւանութեամբ յան-

ձինս իւրեանց կրէին զխստամբերութեան զվարս կրօնաւորական հանդիսիւք. իբրու զի առ նոսա կատարէր տէրունական բանն. եթէ՝ Ուր երկուք կամ երեք ժողովեալ են յանուն իմ՝ անդ եմ ես 'ի մէջ նոցա։ Եւ զի՞նչ և ասացից վասն երանելի արանցս այսոցիկ, որք նման Մովսէսի բարձրացեալք առաքինութեամբք՝ ամրաձաձուկ եղեն ամպով Հոգւոյն սրբոյ յամենայն աշխարհական խառվութեանցս. և անդ ընկալեալ վարդապետութիւն Հոգւոյն սրբոյ, և առ 'ի նմանէ օրինադրեալք լինէին։

Յայնմ ժամանակի վախճանէր Կեսարոս եղբայրն Գրիգորի՝ որ ունէր զդիմոսական իշխանութիւն 'ի թագաւորացն, այսինքն 'ի վերայ շտեմարանաց գանձուցն։ Իսկ հայր նորա ծերացեալ ալեօք, այլ և ողբովք որդւոյն իւրոյ Կեսարոսի յոյժ թախծեալ՝ ոչ նեղէր միայնութեանն. նաև ընչից վախճանելոյն ոչ ոք կայր ժառանգորդ. վասն զի արհամարհեալ զծերութիւն նորա ամենեքեան իբրև զշունք 'ի վերայ ոսկոյ դիմեալ ջանային յափշտակել։ Յայնժամ ապա գրեալ թուղթս պաղատանաց՝ որպէս զի եկեսցէ առ նա։ Իսկ նա մեծ ինաս համարեալ անհնազանդ լինել հօրն, մանաւանդ այնպիսւոյ քահանայապետի և ծերունւոյ, թէպէտ և ոչ 'ի կամաց, սակայն վասն պատուիրանի հնազանդութեանն՝ եկն առ նա։ Եւ իբրև ուղղեաց զամենայնն՝ որ յաղագս ընդդիմացողաց ընչից եղբօրն, զմտաւ ածեալ զխաղաղական կենցաղս Պոնտոսի՝ կամէր դառնալ անդրէն։ Այլ թախանձեալ յոյժ 'ի ծերունի հօրէն, քանզի էր այնուհետև իբրև ամաց ինանեից, մնաց անդէն. զի թէպէտ և դժուարին էր, սակայն յուսով ակն ունէր մեծամեծաց վարձուց պատուիրանացն, որ հրամայեն պատուել զբարեպաշտ ծնօղսն։

Յայնմ ժամանակի յազգմանէ չարին բռնացեալ լինէր հերձուածն Արիոսի 'ի վերայ ուղղափառացն՝ 'ի ձեռն փոքր Կոստանդիանոսի թագաւորի, և զբազումս 'ի սրբոց քահանայապետիցն թագաւորական հրամանաւ արտաքսմանեցին յեկեղեցւոյ 'ի ձեռն զրպարտութեան իրիք պատճառանաց, և մեծ նեղութիւն էր այնուհետև ուղղափառ քահանայից և ժողովրդոց։

Վասն զի ոչ ունէին տուն աղօթից և ոչ իրաւունս յանօրինաց դատաւորաց. և գրէ եթէ ամենայն տիեզերս հաղորդեալ եղև 'ի պիղծ հերձուածն 'ի ձեռն գրոց թագաւորին, վասն զի ամենայն ուրեք տուաւ համարձակութիւն ամպարիշտ հովուացն արտաքսել զուղղափառ հովիւսն հօտին Քրիստոսի. որք առեալ զայսպիսի համարձակութիւն, իբրև գայլս ապականիչս վարատեալ ցրուէին զհօտն Քրիստոսի։ Արդ այսոցիկ այսպէս եղելոց՝ ոմանք յերկիւղէ սպառնալեացն զարհուրեալք, անկանէին 'ի բարձրութենէ ուղղափառութեանն, և այլք ընչիւք պատրեալք լինէին. և կէսք փաղաքշանօք մարմնական սիրոյ, և կէսք ինքնակամ։ իսկ որք ոչ էին հաստատեալ 'ի ճշմարտութիւն՝ ձեռնագրով հաղորդէին հայհոյութեանն։

Արդ զինչ ևս ասացից վասն այլոց, որ և ծերունի հայրն երանելոյն անկանէր 'ի կարթն սատանայի. թէպէտ և ոչ մինչև խսպառ թոյլ տայր ճշմարտութեանն կալ բարեպաշտին 'ի կործանմանն։ Իսկ կրօնաւորք գաւառին այնորիկ ոչ ներելով նմա՝ 'ի բաց հատանէին զինքեանս 'ի հաղորդութենէ նորա, նմանապէս և ժողովուրդն 'ի բաց կացին 'ի նմանէ։ Զինչ ապա առնէր յայնժամ երջանիկն Աստուծոյ մեծն Գրիգորիոս. նախ առեալ զոմանս 'ի ճգնաւորացն, նոքօք հանդերձ պաղատանս մատուցանէր ամենատեառն, խնդրելով զլուծումն չարեացն, և ապա կարգէր զանձն իւր 'ի լռութիւնն, զի զխռովութիւն երեւեցուցանէր առ ծերունի հայրն։ Յետ այսորիկ խրատէր զնա և խնդրէր զթողութիւն անկմանն 'ի ձեռն խոստովանութեան ճշմարտութեանն, և նզովելով զպիղծ հերձուածն զի և ամպրոպ խռովութեան դարձցի, ասէ, և խաղաղութիւն և միաւորութիւն յեկեղեցիսն Աստուծոյ հաստատեսցի. որպէս և եղև իսկ։ Վասն զի առ ժամայն կանգնէր անկեալ հովիւն, և ժողովեալ միաւորէր 'ի գաւիթս ուղղափառ եկեղեցւոյ զբարեպաշտ հօտն։ Այսպէս լուսաւոր վարդապետութեամբն իւրով խմաստունն Գրիգորիոս արագ բաժրշկէր զհիւանդացեալսն, և հանդարտեալ խաղաղացուցանէր զխռովեալսն, և հուպ առ միմեանս միա-

ւորէր զբացակացեալն։ Եւ զայն ոչ եթէ յայնմ քա-
ղաքի միայն առնէր, այլ գրեթէ զամենայն իսկ բնա-
կիչսն գաւառին զօձտեալսն 'ի միմեանց զՀովիւս և զգ-
հօտս՝ բանիւք խաղաղականօք ածեալ միաւորէր 'ի մի
կաթողիկէ առաքելական եկեղեցի։

Իսկ վասն զի չարիք մերոց քրիստոնէիցս բազմա-
նայր առ 'ի յարհամարհութիւն և 'ի լուծումն աս-
տուածային պատուիրանացն, վասն այնորիկ և նա ին-
քըն երկայնամիտն Աստուած, թոյլ տայր յառնել 'ի
վերայ մեր զպիղծն Յուլիանոս Պառաւատոս, որ թարգ-
մանի յանցաւոր. վասն զի անարգեաց զՀաւատն՝
զոր ընկալեալ էր 'ի սրբոց նախնեացն, յերանելւոյն
Կոստանդիանոսէ մեծէ, և հակառակ զինքն Քրիս-
տոսի առնէր. և ամենայն հնարիւք ջանայր որոշել
զքրիստոնեայսն 'ի Ճշմարիտ հաւատոցն. և զայսոսիկ
թէպէտ և ոչ յայտնի հալածանօք, սակայն 'ի ծա-
ծուկ հնարէր խորամանգ խորհրդովք. և օրինադրէր
ամենայն ուրեք մի՛ ընդունել զքրիստոնեայսն 'ի դըպ-
րոց հելլենական ուսմանցն։ Իսկ նեռոզութիւնն Աս-
տուծոյ թոյլ տուեալ նմա զամս երկուս և զամիսս
վեց, թերևս զղջացի յամպարիշտ մտացն. իբրև ե-
տես ամենատեսն զանզղջանալին, արագապէս թե-
քեաց զբարկութեան սուրն, ըստ արժանի ամբարշտու-
թեան նորա։ Եւ զբարբարոսական և զդաղանական
կեանս նորա 'ի բաց խզեր 'ի նմանէ, 'ի սահմանս բար-
բարոսացն. զոր և երանելին Գրիգորիոս արձանացու-
ցանելով զչարութիւն ամբարշտին. բայց այսոքիկ յե-
տոյ. այլ մեք զնովիմբ ածեալ զբանս անդրէն դարձ-
ցուք։

Արդ իբրև ետես իմաստունն Գրիգորիոս, զի հան-
դերձ այլովք չարեօքն զոր սահմանեաց 'ի վերայ քրիս-
տոնէից ամպարիշտն Յուլիանոս, այսինքն զընչիցն յա-
փըշտակէն, 'ի զինուորական պատուոյն ունայն առնել,
և զայս ևս օրինադրեաց չարութեամբն իւրով, զի մի՛
ուսցին մանկունք քրիստոնէից զիմաստութիւնս Հել-
լենացւոց, տես թէ զինչ առնէր. գրեաց Ճառս աս-
տուածաբանականս առ 'ի յանդիմանութիւն Յու-
լիանոսի, և զՀելլենացւոց իմաստութիւնս՝ ոչինչ 'ի
պէտս երևեցոյց քրիստոնէից ուսմանց։ Վասն զի ա-

մենայնն ասէ առասպելք են և սուտ պատմութիւնք բազմաստուածութեանն մոլորութիւնք. և զօգտակարսն ամենեցուն հասարակաբար առաջի եդ ողջախոհիցն, որ է արդարև արժանի գովութեան, իմաստնոյն սքանչելի պատմութիւնքն։ Քանզի երևեցոյց զրով բանս քերականս պէսպէս իմաստիւք զանազանեալս, որ և յոյժ իսկ օգտակար է առ բարեպաշտութիւն. վասն զի աստուածաբանութիւն է առ ստոյգ դաւանութեան եռակի անձնաւորութեան և միոյ բնութեան, և գովութիւն առաքինութեան, և հոգւոյ և մտաց աղօթից առ Աստուած, և փախչել յամենայն պակշռոտութեանց և շաղփաղփութեանց զանջելոց առասպելեաց բազմաստուածութեանց խաբէութեանց։ Զայսպիսի իմաստութեամբ վարդապետութիւնս հաստատէր առ 'ի յուսումն քրիստոնէից մանկանց, և 'ի բաց կալ յառասպելաբանութեանցն ըստ նախանձու ամբարշտին՝ զոր յաչաղանաք հրամայէր։ Զոր և ինքն իսկ անօրէնն զգայր զհակառակն իւրոյ օրինադրութեան հանդիպեալ։ Քանզի վեհագոյն տեսանէր զԳրիգորի իմաստն, հանդերձ բարեպաշտութեան վարդապետութեամբն, քան զիւրայոյն արտաքնոց հանդերձ առասպելաբանութեանն։

Եւ ոչ միայն թէ այսու իմաստասիրական ուսմամբս, զոր առ բարեպաշտութեան դպրոցն կարգեաց իմաստունն Գրիգորիոս՝ յանդիմանէր զնա, այլ և նախ քան զթագաւորութիւնն, մինչդեռ երկոքինն մանկունք գոլով էին յԱթէնս, և բարեկամացեալ յաղագս ուսմնակցութեան, զլինելոցն անօրէնութիւն՝ աստուածային իմաստութեամբն յառաջագոյն զգուշացուցանէր նմա։ Նա տեսիլ իսկ մանկանն յայտնի ցուցանէր զամպարշտութիւն նորա. զի էր տեսիլ կերպարանաց նորա լի խռովութեամբ, և ծաղրալից տեսողաց. դէմք գազանակերպ, և մարմին այլանդակ և անհեթեթ. խօսք լի անմտութեամբ, մտօք և արդեամբք դիւրաշարժ յամենայն չարիս. իսկ կրթումն առ բարեպաշտութիւնն և ժուժկալութիւն, և ամենայն գովք առաքինութեան յոյժ արհամարհեալ էին 'ի նմանէ։ Զայս ամենայն տեսանելով Գրիգորիոս՝ յառաջագոյն զլինելոցն չարիս, և զպատառումն 'ի բարե-

պաշտուԹենէն՝ յայտնէր նմա։ Իսկ նա ոչինչ օգտեալ յայտմանէ. վասն զի անձամբ անձին խաւարեցուցեալ էր զաչս մտացն։ Եւ այսպէս կարծեալ ԹագաւորուԹիւն նորա՝ որ ամբարտաւանուԹեամբն խրոխտայր 'ի վերայ քրիստոնէից, չարաչար յանդիմանեցաւ. և չարն չարաւ 'ի բաց լարձաւ, ոչ այլ ինչ շահեալ յաստուծոյ՝ բայց միայն զնիւԹ յաւիտենական տանջանացն, բազում առաւելուԹեամբ գանձեաց անձին իւրում։

Յայնմ ժամանակի էր 'ի Կեսարիա Կապադովկացւոց եպիսկոպոս սուրբն Եւսեբիոս։ Իսկ մեծն Բասիլիոս ընկալեալ զաշտիճան քահանայուԹեանն, և վասն պատճառանաց իրիք նախանձու ԹշնամուԹեամբ՝ զոր ընդդէմ բերէր նմա՝ 'ի բաց հեռանայր 'ի նմանէ 'ի Պոնտոս։ Յայնժամ բազմուԹիւնք հերձուածողաց 'ի միասին գումարեալք և երԹեալք 'ի Կեսարիա, մաքառեալք ընդ մայրաքաղաքացի եպիսկոպոսին Եւսեբի. իսկ նա ԹէպԹ և պարկեշտ գոլով վարուք, սակայն ոչ ունելով զկրԹուԹիւն աստուածաբանական իմաստից՝ ընդդէմ կալ հերետիկոսաց երկնչէր։ Յայնժամ առաքէր ԹուղԹս պաղատանաց առ մեծն Բասիլիոս լուսաւորիչն, խոստովանելով անբանաբար առնել զԹշնամուԹիւն, և աղաչէր արագ հասանել և պատերազմակից լինել մայրաքաղաքիս եկեղեցւոյն Կեսարու։ Իսկ երանելին դիւրահաւան գոլով առ բարեպաշտուԹիւնն՝ վաղվաղակի հնազանդեալ գնաց անդ, մանաւանդ վասն մարտի ուղղափառ դաւանուԹեանն. և իբրև զքաջ զինուոր Քրիստոսի մտեալ 'ի յամուրս հերձուածողաց՝ զամենայնն վեր 'ի վայր կործանէր, և զստուԹիւն նոցա իբրև զանարիս փախստական առնէր առաջի ԱշմարտուԹեանն։ Քանզի այսպէս ամենայն ուրեք մարդասիրուԹիւնն Աստուծոյ յամենայն դարս ներգործէ զզօրուԹիւն իւր գործակցուԹեամբ ծառայից իւրոց. որպէս և յայսմ ժամանակի զսոսա զերկուս լուսաւորս յարոյց, զմեծն Բասիլիոս ասեմ և զԳրիգորիոս, որք սիրով հոգւոյն միացեալք, հրդեհեալ այրեցին 'ի յանդէ եկեղեցւոյն Քրիստոսի զբուսեալ փուշ հերձուածոյն՝ որ բուսաւ 'ի վարդապետուԹենէ սատանայի։

Յետ սակաւ ինչ ժամանակի վախճան հասանէր սրբոյ նախասացեալ մայրաքաղաքացի եպիսկոպոսին Եւսեբիոսի։ Իսկ երանելին Գրիգորիոս՝ գրէ ըստ իւրում իմաստութեան թուղթս հաւանականս 'ի մայրաքաղաքն Կեսարիա, որպէս զի ձեռնադրեսցեն փոխանակ նորա յաթոռ եպիսկոպոսութեան զմեծն Բասիլիոս. և զայս ոչ եթէ ըստ մարմնական ինչ սիրելութեան առնէր, այլ ծանեաւ Հոգւոյն սրբով զայն չափ ուղղափառութեան եկեղեցւոյ Քրիստոսի՝ որ նովաւ կատարէր։ Արդ իբրև ձեռնադրեցաւ յաթոռն Կեսարու՝ սուրբն Բասիլիոս, մեծ ուրախութիւն լինէր ուղղափառացն կողմանց. բայց ապա յայլ կողմանէ աշխատութիւն հասանէր առն Աստուծոյ, քանզի յիշխանասիրութենէ ոմանց յերկուս մասունս բաժանեալ լինէր երկիրն Կապադովկացւոց, որ յառաջագոյն էր մի վիճակ ընդ իշխանութեամբ մայրաքաղաքին Կեսարու։ Քանզի այսպէս նախանձ և իշխանութիւն՝ 'ի սպանութիւն կործանէ, և 'ի հաւատոյ ևս վրիպեցուցանէ. և զայսոսիկ 'ի Կայենէ, և յոր Յովհաննէս աւետարանիչն ամբաստան լինի՝ ուսանիմք։ Յայնժամ մեծն Բասիլիոս թէպէտ և այսպէս տեսանէր զերկիրն բարժանեալ՝ ոչինչ գրէր, այլ անդէն վաղվաղակի զեկեալ հիւանդութիւնն բժշկէր, և վասն առաւել խնամակալութեան եկեղեցեացն՝ և զեպիսկոպոսունսն 'ի գաւառին բազմացուցանէր։

Արդ իբրև կամեցաւ Սաղեմացւոց եկեղեցւոյ ձեռնադրել եպիսկոպոս, զմտաւ ածեալ ոչ զայլ ոք լինել պիտանի այր եկեղեցեաց, բայց եթէ մեծն Գրիգորիոս. և զայսոսիկ խորհրդակցութեամբ ծերունւոյն այնորիկ սքանչելւոյ հօրն Գրիգորի խորհրդածէր։ Արդ իբրև բռնադատեալ լինէր այրն Աստուծոյ առ 'ի հընազանդել. և նա նախ զառաջասացեալ լռութիւնն և զոչինչ կամել ունել յաշխարհէս առաջի եդեալ պատճառէր. և ապա զտեղին ևս Սաղեմայ անյարմար և բաղում խռովութեամբ լի, 'ի հարկաց թագաւորացն միջի կալով, և զձիրնթացսն 'ի վերայ իւր ունելով, և այսպիսի պատճառք յոյժ խափան առ նեղութեան խորհրդոյն։ Իսկ ապա իբրև ոչ հաւանէր, վասն զի կամէր առանց հոգոյ և զբաղմանց կալ 'ի կենցա-

ղումն, աղաչէին զնա զի յանձն առցէ զվերակացութիւն Անձիանձու եկեղեցւոյն, փոխանակ Ծերունւոյ հօր իւրոյ. և զայս ոչ աղաչանօք միայն, այլ և անէծս ևս խառնեալ եթէ ոչ հնազանդեսցի։ Իսկ նորա յանձն առեալ զմատակարարութիւն խորհրդոյն, քանզի մինչև իսպառ ընդդէմ կալ հրամանաց հօրն՝ ոչ սակաւ վտանգ համարէր. և ասէր այսպէս. Ո՛վ հայր պատուական, ասէ, և այս մի ծածկեալ լիցի 'ի քոյին իմաստութենէդ, զի թէպէտ և բռնադատեալ լինիմ, սակայն զնախախնամութիւն և զսպասաւորութիւն շնորհացն՝ որ 'ի ձեռն քո հաւատացաւ ինձ յԱստուծոյ, ոչ է պարտ անտես առնել, այլ հարկ է յեկեղեցի Աստուծոյ մատակարարել։ Յայնժամ և հայր նորա ժամանեալ ասէր ցնա. Լեր ինձ, ո՛վ որդեակ իմ, մինչ դեռ կենդանի եմ՝ գաւազան ծերութեան, զի և պարգևեալն քեզ մեծամեծ շնորհ յԱստուծոյ՝ հայրական օրհնութեամբ հաստատեսցի 'ի վերայ քո. իսկ յորժամ վախճանեալ լինիմ, որպէս կամիս զհաճոյսն Աստուծոյ՝ այնպէս արասջիր։ Արդ յետ ձեռնադրութեան սրբոյն Գրիգորի եպիսկոպոս Անձիանձու՝ ծերունի հայր նորա կացեալ ժամանակս ինչ, և հասեալ մինչև յամս հարիւրերորդս, և մայր նորա Նունի նոյնպէս սակաւ ինչ քան զայս ժամանակս, բարիոք քաղաքավարութեամբ փոխադրեալ եղեն յառժամանակեայս 'ի մշտնջենաւորն և յանծերանալի կեանսն։ Իսկ սրբուհի քոյր նորա Գորգոնիա և Կեսարոս եղբայր նորա, սոքա նախ քան զծնօղսն վախճանեցան. և նորա պատուեալ զնոսա թաղմամբ և գերեզմանական բանիւք բարեվայելչացուցեալ. և պատարագօք և ողորմութեամբ 'ի Քրիստոս աւանդեալ, որ արդարև ըստ առաքելական կանոնին, արժանի աստուածային պատուիրանացն զքահանայութիւնն ընկալեալ, նախ բարիոք վերակացու լեալ բարեպաշտ ծնողաց և տան իւրում, և ապա եկեղեցւոյ Աստուծոյ վերատեսուչ հաստատեցաւ։

Արդ կացեալ մեծն Գրիգորիոս յեկեղեցին սակաւ ինչ ժամանակս յետ վաղճանի ծնօղացն, և զմտաւ ածեալ զառաջին զուխտն անզբաղութեան, թողեալ անդէն զեկեղեցին գնայր 'ի Սելևկիա, և ժամանեալ

անդ բնակէր 'ի տաճարի սրբուհւոյն Թեկղի աշակերտին Պաւղոսի առաքելոյն։ Զայսոսիկ արարեալ նորա՝ զմտաւ ածէր Թերևս այլ ոք ձեռնադրեսցի փոխանակ նորա յեկեղեցին Անձիանձու։ Իսկ յորժամ 'ի տեսչութենէն Աստուծոյ վերադարձեալ եղև յեկեղեցին և եգիտ զհօտ իւր առանց հովուի, բազում մաղթանս եկեալ մատուցանէին առաջի նորա հանդերձ արտասուօք, որպէս զի անդէն հաստատեսցի յաթոռ իւր։ Իսկ Թէպէտ և ոչ կամէր վասն զառանձնական կեանս սիրելոյ, սակայն բռնադատեալ լինէր 'ի բազմութենէն, որք մեծաւ Թախանձանօք պաղատէին։

Յայնմ ժամանակի տեսեալ մեծն Բասիլիոս զնուազութիւն եղբարցն, և զպակասել սիրոյն 'ի բազմութենէ անօրէնութեանն, զի զախտացեալսն իբրև զպիղծ ինչ համարեալ մարդատեցութեամբ անտես առնէին, որում բազում մարդասիրութեան և ախտակցութեան պէտք էին։ Եւ խորհուրդս բարեպաշտութեան զմբտաւ ածեալ, որ ամենեցուն է վայելուչ, մանաւանդ բարիոք առաջնորդաց եկեղեցւոյ. և կոչեցեալ առ ինքն զերանելին Գրիգորիոս՝ գործակցութեամբ նորին շինէ տունս մեծամեծս 'ի տեղիս տեղիս պատշաձաւորս առ 'ի հանգիստ աղքատաց և ախտաժետաց. և կարգէն արս հաւատարիմս և իմաստունս սպասաւորս տանցն, և զամենայն տկարս և զհաշմանդամս անդր ժողովեալ, և մատակարարեալ նոցա 'ի ձեռն արանց վերակացուացն զհասս տարեւորս մտից եկեղեցւոյն, որպէս յայտնի իսկ ցուցանէ Ճառ բանիցն Գրիգորի, որ յայնմ ժամանակի իմաստասիրեաց յաղագս աղքատասիրութեան, և յորդորումն և փոյթ մարդասիրութեան մանկանց եկեղեցւոյ, մանաւանդ ուսմնասիրաց և աշխատասիրաց ընթերցողաց, որ հոգւով միտ եդեալ նայիցին 'ի ծածկեալ գանձս իմաստնոց և բանասիրաց։

Արդ պատմեցից զզօրութիւն և զսքանչելիսն զոր գործեաց նոքօք Աստուած 'ի Բիւզանդիա, և յայլ բազում քաղաքսն 'ի մէջ հերձուածողացն, որպէս երբեմն 'ի ձեռն մեծին Մովսէսի և Ահարոնի յԵգիպտոս և յամենայն զիս նոցա սքանչելագործեաց։ Վասն զի աղանդն Արիոսի և Մակեդոնի և Եւնոմիանոսի,

որ 'ի ժամանակս փոքր Կոստանդիանոսի արմատացաւ 'ի յեկեղեցիս Աստուծոյ, և առաւել բռնացեալ լինէր 'ի վերայ ուղղափառաց կողմանց, 'ի ժամանակս Վաղէսի կայսեր։ Իսկ ապա 'ի Թագաւորել մեծին Թէոդոսի բարեպաշտի զարթոյց նախախնամ ողորմութիւնն Աստուծոյ զՀոգի երանելւոյն Գրիգորի Աստուածաբանի, առ 'ի յայց եկանել կորուսելոցն յապականողաց անտի. և որպէս յայնժամ տեսեալ Աստուծոյ զչարչարանս աբրահամեան զաւակին յեգիպտոս, առաքեաց նոցա փրկիչ զՄովսէս՝ ասելով. Ե'կ, առաքեցից զքեզ յեգիպտոս. քանզի լուայ, ասէ, զՀառաչանս նոցա և իջի 'ի փրկել զնոսա. այսպէս կանխեաց յառաջագոյն, և առաքեաց զԳրիգորիոս զայրն Աստուծոյ 'ի Բիւզանդիա 'ի բաց լքանել զխաւար հոգւոյն զպիղծ հայհոյութիւնն 'ի Ճշմարիտ հաւատոցն որդւոյն Աբրահամու։ Վասն զի որպէս վերագոյնն ասացաք, 'ի բռնանալ պիղծ հերձուածոյն 'ի Թագաւորական քաղաքն, առաքէ բողոք բարեպաշտ Թագաւորն Թէոդոս առ մեծ քահանայապետքն Աստուծոյ Բասիլիոս և Գրիգորիոս՝ գալ պատերազմել ընդ պատերազմողն եկեղեցւոյ սրբոյ։ Իսկ սուրբն Բասիլիոս առ ժամանակ մի յապաղեալ զգալն իւր, փութացուցանէր զիմաստունն Գրիգորիոս՝ բաւական գոլ զնա առ 'ի վանումն հերձուածողաց մարտիցն։ Իսկ նորա եկեալ 'ի Կոստանդինուպոլիս, եգիտ յոյժ Թափուր մնացեալ զեկեղեցիս ուղղափառաց յամենայն ուղղադաւան հօտապետաց. միայն փայլէր իբրև զառագաստ ինչ նուազեալ 'ի վերայ լերին։ Բայց միայն տաճարն Անաստասայ՝ որ այժմ կոչի սուրբ Յարութիւն, և նա Թերևս արհամարհեալ էր, վասն զի փոքր էր զառաջինն։ Արդ իջավանեալ անդ սրբոյն Գրիգորի, և պատերազմեալ՝ պարսաքարեաց աստուածային վարդապետութեամբն 'ի գունդս հերձուածողացն, որպէս և Դաւիթ զայլազգին, և վանեալ ցրուեաց զնոսա քակտելով զամուրս նոցա։ Եւ գերեաց զամենայն ըմբռնեալսն 'ի նոցանէ, որ քակեալք էին 'ի կողմանէ Ճշմարտութեան, իբրու զի անդ իսկ կատարէր ասացեալն 'ի գիրս սուրբս. ասէ. Տունն Դաւթի երթայր և մեծանայր, և տուն Սաւուղի

նուազէր։ Անդ էր տեսանել բազմազան ինն բարեկարգութիւն 'ի գալստեան սրբոյն, վասն զի զոմանս որսացեալ լինէր ուռկանաւ բարեպաշտութեանն և զայս[1] ախորժելով։

Արդ 'ի վերայ այսոցիկ ուղղութեանց սրբոյն, ոմանք յարիանոսացն լցեալք բարկութեամբ, և այլք նախանձու չարութեամբ ըմբռնեալ՝ գործակցութեամբն սատանայի, պատերազմէին ընդ նմա, այլ և հերքեալք լինէին 'ի ճշմարտութենէն։ Իսկ նոցա քաջ քաջ 'ի փախուստ դարձեալ, երևեցաւ այլ ոմն հայհոյիչ՝ Ապողինարէս անուն, ազգաւ Ասորի։ Սա այլ ինն առանձնակի չարափառութիւնս ուսուցանէր ապականամիտ վարուք. վասն զի կիսակատար ասէր զփրկական մարդեղութիւնն Տեառն, և ոչ փառաւորէր զխորհուրդ տնտեսութեանն 'ի բովանդակ փրկագործութեանն. այլ ասէր մարմին առնուլ Բանին՝ առանց մտաւոր և բանաւոր հոգւոյ. փոխանակ այնորիկ զբանն Աստուած 'ի սոսկ մարմին բովանդակեալ։ Եւ ինքն էր բանաւոր հելլենական ուսմամբն. և այնպէս զբաղումն աւազակէր 'ի պարզամտացն 'ի վիհս կորստեան։ Իսկ քաջ հովիւն երանելին Գրիգորիոս իբրև ետես զսուրբ ոչխար հօտին Քրիստոսի յանխնայ փողոտեալ յապականիչ գայլուէն, արիաբար պատերազմէր և ընդ այն ևս օձտող գազանին։ Յայնժամ միաբանեալ լինէին Ապողինարոսքն ընդ Արիանոսքն և ընդ հոգեմարտն իբրև զչարագև արս հակառակեալ ընդդէմ Գրիգորի։ Վասն զի տեսանէին զինքեանս պարտեալս 'ի ճշմարիտ բանէ նորա վարդապետութեանն. և գտեալ դիպող ժամանակս իւրեանց չարութեանն՝ յարեան 'ի վերայ առնն Աստուծոյ քարամբ և բրօք, որպէս երբեմն Հրեայքն 'ի վերայ Ստեփանոսի։ Սակայն օգնականութեամբն Աստուծոյ հովանաւորեալ 'ի վերայ նորա՝ անգործ առնէր զզայրացումն. և որպէս յայնժամ անտեսութեամբ դատապարտեաց զՀրեայսն՝ Աստուած Բանն, յորժամ յարտեան լերինն հանեալ գահավէժ հանդերձեալ էին առնել զնա, այսպէս և առ երանելեաւս սքանչելագործէր։ Իսկ

1. Թերևս՝ զայս։

Գրիգորիոս ոչինչ զայրացեալ ընդդէմ դրդուեցելոցն 'ի չարէն, այլ և նմանեալ իւրումն Տեառն հեզին և խոնարհին՝ ոչինչ պատասխանէր, միայն հանդարտութեամբ սաղմոսէր ասելով. Թէպէտ և գնացի ես 'ի մէջ ստուերաց մահու՝ ոչ երկեայց 'ի չարեաց. զի դու, Տէր, ընդ իս ես։ Որ Թէպէտ և ոչ չարչարեալ լինէր, սակայն վկայ առանց տանջանաց և պսակաւոր առանց չարչարանաց միայն 'ի յօժարութենէն երևէր. վասն զի որպէս երանելի վկայքն ընդ կռապարիշտսն, այնպէս և նա ընդ ուրացողսն ՀՀմարտութեանն պատերազմէր, նմանող եղեալ սրբոց հարցն, երանելւոյն ասեմ Պետրոսի Աղեքսանդրու հայրապետին և Աթանասի։

Արդ այսոցիկ այսպէս եղելոյ՝ բռնադատեալ լինէր 'ի բարեպաշտ ինքնակալէն և յուղղափառ կողմանցն՝ հաստատիլ յաթոռ հայրապետութեանն Կոստանդիանուպոլսի։ Եւ այս յաւէտ յիրաւի. վասն զի ուր վաստակք և քիրտն աշխատութեան՝ անդ և վարձ ժառանգութեան առաքելական աթոռոյն։ Իսկ չարն յորժամ ետես պատրեալ զինքն և զՀՀմարտութիւնն թագաւորեալ, տեսս ապա զինչ արդեօք գործէր. յաբուցանէր զոմն Մաքսիմինոս անուն հակառակ Գրիգորի, որ էր ազգաւ եգիպտացի այլ և բարբարոս բարուք, և արդեամբք և կերպարանօք, նաև գործովք ևս առաւել. վասն զի ղրովայնամոլութիւն և զագահութիւն անպատկառ կրէր յինքեան իբրև զշուն. իսկ տմարդութեամբ և անողորմութեամբ յոյժ առաւելեալ էր իբրև զՆաբաղ, հմուտ և տեղեակ էր իմաստութեանն Հելլենացւոց։ Սա եկեալ զառաջինն առ սուրբ հայրապետն մեր Գրիգորիոս՝ աշակերտեցաւ 'ի նմանէ, և վերստին ծննդեամբն լուսաւորեցաւ 'ի նմանէ. և այնչափ կեղծաւորութեամբն մերձաւոր եղև սրբոյն՝ մինչև սպասաւոր և համասեղան ևս առնել զնա։ Յետ այսորիկ և սպասաւոր սեղանոյն և սարկաւագ, ապա և քահանայ ձեռնադրեցաւ, և այսպէս միաւորեցաւ 'ի դասս ժառանգաւորաց եկեղեցւոյն։ Այլ Թէպէտ և այսպէս բաղում պատուոյ արժանաւորեցաւ 'ի սրբոյ հայրապետէն, սակայն նմանեալ Յուդայի, միշտ զչարութիւնն ժողովէր 'ի սիրտ իւր,

դաւաճանել զվարդապետն իւր, և սատանայական փառասիրութեամբ մոլեալ՝ կամէր յափշտակել զաթոռ հայրապետութեանն թագաւորական քաղաքին։ Եւ ապա գտեալ դիպող ժամանակ իւրոյ չար դաւաճանութեանն, որ զի բարեպաշտ թագաւորն Թէոդոս երթեալ յարևմուտս կոյս տալ պատերազմ ընդ բարբարոսն. իսկ Մաքսիմինոս գտեալ զոմն անուանեալ քահանայ 'ի Նիւսիա քաղաքէն համախոհ իւր, որ էր ստացեալ ինքեան գործ զփողոց վաճառականին Կոստանդինուպօլսի. սոցա առեալ ոսկի բազում մատուցանէին առաջի սինկղիտոսացն, որպէս զի տացեն նմա զաթոռ հայրապետութեան. և առեալ անտի իշխանութիւն, առաքէն այլ ևս բազում գանձս ոսկւոյ և արծաթոյ յԱղէքսանդրիա առ Պետրոս եպիսկոպոս, որ ունէր զաթոռ սուրբ աւետարանչին Մարկոսի զկնի երանելւոյն Ա.թանասի։ Որ և նոյն ինքն իմաստուն Գրիգորիոս 'ի նմանէ հաստատեցաւ յաթոռ Կոստանդինուպօլսի։ Ա.յդ իբրև ընկալաւ զոսկին՝ ոչինչ հարցաքննեաց զվարս առնն, այլ վաղվաղակի առաքեաց զոմն եպիսկոպոս ձեռնադրել զնա։

Իսկ յորժամ եկին առաքեալքն և մտին յեկեղեցին 'ի ժամ առաւօտու, ոչինչ զգացուցանելով հայրապետին և այլոց ժառանգաւորացն, նաև ոչ բարեխոհից կողմանց ժողովրդեանն, այլ իսկ և իսկ ձեռնադրութեան սկիզբն արարեալ հոգս առնէին։ Իսկ յորժամ լու եղև և յականջս կղերիկոսացն և ժողովրդեանն՝ բորբոքեցան նախանձու չարութեան, և հասեալ 'ի վերայ խափանէին զանկարգութեան առաջարկութիւնս նոցա. զոր հազիւ ուրեմն մազապուրծ լեալք փրծանէին 'ի խառվութենէ ամբոխին։ Իսկ ապա նոքա քանզի ապահութեամբ և փառամոլութեամբ արբեալք էին՝ ոչ 'ի բաց կացին 'ի նանիր խորհրդոցն, այլ գործակից առեալ ինքեանց զորոշեալսն յեկեղեցւոյն, և երթեալք ձեռնադրեցին զՄաքսիմոս 'ի տան ռամկի ուրումն։ Զայս լուեալ բազմութիւն քաղաքին բորբոքեալ սրտմտութեամբ յարձակէին 'ի՛ վերայ նոցա, եթէ ոչ սրբոյն Գրիգորի արձակեալ լինէր զզայրացումն նոցա։ Որ թէպէտ և այսպէս կարձեալ լինէին յանդուգն յարձակմանէն, սա-

կայն բաղում պարծաւանս հեղուին 'ի վերայ Մաքսիմոսի. այլ և յոյժ մեղադիր լինէին սրբոյն Գրիգորի, որ այնչափ զնա առ պատուականս ունելով՝ յայսպիսի յանդգնութիւն համարձակեաց։ Իսկ երանելին հեզութեամբ և հանդարտութեամբ ցածուցանէր զամբոխն. Մի՛ բարկանայք, ո՛վ որդեակք, զի ո՛ գիտէ ըզմիտս մարդոյ, բայց եթէ այն որ ստեղծն զնա, որ և 'ի միտ առնու զամենայն զհանդերձեալսն իբրև զեղեալս, վասն զի մարդ հայի յերեսս ըստ ասացելոյ աստուածային գրոց. այլ և աշակերտելով մեր Ճշմարիտ վարդապետին Միածնի որդւոյն Աստուծոյ, և զամենեսեան կոչէ ընդունել զքաղցր լուծ նորա և ըզթեթև բեռն. որ և ասացն իսկ, եթէ՝ Որ գայ առ իս ոչ հանիցս արտաքս։ Նաև այս մեծ էր Մաքսիմոսի մկրտել ինձ զնա առ 'ի պաշտել զԵրրորդութիւնն փոխանակ Աստուծոյ. զի ոչինչ պակաս եգիտ 'ի մէնջ ըզսէրն որ առ նա, որպէս և Տէր մեր Յիսուս Քրիստոս երևեցոյց առ մատնիչն, և ուսոյց մեզ. վասն զի և այսպէս պարտ է մեզ կատարել զոր առաքն, թէպէտ և նա յետոյ եցոյց զծածկեալ կեղծաւորութիւն իւր։ Եւ այսպէս խաղաղացուցանէր զժողովուրդն։

Իսկ Մաքսիմոս 'ի նոյն միտս յամառութեան կացեալ անզգլանալի, առեալ զձեռնադրողն ինքեան զեպիսկոպոսն Եգիպտացւոց՝ ընդ առաջ ընթացաւ բարեպաշտ ինքնակալին Թէոդոսի 'ի Թեսաղոնիկէ, խնդրել զաթոռ Հայրապետութեան Կոստանդինուպոլսի. քանզի եկեղեցականքն ոչ կարաց, հնարէր թագաւորական իշխանութեամբն յափշտակել զաթոռն։ Իսկ բարեպաշտն Թէոդոս բարկութեամբ հրաման ետ հանել զնա յերեսաց իւրոց, այլ և մեծամեծ սպառնալեօք 'ի թագաւորական քաղաքէն հալածել։ Իսկ նա թէպէտ և այնպէս տեսեալ զինքն ամօթալից եղեալ յամենայնի, սակայն փառամոլութեամբն անզգայացեալ՝ տակաւին ևս լքեր. և երթեալ յԱղեքսանդրիա և տուեալ ոսկի բաղում եպարքոսի քաղաքին՝ որպէս զի անդ յափշտակեսցէ զաթոռն Պետրոսի. զոր իբրև լուեալ բազմութիւն քաղաքին Աղեքսանդրու՝ մեծ բարկութեամբ դղրդեալ լինէին։ Զոր եթէ ոչ նոյն ինքն եպարքոս քաղաքին

խաղաղացուցեալ էր զաղմուկն, բաղում սպանութիւնք գործեալ լինէին։ Յայնժամ ապա հալածէր զնա յԱղեքսանդրէ, զոր և յետոյ իսկ ընկալաւ զհատուցումն չարաչար հարուածովք ըստ արժանի յանդգնութեան իւրում։

Արդ այսոցիկ այսպէս եղելոյ՝ մեծն Գրիգորիոս իբրև խլեաց զապականիչ հերձուածն, և հաստատեաց զարմատս առաքինութեան 'ի Կոստանդինուպոլիս, կամեցաւ անդրէն դառնալ 'ի քաղաք իւր, մանաւանդ թէ յանզբաղական կեանս իւր. և ժողովէր զամենայն բազմութիւնն, խրատէր զնոսա պահել զՃշմարիտ աւանդութիւնն, զոր ընկալան 'ի նմանէ, և զառաքինութիւնն՝ զոր արդեամբք նախանձեցոյց և ուսոյց նոցա։ Զոր իբրև լուան 'ի նմանէ զհրաժարական բանն՝ բազմութիւնն ժողովրդեանն հանդերձ ժառանգաւորօքն, ամենեքեան զմի արտասուս կաթեցուցանէին. և զաղաղակ բարձեալ առ հասարակ ծերք և տղայք, արք և կանայք, իշխանք և ռամիկք, իմաստունք և տգէտք, միաձայն ողբս 'ի բերան առեալ լային զորբութիւնն իւրեանց 'ի քաջ հովուէն։ Յայնժամ մի ոմն 'ի ժողովրդենէն իմաստութեան բանս բարբառեցաւ առ նա, այսպէս ասէր մեծաւ ձայնիւ. Ո՛վ հայր սուրբ, գնաս 'ի մէնջ, կարծեմ թէ և դաւանութիւն սրբոյ Երրորդութեան՝ զոր բազում քրտամբք հաստատեցեր՝ 'ի բաց բառնայ 'ի հօտէ քումմէ. վասն զի արդ հօտ առանց հովուի գոլով՝ կարիցէ՞ զդէմ ունել բազում գայլոցն որք նորաձայնութեամբք իբրև պատառող ժանիւք վարատեն 'ի սուրբ ուղղափառ գաւթէ եկեղեցւոյ։ Զայս լուեալ սրբոյն՝ հաւատնէր կալ անդէն յեկեղեցւոջն՝ մինչև ցհաւաքումն ժողովոյն, որ հրամայեցաւ լինել 'ի բարեպաշտէն Թէոդոսէ, որպէս զի փոխանակ նորա զայլ ոք ձեռնադրեսցեն վերատեսուչ հոգւոց նոցա։ Եւ այսպէս հաւանեալ ժողովոյն գնացին յիւրաքանչիւր յարկս։

Իսկ երանելւոյն այնուհետև ընդարձակագոյն վարդապետութեամբն զամենեսեան լուսաւորէր, և իբրև իմաստուն երկրագործ զամենայն ինաստակարան արտաքս հանէր յանդոյ եկեղեցւոյ Քրիստոսի. որպէս զի սերմն Ճշմարիտ առաքելական վարդապետու-

թեանն յամենայն վնասակարաց արտաքոյ եղեալ պտղաբերս արասցէ։ Վասն զի պարտ է մեզ, ասէ, զոր առաքեալքն բազում երկամբք սերմանեցին աշխատեալ, որպէս զի զնոյն յաստուածային շտեմարանս ժողովեսցուք. վասն զի հասարակաց է վայելումն. զի որք սերմանեցին, ասէ, և որք հնձեսցեն՝ առ հասարակ ցնծասցեն։ Նաև ոչ թէ բանիւք միայն ուսուցանէր, այլ և առաւել արդեամբք զինքն ամենեցուն յայտնի ցուցանէր, ըստ առաքելական խրատուն՝ որ առ Տիմոթէոս. Օրինակ լինիջիր, ասէ, հաւատացելոց՝ բանիւք, գնացիւք, հաւատով, սիրով, մինչև գամ ես. վասն զի յայսցանէ առաւել ձգին աշակերտք զկնի վարդապետաց, քան թէ որ բանիւք միայն ճարտարին։ Վասն այսորիկ և երանելին Գրիգորիոս յամենայն աշխատութիւնս որ առ ժուժկալութիւնն էր՝ նախ ինքն համբերէր, և այլոց ուսուցանէր։ Իսկ զողջախոհութիւն և զհեզութիւն և զքաղցրութիւն՝ առաւել և կրէր յինքեան։ Նաև զիմաստութեան ըզբանն ոչ առ ամենեսեան հաւասարապէս հաւատարմացուցանէր, այլ նմանեալ իմաստուն բժշկաց՝ ըստ իւրաքանչիւր ցաւոց զդեղն բարժանէր։ Վասն զի առանկատարսն՝ ոչ զկատարեալ խորհուրդսն վստահանայր. և 'ի կատարելոցն ոչ թաքուցանէր, իբրև յաճախելով զօգուտ նոցա. նոյնպէս և առ յանդիմանութիւնսն, զոմանս՝ առանձինն, որոց ոչ յանցանքն յայտնի էր. իսկ զյայտնիսն՝ հրապարակաւ, որպէս զի և այլքն երկիցեն. զոմանս սակաւուք, որպէս և Տէր իսկ հրամայեաց, և երանելի առաքեալք նորին. ոմանց զսպառնալիս տանջանացն առաջի դնէր և զայլսն յորդորէր անձառ խոստմամբն. ոչ ընդ փաղաքշանս ուրուք մեղկէր առ գովութիւնն, և ոչ առ նախատանս հակառակողացն թուլանայր 'ի լաւագունից։ Նաև բանք նորա յոյժ քաղցրագոյնք էին և խոնարհագոյնք իբրև զմեղր, որպէս զի զամենեսեան ախորժելով ձգէր առ ինքն՝ յորժամ վասն առաքինութեանն խօսէր. իսկ 'ի յաւանդութիւնսն՝ յոյժ բարձրագոյնք էին բանք նորա, յորժամ վասն սրբոյ Երրորդութեանն աստուածաբանութիւնս իմաստասիրէր, զնոյն օրինակ բերելով որոյ և զանուն ընկալաւ,

զմեծն ասեմ, և զարժանի զարմացման զորդին Որոտ-
ման, զաստուածաբան զաւետարանիչն Յովհաննէս.
ունէր և զՀոգին իմաստութեան և գիտութեանն.
որպէս և յայտնի իսկ ցուցանեն աշխատասիրացն՝ Ճառք
վարդապետութեան նորա։ Նաև 'ի մարգարէութենէ
ոչինչ նուազեալ գտանէր, որպէս և ասէ իսկ ինքն 'ի
միում Ճառից անդ իւրում՝ որ 'ի գալուստ եպիսկոպո-
սացն. յորժամ [1] յիշէ զՅովսէփ յԵգիպտոս ատելու-
թեամբ յետ փոքր ինչ վաթսուն ելեալ։ Այծէ և 'ի մէջ
զմարգարէն, ասէ. Այդի յԵգիպտոսէ փոխեցեր, հա-
ներ զՀեթանոսս և զնոսա տնկեցեր. և որ զինի ասա-
ցեալն է 'ի մարգարէէն։ Եւ ապա յառաջ մատուցեալ
ասէ. Ո՞յք, ասէ, լերինք այնոքիկ, և զոյս ոմանս ըզ-
մայրսն զայնոսիկ իմանայր. այնպիսի երբեմն հաւա-
տրս այս. և այսպէս այժմ բարի ստացուածք և ըն-
դարձակեալ։ Եւ եթէ ոչ ևս կատարելապէս՝ այլ
սակայն յայնոսիկ առ սակաւ սակաւ Ճանապարհո-
գեաց յաւելուածս, մարգարէանամ թէ և Ճանա-
պարհորդեսցէ։ Զայս ինձ Հոգին սուրբ կանխաւ ա-
սէ, եթէ ինձ մարգարէական ես և տեսանող առա-
ջնիկայիցն, և միանգամայն կանխաւ ժամանեցելովքն
վստահանամ։

Եւ արդ ոչ հեռագոյն ինչ, այլ անդէն իսկ 'ի մօտոյ
մարգարէութիւն երանելւոյն կատարէր 'ի ժամանակս
բարեպաշտին Թէոդոսի, իբրև զՃառագայթս արե-
գական այնպէս ծագեալ ծաւալեցաւ ուղղափառ վար-
դապետութիւնն ընդ ամենայն տիեզերս. եկեղեցիք
Քրիստոսի աՃեցեալ բազմացան իբրև զաստեղս երկ-
նից։ Եւ զի՞նչ պարտ է ասել, թէ ո՛րչափ տօնախմբու-
թեամբ Ճառիւք զարդարեաց զեկեղեցիս ուղղափա-
ռաց, և կամ ո՛րպէս իմաստք նորա բարձրագոյն է
քան զբազմաց։ Իսկ վասն հեզութեան և քաղցրու-
թեան նորա՝ թէ ո՛րչափ էր, արդիւնքն վկայէ, զոր 'ի
ժամանակին յայնմիկ ցուցանէր. զոր ամենեցուն բա-
րիոք է ստանալ, ևս առաւել վարդապետաց, որպէս և
նոյն ինքն հասարակաց վարդապետն մեր Յիսուս Քրիս-
տոս եցոյց և ուսոյց։ Զի 'ի ժամանակս ուղղափառաց

1. Հատուածդ յորժամ... Հոպահանամ եղծեալ էր յօրինակին։

զոր առին իշխանութիւն 'ի վերայ հերձուածողացն, միշտ ինքուցանէր երանելին զգայրացումն նոցա առ 'ի հատուցանել չար փոխանակ չարի նոցա։ Եւ ասէր այսպէս. Միթէ ո՞չ զայս պահանջէ 'ի մէնք Քրիստոս, որդեակք. միթէ ո՞չ այսպէս ուսուցանէ զմեզ աւետարանն, դարձուցանել զմեղուցեալսն յապաշխարութիւն, և զմոլորեալսն 'ի գիտութիւն ճշմարտութեան. որպէս զի այժմ ծանուցեալ զմեղս իւրեանց, անկցին առաջի Տեառն խոստովանութեամբ. և խառնեսցին 'ի հաւատս սուրբս, նախ քան զգալ աւուրն վրէժխնդրութեան ամենայն մեղաւորաց որք ոչ ապաշխարեցին. և վասն այնորիկ բազում խնամատարութեամբ երկայնամիտ լերուք 'ի վերայ նոցա, ո՛վ դուք արք կատարեալք. զի և ոչ միայն պարտ է ներել նոցա, այլ և սիրել և բարի առնել և զԱստուած աղաչել, քանզի և զայսոսիկ պատուիրեաց մեզ Քրիստոս։ Իսկ եթէ 'ի վերայ այսր ամենայնի ոչ զղջասցին, այլում աւուր դատաստանի և դատաւորի զնոսա թողացուսցուք. վասն զի ինքն ասաց. Իմ է վրէժխնդրութիւնք, ես հատուցից, ասէ Տէր։ Եւ այսպիսի բանիւք հեզութեամբ և հանդարտութեամբ ուսուցանէր իւրում ժողովրդեանն։

Իսկ բարեպաշտ թագաւորն Թէոդոս՝ իբրև վանեաց զբարբարոսսն որ յարևմուտս, և դարձաւ յաղթութեամբ մեծաւ, բաղում աւար և գերի ընդ իւր բերելով ըստ արժանի նոցա ամպարշտութեանն. և ընկալաւ զսուրբ քահանայապետն Աստուծոյ մեծաւ պատուով։ Եւ ըստ արժանի նորա վաստակոցն՝ ընդարձակագոյն բան գովութեանն և շնորհակալութեանն մատուցանէր նմա, և 'ի կատարման իւրոյ գովութեանցն այսպէս ասէր. Ո՛վ հայր սուրբ, կարծեմ եթէ յառաջատեսողութիւնն Աստուծոյ վստահանալով 'ի քո աշխատասէր խմաստութիւնդ՝ զեկեղեցի իւր, թոյլ ետ ժամանակ մի պատերազմողացն յառնել 'ի վերայ քո, որպէս զի յաղթող զօրութեամբն իւրով՝ զկարծեալ զօրութիւն թշնամւոյն պարտեսցէ քեզ, և զեկեղեցի իւր մեծամեծ յաղթութեամբք պսակեսցէ։ Բայց վասն զի քո է վաստակն և քիրտն, քո եղիցի և պսակն. և ես ահաւասիկ տաց զտաճարս

զայս և զաթոռ հայրապետութեան, մանաւանդ և նոյն ինքն Աստուած քեզ յանձն արար զսա։ Իսկ ե-ռանելին լի եղև շնորհօք Հոգւոյն սրբոյ, ետ ողջոյն Թագաւորին և աղօթիւք հաստատեաց զամենապարգև թագաւորութիւն նորա, և եկ 'ի նմանէ։

Արդ մինչև ցայսվայր արիանոսքն ունէին զտունն Աստուծոյ, և վասն այնորիկ իբրև լուան 'ի թագաւորէն՝ պատերազմէին ընդ սրբոյն։ Քանզի յայտնի ոչ իշխէին 'ի յահէ թագաւորին, սակայն 'ի ծածուկ մարտնչէին. և երբեմն զի առ նա իսկ եկեալ պաղատանս մատուցանէին, որպէս զի խնդրեսցէ 'ի թագաւորէն դարձուցանել անդրէն 'ի նոսա զտաճարն սուրբ. և այսպէս զ աղտնի և յայտնի սպառազինէին ընդդէմ նորա։ Եւ յաւուր միում խորհուրդ արարին դաւով սպանանել զնա 'ի գիշերի սրով. և քանզի զայս ոչ կարացին գործել վասն բազմութեանն որ կային շուրջ զնովաւ, սակայն երկոքին կողմանքն 'ի միմեանս յարձակեցան սուսերամերկք իբրև 'ի պատերազմունս բարբարոսաց. նաև 'ի փողոցամէջս քաղաքին ուր և հանդիպէին՝ կագէին ընդ միմեանս. բազում հառաչանք լինէր այնուհետև կանանց և տղայոց 'ի բազմութենէ երկոցունց կողմանցն։ Եւ եղև յաւուր միում մինչդեռ մնանէր թագաւորն յեկեղեցին՝ հանդերձ հայրապետաւն 'ի ժամ առաւօտուն, և եղև մառախուղ մթագին մռայլապատ, շուրջ առեալ զարեգակամբ ըստ ոչ սովորութեան արարածոցս. իբրև տեսին զայս արիանոսքն խնդալից եղեալ՝ կարծեալ որպէս թէ վրէժինդիր եղև նոցա Աստուած փոխանակ 'ի բաց հանելոյ զնոսա 'ի տաճարէն Աստուծոյ. և յայնմանէ բազումք 'ի պարզամտաց կողմանց ուղղափառացն՝ երկմտութեան կարծիս բերելով 'ի միտս իւրեանց գայթակղէին։

Իսկ իբրև մտին 'ի տաճարն սուրբ՝ հայրապետն և թագաւորն հանդերձ բազմութեամբ ժողովրդեանն, և միաբան համբարձին զձեռս իւրեանց մեծամեծք և և տնանկք, արք և կանայք, ծերք և տղայք, լի արտասուօք պաղատանս ամենատեառն մատուցանէին։ Եւ յանկարծակի մինչև էր կատարեալ նոցա զօրհնութիւնն՝ 'ի բաց գնացեալ ամպոյն և մառախղոյն, ծա-

գեաց լոյս արեգականն առաւել քան զսովորական պայծառութիւնն, և տաճարն Աստուծոյ հրաշալի լուսով լուսաւորեցաւ, և միտք մարդկանն առաւել ևս հաստատեցան 'ի սէր սրբոյ հայրապետին։ Եւ սկսան միաձայն միով կամաք աղաչել զԹագաւորն, որպէս զի տիրապէս հաստատեսցէ յաթոռ հայրապետութեանն։ Իսկ երանելին քանզի ոչ ախորժէր զայսպիսի գովութեան բանս ընդունել, դժուարէր ընդ վայրաձայնութիւն ժողովրդեանն. յայնժամ 'ի ձեռն առն ճշմարտախօսի լռել հրամայէր ժողովրդեանն. քանզի ինքն իսկ ոչ կամէր խօսել ընդ ժողովրդեանն, առ 'ի յոյժ նուազելոյ ձայնին 'ի յառաւելութենէ ժուժկալութեանն. Ո՛վ որդեակք իմ, լռեցէք յայդպիսի ձայնէ. քանզի թէպէտ և ոչ կամիմք մեք՝ սակայն հարկ 'ի վերայ կայ զմատակարարութիւն շնորհաց Հոգւոյն սրբոյ որ հաւատացաւ մեզ՝ 'ի գործ արկանել. զայս ասացեալ լռեաց ժողովուրդն։ Իսկ Թագաւորն յոյժ զարմանայր ընդ առաւել խոնարհութիւն առնն ի մասանոյ։ Եւ այսպէս ժողովուրդն ուրախութեամբ մեծաւ գնայր յիւրաքանչիւր յարկս. և պատերազմն դադարեաց, և հողմակոծեալ նաւն եկեղեցւոյ 'ի նաւահանգիստն եհաս, և սուրն մերկացեալ՝ 'ի պատեանս ժողովեցաւ։ Եւ այս ամենայն եղև և կատարեցաւ 'ի ձեռն աստուածասէր Թագաւորին և սրբոյ հայրապետին։

Իսկ երանելին Գրիգորիոս թէպէտ և ոչ կամէր, վասն զի յոյժ հաճեալ էր ընդ անզբաղութեան միանձնութեանն, սակայն բռնադատեալ 'ի Թագաւորէն և 'ի բազմութենէ ժողովրդոցն հաստատեցաւ յաթոռ հայրապետութեանն։ Իսկ Թագաւորն իբրև արդարոյ և սրբոյ հօր և հայրապետի և քահանայապետի Աստուծոյ՝ զարժանի պատիւն բարժանեաց նմա. զի թէպէտ և արտաքնոց իմաստիցն չէր տեղեակ բարեպաշտն Թէոդոս, սակայն հեզութեամբն և հանդարտութեամբն և ուղիղ դաւանութեամբն և խաղաղասէր մտօք առ եկեղեցիս՝ յոյժ առաւելեալ էր քան զամենայն Թագաւորսն. նա և աղօթիւք մասամբք՝ ևս առաւել, քանզի յայն առաւել պարապէր քան 'ի Թագաւորական հոգսն։ Իսկ երանելին Գրի-

գորիոս թէպէտ և զթագաւորն այսպէս բարեպաշտութեամբ տեսանէր զարդարեալ, սակայն որք առաջի կային թագաւորութեանն նորա՝ զնոսա տեսանելով 'ի կաշառս և յարծաթասիրութիւն և 'ի զարդարանս, որ մանաւանդ նմա արհամարհեալ և ատելի էր, և վասն այնորիկ ոչ յաձախս պարապէր մտանել անդր, այլ և աղօթից և տքնութեանց և վարդապետութեանց և հիւանդաց այցելու և բժիշկ կարի առաւել փոյթ էր, և վասն այնորիկ յապաղէր զմտանելն իւր առ թագաւորն. և երբեմն զի յագարակս հեռանայր լռութեան տալոյ զինքն, զի յոյժ փափաքելի էր նմա անապատ։ Արդ այսպէս յամենայնի աշխատասէր էր երանելին. իսկ 'ի յապարանսն թագաւորի և իշխանի մտանել՝ յապաղկոտ էր։ Նաև վայելչապէս 'ի մտի ունէր զառակախօսին բանն. Ի տուն բարեկամիքդ, ասէ, մի՛ յաձախեր բազմակոխ լինել, դուցէ ատիցէ զքեզ։ Եւ այսպէս քաջ հովիւ երևեցաւ նմանեալ Տեառն իւրում։ յամենայն երկրաւորաց 'ի բաց ցեայ լինելով, զի յայնքան առատութենէ մտիցն եկեղեցւոյն, 'ի զանազան զարդուցն և յազգի ազգի պատուական անօթոցն և յանբաւ գանձուցն՝ ոչ ստացաւ անձին իւրում և ոչ մինչև 'ի դանգ մի, այլ զամենայնն աղքատաց և որբոց և այրեաց հրամայէր մատակարարել. նաև զծախս ագարակացն վիճակի եկեղեցւոյն ոչ ձշդիւ պահանջէր 'ի մատակարարացն. և ոչ զգիրս քսակացն համարով խնդրէր, զի զայս այսպէս առնել, ասէ, վաձառականացն է՝ քան թէ արանց եկեղեցականաց և իշխանաց, այլ ոչ եթէ եպիսկոպոսաց. այլ մեզ, ասէ, պարտ է նախ քան զամենայն զանձանց զիւրիզձ մտաց մաքրել, և ապա յամենայնէ պարապել, միայն զամենեսեան խրատել և ուսուցանել զառաքինութիւն ոգւոց։ Յայնմ ժամանակի հասանէր հիւանդանալ նմա մերձ 'ի մահ, և անկեալ դնէր երանելին 'ի վերայ վանդակապատ մահճացն 'ի սենեկի անդ. և ահա բազմութիւնք ժողովրդեանն եկեալ 'ի դուռն սենեկին և 'ի տանիսն՝ տեսանել զնա։ Իսկ նա ի՛ջուցեալ զոտս իւր 'ի վանդակապատէ անտի՝ նստէր 'ի վերայ յատակի տանն և հարցանէր զպատձառս գալստեանն։ Իսկ նոքա շնորհախնդիր էին 'ի

նմանէ, աղօթս առնել 'ի վերայ թագաւորին և ինքեանց, այլ և 'ի վերայ ամենայն ուղղափառաց եկեղեցեաց. և նորա աղօթս արարեալ 'ի վերայ նոցա, ուրախացեալ գնացին 'ի սուրբ հայրապետէն։ Իսկ մանուկ մի մնաց անդ, և բուռն հարեալ զոտից սրբոյն լայր և կոծէր, և եղուկ զինքն ասելով, և պաղատէր առ նա թողուլ նմա զյանցանս իւր. իսկ նա հարցանէր զպատճառս պաղատանացն. և նա ոչինչ տայր պատասխանի, բայց միայն գլխակորեալ ողբայր և խնդրէր զքաւութիւն։ Իսկ մի ոմն յայնցանէ՝ որ մօտ կային՝ ասէ ցնա. Ով հայր սուրբ, պատանիդ այդ սպանողն քո է, որ հանդերձեալ էր 'ի սադրելոյ ոմանց դաւաճանութեամբ իւիք զսուր իւր մխել 'ի քեզ, այլ պահպանողական աջ Քրիստոսի որ մերձ էր առ քեզ՝ ոչինչ ետ խորհրդոց նոցա յանդ ելանել. իսկ սա որպէս թէ յիւրմէ կողմանէ կատարեաց ըզյանդգնութիւնն, և վասն այնորիկ ողբա 'ի բերան առեալ լայ և կոծի։

Յայնժամ երանելին յարտասուս եղեալ խանդաղատէր 'ի վերայ նորա ասելով. Մի երկնչիր որդեակ, հաշտեսցի ընդ քեզ Քրիստոս, բարերարն և մարդասէրն և անոխակալն, միայն խոստովանեա զմեղս քո և նզովեա զպիղծ հերձուածն, և մատիր առաջի Աստուծոյ ուղղափառ դաւանութեանն։ Եւ այսպէս մխիթարէր զնա վարդապետական շնորհօք, և հաստատեալ 'ի ճշմարիտ հաւատս և խաղաղութեամբ արձակէր։ Իսկ քաղաքն ամենայն իբրև լուան և տեսին զայսպիսի անոխակալութիւն և զբարեգթութիւն սրբոյն՝ առաւել ևս հաստատեցան և բևեռեցան 'ի սէր նորա։

Յայնմ ժամանակի դային ժողովէին 'ի Կոստանդինուպօլիս հարիւր և յիսուն եպիսկոպոս, յամենայն կողմանց՝ որ է ընդ իշխանութեամբ Հռովմայեցւոց, բայց միայն յԵգիպտացւոցն. և այս եղև հրամանաւ ինքնակալին, որպէս զի 'ի ձեռն ժողովոյն հաստատեսցեն զԳրիգորիոս յաթոռ հայրապետութեանն. և զոր 'ի ժամանակին բուսաւ հերձուածն Մակեդոնիի՝ արտաքս խլեսցեն յեկեղեցւոյն Քրիստոսի։ Եւ քանզի զհերձուածն ընդդիմամարտին Մակեդոնիի և զԵւնոմիոսի և զԱրիանոսի, և զբազումս այլս՝ երանելին

Գրիգորիոս իբրև զքաջ հովիւ նախ քան զգալ ժողովոյն հալածէր 'ի հօտէն Քրիստոսի. իսկ 'ի գալ ժողովոյն՝ պատերազմակից նոցա լինելով և զմնացեալ ևս նշխարս հերձուածոյն 'ի բաց վարեցին, նզովելով զազանգս նոցա։ Յայնժամ ապա սուրբ ժողովն հաստատեցին զնոյն ինքն զԳրիգորիոս յաթոռ հայրապետութեանն՝ որպէս և էր յառաջագոյն, ըստ կամաց թագաւորին և ժողովրդոյն. և զայս արարին առաջնորդութեամբ սրբոյն Մելիտոսի եպիսկոպոսին Անտիոքայ, որ էր այր սուրբ և կատարեալ առաքինութեամբ. որ և 'ի ժամանակս Վաղեսի կայսեր բազում չարչարանս կրեալ յարիանոսացն, և բազում ժամանակս արտասահմանեալ 'ի մետաղս վասն ուղղափառութեանն. արդ սորա խորհրդակցութեամբ հաստատեցաւ Գրիգորիոս յաթոռ հայրապետութեան թագաւորական քաղաքին։ Իսկ նա թէպէտ և զառաջինն դժուարէր, սակայն վասն փափաքանաց և վասն իւրոյ առատապարգև շնորհացն զոր ընկալեալ էր 'ի Հոգւոյն սրբոյ՝ զբան վարդապետութեանն առ 'ի կարող գոլ կերակրել զայնքան բազմութիւնն՝ յանձն առնու զվերատեսչութիւնն։ Եւ դարձեալ կասկածէր գուցէ այլ ոք 'ի հակառակորդաց ընկալցի զաթոռ թագաւորական քաղաքին, և իշխանութեամբ զբազումս յետս դարձուսցէ 'ի ՀՀմարտութենէն։ Վասն այսր ամենայնի լուծանէր զփափաքումն իւր որ առ անզբաղ կեանս միանձնաւորութեանն. և հաւանէր ժողովոյն և երանելւոյն Մելիտոսի, հաստատէր յաթոռ հայրապետութեանն։ Յայնժամ ապա վախճան հասանէր սրբոյն Մելիտոսի անդէն 'ի Կոստանդինուպոլիս, և սուգ առ բազմութիւն քաղաքին 'ի վերայ նորա։ Իսկ սուրբն Գրիգորիոս 'ի մէջ ժողովոյն բարիոք զարդարեալ վայելչացոյց զոր կատարման նորա, գերեզմանական բանիւք վարդապետութեամբ։

Յետ սակաւ ինչ ժամանակին հասին և որք յԵգիպտոսէն էին կոչեցեալք եպիսկոպոսքն 'ի Կոստանդինուպոլիս, մինչդեռ անդ էին նախասաց հարիւր և յիսուն եպիսկոպոսքն։ Եւ 'ի մարդկեղէն խորհուրդս անկեալ հակառակէին ընդ ժողովոյն, որպէս թէ առանց նոցա կամաց հաստատեցին զԳրիգորիոս յաթոռ

հայրապետութեան. ոչ եթէ առ ատելութեան ինչ նորա զայս առնէին, այլ վրէժխնդիր լինէին առանց նոցա կամացն ձեռներէց լինելոյ։ Յայնժամ ապա և ոմանք 'ի ժողովոյն համախոհ լեալ նոցա՝ սկսան լծակցիլ լինել. կէսքն զԳրիգորիոս ասէին բարիք լինել, որում և յառաջագոյն վիճակեցաւ, և այլք զայլ ոմանս։ Իսկ նորա կացեալ 'ի մէջ ժողովոյն ասէ ցնոսա. Ես, ո՛վ հովիք և սուրբ հովուապետք, զիշխանութիւն քահանայապետութեանս ոչ այլ ինչ ինձ վարկանիմ՝ բայց միայն քիրտն և աշխատութիւն. և վկայէ ժամանակն՝ որ նախ քան զգալուստ ձեր՝ թէ որչափ ջան վաստակոյ եհաս ինձ. վկայէ և եկեղեցիդ ուղղափառաց, թէ յորքան նուաղութենէ՝ յայդքան մեծութիւն առաւելութեան եհաս։ Բայց և յուսացեալ եմ թէ այդ ամենայն գանձեալ պահի ինձ յաւուրն հատուցման իւրաքանչիւր վաստակոց։ Այլ և ես ոչ եթէ փառաց ցանկացող եմ և կամ բարձրագահ աթոռոյ և կամ թագաւորական քաղաքաւս երևելի լինել, այլ վասն սիրոյ և փափաքանաց հօտիդ և թագաւորական հրամանացն, և ձերոյդ իսկ յառաջագոյն առ հասարակ բռնադատելոյդ զիս, ընկալայ զաթոռս զայս։ Բայց այժմ ոչ ուղիղ թուի ինձ զայս գործել ձեզ, զի ոչ ամենեքեան միաձայն լինիք յայսոսիկ, զոր դուք ձերովք կամօք արարէք։ Այլ ես այսուհետև առանց տրտմութեան կամաց 'ի բաց կամ յաթոռոյս, և դուք զոր խորհիքդ գործեցէք։ Վասն զի յոյժ սիրական է ինձ անապատն այն զոր կանխաւն ստացայ. զի որպէս թուի ինձ եթէ ոչ այնոքիկ օտարացուցանէ զմեզ յԱստուծոյ, այլ մանաւանդ և մերձաւորս իսկ առնէն զփախուցեալն 'ի նաւակոծէ զբազմանաց ալեաց աշխարհիս, և ապաւինիլ 'ի խաղաղ նաւահանգիստն։

Արդ զայս ասացեալ և ինքն անդրէն ելանէր 'ի տանէ եպիսկոպոսարանին, և յայլում տեղւոջ բնակէր հեռագոյն յեկեղեցւոյն։ Յայնժամ բազումք 'ի ժողովրդոյն առ նա ընթացեալք, անկեալ առ ոտն լի արտասուօք պաղատէին ասելով. Ո՛վ հայր սուրբ, ողորմեաց հօտի քում՝ զոր բազում քրտամբք և աշխատութեամբ ստացար. մի թողուր զձեռատունկ քո՝

զոր կենդանական ջրով Հոգւոյն սրբոյ բղխելոյ յորովայնէ քումմէ՝ հաւատովք մնուցեր և աճեցուցեր։ Տուր զառաւելութիւն շնորհաց քոց սիրողացս քոտուր զմնացեալ կեանս քո՝ ժողովրդեան քո. և այդր[1] թերևս զսակաւս՝ յորոց վերայ բազում ժամանակս զհիւթ կենաց քոց մաշեցեր. որպէս զի ողբ 'ի կենդանութեան քում լուսաւորեցաք 'ի յորդառատ վարդապետութեանցդ քոց, և 'ի կատարմանն՝ ընկալցուք զշնորհս վարդապետութեանն 'ի նշխարաց քոց։

Զայս լուեալ երանելւոյն յարտասուս եղեալ, և իբրև զհայր գթած խանդաղատէր զնոքոք, և դարձեալ սփոփէր զնոսա, և հաւանեցուցանէր դադարեցուցանել յողբոցն։ Եւ համբարձեալ զաչս սրտից իւրոց առ Աստուած՝ աղօթս մատուցանէր, որպէս զի տնօրինեսցէ նմա զօգտակարսն...։

1. Այդպէս յօրինակին։

Պատմութիւն վարուց Սրբոյն Գրիգորի Սքանչելագործի։

Սքանչելագործն Գրիգորիոս էր 'ի քաղաքէն Նէոկեսարու 'ի ժամանակս Սեւերեզիանոսի կայսեր, հեթանոս ծնողաց որդի, այլ Աստուած յորովայնէ ընտրեաց և որոշեաց զնա։ Վասն որոյ 'ի զարգացմանէ հասակին տղայութեամբ՝ անապատի ընտանեցաւ, և Քրիստոսի ընծայեցաւ. հրաժարեալ յամենեցունց, 'ի բաց կացեալ 'ի հասակակցացն, 'ի տեսարանացն, 'ի պաճուճեալ պատմուճանաց, 'ի փափկութեանց, 'ի գինարբուաց. լինէր նմա առաջին ստացուած առաքինութիւն, և նախ քան զայն երկիւղն Աստուծոյ. և նոցին լծակից իմաստութիւն և ուսումնասիրութեան փոյթ. և սոցա դաստիարակ զժուժկալութիւնն ունէր. իսկ անհպարտութիւն և ընչից արհամարհանք՝ ընդաւոյս էր նորա։ Որպէս Աբրահամ թողեալ զերկիր ծննդեան իւրոյ զհետ գայր կոչողին, նոյնպէս և մեծն Գրիգորիոս թողեալ զմոլորական հարց իւրոց աղանդն, խնդրեաց զարդար և զճշմարիտ հաւատն. և եկեալ 'ի խորհրդական ծնունդն, որպէս ոչինչ աղտ ունելով առ մեղայ լուծումն, այլ զնոյն ինքն զՔրիստոս զգեցեալ մկրտութեամբն։

Իսկ յարբունս հասեալ գնաց յԱղեքսանդրիա յուսումն իմաստասիրութեան, առատապէս մտաք եղև կատարեալ փիլիսոփայական արուեստիւ. և հմուտ

յոյժ հին և նոր կտակարանացն. և ունէր միտս ան-
համեմատս այլոց մանկանց, զի էին ամենայն ուստեք
հաւաքեալք 'ի Հելլենացւոց յուսմունս յիմաստասի-
րական և բժշկական. և նախանձեցան ընդ Գրիգորի
անարատ վարսն, և սրբամիտ գոլով յոյժ՝ խորհեցան
արատ ինչ յարել յանարատն Գրիգորիոս։ Վարձեցին
կին մի պոռնիկ և ածին յանդիման նմա, որ եկեալ
ասէր. թէ տուր ինձ զոր խոստացարն՝ զվարձ պոռնը-
կութեան. և ամենեքեան բարկանային կնոջն։ Իսկ
սուրբն Գրիգորիոս ոչ շարժեցաւ, և ոչ ասաց ինչ ընդ-
դէմ պոռնկին կամ դաւաճանողացն, ոչ վկայս կո-
չեաց, և ոչ երդմամբ զբիծն 'ի բաց մերժեաց. այլ առ-
ին որ հոմանի էր պոռնկին, և նենգութեանն առաջ-
նորդ, ասէ. Առ զարծաթդ և հատո պոռնկին, զի մի
իսպառ եկեալ թախանձեսցէ զիս։ Եւ մինչդեռ դայր
կինն և ունէր զարծաթն 'ի ձեռին զզրպարտութեան
գինն, լինէր յԱստուծոյ արդարոյն վկայութիւն և
զրպարտչացն յանդիմանութիւն. զի իսկոյն ըմբռնեալ
'ի դիւէն գալարէր, և ոռնալով անկանէր առաջի ա-
հաւոր բազմութեան քաղաքին, հերացն ցցուելով, և
ձեռօքն ցտելով, աչացն շրջելով, և 'ի բերանոյն
փրփուր բերելով. և կամէր խեղդել զնա դևն։ Եւ ե-
կեալ սրբոյն Գրիգորի կարդաց զանուն Աստուծոյ 'ի
վերայ նորա, և անդէն բժշկէր 'ի դիւէն, ընդ որ հիա-
ցան ամենեքեան. այս առաջին մանկութեան այնորիկ
աքանչելիք։

Եւ ընդ արտաքին իմաստութեանցն անցեալ ընդ
ուսումն՝ աշակերտէր Որոգինեսի մեծի վարդապե-
տի, հանդերձ Պերմեղիանոսիւ աշակերտակցաւ 'ի
նոյն գաւառէ. և առ մեծին Որոգինէի ուսան սուրբն
Գրիգորիոս և Պերմեղիանոս, որ եղև յետոյ եպիսկո-
պոս Կեսարու Կապադովկացւոց, զամենայն ուսմունս։
Զի էր լի և կատարեալ ամենայն գիտութեամբ զար-
մանալին Որոգինէս, բազում գիրս շարագրեաց. և
իբրև զգանձս ոսկւոյ և արծաթոյ ժողովեալ զամենա-
կատար ընթերցս՝ Գրիգորի՝ դառնայր յաշխարհն իւր.
առ որ ժողովեալ ամենայն ազգն՝ հրապուրէին զնա 'ի
վարս աշխարհիս արկանել, զոր և ոչ լսել յանձն
էառ, այլ և հրաժարեալ ետ զինքն Աստուծոյ։

Ընդ այն ժամանակս Փիլիմիոս էր եպիսկոպոս Ամասիոյ մետրապոլիտ. որոյ յաստուածուստ առեալ հրաման՝ ձեռնադրէ զԳրիգոր 'ի քահանայութիւն։ Նորա լուեալ փախեաւ ճանապարհէրիցաւուրց 'ի հեռաւոր տեղիս. և Փիլիմոն խնդրէր զնա։ Եւ տեսանէր մեծն Գրիգորիոս 'ի տեսլեանն, զի Փիլիմոն ըստ օրինի քահանայապետի ձեռնադրէր զնա 'ի քահանայութիւն, եդեալ զձեռն 'ի վերայ գլխոյ նորա. և ձայն եղև առ նա. Կացջիր Գրիգորիոս 'ի տեղւոջդ, զի ձեռնադրեսցէ զքեզ Փիլիմոն. որ վաղվաղակի անդր հասանէր՝ ուր Գրիգորիոսն էր, և ձեռնադրէր զնա ըստ տեսչութեանն Աստուծոյ՝ 'ի քաղաքին, ուր հանդիպեցաւ, որ էին կռապաշտք։ Բայց միայն եօթն և տասն ոգիք՝ որ էին քրիստոնեայք. ընդ այնպիսի լծով մտեալ հայցէր յԱստուծոյ ուսանել զուղիղ հաւատոյ զխոստովանութիւն։

Յայնժամ հսկելով նորա և հոգալով, տեսանէր 'ի տեսլեանն ծեր ոմն քահանայ վայելուչ շնորհալից երեսօք հրեշտակական ձևով. հրաշացեալ ընդ տեսիլն և հիացեալ Գրիգորիոս՝ կամէր ուսանել թէ ո՞վ իցէ և կամ վասն ի՞նչ երևեցաւ։ Իսկ նա հեղ ձայնիւ ասէր. Յաստուածային հրամանէն երևեցայ քեզ, ուսուցանել զՀնմարիտ հաւատն։ Եւ նա խնդութեամբ և երկիւղիւ լցեալ։ Այսպա սքանչելի ծերն մատամբ ցուցանէր նմա այլ տեսիլ սոսկալի. կին մի ահաւոր յոյժ, շուրջ փակեալ պայծառ լուսով. և զի էր խորին գիշեր՝ ոչ կարէր բերել զսաստկութիւն լուսոյն։ Յայնժամ նա 'ի ձայն անուանց խօսակցութեանց կոչելով իւրաքանչիւր ուրուք զինքեանս ծանեաւ զնոսա։ Կինն գեղեցիկ՝ Մայր Տեառն, և ծերն՝ Յովհաննէս աւետարանիչն. քանզի լուաւ զի ասէր Մայր Տեառն ընդ Յովհաննէս. Ուստ դմա զՀնմարիտ հաւատոյ խորհուրդն։ Եւ նորա ասացեալ և սորա 'ի միտ առեալ, քարոզեաց յիւրում եկեղեցւոջն, որք իբրև յԱստուծոյ ունին մինչև ցայժմ, և մնան անփորձ 'ի հերձուածոց 'ի փառս Աստուծոյ։

Եւ խորհրդածութեանն բան այսոքիկ։ Մի Աստուած Հայր Բանին կենդանւոյ, իմաստութեան, անձնաւորի և զօրութեան. և կերպարան էութեան կա-

տարեալ, կատարելոյ ծնող, Հայր Որդւոյ միածնի, մի Տէր միայն առ միայնոյ, Աստուած յԱստուծոյ, կերպարան և պատկեր աստուածութեանն. Բանն Աստուած ներգործական ամենայնի. Եղելոցս ամենայնի բովանդակիչ, և զօրութիւն անհասանելի, ամենայն ստայականաց արարիչ։ Որդի ՀՇմարիտ ՀՇմարտին Հօր. անտեսանելի յանտեսանելոյն, և անապականին անապական, և անմահ անմահին, և միտնջենաւոր միտնջենաւորին։ Մի Հոգի սուրբ առ 'ի յԱստուծոյ, զէութիւնն ունելով 'ի ձեռն Որդւոյ, երևեալ և յայտնեալ մարդկան։ Պատկեր Որդւոյ, կատարեալ 'ի կատարելոյ, կեանք և կենաց պատՀառ. սրբութիւն և սրբութեան պարգևիչ, որով յայտնի Աստուած Հայրն որ 'ի վերայ ամենեցուն և յամենեսին, և Աստուծոյ Որդին՝ 'ի ձեռն որոյ ամենայնք։ Երրորդութիւն կատարեալ փառօք և միտնջենաւորութեամբ. անբաժանելիք և անօտարանալիք, ոչ ապաստացական ինչ, և ոչ ծառայ յԵրրորդութեանն, և ոչ 'ի ներքս ածական. որպէս թէ յառաջագոյն ոչ գոլով և յետոյ 'ի ներքս մտեալ, ոչ նուազ Որդի 'ի Հօրէ, և ոչ յՈրդւոյ Հոգի. անայլայլելի և անփոփոխելի, նոյն ինքն Երրորդութիւն միշտ։

Այսպէս յաղագս այսորիկ արժան է հաւատալ. լուր եկեղեցւոյն՝ յորում բանն քարոզի. յորոյ նոյն ինքն տպաւորութիւն երանելոյն այնորիկ ձեռին՝ մինչև ցայսօր պահի 'ի փառս Աստուծոյ, որպէս տախտակս աստուածագիծս։

Յարուցեալ ապա անտի 'ի քաղաքն դիմէր. խորհէր եկեղեցի շինել, քանզի ամենայն աշխարհն և քաղաքն և շուրջ զնովաւ գաւառն բագնօք և մեհենօք և արձանօք դիւացն Հոխանային. զի ամենեքեան փոյթ 'ի կռամոլութեան՝ ծանական առնէին, և զտաՀար կռոցն և զմեհեանս պաՀուՀէին. այնպէս զօրացեալ դիւացն։ Այլ զորօրինակ զօրաւոր թագաւորի հզօրի հալածէ զթշնամին, նոյնպէս և մեծն այն զդիւացն գունդն հալածէր։ Արդ գոլով 'ի քաղաքն Հանապարհաւ՝ յերեկոյն հասանէր, և անձրև սաստիկ եղեալ՝ 'ի մեհեան մի մտանէր Հանդերձ ընդ իւր եղելովքն. և մեհեանն այն նշանաւոր էր և բազում դեպ 'ի նմա

բնակեալ, և գիւացն աշակերտէր մեհենապարդ քուրմն. դիւթականք և հարցականք 'ի նմա լինէին։ Եւ մտեալ 'ի մեհեանն մեծն Գրիգորիոս հանդերձ իւրայովքն, սաստեաց դիւացն կոչելով զանունն Քրիստոսի, և նշանաւ խաչիւն զարհուրեցոյց զդևսն և 'ի բաց հալածեաց։ Եւ հանէր զգիշերն 'ի գլուխ յաղօթսն արթնութեամբ, և ելեալ առաւօտին գնայր զՀանապարհ իւր։

Եւ եկն քուրմն վաղիւն ըստ սովորութեանն մատուցանէր զոհս դիւացն ասելով. Երևեցարուք ինձ աստուածք և խօսեցարուք։ Իսկ դևքն արտաքոյ մեհենին ձայնեալ ասէին. Անհնար է մեզ 'ի մեհեանդ յայդ մտանել, վասն 'ի դմա օթելոյ Գրիգորի Սքանչելագործի. զի նա զմեզ հալածեաց։ Իսկ քուրմն զամենայն հնարս հնարէր ըստ ախորժման դիւացն, այլ ոչ լուան դևքն ըստ դիւթութեանն։ Յայնժամ բարկութեամբ լցեալ գայր հասանէր մեծին Գրիգորիսի, և սպառնայր մատնել զնա իշխանացն, և թագաւորին գուշակել թէ քրիստոնեայ է և աստուածոցն թշնամի, և յանդգնեցաւ յաստուածային մեհեանն մտանել, և 'ի բաց հալածել զաստուածսն, և խափանեաց զզօրութիւն նոցա։ Իսկ Գրիգորիոս զանառակութիւն քրմին ցածուցանէր. Վստահ եմ 'ի Քրիստոս Աստուածն, որ ունի հալածել զդևս ուստի և կամի, և բնակեցուցանել ուր և կամի, որ և քեզ եղիցի։ Զայս լուեալ քրմին կայր հիացեալ։ Յայնժամ գրէ 'ի քարտիսի հրամանական գիր առ դևսն. և էր գիրն այս ինչ. Ի Գրիգորէ առ Սատանայ. Մուտ 'ի բագինդ, ըստ հրամանի իմոյ քոյին ընկերօքդ։ Եւ առեալ քրմին ըզգիրն երթայր կարդայր 'ի վերայ բագնին, և նոյն ժամայն մտին դևքն 'ի մեհեանն՝ որպէս զառաջինն։ Եւ տեսեալ և գիտացեալ մեհենակալին հաւատարիմ լինել զգիրն և զբանն Գրիգորի, 'ի զարմացման մեծի եղև ընդ սքանչելիսն և ընդ իշխանութիւն նորա 'ի վերայ դիւացն։ Դարձեալ պնդեցաւ զկնի Գրիգորի, աղաչէր ուսանել, թէ ո՞վ է աստուածն այն որ զայս իշխանութիւն ետ քեզ։ Եւ ասացեալ սակաւուք մեծին Գրիգորի զբարեպաշտութեան խորհուրդն, և խնդրէր քուրմն 'ի նմանէ այլ սքանչելիս տեսանել զի եկեսցէ 'ի Քրիստոս հաւատն։

Քար մի կայր լեռնացեալ հանդէպ նոցա, որ ոչ էր հնար ումեք շարժել, այլ միայն Աստուծոյ զօրութեանն, զի ասէր քուրմն ցԳրիգորիոս զի հրամայեացես փոխել յայլ տեղի։ Իսկ նա ոչինչ յապաղէր. այլ հրամայեաց որպէս անձնաւորի քարին՝ փոխել յայլ տեղիս։ Քուրմն ելն եցոյց, և նոյնժամայն փոխեցաւ ըստ բանին Գրիգորի։ Զոր տեսեալ քրմին հաւատաց յԱստուած Ճշմարիտ. թողեալ զտուն, զազգ, զկին, զմանկունս, զքրմութիւն, զինչս, զստացուածս, գնաց զկնի մեծին Գրիգորի։ Եւ առեալ տանէր զնա 'ի քաղաքն, վերահուչակելով զայրն և զքանչելին պատմելով. հեղու ամենայն քաղաքն 'ի տեսանել զքանչելին. և տեսանէին զքրքուրմն և զԱքանչելագործն 'ի միասին. Ո՞վ ինչ ասեն Գրիգորիոս, մարդ գոլով, այլ աստուածոցն ինչխէ՝ որպէս ծառայից, և զսպասաւորն ունի զկնի իւր։ Այլ նա ոչ ընդ այնմ նայէր, այլ միայն յուղին ուշառնէր։ Ժողովէր ապա քաղաքն առ նա լսել զբանն Աստուծոյ, 'ի տան միում վանս կալեալ, յոյժ աղաչելով առնն. և սակաւ ինչ խօսեցաւ, զի արևն 'ի մուտս էր. հրամայէր այգոյն ժողովել զբանն Աստուծոյ։ Եւ 'ի վաղիւն ժողովեցաւ քաղաքն ամենայն, արք և կանայք, ծերք և մանկունք, երիտասարդք և կուսանք, և վտանգեալք 'ի պէսպէս ախտից և դիւաց. զի էլ համբաւ նորա ընդ ամենայն երկիրն։ Իսկ նա 'ի մէջ հրապարակին արձանացեալ զօրութեամբ սուրբ Հոգւոյն, բժշկէր զամենայն ախտաժետս, և քարոզէր զարքայութիւնն երկնից. և նոցա խնդութեամբ ընկալեալ՝ դարձան 'ի մնոտեաց կռոցն. և այսպէս յօրինէր զամենեսեան փառաբանակից Աստուծոյ, և երկրպագուս սուրբ Երրորդութեանն։ Շինէր յետ այնորիկ տունս աղօթից, և սեղան ուղղեալ՝ կատարէր զկենսաբեր խորհուրդն, և ամենեքեան ընչիւք և մարմնով առ փոյթն սպասաւորէին։ Այս տաճար մինչև ցայժմ ցուցեալ լինի. աստուածային շնորհիւ իմն կատարէր զգործն որ յԱստուծոյ. իսկ վկային մեծի գոլ գործ[1]։ Քանզի 'ի շարժման ումեմն սաստկագունի քաղաքին, առ մերովք ժամանակօք եղեալ, և արքունական ապարանիցն և այլ քաղաքին շինուածոցն տա-

1. Այսպէս յօրինակին։

պալեալ, միայն մնաց տաճարն այն անսասանելի և անխախտելի, որպէս զի յայտնի երևի զօրութեանն Աստուծոյ և նորին աղօթիցն գործ։ Եւ մկրտեաց զքուրմն և ձեռնադրեաց զնա սարկաւագ։

Աստուածային գիրք զարմանան ընդ դատաստանն Սաղոմոնի՝ զոր արար երկուց կանանցն. եկ դու զարմացիր ընդ դատաստան մեծին Գրիգորի։ Երկուց ոմանց եղբարց երիտասարդաց զՀայրենի ժառանգութիւնն բաժանելով՝ վասն ծովակի միոյ հակառակէին. իւրաքանչիւր ոք սիրէր. լինէր դատաստանին տէր Աքանչելագործն։ Երթեալ 'ի տեղին աղաչէ 'ի խաղաղութիւն. և ոչ լինէր լսելի աղաչանք նորա։ Ի բարկութենէ շահիցն կիզուին, և 'ի պատերազմ բորբոքէին։ Մնայր յեզը ծովուն այրն Աստուծոյ, և հսկէր զգիշերն, և զՄովսէսի աքանչելագործութիւնսն 'ի Ջուրսն ցուցանէր. ոչ հարմամբ գաւազանի յերկուս բաժանեաց զծովն, այլ ամենևին ցամաքեցոյց. զի էր առաւօտուն ծովն չոր անթաց, և ոչ 'ի փորուածսն ունէր մասն խոնաւութեան. զի խորք էին ծովուն։ Ի խաղաղութիւն զպատերազմն փոխեաց, և ծանոյց զեղբայրութիւնն նախամեծար. և քան զերկոցունց մահ զցամաքել ծովուն լաւագոյն համարեցաւ։ Եւ այժմ երևի աստուածային աքանչելիքն. զոր երբեմն ծով էր՝ փոխեցաւ յանտառս և յարտավարս դաշտաց, որ առաւել քան զՄովսէսին և զՍաղոմոնին են աքանչելիք։

Գետ ոմն հոսի 'ի գաւառի Հայոց լերանց, ընդ ձորս հոսելով յորձանօք ահաւոր հոսմամբ, Գայլ անուանի 'ի բնակչաց աշխարհին. ընդ որ անցանէր՝ մերձակայիցն բաղում առնէր վտանգս, առնոյր և ագարակս. և անդ առ արտավարսն և մարգսն՝ վտանգն ոչ սակաւ էր։ Որ միաբանեալ եկին առ սուրբն Գրիգորիոս, և աղաչէին զնա զի լուծցէ զգիտաս գետոյն, որպէս և կամեսցի. կամ հրամայեսցէ թողուլ զսահմանն և գնալ յայլ տեղի։ Ցարուցեալ ապա նոքօք հանդերձ գնաց յեզը գետոյն. քանզի ոչ արգելոյր զնա առ մարդկան օգտի աշխատութեան գնացս. ոչ ձիով կամ իշով գնաց երբէք, այլ հետևակ 'ի գաւազանն յեցեալ՝ զամենայն ճանապարհ վճարէր։ Եւ երթայր յեզը գետոյն, և իմացեալ թէ անհնար է մարդկան իմաստու-

թեան կամ ուժոյ ելս առնել, բայց եթէ Աստուծոյ զօրութեանն, որպէս ասէ մարգարէն. թէ՝ Սահման եղեր՝ որ ոչ անցանէ. զայս ասացեալ և զգաւազանն 'ի խոնարհ ցցեաց յեզը գետոյն, ուր յարձակումն հոսանացն առնէին զվնասն, աղօթս առնելով առ Տէր։ Եւ անդէն վաղվաղակի արմատացեալ լինէր գաւազանն. և դալարութիւն ցուցանէր՝ որպէս զգաւազանն Ահարոնի, և աճեցեալ ծառ եղև, և 'ի հոսանացն սահմանն հաստատեցաւ. զի յորժամ յանձրևաց և յուղխոց բազմանան ջուրք, և յորդեալ ահաւոր հընչմամբ հոսի, ընդ արմատ ծառոյն ոչ իշխէ անցանել. և անուն ծառոյն է մինչև ցայժմ Գաւազան Գրիգորի, և հռչակէր համբաւն ընդ ամենայն երկիրն։

Լինէին աղաչանք առ նա 'ի քաղաքէն Կոմանոյ՝ գալ առ նոսա, ձեռնադրել նոցա եպիսկոպոս. և նա ունկնդիր եղև աղաչանաց նոցա, գնաց զկնի։ Եւ եղեալ առ նոսա՝ Աստուծոյ տայր զընտրութիւնն. իսկ նոքա որ մեծագոյնքն էին բանիւ և ազգաւ և ճոխութեամբ՝ առաջի առնէին։ Մնայր մեծն Գրիգորիոս յաստուածուստ լինել նմա յայտնութիւն, որպէս առ Սամուէլ յԱստուծոյ. ոչ գեղ խնդրելով, այլ հոգի պայծառ, արհամարհեալ ըստ տեսանելոյն Աստուծոյ։ Իսկ ոմն որ կարծէր զինքն ընտրեալ՝ այն առաջին ըստգտանէր զայրն Աստուծոյ, յառաջ մատուցեալ և եպերանոք ասէ ցայրն Աստուծոյ. Զի եթէ բնաւ յառաջագոյն ընտրեալքս ոչ եմք արժանի երևելիքս, և զանարգն կամիս կոչել 'ի քահանայութիւն, ապա կոչեսցի Աղեքսանդրոս դարբին 'ի քահանայութիւն. եթէ հաճոյ է քեզ, զուգաձայն եմք ամենայն քաղաքս՝ Աղեքսանդրի։ Իսկ սրբոյն ոչ արհամարհեալ զԱղեքսանդրոս յիշատակել. Ո՞վ է, ասէ, այս Աղեքսանդրոս՝ զոր ասէքդ։ Իսկ ոմանք որք մերձ կային կատականոք ածին 'ի մէջ զԱղեքսանդրոս, որ էր կարճահասակ, տգեղ կերպարանոք, ձեռացն և երեսացն և այլ մարմնոյն աղտեղեալ 'ի կայծականց հրոյն. և էր ծիծաղելի և գձուձ։ Իսկ մեծն Գրիգորիոս ծանուցեալ Հոգւոյն սրբոյ՝ թէ որպիսի ոք էր այրն, ոչ առ վտանգի կենցաղոյս եկեալ յայն արուեստ, այլ վասն առաքինութեան և օգտի տնանկաց։

Յայնժամ նա զանխլանալ ջանայր և 'ի վերջ քարշէր զինքն, որպէս զառաքինութիւնն ծածկէր անարգկերպարանաք, այպէս անարժան վարկանէր զինքն։ Այպա հրամայէր յառաջ ածել զայրն, և յայտնէր զնորա ծածուկ վարսն. ակնարկէր սպասաւորացն, որք տարեալ լուացին զԱղէքսանդրոս, և մեծին հանդերձիւք վերարկեալ ըստ հրամանին։ Հայեցեալ ամենեցուն՝ որք ընտրեալքն կարծէին՝ զարմանք կալան զամենեսեան վասն ընտրութեան առնն։

Ասէ ցնոսա. Զի՞ զարմացեալ էք ընդ գործս Աստուծոյ, զի մարդ հայի յերեսն, իսկ Աստուած 'ի սիրտն։ Զայս ասացեալ մատուցանէ 'ի քահանայութիւն զայրն, կատարեալ շնորհիւ խորհրդածութեանն, որ յառաջագոյն ծածկեալ էր 'ի Քրիստոս՝ 'ի ձեռն մեծին Գրիգորի յայտնեցաւ. զի տեսլեամբ նուազ, և նոյն երևեցաւ 'ի վերայ նորա շնորհք Հոգւոյն սրբոյ. և յոլովից տեսեալ՝ օրհնէին զԱստուած, և ահիւ մեծաւ ըմբռնեցան։ Եւ հրամայէ նոցա հնազանդ լինել նմա որպէս քահանայի Աստուծոյ. և տուաւ նմա շնորհս գիտութեան, և ուսուցանէր զբանն առաւել քան զուսեալքն, և զարմանային ամենեքեան։ Եւ յետոյ յանօրինաց կռապաշտից մարտիրոսացաւ, և հրով կատարեցաւ վասն անուանն Քրիստոսի։

Երկուք ոմանք Հրեայք կամեցան խաղ առնել և խաբել զԱքանչելագործն. մինն 'ի նոցանէ եղև սուտ մեռեալ յանկարծամահ լինելով. և անկեալ դնէր 'ի կողմանէ Ճանապարհին որպէս մեռեալ. իսկ ընկերն կոծէր 'ի վերայ մեռելոյն ողբերգական ձայնիւ. և ընդ այն անցանելով առ նոքօք Աքանչելագործն՝ վերագոչէր առ նա ասելով. Յանկարծակի մահ պատահեաց թշուառականիս, և մերկ ահա կայ առ 'ի թաղումն. պարգևեա առ 'ի քէն անարգագոյն հանդերձիկ, արկանել 'ի վերայ դորա պատանս։ Իսկ սուրբն Աստուծոյ ոչ անտես առնէր զհայցուածս Հրէին. առեալ զարկանելին իւր տարածեաց 'ի վերայ մեռելոյն, և ինքն զՃանապարհ իւր գնաց. և Հրեայն խնդալից անկանէր 'ի վերայ մեռելոյն, զխաղու և զծաղու բանս բարբառէր վասն շահու հանդերձին։ Իսկ նա ոչ ինչ բարբառեցաւ, զի ընդ արկման հանդերձին էլ հոգին։

Հրապարակ ուրեմն էր 'ի քաղաքին սքանչացեալ ընդ ուսումն տղայոց ումեմն, որ առ ընկերսն աղաղակէր, ոչ յանձնէ զայսչափ վարդապետին ասել, այլ ոմն մերձ կալով նմա հանէ զբանն. զի դև գոյր 'ի մանուկն, և ոչ կամէր ելանել 'ի նմանէ։ Եւ եկն Եհաս Գրիգորիոս 'ի տեղին. և մանուկն յորում էր դևն, ասէ առ հրապարակն. Խօսեցարուք ընդ մեծին, մի՛ մաքրել զիս 'ի դիւէն։ Եւ առեալ սրբոյն զկտաւն՝ որ 'ի վերայ ուսոյն էր՝ ընկէց 'ի վերայ բերանոյ մանկանն. և յոյժ տագնապեցաւ 'ի դիւէն պատառելով զհանդերձն և փրփրալով։ Ապա մատուցեալ սուրբն դնէ զձեռն 'ի վերայ, և առնէ զնշան խաչին և 'ի բաց հալածէր զդևն 'ի մանկանէն, որոյ զգաստացեալ փառաւորէր զԱստուած։

Ընթռնեալ զնա երբեմն դատաւորացն և հրամայեցին ջեռուցանել բաղանիս սաստիկ ջերմութեամբ, զի զսուրբն կորուսցեն. և մերկացուցեալ խորհեցան ընկենուլ 'ի ներքս, և կացեալ մերձ առ լուսանալին՝ առնէր զնշան խաչին, և յաստուածային զօրութենէն տեսիլ նոր և չքնաղ երևեալ. քանզի փոխարկեալ գըմբեթաձև շինուածն առ հիմունսն խոնարհեալ, ոչ դղորդմամբ այլ փոխմամբ. ընդ որ հիացեալ ամենեքին արձակեցին զսուրբն 'ի կապանացն։

Դարձեալ հանէր դև մի յառնէ միոջէ. իսկ նա աղաղակեալ ասէր ուժգին. Մի՛ հաներ զիս 'ի բնակութենէ իմմէ, ապա եթէ ոչ՝ բազում աշխատութիւն հասուցանեմ քեզ. իսկ նորա սաստեալ եհան զնա յառնէն։ Իսկ դևն երթեալ մտանէր 'ի դուստր Թագաւորին Հռոմոց, և աղաղակէր բերանով կնոջն, եթէ՝ Ոչ ելանեմ աստի, բայց եթէ եկեալ Գրիգորին Նէոկեսարու հանցէ զիս։ Իսկ կայսերն լուեալ վաղվաղակի առաքէ 'ի խնդիր նմա. և գտեալ լինէր 'ի Կեսարացւոց քաղաքին, և կայսերական հրամանաւ փութանակի անցուցանէին ընդ ծով և ընդ ցամաք 'ի Հռովմ. որոյ 'ի հասանելն՝ սաստիկ շարժեաց դևն ըզդուստր Թագաւորին՝ զարկուցեալ զգետնի։ Իսկ մեծին Գրիգորի մտեալ 'ի տուն յորում էր աղջիկն, արարեալ զնշան խաչին՝ սաստէր այսոյն պղծոյ և հանէր 'ի կնոջէն, և հրամայէր անդ մնալ առ դրանն։

Իսկ կայսերն տեսեալ զմեծ սքանչելիսն՝ պատուէր զայրն մեծապէս, և խորհեցաւ ինչս քաղուսն շնորհել նմա. իսկ նա առեալ և ոչինչ՝ խնդրէր 'ի նմանէ սիւն մի մարմարիոն լակոնացի, որ էր երկայն և ստուար յոյժ։ Իսկ կայսրն զարմացեալ թէ յինչ պէտս խընդրեաց զայն, որ անհնար է հասուցանել յաշխարհն իւր. նորա պատասխանեաւ, թէ միայն տուր զինդրելն, և մի՛ ինչ ածեր զմտաւ։ Ի նմին ժամու հրամայեաց այսոյն պղծոյ բառնալ զսիւնն և հասուցանել յաշխարհն Կապադովկացւոց. և նորա առեալ գնաց և կայ անդ մինչև ցայսօր։ Եւ հրաժարեալ 'ի կայսերէն ծովագնաց լինէր. գայ մտանէ 'ի մեծ կղզին Սիկիլեայ. և անդ էր լեառն մի բարձր՝ որոյ գագաթն բոլբոքի կայծակամբք հրոյ 'ի տուէ և 'ի գիշերի, և ըստ ժամու ժամու հոսումն հրոյ հոսի 'ի ծայրից լերինն, կիզելով զամենեսեան որոյ և հանդիպէր, առաւել 'ի ձմեռնային ժամանակի. մինչ զի անհնար էր մարդոյ անցանել ընդ այն տեղին։ Էր մերձ 'ի նմա եկեղեցի մի յոր մտեալ մեծն 'ի ժամ պատարագին զպաշտօնն կատարել։ Իսկոյն կտրեալ լինէր հուրն հանդէպ վերկայարանին յորում էր սուրբն, և ձայն սաստիկ հընչէմն լսելի լինէր։ Իբրև տեսին արք տեղւոյն զհոսումն հրոյն 'ի լեռնէն, բոլոք բարձեալ առ մեծն Գրիգորիոս, և նորա առեալ 'ի սպասու սեղանոյն՝ ընթանայր և հրոյն ընդդէմ ձգէր, ասելով. Դադարեա և մի՛ անցցես ընդ այդ. և եղև ըստ բանից նորա մինչև ցայսօր։

Յետ այսքան սքանչելեացս միոյ կամ երկու ամաց են վասն նորա ասացեալ. զայս ևեթ պատմեցից. քանզի ամենայն ուրեք տարածեալ աստուածային քարոզութեանն՝ 'ի քաղաքին և շուրջ զբնակչացն՝ առ բաբեպաշտն հաւատն փոխադրեալ, և փոխեալ բազնացն և մեհենացն առ 'ի կռոցն պղծութեան և 'ի զազրալի զոհից, և շինեալ որ 'ի վերայ բազնացն աբրիւնհեղութիւնք, և կենդանաղոհութեանն դիւացն, յամենայն տեղիս եկեղեցիս և աղօթանոցս վերականգնեալ, և քրիստոնէից խորհուրդն աճեցեալ յոյժ։ Լուեալ թագաւորն բարկացաւ. գրէ առ իշխան աշխարհին խափանել զեկեղեցիսն. և որք Քրիստոսի

երկրպագեցին՝ ըմբռնեսցին հարկաւ 'ի հայրենական պաշտօն։ Իբրև պատմեցաւ իշխանացն չար և անաստուած հրամանն 'ի հրապարակս տարածեալ, կամ ուրանալ զՀաւատն և կամ չարչարանս ազգի ազգի և տանջանս մահու կրել, աստուստ լինէին անապատք և ունայնք 'ի բնակչաց քաղաքք և գաւառք։

Յայնժամ իմացեալ մեծին Գրիգորի զմարդկային տկարութիւնն՝ որպէս ոչ բաւել բազմաց մինչև 'ի մահ տևել, խորհրդակից լինի եկեղեցւոյն փոքր ինչ տեղի տալ հալածչացն՝ փախստեամբ, ըստ պատուիրանին Տեառն։ Եւ բռնաւորացն փոյթ էր եթէ զնա որպէս զօրավար քաջ ըմբռնել կարասցեն։ Իսկ նա երթեալ բնակէր յանապատին Իւրայովքն՝ որ յաղագս պաշտամանն սպասաւորէին նմա։ Իսկ ումեմն տեսեալ յամպարշտացն՝ գուշակէր զտեղին՝ հալածչացն, որք ամբոխս արարեալ՝ երթեալ շրջափակէին զտեղին և պահէին, զի մի՛ հնար լիցի նոցա փախչել։ Իսկ Գրիգորիոս տարածեալ զձեռս իւր կայր յաղօթս հանդերձ սարկաւագաւն՝ որ յառաջ քրմապետն էր. և անդէն անկաւ 'ի վերայ նոցա անտեսութիւն, և որք յառաջ տեսին զնոսա այլ ոչ ևս տեսին զնոսա, և յուզէին զամենայն վայրսն. ոմանց 'ի տեղին իսկ կալով և այլոց առ նոքօք անցանելով։ Եւ իբրև ոչ գտանէին՝ սքանչացեալք 'ի փախուստ դարձան, գնացին զՀանապարհս իւրեանց։ Եւ որ գուշակեաց հալածչացն՝ եկեալ անկանէր առաջի սրբոյն խնդրէր թողութիւն յանցանացն, և հաւատայ յԱստուած և մկրտեցաւ. և որ յառաջ հալածիչն էր՝ մի 'ի փախուցելոցն լինէր և օրհնէր զԱստուած։ Եւ զի ընդդէմ կարեցան հալածանքն և լի էին կապարանք և տանջանարանք, և նա յանապատին աղօթէր վասն նոցա, որպէս Մովսէսն ընդդէմ Ամաղեկայ վասն Իսրայէլի։

Էր երբեմն ըստ սովորութեանն յաղօթսն Աստուծոյ լցեալ Հոգւովն սրբով, մինչ զի յայտնի լինել մեր ձակայիցն՝ ձայն ինչ լինել առ նա յԱստուծոյ, այլ ոչ լինէր նոցա հասանել 'ի տեսիլն և 'ի ձայնն. և դադարեալ յաղօթիցն եկն առ ժողովուրդն, զի էին մեկուսի. և 'ի վեր օրհնէր զԱստուած պայծառ ձայնիւ,

գյաղթականն երդելով. Օրհնեալ է Տէր, որ ոչ ետ զմեզ 'ի յորս ատամանց նոցա։ Զան որոյ սքանչացեալ ոքք ընդ նմա էին՝ ուսանել արժանի լինել աղաչէին։ Սկէ առ նոսա. Տեսանէի 'ի ժամ աղօթիցն յատենին երիտասարդ մի բարի Տրովանդիոն անուն, մարտուցեալ ընդ բանսարկուին և ընդ դառն հալածիչսն, յառաջ ածաւ առ իշխանն 'ի դահճացն 'ի քաղաքին. և յետ բազում ազգի ազգի տանջանաց՝ վկայեաց և վերազգեցաւ զպսակն անապական, և լուայ ձայն երթէ դաղարելոց են հալածմունքն։ Զայս լուեալ սարկաւագն և որ ընդ նմայն՝ հիացեալ ոչ անհաւատ եղեն, որ այնչափ հեռագոյն գոլով 'ի քաղաքէն, այնպէս ստոյգ գիտաց։ Աղաչէր զնա սարկաւագն այլովքն հանդերձ, զի հրամայեսցէ երթալ 'ի քաղաքն և տեսանել։ Եւ նա ասէ. Գուցէ ըմբռնեսցիս, որդեակ։ Եւ նա ասէ. Ցուսամ յԱստուած և յաղօթս քո՝ որ փրկէ զիս։ Եկին 'ի քաղաքն և լուան յամենեցունց զվկայութիւն սրբոյն և զանուն նորա, որպէս ասաց այրն Աստուծոյ. և դարձան անդրէն աշխատեալք։ Անագանն 'ի վերայ հասանէր. և էին բաղանիք 'ի քաղաքին, կամեցան անդ ագանել զգիշերն՝ յորում էին դևք։ Եւ ոմն մերձ կալով առ բաղանիսն՝ աղաչէին բանալ նոցա։ Եւ նա ասէ ցնոսա. Ոչ է հնար ումեք 'ի գիշերի մտանել 'ի բաղանիսդ. զի յետ մտանելոյ արեգականդ՝ դև ունի զբաղանիսդ և զջուրսդ որ 'ի դմա, և բազմաց անգիտութեամբ մտեալ՝ սպանան 'ի նմին։ Այլ նա ոչ հաւանեալ մտանէր 'ի ներքս հանդերձ իւրայովքն 'ի հանգիստ, և լսէին բազում ձայթիւնս և արհաւիրս և ողբս և շնչիւնս, և հրով և ծխով լցեալ լինէր, և գազանաց և սողնոց կերպ 'ի կերպս լինելով, և շուրջ շուրջ զմարմնովք նոցա հոսեցուցանէին։ Իսկ նա զկընիքն Քրիստոսի արարեալ յինքեան, և արհամարհէր զնոսա. և ընդ առաջին դուռնն անցանէր 'ի ներքսագոյնն մտանէր. և անդ ահաւոր և դժնդակ ևս լինէր երևոյթ գազանաց դիւացն, շարժելով և տատանելով զտունն, մինչ զի զատակն պատառեալ տեսանէին, և 'ի ներքուստ 'ի վեր կայծակունս յարձակեալ 'ի ջուրն և 'ի նոսա։ Իսկ նա աղօթիւք և Քրիստոսի կնքովն զահեղ երևոյթսն հալածէր. և հանգուցեալ զգի-

շերն, և առաւօտուն ջրոցն լուացեալ՝ խորհեցան ելանել և գնալ։ Եւ դևն դարձեալ արգելուլ կամեցեալ զդուռն ընդդէմ փակէր. իսկ նա զկնիք Քրիստոսի արարեալ բանայր զդուռնն։ Ասէն դևքն. Եթէ ոչ էր վասն Գրիգորի, որ զքեզ Աստուծոյ յանձնեաց՝ կէնդանի 'ի բաղանեացս ոչ ելանէիր։ Ասէ սարկաւագն. Գրիգորիոս՝ որ Եհան աղօթիւք 'ի բանդէն զՀայրն ձեր սատանայ՝ որում էն սպասաւորէի, և դարձեալ Եմոյծ թղթոցն, նորին աղօթքն հալածեսցէ զձեզ 'ի տեղւոջէս յայսմանէ. և էլ համբաւս այս ընդ ամենայն աշխարհն։ Եւ էկեալ սարկաւագն պատմեաց սրբոյն Գրիգորի։

Եւ ինքն սիրէր միշտ յանապատս լինել յաղօթս, և 'ի ձեռն քահանայից հովուէր զժողովուրդն ըստ քաղաքաց քաղաքաց՝ որ հաւատացաւ նմա։ Եւ իբրև դադարեցոյց զՀալածանսն աղօթիւք, ինքնէր անդէն 'ի քաղաքն և ուսուցանէր զամենեսեան. և հրամայէր տօն կատարել զամենայն սրբոցն որ վկայեցին, և ուրախանալ հոգեւորապէս, և ցնծալ 'ի յիշատակ սրբոցն։ Բանզի յառաջնումն ամի նորա քահանայութեանն, զորմէ զանց արարաք՝ որպէս զայլ սքանչելեաց, վերստին պատմեմք։ Տօն իմն ամենաժողով առնէին դիւի ումեմն ամենայն քաղաքն, և գաւառականքն միաժողով լեալ զդևն որ տօնէին, Աժող վերայ կարդային[1], միաբարբառ միով ձայնիւ աղաղակէին. Ո՛վ Զեւս, տուր մեզ տեղի և ընդարձակեա։ Զայն ուսեալ մեծին Գրիգորի՝ յղէ առ նոսա. Տացի ձեզ տեղի՝ որ չէ այլ երբէք լեալ։ Եւ նոյն ժամայն անկաւ 'ի վերայ նոցա ահ սաստիկ, որպէս հուր այրէր զնոսա և զտունս նոցա, և դարձաւ տօն նոցա 'ի սուգ. և երթեալ ապաւինեցան 'ի ծառայն Աստուծոյ, և նա գնաց զկնի նոցա, և եմուտ յիւրաքանչիւր տունս, և աղօթիւք մերժեաց զսատակիչ ախտն և բժշկեաց զնոսա. և խրատեալք 'ի հարուածոցն՝ դարձան 'ի Քրիստոս և մկրտեցան։ Եւ իմացան եթէ դևն չարապէս կատարեաց զաղօթսն, զի ախտիւն և մահուամբ մարդկանն ընդարձակել կամէր զքաղաքն. յորմէ

1. Այսպէս յօրինակին։

փրկեցան աղօթիւք սրբոյն Գրիգորի, և մարմնական ախտիւն՝ հոգւով առողջացան։

Եւ այսու օրինակաւ քաղաքավարեալ յեկեղեցւոջն Աստուծոյ՝ զոր նովաւ դարձոյց Քրիստոս Աստուած. և վասն զի յառաջ գիտացեալ զփոխումն իւր՝ փութայր փոխադրել զամենեսեան 'ի փրկական հաւատն 'ի կռոցն պղծութենէ. և յուզեալ եթէ իցէ ոք մնացեալ արտաքոյ հաւատոցն, եգիտ ոչ աւելի քան զեօթն և տասն անձինս. տրտմեալ լինէր յայսոսիկ, անկանէր առաջի Աստուծոյ, խնդրէր զդարձնոցա, զի որ յետ նորա փոխանորդեսցէ զեկեղեցին՝ մի՛ լիցի նորա կռապաշտ տեսանել 'ի հօտի նորա. սակայն և այժմիկ լուաւ նմա Տէր և անկաւ 'ի սիրտ նոցա զեղջ, և ունկնդիր եղեն վարդապետութեան նորա, և դարձան յուղիղ հաւատն։

Այս է առնն Աստուծոյ կենցաղն և առ Աստուած փոխումն. և քանզի 'ի կեանս աշխարհիս ոչ ստացաւ տուն և տեղի ուրեք, և ոչ յետ մահուանն ստանայր իւր տեղի առ 'ի թաղումն սեփական. մինչ զի պատմութիւն լինել Ս.քանչելոյն, եթէ Գրիգորիոս 'ի կենդանութեանն ոչ անուանեաց իւր տեղի և ոչ յետ մահուան. այլ որպէս պանդխտութեան զկեանս անցոյց, նոյնպէս յօտարաց թաղմամբ՝ եղև պանդուխտ, 'ի ստացուածոց և 'ի տանէ հրաժարեաց 'ի կեանս իւր. նոյնպէս և 'ի թաղմանն 'ի զարդու և 'ի տեղւոյ։

Զարմացի իւրաքանչիւր ոք 'ի հանդիպելոց բանիցս, այլ մի՛ ոք անհաւատացի սքանչելեացն և վարուցն. զի յոյժ հեռի է 'ի ստութենէ և լի ճշմարտութեամբ, և սակաւ 'ի բազմացն։ Է և այլ ինչ նորա նշանացոյցք, որ մինչև ցայժմ երևին և պատմին. զոր հնարեալ յանհաւատիցն լսելիս ասել՝ թողաք 'ի բանիցն. զի մի՛ սուտ համարելով զգրեալսն գայթակղեսցին։ Զի յոլով եցոյց զարմանալիս 'ի վերայ զարմանալեաց, գերազանց առաքինութեամբ նահատակեցաւ։ Եւ բազում ճառս վերադասեաց յաղագս ուղղափառ հաւատոց և վարուց։ Այսպէս հանդիսացաւ 'ի կենցաղումս, և հրաժարեալ ընդ սուրբս հանգեաւ 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր. որում փառք յաւիտեանս. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Դեմետրիոսի։

Արդ 'ի ժամանակին յայնմիկ յորում էր չարու-թիւն, և աստուածամարտն Մաքսիմիանոս թագաւոր քաղաքին Թեսաղոնիկեցւոց, բազում և պէսպէս կըտտանօք լինէին բարեպաշտութեան սպասաւորքն. վասն զի յոյժ կործանեալ էր նա 'ի խորս կռապաշտութեան. միշտ 'ի խոյզ և 'ի խնդիր լինելով այնոցիկ՝ որ ըստ աստուածպաշտութեան կրօնիցն էին, 'ի բանդ և 'ի տանջանս մատնելով։ Իսկ քրիստոնեայքն որ էին 'ի քաղաքին՝ ոմանք հաւանեալք իմաստնոյն Պաւղոսի, տեղի տուեալ բարկութեան ժամանակին, թագուցանէին զինքեանս առ ժամանակ մի. և այլք զքաջութիւն խառնեալ՝ յայտնապէս խոստովանէին զհաւատսն 'ի մէջ բազմամբոխ քաղաքին։ Յայնցանէ մի ոմն որում անուն էր Դեմետրիոս, այր քաջ և առաքինի, ոչինչ զանգիտեաց յերկիւղէ մահու՝ որ տնկեալ էր 'ի բնութիւնն. և անտես արարեալ զահագին զսպառնալիսն թագաւորին՝ յայտնապէս խոստովանէր զանձն քրիստոնեայ գոլ. և զփրկչական անունն զոր յանձին իւրում բարձեալ ունէր՝ բազում համարձակութեամբ 'ի ժամու և 'ի տարաժամու ըստ առաքելական խրատուն ամենեցուն մերձեցելոցն 'ի նա աւանդէր։ Եւ յոյժ իմաստուն գոլով երանելիս այս աստուածեղէն գրոց, զծածկեալ կենդանարար խորհուրդն որ 'ի նոսա՝ առաջի ամենեցուն թարգմանէր։ Վարդապե-

տէր և զայսոսիկ, եթէ զմարդն առաջին՝ մոլորել 'ի ճշմարտութենէն անհնազանդութիւնն արար, ուստի և մահկանացու եղաք, և կռապաշտութիւն եմուտ յաշխարհս. յաղագս այսորիկ և ամենիմաստ բանն Աստուած՝ յԱստուծոյ Հօրէ անձառաբար ծնեալն, եկն յաշխարհս մարմին զգեցեալ, և զինքն լոյս աշխարհի ծագեաց, կանգնեաց զանկեալն և յարոյց զգլորեալն և եգիտ զկորուսեալն, և սրբեաց յամենայն աղտոյ մեղաց. և ոչ միայն զայս բարեգործեաց, այլ և ուսոյց ամենայն ընդունողաց զբանն նորա, զարդարութիւն սրբութեան, զհեզութիւն և զհանդարտութիւն, ըգսէր և զխաղաղութիւն, արհամարհելով զառժամանակեայս. և յուսով հանդերձելոցն ընդունել զառհաւատչեայ 'ի մշտնջենաւոր և յանժամանակեայ կեանսն։ Եւ այսպիսի բանիւք միսիթարէր երանելին զամենեսեան որ մերձենային առ նա, և բազումք այնուհետև գային առ նա վասն հասանելոյ համբաւոյ նորա ընդ բազում տեղիս։

Յայնժամ ապա որ կարգեալք էին 'ի Թագաւորէն՝ շրջէին խնդրել զքրիստոնեայսն։ Կալեալ զերանելին Դեմետրիոս ածեալ կացուցին առաջի աստուածամարտին Մաքսիմիանոսի, իբրև մեծ որս ինչ ըմբռնեալ։ Իսկ Թագաւորին դէպ եղև յայնմ ժամու ելանել նստել 'ի տեղի ասպարիսի քաղաքին յաղագս մենամարտիցն, որք հանդերձեալ էին մենամարտել 'ի տես ամենայն ռամկին, որ և տեղին իսկ տախտակամած կազմեալ էր, և քարակոփ շինեալ առ 'ի յընդունել զայնոսիկ՝ որք անդ եկեալ նստէին։ Եւ էր անդ այր մի Լեոս անուն նորա յաղթանդամ և սկայաշոր. որ յոյժ զսրհուրեալ դողացուցանէր զամենեսեան 'ի մենամարտելն իւրում, այլ և բարս անիմնամն և սպանողս ստացեալ ունէր յինքեան, և յոյժ սիրեցեալ էր նա յաչս Մաքսիմիանոսի, և ընդ առաջին պատերազմողն համարեալ, վասն զի ոչ գտանէր յաշխարհն յայն նման նմա։ Այրդ մերձ լինէր Թագաւորն յասպարէսն. կացուցին դահիճքն առաջի նորա զԴեմետրիոս։ Իսկ նա իբրև հարցեալ եղև թէ քրիստոնեայ է, հրամայեաց տանել զնա մօտ առ կամար բաղանեացն, ուր լուցեալ կրակ ջեռնուին, քանզի և բաղա-

նիքն մեռ յատեանն էր. հրամայեաց ածել զԼեոս առաջի իւր, քարոզ կարդայր 'ի հրապարակին, եթէ ով կամիցի մենամարտիլ ընդ նմա՝ բազում պարգևս խոստանալով։ Յայնժամ յարուցեալ 'ի մէջ ատենին մանուկ մի՝ որոյ անուն էր Նեստորիոս, քրիստոնեայ, որ և յառաջագոյն երթեալ առ երանելին Դեմետրիոս, զի աղօթս արասցէ 'ի վերայ նորա. և նորա օրհնեալ զնա մարգարէացաւ թէ անուամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յաղթեսցես Լեոսի, և վասն նորա մարտիրոսանաս։ Սա 'ի բաց եդեալ զհանդերձս իւր, և զսպեալ զինքն միով պատմուճանով՝ վազեաց 'ի տապարակն անդր հանդիսին՝ յանդիման Մաքսիմիանոսի, ձայն եա առ Լեոս մենամարտիլ ընդ նմա։ Իսկ թագաւորն տեսեալ զտղայութիւն հասակի նորա, զարմացաւ. կոչեաց առ ինքն զՆեստորիոս, թելադիր լինէր նմա, այսպէս ասելով. Գիտեմ, որդեակ, թէ վասն առաւել ստանալոյ կամ վասն աղքատութեանց քոց այդպէս ցանկաս վրիպիլ 'ի կենացս, 'ի ձեռն զօրաւոր և յաղթանդամ առնն Լեոսի. արդ ես գթամ 'ի վայելչութիւն մանկութեան քո՝ որ զարդարեալ ես ամենայն գեղեցկութեամբ. տամ քեզ ինչս բազումս, 'ի բաց կաց միայն 'ի ցանկութենէդ առ 'ի մարտընչելոյ ընդ սկայազօր և ընդ յաղթող այրն այն, և երթ խնդա և ուրախ լեր ընդ գեղեցկութիւն քո։

Յայնժամ մանուկն Նեստորիոս ոչինչ պատրեալ լինէր 'ի խոստմանց թագաւորին, և ոչինչ առեալ 'ի խրատուէ նորա, և ոչ զարհուրեալ 'ի գովութենէն Լեոսի. այլ միայն վստահայեալ 'ի մարգարէութիւն Դեմետրիոսի, և ոյժ առեալ 'ի զօրութենէն Քրիստոսի, պատասխանեաց առ թագաւորն և ասաց այսպէս. Ես, ով թագաւոր, ոչ ընչից և կամ անցաւոր կենացս եկեալ եմ այսր, այլ քանզի ընտիր կացուցանեմ զիս քան զԼեոս, և լաւագոյն կենացն հասանիցեմ։ Իսկ իբրև լուաւ զայս թագաւորն և որ շուրջ զնովաւ մեծամեծք ամենայն՝ լի եղեն սրտմտութեամբ, հպարտութիւն զասացեալսն 'ի Նեստորիոսէ վարկանէին. և գրգռէին զԼեոս մենամարտել ընդ նմա, և կարեվէր խոցել որպէս զի առ ժամայն մեռցի։ Յայնժամ 'ի դիմի հարկանել միմեանց՝ մանուկն Նեստո-

րիոս զօրացեալ Հոգւով, թափ տուեալ զգետնեաց ըզ-
Լեոս և առ ժամայն սատակեցաւ։ Իսկ Թագաւորն զայն
տեսեալ՝ բարկացաւ յոյժ, մանաւանդ յորժամ ստու-
դեաց թէ քրիստոնեայ ևս իցէ Նեստորիոս։ Եւ փոխա-
նակ խոստմանցն զոր յառաջագոյն 'ի ձեռն քարոզչացն
պարգևել խոստանայր մեծամարտեցելոյն ընդ Լեոսի,
հրամայեաց իբրև զքրիստոնեայ գլխատել զմանուկն։

Արդ այսոցիկ այսպէս եղելոց տրտմեցաւ յոյժ Թա-
գաւորն ընդ եղեալն, քանզի և երկոցունց մահն ցա-
ւէր նմա. և յարուցեալ յաթոռոյն՝ տխուր դիմաք
կամեցաւ գնալ յարքունիսն։ Յայնժամ չարախօսք ո-
մանք բանսարկու եղեն առ նա, իբրև թէ Դեմետրիոս
եղև պատճառք այսր ամենայնի։ Իսկ նա զայրացեալ
իբրև զգաղան ինչ վայրենի՝ անդէն յատենին անդ
հրամայեաց գեղարդեամբ հարկանել. և այսպէս կա-
տարեցաւ սուրբն բարի խոստովանութեամբ 'ի Քրիս-
տոս, որ օր քսան և վեց էր հոկտեմբերի ամսոյ։ Իսկ
զսուրբ մարմին նորա հրամայեաց աստուածամարտն
Մաքսիմիանոս արտաքս ընկենուլ առ 'ի կերակուր
գազանաց և թռչնոց։ Յայնժամ եղբարքն ոմանք եր-
կիւղածք և վկայասէրքն եկեալ 'ի գիշերի գողացան
զնա, և տարեալ թաղեցին 'ի տան ուրեմն 'ի քաղա-
քին մնալ ժամանակի ինչ, յորժամ այց արասցէ Տէր
և յայտնեսցէ զնշխարս սրբոյն։

Իսկ յետ սուղ ինչ ժամանակի սկսան նշանք մե-
ծամեծք լինել և զօրութիւնք առ այնոսիկ որք կար-
դային զսուրբ վկայն յօգնականութիւն. և այսպէս
հռչակաւոր լինէր բժշկութիւնքն՝ որ կատարին ա-
նուամբ սրբոյն։ Յայնժամ Ղևոնդիոս ոմն այր աս-
տուածասէր, որ էր 'ի Լիւրիկեցւոց աշխարհէն, եպ-
արքոս եկեալ 'ի քաղաքն Թեսաղոնիկեցւոց, և ա-
ռեալ զտունն զայն յորում էր նշխարքն սրբոյն որ էր
նեղ և անձուկ, և 'ի բաց քակեալ զայն սրբեաց և
ընդարձակեաց զտեղին, և շինեաց տաճար մեծա-
պայծառ կազմածով յանուն սրբոյն, յորում մեծա-
մեծ բժշկութիւնք կատարէին անդ, 'ի փառս և 'ի
գովութիւն ամենասուրբ Երրորդութեանն և համա-
գոյ բնութեանն Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն,
այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Պատմութիւն սքանչելեաց որ եղև 'ի ձեռն Սրբոյն Դեմետրիոսի, եթէ որպէս եղև խնդիր նշխարաց նորա յետ բազում ժամանակաց յաւուրս Յուստիանոսի և Մաւրիկոսի թագաւորաց Յունաց:

Եկեսցուք, ով սիրելիք, եթէ կամիցիք զբազմօք զանց արարեալ՝ պատմեսցուք զսքանչելիսն որ եղև 'ի ձեռն աստուածազգեաց վկային Դեմետրիոսի, որպէս զի 'ի սակաւուցն զմիտս ձեր ուղղեալ՝ զբազումն իմանայցէք, զոր գործէ 'ի ձեռն սրբոց իւրոց զանձառելիս ամենազօր զօրութիւնն Քրիստոսի: Եւ արդ վասն զի յիւրաքանչիւր ժամանակի յորում կատարէին սուրբքն, հաստատեալ կային վկայասէր քրիստոնեայք որ առեալ ամիսուփէին զմարմինս նոցա 'ի ծածուկ տեղւոջ, զի մի մերձեսցին 'ի նոսա պիղծ և գարշելի ձեռնձերք և զոհք հեթանոսաց. և յաղագս այսպիսի պատճառանաց՝ է ուրեք զի յայտնի երևին գերեզմանք նոցա, և է զի չէ յայտնի, թէպէտ և գեղեցկապէս երևին կազմեալ յաստուածասիրաց ոմանց տաճարք վկայութեան նոցա: Այսպէս և 'ի քաղաքին Թեսաղոնիկեցւոց թէպէտ և բազում վկայք ծածկեալ կան և վկայարանք նոցա յայտնի երևին, ընդ որս և մեծն ականաւորն սքանչելեօք երանելին Դեմետրիոս. սակայն ոչ ուրուք 'ի նոցունց սրբոցն գերեզմանք և տեղիք սուրբ նշխարացն յայտնի երևին, բայց միայն սուրբ կուսին Մամրինոսի: Իսկ 'ի ժամանակս բարեպաշտ թագաւորին Մաւրիկոսի, բարեպաշտ և աստուածասէր կամօք խնդիր արարեալ բազմաց սրբոց որ 'ի Թեսաղոնիկեցւոց քաղաքին կատարեալ էին, և առաւել երանելւոյն Դեմետրիոսի, վասն առաւել համբաւոյ սքանչելեաց նորա, գրեաց թուղթ յերանելին Եւսեբիոս, որ յայնմ ժամանակի ունէր զաթոռ եպիսկոպոսութեան քաղաքին Թեսաղոնիկեցւոց, որպէս զի առաքեսցէ նմա մասն ինչ 'ի նշխարաց սրբոյն Դեմետրիոսի:

Յայնժամ գրեաց Եւսեբիոս պատասխանի թագա-

ւորին այսպէս. Գիտեմք և մեք, ով Թագաւոր, զի վասն Ճշմարիտ հաւատոյ է խնդիր քո, զոր ունիս առ սուրբ վկայն Քրիստոսի. բայց ուր և պատմեցից քում բարեպաշտութեանդ զհաւատս Թեսաղոնիկեցւոց, և զեղեալ սքանչելիս, և յաղագս այդպիսի խնդրոյ. վասն զի ոչ այսպիսի հաւատս ունի քաղաքս այս, Եթէ զգալի իրօք կամի պաշտել զԱստուած և պատուել զսուրբս նորա. այլ զնորին հակառակն իմանալի աչօք հաստատեալ են 'ի սէրն Աստուծոյ և սրբոց նորա. ընկալեալ զհաւատս 'ի Տեառն սրբոց վկայութեանցն, Եթէ հոգի է Աստուած, և երկրպագուաց նորա պարտ է հոգւով և Ճշմարտութեամբ երկիր պագանել։ Եւ վասն այնորիկ ծածկեալ է 'ի քաղաքիս յայսմիկ մարմինք սրբոցն՝ ամենևին անյայտ 'ի մարդկանէ, զոր և աստուածասէր հայր ձեր Յուստինոս, որ ձերոյին բարեպաշտութեամբ նախանձուդ էր լցեալ, դոյնպէս փորձեալ եդիտ. վասն զի նա վկայասէր կամօք գրեաց Թուղթ՝ որ յառաջ քան զմեզ այսր քաղաքի եպիսկոպոս էր, որպէս և քո բարեպաշտութիւնդ 'ի մեզ, մասն ինչ հայցելով 'ի նշխարաց փառաւորեալ վկային Դեմետրիոսի, զոր և կամեցաւ ընուլ զաստուածահաճոյ տարփումն սիրոյ Թագաւորին. և մտեալ 'ի վկայարան սրբոյն՝ բրեցին զատակ եկեղեցւոյն ուր կարծէին Թէ անդ եդեալ է նշխարքն սրբոյ վկային։ Եւ զայսպիսի գործ երկիւղածաց քահանայիցն հրամայէր եպիսկոպոսն, զորոց հաստատուն գիտէր զարժանաւորութիւն նոցա։ Իսկ իբրև խոր ինչ առնէին զբրածն, շուրջ կալով այլոցն սաղմոսիւք և օրհնութեամբ և մոմեղինօք լուցելովք և անուշահոտ խնկօք կամէին այլ ևս բրել, յայնժամ յանկարծակի հուր ելեալ 'ի ներքուստ ելից զամենայն խորս բրածին, և շուրջ պատեալ զնոքօք՝ ոչ այրէր զնոսա։ Լուան ձայն որ ասէր. Արդ դադարեցէք յայսմ հետէ յառաւել փորձելոյ զզօրութիւնն Քրիստոսի՝ որ միացեալ է յոսկերս սրբոյն։ Իսկ նոցա ահիւ և դողութեամբ լցեալ միանգամայն, առեալ 'ի հողոյ բրածին՝ առաքեցին առ Թագաւորն, գրով ծանուցին նմա զեղեալ սքանչելիսն։ Արդ այսոքիկ, ով Թագաւոր, առ բարեպաշտոն Յուստինոսիւ հարքն քոյով եղև. և մեք նոյն օրինակ ա-

ռաքեցաք քում աստուածսիրութեանդ 'ի նոյն օրհ-
նութեան հողոյ, զոր եդեալ 'ի պահարանի յայսմ
եկեղեցւոջս, 'ի պէտս բժշկութեան ախտաժետաց.
զոր և դու ընկալեալ ուրախութեամբ մեծաւ, առեալ
լցցիս առանց երկմտութեան, իբրև նոյն ինքն զբո-
ւանդակ վկայն ունելով առ քեզ, որպէս վայել է
քում հաւատոյդ. այլ և 'ի փորձոյ անտի ծանիցես
զաքանչելիսն, և ոչ անհնազանդ վարկցիս զմեզ ձեր
աստուածասէր թագաւորութեանդ։ Քրիստոսի փառք
յաւիտեանս. ամէն։

Յաղագս Մարիանոսի Եպարքոսի, երբ ոչպէս բժշկեցաւ սքան-
չելիօք 'ի յախտէ անդամաշուծութեան 'ի ձեռն սքանչելի վր-
կային Դեմետրիոսի։

Պատմեցից և այլ սքանչելիս՝ որ եղև 'ի ձեռն սուրբ
վկային Դեմետրիոսի։ Այր ոմն յազատ ազգէ աշխուա-
կան և մեծատուն յոյժ, որում անուն էր Մարիա-
նոս, ընդ առաջինսն կարգեալ, և սենեկապետ 'ի պա-
լատան թագաւորութեանն. սա հլսման առեալ 'ի
թագաւորէն, վարեալ զեպարքոսութիւն իշխանու-
թեան Լիւրիկեցւոց. և այն ինչ հասեալ յաստուա-
ծապահ քաղաքն Թեսաղոնիկեցւոց, բարեպաշտ և
արդար կամաք ուղղէր զերասանակ իշխանութեանն,
և ոչ փոքր ինչ գոհութիւնս մատուցանէին ամենայն
ժողովուրդքն առ թագաւորն։ Յայնժամ նախանձե-
ցաւ ընդ նա բանսարկուն, որ սովոր է միշտ նախան-
ձել ընդ բարիս մարդկան. և 'ի վայր արկեալ զնա յի-
բրաւանցն՝ զոր ստացեալ ունէր յինքեան զառաջինն,
սերմանեաց 'ի նա զորոմն չարութեանն իւրոյ, զորո-
վայնամոլութիւն և զհեշտասիրութիւն, զարմատ ա-
մենայն չարեաց զարծաթասիրութիւն և զագահու-
թիւն. և յայսմանէ նախախնամողական տեսչութիւնն
փոխանակ ծուլանալոյ նորա 'ի պատուիրանացն Աս-
տուծոյ, անկեալ եղև յախտ հիւանդութեան անհնա-
ելինս անդամալուծութեան, որպէս չէր հնար յումեքէ
առողջութիւն գտանել, որք ըստ մարդկային արհես-
տից են հմուտք բժշկութեան։ Արդ մինչդեռ յայսմ

ախտի անկեալ դնէր այրն այն զամն բաղումն, տա-
բակուսեալ 'ի մարդկային բժշկութեանցս, ուր ու-
բեմն զմտաւ ածէր յաւուր միում զաքանչելագործ վը-
կայն Քրիստոսի զսուրբն Դեմետրիոս։ Եւ մինչդեռ
յայսմ մտաց խորհրդի էր՝ նիրհէր, և յանկարծակի
երևէր նմա սուրբ վկայն 'ի կերպարանս բարեկամի,
հարցանէր եթէ զի՞արդ այնչափ ժամանակս անկեալ
դնի յախտ անդր։ Իսկ նա պատասխանի տուեալ ա-
սէր հեծեծելով այսպէս. Տէր իմ, ոչ կարեմ պատմել
զտանջանս՝ զոր կրեն անդամք մարմնոյ իմոյ. վասն զի
եթէ 'ի ջերմն մերձենամ, սառն թուի մարմնոյս, և
յորժամ 'ի սառն՝ այնպէս կարծեմ եթէ ջերմ է. իսկ
թիկունքս և արմկունքս և ձեռքս՝ միայն կախեալ կան
առանց զօրութեան. և յորժամ շարժել կամիցիմ՝ ոչ
որպէս կամիմ տարուբերիմ, կամ որպէս պէտք են ինձ
գան զհետ իմոց կամացս։ Եւ զնոյն առ ընթացս կրեմ,
'ի բարձիցս և 'ի ծնկացս և 'ի սրունիցս, վասն զի կար-
ծին միայն թէ անդամք իմ իցեն և 'ի զօրութեան ա-
մենևին ընդարմացեալք։ Եւ դու զինչ արդեօք ունիս
ասել ինձ, ով սիրելի բարեկամ, որ այդքան գթու-
թեամբ հարցանես զիս, և կամ զինչ թելադրութիւն
մատուցանես վշտագնեալ անձին իմոյ։

Պատասխանի ետ նմա սուրբն Դեմետրիոս և ասէ.
Լուր ինձ, եղբայր, և ասացից քեզ զարժանն, որպէս
կարասցես թողութեան հասանել և բժշկութեան
մարմնոյդ. նախ խրատ տամ, պարտ է քեզ բարեմիտ
լինել և առանց տրտնջման, և գոհացողութեամբ ըզ-
ցաւս մարմնոյդ ընդունել, և մի ընկղմել զանձդ ան-
յուսութեամբ 'ի խորս տրտմութեան հոգւոց, և ապա
'ի միտ առնուլ թէ ամենայն ինչ նախախնամութեամբ
ներգործի 'ի մարդիկ յամենեցունց հրաշագործողէն
Աստուծոյ ըստ իւրում օգուտս. զի թէպէտ և ըստ ար-
ժանեաց ինչ կիրս կրեսցէ, սակայն և զայն մարդասի-
րութիւնն Աստուծոյ 'ի մեղաց թողութիւն համա-
րեսցի. քանզի ասա տալով վերս մեղացն, 'ի հանդեր-
ձեալ դատաստանին մարդասիրութիւն գտցէ՝ ըստ
մարգարէին Նաւումայ, եթէ ոչ կրկին վրէժս խընդ-
րեսցէ Աստուած. միայն թէ գոհութեամբ զցաւս ան-
ձին յօգուտ շահիցի, այլ ոչ տրտմութեամբ և տրը-

տընջմամբ կրկին տանջանս ինքեան ստացի։ Այպա է-
թէ արդար իցէ որ զկիրս ցաւոցն ընդունիցի և գո-
հանայցէ բազում զգուշութեամբ առ 'ի պահել զար-
դարութիւնն, աստ ընկալցի և 'ի հանդերձեալսն մե-
ծապայծառ իբրև զոսկի 'ի հուր մաքրեալ՝ փառօք
պսակեսցի, որպէս զերանելին Յոբ։ Իսկ վտանգեալ
եպարքոսն՝ սկսաւ հարցանել ցնա անդէն 'ի նմին տես-
լեան և ասէ. Ո՞վ ես դու տէր, և ո՞ւր իցէ տեղի բնա-
կութեան քո՝ որ զայդքան գեղեցիկ մխիթարութիւն
մատուցանես ինձ։ Ասէ ցնա սուրբն. Իմ տեղի բնա-
կութեան Թագաւորական քաղաքն է, անդր եկեալ
գտցես զիս և ուսցիս զանուն իմ։ Եւ Մարիանոս զար-
թուցեալ պատմեաց զտեսիլն մերձաւորաց իւրոց։ Եւ
դարձեալ սկսաւ ողբալ զթշուառութիւնն իւր. վասն
զի լուաւ 'ի սրբոյն, թէ իմ քաղաք Թագաւորական
քաղաքն է, կարծեաց թէ զԿոստանդինուպոլիս ա-
սաց, և ասէր. Վա՛յ ինձ թշուառականիս, որչափ խրն-
դութեամբ սփոփեաց զիս 'ի տեսիլս և կամ որչափ
տրտմութեամբ, և տարակոյս լցոյց զիս. վասն զի ես
աստ անդամալոյծ անկեալ դնիմ 'ի Թեսաղոնիկեցւոց
քաղաքիս, զքեզ որպէս կարիցեմ գտանել 'ի Կոստան-
դինուպոլիս, ով տէր իմ և մերձաւոր բարեկամ։

Յայնժամ մի ոմն յայնցանէ որ մերձ առ նա կային,
ազգեալ նմա շնորհացն Աստուծոյ, ասէ ցտարակու-
սեալ այրն Մարիանոս. Մի՛ վհատիր, տէր իմ եպարքոս,
ես առեալ տարայց զքեզ առ բարեկամ քո, և ընդէր
ոչ իմանաս թէ նա ինքն է գովելի վկայն Քրիստոսի
Դեմետրիոս, որ ոչ թէ յերկրաւոր Թագաւորական
քաղաք բնակէ, այլ 'ի վերին Երուսաղէմ, որ քաղաք
անմահ Թագաւորին է. զոր և այժմ 'ի մերում քա-
ղաքիս գտանի, վասն զի աստ կատարեցաւ. այլ և յերկ-
նաւոր քաղաք և յառաջի կալոյ անմահ Թագաւո-
րէն ոչ նուազի։ Զի որք խաչակից եղեն տեառն իւ-
րեանց՝ և փառացն հաղորդ գտանին, աննիւթ հոգւով
միացեալ են, և 'ի նախախնամութենէ հօտից իւր-
եանց ոչ 'ի բաց կան, իբրու զի կենդանի է Քրիս-
տոս յոսկերս նոցա։ Արդ եկ, տարայց զքեզ 'ի տաճար
սրբոյն, և անդ վայելեսցես 'ի շնորհս վկային, և գըտ-
ցես զառողջութիւն անդամոց քոց։ Արդ զայս ասա-

ցեալ շնորհալից մանուկն, բարձին զնա մահճաք և տարան եդին յատակս եկեղեցւոյն, որ գեղեցկապէս շինեալ էր յանուն սրբոյն։ Իսկ նորա նկատեալ ետես՝ի տաճար անդր զպատկեր երանելւոյն. և յառեալ՝ի նա զաչս իւր միայն, քանզի ոչ կարէր և զգլուխն ամենևին՝ի վեր ամբառնալ, կաց յաղօթս այսպէս. Ո՛վ սուրբ և ամենասուրբ ճգնազգեաց նահատակ և հարազատ ծառայ Քրիստոսի, դու մատուցեր զանձինս բազմաց անուշահոտ պատարագ Աստուծոյ, և՝ի վերայ ամենեցուն զքեզ ինքնին բոլորապտուղ ընծայեցեր նմա։ Դու եդեր զանձն քո փոխանակ այնորիկ որ վասն ամենեցուն եդ զանձն իւր։ Դու վասն բազում աշակերտելոց խոցեցար, փոխանակ այնորիկ որ վասն ամենայն աշխարհի փրկութեան ետ կամաւորաբար զկող իւր գեղարդեանն։ Դու զբազումս ածեր՝ի կենդանութեան քում՝ի պարկեշտութիւն, և առաւել յորժամ զճշմարիտ կենդանութիւնդ ընկալար՝ի Քրիստոսէ։ Եւ մեք թէպէտ և ոչ սքանչելեօք նկատեմք ըզփառս քո, և զի խօսիմ ևս, և աշակերտես զգաւառս քո զայս՝ի ձեռն սքանչելեաց քոց, և հոգևոր ցօղով բժշկութեանդ քո զբազումս արդիւնացուսցես յաստուածային շտեմարանն։ Աղաչեմ զքեզ, կենդանի վկայ Քրիստոսի, հեղ յիս՝ի տառապեալս զշնորհս բժշկութեան քո. պնդեա զլուծեալ անդամս իմ։ Ահաւասիկ անդամալոյծս մերձ յաւազանս քո անկեալ դնիմ, սպասելով քեզ փառաւորեալ հրեշտակիդ առ՝ի շարժել զողորմութիւն, իջուցն կենարար ջրոյդ բժշկութեան՝ի վերայ իմ։ Այսա և դու ցիս՝ որպէս և տէրն քո Յիսուս Քրիստոս ցբազմամեայ անդամալոյծն, թէ՝ Արի՛, առ զմահիճս քո և գնա. որ թէպէտ և երեսուն և ութ ամ ոչ ունիմ, սակայն երեսնեակին երեսուն և ութիցս առաւելութեամբ մեղօք անկեալ դնիմ։ Արդ և դու որ նման եղեր հեզութեան վարդապետին քո, նմանակից լեր և գթութեան նորա. և քաջ գիտեմ եթէ կարող ես օգնել ինձ, վասն զի դու ընկալար զնշխանութիւնդ զայդ՝ի Քրիստոսէ, վասն ճշմարիտ հաւատոց քոց։ Այսաց նա իբրև զԱստուած. Արի՛, առ զմահիճս քո. ասա և դու իբրև զհարազատ ծառայ նորա. նոյնպէս հաւատայ բազմամեայ լու-

ծեալն. եւ փոյթ ընդ փոյթ Ճեպեցաւ ծանուցանել ազգին Հրէից զզօրութիւն աստուածութեան նորա. Հաւատամ և ես և քարոզեմ յամենայն աշխարհի ըզ զօրութիւն այնորիկ՝ որ արժանաւորապէս պսակեացն զքեզ. յառնեմ և ես ոչ միայն զմահիւն բարձեալ, այլ պատարագս և նուէրս բարձեալ բերիցէ 'ի վկայարանի սրբութեան քում. և այսպէս 'ի ձեռն քո, ո՛վ մարգասէր վկայ, փառաւորեսցի յիս ամենասուրբ Երրորդութիւնն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Եւ զայս ասացեալ Մարիանոս՝ նիրհէր յաշխատութենէն. և ահա երևեալ նմա փառաւորեալ վկայն Քրիստոսի Դեմետրիոս ըստ առաջին օրինակի տեսլեանն, և ասէ ցնա. Բարիոք լուար ինձ և եկիր այսր, տէր եպարքոս, և ես վաղվաղակի Աստուծով կատարեցից զոր խոստացայ առնել քեզ. բայց և զայս տեառն իմոյ պատուիրան աւանդեցից քեզ. ահաւադիկ ողջացար, մի՛ դարձեալ մեղանչեր, զի մի՛ չար ևս լինիցի քեզ. քանզի սովորութիւն է լուծելոց անձանց, յորժամ տրտմական ինչ տեսցեն՝ խոստովանին 'ի բաց կալ 'ի մեղաց, և 'ի հեշտականն՝ թուլանան 'ի բարեաց. ըստ այնմ, թէ՝ Յորժամ սպանանէր զնոսա դառնային ինդրէին և առաւօտ առնէին առ Աստուած։ Եւ դարձեալ. Եկեր Յակոբ և յագեցաւ, անկուշեաց զսիրելին, գիրացաւ ստուարացաւ լայնացաւ, եթող զՏէր Աստուած զարարիչ իւր և յետս եկաց յԱստուծոյ փրկչէն իւրմէ։ Արդ եթէ ստուգապէս հաստատեսցիս 'ի Ճշմարտութեանն՝ ողորմութիւն Քրիստոսի բժշկեսցէ զքեզ բարեխօսութեամբ իմով։ Պատասխանի ետ Մարիանոս և ասէ. Հաւատամ տէր, եթէ ոչ անցիցէ զպատուիրանաւ քով, միայն եթէ ողորմեսցի քև, և ընկալայց զբժշկութիւն անդամոց իմոց։

Եւ սուրբ վկայն ձգեալ զձեռն իւր շօշափեաց զամենայն լուծեալ անդամն նորա և ասէ. Քրիստոս Աստուած Ճշմարիտ բժիշկն հոգւոց և մարմնոց բժշկեսցէ զքեզ և զախտացեալ անդամն քո, այն որ յարուցանէ զանկեալսն և կանգնէ զգլորեալսն։ Եւ զարթուցեալ Մարիանոս 'ի տեսլենէ անտի, կաց կանգուն առողջացեալ ամենայն անդամքք իմքք իբրև զառաջինն՝

մինչ չէր ախտացեալ, և սկսաւ փառաւորել զԱստուած, և գոհանալ զսուրբ վկայէն՝ յորոյ ձեռն եգիտ զբժշկութիւնն. և ասէր արտասուօք այսպէս. Ո՛վ, որքան խնդութիւն էր քաղցր բարբառ քո 'ի հոգիս իմ, վկայ Քրիստոսի. մինչ գրեթէ դեռ ևս հնչէ 'ի լսելիս իմ, և ցնծացեալ պարարէ զամենայն ոսկերս իմ։

Արդ այսոցիկ այսպէս եղելոյ աքանչելեաց՝ սկիզբն առնէր այնուհետև այրն Մարինոս՝ կրթեալ զինքն յամենայն հրահանգս առաքինութեան, և ժուժկալութեամբ առաւել քան թէ մարմնականօք զիշխանութիւնն իւր զարդարէր։ Իսկ նախանձոտ բանսարկուն իբրև ետես զայրն այնպէս պայծառացեալ առաքինութեամբ, սկսաւ այնուհետև զիւրսն մեքենայել ընդդէմ նորա զչարութեանն սերմանսն, որպէս զի 'ի վայր անկեալ յառաքինութեանցն։ Եւ իբրև յամենայնի պարտեալ լինէր չարութիւնն, օձն ոչ կարացեալ ազդել 'ի նա զզանազան մեքենայսն իւր, և կամէր սերմանել զչար սերմանիսն իւր. վասն զի յոյժ ամրացեալ զգուշութեամբ էր հաւատովն, և ամրացեալ ունէր յինքեան զսերմն բարեպաշտութեան։

Եւ տես զինչ գործէր այնուհետև չարանախանձն, որ խորամանգութեամբն ոչ կարաց յաղթել՝ շրջեցաւ 'ի միւս կողմն. և խնդրեաց չարչարել զնա որպէս զերանելին Յոբ, որ և խոզից անգամ ոչ ունի իշխանութիւն առանց Աստուծոյ թողացուցանելոյն։ Իսկ վասն զի կամեցաւ Աստուած առաւել պայծառացուցանել զնա, և յամօթ առնել զչարախօսն նորա, թոյլ ետ չարչարել զմարմին նորա և հոգւոյն ոչ իշխել։ Եւ հարաւ մարմին նորա չարաչար կեղօք, մինչ գրեթէ ամենայն անդամք նորա քակտեալ լինէին 'ի միմեանց, որպէս զի այլոց մատուցանել զկերակուրն 'ի բերան նորա, վասն զի պատուական էր այրն յաչս ամենեցուն։ Բազում անգամ բժիշկք 'ի քաղաքէն և 'ի գաւառէն եկին անդր, բայց ոչինչ կարացին օգնել նմա. և իբրև յամենայնէ յուսահատ լինէին որ իւրքն էին, սակայն նա ևս առաւել գոհութեամբ տանէր զչարչարանսն։

Յայնժամ մի ոմն 'ի ծառայից նորա շարժեալ 'ի բանսարկուէն որպէս և յառաջագոյն կինն Յոբայ,

մատուցեալ յունկն առնս այսորիկ, սկսաւ մեղմով Թելադիր լինել նմա այսպէս. Պարտ է քեզ, ասէ, ով տէր իմ, ունկնդիր լինել մեզ և շահեալ զմեզ զամենեսեան և ընդունել զառողջութիւն մարմնոյ քո։ Արդ է աստ այր մի՝ որ գիտէ հմայս բժշկութեան, գրեալ 'ի մագաղադի եբրայեցի բարբառով անուանս հրեշտակաց, այլ և արեգակունս, և այլ բազմախուռն անուանս որ ոչ է ումեք յայտնի։ Եւ մագաղադն յորում այս ամենայն՝ 'ի գրապանս վերարկուի ձևացուցեալ է, գիր ունելով յինքեան ներքոյ և արտաքոյ. և ասէ, Թէ որ զգենու զայս՝ բուժեալ լինի յամենայն ախտից. արդ ա՛ռ դու զնա, և զգեցիր և ազատեա զբազումս և զմեզ 'ի տրտմութենէ վիրացդ՝ որ հասին 'ի վերայ քո, որ իբրև 'ի խորս դժոխոց այնպէս Թաղեալ կամք վասն քո։ Պատասխանի ետ համբերող այրն և ասէ. Ո՛վ մոլեգնեալ Թելադիրդ՝ որ այդքան յանդգնեալ ապստամբել ուսուցանես զմեզ յԱստուծոյ, և առ գիւթս և կախարդս և դևս հատուածես զմարմինս առողջացուցանել, փութաս և զհոգիս սպանանել։ Ոչ այդպէս, այլ լաւ է ինձ մեռանել այսպէս՝ քան Թէ հեռանալ յԱստուծոյ Ճշմարտէ։ Եւ այսպէս 'ի բաց վարեաց զնա յիւրմէ իբրև զմի ոք յարանց անողդամաց խօսեցեալ։ Եւ ապա սակաւ մի զետեղեալ 'ի բազում վաստակոց մարմնոյն նիրհէր։ Եւ ահա երևեցաւ նմա սուրբ վկայն Քրիստոսի Դեմետրիոս ըստ օրինակի առաջնոյն տեսլեանն, հարցանէր ցնա վշտակցաբար, Թէ ո՞րպէս իցէ նա։ Իսկ նա յոյժ հեծեծելով ասէ ցնա. Այդպէս որպէս տեսանես, տէր։ Եւ սուրբ վկայն խանդաղատելով զնովաւ ասէր. Մի՛ երկնչիր, սիրելի, բժշկեսցէ զքեզ Տէր Յիսուս Քրիստոս Աստուածն իմ։ Եւ զարԹուցեալ Մարիանոս 'ի քնոյ անտի յարեաւ և եկաց 'ի վերայ ոտից իւրոց. և ահիւ և խնդութեամբ լցեալ 'ի բաց եդեալ զհանդերձն հիւանդութեանն, և առեալ նոր զգեցաւ, և ածեալ գոտի ընդ մէջ և կօշիկս յոտս՝ յարուցեալ գնաց 'ի վկայարան սրբոյն. և եկեալ 'ի տեղին ուր կային ծածկեալ նշխարք նորա, ընկէց զինքն 'ի վերայ արծաթապատ կաղմածին՝ որ տապանաձև յօրինեալ կայր, առաջի նկարագիր պատկերի վկային. և սկսաւ

արտասուօք գոհանալ ըստ օրինակի առաջին մաղթանացն։ Եւ 'ի կատարման աղօթիցն հայցել շնորհս յԱստուծոյ՝ բարեխօսութեամբ սրբոյն, որպէս զի անապատ պահեսցի առաքինութիւն նորա յամենայն մեքենայից բանսարկուին. և գնացեալ 'ի տուն իւր ետ զամենայն ինչս իւր 'ի ձեռս աղքատաց։ Իսկ զհանդերձս մեծագինս և այլ ևս բազում գանձս ոսկւոյ և արծաթոյ առեալ տարաւ զայն 'ի սպաս պաշտաման տաճարի սրբոյն, և այսպէս սատանայ յամօթ եղև, և փառաւոր լինէր Աստուած յայրն յայն 'ի ձեռն երանելւոյն Դեմետրիանոսի։ Վասն զի նմա վայել է փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ՝ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Պատմութիւն թէ որպէս փրկեցաւ քաղաքն Թեսաղոնիկեցւոց 'ի պաշարմանէ բարբարոսացն և 'ի վտանգէ սովոյն, 'ի ձեռն սքանչելագործ վկային Դեմետրիոսի։

Պատմեցից և այլ սքանչելիս՝ զոր արար Աստուած 'ի ձեռն ճգնազգեաց վկային Դեմետրիոսի, յոյժ հրաշափառագոյն քան զառաջինն, զոր չէ իսկ պարտ ծածկել, զի մի՛ զլացողք լիցուք նախախնամող փրկագործութեանցն Աստուծոյ, որ յամենայն դարս ներգործէ յազգս մարդկան 'ի ձեռն սրբոց իւրոց, և այս ոչ միայն առ մարմնոյ յարդարին նոքօք, այլ և առ հոգիս. վասն զի ուստի՞ է մեզ մեղաց թողութիւն գտանել՝ որով և համարձակութեամբ ունիցիմք կալ առաջի ահաւոր բեմին Քրիստոսի, եթէ ոչ նոցին սուրբ աղօթիւքն զոր ասա միայն կարեմք շահել։ Եւ եղև 'ի ժամանակս Մաւրիկոսի Յունաց կայսեր, իշխանն Արաբացւոց յինքն գումարեաց զամենայն ազգս բարբարոսաց տալ պատերազմ ընդ թագաւորին Յունաց. և նախ զառաջինն դիմեաց յաշխարհն Թրակացւոց և Լիւրիկացւոց յաւարի առնուլ զնոսա, և եկեալ եհաս յաստուածապահ քաղաքն Թեսաղոնիկեցւոց, որ էր քան զամենեսեան բարգաւաճեալ բազմայարմար փարթամութեամբ։ Քանզի զայս խորհէր բարբարոսն 'ի միտս իւր թէ զնա առիցէ, և զբառամբ ածիցէ

այնուհետև զԹագաւորն Յունաց։ Այդ իբրև եկին ե-
հաս յանպատրաստիցն 'ի վերայ քաղաքին անհուն
բազմութեամբ, զոր ոչ կարէր ընդ Թուով արկանել,
զոր ոմանք երկրորդ Սինեքերիմ կարդային զնա, այն որ
եկեալն էր 'ի վերայ տանն Հրէաստանի, վասն զի զգետս
ցամաքեցուցանէին և զաղբիւրս և զբոյսս ամենևին սպա-
ռէին. և այս լինէր յաւուր կիւրակէի 'ի ժամ առաւօ-
տու, յամենայն սեպտեմբեր, որ օր քսան և երկու
էր ամսոյն։ Իսկ իբրև գաղտ 'ի գիշերի պատեալ պա-
շարեցին զքաղաքն, և սողելով մեղմագնաց քայլիւք
մերձեցան 'ի պարիսպն՝ իւրաքանչիւր սանդուխս ըստ
անձին բարձեալ յինքն. և քանզի ոչ գոյին պահա-
պանք, և սկսան 'ի վեր ելանել մինչև չէր այգոյն քաջ
մերկացեալ։ Եւ իբրև ելին բազումք և քաջամարտիկք
'ի նոցանէ, սուսերամերկք եղեալ կամէին 'ի քա-
ղաքն յարձակել, յայնժամ յանկարծակի սուրբ վը-
կայն Դեմետրիոս ել ընդ առաջ նոցա 'ի կերպարանս
զինուորի, հար զմի ոմն 'ի նոցանէ գեղարդեամբ և
Թափանց արարեալ ընկէց յայնկոյս պարսպին. և
զայն տեսեալ այլոցն զարհուրեալք 'ի տեսլենէ նորա
առ հասարակ 'ի վայր հոսեալք արտաքս անկանէին.
այս նախ առաջին հրաշագործեցաւ 'ի ձեռն սուրբ
մարտիրոսին։ Իսկ առ վաղիւն իբրև գիտացին բար-
բարոսքն՝ Թէ ոչ գոյ զօրք 'ի քաղաքին, յարևելից
կողմ պարսպին մինչև յարևմտից դուռնն՝ որ ինչ ըստ
ցամաքաւն էր, 'ի ծովէ մինչև 'ի ծով ասպարափակ
արարեալ լցին զարտաքին խանդակն պարսպին, մինչ
գրեԹէ անհուն բազմութիւնն 'ի միմեանց վերայ
կուտեալք 'ի ներքս հոսէին, որպէս զի անյոյսք լինէին
ամենեքեան որ 'ի ներքս 'ի քաղաքին, և 'ի լալ եղեալ
ամենեքեան իբրև զվտակս ջուրց այնպէս զմի արտօսր
հեղուին։ Իսկ սուրբ վկայն Քրիստոսի ընդդէմ զի-
նեալ բարբարոսացն, և ոչ Թողացուցանէր նոցա 'ի
ներքս մտանել. և զայսպիսի նախախնամողական տես-
չութեան երևումն միայն արժանաւորք ոմանք 'ի հա-
ւատացելոցն տեսանէին։ Եւ յայսպիսի պաշարման ե-
կաց քաղաքն սկսեալ 'ի քսան և երկուցն սեպտեմբե-
րի ամսոյ մինչև 'ի յուլիս ամիս. և քանզի յանպատ-
բաստիցս որապէս վերագոյն ասացաք՝ եկին, և պա-

տեալ պաշարեցին զքաղաքն ամենայն 'ի ժամանակս թզոյ այգեացն, և ցանեալ ցրուեցան զօրքն բարբարոսաց յամենայն գաւառն, և սպառեցին զամենայն ցորեան և զգինի և զամենայն միրգս. և 'ի պաշարման լինելով զայնչափ ժամանակս՝ բազումք մեռան 'ի սովոյ որ 'ի ներքս էին։ Արդ մինչդեռ յայսպիսի վտանգի էին՝ կամեցաւ Աստուած ցուցանել ամենեցուն թէ միայն բարերարութեամբն իւրով որ 'ի բարեխօսութենէ սրբոյ վկային՝ եգիտ քաղաքն այն զփրկութիւն, ապա եթէ ոչ հարկ էր կորնչել ամենայն իրօք։ Վասն զի այր ոմն էր 'ի քաղաքին 'ի պատուական ազգէ յոյժ երկիւղած 'ի Տեառնէ, և զարդարեալ ամենայն գործովք բարեաց. սա տեսանէր յաւուր միում յորժամ ննջէր 'ի տանն իւրում տեսիլ ինն սքանչելի։ Իբրու զի արք երկու լուսազգեստք եկին մտին 'ի վկայարան սրբոյն, որպէս թէ պատգամաւոր յԱստուծոյ ի ցեն նոքա. և ասեն ցնա այսպէս. Տէր Յիսուս Քրիստոս առաքեաց զմեզ, որպէս զի թողցես զքաղաքս զայս և եկեսցես առ նա. վասն զի մատնելոց է զսա 'ի ձեռս բարբարոսացն։ Իսկ նա հարուստ ժամ մի տխուր դիմօք 'ի վայր նայեցեալ՝ ոչ տայր պատասխանի նոցա։ Ապա յետ այսորիկ ասէ ցնոսա. Ոչ այդպէս, տեարք իմ և ծառայակիցք, ոչ երթամ աստի, և ոչ թողում զհայրենի բնակութիւնս իմ։ Վասն զի աստ կատարեցայ և աստ հովուեցից զհօտ իմ։ այլ այսպէս ասասջիք ցփրկիչն իմ և Աստուածն, թէ՝ Ո՛վ տէր, զի՞արդ կորուսանես զայսքան ժողովուրդ՝ զոր գնեցեր պատուական արեամբդ քով. այո՛ Տէր, մի՛ առներ ըստ մեղաց մարդկանս այսորիկ, այլ ըստ բազում ողորմութեան քում, վասն զի ցասումն քո ոչ եթէ զկորուստ խընդրէ՝ այլ զդարձ և զապաշխարութիւն. այլ թէպէտ և խրատես, Տէր, քաղցրութեամբ և մի՛ բարկութեամբ։ Եւ զայս ասացեալ մարդասէր վկայն, ողջունեալք 'ի նմանէ արքն պատգամաւորք դարձան անդրէն ուստի եկեալն էին։

Իսկ այրն երկիւղած զարթուցեալ 'ի քնոյ անտի եւ վաղվաղակի 'ի պարիսպն, շրջէր քաջալերէր զմարդիկն. Մի՛ երկնչիք, ասէ, եղբարք, վասն զի սուրբ վկայն Քրիստոսի Դեմետրիոս ընդ մեզ է. և նա խոնարհ

հեղուցանէ զբազմագութն Աստուած յողորմութիւն՝ չկորուսանել զքաղաքս զայս վասն անօրէնութեանց մերոց, միայն խոստովանել և ապաշխարել զյանցանս մեր, և քաղցրութեամբ Աստուծոյ վաղվաղակի ժամանեսցէ առ մեզ։ Որ եղև իսկ և կատարեցաւ և յանդ ելին աղօթք սրբոյն։ Վասն զի բարբարոսք չբաւեալ գնացին յաշխարհն իւրեանց, և քաղաքն և գաւառն ամենայն դարձեալ յառաջին ազնուականութեան պայծառանային։

Արդ այսոցիկ այսպէս եղելոց, ասացից և զմիւս ևս այլ ողորմութիւնն Քրիստոսի, որ եղև 'ի տեսչութենէ սրբոյն, քանզի յառաջագոյն ասացաք զամենայն գեօղըս և զգաւարակս գաւառին աւերեալ էր բարբարոսացն, և համբաւ քաղաքին պաշարմանն[1] տարածեցաւ ընդ ամենայն աշխարհն. և վասն այնորիկ ոչ գային անդ նաւք վաճառականք հացի և այլոց կերակրոց յաշխարհացն՝ ըստ առաջին սովորութեանցն։ Յայնժամ ապա սկսաւ քաղաքն և գաւառն նեղիլ 'ի սովոյ. և ահա նաւք բազումք եկեալ յաշխարհէն Իտալիացւոց, նաւէին 'ի Բիւզանդիոն՝ բարձեալ ունելով յինքեան ցորեան բազում։ Յայնժամ երևեալ նոցա սուրբն Դեմետրիոս 'ի սահմանս Քիոնն կղզւոյ, և ասէ ցնաւապետ նաւացն այնոցիկ, որում անուն էր Ստեփանոս, և ցընկեր նորա. Յո՞ նաւէք դուք եղբարք։ Եւ նոքա ասեն. Ի Բիւզանդիոն։ Ասէ ցնոսա. Ո՛չ այդպէս, այլ եկայք զկնի իմ 'ի Թեսաղոնիկէ, և անդ բազում շահս ընդունիցիք։ Ասէ նաւապետն. Լուեալ է մեր եթէ աւերեալ է քաղաքն այն 'ի բարբարոսացն, զիա՞րդ երթիցուք անդր։

Պատասխանի ետ տեսիլն և ասէ. Ես եմ Դեմետրիոս վկայն Քրիստոսի որ անդ կատարեցայ, և անդ քաղաքապետ եմ։ Մի՛ երկնչիք, եկայք զկնի իմ, վասն զի յԱստուծոյ առաքեցայ ես առ ձեզ։ Եւ ուղղեալ վկային զառագաստն ընդ շաւիղս հողմոյն, աջողակ եղեալ վաղվաղակի հասին 'ի Թեսաղոնիկին։ Յայսմանէ և այլ բազում նաւք եկին անդր, և ամենայն քաղաքն և ամենայն գաւառն լցեալք հացիւ փառաւոր

1. Յոր. պաշարումն։

առնէին զԱստուած՝ որ այսպէս հրաշագործեաց առ նոսա՝ 'ի ձեռն վկային իւրոյ Դեմետրիոսի։

Արդ զայս յիշատակարանս յարմարեցաք, եղբարք, ընդ վկայութեան սրբոյն, զի ամենայն հաւատացեալք ընթերցեալ զսա մտադիւրութեամբ կատարեսցեն զյիշատակ սրբոյն։ Վասն զի նոքօք կարեմք ողորմութիւն գտանել յԱստուծոյ, յայսմ աշխարհիս և 'ի հանդերձելումն. նաև մեղաց թողութիւն և 'ի պատուհասից զերծումն և ամենայն ուստեք լցեալ մեզ, եթէ ոչ նոցին սուրբ աղօթիւքն. զի ամենայն իրօք ըզհեզութիւն և զմարդասիրութիւնն Աստուծոյ յինքեանս կրեցին, մինչ աստ էին, և յորժամ անդր չոպան։ Այլ և աստ խաչակցեալք ընդ Քրիստոսի, և անդր թագաւորեալք ընդ նմա բազում համարձակութեամբ՝ զամենայն ինչ զոր և հայցեն վասն մեր ընդունին 'ի նմանէ։ Վասն որոյ և մեք բազում փութով զյիշատակս նոցա կատարեսցուք, զի և փառայ նոցա արժանի լիցուք, և ընդ նոսին յարաղուարձ բերկրանօք փառաւորեսցուք զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Դիոմիդեայ բժշկապետի։

Ի ժամանակս Թագաւորութեանն Դիոկղետիանոսի և Մաքսիմիանոսի, էր հալածումն մեծ եկեղեցւոյն Աստուծոյ, քանզի պատուէր հրամանի տարածեալ եղև 'ի նոցանէ ընդ բոլոր աշխարհս Հռոմայեցւոց իշխանութեանն, երկիր պագանել անշունչ պատկերաց կռոցն, ոսկւոյ և արծաթոյ և պղնձոյ քանդակեալք և կերպարանեալք էին. բազում անցք այնուհետև ընդ ժողովս հաւատացելոցն անցանէր ընդ ամենայն տեղիս տերութեան նոցա։ Վասն զի ամենայն ուրեք ուր և ըմբռնէին զքրիստոնեայսն կարգեալք 'ի Թագաւորացն դատաւորքն՝ հարկեցուցանէին 'ի զոհս գարշելի դիւացն, և նոցին ձուլածոյ պատկերացն. զբազումս չարչարէին մեծամեծ տանջանօք, և զոմանս սպանանէին, և զկիսոց զինչս յափշտակէին. և այնպէս դառն նեղութիւն կայր յաւուրսն յայնոսիկ 'ի վերայ բարեպաշտիցն։ Յայնմ ժամանակի երևեցաւայր մի 'ի Տարսոն Կիլիկեցւոց քրիստոնեայ կրօնիւք, յազգէ ազնուական, մեծատուն յոյժ, բարեպաշտօն և երկիւղած յԱստուծոյ զարդարեալ ամենայն առաքինութեամբ, որոյ անուն էր Դիոմիդէս։ Սա պատուական երևէր յաչս ամենեցուն. քանզի էր մանուկ տիւք, գեղեցիկ կերպարանօք, մինչ գրեթէ զամենայն տեսողսն զարմացուցանէր գեղեցկազարդու-

թիւն պատկերի նորա. տեղեակ և հմուտ էր բժշկական արհեստիցն 'ի մանկութենէ իւրմէ, առաւել քան զամենայն Հելլենացի իմաստասիրացն մանկունսն, որպէս զի զբոլոր արուեստս բժշկութեան զոր նոքայն պատմէին՝ լի կատարեալ գիտէր, զԱսկղեպեայն և զՀիպոկրատեայն և զԴիմոկրատեայն և զմեծին Գալենոսի։ Սա շրջէր ամենայն ուրեք, և զամենեսեան առ հասարակ ձրի բժշկէր. բայց ոչ այնչափ մարդկային արուեստիւն կատարէր նա զբժշկութիւնս՝ որչափ մեծամեծ հաւատովքն իւրովք, կարդալով 'ի վերայ իւրաքանչիւր ումեք զանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. քանզի ստուգապէս աշակերտեալ էր Քրիստոսի Ճշմարիտ բժշկին, և այսպէս ոչ միայն զմարմինսն բժշկէր, այլ և զհոգիսն, ուսուցանելով զամենեսեան հաստատուն և անշարժ կալ 'ի հաւատս Ճշմարտին Աստուծոյ, և առ ոչինչ համարեալ զկուռս անմուունչս և ոչ զանգիտել յառժամանակեայ մահուանէ, և արհամարհել զփառս անցաւորս և յաւիտենականին միայն սպասել և յայտնապէս խոստովանել զՔրիստոս առաջի ամենեցուն։ Եւ այսպիսի քաջալերութեամբ և վարդապետական մխիթարութեամբ զբոլոր աշխարհն Կիլիկեցւոց ելից երանելի այրս այս Դիոմիդէս։ Եւ ապա 'ի մտի եդ գնալ հասանել յաշխարհն Բիւթանացւոց, զի և անդ կալանաւորաց եղբարցն սպաս տարցի 'ի ձեռն բժշկութեան և քաջալերական բանից. և եկեալ 'ի մայրաքաղաքն Նիկիա կամեցաւ բնակել անդ, քանզի ցանկալի թուեցաւ յաչս նորա դիր քաղաքին իբրև ըզհոյակապն Տարսոն, յորում և մնեալն էր. և բնակեալ անդ 'ի վար արկանէր զարուեստ իւր, շրջելով 'ի հրապարակս քաղաքին, և աներկիւղ համարձակութեամբ զՔրիստոս քարոզէր, և բժշկէր զամենեսեան։ Եւ զայս ոչ միայն 'ի քաղաքին առնէր, այլ և յամենայն գաւառն Բիւթանացւոց. նաև ոչք 'ի բանդի արգելեալք էին քրիստոնեայքն՝ ինչս բազումս տուեալ բանտապահացն, և համարձակութիւն առեալ յամենայն ժամ մտանէր առ նոսա և բժշկէր զհարուածս վիրաց նոցա. և ամենայն ուրեք շրջէր և ժողովէր ինչս բազումս և այնու դարմանէր զնոսա, և զքաջասիրտսն

յօժարեցուցանէր, և աղաչէր աղօթս առնել՝ի վերայ ինքեան և՝ի վերայ ամենայն աշխարհի, որպէս զի անցցէ խռովութիւն կռապաշտութեանն, և բարեպաշտութեան հաւատս համարձակ քարոզեսցի ընդ ամենայն աշխարհս։ Իսկ զվատասիրտսն զօրացուցանէր ասելով, եթէ՝ Ա՛ռ ժամանակ մի են տանջանքդ և յաւիտենական պսակքն. յուշ լիցին ձեզ սուրբ վըկայքն որ նախ քան զձեզ բազում չարչարեալք կատարեցան՝ի Քրիստոս, և յիշատակ բարի թողին ամենեցուն յայսմ աշխարհիս, և՝ի հանդերձեալ կեանսն զարքայութիւնն երկնից ընդ տեառն իւրեանց, յորոյ վերայ զանձինս իւրեանց ժառանգեսցեն։ Յուշ առնէր նոցա և զտերունական սպառնալիսն՝ որ յաւետարանն պատմի, ասէ. Ամենայն որ ուրացի զիս առաջի մարդկան, ուրացայց և ես զնա առաջի Հօր իմոյ որ յերկինսն է։ Եւ դարձեալ զյորդորականն, եթէ՝ Մի՛ երկնչիք յայնցանէ որ սպանանեն զմարմինն և զոգին ոչ կարեն սպանանել։ Եւ դարձեալ զառաքելական բանն առաջի բերէր, թէ՝ Ձեզ արժանի չարչարանք ժամանակիս հանդերձելոց ժամանակացն որ յայտնելոց են՝ի մեզ։ Եւ այլ ևս բազում այսպիսիս քաջալերական բանս՝ի սուրբ գրոց առաջի բերէր նոցա՝ի մխիթարութիւն։

Իսկ ապա իբրև տեսին զնա ոմանք՝ի հեթանոսականացն, որ այսպէս զամենեսեան սրտապնդէր, երթեալք՝ի Նիկոմիդացւոց քաղաքն պատմեցին Մաքսիմիանոսի թագաւորին և ասեն. Ա՛յր ոմն քրիստոնեայ, անուն Դիոմիդէս՝ յարուեստէ բժիշկ, բնակէ՝ի Նիկիացւոց քաղաքին, և պատճառանօք բժշկութեան շրջի ընդ ամենայն աշխարհս Բիւթանացւոց, և կախարդական հաւանութեամբ զբազում յաստուածոցն՝ի բաց դարձուցանէ, ասելով, թէ չեն աստուածք այլ կուռք անմռունչք. և զայլ ոմն խաչեալ Աստուած ասէ, և զամենեսեան նմա աշակերտէ. և թէ ոչ երագ ժամանեսցես և ըմբռնեսցես զնա, տէր իմ արքայ, զաշխարհս զայս ապստամբեցուցեալ յինքնակալութենէդ ձերմէ, հակառակ ընդդէմ քո յարուսցէ։ Իբրև լուաւ զայս թագաւորն, լի եղև սրտմտութեամբ, և իբրև հրով այնպէս բորբոքեցաւ հրով նախանձու.

քանզի և յառաջագոյն այսպիսի համբաւ վասն սրբոյն հասեալ էր 'ի լսելիս նորա. յայնժամ առաքեաց դահիճս հանդերձ բազում զօրօք, որպէս զի վաղվաղակի կապեսցեն զնա երկաթի կապանօք և ածցեն առաջի նորա։ Եւ եկեալ դահճացն 'ի քաղաքն Նիկիա, և ըմբռնեալ զերանելին՝ մինչդեռ ուսուցանէր 'ի մէջ հրապարակին, և վաղվաղակի կապեցին զնա ձեռս յետս, որպէս և հրաման առին 'ի Թագաւորէն. և եղեալ 'ի վերայ գրաստու, 'ի չու անկեալ ճանապարհ արարին 'ի Նիկոմիդիա քաղաք։ Իսկ սուրբ այրն Աստուծոյ Թէպէտ և յոյժ ցանկութիւն ունէր վասն Քրիստոսի տանջանս ընդունել, սակայն հոգայր վասն այնոցիկ որոց բարիոք տնօրինէր, գուցէ ոք 'ի վատասրտացն անհամբեր գոլով՝ ուրասցի զՔրիստոս, և գայթակղեալ անկցի 'ի վիհս կռապաշտութեան, կերակուր լեալ չար հոգւոյ վիշապին։

Արդ մինչդեռ նա այսպէս տխրէր և հոգայր վասն սրբոցն որ 'ի տանջանսն էին վասն Քրիստոսի, և դահիճքն ստիպէին արագ ժամանել յատեան Թագաւորին։ Իսկ իբրև հասին 'ի տեղի ինչ որ չէր հեռի 'ի քաղաքէն, աղաչեալ սրբոյն զդահիճսն՝ որպէս զի ինչուցեալ զնա 'ի գրաստէն սակաւիկ մի ներեսցեն նմա յաղօթս կալ. և խոնարհեալ նոցա յաղաչանս նորա, Թոյլ ետուն նմա, որպէս և կամեցաւ. և նորա մեկնեալ 'ի նոցանէ իբրև քարընկէց մի, եդ ծունր կաց յաղօթս այսպէս. Տէր իմ Յիսուս Քրիստոս, որդի բարձրելոյ Հօր, Աստուած հրեշտակաց և ամենայն անուան անուանելոյ, օրհնեմ զքեզ որ արժանի արարեր զիս խոստովանողական վկայութիւն ընդունել վասն քո։ Աղաչեմ զքեզ, Թագաւոր իմ և Աստուած, ընկալ զպաղատանս իմ, և կատարեա 'ի բարի զինդրելուածս իմ, զոր հայցեմ 'ի քէն 'ի կատարածի կենացս եղեալ. մի Թողուր զիս 'ի ձեռանէ քումմէ, զի մի Թակարդապատ եղեալ 'ի մենքենայից բանսարկուին անկայց 'ի պատրանս խաբէութեան նորա։ Մի տար Թոյլ խոցոտել զիս հրացեալ նետից իշխանի աշխարհիս այսորիկ. մի ծածկեսցեն զիս յորձահոս մրրկեալ ալիք կենցաղոյս. օգնեա ինձ երկնաւոր նաւապետ, Տէր իմ Յիսուս, զի մի անդնդասոյզ եղեալ

ընկղմեցայց 'ի խորս յաւիտենիս այսորիկ։ Փրկեա զիս յորովայնէ վիշապին, և կորզեա զիս 'ի ժանեաց արիւնախանձ գազանին, որ շուրջ գայ, գոչէ և կամի կլանել զիս. վասն զի դու ստեղծեր զիս յորովայնէ մօր իմոյ, և զնկարակերտութիւն պատկերի իմոյ դու յօրինեցեր, և ես քեզ խոստացայ պահել զսա անարատ գեղեցկայարմար ստեղծողիդ իմոյ և տեառն։ Արդ պահեա զսա անշարժ ամենայն անդամօք 'ի վերայ վիմիդ հաւատոյ, յորում 'ի սկզբանց անտի հիմնեցեալ հաստատեցայ, յորոյ վերայ և զարիւնդ քո զանապական հեղեր. և որպէս կամք քո նախախնամողականք կամիցի զօգուտն իմ, այնպէս կատարեա զընթացս իմ։ Եւ ոչ եթէ յառժամանակեայ մահուանէս յայսմանէ զանգիտեմ ինչ, այլ քեզ ամենագիտողիդ յանձն առնեմ զպահպանութիւն հոգւոյ իմոյ, որպէս զի անապական ընկալայց զսա միաւորեալ ընդ անեղծ մարմնոյ 'ի միւսանգամ գալստեանդ քո. և յարազուարճ բերկրանօք ընդ ամենայն սուրբս քո փառաւորեցից զքեզ Հանդերձ Հարբ և ամենասուրբ Հոգւովդ, յաւիտեանս յաւիտենից. ամէն։ Եւ իբրև կատարեաց Երանելին զաղօթս զայս, և ասաց զամէնն, անդէն կնքեալ զինքն նշանաւ սուրբ խաչին՝ աւանդեաց զՀոգին իւր 'ի Քրիստոս։

Իսկ զինուորացն կացեալ անդէն 'ի տեղւոջն ուր ինքուցին զնա 'ի գրաստէն՝ հարուստ մի ժամ մնացին գալըստեան նորա։ Եւ իբրև յամեաց և ոչ եկն առ նոսա՝ կարծեցին զնա փախուցեալ, և եկեալ 'ի տեղին՝ գըտին զնա վախճանեալ. և զառաջինն համարեցան թէ ննջէ, մատեան զարթուցանել զնա. և իբրև գիտացին զնա վախճանեալ, զարմացան ընդ սքանչելիսն, և խորհուրդ առեալ թէ զինչ արասցեն, քանզի երկնչէին 'ի ցասմանէ թագաւորին, և ապա հատեալ զգլուխս սրբոյն տարան առ թագաւորն, և պատմեցին նմա զոր ինչ եղև։

Իսկ իբրև ետես զայն թագաւորն՝ տրտմեցաւ յոյժ վասն այնչափ վայելչութեան նկարագրի պատկերին, որ ոչ ժամանեաց առ նա կենդանւոյն։ Եւ նոյն ժամայն հրաման ետ նոցին իսկ զինուորացն՝ որպէս զի առեալ տարցեն անդրէն ուր մարմինն է, և 'ի միասին յարեալ զգլուխն ընդ մարմնոյն՝ դիցեն 'ի շիրմի և

անդրէն ծածկեսցեն։ Եւ նոցա առեալ զգլուխն սուրբ՝ դարձան անդրէն ըստ հրամանի Թագաւորին, և բերեալ յարեցին 'ի մարմինն. և իբրև արարին զայն՝ շնորհք Աստուծոյ եղեն 'ի վերայ նոցա, և բացան աչք սրտից նոցա, և տեսին զՀշմարիտ լոյսն Քրիստոս, և անդէն 'ի բաց եդեալ զզինուորական պատիւն՝ աշակերտեցան Հշմարիտ հաւատոցն և եղեն սպասաւորք սուրբ նշխարացն. և ոչինչ զանգիտեալք 'ի յահագին ըսպառնալեաց Թագաւորին, անվեհեր զՔրիստոս քարոզէին, և զբազում 'ի զինուորակցաց իւրեանց յորդորէին մտանել ընդ ամենահեշտ լծով նորա, որպէս և նոքայն։ Եւ արդ վասն զինուորացն որք հաւատացին՝ այսչափ. այլ մեք անդրէն դարձցուք։

Եւ քանզի իբրև հատին զինուորքն զգլուխն սուրբ 'ի մեռեալ մարմնոյն 'ի Ճանապարհի տեղւոջն որ ոչ էր հեռի 'ի քաղաքէն Նիկիացւոց, յանձն արարին զմարմինն Իշխանի քաղաքին, և ինքեանք առեալ զգլուխն չոգան առ Թագաւորն, որ և աքանչելիք եղեն յայնմ ժամու. քանզի ագռաւ մի Թռուցեալ եկաց հանդէպ սուրբ մարմնոյն և ոչ Թողացուցանէր զայլս 'ի Թռչնոցն մերձենալ առ նա. և այսպէս կացեալ մերձ առ նա զերիս աւուրս։ Իսկ ապա յետ երից աւուրցն այնոցիկ կին մի մեծատուն 'ի գաւառէն Սեբաստացւոց, որոյ անուն էր Պատրոնիա, որ 'ի բազում ժամանակաց հետէ տանջեալ լինէր ախտիւ որովայնի իւրոյ, և ծախեալ ինչս բազում 'ի բժիշկս և չէր ինչ օգտեալ. սա մատուցեալ առ Իշխան քաղաքին՝ խնդրեաց զմարմին սուրբ վկային Դիոմիդեայ, տուեալ նմա ինչս բազում. և առեալ զնա օծ անոյշ իւղովք, և սուրբ կտաւով պատեալ եդ 'ի պատշաճ տեղւոջ, որ և անդէն իսկ և իսկ վաղվաղակի բժշկեցաւ ցաւ արգանդի նորա։ Նաև այլ ևս բազում բժշկութիւնք եղեն 'ի ձեռն սուրբ վկային։

Արդ այսպէս կատարեցաւ սուրբ վկայն Դիոմիդէս 'ի Ճանապարհի մերձ 'ի մայրաքաղաքն Բիւթանացւոց Նիկիա, յառաջ քան զերիս կաղանդացն օգոստոս ամսոյ, 'ի Թագաւորութեանն Դիոկղետիանոսի և Մաքսիմիանոսի. իսկ մեզ Թագաւորելոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի միածնի որդւոյն Աստուծոյ։ Իսկ

ապա յետ սակաւ ինչ ժամանակի ծագեաց աստղն լուսոյ քրիստոսապսակեալ կայսրն Կոստանդիանոս, և 'ի բաց եբարձ զամենայն զաւակս ամբարիշտ թագաւորացն, և կործանեաց զամենայն կուռս դիւաբնակս պաշտաման նոցա, և բարեպաշտութիւնն ծագեալ ծաւալեցաւ ընդ ամենայն տիեզերս, և հալածեաց զխաւար կռապաշտութեանն. և թագաւորական հրամանաւ բազմացան եկեղեցիք ընդ ամենայն տիեզերս, և շինեցան վկայարանք սրբոցն մեծապատիւ վայելչութեամբ։ Ցայնժամ հրաման ետ թագաւորն զի շինեսցեն երիս եկեղեցիս յանուն սուրբ և մեծափառ վկային Դիոմիդեայ. մի 'ի մայրաքաղաքն Նիկիա, և մի 'ի հռչակաւորն Նիկոմիդիա, և միւս ևս 'ի նորակերտ ձեռակերտն իւր 'ի մեծն Կոստանդինուպոլիս 'ի նորն Հռովմ. մանաւորեալ յերիս եկեղեցիս զնշխարս սրբոյն. և հրաման ետ ամ յամէ զօր յիշատակի նորա տօնախմբել յառաջ քան զերիս կաղանդացն օգոստոս ամսոյ. յորում բժշկութիւնք բազում լինին մինչև ցայսօր ժամանակի 'ի ձեռն սրբոյ վկային։ Որով միշտ և հանապազ փառաւորի ամենասուրբ Երրորդութիւնն, Հայր և Որդի և սուրբ Հոգին, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Երեմիոսի եպիսկոպոսի։

Յորժամ բարք բարիք և աստուածպաշտութեամբ կրթեալք և լաւագունիցն ցանկացեալք՝ ընդ այնմ և զերկիւղն Աստուծոյ առնուցու, յայնժամ միանգամայն զամենայն ինչ որ յաշխարհիս է արհամարհեալ՝ 'ի խոստացելոց բարեացն վայելչութիւնն փութայ. զի զայն ինչ զոր լուան և հաւատովք հաստատեալ իբրև առընթերակից ցանկացաւ նմին՝ վաղվաղակի ականատես եղեալ և ընկալեալ փառաւորեսցէ զՏէր։ Որ եղև առ երանելեաւ Երեմիոսիւ եպիսկոպոսիւ Սերմեաց քաղաքի, որ վասն զուգական հեզութեան իւրոյ և աստուածեղէն երկիւղածութեանն, մինչ դեռ ևս մանկագոյն էր, արժանի եղև աթոռոյ եպիսկոպոսութեան։ Եւ 'ի հասանել հալածանացն որ առ Դիոկղետիանոսիւ թագաւորաւ, ոչ որպէս այլ ոմանք իբրև պատիւ ինչ զիրսն համարեալ և հաշեալ մաշեալ երկրաւոր իրօք տրտմութեամբ, աղաւաղեցոյց ինչ զառաջիկայ ուրախութիւնն, այլ անյաղթ և անվեհեր յօժարութեամբ վարելով, յառաջիկայն նկրտելով և զվերջինն մոռանալով, փութայր 'ի նպատակս վերին կոչմանն. քանզի ոչ լուծին զհաստատութիւն խորհրդոց նորա՝ խիստ իշխանին մեքենայք։ Ոչ թշնամանք ազգի ազգի, որ զչարչարանս նշանակէին. ոչ յորձանք գետոց, ոչ վաղք քարանձաւաց, ոչ սպառ-

նալիք զանազան տանջանաց. այլ և որք քան ամենայն ինչ ցաւեցուցանելն սովոր է, արանց նեղասրտութիւն, մանկանց արտասուք, կնոջ կականալի բարբառք և երեսք տխուրք, ծանօթից սուգ 'ի վերայ որդւոց մատաղ հասակի, ընտանեաց հեծութիւն և բարեկամաց աղախարշումն 'ի վերայ այնպիսի հասակի, որ յորդորէ 'ի լալումն և յողբումն։ Այլ որպէս և ասացաքն՝ լաւագունացն ցանկութեամբ ըմբռնեալ և զերկիւղ դատաստանացն առաջի աչացն եդեալ, զարհուրեալ յոյժ 'ի ձայնէ Տեառն՝ զոր ասէր. Եթէ որ ուրանայ զիս առաջի մարդկան՝ ուրացայց և ես զնա առաջի Հօր իմոյ՝ որ յերկինս է, զամենայն ինչ արհամարհէր և ուրախութեամբ փութայր յառաջիկայ յոյսն։

Այծեալ այնուհետև առաջի Պորոբոսի դատաւորին՝ որ յայնժամ զիշխանութիւնն ունէր Պանոնեայ, և հարցեալ եթէ կամիցիս զոհել, պատասխանի ետ Երանելին Երենիոս և ասէ. Այլ և ոչ կեալ կամիմ ընդ ձեզ։ Յայնժամ արկին զնա 'ի բանդ։ Եւ արարեալ անդ աւուրս բազումս 'ի տանջանս և 'ի կապանս, և 'ի մէջ գիշերի նստեալ դատաւորն յատենի, դարձեալ ածաւ առաջի Երանելի վկայն Երենիոս և բազում տանջանաց համբերեալ, և հարցեալ եթէ ընդէր ոչ զոհես, պատասխանի ետ սուրբն. Վասն զի Աստուած ունիմ՝ որ 'ի մատաղ հասակէն ուսայ պաշտել, և ոչ կարեմ երկրպագել անուանեալ աստուածոցն ձերոց։ Պորոբոս դատաւոր ասէ. Ճահեա զմահ, շատացեալ և թշնամանօք որոց համբերեսդ։ Երենիոս ասէ. Ճահիմ յետ սակաւ միոյ զմահ, յորժամ մահուդ որ 'ի քէն, առիւծ գյաւիտենական կեանքն՝ որ յԱստուծոյ։ Պորոբոս ասէ. Ունիս կին կամ որդիս։ Սուրբն ասէ. Ոչ։ Պորոբոս ասէ. Ունիս ծնողս։ Եւ նա ասէ. Ոչ։ Այլ զայս ասէր Երանելին Երենիոս, զմտաւ ածեալ զպատուիրանս Տեառն որ ասէ. Որ սիրէ զհայր կամ զմայր, կամ զեղբարս կամ զորդիս առաւել քան զիս՝ չէ ինձ արժանի։ Ընդ որ հայեցեալ յերկինս այնուհետև խորհրդով կրօնաւորեալ, և զամենայն մարդկեղէն իրս թողեալ, ոչ զոք աւելի քան զՏէր գիտել և ունել խոստովանէր։ Դարձեալ ասէ ցնա դատաւորն. Գի-

տեմ ես եթէ որդիք կան քո, գոնեայ վասն նոցա զոհեա։ Պատասխանի ետ սուրբն և ասէ. Որդիք իմ զԱստուած ունին իւրեանց օգնական՝ որպէս և ես, որ կարող է կեցուցանել զնոսա, այլ դու զհրամայեալսն քեզ արա։ Պորոբոս ասէ. Խրատ տամ քեզ, պատանի դու, զոհեա, զի մի՛ ազգի ազգի տանջանօք սպանիցս զքեզ։ Երենիոս ասաց. Ես ոչ զոհեմ, զոր ինչ կամիս արա, և գիտասցես եթէ զօրութեամբն Քրիստոսի քաջութեամբ համբերեմ ամենայնի։

Պորոբոս դատաւոր զՀիւ մահու եդ 'ի վերայ և ասէ. Վասն զի ոչ կամիս հաւանել թագաւորական հրամանաց, այնր աղագաւ ըստ հրամանի ինքնակալացն 'ի գետ ընկեսջիր։ Երենիոս ասէ. Ես ազգի ազգի տանջանաց զոր սպառնայիր՝ ակն ունէի, և այլ ևս ինչ մեծ լինել ինձ, և եթէ կամիցիս զիս սրով սպանանել. վասն որոյ աղաչեմ զքեզ և զայն հրամայեա, զի գիտասցես՝ եթէ քրիստոնեայք զմահ արհամարհեն՝ վասն հաւատոյն որ յԱստուած սովորեցաք։ Եւ բարկացեալ դատաւորն վասն համարձակութեան սրբոյն Երենիոսի, հրամայեաց սրով սպանանել զնա։ Իսկ սուրբն իբրև երկրորդ յաղթութեան նահատակ եղև, ասէ. Շնորհ ունիմ զԱստուծոյ, որ բազում համբերութեամբ մահու զպայծառագոյն պսակն շնորհեաց ինձ։ Եւ իբրև եկն 'ի կամուրջն որ կոչի Ամրեմիս, մերկացեալ զհանդերձն, և ձգեալ զձեռն յերկինս՝ յաղօթս եկաց այսպէս. Տէր, բացցին երկինք և ընկալցին զոգի ծառայի քո, որ վասն ժողովրդեան քո, և կաթողիկէ եկեղեցւոյ և ամենայն լուսեան՝ որ'ի քեզ հաւատացեալ, Տէր իմ Յիսուս Քրիստոս, զայս չարչարիմ։ Եւ հատեալ զգլուխս նորա սուսերաւ՝ ընկեցաւ 'ի գետ։ Այս գործեցաւ՝ որ օր վեց էր ահեկանի ամսոյ. 'ի թագաւորել Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում Հօր և Հոգւոյն սրբոյ՝ փառք, պատիւ և զօրութիւն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Երմոնի կուսի։

Սուրբս այս Երմոնիոս, զորոյ սկիզբն արարուք պատմել զմարտիրոսական նահատակութիւն սորա, տոհմ էր սա առաքելական ըստ մարմնոյ, որ և հոգւով ևս ըստ նմին օրինակի առաքելականն շնորհօք վայելչանայր գեղեցկութեամբն։ Քանզի գուստր էր սա սրբոյն Փիլիպպոսի, որ էր աշակերտ և սպասաւոր բանին Աստուծոյ, զոր և երանելի աւետարանիչն Ղուկաս պատմէ, և կուսութիւն և մարգարէութիւն պատմէ յաստուածաշունչ տառսն Գործոց առաքելոց։ Եկաք, ասէ, 'ի Կեսարիա, և մտաք 'ի տուն Փիլիպպոսի աւետերանչի, որ էր յեօթանց անտի, և ագաք առ նմա. և էին նորա դստերքք չորք կոյսք մարգարէք։

Այդ զկնի հօրն մարտիրոսական կատարմանն, երանելիս այս Երմոնիոս որ իբրև զպսակ փառաց էր այլոց քերցն, առեալ զմի յիւրոց քերցն, որում անուն էր Եւտիքիա, 'ի տեսութիւն աստուածաբան աւետարանչին Յովհաննու գնացեալ յԵփեսոս, ըստ առաւել փափաքանացն զոր ունէր առ սուրբն։ Եւ քանզի նախ քան զգնալն Երմոնիի վերափոխեալ էր սրբոյ աւետարանչին առ իւր սիրելին Քրիստոս՝ տրտմեցաւ, վասն զի ոչ ետես մարմնով, որում ցանկացեալ էր հոգւով[1]. բայց ապա այլ ուստեք աստուածային շնորհ-

1. Մի օր. փրփռեցան... ոչ փէսին... էին... նոցա։

քըն պարգևեցին նմա մխիթարութիւն և սփոփանս տրտմութեանն։ Բանզի այր ոմն անուն Պետրոնիոս[1], ընկալեալ զձեռնադրութիւն յերանելի առաքելոյն Պաւղոսէ, հովուէր յեկեղեցւոջն Եփեսացւոց, այր լի իմաստութեամբ և առաքինի գործովք. որ ոչ թէ բանիւք միայն ուսուցանէր, այլ և առաքինի վարուքն ևս առաւել զբանն վարդապետութեան պայծառապոյնս երևեցուցանէր։ Սա զպատուական և զիմաստուն կուսանսն առ իւր ընկալեալ՝ 'ի միասին զբանն կենաց պատմէին։ Եւ էր Երմոնիոս 'ի յարուեստս բժշկութեան ըստ մարմնոյ հմուտ և ճարտար. բայց բժշկութիւն հիւանդացն 'ի շնորհացն Աստուծոյ մանաւանդ բղխէին 'ի ձեռն կոչմանն Քրիստոսի, քան թէ յարուեստէ բժշկութեան. քանզի զպանազան ախտսն՝ որ մարմնական արուեստի անհնարին երևի, զայն աստուածային շնորհօքն և աղօթիւք կուսին՝ բժշկութիւն արագ պարգևէր. նա և չէր նուազ հոգւոց բժշկութիւնն քան զմարմնոցն՝ զոր կատարէր. քանզի զկռոցն մոլորութիւնն 'ի բաց տանէր և զբարեպաշտութեան հաւատսն որ 'ի Քրիստոս՝ մերձ կացուցանէր։

Յայնմ ժամանակի Տրայիանոս թագաւորն Հռովմայեցւոց զինեալ ընդդէմ Պարսից 'ի պատերազմ, և եկեալ յԱսիա՝ շարժէր խռովութեամբ մեծաւ զաշխարհն ամենայն. քանզի մոլեալ կռապաշտութեամբ հալածական առնէր զազգս բարեպաշտացն։ Յայնժամ լուեալ զհամբաւ սրբոյ կուսին, քանզի ընդ ամենայն Ասիա տարածեալ էր վարդապետութիւն նորա, և վաղվաղակի հրաման ետ տան երիտասարդի, զի փութով առ նա ածցեն զհռչակաւորն Երմոնիա[2]։ Իսկ որք ճանաչէինն զնա և պատուէին վասն բարուք կարգի քրիստոնէութեանն՝ ազդ առնէին նմա զգուշանալ ինքեան վասն չար խնդրողացն։ Եւ զինուորքըն իբրև շրջեցան փոքր մի ընդ Ասիա և ոչ գտին, անյոյսք եղեալ անգործ համարեցան զճանապարհն իւրեանց։ Այսպէս երթեալ 'ի գեօղ մի՝ որ էր մերձ 'ի քաղաքն Եփեսոս, ուր էին երանելիքն Երմոնիոս և

1. Մի օր. Պեթրոս անուան։ 2. Մի օր. Երմոնիոս։

Եւտիքիա, Եկեալք առ սուրբն Պետրոնիոս և քննէին զբանս աստուածաշունչ գրոց։ Եւ տեսեալ զինուորացն զԵրմոնիա՝ ոչ ծանեան զնա, քանզի ոչ ունէր զտեսիլ զգեստուն՝ ըստ հռչակաւոր անուանն, այլ ցաւծութեամբ զարդարեալ էր գձուձ զգեստիւ, ըստ պատշաճի քրիստոնէական կարգի. Հարցանէին ցնա և ասէին թէ ո՞վ լցէ աստ պատմող աւետարանին Քրիստոսի, որոյ անուն է Երմոնիոս, որ և զախտս հիւանդաց ճարտարապէս բժշկէ։ Իսկ նա յառաջագոյն ոչ յայտնեաց զինքն. այլ պատուասիրաբար խօսէր ընդ նոսա. Եկայք ասէ, սակաւիկ մի հանգերուք, և եղեալ առաջի ձեր սեղան՝ կերայք. և ապա ցուցից ձեզ զոր խնդրէքդ։ Եւ յորժամ զօտարսիրութեանն ելից զպատուիրանն՝ խորտիկս աղնիւս կազմելով նոցա, այնուհետև յայտնէր զինքն յայտնապէս, խոստովանէր[1] թէ ես եմ՝ զոր խնդրէքն։ Իսկ նոքա 'ի տրտմութեան եղեալ ոչ գիտէին զինչ գործիցեն, վասն զի պատկառէին 'ի սիրոյ նորա, և դարձեալ երկնչէին 'ի դժնդակ[2] կամաց հրամանէ թագաւորին։ Եւ կոյսն քանզի ջերեալ էր 'ի սէրն Քրիստոսի, և ցանկայր մեռանել վասն անուան նորա, աղաչէր զզինուորսն զի կատարեսցեն զհրամայեալսն, և տարցեն զնա առ թագաւորն։ Եւ ինքնակամ յօժարութեամբ հետևեալ զկնի զինուորացն եկն առ թագաւորն։

Իսկ Տրայիանոս իբրև ետես զնա՝ նախ խորամանկութեամբ խօսէր ընդ նմա բանս մարդասիրականս, առաջի դնելով ինչս բազումս և պատիւ և փառս մեծամեծս խոստանայր, միայն եթէ հաւանեսցի կամաց թագաւորին և 'ի բաց կացցէ 'ի Քրիստոսէ։ Իսկ գեղեցիկ հարսն Քրիստոսի զամենայն խոստումնս թագաւորին ոչինչ գրէր[3], այլ միայն բարձր ձայնիւ 'ի լուր ամենայն ամբոխին գոչէր ասելով, եթէ՝ Քրիստոնեայ եմ և զՔրիստոս պաշտեմ, և վասն նորա ցանկամ մեռանել. վասն այնորիկ երազ և ստուերս համարիմ զամենայն փառս և զպատիւս քո՝ զոր ինձ խոս-

1. Մի օր. խոստովանելով։
2. Մի օր. 'ի դժնամակ կամաց հրամանի թագաւորին։
3. Մի օրինակ յաւելու. և զպատասխանաց անգամ արքայի վերոյ գրէր։

տանաս։ Յայնժամ բռնաւորն իբրև լուաւ զայս, զայ-
րանայր իբրև ղգազան, հրամայեաց չարաչար հար-
կանել զնա։ Իսկ Երանելի կոյսն ոչինչ պատասխա-
նեալ 'ի չարչարանսն, բայց միայն լռութեամբ օրհ-
նէր զՔրիստոս որպէս և Երանելին Թեկղ արժանաւորեցաւ
'ի կերպարանս Պաւղոսի տեսանել, մինչդեռ արկանէ-
ին զնա 'ի հուրն։ Այսպէս և սա տեսեալ 'ի կերպա-
րանս քահանայապետին Պետրոնիոսի [1], զի քաջալե-
ւերը զնա, և զոր ինչ լինելոցն էր՝ այսինքն զազատել
նորա 'ի տանջանացն և զյաղթութիւնն Տրայիանոսի,
որ ընդդէմ Պարսից գործելոց էր՝ յառաջագոյն պատ-
մէր։ Եւ Տրայիանոս յորժամ տեսեալ զերանելի կոյսն զի
ոչ պատրեցաւ 'ի խոստմանցն և արհամարհեաց զտան-
ջանսն, աքանչացաւ ընդ անդրդուելի միտս նորա. և
հրամայէր թագաւորն այնուհետև ոչ ևս հալածել
զքրիստոնեայսն, բայց եթէ յայտնապէս ոք ընդդէմ
կացցէ տերութեանս մերում։ Այսպա սկսաւ աղաչել
զսուրբն Երմոնիոս, զի յօժարեսցի երթալ զկնի նորա
'ի Պարսս. մայր առնել զնա խոստանայր, եթէ հա-
ւանեցուսցէ զազգսն՝ որոց ընդդէմ զինեալն էր։ Իսկ
սուրբ վկայն Քրիստոսի պատասխանեալ առ նա ասէ.
Զէ՞ ինչ օգուտ քեզ, ով թագաւոր, Ճանապարհա-
կցութիւնս իմ, եթէ ոչ ընդունիցիս զբարեպաշտու-
թեան բանս իմ, որ յաղագս Ճանապարհին հաւա-
տոցն է. բայց զայս ասեմ քեզ, եթէ Ճշմարիտն Աս-
տուած արարիչն ամենայն արարածոց՝ զոր ես պաշ-
տեմ, յաղագս անոխակալ մարդասիրութեանն իւրոյ
նա պատերազմի ընդ թշնամիս քո և խորտակէ և ցը-
րուէ զնոսա առաջի երեսաց քոց։ Արդ և դու մի՛ յոյժ
ապերախտ երեւեսցիս առ նա հատուցանելով չար փո-
խանակ կեցուցանողին զքեզ։ Իսկ թագաւորն Տրայի-
անոս զամենայն բանս զայսոսիկ որ ասացան 'ի սրբոյ
կուսէն՝ իբրև զարդար մարգարէի ծրարեալ պահէր
'ի սրտի իւրում, թէպէտ և զբարեպաշտութեան հա-
ւատն չէր ընդունելոց։ Յայնժամ հրամայեաց հան-

1. Մի օր. ուրբ գոհոնային Պետրոնիոսի։

դերձս մեծագինս պարգևել նմա փոխանակ յաղթութեանն, զոր մարգարէացաւ նմա երանելի կոյսն, և ոչ առ յանձն. այլ՝ Բաւական է ինձ, ասէ, զոր ունիմն հանդերձ մեծագունիւն. քանզի զՔրիստոս զգեցեալ եմ, վասն այնորիկ չկարօտանամ ապականացու հանդերձից։ Եւ Թագաւորն ըստ մարգարէութեանն սրբոյն գնացեալ 'ի պատերազմ, յաղթեաց Պարսից և Մարաց և Գոգաց, և ուրախութեամբ դարձեալ [1] և յաղթութեամբ մեծաւ յաշխարհն իւր, մարդասիրագոյն զինքն առ քրիստոնեայսն երևեցուցանէր։

Իսկ 'ի դադարել հալածանացն՝ երանելի վկայն Քրիստոսի շրջէր ընդ Ասիա, և առաքելական շնորհօք զամենեսեան կոչէր 'ի բարեպաշտութեան հաւատն որ 'ի Քրիստոս, և ևս յաւելոյր 'ի թիւս հաւատացելոցն հանապազօր։

Արդ այսոցիկ այսպէս եղելոց, առնու զթագաւորութիւնն Հռովմայեցւոց ժանդն Ադրիանոս այսպիսի պատճառաւ. քանզի կինն Տրայիանոսի յառաջագոյն շնութեանն տրփանօք խառնակեալ էր ընդ նմա, և 'ի գնալն նորա 'ի Պարսս, հաւանեցուցանէր զնա թողուլ փոխանորդ իւր զդաւաճանողն Ադրիանոս, զոր և արար իսկ։ Եւ յորժամ Տրայիանոս մեռանէր, առեալ Ադրիանոսի զթագաւորութեան իշխանութիւն, յարոյց հալածանս 'ի վերայ եկեղեցւոյն Քրիստոսի. քանզի ետ հրաման ամենայն ուրեք [2] 'ի վերայ քրիստոնէից՝ զոհել կամ մեռանել։ Եւ եկեալ յԵփեսոս և լուեալ վասն սրբոյն Երմոնի, առաքեաց զինուորս և ետ հրաման, զի թէ ոչ հնազանդեսցի՝ ածել զնա առաջի իւր։ Իսկ զինուորացն բազում հոգաբարձութեամբ խնդիր արարեալ ոչ գտին. ապա ժամանեցին 'ի գեօղ մի՝ որ մերձ էր 'ի քաղաքն Եփեսոս իբրև տասն ասպարիսաւ, և տեսանեն զերանելին զի մտանէր անդ քարոզել զբանն կենաց։ Եւ քանզի ոչ ծանեան զնա, ողջոյն տուեալ նմա հարցանէին թէ իցէ՞ անդ աղջիկ Երմոնիոս անուն, հաւատովք քրիստոնեայ, որ և պէսպէս հիւանդութեանց բժշկութիւնս առնէ։ Իսկ նա ըստ առաջնոյ օրինակին տարեալ զնոսա առ իւր, և

1. Մի օր. դարձաւ։ 2. Մի օր. ընդ ամենայն ուրեք։

լուացեալ զոտս նոցա եդ առաջի նոցա սեղան և ուրախ արար զնոսա զանազան խորտկօք։ Իսկ 'ի գալ առաւօտին ծանուցանէր զինքն եթէ նա իցէ զոր խնդրեն. և զինուորացն լուեալ զայս տրտմեցան յոյժ, և ոչ կամէին[1] կատարել զհրամանս Թագաւորին, վասն զի պատկառէին 'ի յօտարսիրութենէն զոր եցոյց նոցա։ Իսկ երանելին բռնադատէր զնոսա գնալ ընդ նոսա, երկուցեալ մի գուցէ չար ինչ անցանիցէ ընդ նոսա. մանաւանդ թէ ցանկայր իսկ զի յաղագս Քրիստոսի արքցէ զբաժակ մարտիրոսական արեանն։

Եւ իբրև հաւանեցոյց զնոսա՝ առեալ տարան զնա, և կացուցեալ առաջի Թագաւորին։ Եւ իբրև ետես զնա Թագաւորն. ասէ ցնա. Այս նախ, աղջիկ դու, զանուն քո և զբախտ և զթիւ ամաց քոց և զազգս քո, և եթէ որով զօրութեամբ հպարտացեալ ես, և զաստուածքն նզովելով աղարտես[2], և զիմ բարեպաշտութիւնս թշնամանես և անարգես, և զորս մտանեն և ելանեն 'ի քաղաքէս՝ հիւրընկալես և հնազանդեցուցանես, զի յանյաղթելի աստուածոցն 'ի բաց կացցեն, և 'ի խաչելոյն պաշտօն զամենեսեան յորդորես։ Իսկ երանելի վկայն Քրիստոսի առ այն[3] ետ պատասխանի և ասէ. Եթէ զանուն իմ խնդրես, ով Թագաւոր, Երմոնիոս կոչիմ, և քրիստոնէական կրօնիւք մնեալ. բժշկեմ զախտս և զհիւանդութիւնս շնորհօքն Քրիստոսի. և թիւ ամաց իմոց կատարեալ է։ Զօրութեամբ Քրիստոսի որ է Աստուած Ճշմարիտ, որ ամբար զերկինս և զերկիր, և որ 'ի նոսա արարածք են, զօրացեալ եմ, և ոչ եթէ զաստուածսն նզովեմ, այլ զդիւաց տկարութիւնն յանդիմանեմ։ քանզի չէն աստուածք, այլ ձեռագործ մարդկան և դևք. և զմարդիկ զորս 'ի նոցա մոլորութենէն խաբեալ են՝ ազատեմ, և Ճշմարտին Աստուծոյ մերձ կացուցանեմ։ աղդք իմ և հայրենիք և փառք և մեծութիւն Քրիստոս է, որում 'ի մանկութենէ իմմէ նմա ընծայեցայ։

Իսկ բռնաւորն իբրև լուաւ զայս ամենայն յերանելւոյն, լի եղև բարկութեամբ, և հրամայեաց զաստուա-

1. Մի օր. խամրցան։
2. Մի օր. զաստուածքն նոպելով աղարտես։
3. Այլ օր. առ նա։

ծաբան բերան նորա հարկանել, վասն զի խոցեցաւ ընդ համառօտ պատասխանիս նորա. և նա առ ոչինչ համարեալ զապտակումն ծնօտիցն և զքախջախումն բերանոյն, այլ ևս առաւել պատրաստագոյն էր 'ի փառաբանութիւն Աստուծոյ։ Եւ յորժամ ետես Թագաւորն եթէ առ ոչինչ գրեաց զտանջանսն, խորամանկութեամբ իւրով 'ի միւս կողմն շրջեալ՝ ինչս բազումս և հանդերձս մեծագինս առաջի եդեալ. և հանդերձ այսու ևս տիկին առնել զնա Հռովմայեցւոց տերութեանն խոստանայր, միայն եթէ երկիր պագանիցէ աստուածոցն։ Իսկ սրբոյն այպն արարեալ զամենայն առաջի եդեալսն նմա 'ի Թագաւորէն, և զայս պատասխանի առնէր. Յայտնի լիցի քեզ, ով Թագաւոր, թէ և ոչ բոլոր իսկ ամենայն Թագաւորութիւնքս տիեզերաց, այլ և ոչ ազգի ազգի տանջանք կարեն մեկնել զիս 'ի սիրոյն Քրիստոսի. այլ եթէ կամիս հաճել զմիտս իմ՝ ընկալ զիս խորհրդակից քեզ, որ ոչ միայն զայս Թագաւորութիւնս հաստատուն առնեմ քեզ, այլ և զերկնաւոր մեծութիւնն աւանդեմ քեզ. միայն ծանիր զՀշմարիտն Աստուած, որ ետ քեզ զԹագաւորութիւնդ, և 'ի բաց լեր 'ի մնոտի կռոցդ։

Յայնժամ բռնաւորն իբրև գիտաց թէ ոչինչ աղդեն 'ի նա խորամանգութիւնք նորա՝ ետ հրաման լուծանել զկօշիկս նորա, և սաստիկ հարկանել զներբանս ոտից նորա. և այնչափ հարին մինչև առուք արեանց անտի բղխէին։ Եւ ապա ետ հրաման աւազան պղնձի առնել և լնուլ զայն հալեալ կապարով, և նաւթ և ծծումբ արկանել 'ի ներքս, զի առաւել ևս բորբոքեսցի, և հրամայեաց դահճացն արկանել 'ի նա[1] զերանելի վկայն Քրիստոսի։ Եւ սուրբ կոյսն կնքեալ զինքն նշանաւ սուրբ խաչիւն, ուրախութեամբ մեծաւ օրհնելով զԱստուած՝ եմուտ յաւազանն բորբոքեալ հրոյն։ Որ և աքանչելիք ինն եղեն. քանզի ոչ իբրև 'ի հուր, այլ որպէս յառագաստի այնպէս պարէր և օրհնէր զԱստուած։ Իսկ բռնաւորն իբրև ետես եթէ ոչ այրեաց հուրն զերանելին, ևս առաւել հրամայէր բորբոքել, կարծէր զովացումն ինչ ունել աւազանին։ Յայն

1. Մի օր. անդր արիանել։

ժամ տեսեալ սրբոյն զկուրութիւն հոգւոյ նորա, և զխելագարութիւն մտացն առ սքանչելիս ամենազօրն Աստուծոյ, գոչէր առ նա ասելով. Ո՛վ հպարտ և ամբարհաւաճ թագաւոր, որ այնքան դիւական մոլորութեամբդ արբեալ ես, և ոչ զգաս զզօրութիւն ամենազօրին Աստուծոյ, վասն զի զՀուրս զայս զոր տեսանես՝ ցօղ առնէ ինձ։ Իսկ թագաւորն ոչ հաւատայր տեսութեանն, կամեցաւ և ձեռօքն իսկ իմանալ զՄրշմարիտն. և եկեալ մերձ յաւազանն, և զաջոյ ձեռնն կամէր 'ի ներքս արկանել. և մինչչև կարի քաջ մոտեալ էր, առ ժամայն լուծաւ ձեռն նորա 'ի հրոյ անտի, և սկսաւ աղաչել զերանելին, զի արտաքս ելեալ բժշկեսցէ զնա. և խոստանայր հաւատալ յԱստուած նորա։ Իսկ սուրբն թէպէտ և գիտէր զանդառնալի միտս նորա, սակայն հայեցեալ 'ի մարդասիրութիւնն Քրիստոսի, կատարէր զխնդիրս նորա։

Իսկ նա 'ի նոյն ամ արշտութիւն կացեալ, յետ սակաւ աւուրց հրամայեաց ածել զերանելին, և ստիպէր զոհել կռոցն։ Այլ երանելին այպն առնելով զբազմաստուածութիւն նորա. Քանի՞ աստուածս ունիս, և ո՞ւմ հրամայես զոհել։ Իսկ նա կարծէր եթէ ստուգապէս վասն զոհելոյ առաւելութեան աստուածոցն հարցանէ, և սկսաւ թուել զանուանս ամենայն դիւաշնակ կռոցն. Աբրամազդ, ասէ, և Կռոնոս, Աթինաս և Արէս և Մինա և Ապողոն, Պիսիդոն և Արտեմիս և Աֆրոդիտէս[1]. և այլ ևս շամշաքանեալ բազում անուանս հիւսէր դիւացն։ Իսկ աստուածային իմաստութեամբ լցեալն ասէ. Ո՛վ, ո՞րքան ամբոխիւք ելից զսիրտս ձեր սատանայ, թողեալ զԱստուած Ճշմարիտ, զմինն և զմիայն հզօրն՝ բազմութեան դիւաց երկիր պագանէք։ Արդ ասա, եթէ որոց խնդրուածոց հասեր յաղագս երկրպագութեան բազմաստուածոցդ քոց. այլ գիտեմ եթէ ոչ ունիս ասել, վասն զի անշունչք են։ Արդ ես մի Աստուած պաշտեմ երիւք անձնաւորութեամբ բաժանեալ, և միով բնութեամբ և աստուածութեամբ և զօրութեամբ միաւորեալ.

1. Մի օր. Աբրամազդայ, ասէ, և Կռոնոսի, Աթենայ և Արէսի և Մինայ և Ապողոնի, Պիսիդոնի և Արտեմիսի, Աֆրոդիտէայ։

և զոր ինչ խնդրեմ վաղվաղակի կատարէ. որպէս և դու ինքնին քաջ իմացար՝ 'ի փորձոյ անտի[1] զզօրութիւն ամենազօր Տեառն։ Յայնժամ ևս առաւել բորբոքեալ սրտմտութեամբ Թագաւորն՝ հրաման ետ տապակ հրացուցանել և անդ արկանել զերանելին։ Իսկ սուրբ բրն իբրև ետես զտապակն 'ի հրոյն կերպարանս եղեալ, զաչս 'ի յերկինս ամբարձեալ՝ կարդայր յօգնականութիւն զամենակարող զօրութիւնն՝ զի ցուցցէ զսքանչելիս իւր որպէս և յառաջին նուագին։ Եւ կընքեալ զամենայն զզգայարանսն՝ տարածեաց զինքն 'ի վերայ հրացեալ տապակին. և վաղվաղակի տապակն զովացաւ, և բոց հրոյն որ 'ի նեղբոյ նորա էր՝ այսր անդր ցոլացեալ, զբազումս յամբարշտացն որ շուրջն կային՝ կիզեալ ապականէր. և բռնաւորն զարհուրեալ 'ի սքանչելեաց՝ սակաւ մի զինչաւ 'ի հպարտութենէն և հրամայեաց հանել զսուրբն 'ի տապակէն։ Բայց զի ոչ կամեցաւ ընդունել յինքն զլոյս աստուածգիտութեանն, յետ սակաւ ժամանակաց հրաման ետ ածել զերանելին առաջի իւր յապարանսն, ուր հաստատեալ կային բազմութիւնք դիւական պատկերացն, և ասէ ցսուրբն. Ահա աստուածք մարդասէրք զոր ես պաշտեմ, թէ ո՞րչափ բարեմտութիւնս ցուցանեն առ քեզ, որոց դու ապերախտ գտանիս և ոչ զոհես նոցա։ Ասէ երանելին. Զիա՞րդ զոհեցից անշունչ պատկերացդ, որք ոչինչ տան պատասխանի, որք յաղօթս կան առաջի դոցա։ Եւ կացեալ առ ընթեր պատկերացն երանելի վկայն՝ կարդայր առ Աստուած այսպէս ասելով. Տէր Աստուած զօրութեանց, որ յամենայն դարս ցուցանես զսքանչելիս քո, դու 'ի Քաղանէ զամբարտաւանութիւն մարդկանն խափանեցեր բարժանմամբ լեզուացն, և զբարձրութեան խորհուրդս նոցա՝ որ յաշտարակին՝ քակտեցեր[2]։ Դու զամբարտաւանն զՓարաւոն, որ ոչ ծանեաւ զզօրութիւն սքանչելեաց քոց՝ ընկղմեցեր, և զժողովուրդն քո ազատեցեր 'ի նմանէ։ Դու 'ի ձեռն Յեսուայ ընտրելոյն քո՝ զպարիսպն Երիքովի իբրև զլուր հեղեր՝ 'ի ձայն յոբելեան փողոյն, և զժողովուրդն քո առանց զինական պատե-

1. Մի օր. 'ի փորձոյ անդ։ 2. Մի օր. շրեցեր։

բազմի[1] 'ի նեղբաս ածեր։ Դու նոյն Տէր, և այժմ ցոյց զզօրութիւն աստուածութեանդ քո՝ կործանմամբ կռոցս այսոցիկ, զի ծանիցեն ամենեքեան եթէ դու միայն ես Աստուած և չիք այլ ոք։ Եւ մինչդեռ աղօթքն 'ի շրթունս էին, յանկարծակի անկեալ կուռքն առ հասարակ կործանեցան և եղեն իբրև զփոշի. և սուրբ վկայն գոհանայր զԱստուծոյ, որ այնպէս սքանչելագործէ առ ծառայս իւր. և դարձաւ առ բռնաւորն և ասէ. Տուր ձեռն աստուածոցդ քոց և կանգնեա զդոսա, քանզի ահաւասիկ անձայն եղեն, և հեղեալ մանրեցան առաջի քո։

Իսկ թագաւորն մթացեալ ոգւով 'ի լուսոյ աստուածեղէն սքանչելեացն ոչ առ 'ի միտ զմեծամեծսն Աստուծոյ. ետ վՀիռ 'ի վերայ նորա սրով սպանանել. թերևս արդեօք, ասէ, և 'ի սրոյ կարիցէ[2] կախարդութեամբ ապրել։ Եւ ետ զնա 'ի ձեռս երկուց զինուորաց, զի հանցեն արտաքոյ քաղաքին, և անդ հատցեն զգլուխ նորա։ Իսկ մին զինուորն՝ որում անուն էր Թէոդուլոս՝ վերացուցեալ զսուրն կամէր հարկանել զերանելին, և վաղվաղակի չորացաւ ձեռն նորա. և միւս զինուորն՝ որում անուն էր Թեոտիմոս, ծաղր արարեալ զընկերն՝ յանկարծադէպս համարեցաւ զվրիպելն նորա, աճապարեաց վաղվաղակի, և հանեալ զսուրն յարձակեցաւ[2] 'ի վերայ կուսին, և նոյնժամայն ցամաքեցաւ և նորա ձեռն հաւասար ընկերին։ Եւ անկեալ երկոցունց զինուորացն 'ի վերայ երեսաց իւրեանց՝ աղաչէին զսուրբ վկայն և խնդրէին զթողութիւն 'ի նմանէ, և զբժշկութիւն անդամոց իւրեանց։ Եւ խոստովանէին հաւատալ յԱստուած Ճշմարիտ, զի նա միայն է Ճշմարիտ արարիչ երկնի և երկրի։

Իսկ սուրբն իբրև ստուգեաց զՃշմարտութիւն հաւատոց նոցա 'ի նոցին բերանոց, միանգամայն և Հոգւովն սրբով ծանեաւ զիսորս սրտից նոցա թէ Ճշմարիտ են, յաղօթս եկաց առ Աստուած, և կնքեալ նշանաւ սուրբ խաչին, առժամայն կենդանացան ցամաքեալ ձեռք նոցա։ Արդ զայս այսպէս սքանչելագործեալ Աստուծոյ[3], զի և նախ քան զՀանդերձեալ

1. Մի օր. ընդեան պատերազմի։
2. Մի օր. յարձակել կամեցաւ։
3. Մի օր. սքանչելագործեալ Աստուած։

փառն աստէն փառաւորեսցէ զսուրբս իւր, և անմարտնչելի սատանայի մեքենայիցն ցուցցէ. զի նա որ 'ի ձեռն պատրանաց իւրոց մահկանացու արար զմարդն և մեղաց գործօնեայ, ցուցանել կամեցաւ թէ որք արհամարհեն զնա, աստէն իսկ անմահանան և հաւասար հրեշտակաց լինին. և դարձեալ զի յայտնի առասցէ հպարտացեալ թագաւորին՝ որ զսքանչելիսն Աստուծոյ կախարդութիւն վարկանէր, այսինքն՝ զապրել կուսին 'ի հալեալ կապարոյն և 'ի հրացեալ տապակէն. և ասէր եթէ զսուր ոչ կարէ բթել[1], կամեցաւ ցուցանել թէ և սուր ոչ կարէ գործել զիւրն՝ յորժամ հրաման առնու յարարչէն. միանգամայն զի և զբազմաց փրկութիւն շահեսցի սքանչելեօքն՝ զոր ցուցանէ առ սուրբս իւր։ Եւ քանզի երանելի կոյսն թէպէտ և սքանչելեացն Աստուծոյ շտեմարան եղև, և բազմաց հաւատոց պատճառք, սակայն միշտ ըղձայր երթալ առ փեսայն երկնաւոր, յաղօթս եկաց առ Աստուած, այսպէս ասելով. Ո՛վ Տէր իմ Տէր, դու գիտես զկորհուրդս անձին իմոյ, որ միշտ փափագեմ տեսանել զքեզ՝ զՀնմարիտ բաղձալիդ իմ և ամենայն սրբոց. արդ առաքեա զՀրեշտակս քո և ընկալ զոգի իմ խաղաղութեամբ։ Եւ զայս նորա ասացեալ՝ երևեալ հրեշտակ Աստուծոյ 'ի կերպարանս լուսոյ, աւանդեաց զՀոգին 'ի ձեռս Աստուծոյ, ըստ գրեցելումն, թէ՝ Հոգիք արդարոց 'ի ձեռին Աստուծոյ են։ Իսկ արք երկիւղածք որ բնակեալ էին Յեփեսոս առեալ զվկայական մարմին կուսին Երմոնեայ, և ըստ արժանի սրբութեան նորա տապանակ արարեալ և տարեալ 'ի նեղբս 'ի քաղաքն, եդին յարժանաւոր տեղւոջ. առ նմին եդին և զերկու զինուորսն, որք հաւատացին 'ի կատարման սրբոյն, քանզի և նոքա կատարեցան պսակաւորեալք 'ի Քրիստոս 'ի ձեռն Հնմարիտ հաւատոցն. և ժողովեալ ամենայն քրիստոնեայքն որք էին Յեփեսոս՝ զօր յիշատակի նորա տօնեն, որ օր վեց էր սեպտեմբերի[2] ամսոյ. 'ի փառս և 'ի գովութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

1. Մի օր. Ն ասէր էնէ գէոյր ու ֆորէր բծէլէլ... ու գործէ գիւրն։

2. Մի օր. որ օր պատն Ն մի էր հոյպէմբէրի ամսոյ։

վկայաբանութիւն Եւգինեայ կուսին, և Հօրն նորա Փիլիպպոսի և Մօրն նորա, և Եղբարցն որք ընդ նմա։

Ի թագաւորութեանն մեծ քաղաքին Հռովմայեցւոց ինքնակալ Կոմիդեայ՝ առաքեաց յեօթնեերորդի իւրում հիւպատոսութեանն զմեծն և զվայելուչն Փիլիպպոս 'ի քաղաքն Աղեքսանդրացւոց շրջել զհնազանդութեամբ իշխանութեամբն Եգիպտացւոց աշխարհին, զի ամենայն 'ի մի զօրութիւն հնազանդեսցեն հրամանաց նորա։ Այս Փիլիպպոս հանդերձ կնաւ իւրով Կղոդեաւ և երկու որդւովքն Աւպիտոնեաւ և Սերգեաւ և Եւգինէիւ դստերբ իւրով եկեալ 'ի Հռովմէ յԱղեքսանդրիա՝ զամենայն Եգիպտացւոց բնակութիւնն ըստ Հռովմայեցւոց բարուցն կարդէր։ Իսկ դուստրն իւր Եւգինիա եղեալ վեշտասանամեայ, և այնպէս ընտիր իմաստիւք պայծառանայր, յունական և հռովմէական դպրութեամբ բանիւք լինէր, մինչև փիլիսոփայից սքանչելի երևէր։ Իսկ յաւուր միում հարցանէր զնա հայրն իւր, թէ կամեսցի ամուսնանալ ընդ Ակիւլինեայ հիւպատոսի։ Պատասխանի ետ Եւգինիա և ասէ ցհայրն իւր. Որ պատուոյն և սրբութեանն մանաւանդ ընտրելի է քան զբնութեանն զայր։ Իսկ նոքա պէսպէս խոստմամբք և հնարիւք ջանացին խափանել զսուրբ անձնն։

Իսկ դէպ եղև անցանել և անկանել 'ի ձեռս նորա պատմութիւն սուրբ առաքելոյն Պօղոսի և երանեալ կուսին Թեկղի, և ընթեռնլով 'ի գաղտնիս օր ըստ օ-

ըէ՝ արտասուէր, մանաւանդ զի ընդ հեթանոսական ծնողաց էր։ Իսկ յորժամ ընթեռնոյր օր ըստ օրէ ըզ-պատմութիւն սրբոյն Թեկղի, անկանել 'ի միտ նմա-նել նորին գործոց, ընտրեալ նա 'ի հոգւոյն 'ի խոր-հուրդս պարապէր վարդապետութեան քրիստոնէից. և խնդրեաց շնորհս 'ի ծնողաց իւրոց, զի հրամայես-ցեն նմա 'ի քաղաքէն երթալ յագարակ ուրեմն. և դէպ եղև նմա լինել 'ի դեսպակի ընդ երթալն, զմը-տաւ ածելով 'ի ներքին խորհուրդս իւր զվարս երա-նելոյն Թեկղի, ասէ ցներքինիս իւր ցՊրոտէոս և ցՀիւ-ակինթոս. Մի՛ եղիցի ձեզ անգէտ որչափ ինչ վասն անուանեալ չաստուածոցն քերթողքն ստեղծաբա-նեն, և որչափ վասն արդարև Աստուծոյն իմաստա-սէրքն ստեն. միթէ և 'ի նոսա արդարև այնպէս ճըշ-մարտութիւն գտանեմք՝ որպէս և յայս աստուածային գիրս ցուցանի վասն Աստուծոյ. բայց կարի յոյժ տա-ռապեալ և ստեղծական մտաց հաւատալ 'ի քարինս կոփեալ, և կամ 'ի ձեռագործ փայտից խնդրել զօգ-նականութիւն։ Իսկ մինչդեռ 'ի յայսմ մտի էին, ըս-կըսան խորհել և քննել վասն ճշմարտին Աստուծոյ, և վասն պէսպէս պաշտամանց. և ընտրեցին յանձինս իւրեանց, թէ ոչ ինչ լաւագոյն է քան զայս զօրու-թիւնս։

Եւ մինչդեռ զայս և զսորին նմանիս հակառակելով խորհէին, լուան յոմանց քրիստոնէից, որք պաշտէին ասելով. Այմենայն չաստուած հեթանոսաց դևք են, այլ Տէր զերկինս արար։ Եւ լուեալ Եւդինեայ՝ հրա-մայեաց դադարեցուցանել զդեսպակն, և ընդ երկար զարհուրեալ 'ի սիրտս իւր, և ասէ. Կարի 'ի դէպ վը-կայութեան գրոց սրբոց պատահեցաք ըստ պարա-պելոյ ճանապարհիս, և վասն անպիտան և մոլորական պաշտամանց կորստեան մնոտի ծանեաք. իսկ աղէ գոր-ծեսցուք որ ըստ խորհրդոյս գիպեցաւ, զի այսու օրի-նակաւ երկիւղածութեան՝ անչափ մեծութեան խոր-հրդոյն հասանել կարասցուք, տեսցուք. իսկ եթէ մինչև յերբ յայս յանհաստատ բանս շրջանակիմք, և վասն ճշմարտին Աստուծոյ այլովք բանիւք խնդրես-ցուք, և վասն միաբանութեան հաւատոյ, և զկարգն որով կարասցուք երանելի փախստեանս այսմ հանդի-

պիլ, և զգաղանութիւն բանսարկուին մերժեսցուք, և զհաւատն Քրիստոսի ընկալցուք։

Յայնժամ Եւգինիա ասէ ցնեբբինս իւր ցՊրոտէա և ցՀիւակինթոս զայս բանս. Տիկին՝ ձեզ մարդկեղէն պատիւս արար, իսկ քոյր՝ իմաստութիւնս արար. արդ եղբարք, միով անձամբ և ամենայն միաբանութեամբ զմարդկեղէն պատուի փառս 'ի բաց թողեալ՝ Հշմարտին Աստուծոյ 'ի ծառայութիւն փութասցուք, զի մի ամենևին ընդդիմացողին հակառակութեամբ ինչ քակտեսցուք։ Բայց աղէ դուք յինէն զծամոյս հիւսս 'ի բաց առէք, և դուք վաղիւ պատրաստեցայք. թերևս յայսմ գիշերի մեզ եկեալ Հանապարհացն եղիցին, որպէս զի առ Աստուծոյ մարդիկն՝ մեզ Հանապարհ յաջողեսցի. և դուք իսկ երկոքեանդ մի ընդ աջմէ և մի ընդ ահեկէ գնալով՝ զիս 'ի ծածուկ դեսպակէս 'ի վայր իջուցէք, և թող դեսպակս ունայն երթիցէ. բայց մեք երեքեան առ նա ձեօք առ Աստուծոյ մարդիկն փութասցուք[1]։ Եւ հաՀոյ թուեցաւ նոցա խորհուրդն. և 'ի վաղիւն եղև ամենայն որպէս կարգեաց։

Իսկ 'ի հաւատալ նոցա՝ ետ Քրիստոս շնորհս։ Բայց յորժամ եղև իջանել նմա 'ի դեսպակէն՝ դէպ եղև սուրբ եպիսկոպոսին Հեղինոսի ուղեկից լինել 'ի Հանապարհին հանդերձ բազմութեամբք, որք սաղմոսէին միաբան ասելով ընդ մի ձայն. Հանապարհք արդարոց ուղիղ է, Հանապարհք սրբոց պատրաստեալ է։ Յայնժամ Եւգինիա ասաց ցՊրոտէոս և ցՀիւակինթոս. Տեսանէք զսաղմոսելոցս զօրութիւն. և զմբոտաւ ածէք գուցէ 'ի մեր կոյս նշանակիցէ, զոր լուաք 'ի քրիստոնէիցն, որք սաղմոսէին Աստուծոյն իւրեանց. զի յորժամ վասն Հշմարտին Աստուծոյ 'ի միտս մեր խորհեցաք, լուաք 'ի մարդկանէն Աստուծոյ պաշտելով՝ Ամենայն աստուածք հեթանոսաց դևք են, բայց Տէր զերկինս արար։ Ահաւասիկ ընդ որոշեալն մեր 'ի կռոցն երկրպագութենէ՝ հաղարք պատահեցին միաբան ասելով, թէ՝ Ուղիղ է Հանապարհ արդարոց, և պատրաստեալ է Հանապարհ սրբոց։ Իսկ եկայք և մեք խառնեսցուք 'ի բազմութիւնն օրհնչացս, և դասս

1. Այսպէս յօրինակին։

սոցա համարեալ եղիցուք, և մոցուք իբրև հաղորդա-
կիցս 'ի նոցա Ճշմարտութիւնն, թէպէտ և ընդ երեկս
երբեմն է։

Եւ այսպէս սոցա զինքեանս լծակցեալ ընդ պաշտօ-
նեայն, հարցանէին թէ ո՞վ իցէ ծերունիս, որ միայն
'ի մէջ ժողովրդեանս շքով նստէր։ Յայնժամ լուան
յումեմնէ, թէ սա է Հեղինոս եպիսկոպոսն, որ 'ի տը-
ղայութեան ընդ քրիստոնէից վանորայս շրջեալ, որ
զդրացի գաղանս ապականեալ կորոյս։ Եւ զի՞նչ ասեմ
կամ զի՞նչ պատմեմ զդորա բազում ժամանակաց զան-
ցեալ առաքինութիւնս. բայց յառաջ քան զդոյզն
ժամանակս կախարդ ոմն եկն Իրաս անուն, ջանայր
շրջել զժողովուրդս 'ի գրոց սրբոց. համարձակեցաւ
ընդ սրբոյ եպիսկոպոսին Հեղինոսի հակառակել իւ-
րով ստեղծաբանութեամբ, զոր և տեսեալ զթերու-
թիւն մտաց նորա սրբոյ եպիսկոպոսին, և բանիւք
չկարացեալ քակել՝ առաջի ամենայն բազմութեանն
ասաց. Զի՞նչ պիտոյ է ընդ որդւոյդ կորատեան և ընդ
անհաւատիդ՝ մեզ բանիւք մրցել. որ 'ի մէնջ առաջի
եղելոյս ոչ հաւանի՝ ոչ միայն զգլորեալս չկանգնէ,
այլ և որ կանգնեալք են՝ ընդունայն վարդապետու-
թեամբն իւրով կործանէ և բռնադատէ։ Բայց նախ
կեցուցանել փորձեցայց, եթէ է Աստուած՝ որ ուղ-
ղութեամբ յօրինէ զամենայն. որ և 'ի ձեռն մեր տը-
ղուպ ծառայիցս իւրոց՝ զանՃառ իւրոյ զօրութեանն
զազգումն ցուցանէ։ Եւ ասէ. Լուցցի այսուհետև 'ի
մէջ քաղաքիս հուր բորբոքեալ, և առաջի երեսաց
ձերոց մոցուք երկոքեանս առանց դողման, և որ ոչ
այրի՝ Ճշմարիտ գոլ պաշտօն նորա հաւատացեալ լիցի։
Եւ հաճոյ թուեցաւ կամքս այս ամենայն բազմու-
թեանն, քանզի յոլով մասն բազմութեանն հաւա-
տացեալ էին 'ի կողմն դիւթին։ Իսկ նոյնժամայն լու-
ցեալ բորբոքեցաւ հուրն, և հրամայեաց սուրբ եպիս-
կոպոսն Հեղինոս երկոցունց մտանել 'ի ներքս առանց
երկիւղի։ Բայց Իրաս կախարդն ասաց. Ոչ այդպէս,
այլ իւրաքանչիւր ոք 'ի մէնջ որիշ մոցուք. բայց դու
նախ և յառաջ մատիցես, որ հրամայեցեր զայս լինել։
Իսկ նոյնժամայն սուրբն Հեղինոս ամբարձ զձեռս իւր
յերկինս լի արտասուօք և ասէ. Դու գիտես, Տէր

Յիսուս Քրիստոս որդի Աստուծոյ կենդանւոյ, որ չարչարուրդ 'ի հնոցն երևեցար երից մանկանցն, զի ոչ մի ինչ ինձ մարդկեղէն փառաց ցանկացեալ եղև, այլ միայն փրկութիւն ժողովրդեանն քո, որում գովութեան զիս արժանաւորեցեր, զոր մատնիչն 'ի ձեռն արքանեկին իւրոյ յարդար ճանապարհէն քարաւէժ առնել փութայ. վասն որոյ փրկութեանն յօժարութեամբ կամաք յայս հուրս մտանեմ, հաստատելով թէ զքեզ անդ գտանիցեմ ցողելով 'ի վերայ իմ: զի մի ինչ 'ի հրոյն յիշելով յիս մերձեսցի: Եւ զայս ասացեալ կնքեալ զինքն նշանաւ խաչիւն, և եմուտ 'ի ներքս, և եկաց 'ի մէջ բոցոյն բազում ժամն, ոչ ինչ ամենևին վնասեալ 'ի հրոյն: Յայնժամ տեսեալ բազմութեանն չքնաղ զարմանալիսն և զկրս, թէպէտ և ընդդիմանայր նոցա՝ առեալ ընկեցին 'ի հուրն, և սկսաւ այրել: Փութացեալ երանելին Հեղինոս, թէ և յիրաւի այնպիսի հաւատածովք տանջէր, այլ սակայն կենդանի յափշտակեաց զնա սուրբն Հեղինոս. իսկ նախատեալ զնա ամենեցուն, և թողեալ 'ի տեղւոջն: Եւ դա զոր տեսանէքդ հանապազ փառաւորէ զԱստուած:

Յայնժամ Եւգինիա հանդերձ ներքինեօքն իւրովք Պրոտինեաւ և Հիւակինթոսիւ 'ի գուշն իջանէր, աղաչելով զսուրբն Հեղինոս, որպէս զի և զնոսա առաւել 'ի հաւատն հաստատեսցէ. և աղաչէին զնա, զի 'ի ձեռն նորա ծանօթութիւն 'ի Տէր եղիցի: Իսկ նա ասէ ցնոսա. Պարապել սովորութեամբ յօրհնութիւն առաւօտին, որպէս զի զուարթացեալ ձեր երևումն շնորհեսցի ձեզ: Բայց աղաչեաց զնա Եւգինիա, զի աղօթս արասցէ 'ի վերայ նոցա. զի մեք երեքեանս Հռովմայեցիք եմք ընութեամբք, և թողեալ զպաշտօն կռոցն զՀետ երթեալ ոտից քոց՝ հասաք յայս տեղի: Եւ մինչ նոքա պատմէին զայն՝ ծերունին լուռ կայր. զի զամենայն զոր պատմելոց էին նմա, նորա զամենայն 'ի տեսլեան տեսանէր: Իսկ լեալ նորա պարապով՝ հասին նոքա 'ի տեղին, և գտին զայր մի երկիւղած, որ լեալ էր ընդ նմա, որում անուն էր Եւտրոպիոս: Ասէ ցնա. Հասեալ կան առ ընթեր եղբարք երեք երիտասարդք՝ զպաշտօն կռոցն ուրացեալք. և փրկչին Քրիստոսի ծառայել և զինքեանս հաստատեալք՝ աղաչեն 'ի

հաւատացելոց ժողովս. որոց այս է ցանկութիւն, զի արժանի եղիցին 'ի ձեռն սրբութեան քո ուղղել և անարատ հաւատոց ընդունակք լինել։ Յայնժամ սուրբն Հեղինոս ասաց. Գոհանամք զքէն Տէր Յիսուս Քրիստոս, որ յայս հասանել զիս արժանի արարեր. տեսանել զայս՝ որ այժմ 'ի ձեռն շնորհաց յառաջագոյն ցուցեր ինձ կամաք քոյովք սրբովք։ Իսկ մնեալ նոցա առ նա մատուցին աղօթս, և կատարեալ նորա զաղօթս, կալաւ զձեռանէն Եւգինեայ հանդերձ այլովքն, և ասէ. Զի՞ է զի մանաւանդ ցուցանելով զանձինս ձեր՝ զտառապեալ ծառայս Աստուծոյ կամեցայք տեսանել. բայց սակայն զինչ տեսանելով յիս եկիք առ իս, ծանուցէք ինձ, քանզի լսել կամիմ 'ի ձէնջ. զի կարացից պտուղ ինչ ստանալ ձեր առաջի եղեալ մտաց։ Պատասխանի ետ նմա բարեխոհն Եւգինիա և ասէ. Իբրև ոչ 'ի քարի և 'ի փայտի հնար է բնակել զօրութեան Աստուծոյ. և ինդրեալ մեր և մեզ առանձինն, եթէ ո՞ր է Ճշմարիտ պաշտօն, յորում հանգչի երկրպագելին և երկնայինն Աստուած. հնչումն լուաք յայսմ տեղւոջ, զի միաբանութեամբ օրհնելով ասէիք. Ամենայն չաստուածք հեթանոսաց դևք են, այլ Տէր զերկինս արար. ուստի բարեխորհուրդ ձայնիւս այսուիկ հրաւիրեալք թողաք զպաշտօն կռոցն, և փութապէս այսր հասաք հանդերձ ժողովրդովս. զհետ գամք քում աստուածպաշտութեանդ հաւատալով յԱստուած, և ընդ սոցա լինել սուրբ միաբան քում աստուածասէր հաւատոցդ և Ճշմարիտ հրամանացդ։ Բայց մի է եղբայրութիւն երեցունցս, մինս 'ի մէնջ Պրոտէոս անուն, իսկ միւսն Հիւակինթոս. բայց ես Եւգինիոս կոչիմ։ Ասէ երանելին Հեղինոս. Բարւոք կոչեցար Եւգինիոս, զի քաջապէս գործեալ ընդ կատարեալ Ճգունս՝ անցուցեր զքեզ առ Տէր. բայց զայս գիտեա դու, զի նախ ինձ Աստուած յայտնեաց զքէն Եւգինիա, թէ ուստի՛ ես և ո՛յր դուստր ես և ո՛յք դոքա որք ընդ քեզ են եկեալ, Տէր ետոյց ինձ, զի քև առ 'ի յԱստուած սոքա քաջալերեցան։ Եւ հրամայեաց նոցա սուրբն Հեղինոս զի երիս ամիս ընդ եկեղեցիս և ընդ վանորայս շրջել, զորս ուղիղ հաւատովք արժանացոյց սուրբ մկրտութեան. և յետ այնո

ըիկ տարեալ զնոսա 'ի վանսն, յանձնեաց գլխաւորին, բայց զիրսն ոչ ումեք ծանոյց։

Իսկ արդ կրկնեսցուք անդրէն 'ի նոյն ժամանակ, յորում Պրոտէոս և Հիւակինթոս առեալ զԵւգինիա՝ զդեսպակն 'ի Ճանապարհէն արձակեցին ունայն առ մայր նորա։ Իսկ ընտանիք նորա կարծեցին եթէ եկն Եւգինիա, խնդութեամբ ամենեքին ընդ առաջ նորա ելին. և յորժամ ոչ գտին զնա 'ի դեսպակին, ամենեքեան միաբան կոծելով լային. և եղև խռովութիւն և ամբոխ ընդ ամենայն քաղաքն, և էր ողբք անհնարինք և կոծումն սաստիկ, և ամենեքեան եղեալ էին 'ի յոյժ տրտմութեան. ծնօղքն զդուստրն ողբային, և եղբարքն զքոյրն, ծառայքն զտիկինն, և իւրաքանչիւր ոք 'ի քաղաքացեացն վասն սգոյ ծնողացն և վասն ընտանեացն նորա տառապանաց և տրտմութեան։ Եւ յանչափ պատահարս ըմբռնեալ էին, և շրջէին ընդ ամենայն իշխանութիւնն խնդրելով զԵւգինիոս, և հարցանէին զվհուկս և խնդրէին զորովայնակոչս, և զոհս կռոցն մատուցանէին, և ամենեքեան ասէին զԵւգինեայ եթէ յանմահից աստուածոցն ի՞նչ վերացեալ։ Իսկ հայրն հաւատացեալ այսմ՝ դարձաւ 'ի սրգոյն, կարծելով թէ յարդարև յաստուածոցն 'ի թիւ համարեալ է. և կանգնեաց նմա անդրի 'ի մաքուր ոսկւոյ։ Բայց մայր նորա Կղոդիա և եղբարք նորա Ապիտոն և Սարշիս ոչ ամենևին կարէին դադարել 'ի տրտմութենէ, այլ էին նոքա սաստիկ սգով։

Իսկ Եւգինիա առնաձև միաբանութեամբ հոգւով ընդ Պրոտէի և ընդ Հիւակինթոսի էր 'ի յառաջասացեալ վանսն։ Եւ այնչափ աստուածային ուսմամբն յառաջանային 'ի Քրիստոս, մինչև յերկեմեան ժամանակս զամենայն գիրս 'ի միտ առնուին։ Իսկ յերրորդ ամին մինչդեռ յայնպիսի վարս և 'ի գնացս էին՝ վախճանեալ վանաց երէցն փոխեցաւ առ Տէրն իւրյեռ որոյ կատարման՝ ամենեցուն եղբարցն թուեցաւ՝ Եւգինիա երանելի 'ի գլխաւորութիւն կարգեսցի։ Իսկ Եւգինիա հրաժարէր, վասն զի արգելեալ էր 'ի խղճէ մտացն, եթէ էգ՝ Աստուծոյ մարդկան գլխաւորել ոչ պարտի. բայց սակայն երկնչէր գուցէ ընդդիմութեամբ և աղտեղութեամբ եղիցի, որք յայս զնա

հրաւիրեն։ Յայնժամ ամենեքեան միաբանութեան կամաք յարեան 'ի վերայ նորա. և նա զայս բանս ասացեալ առ նոսա քանիցս անգամ։ Ի ժողովս քրիստոնէից ասացէք, եթէ Քրիստոս ընդէր հաճութեանն զլինելոցս ինքեամբք սահմանեսցէ. վասն որոյ եթէ հրամայէք՝ յառաջ բերեալ լիցին աւետարանքն. և բացեալ ընթերցցուք, և որ ինչ հրամայեալ լիցին 'ի գլուխն՝ այնմ լուիցուք։ Իսկ նոքա բերեն զսուրբ աւետարանն, և առեալ երանելւոյն Եւգինիայ երկրպագեաց, և լռեալ ամենեցուն մատուցին աղօթս. եբաց և եգիտ զտեղին, որ գրեալ է, թէ՝ Այսաց Յիսուս աշակերտացն իւրոց. Գիտէք թէ իշխանք հեթանոսաց տիրեն, և մեծամեծքն վտանգեցուցանեն զնոսա. բայց ոչ այնպէս եղիցի և 'ի ձերում միջի, այլ որ կամիցի 'ի ձէնջ լինել առաջին՝ եղիցի ձեր վերջին և ամենեցուն ծառայ։ Իսկ յետ կարդացմանն՝ Եւգինիա ասաց, եթէ ըստ այսմ օրինակի վարէք զմիտս ձեր, զի այսպէս եղէց, կացցուք 'ի հրամանին Աստուծոյ. պարտ է ծառային եթէ ծառայակցաց իւրոց, զի ըստ կամաց նորա զիւր անձն կատարեալ առաջի Աստուծոյ կացուցանել ընդունելի լիցի 'ի նմանէ։ Եւ ամենեցուն հաւանակից լեալ եղբարցն՝ յանձն առ զանուն գլխաւորութեանն, զի մի տրտմեցուսցէ զնոսա. զի ամենեցուն աղաչեալ զնա բառնալ զհոգս վանացն, հաւանեցաւ այնմ։

Բայց զամենայն խոնարհութիւն ցուցանէր յանձին. և զոր սպասաւորութիւնն պարտ էր կրտսերացն մատուցանել առ նա, այս 'ի նմանէ լինէր առաւելագոյն կատարեալ. ջուր բերել 'ի ջրհորոյն, փայտ հատանել, մաքրութիւն յատակին առնել, և ամենայն պիտոյից եղբարցն սպասաւորութիւն հարկանել։ Բայց արար և ինքեան սենեակ մի փոքր առ դրան վանացն, զի և այսու մի ինչ թուեսցի առաւելանալ քան զայլ ընկերսն. և 'ի գիշերապաշտօնսն յորժամ գային՝ զնա յառաջ եկեալ գտանէին. և ոչ ոք էր յեղբարցն յամենեսեան՝ որ վերագոյն գտանէր քան զնա 'ի խոնարհութիւն. յամենայն իսկ ժամու պարապէր եղբարցն, և խրատէր ստէպ ստէպ մի ինչ ասել ումեք երդմամբք. այլ ցածուն բանիւ խօսել. և ասէր, եթէ որչափ պարտ

տիմք ցուցանել զերկիւղածութիւն ծառայքս Աստուծոյ, 'ի հրամանաց նորա ուսցուք. բայց միտ դիցուք այսուհետև թէ և այնչափ փոյթ և մտաց յօժարութիւն ունիցիմք 'ի սիրտս. քանզի ոչ իւիք պարտի 'ի մէնջ Աստուած արհամարհել. վասն զի այսպիսի օրինակաւ՝ ուրանայ զիւր Տէրն, որ ուսուցանէ առնել զոր ոչ նայն հրամայեաց: Իսկ զայս ամենայն ուսանելով 'ի նմանէ, հաստատէին 'ի հաւատս, և ոչ 'ի տուէ և ոչ 'ի գիշերի աստուածային գրոցս ոչ պարապէին: Բայց այսչափ Աստուծոյ պատուական էր, մինչև զդևս հալածէր, և առողջութիւն հիւանդաց յԱստուծոյ շնորհէր 'ի ձեռն նորա:

Էր կին ոմն 'ի սինկղիտոսացն հարուստ և հռչակելի, որում անուն էր Մելանի, չորեքօրեայ սարսռմամբ բաղում ժամանակս մաշեալ, եկն առ նա. յորոյ լանջաց վերայ Եւգինիա զՔրիստոսի նշանն արարեալ՝ զամենայն ախտաժետութիւն հիւանդութեան նորա մերժեաց, և ողջացուցեալ կանգնեաց զնա. և յետ այնորիկ երանելին Եւգինիա 'ի վանսն փութացաւ: Դարձեալ Մելանի ստէպ ստէպ կոչէր զԵւգինիա. իսկ Եւգինիա երկիւղածութեան մտօք երթայր առ նա. չգիտելով Մելանիա, թէ կին լցէ սա, և ոչ ուղիղ մտօք ցանկայր տեսանել զԵւգինիա. և ոչ վասն այնորիկ եթէ նորա բարեխօսութեամբ ողջացաւ, այլ կարծէր այր մարդ գոլ զնա, և անարժան բանիւք առաքէր առ նա զայս ասելով. Ընդէր զանձնդ ընդունայն աշխատութեամբ հարկանես և մաշես, և զծաղիկ երիտասարդութեանդ կորուսանես. մի՛թէ Աստուած զարտուսն սիրէ՞. արդեօք ամենայն մարդոյ այսպէս հրամայէ, զի առանց խնդութեան և առանց սփոփանաց զամենայն ժամանակս կենաց իւրեանց անցուցանիցեն. ոչ այդպէս, այլ եկ դու և վայելեսցուք 'ի պարգևս Աստուծոյ, զի մի՛ իբրև անշնորհք լեալ՝ անարժան համարեսցուք զանձինս պարգևացն Աստուծոյ: Ուստի և վասն քո երախտեացդ՝ հաւատս ինձ հնազանդել քեզ, զի առ իս լինելով՝ այդպիսի աշխատութեանդ վախճան արասցես, և պայծառ և բարի ժամանակս վայելեսցուք, և եղիցիս տէր ամենայն ստացուածոց իմոց. այլ և անձին իմոյ եղիցիս տէր, զի զարդարեալ

եմ պատուով, և ազգաւ երևելի, և է իմ մեծութիւն սաստիկ, և ոչ կարծեմ եթէ անիրաւիցեմ առաջի Աստուծոյ. եթէ կամիս իմ այր լինել, և 'ի բաց մերժեալ զոգաւորութիւնդ՝ վայելես 'ի բարի ժամանակս։

Զայս և զսոցին նմանիս ասացեալ Մելանիայի, սուրբն Եւգինիա յարեաւ 'ի մահաբեր և 'ի կորստական բանից, կամելով զանձն նորա ազատել 'ի խեղդմանէ մահու, նշանեցուցանելով զնա թէ կարի գծուծ է աշխարհի ցանկութիւնն. քանզի զոր կարծէ զոր ունել 'ի ձեռն ժամանակեայ ցանկութեանս՝ 'ի հանապազորդ ցանկութենէն և 'ի յանանց փափկութենէն զանձն իւր զրկէ. և չէ պարտ ամենևին յանձն առնուլ զմարմնաւոր ցանկութիւնս, զի բանսարկուն 'ի ձեռն այսորիկ փաղաքշէ, առ 'ի խաթարել և 'ի կորուսանել զոգիս մարդկան։ Իսկ յայս ասացելոցս յերանելոյն Եւգինիայի՝ Մելանիա խնայր զանկնջն առ 'ի չընդունել զասացեալսն, քանզի ըմբռնեալ էր խորհրդովք դառն անամոթութեան, որպէս և գրեալ է. Յանձն չարարուեստ իմաստութիւն ոչ մտանէ։

Իսկ Եւգինիա ջանացեալ ամենայն օրինակօք զի 'ի կորստական մահուանէն զնա զերծուսցէ, մեկնեցաւ 'ինմանէ, և Մելանիայի հիւանդութիւն մարմնոյ պատճառեալ, և աղաչէր զերանելին Եւգինիա՝ հիւանդատես գալ նմա։ Իսկ մոռեալ սրբոյն և նստեալ 'ի ներքս 'ի սենեկին առ նմա, գաղտնի գրկախառնութեամբ անամոթաբար Մելանիա յանդգնէր մերձենալ առ նմա, և անարժան բանիւք յամբարշտութիւնն հրապուրէր զնա։ Յայնժամ երանելին Եւգինիա իմացեալ զնենգութիւն չար դիւին և զչարութիւն բանսարկուին որ 'ի նմա, կարկառեալ զաջ ձեռն 'ի Ճակատ իւր արար զնշան խաչին, և մեծաւ բարբառով և սաստիկ արտասուօք և հառաչմամբ ևս սկսաւ ասել. Պատշաճողութեամբ անուանեցար դու Մելանիա. քանզի սևութիւն գիջութեան և գայռ չարութեան բղխէ 'ի քէն, զի մթին մեղաց դուստր ես դու, և առաջնորդ կորստեան, և սիրելի սատանայի, բորբոքումն ցանկութեան և քոյր անիրաւին և անվախճան մահուն, դուստր մշտնջենաւոր գեհենոյն,

աղբիւր մթացեալ անամօթոյն ցանկութեամբ, թէնա՛ մի Աստուծոյ, և ընդունակ բանսարկուին. 'ի բաց մերժեա զմոլորութիւնդ 'ի ծառայից Քրիստոսի։

Իսկ իբրև զայս լուաւ նա՝ բորբոքեցաւ սրտմտութեամբ և չկարաց տանել ամօթոյն իւրոյ, երկուցեալ թէ գուցէ 'ի բազում ականջս հասանելով լսոյս այսմիկ՝ նախատ եղիցի առաջի բազմաց, երթայ յԱղեքսանդրիա, և 'ի մէջ հրապարակի առաջի եպարքոսին Փիլիպպոսի ամբաստանութեամբ անկանի ասելով, եթէ՝ Դիպեցայ ումեմն երիտասարդի անհաւատի՝ որ ասէր զինքն քրիստոնեայ. զոր իմ կոչեցեալ վասն աւողջութեան, քանզի համբաւէր եթէ հիւանդացս օգնել կարէ. իսկ հրամայել մերձենալ նորա առ իս՝ դժնեայ և անամօթ բանիւք սկսաւ խօսել ընդ իս, և 'ի թշնամանս հրապուրէր զիս. և զի՞նչ պարտ է բազում ինչ ասել. քանզի դլուխ արար, և իբրև 'ի գերի մի յանդգնեցաւ ձեռնարկել յիս. զի թէ չէր դիպեալ 'ի սենեկին մի ոմն յաղախնեայց իմոց, յաղագս որոյ և ոչ տիրեալ եղէ 'ի բռնադատութենէ նորա, թերևս կատարէր յիս զչար ցանկութիւնն իւր։ Իսկ զայս լուեալ եպարքոսին և յոյժ բարկացեալ, առաքեաց բազմութիւն զօրականաց. և հրամայեաց զնա և զամենեսեան որ ընդ նմա էին՝ կապել երկաթով, և 'ի սակաւ աւուրս տահմանելով ածել 'ի հրապարակն առաջի թէատրոնին. զի լուեալ 'ի նոցանէ հրամայեսցէ գազանակուր ընկենուլ զնոսա։ Իսկ յորժամ եհաս ժամանակն՝ զերանելին Եւգինիա և զամենեսին որ էին ընդ նմա՝ երկաթակապս ածել 'ի հրապարակն առաջի ամենեցուն։ Եւ բազմութեանն չգիտացեալ զարդարութիւնն՝ աղաղակէին 'ի վերայ նոցա, մանաւանդ որք էին 'ի Մելանիայ կողմանն. զի պէսպէս կամք էին բազմութեանն, ոմանք աղաղակէին հրով ծախել զնոսա, և ոմանք գազանակուր ընկենուլ, և այլք աղաղակէին ազգի ազգի տանջանօք հարկանել զնոսա։

Յայնժամ եպարքոսն լռեցուցեալ զբազմութիւնն, կացոյց զԵւգինիա առաջի ամենեցուն, և հարցեալ զնա ասելով, թէ՝ Որպիսի՞ համարձակութեամբ այնչափ յանդգնութիւն հասոյց զքեզ, մինչև զազգային սինկղիտոսացն զՄելանիա՝ թերամահ տարադէմ տեսա-

նելով՝ մեր առ նա ըստ նմանութեան քրիստոնէի, որպէս թէ բժշկութեան արուեստին հմուտ ես, և զազատածին կինն 'ի թշնամանս և յանարգութիւն կոչէիր. միթէ այսպիսի՞ ինչ հրամայէ ձեզ գործել Քրիստոսն ձեր. և կամ՞այդ է պաշտաման ձերոյ խոստովանութիւն, զի զապականութեան գործս գործիցէք։

Յայնժամ Եւգինիա պատասխանի ետ եպարքոսին և ասէ. Աղօթիւք խնդրեի զբպարտութիւնս այս որ եկեալ է 'ի վերայ մեր. կամէի ես յանձինս խղճիւ յաղթել, և ստեղծաբանեալ համբաւս այս հանդերձեալ դատաստանին պահել, քանզի ոչ մարթի երկընչել զճշմարիտ սրբութեանն՝ որ ինչ 'ի չարարուեստութենէ 'ի վերայ նորա. և ոչ դարձեալ պարկեշտութիւնն, սրբութիւնն գնացեալ թաքչիլ կարէ, քանզի ոչ միայն 'ի գովութիւն մարդկան վայելեսցէ փայլմամբ լուսոյն իւրոյ՝ այլ և 'ի պատիւ պարգևատուին իւրոյ Աստուծոյ։ Քանզի իմաստնոց պարկեշտութիւն պահի յստակապէս, որք ստացեալ ունին զնա անթուլութեամբ, և որպէս 'ի սէր Աստուծոյ քաջապէս վարի անձն քրիստոնէի։ Զի զխիղճ մտաց իմոց այժմ յայտնեալ 'ի մէջ բերիցս. քանզի ես էգ եմ ընութեամբ, և չկարացեալ ցանկալւոյն իմոյ Աստուծոյ ըստ կամի պիտանացուացս և գեղեցկաշքովս, այսպիսի պատճառանօք որով էգ յառն տեսիլ ձևացայ. յարժան և յիրաւ զգեղս այլափոխեալ ըստ նախանձու և ըստ նմանութեան վարդապետին իմոյ Թեկղի, յապականացուացս և յառժամանակէիցս փախուցեալ, երկնային բարեացն հասանել կամեցայ. առ 'ի գովութիւն եղև այսպիսիս, և 'ի ցանկութիւն ընդաստուածային առաքինութեանց տկարութիւն զառն տեսիլ ձևացայ։ Վասն այնորիկ և ես աստուածային պաշտաման ցանկութեամբ զկծեալ[1] զառն կերպարանս առի, զի կատարեալ առն մտօք զկուսութիւնս քաջապէս պահեցից։

Իբրև զայս ասաց՝ պատառեաց 'ի գլխոյն զհանդերձն՝ զոր ունէր զգեցեալ, և զանծանօթ դէմս երեսացն առժամայն յայտնէին գեղեցիկ լանջք կուսին.

1. Յոր. զկծեաս։

և՝ դարձեալ փութապէս ծածկէր պատառատուն հանդերձիւն. և յաւել ևս խօսել, և ասէ ցեպարքոսն. Դու իսկ հայր իմ մարմնաւոր ես, և եղբարք իմ երկու Ապիտոն և Սերգիոս. իսկ ես եմ դուստրն քո Եւգինիա, որ վասն Քրիստոսի ցանկութեանն զերկրաւորս արհամարհեցի հանդերձ երկու պատանեկօքս իմովք, որ են ահաւասիկ Պրոտէոս և Հիւակինթոս, իմ ներքինիք, որք ընդ իս 'ի Քրիստոսի դասս կարգեցան։ Բայց Քրիստոս այնչափ բաւականութեամբ մերձեցուսցէ զքեզ, մինչև իմ վարդապետելովս քեզ՝ առաջի ամենեցուն յաղթող ցանկութեանց եղիցիս 'ի Քրիստոս, որպէս և ես իսկ հաւատամ, եթէ մինչ 'ի վախճան անվթար պահեցայց։

Յետ այսորիկ Ճանաչէր հայրն զդուստր, և եղբարքն զքոյրն իւրեանց։ Եւ ընթացեալ առաջի ամենեցուն պատէին զնովաւ, և արտասուելով փարէին զմիմեանսք։ Եւ նոյն ժամայն ընթացեալ ոմն պատմեաց մօրն նորա Կղոդեայ։ Եւ նորա լուեալ փութապէս հապշտապ ընթացիւք և ամենայն մտադիւրութեամբ հասանէր 'ի թէատրոնն, և հանեալ արագ արագ ոսկեթել հանդերձ՝ ակամայ ագուցանէինն մա, առ 'ի ծանուցանել ամենեցուն եթէ սա է Եւգինիա. և վերամբարձեալ բառնային զնա, և ամենայն բազմութիւնն աղաղակէր ասելով. Մի է Քրիստոս, մի է Տէր, մի է Ճշմարիտ Աստուածն քրիստոնէից։ Բայց եպիսկոպոսքն և երիցունքն հանդերձ բազում ժողովրդովք քրիստոնէից կային առ թէատրոնին, և պահ ունէին թէ յորժամ սպանանիցեն, առցեն զնըշխարս սրբոցն և ամփոփեալ թաղեսցեն զնոսա։ Իսկ մտանէին և նոքա 'ի թէատրոնն փառաւորելով զԱստուած, և միաբարբառ աղաղակէին ասելով. Աջ քո, Տէր, փառաւորեալ է զօրութեամբ իւրով, աջ քո, Տէր, փշրեաց զթշնամիս իւր։ Իսկ բառնային զնա վերամբարձ 'ի տեսանել զնա ամենեցուն, զի անչափ պարկեշտութիւնն նորա անգէտ լիցին. և ամենեցուն հայելով յանկարծակի հուր էջ յերկնից և մաշեաց զՄելանիա, և զամենայն տուն նորա։ Եւ իբրև զայն ևս տեսին՝ խնդութիւն յոյժ եղև բազմութեանն հանդերձ երկիւղիւ. և զութամեայ փակեալ եկեղեցին

քանային. և ամենեցուն հաւատացեալ՝ եղեն քրիս-
տոնեայք։ Մկրտեցաւ և եպարքոսն Փիլիպպոս, և որ-
դիք իւր Ապիտոն և Սերգիոս. մկրտեցաւ և մայրն Եւ-
գինեայ հանդերձ աղախնովք իւրովք, և անթիւ բազ-
մութիւն հեթանոսաց դարձաւ 'ի քրիստոնէութիւն։
Եւ ամենայն Աղեքսանդրիա լինէր իբրև զմի եկեղեցի.
և վասն զի երիցունք ամենայն առաջնորդէին եկեղե-
ցւոյն և յօրինէին, վասն զի գնացեալ էր առ Տէր՝ որ
յառաջագոյն աստուածային օրինացն էր առաջնորդ։
Իսկ եղեալ նորա եպիսկոպոս, մեծապէս պատուէր նա
զեկեղեցի, որպէս զի արժանի եղեալ էր պատուոյն,
այլ և զարքունիսն նա յօրինէր. զի ունէր զեպարքո-
սական իշխանութիւնն, քանզի փոխանակ էր եկեալ։
Իսկ միանգամայն զամենայն իսկ Եգիպտացիքն առեալ
զպատճառս 'ի նմանէ զերծեալք 'ի կռոցն մոլորութե-
նէ՝ դարձան 'ի Քրիստոս, և յամենայն քաղաքս բա-
նային եկեղեցիք, և ծաղկէր քրիստոնէութիւնն օր
ըստ օրէ աճեցեալ։

Եւ այսոցիկ այսպէս յօրինելոյ շնորհօքն Աստուծոյ,
իսկ նախանձորդ բարւոյն բանսարկուն և չարին վար-
դապետ և գործակից՝ յարուցանէր զոմանս 'ի հեթա-
նոսաց որք էին գլխաւորք քաղաքին, և տայ անկանել
նոցա առաջի թագաւորացն որք էին յայնժամ, և
զամենայն ինչ առ նախանձ սուրբ եկեղեցւոյ և աս-
տուածապաշտ եպիսկոպոսին Փիլիպպոսի ասացեալ։
Առաքի փոխանակ Փիլիպպեայ եպարքոս, որում ա-
նուն էր Պերինոս, որ ունէր հրաման 'ի թագաւորացն
թէ այդպէս իցէ սպանանել զՓիլիպպոս։ Իսկ եկեալ
Պերինեայ և չկարացեալ զայս առնել, վասն զի սիրելի
էր Փիլիպպոս ամենայն բազմութեան քաղաքին, ա-
ռաքէ զոմանս առ նա 'ի նմանութիւն կերպարանեալ
քրիստոնէից, որ մատուցեալ յեկեղեցւոջն, և գտեալ
զնա զի կայր 'ի պաշտաման Աստուծոյ. և մերձենալով
առ նա իբրև թէ զի օրհնութիւն առցեն 'ի նմանէ,
սպանանեն զնա իբրև զԶաքարիաս 'ի մէջ տաճարին և
սեղանոյն։ Բայց եղև նա յեպիսկոպոսութեանն ամ
մի և ամիսս երիս. և վկայութեան խոստովանութեամբ
գնաց առ Տէր։

Իսկ Եւգինեայ առեալ զմարմին հօր իւրոյ մարտի-

ղոսի, եւ յօտարանոցին, որ էր եղեալ 'ի Կղոդեայ մօրէ նորա, մօտ ի կոչեցեալ տեղի մի Տիրանաս, որ էր տուն աղօթից եղբարց իւրոց առ 'ի փառաբանութիւն Տեառն Քրիստոսի, զոր թագաւորական պատուով շինեցին 'ի յառաջասացեալ տեղւոջն։ Իսկ այսոցիկ այսպէս եղելոյ՝ ամենեքեան միաբան որք էին մերձ առ երանելին Եւգինիա, և մայր նորա և եղբարքն լծակցելով խաղային 'ի Հռովմ, և առաջնորդէին նոցա շնորհքն Աստուծոյ։ Վասն որոյ Սպիտոս և Սերգիոս 'ի սինկղիտոսացն խնդութեամբ ընկալեալք եղեն. մինչև մինն 'ի նոցանէ հիւպատոս եղև 'ի Կարթագինա, իսկ միւսն Բիտարիտոս Սիրիկեցւոցն կարգեցաւ։ Բայց Կղոդիա և Եւգինիա ըստ աստուածային խորհրդոցն վարէին, և յորդորէին օր ըստ օրէ 'ի վարս առաքինութեանն, և քաջում անձինս մատուցանէին Աստուծոյ, և աքանչացեալք էին ամենայն սինկղիտոսաց և կուսից, և 'ի նախանձուն քրիստոնէութեան յառաջացեալք։ Իսկ Բասիլիա ոմն կոյս, որ էր Գալիոսի թագաւորի ազգակից, մտաք առաւելեալ և իմաստութեամբ հռչակեալ, էկն նա գաղտ առ Եւգինիա, և լուեալ 'ի նմանէ զբանն Ճշմարտութեան, այնպէս հաւատաց, որպէս թէ ոչ ումեք հնար էր քակել զնա 'ի հաւատոցն։ Բայց վասն զի չկարէր ստէպ ստէպ տեսանել զերանելին Եւգինիա՝ Բասիլիա, ըզ-Պրոտիոս և զՀիւակինթոս զնեբքինիս նորա իբրև 'ի շնորհի պարգևեալ նմա յԵւգինէ՝ ընկալաւ, ընդ որս զցայգ և զցերեկ աստուածային օրհնութեանցն և խնդրուածոց և աղօթից պարապէր և 'ի նոյնս յօրանայր։ Յայնժամ եպիսկոպոս ոմն այր սուրբ և աստուածային խրատիւք յոյժ կատարեալ՝ էկն առ Բասիլիա, և լուսաւորեաց զնա սուրբ մկրտութեամբ և զամենեսեան որ ընդ նմա էին, և ստէպ ստէպ խրատէր յաստուածային գրոց՝ հաստատելով զնոսա 'ի հաւատն Քրիստոսի. մինչև ամենեքեան միաբան առաքինութեան վարուք այնպէս յառաջանային՝ մինչև 'ի վկայութիւն պատրաստ էին։ Բայց որչափ ժամանակս եպիսկոպոսն նստէր գլխաւորութեամբ առաջնորդ եկեղեցւոյն՝ 'ի խաղաղութեան էին քրիստոնեայք և ոչ մի ինչ յոյզք թշնամեաց էին 'ի նոսա։ Բայց Կիպրիա-

նոս եպիսկոպոս բազում վշտաց համբերեաց վասն հաւատոց, ուստի և Մաքսիմոս ոմն անուն հիւպատոս թագաւորական թղթովք հրաման առեալ սպան զնա։ Իսկ եպիսկոպոսին Նեստորի զայս լուեալ կայր առանձինն 'ի ծածուկ վարուք. քանզի բազումն 'ի մեծամեծաց Հռովմայեցւոց քրիստոնեայս ցուցանէր 'ի ծածուկ։

Բայց 'ի միում աւուր եկեալ Բասիլիա առ Եւգինիա, և յոյժ խնդութեամբ ընկալաւ զնա, և ասէ ցնա. Այսօր յայտնեաց Տէր ինձ՝ զի զվարդատեսիլ պատկերով ծաղկի քո արիւն հեղցի, այսինքն է՝ զի Ճգնեալ վասն Քրիստոսի խոստովանութեանն, զպըսակն և զնշանն յաղթութեան ընկալցիս։ Իսկ երանելին Բասիլիա զայս լուեալ և զձեռս յերկինս համբարձեալ մեծապէս խնդութեամբ գոհացաւ զԱստուծոյն։ Եւ իբրև կացին յաղօթս և կատարեցին զամէնն և նստան, ասէ Բասիլիա ցԵւգինիա. Իւրաքանչիւր մեր որպէս տեսանեմք յայտնեաց փրկիչն մեր զպսակն փառաց, քանզի որպէս քեզ վասն իմ, նոյնպէս և վասն քո ելից յերկրէ՝ Քրիստոս յայտնեաց ինձ. քանզի տեսի զի նշան յաղթութեան կրկնակի առեր յերկնից. մի վասն կուսութեանն Ճգնութեամբ յաղթեցեր դու իսկ յԱղեքսանդրիա. իսկ միւսն վասն հեղման արեանդ, զոր ըմբռնելոց ես։ Իսկ երանելոյն Եւգինեայ լուեալ յոյժ խնդալից եղեալ, և կոչեցեալ զամենայն կուսանսն, որք 'ի ձեռն նորա անապական սրբութեամբ պարկեշտութեան ցանկացան, ընդ ինքեան հրաւիրէր յաղթել։ Եւ յետ կատարելոյ զաղօթսն, այսպիսի բանիւք բարբառեալ ասէ ցնոսա. Ահաւասիկ ժամանակ կթող, յորում հասեալ պըտուղն կթի յերևիլ խորհրդոցն, վասն զի էք գութաղեաց իմոց, և ողկոյզք յինէն. զիս նախ յուղարկեցէք, և դուք պատրաստ եղերուք արթնութեամբ. քանզի կուսութեան գլխաւոր ցոյցք այս են, նմանել հրեշտակաց և մերձենալ առ Աստուած. քանզի այս առաքինութիւն հանդերձեալ կենացն սիրելի է, և պարկեշտութեան մայր, սրբութեան վարդապետ, անհոգութեան տիկին և խնդութեան առաջնորդ, առաքինութեան նախանձ և հաւատոց պսակ, յուսոյ օգնութիւն և պատուոյ պահպանութիւն, անձին փառք

և հանգիստ յաւիտենական, հրաւիրակ բարեաց և առաջնորդ երկնից արքայութեանն։ Ոչ է այսուհետև մեզ աշխատութեան որոշումն, որպէս թէ 'ի կուսութեան և 'ի սրբութեան լոյի մեզ մնալ. քանզի են աշխարհական փաղաքշանք, և խնդութիւնք առժամանակեայք. վասն որոյ որ անդ՝ ըմբռնի ողբովք և արտասուօք. քանզի սկզբանն զուարթացուցանեն ըզմարդն, իսկ 'ի վախճանին հասեալ արկանեն ընդ տանջանօք. յայսմ ժամանակի զանհոգութիւնն արկանեն 'ի միտ, զի հանապազորդ տանջանաց պարտաւոր արասցեն։ Վասն որոյ պատուական իմ կուսանք, ողբ քաջապէս կուսութեամբ ընդ իս ընթացայք, հաստատուն մնասջիք 'ի սէրն Աստուծոյ յորս կայք, և առաւել աճեցուցէք զնա. քանզի այս է ժամանակ ողբալոյ, զայն ժամանակն՝ յորում ըմբռնեալ էիք 'ի մոլորութիւն, զի լցեալ եղիջիք անապական խնդութեամբն յամենակալէն Աստուծոյ։ Բայց ես յանձնեցից զձեզ սուրբ Հոգւոյն, և հաւատամ եթէ յարքայութեանն իւրում կատարեալս և անարատս ցուցցէ զձեզ. այլ յամենայնի օրինակ զիս կալջիք առաջի աչաց ձերոց, ունելով 'ի մտի զվարդապետութիւն իմ տառապելոյս և զնովիմբ փարեսջիք զամենայն աւուրս։

Ա. յսոքիւք և այսպիսի խրատիւք հրաւիրեաց զնոսա, համբուրեալ զամենեսեան արտասուօք. և յետ համբուրելոյն՝ ասէ ցնոսա. Ո՛ղջ լերուք քոյրք իմ, քանզի Բասիլիա, Եւգինիա հեռանան 'ի ձէնջ մարմնով։ Իսկ 'ի նմին ժամու մի ոմն յաղախնեացն Բասիլիայ երթեալ առ Պոմպէոս, որում խօսեալ էր զնա, ասէ ցնա. Գիտացիր, զի Բասիլիա իմ տիկինն որ քեզ խօսեցեալ էր, հրապուրեցաւ յԵւգինեայ, և ամենևին ուրացեալ է ամուսնանալ ընդ քեզ։ Զայս իբրև լուաւ Պոմպէոս, բորբոքեցաւ բարկութեամբ, և երթեալ առ նա կամէր մտանել 'ի սենեակն յորում էր Բասիլիա հանդերձ Պրոտէիւ և Հիւակինթոսիւ պարապեալ աղօթից և օրհնութեանց։ Յայնժամ ըմբռնեցին զՊրոտէոս և զՀիւակինթոս և ստիպէին զոհել, ապա եթէ ընդդիմաբանեացեն ինչ՝ սրոյ մատնեսցին։ Իսկ նոքա ամենևին ոչ հաւանեցան, և պէսպէս տանջանս մատուցին նոցա. և բազում տանջանաց համբերեալ։

զվախճան սրոյ ընկալան պատուհասին. և սոցա 'ի խոստովանութեանն սրբութեամբ վախճանեալք։

Ընթռնեցին ապա և զԵւգինիա և տանջէին առաջի Անիկտեայ եպարքոսի քաղաքին, և հրամայեաց նմա երթալ զոհել Աստուծոյ։ Իսկ երանելին հասեալ 'ի տեղին և մտեալ 'ի տաճարն, եկեալ դէմ յանդիման պատկերին և տարածեալ զձեռս յերկինս, և եկայ յաղօթս բազում ժամս. և իբրև կատարեաց զաղօթսն՝ նոյն ժամայն պատկերն Աստուծոյ անկեալ փշրեցաւ, և այնպէս եղև մանր մինչ զի և փոշի նորա ոչ երևէր։ Իսկ նոքա չիմացեալ զօրութիւնն Աստուծոյ, այլ կախարդանաց արուեստիւ զայնպիսին համարէին լինել։ Հրամայեցին վէմ մի մեծ կապել զնմանէ 'ի պարանոցին և ընկենուլ 'ի Տիբերիոս գետ։ Իսկ յորժամ տարեալ ընկեցին զնա, նոյն ժամայն լուծան կապանքն և վէմն անկեալ 'ի նմանէ սուզաւ։ Եւ սուրբն Եւգինիա գայր 'ի վերայ ջուրցն. և քրիստոնէիցն ամենեցուն տեսեալ զսքանչելիսն մեծաւ խնդութեամբ լցան, օրհնէին և ասէին. Այս է Աստուած որ ընդ Եւգինի, այս է՝ առ 'ի չկորուսանելոյ զնա, որ էր ընդ Պետրոսի 'ի ծովուն՝ առ 'ի չընկղմելոյ զնա։ Եւ մինչդեռ բերէր զնա ջուրն վերամբարձ եհաս յեզրն, և ելեալ կայր 'ի վերայ ցամաքին։ Ընթռնեալ զնա դարձեալ եդին 'ի բանտի և հրամայեցին ջեռուցանել զբաղանիսն արքունի, որոյ անուն էր Տիբերիանոս. և այնպէս բորբոքեցին մինչև փայլատակունք արձակէր ըստ նմանութեան երկաթոյ, և հրամայեցին ընկենուլ զնա անդր զի բոցոփն մաշեսցի։ Եւ մտեալ 'ի ներքս նոյն ժամայն հուրն թառամեցաւ, մինչև զարքունական բաղանիսն այնուհետև ջեռուցանել ոչ կարէին 'ի հրամանաց եղեալ 'ի նմա սառնամանեացն։ Իսկ յորժամ և այսմ հնարիցն յաղթեաց շնորհքն, որ գործակից էր աղախնոյն իւրոյ Եւգինեայ, հրամայեցին դարձեալ 'ի բանտ մտանել. և ընկեցին զնա 'ի տուն խաւարին առանց հացի և ջրոյ, և լուսաւորեցաւ ամենայն տունն։ Եւ եղև երանելին 'ի բանտին աւուրս քսան. և ծագէր անդ լոյս զամենայն աւուրսն։ Իսկ երևի նմա հրեշտակ Աստուծոյ, և զօրացուցանելով զնա, ասէր. Քաջ ջալերեաց, աղախին Քրիստոսի Եւգինիա, քանզի Տէր

Յիսուս Քրիստոս, որում ամենայն մտաք ծառայեցեր, առաքեաց զիս առ քեզ ասելով. քաջալերեաց և զօրացիր, քանզի յայսմ աւուր առնում զքեզ յերկինս, լցեալ քո զյաղթութեան ընթացս։ Ի նմին իսկ աւուր յորում էր ծնունդն Քրիստոսի՝ առաքեցին սպանօղ մի, և երթեալ սպան զնա 'ի բանտին։ Յայնժամ լուեալ քրիստոնէիցն, ժողովեցան առին զմարմինն Եւգինեայ և ամփոփեալ զնա փութապէս եդին 'ի նշանաւոր տեղւոջ, ոչ հեռի 'ի քաղաքէն հանդէպ Ճանապարհին որ կոչէր Ցատինա։ Իսկ մայր նորա Կղոդիա նստէր 'ի վերայ գերեզմանին և լայր. և յայտնեալ նմա երանելոյն Եւգինեայ, ասէ ցնա. Խնդա ուրախութեամբ մայր իմ, զի տարաւ զիս Տէրն Քրիստոս յուրախութիւն և 'ի հանդիստ սրբոց իւրոց. և զՀայրն իմ կարգեաց 'ի դասս սուրբ Հայրապետացն. բայց զքեզ ընկալցի խաղաղութեամբ 'ի կիւրակէիս՝ որ գալոցն է։ Եւ դու պատուիրեա որդւոց քոց եղբարցն իմոց, զի պահեսցեն զկնիքն Քրիստոսի, որով արժանի եղիցին ընդունակք և ժառանգ լինել սրբոց նոցա։ Եւ եղև յորժամ դարձաւ Կղոդիա 'ի տուն իւր, ուսուցանէր զորդիս իւր, որպէս և պատուիրեաց երանելին Եւգինիա. և յաւուր կիւրակէին 'ի ժամ կատարելոյ զխորհուրդն, մինչդեռ կայր յեկեղեցւոջն և աղօթս մատուցանէր՝ ետ զոգի իւր 'ի ձեռս Քրիստոսի՝ Տէր ամենայն հոգւոց։ Եւ այսպէս վախճանեալ սորա, առին զնա որդիք իւր Սպիտոն և Սերգիս, և եդին առ քեռն իւրեանց։ Եւ նոքա իսկ յառաջանային նախանձու Տեառն ամենայն առաքինութեամբ, մինչև զբազումն 'ի հեթանոսաց զերծուցանելով յանարժան զոհիցն, և դարձուցանէին 'ի հաւատն Քրիստոսի, զորս սրբելով սուրբ մկրտութեամբն, արժանի եղեն և ինքեանք նախանձաւոր լինել վարուց ծնողացն իւրեանց և քեռն երանելւոյ, և խառնեցան 'ի դասս սրբոց։ Ընդորս և մեք արժանի լիցուք վայելել յարքայութեանն երկնից. օրհնեալ զԱստուած Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. զի նմա ամենայն շունչ պարտ է զփառս, և ամենայն ծունր կրկնեսցի երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց, և ամենայն լեզու խոստովան լիցի այնմ, որ է 'ի վերայ ամենայնի. և նմա վայել է փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոց մարտիրոսացն և փառաշորեալ վկայիցն Եւգինիոսի, Վաղերիանոսի, Կանտիտոսի, Ակիշղասայ, Մակարիոսի։

Յաւուրս ժամանակացն այնոցիկ թագաւորքն Դիոկղետիանոս և Մաքսիմիանոս էին 'ի մեծ քաղաքին Հռովմայեցւոց, և խորհեցան խորհուրդ չարութեան հանդերձ քրմովքն անուանեալ աստուածոցն և սինկղիտոսացն և մեծամեծաց քաղաքին՝ քարոզս առաքել ընդ ամենայն իշխանութիւնս Հռովմայեցւոց գաւառացն, ողջակէզ և զոհս մատուցանել աստուածոցն, և ամենեցուն ձաշակել 'ի զոհիցն։ Հաճոյ թուեցաւ ամենեցուն խորհուրդս այս, և ուրախ եղեն մեծաւ ցնծութեամբ և ասեն. Եւ մեք ամենեքեան հաւանեալ եմք հրամանաց ինքնակալացդ զոհել բարեբար աստուածոց մերոց յստակամտութեամբ, և որք ոչ հնազանդեսցին՝ մահու մեռցին։ Եւ 'ի նմին ժամու ել հրաման 'ի թագաւորացն, ամենայն գլխաւորաց քաղաքին ժողովել 'ի Կապիտոլիոն Հռովմայեցւոցն, գրեալ նամակ որ ունէր օրինակ զայս.

Թագաւորք միշտ յաղթողք, ինքնակալ սեբաստոսք Դիոկղետիանոս և Մաքսիմիանոս, մեծամեծաք և փոքումք միով միաբանութեամբ, զառատապարգև բարիսն զոր շնորհեցին աստուածքն ծանեալք, մանաւանդ զյաղթութիւնն որ ընձեռեցաւ մեզ, և զտկարութիւն հակառակորդացն և զնկուն լինել 'ի նոցունց զօրութենէ. այլ և զառատ պտղաբերութիւն երկրի և զբարեխառնութիւն օդոցս՝ որ շնորհեցաւ մեզ և զա-

մենայն բարութիւնս։ Զան որոյ հրամայեմք ձեզ ըստ ամենայն գաւառաց և քաղաքաց որ ընդ մերով իշխանութեամբ էք, ոչ վերջանալ 'ի զոհից աստուածոցն, այլ ընծայատուր լինել 'ի բագինս նոցա. եթէ ազատ ոք իցէ և եթէ ծառայ, և եթէ զինուոր կամ ռամիկ, զնուիրական զոհս ողջակիզացն մի հեղգասցին մատուցանել։ Իսկ եթէ ոք հակառակ կայցէ հրամանաց մերոց, այնպիսիքն մատնեալ լիցին 'ի ձեռս դատաւորացն և արգելեալք յաղջամղջին տեղիս, գառն և չարաչար տանջանօք. և յետ բազում հարուածոց՝ սրով զվճիռ մահու ընկալցին։ Իսկ ոք հնազանդ լիցին հրամանաց մերոց, և զաստուածոցն բարերարութենէ գոհասցին, և յողջակիզեալ զոհիցն ճաշակեսցեն, փառաց և պատուոյ արժանի լիցին։

Իբրև լուան զայսպիսի հրաման ուրացութեան ամենայն աշխարհն Հռովմայեցւոց, ահիւ և դողութեամբ խռովեցան, և զարհուրեցան դողմամբ մեծաւ. և իբրև մեգ խաւարին և խուճապ տագնապի տարածեալ 'ի վերայ հաւատացելոցն։ Քանզի համբաւ իմն եհաս 'ի լսելիս թագաւորացն 'ի դատաւորացն արևելից քաղաքացն, գրեալ ամբաստանութեան նամակ, եթէ Կապադովկիա և ամենայն կողմանք Հայոց Մեծաց հակառակ կացին հրամանաց ձերոց. զխորհրդական տօնս աստուածոցն ոչ կատարելով, և ոչ 'ի նուիրական զոհից նոցա ճաշակելով։ Իբրև լուան զայս թագաւորքն՝ վաղվաղակի փոխեցին զիշխանս գաւառացն այնոցիկ, մեծաւ ցասմամբ զայրացեալ նոցա, վատշուէրս և անպիտանս զնոսա համարելով։ Եւ առաքեցին փոխանակ նոցա արս երկուս Հելլենացիս ազգաւ և կրօնիւք, անուն միումն Լիւսիաս, և երկրորդին Ագրիկողայոս, վայրենամիտս և գազանաբարուս, և խորագէտս և հանճարեղս։

Եւ իբրև եկին հասին նոքա յերկիրն արևելից, 'ի հրամանէ արիւնարբու գազանացն այնոցիկ՝ ամենայն քրիստոնեայք ըմբռնեալ լինէին յանաստուած դահճաց նոցա, և արկեալ ընդ անողորմ տանջանաց. այլ և այնոցիկ որ զթաքուցեալ քրիստոնեայսն մատնէին, ինչս պարգևէին գուշակելեացն։ Նա և հեթանոսացն տեսեալ զայն, եթէ ոք մատնեն զքրիս-

տոնեայսն՝ ինչս առնուն, այնուհետև յուզախնդիր լինէին գտանել զոք 'ի հաւատացելոցն, որպէս զի մատնեացեն 'ի ձեռս շաղղակեր գազանացն այնոցիկ։

Եւ իբրև անցին փոքր ինչ աւուրք 'ի վերայ, լուան ոմանք 'ի հեթանոսաց 'ի Տրապեզոնտացւոց քաղաքին զի մատնէին զփախուցեալ քրիստոնեայսն դատաւորին՝ 'ի շահ ընչից հայելով. եկին այնուհետև 'ի քաղաքն Սատաղացւոց, ուր նստէր դուքսն Լիւսիաս. և պատմեցին վասն երանելոյն Վաղերիանոսի և Կանտիտոսի և Ակիւղասայ և Եւգինիոսի, որ էր 'ի քաղաքէն Տրապեզոնտացւոց։ Այլ և բազումք 'ի քրիստոնէից վասն արծաթասիրութեան ախտին նմանեալք Յուդայ, գնացեալք 'ի քաղաքն Սատաղացւոց՝ հանդիպէին Կոմենտարիոսին, որ էր զօրագլուխ դասուն զինուորացն. ծանուցանէին նմա ասելով, թէ՝ Ահա կալան վարդապետքն երկրին Տրապեզոնտացւոց և մերձաւոր գաւառին Իտիսկոնւոց, և յամուրս նորա թաքուցեալք. որք ուսուցանեն թագաւորաց զհաւատս քրիստոնէից և ասեն. թէ ոչ են դոքա թագաւորք, որք բռնացեալ ունին զերկիր, այլ՝ այլ ոմն է Յիսուս Քրիստոս երկնաւորն Աստուած. և նոյն զինք խաչեալ ասեն 'ի Հրէից, և հեռացուցին յողջակիզաց և 'ի զոհից աստուածոցն։ Եւ ոչ զնոսա միայն այլ և զամենայն արս գեղջունս և ռամիկս սահմանացն այնոցիկ խաբեալք՝ 'ի կրօնս իւրեանց դարձուցին։ Եւ այլ ոմն երևեցաւ 'ի քաղաքին մերում, որ գրէ թէ գլուխ իսկ է աղանդինոցա, որ ոչ դադարէ ուսուցանել և քաջալերել զամենայն քաղաքացիսն և զզօրականսն, խրատելով և ասելով. Մի՛ երկիր պագանել աստուածոցն, այլ Յիսուսի Քրիստոսի, զոր երկնաւոր և յաւիտենական թագաւոր զնա կոչեն։ Եւ են թաքուցեալ նոքա յանտառախիտ մայրիս կողմանցն այնոցիկ։

Ասէ զօրագլուխն ցնոսա. Եթէ կարասջիք ցուցանել զնոսա ինձ, բազում պարգևաց և պատուոյ արժանի արարից զձեզ ըստ հրամանի իշխանին մերում։ Յայնժամ երթեալ զօրագլուխն և 'ի ծածուկ յայտնեալ իշխանին Լիւսիայ՝ զասացեալսն յարանցն այնոցիկ։ Եւ հրամայեաց դուքսն առ ինքն կոչել զքրիստոնեայսն զայնոսիկ՝ որք մատնեցին զերանելի վկայն Քրիստոսի։

Եւ իբրև եկին նոքա, յարուցեալ դքսին և զատուցեալ զնոսա Մեկուսի յամբոխէն, և հարցանէր զնոսա թէ յորո՞մ տեղւոջ իցեն սուրբքն, և կամ յորո՞ց քաղաքաց իցեն նոքա։ Ասեն ցնա. Ի սահմանս քաղաքին Տրապեզոնտացւոց ըմբռնեմք զնոսա. արդ հրամայեա որսորդաց հանդերձ շամբք գալ ընդ մեզ. և 'ի զօրականացդ ելցեն զկնի մեր, և շրջանակաւ պատեսցեն զանտառն յորում բնակեալ են, և ըմբռնեսցուք զնոսա։ Եւ հաճոյ թուեցաւ բանքս այս իշխանին Լիւսիայ, և ետ նոցա միոյ միոյ երիս դահեկանս, և առաքեաց զնոսա, պատուէր տուեալ, զի մի՛ ոք գիտասցէ և փախիցեն յերկիրն բարբարոսաց։

Կոչեալ իշխանին զԿոմենտարիոսն որ էր զօրագլուխ, և հրամայեաց զօրականացն առաջի ամենեցուն՝ պատրաստել զորսորդսն և զզինուորսն և զմատնիչսն ընդ նոսա, և հրամայեաց փութով հասանել յերկիրն Տրապեզոնտացւոց, հետամուտ լինել և շրջել զի թերևս գտցեն զնոսա, և զգուշանալ զի մի՛ խռովութիւն լինիցի յաշխարհին։ Եւ յորժամ մերձ եղեն 'ի տեղիս զոր ցուցին նոցա մատնիչք՝ պատեցին շուրջանակի զանտառսն և զաղաղակ բարձին. Եւ հնչէր երկիրն, արձագանք վիմացն և լերանցն՝ զկնի ձայնիցն ահաւոր գոչմամբ բարբառ արձակէին։ Եւ գազանքն հոտոտելով շրջէին, իբրև որս կարծէին և խնդրէին զմարդիկն. և որսորդացն վաղվաղակի գտանելով զնոսա՝ ուրախ լինէին յոյժ։

Եւ տեսանէին զերանելին Կանտիտոս, և կալան զնա, և հարցանէին զնա, թէ՝ Ո՞վ կամ ուստի՞ իցես դու, և զի՞նչ գործ է քո 'ի մէջ անտառիս այսմիկ։ Պատասխանի ետ սուրբն և ասէ ցնոսա. Ես քրիստոնեայ եմ։ Ասեն մատնիչքն. Դո՞ւ ես վարդապետն քրիստոնէից։ Դարձեալ ասէ ցնոսա երանելին. Ես քրիստոնեայ եմ։ Ասեն ցնա. Որոյ՞ քաղաքի քաղաքացի ես դու և կամ զի՞նչ անուն քո։ Պատասխանի ետ նոցա և ասէ. Ի Մակեդոնիացւոց աշխարհէն եմ ես, 'ի Թեսաղոնիկեցւոց քաղաքէն։ Եւ ասեն մատնիչքն. Կապեցէք զդա երկաթի կապանօք և տարէք առ իշխանն, և անդ հարցցի դա, և գիտասցեն թէ ով կամ ուստի իցէ. և մի՛ ամբոխիք ընդ միմեանս, զի մի՛ գայցեն քրիստո-

նեայք և յափշտակեսցեն զդոսա. զի որպէս տեսա-
նեմք՝ դա է զոր խնդրէաքն։ Եւ կապեցին զնա և ե-
տուն 'ի մի ոմն 'ի զօրականացն, և յառաջ ելին գնա-
լով ընդ Ճանապարհն կոչեցեալ Տիսկանա։

Եւ յերեթ ամն իւրեանց 'ի մէջ թանձրախիտ անտա-
ռոյն խուզէին գտանել զմիւս ընկեր սրբոյն. և տեսին
այր մի վարելով լուծս եզանց, և ըմբռնեալ հարցա-
նէին զնա, թէ Ո՞ւր իցեն փախուցեալ քրիստոնեայքն,
կամ թէ դո՞ւ իսկ իցես։ Պատասխանի ետ և ասէ. Ես
այր մեղաւոր եմ, և զորմէ հարցանէք՝ ոչ գիտեմ։
Եւ ասեն մատնիչք սրբոյն ցզօրականսն. Կալէք զդա
և տարէք առ իշխանն, և նա տանջանօք հարցանէ զդա,
և խոստովան լինի նմա։ Եւ ասեն ստրատելատքն ցնա.
Ցտեղին միայն ցոյց և արձակեմք զքեզ։ Ասէ ցնոսա.
Եւ զիա՞րդ մարթ իցէ ինձ զայր արդարև անարատ տա-
րապարտուց մատնել 'ի կորուստ և յորոգայթ մահու։
Իսկ նոքա փաղաքշէին զայրն աղաչելով, զի մի զար-
հուրեալ փախիցէ, և համբաւեսցի բազմաց լսելիս։
Դարձեալ ստիպէին և ասէին. Ցոյց մեզ զտեղին 'ի
հեռաստանէ միայն։ Եւ հաւանեցաւ նոցա այրն. և
տարան զնա 'ի տեղին զոր ցոյց նոցա։ Յայնժամ թա-
կարդապատեալ շուրջ զտեղեաւն հանդերձ զօրակա-
նաքն, իբրև զորս ինչ երէոց ձիչ բարձեալ ձայնիւ և
աղաղակաւ՝ ըմբռնեցին զսուրբն։ Իսկ նա կամէրփախ-
չել 'ի նոցանէ. կալան զնա և հարցին. Ո՞վ ես դու և
կամ ուստի իցես։ Պատասխանի ետ և ասէ ցնոսա. Ես
քրիստոնեայ եմ. բաւական էր ինձ յառաջասացեալ
անունն՝ որ վայելուչ էր ասել ձեզ։ Յայնժամ ծա-
նեան մատնիչքն և ստրատելատքն՝ թէ այս է զոր խնդ-
դրէաքն. և կապեցին զսուրբն և ետուն 'ի ձեռս զի-
նուորաց, կամեցան արձակել զայրն՝ որ էցոյց նոցա։
Ասէ այրն ցնոսա. Թէ այսպէս հաճոյ թուեցաւ Աս-
տուծոյ մերոյ՝ մատնիլ առաջնորդաց մերոց 'ի ձեռս
ձեր, և ոչ ես հեռանամ 'ի նոցանէ, զի ճշմարիտ
քրիստոնեայ եմ։ Եւ ասէ Վաղերիանոս սուրբ վը-
կայն ցհաւատացեալ այրն. Ե՛կ ընդ մեզ որդեակ, և
մի՛ մեկնիր 'ի մէնջ, քանզի այսպիսի ուղեկիցս ոչ եր-
բեք գտցես, և ոչ հրաւիրող իբրև զՏէր մեր Յի-
սուս Քրիստոս։ Լուան զայս զօրականքն եթէ քրիս-

տոնեայ է և կապեցին զայրն և գնացին զՃանապարհն իւրեանց։

Եւ յետ երից աւուրց ածին զսուրբն 'ի քաղաքն Տրապեզոնտիա, և հարցին զօրականքն զքաղաքացիսն վասն կապելոցն՝ թէ ո՞ւր արկցուք 'ի բանդ։ Եւ սահմանեցին 'ի հասարակաց բանդին պահել զնոսա մինչև 'ի գալ բդեշխին Լիւսիայ։ Եւ ստէպ 'ի քաղաքին շրջէին զինուորքն, զի թերևս գտցեն զմիւս ևս ընկեր սրբոցն զԵրրորդն։ Եւ էր սուրբն յանքոյթ տեղւոջ 'ի թաքստեան. և ծանուցին զայս իշխանին, եթէ զերկուս 'ի վարդապետաց նոցա կալաք, իսկ զԵրրորդն ոչ գտաք։ Եւ մատնիչքն ոչ գտին զսուրբն զՆեգինիոս, և գնացին յիւրաքանչիւր տեղիս և ոչ կամեցան ցուցանել զօրականացն։ Իբրև լուաւ զայս իշխանն Լիւսիաս, 'ի վաղիւն ժողովեաց զզօրսն և զդաս իւրոց զօրականացն և յառաջեաց զՃանապարհն։ Եւ յետ հինգ աւուր եկն 'ի քաղաքն Տրապեզոնտացւոց, և ծանուցեալ 'ի զօրականացն զգտանել սրբոցն։

Իսկ ամենագով սուրբքն 'ի բանդի անդ զցայգ և զցերեկ յաղօթս կային առ Տէր մեր Յիսուս Քրիստոս, և ասէին. Մի՛ մատներ գազանաց զանձինս յուսացելոցս 'ի քեզ, և մի՛ մոռանար զաղքատութիւնս, Տէր Աստուած մեր. այլ փրկեա զմեզ 'ի ձեռաց ատելեաց մերոց, և ամրացո զմեզ ամենայաղթ աջով քո և կատարեա զընթացս վկայութեանց մերոց ըստ անսուտ խոստմանց քոց։ Եւ իբրև առաւօտ եղև՝ եկն դուքսն Լիւսիաս և հարցանէր զզօրսն, թէ՝ Յորո՞մ տեղւոջ է ժողովարանն, զի անդանօր նստեալ հարցից զդատապարտեալսն։ Պատասխանի ետուն քաղաքացիքն և ասեն. Դուռնն որ կոչի Վաւռեսին՝ մերձ է 'ի ծովն, այն է տեղի դատաստանի. և ժողովեցան բազմութիւն քաղաքին տեսանել զՀանդէս վկայիցն Քրիստոսի։

Յառաջեաց իշխանն Լիւսիաս և նստաւ յատենի. և հրամայեաց Կոմենտարիոսին բերել զամենեսեան որ 'ի բանդին էին և հարցանել։ Եւ գնաց զօրագլուխն 'ի բանդն և առ զսուրբսն կապանօք երեր զառաջեաւ։ Իսկ սուրբ վկայքն աղօթէին միաբան առ Աստուած և ասէին. Տէր Յիսուս Քրիստոս ամենակալ Աստուած

և գթած, դու ասացեր բերանով սուրբ մարգարէին Դաւթի, թէ՝ Բաց զբերան քո և լցից զդա. և 'ի կենսաբեր աւետարանին դարձեալ ասացեր, թէ՝ Մի՛ յառաջագոյն հոգայցէք թէ զինչ խօսիցիք, զի Հոգին Հօր ձերոյ խօսեսցի 'ի ձեզ զինչ պարտ իցէ խօսել։ Եւ արդ Տէր մեր և Աստուած, խոստացեալ ժամն ժամանեաց և եհաս. առաքեա զՀրեշտակ քո և տուր մեզ բան 'ի բանալ բերանոյ մերոյ, յորժամ մտցուք առաջի իշխանին յանդիմանել զանօրէնութիւն նորա, որ ամպարշտեալն էր 'ի քեզ. այլ 'ի հարուածոց չարչարանաց նորա մեք ոչ երկիւղուք, զի ունիմք զքեզ հանապազ առաջի աչաց մերոց։ Եւ իբրև կատարեցին զաղօթսն սուրբքն, կալեալ զնոսա անօրէն դահճացն, պատառեցին զհանդերձս նոցա և ածին առաջի իշխանին։

Եւ իբրև ետես զնոսա Լուսիաս, եհարց զնոսա և ասէ. Ասացէք ինձ զանուն ձեր եթէ զինչ կոչիք. և ապա զպաշտամունս ձեր և զողջակէզս զոհիցն և զերկրպագութիւնս որում երկրպագէքն։ Պատասխանի ետուն սուրբքն և ասեն. Թէ Ճշմարիտ և զարդար անուանս մեր կամիս հարցանել՝ քրիստոնեայք եմք. այլ զբախտ և զձակատագիր մեք ոչ գիտեմք. իսկ 'ի հարց և 'ի ծնողաց անուանեցաք Վաղերիանոս և Կանտիտոս։ Իշխանն ասէ. Եւ միւս ևս ընկերն ձեր որ ասաց զինքն քրիստոնեայ՝ զինչ կոչի։ Պատասխանի ետ ինքն և ասէ. Ակիւղաս կոչիմ։ Դուքսն ասէ. Ո՞ւր է և երրորդ վարդապետն ձեր, որ մանաւանդ խնդրելին է։ Սուրբքն ասեն. Լուաք զնմանէ զի ասեն եթէ 'ի քաղաքի աստ է. եթէ սիրիցէ զնա Աստուած՝ յայտնի առնէ և զնա ատենիդ քո. քանզի և կայ իսկ 'ի գրի. Տէր խրատէ, տանջէ զամենայն որդի զոր ընդունի։ Իշխանն ասէ։ Դո՞ւք էք որ ուսուցանէք ոչ զոհել աստուածոցն և զհրամանս ինքնակալացն արհամարհել։ Սուրբքն ասեն. Այո, մեք ուսուցանէաք որ գայիցն առ մեզ՝ զձանապարհս Ճշմարտութեանն, որ տանի 'ի կեանսն յաւիտենականս, և անարիւն ողջակէզս մատուցանել համագոյ և միամնական երրորդութեանն. այլ անուն Աստուծոյ կամ թագաւորի մեք ոչ գիտեմք, բայց միայն զՅիսուս Քրիստոս զթագաւորին յաւիտե-

նից, որ ունի իշխանութիւն մահու և կենաց։ Դուքսն ասէ. Եւ յումմէ՞ սա՛ նա իշխանութիւն։ Սուրբքն ասեն. Ի Հօրէ ամենակալէ, որ արար զերկինս և զերկիր, և ստեղծ զամենայն բանիւ իւրով։ Իշխանն ասէ. Զայն որ խաչեցին Հրեայքն, նա՞ դատի զկենդանիս և զմեռեալս։ Սուրբքն ասեն. Այո, նա դատի զտիեզերս զօրութեամբ իւրով և առնէ յարութիւն մեռելոց, և ամպարշտաց զանշէջ հուրն ընձեռէ և զարդարն անվախճան։ Իշխանն ասէ. Եւ յորժամ մեռանիմք՝ դարձեա՞լ յառնեմք։ Սուրբքն ասեն. Զիա՞րդ դատի Աստուած զտիեզերս արդարութեամբ, կամ արդարոցն փառս շնորհէ և մեղաւորացն զանվախճան տանջանսն. բայց վասն ձեր ամպարշտացդ գրեալ է, թէ՝ Ոչ յարիցեն ամպարիշտք՝ի դատաստանի և ոչ մեղաւորք՝ի խորհուրդս արդարոց։ Այլ այս յայտնի ձեզ լիցի, զի հոգիք այնոցիկ որ՝ի ձէնջ տանջեցան, և դատեցայք անիրաւութեամբ և ամպարշտութեամբ ձերով, խնդրելոց է՝ի ձէնջ Աստուած անաչառութեամբ, և արկցէ զձեզ՝ի խաւարն արտաքին, որ պատրաստեալ է հօրն ձերոյ սատանայի և հրեշտակաց նորա և ամենայն ամպարշտաց և ուրացողաց զնա։ Իսկ դուքսն մրմռեալ՝ի վերայ սրբոցն իբրև արիւնարբու գազան հրամայեաց կապել զոտս և զձեռս սրբոցն տոռամբք՝ի բացեայ՝ չորից զինուորացն, և արշաւաղղոք հարկանել զնոսա, մինչև արիւնն ոռոգանէր զերկիրն։ Եւ սուրբքն ասեն. Տէր է մեր օգնական, և մեք ոչ երկիցուք, զինչ արասցէ մեզ մարդ։ Իշխանն ասէ. Եթէ ոչ հաւանիք զոհել աստուածոցն՝ վաղվաղակի բառնամ զձեզ՝ի կենաց։ Սուրբքն ասեն. Մարմնոյս մերոյ ունիս իշխանութիւն, զոր ինչ կամիս՝ արա. իսկ հոգւոց մերոց նա ունի իշխանութիւն՝ որ ետ զնա. և շնորհել կարող է մեզ զառհաւատչեայ կեանսն յաւիտենից։

Յայնժամ հրամայեաց դուքսն յարուցանել զնոսա և կապել զփայտէ և պնդել զոտս նոցա՝ի կոճեղս, և երկաթի եղենդամբ քերել և գզել զանդամս նոցա։ Եւ անողորմ դահճացն մատուցեալ կանթեղս՝ի մարմինս վկայիցն՝ այրեցին և խորովեցին զնոսա։ Իսկ սուրբ վկայքն բարձր ձայնիւ սկսան աղօթել և ասել.

Տէր Աստուած մեր, որ մեծաւ զօրութեամբ քով ըստեղծեր զերկինս և զերկիր և որ 'ի նոսա արարածք են, որ յամենայնի կարողդ ես, առաքեա զՀրեշտակ քո և շինո զհուրս զայս՝ որ նեղէս զմեզ. և ցրուեա զբոց հնոցիս, որպէս փրկեցեր 'ի բաբելոնական հրոյն զերիս մանկունսն և այրեցեր զՔաղդէացիսն. նայեա 'ի մեզ և անկէզ պահեա զմեզ, որպէս զի փառաւորեսցի անուն քո սուրբ յաւիտեանս։ Եւ իբրև զայս աղօթեցին սուրբքն՝ վաղվաղակի անկան սպասաւորքն անօրէն իշխանին Լիւսիայ, և եղեն իբրև զմեռեալս, և ոչ կարէին յառնել. և տեսեալ իշխանին՝ տրտմեցաւ յոյժ, և ամենայն ատեան ժողովելոցն յամօթ եղեն. և հրամայեաց ինքուցանել 'ի փայտէն և տանել 'ի բանդն. և յերթալն իւրեանց աղօթէին սուրբքն և ասէին. Որ նստիս 'ի բարձունս երկնից ընդ աջմէ Հօր, Աստուած Ճշմարտութեան և Տէր ողորմութեան, օգնեա մեզ. զի 'ի մերձենալ 'ի մեզ նեղութեան՝ յաջողեսցի մեզ Ճանապարհ վկայութեանց քոց։ Եւ այսպէս հանին զգիշերն 'ի գլուխս յաղօթսն Աստուծոյ։

Իսկ երանելի վկայն Եւգինիոս էր 'ի տեղւոջ միում արտաքոյ քաղաքին 'ի Թաքստեան, 'ի քարանձաւին որ կոչէր Փշաբեր. երևեցաւ նմա Տէր 'ի տեսլեան գիշերի իբրև 'ի տունջեան, և ասէ ցնա. Եւգինիէ։ Եւ նա ասէ. Ահաւասիկ եմ Տէր։ Եւ ասէ ցնա Տէր. Տեսեր զյառաջեալսն քան զքեզ յարքայութիւնն երկնից, և ոչ լուար աւետարանական ձայնին՝ որ ասէ. Որ խոստովանեսցի զիս առաջի մարդկան՝ խոստովանեցայց և ես զնա առաջի Հօր իմոյ որ յերկինս է։ Դարձեալ ասէ ցնա Տէր. Յայտնեա զանձն քո խնդրողացն զքեզ, և մի ընդդիմակաց լինիր հրամանիս, որպէս Յոնան եղև. քարոզեա զբանն կենաց և ուսո, և մի երկիցես և մի պատկառեր, զի ընդ քեզ եմ։ Եւ զայս ասացեալ Տեառն վերանայր յերկինս հանդերձ հրեշտակօքն։ Եւ սուրբն Եւգինիոս լսեր զայս ամենայն իբրև 'ի տրտնջեան. և յարուցեալ եկաց յաղօթս և գոհանայր զՏեառնէ, և փառաւոր առնէր զԱստուած 'ի տուէ և 'ի գիշերի։

Եւ զինուորքն անօրէն իշխանին խնդրէին զնա յանտառին և ոչ գտանէին։ Եւ եղև կնոջ ումեմն ան-

ցանել ընդ այն տեղիսն՝ որ կոչի Վարանխայ, մերձ
'ի յայրն որ Փշաբերն ասեն, առ 'ի քաղել խուիւ։ Եւ
լուաւ նա զձայն սաղմոսերգութեան, զի աղօթէր
սուրբն Եւգինիոս. և ասէ կինն. Զայն ինն բարբառոյ
լուայ օտարոտիս յայրին յԱկանտիս և հնչումն մար-
դոյ. և թէ զինչ իցէ ոչ գիտեմ։ Իբրև լուան քաղա-
քացիքն ասեն ցնա. Դեւ ուրեմն հարաւ ի քեզ և մո-
լեգնեալ ես 'ի նոցանէ. զիարդ ասես եթէ ձայն լուայ
և ոչ զոք տեսի։ Եւ կինն պնդէր և ասէր Ճշմարիտ լի-
նել զասացեալն։ Իսկ իբրև լուան ոքք 'ի փողոցամիջի
անդ ժողովեալ էին մարդիկն և սպասաւորքն դատա-
ւորին, գնացին միաբան յայրն զհետ կնոջն, Ական-
տիս կոչեցեալ. առին արս և սպառազինեալս ընդ ին-
քեանս։ Իջին ընդ նոսա արք և կանայք 'ի քաղաքէն,
և եցոյց նոցա կինն զայրն։ Եւ ձայն լսելի լինէր յա-
կանջս բազմութեան 'ի սաղմոսէն երանելւոյն Եւգի-
նիոսի. և զարհուրեալ զանդիտեցին մտանել 'ի ներքս,
զի կարծէին այսս չար լինել անդրէն։ Իսկ ոքք էին զի-
նեալք՝ համարձակեցան մտանել յայր անդր։ Եւ տե-
սեալ զսուրբն զի տարածեալ էր զձեռս իւր ընդ երե-
կինս և կայր յաղօթս մեծաձայն բարբառով և գո-
հանայր և փառաւորէր զԱստուած, և պատեցին ըզ-
սուրբն. իսկ նա ոչ լռեաց յաղօթիցն. և ասաց այս-
պէս. Շուրջ եղէն զինև շունք բազումք և ժողովք չա-
բաց պաշարեցին զիս։ Հարցանէին զնա և ասէին. Ընդ-
էր ես աստ միայն բնակեալ, կամ զինչ խնդրես դու
այսր, միթէ դու իցես զոր խնդրէ իշխանն մեր, որ
կոչիս վարդապետ և ուսուցիչ քրիստոնէից։ Եւ պա-
տասխանի և ասէ. Ես քրիստոնեայ եմ։ Իսկ այլք 'ի
զինուորացն 'ի դասուց Լիւսիայ բդեշխին հարցանէին
դարձեալ և ասէին. Ցայսմ քաղաքէ իցես դու թէ
յայլմէ։ Իսկ երանելին ոչ ինչ տայր պատասխանի,
բայց միայն ասէր, եթէ քրիստոնեայ եմ։

Ցայնժամ զինուորացն ըմբռնեալ զնա քարշէին
մինչև 'ի քաղաքն, կամեցեալ կացուցանել զնա առա-
ջի դքսին։ Իսկ երանելի վկայն Քրիստոսի 'ի քարշանն
սրն աղաղակէր և ասէր. Ի Ճանապարհս վկայութեանց
քոց զուարճացայց որպէս յամենայն 'ի մեծութեան։
Եւ դարձեալ. Զի որպէս քաղցր են 'ի քիմն իմ բանք

քո, և որ զկնի. և՝ Ոչ երկեայց 'ի չարէ, զի դու Տէր ընդ իս ես։ Լուան մատնիչքն եթէ ըմբռնեցաւ սուրբն Եւգինէ, և կամեցան ծանուցանել իշխանին։ Եւ զինուորացն բերեալ առաջի դքսին զերանելին, վըկայելով թէ դա է Ճշմարիտ վարդապետն քրիստոնէից, զոր գտաք թաքուցեալ 'ի քարանձաւին։ Եւ իբրև ետես իշխանն զնա և զբազմութիւնն որ շուրջ կային զնովաւ, և զի էր օրն տարաժամեալ, հրամայեաց մատնողացն պարգեւս տալ, և զամբոխն արձակեաց, զի 'ի վաղիւն հրապարակաւ դատեսցէ զսուրբն։ Եւ տարեալ զերանելին արկին 'ի բանդ և զգիշերն ամենայն վարանէր 'ի սրտի իւրում, թէ որով օրինակաւ դատեսցի զսուրբ վկայն։ Իսկ նա զգիշերն ամենայն հանէր 'ի գլուխ յաղօթսն Աստուծոյ. առանձինն մեկուսի լեալ յայլոց քրիստոնէից, յաղօթէր այսպէս ասէր. Տէր Աստուած Հայր ամենակալ, Աստուած հարցն մերոց Ա՞բրահամու, Սահակայ և Յակովբայ, որ առաքեցեր զՄիածին որդին քո զՏէր մեր Յիսուս Քրիստոս յաշխարհս, որով ծանեաք զաստուածութիւնդ քո, որ եկն և մարմնացաւ յանարատ կուսէն Մարիամայ. որ 'ի յերկրի երևեցաւ և ընդ մարդկան շրջեցաւ, որ վկայեաց առաջի Պոնտացւոյ Պիղատոսի զբարիոք դաւանութիւնն, և խաչն և մահու համբերեաց, և յարեաւ երեքօրեայ, և փրկեաց զմեզ 'ի ծառայութենէ դրաւորական օրինացն. եղև գլուխ վըկայից և առաջին պտուղ հնջեցելոց, և համբերութեան տուող, և սրբոց հրեշտակացն հրամանատար. և զսուրբ զառաքեալսն լցոյց գիտութեամբ և պատուիրեաց յԵրուսաղեմէ մի մեկնել, այլ սպասել աւետեացն Հօր ի բարձանց։ Եւ այժմ Տէր մեր Յիսուս Քրիստոս, տուր ինձ զօրութիւն 'ի սրբութենէ քումմէ և շնորհեա ինձ բան ի բանալ բերանոյ իմոյ 'ի յանդիմանութիւն ամպարշտացս. և քաջութեամբ համբերութիւն տանջանացս՝ զոր ածեն 'ի վերայ մեր։

Յետ այսորիկ եկն դուքսն Լիւսիաս և նստաւ յաստենի 'ի բարձրաւանդակ տեղւոջն, և նախ հրամայեաց Կոմենտարիոսին՝ որ էր զօրագլուխ զինուորացն, երթալ առ սուրբն և ողոքական բանիւք խօսել ընդ սուրբն, զի թերևս հաւանեսցի զոհել աստուածոցն։

Իսկ յորժամ ծանեաւ սուրբն Եւգինիոս եթէ խընդրէ դուքսն կոչել զնա, փութացաւ կալ առաջի նորա. և իմացեալ միւս իշխանին՝ որ էր Կոմենտարիոսն, եթէ ոչինչ օգտէն ողոքանաց բանքն, ասէ ցգինուորսն. Առէք տարէք և փութով կացուցէք առաջի բդեշխին, թերևս ասասցէ նմա, թէ ո՞վ կամ ուստի՞ իցէ, կամ զինչ գործէր դա յայրի անդ։ Իսկ սուրբն Եւգինիոս կնքեալ զինքն նշանաւ սուրբ խաչին՝ ասէ. Ես քրիստոնեայ եմ և յորդորեալ եմ 'ի վարդապետութիւն փրկչին մերոյ Աստուծոյ, և ոչ եմ արժանի եթէ կոչեցայց ուսուցիչ, զի ուսուցիչ մեր Քրիստոս է. դարձեալ որ գան զկնի իմ 'ի քրիստոնէից, ուսուցանեմ զՀանապարհն Ճշմարտութեան, հաւատալ և երկիր պագանել միոյ աստուածութեանն, Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, արարչին երևելեաց և աներևութից, և անարգել և արհամարհել զձեռագործս մարդկան՝ որ ոչինչ են, որպէս մարգարէն Դաւիթ ասէ. Կուռք հեթանոսաց ոսկի և արծաթ են, և նման նոցա եղիցին որք արարին զնոսա. և որպէս առաքեալն և աստուածընկալն Պաւղոս ասէ, թէ՝ Պաշտեցին զարարածս և ոչ զարարիչն։

Ասէ ցնա դուքսն. Եւ դուք քրիստոնեայքդ երից աստուածոց երկիր պագանէք և ոչ արարչին։ Պատասխանի ետ երանելին և ասէ ցնա. Մեք, ով անթիւ պատէ, ոչ երկիր պագանեմք երիցս բարժանելոց, այլ Երրորդութեան միանականի և անբարժանելւոյ, միոյ բնութեան Հօր ամենակալոյ և Որդւոյ Միածնի և Հոգւոյն սրբոյ Ճշմարտի։ Եւ դուք մեռելոտի պատկերաց և բանսարկուին երկրպագէք։ Զի Քրիստոս որ էն Ճշմարիտ Աստուած՝ ա՛ռ իշխանութիւն 'ի Հօրէ դատել զկենդանիս և զմեռեալս. այլ ամենարիշտք ոչ յարիցեն 'ի դատաստանի, այլ առաքին 'ի խաւարն արտաքին, որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա։

Դարձեալ սկսաւ իշխանն Լիւսիաս ողոքական բանիւք խօսել ընդ նմա, և կարծէր այնու խաբել և հեռացուցանել 'ի բարձրութենէ հաւատոցն։ Եւ ասէ ցնա. Ի քաղաքէս յայսմանէ՞ իցես, թէ յայլմէ գաւառէ։ Ասէ ցնա սուրբն. Ի քաղաքէս յայսմանէ եմ։

Իշխանն ասէ. Զինչ անուն է քո։ Ասէ ցնա սուրբն. Եւ յառաջ ասացի քեզ և դարձեալ ասեմ, թէ քրիստոնեայ եմ ես, և ոչ երկիր պագանեմ գիւաց պըղծոց. զինչ առնելոց ես արա վաղվաղակի։ Ասէ Իշխանն. Եւ առաւնց անուան ես։ Սուրբն ասէ. Առանց անուան ոչ եմ, այլ յօրինացն Քրիստոսի կոչեցայ ես Եւգինիոս։ Իշխանն ասէ. Եւ այդպիսի հանձարեղի և փառաւորելոյ առն պարտ է յառաջել և զոհել աստուածոցն՝ նախ քան զփորձ առնուլ տանջանաց։ — Սուրբն ասէ. Աստուածս օտարս ես ոչ ճանաչեմ, և ոչ ծնողքն իմ ուսուցին ինձ զայդպիսի ճանապարհ, այլ հաւատալ 'ի մի աստուածութիւնն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ — Իշխանն ասէ. Ի բաց թող զյամառութիւնդ և զոհեա աստուածոցն։ Իսկ երանելին ժպտեալ ընդ միտս իւր՝ ասէ. Եւ ո՞ւր իցեն աստուածքն ձեր զի տեսից զնոսա։

Իսկ Իշխանն Լիւսիաս կարծէր զոհել նոցա, փութով հրամայեաց սպասաւորացն և քաղաքացեացն տանել զսուրբն ուր էին աստուածք նոցա 'ի մէջ քաղաքին, 'ի Նեմեսիոնն կոչեցեալ տեղւոջ։ Եւ ասէ Իշխանն ցերանելին Եւգինիէ. Եւգինիէ՛, եթէ լսես ինձ և հաւանիս և զոհես աստուածոցն, հրամանաւ ինքնակալացն 'ի պատիւ դատաւորական զքեզ յառաջեցուցից վասն հնազանդութեան գործոց քոց. և այլ ևս բազում օրինակս առաջի դնելով՝ խօսէր ընդ նմա։ Եւ յարուցեալ Իշխանն վաղվաղակի, էլ 'ի Նեմեսիոնն, ուր կանգնեալ էին աստուածք նոցա։ Գնացին ընդ նմա և ամենայն բազմութիւնք քաղաքին առեալ ընդ իւրեանս և զսուրբ վկայն Քրիստոսի, ոչ ակամայ բրնութեամբ, այլ իւրովք կամօք երթայր զկնի նոցա։ Եւ իբրև մերձ եղև երանելին 'ի պատկեր աստուածոցն, յաղօթս եկաց այսպէս և ասաց. Քրիստոս փրկիչ աշխարհի, որ տարածեցեր զանարատ բազուկս քո 'ի վերայ կենսաբեր խաչին, և հեղեր զանապական արիւնդ 'ի փրկութիւն մեզ, և արարեր խաղաղութիւն յերկինս և յերկրի. որ յաւուրս մարգարէին Դանիէլի զԲէել կործանեցեր 'ի Բաբելոնի, և հերձեր զվիշապն, և զպաշտօնեայս չարին յամօթ արարեր. որ Եօթնամեայ ժամանակս արքային Նաբուգոդոնոսորայ

հրամայեցեր ընդ գազանս վայրենի և ընդ անասունս խոտաձարակ լինել, և ծանուցեր զզօրութիւն աստուածութեանդ քո արարիչ և ստեղծիչ գոլով։ Եւ արդ Տէր իմ և Աստուած, ցրուեա և կորո զսոսա, զի ծանիցեն զքեզ միայն Աստուած Հշմարիտ։

Եւ 'ի կատարել աղօթիցն՝ 'ի նմին ժամու երեքեան պատկերքն աստուածոցն կործանեցան և անկան և ելեն մանր իբրև զփոշի. և հոգին չարութեան որ բուն նեալ[1] էր 'ի նոսա, գոչեաց մեծաձայն և ել 'ի նոցանէ, և ասէ. Եւգինիէ՛, ընդէ՞ր հալածես զմեզ 'ի մերմէ բնակութենէս, զի ոչ եմք մեք աստուածք, այլ դեւք թշնամանեալք. և տեսանելով զդեղեցկութիւն պատկերացս այսոցիկ՝ ցանկացեալ բնակեցաք 'ի սոսա։ Եւ արդ աղաչեմք զքեզ սուրբդ Աստուծոյ, մի՛ հեռացուցաներ զմեզ արտաքոյ 'ի տեղւոջէ աստի։ Իսկ սուրբ վկայն Քրիստոսի հրամայեաց նոցա հաւանել և գնալ յանբնակ լեառնն Կովկասու։ Եւ ամենայն խառնիճաղանճ ժողովքն և քաղաքացիքն տեսին զկործանումն պատկերացս աստուածոցն։ Եւ սուրբն խօսէր ընդ մոլորութեան հոգւոյն. և հաւատացին բազումք 'ի ժողովրդոցն 'ի Տէր մեր Յիսուս Քրիստոս, և գոչէին մեծաձայն և ասէին. Մեծ է Աստուածն քրիստոնէից, և մի է Աստուած սրբոյն Եւգինեայ. վասն զի զԴիա և զԱպողոնն և զԱրտեմիս տեսաք կործանեալ և մանրեալ իբրև զփոշի։ Եւ ասէ երանելին ցամենեսեան. Ծանեայք արդեօք զպատկերացն ձերոց զզօրութիւն՝ որոց երկիր պագանէիք, եթէ կարացին իւրեանց օգնել, և զիարդ ձեզ օգնեսցեն, կամ վանել զյարձակումն բարբարոսացն՝ որք պատերազմաւ մարտնչին ընդ ձեզ։ Արդ 'ի բաց կացէք 'ի նոցանէ և եկայք զկնի Աստուծոյն իմոյ, զի արասցէ ձեզ թողութիւն։ Կամէր և այլ ինչ վարդապետել և խօսել սուրբն ընդ նոսա։ Իսկ իշխանն Լիւսիաս բարկացեալ՝ ոչ ետ սրբոյն յերկարել զբան վարդապետութեան, և ասէ ցնա. Արդարութեամբ ասացին վասն քո չարախօսքն, զի այդպիսի բանիւք դարձուցեր զզօրսն[2] ինքնակալացն յաս-

1. Յօր. Բնեալ։

2. Յօր. զպատրանսն. թերևս՝ ընդ զրպանսն։

տուածոյն երկրպագութենէ, և ասեն զՅիսուս Քրիս-
տոս լինել Աստուած որ խաչեցաւ 'ի Հրէից։ Սուրբն
ասաց. Ո՞չ ամաչես աստուածս կոչել զայնոսիկ որք
կործանեալք եղեն մանր իբրև զփոշի։ Իշխանն ասէ։
Միտք քո յօդս են հանապազ. արդ զիա՞րդ չկցես դու
զլուխ կախարդաց. զի ես ոչինչ տեսանեմ, և դու
իբրև զտեսող խօսիս, և ոչ յայլոց ոք ինչ ետես կամ
լուաւ։ Եւ սրտմտեալ Իշխանն հրամայեաց ինքուցանել
յատեանն։

Յայնժամ յառաջեաց դուքսն և նստաւ յատենին.
և հրամայեաց զինուորացն մերկացուցանել զսուրբն և
ածել նմա առիգած կտաւի. և դահիճքն վաղվաղակի
արարին զհրամայեալն, և կացուցին առաջի դատա-
ւորին։ Իշխանն ասէ. Հաւանեաց և զոհեա աստուա-
ծոցն յառաջ քան զչարչարանս քո։ Երանելին ասէ. Բա-
զում անգամ լուար յինէն, զի ասացի քեզ թէ քրիս-
տոնեայ եմ և ոչ զոհեմ դիւաց պղծոց։ Դուքսն ա-
սէ. Ի բաց թողեալ զյամառութիւնդ, թէպէտ և ոչ
երկիր պագանիցես անկեալ աստուածոցն, մատիր և
զոհեա Ասկղեպեայ և այլոց աստուածոցն. ապա թէ
ոչ՝ զոգիսդ անջատես 'ի մարմնոյդ։ Սուրբն ասէ. Եւ
ո՞վ կարէ մեկնել զմեզ 'ի սիրոյն Քրիստոսի, նեղութիւն,
թէ անձկութիւն, թէ սով, թէ մերկութիւն, թէ հա-
լածանք կամ երկիւղ տանջանաց և կամ հանդերձեալ-
քըն, և կամ այլ ինչ արարած։ Այլ նախ արձակեա
բժիշկս զի ողջացուսցեն զմանրեալ աստուածսն քո
որ փշրեցան։

Եւ բարկացեալ Իշխանն այնուհետև հրամայեաց
դահճացն պնդել զոտս և զձեռս նորա և տարածանել
'ի վերայ գետնոյ, և ստուար մահակօք տանջել զնա,
փոխանակ արհամարհելոյ զաստուածսն։ Յայնժամ ա-
սէ ցերանելին՝ դատաւորն. Մի՛ հայհոյեր զաստուած-
սըն։ Եւ յետ բազում հարուածոցն ասէ ցհարկանողս-
սըն. Մատուցէք զդա մերձ 'ի փայտն, և կապեցէք ըզ-
ձեռս և զոտս դորա 'ի վերայ փայտին, և քերեցէք ըզ-
մարմին դորա մինչև զղջացի և եկեսցէ 'ի միտս իւր,
և հնազանդեսցի արդար օրինաց մերոց և զոհեսցէ
աստուածոցն։ Եւ կատարեցին զհրամայեալսն 'ի դա-
տաւորէն 'ի վերայ սրբոյն, և արիւն նորա իբրև զջուր

հոսէր 'ի մարմնոյ վկային։ — Իշխանն ասէ. Ես վաղվաղակի զկախարդութիւն քո լուծանեմ և հանեմ ընդ գլուխ քո, և գայցէ Քրիստոսն քո և փրկեսցէ զքեզ 'ի ձեռաց իմոց։ — Իսկ երանելին Եւգինիոս ասէ. Քրիստոս փրկիչն իմ փրկեսցէ զիս 'ի ձեռաց քոց, անօրէն ամբարիշտ, քանզի ամենևին ոչ իմացայ զտանջանս քո զոր ածեր 'ի վերայ իմ։ քանզի փրկիչն իմ կակղացոյց զմենքենայս չարչարանաց քոց։

Եւ դատաւորն ևս առաւել պնդեալ 'ի չարութիւն վասն բանից սրբոյն և վասն արհամարհելոյ զտանջանսն, խորհեցաւ այնուհետև սաստկացուցանել զգործի տանջանացն 'ի վերայ սրբոյն. հրամայեաց դահճացն մատուցանել ղամբարս 'ի կողս նորա և աղջուր արկանել 'ի վերայ անդամոցն։ Եւ երանելին համբերեր քաջութեամբ 'ի տանջանսն և ոչ տրտմէր, այլ յոգւոց ելանելով կայր յաղօթս առ Աստուած և ասէր. Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ 'ի բաղում վշտաց և 'ի նեղութեանց փրկեցեր զսուրբ զառաքեալսն քո և արարեր քարոզ տիեզերաց. որ աւերեցեր զդժոխս և լուծեր զմահ, և զտարամերժեալս 'ի կամաց քոց վերացեր յարքայութիւն քո, և զմեղաւորս աղատեցեր 'ի մեղաց, շինող զհրոյս բորբոքումն և բարձ յաշխարհէ զպոհս պղծութեան աստուածոց սոցա, և ողորմեա այնոցիկ ոյք երկիր պագանեն քեզ հոգւով և ճշմարտութեամբ։

Իսկ իբրև ետես դատաւորն եթէ ոչինչ օգտեցաւ յամենայն տանջանացն՝ զոր ած 'ի վերայ սրբոյն, յետ այնորիկ հրամայեաց դահճացն հուր վառել արտաքոյ քաղաքին հեռի ասպարիսիւ միով. և միահամուռ ածել զամենեսեան զվկայսն 'ի տեղի հրատին բորբոքելոյ, որոց անուանքն էին. Մակարիոս, Վաղերիանոս և Ակիւղաս, ընդ նոսին և զԵւգինիոս։ Յայնժամ եկն դահճապետն և ասէ ցդատաւորն. Ըզհրամայեալսն 'ի ձերմէ քաջութենէդ կատարեցաք, և առաւել ևս բորբոքի հնոցն. արդ զոր ինչ և հրամայես վասն դատապարտելոցն արասցուք։ Եւ իբրև լուաւ զայս իշխանն՝ էլ վաղվաղակի բազմութեամբ քաղաքին տեսանել զհնոցն և զկատարած վկայիցն Աստուծոյ։ Եւ տեսեալ իշխանին Լիւսիայ՝ զարմացաւ

ընդ սաստկութիւն բորբոքելոյ հնոցին. յայնժամ հրամայեաց արկանել զնոսա 'ի հնոցն։ Իսկ երանելին Եւգինիոս քաջալերէր զընկերս իւր և ասէր. Մի՛ երկչնչիք 'ի շինչանուտ հրոյ աստի, զի ոչչափ բարձրանայ՝ սոյնպէս և կորնչի. տեսութիւնն միայն ունի զերկիւղն. վասն զի ունիմք մեք 'ի ձեռն ապականացու հրոյս այսմիկ ժառանգել զանապական գանձն որ պատրաստեալ է սրբոց իւրոց, և զկեանսն յաւիտենականս։ Եւ ամբարձեալ զձեռս իւրեանց յերկինս միաբանութեամբ աղօթէին այսպէս ասելով. Տէր Աստուած, որ առաքեցեր զՄիածին Որդիդ քո 'ի Բաբելոնն, և զհուր հնոցին շինուցեր յերից մանկանցն, առաքեա և 'ի հնոցս յայս զցօղ քաղցրութեան քո, և փրկեա զմեզ 'ի հրոյս յայսմանէ, զի անկեղ պահեսցուք 'ի քոյոյ աստի, և մի՛ մերձեսցի 'ի մեզ։

Եւ մինչդեռ աղօթէին սուրբքն՝ առաքեաց դուքսն առ սուրբսն աղաչելով զնոսա, զի մի՛ արկցեն զանձինս իւրեանց 'ի հնոցն։ Պատասխանի ետուն սուրբքն և ասեն. Մեք պատրաստք եմք առ ամենայն նեղութիւնս տանջանաց՝ զոր ածելոց ես 'ի վերայ մեր վասն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ վասն մեր չարչարեցաւ և յարեաւ և փրկեաց զմեզ, և ոչ երկիցուք յահէ սպառնալեաց քոց։ Իբրև լուաւ զայս բրոնաւորն, մրմռեալ իբրև զարիւնարբու գազան՝ հրամայեաց արկանել զնոսա 'ի բորբոքեալ հնոցն։ Եւ սրբոցն կնքեալ զինքեանս նշանաւ խաչին՝ ընկեցան 'ի միասին 'ի հուրն։ Յառաջեաց քան զամենեսեան և եմուտ 'ի ներքս երիցս երանելին Եւգինիոս և այլքն զկնի նորա։ Եւ տեսին զի հրեշտակք Աստուծոյ մտին ընդ նոսա և երթային հանդերձ հրեշտակօքն 'ի վերայ կայծականցն և փառաւորէին զԱստուած և ասէին. Աստուած ամենակալ, որ առաքեցեր զԲանդ քո 'ի փրկութիւն մեզ, որ ելոյծ զերկուսս մահու, և զկապեալս կորզեաց քաջութեամբ, լուր մեզ մեղուցելոցս և կատարեա զընթացս մեր 'ի բարի 'ի փառս քո, և շնորհեա զխաղաղութիւն քո աշխարհի, և յայտնեա զմեզ հաւատացելոցն 'ի քեզ։

Եւ յետ երկուց աւուրց շինաւ հուրն և յայտնեցան սուրբքն. և հրեշտակքն վերացան յերկինս և ոչինչ

երևէին նշմարանք 'ի սրբոյն մարմնոյ 'ի հրոյն. և մաղ մի ոչ պակասեաց հուրն 'ի հանդերձից նոցա։ Դարձեալ առաքեաց իշխանն 'ի զինուորացն տեսանել զերանելի վկայսն, թէ մերձեցաւ 'ի նոսա հուրն, և եթէ անկէզ պահեցան. և որք առաքեցանն ոչ դարձան և ոչ պատասխանի բերին. քանզի իբրև տեսին՝ երկիր պագին նոցա և հաւատացին 'ի Տէր։ Յայնժամ եկին դահիճքն և ծանուցին Լիւսիայ, թէ սուրբքն կենդանի են և փառաւորեն զԱստուածն իւրեանց. և ամենևին ոչ մերձեցաւ 'ի նոսա հուրն. և առաքեալքն 'ի քէն զինուորքն՝ երկիր պագին նոցա և հաւատացին 'ի Քրիստոս։

Զայս իբրև լուաւ դատաւորն, իբրև զՀուր բորբոքեցաւ և կրճտեաց 'ի վերայ նոցա զատամունս իւր. վասն զի ետես զինքն յաղթահարեալ և զբազումս հաւատացեալս յԱստուած. հրամայեաց սրով բառնալ զգլուխս նոցա, գրեալ վճիռ որ ունէր օրինակ զայս. Զվաղերիանոս և զԿանտիտոս և զԱկիւղաս և զՄակարիոս, որք անհաւանք եղեն հրամանաց ինքնակալացն և ոչ մատուցին զոհս բարերար աստուածոց մերոց, այլ խոստովանեցան զանձինս քրիստոնեայս, 'ի Յիսուս ոմն հաւատացեալ, զոր խաչեցին Հրեայքն յԵրուսաղէմ։ որք և զզինուորս Թագաւորացն հրապուրանօք կախարդութեան հեռացուցին յերկրպագութենէ աստուածոյն, զոր աղաչեցաք՝ բազում անգամ և ոչ լուան և ոչ հնազանդեցան արդար օրինաց մերոց. յետ բազում տանջանացն զվճիռ մահու ընկալցին, և կերակուր լիցին մարմինք նոցա թռչնոց երկնից և գազանաց երկրի։

Եւ անողորմ զինուորացն քարշեալ զսուրբ վկայսն արտաքոյ հնոցին, զի կատարեսցեն զՀրամանս բռնաւորին. իսկ ամենայն արժանաւորութեանց արժանաւոր վկայքն Քրիստոսի աղաչեցին զզինուորսն վայր մի անսալ զի յաղօթս կայցեն։ Եւ թողացուցեալ նոցա, և սրբոյն ամբարձեալ զձեռս իւրեանց և կացեալ ընդ արևելս, սկսան աղօթել այսպէս. Տէր Աստուած մեր Յիսուս Քրիստոս, դու իսկ ասացեր ամենասուրբ բերանով քով, եթէ՝ Երկու ձագ դանդի միում վաճառին, և մի 'ի նոցանէ յերկիր ոչ անկցի առանց Հօր

ձերոյ որ յերկինս է։ Դու, Տէր, ետուր զօրութիւն սրբոց մարգարէից քոց և վկայից՝ համբերել վշտաց և նեղութեանց։ Դու, Տէր, որ զԱբրահամ ապրեցուցեր և զպատարագ նորա ընկալար. դու ես որ ետուր շնորհս Յովսեփու առաջի Փարաւոնի արքային Եգիպտացւոց։ Դու ես որ զմարգարէն Մովսէս ընտրեցեր յառաջնորդութիւն ժողովրդեան քում Իսրայելի, և՝ ի ձեռն նորա հերձեր զծովն Կարմիր և անցուցեր զժողովուրդն յանապատն Սինայ, և ետուր համբերել խստապարանոց ժողովրդեանն։ Դու՝ ի ձեռն Յեսուայ զՅորդանան բարժանեցեր, և զերիքովական պարիսպն ադամանդեայ իբրև զջուր հեղեր. որ քոյին հրամանաւդ ոտնակապեաց զարեգակն և զլուսին։ Դու ես որ զօրացուցեր զդատաւորսն Իսրայելի՝ ի վերայ այլազգեացն, և փրկեցեր զժողովուրդսն քո՝ ի ձեռաց ամպարշտացն Քանանացւոցն։ Դու ետուր յաղթել Դաւթի՝ այլազգւոյն Գողիադու հսկային, և փրկեցեր՝ ի ձեռացն Սաւուղի անօրինի։ Որ պահեցեր զԴանիէլ՝ ի գբոյ առիւծուցն, և զՇուշան ապրեցուցեր և ազատեցեր՝ ի դառն ծերոցն. և ետուր յաղթութիւն Թեկղի՝ առոտն կոխել զՏրոյն և զդազանաց զօրութիւն. և պահեցեր անարատ զսուրբ զառաքեալսն[1] յամենայն նեղչաց իւրեանց. և զմեր զանարժանիցս զծառայիցս ընկալ զաղերս պաղատանաց, և կատարեա զընթացս մեր շնորհօք քո։

Եւ իբրև լուեցին յաղօթիցն և տեառնագրեցին զինքեանս նշանաւ խաչին, և խոնարհեցուցին զպարանոցս իւրեանց, հատին զգլուխս երանելեացն. և կատարեցան սուրբքն՝ ի փառս Աստուծոյ։ Եւ ընկեցին զմարմինս նոցա որպէս հրամայեցաւ նոցա՝ ի դատաւորէն. և նստան պահապանքն պահել զսուրբսն. զի գիտասցեն զինդրողս վկայիցն և մատնեսցեն զնոսա դատաւորին։ Իսկ հաւատացելոցն իմացեալ զխորհուրդս նոցա՝ մնային գիշերուոյն լինելոյ. և իբրև նսեմացաւ և՝ ի քուն եղեն պահապանքն, եկին և ամփոփեցին զնոսա սրբոց վկայիցն ազգեցութեամբն Աստուծոյ. զգլուխս նոցա ոչ գտին մերձ՝ ի մարմինս նոցա, բայց

1. Յոր. զառաքեալն։

զնշխարսն բարձեալ տարան յիւրաքանչիւր տեղիս իւ-
րեանց։ Եւ յորժամ առաւօտ եղև մտեալ 'ի Թան-
ձրախիտ մայրիսն Թաքեան, զի մի՛ ոք տեսցէ և մատ-
նեսցէ դատաւորին։

Իսկ մի ոմն 'ի սպասաւորաց սրբոյն ննջեաց, և ետես
զսուրբն Վաղերիանոս 'ի տեսլեանն զի ասէր ցնա. Բա-
րիոք արարէք զի ամփոփեցէք զմարմինս մեր. յարու-
ցեալ դու առ ընդ քեզ մի յընկերաց քոց, և գնացէք
'ի տունջեան ժամուս. և յորժամ երեկոյ լինի 'ի մեր-
ձենալ 'ի մէջ գիշերին, յորժամ խոր 'ի քուն լինին
պահապանքն, առէք զգլուխս մեր և բերէք դիք մերձ
'ի նշխարս ոսկերաց մերոց. և զի փայլակնացայտ լոյս
երևեսցի ձեզ 'ի նոցանէ, և այնպէս գտանիցէք զնոսա։

Եւ յարուցեալ 'ի քնոյ անտի պատմեաց ընկերաց
իւրոց զտեսիլն, և առեալ յընկերաց իւրոց և գնաց.
և տեսեալ զի լոյսն փայլէր շուրջ զնոքօք, որպէս ասաց
սուրբն Վաղերիանոս։ Եւ առեալ բերին զնոսա և յոյժ
ուրախ եղեն յաղագս գիւտի սուրբ նշխարացն։ Եւ
յետ անցանելոյ երից գիշերաց՝ պատրաստեցաւ հան-
գըստարան նոցա 'ի տեղւոջն կոչեցեալում Միջագետս
Հարաւայ։ Եւ եղեւ պատերազմ 'ի մէջ նոցա, թէ ո՞յք
որո՞ց իցեն մարմինք վկայիցն, զի գիտասցեն զնոսա յա-
նուանէ. զի 'ի քանցելոց բաղում հարուածոց մարմնոցն
'ի տանջանացն՝ ոչ կարէին ճանաչել զնոցին մարմինսն.
և մնային յայտնութեան սրբոցն։

Եւ մի ոմն 'ի զինուորացն որոյ հրաման առեալ պա-
հել զսուրբսն, լցեալ հոգւով և ասէ ցնոսա. Կացցուք
յաղօթս առ Աստուած, և նա յայտնեսցէ մեզ զխորհուրդս մեր. թողցուք զիւրաքանչիւր սրբոցն զգրաստսն որք բարձեալ տանին զնշխարս նոցա, և ուր և աջողեսցէ Աստուած և առաջնորդեսցէ, և յոր կողմ և երթիցեն նոքա՝ յայնժամ [1] իմացեալ ծանիցուք ըզտեղի սրբոցն։ Եւ կացեալ միաբան յաղօթս, և թողեալ զգրաստսն, և առեալ մին 'ի նոցանէ զնշխարս սրբոյն Կանտիտոսի՝ գնաց 'ի տեղին անուանեալ Սաւղահինա. և միւսն որ բարձեալ էր զՎաղերիանոսին, վասն զի նոյնն էր որ զԿանտիտոսին կրէր, տարաւ 'ի

1. Ցոր. Թերի էր յայնմ։

տեղին ուստի ինքն էր. և այսպիսի օրինակաւ եղև յայտնութիւն սրբոցն։ Աբեալք իւրաքանչիւրք զվըկայս իւր և երթեալք խնդութեամբ և ուրախութեամբ բազմաւ 'ի քաղաք իւր, և զգլուխս երանելեացն՝ եդին ընդ այլ նշխարս նոցա 'ի տապանի. գանձ անպակաս և անապական ժողովեալ 'ի բարեխօսութիւն փրկութեան հաւատացելոց 'ի յոյս կենացն յաւիտենից 'ի Քրիստոս Յիսուս. և միաբանութեամբ օրհնէին զտուիչն այնպիսի համբերութեան մարդկան։

Եւ յետ անցանելոյ ժամանակացն այնոցիկ և դադարելոյ հալածանացն, շինեցին վայելուչ վկայարան ըստ իւրաքանչիւր անուանց սրբոցն, 'ի փառս ամենասուրբ Երրորդութեանն, Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։

Իսկ երանելի և անպարտելի վկայն Եւգինիոս, դեռ ևս տակաւին կենդանի էր և արգելեալ կայր 'ի խաւարչուտ բանդի, հեղուսեալ բևեռաք 'ի փայտի անդ, ուր կանգնեալ էին 'ի մէջ տանն. և անյագ ձայնիւ և սաղմոսերգութեամբ գոհանալով օրհնէր զԱստուած 'ի վերայ անպատումն պարգևաց նորա, աղաղակէր և բարձր բարբառով աղօթէր, և ասէր այսպէս. Աստուած ամենակալ, Հայր սիրելի Որդւոյ քո Միածնի, Աստուած զօրութեանց և հրեշտակաց և ամենայն ազնուան անուանելոյ, որ հաստատեցեր զամենայն բանիւ զօրութեամբ քո, որ առաքեցեր զծոցածին և զէակից Բանդ քո 'ի փրկել զարարածս. որ եկն կամաւ քո և մարմնացաւ յանարատ կուսէն Մարիամու, և կրեաց զամենայն կիրս մարմնոյ՝ բայց 'ի մեղաց, և խաչի և մահու համբերեաց, և թաղեցաւ 'ի նոր գերեզմանի, և էջ 'ի դժոխս, և վերաբերեաց զամենեսեան 'ի մեղաց և յապականութենէ և յերրորդ աւուր յարեաւ 'ի մեռելոց և համբարձաւ առ քեզ, և նստաւ ընդ աջմէ մեծութեան քում՝ ուր էրն զառաջինն. և խոստացաւ դարձեալ գալ միւսանգամ դատել զկենդանիս և զմեռեալս, և հատուցանել ըստ գործոց իւրաքանչիւրոց։ Դու Տէր, զօրութեամբ քո մեծաւ լուար յիւրաքանչիւր դարս և 'ի ժամանակս ձայնի արդարոցն և փրկեցեր և պահեցեր յամենայն վշտաց և նեղութեանց. որ զվէմն հաւատոյ զսուրբ զառաքեալն

քո Պետրոս՝ հաներ 'ի բանդէն 'ի ձեռն հրեշտակին, որ կապեալ կայր 'ի մէջ չորից զինուորացն կրկին շղթայիւք, և աղատեցեր 'ի ձեռաց Հերովդի և յակընկալութենէ Հրէից, և հաւատացար նմա զփականս արքայութեանն. և զՊաւղոս զանօթն ընտրութեան և զՇիւղայ 'ի տանջանաց բանդին աղատեցեր. և այժմ առաքեա զհրեշտակ քո և հան զիս 'ի նեղութենէ բանդիս յայսմանէ՝ ողորմութեամբ քո, և արձակեա զոտս իմ 'ի գայթակղութենէ, և զերծո 'ի ձեռաց անօրինիս և ամբարշտիս Լիւսիայ, զի դու Տէր կարող ես յամենայնի. և քեզ հանցուք օրհնութիւն և փառս ընդ Հօր և ամենասուրբ Հոգւոյդ, յաւիտեանս. ամէն։

Եւ այսպէս կացեալ յաղօթս երանելւոյ վկային Քրիստոսի. և ահա հրեշտակ Տեառն ի մէջ յերկնից՝ երևեցաւ նմա, և լոյս մեծ ծագեաց 'ի բանդին. և ցնծացեալ ուրախութեամբ սրբոյ վկային Քրիստոսի։ Եւ մինչդեռ նա յայսմ մտաց խորհրդի էր՝ առաքեաց անթիւպատոն Լիւսիաս դահիճս 'ի բանդն, և հանեալ զերանելին հատին սուսերաւ զգլուխ նորա, մինչդեռ փառաւորէր զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին յաւիտեանս. ամէն։

Կատարեցաւ երանելին Եւգինիոս վկայութեամբ 'ի Տրապեզոնտացւոց քաղաքին, յամեանն յունուարի՝ 'ի քսան և ութն, 'ի հիւպատուՊ Դիոկղետիանոսի և Մաքսիմիանոսի. և եղան նշխարք ոսկերաց նորա 'ի վկայարանին, որ է մերձ 'ի դղեկ պարսպին 'ի բարձրաւանդակ և վայելուչ բլրին, և գեղեցկաշէն վկայարանին. ամ յամէ կատարելով զյիշատակ նորա անխափան տօնախմբութեամբ, 'ի Քրիստոս Յիսուս. որում վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Եւդոքսեայ և Ռոմելի և Ղուսնի և Մակարայ։

Ի ժամանակին յայնմիկ Թագաւորելով Տրայիանոսի՝ բարիատեացն սատանայ արկ 'ի սիրտ նորա խորհուրդ չարութեան, յարուցանել հալածանս 'ի վերայ եկեղեցւոյն Աստուծոյ. և նեղէին ամենայն ուրեք զհաւատացեալսն 'ի Քրիստոս, և ստիպէին զոհել անշունչ դիւացն. և նստեալ յատենի ամբարիշտ Թագաւորն, հրաման տալով յամենայն քաղաքս և 'ի գեօղս զոհել աստուածոցն. մինաւանդ զայնոսիկ որ 'ի Քրիստոս կէին բարեպաշտութեամբ։ Զհեծելազօրսն առաքելով ընդ աշխարհսն ամենայն 'ի ձեռն նամակաց, զի տանջանաց մատնեսցին քրիստոնեայքն, ուր և գտցին։ Մատուցեալ ումն յիշխանացն Ռոմելոս անուն, ասէ ցԹագաւորն. Հրաման բարեպաշտութեան ձերոյ հզօր և պատուական է, բայց զոմանս յերևելի պատուաւորաց պալատանն առաքեա 'ի Գալիլիացւոց գաւառն՝ առ քաջամարտիկ և արիագոյն զօրսն։ Այսէ Թագաւորն ցիշխանն Ռոմելոս. Երդուեալ 'ի փրկութիւն աստուածոցն, զի բարիոք են խորհուրդք քո։ Եւ հրամայեաց գնալ հնգից արանց 'ի մեծամեծաց պալատանն, առաքելով նորա ինչս բազումս, գրեալ և հրովարտակս ընդ նոսա որ ունէր օրինակ զայս. Տրայիանոս միշտ յաղթող Թագաւոր, կայսր Հռովմայեցւոց, պատուական դասուց զօրագլխաց կոմսից, երկոտասան աղգաց՝ ուրախ լինել։ Հրամայէ

մեր քաջութիւնս 'ի ձեռն պատուիրանաց մերոց ելեալի գլխաւոր իշխանացդ պաղատանս մերոյ, զոր խորհեցաք 'ի միասին ծանուցանել ձեզ, վասն աստուածոյն բարերարութեան, որք զարիական քաջութիւնս և զօրութիւնս շնորհեն ամենեցուն, և վասն այնորիկ պարտիմք հատուցանել զընծայս նոցա և զոհս, և սիրել զնոսա յամենայն մտաց և 'ի զօրութենէ. զի ելանելով ձեր 'ի պատերազմ վաղվաղակի յաղթող երևեսջիք 'ի վերայ թշնամեաց ձերոց, որք են 'ի կողմանս արևելից. ընկեցեալ սպառազինութիւն նոցա և զամենայն գործի զինու զինուորութեան՝ յարձակեսջիք 'ի վերայ նոցա։

Իսկ նոցա առ ժամայն արհամարհեալ զհրամանս թագաւորին՝ յաղթեցին հակառակորդացն դառնալ 'ի պատերազմէն։ Եւ տեսեալ թագաւորն զհրամանս իւր արհամարհեալ 'ի նոցանէն՝ բարկացաւ յոյժ. և հրամայեաց ելանել նոցա 'ի հայրենի դաւառէն իւրեանց, և երթալ 'ի կողմանս Հայոց 'ի քաղաքն Մելիտենի, համարեցաւ այնու անարգել զնոսա. և նոքա զարհուրեալք 'ի սպառնալեաց բռնաւորին Տրայիանոսի՝ եկին 'ի նախասացեալ գաւառն, զի մի բարկացեալ կոտորեսցէ զնոսա. և էր թիւ զօրաց նորա մետասան հազար արանց պատերազմողաց սուսերամերկաց։

Յայնժամ տեսեալ իշխանին Ռոմելիոսի որ ունէր զպատիւ պրոպոսիդոսութեան, ասէ ցթագաւորն. Ո՛վ թագաւոր, այնպէս կարծեցեր դու թէ իմաստութեան ինչ գործ գործեցեր զայդ առնելով։ Ասէ ցնա թագաւորն. Ուրեմն և դու խաբեցար յաղանդոյ մոլորութեան նոցա։ Ասէ ցնա Ռոմելոս. Ցիմար և անզգայ և արբեալ չարին մոլորութեամբն, դու զքո սընոտի ջանսդ՝ զոր ունիս առ կուռս անմտունչս՝ պատմեա ինձ և մի բամբասեր զիմ կատարելութիւն հաւատոյս։ Եւ բարկացեալ թագաւորն հրամայեաց մահակօք հարկանել զնա. և ասէ ցնա. Տեսցուք այսու հետև օգնէ քեզ Քրիստոսն քո զոր ասես։ Ասէ սուրբն. Անդնդային վիշապ և կեղծաւոր, ոչ իմացար թէ չարչարանքդ քո զոր կարծես զարհուրեցուցանել զիս՝ Հոգւոյն զիս և փրկէն 'ի կռոցն պղծութենէ, և ըզգեցուցանէն ինձ զանապական զգեստն զոր պարգևէ

Քրիստոս սիրելեաց իւրոց։ Եւ բարկացեալ Թագաւորն հրամայեաց սրով բառնալ զգլուխ նորա։ Եւ կատարեցաւ սուրբն Ռոմելիոս բարի խոստովանութեամբ, յամսեանն հոկտեմբերի ԺԹ, յաւուր շաբաթու, 'ի փառս Աստուծոյ։

Եւ յետ այնորիկ մեռաւ Տրայիանոս. և յետ ժամանակաց անցելոց՝ յարեաւ այլ Թագաւոր Դիոկղետիանոս անուն՝ որ ոչ ճանաչէր զԱստուած, մանաւանդ և որ 'ի Քրիստոս հաւատային՝ դարձուցանել ջանայր։ Եւ նստեալ 'ի բարձր բեմի, և առաքեաց հրովարտակ ընդ ամենայն գաւառս յիշխանս և 'ի դատաւորս, և 'ի զօրագլուխս, դարձուցանել զամենեսեան 'ի հաւատոցն՝ 'ի կռոցն խաբէութիւն։ Եւ ընկալեալ զայսպիսի հրամանս իշխան քաղաքին Մելիտենոյ, որում անուն էր Պոնտիանոս, զի և նա Հելլենացի էր ազգաւ, և հրամայեաց քարոզ կարդալ ընդ ամենայն հրապարակս և ընդ գաւառսն. Եթէ որք ոչ կամիցին հաւանել հրամանաց ինքնակալին և զոհել աստուածոցն՝ անողորմ տանջանօք և սրով զրաւեսցին 'ի կենացս։ Եւ ամենեցուն քրիստոնէից լուեալ զայսպիսի սպառնալիս բռնաւորին՝ վաղվաղակի խուճապեալք յերկիւղէ տագնապին՝ Թագուցանէին զանձինս իւրեանց, զի մի 'ի բուռն անկցին անաստուած դատաւորին. զի ուր և գտանէին նեղէին, և մեծամեծ տանջանս 'ի վերայ ածելով ստիպէին զոհել աստուածոցն և երկիր պագանել անշունչ պատկերաց։

Եկեալ արք ոմանք չարախօսութիւն առ իշխանն մատուցանէին վասն Մարինոսի, որ Եւդոքսիոսն կոչեցաւ, որ էր 'ի դասէ Պռիմեկիռացն, որ պատուեցաւ 'ի կոմսութեան իշխանութիւնն և ասէին. Եթէ ոչ հաւանի երբեք Թագաւորական հրամանացն, և զաստուածոցն զոհս ոչ մատուցանէ, այլ զկաչեալն խոստովանի Աստուած, և 'ի նա հաւատացեալ է։ Եւ զայս լուեալ դատաւորին, հրամայեաց արանց հնգից զօրականաց խնդրել զնա ուր և գտանիցի, և բերել յատեան դատաստանին։ Եւ եկեալ նոցա 'ի գեօղն յորում բնակեալ էր նա, և հարցանէին վասն նորա. և ասէին արքն ցնոսա. Աւանիկ զոր դուքն խնդրէք շրջի 'ի դաշտի անդ՝ որ կոչի Կուպատիա. և գնացին առ

նա։ Իսկ նորա յառաջագոյն իմացեալ զգալուստ նոցա՝ գնայց 'ի լեառն և նստէր անդ տեսանելով զնոսա. և տեսեալ զի փութանակի խնդրէին զնա՝ եկեալ 'ի տուն իւր փոխեաց զՀանդերձս իւր և զգեցաւ հանդերձ աղքատի, և եկեալ 'ի տեղի մի հանդիպէր նոցա. և ասէն ցնա զինուորքն. Գիտիցե՞ս արդեօք թէ ուր իցէ բնակեալ կոմսն Մարինոս որ կոչի Եւդոքսիա։ Եւ ասէ ցնոսա. Եւ վասն որոյ իրի խնդրէք զնա, և կամ զի՞նչ բանք իցեն ձեր ընդ նա, ասացէք ինձ և ես ցուցից ձեզ զնա։ Եւ ասէն ցնա. Իշխանն խնդրէ զնա։ Եւ ասէ ցնոսա. Վասն որոյ խնդրէ զնա։ Եւ ասէն ցնա. Վասն զի ոչ հաւանի հրամանաց ինքնակալին և աստուածոցն ոչ զոհէ։ Եւ ասէ ցնոսա. Եկայք 'ի տուն իմ և հանգերուք փոքր մի և ես ցուցից զնա ձեզ։ Եւ տարաւ զնոսա 'ի տուն իւր. և ասէ ցամուսին իւր. Պատրաստեա Ճաշ եկելոցս առ մեզ. և նորա սեղան եդեալ առաջի նոցա և Ճաշակեցին։ Եւ ասէն ցնա. Արդ ցոյց մեզ զկոմսն Եւդոքսիա։ Եւ նա ասէ ցնոսա. Զոր խընդրէքն ես եմ։ Եւ ասէն ցնա արքն. Ընդէ՞ր զայդ արարեր. ահաւասիկ գնամք առ իշխանն և ասեմք ոչ գըտաք զնա. և դու զանխլացիր և թաքո զանձն քո, զի մի՛ ըմբռնեսցիս և անկցիս 'ի ձեռս իշխանին. և ասէ. Ո՛չ արարից զայդ, այլ եկից զկնի ձեր, բայց փոքր մի համբերեցէք ինձ։

Եւ կոչեցեալ զամուսինն իւր ասէ ցնա վասն տանն իւրոյ. և ասէ ցնա. Ո՛վ կին, փոխելոց եմ ես 'ի մնոտի և յանցաւոր կենաց աստի 'ի մշտնջենաւոր և յաւիտենական կեանսն, և այլ ոչ ևս տեսանելոց ես զիս 'ի մարմնի ասա։ Արդ զոր ասեմ քեզ՝ լուր ինձ, և յելանելն 'ի մարմնոյ աստի՝ մի՛ ողբա առեալ արտասուեսցես 'ի վերայ իմ, այլ զգեցիր զգեստ զՀարսանեացն քոց, և վառեա լապտերս և ջահս և առեալ անօթ մաքուր ժողովեա զարիւն իմ, և առեալ զգլուխ իմ և զՄակարիոսի զորդւոյ իմոյ և ուրախ լեր. և զայս արա որպէս հարսն Քրիստոսի։ Եւ ասացեալ նորա զայս՝ առեալ զնա զինուորացն, նստեալ 'ի վերայ երիվարին իւրոյ և զգեցեալ զգեստ ազնիւ և պայծառս, և տարան զնա առաջի դատաւորին։

Եւ ասէ բռնաւորն. Ուրախ լեր փառաւորեալ կոմս

Եւդոքսիա։ Եւ ասէ Եւդոքսիա. Ուրախ լեր և դու, ով բռնաւոր։ Եւ ասէ դատաւորն. Իմացար, ով կոմն, եթէ վասն որոյ գործոյ խնդրեաք զքեզ։ Ասէ Երանելին. Պատմեա ինձ, ով դատաւոր, վասն որոյ խնդրեիրն զիս։ Իշխանն ասէ. Վասն այնորիկ կոչեցաք զքեզ, զի հաւանեսցիս հրամանաց ինքնակալին, և զոհեսցես աստուածոցն։ Իսկ սուրբն վկայն ծիծաղելով 'ի վերայ անմտութեան դատաւորին և ասէ. Եւ ես վասն այնորիկ զգեցեալ եմ հանդերձս պատուականս և պայծառս և նստեալ 'ի վերայ սպիտակ երիվարիս, և եկեալ կամ առաջի քո բեմբիս։ Ասէ դատաւորն. Երդուեալ յաստուածսն ամենայն, եթէ լսէ Թագաւորն վասն հնազանդութեան քո կայսերական հրամանացն և զոհելոյ աստուածոցն, յերկրորդական աթոռ Թագաւորութեանն իւրոյ նստուցանէ զքեզ։ Ասէ Երանելին. Ես յուսացեալ եմ յաւիտենական կենացն արժանի լինել. և երկիր պագանել Ճշմարիտ աստուածութեան նորա։ Եւ բռնաւորն ուրախ լինէր, կարծելով Թէ վասն աստուածոցն ասիցէ զայն։ Ասէ ցնա դատաւորն. Փառաւորեալդ և քաջ կոմնդ, 'ի վաղիւ եկեսջիր 'ի տաճար աստուածոցն և ընդ մեզ երկիր պագցես նոցա։ Ասէ կոմն. Այո. և քանի՞ աստուածոյ հրամայեսցես զոհել։ Իշխանն ասէ. Դիայ և Ապողոնի և մեծին Արտեմեայ։ Կոմն ասէ. Երից հրամայեցեր հաւատալ, այնպէս և ես հաւատամ 'ի Հայր և յՈրդի և 'ի սուրբ Հոգին, յԵրրորդութիւնն անբաժանելի։ Իշխանն ասէ. Ո՞րպէս, արհամարհելով զհրամանն ինքնակալին։

Եւ բազումք այնուհետև 'ի զինուորակցաց իւրոց ժողովեալ էին առ նա և կացեալ առաջի սրբոյն։ Ասէ բռնաւորն. Այժմ որ ոչ կամի 'ի ձէնջ հաւանել հրամանաց ինքնակալին, լուծցէ զգօտի իւր զզինուորութեան և դիցէ առաջի իմ։ Իսկ Երանելին Մարինոս, որ Եւդոքսիոսն կոչեցաւ՝ նախ քան զամենայն լուծանէր զգօտին իւր և ձգէր առաջի բռնաւորին. և էին նոքա արք հարիւր և չորք, և ասեն ցբռնաւորն. Մեք դասաւորեալ եմք յերկնային զինուորութիւնս հրեշտակաց։ Ցայնժամ տեսեալ Իշխանին զհամարձակութիւն և զբազմութիւն նոցա՝ սարսեաց 'ի նոցանէ և

գրեաց 'ի ձեռն նամակաց առ Թագաւորն. Եթէ զբազմութիւնս զայս կորուսանեմք, ասէ, այլ ոք ոչ կարէ կալ հակառակ հրամանաց ձերոց և անարգել զաստուածսն։ Եւ լուեալ Թագաւորին, հրամայեաց զայնոսիկ որք յառաջագոյն լուծին զգօտիս իւրեանց՝ սրով կատարել, և զայլսն անպատուհաս արձակել. և ընկալեալ զհրաման Թագաւորին՝ արձակեաց զնոսա։

Իսկ զերանելին Եւդոքսիոս հրամայեաց մատուցանել 'ի բեմն իւր. և ասէ ցնա դատաւորն. Մարիանէ կոմս, յայսմհետէ 'ի քաց արա 'ի քէն զխորհուրդս յիմարութեան, զի մի պէսպէս չարչարանօք նեղեցիս զքեզ։ Պատասխանի ետ երանելին և ասէ. Որո՞վ չարչարանօք զիս հաւանեցուցանել կամիս։ Դատաւորն ասէ. Հրով և ճիթով, բանդիւ և սրով։ Սուրբն ասէ. Այս ինձ, ով բռնաւոր, ո՞ր է բարի, փախչէ՞ն յանանց հրոյն՝ զոր ծով և գետք ոչ կարեն շիջուցանել, եթէ յայժմու հրոյս՝ զոր սակաւ ջուր շիջուցանէ. Եթէ զճիւթն որ անանց հրոփն եռայ, թէ յայդմանէ՝ որ դոյզն մի փայտիւ հալի և անցանի. զապտակն բոցեղէն և հոգեղէն զուարթնոցն, եթէ զապտակն ապականացու և տկար արանց. զսառամանիքն՝ որ ոչ ունի ջերմութիւն և զկրճտումն ատամանցն, թէ զքո սպառնալիսդ. զբանդս զայս՝ թէ զայն որ յաւիտենից ոչ անցանէ։ Արդ խմացիր զայդոսիկ զոր ասացի քեզ, և հաւատա թէ աստուածոց քոց ես ոչ զոհեմ, և ոչ անշունչ կռոց երկիր պագանեմ, այլ զոր կոչես դու Ապողինար՝ կորուստ և ապականութիւն խաբէութեան, և Արտեմիս՝ մայր կորստեան. և երեքեան դուք խաբիչք, Թագաւորն Դիոկղիտիանոս և դու բռնաւոր և հայրն ձեր սատանայ։

Եւս բարկացեալ դատաւորն՝ ասէ. Զպատուական աստուածսն Թշնամանեցեր, և արդ մեք երեքեանս ո՞վ եմք։ Եւդոքսիոս ասէ. Ասացի քեզ թէ դու և Թագաւորն և հայրն ձեր սատանայ. այլ տես և ծանիր, ով անդնդային վիշապ, որ քեզ և Թագաւորին պատրաստեալ է հուրն յաւիտենական, խաւարն արտաքին և հրեշտակք տանջողականք։ Դատաւորն ասէ. Զիս թո՞ղ անարգեցեր, ա՛յ կեղծաւոր, զԹագաւորն և զաստուածսն ընդէ՞ր յանդգնեցար հայհոյել։

Սուրբն ասէ. Լիջիք դուք նման աստուածոցն ձեռոց, որք անշունչք և անբանք են։ Եւ բարկացեալ բռնաւորն և եղծեալ գոյն երեսաց նորա, հրամայեաց 'ի ջրից կողմանց լուրիւք պարզել զնա և արքառաջքք տանջել զնա. և երանելին հայեցեալ յերկինս՝ ասէ. Շնորհեա, Տէր, որք 'ի քեզ են յուսացեալ՝ զխաղաղութիւն յերկինս և յերկրի։ Շնորհեա, Տէր, ամենեցուն որք խնդրեն 'ի քէն յիշելով զիս յօգնականութիւն 'ի նեղութեան, կամ 'ի պատերազմի, կամ 'ի ծովու, կամ 'ի մրրկեալ լերինս, կամ 'ի հոգւոյ մոլորութեան չարչարեալք, կամ 'ի Ճանապարհի, կամ 'ի բանդի, և այրեաց և աղքատաց, և 'ի ծերութենէ վտանգելոյ և ծանրացելոյ բեռամբ մեղաց, և որք գայցեն 'ի տեղի վկայութեան իմոյ, ուր հեղաւ արիւն իմ վասն անուանդ քո սրբոյ, և 'ի յիշատակի իմում ողբալով և արտասուելով խնդրեսցեն զողորմութիւն իւրեանց, շնորհեա նոցա, Տէր, վաղվաղակի ողորմութիւն և օգնութիւն և կատարեալ առողջութիւն, և փրկեա զնոսա յամենայն նեղութեանց նոցա։ Ցիշեա Տէր և զծնողսն իմ և զամենայն համազգիսն, զի մի՛ եղիցի առ նոսա մահ տարաժամ, մարդոյ և անասնոյ, և ամենեցուն որք յիշեն զանուն իմ, շնորհեա նոցա, Տէր, խաղաղութիւն յերկինս և յերկրի. և պտղաբերեա զայգիս և զանդաստանս նոցա, և որք խնդրեն բարեխօսութեամբ իմով և կարդան զիս յօգնականութիւն, դու ողորմեացիս նոցա և կատարեսցես զՀայցուածս նոցա 'ի բարի։ Շնորհեա, Տէր, և զուգակցի իմոյ մասն բարի ժառանգութեան ընդ իս 'ի հանդերձեալ յաւիտենիս, զի մի՛ բարժանեսցուք 'ի միմեանց։

Եւ իբրև կատարեաց զաղօթսն՝ հրամայեաց դատաւորն տանել զնա 'ի բանդ, եւ յետ աւուրց տասանց բերել զառաջեաւ զերանելին։ Եւ իբրև բերին՝ հայեցաւ 'ի նա բռնաւորն և ասէ ցնա. Եւդոքսիէ կոմս, այժմ գոնէ հաւանեցար երկիր պագանել և զոհել աստուածոցն, և եթէ 'ի նմին յամառութեանն իցես։ Եւդոքսիոս ասաց. Ես հաւատացեալ եմ 'ի Հայր և յՈրդի և 'ի Հոգին սուրբ, յանբարժանելի սուրբ Երրորդութիւնն. և ես կուրացեալ յառաջին չարին

խաբէութենէ, յանօրէն կռապաշտութենէն, և հիւանդ էի հոգւով և հիւանդութեամբ մարմնոյ։ Իսկ յորժամ արժանի եղէ վերստին լուացման աւազանին ծննդեանն և սուրբ միրտութեան՝ բացան աչք իմ և իմաստացայ ողջախոհ խորհրդոք սրտի իմոյ։ Բայց զայս գիտասջիր, ով անիրաւ բռնաւոր, թէ ոչ հաւանիմ քեզ և ոսկիապատ անշունչ պատկերի աստուածոց քոց ես ոչ զոհեմ, որք են գործք ձեռաց մարդոյ, զի նման լիցին նոքա՝ որք արարին զնոսա և ամենայն յուսացեալքն 'ի նոսա։

Եւ բարկացեալ դատաւորն հրամայեաց կապարեայ մրձով հարկանել զկուրծս նորա, և ասէ ցնա. Հաւանեաց հրամանաց ինքնակալին, և երկիր պագ աստուածոցն, և ապրեսցիս 'ի տանջանացդ։ Իսկ սուրբն զաչս 'ի յերկինս համբարձեալ, և խնդրէր 'ի Տեառնէ զառաջին մրցումն տանջանացն, և ուրախութեամբ կատարիլ։ Յայնժամ տեսեալ դատաւորին զջերմեռանդքն հաւատս վկային և զյօժարութիւնն, վճիռ հաստատէր 'ի վերայ սրբոյն այսպիսի օրինակաւ. Զմարինոս զանուանեալն Եւդոքսիոս՝ զգերապատուեալն կոմսութեան իշխանութեամբ, և ոչ հաւանեալ հրամանաց ինքնակալին, և անպատուեալ զբարերարութիւն աստուածոցն մերոց, յետ բազում չարչարանացն սրով ընկալցի զվճիռ մահու։ Եւ ընկալեալ սրբոյ վկային զայսպիսի վճիռ մահու, և հասեալ 'ի տեղի վկայութեանն, հայեցեալ տեսանէր զբազմութիւն զօրականացն 'ի դասուց զինուորութեան իւրոյ, զի լալով և ողբալով երթային զհետ նորա. լային և ամենայն ժողովուրդքն ընդ նոսա։ Եւ ասէ ցդահիճն. Թողացուցէք ինձ փոքր մի ժամ յաղօթս կալ առ Տէր մեր Յիսուս Քրիստոս։ Եւ նայեցեալ յերկինս տարածեաց զձեռս իւր, և աղօթեաց այսպէս. Տէր Աստուած, որ արարեր զերկինս և զերկիր, զծով և զամենայն որ է 'ի նոսա, լուր աղաչանաց իմոց և ունկն դիր խնդրուածաց իմոց, և օգնեա ամենայն հաւատացելոցս 'ի քեզ, և ամենեցուն քրիստոնէից շնորհեա զհայցուածս նոցա, որք կոչեն զիս յօգնականութիւն. և մի՛ եկեսցէ 'ի վերայ երկրիս այսորիկ սով կամ սրածութիւն կամ սասանութիւն, կամ նուաղութիւն

պտղաբերայ և խաշանց ծննդոյ և ամենայն հարկաւոր պիտոյից, կամ շարժումն դղրդեալ քաղաքայ և շինուածոյ. այլ ոչք հաւատով գայցեն 'ի տեղի կատարման իմոյ և արտասուաք խնդրեսցեն, դու Տէր, զինդրուածս սրտից նոցա կատարեա վաղվաղակի։ Շնորհեա, Տէր, և զինուորակցայ իմոց և ընկերայց զխաղաղութիւն, զի մի յաղթեսցէ նոցա թշնամի, և մի տեսցեն նոքա զամբոխ պատերազմայ, և ոչք 'ի մարտ պատերազմի լինիցին՝ մի յաղթահարեսցին 'ի թշնամեաց իւրեանց, այլ խաղաղացո զկեանս նոցա, և խորտակեա զամենայն թշնամիս 'ի պատերազմի հեթանոսաց։

Եւ յետ այսորիկ ասէ ցամուսինն իւր. Բեր այսուհետև զաման անօթոյն զոր ասացի քեզ, և ժողովեա զարիւն իմ, և առցես զգլուխ իմ ուրախութեամբ, և մի լալով և մի տրտմութեամբ, և մի արկցես արտօսր 'ի վերայ իմ վասն մեկնելոյ քո յինէն. և արասցես տապան ինձ՝ որ կոչի Անիմնո, և դու ննջեա ընդ աջմէ իմմէ։ Եւ դարձեալ 'ի ժողովուրդն ետես զոմն 'ի զինուորաց իւրոց Զինոն անուն կոչեցեալ, ողբալով զնա յոյժ. և ասէ ցնա սուրբն. Զինոնիկ, մի ողբար վասն բաժանելոյ քոյ յինէն, զի ոչ թողից զքեզ, այլ որպէս շրջէիր յերկրի զկնի իմ, նոյնպէս և շրջեսցիս ընդ իս։ Եւ զայս ասացեալ՝ եկեալ առ դահիճսն ասէ ցնոսա. Ո՛րդեակք, այսուհետև կատարեցէք զհրամայեալսն ձեզ։ Եւ եկեալ ձայն 'ի յերկնից առ նա ասելով. Ե՛կ առ հայրն քո երկնաւոր, և երանելի ես դու, զի զընթացս քո կատարեցեր յերկրի, և զհաւատսն քո պահեցեր, եղիցին խնդրուածք քո կատարեալ վասն ամենեցուն զոր խնդրեցեր։ Այլ եթէ հանդիպեսցի ոք 'ի պատերազմի կամ 'ի նեղութեան, և յիշեսցէ զքեզ յամենայն սրտէ՝ խորտակեսցին թշնամիք նորա. և ոչք ծանրացեալ իցեն մեղօք և դիմեսցեն 'ի տաճար սրբութեան քո՝ ուր եդեալ լինին նշխարք ոսկերաց քոց, թողցի ծանրութիւն մեղաց նոցա։ Եւ զայս ասացեալ և խոնարհեցուցեալ զպարանոցն իւր առաջի դահճին, և ձգեալ զսուսերն՝ եհատ զգլուխ նորա. և բերեալ զանօթն ամուսնոյ նորա՝ ժողովեալ զարիւնն, առեալ և զսուրբ գլուխ նորա խնդալով և

ուրախութեամբ տարեալ զնշխարս սրբոյն 'ի տեղին ուր հրամայեաց երանելին։

Կատարեցան ընթացք նահատակութեան Ճգնաւորին Քրիստոսի Եւդոքսեայ, յամսեանն Հոկտեմբերի ԺԹ, յաւուր կիւրակէի։ Եւ եկեալ կնոջն իւրոյ Մանտանայի՝ անարգէր զաստուածսն և զթագաւորն և զդատաւորն. և լուեալ բռնաւորին՝ ասէ ցնա. Վասն այնորիկ զայդ առնես, զի և դու վկայեսցիս, և պատուհասցին ոսկերք քո յանմիտ քրիստոնէից. երդուեալ յաստուածսն ամենայն և 'ի փառս նոցա՝ ոչ լցից զգփափաքումն սրտի քո։ Եւ յետ աւուրց հնգից 'ի վերայ անցելոց, երևեալ սուրբն ամուսնոյ իւրոյ, և ասէ. Ընկեր իմ և զուգակից, զՄակարիոս յղեա վաղվաղակի յապարանս իմ, զի ունիմ ինչ ասել նմա։ Եւ յարուցեալ առաւօտուն կոչեաց զնա, և ասէ. Որդեակ իմ Մակարիէ, տէրն քո յապարանս իւր կոչէ զքեզ. և նա ուրախութեամբ եկեալ յապարանսն, և տեսեալ զնա ոմանց 'ի դասուց զինուորացն՝ կոչեալ զնա տարան առաջի դատաւորին, ասեն. Եւ սա ընդ Եւդոքսի իշխանութեանն էր։ Եւ տեսեալ զնա բռնաւորն՝ ասէ ցնա. Յորմէ՞ ազգէ իցես։ Մակարիոս ասաց. Քրիստոնեայ եմ։ Իշխանն ասէ. Մի՛ յիմարիր և մի՛ փոխելանար. այլ հաւատա յաստուածսն և ապրեսցիս։ Սուրբն ասաց. Ես հաւատացեալ եմ և հաւատամ 'ի Թագաւորն մեծ և յԱստուածն և յՈրդին և 'ի սուրբ Հոգին, և յուսացեալ 'ի մի աստուածութիւնն զի յաղթեցից թշնամւոյն. և ակն ունիմ հասանել կոչողին իմոյ վաղվաղակի։ Եւ լուեալ զայս դատաւորին Պոնդենդիանոսի, հրամայեաց սրով կատարել. և ընկալեալ սրբոյն Մակարիոսի զվախճան սրոյ արեամբ, յամսեանն Հոկտեմբերի, 'ի փառս և 'ի գովութիւն Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի. որում փառք յաւիտեանս. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Եւստաթէի և կնոջն և որդւոց նոցին։

Յամին երկրորդի Մարկիանոս կայսեր, եղև նորա գօրավար մի նշանաւոր յոյժ, կորովի առ պատերազմունս, և փորձ առաւել ևս յորս եղջերուաց և այծեմանց և մանրագունից չորքոտանեաց, և անուն նորա Եւստաթէոս, և անուն կնոջ նորա Մարիանէ[1]։ Եւ էին նոցա երկու որդիք, առաջինն ամաց վեցից և երկրորդն չորից. և այրն ցանկալի էր ամենեցուն, և էր բառացի յոյժ ամենայն պաճարանօք, հօտիւք և ծառայիւք վերամբարձեալ քան զթիւն, ձիօք և ուղտուք. քանզի 'ի սեղան նորա երեք հարիւր սկտեղք արծաթիք գային 'ի սպասաւորութիւն նմա. և ինքն էր հեթանոս պաշտամամբ, ձեռնկալու ամենայն քաղցելոց և վիրաւորելոց. քանզի զմերկսն հանդերձիւ զգեցուցանէր, զքաղցեալսն կերակրէր, զդատապարտեալսն յատեանս տանջողագինս բազում անգամ առնոյր յընտանութիւն իւր, և զծառայս քառասուն ամաց 'ի վերայ անցելոյ՝ յազատութիւն առաքէր հանդերձ պարգևօք, և ամենայն կարօտելոց տեսուչ էր և նախախնամութիւն առնէր։ Զսա աստուածային այցելութիւնն ոչ կամեցաւ ընդ լծով ծառայութեան արկանել 'ի կեանս յոյսմիկ, այլ պատահել ազատութեան ամենասուրբ մկրտութեանն Քրիստոսի։

1. Յոր. Մարիանէ կամ Մարիանէ։

Իսկ 'ի միում աւուրց ելեալ Եւստաթէոս 'ի լեառն դիտել զՀովիտն, եթէ կենդանեաց որս գտցէ։ Իսկ նոյն ինքն Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ՝ որ ըզկերպարանս ծառայի էառ և մարդ զինքն եցոյց, զաստուածութիւնն ծածկեալ 'ի մարմնի սրբոյ կուսին. այսպէս և այժմ ՏԷր Յիսուս Քրիստոս, եղջերու զինքն եցոյց Եւստաթէին, որոյ եղջիւրքն մինչև յամպսն էին, և 'ի մէջ եղջերացն երևեալ օրինակ խաչին լուսով կազմեալ. և յերևելն Եւստաթէի՝ փախչէր յեզը հովտին, անցեալ ընդ անտառն և վազէր, 'ի բարձրը ապառաժաց վայրի 'ի վերայ ելեալ։ Եւ տեսեալ Եւստաթէի զկենդանին առաւել գեղեցիկ և բազմազան յոյժ, մանաւանդ վասն տեսլեան եղջերացն, իբրև նահատակութիւն կամեցաւ ցուցանել պայծառագոյն սինկղիտոսին, մտեալ հետևէր ընդ մէջ հատանել զվարսաւոր անտառն, որպէս թէ յառաւել ընթացիցն անյայտ լինել Եւստաթէոս երևեալ գլխաւորացն որսորդացն և զօրականացն։ Այլ և Հոգին Ճշմարտութեան զհետ երթալով՝ յայլոցն 'ի բաց տարաւ. որպէս առանձինն դիտել Եւստաթեայ զառաջնիկայն։ Եւ յորժամ հեռացաւ 'ի ծառայիցն յանգիտելի տեղի, և 'ի բազում ժամն թաքչէր ցուցանելով զինքն կենդանին, 'ի մերձանալ առնն՝ կամէր սրով հարկանել զնաւակուշտ եղջերուին. և յանկարծօրէն երևեալ հեռագոյն կենդանին յանընդել վայրի։ Յայնժամ ձայնէր առ Եւստաթէոս ասելով. Ով Եւստաթէէ, զի՞ հալածես զիս, զի՞ վասն քո եկի և 'ի քէն հալածիմ։ քանզի և Սօղոս երբեմն որպէս և դու՝ հալածէր զիս, այլ ես հալածեալ՝ 'ի ծոց իմ ըմբռնեցի զհալածիչն. և այսպէս և դու այժմ, ով Եւստաթիա։

Եւ Եւստաթիա յերկիւղի եղեալ անկաւ յերկիր։ Իսկ փոքր մի ժամու անցելոյ յինքն եկեալ՝ վերականգնեաց տեսանել թէ ով է որ խօսին։ Եւ ահա յեղջերացն եղջերուին ձայն լսելի եղև նմա. և էր երբեմն զի տեսանէր Եւստաթէոս զեղջերսն պտղովք լի, և 'ի մէջ եղջերացն Ճառագայթաձև լուսաձաձանչ խաչ մարգարտով. և ասէ Եւստաթէոս. Զի՞նչ է ձայնս զոր լսեմ, յայտնեա ինձ զքեզ որ խօսիսդ ընդ իս։ Յայնժամ զտպաւորումն խաչին 'ի դէմս մարդոյ տեսանէր,

և նոյն ինքն դէմքն բարբառէին ասելով. Ի միտ առ, Եւստաթիէ, քանզի ես եմ՝ յորժամ զաշխարհս մարդոյն աղագաւ իմացեալ լինէր ստեղծանել. յորժամ ջուրք 'ի ջուրց մեկնէր, և զպղպջակ հաստատութեանդ մածուցանէր պնդեալ. յորժամ ջուրն Ովկիանոսի վարսաւոր օդով զօրանայր, արեգակնանաւութեամբ և լուսնանաւութեամբ, արջնաբոլորդ լուսնաւորական գիշերոյ. յորժամ ջուր պիսիդոնացեալ սանձս ընդունէր. յորժամ ամենայն թռչուն օդային կազմեցաւ, և ամենայն ազգք չորքոտանեաց և սողնոց, զուղակաց և ամենայն ջրայնոց կառավարեալ ընդ անձանապարհն հետաձգէր. յորժամ Ադամ 'ի չորից տարերց շինեալ առ հանդերձեալ գլուխ քարոզութեանն. յորժամ և կինն արտաքս եկեալ յառնէն յարութիւն կարդացաւ, յաղագս հանդերձեալ գալըստեան որդեգրութեան. վասն զի Եւա՝ ածումն թարգմանի ըստ ընդարձակութեան լեզուին Գ.ամրաց։ Ես եմ Աստուած, որ մարմնացեալ մարդ եղէ։ Յորժամ Նոյ զտապանն կազմէր պնդմամբ փայտի 'ի հաշտութիւն աշխարհի, որ ցուցանէր զհանդերձեալ փայտին վերացումն. յորժամ Աբրահամ զորդին մատոյց Աստուծոյ՝ և գառն փոխանակ տուաւ, որ էի ես. յորժամ գեղեցկութիւն դիմաց կենդանագրեցաւ՝ անհաստատ ստացուած. յորժամ պարգև մարդկան դըրացի դժոխոց առաջնորդ մահու. յորժամ սուտն հեթանոսաց կռապաշտութիւն. յորժամ ճշմարտութիւն հաւատացելոց։ Ա.յսոցիկ ամենեցուն ճարտարապետ ես եմ, իմացիր, ով Եւստաթիէ։ Լուր և երկրորդ բանին, վասն զի 'ի վերայ մարդկան 'ի բնութեանն իւրում տուեալ է ազգումն չար 'ի ծփանս վարուցս այսոցիկ, և 'ի վերայ քո կարգեալ է և ոչ անցցէ։ Ահաւասիկ բարձրացար յիրս ստացուածոց և մեծութեան, և պարտ է քեզ խոնարհել յառաւել մեծութենէդ, որպէս թէ կեցեալ յերկրի զկեանս քո, և դարձեալ բարձրանալ քեզ հոգւով. և որ խօսիդ ընդ քեզ կատարեալ։ Ա.յլ վասն զի քաղաքավարութեամբ կազմեցան վարք քո, ասա, թէ այժմ կամիս խոնարհել, թէ յետ այնորիկ, քանզի պարտ է լինել ամենայն գրելոցս 'ի վերայ քո։

Եւ նա 'ի դողման եղեալ ասէ. Աղաչեմ զբարեբար նախախնամութիւնդ[1] քո, զի եթէ ոչ ինչ յայսցանէ զինև անցցէ, թողացո մինչև ի վաղիւ, որպէս զի պատմեցից աղախնոյ քում կնոջն իմում, և զոր ինչ ասասցէ արասցուք. աղաչեմ զքեզ անսա ինձ ասա և պատմեցից քեզ։ Ասէ ցնա տեսիլն երկրորդ անգամ։ Եթէ վաղիւ գաս այսր, նախ լուացիր ըստ օրինի քրիստոնէից 'ի քահանայէ, և յետ այնորիկ տեսցես զերեսս իմ 'ի տեղւոջս յայսմիկ։

Եւ իջեալ 'ի լեառնէն երեկոյի եղելոյ՝ սկսաւ պատմել զտեսիլն կնոջ իւրում։ Եւ եղև իբրև կատարեաց պատմել զտեսիլն, աղաղակեաց կինն ձայնիւ մեծաւ և ասէ. Ցխաչեալն տեսեր, տէր իմ, զոր քրիստոնեայքն պաշտեն. և առաւել ևս աղաղակելով ասէր. Որդի Աստուծոյ, ողորմեաց ինձ և երկուց տղայոց իմոց։ Եւ 'ի հարցանել առն իւրոյ՝ պատասխանի ետ ասելով. Ցանցելում գիշերիս տեսի զտեսիլդ զայդ ըստ որում պատմեցեր, նա է Քրիստոն. այլ կամաք իւրովք այսպիսի ձևով երևեցաւ քեզ, զի առանց մկրտութեան նորա եմք։ Եկ այսուհետև 'ի գիշերիս յայսմիկ գաղտաբար մկրտեսցուք, և վաղիւն երթեալ ասասցես ցնա. Տէր իմ, զի եթէ ոչ անցցէ գլուխքն, այժմ լաւագոյն է մեզ նուաստանալ մինչ գոյ 'ի մեզ զօրութիւն և ոչ 'ի վախճանի ծերութեանն, վասն զի լաւագոյն է մեզ ելանել 'ի հրոյ և ակնուանել ցողոյ, քան թէ մնանել 'ի ցօղ և ակնուանել բոցոյ։

Եւ անցանելոյ առաջնոյ պահու գիշերոյ, առին զերկոսին տղայսն և երթեալ առ քահանայն մկրտեցան յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ Իսկ Եւստաթէոս 'ի մկրտութեանն Եւստաթէոս կոչեցաւ. իսկ կինն նորա կոչեցաւ յԱստուած — հաւատուհի. իսկ տղայքն՝ անդրանիկն կոչեցաւ Ագապիոս և կրտսերն կոչեցաւ յԱստուած — հաւատացեալ։ Ասէ ցնոսա քահանայն. Աստուած եղիցի ընդ ձեզ, և աճեցուսցէ ըզձեզ յարքայութեանն. քանզի գիտայ եթէ ձեռն Տեառն է 'ի վերայ նոցա։ Բայց յորժամ հանդիպիցէք 'ի դրախտին փափկութեան յիշեսջիք զՀոգի Յոհաննու։

1. Յոր. Նախնամութիւնդ։

Եւ իբրև այդ եղև, առեալ Եւստաթէոս հեծեալս
էլ 'ի լեառնն. և իբրև մերձեցաւ 'ի տեղին, իբրև
պատճառանօք արձակեաց առ 'ի յինքենէ 'ի կողմանէ
ուր 'ի դէպ էր նմա տեսանել զտեսիլն։ Եւ տեսանէ
զօրինակն ըստ որում և զառաջինն. և անկեալ 'ի վե-
րայ երեսաց իւրոց գոչէր ասելով. Աղաչեմ զքեզ, զի
դու ես Քրիստոս Որդի Աստուծոյ կենդանւոյ, և այժմ
եկի որպէս մաղթեցի քեզ անապականի Տեառնդ,
զի այժմ համբերեսցուք առաջիկայ տառապանացն՝
քան 'ի ժամանակի ծերութեան։ Եւ փութեալ
Տեառն իւրոյ ընտանեգոյն[1] փառաքն, և ասէ առ երա-
նելին Եւստաթէոս. Երանի է ձեզ, զի զլուացումն ան-
ապականութեան իմոյ զգեցայք[2], և ընդդիմակցին
ձերոյ յաղթեցէք։ Եւ յաւուրսս յայսոսիկ յերեսին՝
եղիցի ձեզ այդ ամենայն. զդոյշ լեր այսուհետև, մի
գուցէ ելցէ 'ի սիրտս ձեր բան հայհոյութեան։ Քան-
զի յորժամ աՀիցէք՝ յերկրորդումն եկիցս առ ձեզ և ա-
ռիցս զձեզ։ Եւ զայս ասացեալ Տեառն վերացաւ յերկինս։

Իսկ նախ քան զիջանելն Եւստաթէի, մեռան նորա
եօթանասուն ձիք, և սենեկապանք և զինակիրք երի-
տասարդք, ծառայք և աղախնեայք։ Իսկ վաղիւն օ-
դոյ ուրեմն եկեալոյ զամենայն հօտս նորա սպառեաց.
իսկ 'ի միւսում աւուրն մինչ դեռ էին նոքա 'ի պարսպի
բուրաստանին զբօսանալ ինչ՝ կործանեցաւ բարձրա-
բերձ ապարանք իւր։ Եւ 'ի միասին դիմեցին անդ ա-
մենայն բազմութիւն յափշտակողաց և յափշտակեցին
զամենայն ստացուածսն Եւստաթէի, որպէս զի ոչ ևս
ինչ մնալ, բայց 'ի հանդերձիցն զոր զգեցեալ էին 'ի
ժամուն յայնմիկ։ Այլ և Թագաւորն էր ուղևորեալ
'ի Ճանապարհն Պարսից, և ուրախացեալ մեծապէս
և որ ընդ նմայն էին, ասէին եթէ անհնարին է լինել
իբրև զզօրավարն մեր Եւստաթէոս և իբրև զկին նո-
րա և զերկուս զորդիսն։ Իսկ կին նորա վարանական
խորհրդով վարանեալ՝ ասէ ցայր իւր. Լուր ինձ այսու-
հետև, տէր իմ, եկ առ զմեզ և զերկուս տղայքս մեր
և փախիցուք 'ի դիմաց աշխարհիս այսորիկ. քանզի
նախատինք եղեալք յառաջագոյն ծանօթից մերոց։ Եւ

1. Յոր. ընտանեգոյն։ 2. Յոր. զգեցարուք։

'ի գիշերի եդեալ զերկոսին տղայն 'ի մախաղի՝ գը-
նացին դիմեալք յԵգիպտոս. և արարեալք երկուց ա-
ւուրց Ճանապարհի մերձեցան 'ի ծով և փութային
նաւել։ Եւ գտեալ նաւավար յաղգէն Շանագլխաց, և
նաւարկեալ գնացին։

Եւ էր կինն Եւստաթէի գեղեցիկ դիմաք և բարի
տեսլեամբ յոյժ։ Եւ խորամուտ եղեալ նոցա, հարաւ
Շանագլուխն 'ի կնոջն Եւստաթէի, և խորհէր 'ի միտս
իւր՝ թէ յորժամ գնասցեն 'ի նաւէ աստի, փոխանակ
վարձու ոչ տայց զկինս առն իւրում, այլ եթէ ընդ-
դիմասցի ևս՝ զսա խորասոյզ արարիցէ։ Եւ յելանել նո-
ցա 'ի նաւէն, ոչ կամեցաւ 'ի բաց տալ նմա զկինն։ Եւ
սկսեալ ընդդէմ ասել Եւստաթէի, ակնարկեաց Շա-
նագլուխն մերձակայիցն իւրոց, 'ի խորն խորհէր ըն-
կենուլ զնա։ Եւ գիտացեալ Եւստաթէի զդաւն յա-
ղագս ինքեան՝ յոչ կամաց 'ի բաց եթող զկինն իւր։
Եւ առեալ զերկուս տղայն եդ զնոսա 'ի մախաղի, և
բարձեալ գնաց լալով և հեծելով ասէր. Վայ ձեզ
տառապելոց, զի մայր ձեր մնաց առ առն այլազգւոյ,
և 'ի ժամանակի ցասման ուտէ զնա Շանագլուխն։

Եւ գնացեալ բաղում Ճանապարհ՝ եհաս 'ի գետ
ուրեմն. և վասն սաստկութեան ջրոյն զարհուրեցաւ
զերկոսին 'ի միասին անցուցանել. և բարձեալ զկըրտ-
սերագոյն մանուկն 'ի վերայ ուսոց իւրոց, զմիւսն աս-
տուստ թողոյր. և փութայր դառնալ զի առցէ զըն-
կերն։ Եւ իբրև դարձաւ նա և եհաս 'ի մէջ գետոյն,
զաստուստն յափշտակեաց առիւծ և զմիւսն գայլ։ Եւ
տեսեալ Եւստաթէի փետեր զհերս գլխոյ իւրոյ և
խորհէր ընկենուլ զկինքն 'ի գետն. իսկ նախախնամու-
թեանն եղելոյ՝ եկ արտաքս 'ի ջրոյն։ Յայնժամ առիւ-
ծուն անցեալ ընդ գետն զդէմն ուղղեալ գնայր ունե-
լով ողջ զմանուկն 'ի բերանի իւրում. և տեսեալ հո-
վուաց ոմանց և Ճեպումն արարեալ առիւծուն, և
վասն կամացն Աստուծոյ 'ի բաց զերծուցին հովիւքն
զմանուկն 'ի գազանէն։ Իսկ զմիւսն բարձեալ գայլուն,
տեսին ոմանք արտավարք 'ի դաշտի, և ընթացեալ
հանդերձ Ճեպով և շամբք, թափեցին 'ի գայլոյ անտի.
և իւրաքանչիւր հովիւքն և երկրագործքն 'ի միոջէ
գեղջէ դիպեցան։

Իսկ երանելին Եւստաթէոս գնայր հեծեծելով, և աղէխարշեալ 'ի հեծմանէն ստէպ ստէպ նստէր. և յոյժ վտանգեալ յարտասուացն՝ զոդս տեսանէր խաւարեալ, նկատելով միշտ առաջի իւր զդէմն կնոջն և զորդւոցն, և զմտաւ ածեալ զնոսա գոչէր ասելով. Վա՛յ ինձ, երբեմն էի ծառ ծաղկեալ, և այժմ թարշամեալ, զի պտակ գլխոյ իմոյ 'ի ծով գերեցաւ և պըտուղն գաղանակուր եղև, դրախտն նուազեաց և տունկքն ցամաքեցաւ. վա՛յ ինձ, զի հաստատունս անհաստատ եղէ. վա՛յ ինձ, վա՛յ ինձ զզօրավարս առանց զօրականի. վա՛յ ինձ, վա՛յ ինձ, որ երբեմն թագաւորեալ և այժմ անարգեալ, որ երբեմն իշխան զօրու և այժմ օտարատեղի, որ երբեմն բիւրաւոր՝ չորիւք մնացի, չորրորդ եղեալ՝ միայն գտայ։ Բայց դու, Տէր իմ, մի՛ վաղվաղակի զիս արմատախիլ առներ վասն հեծութեանս զոր ունիմ, և ապականելոյս. ամենամեղ ոգիս՝ սուրբ եկեսցէ առ քեզ. քանզի յիշելով զՅոբայն՝ համբերեմ հեծութեանս, այլ Յոբ ոչ այսպէս նեղութեան տանելի եղև. վասն զի զպտուղ որովայնի իւրոյ գիտաց ուր թաղեաց. զի թէ զպտուղն կորոյս՝ սակայն զոստս կնոջն տեսանելով մխիթարէր. իսկ ես տառապեալս յամենուստ արմատախիլ եղէ, և փոքր ինչ կայծակն ի զամբարէ մնացի, և հողմոյ մրրկի շընչեալ՝ ահա պակասել ակն ունիմ։ Բայց մի՛ զչարասցիս, Տէր զօրութեանց, շատ խօսելոյս իմոյ առ քեզ. վասն զի ցաւով վարանիմ, և ակամայ գամ ասել առ քեզ զանպատեհն. գիտակակից լեր ինձ, Տէր իմ, քանզի զոր ինչ ոչն ունէի՝ առի, իսկ որ ետն՝ 'ի բաց զերծոյց, ընդունայն այսուհետև տրտմեալ ես մաշիմ։ Տուր ինձ այսուհետև, Տէր, հանգիստ յամենայն նեղութեանցս, զի մի՛ ակամայ անտեղի բանս ասացիս ընդդիմանալով քեզ, և արտաքոյ հօտի քո գտեալ՝ գազանակուր եղէց։

Եւ զայս ասացեալ ելհաս 'ի գեօղ մի կոչեցեալ Բատիսոն, և աղաչեցեալ զբնակիչս տեղւոյն, պահէր զպըտուղս և զտեղիս նոցա ամն հնգետասան վարձաւորութեամբ։ Իսկ որդիքն նորա մնան 'ի գեօղ մի ոչ գիտելով զիրարս եղբարք։ Եւ Շանագլուխն առեալ ըզկին նորա ելհաս յաշխարհն իւր. և այնպիսի ընդհ

եղև 'ի վերայ կնոջ նորա, որպէս զի ոչ ևս մերձենալ այլազգւոյն 'ի նա։

Եւ եղև յետ աւուրց ինչ յարեաւ այլ թագաւոր, և խնդրեալ լինէր զզօրավարն Եւստաթէոս և ոչ գտանէր։ Եւ առաքեաց յամենայն քաղաքս և 'ի գեօղս, ասացեալ նոցա եթէ որ ոք ածցէ ինձ զզօրավարն Եւստաթէոս, յաւելում նմա անուն ամն հնգետասան։ Եւ երկուք ոմանք՝ միոյն Անտիոքոս անուն, և երկրորդին Ակակիոս, որք երբեմն ընդ իշխանութեամբ նորա լեալ էին, հասին 'ի գեօղ մի՝ յորում էր Եւստաթէոս։ Եւ տեսեալ զնոսա Եւստաթէի 'ի բացուստ, և գնայր պատ-ճառանօք զբօսանալոյ մերձ առ նոսա. և ծանուցեալ զնոսա՝ յիշեաց զառաջին նեղութիւնն իւր, սկսաւ տրտմել, աղօթէր և ասէր. Տէր զօրութեանց, Աստուած հարցն մերոց, գոնէ յաւուրն գիտութեան հրամայեա ինձ տեսանել զԾակիցն իմ, և զթշուառացեալ տղայն իմ որք վասն իմոյ թշուառութեանս դաղանակուր եղեն։ Տուր ինձ, Տէր, յողորմութենէդ քումմէ, որպէս զի այժմ մոռացայց, և 'ի հանդերձեալ աւուրն յարութեան տեսող լինել անդամոցն իմոց և ելելոցն յերանայ իմոց։ Եւ լսէր ձայն յերկնից որ ասէր. Քաջալերեաց Եւստաթէոս, զի 'ի մերձակայ ժամանակս տեսցես զկին քո և զերկոսին որդիսն քո. իսկ 'ի յարութեանն՝ բազմաց օգնական գտցիս դատապարտելոց պէսպէս տանջանաւք, և զանուն քո մեծացուցիս յազգի մարդկան։

Եւ նայէր նա դիտելով զտեսիլն 'ի վերայ վիմաց։ Իսկ տեսեալ զզօրականսն իւր 'ի բացուստ եկեալս, և ծանուցեալ զնոսա եկաց 'ի Ճանապարհին, անսալով նոցա։ Եւ եկեալ նոքա ասեն ցնա. Ուրախացիր։ Իսկ նա ասէ. Խաղաղութիւն ընդ ձեզ։ Եւ նոցա ասացեալ ցնա. Գիտէս զոք Եւստաթէոս կոչեցեալ հանդերձ կնաւ և երկուս որդւովք, ասա մեզ և տացուք քեզ պարգևս։ Իսկ նա խռովեալ՝ ոչ զօրէր տալ նոցա պատասխանի. և յետ այնորիկ ասէ. Ոչ գիտացի այդպիսի զոք ասա, բայց դուք եկայք հանց երուք փոքր մի 'ի տանն յորում ես պանդխտանամ։ քանզի և ես ինքն օտար եմ, զի թերևս գտից սակաւ մի գինի և տայց ձեզ յըմպումն վասն տօթոյս։ Եւ երթեալ ասէ ցտէր

տան իւրոյ. Ծանօթք իմ են 'ի Ճանապարհի, քերցես նոցա կակղագոյն կերակուրս, զի նշանաւորք առ մեզ մտին, և զամենայն հատուցից քեզ 'ի ժամանակի վարձատրութեան իմոյ։ Եւ յօժարաբար իսկ ուրախութիւն արարնոցա տանուտէրն։ Եւ 'ի բազմէն իւրեանց խառնէր նոցա գինի, իսկ Եւստաթէոս էփեալ ջուր մատուցանէր. և յելանէն իւրում լայր, և լուացեալ զդէմն սպասաւորէր դարձեալ. և ունէր նշան 'ի պատերազմի վիրաւորեալ սպի 'ի պարանոցին։ Եւ մինչդեռ սպասաւորէր, Անտիոքոս՝ մինն 'ի զօրականացն տեսեալ զպարանոցն նորա, 'ի վեր վազեաց լալով և համբուրեաց զԵւստաթէոս. զմտաւ ածէր Ակակիոս թէ զինչ է այս. իմացեալ և սորա զնշանն, վաղվաղակի գիրկս արկեալ համբուրէր նոյն օրինակաւ. զի և ընտանիսն նովին ձևով համբուրել և լալ ընդ նոսա, որպէս զի ամենայն գեօղն անդր ընթացեալ ասէին, թէ՝ Զինչ է այս։ Եւ փոքր մի ցածուցեալ զինքեանս՝ հարցանէին վասն կնոջն և երկու որդւոցն։ Իսկ նա ասէ ցնոսա. Ոչ գիտեմ ես զԵւստաթէոս, և ոչ ես ինքն եմ, զի՝ աշխատ առնէք զիս։ Եւ նոքա ասեն ցնա. Դու ես տէրն մեր. և դարձեալ պատմէին բնակչացն յաղագս քաջութեան նորա։ Իսկ նոքա լալով ասէին. Եթէ որպիսի՞ այր վարձկան մեզ եղև. և եկեալ 'ի ծունր իջանէին աղաչելով զնա։ Իսկ զօրականքն զՀրամանն Թագաւորին մատուցանէին, և 'ի հարցանելն նոցա վասն կնոջն և որդւոցն, ասէր թէ մեռան։

Եւ նոցա առեալ զնա և զգեցուցեալ հանդերձս, դիմեցին 'ի Ճանապարհս. իսկ ոքք 'ի տեղիսն էին լալով յուղարկեցին զնոսա, և ինքն աղաչելով արձակեաց զնոսա։ Եւ իբրև մերձեցան առ Թագաւորն, ետես զնա Թագաւորն և ասէ, եթէ՝ Որպիսի՞ Ճանապարհ գնացեր, Եւստաթիէ, և զիա՞րդ մեզ անյայտ եղեր։ Իսկ նա սկսաւ կարգաւ պատմել նոցա, և ամենայն սինկղիտոսքն լալով ընթանային 'ի լսել։ Բանզի պատմէր և յաղագս կնոջն թէ որպէս 'ի ծովու մնաց, և կամ զիարդ որդիքն գաղանակուր եղեն, և որպէս ամենայն նեղութեանցն համբերեաց։ Եւ եղև աղաղակ մեծ. և միխիթարեալ 'ի Թագաւորէն ածաւ ըզկամարն ըստ առաջին զօրավարութեանն. և տեսեալ

թէ ոչ են զօրք ժողովեալ՝ հրամայեաց նորընտիր լինել։ Եւ երկուք ոմանք եկին 'ի գեօղ մի ուր էին սընեալ որդիք Եւստաթէի, և եղեն առ նմա։ Եւ էին զանազան դիմաք իբրև զՀառագայթս արեգական, խօսողք և ամբիծք ամենևին։ Իսկ գեղջայինքն աւանդեցին զնոսա իբրև զօտարս եղեալս, և առեալք երեսուն տաղանդ 'ի գինն։ Եւ յորժամ առին զնոսա՝ առաջի կացուցին Եւստաթէի, և 'ի հազարաց եգիտ Եւստաթէոս հաճոյս ինքեան ամենայն իրօք, զոր ինքեան զինակիր կացոյց, և 'ի վերայ սեղանոյ իւրոյ և սենեկի, և սիրեաց զնոսա յոյժ. վասն զի սովորութիւն որդեծնութեանն պահանջէր զՀայրենի անձուկն։ Եւ ժողովեալ զամենայն զօրականն հրաժարեալ ըստ սովորականին 'ի Թագաւորէն՝ գնայր 'ի պատերազմ։

Եւ անցեալ ընդ Իղիմացիսն կոտորէր, և անցեալ ընդ [1] Դանոբ, ելին 'ի նեբքսագոյն բարբարոսաց. որպէս զի նախախնամութիւնն Քրիստոսի ածէր զնա 'ի տեղին յորում բնակեալ էր կին նորա. իսկ զօրավարն բնակեալ էր 'ի խորանի կնոջ իւրոյ։ Իսկ 'ի միում աւուր երկու եղբարքն շրջեալ 'ի պարտիզին 'ի մէջօրէի որ էր մերձ 'ի խորանն, և նստեալք ընդ ծառոյն պատմէին զտղայութենէն. իսկ մայրն նոցա նստէր 'ի պատուհանին յիշատակ ունելով անցելոցն հեծեծելով, և գաղտաբար ունկնդրութիւն առնէր ասացելոցն։ Քանզի ասէր երէց եղբայրն ցկրտսերն, եթէ՝ Ոչ այլ ինչ զտղայութենէն յիշատակ ունիմ, բայց միայն զայս, զի զՀայր իմ գիտեմ թէ զօրական էր, և մայրն իմ գեղեցիկ յոյժ եղեալ, և միւս եղբայրն իմ փոքրիկ խարտեաշ հերովք. իսկ հայրն մեր եդեալ զմեզ 'ի մախաղի, մօրն զկնի գալով՝ ել 'ի նաւ մեօք հանդերձ և մարքն։ Իսկ յելանելն մեր՝ մայրն ոչ ել ընդ մեզ. ոչ գիտեմ թէ իբր 'ի ծովուն մնաց. իսկ հայրն բարձեալ զմեզ հեծեծելով գնայր։ Եւ հասեալ 'ի գետ ուրեմն անցոյց զմիւս տղայն, աստուստ զիս Թողոյր, և հանդերձեալ նորա դառնալ, յափշտակեաց զիս առիւծ, յորմէ Թափեցին զիս հովիւք ոչխարաց, և

1. Ցօր. Ընդանոբ։

մնայ 'ի գեօղն յորում և դու գիտես. բայց յաղագս հօրն, և միւսոյ մանկանն ոչ գիտեմ եթէ զինչ եղեն։ Եւ վաղվաղակի 'ի վերայ վազեաց եղբայրն Նորա լալով և ասէ. Զօրութեամբն Քրիստոսի, եղբայր քո եմ, քանզի և որ զիմն մնուցին, ասէին թէ 'ի գայլու զերծուցաք զքեզ. և գիրկս արկեալ համբուրէր զնա։ Եւ լուեալ մօրն Նոցա խռովեցաւ 'ի սրտի իւրում յոյժ. զի գիտաց զորդիսն իւր գոլ, և տեսեալ զերիտասարդն թէ որպէս միմեանց գիրկս արկանելով լային, բաղձացեալ սրտիւ ոչ ևս կարէր արգելուլ զինքն 'ի լալոյ մինչև ցերեկոյ։

Իսկ 'ի վաղիւ անդր ժուժկալեալ, առաջի գայր Եւստաթէի ասելով. Աղաչեմ զքեզ, տէր իմ, զի ես Հռովմայեցի եմ։ զերծո զիս 'ի գաւառն իմ հանելով 'ի տեղւոջէս։ Եւ զայս ասացեալ նկարէր զնշան առնն, և ասէ ցնա. Աղաչեմ զքեզ, տէր, մի՛ գարշիր յաղախնոյ քումմէ, այլ պատմեա ինձ վասն 'ի սկզբանէ վարուց քոց. մի՛ գուցէ դու ես՝ որ կորուսեալն զիս. պատմեա ինձ զզօրութիւն Տեառն Քրիստոսին քո։ Եւ լուեալ Նորա յաշխարհին բարբարոսաց զՔրիստոս անուանելով՝ զմտաւ ածէր ասելով եթէ իբրև զմի ոք 'ի Հռովմայեցւոց ուսեալ է զՔրիստոս։ Եւ փոքր ինչ փոյթ արարեալ սկսաւ պատմել. և մինչ նա բան մի 'ի պատահելոցն ասէր, կինն յառաջակայսն պատասխանի առնէր 'ի դիպուածոցն. և 'ի սկսանել առն ասել՝ եթէ զիարդ նաւավարն յափշտակեաց զկինն իւր, իսկ Նորա զպատմութիւնս որդւոցն ունելով՝ յաղագս յափշտակութեան գազանացն պատասխանի առնէր։ Եւ լուեալ Եւստաթէի՝ ասէ. Երդմնեցուցանեմ զքեզ 'ի Քրիստոս, ուստի՞ զպատահումս իմ գիտացեր։ Եւ նա ընթացեալ և անկեալ առ ոտս Նորա ասէ. Ես եմ տառապեալ կինն քո, եմ յԱստուած — հաւատուցի, մի՛ բարկանար 'ի վերայ իմ, տէր. քանզի որ երեւեցաւ քեզ 'ի լեառն տեսլեամբ եղջերուի, Նորա շնորհիւ անմերձենալի եմ ես յայլազգւոյն որ յափշտակեացն զիս։ Եւ նա լալով ասէ. Ոչ նեղութիւն է ինձ վասն այնորիկ. օրհնեալ է Աստուած որ ամենայն ուրեք մերձ է առ իս։ Իսկ կինն ասէ. Գիտացե՞ր վասն որդւոցն թէ ոչ։ Եւ նա ասէ. Աստի թէ

գազանակուր եղեն մանկունքն, և այժմ ասես թէ գիտացեր վասն որդւոցն քոյոց։ Իսկ նա ասէ. Սոքա երկոքին զինակիրքս քո գեղեցիկք՝ մեր որդիքն են, այլ և ոչ ինքեանք իսկ գիտէին մինչև ցայժմ եղբարք միմեանց լինել. քանզի լուայ երէկ 'ի պարտիզին միմեանց պատմելով։ Եւ կոչեցեալ զնոսա հարցանէր թէ ի՞բր մնայք. իսկ նոքա կարգաւ յիշատակ առեալք, իմացուցանէին նոցա զպատահումն։ Եւ ձեռն 'ի ձեռին եդեալ երկաքանչիւրոց, և անկեալ զպարանոցաւ միմեանց լային մինչև ցժամն երկուս, մինչև ամենայն զօրացն ժողովեալ և լալ ընդ նոսին յաղագս գիւտի ծանօթութեանն։

Եւ տոն մեծ կատարեալ 'ի վաղիւ անդր առ Աստուած աղաղակէին, կոտորելով զայլազգիսն ամենասեան։ Եւ դարձեալ մեծաւ յաղթութեամբ հասին 'ի Հռովմ։ Եւ յառաջ քան զնորա դառնալն՝ մեռաւ սիրելի թագաւորն իւր, և եղև այլ թագաւոր անուն Տրայիանոս՝ որ ոչ գիտէր զՔրիստոս, այլ և ոչ զԵստաթէոս. և գիտացեալ թէ զՔրիստոս անուանէ, հրամայեաց ածել զԵւստաթէոս, և զկին նորա և զերկուս որդիսն՝ մտանել 'ի հանդէսն. և այնպէս առիւծամարտիկ հրամայեաց նոցա լինել։ Եւ եկեալ առիւծուն երկիր պագանէր նոցա, և ասէր մարդկօրէն ձայնիւ. Աղաչեմ զձեզ որ արժանիդ էք արքայութեանն Աստուծոյ, մի՛ ինչ զայրանայք, զի ակամայ հասի առ ձեզ. և զայս ասացեալ էլ յասպարիզէն։ Եւ ժողովէր ամենայն բազմութիւնն հաւատացելոցն 'ի Քրիստոս։ Իսկ թագաւորին զայրացեալ հրամայեաց ցուլ պղնձի առնել, և բազում հրով ջեռուցանել, մինչև լինել նմա իբրև զփայլակն, և այսպէս արկեալ 'ի նա զնոսա վճարել 'ի կենացս։ Եւ իբրև մերձեցան յամենագժնեայ մենքենայն, խոնարհեցուցին ծունր, աղօթէին ասելով. Տէր զօրութեանց, անտեսանելի՛դ Աստուած, իսկ մեզ երևեալ որպէս և կամեցար, լուր պաղատանաց մերոց, և աղօթք մեր տարածեսցին, զի միաբանեալք արժանի լիցուք մասին Քրիստոսի քո հասանել, որպէս ամբիծ մանկունքն հրով վախճանեցան։ Տուր, Տէր, յիշողացն զանուանս մեր՝ առատութիւն յերկնէ և յերկրէ, ընդ ծով և ընդ գետս ա-

ռանց վնասու և վտանգի անցանել. որոց զաւակք վախ-
ճանին՝ վաղվաղակի յօգնութիւն հաս։ Զմեզս ծա-
նուցս թեթևացո, որք 'ի ճանապարհի յիշեն զմեզ՝
ամենայնիւ բարեգործեա, զհիւանդս յիշողացն զմեզ՝
բժշկեա վաղվաղակի և յառողջութիւն ած. զեռա-
ցումն զայս 'ի ցօղ դարձո. զոգիս մեր խաղաղու-
թեամբ ընկալ, և զմարմինս մեր մի՛ բարժաներ, այլ՝ 'ի
միասին հանգո։ Ասէ ցնոսա Տէր 'ի ձեռն հրեշտակի.
Ճշմարտապէս այդ լոյսի ձեզ, և աւելի ևս քան զայդո-
սիկ, քանզի ուր քղանցք հանդերձից ձերոց լցեն՝
անդ եղիցի և զօրութիւն իմ։ Եւ արգելեալ զնոսա 'ի
ցուլն, եղև եռացումն իբրև զձիւն, և աւանդեցին զո-
գիս իւրեանց խաղաղութեամբ։ Իսկ անօթ տանջա-
նարանին եղև նոցա աղօթատուն։

Արդ յիշատակ բարեյաղթ վկայիցս կատարի յա-
ռաջ քան զութ կաղանդացն հոկտեմբերի, որ է քա-
ղոց ամիս. և են բարեխօս հաւատացելոցս 'ի Քրիստոս
Յիսուս 'ի Տէր մեր. որում փառք և զօրութիւն այժմ
և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոց վկայիցն, Եշտռատիոսի, Եշգինիոսի, Աւքսենտիոսի, Մարդարիոսի և Ովրէստի։

Ի թագաւորել ամպարշտին և անօրինին Դեոկղիտիանոսի՝ ամենայն Հռովմայեցւոց իշխանութիւնն լցեալ լինէր ամենայն հեթանոսական պաշտամամբքն, բազմատեսակ կռոցն մոլորութեամբ, և ամենայն մարդ բարեպաշտութիւն զամպարշտութիւնն համարելով, իբրև շունք կատաղեալք անզգայապէս 'ի չար կրօնն յորդորէին։ Մանաւանդ զի գրաւորական հրամանք ինքնակալացն օրըստօրէ առաքեալ լինէին առ այնոսիկ՝ որ ըստ գաւառաց գաւառաց իշխանք և կուսակալք էին կարգեալք. և հրամայէին նոցա զգուշական տեսչութեամբ առ տօնս և ամնամուտս աստուածոցն զոհս և նուէրս մատուցանել երևելի պատուով. և թագաւորական ձրից և ընծայատուր պարգևաց, պատուի և ծանօթութեան արժանի լինել, և 'ի մեծութիւն բարեաց հասուցանել զփութացեալն յայնպիսի պատուասիրութիւն ուղղութեան։ Իսկ զայնոսիկ որ յայլ ինչ կրօնս խորհէին խոտորել, և հեղգագոյնս գտանել յայնպիսի պաշտամանց, օտարացուցանել 'ի տանց և 'ի ստացուածոց, և հանդերձ բազում պատուհասիւք վճիռ մահու ընդունէին։ Արդ այսպիսի հալածանք և ամպրոպ խռովութեան և սաստ պատուհասից տարածեալ լինէր ընդ ամենայն երկիր։

Ի սոյն իսկ ժամանակի համբաւ իմն հասանէր 'ի լսելիս անօրէն իշխանին, իբրու թէ ամենայն աշխարհ

հրն Հայաստանեաց և Կապպադովկիա ընդդիմամարտ եղեն թագաւորական հրամանին, և միաբանութեամբ յապստամբութիւն ելին թեակոխեն, և զկնի գնալով քրիստոսական հաւատոցն անփոփոխ[1] ունելով զմիտս իւրեանց 'ի Յիսուս ոմն, զոր և Աստուած քարոզեն։ Զայսոսիկ լուեալ կայսրն Դիոկղիտիանոս՝ խռովեցաւ 'ի սրտի իւրում, և սրտմտեալ ցասմամբ մեծաւ վարաներ հեծութեամբ առլցեալ. և նոյն ժամայն հրամայէր զամենայն մեծամեծս իւր առ ինքն կոչել հանդերձ իմաստնօքն Հելլենացւոց. և զերիս աւուրս յառաւօտէ մինչև յերեկոյ հանդերձ իմաստնօքն Հելլենացւոց 'ի խորհուրդ մտեալ հաստատեցին 'ի միտս իւրեանց փոխադրել զկողմնակալն զայնոսիկ՝ որք կարգեալք էին 'ի վերայ երկաքանչիւրոց ազգացն այնոցիկ, վատշուէրս և անարիս զնոսա կարդալով։ Եւ փոխանակ նոցա առաքեաց երկուս որք եկեալ էին 'ի Հելլենացւոց գաւառէն, յոյժ իմաստունք և վարժք և կիրթք ամենայն հռետորական և փիլիսոփայական հանճարով, և խոհեմք խորագիտութեամբ քան զամենայն սինկղիտոսացն. որ մին 'ի նոցանէ Լիւսիաս Ճանաչիւր, որ ամենայն Ջեմենտացւոց[2] գաւառին ունէր 'ի դքսութիւն զկշխանութիւնն. երկրորդն որ կոչէր Սգրիկողայոս, որոյ զամենայն աշխարհաց զդատաւորական իշխանութիւնն ընձեռեալ էր, և զզինուորութիւն ամենայն գնդիցն որ 'ի մէջերկրայսն և 'ի մերձակայ գաւառսն բնակեալ էին։

Արդ հասանելով սոցա 'ի գաւառսն յայնոսիկ, վաղվաղակի ամենայն հասակ մարդկան անխնայաբար 'ի սուր սուսերի մաշեալ լինէր. և ոչ ըստ պատշաճաւոր պատճառի ածել 'ի վերայ վկայիցն Աստուծոյ զօրհասական մահն խորհէին, այլ փոքր ինչ դաւանութեամբ որպէս հանդիպէր կամ 'ի թշնամեաց կամ 'ի չարասէր ոմանց կամ 'ի չարանախանձ արանց։ Այսպիսի մրրիկ և տագնապ չարեաց յանմաքրիցն այնոցիկ և յանաստուածից արանց 'ի վերայ ամենայն բնակչաց աշխարհին այնորիկ տարածանէր. և բազմութիւն

1. Մի օր. բնական հաստատոցն. անփոփոխելի։

2. Մի օր. Ջեմպացւոց։

քրիստոնէիցն վերստին քննեալ լինէր, և ըմբռնեալ անթիւ զօրացն մատնեալ լինէր արիւնարբու գազանացն այնոցիկ 'ի կորուստ։ Այնուհետև Լիւսիաս դուքսն զբնակութիւն իւր 'ի Սատաղացւոց քաղաքին առնելով, և զորս գտանէր 'ի գաւառին յայնմիկ սուրբ արս կամ կանայս, յետ բազում հարցափորձութեանց և դառն տանջանաց՝ արձակէր զգուշական կապանօք առ Սգրիկողայոս դատաւոր 'ի մայրաքաղաքն Սեբաստացւոց, զվախճան սրոյ ընկալեալ 'ի նմանէ. և ոչ տայր թոյլ բնակել 'ի հայրենական գաւառն իւրեանց, զի մի հանդիպեսցին դարմանի ուրեմն յընտանեաց կամ յազգականաց. նա զի ոչ ևս մարմինք նոցա օրինաւոր թաղման հասանելով պատշաճաբար դիցին 'ի գերեզմանի։ Այսպէս և անօրէնն Սգրիկողայոս արձակէր զըմբռնեալսն 'ի Սեբաստիոյ 'ի Սատաղացւոց քաղաքն առ դուքսն Լիւսիաս, զպատուհաս մահուկրել 'ի նմանէ։

Այսոցիկ այսպէս եղելոյ, Եւստաթիոս ոմն իշխան գոլով յամին յայնմիկ, 'ի դասուց բդեշխին Լիւսիասայ, այր աստուածապաշտ և երկիւղած յԱստուծոյ, և անպարսաւելի քաղաքավարութեամբ կացեալ զաւուրս ժամանակաց իւրոց. սորա տեսեալ զդառնաշունչ մրրիկ անօրէն իշխանին, տխրէր օր ըստ օրէ 'ի վերայ եղելոցն, զի տեսանէր հանապազ նորօրինակ իմն սաստ պատուհասից 'ի վերայ քրիստոնէից. և արտասուագոչ պաղատանօք և պահօք պնդութեան անդադար աղօթս մատուցանէր 'ի տուէ և 'ի գիշերի առ փրկիչն մեր Քրիստոս, զի թերևս հաշտեսցի ընդ ծառայից իւրոց, և հայեսցի 'ի ժողովուրդ իւր, զոր գընեաց արեամբն իւրով, և փրկեսցէ 'ի ձեռաց անօրինաց, և 'ի վերստին երևեալ չարեացն զերծուսցէ։ Այլ ցանկայր և ինքն ըղձալի տենչմամբ զհաւասար սրբոցն դնել զՋան նահատակութեան, և արժանանալ ընդ նոսին մեծի վկայութեան։ Այլ զդաւաճանութիւն խորամանկութեան անօրէն իշխանին տեսանելով՝ փոքր ինչ զանգիտէր յառաջիկայ մրցմանէն. սակայն այսպիսի վիճակաւ զփորձ առնէր նախագոյն իւրոյ գիտողութեանն. առ ինքն կոչէր զմի ոմն 'ի հաւատարիմ ծառայից իւրոց, և զիշխանական գօտին

տայր ցնա, զի տարցէ յեկեղեցին քաղաքին յԱ-
ղուարակացւոց, ուստի ինքն եկեալ էր. և պատու-
էր տուեալ զայս ինչ առնել նմա. զանխլաբար մը-
տանել յեկեղեցին, ծածուկ յամենեցուն, դիցես
զգօտի իմ 'ի վերայ սեղանոյ Աստուծոյ, և դու զանձն
քո թաղուսցես յեկեղեցւոջն. և եթէ տեսանիցես
զԱքսենտիոս զառ 'ի բազմաց վկայեալն և զպատկա-
ռելի քահանայն Աստուծոյ բարձրելոյ, զի յորժամ
մտանիցէ 'ի սուրբ եկեղեցին Աստուծոյ զսովորական
աղօթսն մատուցանել, եթէ առցէ զգօտի իմ 'ի
սեղանոյ անտի՝ թողցես առ նմա զանխլաբար, և
վերատին առ իս դարձցիս. ապա եթէ այլ ոք առցէ
'ի ժառանգաւորացն, ոչ թողացուցանել նոցա։ Զայս
ինչ խորհեալ նորա 'ի միտս իւր, զի եթէ երանելի
երէցն Աքսենտիոս առցէ 'ի սուրբ ձեռս իւր զգօ-
տին, տնօրէնութիւն իմն իցէ աստուածային ազ-
դելով նմա զցանկալի զվկայութիւնն, և յառաջար-
կեալ նմա 'ի նոյն հանդէս մրցանացն. ապա եթէ
ոչ և այլապէս օրինակաւ հանդիպեսցի, լռել և
դադարել զանխլաբար, և ոչ համարձակել յան-
դգնաբար 'ի մարտ ճգնութեան մտանել յայժմու
ժամանակի[1]։

Արդ յետ աւուրց ինչ անցանելոյ դառնայր ծառայ
երանելւոյն Եւստաթիոսի կատարելով զհրամայեալսն
'ի նմանէ, պատմէ մի ըստ միոջէ և ասէ ցնա. Ի ժա-
մուն յայնմիկ յորժամ մտի ես յեկեղեցին յԱղուա-
ղակացւոց քաղաքին, և եդի զիշխանական գօտին քո
'ի վերայ սեղանոյն, և թաքուցեալ իմ յեկեղեցւոջն,
'ի նմին ժամու եկն եմուտ սրբազան Աքսենտիոս քա-
հանայն կատարելով զսովորական աղօթսն. և նա որ-
պէս առաքեալ յումեքէ ինքնին մտեալ 'ի խորան ան-
դրը՝ յինքն առնոյր զգօտին քո։ Զայսոսիկ լուեալ 'ի
ծառայէն իւրմէ երանելին Եւստաթիոս, լի եղև ան-
ճառ խնդութեամբ. նոյնժամայն առեալ ընդ ինքեան
յապարանից անտի իշխանին զամենայն բարեկամս իւր
'ի ժամու ճաշոյն՝ եկն 'ի տուն իւր ուրախութեամբ
մեծաւ, զուարթ և բերկրալի զդէմսն ցուցանելով,

1. Այլ օր. յայնմաս ժամանակի։

որպէս զի ոչ երբէք երևելով նմա այնպիսի զուարճալի երեսաք. և 'ի զարմացման լինելով ամենայն ծանօթից նորա ընդ անսովորական կերպարանին, խորհէին 'ի միտս իւրեանց հարցանելով զնա, զի ստուգութեամբ իմացին զպատճառս իրին այնորիկ։ Յայնժամ մի ոմն 'ի բազմելոցն ընդ նմա, որ էր հասակակից նորա, և սիրելի բարեկամ և քաղաքակից, որում անուն էր Եւգինիոս, համարձակեալ հարցանէր զնա ասելով. Ո՛վ բարիոք վարդապետ մեր և պատուական Եւստաստիոս, միթէ վասն հրամանի իշխանին մերոյ, որ հանդերձեալ է 'ի վաղիւն հանդիսական յառաջագայութիւն առնել, և զամենայն տանջանարանացն պատրաստել գործարան ընդդէմ քրիստոնէից, վասն այդորիկ ուրախութեամբ ակն ունելով շահիլ ինչ 'ի նոցանէ։ Այլ վասն այնորիկ ասաց զայս՝ զի յամին յայնմիկ իշխան էր նա 'ի վերայ ամենայն զօրացն։ Յայնժամ սուրբն Եւստաստիոս պատասխանի ետ և ասէ. Բարիոք ասացեր զայդ, սիրելի եղբայր. քանզի ակն ունիմ շահիլ ինչ յայնպիսի անապական և անկողոպտելի գանձուցն. զի թէ յառաջեցայց տերամբ իմով 'ի բարիսն յայնոսիկ, մեծամեծ իմն վաղիւն շահեցայց։

Այդ ընդ այգանալ առաւօտուն 'ի ծագել արեգականն Ճառագայթիցն՝ 'ի միւսում աւուրն հրամայէր դուքսն Լիւսիաս 'ի մէջ քաղաքին բեմն բարձրագոյնս պատրաստել, և ամենայն հանդիսիցն և բազմութեան քաղաքացեացն միահամուռ անդր ժողովել։ Յայնժամ եկեալ իշխանն Լիւսիաս 'ի թէատրոնն, նստէր 'ի վերայ բարձրագոյն բեմին, և հրամայէր զայնոսիկ որ 'ի բանդին արգելեալ քրիստոնեայքն էին՝ ածել 'ի հարցափորձութիւն տանջանաց։ Իսկ սուրբն Եւստաստիոս փութանակի հասանէր 'ի բանտն, և աղաչէր զսուրբ վկայսն՝ վասն ինքեան աղօթս առնել, զի ասէր և ինքն յաւուր յայնմիկ անձկալի տենչմամբ կցորդակից լինել նոցին չարչարանացն։ Յայնժամ ամենեցուն տարածեալ զսուրբ ձեռս իւրեանց առ Աստուած՝ մեծաւ պաղատանաք 'ի վերայ նորա աղօթս մատուցանէին։ Իբրև կատարեցին զաղօթս վաղվաղակի, և ասացին զամէնն, գնացին զկնի երանելւոյն Եւստաստիոսի ըմ-

բռնեալ 'ի զինուորացն. և մտեալ կային[1] առաջի իշխանին յատեան դատաստանին։

Յայնժամ հրամայէր Լիւսիաս մի ըստ միոջէ մերձ կացուցանել զսուրբսն առաջի բեմին իւրոյ։ Ի նմին ժամու յառաջ մատուցեալ Եւստաթիոս զօրական անյաղթ թագաւորին Քրիստոսի, և ասէ մեծաւ համարձակութեամբ ցիշխանն Լիւսիաս. Գրաւորական հրաման ինքնակալին դարձեալ ընթերցցի 'ի յանցեալում աւուրս 'ի դատաստանի աստ, այն որ հրամայեալ է զամենայն քրիստոնեայսն որք են 'ի բնաւոր աշխարհ[2] որ ընդ քոյով իշխանութեամբ են, զի ուր հանդիպեսցին և գտցին՝ ըմբռնեալք ևս 'ի քէն 'ի հարցափորձութիւն տանջանաց մատնեալ։ Արդ Աւքսենտիոս երեւելի բաղդիւ և քաղաքավարութեամբ ընտրեալ, և արիական հանդիսիւ 'ի մարտ պատերազմաց քաջ արիութեամբ զարդարեալ և անուանի եղեալ քան զբազմաս. որ և սակաւ աւուրքք յառաջ անմահական ջանիւ նահատակեցաւ առաջի քոյոյդ[3] բեմի որպէս քաջ զինուոր գոլ թագաւորին Քրիստոսի. և զքոյդ վերդ վեալ կշտամբեաց զանաստուածութիւնդ, իմաստութեան բանիւք[4] և համբերութեան գործովք զքոյդ 'ի յետս նահանջեաց զկարծեցեալ խոհեմութիւնդ։ Քանզի յօրէն յայնմանէ մինչև ցայժմ 'ի հանդիսական բանտին գոլով նորա, հրամայեցեր այսօր զարի և զմեծ նահատակն հանդերձ սրբովք ժողովրդովքս ածել 'ի քննութիւն։ Արդ աւասիկ կան ամենեքեան հանդերձ ինև առաջի քոյոյդ դատարանի, զի և ես զի նուորեալ եմ իմում անմահ և անվախճան թագաւորին Քրիստոսի, չարչարակից լինելով սոցա իմով կամայորդոր յօժարութեամբ, զքոյդ բազմահնար մեքենայսդ շինուցանելով, զոր հայրն քո սատանայ արմատացոյց 'ի սրտի քում։ և յամօթ առնեմ զբանսարկուին բռնութիւնն։

Զայսոսիկ լուեալ անօրէն դուքսն Լիւսիաս, զարհուրեալ ընդ համարձակութիւն առնն, շառագու-

1. Մի օր. կային։
2. Մի օր. որ հրամայեալ էր պանծայն աշխարհին քրիստոնէական որք էն 'ի բնաւոր աշխարհէն։
3. Մի օր. քոյդ։
4. Մի օր. իմաստութեամբ բանիւք։

նեալ երեսաք և մահացու ակամբ հայելով, և 'ի բաղ-
կացող հոգւոյն վերաբերելով, որոտաց ձայնիւ մեծաւ
և թիւնալի ցասմամբ ասելով այսպէս. Պայծառ և
հռչակելի եղև ինձ այսօր դատարանս, իբրու զի հայ-
բենի հելլենական իմաստութեամբ լցեալ չարաբարոյ
հռետորիս այսմիկ և դահճի, շարժեաց զարժանա-
սաստ և զարդարադատ իրաւունսն և զհրամանս թա-
գաւորացն ոչ միայն 'ի վերայ իւր, այլ և յամենայն
ապստամբելոցն 'ի բարերարութենէ աստուածոյն, և
ստունգանողացն զպատուիրանս ինքնակալացն։ Յայն-
ժամ ամպարիշտն Լիւսիաս հրաման ետ զինուորացն
մերկացուցանել զԵւստռատիոս, և ասէ. Արդ նախ
կողոպտեսցի առաջի իմ յիշխանական պատմուճա-
նացդ որ շուրջ է զդովաւ, 'ի քղամիդէն և յոսկե-
հուռ հանդերձիցն և 'ի պատուական գօտւոյն, և այս-
պիսի օրինակաւ յայտնի լինիցի ամենեցուն օտարա-
ցեալ 'ի պատուոյ զինուորութեան [1]. և ապա մերձ կա-
ցուցեալ զդա մերկ մարմնով, և լարիւք պարզեալ
զոտս և զձեռս դորա պրկեսցի, և տարածեալ քառա-
կուսի շարժմամբ հուպ լինցի յերկիր ըստ յանդգնագոյն
հրապարակախօսութեան դորա։ Եւ դահիճքն վաղ-
վաղակի կատարէին զհրամայեալսն։

Դուքսն ասէ. Ո՛վ Եւստռատիոս, եթէ ոչ զղջացեալ
դարձցիս 'ի չարակրօն յամառութեանցդ, մի՛ ակնկալ-
ցիս ապրիլ 'ի ձեռաց իմոց յաղագս կորստեան խոր-
հրդոցդ զոր սկսարդ։ Սուրբն Եւստռատիոս ասաց.
Ո՛վ Լիւսիէ, զղջանալ այնոցիկ պարտ է՝ որ 'ի բա-
րեացն 'ի չարութիւնսն [2] ընթանան, այլ ոչ որ զվատ-
թարութիւնսն արհամարհելով՝ զկնի ճշմարտու-
թեանն հետևին. որպէս և ես 'ի սկզբանէ զհետ եր-
թեալ եմ արդար օրինացն ճշմարտին Աստուծոյ իմոյ։
Դուքսն ասէ. Նախ պատմեա ինձ յառաջ քան զտանջ-
ջանս իսկ՝ զբախտ և զանուն և զհայրենիս քո, և ըզ-
գաւառն յորում ծնեալ ես, և զնորոգումն կրօնիցդ՝
որ զանխլացեալ էր 'ի քեզ, զամենայն ծանօ մեզ ըս-
տուգութեամբ։ Սուրբն Եւստռատիոս ասաց. ՅԱրաւ-
բակացւոց քաղաքէն եմ ես ազգաւ և տոհմիւ, և անուն

1. Մի օր. Իշխանութեան։ 2. Մի օր. 'ի լարիսն։

իմ Եւստաթիոս կոչի. Ծառայ եմ ես արարչին ի-
մոյ արարողին զերկինս և զերկիր և խոստովանող Որ-
դւոյն նորա Յիսուսի Քրիստոսի և ամենասուրբ Հոգւոյն,
'ի տղայական տիոց և 'ի մայրական խանձարրոց զպաշ-
տօնս զայս ուսեալ եմ և երկրպագեալ։ Իսկ դուքն
հարցանէր զամենայն գունդս զկնուորացն տեղեկա-
ցեալ վասն նորա, թէ՝ Քանի՞ ևս ամ է կացեալ նորա
յիշխանութեանն, և պարզ ևս ընկալեալ 'ի թագա-
ւորացն։ Յայնժամ որ 'ի սկզբանէ տեղեակք էին քա-
ղաքավարութեան նորա, ասէն ցդուքսն. Քսան և
եօթն ամ լցեալ լինի 'ի մերձենալ տարւոյս այսորիկ,
որ 'ի գործ զկնուորութեան մտեալ է դորա. զի յա-
ռաջ քան զայն մանուկ տիոք գոլով նորա զեքսկեփ-
տորոսին [1] պէտն ընոյր։ Դուքսն ասէ. Այլ այժմիկ տե-
սանելով, Եւստաթիէ, զհասեալ 'ի վերայ քո վիշտս
տանջանաց՝ որ 'ի սխալմանէ մոլար և ամբարհաւաճ
մտաց քոց ըմբռնեալ գտար, այլ մեք ողջախոհու-
թեան կամն 'ի միտ արկաք վասն քո, եթէ դու թօ-
թափեսցես զքեզ յապառում և 'ի վայրենի բարուցդ,
և 'ի զգաստութիւն եկեալ զբարեյաղթ աստուածոցն
զմարդասիրապէս զօրութիւնսն կարդասցես, և հրա-
մանի ինքնակալաց մերոց հպատակ գտցիս։ Սուրբն
Եւստաթիոս ասաց. Զարաբարու դիւաց և խուլ դրա-
շելոց՝ ես ոչ զոհեմ, որ 'ի մարդկանէ կազմեալ և ա-
ղարեալ են. զի բերան գոն և ոչ խօսին, ականջք են
և ոչ լսեն, աչք են և ոչ տեսանեն, ձեռս ունին և ոչ
շօշափեն, ոտս ունին և ոչ գնան, և ոչ գոյ բարբառ
'ի կոկորդս նոցա. վասն որոյ մարդարէն ասէ. Նման
նոցա եղիցին ամենեքեան ոյք արարին զնոսա, և ոյք
յուսացեալ են 'ի նոսա, զի աստուածք որ զերկինս և
զերկիր ոչ արարին՝ կորիցեն 'ի ներքոյ երկնից։ Դուքսն
ասէ. Տեղի տալով իմով ներողութեամբ քում շաղա-
կրատ Ճոռոմաբանութեանդ, զանըմբռնելիս մտաց և
զանձահս բարբառեցար 'ի դատարանիս իմում, զան-
մահ և զբարեբար աստուածսն մեր հայհոյելով, և
մահկանացուս զնոսա կարդալով 'ի ցասումն մեզ շար-
ժելով. վասն որոյ պարտ է զվրէժս պահանջել 'ի քէն

1. Exceptor, նոտար կամ համարակալ։

ըստ յամառութեան քում ըստ օրինաց Հռովմայեցւոց՝ աստուածամարտացն վրէժխնդրող լինել։ Բայց աղէ ասա դու ինձ, մարդ որ մտաց իշխան գոյ և իմաստուն խորհրդով, պարտ է զայնպիսին որ 'ի Պոնտացւոյ Պիղատոսէ խաչեցաւ, և 'ի դասուց Եբրայեցւոցն անարդաբար ձաղեցաւ, Աստուած անմահ կոչել, այն որ ոչ կարաց զանձն իւր փրկել, այլ իբրև զչարագործ 'ի վերայ փայտի կախեալ եղև, զոր դու անհանձար մտաք զնա արարիչ ամենայն եղելոց անուանես։ Պատասխանի ետ սուրբն Եւստրատիոս և ասէ. Ո՛վ Լիւսիաս, եթէ չէր ոգիդ քո հողանիւթեայ զանգուածով ախտից խաւարեալ, և միտքդ թմբրեալ բանսարկուին խորհրդովք, ցուցանէի թերևս արդեօք քեզ զխաչելեալն՝ տէր և փրկիչ ամենայն արարածոց, և յառաջ քան զյաւիտեանս Որդի մշտնջենաւորին Հօր, Ճառագայթ և կերպարան անսկզբանն անապական ծնողին իւրոյ. որ էջ անձառ խոնարհութեամբ 'ի ծոցոյ նորա, և մարմին զգեցաւ մարդկապէս յանարատ և միշտ կուսէն Մարիամայ, և զամենայն կիրս կարեաց մերոց կրեաց, բայց 'ի մեղաց. և չարչարանօքն իւրովք և աստուածահրաշ թաղմամբն, և աքանչելի յարութեամբն կանգնեաց զանկեալ և զկործանեալ ազգս մարդկան 'ի չար բանսարկուին խաբէութենէ. զոր եթէ 'ի սըստայօդ և 'ի յերաշապատիր պաճուճանացդ և 'ի սընոտի պաշտամանցդ հրաժարէիր, և 'ի միտ առնուիր զմեծամեծ աքանչելին Աստուծոյ, և զինուորէիր իմում թագաւորին Քրիստոսի, իբրև զիս ժառանգորդ լինէիր անապական և անվախճան կենացն յաւիտենից[1], զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց։

Յայնժամ իսկոյն ևս առաւել 'ի ցասումն սրտմտութեան բարկութեան բորբոքէր անօրէնն Լիւսիաս. ասէ ցդահիճսն. Բարձրացեալ լիցի յերկրէ լարիւք արիագոյնդ այդ և ճոռոմդ 'ի պատասխանատուութիւնդ մտոտի բանիցդ, և ժողով ինչ հրոյ 'ի ներքոյ լանջաց և որովայնի դորա տարածեսցի, և 'ի վերայ թիկանց իւրոց արբցէ գան հարուածոց փշալից գաւազանօք. և

1. Մի օր. պտուղոցն յաւիտենից։

ասացէք դմա՝ հնազանդ լինել հրամանաց ինքնակալին, և ոչ հայհոյել զզօրութիւն և զփառս աստուածոց մերոց։ Եւ սպասաւորքն վաղվաղակի կատարէին զհրամայեալսն 'ի բռնաւորէն. 'ի բազում ժամս տարածանէին 'ի ներքոյ որովայնի նորա զհրատ բոցոյն և այրէին խորովէին զամենայն մարմինս վկային մինչև 'ի ներքին անդամսն. և դժնդակ տանջանօք զթիկունս նորա հարկանէին տանջէին չարչարէին փշալից գաւազանօք, մինչև պատառ պատառ մարմինք նորա յերկիր անկանէին, և ոչ այլայլէին գոյն երեսաց նորա. այլ էր տեսանել և կարծել ամենեցուն իբրև թէ օտար մարմնով կրիցէ զպատուհասն։

Յայնժամ զարհուրեալ բռնաւորին ընդ համարձակութիւն սրբոյ վկային, միանգամայն և զարմացեալ ընդ մնալ ոգւոյն նորա 'ի նմա, հազիւ ուրեմն հրամայէր դահճացն թողացուցանել 'ի տանջանացն, և ծիծաղելով ասէ ցսուրբ վկայն. Այսա՞ ինձ, ո՛վ Եւստռատիէ, որպիսի՞ է խոհեմութիւն քո. ախորժե՞ս և այլ ևս յոլովագոյն տանջանս մատուցանել քեզ[1]. զի հրաձուեալ ուրախասցիս, զոր և փառս անձին քում համարիս։ Եւստռատիոս ասաց. Յոյժ ըղձամ և փափաքիմ այժմ ցանկալի փառացն՝ յորս հասուցանել զիս խոստացար, զի գրեալ է. Ոչ են արժանի չարչարանք ժամանակիս առ հանդերձելոց փառացն որ յայտնելոցն է 'ի մեզ։ Այլ դուքն ցմերձակայ զօրականն իւր. Յամենայն խորհեցեալսն մեր վասն սորա տանջանարանս՝ պատշաճ վարկանիմ արկանել 'ի վերայ չարաբաստ մարմնոյ սորա՝ աղ և բորակ խառնեալ ընդ քացախոյ, զի մորմոքեսցի հրկիզեալ սաստկացեալ վերք անդամոց դորա, և խեցի տարածեալ 'ի գետնի և տատասկ փշոց, և այնպէս շրջշրջեսցի[2] 'ի վերայ նորա սաստկապէս. զի քանցեսցին մարմինք ջլաց և ոսկերաց դորա. զի յագեսցի պարգևօքն զոր խնդրէ 'ի մէնջ, զոր և սիրեացն իսկ։ Եւ սպասաւորք չարին յոյժ փութային հասուցանէին սրբոյն զպատուհաս չարչարանացն։ Իսկ նահատակն Քրիստոսի տակաւին ևս մեծաւ ուժով կայր և ժուժկալէր, և ոչ հեծ ինչ և

1. Մի օր. ածել 'ի վերայ ։ 2. Մի օր. պտրածեսցի... ղրջեսցի։

կամ բարբառ լսելի լինէր, այլ միայն 'ի սրտի իւրում գոհանայր զՏեառնէ, և կրէր զտանջանս նեղութեանն։ Իշխանն ասէ. Զարմացեալ կարի քաջ ևս թէ ո՛րպէս իբրև զխաղալիկ համարի զամենայն եկեալսն 'ի վերայ իւր՝ զինուորդ Նազովրեցւոյն, և զմերօքս քամահէ զտանջանարանսն։ Արդ այժմիկ ասասցէ առաջի ատենական դատարանիս, եթէ գոնեա յայսմ հետէ ողջախոհացեալ եղիւ, և կամ զանձն իւր հաւանեցո՛յց մեծաց աստուածոցն երկրպագութիւն մատուցանել և հպատակ լինել հրամանաց ինքնակալացն եթէ ոչ։ Սուրբն Եւստռատիոս ասէ. Սակս աստուածոց ձերոց երկիւղին զոր ունիս, վասն որոյ զպատուհասս զայս ածեր 'ի վերայ իմ՝ տգիտացեալ, ո՛վ դատաւոր, յիմարեալ մտօք, և ո՛չ գիտիցես թէ անձառ և անպատում բարութեանցն որ պահի 'ի Տեառնէ յուսացելոց իւրոց, այժմ արժանի զիս արարեր, և հորդեցեր ինձ ձանապարհ փրկութեան ելանել 'ի մարմնոյս ամբծութեամբ, և մտանել առ որ անձկացեալն եմ, և վայելեալ 'ի մշտնջենաւոր և յանանց բարութիւնսն ընդ կամարարս անուան իւրոյ։ Արդ զոր ինչ առնելոց ես արա վաղվաղակի, զի զաստուածսն քո գարշելի և պիղծս համարիմ, և զամենայն զմեծութիւնս աշխարհի և զփառս իբրև զաղբ անպիտան համարիմ։ ապաշնացու և խոտան երևին ինձ այդոքիկ, զի զՔրիստոս շահեցայց և զուարթերես կացից առաջի նորա 'ի հանդերձեալ յաւիտենին։

Դուքսն ասէ. Ո՛վ աղաջուր դու, և չարի բախտի հանդիպեալդ և թմբրեալդ արբեցութեամբ չարին 'ի նանիր խորհրդոցդ, ընդէ՞ր ամենևին իսպառ կորուսանես զպատիւդ և զմեծութիւն զինուորութեանդ. և դառնութեամբ զրկեալ 'ի քաղցր լուսոյ աշխարհիս, կամաւ ինքանես 'ի դժոխս. և կամ զի՞նչ իցեն փոխարէն հատուցմանցդ զոր ասեսդ, և կամ ո՞վ իցէ պարգևատուն այնմ ամենայնի, աղէ ասա ինձ մեղմով զամենայնն։ Պատասխանի ետ երանելին Եւստռատիոս և ասէ. Յոյս հանդերձելոցն զոր ունիմք՝ անձառ է և անյայտ, ոչ բերանով ձառի, և ոչ ոք կարէ բերել յաւրարածոց օրինակ յերևելեաց աստի և յապականացու արարածոց, զոր խոստացաւ Աստուած կամարա-

բաց իւրոց սիրելեաց. այնպէս և անհաւատիցն որ իբ-
րև զքեզդ լցեն և ուրացողացն զՀշմարտութիւնն՝
մշտնջենաւոր և անշէջ հուր գեհենին գանձեալ պա-
հի, կրճտումն ատամանց և լալ աչաց, որդնն անքուն
և աղջամղջին խաւարն արտաքին, զոր պատրաստեալ
է սատանայի և կատարողաց զհաճոյս կամաց նորա.
այլ մեք այնմ յուսոյ ակն կալեալք սպասեմք, և յայս-
պիսեաց սպառնալեաց խուսափել ոչ զարհուրիմք, զա-
նազան և դառն տանջանաց որ 'ի ձէնջ գայ 'ի վերայ
մեր. զի փրկեալք յորոգայթից բանսարկուին զուարթ-
երես կացցուք առաջի բեմին Քրիստոսի։

Զայս իբրև լուաւ դուքսն Լիւսիաս 'ի ցասումն բար-
կութեան շարժեալ ասէ ցերանելին. Եթէ հնար
դոյր Աստուծոյն քո որպէս դու ասես, և կարէր վաղ-
վաղակի անմահութեանն իւրոյ կցորդ առնել զքեզ,
փրկէր յառաջագոյն տանջանացն զոր պատրաստեալ
եմ քեզ։ Վասն որոյ լուր ինձ, և զմնալաստակ կամս
քո մերժեա 'ի քէն և Եկ յուղղութիւն, և զերծիր
յառաջակայ տանջանացն, և պարգևս և պատիւս մե-
ծամեծս քան զառաջինն ընկալցիս յինքնակալաց մե-
րոց, և մեր սիրելի լիցիս։ Սկսաւ խօսել երանելին և
ասէ. Ո՛վ խաւարասէր և չարին գործակից, և հեռա-
ցեալ 'ի կենացն յաւիտենից. արդ հայեաց և տես
զիս, զոր դու մեռեալ և կորուսեալ կարծէիր, ոչինչ
անհնար եղև Աստուծոյն իմոյ կրկին նորոգել զիս և
կեցուցանել, ողջացուցանել զամենայն վերս և զցաւս
մարմնոյ իմոյ։ Եւ ամենայն բազմութիւն քաղաքին
պշուցեալ հայէին. իսկոյն յանկարծակի իբրև զկե-
ղևան ինչ ծառոյ 'ի բաց անկանէին 'ի մարմնոյ անտի.
և սուրբն ողջանդամ երևէր ամենայն բազմութեանն,
որպէս զի ոչ սպի ինչ կամ վերք երևէին 'ի սուրբ մար-
մին նորա. և տեսեալ զսքանչելի եղեալսն 'ի վերայ
սրբոյն, ամենայն ժողովեալ մարդիկն որ 'ի թէատրոնն
էին, և յոքնախումբ ռամիկ քաղաքին, և փառաւոր
առնէին զԱստուած 'ի վերայ սքանչելեացն զոր եցոյց
առ սուրբ վկայն իւր։

Իսկ մի ոմն 'ի զօրականացն որում անուն էր Եւփի-
նիոս, որ էր 'ի նմին քաղաքէ յԱրաբակացւոց ուստի
երանելին Եւստռատիոս, և իշխանական պատուով 'ի

նորուն դասուցն գոլով, իբրև ետես զսրբոյն Եւստրա-
տիոսի զանշարժ զհամբերութիւնն որ վասն Քրիստո-
սի, աղաղակեաց 'ի ձայն մեծ և ասէ. Լիւսիաս, Լիւ-
սիաս, և ես քրիստոնեայ եմ; ծառայ Աստուծոյ բար-
ձրելոյ, արարողին զերկինս և զերկիր, և զկրօնսն քո
նզովեմ; և զաստուածս քո արհամարհեմ; և ընդ ամ-
պարիշտ թագաւորացն և ընդ կամս քո հակառակիմ;
իբրև զտէրս իմ Եւստրատիոս։ Իսկ անօրէնն իշխանն
իբրև լուաւ զայս՝ յամօթ եղև վասն նախատանաց իւ-
րոց առաջի բազմամբոխս հրապարակին, և խոնարհե-
ցուցեալ զգլուխ իւր ընդ երկիր պշուցեալ հայէր։
Յայնժամ հրամայեաց զերանելի զինուորն Քրիստոսի
զԵւգինիոս յառաջ մատուցանել. և քարոզն աղաղա-
կէր 'ի մէջ հրապարակին և ասէր այսպէս. Վասն չա-
րաբախտիս այսորիկ և նորագոյն երևելոյս ընդերկար
հարցափորձութեանց և քննութեանց պէտք են, զի
այժմիկ ոչ ժամանեմք, այլ 'ի հանդիսական իրողու-
թիւնս զօրացն փութամք ըստ մերոց սովորութեանց,
և զկախարդասարս զայսոսիկ՝ զԵւստրատիոս հանդերձ
Եւգինիոսիւ համախոհիւ իւրով՝ 'ի բանդ հրամայեմ
արկանել. և անուր երկաթի 'ի պարանոցս և յոտս
նոցա հրամայեմ դնել, և զգուշութեամբ պահել հան-
դերձ այլովք մահապարտօքն, զի 'ի պարապորդ և 'ի
պատշաճ ժամու ըստ օրինին դատեցայց զնոսա։ Եւ
զայս ասացեալ յարեաւ յատենական աթոռոյն։

Իսկ զինուորքն քարշէին զերանելիքն կապանօք ըստ
հրամանի իշխանին, և եդին 'ի նեղքնում 'ի խաւարչը-
տին տեղւոջ բանդին։ Իսկ երանելիքն մեծաւ ցնծու-
թեամբ և ուրախութեամբ օրհնէին զԱստուած և
սաղմոսէին միաբան ձայնիւ և ասէին. Ահա զի՛ բարի
և զի՛ վայելուչ զի բնակին եղբարք 'ի միասին։ Եւ հա-
նէին զամենայն գիշերն 'ի գլուխ յաղօթս Աստուծոյ.
և ուսանէին 'ի սրբոյն Եւստրատիոսէ զհանդէս նա-
հատակութեան մարտին և զհամբերութիւն ժուժ-
կալութեան, և զփոխարէն անձառ բարեացն զոր
պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց։

Իսկ ընդ այգն ընդ առաւօտն 'ի ծագել արեգա-
կանն յարուցեալ դուքսն՝ 'ի Նիկոպոլսացւոց քաղաքն
փութայր գնալ, և երթայր իւրովքին 'ի բանդն՝ յո-

րում սուրբ վկայքն էին, և միայն զերանելին Եւ-
ստաթիոս հրամայեաց արտաքս հանել. և յորժամ
եկն ծիծաղելով և խնդալից դիմօք, ասէ ցսուրբ վկայն.
Ողջ լեր սիրելի Եւստաթիէ։ Պատասխանի ետ սուրբն
և ասէ ցնա. Աստուածն ամենեցուն զոր պաշտեմ 'ի
մանկութենէ իմմէ, նա ողջունեսցէ զքեզ արժանա-
պէս, ո՛վ Լիւսիաս։ Դուքսն ասէ. Ցաղագս Աստուծոյն
քո ինձ ոչինչ փոյթ է, այլ դու առ յառաջիկայ ժամն
հասեալ զտուեալ քեզ հողաթափդ արկցես յոտս
քո, զի այդու դիւրընթացիկ լինիցիս զկնի մեր յու-
ղեկցութիւնս Ճանապարհին։ Եւ հողաթափքն այն
էին տատասկեալք երկայն և ստուարասուր բևեռօք,
իբրու թէ թափանցիկ լինէին ընդ ներքանս ոտից նո-
րա։ Արդ զինուորայն բերեալ ագուցին զհողաթափ-
սըն յոտսն երանելւոյն՝ զերկաթեղէնսն 'ի միասին խը-
րացիւք սևեռեալ պնդեցին. և կնքեաց մատանեաւ
իւրով իշխանն, զի մի՛ ոք դիթացեալ 'ի վերայ նորա
հանցէ զայն 'ի բաց 'ի դարշապարաց սրբոյն։ Եւ պա-
տուիրեաց դահճացն հարկանելով և քարշելով ածել
զնա 'ի Ճանապարհայն՝ հանդերձ այլ ևս ընկերօքն. և
ինքն չուեալ հանդերձ բաղմութեամբ զօրացն գայր
հասանէր յետ երկուց աւուրց և բանակէր մերձ առ
դղեկին որ է հուպ 'ի քաղաքն Արաւրակացւոց։ Եւ
'ի հասանել սրբոյն անդր՝ ամենայն բնակիչք քաղա-
քին այնորիկ ելանէին տեսանել զերանելին. բայց ոչ
ոք յազգականաց կամ՝ 'ի բարեկամաց սիրելեաց նորա
իշխէր մերձենալ առ նա վասն երկիւղի իշխանին, զի
մի և նոքա ըմբռնեսցին։

Մարդարիոս ոմն ռամիկ գոլով լցեալ աւուրքք և
քաղաքավարեալ արդարութեամբ՝ յաւուրսն յայնո-
սիկ շինէր յարկս բնակութեան ինքեան[1]. և 'ի տա-
նեաց անտի մինչդեռ ծածկէր զձեղունս տանն՝ հայե-
ցեալ դիտէր, և տեսանէր զսուրբ վկայն Աստուծոյ,
զի կապանօք անցուցանէին ընդ պողոտայն որ էր մերձ
'ի գեօղն յայն։ Ետես 'ի մէջ սրբոյն զերանելին Եւ-
ստաթիոս կապեալ ձեռս յետս, և ծանեաւ վաղվա-
ղակի. և փութացեալ էջ անտի, և ասէ ցկինն իւր

1. Մի օր. բնակարանի իւրոյ։

զրուցատրութեամբ 'ի բարբառ հայերէն. Ո՛վ կին, տեսանե՞ս զտէրն մեր Եւստրատիոս անուանեալն Կիւրիւկոս[1], զիշխանն ամենայն շրջաբնակութեանս մերոյ, զի 'ի բաց լքեալ արհամարհեաց զգերապատիւ զայնքան և զայնպիսի մեծութիւն և զփառս աշխարհիս, և զամենայն երևելի փարթամութիւն ընչից և աղգի և ստացուածոց[2], և զքաջամարտիկ զինուորութիւնն զոր ոչ ոք ունէր նման նմա 'ի մէջերկրայքս ամենայն. և ընդ այլ կալանաւորսն երթայ 'ի տեղի հանդիսի 'ի յասպարէզ կատարման և վկայական նահատակութեան. զի զկնի ցանկալի կենցաղավարութեան իւրոյ գյաւիտենական թագաւորութեանցն ժառանգեսցէ զառհաւատչեայ բարութիւնսն։ Իսկ գեղեցիկ և պարկեշտ կին նորա ասէ ցնա. Զինչ խափան լինիցի և քեզ երթալ և ուղեկից լինել ընդ նմա և հետևիլ ընդ երկնաչու Ճանապարհն, և հաղորդ լինել չարչարանաց նորա, այնմ՝ որ գյաւիտենական զանապականութեանն վերաբուսուցանէ զբրաբիոնն. և պաշտպան փրկութեան լինիցիս ինձ և երկուս մանկանցս և բնաւին ազգատոհմին քո։ Իսկ ցանկալի այրն այն և բարենշան՝ վառեալ հրով Հոգւոյն և ըղձալի տենչութեամբ[3] ցանկայր խառնիլ 'ի գունդս սրբոց վկայիցն Աստուծոյ. և առ ժամայն գիրկս արկեալ զպարանոցէ մանկանց իւրոց համբուրեաց զնոսա, և ասէ. Խաղաղութիւն ընդ ձեզ, սիրելի որդեակք իմ։ և տարածեաց զձեռս իւր երկայ յաղօթս առ Տէր, և ասէ արտասուագոչ պաղատանօք. Տէր Աստուած, Հայր ամենակալ երևելեաց և աներևութից, որ 'ի ձեռն սիրելի Որդւոյ քո Յիսուսի Քրիստոսի և ամենասուրբ Հոգւոյդ նորոգեցեր զամենայն որ ինչ յերկինս և 'ի վերայ երկրի, և ծանուցեր զաստուածութիւնդ քո ամենայն որդւոց մարդկան, և բացեր մեզ Ճանապարհ փրկութեան 'ի կեանսն յաւիտենից, ուր անապական[4] բարութեանցն պարգևքն պահին յուսացելոց 'ի քեզ. վասն որոյ աղաչեմ զամենագութ ողորմութիւն քո,

1. Մի օր. Կիւրիկոս։
2. Մի օր. և ազգի ազգի ոգեղեղ-ծոց։
3. Մի օր. ըղձալի փեսլռութեամբ։
4. Մի օր. անապականութեան։

հեղ յիս զշնորհ բարերարութեան քո, և առաջնորդեա ինձ աներկեան սրտիւ, և կատարեալ սիրով ընթանալ 'ի հանդէս մարտիրոսութեան, զի եղէց պատարագ ընդունելի աստուածութեանդ քո, և հեռացո 'ի մէնջ զընդդիմամարտ չարին բռնութիւնն. որ հայրդ ես որբոց և տէր ամենայն յուսացելոց՝ պահեա զմանկունս իմ խաղաղութեամբ, և ամբիծ 'ի հաւատս Ճշմարտութեան ամենաշնորհ աջով քո, և զկենակից ամուսին իմ որ եղև հանդիսադիր ինձ այսմ երանաւոր[1] կոչմանս յոր հրաւիրեցայ 'ի Տեառնէ. և առաքեա զհրեշտակ խաղաղութեան քո զի առաջնորդեսցէ ինձ 'ի բարութիւն, և թողութիւն շնորհեա իմոց յանցանացն, զոր 'ի չարին պատրանաց մերձեալ է առ իս. զի քեզ ամենայն ինչ կարելի է, և օրհնեալ է անուն քո յաւիտեանս։ Եւ զայս ասացեալ երթայր զկնի սրբոցն զերանաւէտ Ճանապարհն։

Եւ հանդիպեալ ուրեմն մեծատան, որ էր այր երևելի, և էր երկիւղած 'ի Տեառնէ, 'ի նմին գեղջ ունելով զբնակութիւն իւր, որում անուն էր Մուսատարիոս, և ասէ ցնա երանելին Մարդարիոս. Ահաւասիկ գնամ ես առ սիրելին քո և ազգակիցն Եւստռատիոս, զի ընդ նմա զՔրիստոսի հաստատութեան յանձն առեալ վկայեցից վասն Ճշմարտութեանն, կամելով Աստուծոյն մերոյ։ Արդ յայսմհետէ քեզ յանձն եղիցի տուն իմ հանդերձ մանկամբք և ընտանեօք. և ես խնդրեցից 'ի Տեառնէ վարձահատոյց լինել քեզ 'ի հանդերձեալ յաւիտենին որ գալոցն է։ Պատասխանի ետ այրն և ասէ ցնա. Երթ 'ի խաղաղութիւն, զանձկալի և զգեղեցիկ Ճանապարհդ, և գընթացս քո կատարեա ըստ հաճոյից Տեառն Աստուծոյ մերոյ. և վասն որոյ պատուիրեցերդ ինձ՝ եղիցի քեզ որպէս և կամիս։ Լուեալ երանելին Մարդարիոս՝ ողջոյն տուեալ նմա, հասանէր սրբոց վկայիցն Աստուծոյ առ դղեկաւն. աղաղակեաց 'ի ձայն մեծ և ասէ. Տէր իմ Եւստռատիէ, որպէս անձկացեալ ոչխար հօտից որ ընթանայ առ հովիւն, այնպէս և ես ընթացեալ հասից առ քեզ մեծաւ փափաքմամբ, կամելով Ճանապարհակից լինել

1. Մի օր. երանաւէտ։

քեզ։ Արդ ընկալ զիս 'ի թիւ սրբոց ժողովրդոյդ որ ընդ քեզդ են հանդիսացեալք 'ի վկայական հանդէս նա-հատակութեանցդ, զի թէպէտ և անարժան եմ, սա-կայն վկայ Քրիստոսի լինելոց եմ։ Եւ իբրև ասաց զայս՝ 'ի ձայն բարձր աղաղակեաց և ասէ. Քրիստոնեայ եմ իբրև զպատուական տէրս իմ Եւստրատիոս, լուարուք զայս ամենայն պաշտօնեայք սատանայի։ Յայնժամ ըմբ-բռնեալ զինուորացն՝ կապեցին ընդ այլ ևս կալանա-ւորաց սրբոցն, և արկին 'ի հանդիսական բանդ դղե-կին այնորիկ։

Եւ վաղվաղակի լսելի եղև այս յունկն դատաւորին Լիւսիայ. և իբրև լուաւ զայս խշխանն, իբրև զառիւծ մրմռեալ նստաւ յատենին, առաջի կալով նորա զի-նուորացն ըստ կարգի ըստ սովորութեան. և քերեալ լինէին երանելիքն առաջի նորա կապեալ կրկին կա-պանօք ձեռս յետս, և անուր 'ի պարանոցի, և մերկա-ցեալք յամենայն հանդերձից իւրեանց. և սուրբն Աւքսենտիոս կայր 'ի մէջ սրբոցն զուարթերես և պայ-ծառ դիմօք և ուրախ սրտիւ։ Ասէ ցնա դուքսն. Աւ-քսենտիէ, այժմ ծանո մեզ եթէ ազատեցեր զանձն քո յաշխատութեանց, և արժանի եղեր մեծի փրկու-թեան. 'ի բաց կացեր արդեօք 'ի մնոտի պատրանաց խաբէութենէ կորուսելոյն այնորիկ, և մերձեցար առ բարերարութիւն աստուածոյն, եթէ տակաւին կեաս 'ի նմին յամառութեան։ Պատասխանի ետ սուրբն Աւքսենտիոս և ասէ ցնա. Ո՛վ Լիւսիաս, երդուեալ իմ քեզ 'ի վերայ տեսչութեան իրաւանցն Աստուծոյ Ճըշ-մարտին, զի անփոփոխելի են կամք սրտի իմոյ 'ի հա-ւատոցն Քրիստոսի. և Աստուած գիտեմ զնա, ծնունդ անծնին Հօր, և զամենակալ Հոգի նորա բղխումն մըշ-տընջենահոս. անձառ անքնին յամենայնի, մի աս-տուածութիւն, յոր հաւատացեալ եմ և պաշտեմ 'ի մանկութենէ իմմէ. և եթէ բիւրս ածիցես 'ի վերայ իմ տանջանս, և գանս պատուհասից առաւել քան զառաջինն, և ընդ ամենայն տեսիլ տանջանացն ան-ցուցանես զիս, ոչ կարիցես զմիտս իմ խոնարհեցուցա-նել յերկնից բարձրութենէն. արդ զոր ինչ խորհեալ ես՝ արա վաղվաղակի։

Յայնժամ դուքսն վՃիռ մահու հատանէր այսպէս

'ի վերայ նորա. Զ Աւքսենտիոս՝ որ յետ բաղում տան-
ջանաց ոչ եկն յուղղութիւն, և ոչ հպատակ եղև ինք-
նակալին, 'ի ձեռն սրոյ հրամայեմք գլխատել յանա-
պատ տեղւոջ. զի յօրինաւոր թաղմանէ զրկեալ լինի
չարաբաստ մնրմին նորա։ Եւ զայսպիսի դատաւճիռ
ընկալեալ երանելւոյն, փութանակի հասանէր 'ի տե-
ղի կատարմանն, և խոնարհեցուցեալ ծունր կայր յա-
ղօթս. Աստուած յաւիտենական, տէր և արարիչ ա-
մենայն արարածոց, Աստուած անձառ լոյս, Հայր միայ-
նոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և փառակից
Հոգւոյն՝ որ 'ի քէն ելանէ, և ընդ նախախնամ ողոր-
մութեամբ զծագս տիեզերաց. բաց զդուռն ողորմու-
թեան քո առ անարժանութիւնս՝ որ կամ առաջի քո
'ի ժամուս յայսմիկ, յորում զամենայն կենցաղական
պատաղմունս զկնի իմ թողում, և ծարաւի ոգւով ըն-
թանամ 'ի կէտ կոչման քում հրամանացդ, ըստ աս-
տուածապատում անսուտ հրամանի քո՝ որ յաւետա-
րանական քարոզութեանն, թէ՝ Որ ոչ առնու զխաչ
իւր և գայ զկնի իմ՝ չէ ինձ արժանի։ Եւ արդ Տէր իմ
և Աստուած իմ, զընթացս իմ կատարեցի ամբծու-
թեամբ, և արդ առ քեզ գամ. արա զիս արժանի հան-
դերձեալ յաւիտենին, աչալրջութեամբ և զուարթ-
երես կալ առաջի քո բեմիդ։ Եւ պահեա անաս-
բատ զդասս սրբոց վկայիցն որ ընդ իս կցորդ եղեն
չարչարանաց վասն քո, և արժանաւորեա հասանել
մասին վիճակիս այսորիկ. և շնորհեա խաղաղութիւն
եկեղեցւոյ քում սրբոյ. և քեզ փառք յաւիտեանս։
Եւ ասացեալ զամէնն, կատարեցաւ 'ի տեղւոջն։

Իսկ անօրէնն Լիւսիաս խնդրէր յառաջ մատուցա-
նել զսուրբն Մարդարիոս, զի դատեսցի և զնա առա-
ջի բազմամբոխ հրապարակին։ Եւ զինուորացն լու-
ծեալ զնա 'ի շղթայիցն որ 'ի պարանոցին, և փութա-
նակի բռնաբար ձգէին զնա 'ի թէատրոնն։ Իսկ երա-
նելին ասէ. Տէր իմ Եւստռատիէ, աղաչեմ զքեզ վասն
իմ աղօթս առնել, և ուստ ինձ թէ զինչ տաց պատաս-
խանի յատենի անդ ապականիչ և չար գազանին այ-
նորիկ։ Պատասխանի ետ սուրբն Եւստռատիոս և ա-
սէ ցնա. Եղբայր իմ Մարդարիէ, բնաւ ամենևին զոր
ինչ հարցանէ ցքեզ, այլ ինչ մի տացես նմա պատաս-

խանի, բայց միայն ասա թէ քրիստոնեայ եմ և Քրիստոսի ծառայ, և մի փոխեսցիս 'ի բանիցս յայսցանէ։ Եւ անօրէն դահճացն ածեալ կացուցին զերանելին առաջի իշխանին։ Ակսաւ խօսել դուքսն, և ասէ ցնա. Ա՛յ երիցս թշուառական և ատեցող բարեաց, և օտարացեալդ 'ի բարերարութենէ աստուածոցն, ասա վաղվաղակի զանուն քո և զբախտ, և զգահաւորութիւն ազգատոհմին քո, թէ որպիսի պաշտօն ունիս։ Պատասխանի ետ սուրբն Մարդարիոս, և ասէ ցիշխանն. Զայդմ ամենայնէ զոր հարցանես՝ ինձ ոչինչ է փոյթ. քանզի ես քրիստոնեայ եմ և Քրիստոսի ծառայ։ Եւ յառաջ մատուցեալ ասեն ցնա. Եղկելի և թարմատար քան զամենայն մարդիկ, տուր պատասխանի ըստ օրինակի հարցման տեառն մերոյ։ Պատասխանի ետ երանելին և ասէ. Ասացի և դարձեալ ասեմ, քրիստոնեայ եմ և Քրիստոսի ծառայ։

Յայնժամ տեսեալ զհաստատութիւն հաւատոց նորա և զանփոփոխելի միտս նորա, զայրագին ցասմամբ հայեցեալ առ դահիճսն ասէ. Ծակեսցի պձղունք ոտից դորա, և չուան 'ի նեղքոյ անցեալ կախեսցի 'ի ձողոյ, և շամփուրս հրացեալս մերձեսցի 'ի թիկնամէջս դորա, և կիզեսցին ամենևին անդամք բոլորովին մարմնոյ դորա, թերևս եկեսցէ 'ի զգայութիւն, և զարժանն տացէ պատասխանի ըստ հարցուածոց մերոց։ Եւ վաղվաղակի զամենայն հրամայեալսն կատարէին սպասաւորք անօրէն իշխանին։ Եւ երանելին ոչինչ տայր պատասխանի 'ի տանջանսն, այլ միայն աղաղակէր և ասէր, թէ՝ Քրիստոնեայ եմ և Քրիստոսի ծառայ։ Արդ 'ի բազում ժամս կալով նորա 'ի կախաղանի անդ, և կարմրագոյն շամփրօք փուփոխմամբ գործարանացն զմարմին սրբոյ վկային հրկիզուին։ Եւ նա 'ի ձայն բարձր աղաղակեաց և ասէ. Տէր Յիսուս, քեզ յանձն առնեմ զհոգի իմ։ ընկալ զսա խաղաղութեամբ, և արժանի արա զիս հասանել մասին ժառանգութեան սրբոցն 'ի լոյս. զի քեզ փառս վերառաքեցից այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն։ Եւ զայս ասացեալ աւանդեաց զհոգին, և իջուցեալ զերանելին 'ի կախաղանէն, քարշէին արտաքս զի կերակուր լիցի շանց։

Եւ մինչդեռ ինքն ամպարիշտն Լիւսիաս հրձուեալ էր և ցնծայր ընդ չարչարանս վկայիցն, ասէ ցղինուորսն. Քարշեալ լիցի յատեանս մերկ մարմնով և որ 'ի Սատաղացիսն էր, Եւգինիոսն այն՝ որ ընդ Եւստաթիոսին 'ի հարցափորձութեան կայր։ Եւ նոյն ժամայն փութանակի ածին կացուցին մերկ կողոպուտ 'ի հանդերձիցն առաջի դքսին. և հայեցեալ 'ի նա դառնութեամբ և զայրագին ցասմամբ ասէ. Այսա ինձ, ով ամենապեղծ և չարագործ այր դու, զիա՞րդ իշխեցեր այդչափ յանդգնութեամբ մերձենալ 'ի համարձակութիւն անդր, որպէս զի առ ոչինչ համարեցար զանյաղթ և զանպարտելի հրաման ինքնակալին. և 'ի վերայ ամենայն յանդգնութեանդ ժպրհեցար անարգանս դնել մեծամեծայ աստուածոցն՝ զոր պաշտեն և պատուեն ինքնին թագաւորքն մեր։ Պատասխանի ետ սուրբն Եւգինիոս և ասէ ցիշխանն Լիւսիաս. Աստուածն իմ զոր պաշտեմ 'ի մանկութենէ իմմէ՝ յոր և յուսացեալն եմ, նա զօրացոյց զիս և շնորհեաց ինձ համարձակութիւն, զի թքանիցեմ 'ի կուռս քո, և արհամարհեմ զստուերս և զապականիչ կրօնս քո։

Արդ այնուհետև 'ի ցասումն և 'ի բարկութիւն բորբոքեալ ամպարիշտն Լիւսիաս՝ ասէ ցդահիճսն. Նախ 'ի բաց հատցի անարգող և հայհոյիչ լեզու դորա, և օտարացեալ լիցի յերկոցունց ձեռացն, և բրօք դալարօք բարձաբեկ լիցի, և ջախջախեսցին արունք ոտից դորա և փշալից գաւազանաւ հարցի թիկունք դորա։ Եւ այսոցիկ այսպէս լինելոյ 'ի չար դահճացն, ոսկը և մարմին կային ընդ միմեանս մածեալս, և առ սաստիկ վշտին ոչ կարէր բանալ զբերան իւր, բայց միայն աղաղակէր և ասէր. Տէր Յիսուս ընկալ զոգի իմ և օգնեա ինձ։ Եւ նոյնժամայն աւանդեաց զոգին։

Իսկ իշխանն անօրէնութեան իբրև կատարեաց զայս ամենայն, իջանէր ամենայն բանակաւն 'ի դաշտ անդր, 'ի հանդիսի անցուցանել և համար առնել զօրացն արքունի. և լինէր փորձ ընտրութեան այնորիկ՝ իւրաքանչիւր ցուցանելով զկորովութիւն արիական ներհմտութեան առ 'ի զինուցն մարտակցութիւն։ Յայնժամ երևեալ ոմն 'ի մէջ բազմութեան զօրացն գեղեցիկ և հռչակելի տեսլեամբ զարդարեալ, որում

անուն էր Ովրեստէս. այր քաջ և վայելուչ պան-
ծալի հասակաւ, լցեալ ամենայն խոհեմական
իմաստութեամբ և հանճարով, զօրաւոր բանիւք
և արդեամբք, և կիրթ առ 'ի մարտիցն յառաջադի-
մութիւն։ Սորա կացեալ 'ի կարգի առաջի իշխանին
Լիւսիայ. ընդ որ հայեցեալ տեսանէր զչքնաղ և ըզ-
պարկեշտագեղ հասակի նորա զկերպարանսն. և հա-
ճոյ թուեցեալ յաչս նորա՝ յառաջ կոչէր զնա մօտ առ
ինքեան, հրամայն տայր ձգել զգեղարդն զոր ունէր 'ի
ձեռնն ընդդէմ նպատակին. և նորա հապշտապ փու-
թով արիապէս յառաջ մատուցեալ երիվարաւն և
թափ տուեալ բազկացն դիպեցուցանէր զգեղարդն
ճահոդակի առաջի կացեալ նպատակին։ Եւ նոյն ժա-
մայն ընդ քաջապինդ արշաւանաց երիվարին յան-
դուգն շարժմանէ թափ տուեալ բազկացն, արտաքո
'ի հանդերձիցն երևեցաւ խաչ մի ոսկի որ կայր թա-
քուցեալ 'ի գրապանակ պատմուճանի նորա։ Եւ իբրև
յայտնի եղև ամենեցուն, նոյն ինքն Լիւսիաս վաղվա-
ղակի առ ինքն կոչէր զնա. և իբրև եկն եկաց առաջի
նորա, առեալ 'ի ձեռն իւր զաստուածընկալ նշանն
հարցանէր, թէ՝ Զինչ արդեօք իցէ այս. միթէ և դու
'ի նահանգէ Գալիլեացւոցն հանդիպեսցիս, յազգէ
կախարդասար աղանդաւորացն։ Իսկ Ովրեստէս բա-
ցեալ զչնորհալից բերան իւր, ասէ մեծաձայն 'ի լուր
ամենայն զօրացն. Ծառայ եմ ես խաչելոյն Յիսուսի
Քրիստոսի, արարողին զերկինս և զերկիր, և որ 'ի
նոսա արարածք իցեն. և զնշանդ զայդ կրեմ 'ի պահ-
պանութիւն անձին իմոյ առ 'ի դրդումն հակառա-
կամարտ զօրութեանց[1] թշնամւոյն յարուցելոյն 'ի վե-
րայ իմ։ Յայնժամ հրամայէր դուքսն դահճացն բերել
անուր երկաթեղէն և արկանել 'ի գեղեցիկ պարանոց
զինուորին Քրիստոսի, և ասէր. Ուղեկից լիցի և դա
'ի ճանապարհիս մերում ընդ մահապարտին Եւստա-
տիոսի. օր յայտ արարեալ՝ յորում հարցափորձու-
թեամբ դատապարտեսցէ զնա։

Եւ 'ի հասանել դքսին 'ի քաղաքն Նիկոպոլսացւոց
մեծապայծառ հանդիսիւ, բազումք 'ի զօրականացն

1. Մի որ. պրաց։

յայնմ գնդէ՝ որ 'ի քաղաքին էին, մատեան առ իշ-
խանն Լիւսիաս մեծաւ համարձակութեամբ, աղա-
ղակեցին միով բերանով և ասեն. Ո՛վ Լիւսիաս, և մեք
քրիստոնեայք եմք, և զինուորիմք երկնաւոր թագա-
ւորին Յիսուսի Քրիստոսի, և 'ի նա եմք ապաւինեալ,
և զնա միայն պաշտեմք, և խոստովանիմք զանուն նո-
րա յաւիտեան. և արհամարհեմք զամենայն մնոտի
և զդիւաբնակ ընդունայնութեան պաշտամունս աս-
տուածոց քոց. արդ զոր ինչ հանդերձեալ ես առնել,
արա վաղվաղակի. զի Ճշմարտին Աստուծոյ նուիրեցաք
զանձինս մեր, և ոչինչ կարէ մեկնել զմեզ 'ի սիրոյ
Աստուծոյն մերոյ, որ յանգոյութենէ 'ի լինելութիւն
ած զերևելի և զաներևոյթ արարածս. ոչ հուր, և ոչ
սուր, և ոչ ժանիք գազանաց և ոչ տեսակք ամենայն
տանջանարանաց, ոչ կարեն մեկնել զմեզ 'ի սիրոյ ան-
տի Յիսուսի Քրիստոսի։ Զայս և առաւել քան զսոյն
միաբան բազմութիւն զօրականացն՝ որք 'ի քաղաքի
անդր կային՝ աղաղակէին առաջի իշխանին. և նոյն-
ժամայն իբրև լուաւ զայսպիսի բարբառ 'ի բազմամ-
բոխ մարդկանէ քաղաքին, զարհուրեցաւ դուքսն և
գոյն երեսաց նորա շրջեցաւ, և իբրև մթութեամբ
շամանդաղաւ նուաղեցան տեսանող աչք նորա. քան-
զի երկեաւ 'ի բազմութենէ քաղաքացեացն, զի մի
յանդուգն յարձակմանէն չար ինչ հանդիպեսցի նմա.
և իմացեալ ծանեաւ թէ որպէս խաչինս երկնաւոր
հովուին կամաւ 'ի մահ մատնեցին զանձինս իւրեանց։

Յայնժամ իշխանն իբրև ետես զանփոփոխելի միտս
նոցա 'ի հաւատն որ 'ի Տէր մեր Յիսուս Քրիստոս,
հրամայեաց լուծանել զգօտի նոցա, և ըմբռնել զա-
մենեսեան և կապանօք արկանել 'ի բանտ։ Եւ ինքն
զմտաւ ածէր, թէ որպէս կորուսցէ զնոսա չարաչար և
դառն տանջանօք. և միանգամայն ասէ, ոչ լինիցի շը-
փոթումն ինչ 'ի քաղաքացեացս կամ յաղգականաց
մանաւանդ յԵւստաւատիոսէ։ Դարձեալ ասէ. Գուցէ
տանջանս հասուցանելով նմա, նոյնպէս հրաշ աքան-
չելեաց երևեսցին, որպէս և յառաջնում նուագին. և
ոչ միայն որ քրիստոնեայքն են հաստատեսցին 'ի հա-
ւատն, այլ և զՀելլենացիս ապստամբեցուցանէ 'ի
յերկրպագութենէ աստուածոյն մերոյ։ Եւ այսպիսի

իմն խորհուրդ չարութեան հաստատեալ 'ի սրտի իւրում, որպէս զի զսուրբն Եւստրատիոս և զերանելին Ովրեստէս արձակեսցէ 'ի քաղաքն Սեբաստացւոց առ Ագրիկողայոս դատաւոր, զրեալ առ նա հանդիսական նամակ, որ ունէր օրինակ զայս.

Տեառն իմոյ գերահռչակելոյ և վսեմախոհ դատաւորի Ագրիկողայոսի 'ի Լիւսիայ դքսէ օգնականութեամբ դիցն բազմասցի ողջոյն.

Ցանբաղդատելի և զանհամեմատ և զպանծալի բընաւ իմաստիցն զծայրագոյն ողջախոհութեանց զկատարելութիւնն յարաբարդեալ 'ի տրամախոհական միտս քո վեհագոյն խոհեմութեամբ, անդր ևս քան զընդհանրականացս մակընթացութիւնս, զդիւցազնական արգասեաց զանթառամելի առոգութիւնս 'ի քեզ շառաւեղեալ, և յառաջեալ 'ի գիտութիւն յոդնահանձար իմաստիցն իրողութիւն, որպէս զի քան զբնաւս որ ընդ արեգակամբ բերին՝ գեր 'ի վերոյ գլատար. վասն որոյ և յամենայնս որ 'ի նոսա և ոչ միում ումեք զիրսն նախախնամութեան տիեզերաց հաստատեցին տնօրինել, աստուածայնագոյն և հեզահայեաց կամաց քոց զհասարակաց մակադրեցին զգիտութիւն։ Վասն զի գիտեն հաւաստի հնար գոլ առ 'ի քէն և գիշեր հանգոյն տունջեան, և 'ի հանդիսական իրողութիւն[1] անցուցանել. զի քունք մանաւանդ հաւանեցուցանեն զանքուն աստեղսն, քան եթէ զաչս քո ննջեցուցին. քանզի առ տատամնագոյնսն առանց ձանձրանալոյ զներբղձական տնտեսութեանցն տարածանես զանբաղդատելի բանիցն ճահաւորութիւն. ամենայն ուրեք խռովութեանց դադարումն 'ի քէն յառաջեալ. և գերադրական անմահից աստուածոյն արտափայլեալ հրաշափառագոյն բացատրեցաւ մակաւասարագոյն վերերևակացեալ պատիւ, զի նախ քան զմակամտածութիւնն առ 'ի քէն դիցն օգնականութիւն՝ պարունակեալ տարածանէ զբոլորն առաջի քոյոցդ իմաստագոյն խոհականութեանդ. և պարզաբար ասել, թէ ամենայն մասունք առաքինութեան յանձին քում ցուցեալ արտայայտեսցի։ Եւ արդ զինչ

1. Ա. յլ օր. իրոռիխան։

ունիմ զենաւն բացայայտել[1]. համառօտագոյն դուշ նաքեայ բանիւք ներադրելով ծանուցանեմ քում վեմագոյն հանձարեղ իմաստութեանցդ սակս առնդ այդորիկ անուանեցելոյդ Եւստռատիոս։ Քանզի յետ բազում քննութեանց, և չարաչար կրելոյ տանջանաց՝ գտի զդա խորհրդակից Դալիլեացւոց աղանդոյն, և դաւանող առասպելական կրօնից խաչելոյն Հրէի ու մեծն զոր Յիսուս անուանեն, որ 'ի նոցունց իսկ հեբրայական[2] ազգէն իւրմէ զչարագործաց մահ մեռաւ։ Այլ տեսի զայրդ զայդ և ոչ անտեղագոյն իմաստասիրական վարժեարաց[3] արհեստից, և ստադիացն 'ի մարտակցութիւն յոյժ է կրթեալ, և ծայրագոյն[4] զինուորութեան գահաւորութեան ժամանեալ. և ամենայն արհամարհ երևեալ յաչս դորա վասն չարասէր պաշտաման իւրոյ՝ անհնազանդ գոլով հրամանի ինքնակալին, և անարգող եղեալ մեծապայծառ դիցն, միանգամայն և մեհենակապուտ։ Վասն որոյ ծանուցեալ իմ զանաստուածութիւն դորա՝ բիւրապատկանագոյն տանջանօք իբրև 'ի բուս հրոյ մաշեցի զերկաթեղէն մարմին դորա, և ոչ ևս գտի 'ի դմա հնար ուղղութեան։ Եւ յետ բազում քննութեանց և հարցմանց անյոյս եղեալ 'ի դորին փրկութենէ, առաքեցի կապանօք առաջի քո տէրութեանդ, զի դու զարժան վրիժուցն անարգութեան դիցն խնդրել մարթասցես քո արդար դատաստանօքն, քաջարանցն անպարտելի հրամանացն հետևեալով։ Ողջ լեր։

Արդ առեալ այնուհետև զինուորացն զթուղթն և զսուրբն հանդերձ կապանօք՝ 'ի ձանապարհ անկանէին. և նոքա անյագական ձայնիւ հանապազորդեալ լինէին յաղօթսն Աստուծոյ զձանապարհայն։ Ապա հարցանէր երանելին Եւստռատիոս ցսուրբն Ովրեստէս, և ասէր. Եղբայր Ովրեստէ, պատմեա ինձ թէ ո՞ր օրինակաւ կատարեցաւ սուրբն Աւքսենտիոս, և կամ յո՞ր տեղւոջ։ Պատասխանի ետ սուրբն Ովրեստէս, և ասէ. Յետ հատանելոյ դքսին զվճիռ մահու 'ի վերայ սրբոյն, աղաչեաց երանելին զդահիճսն թողացուցա-

1. Մի օր. արդայայտել։
2. Մի օր. հեբրայեցական։
3. Մի օր. վարժարանաց։
4. Մի օր. 'ի ծայրագոյն։

նել զնա, զի եկեալ տեսցէ զքոյդ առաքինութիւն և ողջունեսցէ զքեզ, այլ ոչ ոք ներեաց լսել նմա, քանզի ժամ էր ճաշոյ։ Եւ փութային որովայնի ծառայքն կատարել զհրամայեալն նոցա յիշխանէ անտի. և վաղվաղակի ածին զնա մերձ 'ի ձորակ անդր, զոր մեք Լեռնոտն անուանեմք, և 'ի Ճանապարհին սկսաւ սաղմոսել և ասել. Երանեալ են ամբիծք 'ի Ճանապարհի, և ոյք գնան յօրէնս Տեառն։ Եւ 'ի կատարել սաղմոսին եհաս 'ի տեղին յայն, և անկեալ յերկիր 'ի վերայ երեսաց իւրոց՝ արտասուագոչ պաղատանօք աղօթիս մատուցանէր 'ի սրտի իւրում։ Այպա յոան կացեալ և զամէնն ասացեալ, և շուրջ հայեցեալ՝ ետես զիս զի կայի մերձ առ նա. կոչեաց զիս և պատուիրեաց ինձ խորհրդաբար և ասէ. Եղբայր Ովրեստէ, ողջունեա զերիցս երանեալ տէրն իմ Եւստռատիոս, և ասա ցնա զի աղօթս արասցէ վասն իմ, և փութանակի հասանիցէ. զի ես անձկացեալ սպասեմ նորա գալըստեանն։ Եւ ասացեալ նորա զայս՝ վաղվաղակի հատին զգլուխ նորա 'ի նմին տեղւոջ։ Եւ ոչ ոք այնուհետև 'ի հաւատացելոց իշխէր մերձենալ 'ի նշխարս նորա վասն ահի սպառնալեաց իշխանին։

Բայց երիցունք[1] վեց յԱրաւրակացւոց քաղաքէն եկեալ 'ի գիշերի գողացան զսուրբ մարմին վկային, և զգլուխ նորա ոչ գտին, և սկսան լալ դառնապէս. յայնժամ ագռաւ մի 'ի վերայ ծառոյ նստեալ զձիւբարձեալ ուժգնակի, և գնացեալ երիցունքն անդր գտին սուրբ գլուխ նորա 'ի մէջ լծորդութեան ճղոյ ծառոյն. և անձառ խնդութեամբ լցեալ, ամփոփէին առ այլ նշխարս երանելւոյն։ Զայս լուեալ երանելւոյն Եւստռատիոսի վտակք արտասուաց իջանէին յաչաց նորա. կարդայ առ Տէր Աստուած ուժգին պաղատանօք և աներկբայ յուսով. զի ըստ նմին օրինակի կատարեսցին և նոցին ընթացք նահատակութեան. և ասէ ցսուրբն Ովրեստէս. Փութասցուք գնասցուք, եղբայր իմ, որպէս զի և մեք արժանասցուք հասանել մասին ժառանգութեան նորա 'ի լոյսն միանձնաւոր։

Արդ յետ հինգ աւուր ածեալ եղեն սուրբ վկայ-

1. Յոր. Երիցունք։

քըն 'ի մայրաքաղաքն Սեբաստացւոց, և մատուցին զՀրովարտակն Լիւսիայ դքսին առաջի Ագրիկողայոսի հոգեմտնի, և հրամայեաց ընթեռնուլ։ Եւ յետ այնորիկ իբրև լուաւ զբանս հրովարտակին, հրաման ետ զինուորացն արկանել 'ի բանդ, և պնդել 'ի կոչեղս զոտս նոցա և զգուշութեամբ պահել. և 'ի վաղուեան աւուրն 'ի ծագել արեգականն հրամայեաց զթէատրոնն յօրինել 'ի մէջ քաղաքին, և նստեալ 'ի վերայ բեմին, անթիւ բազմութեանն շուրջ կալով զնովաւ։ Յայնժամ հրամայէր ածել զսուրբսն առաջի հրապարակին. և քարոզն աղաղակէր 'ի լուր ամենեցուն հրամանաւ դատաւորին և ասէր. Գրաւորական նամակքն որ առաքեցան 'ի Պարհացւոց դքսէն Լիւսիասայ, ընթերցցի դարձեալ 'ի լուր ամենայն ատենիս. և յայտնի լիցի 'ի նմանէ մակադրեալ ամբաստանութիւնքն՝ որ ինչ վասն Եւստռատիոսի էին. Եւ յորժամ ընթերցան զթուղթն 'ի մէջ ատենին, շարժեաց զգլուխ իւր անօրէնն Ագրիկողայոս, սքանչանայր ընդ իմաստութիւնն Եւստռատիոսի, և ընդ պնդութիւն հաւատոցն և արիական մարտի նորա։

Յայնժամ ասէ ցսուրբն. Ո՛վ Եւստռատիէ, մի՛ թուեսցին քեզ աստանօր դատաստանք տանջանացն առյինէն՝ զոր օրինակ տեսեր անտանօր և կրեցեր 'ի ձեռն մեծի դքսին Լիւսիայ. այլ ևս դժնդակ և չար անցս անցուցից ընդ քեզ, և 'ի մահ ևս մատնեցից զանձն քո. արդ լուր ինձ, և յառաջ քան զտանջանսն խոնարհեալ երկիր պագ մեծի աստուածոց մերոց, և հպատակ լեր հրամանաց ինքնակալին, զի պարգևս և պատիւս ընկալցիս 'ի նոցունց։ Պատասխանի ետ սուրբն Եւստռատիոս և ասէ ցդատաւորն. Ո՛վ իմաստունդ և խոհեմագոյնդ յիշխանաց, իշխե՞ն օրէնք թագաւորաց, եթէ ոչ իշխեն։ Ագրիկողայոս ասաց. Այո՛ իշխեն. քանզի և պահեալ իսկ լինի 'ի նոցանէ։ Սուրբն Եւստռատիոս ասաց. Նախ քան զամենայն պարտ է գիտել թէ ի՞նչ քեզ, և որոց ընդ քեզդ են, եթէ միայն 'ի դպրութիւնքն են գրեալ։ Ագրիկողայոս ասաց. Սակս որո՞ւ իրի այդպիսի բարբառիս, ո՛վ անմաքուր գլուխ. ո՞վ ոք հակառակ կայ օրինացն գործել գործս և անկրաւ ժպրհեալ յանդգնութեամբ հա-

մարձակեաց։ Երիցս երանելին Եւստռատիոս ասաց. Ով դատաւոր, քանզի պարունակեալ լինի յօրէնս Սեբաստիոսի կայսեր այսպէս. Բռնութիւն, ասէ, 'ի բաց լիցի յամենայն իրէ, և 'ի գործոց և 'ի բանից. բայց հաւանութիւն յամենայնի քաղաքավարեալ լիցի. քանզի պարտ է այնմ որ իշխանութեամբ լինիցի՝ զհրամայեալսն նմա գործել, կամ հաւանեցուցանել կամ հաւանել։ Եւ դարձեալ պարունակէ յետոյ փոքր ինչ նուազիս այսմիկ տանց, և ասէ այսպէս. Այլ իշխանին, ասէ, հրամայեմք զերկիւղն ընդ հեզութիւն խառնել 'ի դատելն իւրում, որպէս զի մի՛ ոմանց վասն երկիւղին առ թշնամութիւն առնել, և ոչ վասն հեզութեանն՝ հեղգութիւն առ ոմանս 'ի կիր արկանել։ Զայսոսիկ զոր ասացի իսկ, ով դատաւոր, գրեա՛լ է այսպէս եթէ ոչ։ Ագրիկողայոս ասաց. Այո։ Սուրբն Եւստռատիոս ասէ. Արդ աղաչեմ զքեզ՝ զի և այս սահմանեալ օրէնք կարգաւորութեան և առ իս պահեալ լիցի։ Ագրիկողայոս ասաց. Այո քեզ և առ ամենեսեան հաստատուն և անշարժ և մեծաւ երկիւղիւ պահել հարկաւոր եղիցի։ Սուրբն Եւստռատիոս ասէ. Ապաքէն աղաչեմ զքեզ, ով իմաստունդ 'ի դատաւորսըդ, հեզութիւն խառնեա յերկիւղ քո ըստ օրինացն, որպէս հմտագոյն գոլով քո քան զբազումն 'ի մարդկանէ, հաւանել յառաջագոյն կամ հաւանեցուցանել ըստ օրինաց դատելոյ, ապա եթէ այդպէս ոչ լիցէ՝ առանց բանից և քննութեանց և տարաձգութեան պատուհասեա, սպան, արա զոր ինչ և կամիս վաղվաղակի։ Ասէ Ագրիկողայոս. Զոր ինչ և ախորժես ասա համարձակութեամբ, և ըստ արդար դատարանիս հաւանեա քաղաքավարիլ։ Սուրբն Եւստռատիոս ասէ. Ո՞ւմ հրամայես ինձ, ով դատաւոր, երկիր պագանել, աստուածոց եթէ Աստուծոյն։ Ագրիկողայոս ասաց. Աստուծոյ և աստուածոց։ Սուրբն Եւստռատիոս ասէ. Մեծագունից և փոքունց։ Ագրիկողայոս ասաց. Այո, Արամազդայ յառաջագոյն, և Աստղոնի, և ապա Պիսիդոնի։ Սուրբն Եւստռատիոս ասէ։ Որոց մարդարէից և քարոզչաց հաւանելով, և կամ յորոց իմաստնոց գտեալ էք զնոսա երկրպագելիս գոլ։ Ագրիկողայոս ասաց. Պղատոնի, Արիստոտելի, Հեմեսի և

Հեմերոսի և այլոց իմաստնոց միաբան ընդ նոսա գը-
բեալ, որոց եթէ հմտացեալ էիր, պաշտէիր և զիշա-
տակս նոցա, ով Եւստաթիէ։

Սուրբն ասէ. Ոչ եմ անտեղեակ միում ումեք 'ի
նոցանէ, այլ ամենեցուն հմտացեալ եմ 'ի մանկու-
թենէ իմմէ. ուսեալ եմ և զերաժշտականն ամենայն,
հմուտ եմ աստեղաբաշխութեան արհեստիցն, և ոչ
հեռի յերկրաչափական գծիցն, և վարժումն թուա-
կանութեան օրէն իսկ է մեր. առաքինասէր հօր հան-
դիպեալ եմ՝ մակացու գոլով նորա արհեստագիտ
մասանց և գիտութեանց. և եթէ կամեսցիս՝ սկսցուք
նախ 'ի Պղատոնէ։ Ագրիկողայոս ասէ. Գիտեմք զՊը-
ղատոն առ Տիմէի մատենին տրամաբանութեան, 'ի
Պիւռիայ ի ջրեալ աղօթս առ աստուածն մատուցա-
նելով. թուեսցի՞ այս քեզ իմաստուն գոլ եթէ ոչ։
Սուրբն Եւստաթիոս ասէ. Յոյժ բամբասէ Պղատոն
զաստուածն քո Աբրամազդ, զի յերկրորդում մատե-
նին այսպէս գրէ. Քանզի Աստուած բարի է, թերևս
ամենայն բարեաց պատճառ, և բազմաց անպատճա-
ռելի, այսինքն չարեաց. իսկ զբարեաց զայլ և ոչ զմի
ոք պատճառ գոլ ասեմք քան եթէ զԱստուած։ Ա-
դեօք ո՞չ է պարտ ընդունել ոչ զՀեմերոս և ոչ զայլ քեր-
թողն, որք ասեն թէ Զեւս բարեաց և չարեաց պատ-
ճառ գոլ հանդիպի, զերդմանց և զհամբուրոց[1] շփոթու-
թիւնս 'ի նմանէ եղեալս զոր 'ի վերայ Աքայեցւոցն գոր-
ծեալ լինէր Պանտորոսն։ Ո՞չ սա է Զեւսն, որպէս ասէ
քերթողն, ընդ Աթենայ շաղաշարեալ բնակութեամբ.
այլ ոչ գովեսցուք և զմաքառումն աստուածոցն և ըզ-
դատաստան, զոր նոյն քերթողն ասէ լինել 'ի ձեռն
Թիմիդոսի և Աբրամազդայ, զոր միւս աստուածս կար-
ծես։ Եւ Եպիքեղոս ասէ. Եթէ Աստուած իսկ պատ-
ճառ բանաւոր մարդկան, յորժամ չարացուցանել ըզ-
հողեղէնն կամիցի. և Պղատոն՝ և ոչ զմի ոք կամի քա-
ղաքավարութեան բնակչաց, ոչ համբակի, և ոչ ծե-
րոյ՝ ասել լինչ կամ լսել վասն նորա, զի և ոչ է օրէն
Աստուծոյ՝ հօր անարգող լինել, որպէս և Զեւս՝ զոր
այժմս առ 'ի ձէնջ պաշտեցեալ լինի, զիւր հայրն ըզ-

1. Մի օր. զհամբուրիր։

Կռոնոս յերկնից յերկիր իջուցեալ, և խորտակեաց զնա և 'ի կարապ փոխարկեալ. զի այնպիսի մեռտի ապիրատ խաբանօք ապականեսցէ զկինն։ Վասն որոյ յիրաւի Պղատոն մախացեալ ընդ նմա թշնամանէ զաստուածն քո Զեւս, որպէս զի եթէ ողբովք և կանանցական մոլորութեամբ ըմբռնել Զեւս զաստուածն քո։ Ո՛վ դատաւոր, ողբա զմահն զԱկեդրոնիայ. ոչ իցէ այդ այդպէս. և կամ եթէ ոչ են գրեալ յառասպելական մատեանս ձեր այդոքիկ։ Այլ եթէ ինքն Պղատոն շարագրող իմաստութեանն ձեր հրաժարեաց գոլ ըստ այնմ, որ զերկնի և զերկրի հանգամանս որպիսութեանն քննեաց, և 'ի ծայրս բոլորակցութեան արհեստիցն հասեալ եղև, ամենայն հիգութեան առիթ զսա գոլ, ասէ, և դրսովանս յամենեցունց առ սա ձգեալ վատթարագոյն խենեշութեամբ 'ի մէջ կացուցանէ, զսորին բղջախոհական անիրաւութիւնսն, անդնդային չարահոտ տիրեալ դառնութեանն, անյագ վաւաշոտութեանն յապականութիւն ջրհեղեղեալ, զոր և հրամայեն ոչ միում ումեք 'ի մարդկանէ որ առաքինութեան փոյթ ունիցի՝ նմանողք լինել ախտից նորա, այլ մանաւանդ մեռելութիւն բացագործել ախտից, և նմանել Աստուծոյ ըստ կարողութեան մարդկան. և զիարդ կամ որպէս զոր նոքա ըմբռնեալ եղեն գործովք և անհանձար մտօք, ստորանկեալ լինիք և դուք յայնոսիկ, և զմեզ հարկէք այսօր ստայոդ ոչէիցն և ապականագործ մանկամոլիցն և դիւանուէր անշունչ պատկերացն երկիր պագանել։ Ագրիկողայոս ասաց. Ցաղագս մեծի մարդասիրութեանն իմոյ ներեմ քում յանդգնագոյն շաղակրատս բարբառելոյդ. արդ ասա և դու, ո՞ որ է այն զոր դու անուանեալ Աստուած պաշտես, և զի՞նչ է յեղանակ նորա, և որպէս մարդ գոլ երևեցաւ 'ի ինքնէ, և 'ի դատաստան մահու եկեալ, և խաչեալ 'ի հրէական ազգէն աստուած ձեզ կարծեցաւ։ Սուրբն Եւստռատիոս ասէ. Եթէ հրամայես և անձանձրութեամբ լսես, հարցցուք քննութեամբ զառաջիկայս, և յայնժամ ըստ կարգի ասացից զոր ինչ խնդրեսդ, եթէ ներեսցէ ժամանակն։

Ագրիկողայոս ասէ. Միւսանգամ ներողութիւն ըն-

կալեալ յինէն 'ի ժամու և 'ի տարաժամու, ասա զոր ինչ ախորժեսդ։ Սուրբն Եւստռատիոս ասէ. Ամենայն որ զբարին խորհիցի, պարտ և պատշաճ է Աստուած արդար վարկանիլ, անհասանելի, անքննելի, անսահման, անայլայլելի, անպատմելի, ամենայն էական զօրութեան զվերագոյն ստացեալ զաստուածային առաւելութիւնն իւր եթէ ոչ։ Ագրիկողայոս ասաց. Այդպէս կարծեմ ուղիղ գոլ, որպէս դուդ ասես։ Սուրբն Եւստռատիոս ասէ. Յաւելցուք 'ի վերայ ամենայնի զնա անապական գոլ եթէ ոչ։ Ագրիկողայոս ասաց. Առանց ամենայն պատճառանաց։ Սուրբն Եւստռատիոս ասէ. Ապա զիա՞րդ այլոց ոմանց աստուածս գոլ ասասցուք, և այնպիսի անապականութեան զնոսա ներքոյ ասասցուք հաստատեալ, թէպէտ և փոքր ինչ բարեբախտութեան հասեալ իցեն, ոչ կարծես համարել զնոսա աստուածս. զի անպակաս է Աստուած, որպէս յառաջագոյն ասացաք, զոր և ամենայն մարդկան հաւատալ և երկիր պագանել արժան է։ Ագրիկողայոս ասէ. Ստուգութեամբ այդ այդպէս իցէ։ Սուրբն Եւստռատիոս ասէ. Զիա՞րդ բաղում աստուածքն քո՝ այսորիկ անմահ և անարատ առաւելութեանս ներքոյ են բոլորովին, որպէս և դուք ասէք, և հաւասարազօր են միմեանց, որք մեկնեալ են ըստ գոյակցութեանցն։ Եւ եթէ այդպէս է՝ որք 'ի մի աստուածութիւն են աւարտեալք և զօրութեամբ և գործովք հաւասարամասնեալ, ոչ ասասցին աստուածք մեծագոյնք և նուազք. այլ Աստուած անբաղդատելի զօրութեամբ միացեալ, և զմիակամ զաստուածութիւնն ունելով՝ ոչ կարծիցին ոմն յերկինս բնակելով, և ոմն 'ի ծով, ոմն 'ի սանդարամետս. զի որք զայնպիսին ժպրհին բարբառել, վրիպեալ գտանին 'ի կենաց յուսոյն, և օտարացեալք յանբաղդատելի իսկութենէն յայնմանէ՝ որ կայ և միայ յաւիտեան. զոր և վարդապետն քո մեծ հրաշալին Պղատոնիսիոս՝ տրամադրէ յիւրում տրամաբանական մատենին, և ասէ այսպէս. Եթէ՝ Գերակատար գութս, արարչական զօրութիւնն և զընաւս տածէ մակաւասար բնութիւնն, և վերոյ կալով ամենայնիւ խնամէ, և զամենայն տեսանէ, և ինքն յումեքէ ոչ տեսանի, այլ անցեալ կայ սարա-

ւանդեալ յիւրում առանձին բարձրութիւնն։ Իսկ Հերմէս՝ մեծ շարժող զնա և տածող և անեղ կամեցաւ ասել. Եւրիպիդէս[1], անտեղի. և Հռոփոս, բարեբար և անկարօտ. և Արիստոտելէս ըստ պղատոնականին հետևիւր բանից։ Արդ եթէ իմաստունքն ձեր յաներևոյթ զօրութիւն մեծին Աստուծոյ ակնարկեցին և ասացին զնա արարիչ ամենայնի գոլ, զիարդ դուք յիմաստութիւնս անիմաստագոյն եղեալ, զոր իմաստունքն ձեր պախարակեն, և դրսավանս դիպողագոյն[2] 'ի վերայ հասուցանեն, համարձակիք զնոսա աստուածս ասել, և արարիչ երկնի և երկրի խշխէք կարդալ, և զԱբրամազդ՝ հայր աստուածոց ասէք լինել, զայն որ սպանութիւն և զապականութիւն և ըգդիւահար այլակերպութիւն և զախտս ամենայն գիջութեան չարեաց զկնի իւր թողեալ յիշատակ, հրըկէզ գոլով 'ի Կրետէս կղզւոջ անկեալ կայ, զապականութեան ժառանգեալ կատարած և տարազարդ մնացեալ 'ի վայելչութենէ։ Եւ Պիսիդոն զոր ասէք արարիչ ջրոյ և գոյացուցիչ ծովու, և զդիւաբնակն զԱպոլոնն՝ կոչէք հաւասար և հանգունակից արեգական և ոչ ամաչէք. այլ և զԴիոնեսիոս[3] զոր մայր արբեցութեան անուանէք զնա, և երկրպագէք նմա՝ նիւթախտի ցանկութեան. և զՀեփեստոս՝ պարգևիչ հրոյ ասէք լինել, և հաւանիք առասպելական և մնոտի պատմութեանց. թողում ասել զամենայն բաջաղանս չարադև խելացնորեալ[4] մարդկան գիւտս զանազան չարեաց, զորս և ոչ է պարտ ընդ միտ ածել ումեք 'ի մարդկանէ կամ ճառել առաջի պարզամիտ լսողաց։ Արդ, ով դատաւոր, եթէ հաւանեսցիս լսել որ ինչ յաղագս ճշմարտին Աստուծոյ իմոյ պատմութիւն է՝ կենսաբեր տնօրէնութեանն, կարծեմ թէ իսկոյն վըրէժխնդիր լինիցիս նմա, և առժամայն խորտակեսցես փութանակի զդիւաձոյլ պատկեր աստուածոց քոց, և զերծեալ 'ի խաւարային ժանեաց վիշապին, անկցիս յուռկան կենսաբեր աւետարանին երկնից արքային[5]։

1. Յօր. Ուրիպիդէ։
2. Մի օր. դիպողական։
3. Յօր. Դիոնէսիոս։
4. Մի օր. խելացեալ։
5. Յօր. արքայութեանն արքային։

Արդ զայս ամենայն ասացեալ երանելոյն Եւստաթիոսի առաջի դատաւորին և ամենայն հրապարակին. և առ այսոսիկ ոչ կարացեալ ամենևին պատասխանի տալ սրբոյն՝ Ագրիկողայոս դատաւորն, 'ի բազում ժամս լռեալ կայր, հազիւ ուրեմն տայր առ այնոսիկ պատասխանի, և ասէր. Ով Եւստաթիէ, զամենայն շաղփաղփանս յօգուածոց յիմարութեան անյարմար բանիցդ, զոր ուսեալ ես 'ի մանկութենէ, և ոչ կարացեալ երբէք իմանալ զօգտակար շահիցդ յիմաստնոց խրատուց, այլ զոչ պատշաճն և զվնասակարն քեզ իմացեալ, զոր երկրորդել իշխեցեր առաջի իմ, կամեցեալ առ փոքր մի քարշել զմեզ առ կրօնս քո. և զայդ ոչ իմացեալ ծանեար թէ ամենայն բանք բերանոյ քո զոր խօսեցար՝ առասպել համարեալ են առաջի աչաց իմոց։ Արդ յայսմ հետէ ոչ ևս ներէ քեզ ատեանս մեր, և հրաման ինքնակալին խօսել փնչ յաղագս Աստուծոյն քո զոր խոստացար ճառել. զի ոչ եմք բաւական զմեծաց և զաստուածայնագոյն թագաւորաց մերոց զառաքինութիւնս բամբասել, այլ յամենայնի հպատակ լինել նոցա. վասն որոյ թողեալ քո զամենայն վիպասանութիւն պատմութեանց քոց, և 'ի բաց կացեալ յընդդիմաբանութեանցդ՝ անկեալ երկիր պագ և զոհեա աստուածոց ինքնակալին. ապա եթէ ոչ՝ զփորձ առցես զևս սաստկագոյն տանջանաց զորս և ոչ երբէք տեսեալ իցես։

Սուրբն Եւստաթիոս ասէ. Զիաւրդ վայրապար և մնոտի աշխատութիւն հասուցանես մեզ բանիւք, և ոչ յառաջագոյն 'ի գործ արկանես զոր ասեսդ։ Յայնժամ անօրէնն Ագրիկողայոս հրամայեաց բերել մահիճս երկաթիս, և տարածեալ 'ի ներքոյ հուր բազում, և իբրև արտաշիկագոյն լինէին մահիճքն, և ճառագայթք փայլատականց հատանէին 'ի նմանէ, հրամայեաց զսուրբն Ովրեստէս յառաջ մատուցանել և յորսայս առնել 'ի վերայ հրացեալ մահճացն։ Ասէ դատաւորն ցսուրբն Եւստաթիոս. Ով Եւստաթիէ, ըզպատուհասն որ կայ մնայ քեզ յայսմ տեսանել, յառաջագոյն զմտաւ ածել քեզ զփորձ տանջանացդ։ Յայնժամ տարան զսուրբն Ովրեստէս մերձ 'ի հրացեալ մահիճն՝ անօրէն սպասաւորքն Ագրիկողայոսի։

Իբրև ետես սուրբն զպատրաստեալ տանջանարանսն՝ զարհուրեցաւ և զանգիտեաց յոյժ. և սկսան այլա-գունել դէմք երեսաց սրբոյն այնորիկ. և հայեցեալ՝ի սուրբն Եւստռատիոս՝ ասէ ցնա. Աղօթս արա վասն իմ, տէր Եւստռատիոս, զի տագնապին յիս միտք իմ։ Պատասխանի ետ սուրբն Եւստռատիոս, և ասէ ցնա. Մի՛ երկնչիր և մի՛ վրդովիր, և մի՛ զանգիտեր եղբայր իմ Ովբեստէ. զի տեսութիւնն միայն ունի զերկիւղն, այլ զգայութիւն և ոչ մի ինչ լինիցի քեզ, եթէ հաւատով գնասցես առ ընթացս նահատակութեանն. զի ընդ մեզ է օգնութիւն Տեառն Աստուծոյ մերոյ, փրկելով զմեզ յառժամանակեայ նեղութենէս։ Արդ մի՛ երկնչիր, այլ յիշեա զնահատակութիւն Աւքսէնտիոսի և այլ սրբոցն, և մի՛ երևեսցիս վերջին և վատթարագոյն. զի երևելիքս ժամանակեայք են, իսկ հանդերձեալքն յաւիտենականք, որ պատրաստեալ կայ և մնայ գանձ անապական՝ի Տեառնէ յուսացելոց իւրոց։

Արդ մինչդեռ զայսոսիկ ասէր սուրբն Եւստռատիոս ընդ սրբոյն Ովբեստի, անթիւ բազմութիւն շուրջ զնոքօք, այլ և արք քաղաքին Սեբաստիոյ հանդերձ կանամբք և որդւովք ժողովեալ էին՝ի տեսիլ սրբոցն, և դիզէին կուտէին մի զմիով որ ոչ գոյր թիւ. և սպասաւորքն սատանայի առաւել քան զառաւել բորբոքէին զհրատն՝ի ներքոյ մահճացն։ Յայնժամ Երանելի վկայն Քրիստոսի երթեալ մօտ առ հրացեալ մահիճն, և սկսաւ աղօթել այսպէս. Աստուած յաւիտենական, հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ապաւէն և յոյս ամենեցուն՝ որ կարգան առ քեզ՝ի նեղութեան, գթա յանարժանութիւնս իմ և հաստատուն պահեա՝ի հաւատս ճշմարտութեան որ առ քեզ, Տէր Աստուած իմ։ տուր համբերութիւն տկարացեալ մարմնոյ իմոյ, զի ոչ արհամարհես զայնոսիկ որ յուսացեալ են՝ի քեզ. զօրացո զմիտս իմ, զի անուն քո փառաւորեսցի յաւիտեանս։ Եւ ասացեալ զամենն հանդերձ երանելի վկայիսն Եւստռատիոսիւ, կնքեաց զինքն և վաղվաղակի առանց զանգիտելոյ եկեալ եկաց առաջի հրացեալ մահճացն, պարզեցաւ բոլոր մարմնով՝ի վերայ հրահոսան մեքենայիցն, ՝ի ձայն բարձր աղաղակեաց և ասէ. Տէր Յիսուս, ՝ի ձեռս քո

աւանդեմ զոգի իմ։ Եւ նոյնժամայն աւանդեաց զոգին։

Յետ այսր ամենայնի հրամայեաց դատաւորն տանել զսուրբն Եւստաթիոս կապանօք 'ի բանդ, և անդ առանձինն լինելով նորա՝ կոչեաց առ ինքն զծառայն որ էր ընդ նմա և ասէ. Երթ, որդեակ իմ, և փութանակի բերցես քարտէս այսրէն, զի գրեցից զկտակ ելից հրաժարման իմոյ, քանզի հանդերձեալ եմ և ես վաղիւկալ առաջի Աստուծոյ։ Իբրև կատարեաց զհրամայեալն, գրեաց երանելին զամենայն հանդէս նեղութեանցն՝ որ հասին 'ի վերայ նորա. և պատուիրեաց, զի զսուրբ ոսկերս նշխարաց նոցա տարցեն 'ի հայրենի բնակութիւնն իւրեանց յԱրաբակացւոց քաղաքն և դնել յայցելում[1] տեղւոջ որ կոչի Բոսռաա, հանդերձ և այլովքն՝ որ ընդ նմա կատարեցան, Ովրեստէսիւ, Մարդարիոսիւ, Աւքսենտիոսիւ, Եւգինիոսիւ. քանզի սուրբ վկայքս այսոքիկ երդմնեցուցին զսուրբն Եւստաթիոս, զի յետ վախճանի նոցա՝ մերձ առ նմա դիցին մարմինք նոցա։ Եւ զհայրենի ստացուածս նորա որ յԱրաբակացիսն էր, հրամայեր տալ 'ի սպաս պիտոյից սրբոյ վկայարանին իւրեանց. և զայլ ամենայն պաճարեղէն անդեայս և զինչս յերկուս բաժանել, զմինն բաշխել աղքատաց, և զմիւսն շնորհել քերցն իւրոց, և զծառայսն և զաղախնեայսն ազատել հանդերձ թոշակօք։ Եւ զայս այսպէս կտակ գրեալ՝ պահեցաւ զօրն զայն[2] 'ի բանտին։

Իսկ եպիսկոպոս քաղաքին Սեբաստիու յայնմ ժամանակի 'ի Թաքստի էր վասն չարաչշուկ և դառն տանջանացն։ Եկն 'ի ծածուկ 'ի գիշերի 'ի բանտ անդր, տուեալ ինչս պահապանացն, աղաչեաց զի ազդարասցէ սրբոյն Եւստաթիոսի. քանզի լուեալ էր երանելի եպիսկոպոսին վասն իմաստութեան նորա, և համբերատար ժուժկալութեան նորա և անտանելի չարչարանաց նորա, և թէ ո՛րպէս յամօթ արար զիշխանն անօրէնութեան հանդերձ աստուածովքն իւրովք։ Եւ մտեալ 'ի բանտն՝ ետես զսուրբ վկայն պրնդեալ 'ի կոճեղս, և անկեալ 'ի վերայ պարանոցի նո-

1. Մի օր. յասէլում։ 2 Մի օր. զայն օր։

րա ելայ դառնապէս, և սկսաւ համբուրել զշղթայսն որ յոտսն և 'ի ձեռս նորա։ Եւ ասէ ցնա սուրբ եպիս-կոպոսն. Երանելի ես դու, որդեակ իմ Եւստռատիէ, զի ընկալար այդպէս համբերութիւն ժուժկալութեան 'ի մարդասիրէն Աստուծոյ, և ախոյեան անպարտելի գտար ընդդիմամարտ զօրութեան թշնամւոյն, և բարձրացուցեր զսրդիւնս արդարութեան քո. միայն եթէ հասանիցես անսխալապէս 'ի նպատակ վերին յաղթանակին 'ի կոչումն Հօրն երկնաւորի, հաղորդ լինել քեզ Միածնի չարչարանաց նորա։ Արդ աղաչեմ զքեզ, որդեակ իմ, յիշեա զիս առաջի աթոռոյ Միածնին 'ի հանդիպիլն քում փառաք նմա, և մի՛ մոռանար զանարժանութիւնս իմ։ այլ հայցեա մասն ողորմութեան գտանել ինձ, և փարատել զմէգ և զխաւար հալածանաց՝ որ զմեօք շուրջ տարածեալ է. ծագել զլոյս աստուածգիտութեան 'ի սիրտս յարուցելոց 'ի վերայ մեր, շնորհելով զխաղաղութիւն աշխարհի, զի բարձրասցի եղջիւր եկեղեցւոյ սրբոյ։ Սուրբն Եւստռատիոս պատասխանի ետ և ասէ ցեպիսկոպոսն. Տէր իմ և հայր հոգևոր և վերատեսուչ հօտին Քրիստոսի, մի՛ այդպէս խորհեսցի սրբութիւնդ քո. զի և ես 'ի քէն ունիմ պէտս օգնականութեան յուղարկաւոր լինել ինձ աղօթիւք, որպէս զի արժանաւոր գտայց հասանել մասին ժառանգութեան սրբոցն 'ի լոյս։ Եւ ասաց եալ զայս նստան 'ի մէջ բանդին։ Յայնժամ սուրբն Եւստռատիոս ասաց ցեպիսկոպոսն. Քանզի հանդերձեալ եմ վաղիւն յերրորդ ժամու ելանել 'ի մարմնոյ աստի և մտանել առ Աստուած՝ առ որ անձկացեալն եմ, քանզի ծանեայ զառաջիկայն ինձ ճանապարհն 'ի ձեռն հրեշտակին որ երևեցաւ ինձ. արդ առեալ ըզկըտակս իմ ընթերցիր։ Եւ յորժամ ընթերցաւ, աղաչեաց երանելին զեպիսկոպոսն ստորագրել զթուղթն հանդերձ դասիւք կղերիկոսացն որ ընդ նմա էին, որպէս զի հաստատուն և անշարժ եղիցի. և երդմնեցոյց զեպիսկոպոսն, որպէս զի ինքն աշխատեալ տարցէ զնրշխարս նորա և զսրբոյն Ովրեստի՝ 'ի գաւառն Իւրեանց, և դիցէ որպէս հրամայեալն էր հանդերձ այլ ևս ընկերօքն 'ի նմին տեղւոջ, զոր յիշատակեալ է 'ի կտակի իւրում։ և զվարձս բարեաց ընկալցիս 'ի հասարակաց

արարչէն 'ի հանդերձեալ յաւիտենին ընդ ամենայն սուրբս։ Եւ եպիսկոպոսն խոստանայր անյապաղ կատարել զամենայն պատուիրեալսն 'ի նմանէ. և այլ ևս աղաչէր զնա երանելի վկայն, զի զսուրբ հաղորդութիւն յետին թոշակին առցէ 'ի նմանէ. քանզի ասէր, եթէ յորմէ հետէ ըմբռնեցայ 'ի կապանս՝ ոչ եմ հաղորդեալ 'ի կենարար մարմնոյ և յարենէ Որդւոյն Աստուծոյ։

Արդ այնուհետև յերկիւղածաց և 'ի պատշաճաւոր պաշտօնէից բերեալ լինէր խորհուրդն սրբութեան, և արիւն զենման կատարեալ, և մատուցեալ սուրբն Եւստռատիոս առ երանելի եպիսկոպոսն՝ ընդունէր 'ի նմանէ զերկնային մանանայն. և յանկարծակի որպէս փայլատակումն ահեղ ծագեաց 'ի բանդի անդ, և անստուեր լուսով լցեալ լինէր տունն և հոտ անուշութեան բուրեաց, և երգք հրեշտակաց 'ի նմա. և ահա ձայն լսելի լինէր յանձառ լուսոյն այնորիկ որ ասէր. Ով Եւստռատիէ, քաջ զինուոր իմ, բարիոք աշխատեցար, այսուհետև ընկալ զպսակն զոր պատրաստեալ է քեզ յինէն։ Եւ իբրև լսէին զերանելի և զերկնաւոր բարբառն, ամենեքեան անկեալք 'ի վերայ երեսաց իւրեանց, և անձառ խնդութեամբ լցեալ երկիր պագանէին Աստուծոյ, փառք 'ի բարձունս առաքելով փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ զօրացուցանել կամեցաւ զերանելի վկայն իւր։

Արդ զգիշերն ամենայն հանապազորդեալ յաղօթսն Աստուծոյ և 'ի վարդապետութիւն սրբոյ վկային հանդերձ եպիսկոպոսիւն. և իբրև այգն զառաւօտն մերկանայր, անկանէր առաջի սուրբ վկային եպիսկոպոսն, ողջունէր զսուրբ և զաստուածակիր մարմին նորա, և 'ի գուշն անկեալ առաջի Աստուծոյ հանդերձ նովաւ՝ խնդրէր այցելութիւն առնել փրկեալ ժողովրդեան իւրոյ, և դադարեցուցանել զխռովութիւն հալածանաց եկեղեցւոյ սրբոյ։ Իսկ սուրբ վկայն բուռն հարեալ զձեռանէ եպիսկոպոսին և եդեալ 'ի վերայ աչաց իւրոց համբուրէր և ասէր. Աղօթս արա վասն իմ կենդանի վկայ Քրիստոսի, և մի՛ մոռանար զգրեալն 'ի կտակին իմում։ Եւ յետ այսորիկ յարուցեալ եպիսկոպոսին, տեառնագրեալ զնա նշանաւ

խաչիւն և ասէ. Խաղաղութիւն Տեառն Աստուծոյ ե-
ղիցի ընդ ձեզ։ Եւ նոյնժամայն ել արտաքս։

Իսկ Ագրիկողայոս դատաւորն ընդ առաւօտն նստէր
'ի վերայ բեմին և հրամայէր ածել զառաջեաւ ըզ-
սուրբն Եւստռատիոս. և իբրև եկն՝ առեալ զնա մե-
կուսի յամբոխէ անտի և ասէ ցնա. Եւստռատիէ,
երդուեալ իմ 'ի փրկութիւն աստուածոցն, և վկայ է
ինձ վերատեսչութիւնք նոցա, զի յոյժ տրտմեալ եմ
վասն քո, զի ոչ առեր յանձն հաւանել հրամանաց
ինքնակալին։ Արդ վասն հանդիսական ատենիս, կեր-
պարանօք միայն 'ի տեսիլ ռամկիս խոնարհեալ երկիր
պագ աստուածոցն, և 'ի սրտի քում զհաւատսն քո
հաստատուն պահեա առ աստուածն քո, և նմա եր-
կրպագեա. զի թէ աստուած է նա, զծածուկ սրտիդ
քո տեսանէ, և լեր երանելի յաշխարհիս յայս, և մի
այդպէս զգեղեցկութիւն հասակի քո կորուսաներ
չարաչար, որ այդքան իմաստութիւն ունելով՝ գնաս
իբրև զմի ոք 'ի կորուստ մահապարտաց։ Եւ եթէ էր
ինչ հնար թեթևեցուցանել զատեան դատարանիս 'ի
վերայ քո, և ոչ զայդ ևս խնդրէի 'ի քէն։ Բայց 'ի վե-
րայ քո խանդաղատի սիրտ իմ, և ձմլին երիկամունք
իմ, և յոյժ խնայեմ և գթամ 'ի քեզ, զի զամենայն
գիշերս ցաւագին տրտմեցայ, որպէս զի և քուն մա-
նաւանդ հատաւ յաչաց իմոց։ Սուրբն Եւստռատիոս
ասէ. Ով դատաւոր, մի տրտմիր և մի տագնապիր
վասն իմ, և մի 'ի նանիր խորհրդով վրդովէս զմիտս
քո զի ոչ երբէք խորհեալ եմ ունկն դնել կորստա-
կան խրատու քո, այլ յամենայնի հաստատուն և անշ-
արժ ունիմ զհաւատս իմ որ 'ի Տէր մեր Յիսուս Քրիս-
տոս, և տանջանարանք քո յուրախութիւն համա-
րեալ է ինձ. և եթէ ոչ հաւատաս՝ դարձեալ միւս-
անգամ սկիզբն արարեալ չարչարանաց որպէս և
կամիս։

Յայնժամ Ագրիկողայոս ստրջացեալ 'ի վերայ վը-
կային՝ բազումժամն ծածկէր զերեսս իւր, որպէս զի
ամենայն ամբոխն որ շուրջ կային՝ ծանուցեալ 'ի վե-
րայ արդարոյն զխանդաղատանս նորա, զկական բար-
ձեալ ողբերգական ձայնիւ լային, և ամենայն Հելլե-
նացւոց բազմութիւնքն հանդերձ քաղաքացեօքն, և

մորմոքէին 'ի վերայ այնպիսւոյ առն իմաստնոյ։ Յայն-ժամ սուրբ վկայն մեծաբարբառ աղաղակաւ սկսաւ խօսել առաջի ատենին և ասէ. Ով Ագրիկողայէ, զի յապաղես և ոչ կատարես վաղվաղակի զՀրաման Թագաւորաց քոց և զՀաճոյս հօրն քում սատանայի. քանզի ածէ 'ի վերայ իմ զփորձութիւնս զայս, զի այդպիսի մեքենայիւք պատրանաց խափանեսցէ զիս յառաջիկայ երանութեանցն. այլ ես ծառայ եմ Աստուծոյ բարձրելոյ՝ արարողի զերկնելի և զաներևոյթ արարածս, և հակառակիմ ընդ անաստուած Հրաման ինքնակալին ձերոյ, և արհամարհեմ և հրաժարեմ 'ի չարաչար պաշտամանց աստուածոց ձերոց։

Արդ այնուհետև տեսեալ դատաւորին Ագրիկողայոսի զանխոփոխելի և զհաստատուն միտսն անյաղթ վկային Քրիստոսի, դատակնիք մահու հատանէր 'ի վերայ նորա այսպիսի օրինակաւ. Զնեստուատիոս զայր իմաստուն և զերևելի 'ի զինուորական գնդիցն, իշխանական փառօք պատուեալ յինքնակալացն, և անարգելով զպաշտօն անմահից աստուածոց մերոց, և արհամարհելով զՀրաման և զկրօնս ինքնակալացն, և ընտրելով զմահ վասն մտոտի յուսոյ խաչելոյն Յիսուսի Հրէի ումեմն [1] որ 'ի Նազարեթէ Գալիլեացւոցն էր. վասն որոյ արդարադատ օրէնքս Հռովմայեցւոց հրամայեցին 'ի ձեռն հրոյ կենդանակէզ առնել զչարաբաստ և զանբարեսէր մարմին նորա։

Եւ իբրև ընթերցան զայս առաջի բազմութեանն, առժամայն հնոցն պատրաստեալ լինէր, և ամենայն ատեանն և ալք քաղաքին ընթանային զկնի սրբոյն տեսանել զհանդէս նահատակութեան նորա։ Իսկ երանելին մերկանայր զհանդերձն յիւրմէ զոր սփածեալն էր, և առիգածաւն մերձ կացեալ առ հնոցաւն, սկսաւ աղօթել և ասել այսպէս. Որդի Աստուծոյ կենդանւոյ, օրհնեալ յամենայնի, Հօր ահաւորի անքնին ծնունդ, որ ոչ տկարանայ առ 'ի քէն և ոչինչ. գոհանամ զքէն զի զանարժանութիւնս իմ արժանի համարեցար անապական բարութեանց քոց. մեծացուցանելով մեծացուցանեմ զքեզ, Տէր ամենակալ, և

1. Մի օր. ումեմն։

մեծացիր Տէր Յիսուս 'ի մարմնի իմում և յոգւոջս, զի հայեցար 'ի խոնարհութիւնս իմ, և ոչ մատնեցեր զիս 'ի ձեռս նեղչաց իմոց, և կեցուցեր զիս ողորմութեամբ քով և փրկեցեր 'ի վշտաց զանձն իմ, և ծածկեցեր զիս ընդ հովանեաւ թևոց քոց. եկեսցէ 'ի վերայ իմ գթութիւն քո, Տէր, զի աղքատացայ յոյժ, զի խռովեցաւ անձն իմ յելանել ոգւոյ 'ի մարմնոյ աստի. մի՛ երբէք խորհուրդք չարք հակառակորդին տիրեսցեն 'ի վերայ իմ, և արգելցեն զիս 'ի խաւարն արտաքին, վասն յանցանացս իմոց 'ի կեանս յայսոսիկ։ Ողորմեա ինձ, Տէր, և մի՛ մատներ զանձն իմ դժոխոց[1], և մի՛ տացես ինձ տեսանել զխարդաւանող երեսս բանսարկուին, այլ ընկալցին զիս հրեշտակք քո զուարթացեալք և լուսաւորեալք։ Տուր, Տէր, փառս անուանդ քո սրբոյ և զօրութեամբդ քո կեցո զիս, և կացո զիս ընդ աջմէ աստուածային քո բեմիդ 'ի դատէն զիս. մի՛ մերձեսցի յիս ձեռն իշխանի աշխարհիս այսորիկ ձգել զիս 'ի խորս անդնդոց, քանզի մարմնաւոր չարչարանքս որ հասին 'ի վերայ իմ՝ ուրախութիւն և ցնծութիւն եղև ծառայիս քո։ Ողորմեա ինձ, Տէր Աստուած, շաղախեալ մեղօք անձին իմոյ 'ի կեանս յայսոսիկ, և մաքուր ընկալցիս. զի կեաղն ինձ քև է, և մեռանելն վասն անուանդ քո փառաւորելոյ՝ անապական գանձուց և անկողոպտելի մեծութիւն ստացուածոց։ Աստուած Ճշմարտութեան և հայր ողորմութեան, և հոգի բարութեան և զօրութեան և իմաստութեան, գոհանամ զքէն՝ խաղաղութեան նաւահանգիստ, որ ծփեալ եմ յանդնդապտոյտ յորձանս ծովու մեղայ կենցաղոյս պատրանօք յաւիտենից, առ քեզ կարդամ և խնդրեմ 'ի քէն, տուր համբերութիւն 'ի նեղութեանս, զի յաղթեցից բանսարկուին, զի դու ես Աստուած Ճշմարիտ, որ զբանն կենաց տարածեցեր յաշխարհի, և հալածեցեր զմրրիկ անօրէնութեան, և զարդարութիւն քո ծագեցեր առ իս, որ միշտ ապրեցուցանես զյուսացեալսն 'ի քեզ. տուր ինձ արժանապէս նահատակելով առաջի քո՝ արժանանալ յաւիտենական կենացն, և որք հաւատով կատարեն

1. Մի օր. 'ի դժոխս։

դիշատակս մեր, և յիշեսցին զմեզ 'ի նեղութեան, կարդալով առ քեզ, Տէր Աստուած մեր, 'ի բարեխօսութիւն անձանց իւրեանց, դու որպէս բարերար Աստուած և մարդասէր լուիցես և փրկեսցես զնոսա յամենայն նեղութեանց և 'ի վտանգից նոցա հոգւոյ և մարմնոյ, և մի թողուր 'ի ձեռանէ քումմէ զեկեղեցի քո սուրբ։ Ընկալ և զոգի իմ խաղաղութեամբ ընդ ամենայն սուրբս քո, և քեզ փառք յաւիտեանս։

Եւ յորժամ ասաց զամէնն, ձայն եղեւ յերկնից ասելով. Եղիցին խնդրուածք քո։ Եւ նոյնժամայն կընքեաց զինքն նշանաւ սուրբ խաչիւն և եմուտ 'ի մէջ հնոցին, և հուրն բորբոքեալ առագաստաձև շուրջ պատէր զմարմնով երանելի վկային. և բոցն բարձրացեալ 'ի բարձունս ելանէր, և այնպէս կենդանախաւրոյկ լեալ 'ի մէջ հրոյն վկային Քրիստոսի հանդերձ օրհնութեամբ, աւանդեաց զհոգին. և տեսին՝ զորս արժանիս արար Տէր՝ զհոգի սրբոյն իբրև զՀառագայթ փայլատականց լուսոյ փայլեալ ելանէր 'ի բարձունս։

Իսկ յետ կատարման վկային՝ անօրէնն Ագրիկոզայոս յարուցեալ գնաց յապարանս իւր, և խրախութիւն մեծ արարեալ՝ ընթրիս տայր բարեկամաց իւրոց, քաջութիւն մեծ համարելով զգործն զոր գործեաց, և ամենայն ամբոխ քաղաքին սփռեցան յիւրաքանչիւր տեղիս. և ոչ ոք իշխէր մերձենալ և ձեռն արկանել 'ի նշխարք սրբոյն յաղագս սպառնալեաց դատաւորին։

Իսկ եպիսկոպոս քաղաքին որում անուն էր Պետրոս, առեալ ընդ իւր արս երկիւղածս 'ի ժառանգաւորաց եկեղեցւոյն, եկեալ 'ի գիշերի ամփոփեաց զնշխարս սրբոց վկայիցն զՈվրեստին և զԵւստռատիոսին, և եդեալ 'ի փայտեղէն արկղագործ տապանին պահէր ժամանակս ինչ. և ապա ինքնին բարձեալ տանէր 'ի հայրենի գաւառն իւրեանց յԱրաւրակացւոց քաղաքին, և փոխեաց 'ի Հանգիստ 'ի տեղւոջն՝ զոր սրբոյ վկային նշանակեալ էր 'ի կտակի անդ իւրում։ Իսկ յետ դադարման հալածանացն շինեաց վկայարանս 'ի վերայ հանգստարանի սրբոցն հնգեցունց, անյաղթ վկայիցն Քրիստոսի, Աւքսենտիոսի, Մարդա-

ըիոսի, Եւգինիոսի, Ովբեատի և մեծին Եւստրա-
տիոսի։

Մեծապայծառ խնդութեամբ և փառաւորեալ
հանդիսիւ սմ յամէ կատարի օր յիշատակի նոցա
յերեքտասանեորդի յամսեանն դեկտեմբերի։ Ի թա-
գաւորութեանն Դիոկղետիանոսի, և 'ի մեզ թագա-
ւորելոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընկալան
զանեղծութեան և զանապականութեան պսակն.
որում վայել է փառք իշխանութիւն և պատիւ, ընդ
Հօր և Հոգւոյն սրբոյ յաւիտենից յաւիտեանս.
ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյ Եփիմիայ կուսին, և քառասուն և իւնուց վկայից Քրիստոսի։

Ի քաղաքին Քաղկեդոնացւոց եկեալ Պրիսկոս Անթիւպատոսն 'ի ժամանակս ամպարիշտ թագաւորին Դիոկղետիանոսի, զի զորս միանգամ գտցէ[1] անդ 'ի քրիստոնէից՝ չարաչար տանջանօք բարձցէ 'ի միջոյ. և էին յայնմ քաղաքի ժողովեալ յոյժ բազմութիւն քրիստոնէից։ Այլ և իշխանն Պրիսկոս ունէր զոմն բարեկամ յամպարշտաց քաղաքացւոցն, որում անուն էր Ապելլիանոս ժանդաբարոյ և ապարատան յոյժ, որ հանապազ դեգերեալ լինէր առ մնոտի դիսն անուանեալ աստուածոյն, մանաւանդ փարէր առ պատկերն Արեսի, և էր արուեստիւ սոփեստէս։ Սա չարախօս եղև առ իշխանն Պրիսկոս վասն քրիստոնէից և ասէ. Յուշ լիցի քոյդ յաջորդութեան, ով Անթիւպատէ[2], զի ամենեցուն մեզ պարտ է ըստ հրամանաց ինքնակալացն աւանդութեանցն զոհ մատուցանել աստուածոյն, մանաւանդ մեծի աստուածոյն Արեսի։ Եւ հաճոյ թուեցաւ բանս այս Անթիւպատոսին[3], առ 'ի կործանումն թուլացելոցն 'ի բարձրութենէ հաստատուն հաւատոյն. ուստի և տախտակ գրեալ հրա-

1. Մի օր. ըմբռնէսցէ։
2. Մի օր. Ն ասէ. Ով քաջ իմաստնագոյն Անթիւպատք, փիղոսոփիան լիցի քոյդդ յաջորդութեան, զի ...
3. Մի օր. Ն յայնժամ ընդունէցաւ բանս այս Անթիւպատոսին ... առ 'ի յորժանումն ընդլայտիս մարդկան յորոմելոյ. ուստի։

մայէր գնել 'ի նշանաւոր տեղւոջ 'ի քաղաքամիջի անդ. և էր պատՃէն յառաջագրելոյն այսպիսի օրինակաւ. Աղաչեալք, բնակիչք քաղաքիդ Բաղկեդովնացւոյն, գիտութիւն լիցի ձեզ ամենեցուն, որպէս զՀրաման ինքնակալ[1] Թագաւորաց մերոց պահելով, բողոքեմք ձեզ ամենեցուն զայս ինչ, որպէս զի մաքրելով զանձինս ձեր աւուրս ութ զոհս մատուցանել մեծի աստուածոյն Արեսի[2]. ապա եթէ գտցի ոք անհաւան մերոց օրինաց և առ այլ ինչ կրօնս փոխիցի, չարաչար պատուհասեալ զայնպիսիսն կորուսցուք[3]: Եւ է նշանակ հրաւիրակի կոչմանն այսպիսի օրինակաւ. զի յորում ժամու փողն հնչէ, ամենեքեան միանգամայն համագումար 'ի տաճար աստուածոյն Արեսի ժողովեսջիք յօժարութեամբ զոհ մատուցանել, և հաշտեցուցանել զանմահ դիս աստուածոյն: Իսկ անօրէնն Աղեքսիանոս հանապազ հոգ 'ի մտի եդեալ, գիտել և քննել յիւրաքանչիւր ժամու և յաւուր, զի այնպէս գտանիցէ զոմանս անհաւանեալ աւանդութեան[4] Թագաւորայն. և որպէս շուն զողանջելով յարձակէր 'ի վերայ նոցա:

Աղդ 'ի հասանել կիտին եդելոյ, գոչէր փողն ողբ ինչ[5] ողբերգական, 'ի միասին կոչելով զայնոսիկ առ հասարակ որ մնոտի յուսոյն զՀետ երթեալ էին[6]: Եւ էին այնոքիկ որ հաւատացեալք էին 'ի Տէր մեր Յիսուս Քրիստոս, 'ի փոքր ինչ տնիկ փակեալք[7] և Թաքուցեալք, հանապազորդեալ յաղօթս և 'ի ժուժկալութիւն: Էր ընդ նոսա սրբուհի վկայն Եփիմիա միշտ ցանկորդեալ յաղօթսն, գուստր գոլով նա առն ումեմն 'ի պատուաւորաց սինկղիտոսացն, և մօր Թէոդոսիանէ[8], կնոջ բարեպաշտի՝ որ բազում ողորմութիւն առնէր 'ի ժողովրդեանն, ակն ունելով վարձուց երկնաւոր[9] հատուցմանցն: Իսկ Աղեքսիանոս չարին գոր-

1. Մի օր. Քարէնդոնէացոյոն... որպէս զի զերամանս ինգնակալաց մերոց Բաղքաւորաց...:
2. Մի օր. զոհս մատուցուք անմահ ասպուածոյն Արէսի:
3. Մի օր. լարալար քանջանօք պարտահասեալ զնա խորտից:
4. Մի օր. աւանդէն:
5. Մի օր. գոչէր փողն էրգէն ողբերգական:
6. Մի օր. էրնային:
7. Մի օր. 'ի գոգրի ինչ փնի պարքաղեալ:
8. Մի օր. Դիոդոսիանէ:
9. Մի օր. էրնային:

ծանեայն ասէ ցԱնթիւպատոսն. Անթիւպատէ, են արք ոմանք 'ի տան ուրեմն Թաքուցեալք, որք ոչ արտադրութեան[1] Թագաւորացն և ոչ հրամանի քում կամին անսալ. և եթէ ներողութիւն լիցի այսմ իրաց 'ի քէն՝ բազումք 'ի բաց կան 'ի զՍՀելոյ աստուածոյն[2], և յարեսցին առ նոսա, և ընծայք[3] և պաշտամունք մեր արհամարհանօք անարգեսցին։ Զայս լուեալ Անթիւպատոսին յանաստուած բերանոյ նորա, հրամայեաց ածել զնոսա զառաջեաւ. և իբրև ածին զնոսա առաջի իշխանին, էր 'ի մէջ սրբոցն այնոցիկ սուրբն Եփիմիա, ուրախալից դիմօք և պարկեշտ[4] զարդարմամբ առաւել քան զամենեսեան որ էին ընդ սրբոյն[5]։ Յայնժամ Անթիւպատոսն ասէ ցնոսա. Յոյժ զարմացեալ եմ ընդ իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ, տեսանելով զյօժարութիւն ընթացից հանդիսիդ, և զգեղեցկութիւն հասակի մարմնոյ ձերոյ, վասն որոյ խրատ տամ հպատակ լինել հրամանաց ինքնակալին և վայելել 'ի զՍՀս աստուածոյն. և ես ծանուցից զայս Թագաւորին, և զդատաւորական իշխանութիւնն ընձեռեցէք։

Զայսոսիկ լուեալ սրբոյ վկայիցն, և փոփոխեալ զարտմութեան դէմս[6] իւրեանց, լի եղեն աստուածային ուրախութեամբն, և զսուրբն Եփիմիա 'ի միջի[7] բերելով՝ իբրև զպարս հրեշտակաց համարձակութեամբ պատասխանի ետուն միաբան և ասեն. Մեք, ո՛վ Անթիւպատէ, զինուորեալ եմք մերում Թագաւորին Քրիստոսի, և փութամք 'ի հաւատս զոր աւանդեաց մեզ մինչև ցվախճան հաստատուն մնալ, զի հանդիպեսցուք անսուտ խոստմանցն որ ասէ. Ծառայ բարի և հաւատարիմ, որ 'ի սակաւուդ հաւատարիմ եղեր՝ 'ի վերայ բազմաց կացուցից զքեզ։ Եւ դու Անթիւպատէ, ոչ ես անտեղեակ եթէ իւրաքանչիւր ոք յայնցանէ որոց զիշխանութիւնն հաւատան՝ փութան գոհանալ զայնմանէ՝ որ պարգևեաց նոցա[8] զայն, զի առա-

1. Մի օր. արքայագրոմնէանց նաւգաստորին։
2. Մի օր. 'ի զՍՀից մեծ աստուածոյն։
3. Մի օր. զՍՀք։
4. Մի օր. պայծառ։
5. Մի օր. որք էին հանդիսիցն նոքա։
6. Մի օր. պարգևոմնիանս դիմաց իւրեանց։
7. Մի օր. 'ի մէջ իւրեանց։
8. Մի օր. հաւատացաց նմա զայն։

ւել մեծագունի պատուոյ հանդիպեսցին։ Արդ՝ եթէ այնպիսիքն ապականացուք գոլով, և ապականացու տերանց ծառայելով, խնդրեն[1] զառժամանակեայ և անցաւոր պատիւն, ոչչափ ևս առաւել մեք պարտիմք փութալ, զի զխոստացեալ զանապական և զյաւիտեանական փառսն ժառանգեսցուք, որ կայ և մնայ յաւիտեանս յաւիտենից[2]։ Արդ զոր ինչ առնելոց ես՝ արա վաղվաղակի, զի մեք պատրաստ եմք առ ամենայն տեսակ տանջանաց քոց։ Իսկ Պրիսկոս Անթիւպատոսն 'ի միւս կողմն դարձուցեալ զերեսս իւր 'ի նոցանէ, և հրամայեաց դահճացն տանջել զնոսա չարաչար տանջանօք[3]։

Իսկ նոքա 'ի տանջանսն գոհանային զԱստուծոյ և քաջալերէին զմիմեանս, հաստատելով 'ի համբերութիւն նահատակութեան. և զերանելի կոյսն Եփիմիա յորդորէին 'ի խոստացեալ բրաբիոնն Քրիստոսի։ Եւ նա ուրախ լինելով իբրև յազնիւ ընթրիս հրաւիրեալ, և իմաստութեամբ լցեալ[4], զի ընդ անմահ փեսային մտցէ յառագաստ լուսոյ անշէջ լապտերօքն ընդ իմաստուն[5] կուսանացն։ Արդ յետ լման աւուրցն ինն և տասանցն՝ մեծի նահատակութեան սրբոց վկայիցն, էին 'ի քանտին անսուաղ[6], կերակրեալք 'ի շնորհաց Հոգւոյն սրբոյ. և 'ի քսանեերորդում աւուրն, Անթիւպատոսն Պրիսկոս խորհուրդ արարեալ ընդ ամպարշտին Ապելլիանոսին[7], այնմ՝ որ զմիտսն ըստնմանութեան անուանն էր ստացեալ, հրամայէր 'ի հարց և 'ի փորձ դատաստանին[8] զսուրբսն կացուցանել։ Այնուհետև ածեալ լինէին երանելի վկայքն Աստուծոյ, ձեռս յետս կապեալք և շղթայիւք պարաւանդեալ պարանոցք նոցա[9]։ Յայնժամ ելեալ նստաւ ամպարիշտ իշխանն Պրիսկոս 'ի վերայ բարձր բեմին, և հրամայեաց զառաջեաւ ածել զսուրբսն[10]. և իբրև ածին ըզ-

1. Մի օր. ապականացու գոլով ընդրէն զառժամանակեայ։
2. Մի օր. 'ի յԷանս յաւիտենից։
3. Մի օր. հարուածովք։
4. Մի օր. հրաւիրելով և հաւատով պարդարեալ և իմաստութեամբ լցեալ։
5. Մի օր. ընդ հնգեակ իմաստունս։
6. Մի օր. մեծ նահապահութեամբ էին սուրբ վկայքն 'ի բանդին, և լինէին ներսիրեալ։
7. Մի օր. Ապելլիանոսի։
8. Մի օր. դատաւորին։
9. Մի օր. ղղեալք պարաւանդեալ զպարանոցս նոցա։
10. Մի օր. առաջի կացուցանել զսուրբ վկայսն Քրիստոսի։

նոսա մերձ առ բեմքն, և էր 'ի մէջ նոցա սուրբն Եփիմիա, որպէս զլՀոգ լուսաւոր և իբրև զղամբար պայծառ փայլեալ Ճառագայթիւք [1]. Հարցանէր զնոսա Անթիւպատոն ասելով. Ասացէք ինձ, ով պատանիք, որք զփորձ առիք յառաջակայ տանջանացն, թէ արդեօք դարձա՞յք [2] 'ի յամառութենէ ձերմէ, առ 'ի զՀս մատուցանել մեծին աստուածոյն Արեսի [3], եթէ տակաւին 'ի նոյն միտս պնդեալ կայք։ Եւ նոքա պատասխանի ետուն միաբան միաբարբառ ընդ մի բերան հանդերձ նահատակազգեցուն Եփիմիաւ [4], և ասեն. Ո՛վ Անթիւպատէ, մինչև ցե՞րբ յամառեալ կաս [5] 'ի մոլորութեանդ, և ոչ Ճանաչես զզօրութիւն Աստուծոյն մերոյ, որ արար զերկինս և զերկիր։ Յայնժամ Պրիսկոս ասէ ցպաշտօնեայս ամբարշտութեանն [6]. Հարէք զդոսա միանգամ չարաչար տանջանօք, և ասացէք հաւանել [7] հրամանաց ինքնակալին և զՀել աստուածոյն։ Եւ սպասաւորքն վաղվաղակի առնէին զՀրամանն բռնաւորին. և 'ի կուփելն նոցա զերեսս սրբոցն [8], յոյժ պայծառանային դէմք նոցա, և արբանեակք չարին տկարացեալք 'ի տանջելն իբրև մեռեալք լինէին։ Իսկ Ադելլիանոս խորհրդակիցն բանսարկուին, որ զսպառազինութիւն չարին զգեցեալ էր, ասէ ցԱնթիւպատոն. Պատուհասելով զդոսա առաքեսցուք առ Թագաւորն։ Եւ հաՃոյ Թուեցաւ բանս այս Անթիւպատոսին և որոց ընդ նմա էին։ Եւ հրամայեաց արկանել զնոսա 'ի բանդ 'ի դղեակ բերդին, մինչև առաքեսցէ զնոսա առ Թագաւորն։

Էին արք Թուով քառասուն և ինն, որպէս զի [9] լինելով նոցա հանդերձ սուրբ կուսիւն յիսուն։ Եւ տարեալ զնոսա 'ի բանդն, եկն յընթացս ինքնին [10] Անթիւպատոսն իբրև աւազակ իմն և կամ գայլ յափշտակող. և 'ի բաց մեկնեաց զսրբուհին Եփիմիա յայլոց

1. Մի օր. պայծառաֆայլ։
2. Մի օր. դգաստացայք։
3. Մի օր. զՀել մեծի աստուածոյն Արէսի։
4. Մի օր. ԵՒ նոքա պատասխանի էին միաբան ընդ մի բերան հանդերձ նահատակազգեցուն Եփիմիաւ։
5. Մի օր. ճառ։
6. Մի օր. ցպաշտօնեայս իւր։
7. Մի օր. առնէք ի հաւանէցարբ... ի հրամանէ։
8. Մի օր. 'ի խոֆհարեալ երեսացն։
9. Մի օր. որպէս զի... խոսիւն Եփիմիաւ։
10. Մի օր. ընդառաջեալ։

սրբոցն, կարծեցեալ որպէս զինքն զնա գործարան չարին։ Իսկ քրիստոսասէրն այն վկայ զաչս յերկինս համբարձեալ ասէր. Օգնեա ինձ Քրիստոս, որդի Աստուծոյ միտնչենաւորի Հօր էակից, որ արարեր զերկինս և զերկիր, և որ 'ի նոսա արարածք են. զի յոյս իմ դու ես Տէր իմ, մի՛ շինցի ջահ կուսութեան իմոյ, և մի՛ կորիցեն հաւատք յուսոյ իմոյ՝ որ 'ի քեզ, զոր անարատ պահեցի 'ի մանկութենէ իմմէ։ Եւ իշխանին [1] լուեալ զայսոսիկ ասէ ցնա. Պատուեա զանձն քո, և զոր պատշաճէ քեզ՝ ըստ ազգի զպատիւն մի՛ կորուսաներ [2]. զի թէպէտ և սասանեցար և խաբեցար իբրև զկին, յայսմ հետէ զղջացեալ զոհեա աստուածոցն։ Իսկ աղախինն Քրիստոսի ասէ ցնա. Մեք ոչ բնութեամբ մարմնոյ տկարութեամբ պատուիլ փութամք, այլ արիական ճգնութեամբ 'ի նահատակութեանս՝ ջանամք ընտիրք և քաջք երևել [3]. վասն որոյ իբրև զիմաստուն և զքաջ ախոյեան պատրաստ կամ առաջի քո, զի յաղթեցիս քեզ և հօր քում սատանայի, և հանդիպեցայց անսուտ խոստմանց հարցն մերոց։

Ցայնժամ անօրէն իշխանն 'ի ցասումն սրտմտութեան բորբոքեալ, զի 'ի ձեռն կնոջ յաղթահարեալ եղև, և հրամայեաց դահճացն գործարանս չարչարանաց կազմել անուանձև, և զսուրբ վկայն 'ի մէջ անուցցն արկանել, զի 'ի հոլովելն վաղվաղակի աւանդեսցէ զոգին։ Իսկ երանելին հեղուսեալ լինէր 'ի վերայ անուոցն, և զկնիքն Քրիստոսի արարեալ յինքեան՝ [4] ասէ. Ո՛վ, որպէս նատեալ է Պրիսկոս թշնամին ճշմարտութեան և մշակն անօրէնութեան հնարաւորել զհրապոյրս [5] չարին՝ շարժեալ 'ի չարէն, և ընդդէմ բարեպաշտացն, կարծելով կորուսանել զնոսա. և դարձեալ յաւելեալ սուրբ վկայն ասէ ցնա. Թշնամի չարագործ և նենգաւոր, հաւատա ինձ, զի ոչ մերձենայ յանդամն մարմնոյ իմոյ գործարանք չարարուեստութեանդ քո, և ոչ զգացի ամենևին տանջանացս. զի օգնական ունիմ զՔրիստոս, յոլով վաստակօք զնա-

1. Մի օր. Պրիսկոսի։
2. Մի օր. Ե՛ զոր պատշաճէալ է քեզ ըստ ազգի զպատիւն։
3. Մի օր. այլ արիութեամբ 'ի նահատակութեան զանձինս։
4. Մի օր. յոնդին իւրում։
5. Մի օր. հնարաւորել զնոսա չարին։

հատակութեան իմոյ զհամբերութիւն հաստատուն պահել։ Եւ նորա զայսոսիկ ասացեալ, պաշտօնեայք բռնաւորին շրջէին զանիւն. և ամենայն անդամք մարմնոյ սրբոյ վկային քանցեալ մերկանային յոսկերացն 'ի սաստիկ և 'ի չարաչար տանջանացն։ Իսկ 'ի տանջանսն սկսաւ աղօթել գոհանալով զԱստուծոյ և ասել այսպէս. Տէր Յիսուս Քրիստոս, որ ապաւէնդ ես ամենեցուն որ կարդան առ քեզ. լոյսդ ճշմարտութեան և տէրդ ողորմութեան, դու գթա յիս, զի ոչ արհամարհես զայնոսիկ՝ որք 'ի նեղութեան իւրեանց աղաղակեն առ քեզ. հայեաց յաղախինս քո և 'ի բաց յափշտակեա զնս 'ի բարիատեաց բանսարկուին կորբատենէ. և 'ի սպառնալեաց անմաքուր և ամպարիշտ Պրիսկոսի։ Եւ յասել նորա զայսոսիկ, վաղվաղակի ի ջեալ յերկնից հրեշտակ՝ եբեկ զգործարան անուռոյն[1], և զդահիճսն ելոյծ 'ի զօրութենէ. որպէս զի յերկիւղէ ահի երկնաւոր զօրացն լինելով նոցա գունատեալք և պարտասեալք դիմաք։ Եւ ելեալ երանելւոյ վկային անարատ 'ի մեքենայիցն երևելով առաջի բազմութեանն զուարթ և պայծառ, իբր թէ չիցէ կրեալ չարչարանս ինչ։ Եւ ասէ Անթիւպատոսն. Երդուեալ իմ 'ի փրկութիւն աստուածոյն և 'ի բախտ ինքնակալին, եթէ ոչ զոհեացես մեծի աստուածոյն Արեսի, հրով վատնեցից զքեզ, զի ծանիցես թէ ոչ օգնեսցէ քեզ աստուածն քո՝ զոր պաշտես։ Սուրբն ասէ. Հրով սպառնաս ինձ, այնմ՝ որ առ սակաւ ինչ վառեալ բորբոքի և վաղվաղակի շիջանի. այլ ոչ եմ ես անարիադոյն այդպէս, զի երկեայց 'ի սպառնալեաց քոց, այլ առ ոմն կոխեցից զդռռողութիւն քո, երդուեալ իմ 'ի ջանս նահատակութեան բարեպաշտ վկայիցն Քրիստոսի, թէ մինչև 'ի վախճան հաստատուն պահեցից զընթացս հաւատոց իմոց, զի արժանաւոր գտայց անվախճան ուրախութեանցն[2], և ընդ նոսին վայելեցից յանպատում կեանսն 'ի Քրիստոս Յիսուս։

Յայնժամ զարհուրեալ Անթիւպատոսն, և բորբոքեալ 'ի սրտմտութիւն[3], հրամայեաց վառել հնոց

1. Մի օր. հրշյակ... անուռոյն։
2. Մի օր. երանութիւնցն։
3. Մի օր. 'ի սրտմտութենէն։

հրոյ բազմապատիկ, մինչև յոյժ բարձրացեալ ցոլա-
նայր բոցն, և զսուրբն արկանել 'ի հուրն. և սպասա-
ւորքն բռնաւորին կատարէին զհրամայեալսն։ Եւ կա-
ցեալ երանելւոյն մերձ 'ի հնոցն զուարթ երեսօք և
ամբողջ մարմնով, ասէ. Օրհնեալ ես Տէր Աստուած,
որ 'ի բարձունս բնակեալդ ես և զխոնարհս տեսանես,
զոր փառաւորեն հրեշտակք և ամենայն զօրութիւնք
երկնից. առ քեզ կարդամ, օգնեա ինձ քով բարերա-
րութեամբ, և կնքեա զօրութեամբ սուրբ Հոգւոյդ, և
ցոյց չարախորհին[1] և քրիստոսատեցին Պրիսկոսի, ե-
թէ դու ես Աստուած որ առաքեցեր զհրեշտակն առ
երիս մանկունսն 'ի Բաբելոնի, և շինջուցեր զբոց հնո-
ցին. և այժմ հայեաց յիս 'ի տառապեալս և առաքեա
զօգնութիւն քո և փրկեա զիս 'ի բերանոյ առիւծու և
'ի ձեռաց որսողին և 'ի սպառնալեաց Անթիւպատոսին,
զի անուն քո ահաւոր և փառաւորեալ է յաւիտեան։
Եւ ասացեալ նորա զայսոսիկ, հրամայեաց Անթիւպա-
տոսն պաշտօնէից իւրոց գօտի ածել նմա ընդ մէջն.
և իբրև արարին զասացեալսն, յայնժամ ըմբռնել հրա-
մայեաց և արկանել զնա 'ի հնոց հրոյն։ Եւ մի ոմն 'ի
սպասաւորացն որում անուն էր Սոսթենէս, ունելով
սուսեր ընդ մէջ, եկն եկաց առաջի իշխանին և ասէ
ցնա. Հրամայեա ինձ, ով Անթիւպատէ, որովս այսուիկ
հարկանել զանձն իմ։ քանզի անհնարին է ինձ մնել
զձեռս իմ 'ի սուրբ վկայուհիդ յայդ, զի տեսանեմ
յանդիման առաջի աչաց իմոց զարս պայծառազգեաս-
տրս[2] սպաս ունելով դմա։ Նոյնպէս և այլ ոմն 'ի զի-
նուորաց, որոյ անուն էր Բեկտորիանոս[3], անծանօթ
գոլով գիտութեան ճշմարտութեան, լուծեալ զգօտի
իւր՝ ասէ ցիշխանն. Աղաչեմ զքեզ, Անթիւպատէ, ա-
զատեա զիս 'ի հարկէս յայսմանէ, քանզի ծանր է
ինձ հպել 'ի սուրբ վկայս. քանզի տեսանեմ աչօք ի-
մովք մերձ առ ափն հնոցին արս ոմանս որ կան և ցրուեն
զհուր հնոցին սպառնալով, և անարատ պահեալ ըզ-
սուրբ վկայն Քրիստոսի։ Եւ Անթիւպատոսն հրամա-
յեաց զնոսա պահել, և այլոց ոմանց պաշտօնէից գալ, և

1. Մի օր. չարախօսին։ փխ։
2. Մի օր. զարդ պայծառազգեաս-
3. Մի օր. Բեկտորիոս։

հանդերձ նոքօք բարբարոսի ումեմն որում անուն էր Կայսր, ըմբռնել զսուրբ նահատակն[1] և արկանել 'ի հնոցն։ Եւ իբրև ընկեցին 'ի մէջ հրոյն՝ ընկալեալ լինէին զնա աստուածութեանն պաշտօնեայք լուսազգած[2] հրեշտակքն խաղաղութեան, ցրելով զհուր հնոցին, և զմի 'ի սպասաւորաց անօրէն իշխանին Պրիսկոսի զանուանեալն Կայսր սատակեաց հուրն։ Եւ կայսր 'ի մէջ հնոցին երանելին իբրև յարքունական ապարանս, պարկեշտն գեղեցկութեամբ տեսանելով զթագաւորն, և տարածեալ զձեռս իւր ասէ. Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց, որ անյիշաչար աստուածութեամբն քո ոչ անտես արարեր զաղախին քո, որ զբան[3] Ճշմարտութեան տարածեցեր ընդ ամենայն տիեզերս, և զհաւատս Ճշմարտութեան ընդարձակեցեր, և հալածեցեր զմրրիկ անօրէնութեան, որ և զարդարութիւն քո ծագեցեր առ իս, և Հոգւովդ քո սրբով որոշեցեր զանձն իմ 'ի խաւարէն, և միշտ ապրեցուցանես զյուսացեալս 'ի քեզ։ Տուր ինձ արժանապէս առաջի քո նահատակելով և արժանի լինել յաւիտենական կենացդ։ Եւ զայս ասացեալ 'ի հնոցէ անտի՝ յանձն առնելով Տեառն զպաշտօնեայս բարեպաշտութեան։ Դարձեալ հրամայեաց Անթիոպատոսն գնել զնոսա 'ի բանտի. Զի ցուցից, ասէ, զմա զզօրութիւն աստուածոցն, ոչ հայհոյել այլ հնազանդ լինել հրամանի ինքնակալին, և կամ խպառ սատակեցից զդա։ Եւ գնացեալ սուրբն 'ի բանտն փառաւորելով զԱստուած։

Իսկ երանելի վկայքն որ 'ի բանտին էին չարչարակիցք նորա՝ խնդալին ուրախութեամբ մեծաւ վասն սրբոյ կուսին Եփիմիայ նահատակութեանն և ասեն. Տէր Յիսուս Քրիստոս, արա արժանի զաղախինն քո պատարագ ընդունելի լինել քեզ ընդ հարցն մերոց[4], որք փափագանօք խոստովանեցին զաստուածութիւնդ քո։ Եւ մինչդեռ նստէր յատենի իշխանն Պրիսկոս, հրամայեաց ածել զսուրբ վկայսն զԱսոմթենէս և զԲեկ-

1. Մի օր. Վկայն։
2. Մի օր. լուսաւորեաց։
3. Յօրինակին եղծեալ էր. որ։
և միւս օր. պէտն։
4. Մի օր. խորոց։

տոր, և ասէ ցնոսա. Զոհեցէք աստուածոցն։ Նոքա պա-
տասխանի ետուն և ասեն. Մեք, ով Անթիւպատէ,
մոլորեալ էաք 'ի խաւարասէր թշնամւոյն, զոր դուդ
պաշտես, և կորուսեալք[1] 'ի վիհս անօրէնութեան
դժոխոց՝ 'ի մնոտի կենցաղս ծառայեալք քեզ, հեռա-
ցեալք 'ի յուսոյն՝ որ առ Աստուած։ Այժմ հաւա-
տամք 'ի Տէր՝ զի 'ի ձեռն Ձգնազգեաց կուսին վարդա-
պետութեան կարողք լինիմք ջնջել զձեռագիր մերոց
յանցանացս, և փրկիլ 'ի յաւիտենական 'ի հրոյն։
Արդ ապա վաղվաղակի զգործ հօրն քո սատանայի, զի
ոչ հնազանդիմք մեք անօրէն Հռովմոց թագաւորին և
ոչ զոհեմք անմաքուր և մնոտի դիցն։ Զայսոսիկ լը-
սեալ Անթիւպատոն, հրամայեաց 'ի միասին ածել զնո-
սա, զի գազանակուր լիցին։ Յայնժամ երկոքին նոքա
որ անկան կերակուր գազանացն՝ յաղօթեն իւրեանց
ասացին այսպէս. Տէր Աստուած, որ մեծդ ես և սահ-
ման, որ քոյով անուամբդ զամենայն հաստատեցեր,
որ զերկիր հիմնեցուցեր բանիւ հրամանաւ քո, որ
զլոյս ծագեցեր և զխաւար ցրուեցեր, և զվիշապն սպա-
ներ և լուծեր զերկունս մահու, ապրեցո զմեզ 'ի ցնո-
ղիից յափշտակողին, և փրկեա 'ի հաղբից մարդասպա-
նին. և տուր մեզ խաղաղութեամբ անարատ հոգւով
և մարմնով կարդալ զանուն քո սուրբ։ Եւ վաղվա-
ղակի ձայն եղև յերկնից ասելով. Լուայ զաղաչանս
ձեր, և արարիցս զամենայն խնդրուածս ձեր։ Եւ յանձն
արարեալ սրբոցն զանձինս իւրեանց Տեառն, աւան-
դեցին զՀոգիս իւրեանց։ Եւ տեսեալ Անթիւպատոսին
զվախճանեալ սրբոցն՝ յարեաւ և գնաց յապստրանս իւր։
Եւ բարձեալ զմարմին սրբոցն առք երկիւղածք 'ի քրիս-
տոնէիցն, և պատեալ սուրբ պաստառակալօք և անուշ
իւղովք օծեալ արժանապէս եդին 'ի գերեզմանի։

Եւ վաղիւն ընդ այգանալ առաւօտուն, եկն Անթիւ-
պատոն, զի լուիցէ զասացեալսն 'ի սրբոյ կուսէն Ե-
փիմիայ. և սուրբն ելեալ 'ի բանդէն երգէր ձայնիւ
երգով, և ասէր. Երգեմ քեզ, Տէր, օրհնութիւն նոր

1. Մի օր. խորասելք 'ի ջաղջոյն արդարութենէն և զանոգի ժամանակս ծառայելք տէր՝ խորասաք ղայսն որ առ Աստուած։ Այլ հաւատամք 'ի Տէր՝ զի 'ի յիւրոն ձգնազգեցիի կուսին վարդապետութեան։

յերկրիս յայսմիկ։ Փառաւորեմ զքեզ զօրութեամբ իմով. սաղմոս ասացից քեզ ազգաւ իմով. զանուն քո օրհնեմ երգով, և սաղմոսելով[1] գովելով և փառաւորելով զքեզ։ Արդ եկն Անթիւպատոսն, ելեալ նստէր 'ի վերայ բեմին և ասէ ցսուրբ վկայն Քրիստոսի. Մինչև ցե՞րբ անզգամեալ կորուսանես զանձն քո. արդ յայսմհետէ հաճեա հաւանեցո զմիտս քո առ 'ի զոհել աստուածոցն, զի հաշտեսցին ընդ քեզ։ Արդ լուր ինձ և մի՛ արհամարհեր զխորհրդական բանս խրատու իմոյ, զի կենդանի մնացեալ մայր իմ կոչեսցիս։ Իսկ երիցս երանելին ծիծաղելով ասէ ցնա. Արդարև անզգամ և անմիտ կորստական[2] խրատու քումմ լսելով և խլից և անշունչ դիւաձոյլ պատկերաց զոհեցից, անօրէնդ դու և 'ի բաց անկեալդ 'ի Ճշմարտութենէն Քրիստոսի, և բևեռեալդ ընդ որոգայթադիր օձին, բնակիչդ տարտարոսին, և ժառանգորդդ անշէջ հրոյն. փութաս զքաղաքավարեալքս Ճշմարտութեանն առ քեզ ձգել, սակայն ես ոչ հաւանեցայց մնոտի սպառնալեաց քոց, և ոչ իբրև զտղայ խաբեցայց առ 'ի քէն ասացելովքդ[3]. զի ունիմ զգեցեալ զսպառազինութիւն հաւատոցն Քրիստոսի, որ անխափան զօրացուցանէ զիս։ Յայնժամ հրամայեաց Անթիւպատոսն 'ի ծածուկ գործակալաց իւրոց գործարան տանջանաց կազմել սրբոյն, և հոլովելով բերել 'ի թէատրոնն, և արկանել զսուրբն Եփիմիա 'ի մեքենայս տանջանացն. զի այնպէս ըմբռնեալ ըստ նմանութեան վայրենի վարազաց մեռանիցի անգիտանալով։ Եւ իբրև կազմեցին զորոգայթ տանջանացն, եկն սուրբ վկայն պայծառ դիմօք, որպէս թէ ոչ կրեալ ամենևին տանջանս, և ոչ զանգիտեալ 'ի չարչարանաց։ Իսկ յորժամ պաշտօնեայք ամպարշտին[4] Պրիսկոսի կամէին քարշելով մատուցանել 'ի տանջանարանն[5], յափշտակեալ ե-

1. Մի օր. սաղմոսելով և փառաւորելով։

2. Մի օր. անզգամ և անմիտ կորստական խրատու քոյ, և խլոց և անբան դիւաձոյլ ի՞նոց զոհեցից... Բայց դու անհաւատդ 'ի՞բաց որոշեալ քո 'ի Ճշմարտութենէն, և ընդ բեւեռեալդ... դու բնակիչ պարտարոսին...։

3. Մի օր. ասացելովդ։

4. Մի օր. ամբարհաւաճին։

5. Մի օր. փարշել և մատուցանել 'ի տանջանան։

զև 'ի ձեռն հրեշտակաց. Էանց խաղաղութեամբ ընդ մեքենայս[1] տանջանացն, և զինուորքն անկեալ 'ի մեքենայսն սատակեցան։ Եւ դարձեալ երանելին Եփիմիա բացեալ զբերան իւր ասէ. Տէր Աստուած, որ առաքեցեր զՄիածին որդիդ քո յերկնից, որ եկն և մարմնացաւ 'ի սուրբ կուսէն Մարիամայ, և չարչարաւ նոքա խաչի իւրոյ ելոյծ զերկունս մահու, և ընթադրեալ կոխեաց զզօրութիւն բանսարկուին և բևեռեաց ընդ խաչափայտին, և եբաց զդրունս երկնից[2]. որ մերձ կացեր զինուորացն այնոցիկ, որ վասն անուան քո հեղին զարիւնս իւրեանց, և հերքեցին զընդդիմամարտ գազանն. որ հաստատեցեր նոքաք զհիմունս հաւատոց. որ միշտ օգնական եղեր ինձ յամենայն մրցմունս տանջանաց, փրկեա և այժմ զանձն իմ աղօթիւք սրբոցն այնոցիկ, որ 'ի բանդին էին վասն անսուտ խոստմանցն զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ. և պահեա զաղախին[3] քո, զի դու միայն ես անյիշաչար, որ փրկես և ապրեցուցանես զյուսացեալսն 'ի քեզ։ Եւ տեսեալ Անթիպատոսին թէ ոչինչ վնասեցաւ 'ի մեքենայիցն՝ հրամայեաց զառաջեաւ ածել զնա, և ասէ ցնա. Ամենայն իրօք իմաստուն գոլով քո, և աղգաւ ազնուական և առաջին, զարմացեալ եմ յոյժ՝ եթէ վասն էր 'ի բանս երեալ պատրեցար և կորուսեր զամենայն, և տակաւին կաս 'ի նմին յամառութեան, ոչ առնելով զհաճոյս ինքնակալին։ Սակայն և այժմ իբր զիմաստուն և զպարկեշտագեղ կին՝ լուր ինձ, և հօր քում համարեա զառ 'ի յինէն եղեալն առ քեզ անարգանս տանջանաց, և զոհեա աստուածոցն, զի մի լցցիս 'ի նախատինս ազգին քո։ Իսկ սուրբ վկայն քրիստոսասէր[4] մոգք պատրաստ գոլով ասէ ցԱնթիպատոսն. Ո՛վ չարադև դրուժան այր, թշնամի արդարութեանն և վայրենի գազան որ կամի որսալ զիս. ո՛վ եղեռնահամ բանիցդ[5], որ քան զլեղի դառնագոյն է, և քան զմոլախինդ սատակիչ. ոչ այնչափ անզգայ եմ, եթէ թողծի և ահաւոր ասպուածոցդ պահեա զաղախին։..

1. Մի օր. և անդ խաղաղութեամբ ընդ փեղի փանջանացն։

2. Մի օր. զդրոնս երկնից զոր քակեաց նախահայրն։

3. Մի օր. վասն անուանդ քո մեծի և ահաւոր ասպուածոցդ պահեա զաղախին։..

4. Մի օր. քրիստոսասէր մոգք։

5. Մի օր. որսալ զիս գոյովեղեանահամ բանիցդ։

ղեալ զգանձն անապական կենդանութեան, և երկիր պագանիցեմ բանսարկուին խաբէութեան։ Արդ մի՛ խաբիր Անթիւպատէ, եթէ հաւանեցուսցես[1] զիս բանիւք՝ զոհել անմաքուր դիւացն, և կամ աստուածս անուանել զնոսա, և կամ զիարդ անամօթեալ միշտ կենդանւոյն նման առնես զոչ երբէք կենդանացեալսն, և նոցա զոհս կատարել[2] մատուցանես։ Արդ մի՛ լիցի ինձ հաւանել անհամ և կորստական բանից[3] քոց. վասն որոյ փութա և արա վաղվաղակի զոր ինչ կամիս, քանզի ես խնդրեմ չարչարանօքդ որ 'ի քէն, մտանել յաւիտենական երկնային[4] ժառանգութիւնսն, ուր է Հայրն ամենեցուն և մարտադիրն Աստուած որ պսակէ զամենայն սուրբս իւր, և Որդին միածին, և Հոգին սուրբ պարգևաբաշխն ամենայն բարութեան[5]։ Եւ սրտմտեալ դուքն[6] հրամայեաց ձաղկել զնա արքաւաջլօք։ Եւ նա 'ի հարկանելն իւրում ասէր. Ոչ հպին յիս տանջանքդ քո, անօրէն. լուծեալ ես և ոչ ունիս զէութիւն բնութեան, յաղթեալ և հերքեալ է գոռոզութիւնդ քո։

Յայնժամ Ապելլիանոս հանդերձ հիւպատոսիւն[7] 'ի յասումն սրտմտութեան շարժեալ, հրամայեաց սղոցք սայրասուրք[8] և տապակս երկաթիս պատրաստել, և 'ի ձեռն սղոցին ընդ երկուս բաժանել զանձն նորա, 'ի մամուլս հիւսանց դնելով զնա. և 'ի ջեռուցեալ տապակն արկանել, զի ամենայն անդամք մարմնոյ նորա յաձիւն դարձցի։ Արդ իբրև պատրաստեցան այսպիսի գործարանք տանջանարանաց[9], անաստուածութեան սպասաւորքն Պրիսկոսի ածին զվկայուհին և արկին զնա 'ի մէջ մամլոց գործարանացն[10]. և վաղվաղակի բթեցան սղոցքն, և եռանդն տապակացն շիջան, քանզի հրեշտակք Աստուծոյ մերձ կացին սրբոյ վկային։ Եւ

1. Մի օր. հաւանեցուսցանիս։
2. Մի օր. կոպարէալ։
3. Մի օր. դառն բանից քոց։
4. Մի օր. յերկնային ժառանգութիւնն։
5. Մի օր. պարգևիչ բարութեան որ պսակէ զամենայն սուրբսն։
6. Մի օր. Անդիոպատոն։
7. Մի օր. Անդիոպատոսիւն։
8. Մի օր. հրամայէր բերել... պատակս պատրաստելոյ, և 'ի յեռն սղոցացն ընդ երիս հատանել զնա...։
9. Մի օր. պատրաստեցան այսպիսի օրինակս գործարանք տանջանացն... պարբուհին։
10. Մի օր. 'ի մէջ սղոցացն... և տապակին շիջան։

անօրինին Ապելլիանոսի և Անթիւպատոսին տեսեալ եթէ զինագգեաց է վկայն Քրիստոսի և յաղթէ համ բերութեամբն, խորհուրդ արարին[1] զի՝ի միասին բազմութիւն գազանաց արձակեսցեն՝ի վերայ նորա։

Յայնժամ մուծին զաղախինն Քրիստոսի՝ի թէատրոնն. և տարածեալ զձեռս իւր աղօթս մատուցանէր, և ասէ. Յայտնի ես, Աստուած, ոչ կարդան առ քեզ, ընկալ զհոգի իմ՝ի հոտ անուշից. որպէս ընկալար զՀօր մերոյ Աբրահամու զընդունելի պատարագն, այսպէս և զիմ տառապելոյս ընկալ զպատարագս հոգւոյ և մարմնոյ, զկամաւոր և զբանաւոր զոհս՝ զոր քեզ մատուցանեմ։ Եւ զայս ասացեալ՝ կնքեաց զինքն՝ի կնիքն Քրիստոսի, և կարդացեալ զանուն Տեառն։ Յայնժամ արձակեցին գազանս՝ի վերայ նորա։ Իսկ գազանացն վազս առեալ գային մերձ՝ի վկայն Քրիստոսի, և հանդարտութեամբ լիզուին զգարշապարս նորա. նոյնպէս և առիւծքն ըստ օրինակի այլոցն առնէին։ Իսկ զինուորքն իշխանին խոցոտէին սրովք զանձն սուրբ վկային։

Այլ զի պարտ էր[2] ամենայնիւ զկատարումն ընդունել սրբուհւոյ վկային, զոր և ինքն ողջքէր զգազանսն՝ առանց զանգիտելոյ մերձենալ՝ի նա, զի վաղվաղակի բարձցեն զնա յաշխարհէ աստի չարէ, զի մոցէ առ Աստուած առ որ անձկացեալն էր։ Յայնժամ ընթացեալ մատակ առիւծ մի, և Ճիրանամբն մագլցեր զկողքս նորա[3], ոչինչ խոցոտելով զնա սաստիկս. և նոյն ժամայն ձայն եղև յերկնից և ասէ. Ի վեր ընթացիր, Եփիմիա, զընթացսն կատարեցեր, զհաւատսն պահեցեր։ Իսկ ձայնիս այսմիկ լինելով՝ շարժումն մեծ եղև, որպէս զի յոյժ սասանեալ դղրդեցաւ[4] տեղին, և դողացին ամենեքին։ Եւ ասաց սուրբ վկայն. Հատո, Տէր, պղծին[5] և անօրինին Անթիւպատոսին ըստ սրտի իւրոյ չարի. և ընդ աղախնոյ քո լեր, Տէր իմ և Աստուած. և զայս ասացեալ աւանդեաց զոգին։ Եւ եկեալ մայր

1. Մի օր. զինապգեաց վկայն յաղթէ համբերութեամբն խորհրդարանին զի...։
2. Մի օր. պարտ և պարտաճ էր զնոպարանն առանուլ սուրբ վկային Քրիստոսի։
3. Մի օր. ճիրանամբքն ընթացեալ մագլցեր զնինամբնն սրբոյն։
4. Մի օր. սասանեցաւ։
5. Մի ոչ. պղծոյն։

նորա Թէոդոսիանէ, և հայր նորա Փիլոփրոնն [1], առին զմարմին նորա և եդին 'ի նորում գերեզմանի, 'ի տեղւոջն՝ որ միով ասպարիսաւ հեռի էր 'ի Քաղկեդոնէ քաղաքէ։ Իսկ Անթիւպատոսն առաքեաց զսուրբ վկայսն որ 'ի բանդին էին՝ առ Թագաւորն, պատուէր տուեալ կուրբիկոզ [2] արանցն զգուշութեամբ պահել զնոսա 'ի Հանապարհի. և անդ կատարեցան սուրբ վկայքն Քրիստոսի՝ որք էին Թուով արք քառասուն և ինն։ Իսկ չարախորհն և անօրէն իշխանն Պրիսկոս, ընդ չարաչար ախտիւք անկեալ, մեծապէս տանջանօք սատակէր 'ի կենացս։ Եւ օր կատարման երանելւոյ կուսին Եփիմիայ 'ի սեպտեմբերի ամսոյն 'ի վեշտասան [3], 'ի հիւպատուոջն Դիոկղետիանոսի և Մաքսիմիանոսի Հերկուլիանոսի [4]. և մեզ Թագաւորելոյ Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի. ընդ որում Հօր միանգամայն և Հոգւոյն սրբոյ, վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

1. Մի օր. հայր նորին Թէոդրոն։
2. Թերևս Crupellarii կեղտոց և Լատինաց, որ է սպառազէն զօրականք։
3. Մի օր. 'ի վեց։
4. Մի օր. Կերիդէոսի. և 'ի մեզ։

Վկայաբանութիւն Սրբոց Եօթն Մանկանց։

Ամենեցունց տէրն և արարիչն որ գիտէ զվերջինսն և զառաջինսն, փորձէ զսիրտս և զերիկամունս, և գիտէ զառաջակայսն, որ հանդերձեալ էր յառնել հակառակ իւրոց հաւատացելոց, յայնցանէ՝ որք ոչ կամին ուղիղ հաւատով վարիլ, և գանձ անկողոպուտ թողուլ վիճակի բնութեան, զոր յայտնել կամեցեալ, յորժամ այնպիսի իրի խնդիր լինիցի առ այնոսիկ՝ որ 'ի սկզբանէ խնդրողք լինիցին այնպիսի խորհրդոց։ Քանզի սովորութիւն է մարդասիրին Աստուծոյ առ ամենեսին բարերարութիւն առնել, զհաւատացեալս անշարժ պահել 'ի հաւատս և հաստատել զնոսա, և զանհաւատսն ածել յուղղութիւն նշանաք և զօրութեամբ՝ ըստ ժամանակի և ըստ պիտոյից. որպէս և 'ի ձեռն սուրբ մանկանցն եօթանց եղոյց զպանչելիս, և հաստատեաց զյոյս յարութեան սոքաք. որոց անուանքքն են այսոքիկ, Մաքսիմիլիանոս, Ամլիքոս, Մարտիմոս, Դիոնեսիոս, Յոհաննէս, Հէքսակիոս, Տատիանոս[1]։

Սոքա եօթանեքին բնակեալ էին 'ի քաղաքին Եփեսոսի, և նախանձաւորք էին 'ի հաւատս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և զարդարեալ էին վարուք առաքինութեան, և խաղաղական կեանս կէին անբիծ հաւատով։ Եւ եղև 'ի թագաւորութեանն Դեկոսի[2]

1. Մի օր. Անդոնինոս։ 2. Մի օր. Դաքիոս։

գալ նմա 'ի քաղաքն Եփեսացւոց, վասն զոհելոյ զոհս աստուածոց իւրոց հանդերձ ամենայն քաղաքացեօքն. և այնպէս կատարէին զնանիր և զաղտեղի նուէրս պղծալիցս։ Իսկ որք հաւատացեալքն էին՝ Թաքուցանէին զանձինս յերեսաց նորա։ Իսկ Թագաւորն Դեկոս հրամայեաց մեհեանս շինել կռոցն. և կամեցեալ կատարել զաղտեղի զտօնն, հրաման տայր գլխաւորաց քաղաքին ժողովել և որ շուրջ զքաղաքաւն, զի եկեալ կատարեսցեն ընդ նմա զզոհն։ Եւ ժողովեցան անԹիւ բազմութիւն մարդկան, որք հաղորդք էին կամաց Թագաւորին, և կատարէին զզոհն։ Եւ էր սուգ մեծ հաւատացելոցն վասն մոլելոցն 'ի կուռս, և խոտորելոյ յԱստուծոյ Ճշմարտէ, զի յարոյց հալածանս քրիստոնէից, և նեղէր զամենեսին որք կարդային զանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Եւ որք Թագուցեալ էին 'ի լերինս, 'ի յայրս և յանտառս և 'ի փապարս, խուզէին զինուորքն ըստ հրամանի Թագաւորին։ Իսկ որ վատասիրտքն էին, անկանէին 'ի բարձրութենէ հաւատոյ. իսկ հաստատեալքն 'ի հաւատս և 'ի յոյսն կենդանի, վառեալ էին ընդդէմ սատանայի և անշարժ հաւատովք յամօԹ առնէին զբռնաւորն, քանզի յիշէին զաւետարանական բանն որ ասէ. Մի երկնչիք յայնցանէ որք սպանանեն զմարմին և զոգին ոչ կարեն սպանանել, այլ երկերուք յայնմանէ որ յետ սպանանելոյն ունի իշխանութիւն արկանել 'ի գեհեն։ Եւ զանազան տանջանաց համբերէին սուրբքն, զոր ածէր 'ի վերայ նոցա ամբարիշտն 'ի հնարից սատանայի։ Եւ բազումք եղեն վկայք կամաւոր մահուամբ վասն անուանն Տեառն։ Եւ ոչ այսու շատանայր օտարացեալն յԱստուծոյ, այլ և զմարմինս նոցա պահէր՝ կախեալ զպարսպէ. և 'ի ձող ցցեալ առաջի դրանքաղաքին պահելով անԹաղ։ Ո՛հ, ո՛րքան էր մոլորութիւն Դեկոսի ահաւոր, և ո՛րքան լի ցասմամբ վասն քրիստոնէից. սակայն յուսացեալքն յԱստուած ոչ զանգիտէին 'ի մեռանելոյ և յերկիւղէ բռնաւորին. և հրեշտակք յերկինս երգէին զյաղԹական օրհնութիւնս՝ վասն սրբոցն, որք ուղիղ խոստովանութեամբ կատարեցան 'ի փառս Աստուծոյ. և դէպ յամօԹ եղեն 'ի վերայ յաղԹութեանն սրբոցն։

Իսկ մանկունքն Եօթանեքին զորոց անուանն յա-
ռաջագոյն ասացաք, որք անշարժ էին 'ի հաւատն
Քրիստոսի, տեսեալ զայն ամենայն, անդադար աղօ-
թից ստէպ կային, տքնութեամբ և արտասուօք խրն-
դրելով 'ի Տեառնէ զհաստատութիւն հաւատոց։ Եւ
էին սոքա երևելիք յԵփեսոս և պատուաւորաց որդիք,
և թաքուցանէին զինքեանս 'ի Դեկոսէ ամպարշտէ.
և կային յաղօթս զցայգ և զցերեկ և աղաչէին զԱ-
ստուած արտասուօք, զի փրկեսցէ զնոսա 'ի հնարից
սատանայի, և կալ հաստատուն 'ի Տէր։ Տեսեալ զնոսա
ոմանց չարաբարոյից, պատմեցին թագաւորին և ա-
սեն. Որդիք երևելեաց քաղաքիս[1], Մաքսիմիլիանոս
որդի եպալքոսին, և ընկերք նորին որդիք պատուաւո-
րաց Եօթն, միաբանեալ 'ի հաւատն Քրիստոսի ոչ հը-
նազանդին հրամանի քում, և ոչ զոհեն աստուածոցն՝
որոց դու զոհես։ Իսկ իբրև լուաւ թագաւորն, լի ցաս-
մամբ հրամայեաց ածել զնոսա վաղվաղակի և ասէ ցնո-
սա. Ընդէր ոչ զոհէք աստուածոցն որոց ես զոհեմ, և
ամենայն հաւանեալք մեծի իմոյ հրամանիս։ Եւ պա-
տասխանի Մաքսիմիլիանոս և ասէ ցթագաւորն. Մեք
պաշտեմք զԱստուած երկնի և երկրի, որով լի են ա-
մենայն երկիր փառաւք նորա, և նմա երկիր պագանեմք
և մատուցանեմք պատարագ օրհնութեան խոստովա-
նութեամբ և անուշահոտութեամբ, զի կացցուք ա-
ռաջի նորա սրբութեամբ սրտիւ և կատարեալ հաւա-
տով և ուղիղ վարուք. դիւաց մեք ոչ զոհեմք, և ոչ
ապականեմք զսրբութիւն անձանց մերոց։

Իբրև լուաւ զայս թագաւորն, հրամայեաց զգօտիս
նոցա կտրել, և զպատիւն մերկանալ։ Եւ առ ժամայն
մարդասիրութիւն ցուցանելով որպէս մանկանց, և ա-
սէ. Խնայեմ 'ի մանկութիւնդ ձեր տեղի տալով ժա-
մանակ ինչ, զի թողեալ զայդպիսի միտս հաւանեսջիք
ինձ. ապա եթէ 'ի նոյնդ մնասջիք՝ մահու մեռանիջիք։
Եւ հրամայեաց հանել զնոսա յերեսաց իւրոց մեծաւ
սպառնալեօք. և ինքն գնաց 'ի քաղաքէն։

Եւ սուրբ մանկունքն գնացին խնդալով յերեսաց
թագաւորին, զի վասն անուան Քրիստոսի արժանի

1. Մի օր. պապուսաորաց ... Մաքսիմիանոս։

եղէն անարգանաց։ Եւ երթեալ կատարէին զգործս արդարութեան առաւել քան զառաջինն, առեալ ոսկի և արծաթ 'ի ծնողաց իւրեանց բաշխէին կարօտելոց։ Եւ խորհեցան ելանել 'ի քաղաքէն, և երթալ յայրն որ 'ի լերինն Ողքոս, և անդ կալ անզբաղապէս առանց երկիւղի, և աղօթից պարապել, մինչև այց արասցէ մեզ Աստուած, և արժանաւորեսցէ զընթացս մեր կատարեալ բարի խոստովանութեամբ, և ընկալցուք զպսակն զոր խոստացաւ սիրելեաց իւրոց։

Եւ այսպէս միաբանեալ մանկունքն եօթանեքին, առեալ ընդ ինքեան լումայս[1] վասն աղքատաց և վասն պիտոյից իւրեանց՝ և գնացին յայրն. և լինէին ամենայն արդարութեան հպատակ կալով և անդադար աղօթից, խնդրելով յամենեցունց Տեառնէն զփրկութիւն անձանց իւրեանց։ Եւ կացուցին 'ի սպասաւորութեան[2] զԱմլիքոս, զի էր այր իմաստուն և ժիր, և առնէր նոցա սպասաւորութիւն։ Եւ յորժամ գայր 'ի քաղաքն վասն պիտոյից իրիք, առնոյր ընդ իւր լումայս[3], և փոխէր զկերպարանս իւր և գնայր իբրև զաղքատ և գնէր զպէտս իւրեանց, և ուսանէր թէ զինչ խորհին վասն քրիստոնէից, և դառնայր պատմէր զինչ լսէր, և սպասաւորէր նոցա։

Եւ յետ աւուրց ինչ դարձաւ Թագաւորն 'ի քաղաքն, և խնդիր արարեալ մանկանցն, և Ամլիքոս 'ի գալ Թագաւորին անդ պատահէր, եկեալ վասն պիտոյից իւրեանց։ Եւ լուեալ զայս ել 'ի քաղաքէն մեծաւ երկիւղիւ, և եկեալ առ ընկերս իւր ունելով սակաւ հաց և պատմեաց նոցա. և իբրև լուան՝ երկեան յոյժ. և անկեալք 'ի վերայ երեսաց իւրեանց յերկիր, աղաչէին զԱստուած արտասուօք և բազում հառաչանօք՝ զի զերծուսցէ զնոսա յաշխարհէ աստի չարէ և 'ի սպառնալեաց Թագաւորին և 'ի խարդախութենէ սատանայի. և ըստ կամաց իւրոց բարեսիրաց ելանել յաշխարհէ աստի չարէ և մտանել առ Աստուած՝ արժանաւոր վկայութեամբ, և ժառանգել զանպատում զկեանսն որ պահի յուսացելոց իւրոց յաւիտենից։ Եւ

1. Մի օր. արծաթ ընդ ինքեանս։ սասորոմիան։
2. Մի օր. խորգասորէին 'ի սպա-
3. Մի օր. լումանս։

յետ աղօթիցն եդ զսակաւ հացիկն առաջի նոցա Աւմ
լիքոս, և աղաչէր զնոսա զի կերիցեն. և քաջալերեալ
ամենեցուն կերան զհացիկն 'ի մուտս արևուն և գոհա-
ցան զՏեառնէ։ Եւ քաջալերէին զմիմեանս և յորդո-
րէին 'ի սէրն Աստուծոյ և 'ի համբերութիւնն Քրիս-
տոսի. և հոգային թէ որպէս արժանասցին վկայու-
թեան պսակին. և նիրհեցին առ ժամայն ամենեքին
և 'ի քուն մտին։ Իսկ մարդասէրն Աստուած այց ա-
րար նոցա մեռանել և զերծանել յերկիւղէ անօրինին,
և յետ ժամանակի վկայ յարութեան լինել հաւա-
տացելոց, և յամօթ առնել զայնոսիկ որք ոչն հաւա-
տան յարութեան։ Եւ ոչ գիտացին զելանել ոգւոցն
'ի մարմնոցն, այլ որպէս քուն լեալ ըստ սովորու-
թեանն։ Իսկ 'ի վաղիւն հրամայեաց թագաւորն ա-
ծել զմանկունսն յատեան, և ոչ ուրեք գտանէին։
Կոչեաց զծնողս մանկանցն՝ զի երևելիք էին, և սպառ-
նացեալ չար անցս անցուցանել ընդ նոսա, եթէ ոչ
նոքա վաղվաղակի 'ի մէջ եկեսցեն։ Ասեն ծնողք ման-
կանցն. Մեք ընդէ՞ր մեռանիմք վասն նոցա, որք հրա-
մանի քում հաւանեալք պաշտեմք զաստուածսն, և
զոհեմք նոցա որպէս կամք քո հրամայեն. և նոքա
են յՈղքոս լերինն յայրի անդ, և մեծաւ նեղու-
թեամբ կեան քրիստոսական հաւատոցն։ Զայս ա-
սացին ծնողքն զի երկեան 'ի թագաւորէն. և նա
խորհեր թէ զի՞նչ արասցէ նոցա։ Եւ ակն ածէր միս-
անգամ ածել զնոսա յատեան, զի մի՛ յանդիմա-
նեսցի 'ի մանկանցն քանզի գիտէր զնոսա յառաջին
հարցմանցն։

Ապա հրամայեաց զդուրս այրին ունել մեծամեծ
քարամբք յորում էին մանկունքն. և այս լինէր 'ի
տեսչութենէ Աստուծոյ, զի պահեսցին անշարժ նըշ-
խարքք սրբոցն. միանգամայն և լինիցին վկայք յարու-
թեան մեռելոց, և նոքաք փառաւորեսցի Աստուած 'ի
դէպ ժամանակի, և նկուն լիցի սատանայ և նորին հա-
մախոհքն։ Եւ այսպէս հրամայէր զդուրս այրին ունել
զի մեռցին անդէն, և լինիցի նոցա բանդ և գերեզման
յաւիտենական. և հրամայէր ոչ ումեք մտանել յայ-
րին, և տեսանել որպէս կարծէր կենդանիս զնոսա։
Եւ այս լինէր 'ի վերին խնամոցն զի 'ի նմին կացցեն։

Theodor et Barbus (M.)

Իսկ Թէոդոս և Աբոս[1] հաւատարիմք Թագաւորին և քրիստոնեայք՝ որք 'ի ծածուկ ունէին զքրիստոնէութիւն, խորհեցան ընդ միմեանս և ասեն. Գրեսցուք զվկայութիւն սոցա և զժամանակս և դիցուք 'ի գլխոց պղնձի և ընկեսցուք 'ի յայրս, թերևս այց արասցէ Աստուած և յայտնեսցէ զնշխարս սրբոցս այսոցիկ։ Եւ որպէս խորհեցան նոյնպէս և արարին արքս այսոքիկ 'ի տեսչութենէն Աստուծոյ. և գրեցին զժամանակն և զվկայութիւն սրբոցն և զանուանս, և թէ որպէս հրամանաւ Դեկոսի կալան զուրք այրիս, զի ատէն մեռցին։ Զայս ամենայն ոճով գրեցին և եդին 'ի գլխոց պղնձի և ընկեցին 'ի ներքս 'ի յայրն. և ըստ հրամանի Դեկոսի կալաւ այրն, և ոչ ոք գիտաց զմահ մանկանցն 'ի ժամանակին յայնմիկ. և այս եղև 'ի մատակարարութենէն Քրիստոսի։ Եւ յետ այսր ամենայնի մեռաւ Դեկոս և ամենայն ազգն այն, և փոխեցան այլ թագաւորք մինչև ցԹէոդոս մեծ։

Իբրև թագաւորեաց մեծն Թէոդոս բարեպաշտ յետ ամացն այնոցիկ, և ըստ հաւատոցն Քրիստոսի հնազանդէր և պաշտէր զամենասուրբ զԵրրորդութիւն, յարեան ոմանք որք ասէին եթէ յարութիւն մեռելոց չիք, և կործանէին զհաւատս ոմանց, որպէս առաքեալն յառաջագոյն տեսեալ ասէր զայս. և դարձեալ ասէ. Ծանեաւ Տէր զայնոսիկ՝ որ իւրն են։ Իսկ բարեպաշտն Թէոդոս ՀԳՆԷր վասն այնորիկ և խնդրէր յԱստուծոյ լուծումն լինել իրացն։ Եւ էր գլուխ ազանդոյն Թէոդորիտ ոմն եպիսկոպոս Ելադացւոյ[2], և այլ ընկերք նորա չարախորհուրդք, ապականիչք եկեղեցւոյ և ուղղափառ հաւատոյ, որք ասէին թէ յարութիւն մեռելոց արդէն իսկ եղեալ է. և այլք եթէ մարմինք մաշեալք և ապականեալք 'ի հողոյ և ցրուեալք ընդ բազում տեղիս ոչ յառնեն, այլ հոգիքն միայն ընդունին զանմահութիւն և զանանց կեանս սրն։ Եւ մոլորեալքն ոչ իմացան եթէ ոչ ծնանի մանուկ առանց մարմնոյ յորովայնի, և դարձեալ եթէ ոչ ելանէ մարմին կենդանի առանց հոգւոյ, և խափուցին

Theodor. degin. episc.

1. Մի օր. Աբոս։ յԵգեսացւոյ. Այլ օր. Թէոդորիպոս
2. Մի օր. Թէոդորոս էպիսկոպոս էպիսկոպոս Եգեսացւոյ փաղաքին։

զականջս իւրեանց չլսել Տեառն, որ ասէ, եթէ՝ Լուիցեն մեռեալք ձայնի որդւոյն Աստուծոյ, և եկեսցեն արտաքս. որոց բարիս գործեալ իցէ՝ յարութիւն կենաց, և որոց զչար արարեալ՝ 'ի յարութիւն դատաստանաց։ Եւ Ազաքեալ ասէ. Անմիտ, դու զոր սերմանեսն ոչ կենդանանայ եթէ ոչ մեռանիցի, և Աստուած տայ մարմին, որպէս և կամի, և իւրաքանչիւր զիւր մարմինն։ Եւ մարգարէն Եզեկիել որպէս յերեսաց Տեառն ասէ. Բացիր զգերեզմանս ձեր, և հանիցս զձեզ 'ի գերեզմանաց ձերոց, ժողովուրդ իմ, և տացս զոգի իմ 'ի ձեզ և լինիջիք կենդանի. և այլ ևս բազում է որ պատմի 'ի գիրս սուրբս վասն յարութեան մեռելոց։ Իսկ բարեպաշտն Թէոդոս արտասուօք խընդրէր 'ի Տեառնէ, զգեցեալ քուրձ և նստէր 'ի վերայ մոխրոյ, երևումն ինչ տեսանել յարութեան. զի հաւատացելոցն յոյս հաստատեսցի, և ամպարշտաց ժողովն նկուն լիցի։ Այլ որ զկամն երկիւղածաց իւրոց առնէ և աղօթիցս նոցա լսէ, կամեցաւ 'ի ձեռն սուրբ մանկանցն ցուցանել զյարութիւն՝ յաւուրս Թէոդոսի մեծի Թագաւորի, որ հայցեաց 'ի Տեառնէ և առ. զի ամենայն որ խնդրէ առնու, և որ հայցէ գտանէ, որպէս ասաց Տէրն յաւետարանին։

Այսպիսի իմն եղև յայտնութիւն մանկանցն. այր ոմն պատուաւոր՝ որում անուն էր Ոգոդի[1], որ ընդ իշխանութեամբ նորա էր Ոգքոս լեառնն, կամեցաւ գոմ շինել հօտից իւրոց մերձ յայրն յորում էին սուրբ մանկունքն. և ծառայք նորա գործաւորքն գործէին, և զքարինսն Թաւալեցուցանէին 'ի դրանէ անտի. և բացեալ լինէր այրն՝ որ 'ի Դեկոսէ կալաւ։ Յայնժամ հրամանաւ Փրկչին կենդանացան մանկունքն որ յայրն, և յարուցեալ նստան խնդալից և լուրջ երեսօք որպէս յերկնին և յեռանդն։ Եւ տեսիլ մեռելութեան չերևէր 'ի նոսա. զի մարմինք նոյնք և հանդերձ, և ոչ մի ինչ կերպարան փոխեալք։ Եւ յարեան առաւօտուն, և այսպէս կարծէին եթէ յերեկոյ ննջեցին, և հոգային վասն հալածանացն Դեկոսի ամպարշտի և վասն խնդրոյ նոցին մանկանցն։ Դարձեալ հարցանէն վասն

1. Մի օր. Ոգոդ։

նորին իրաց ցԱմլիքոս, որ ինչ լուեալ էր 'ի քաղաքն Եփեսոսի։ Ասէ Ամլիքոս. Որպէս պատմեցի երեկոյ՝ 'ի խնդիր է մեզ Թագաւորն Դեկոս, կամ զոհել կռոցն կամ մեռանել՝ եթէ ոչ հաւանեսցուք նմա։ Ասէ Մաքսիմիլիանոս ցընկերս իւր. Եղբարք իմ, յիշեցէք զերկնաւոր և զահաւոր ատեանն, և մի՛ զարհուրեսցուք յառժամանակէիցս երկիւղէ, որ ոչ ունի խսպառ զահ սպառնալեաց. և մի՛ ուրասցուք զկեանս մեր, զոր ունիմք հաւատովք որդւոյն Աստուծոյ, որ ետ զանձն վասն մեր, զի զմեզ փրկեսցէ յաշխարհէ աստի չարէ, 'ի փառս ամենասուրբ Երրորդութեանն լինել։ Եւ ասէ ցԱմլիքոս. Ա՛ռ դու ընդ քեզ լոմայս, և երթ 'ի քաղաքն ուսանել վասն Դեկոսի, թէ զի՞նչ խորհի վասն մեր։

Եւ յարուցեալ Ամլիքոս գնաց, առեալ ընդ իւր լոմայս, և փոխեալ զկերպարանս իւր, զի մի՛ ճանաչեսցէ ոք զնա և մատնեսցէ Թագաւորին Դեկոսի. և նա ոչ գիտէր թէ նորա ոսկերքն 'ի հող դարձեալ են, և հոգին 'ի խոշտանգանս։ Եւ իբրև եմուտ 'ի քաղաքն Եփեսոս, և տեսանէ զնշան սուրբ խաչին 'ի դուռն քաղաքին, և զարմացաւ ընդ միտս իւր։ Եւ շրջեցաւ ընդ քաղաքն ամենայն, և տեսանէր նոյնպէս զնշան տէրունական խաչին կանգնեալ 'ի տեղիս տեղիս, և զմարդիկն զի երդնուին յանուն Տեառն Յիսուսի, և այլազգ իմն Թուէր քաղաքն. և կայր հիացեալ և ապշեալ, և ասէր ընդ միտս իւր. Երէկ ոչ ուրեք երևէր նշան տէրունական խաչին և ոչ ոք իշխէր կարդալ զանուն Տեառն զօրութեանց, իսկ այժմ համարձակ քարոզի անուն Տեառն. և եթէ արդարև Եփեսոս է քաղաքս այս, զի ոչ իմն Թուի նման, և եթէ երաշ իցէ որ երևիս ոչ գիտեմ. և զի՞նչ այս եղեալքս որ ապշեցուցանէ զիս. ո՞վ զիս խելամուտ արասցէ այսմ։ Եւ մատուցեալ առ մի ոմն՝ ասէ ցնա. Ո՞վ է քաղաքս այս։ Եւ նա ասէ. Եփեսոս է։ Եւ ասէ Ամլիքոս 'ի միտս իւր. Զի՞նչ եղէ, Տէր Յիսուս, օգնեա ինձ։ Եւ ապշեալ մտաք և երկիղիւ գնայր 'ի վաճառն գնել հաց, և գնալ 'ի քաղաքէն զի մի՛ ըմբռնեսցի։ Եւ տուեալ զլոմայսն զոր ունէր՝ առնուլ հաց. և ասէ հացավաճառն. Զառաջին Թագաւորացն զպատկեր և զգիր

ունի. և ցուցանէր ընկերացն իւրոց։ Եւ նոցա հայեցեալ յԱմֆիքոս՝ ասէն. Գանձ գտեալ է սորա, քանզի բազում ամն ունի լոմայս։ Եւ լուեալ Ամֆիքոս երկեաւ յոյժ, զի համարեցաւ 'ի ձեռս Դեկոսի մատնել։ Եւ ասէ ցնոսա. Աղաչեմ զձեզ տուք ինձ զարժան հացիկն և գնացից 'ի տեղի իմ։ Եւ ասեն ցնա. Ուստի՞ ես դու. տուր մեզ մասն ինչ, ապա թէ ոչ՝ մատնիս 'ի ձեռս դատաւորաց և մեռանիս։ Զայս լուեալ Ամֆիքոսի՝ ահաբեկեալ ասէ. Ես այսմ ակն ոչ ունէի, յաւելաւ ինձ տրտմութիւն 'ի վերայ տրտմութեան. և ոչ գիտէր զինչ պատասխանի տացէ այնմ որ նեղէին զնա։

Լուր եղև 'ի քաղաքն եթէ ոմն ըմբռնեցաւ, որոյ գանձ գտեալ է, և ժողովեցան բազումք առ նա։ Եւ նա հայէր եթէ ոք 'ի ծանօթից երևեսցի, և ոչ զոք տեսանէր, և կայր հիացեալ. և նոքա նեղէին զնա և ասէին. Օտար է այրս այս և ոչ ոք ճանաչէ զսա. և ոմանք փախած համարէին զնա, և ոմանք՝ կերպարանի ասէին զի փախիցէ։ Եհաս բանն առ բդեաշխն՝ որ էր յեկեղեցւոջն առ սուրբ եպիսկոպոսն Մարիս՝ ըստ պատահմանն. և հրամայեցին ածել զԱմֆիքոս տեսանել վասն խնդրոյն այնորիկ։ Եւ իբրև ածին և տեսին ըզլոմայսն, ասեն ցնա. Ուստի՞ ես դու, և զինչ են լոմայքս այս՝ որ զառաջին թագաւորացն զպատկեր և զգիր ունին. ասա ստուգութեամբ զամենայն։ Եւ նա ոչ գիտէր զինչ պատասխանի արասցէ։ Ասէ եպիսկոպոսն. Այսա որդեակ զՀնշմարիտն, և զերծիր՞ի փորձութենէդ յոր ըմբռնեցար։ Ասէ Ամֆիքոս. Աղաչեմ ըզքեզ, տէր, արա զիս խելամուտ, և զամենայն զոր ինչ գիտեմ ասացից. Դեկոս թագաւորն 'ի քաղաքիս է, և կամ քաղաքս Եփեսոս է։ Ասէ եպիսկոպոսն. Զիք Դեկոս թագաւոր այժմ՝'ի վերայ երկրի. այլ յառաջքան զբազում ժամանակս պաշտէր զկուռս և հալածէր զքրիստոնեայսն. իսկ այժմ Թէոդոս է թագաւոր հաւատացեալ 'ի Քրիստոս, և ամենասուրբ երրորդութիւնն օրհնի և երկրպագի յամենեցունց. և քաղաքս Եփեսոս է։ Ասէ Ամֆիքոս. Երէկ Դեկոս թագաւորն 'ի քաղաքիս էր և պատուհասէր զքրիստոնեայսն. և ես իբրև լուայ՝ երկեայ, և գնացի պատմեցի ընկերացն իմոց եթէ 'ի խնդիր է կորուսանել զմեզ.

զի եմք հալածեալք 'ի նմանէ վասն Քրիստոսի եօթն արք, որդիք պատուաւորաց քաղաքիս. և առեալ մեր ոսկի և արծաթ բազում՝ աղքատաց բաշխեցաք, և կայ սակաւ լոմայք 'ի պէտս մեր, և այս զոր տեսանէք. և եմք յՈղբոս լերինն յայրի անդ, եկայք և տեսէք։ Եւ ասաց զանուանս իւրեանց և զծնողացն, և ոչ ոք ճանաչէր զնոսա։ Եւ ես, ասէ, եկի գնել հաց և տանել, և ուսանել վասն Դեկոսի. և այսմ փորձուութեանցս՝ որ այսպէս հանդիպեցայ, ես այսմ ակն ոչ ունէի յոր ըմբռնեցայ. ես զստոյգն պատմեցի ձեզ։ Արդ կամքն Աստուծոյ կատարեսցի, որ գիտէ զամենայն. ես այլ ինչ ոչ գիտեմ բնաւ։

Յայնժամ ասէ եպիսկոպոսն. Յայտնել ինձ կամի Աստուած այսօր մեծամեծ սքանչելիս՝ 'ի ձեռն երիտասարդիս այսորիկ. եկայք երթիցուք յՈղբոս լեառն յայրն, և տեսցուք զմեծամեծս Աստուծոյ։ Եւ առեալ ընդ իւրեանս զբազմութիւնն՝ գնացին եպիսկոպոսն և բդեաշխն և մեծամեծք քաղաքին և Ամլիքոս առաջի նոցա, և եմուտ յայրն և պատմեաց ընկերաց իւրոց որ ինչ անցին ընդ նա։ Եւ մինչդեռ կամէր եպիսկոպոսն մտանել յայրն՝ հայեցաւ յայսկոյս յայնկոյս և ետես ղգզրոցն պղնձի, և հանեալ 'ի դուրս՝ եբաց առաջի բդեշխին և պատուաւորացն. և տեսանեն երկուս տախտակս կապարեայ, յորում գրեալ էր զանուանս մանկանցն եօթանեցունց. և եթէ հալածեալք վասն Քրիստոսի հաւատոցն 'ի Դեկոսէ թագաւորէ, որք ոչ հաւանեցան պաշտել զկուռս՝ սուրբ վկայքս Քրիստոսի, հրամանաւ Դեկոսի խցաւ դուրք այրիս, զի լինիցի սոցա բանդ և գերեզման։ Եւ ես Թէոդոս և Աբոս հաւատարիմք արքայի և քրիստոնեայք, գրեցաք զի յայտ լինիցին եթէ վկայք Քրիստոսի են սուրբ մանկունքս եօթանեքին, յորժամ այց արասցէ Տէր և յայտնեսցէ զնշխարս սոցա։

Եւ լուեալ զայս փառաւոր առնէին զԱստուած 'ի վերայ անպատում սքանչելեացն զոր Տէր եցոյց։ Եւ մտին 'ի ներքս 'ի յայրն, և տեսին զսուրբ մանկունսն պայծառս և գեղեցիկս և վայելուչս որպէս զՀրեշտակս Աստուծոյ. և անկեալ 'ի վերայ երեսաց իւրեանց երկիր պագանէին և ողջունէին զմիմեանս հոգևոր ողջու-

նիւ. և գոհացան զԱստուծոյ, որ արժանի եղեն տեսանել զաքանչելիս յարութեանն, և զահաւոր տեսիլն զոր Տէր եցոյց 'ի ժամանակին։ Եւ խօսեցան ընդ միմեանս, և պատմեցին սուրբ մանկունքն՝ որ ինչ յաւուրս Դեկոսի հալածումն և իրք գործեցան։ Եւ եպիսկոպոսն պատմէր զկործանումն անաստուած թագաւորայն, և զուղղափառ և զքրիստոսասէր թագաւորութիւնն, և զքրիստոնէից կարգս և զհաստատութիւն հաւատոց։ Եւ նոքա օրհնէին զԱստուած, և նոյնժամայն զգացուցանէին թագաւորին Թէոդոսի վասն սուրբ մանկանցն յարութեան, որ յայտնեցաւ 'ի ժամանակս նորա։

Եւ իբրև լուաւ զայս մեծն Թէոդոս, գոհութիւն և օրհնութիւն ամենատեառն մատուցանէր, որ զյարութեան յոյսն հաստատեաց 'ի ձեռն սուրբ մանկանցն, և յամօթ արար զչարն, և ուրախ եղև և ցնծայր և օրհնէր զԱստուած։ Եւ վաղվաղակի անդ հասանէր, տեսանել զսուրբ մանկունսն ցանկայր. և մանկունքն ելին ընդ առաջ նորա 'ի դուրս այրին և փայլէին երեսք նոցա որպէս լուսաւորք, և երկիր պագին արքային. և նա անկեալ 'ի վերայ երեսաց իւրոց համբուրէր զոտս նոցա. և մանկունքն բուռն հարեալ յարուցին զնա, և մտին նովաւ հանդերձ յայրն։ Եւ եպիսկոպոսն և պատուաւորքն նստան ամենեքեան 'ի գետնի, և գիրկս արկեալ համբուրէին զմի մի 'ի սրբոցն։ Եւ զուարճանայր թագաւորն և օրհնէր զԱստուած և ասէր. Ո՞վ պատմեսցէ զզօրութիւնս Տեառն, որ արար զքանչելիս միայն. ո՞վ խորհուրդ մարդասիրութեանն Աստուծոյ, որ յաւիտեան է ողորմութիւն նորա առ յուսացեալս իւր։ Եւ ասէր, եթէ զոր քարոզեցին սուրբքն զյարութիւն՝ այժմ յայտնապէս տեսաք 'ի ձեռն սրբոցս։ Եկայք հանցուք ամենեքեան զփառս ամենասուրբ Երրորդութեանն, այժմ և հանապազ յաւիտեան։ Եհարց թագաւորն զմանկունսն, թէ՝ Ո՞րպէս էին ոգւոց ձերոց զգայութիւնք։ Ասէն սուրբ մանկունքն, եթէ՝ Որպէս որք ննջեցեալ յանկողինս իւրեանց առաւել 'ի զգայութեան. որ յուսով բարին է, որ յամենայն 'ի հնարից հակառակորդին աղատեալ, զարմանալի իմն գեղեցկութեամբ բերկրեալ, զոր ակն

ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, և 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, ուր պատրաստեցան հոգւոց շտեմարանք՝ արժանաւորացն խնդութեամբ և ուրախութեամբ 'ի փառս Աստուծոյ, իսկ մեղաւորացն տրտմութեամբ և հեծութեամբ ըստ իւրաքանչիւր գործոց բարեաց և չարաց։ Բայց զկատարեալ բարիսն և զպատուհասն մարմնով և ոգւով ընդունին յարդար դատաւորութեանն Աստուծոյ։

Եւ այլ ևս բազումս խօսեցան ընդ Թագաւորին, և օրհնեցին զնա յանուն Տեառն զօրութեանց, և ասեն. Օրհնեալ լիցիս դու 'ի Տեառնէ, սիրելի Աստուծոյ, զի վասն քո եցոյց Աստուած զսքանչելիս յարութեան մեօք։ Եւ յոտն կացեալք ամենեքումբք հանդերձ կացին յաղօթս և օրհնեցին զԱստուած. և ասեն ցամենեսեան. Ո՛ղջ լերուք, խաղաղութիւն ընդ ձեզ։ Եւ եդին զգլուխս իւրեանց և դարձեալ ննջեցին, և աւանդեցին զոգիս իւրեանց 'ի փառս Աստուծոյ։ Եւ տեսեալ զսքանչելիս 'ի վերայ սքանչելեաց, տային օրհնութիւն Աստուծոյ և փառաւոր առնէին զԱստուած 'ի վերայ զարմանալեացն, Թագաւորն և ամենայն ժողովուրդն։

Եւ հրամայեաց Թագաւորն տապանս ոսկիս կազմել նոցա։ Եւ յայնմ գիշերի երևեալ սուրբքն ասեն ցԹագաւորն. Թո՛ղ զմեզ 'ի տեղւոջս մեր՝ որպէս կայաքն, մինչև 'ի հասարակաց յարութիւն, և դարձեալ յաւրիցուք զանապականութիւն զգեցեալք, և անմահացեալք՝ ժառանգեսցուք զանսպառ բարիսն։ Եւ լուեալ զայս՝ կազմեցին զայրն և գեղեցկացուցին, յախճապակ արարեալ, Թողին այնպէս որպէս ննջեցինն. տօն մեծ կատարելով զօրն զայն, որպէս և վայել էր սրբոցն. 'ի փառս ամենասուրբ Երրորդութեանն, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Թադէոսի։

Ի թագաւորութեանն Նումերիայ և 'ի դատաւորութեանն Թէոդորի, 'ի քաղաքին Եգիա, յառաջ քան զինն կաղանդացն՝ յամսեանն Հոռի, որ օր Ի.Գ էր ամսոյն, նստաւ դատաւորն 'ի տաճարին Անդրիանոսի 'ի քաղաքն Եգիա, և ասէ. Կոչեցէք զամբարիշան կրօնիւք։ Ջօրականքն ասեն. Ահաւասիկ կայ, աղաչեմք զքեզ։ Թէոդորոս դատաւորն ասէ ցնոսա. Ո՞ւր կալայք զդա՝ որոյ սկիզբն է գալոյ մօրուացն և պայծառացեալ 'ի ծաղիկ երիտասարդութեան։ Դենեսիոս դահճապետ ասէ. Մինչդեռ երթայաք 'ի մայրաքաղաքացն Անարզաբոյ, և դեռ հեռագոյն էաք ասպարիսօք յինքնօք, և տեսաք զդա ընթանալով ընդ կողմն արևելից. և իբրև ետես զմեզ՝ թաքեաւ 'ի մէջ անտառին. և մեր իմացեալ եթէ քրիստոնեայ է, և պատուեալ զաստուածն՝ դադարեցաք յանտառին քառասուն տիւ և քառասուն գիշեր, և գտաք զդա թաքուցեալ 'ի ձիթենւոջն. իբրև կալաք թէ կապեսցուք զդա՝ սկսաւ մարտնչել ընդ մեզ. և մեր չարչարեալ զդա բրօք՝ զոսկերս դորա ջարդեցաք, և երկաթ արկեալ 'ի ձեռս դորա և յոտս, և մատուցաք առ քեզ։

Թէոդորոս դատաւորն ասէ ցնա. Յորմէ՞ պաշտամանէ ես կամ յորմէ՞ դահէ կամ յորմէ՞ քաղաքէ, և զինչ անուն է քո։ Թադեոս ասէ. Եթէ կամիս ուսանել եթէ յորմէ՞ պաշտօնէ եմ, քրիստոնեայ անուա-

նիմ։ ապա թէ ուրպէս մարդիկ անուանեն՝ զայն խընդրես, Թաղղոս կոչիմ, և եմ 'ի Լիբանանէ, և հաւատացեալ իմ 'ի Գալիլեացին, և ընտանի եմ Երուսաղեմացւոյն. մայր իմ Հռոմելիանա և հայր եմ Բեկոսիանոս. և ես արուեստիւ բժիշկ եմ և եղեալ սարկաւագ Յովհաննու եպիսկոպոսի. և 'ի լինել հալածանաց քրիստոնէից՝ ամենեքեան փախեան և զիս միայն ըմբռնեցին և մատնեցին Տիբերիանոսի դատաւորին Եդեսացւոց. և անցոյց զիս ընդ չարաչար տանջանս, և երիցս եհար զիս հրապարակաւ տանջանօք, կարծելով թէ դարձուցէ զխորհուրդս իմ ուրանալ յԱստուծոյ. և կարդացեալ իմ զՀայր և զՈրդի և զՀոգին սուրբ, և փրկեաց զիս յանօրէն ձեռաց նորա. և այժմ հասեալ մատուցայ ատենիս քո՝ որով եհաս ինձ մեռանել վասն անուան Աստուծոյ իմոյ։ Արա զինչ կամիս, քանզի մերձ է որ օգնէ ինձ՝ Քրիստոս։

Դատաւորն ասէ. Ա՛յ փախչող, մի՛ համարիր թէ կարող ես յիմոց ձեռացս փախչել։ Թաղղոս ասէ. Հաւատամ յամենաթագաւորն Աստուած, եթէ ոչ յամօթ առնէ զյուսացեալս իւր 'ի Քրիստոս. և որք վասն անուան նորա գան 'ի վկայութիւնս յայս։ Ասէ դատաւորն. Գելիկոնաւ ծակեցէք զպճղունս դորա և անցուցէք տոռունս, և քարշեցէք ընդ քաղաքս, զի փախչող է՝ գուցէ փախչիցի 'ի թագաւորաց։

Եւ սկսան առնել այսպէս. և ջանացան և ոչ կարացին։ Եկն նուիրակապետն և ասէ. Աղաչեմք զքեզ, տէր, յառաւօտէ մինչև ցայժմ ջանացաք և ոչինչ կարացաք առնել։ Դատաւորն ասէ. Կրկին ջանացարուք, թերևս կարիցէք ծակել։ Եւ եկեալ Աստերիոս հիւան՝ ասէ. Որպէս հրամայեցեր ծակեցաք զպճղունս նորա և կապեցաք տոռամբք։ Թէոդորոս դատաւորն ասէ. Ածէք այսր զփախչողն. և ածին։ Ասէ ցնա. Մատիր և զոհեա աստուածոցն ըստ հրամանի թագաւորացն, զի փրկեսցիս 'ի տանջանացդ։ Թաղղոս ասէ. Քրիստոնեայ եմ և կռոց երկիր ոչ պագանեմ, զի մի՛ կորուսից զիսոստացեալն ինձ յԱստուծոյ զվարձան։ Դատաւորն ասէ. Եկայք կախեցէք զնա գլխիվայր իբրև զմի յանզգամայ։ Իսկ արբանեակքն սատանայի փայտ լոկ կախեցին. և աշակերտն Թաղղէ Տիմոթէոս ասէ. Տե՛ս

զինչ արբանեակքն սատանայի գործեն։ Թաղեոս ասէ. Լուռ լեր եղբայր, քանզի Քրիստոս է որ օգնէ մեզ, և նոցա զընդունայնաջանութիւն տայ։ Դատաւորն ասէ. Ո՛չ առաւ, ո՛ է, որ ոչ հրամայեցի ձեզ զայդ կախել, և դուք փայտ լոկ կախեալ տանջէք, և ծաղր առնէք զհրամանս արքունականս։ Աստերիոս հիւսն ասէ. Կենդանի է Տէր Աստուած առն այնորիկ հաւատացելոյ, ոչ առնեմ յանցուցանս և կամ ծաղրականս, այլ և ես խոստովանիմ զՔրիստոս Թագաւոր երկնի և երկրի, յոր նայն է յուսացեալ և հաւատացեալ։

Իսկ Աղեքսանդրոս դահճապետն ասէ. Արդարև մեծ փառս տեսաք վասն երանելի առնս այսորիկ, և ոչ կարեմք արկանել 'ի դա ձեռս, վասն որոյ և մեք հաւատացաք 'ի Քրիստոս և քրիստոնեայք եմք. որով զգիտութիւն ճշմարտութեան առեալ՝ չարչարակից սրբոյն Թաղեայ լինիցիմք։ Եւ դատաւորն տեսեալ բարկացաւ 'ի վերայ նոցա յոյժ, մռնչելով իբրև զառիւծ, կրճտելով զատամունս իւր 'ի վերայ նոցա։ Իսկ Աստերի և Աղեքսանդրի յաղօթս կացեալ՝ ասեն. Տէր Աստուած քրիստոնէից, մի՛ տար սատանայի յափշտակել զանձինս ծառայից քոց՝ որ խոստովան առնին առ քեզ։ Եւ զայս ասացեալ փախեան յերեսաց դատաւորին։ Եւ հասեալ Միդոս ոմն 'ի դրանէն և սպան զնոսա. և եկեալ պատմեաց դատաւորին, և ասէ. Տէր դատաւոր, հասի նոցա 'ի լերինն, և կալայ և սպանի զնոսա սրով, և ընկեցի զնոսա 'ի լերինն, և տեսին ամենայն բազմութիւնն։

Դատաւորն ասէ. Զինչ կամիս դու Թաղեոս, զոհել աստուածոցն և ապրել, եթէ չարաչար մեռանել։ Թաղեոս ասէ. Ոչ կարես հաւանեցուցանել զծառայս Աստուծոյ զոհել մնոտի դիւաց և պատկերաց նոցա. և ոչ երկնչիմ 'ի տանջանաց քոց, քանզի մերձ է առիս Քրիստոս յոյսն իմ, և զերծուցէ զիս 'ի տանջանաց քոց։ Եւ բարկացեալ դատաւորն յարեաւ ինքնին տանջել զերանելին, և ցամաքեցան ձեռք նորա։ Աղաղակեաց Թագաւորն և ասէ. Աղաչեմ զքեզ, ծառայ ճշմարտին Աստուծոյ, աղօթեա վասն իմ զի բժշկեսցին ձեռքս իմ։ Եւ իբրև աղօթեաց Թաղեոս՝ ողջա-

ցան ձեռք նորա, և ամենեքեան զարմացեալ ասէին. Մեծ է Աստուածն քրիստոնէից։ Դատաւորն ասէ. Կոչեսցի նաւավարն. և իբրև եկն, ասէ. Ընկեցէք զդա 'ի նաւ և տարէք 'ի Սիպրոս քաղաք, և անդ մեռցի դա, և մի՛ մեռցի 'ի ձեռաց իմոց։ Թաղղոս ասէ. Դու արարեր սկիզբն, և 'ի քէն կատարիմ։ և առեալ ընկեցին զնա 'ի նաւ։ Եւ մինչդեռ վարէին նոքա, ասէ Թաղղոս. Կարող է Քրիստոս դարձուցանել զնաւս 'ի տեղին՝ ուր հար զիս Թէոդորոս։ Եւ իբրև գնային, եղև հողմ ուժգին 'ի մէջ ծովուն ընդդէմ, դարձոյց զնաւսն այնմ նաւու հանդերձ յորում էր սուրբն Թաղղոս։ Եւ իբրև եկին մերձ ուր էր ատեանն, աղաղակեաց առ դատաւորն Թաղղոս և ասէ. Արդ ո՞ւր են աստուածքն քո, կամ ո՞ւր են պարծանքն քո. և դիմադարձեալ Քրիստոս յաղթեաց և շլացոյց զխայթոց սատանայի հօրն քում։

Դատաւորն ասէ. Տեսէք, զի՞արդ կախարդեաց և զնաւսն թռոյց։ Եւ հրամայեաց ածել կախարդս. և իբրև ածին, Թէոդորոս դատաւորն ասէ. Զի՞նչ առնեմք սմա՝ զի յաղթեաց կախարդութեամբն իւրով։ Ուրբիկոս կախարդ ասէ. Այդ քրիստոնէից չարակուիս է և չարամահ. բայց դու արա զոր ասեմն քեզ, և ապրագ սատակեսցես զնա. արասցես տախտակս և բեւեռս սուրս իբրև կարակնով, և բևեռեսցես զտախտակսն ընդ հերս նորա. և քարշեսցի 'ի մէջ քաղաքին յասպարիսին, և այնպէս լուծանի կախարդութիւն նորա. և յետ այնորիկ արկցեն գազանաց՝ զի քարշեսցեն զմարմին նորա։ Եւ դատաւորն փութալով հրամայեաց առնել զհնարս բևեռաց տախտակացն. և իբրև արարին՝ ածին զսուրբն Թաղղոս։ Եւ տարածեալ զձեռս իւր եկաց յաղօթս և ասէ. Տէր Աստուած, մեծ կաց ծառայի քում, և յաղթեա չար հնարից սատանայի, զի փառաւորեսցի անուն քո յիս, և ծանիցեն զամբարշտութիւն չարութեան նոցա, եթէ ոչ կախարդութիւն է՝ այլ անպատմելի զօրութիւն աստուածութեանդ քո։ Եւ իբրև զայս ասաց, արկին զնա 'ի տախտակսն և բևեռեցին. և կապեալ քարշէին զնա ընդ մէջ քաղաքին յասպարիսին։ Եւ նստեալ դատաւորն յասպարիսին՝ ասէ. Կարդասցէ,

ի եդ[1] 'ի չար պաշտամունէդ քրիստոնէից։ Զօրականքն ասեն. Արդ կարծեմք եթէ մեռաւ։ Դատաւորն ասէ. Շամփուր ջեռուցէք և արարէք իբրև զհուր և ծակեցէք զկողս գորա, մի՛ գուցէ խաբիցէ։ Եւ երանելին Թաղթոս տեառնագրեաց զինքն նշանաւ սուրբ խաչին Քրիստոսի, շարժեաց զինքն 'ի վեր վազելով, խզեաց զամենայն կապանսն որով պնդեալ էին բևեռաքն, և եկաց 'ի մէջ, զօրաւորագոյն ևս խօսելով և ասէ. Օրհնեալ է Աստուած, որ յարոյց զիս 'ի մեռելոց, և յամօթ արար զկռոցն զպաշտօնեայսն։

Յայնժամ դատաւորն հրամայեաց արձակել 'ի վերայ նորա գաղանս. և մատակ առիւծ մի եկեալ ոչինչ ինասեաց նմա։ Եւ դարձեալ արձակեաց 'ի վերայ նորա ինձս, և երթեալ գաղանքն անկանէին յոտս նորա և գորովէին զնովաւ։ Եւ սուրբն Թաղթոս մեծաձայն ասէ. Երանի՛ որ հաւատան 'ի Քրիստոս. երանելիք են որ առանց երկմտութեան մատչիցին 'ի խոստովանութիւն նորա. երանելիք են որ մատնեցին զանձինս իւրեանց 'ի չարչարանս վասն Քրիստոսի, զի նոքա յաղթեն սատանայի։ Եւ զայս իբրև լուաւ դատաւորն՝ ասէ. Զիարդ զվայրենի գաղանսն կախարդեաց՝ կարդալով զանունն Քրիստոսի։ Եւ հրամայեաց դատաւորն բերել զնա յորմ ասպարիսին, և ամենայն բազմութեան քաղաքին քարկոծել զնա։

Աղաղակեաց Թաղթոս և ասէ. Ամենակալ Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, դարձո յինէն զբոսպառնալիս մարդկային, զի ծանիցեն թէ դու ես Աստուած միայն, և բայց 'ի քէն այլ ոչ ոք, և ես ծառայ քո։ Եւ զայս նորա ասացեալ աղօթելով՝ քարինքն յետս դառնային, և զբազումս յամպարշտացն վիրաւորեցին. և սուրբն ոչ վիրաւորեցաւ, քանզի ծածկեալ էր շնորհօքն Քրիստոսի։ Եւ դատաւորն հրամայեաց իջուցանել զնա, և ասէ ցնա. Մատուցեալ զոհեա աստուածոցն, քանզի 'ի նոցանէն օգնիս, վասն որոյ և ես երկայնամիտ եղեալ առ քեզ. ապա թէ ոչ՝ երդուեալ յԱպկլեպիոս՝ այլ ևս 'ի դառն տանջանս հրամայեմ մատնել զքեզ։ Թաղթոս ասէ. Քրիս-

1. Այսպէս յօրինակին։

տոնեայ եմ և դիւաց ոչ կարեմ զոհել. որպէս կամիս՝ արա, ոչ երկնչիմ 'ի տանջանաց քոց, զի Քրիստոս է որ օգնէ ինձ։

Եւ հրամայեաց դատաւորն բերել ձէթ և ձիւթ և ծծումբ և կուպր, և խառնել 'ի միասին 'ի կուղթ երկաթի, և ջեռուցանել քաջ և արկանել զգլխով նորա, ասէ. Տեսանեմ թէ օգնէ՞ դմա Քրիստոս՝ յոր յուսացեալն է։ Թաղղոս ասէ. Հաւատամ 'ի Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ որ զօրացոյց զիս և օգնեաց ինձ. և նա է որ յաղթէ քեզ ինձ. և դու անօրէն կուրացեալ ամբարշտութեամբ ոչ կարես տեսանել զՔրիստոսին իմոյ զօգնականութիւնն։ Իբրև զայս ասաց, մատուցին զկղութն մինչդեռ եռայր, և հեղին զգլխոսին նորա. և կուպրն եղև իբրև զջուր ցուրտ, և ոչ ինասեաց նմա։ Դատաւորն ասէ. Կախարդութեամբ քո յաղթես ամենայնի. մի՞ գուցէ և զմեզ հաւանեցուսցես լինել քրիստոնեայ կախարդութեամբ քո։ Եւ հրամայեաց կոչել զՈւրբիկոս կախարդ. նա այնպէս փութով մարտեաւ ընդ նմա. և իբրև ամենայնի յաղթեաց՝ հրամայեաց դատաւորն կոչել զթովիչսն զԻլիթոպոս և զԲարտիկուր. և իբրև եկին, ասէ դատաւորն. Զինչ առնեմք քրիստոնէիս այսմիկ, զի պարծելոց է թէ յաղթեաց մեզ. և արդ արկէք զդա ուր չար գազանքն են։ Եւ ասեն ցնա. Աւուրք են զի կան գազանքն և ոչ ինչ են Ճաշակեալ։ Դատաւորն ասէ. Մի խնայիցէք 'ի դա, այլ արկէք զդա 'ի գազանսն, զի սատակեսցեն զդա գազանքն։

Եւ իբրև արկին զնա 'ի գուբն՝ ընթացեալ գազանքն անկանէին յոտս նորա և լիզուին զոտս նորա և նմա ինչ ոչ ինասէին։ Եւ էին 'ի գուբն իժք և քարբք և օձք եղջերաւորք։ Եւ կացեալ Թաղղոս 'ի գուբն զերիս տիւս և զերիս գիշերս ընդ գազանսն, և անդադար փառաւորէր զԱստուած։ Եւ յետ երից աւուրց ասէ դատաւորն ցթովիչսն. Մալեցին կախարդքն ըզթովիչսն զայն։ Եւ նոքա ասեն. Ըստ հրամանի քում ընկեցաք զնա 'ի գուբն, և կացեալ ընդ գազանսն զերիս տիւս և զերիս գիշերս, և ամենևին ոչ են մերձեցեալ 'ի նա. այլ զտիւ և զգիշեր պար առեալ օրհնէին և փառաւոր առնէին զանուն Տեառն Աստու-

ծոյ իւրոյ։ Եւ զարմացեալ դատաւորն հրամայեաց ածել զնա. և իբրև եմուտ առաջի նորա, սկսաւ դատաւորն ողոքել զնա և ասէ. Ե՛կ այր բարի, զոհեա աստուածոցն, և խոստովանեա զԱդրիանոս ամենակալ, և արձակեմ զքեզ։ Թաղղոս ասէ. Եւ յառաջ ասացի քեզ և այժմ ասեմ, եթէ քրիստոնեայ եմ և ոչ ուրանամ զԱստուածն իմ, և ոչ մատչիմ՝ի քարեղէն անզգայս և՝ի պատկերս դիւաց պղծոց. և վասն Ադրիանոսի մարդոյ ամբարշտի՝ զի՞ բռնադատես զիս, զի ոչ խոստովանիմ ես զնա, այլ գիտեմ եթէ անօրէն և ամբարիշտ է և անսուրբ և ժանտագործ։ Թէոդորոս դատաւորն ասէ, եթէ՝ Ոչ ելանես՝ի ձեռաց իմոց մինչև խնդրեցից զվրէժս աստուածոցն, զոր հայհոյելով և անարգելով և արհամարհելով զդատաւորութիւնս մեր։ Եւ հրամայեաց ջեռուցանել հնոց, և առաւել ջեռուցին։ Եկն Կղաւդիանոս ոմն՝ի դրանէն և ասէ ցդատաւորն. Այնպէս եղև իբրև զձառագայթս՝ի սաստկութենէ այրմանն։ Եւ հրամայեաց դատաւորն արկանել զԹաղղոս հանդերձ ընկերօքն՝ որք անուանէին քրիստոնեայքն, որոց անուանքն էին այսոքիկ. Նարկիսոս, Թէոտիոս, և Ակաստասիա, Փիղագուս, Մակարիաս, Թէոդողէ, և Անաստասիս։ Եւ որպէս հր...[1]

. . . . . .

...ագրեալ զինքն խաչիւն Քրիստոսի և շարժեաց զինքն՝ի վեր վազելով, խլեաց զամենայն զկապանսն և զբևեռսն, և եկաց՝ի մէջ խոստովանելով և ասելով. Օրհնեալ է Աստուած որ յարոյցն զիս՝ի մեռելոց և յամօթ արար զկռոցն զպաշտօնեայսն։ Յայնժամ հրամայեաց դատաւորն արձակել՝ի վերայ նորա գազանս. Եւ մատուցեալ մատակ առիւծ մի անկաւ առոտս նորա։ Դարձեալ արձակեցին ինձ, և անկաւ առաջի նորա. Եւ գազանքն ձայնիւ ձեւացուցանէին գովութիւն սրբոյն։ Եւ սուրբ վկայն ասէ մեծաձայն. Երանի՛ որ հաւատան՝ի Քրիստոս. երանելիք են որ առանց երկմտութեան մատչին՝ի խոստովանութիւն նորա, զի նոքա ժառանգեսցեն զպարգևս։ Երանելիք են

1. Այս թերի մնայ օրինակն, բայց կայ և հետևեալդ վերջին մասն պատմութեան նորին սրբոյ՝ այլ շարադրութեամբ։

որ մատնեն զանձինս իւրեանց վասն Աստուծոյ, զի նոքա յաղթեն սատանայի։ Զայս իբրև լուաւ դատաւորն, զարմացաւ և ասէ, թէ՝ ԶիաՀրդ զվայրենի գազանսըն կախարդեաց յիշելով զանունն Յիսուսի։ Հրամայեաց դատաւորն և ասէ. Բերեռեցէք զդա յորմ պարսպին. եւ Հրամայեաց ամենայն բազմութեանն քարկոծ առնել զնա։ Եւ'ի քարկոծելն՝ սուրբն աղաղակէր և ասէր. Աստուած ամենակալ Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, դարձո՛ յինէն զսպառնալիս դիմադարձին, զի ծանիցեն թէ դու ես Աստուած և ոչ այլ ոք բայց 'ի քէն. և ես անարժան ծառայս քո խոստովան եղէց քեզ։ Եւ զայս նորա աղօթելով քարինքն յետս դառնային, և յամբարշտացն բազումք սատակէին. և սուրբն ոչ վիրաւորէր, քանզի էր ծածկեալ շնորհօքն Քրիստոսի։ Եւ դատաւորն Հրամայեաց ի՛ջուցանել զնա, և ասէ. Մատիր և զոՀեա՛ աստուածոցն, զի 'ի նոցանէ օգնիս, վասն որոյ և ես երկայնամիտ եղէ առ քեզ. ապա թէ ոչ, երդուեալ յԱսկլէպիոն՝ դառնագոյն տանջանս ածեմ 'ի վերայ քո։ Սուրբն ասէ, քրիստոնեայ եմ և դիւաց ոչ զոՀեմ, ո՛րպէս կամիս՝ արա. ես ոչ երկնչիմ 'ի սպառնալեաց քոց, զի Քրիստոս է որ օգնէ ինձ։

Դատաւորն ասէ. Կուպր և ձիւթ և ծծումբ խառնեցէք և արկէք 'ի կուղթ երկաթի, և իբրև եռա քաջ՝ արկէք զգլխով դորա։ Թաղեղաս ասէ. Հաւատամ 'ի Տէրն իմ Յիսուս որ օգնեաց ինձ և օգնեացէ. և նա է որ յաղթէ քեզ ինձ. և դու անօրէն կուրացեալ ամբարշտութեամբ ոչ տեսանես զՔրիստոսի իմոյ զօգնականութիւն։ Եւ մատուցին զկուղթն մինչդեռ եռայր, հեղին զգլխով նորա և եղև իբրև զջուր ցուրտ, և ոչ յաղթէր նմա։ Դատաւորն ասէ. Մեծ կախարդութեամբ քով յաղթես ամենեցուն. և երկնչիմ մի գուցէ և զմեզ կախարդեալ հաւանեցուսցես։ Եւ կոչեալ զՈւրբիկոս կախարդ, և նովաւ պէսպէս փաթիլթօք մարտեաւ ընդ նմա։ Եւ իբրև ամենայնի յաղթեաց, ասէ դատաւորն. Կոչեցէք ինձ զԹովիչն, զԼիւդիոս և զՔարտիկար, և եկին առաջի։ Դատաւորն ասէ. Մեծ կախարդութեամբդ քո կարծես ապրել. Եւ ասէ ցԼիւդոս. Սուտ՛ք զդա և ար-

կէք 'ի գուբ չար իժիցն՝ զի սատակեսցի։ Իբրև արկին զնա 'ի գուբն, զոր տեսին գազանք լեզուին զոտս նորա և նմա ոչ վնասէին։ Եւ էին 'ի գբին իժք և քարբք և օձք եղջիւրաւորք։ Եւ կացեալ սուրբն 'ի գբին զերիս տիւս և զերիս գիշերս, և փառաւորէր զԱստուած։ Եւ կոչեալ զԹովիչն հարցանէր ցնոսա, եթէ մաշեցին գազանքն զկախարդն զայն։ Եւ ասեն Թովիչքն. Աղաչեմք զքեզ, ըստ հրամանի քում արկաք զնա 'ի գուբ գազանացն զերիս տիւս և զերիս գիշերս, և ոչ ինչ վնասեցին նմա, այլ անդադար օրհնէր զԱստուածն իւր։

Եւ զարմացեալ դատաւորն, հրամայեաց ածել զնա. և 'ի մտանելն նորա սկսաւ դատաւորն 'ի պատրել զնա, և ասէ. Ե՛կ այսր այր բարի, զոհեա՛ աստուածոցն, խոստովանեա՛ զԱդրիանոս ամենակալ, և արձակեմ զքեզ։ Թաղեղոս ասէ. Եւ յառաջագոյն ասացի քեզ և այժմ դարձեալ ասեմ; ես քրիստոնեայ եմ և ոչ ուրանամ զԱստուածն իմ, և ոչ մատչիմ 'ի քարեղէնս անզգայս և դևս պիղծս. և վասն Ադրիանոսի մարդոյ ամբարշտի զի՞ բռնադատես զիս. զի ոչ խոստովանիմ զնա ես, այլ զոր գիտեմն ասեմ; եթէ անօրէն և ամբարիշտ և անսուրբ և ժանդ է։ Դատաւորն ասէ. Երդուեալ յաստուածսն՝ ոչ պրծանիս 'ի ձեռաց իմոց, հայհոյելով զաստուածսն և անարգելով զինքնակալն և արհամարհելով զդատաւորութիւնս մեր։ Հրամայեաց ջերուցանել հնոց. եկն ոմն 'ի դրանէն և ասէ ցդատաւորն. Այնպէս եղև հնոցն որպէս ճառագայթք 'ի սպիտակութենէ հրոյն։ Դատաւորն ասէ. Առէք զդա, և ընկեցէք 'ի հնոցն հանդերձ եօթն ևս ընկերօք դորա ամբարիշտ քրիստոնէիւք, որոց անուանք են այսոքիկ. Մակարիոս, Թեստոս, Աստէնոս, Փիլիդոս, Մակարիա, Թէոդուղէ, և Ակաստիս։ Եւ առեալ դահիճքն զԹաղեղաս և զընկերս նորա՝ որ բազում չարչարանս կրեալ էին վասն անուանն Տեառն, և ընկեցին 'ի հնոցն. և գովէին և փառաւորէին զԱստուած, որ արժանի արար զնոսա կատարեալս հասանել երկնաւոր պսակին. և պատեալ զմիմեանսքք այր ընդ առն և կին ընդ կնոջ, աղաղակէին և ասէին. Որ երից մանկանցն 'ի հնոցին հովանի եղեր, պահեա՛ զմեզ անա-

լատ մնալ 'ի հուրս յայս, և ընկալ զՀոգիս մեր, որ սուրբդ և ճշմարիտդ ես. և դասեա ընդ սուրբս քո 'ի խորանսդ լուսոյ, զի անդադար փառաւորեսցուք զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգիդ, այժմ և յաւիտեանս. ամէն։ Եւ ասացեալ զամէնն՝ հատուցին զՀոգիսն 'ի ձեռն Տեառն։ Եւ յանկարծակի եղև որոտումն և փայլատակմունք և անձրևք սաստիկ և շինչոյց զՀուրն։ Եւ դատաւորն լքեալ յերկիւղէն, աղաղակեաց ասելով. Վայ ինձ մեղաւորիս զի զԱստուած դառնացուցի և զսուրբս նորա կոտորեցի։ Եւ 'ի սակաւ աւուրս բարձաւ 'ի կենացս. և բազումք հաւատացին 'ի Տէր։

Եւ Տանեբոս ծառայ սրբոյն Թադէղայ, առի զմարմին սրբոցն, և եդի զնոսա 'ի գերեզմանի 'ի գլուխ ասպարիզին, մերձ 'ի տաճարն Ադրիանոսի։ Որով հանապազ փառաւորի Աստուած 'ի ճգնութիւնս սրբոց վկայիցն, և շնորհէ զբժշկութիւն հոգւոց և մարմնոց, կատարողաց զյիշատակս սրբոցն, որք ճշմարտութեամբ փառաւորեն զերեքանձնեան տէրութիւն և զմի աստուածութիւնն, այժմ, և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Պատմութիւն վարուց Սրբոյն Թեկղեայ։

Իբրև ելեալ երթայր Պաւղոս յԻկոնիոն քաղաք յետ հալածանաց իւրոց, և յուղի անկեալ ընդ նմա Դեմաս և Հերմոգենէս պղնձագործք և դարբինք՝ որ լի էին խռովութեամբք, մեծաբանէին և խօսէին ընդ Պաւղոսի իբրև ընդ սիրելւոյ իւրեանց, և Պաւղոս հայցէր 'ի շնորհս ողորմութեանն Քրիստոսի. և կեղծիւք ինչ ոչ գնայր ընդ նոսա, այլ սիրէր զնոսա հաստարակայ[1]։ Եւ այնպէս սիրէր՝ որպէս զի զամենատեսութեանն զվարդապետութիւնն և զթարգմանութիւն և զծնունդն և զյարութիւնն, որպէս սիրելւոյ պատմէր նոցա, և հանգուցանէր զանձինս նոցա մեծութեամբն Քրիստոսի, և ցուցանէր բանիւք թէ որպէս յայտնեցաւ նմա։ Իսկ այր մի երանելի անուն Ոնեսիփորոս՝ լուաւ թէ Պաւղոս գայ յԻկոնիոն քաղաք, եկ ընդ առաջ նորա, ընտանեօք և Զենոնեաւ կնաւ[2] իւրով հանդերձ՝ ելին ընդ առաջ Պաւղոսի ընդունել զնա. քանզի պատմեալ էր նոցա Տիտոսի, և տուեալ զնշանս զոն տեսլեանն Պաւղոսի, զի ոչ ճանաչէր նա զՊաւղոս մարմնով, բայց հոգւով միայն։ Զոգաւ եկաց նա 'ի Ճանապարհակիցս պողոտային որ երթայր 'ի Լիւս-

1. Մի օր. առ հաստարակ... այնպէս զի և զբան հրամանի վարդապետութեան Տեառն։

Միւս օր. հաստարակ... զի զբանս հրամանին Տեառն։

2. Մի օր. Զենոնիա և ինաւ իւրով։ Իսկ Յոյնն ասէ. Լեկիրեաւ իւրով։ Իսկ Ցոյնն ասէ. Լեկիրեաւ իւրեանն և որդւովքն Սիմիաւ և Զենոնիա։

տրիա քաղաք, կայր և սպասէր նմա. և ընդ այնոսիկ որ երթային և գային՝ հայէր ըստ նշանացն զոր տուեալ էր նմա Տիտոս։ Իբրև ետես զՊաւղոս զի գայր, այր չափ հասակաւ [1], հերագանգուր, գուգք թերբագոյնք, կարթ գէլ, ծաւի, մեծակն, յօնակից, ունչք երկայնագոյնք, և լի էր շնորհօք Տեառն և ողորմութեամբ. երբեմն երևէր իբրև զմարդ, և երբեմն 'ի տեսիլ հրեշտակի։ Իբրև ետես Պաւղոս զՈնեսիփորոս, ուրախ եղև յոյժ։ Ասէ ցնա Ոնեսիփորոս. Ողջոյն ընդ քեզ, Պաւղոս, առաքեալ օրհնելոյն։ Ասէ ցնա Պաւղոս. Ողջոյն ընդ քեզ և ընդ ամենայն ընտանեակս քո, Ոնեսիփորոս։ Իսկ Դեմաս և Հերմոգենէս լի եղեն ցասմամբ, և բազում քինու երդիծանէին և ասէին ցՊաւղոս. Մեք ոչ էաք օրհնելոյն՝ զի այդպիսի ողջոյն ոչ երբեք ետուր մեզ։ Ետ պատասխանի Պաւղոս և ասէ ցնոսա. Քանզի ոչ տեսանեմ 'ի ձեզ պտուղ արդարութեան։ Ասէ ցնոսա Ոնեսիփորոս, եթէ՝ Ասնացէք ինձ [2], եկայք 'ի տուն իմ դուք ևս, և հանգերուք։ Եւ իբրև եմուտ Պաւղոս 'ի տուն Ոնեսիփորայ՝ և եղև անդ ուրախութիւն մեծ, ծունր եդեալ կացին յաղօթս, և յարեան հատին զհացն։

Մատեաւ Պաւղոս և սկսաւ խօսել զբանն Տեառն վասն ճշմարտութեան ոգւոյ և յարութեան մեռելոց, և ասէ այսպէս. Երանի՛ որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն. Երանի՛ որ պահեն զանձինս իւրեանց սրբութեամբ զի նոքա կոչեսցին տաճար Աստուծոյ։ Երանի՛ որ ճնշեն զմարմինս և զանձինս իւրեանց, զի ընդ նոսա խօսի Աստուած։ Երանի՛ որք արհամարհեսցեն զաշխարհս, զի նոքա հաճոյ լինիցին Աստուծոյ։ Երանի՛ այնոցիկ որ ունիցին կանայս այնպէս՝ թէ որպէս չունիցին, զի նոքա ժառանգեսցեն զերկիր։ Երանի՛ որ ունիցին զերկիւղն Աստուծոյ 'ի սիրտս իւրեանց, զի նոքա հրեշտակք կոչեսցին։ Երանի՛ որ դողան 'ի բանիցն Աստուծոյ զոր լսեն, զի զնոսա

1. Մի օր. լաֆաոոր հասակաս։ Երկ. օր. հէր գանգոոր, գոռգ ռնէրագոյն, խարի գէլ։ Իսկ Ցոյնն ունի. խարճ հասակաս, ճաղաք գլխով, խրասրոանգ, բարյոգէլ կամ խրաբարյ, յօնակից, արծռունգն։ Վասն որոյ գոռգ թուի ուղղելի գոռճ։

2. Մի օր. եռնէ ինչ ինչ՝ եկայք։ Միւս օր. եռնէ ինչ ինչ՝ եկայք։

կոչեսցէ Տէր։ Երանի՛ ողբ ընկալան զիմաստութիւն Յիսուսի Քրիստոսի, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին։ Երանի՛ ողբ պահեսցեն զմկրտութիւնն, զի նոքա հանգիցեն առ Հօր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն։ Երանի՛ որ առնուցուն զօրինակն Քրիստոսի, զի նոքա եղիցին 'ի լոյս մեծ։ Երանի՛ ողբ վասն սիրոյն Քրիստոսի ելանիցեն 'ի մարմնոյ՝ զի նոքա ժառանգեսցեն զկեանսն յաւիտենականս, և կայցեն մշտնջենաւոր ընդ աջմէ Որդւոյն Աստուծոյ։ Երանի՛ ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն առ 'ի Հօրէ, և յաւուրն դատաստանի ընկալցին զարքայութիւնն։ Երանի՛ հոգւոց և մարմնոց կուսանաց, զի նոքա հաճոյ լիցին Աստուծոյ, և ոչ կորիցեն վարձք նոցա սրբութեանն, զի քանից Հօր գործ գտցի 'ի նոսա, և ժառանգել զկեանս յաւուր Որդւոյն Աստուծոյ, և հանգիստ յաւիտենից եղիցի նոցա։

Եւ մինչ Պաւղոս խօսէր զայս ամենայն զմեծամեծս Աստուծոյ առ տնին 'ի մէջ ժողովրդոյն Ոնեսիփորայ, Թեկղ անուն կոյս մի դուստր Թեկղեայ՝[1] զոր խօսեալ էր առն որում անուն էր Թեմերոս, եկեալ նստէր առ պատուհանի միոջ որ մերձ էր 'ի տանիս նոցա, լսէր զբանն Պաւղոսի զոր խօսէրն վասն սրբութեան. և ամենևին ոչ մեկնէր 'ի պատուհանէ անտի զտիւ և ըզգիշեր, և լսէր զաղօթսն Պաւղոսի և զարմանայր ընդ հաւատս նորա. մանաւանդ զի տեսանէր բազում կանայս զի մտանէին առ Պաւղոս, լսել զպատգամս պատուիրանացն Աստուծոյ՝ զոր ուսուցանէր։ Եւ ինքն կաքօտէր նմա, զի զտեսիլ նորա ոչ տեսանէր, բայց միայն զբանսն ևեթ լսէր, և բնաւ ամենևին ոչ մեկնէր 'ի պատուհանէ անտի։ Յայնժամ առաքեաց մայրն առ Թեմերոս որում խօսէր զնա կին։ Իբրև լուաւ Թեմերոս եթէ կոչէ զնա զոքանչն իւր՝ եկն վաղվաղակի, և այնպէս համարեցաւ թէ տացէ նմա զԹեկղ առնուլ կնութեան։ Պատասխանի ետ Թեմերոս և ասէ ցզոքանչն իւր. Ո՞ւր է Թեկղ կին իմ[2], զի տեսից զնա։ Պատասխանի ետ Թեմերոսի զոքանչն և ասէ. Գործ

1. Ի բնագրին անուանքն են՝ Թէոկլիա և Թամիւրոս։

2. Բնագիրն՝ Ո՞ւր իմն իցէ Թեկլա։

մի ունիմ պատմել քեզ, Թեմերոս. Թեկղ՝ զոր խոսեալ էր քեզ, ահա այս երեք տիւք են և երեք գիշեր որ ոչ մեկնի 'ի պատուհանէ միոջէ, ոչ ուտէ և ոչ ըմպէ և ոչ յառնէ անտի. այլ զաչս 'ի վերայ եդեալ պշուցեալ հայի ընդ այր մի օտար, և իբրև 'ի քաղցր և 'ի պատիր բանս և 'ի մնոտիս և յանհաւն խօսելոյ հայի. և ես ընդ այս զարմացեալ եմ, եթէ զիարդ կոյս մի իմաստուն այնպէս զհետ երթայ չարաչար և պատիր բանից. ասեմ քեզ, Թեմերոս, զի զքաղաքս Իկոնացւոց ապականեաց այրն այն, և զԹեկղ՝ զոր խոսեալ էր քեզ՝ պատրէ. բազում և այլ կանայք և երիտասարդք մտին առ նա։ Եւ ուսուցանէ պաշտել զմի Աստուած և կեալ սրբութեամբ[1]։ Եւ Թեկղ պատի զնովաւ իբրև ասպն զոստայնիւ[2], և ընկղմեցաւ իմն 'ի ցանկութեան և 'ի չարաշշուկ գործս ապականութեան. և ոչ առնու զաչս 'ի վեր 'ի պատուհանէն, և ոչ երբեք մեկնի 'ի նմանէ, ոչ ուտէ և ոչ ըմպէ, և ընկղմեցաւ կոյսն. արդ մատիր դու Թեմերոս և խոսեա ընդ նմա, զի քեզ խոսեալ է զնա 'ի կնութիւն։

Եւ մատեաւ առնա Թեմերոս որում խոսեալ էր զնա 'ի կնութիւն, և մի՝ զի սիրէր զԹեկղ, երկրորդ անգամ՝ զի զանգիտէր 'ի մեծաշուք ցանկութենէ նորա։ Պատասխանի ետ և ասէ ցնա. Ապաքէն ինձ խոսեալ է զքեզ, զինչ է այդ գործդ զոր գործես դու, և զինչ է այդ չար ապականութիւնդ որ զքեզ ունի. դարձ առ իս և ամաչեա յինէն։ Եւ մայրն ևս խոսէր. Զի՞ 'ի խոնարհ նայիս և ոչ կամիս տալ պատասխանի, այլ և նմանեալ ես մոլեգնոտւոյ[3]։ Իբրև տեսին զնա ընտանիքն՝ սկսան լալ ամենեքեան, և Թեմերոս լայր թէ մեկնի 'ի նմանէ կինն իւր, և մայրն թէ մեկնի 'ի նը-մանէ դուստր նորա, և աղախնեայքն թէ մեկնին 'ի տիկնոջէն իւրեանց. և բազում տրտմութիւնք և վիշտք եղեն 'ի տանն։ Իսկ Թեկղի ոչինչ էր փոյթ վասն այնր ամենայնի, այլ խոնարհեցուցանէր զունկն իւր 'ի լսել զբանսն Պաւղոսի։

1. Մի օր. Բնակէլ սրբութեամբ։ փոխանակ կամ ղերամբ։
2. Երկ. օր. զոստինեաւ. Իսկ բնագիրն՝ Իբրև սարդի սոստայն զգա-
3. Երկ. օր. մոլեգնոտի։

Յայնժամ Թեմերոս լի եղև ցասմամբ. ընթացեալ 'ի հրապարակն հայէր ընդ մարդիկն որ մտանէին և ելանէին առ Պաւղոս. և յանկարծակի ետես արս երկուս որ կապէին ընդ միմեանս. յայնժամ 'ի վերայ հասանէր[1] Թեմերոս, և ասէ ցնոսա. Զի՞ դուք, զի՞ ընդ ձեզ, կամ զի՞նչ բանք բանից իցեն վասն որոյ դուքդ կապիցէք, կամ ո՞վ ոք իցէ այրդ որ 'ի նեղքս առ ձեզդ իցէ՝ որ պատրէ զանձինս երիտասարդաց և կուսանաց, և պատուէր տայ զի բնաւ ամենևին մի՛ լինիցին հարսանիք. կամ է ինձ տալ ձեզ արծաթ յոյժ, զի ասիցէք ինձ ո՞վ ոք ուստեք իցէ այրն, զի գլխաւոր եմք քաղաքիս։ Իսկ Դեմաս և Հերմոգենէս իբրև տեսին զնա՝ եկին առ նա և ասեն. Այրն այն զոր ասես դու՝ ոչ գիտեմք ո՞վ ոք ուստեք իցէ նա. բայց զայս գիտեմք զի մեկնէ զերիտասարդս 'ի կուսանաց և զկոյս յերիտասարդաց, և ասէ, եթէ ոչ կարէք դուք յառնել 'ի մեռելոց՝ եթէ ոչ պահեսջիք զանձինս ձեր սրբութեամբ։ Պատասխանի ետ Թեմերոս և ասէ ցնոսա. Եկայք ընկերք 'ի տուն իմ ընդ իս, և հանգերուք առ իս։ Եւ գնացին ընդ նմա յընթրիս՝ բարուք, և հաց մեծ գործեաց և խորտիկս յօրինեալ ետ նոցա ընթրիս մեծ Թեմերոս. քանզի սիրէր զԹեկղ Թեմերոս և կամէր առնուլ 'ի կնութեան յաւուր յորում ժամ տուեալ ժամատու եղև նմա զոքանչն իւր։ Եւ ասէ ցնոսա Թեմերոս մինչդեռ 'ի բազմականին էին. Ասացէք ինձ, ընկերք իմ և սիրելիք, զի՞նչ է ուսումն զոր ուսուցանէ այրն այն՝ զի և ես գիտացից. քանզի ոչ է թէ սակաւք են որ ամբաստանեն զնմանէ, և ինձ յոյժ ցաւ է վասն կնոջ իմոյ, զի սիրեաց զայր տարաշխարհիկ և օտարական, և ահա մեկնիմ[2] 'ի նմանէ։ Պատասխանի ետուն Դեմաս և Հերմոգենէս և ասեն ցնա. Դու Թեմերոս, երթ ցոյց զնմանէ դատաւորին և ասասցես այսպէս, եթէ՝ Այրն այն ուսումն նոր և օտարոտի ուսուցանէ յանուն Քրիստոսի, և անդէն իբրև լսէ՝ կորուսանէ զնա. և դու առցես զկին քո, և մեք

1. Մի օր. յայնվայր հասանէր։ Միւս օր. յայնվայր հասանէր... 2. Մի օր. և ահա ոչ դէնի 'ի նմանէ։ զի՞նչ բանի իցեն։

ուսուցանեմք քեզ զյարութիւն մեռելոց զոր նային ու-
սուցանէ։ Իբրև զայս լուաւ Թեմերոս, զի լի էր նա-
խանձու և քինու, կանխէր ընդ առաւօտն և երթայր
'ի տուն Ոնեսիփորայ՝ ինքն ծերովքն հանդերձ, բա-
զում և այլ զինու վառեալ զօրօք[1] ընդ նմա։ Պատաս-
խանի ետ և ասէ ցՊաւղոս. Կորուսեր զքաղաքս Իկո-
նացւոց, և զԹեկղ որ ինձ խօսեալ[2] էր՝ պատրեցեր
ուսմամբ քո, զի մի՛ լիցի ինձ կնութեան. արդ եկ եր-
թիցուք առ դատաւորն։ Եւ քաղաքն ամենայն ասեն.
Քարշեցէք զմոգդ, զի եղծեալ ապականեաց զկանայս
մեր օտարոտի ուսմամբք. յանձն առին ամենայն զօր-
քըն։ Իբրև չոգաւ Պաւղոս ընդ այնոսիկ որ ունէին
զնա, և եկաց առաջի դատաւորին, ձայն եբարձ Թե-
մերոս և ասէ ցդատաւորն. Այրս այս ոչ գիտեմք ո՞վ
ուստեք իցէ սա. և ոչ տայ թոյլ կուսից լինել արանց
իւրեանց, արդ ասասցէ առաջի քո վասն էր իրիք ու-
սուցանէ զայս ուսումն։ Իսկ Դեմաս և Հերմոգենէս
դարբինք՝ որ խռովութեամբ լի էին, մատեան առ նա
և ասեն. Այսա թէ քրիստոնեայ է, և ահա անդէն
կորուսանէ զդա։ Իբրև լուաւ դատաւորն զբանն Թե-
մերոսի և զամենայն մարդկանն որ ունէին զՊաւղոս,
ասէ ցնա. Այսա ինձ Պաւղոս, ո՞ ուստեք իցես դու և
զի՞նչ ուսուցանես. քանզի չեն սակաւ չարախօսքն որ
ամբաստանեն զքէն։

Յայնժամ եբարձ Պաւղոս զձայն իւր և ասէ. Ես
պատմեցից զինչ ուսուցանեմն, լուր դատաւոր. Ուսու-
ցանեմ զմի Աստուած որ ոչ հատուցանէ չար փոխա-
նակ չարեաց մարդկան։ Աստուած՝ որում ոչինչ է պի-
տոյ, բայց միայն կեանք որդւոց մարդկան, առաքեաց
զիս՝ զի 'ի կորստենէ և 'ի պղծութենէ սրբեցից զնոսա
և յամենայն ցանկութեանց մահու, զի այլ մի՛ ևս մե-
ղիցեն. վասն այնորիկ առաքեաց զիս Աստուած զի զոր
ետն քարոզեմ և աւետարանեմ, զի առնա եղիցի յոյս
ամենայն մարդկան. որում փոյթ եղև փրկել զժողո-
վուրդ իւր 'ի մոլորութենէ, զի այլ մի՛ ևս մեղիցեն և

1. Մի օր. Բաղում և այլ մարդ. Բրաւորօք։
Համբ Բիրաւորաց։
Միւս օր. Բաղում այլ մարդիօք

2. Մի օր. Իկոնացոց... զոր ինչ
խօսեցեալ... Էկ անց առ դատաւորն։

մի գնասցեն զեղխութեամբ, այլ եղիցի 'ի նոսա ահ և երկիւղ 'ի ձեռն հաւատոցն Աստուծոյ, զի ծանիցեն զսէր և զերկիւղ Ճշմարտութեանն[1]. արդ զոր Աստուած յայտնեաց ինձ՝ զայն ուսուցանեմ, զինչ պարտապան եմ դոցա։

Իբրև լսէր զբանս զայս դատաւորն, հրամանն ետ զի նովին կապանօք 'ի բանտն իցէ, մինչեւ եղիցի տեղի լսել նմա բարւոք։ Եւ Թեկղ 'ի նմին գիշերի առ զապարանջանն իւր և տարաւ ետ դռնապանին տան իւրոյ. և եբաց նմա զդուռնն, և ելեալ գնաց առ բանտապետն որ պահէր զՊաւղոս, և ետ նմա հայելի ոսկի[2] զի մտցէ առ Պաւղոս. և առ 'ի նմանէ զհայելին և եմոյծ զնա. չոգաւ նստաւ առ ոտն Պաւղոսի և լսէր զմեծամեծսն Աստուծոյ։ Եւ Պաւղոս ոչինչ փրտում ևս էր, այլ համարձակ և յայտնի զամենեսեան որ էին առ նա՝ ուրախ առնէր պատուիրանաւն Աստուծոյ. և Թեկղ մեծաւ ուրախութեամբ համբուրէր զոտս նորա և զկապանս ոտից և ձեռացն Պաւղոսի։

Եւ իբրև խնդրեցին ընտանիքն զԹեկղ և ոչ գտին՝ համարեցան թէ կորեաւ, մատեան խնդրէին զնա յանցս Ճանապարհացն։ Եւ եկն ընկեր մի դռնապանին, գուշակեաց զնմանէ և ասէ. Ես տեսի զԹեկղ զի ետ զապարանջան իւր դռնապանին և ել։ Եւ իբրև տանջեցին զդռնապանն, հարկաւ խոստովանեաց[3] և ասէ. Այո՛, ել և այսպէս ասաց, եթէ երթամ առ այրն օտարական որ կապեալն է 'ի բանտի։ Եւ չոգան գտին զնա որպէս ասաց նոցա դռնապանն. և երթեալ գտին զի նստէր առ ոտն Պաւղոսի, և տեսին այլ ևս բազում մարդիկ որ լսէին զմեծամեծս Քրիստոսի։ Եւ ելեալ անտի Թեմերոս և բազում մարդիկ որ ընդ նմա չոգան լի ցասմամբ, և պատմեցին դատաւորին զոր ինչ եղեւն։

Յայնժամ հրամայեաց դատաւորն ածել զՊաւղոս. և ընթացան պատանիքն լուծին զՊաւղոս և քարշէին, ածին զնա 'ի բանտէ անտի. և Թեկղ անկանէր 'ի գետինն և լայր դառնապէս 'ի տեղւոջն ուր նստէրն Պաւ-

1. Մի օր. ճշմարտութեամբ։
2. Յոյնն՝ հայելի արծաթի։
3. Երկ. օր. խոստովանեցաւ։

զոս կապեալ և ուսուցանէր զպատուիրանն Աստուծոյ։ Դարձեալ դատաւորն հրամայեաց ածել զԹեկղ. և ընթացաւ Թեմերոս և բազում մարդիկ ընդ նմա կալան զԹեկղ և քարշէին զնա։ Իբրև ետես դատաւորն՝ տրտմեցաւ վասն նորա յոյժ. և Թեկղ մեծաւ ուրախութեամբ կայր առաջի նորա և ոչինչ էր տրտում։ Յայնժամ յանկարծակի աղաղակեցին ամենայն զօրքն և ասեն. Կորուսէք զմոգդ զայդ։ Բայց դատաւորն ոչինչ ասաց ցՊաւղոս [1]. և ապա նստաւ դատաւորն յաթոռ և կոչեաց զԹեկղ. և ասէ ցնա դատաւորն. Ընդէ՞ր ոչ լինիս առն քում՝ ըստ օրինաց Իկոնացւոց։ Եւ Թեկղ անցեալ կայր այնպէս, և պշուցեալ հայէր 'ի Պաւղոս, և բնաւ ամենևին պատասխանի ոչինչ տայր դատաւորին։ Զ՚Ամիչ եբարձ մայր նորա մեծաւ աղաղակաւ և ասէ. Կորուսէք զանմիտն 'ի մէջ Թէատրոնիդ, զի ամենայն կանայք ընդ դա հայելով մի՛ և ուսցին զայդ ուսումն չար։ Իբրև լուաւ դատաւորն՝ տրտմեցաւ յոյժ վասն նորա. ապա հրաման տայր դան հարկանել զՊաւղոս, և հանել արտաքոյ քան զքաղաքն. և տայր վՀիռ զի այրեսցեն զԹեկղ հրով 'ի մէջ Թէատրոնին։ Յառնէր դատաւորն երԹալ 'ի Թէատրոնն և ամենայն զօրքն ընդ նմա, տեսանել զԹեկղ մինչ այրեսցի 'ի հուրն։ Եւ որպէս ոչխար մի մոլորեալ 'ի լերինս որ խնդրիցէ զհովիւն, այնպէս և Թեկղ խնդրէր զՊաւղոս։ Եւ մինչդեռ հայէր 'ի մարդիկն ամենայն՝ ետես զՏէր Յիսուս զի նստէր դէմ յանդիման նորա 'ի նմանութիւն Պաւղոսի. պատասխանի ետ Թեկղ և ասէ. Եկն Պաւղոս և նստաւ դէմ յանդիման իմ, որպէս զի ոչ կարեմ ժուժկալել [2] տեսլեանն որ երևեցաւն ինձ։ Եւ մինչդեռ զայս եղեալ պշուցեալ էր ընդ նա՝ յարեաւ Տէր անտի և եկ յերկինս։

Եւ բերին մանկտին և կանայքն փայտ և եղին 'ի Թէատրոնին այրել զԹեկղ. և մուծանէին զնա մերկ 'ի Թէատրոնն։ Իբրև զայն տեսանէր դատաւորն՝ ըզ-

1. Մի օր. ընդ Պաւղոս։ Միւս օր. ընդ Պաւղոսի։
2. Մի օր. որպէս զի խորհի ժուժ։ Միւս օր. որպէս զի ոչ ունիմ ժուժ։

լալ առնոյր և զկական բառնայր, և զարմանայր ընդ զօրութիւնն որ 'ի նմա։ Ժողովէին զփայտն որ 'ի նմա և լուցանէին, և բուռն հարկանէին զնմանէ երիտասարդքն՝ զի ելցէ կացցէ 'ի վերայ հրոյն բորբոքելոյ. և Թեկղ առ ժամայն ելանէր կայր 'ի վերայ հրոյն։ Իբրև ելանէր դիզանէր բոց հրոյն բորբոքելոյ, և մաղ մի 'ի հերաց նորա ոչ կիզէր, զի գթացաւ 'ի վերայ նորա հոգին Աստուծոյ, և ձայն գոչման յերկնէ ելանէր, և ամպ ցօղագին լինէր[1] 'ի վերայ նորա, և կարկուտ և և անձրև սաստիկ յերկիր հեղոյր. և բազումք 'ի մարդկանէն որ լսէինն և հայէին՝ սատակէին. և հուրն շինջաւ և Թեկղ ապրեցաւ։ Եւ Պաւղոս 'ի պահս էր, ինքն և Ոնեսիփորոս, և կին նորա և որդիք 'ի տան միոջ երիտասարդի, որոյ բացեալ դուռնն՝ հայի ընդ կողմ Ճանապարհի Իկոն քաղաքի։ Իբրև լինէին աւուրս բազումս անդ 'ի պահս, ասեն մանկտին ցՊաւղոս. Բաղցեալ եմք. և ոչ գոյր նոցա թերևս ինչ թէ տացեն գնոյ, քանզի եթող Ոնեսիփորոս զտուն և զկեանս իւր, և եկ ընդ Պաւղոսի ընտանեօք իւրովք հանդերձ։ Յայնժամ ելան Պաւղոս զպարեգօտն իւր և ետ ցպատանին և ասէ. Երթ, որդեակ, և գնեա հաց որչափ և գտանի. գնաց պատանեակն գնել հաց. և ետես անդ զԹեկղ դրացի իւր[2], զարմացաւ և ասէ. Թեկղ, յո՞ երթաս։ Ասէ ցնա. Պաւղոսի զհետ երթամ, զի ապրեցայ 'ի հրոյ անտի։ Եւ պատանեակն ասէ. Եկ տանիմ զքեզ առ նա, քանզի յոգւոց հանէ, հեծէ և լայ, և այս վեց օր է զի պահէ և խնդրէ յԱստուծոյ վասն քո։ Եկն ընդ նմա Թեկղ 'ի տուն պատանւոյն և եկաց առ Պաւղոսի, և եգիտ անդ 'ի ծունկս զի կայր յաղօթս, աղաչէր և ասէր. Հայր մեր որ յերկինսդ ես, խնդրեմ 'ի քէն մի՛ մերձեսցի հուրն 'ի Թեկղ, այլ շինջո զնա 'ի նմանէ, զի քո է։ Եւ Թեկղ կայր յետոյ նորա. եբաց զբերան իւր և ասէ. Հայր՝ որ արարեր զերկինս և զերկիրս, և դու ես հայր որբոց, գոհանամ զքէն վասն որոյ արարեր ընդ իս ողորմութիւն, և կեցուցեր զի տեսից զՊաւղոս։ Յարեաւ

1. Մի օր. ամպ ցօղագին հովանի լինէր։

2. Մի օր. 'ի դրաց Իւրեանց։

Պաւղոս և ետես զնա. պատասխանի ետ և ասէ. Աստուած սրտագէտ ամենայնի, Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, գոհանամ զքէն զի վասն որոյ խնդրեցի՝ հաներ 'ի հրոյն, և ետուր ինձ տեսանել զնա, և սոցա որ ընդ իս են. 'ի քո ձեռս է փրկել միայն յամենայն վշտաց որ փառաւորեն զանուն քո յաւիտեանս։

Եւ Պաւղոս ցնծայր և ուրախ էր հանդերձ ամենեքումբք որ ընդ նմայն էին։ Եւ եբեր նոցա պատանեակըն հինգ նկանակ հաց և խաւարտք և այլ ևս աղ և ջուր, և ուրախ լինէին 'ի գործս իւրեանց և զօրանային 'ի շնորհս ողորմութեանն Քրիստոսի։ Եւ ասէ Թեկղ ցՊաւղոս. Փոքրեցից զհերս իմ և եկից զկնի քո յո՛ և դու երթիցես։ Ասէ Պաւղոս. Պատերազմ սաստիկ է, և դու գեղեցիկ ես, գուցէ և այլ փորձութիւն գայցէ 'ի վերայ քո այլ ևս մեծ քան զառաջինն, և ոչ կարես համբերել։ Ասէ Թեկղ ցՊաւղոս. Միայն ընդդրոշմն Քրիստոսի տուր ինձ, և փորձութիւն առ իս ոչ մերձենայ։ Ասէ Պաւղոս ցԹեկղ. Երկայնամիտ լեր և առցես զոր ինչ խնդրեսն։ Եւ արձակեաց Պաւղոս զՈնեսիփորոս հանդերձ ընտանեօք իւրովք, և գնացին 'ի տունն իւրեանց. և Պաւղոս կալաւ զձեռանէ Թեկղի (և մարդիկն որ ընդ նմայն էին[1]), և չոգան մտին յԱնտիոք քաղաք։ Եւ մինչդեռ մտանէին և երթային, ոմն 'ի գլխաւորաց Անտիոք քաղաքի Աղեքսանդրոս անուն, որոյ բազում ինչ գործս գործեալ էր յԱնտիոք, իբրև ետես զԹեկղ սիրեաց յականէ[2], և փաղաքշէր Պաւղոսի և պատրէր զնա տալ նմա արծաթ և ոսկի յոյժ։ Ասէ Պաւղոս. Ոչ գիտեմ զկինդ զորմէ ասեսդ, և իմ չէ ինչ դա։ Եւ քանզի բուռն էր Աղեքսանդրոս, ետաս և բուռն ետար զԹեկղի, և գիրկս արկ 'ի մէջ հրապարակին։ Եւ նա ոչ համբերէր գործոյն, այլ աղաղակ եդեալ զՊաւղոս խնդրէր մեծաւ գոչիւն և ասէ. Մի՛ նեղեր[3] զտարաշխարհիկս, մի՛ տառապել զաղախինս Աստուծոյ. դուստր եմ ես գլխաւորաց Իկոնիոն[4] քաղաքի, և վասն զի ոչ կամեցայ միայն ասէ։

1. Զեռ 'ի բնագրին բանդ փակագծեալ։
2. Ասա և զկնի՝ յոյնն «էրէաց
3. Մի՛ օր. ֆեղեր։
4. Մի՛ օր. Իկենացոց քաղաքի։

լինել կին Թեմերոսի առն իմում[1], հանին զիս 'ի քա-
ղաքէն իմմէ. և անդէն բուռն հարկանէր զԱղեքսան-
դրէ և պատառէր զպատմուճան նորա, և զպսակն զոս-
կի զկայսերակերպ[2] զոր ունէր 'ի գլուխն՝ հանէր 'ի
նմանէ և յերկիր ընկենոյր, և զնա մերկ կողոպուտ և
ամօթալից թողոյր։ Եւ քանզի սիրեաց զնա յականէ
Աղեքսանդրոս, և դարձեալ զի յամօթ ևս արար զնա
գործովքն զոր գործեաց ընդ նմա, վաղվաղակի իսկոյն
եցոյց դատաւորին, եթէ զայս ինչ և զայս գործեաց
ընդ իս Թեկղ, և ոչ է յուրաստ զոր ինչ գործեաց.
արդ դատեա զնա և հրամայեա զի արկցեն գազանաց.
և ինքն Աղեքսանդրոս էր որ տայր 'ի տեսիլ քաղաքին
զգազանսն։ Եւ իբրև լուան ամենայն քաղաքացիքն՝
զարմացան, և բոլոր բարձին առաջի ատենին և ասեն.
Անիրաւ է դատաստանդ որով դատիք զԹեկղ։ Եւ
Թեկղ եկն եկաց առաջի դատաւորին, երդմնեցոյց
զնա և ասէ, եթէ՝ Զայս ինչ շնորհ արա ընդ իս, զի
մինչ[3] արկցեն զիս գազանացն՝ պահեցայց սրբու-
թեամբ։ Եւ դատաւորն իբրև զայս բանս լսէր՝ ասէ
զԹեկղ. Երթ պահեա ուր և կամիս։ Եւ էր անդ տի-
կին մի թագաւորաշն մեծատուն, Տրիփոնիա անուն,
որոյ մեռեալ էր դուստր իւր, և ա՛ռ զնա առ իւր 'ի
տուն իւր, և քաջալերէր զի տեսանէր զԹեկղ։

Իբրև[4] մտին գազանքն 'ի թէատրոնն, եկին զԹեկղ
տանել 'ի տանէն Տրիփոնեայ, և տարան 'ի թէատրոնն,
և մերկացուցին զնա, և հարին առիգաձ կտաւ, և կա-
ցուցին մերկ։ Եւ արձակեցին նմա մատակ առիւծ. և
Տրիփոնիա տիկինն կայր առ դրանն թէատրոնին, և 'ի
ձայն աղիողորմն գուժէր[5]։ Եկն մատակ առիւծն և
սկսաւ լիզուլ զԹեկղ. և դատաւորն և ամենայն զօր-
քըն զարմանային ընդ զօրութիւնն զոր ետ նմա Աս-
տուած։ Գրեցին 'ի տախտակս և ցուցին ամենայն
մարդկանն որ նստէինն անդ, եթէ՝ Կարդացէք զԹեկղ
մեհենակապուտ դիցն, զի ընկէց զպսակն կայսերա-

1. Զկիր 'ի բնագրին՝ առն իմում։
2. Բնագիրն միայն՝ պսակ ասէ։
3. Բնագիրն՝ մինչև, այսինքն մինչև 'ի ժամանակ արկանելոյ գազանաց։
4. Ոչ սակաւ օտարանայ հատուածս 'ի յոյն բնագրէն։
5. Մի օր. յոյն աղիողորմ էոլոր-գուլի ողորմ ողորմ գոռծէր։

կան 'ի գլխոյն Աղեքսանդրի, որ կամէր առնել ընդ[1] նա պղծութիւն։ Եւ մարդիկն ամենայն աղաղակէին հանդերձ ամենայն որդւովքն իւրեանց և ասէին. Բողոք առ Աստուած, վասն անօրէնութեանս որ լինի 'ի քաղաքիս։ Եւ դարձեալ արձակեցին նմա այլ ևս գազանս. և այնք ոչ մերձեցան 'ի նա։ Յայնժամ էլ նա 'ի թէատրոնէն[2] և գազանքն. և չոգաւ վաղվաղակի Տրիփոնէ տիկինն, առ զԹեկղ, զի դուստր իւր որ մեռեալ էր՝ եկն 'ի տեսլեանն փիշերոյ և պատմեաց մօրն, ասէ. Մայր իմ, զայս Թեկղ հալածական տարաշխարհիկ կալ առ քեզ յիմում տեղւոջ, զի արասցէ վասն իմ աղօթս, զի արժանի եղէց անցանել 'ի տեղի սրբոց և արդարոց։ Եւ իբրև ընկալաւ Տրիփոնէ զԹեկղ և հոգայր վասն նորա, մի՝ զի տրտմեալ էր թէ տանին զնա վաղիւ ևս ընկենուն գազանաց. և դարձեալ զի արկեալ էր զնովաւ զգուեթ դստերն իւրոյ մեռելոյ. և ասէ տիկինն. Ահա այս երկիցս անգամ առնի թախիծ և տրտմութիւն 'ի տան իմում, արդ աղաչեա և խնդրեա վասն դստերն[3] իմում զի կեցցէ, զի այսպէս տեսի 'ի տեսլեան իմում։ Եւ նոյնժամայն յարեաւ վաղվաղակի Թեկղ 'ի ձայն բարձր բարբառոյ համբարձ զյայտնի ձայն իւր և ասէ. Աստուած որ յերկինս ես, Հայր բարձրելոյ, տուր Տրիփոնեայ տիկնոջ ըստ կամաց իւրոց, զի կեցցէ դուստր նորա յաւիտեանս յաւիտենից։ Իբրև լուաւ զայս տիկինն՝ նստաւ թախծեալ 'ի սուգ[4], լայր աղիողորմ և ասէր. Զայդպիսի գեղ քո գեղեցիկ ուտիցէ՞ն միւսանգամ գազանք։

Եւ մինչդեռ այգուն զառաւօտն մերկացեալ էր, գայր հասանէր Աղեքսանդրոս տանել փութով զԹեկղ, քանզի նա էր որ տայր գազանս ի քաղաքէն 'ի թէատրոնն։ Պատասխանի ետ և ասէ. Ահա դատաւորն նստեալ է և ամենայն զօրքն Ճեպէն, տուր[5] այսր վաղվաղակի զԹեկղ, զի գազանակուր կորուսցուք։ Եւ Տրիփոնէ Ճչեաց 'ի ձայն գուժի լալոյ. և 'ի ձայնէ ա-

1. Մի օր. ընդ նմա։
2. Մի օր. յայնժամ էլ ռէաթրոնն։
3. Փալիոնիլլա կոչի դուստրն 'ի բնագրին։
4. Մի օր. ռախծալի ոգով լայր։
5. Մի օր. ճեպով տուր այսր։

ղաղակին զոր գուժեաց՝ փախեաւ Աղեքսանդրոս և ասէր զարհուրիլ։ Պատասխանի ետ տիկինն և ասէր. Բողոք առ Աստուած[1]. ահա այս երկիցս անգամ առնի Թախիծ սգոյ 'ի տան իմում, և չիք ոք որ օգնէ ինձ, զի ոչ դուստր իմ կենդանի է որ մեռաւն, և ոչ ոք յազգատոհմէ իմմէ 'ի Թիկունս իմ[2], և ես կին այրի եմ. արդ երթ Թեկղ, և Աստուած քո լիցի քեզ օգնական։ Եւ դարձեալ առաքեաց դատաւորն այլ մարդիկ ածել զԹեկղ. և տիկինն ոչ ետ 'ի ձեռս զԹեկղ, այլ բուռն հարեալ զձեռանէն ունէր պինդ։ Գայր և ածէր պինդ ինքնին և ասէր. Ցդստրիկն իմ յուղարկեցի 'ի գերեզման, և զքեզ Թեկղ յուղարկեմ և տանիմ կերակուր գազանաց։ Զլալ հարկանէր Թեկղ 'ի լալիւն մեծ և դառնութեան, հոգւոյ հանէր հեծեծելով առաջի Աստուծոյ և ասէր. Տէր Աստուած իմ ես, հաւատամ յոր ապաւինեցայդ, և փրկեցեր զիս 'ի հրոյ անտի, տուր հատուցումն բարի Տրիփոնեայ որ առ գութ 'ի վերայ աղախնոյ քո և պահեաց զիս սրբութեամբ։

Եւ վաղվաղակի 'ի նմին ժամու եղև աղմուկ աղաղակի բազմաց, և պայթիւն և ձչիւն առ 'ի գազանն գրգռելոյ։ Կէսքն զգազանն հանէին, և բազում արք և կանայք աղաղակ եդեալ մեհենեկապուտ տաճարակապուտ դից կոչէին զնա. և կէսքն ասէին, թէ՝ ձիչ 'ի քաղաքիս[3] վասն անօրէնութեանս զոր առնէք, կորոյս զամենեսեան դատաւորդ. դառն է տեսիլդ զոր տեսանեմքդ, և անիրաւ դատաստանդ որով դատին զԹեկղ։ Եւ եկին պատանիքն առին վարեցին զԹեկղ 'ի ձեռաց Տրիփոնեայ տիկնոջ, և տարան 'ի Թէատրոնն արկանել զնա գազանաց, և ածին կացուցին զնա 'ի մէջ Թէատրոնին։ Մերկանային զհանդերձն և ածէին նմա առիգած կտաւ. և կայր անցեալ այնպէս մերկ և ասէր. Տէր Աստուած հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, դու ես օգնական հալածելոց, դու ես վերակացու աղքատաց, տես և հայեա յաղախին քո

1. Զիք 'ի բնագրին ձայնարկու թիւնս այս։
2. Մի օր. կայ 'ի Ռիկոանս իմ։
3. Բնագիրն՝ Ապոխոնէոցի կամ կործանէոցի փաղաքս։

որ կայ մերկ խայտառակեալ առաջի այսչափ զօրաց ամենայնի. Տէր իմ և Աստուած իմ, յիշեա զաղաչին քո 'ի ժամուս յայսմիկ։ Յայնժամ ածին արձակեցին նմա ինձ մի որ կարի չար էր, և դարձեալ մատակ առիւծ մի ածին արձակեցին նմա։ Եւ թեկղ անցեալ կայր և տարածեալ ունէր զձեռս իւր 'ի նմանութիւն խաչափայտին. և մատակ առիւծն ընթացեալ յարձակեցաւ նմա. և իբրև եկն եհաս և նստաւ առ ոտս նորա, և ինձն եկն եհաս և կամէր հարկանել ընդ նմա՝ անկաւ առաջի և անդէն հերձաւ ընդ մէջ։ Դարձեալ ածին արջ մի որ կարի ուժգին էր, ընթացաւ յարձակել 'ի վերայ թեկղի. յարեաւ մատակ առիւծն որ նստէր առ ոտս նորա, կալաւ զարջն և անդէն պատառեաց. և դարձեալ միւս ևս առիւծ զոր ուսուցեալ էր յարձակել 'ի վերայ մարդկան, որ էր նորուն Աղեքսանդրի, և այն ևս առիւծ յարձակեցաւ 'ի վերայ թեկղի. յարեաւ մատակ առիւծն՝ որ նստէր առ ոտս նորա, պատահեաց առիւծուն և առին զմիմեանս երկոքինն. և յետ սակաւ միոյ սպանին զմիմեանս երկոքեան։ Ապա առաւել ևս սգացան [1] կանայքն որ նրստէինն և հայէին, և ասէին թէ մատակ առիւծն ևս որ օգնէր թեկղի՝ մեռաւ։ Եւ դարձեալ արձակեցին նմա այլ ևս գազանս. իբրև ետես թեկղ թէ բազում գազանս ելին, տարածեաց զձեռս իւր և կաց յաղօթս։ Եւ իբրև կատարեաց զաղօթսն՝ դարձաւ յետս և ետես գուբ մի լի ջրով և ասէ. Ահա այսուհետև ժամանակ է մկրտելոյ. ամբարձ զձայն իւր և ասէ. Յանուն Յիսուսի Քրիստոսի, ահա այսօր զյետին օրն մկրտիմ։ Իբրև տեսին կանայքն որ նստէինն՝ զլալ հարան և ասեն ցնա. Մի՛ արկաներ զանձն քո 'ի ջուրդ, զի չար են գազանքդ որ են այդր. և դատաւորն իբրև ետես զնա՝ ելաց թէ զայնպիսի գեղ վայելուչ ուտիցեն գազանքն որ են 'ի ջուրն. և թեկղ դիմեաց վաղվաղակի և էջ 'ի ջուրն, և գազանքն իբրև տեսին զնա՝ որպէս զփայլակն [2] հրոյ սատակեցան և կային 'ի վերայ թեկղի ասէ. Էջ որպէս փայլակն հրոյ 'ի ջուրան. և գազանքն որ 'ի ջրի անդ էին՝ սատակեցան։

1. Մի օր. զգեցան սուգ։

2. Յոյնն՝ ի փայլակնացայտ հրոյ զանիիցն հարբեալ սատակեցան, և այլն։ Իսկ այլ օրինակ բնագրին վան

ջրոյն, և գային շուրջ զնովաւ և 'ի վերայ նորա հովանի լուսափայլ ամպ[1], այնպէս զի ոչ երևելով երևէր Թեկղ թէ մերկ իցէ։ Իբրև տեսին կանայքն որ նրստէին 'ի Թէատրոնին՝ թէ այլ ևս գազանս արձակեն Թեկղի որ չար են քան զառաջինն, սկսան ՀՀեալ և ասել. Բողոք առ Աստուած, զի՞նչ տեսանեմք 'ի քաղաքիս[2]։ Ապա եկին կանայք և սկսան արկանել խունկս 'ի վերայ Թեկղի, կէսքն արկանէին պտուղ նարդեան, կէսքն խունկս խիրիկս, և կէսքն խունկս ապուրսամն[3]. և այլ ևս խունկս անուշունս ցանէին 'ի Թէատրոնին։ Եւ ածին արձակեցին նմա այլ գազանս. և եկին գազանքն և նստան շուրջ զնովաւ յետոյ և առաջոյ՝ և ննջեցին, և ոք 'ի նոցանէն ոչ մեղաւ Թեկղի։ Դարձեալ ընթացաւ Աղեքսանդրոս և ասէ ցդատաւորն. Են իմ երկու զուարակք ուժգինք չարք, ածցուք այսր և կապեսցուք 'ի միջի զգազանակուրն, թերևս զայրացին և սատակեսցեն զնա։ Եւ ասէ դատաւորն ցԱղեքսանդրոս. Երթ արա որպէս հաճոյ թուի քեզ։ Եւ առաքեաց ետ ածել զզուարակսն. և ածին հանին զզ-Թեկղ 'ի միջոյ գազանացն, և կալան արկին զնա 'ի վերայ երեսացն իւրոց. բուռն հարին և կապեցին զոտսն 'ի մէջ երկոցունց զուարակացն։ Եւ բերին շամփուրս և եդին 'ի կրակի, և ջեռուցին զշամփուրսն հրով, և եդին 'ի վերայ ազդերաց զուարակացն զի զայրասցին[4], և առ զայրուցսն կոտորեսցեն զնա, և զայրանային զուարակքն առ ցաւս խարանացն. և եղ բոց հրատին և այրեաց զկապսն[5] որով կապեալն էր զոտսն Թեկղի։ Յարեաւ Թեկղ վազեաց եկաց յառաջոյ կողմն զուարակացն, իբրև այն թէ ամենևին ցաւ ինչ ոչ իցէ եղեալ նմա, և ոչ կապանօք կապեալ իցէ զնա։ Եւ Տրիփոնիա տիկինն կայր առ դուրս Թէատրոնին, ՀՀեաց յանկարծակի և կործանեցաւ անկաւ, զի կարծեաց եթէ մեռաւ Թեկղ։ Իբրև տեսին ծառայքն թէ ՀՀեաց և անկաւ պակասեցաւ, սկըսան գոյժ առնուլ և պատառել զպատմուճանս իւ-

1. Մի օր. Եղև հովանի ամպ ֆայլապանոց։
2. Զիք 'ի բնագրին և այս ձայն. արկու թեան բան։
3. Մի օր. ապարուսամն։
4. Մի օր. այրեսցեն և առ զայրուսն նորոսցեն զկապեալն։
5. Մի օր. զկապանան։

ըեանց և ասեն. Վայ, մեռաւ տիկինն, և դողաց ամենայն քաղաքն։ Զահի հարաւ Աղեքսանդրոս, ընթացաւ եկն առ դատաւորն և ասէ. Գթա յիս և 'ի քաղաքդ, և արձակեա զգազանակուրդ, թող երթայ գընայ բնաւ 'ի բաց, զի մի ամենևին կորիցէ քաղաքս. գուցէ իբրև լսիցէ կայսր զայս գործ զոր գործեմք՝ և կորուսանիցէ զքաղաքս, զի Տրիփոնիա տիկինն յաղթէ կայսեր՝ որ կայր առ դրան Թէատրոնին՝ և մեռաւ։

Յայնժամ ասէ դատաւորն. Աւծէք այսր զԹեկղ. և ընթացան պատանիքն ածել զԹեկղ 'ի միջոյ գազանացն, և կացուցին առաջի դատաւորին. և ասէ ցԹեկղ. Ո՞վ ես դու, և զիա՞րդ է զի ոչ մերձենան առ քեզ գազանքն։ Եւ ասէ. Աղախին եմ Աստուծոյ. և որ առ իս է՝ նա է որդի Աստուծոյ կենդանւոյ յոր ես յուսացեալն եմ, զի վասն նորա ոչ մերձենան առ իս գազանքն. զի նա է սահման կենաց, և ամենայն հալածելոց յանձանձիչ և անյուսից յոյս և կեանք։ Բայց քեզ ասեմ, դատաւոր, և ամենեցուն որ կան առաջի քո, թէ որ հաւատայ յԱստուած՝ զոր տեսանէք՝ մեծամեծս զոր արար առ աղախին իւր՝ կեայ և առաւել, և որ ոչն հաւատայ 'ի նա՝ մեռցի զմահն յաւիտենից։ Իբրև լուաւ դատաւորն զայս 'ի բերանոյ Թեկղի, հրամայեաց բերել նմա հանդերձս. ասէ ցնա դատաւորն. Ի բաց առ զառիւգածդ, և ա՛ռ ագիր զհանդերձդ զոր ետու քեզ։ Պասասխանի ետ Թեկղ և ասէ ցդատաւորն. Որ զգեցոյց ինձ զօրութիւն 'ի մէջ գազանացն՝ նոյն զգեցուցանէ ինձ կեանս յաւուր դատաստանին։ Եւ 'ի բաց մերկացաւ Թեկղ զառիւգածն, և ա՛ռ զգեցաւ զհանդերձն։ Եւ քարոզ կարդայր դատաւորն առաջի զօրացն ամենայնի և ասէր, եթէ՝ ԶԹեկղ՝ Աստուած արձակեաց և ետ ձեզ։ Եւ կանայք որ նստէին 'ի Թէատրոնի անդ՝ ձայն բարձին մեծաբարբառ, սկսան աղաղակել և տալ փառս Աստուծոյ և ասեն. Մեծ է աստուածն Թեկղի որ կեցոյց և փրկեաց զնա 'ի միջոյ գազանացն։ Եւ 'ի ձայնէ բարբառոյ կանանցն որ աղաղակէին՝ դղրդեցաւ քաղաքն ամենայն. և իսկ և իսկ ընթացան ետուն աւետիս Տրիփոնեայ տիկնոջ. և ընթացաւ եկն եգիտ զնա և գիրկս արկեալ համբուրէր զնա և ասէր. Դուստր իմ Թեկղ,

այժմ հաւատամ եթէ կենդանի է դստրիկն իմ: արդ եկ 'ի տուն իմ, Թեկղ, և զամենայն ինչս իմ քեզ գրեցից։

Եւ չոգաւ ընդ նմա Թեկղ և եմուտ 'ի տուն նորա, և հանգեաւ անդ աւուրս ութ, և ուսոյց Տրիփոնեայ տիկնոջ զամենայն պատուիրանս Աստուծոյ. և հաւատացաւ տիկինն յԱստուած, և բազումք յաղախնայս նորա. և եղև անդ ուրախութիւն մեծ Թեկղի։ Եւ քանզի սիրէր զՊաւղոս, առաքեաց նա յամենայն տեղիս ինդրել զնա. և իբրև գտին, եկին և պատմեցին նմա և ասեն. Ահաւասիկ 'ի Մեռոյ[1] քաղաքի է։ Եւ յաւրեաւ էլ 'ի տանէ Տրիփոնեայ տիկնոջ, և զգեցաւ նա հանդերձ առնացի, և առ ընդ իւր մարդիկ բազում և յաղախնայ տիկնոջն, չոգաւ եմուտ 'ի Մեռոյ քաղաք. և եգիտ անդ զՊաւղոս Թեկղ, զի նստէր և ուսուցանէր զպատուիրանս Աստուծոյ. չոգաւ եկաց առ նմա Թեկղ։ Եւ իբրև ետես զնա Պաւղոս և զմարդիկն որ ընդ նմա էին՝ զարմացաւ, և կարծեաց անդէն Պաւղոս եթէ այլ ևս փորձութիւն իմն եկեալ է 'ի վերայ նորա։ Պատասխանի ետ Թեկղ և ասէ ցնա. Ընկալայ ես զմկրտութիւն. զի որ պատուիրեացն քեզ քարոզել՝ նոյն հրամայեաց և ինձ մկրտել։ Եւ անդէն յաւրեաւ Պաւղոս՝ առ զնա և զամենայն մարդիկն որ ընդ նմայն էին, և տարաւ 'ի տուն Հերմեսի[2]. նստաւ Պաւղոս և Թեկղ և այլ ևս մարդիկն որ ընդ նմայն էին։ Եւ պատմեաց նմա Թեկղ զամենայն զոր արար ընդ նմա Աստուած. և յոյժ զարմանայր Պաւղոս ընդ զօրութիւնսն՝ զոր տուան նմա[3]. և ամենեքեան որ կային անդ և լսէին եթէ զինչ արար ընդ նմա Աստուած՝ յոյժ հաստատէին և ճշմարտէին. և յառնէին ամենեքեան միանգամայն փառաւոր առնէին և օրհնէին զԱստուած՝ որ առնէ զսքանչելիս առ ամենայն որ հաւատան 'ի նա և պահեն զպատուիրանս նորա. աղօթս առնէին և ինդրէին յԱստուծոյ 'ի վերայ Տրիփոնեայ տիկնոջ՝ որ արկ զգութ իւր 'ի վերայ աղախնոյ նորա,

1. Մի օր. Մերոէ. իսկ 'ի բնագրին՝ 'ի Միւռոն քաղաքի Լիկիոյ։
2. Մի օր. Հարմեսի։
3. Մի օր. որ պատաս... յոյժ հաստատեին 'ի ճշմարտութեանն։

և պահեաց զնա սրբութեամբ։ Այլ Թեկղ. Երթամ
ես Իկոնիոն քաղաք։ Եւ ասէ Պաւղոս. Երթ, ուսու-
ցիր անդ զպատուիրանս և զբանս Աստուծոյ։ Եւ իբրև
լուաւ Տրիփոնէ տիկին թէ երթայ Թեկղ Իկոնիոն
քաղաք, առ հանդերձս բազումս և ոսկի, և առաքեաց
Թեկղի. և առ զհանդերձսն և զոսկիսն, և առաքեաց
Պաւղոսի 'ի սպաս պաշտաման այրեացն։ Եւ Թեկղ
չոգաւ եմուտ 'ի տուն Ոնեսիփորայ, և անկաւ 'ի վե-
րայ երեսաց իւրոց 'ի տեղւոջն ուր նստէր Պաւղոս և
ուսուցանէր զպատուիրանն Աստուծոյ, լայր և ասէր.
Աստուած մեր, Աստուած տանս այսորիկ՝ յորում ծագ-
եաց ինձ լոյս 'ի Քրիստոսէ Յիսուսէ, որ օգնեաց ինձ
'ի բանտին և փրկեաց 'ի միջոց գազանացն առաջի դա-
տաւորին, և ետ ինձ մկրտութիւն յաւիտեանս յաւի-
տենից, և երթայց յերանութիւնսն՝ որ պահեալ է
ինձ և այնոցիկ որ պահեն զպատուիրանն Քրիստոսի.
զի նա է մի Աստուած բարձրեալ՝ որ նստի յաթոռ
քերովբէից. զի նմա փառք յաւիտեանս յաւիտենից.
ամէն։

Յետ այսր ամենայն սքանչելեացս՝ զոր արար ընդ
նմա Աստուած, եդիտ Իկոնիոն քաղաքի զի մեռեալ
էր Թեմերոս այր իւր [1]։ Այլ ցնա Թեկղ. Մայր իմ,
թէ կարես հաւատալ, մի է Աստուած բարձրեալ Տէր
իմ՝ որ յերկինս է. ապա եթէ զոսկի և զարծաթ և
զինչս որ մնային՝ սիրես, ահա տուեալ է քեզ յայսմ
հետէ. թէ հաւատայցես թէ մի է Աստուած յեր-
կինս, և բայց 'ի նմանէ այլ չիք Աստուած, կարես
կեալ և պահել զոր ինչ ասեմ քեզ, զի ահա կամ ես
առաջի քո՝ որ ապրեցայ 'ի հրոյն և 'ի գազանաց չարաց
և յերեսաց դատաւորին. զի նոյն Աստուած իմ և Տէր
օգնեաց ինձ, որ ետ զօրութիւն համբերել։ Զայս
ամենայն վկայութիւն եդ ընդ մեր իւրում, և ել յի-

1. Որպէս 'ի սկզբանն և ասա
բնագիրն չիոչէ բնաւ զԹամիրոս՝
այր Թեկղի։ Եւ յաւելու յետ այ-
սորիկ. Իսկ զմայրն (Եգիպ) ՀԷՆԴԱՆԻ.
կամ՝ ԿՈՂԷԱՅ զմայր իւր զԹԷՈՂԻԼԻԱ
և ասէ։ Ասասի 'և անդր օտարա-
նայ սակաւ մի թարգմանութիւնս
'ի բնագրէն։ Իսկ յետ հատուա-
ծոյս գասանի 'ի յոյնն, այլ 'ի յետ-
նոյ ուսմբէ յօրինեալ, այլ ևս բան
պատմութեան զԹեկղեայ գործոց
'ի Սելևկիա, և կենդանւոյն ամիսո-
փումն 'ի վիմի պատաւելոյ։

կոնիոն քաղաքէ, և չոգաւ 'ի Սելևկիա. և անդ բազում մարդիկ լուսաւորեաց քանիւն Աստուծոյ. և ննջեաց 'ի քուն Հանդստեան։

Կատարեցան գիրք Թեկղի երանելւոյ։ Փառք Աստուծոյ ամենակալի և Օծելոյ իւրում և Հոգւոյն սրբոյ, որ ետ զօրութիւն թարգմանի և գրչի. զի նոյն Աստուած կատարեսցէ զողորմութիւն յերկոսին աշխարհս, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Թէոդորիտեայ Քահանայի։

Առաքինի և աստուածասէր յօժարութեան երանելւոյն Թէոդորիտոսի վկայի՝ ոչ միայն ընդ յօժարութիւն և ընդ կարծրութիւն[1] համբերութեանն է զարմանալ, այլ և ընդ հաստատուն և անշարժ հաւատն զոր ունէր առ Աստուած։ Նախ և միայն առ Յուլիանոսիւ արքայիւ, մանաւանդ թէ առ բռնաւորաւ և ոչ արքայիւ, յԱնտիոքացւոց քաղաքին վկայեաց, ոչ միայն զանձն օրինակ բարի ամենայն մարդկան երևեցոյց[2], հաւատարիմ վկայ Քրիստոսի երևեալ, այլ և սքանչելի և զարմանալի առ ամենեսեան երևեցաւ, անպարտելի և յաղթող ախոյեան ընդդէմ սատանայի եղեալ, որ և զանեղծութեան պսակն առ, և երկնից մտից արժանաւոր եղև, և վերին քաղաքին քաղաքացի։ Սկիզբն և կատարած հալածանացն կայոյց զինքն. և յայլոցն ամենեցուն Քրիստոսի ծառայիցն՝ զսպառնալիսն որում անկն ունէին՝ շինոյց, վկայ անպարտելի և յաղթող վասն թագաւորութեանն Քրիստոսի երևեալ։

Յառաջնումն ամի թագաւորութեանն Յուլիանոսի, մինչդեռ նորընծայ էր 'ի թագաւորութեանն և կասկածէր 'ի Կոստանդնի արքայէ[3], որ ակն ունէր թէ նո-

1. Մի օր. ընդ կարծրութիւն հաստատուն... այլ ընդ հաստատութիւնս...։
2. Մի օր. երևոյց... գոգեալ։
3. Մի օր. նորընծայ 'ի թագաւորութեանն էր՝ կասկածէր 'ի ինչամտութենէ մեծի արքային Կոստանդիանոսի։

վին սրոփն որով Հայր նորա մեռաւ՝ մեռցի, որ այնչափ և այնպիսի եպիսկոպոսաք ապրեցաւ երբեմն 'ի մահ-ուանէ, թագուցեալ ընդ սուրբ սեղանովն Աստուծոյ, և աստուածեղէն գրոց եղեալ գրագէտ և ընթերցիչ։ Իբրև ժամանակք ինչ անցին, և հանգեաւ աստուա-ծասէրն Կոստանդիանոս, և առեալ Յուլիանոսի զթա-գաւորութիւնն, ոչ միայն զՀաւատն անարգեաց, զի ապստամբեաց 'ի Հաւատոցն, այլ և 'ի թշնամանս և յանՀնարին վտանգս[1] արկանէր զԱստուծոյ մտերիմ-սըն, և պարգևս և պատիւս կռապաշտիցն շնորհէր. և զբազումս այնպիսի իրաք պատրէր, մինչև զքեռին իւր զանուանակիցն իւր զՅուլիանոս՝ ապստամբեցուցանէր 'ի հաւատոցն և 'ի յուսոյն Աստուծոյ[2], և զկռոցն մո-լորութիւն յանձին ունել։ Զգացուցանէր նմա քե-ռին իւր Յուլիանոս, թէ բազում նուէրս և սպասս ոսկւոյ և արծաթոյ ունի եկեղեցի Անտիոքացւոց, պատՀառս ՀնաՀատակարս Հնարել, ոչ միայն զսպաս և զնուէր եկեղեցւոյն Աստուծոյ կողոպտել, որ ոչ այնմ գործակալութեանն[3] եղև Հաւատարիմ Յուլիանոս, այլ և զքահանայսն ամենայն փախստական առնել. մինչ զի զսուրբ եկեղեցիսն Աստուծոյ փակեալ, այլ ա-մենեքեան վասն Հալածանացն և սպասուցն կողոպտե-ալոյ ցրուեցան, ուր և ձեռնՀաս ոք լինէր ապրել և ծառայել Աստուծոյ։

Իսկ սուրբ Թէոդորոս[4] երէց համաշխարՀական ե-կեղեցւոյն Անտիոքացւոց, ոչ 'ի քաղաքէն գնաց և ոչ խափանեաց երբէք զպաշտօնս, Հանդերձ եղբարբք մտանել յեկեղեցին, և ժողովել ժողովուրդս՝ զպարտ և զպատշաՀ աղօթսն մատուցանել։ Ի վերայ իրայն Հասանէր քեռին Յուլիանոսի արքայի, և սորա ևս[5] իշխանութիւն առեալ էր, և ամենայն իրաց արքունի Հաւատարիմ էր։ Եւ թէ այնպէս ոչ դադարէր երբէք զՀանապազորդ աղօթսն մատուցանել Աստուծոյ 'ի վերայ ամենայն իրաց, և զայն իմն աւելի Հպարտու-

1. Մի օր. վտաս։
2. Մի օր. մինչև պտերին իսկ իւր որ անուանակից իւր էր, Յուլիանոսի ապստամբեցուցեալ 'ի յուսոյն Աստուծոյ։
3. Մի օր. որ այնմ գործակալու-թեան։
4. Մի օր. իսկ սուրբն և առաքել սուրբն Թէոդորիտոս։
5. Մի օր. որոյ և սրբոյն։

թիւն կայսերն համարէր։ Հրաման ետ ունել, և զառաջինն՝ հանապազորդ բանիւք և շղթայիւք յաղտեղի տեղիս արգելելով ահ արկանէր[1]. յետոյ և արտաքս իսկ հրամայեաց հանել և ցանկ թշնամանել և նախատել յայնցանէ՝ որ նմին նման ոչ ճանաչէին զԱստուած, և կամօք և մտօք նոյնպիսիք էին. բայց ոմանք և զնդային[2] իսկ յայնպիսի այր աստուածասէր. ոչ միայն 'ի մեծարանաց մեծաշուք երեսացն ակն ածէին, այլ և 'ի վերայ հասեալ գիտութեանն՝ գիտէին զուղիղ կարգս և զպարկեշտ վարս առն պիտանւոյ[3]։ Քանզի միշտ և հանապազ զամենայն ժամանակս յաղօթս ծախէր. բազումք և խղճէին իսկ 'ի միտս զայնպիսի այր աստուածասէր թշնամանել, և չէշխէին երբէք անարգանս ինչ առնել։ Յետ բազում աւուրց 'ի վերայ հասեալ Յուլիանոս անպարտ և անշարժ մտաց վկային, թէ օր քան զօր զօրանայ և վառի հաւատովք, խորհուրդ արարին մինչև յատենի իսկ ածեալ էր՝ 'ի գիշերի սպանանել զնա։ Բայց դարձեալ զի այնպէս իմն լաւ հանարեցաւ վասն այլոց ահ արկանելոյ[4] յայտնի հարուածովք զայնպիսի այր տագնապել։ Բայց սակայն և այն ըստ Աստուծոյ շնորհացն էր, զի մի՛ այնպիսի այր հաւատացեալ անփորձ և աննշանաւոր մահու վճարեսցէ զկեանս իւր[5]։ Ոչ զի թէ չէր լեալ յայտնի ամենեցուն՝ առաջի Աստուծոյ զվարձս վաստակոցն կորուսանէր, այլ զի օրինակ[6] զանձն 'ի միջի կացուցանէր հաստատուն լինել ամենայն հաւատացելոց 'ի Քրիստոս։ Իբրև ածին մուծին յատեան՝ ձեռս յետս կապեալ և ձող ինչ ընդ թիկունսն անցուցեալ[7], ասէ անօրէն դատաւորն. Դո՞ւ ես Թէոդորիտոսն, որ երբեմն առ Կոստանդիանոսիւ[8] կայսեր կործանէիր զպատկերս աստուածոցն, և զմեհեանս դիւցն աւերէիր[9], և շինէիր եկեղեցիս և զգե-

1. Մի օր. արգելուլ արհատիրս արիանքը։
2. Մի օր. Բայց ոմանք զնդային յայնպիսի այր աստուածասէրք։
3. Մի օր. պիտանացոյ։
4. Մի օր. խորհուրդ արար մինչև յապէան ինչ ելիալ... այսպիսի իմ... վասն այլոցն նահատակել։
5. Մի օր. մահուամբ վախճանեցի 'ի ցեանցս։
6. Մի օր. օրինակ և առակ։
7. Մի օր. յոգ ինչ յետոյ ընդ յետս և ընդ ուիլանան անցուցեալ։
8. Մի օր. Կոստանդիանոս։
9. Մի օր. պապալեիր։

բեզմանս մեռելոց, զորս և մատրանոցս իմն անուանէիր[1]։ Թէոդորիտոս ասաց. Ես քրիստոնեայ եմ և աղօթս առնեմ[2], զի մինչև 'ի վախճան զնոյն ունիցիմ, և հաւատարիմ վկայ Քրիստոսի գտանիցիմ։ Ես ոչ երբէք եկեղեցի շինեցի և ոչ մատրունս, քանզի 'ի նախ նեացն իսկ հաստատեալ և շինեալ կան։ Յուլիանոս ասէ. Զպատկեր աստուածոյն կործանեցեր, և արդ ես 'ի չմեծս կաս և չտամս պատասխանի։ Թէոդորիտոս ասաց. Ես աստուածս երբէք ոչ կործանեցի, քանզի զչէսն զիմարդ մարթ էր կործանել. այլ զպատկերս անշունչս և զտունս նոցա կործանեցի, զի զոգիս մարդկան մոլորեալս 'ի կռապաշտութենէ՝ կարացից ապրեցուցանել. քանզի զայն իսկ գիրք սուրբք պատուիրեցին։ Յուլիանոս ասէ. Որովհետև քեզէն խոստովանեցար՝ կրեա պատիժս պատուհասից, զի իշխեցեր զայնպիսի գործ գործել։ Թէոդորիտոս ասաց. Սբ աստուածապաշտոն և աստուածասիրաւն Կոստանդնիւ արարի զայն և ոչ ցասեաւ, որ և իշխանութիւն իսկ ունէր, և ոչ զայրացաւ ինչ ընդ այնպիսի գործ. բայց ընդ քո զարմացեալ եմ՝ զիարդ այժմ կռոց վրէժխնդիր ամբարձար։

Յուլիանոս ասէ. Տուք զկողս դորա, զի իշխեաց կուռս կոչել զաստուածսն։ Եւ յետ գան ըմպելոյն, ասէ Թէոդորիտոս. Յանցանես, Յուլիանոս, զի զՀնմարտի միայնոյ Աստուծոյ և զամենակալի անուն կռոց դնես, և աստուածս անուանես զայժմս կռեալսն[3] և արարեալսն։ Յուլիանոս ասէ. Տուք զերեսս վսեր եկելոյդ, զի իշխեաց հայհոյել[4]։ Թէոդորիտոս ասաց. Դարձեալ տակաւին ուսուցանեմ քեզ, Յուլիանոս, զի պատկերքն զոր դու աստուածս անուանես՝ կրսեր են քան զպատկերագործսն, և ընդ նոսա իբրև զնոսին ապականելոց են. ոչ բարի և ոչ չար կարեն առնել առնելեացն, և դու հրամայես զիս գան հալրկանել՝ որ ըզՀնմարիտն ցուցանեմ քեզ։ Յուլիանոս ասէ. Այժմ գան ևեթ արքեր և ըմբոստացար, յետ սակաւ միոյ

1. Մի օր. անուանէիր։
2. Մի օր. զնոյն անուանիցիմ։
3. Մի օր. խոչեալս։
4. Մի օր. զի մի իշխեսցէ հայհոյել զաստուածսն։

այնպիսի տանջանս կրեսցես, որոց չկարասցես հանդարտել, եթէ ոչ զարժանն և զօրէնն կատարեսցես աստուածոցն. քանզի այնպէս հրաման ետ քաջ արանց արքայն Յուլիանոս։ Թէոդորիտոս ասաց. Ես վաղ իսկ ասացի քեզ, և դարձեալ ասեմ թէ մի մեղանչեր և մի աստուածս կոչեր զձեռագործս մարդկան, այլ 'ի բաց ընկեա զժամանակեայ ամբարհաւաճութիւնդ, որով յանդգնեցար աստուածամարտ լինել, և ծանիր զմինն միայն Աստուած, որ արար զերկինս և զերկիր։ Յուլիանոս ասէ. Եւ զՔրիստոս չունիցիս առ Աստուած, և քրիստոնեայ զանձդ կոչես։ Թէոդորիտոս ասաց. Քրիստոս փրկիչ մարդկան է, զոր պատճառիս գիտել և ոչ գիտես, բան և զօրութիւն և իմաստութիւն Հօր, միածին Որդի Աստուծոյ. որ վասն մարդկան փրկութեան առաքեցաւ 'ի Հօրէ, և զգեցաւ մարմին մարդկեղէն, զի ազգակցաւն մերձեցուսցէ զմարդիկ առ Աստուած, 'ի մոլորութենէ և 'ի կռապաշտութենէ դարձուսցէ[1], և ըստ ճշմարիտն Աստուած ճանաչել ուսուսցէ։ Յուլիանոս ասէ. Զճշմարտութիւն բանից և զճոռոմ խօսելոյ ևեթ երթեալ ես զհետ[2] 'ի մանկութենէ և առասպելս յօդելոյ, որով կարասցես պատրել զմարդիկ։ Թէոդորիտոս ասաց. Երբեմն և դու ճանաչէիր զԱստուած և խոստովանէիր զճշմարտութիւնն, և այժմ դարձար 'ի խաբէութիւն, յորժամ աշխարհական ամբարտաւանութեամբ հպարտացար, և զկուռս աստուածս համարեալ կալար յանձին, և զճշմարտութիւն խաբէութիւն անուանես։

Յուլիանոս ասէ. Ա՛յ չարագործ և դրուժան. թուի ինձ, թէ այժմ յԱթենացւոց քաղաքէն եկեալ ես դու։ Թէոդորիտոս ասաց. Ես յԱթենացւոց քաղաքէն չեմ եկեալ, և ոչ յաշխարհական ինչ վարժս խրատու վայելեցի երբէք, այլ աստուածեղէն գրոց իմաստութեամբ առոգեալ՝ ըստ քում հարցուածոցդ տամ պատասխանի, և աղօթս առնեմ քեզ միւսանգամ դալ 'ի լաւութիւն։ Ցասեալ Յուլիանոս,

1. Մի օր. վերծուսցէ։

2. Մի օր. զհետ զրջեալ ես... առասպելս յարդարելով։

և հրամայեաց զնա կապել ընդ ձող ինչ և պրկել. և իբրև առին զահիճքն հրաման, չուանօք ի մեն և անուօք ի մեն պրկեցին զամենայն անդամս երանելւոյ վկային, և այնչափ երկայնացան ջիլքն, մինչև ուղիղ կանգնեան առն երևեալ։ Եւ իբրև այնպէս եղև, ասէ Յուլիանոս. Գէթ արդ զգացեր ինչ տանջանացդ, Թէոդորիտոս, հատուած կախարդի միոյ մեռելոյ՝ պագանէս երկիր[1]։ Իսկ սուրբն և առաւել սուրբ վկայն մեծաձայն բարբառով, լուրջ և զուարթ երեսօք առնէր պատասխանի. Մոռացար, ասէ, Յուլիանոս, զգեղեցիկ խրատն՝ զոր ետու քեզ, թէ զփայտեղէնս և զքարեղէնս և զմեռելոտի ոսկերաց գործուածոյ պատկերս՝ աստուածս մի՛ անուաներ, այլ ճանաչել զԱստուած որ արար զերկինս և զերկիր, և զամենայն որ է 'ի նոսա, և զԲան նորա զմիածին Որդին Յիսուս Քրիստոս՝ փրկիչ մարդկան, և զաշխարհագործն ամենայն աշխարհի։ Յուլիանոս ասէ. Զայր մի որ խաչեցաւ և մեռաւ և թաղեցաւ՝ արարիչ աշխարհի կոչես, այ վսեր ելկեալդ դիմագրաւ։ Թէոդորիտոս ասաց. Զխաչեալն և զմեռեալն և զթաղեալն որ հանդերձ մարմնովն յերկինս վերացաւ, ուսուցանեմ քեզ պաշտել, զորդին անծնին Հօր՝ որ է Բանն Աստուած[2], և քարոզ և գուշակ եղև աստուածեղէն խորհրդոցն ըստ կամացն Հօր, որ արհամարհել պատուիրեաց զկուռս անմուունչս, զոր քո իսկ առաջի պատառ պատառ կոտորեցիս, և ոչ կարեն ինչ ինձ փնաս առնել. քանզի ունիմ ինձ օգնական զԱստուածն։ Յուլիանոս ասէ. Եթէ երկնչիս ինչ յԱստուծոյ, հնազանդ լեր հրամանաց թագաւորաց. քանզի գրեալ է, թէ՝ Սիրտ թագաւորաց 'ի ձեռին Աստուծոյ է։ Թէոդորիտոս ասաց. Եթէ ընթերցեալ իցես զոր ասացերդ՝ պարտ է քեզ 'ի միտ առնուլ զոր ընթերցարն. ապա եթէ լուեալ իցես[3], և չիցես քաջ 'ի վերայ հասեալ՝ յինէն ուսիր։ Արդարև իսկ ճշմարտիւ սիրտ թագաւորի 'ի ձեռին Աստուծոյ է, ոչ կռապաշտի, այլ որ զԱստուած ճանաչէ, զի զայնպիսին որ

1. Մի օր. Թէոդորիտոս հապառաջ խոխարդի միոյ մեռելոյ, պագանէս երկիր ասոյն։

2. Մի օր. որ Բանն է Աստուծոյ։

3. Մի օր. ապա եթէ լուեալ նէրիր իցես։

առ այնչափ մարդիկ անագորոյն է, և յԱստուծոյ անհաւատ, բռնաւոր և ոչ թագաւոր պարտ է կոչել։ Թագաւորի սիրտ 'ի ձեռին Աստուծոյ է, այլ բռնաւորի ամենևին ոչ։ Յուլիանոս ասէ. Ի վերբ եկեալդ դիմագրաւ, բռնաւոր իշխեցեր կոչել զարքայ։ Թէոդորիտոս ասաց. Որ այսպէս հրաման տայ և այնպէս ելցէ որպէս դու զրոյց տաս, ոչ միայն բռնաւոր, այլ և ամպարիշտ քան զամենայն մարդիկ։ Լի եղև ցասմամբ Յուլիանոս և մոլորութիւն 'ի մտի բերեալ, հրաման ետ քերել զնա այծեման կաղակօք. և այնչափ քերեցին զնա, մինչև առուք արեանն յերկոցունց կողմանց կողէցն յերկիր իջանէին[1], և սակայն 'ի զուարթութենէ երեսաց նորա ոչ տխրեցան։ Եւ իբրև քերեցին զերիս[2] ժամն, և ամենևին ինչ ոչ ելանէր ընդ բերան նորա, և ոչ գոյն երեսաց նորա շրջեցաւ, ասէ Յուլիանոս. Դէթ արդ ճանաչէս զաստուածն, Թէոդորիտոս, որ յայդպիսի տանջանս մատնեցար։ Թէոդորիտոս ասաց. Զձեռագործս ոչ երբէք ընկալայ աստուածս և ոչ ունիմ; և մի՛ այլ լիցի ունել, բայց միայն զմի Աստուած ամենակալ ճանաչեմ; և զԲան նորա զմիածին Որդին. դու զոր աստուածս համարիս՝ ընդ նոցա լիցի քո բաժինն[3], և ինձ լիցի ժառանգաւոր լինել խոստացելոց բարեացն, կատարել և հաւատարիմ գտանել այնմ որ երևեցաւն։ Յուլիանոս ասէ. Այնպէս երևիս որպէս թէ բնաւ չզգացեր զտանջանսդ։ Թէոդորիտոս ասաց. Խաղ ինչ համարէիր, և իբրև զմանուկ պատրել[4] և տանջանօք երկեցուցանել։ Դարձեալ ցասեաւ Յուլիանոս և հրամայեաց նովին կաղակօք քերել զնա այլ երկուս ժամն։ Եւ այլ ոչ ինչ ելանէր ընդ բերան նորա, բայց մեծաձայն բարբառով ստէպ աղօթէր. Յիսուս օգնեա ինձ։ Իսկ Յուլիանոս հիացեալ ընդ բազում համբերութիւն սրբոյ վկային, հրամայեաց դահճացն հանդարտել, ասէ. Թուի ինձ թէ յարքունիս ինչ պարտիս, կամ այլ ումեք ոչ կարասցես հատուցանել. այլ թէ յարքունիս ինչ պարտիս, թո-

1. Մի օր. 'ի յերկիր հոսէին։
2. Մի օր. զերիսուս կամ զերիս։
3. Մի օր. ընդ նոսա լիցի քո բաժին։
4. Մի օր. խաղ ինչ համարէի, որ ի բրնա զմանուկ պատրեալ կամէիր։

զութիւն առնէ քեզ ինքնակալն, և եթէ այլ ումեք՝ զձեռնագիրն անդրէն հրամայեմ տալ, առանց ինասու ինչ տուգանաց 'ի վերայ հասելոց։ Այլ Թէոդորիտոս որպէս թէ ամենևին լկանս ինչ չիցէ կրեալ, ասէ. Աւրծաթ ձեր ընդ ձեզ լիցի 'ի կորուստ. ես ումեք պարտս ինչ ոչ պարտիմ, բայց միայն զԱստուած Ճանաչել. վասն որոյ աղօթս առնեմ զգուշութեամբ պահել և խոստացելոց բարեացն հասանել։ Յուլիանոս ասէ. Ա՛յ հէգ և թշուառական, ցածիր 'ի բարկութենէ[1], և շահեա զանձդ, զի զերծանիցիս յայլոցն ևս տանջանաց։ Թէոդորիտոս ասաց. Ա՛յ հէգ և թշուառական, ապաշխարեա, շահեա[2] զհոգիդ և զմարմինդ։ Դարձեալ ցասեաւ Յուլիանոս և հրամայեաց զնա քերել. և յետ քերելոյն՝ ասէ. Ընդէ՞ր այդչափ դիմագրաւեալ չկամիս հնազանդել ինքնակալին, և զայր մի խաչեալ Աստուած համարիս։ Թէոդորիտոս ասաց. Խաչեալն զոր դու մարդ համարիս, և մեք Աստուած, զքեզ ամպարիշտ և մարդախոշոշ բռնաւոր, յաւուր դատաստանի հրամայեսցէ արկանել 'ի գեհեան հրոյն։ Յուլիանոս ասէ. Ա՛ռ այժմ աստէն առնուցուս զփորձ հրոյ. և հրամայեաց երկուս կանթեղս լուցանել և մատուցանել աստի և անտի զկողիւքն[3]։ Եւ իբրև լուցին դահիճքն զկանթեղսն, երանելի վկայն ամբարձեալ զաչս իւր յերկինս, սկսաւ յաղօթս կալ և ասել. Տէր Աստուած ամենակալ, որ արարեր զերկինս և զերկիր և զամենայն որ է 'ի նոսա, հայր կենարարին և ամենայն աշխարհաց, որ խոստացար պատիւ հաւատացելոց քոց, կատարեա և յիս զողորմութիւն քո, և ցոյց ամպարշտաց զքո իմաստութիւն և զօրութիւն, զի ամենեքեան ծանիցեն թէ ո՛րչափ 'ի մէջ էր ընդ յուսացեալս 'ի քեզ և ընդ ամպարշտութիւն անհաւատիցն։ Եւ կատարեաց զաղօթսն և առաքեաց զամէնն։ Եւ յանկարծակի զարկան զգետնի կանթեղաւորքն. քանզի տեսանէին չորս հրեշտակս զի կային զերանելեաւն և խօսէին ընդ նմա։ Իբրև ցասումն մեծ եղև Յուլիանոսի, եկին այլ զինուորքն և

1. Մի օր. 'ի հպարտութենէդ։
2. Մի օր. և հոգեալ՝ շահեա։
3. Մի օր. լուցանել ասպի և անդի։

յարուցին զդահիճսն, և հրամայեցին միսանգամ մատուցանել զկանթեղսն։ Այսեն կանթեղաւորքն. Այլոց հրամայեսցէ քո քաջութիւնդ մատուցանել. քանզի մեք տեսանեմք չորս հրեշտակս որ կան և խօսին ընդ պատժաւորին և ոչ իշխեմք հուպ երթալ, զի հաստատեալ գիտեմք զԱստուածն քրիստոնէից Աստուած մեծ և հզօր։ Դարձեալ 'ի ցաստումն եղեալ Յուլիանոս, հրամայեաց վաղվաղակի զդահիճսն տանել ընկենուլ 'ի ծով։

Եւ իբրև յափշտակեցին զնոսա և առին գնացին, սուրբն և առաւել սուրբ վկայն ձայնատու լինէր նոցա. Կանխեցէք, ասէ, եղբարք, և ես ահա հասանելոց եմ ձեզ, և նշան յաղթութեան ընդդէմ հակառակորդին կանգնեալ և զպարգևականն առեալ ժամանեցից զկնի խրախոյս ամենայն ծառայից Աստուծոյ[1]։ Եւ իբրև առին գնացին զինուորքն, ասէ Յուլիանոս. Ո՞ է հակառակորդն քո։ Ասէ սուրբն. Հակառակորդն սատանայ է, որ քև այժմ զչարեաց արդիւնս գործէ. և զյաղթութիւնն և զպարգևականն տայ Յիսուս Քրիստոս փրկիչ մարդկան, և արարիչ ամենայն աշխարհի՝ Որդին միածին, որում փառք յաւիտեանս. ամէն։

Եւ իբրև բազումք 'ի ժողովրդոցն և ամբոխիցն զամէնն առաքեցին, ստէպ շուրջ հայէր Յուլիանոս, թերևս զոք յայնցանէ որ զամէնն առաքեցին՝ կարիցէ ճանաչել. և իբրև ցնորեցան միտքն և խաւար եկն զաչսքն նորա՝ ասէ. Ա՛յ հէգ և թշուառականդ Թէոդորիտոս, զոր ամենեքեան գիտեն, թէ՝ յառաջ քան զերեք հարիւր կամ զսակաւ ինչ կամ աւելի 'ի կնոջէն ծնաւ, և դու ասես եթէ զաշխարհս նա արար։ Թէոդորիտոս ասաց. Դու պիղծ և անսուրբ, և արժանի իսկ չես զայնպիսի զխորհուրդ ուսանել։ Բայց զի մի համարեսցին ծառայքդ Աստուծոյ, որ շուրջ յամենայն կողմանց բակ առեալ կան՝ թէ չկարիցեմ բանիցդ ինչ առնել պատասխանի, միտ դիր որպէս յառաջագոյն ասացի քեզ, թէ Աստուած որ արար զամենայն բանիւ իւրով, ողորմեցաւ ազգի մարդկան, զի

1. Այլ օր. ժամանէցին զխանիսոց զամենայն...։

անսուրբ և պիղծ դիւաց երկիր պագանէին[1], առաքեաց զԲանն իւր զմիածին Որդին, զի մարմին մարդկեղէն զգենուցու, և չարչարակցաւն մերձեցուսցէ զմարդիկ առ Աստուած, քանզի զայսմանի զօրութիւն նորա ոչ ոք 'ի մարդկանէ կարէր տեսանել. որպէս և գրեալ է, թէ՝ Ոչ ոք մարդ կարէ տեսանել զերեսս իմ և ապրել։ Եւ արդ նոյն ինքն Բանն մարմնացոյց զմարմինն յանարատ կուսէն, զգեցաւ և երևեցաւ մարդկան, մարմնով երևէր և զօրութեամբ գործէր զամենայն մեծամեծս, որոյ արժանի եղեն ականատես[2] լինել աշակերտքն, զարմացան և հաւատացին, որք և մեզ աւանդեցին զհաւատն անպատում զօրութեան նորա. զնա ծանիր և դու գոնեա անագան[3], զի կարիցես ապրել։

Յուլիանոս ասէ. Քաջ իմն յամես 'ի Հռոմաբանութիւնդ, համառօտ լսեա յինէն. եթէ չառնուցուս յանձն աստուածոցն պաշտօն մատուցանել ըստ կամաց Թագաւորին՝ սրով հրաման տայց սպանանել զքեզ, քանզի տեսանեմ զքեզ դիմագրաւել, և չհամարիս ինչ զտանջանսդ։ Թէոդորիտոս ասաց. Դու ջանաս նմանել հօրն քում սատանայի, և ես աղօթս առնեմ զի անարգել և անխափան կատարեցիս զընթացս իմ։ Բայց յիշեսջիր դու, զի վասն այդր ամենայնի յանդգնութեանդ՝ բարկութիւն մեծ գայցէ քեզ յԱստուծոյ, և զոր արարեալդ և զոր առնիցեսդ, չլինիցի քեզ այնմ հնորհակալ բռնաւորն։ Եւ մինչդեռ նա զայս խօսէր, Յուլիանոս ասէ. Զոր կամիս ասել ասա. բայց տեսցուք թէ լինիցի զոր ասեսդ։ Դարձեալ պատասխանի ետ Թէոդորիտոս և ասէ. Դու չարաչար ախտիւ 'ի մահիճս ծնգիցիս, և անձամբ անձին լիցիս կերակուր, և որդնալից ծիւրեալ[4] ելանիցես յաշխարհէս, և բռնաւորն քո 'ի Ճակատուն յորում ակն ունիցի արութիւն ինչ ցուցանել՝ չվճարիցէ ինչ, այլ յայլազգեաց մեռանիցի, և բնաւ չգիտիցէ[5] յումմէ խոցիցի, և չդառնայցէ այսրէն 'ի Հռովմայեցւոց

1. Մի օր. պաշտօն պանէին։
2. Մի օր. ականատեսի։
3. Մի օր. անագորոն։
4. Մի օր. ծորէալ։
5. Մի օր. և բնաւ գիտիցէ ոչ թէ յումմէ խոցիցի։

աշխարհս։ Եւ զահի հարեալ Յուլիանոս, թէ գուցէ այլ ինչ մեծամեծս և անպարտս խօսեսցի, հրամայեաց տանել զնա, և սրով սպանանել։ Եւ սուրբն և առաւել սուրբն երթայր ցնծալով, և զամենեսեան յանձն առնէր Աստուծոյ զմեծամեծս և զփոքունս, զպատուականս և զանարգս։ Իսկ Յուլիանոս քանզի անագան գնաց յատենէն, զմնացորդս աւուրն և ըզգիշերն ամենայն տրտմութեամբ հանէր յապարանս թագաւորութեանն։

Իբրև առաւօտ եղև՝ յարեաւ վաղվաղակի եմուտ առ կայսրն 'ի պալատն. և իբրև երկիր եպագ, հրամայեաց նմա նստել թագաւորն, և նա եցոյց նմա ըզգիր սուրբ սպասուցն զոր առ 'ի սուրբ եկեղեցւոյն Աստուծոյ, և ապա ասէ ցնա. Թէպէտ և անագան բերի զգիրս կարասոյն, այլ հաւաստեաւ գրեցի զամենայնն և յանգեցի[1], զի գիտասցեն ձեր դիւդ թէ որչափ եկին անտի գանձս[2]. և զայն ևս գիտասջիր, զի զիսանգարիչն Թէոտորիտոս, զոր խնդրէիր վասն ընչից եկեղեցւոյն, հազիւ արկի 'ի բուռն և սաստիկ տանջանօք տանջեցի և սրով սպանի։ Յանկարծակի իբրև լուաւ կայսրն, աղաղակեաց մեծաձայն և ասէ[3]. Որ իմ կամք չէին զայն արարեր. ես ջանացի բազում պատճառանօք քակել զկրօնս[4] քրիստոնէից և չսպանանել զոք միանգամայն սրով. դու չարիս գործեցեր, զի պատճառ ետուր ժանդից Գալիլեացւոցն՝ գրել զինէն բազում չարիս, որպէս և ընդ առաջին թագաւորսն արարին. զի ազգի ազգի պատճառս յօդեցին վասն չարագործացն[5] որ կոտորեցին, զորս և վկայս իմն անուանեն, ուստի և դու պարտիս խնայել, և մի՛ ապաջի ամենայն Գալիլեացւոց սպանանել զոք. և այլոց ամենեցուն ըզնոյն առնել պատուիրեր։ Եւ իբրև զայս ասաց, հայեցաւ ընդ քեռին և ետես զի զամօթի հարաւ և գոյն երեսաց նորա եղծաւ, և ամենայն մարմինն իբրև մեռելոյ եղև. կամեցաւ արձակել զնա. ասէ. Երթիցուք

1. Մի օր. յանանէցի։
2. Մի օր. գիտասցեն յեր գիրդ ՐԷ որչափ էին անտի 'ի գանձս։
3. Մի օր. աղաղակ մեծ արար առ Յուլիանոս և ասէ։
4. Մի օր. ղգէլ կրօնս։
5. Մի օր. վասն լար գործոցն որ ֆապարէցան... անուանէին... և այլոց ամենեցուն պատուէր տուր զնոյն առնել։

դիցն զոհս մատուցուք, զի զաստուածպաշտութիւն կատարեսցուք, զի կարասցես սրսկել ինչ զքեզ և ապրել 'ի շարաւոյ ժանդիցն։

Իսկ Յուլիանոս Թէպէտ և 'ի մեծի տրտմութեան էր, սակայն յարեաւ ակամայ չոգաւ ընդ կայսերն. և իբրև գործեցին զանարժան գործն, և մատուցին զոհս դիւացն, զոյիոն[1] իմն հաւ, որպէս ասեն ժանդագործք թէ 'ի Հնդկաց է, զլեարդն հանին, և կայծիւք խարշատեցին և մատուցին նմա 'ի լեարդէն. և նա առ ա-մօթի և ակամայ կամաք առ Ճաշակեաց, և գնաց 'ի կայսերէն։ Եւ իբրև չոգաւ 'ի վանս հազարապետութեան իւրոյ, ոչ ուտել և ոչ ըմպել ինչ կամեցաւ, զղջացեալ ընդ չարիսն զոր գործեաց. և զցայգն խիթք ինչ յորովայնին կացին, և չարաչար տանջէր զանձն, զի լեարդն՝ որ 'ի զոհից կուռցն Ճաշակեաց, ելեալ նստաւ 'ի վերայ լեարդի նորա, և մանր կոտորէր և 'ի տառապի[2] կացուցանէր։ Եւ իբրև այդ եղև, յիւր մէջ լեարդէն ընդ բերանն 'ի վայր բերէր[3] և ծամէր, և զկէսն 'ի բաց թքանէր, և զկէսն անդէն 'ի ներքս կլանէր. և բազում անգամ եղև այն 'ի բազում աւուրս։ Իբրև չկարէր հանդուրժել այնուհետև տանջանացն, զգացոյց կայսերն և աղաչէր զեկեղեցին բանալ, և նա անդրէն զգացոյց, թէ՝ Փակեցեր, ասէ, և բաց։ Եւ դարձեալ զգացոյց. Վասն քո, արքայ, չարաչար տանջիմ և կորնչիմ։ Եւ դարձեալ կայսրն անդրէն զգացոյց. Թերահաւատեցեր, ասէ, 'ի դիցն, և վասն այնորիկ չարչարիս այդպիսի տանջանօք։ Հէգն և թշուառականն Յուլիանոս այլ ինչ կերակուր չէր ձեռնհաս Ճաշակել, բայց միայն իւր լեարդն էր կերակուր, ըստ մարգարէութեան վկային և երանելւոյն. և յայնր վերայ՝ որդնալից ևս եղև, և ուտէին զմարմին նորա, և ապա ուրեմն եհան զդառնացեալ ոգին։ Իբրև լուաւ անօրէն թագաւորն. Երկմիտ, ասէ, եղև, առ դիսն և ոչ հաւատաց, վասն այնորիկ կրեաց զայն։ Եւ իբրև թաղեցին՝ գետինն ոչ ընկալաւ զնա. բազում անգամ ծածկէին, և գայլն դարձեալ 'ի վեր եկեալ

1. Մի օր. զոյոյ իմն։
2. Մի օր. 'ի պանդոպի։
3. Մի օր. 'ի վեր ընդ բերանն բերեր։

գտանէին, մինչև թռչնոց և գազանաց եղև կերակուր։

Իսկ բռնաւորն յետ սակաւ աւուրց չոգաւ 'ի Պարս տալ Ճակատ. և իբրև կռուեցաւ և յաղթեաց և համարէր թէ այնուհետև արար և կատարեաց արութիւն ինչ, յանկարծակի երևեցան նմա զօրք հրեշտակաց. հրաման ետ վառել իւրոց զօրացն, և իբրև ընդմարդկան 'ի Ճակատս դիմեաց երթալ, և չգիտէր հէգն և թշուառականն թէ յերկնից բարկութիւն եկեալ հասեալ է նմա. յանկարծակի ուրեմն նետ եկն յօդոյն, և հար զնա ներքոյ ստեանն. և սաստիկ արիւն վիժեաց 'ի նմանէ, և 'ի տագնապի կայր այնուհետև 'ի ցաւոյն վտանգէ. և այնպէս թուէր նմա թէ Քրիստոս եկեալ կացցէ յանդիման նորա և պատուհասեցէ զնա. համարէր հէգն և թշուառականն թէ առ նմա մօտ կայցէ. և զայն չիմանայր թէ կարող է յերկինս լինել և յերկիր 'ի մօտոյ երևել. ա՛ռ յարենէն և յօդն 'ի վեր ցանեաց, և աղաղակեաց և ասէ. Շատ է արդ, Քրիստոս, շատ է, յաղթեցեր. և եհան զդառնացեալ ոգին։ Իբրև ամենայն մարգարէութիւնքն կատարեցան՝ զոր մարգարէացաւ սուրբ վկայն Թէոդորիտոս, մեք որ անդէն իսկ 'ի պալատն կայաք և իրագէտ իրացն էաք, որ ամենայն գործոյն ուշ ունէաք ծառային Աստուծոյ, հաստատութեամբ 'ի վերայ հասեալ գրեցաք, և առաքեցաք առ ամենայն եղբարս, որք Ճշմարտութեամբ զհետ երթեալ իցէք կենարարին մերոյ, զի զամենայն հաւաստեաւ գիտիցէք. և զօր ծննդեան սրբոյ վկային, որ է յառաջ քան զչորս կաղանդացն ապրիլի, այս ինքն՝ արեգ ամսոյ. զի ուրախութեամբ փառաւոր առնիցէք զԱստուած, և կատարիցէք զյիշատակ նորա. և 'ի մեր վերայ որ գրեցաք՝ աղօթս առնիցէք։ Եւ օրհնութիւն և գովութիւն առաքիցէք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Թէոդորոսի զինուորին Քրիստոսի։

Ընդ ժամանակս Թագաւորութեանն Մաքսիմիանոսի և Մաքսենտոսի՝ էր հալածումն մեծ քրիստոնէից, կամ դառնալ՝ի կռոցն երկրպագութիւն կամ տանջանաց և մահու մատնել. յորում ժամանակի ըմբռնեալ Թէոդորոս և ածեալ՝ հարկաւորէին զոհել և՝ի բաց կալ՝ի Քրիստոսէ։ Իսկ նա լցեալ Հոգւովն սրբով, և կացեալ՝ի մէջ զօրացն՝ ասաց. Ես քրիստոնեայ եմ, և զոհել պղծոց ոչ հրամայեցայ։

Բրինկաս[1] դատաւոր սենեկապետն ասաց. Ա՛ռ դու զամենայն զինուորութիւնդ և զինեալ զոհեա աստուածոցն, և հաւանեա անյաղթ Թագաւորացն։ Թէոդորոս ասաց. Ես զինուորեալ եմ իմում Թագաւորին, և այլում զինուորել ոչ կամիմ։ Սենեկապետն ասաց. Ամենեքեան սոքա որ ընդ քեզ են Քրիստոսի՞ են զինուորեալ։ Թէոդորոս ասաց. Իւրաքանչիւր ոք գիտէ ում զինուորի, բայց ես զինուորեալ եմ իմում տեառն և Թագաւորին երկնաւորի։ Պոսոդոնոս[2] Դուկենաւիոս մերձ կացեալ՝ ասաց. Ցիսրդ աստուածըն քո որդի ունի։ Թէոդորոս ասաց. Ա՛յո, ունի որդի զԲանն Աշմարտութեան, որով զամենայնս արար։ Սենեկապետն ասաց. Եթէ ծանիցուք զնա, կարե՞մք Թո

1. Մի օր. Բրինիոս։
Միւս օր. Բրիոս։

2. Մի օր. Պոսոնդինոս։
Միւս օր. Պոսոդոնիոս։

ղուլ զմեր Թագաւորն և մերձենալ առ նա։ Թէոդորոս ասաց. Ոչ ինչ խափանէ զձեզ Թողուլ զխաւար և զառժամանակեայ Թագաւորս, և մերձենալ առ Աստուած՝ Թագաւորն յաւիտենից, և զինուորել նմա որպէս և եաս։ Սենեկապետն ասաց. Թողացուցէք[1] դմա սակաւ աւուրս, որպէս զի ինքնին խրատեալ եկեսցէ յօգտակարն. և առեալ սրբոյն զներումն։ Իսկ դատաւորին մոլեալ յաղագս այլոցն 'ի խոշտանգանս տանջանաց և գանից, առ որս բարբառէր երանելին՝ մի՛ ուրանալ զԹագաւորն անմահ։

Եւ գտեալ դիպող ժամ ելոյց զտաճար աստուածուհւոյն։ Իսկ ուրումն տեսեալ՝[2] ամբաստան եղև զսրբոյն Թէոդորոսէ. և հրամայեցին ածել յատեան դատաւորին։ Եւ իբրև ածին, ասէ դատաւորն. Ա՛յ Թըշուառական, ընդէ՞ր փոխանակ զոհելոյ և կնդրուկ մատուցանելոյ աստուածուհւոյն՝ հրով այրեցեր։ Թէոդորոս ասաց. Զոր արարի ոչ ուրանամ, զի Թերևս խափանեսցի պաշտօն աստուածուհւոյն, յոր մոլեալ էք 'ի դիւաց։ Յայնժամ հրամայեաց գան հարկանել զերանելին և ասէ. Կակղագոյն բանքն զքեզ համարձակագոյնս արարին և յանդուգն, մինչ զի և 'ի տաճար աստուածուհւոյն իշխեցեր մերձենալ. դժնդակ տանջանօք այսուհետև վտանգեցից[3] զքեզ, և առից զվրէժ աստուածուհւոյն, զի ակամայ հաւանեսցիս պաշտօն մատուցանել աստուածուհւոյն և հնազանդեսցիս հրամանաց Թագաւորացն։ Պատասխանի ետ երանելին Թէոդորոս և ասէ. Ոչ գոյ 'ի բանս քո ճըշմարտութիւն[4], զի ոչ այնչափ առնուս և զօրասցին տանջանք քո, որպէս զի զայոյս հանդերձելոյն հատցեն և զժուժկալութիւնս իմ՝ որ 'ի վերին զօրութենէն եկեսցէ ինձ, Թէպէտ և բիւր ազգի ազգի[5] տանջանս կազմեսցես։ Ասէ դատաւորն. Խոստովանեա զոհել աստուածոցն և զերծիր 'ի տանջանացն։ Թէոդորոս ասաց. Ոչինչ են տանջանքս այսոքիկ[6], զի տուաւ ինձ

1. Մի օր. Բողացուսցուք ամա։
2. Մի օր. Մի ոմն փնտրեալ։
3. Մի օր. Խրատեցից։
4. Մի օր. ուչ է տո բանք անսուտ առ ճշմարտութիւնք, զի ոչ անչափ զօրասցի պանջանք տո... յոյս..., հաստցէս։
5. Մի օր. Բիւրազգի։
6. Մի օր. ուչինչ են ինչ քոյն պանջանքս այսոքիկ։

զօրութիւն 'ի Տեառնէ իմմէ որ կարողն է յամենայնի։ Եւ զայս ասացեալ հրամայեաց դատաւորն 'ի բանդ արկանել, և կնքել զդուրս և անսուաղ պահել զաւուրս քառասուն, մինչև անդէն մեռցի. իսկ երանելին կերակրեալ լինէր 'ի շնորհաց սուրբ Հոգւոյն։ Եւ 'ի գիշերին յայնմիկ երևեցաւ նմա Տէր և ասէ. Քաջալերեաց, զի ես ընդ քեզ եմ յամենայնի, և պահեցի զկեանս քո անփնաս։ Իսկ երանելին իբրև լուաւ զայս, սկսաւ ցնծալով օրհնել և սաղմոսել. Տէր, լոյս իմ և կեանք իմ, և ես յումմէ դողացայց, և որ զկնի այսորիկ. և ձայն բազմաց լսելի լինէր ընդ երանելւոյն որ ասէին զաղմոսն։ Եւ լուեալ զձայնն բանդապետին, և զարհուրեալ երթայր 'ի գիշերին՝ պատմէր դատաւորին։ Եւ անդէն եկն դատաւորն հանդերձ զինու և բազում զինուորութեան զօրօք, վասն զի համարեցաւ զօրու գալ և հանել զնա 'ի բանդէն։ Եւ եկեալ գտին զդուրսն կնքեալ, և ձայն սաղմոսաց լսելի լինէր բազմաց, և բացեալ զբանդն ոչ զոք գտին՝ բայց զերանելի նահատակն պնդեալ 'ի կոձեղ, և ահ կալաւ զամենեսեան. և հրամայեաց ընդ առաւօտն տանել յատեանն։ Եւ սկսաւ ողբական բանիւք խօսել և ասել. Հաւանեա ինձ և զոհեա աստուածոցն. երդուեալ աստուածոցքն զի գրեցից զքեզ տերանց տիեզերակալաց[1], վաղվաղակի քահանայապետ լինել, և պատիւ ընդունել և աթոռակից մեր եղիցիս և մեծարեսցիս յամենեցունց։ Իսկ երանելին Թէոդորոս արհամարհեալ զխոստումնն, ասէ. Պատիւք քո և պարգևք ընդ քեզ լիցին 'ի կորուստ. ոչ խաբեսցես զծառայս Աստուծոյ. այլ և ոչ 'ի տանջանաց քոց երկեայց, այլ Աստուծոյ իմոյ մատուցից փառս, և ոչ դիւաց. զոր ինչ կամիս արա վաղվաղակի։

Յայնժամ բարկացեալ բռնաւորն հրամայեաց կախել[2] զնա և քերել երկաթի քերչօք, զի մերկացեալ զամենայն մարմինն 'ի բաց ընկեսցին[3] յերկիր։ Իսկ երանելին սաղմոսէր. Օրհնեցից զՏէր յամենայն ժամ, յամենայն ժամ օրհնութիւն նորա 'ի բերան իմ։ Եւ

1. Մի օր. ինքնակալաց։
2. Մի օր. կապել։
3. Մի օր. մերկացուցեալ։

զարմացեալ բռնաւորն 'ի վերայ ժուժկալութեան սրբոյն թէ զիարդ բաւէ և տևէ այսպիսի դառն տանջանաց։ Իսկ երանելին կայր մեծաւ ուժով, և սկսաւ ասել ցբռնաւորն. Ո՞չ վաղ իսկ ասացի քեզ թէ Քրիստոս է իմ օգնական, որ տայ ինձ ոյժ և յաղթութիւն յաղթել ամենայն հնարից քոց, որդի սատանայի և թշնամի ամենայն արդարութեան, որ ոչ ծանեար զարարիչն Աստուած։ Ասէ բռնաւորն. Զինչ ունիս և կամ զինչ եդեր 'ի մտի. ընդ մեզ լինել և կալ, թէ ընդ Քրիստոսին քում և մեռանել։ Ասէ սուրբն Թէոդորոս Թերևս մեծաւ խնդութեամբ առ բռնաւորն. Ընդ Քրիստոսին իմում էի և եմ և եղէց։ Իսկ իբրև ետես բռնաւորն զինքն յաղթահարեալ 'ի նահատակէն՝ հրամայեաց հրով այրել զերանելին։ Եւ իբրև տարան 'ի տեղի հրատին, և չար սպասաւորացն պատրաստեալ զհուրն վաղվաղակի. իսկ երանելին հայեցաւ յերկինս, և կնքեաց զինքն նշանաւ սրբոյ խաչին և սկսաւ ասել այսպէս. Տէր Աստուած, հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով ծանեաք զՀշմարտութիւնն որ առաքեցաւ 'ի քէն վասն փրկութեան ազգի մարդկան. և մարմնացաւ և խաչեցաւ և թաղեցաւ և յաբեաւ յաւուր երրորդի և համբարձաւ առ հայր յերկինս, զի զմեզ ժողովեսցէ բանիւ քարոզութեան[1] 'ի հաւատս ամենասուրբ Երրորդութեանն։ Եւ որք արդարացան շնորհօք և մարդասիրութեամբ Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, նոքին և փառաւոր եղեն. արդ այժմ ընկալ զիս 'ի ձեռն հրոյս կատարել զընթացս իմ, և արժանաւորեա զիս ընդ սիրելիս և ընդ Հշմարիտ վկայս ժառանգել զպատրաստեալ 'ի սկզբանէ աշխարհի սրբոց քոց զարքայութիւն, և ընդ նոսին փառս մատուցանել ամենասուրբ Երրորդութեանն, Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և յաւիտեանս. ամէն։

Եւ հայեցեալ ետես 'ի բազմութեանն զԿղենիկոս զի արտասուէր, որ էր զինուորակից նորա. աղաղակեաց առ նա. Հետևեա զկնի իմ առ Թագաւորն երկնաւոր, զի որպէս առժամանակեայ կենաց կեցաք առ մի-

1. Մի օր. ասէ արանական փարոզութեամբն։

մեանա, կեցցուք և սիրով Հոգւոյն, և զյաւիտենական միաբան վայելեսցուք 'ի փառս Աստուծոյ։ Եւ զայս ասացեալ, ասէ. Քրիստոս յոյս և ապաւէն յուսացելոցս 'ի քեզ, տուր շնորհս ողորմութեան այնոցիկ որք ըմբռնեցան ընդ իս՝ ընտիրք պահել 'ի Ճշմարտութեան հաւատս որ ծանուցաւ 'ի քէն, և կատարել զընթացս իմ բարի խոստովանութեամբ և արժանաւորել երկնից արքայութեանն։ Եւ անդէն սպասաւորք աստուածուհւոյն իբրև վրէժխնդիրք՝ կապեցին զերանելին Թէոդորոս և ընկեցին 'ի հնոցն կազմեալ. զի հրամանն Թագաւորին սաստկանայր և հնոցն բորբոքեր առաւել։ Եւ էր սուրբն 'ի մէջ հնոցին լուսաւոր առաւել քան զհրոյն լոյս. և լուեալ բարբառ որ ասէր. Տէր Յիսուս, ընկալ զոգի իմ 'ի հոտ անուշից։ Եւ տեսին որոց արժան էր տեսանել իբրև զլոյս 'ի հնոցէն 'ի վեր յերկինս բարձրացեալ զհոգի սրբոյն։ Եւ եղև ահ 'ի վերայ ամենեցուն, և տային օրհնութիւն Աստուծոյ։

Բարեպաշտուհի ոմն բարեպաշտութեամբ լցեալ Բարի անուն, խնդրեաց զմարմին երանելւոյն Թէոդորոսի, և իւղովք և խնկովք անուշիւք կազմեալ եդ 'ի տապանի. և տարեալ 'ի գիւղն որ կոչի Եւխայիտա մերձ 'ի քաղաքն Ամասիա, և եդ 'ի հանգստեան մեծաւ պատուով և զգուշութեամբ։ Եւ կատարեն զյիշատակ սրբոյն Թէոդորոսի 'ի փառս ամենասուրբ Երրորդութեանն, Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Թէոդորոսի Կեսարացւոյ։

Քրիստոսաձիր և առատաբուղխ ողորմութեան շնորհք Հոգւոյն սրբոյ՝ զոր միշտ և հանապազ ըստ իւրաքանչիւր ժամանակի առատաձեռնեալ տնօրինէ յեկեղեցիս իւր, զոր հաստատեաց 'ի վերայ առաքելական վիմի հաւատոյ, և կանգնեաց անյողդողդ 'ի յեօթանց սեանց, և ոչ երբեք նուազեցուցանէ կամ պակասեցուցանէ առ իւր ստեղծեալքս, մանաւանդ առ այնք որք 'ի սկզբանէ հաճոյացան կամաց նորա և կատարիչք եղեն խորհրդոց նորին. և հաստատապէս առնէ նշանս և աքանչելիս յաւուրս և 'ի դարս և 'ի ժամանակս հանապազօր. որով և արար 'ի սկզբանէ և առնելոց է մինչև 'ի գալուստ իւրոյ տէրութեանն, որ պէս և երևեցոյց 'ի դարուց դարս որք են գծագրեալք և ձևացեալք 'ի տառս աստուածայինս։ Այդ 'ի գալ Բանին Աստուծոյ և 'ի ծագել առ մեզ արեգականն արդարութեան, որ և զկնի 'ի մեզ թագաւորելոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, յորժամ 'ի մարմին թանձրացեալ անմարմինն Աստուած՝ ինքնայօժար կամօք առ 'ի մերս կենցաղավարիւր բնութիւն, ըստ մարգարէին, զատ և որիշ 'ի մեղաց. և յետ չարչարանաց նորին և աշխարհակեցոյց յարութեանն և նորահրաշ համբարձմանն կատարելով առ սուրբս և սիրելիս անուանն իւրոյ, և առ վկայս իւրոյ մարմնաւիկ տնօրէնութեանն, որք արիաբար յօժարութեամբ

բարձին զխաչս խաչելոյն և ընթացեալք զհետ կոչողին ձայնի եղեն խաչակիցք Որդւոյն Աստուծոյ։ Քանզի 'ի բացուստ դիտմամբ տեսանելով զփառս Բանին և զբարեբաստութիւն խոստացեալ անհատ պարգևին, զանասելի գեղեցկութիւնն, զանծերանալի կեանսն, զանտրտում ուրախութիւնն, զանթառամ պսակն և որ սոցին նման, զոր և ոչ ոք 'ի մտաւորաց զննել կարասցէ և կամ բանիւ ընդ թուով արկանել զհամար վկայիցն. որք կամաւ և առաքինաջան նահատակութեամբ հասին աւետեացն Հօր, երանելի յուսոյն ակն ունելով՝ անձամբ զանձինս 'ի խաչ հանին կարեօք և ցանկութեամբ հանդերձ. կրելով յինքեանս ըստ Աւաքելոյ՝ զբաղմազան և զյոքնակի կիրս չարչարանաց, համբերելով նեղութեանց և լկանաց, քաղցոյ և ծարաւոյ, ցրտոյ և մերկութեան, գերարանաց և կապանաց, ստանալով զյաւիտենական կեանսն, պսակելով 'ի Հօրէն լուսոյ և ժառանգելով զանտրտում ուրախութիւնն։

Արդ 'ի սոյն իսկ ժամանակի, և ընդ նուաղել շըրջաբերութեան կենցաղոյս, 'ի յետնել աւուրցս 'ի ժամանակս վերջինս, եղև նշանս և սքանչելիքս այս 'ի միջի մերում։ զոր եթէ կամեցեալ նախախնամութեանն Աստուծոյ ծաղկաձև պսակել սուրբ զեկեղեցի և զբարձալից առնել զմանկունս նոր Սիոնի, և բարձրացուցանել զեղջիւր սուրբ եկեղեցւոյ. զոր տեսանելով վարատեցելոցն և յերկուացելոցն 'ի հօտէն Քրիստոսի՝ զարթիցեն 'ի մահանգիստ քնոյն, զղջացին և 'ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն. աւետարանական դաւանմամբ հաստատեսցին 'ի հաւատս սուրբս և 'ի խոստովանութիւն սրբոյ Երրորդութեանն։ Եւ այս գործիւր 'ի բառնալ արդարոց և ընդ վերանալ ընտրելոց Աստուծոյ, և ընդ սերանալ և 'ի բազմանալ աղգի աղգի չարեաց 'ի վերայ երկրի զոր սերմանեաց չար որոմանցն սերմանողն որդին կորստեան և մշակն անօրէնութեան։

Ընդ ժամանակս բառնակալութեան մեծի արքային Տաճկաստանի Սուլիման Շահ Սուլտան Ռուգնատնին, որ բաղում հանդէս քաջութեան և յաղթութեան պատերազմի ցուցեալ յաւուրս ժամանակաց իւրոց, և

յաչս յոքունց մեծարեալ ահ արկանելով ամենայն թագաւորաց տիեզերաց։ Սա որդի գոլով մեծ և յաղթող ինքնակալ Խլիճ Ասլան Սուլտանին. ուստի գրաւեալ սորա ընդ իշխանութեամբ տէրութեանն իւրոյ զկողմանս Հիւսիսոյ, սկսեալ 'ի Կեսարացւոց մայրաքաղաքէն մինչև 'ի մեծն Բիւզանդիոն, որ այժմ կոչի Կոստանդինոպոլիս, ունելով ընդ իշխանութեամբ զՊոնտոս և զՍեբաստիա և զամենայն Ձեմենտացւոց և զՏրապիզոնտացւոց զտէրութիւնն. և հասեալ մինչև 'ի մեծ և 'ի հռչակաւոր քաղաքն Թէոդուպոլիս՝ որ կոչի Կարնոյ քաղաք, նուաճեաց ընդ գաւազանաւ զԵկեղեաց և զԴարանաղեաց, արկ ընդ ձեռամբ զիշխանն Ծոփաց, փութացաւ մինչև 'ի լայնանիստ քաղաքն Մելիտենի, մերձ 'ի սահմանսն Եդեսացւոց. համարձակեցայց ասել թէ և զամենայն աշխարհ, տիրելով 'ի վերայ ամենայն հայրենական աշխարհաց իւրոց։ Եւ արդ այսոցիկ այսպէս եղելոց, յաւուրս սորա յերկրորդումամի տէրութեան իւրոյ յայտնեցաւ մեծ և սքանչելի, պանծալի և հռչակաւոր վկայն Քրիստոսի, երանեալ նահատակն սուրբն Թէոդորոս։

Սա ծնեալ լինէր 'ի գաւառի Գամրաց՝ յաշխարհն Կապադովկացւոց, 'ի քաղաքին Կեսարացւոց, որ է աթոռ հայրապետական և թագաւորական, և ամենայն քաղաքաց Ցունաց գահերիցագոյն, յոքունս ունելով յինքեան արեգակունս՝ զՀոյլս վկայիցն սրբոց, որ ջահաբորբոքլուսով պայծառացուցանեն զեկեղեցիս քրիստոնէից. զՄերկիւռիոս ասեմ և զԴորդիոս, և զմեծն Բասիլիոս. առ որս մի 'ի նոցանէ է՝ տեսանել զյոքնեղանեան վկայն Քրիստոսի զսուրբն Թէոդորոս. արդ 'ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ օրհնեալ նախասացեալ քաղաքն Կեսարիա՝ որ զայսպիսի ջահունս և զարեգակունս մնուցանէր։ Բայց 'ի հանդէս պատմութեան եկեսցուք քաջ և յաղթող վկայիս, և զսորայս քաջաբաւարութիւն դրուատական բանիւք պանծալի երևեցուսցուք. այլ դուք մաքրեցէք զլսելիս յունկնդրութիւն համբերատար ժուժկալութեան սրբոյ նահատակին։ Արդ սա որ այսքան երանութեան արժանաւորեալ, 'ի տղայական տիոց և 'ի մայրական խանձարրոց հրահանգեալ և կրթեալ օրինաց և մարգարէ-

իւք և աւետարանական կաթամբն մնեալ՝ ըստ շնորհաց սրբոյ աւազանին, զարգանալով ըստ աճման հասակի մինչև յարբունս երիտասարդութեան հասեալ, գնալով յօրէնս Տեառն և խոկալով 'ի պատուիրանս նորա 'ի տուէ և 'ի գիշերի. և ապա ըստ սարասի հասարակաց բնութեանս զուգաւորի պարկեշտ ամուսնութեամբ, ներգործելով արուեստս ինչ զոր առնէր՝ այնու հատուցեալ վճարէին զպէտս կենաց իւրեանց, ըստ մարգարէին, թէ՝ Զվաստակս ձեռաց քոց կերիցես։ Այպա 'ի միտս եղեալ երանելւոյն 'ի հնարս մտանէր թէ զիարդ և կամ որով աղագաւ կարասցէ զաղքատութիւն մարմնոյն 'ի դերև կացուցանել[1], ըստ սովորութեան բնութեանս յառաջիկայն հակամիտէր։ Բայց է աղքատութիւն որ պարունակեալ ունի յինքեան բաղմազան փարթամութիւն, և է փարթամութիւն որ ունի յինքեան զնորին հակառակն, թուի թէ մի գոլով սա յայնց աղքատացելոյն՝ զոր աստուածեանն բան յաշխարհակեցոյց քարոզութեանն երանական բանին արժանացոյց ասելով. Երանի աղքատաց հոգւով։

Սա երթեալ առ մի ոմն 'ի քաղաքացեացն ասելով. Տուր ինձ փոխ դահեկանս ոսկւոյ և արծաթոյ, օգնական լինելով իմոյ թշուառութեանս. իսկ նա յօժարութեամբ ետ նմա որչափ խնդրեաց ինչ 'ի նմանէ. և առեալ նորա գնաց և անդ վատնեաց, որպէս ինձ թուի, թէ զանցաւորս վաճառեաց զարքայութեանն ստանալով զանդ երանութիւնն, զդրախտին վայելչութիւնն, զգրգանս գոգոյ հայրապետին Աբրահամու։ Ո՛վ հրաշիցս. ոսկին առ հողն խոնարհէր, և որ բարձեալն էր զգանձն անմահական՝ առ այն որ ունէր զգոյս ապականացու։ Եւ իբրև մերձեցաւ ժամանակ հատուցանելոյ զարիտուր փոխարինին՝ զոր նա ոչ ունէր հատուցանել, և որ պարտոյ տէրն էր՝ նեղեր կեղեր դարձուցանել անդրէն զպարտսն. և նա ոչ կարէր։ Այպա առեալ տանէր առ դատաւոր քաղաքին, որ էր կարգեալ արքունական հրամանաւ դատիչ և իրաւարար 'ի վերայ ամենայն գաւառացն։ Եւ իբրև յուղղ

1. Յոր. ԺԵ։

անկեալ գնացին՝ պատմեաց զերան ստուգապէս ներ-
հակն դատաւորին, և նա հրամայեաց ամենայն իրաք
հատուցանել անդրէն զդարձն։ Եւ իբրև ելին յերե-
սաց դատաւորին՝ կալեալ զնա չար ծառայակցին նե-
ղեր զնա խեղդելով. իսկ Թէոդորոս զերծեալ 'ի ձե-
ռաց նորա դարձեալ միւսանգամ անկանէր յապա-
րանս դատաւորին. և անդանօր ուրանայր զքրիստո-
նէական հաւատն զոր ունէր, և Ձողոպրեալ զերծա-
նէր առ ժամայն յառնէն որ նեղեր զնա։ Ապա այնու-
հետև գնացեալ 'ի յարկս իւր և նոյնժամայն ուշաբե-
րեալ յիշեաց զտէրունական բանն որ ասէ, Թէ՝ Որ
ուրասցի զիս առաջի մարդկան, ուրացայց և ես զնա
առաջի Հօրն իմոյ և հրեշտակաց սրբոց։ Խորհուրդս
բարիոք զմտաւ ածելով՝ ստրջացեալ տիրապէս և 'ի
զղջումն եկեալ հաւաստապէս, անկանէր 'ի վերայ ե-
րեսաց իւրոց յերկիր, լայր դառնապէս և արտասուէր
ողորմաբար, ապաշաւելով զկորուստ անձին իւրոյ. և
եկեալ 'ի զարհուրումն՝ շքեղանայր դէմք երեսաց նորա
որպէս երանեալ և քաջ վկայն Քրիստոսի սուրբն
Յակովբիկ, որ կատարեցաւ արեամբ 'ի փառս Աս-
տուծոյ։

Յարուցեալ այնուհետև խոյս եառ 'ի տեղւոջէ անտի,
յուղի անկեալ գնաց 'ի քաղաքիկ մի փոքրիկ՝ որ էր
մերձ 'ի սահմանս Յունաց, որ ըստ հայական անսայ-
թաք սիղոքայիցն կոչի Շնորհաւոր, և ըստ խամայէ-
լեան խախտալուր լեզուին Խիրշահր. և անդանօր
զտեղի առեալ բնակէր, 'ի ծածուկ ունելով զհաւա-
տն հայրենատուր և ամբիծ որ առ Քրիստոս. և անդ
կացեալ ապաշխարէր մեծաւ զղջմամբ։ Յայնժամ 'ի
սաղրելոյ չարին և 'ի հակառակութենէ չար կամաց
բանսարկուին՝ որ հանապազ մարտնչի ընդ որդիս մարդ-
կան, յարուցանէր 'ի վերայ նորա փորձութիւնս։ Այր
ոմն 'ի քաղաքէն Կեսարու 'ի դասուց անօրինացն՝ գը-
նացեալ 'ի նախասացեալ քաղաքն յայն, և հանդիպ-
մամբ պատահեալ մեծին այնորիկ և ցանկալի առն
Աստուծոյ, և 'ի տեսլենէն ծանեաւ զնա, և ըմբռնեալ
զամենարջանիկ վկայն Քրիստոսի խօսեալ սկսաւ և ասէ
ցնա. Ո՞չ դու այն ես որ ուրացար զՔրիստոսն քո և
'ի բաց կացեր 'ի Ճշմարտութենէ անտի նորա, և եղեր

ուրացող և պաշտօնատար մերոց օրինացն. և այժմ տեսանեմ զքեզ զի ունիս զառաջին հաւատն և ըզկարգն քրիստոնէից, և պատուես զնա յօժարութեամբ, ուրանալով զմեր կրօնսն և քամահելով զհաւատն յոր սկսարն։ Քանզի լուեալ էին զդարձ սրբոյն և ոչ գիտէին թէ ուր իցէ՝ զի կալցեն և սպանցեն զնա։ Իսկ անպարտելի վկայն Քրիստոսի անեղկիւղ համարձակութեամբ խոստովան եղև զՀշմարտութիւնն և ոչ ուրացաւ, ասելով յայտնապէս. Ա՛յո, ես եմ որ խաբէութեամբ չարին պարտեցայ և յանցաւոր գտայ առ Տէրն իմ Յիսուս Քրիստոս, որ է արարիչ երկնի և երկրի երևելեաց և աներևութից, որ միայն ունի զանմահութիւն բնակեալ 'ի լոյս անմատոյց. զիաՀրդ ուրանայի զնա որով Ճանաչէի զնա յորովայնէ մօր իմոյ. զնա միայն պաշտեմ և նմա երկրպագեցի 'ի մանկութենէ իմմէ. բայց այժմ զղջացեալ ծանեայ զՀշմարտութիւնն և դարձայ ունել զՀաւատն իմ որ առնա։ Յայնժամ սրտմտութեամբ և բարկութեամբ ցասուցեալ այրն այն՝ ոչ կամեցաւ թողուլ զնա, այլ անդէն ըմբռնեալ տանէր զնա եպերանոք առ զօրագլուխ քաղաքին, որ արքունական հրամանաւ ընկալեալ ունէր զվերակացութիւն քաղաքին, և պատմեաց նմա զամենայնն։ Զայս իբրև լուաւ քաղաքապետն այն՝ բարկացեալ հրամայեաց ձաղածանակ առնել և շրջեցուցանել զնա արհամարհանօք և անարգանօք ընդ փողոցս քաղաքին 'ի տեսս ամենայն ռամկին։ Իսկ սուրբ վկայն Քրիստոսի զայն ամենայն ինքեան փառս և պատիւ համարելով՝ տանէր ժուժկալութեամբ։ Յայնժամ բարկացեալ բռնաւորն հրամայեաց արկանել զսուրբն 'ի բանդի աւուրս ինչ։

Իսկ յետ աւուրցն անցանելոյ հանեալ տայր 'ի ձեռս դահճացն տանջել զերանելին. և զկնի չարչարանացն հրաման տայր կապանօք և դառն նեղութեամբ խաղացուցանել 'ի քաղաքն Կեսարիա առ մեծ արքայն։ Եւ յորժամ մուծին 'ի քաղաքն՝ նոյնժամայն արկին 'ի բանդ զերանելին։ Իսկ 'ի վաղուեան աւուրն 'ի ծագել արեգականն՝ ընթացեալ պատմեցին արքային զանցս սրբոյ վկային. իսկ նա իբրև լուաւ հրամայեաց

փոյթ ընդ փոյթ ածել զառաջեաւ. և 'ի մտանել սրբ-
բոյն հայեցաւ 'ի նա արքային մեծաւ ցասմամբ, և ասէ
ցնա. Այր դու, յիրաւի ասեն զքէն եթէ տաճիկ եղեր,
և այժմ յետս դարձեալ՝ ունիս զկարգս և զաղանդս
քրիստոնէից, և պատուես զօրէնս Նազովրացւոյն,
պաշտես զաստուած զոմն զոր Յիսուսն անուանեն, որ
յինքեան ազգէն չարչարեալ և խաչեալ՝ մեռանէր ըզ-
չարագործացս մահն, և զմերս դեն թողեալ քամա-
հես արհամարհանօք. արդ հրամայեմ քեզ առանց ա-
մենայն պատճառի ունել զմերս սահմանեալ կրօնս, և
թողուլ զսնոտի և զընդունայն կարգ քրիստոնէից։
Յայնժամ անպարտելի վկայն Քրիստոսի մեծաւ համ-
արձակութեամբ եբաց զշնորհալից բերանն՝ ասելով.
Ես, ով թագաւոր, քրիստոնեայ եմ և ծառայ Քրիս-
տոսի, այլ և 'ի զաւակէ քրիստոնէից, և ոչ երբեք ու-
րեք լուայ եթէ եղեալ է յազգատոհմի իմում 'ի մա-
սինդ յայդմիկ յորում դուդ ասացեր, և ոչ ես եղէց
յաւիտեան. այլ միոյն միայն Աստուծոյն իմոյ Յիսուսի
Քրիստոսի՝ որ մեռաւն վասն մեր և մահուամբն իւրով
կենդանացոյց զազգս մարդկան։ Արդ 'ի սկզբանէ 'ի
նա եմք հաւատացեալ, և ազգաց յազգս զնա ունիմք
փրկիչ և կեցուցիչ. նմա պարտ է ծառայել և նմին
միայն գտանել հպատակ. մի՛ և մի՛ լիցի ուրանալ ինձ
զՏէրն իմ և զԱստուածն Ճշմարիտ՝ որ է տէր կենաց
և մահու։ Կրկնեաց դարձեալ արքայն և ասէ ցսուրբն.
Մի՛ այդպէս կայցես 'ի նմին յամառութեան և
ընդդիմանար իմոց հրամանացս, ապա թէ ոչ՝ քա-
րամբք քարկոծ հրամայեմ առնել զքեզ և բառնալ 'ի
քաղցր կենացս։ Պատասխանի ետ սուրբն Աստուծոյ
և ասէ. Գիտեա այսուհետև, ով արքայ, զի ես ոչ եմ
եղեալ 'ի մտի իմում երկնչել 'ի սպառնալեաց քոց, և
ոչ ունիմ խորհուրդ և առաջարկութիւն կամաց ուրա-
նալ զՔրիստոսն իմ, և լինել պաշտօնատար սուտա-
պատիր և խաբեբայ կրօնիցն ձերոց. այլ պատրաստ
եմ յօժարական [1] կամաք յանձն առնուլ զչարչարանս
և զնեղութիւնս վասն անուան Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի, որ վասն իմ յանձն առ զչարչարանս խաչի

1. Ցոր. յաւժարական։

և մահու. արդ մի՛ յապաղեր, այլ զոր ինչ առնելոց
ես արա վաղվաղակի։

Եւ մրմռեալ արքային հրամայեաց բռամբք հար-
կանել զբերան սրբոյ վկային այնքան, մինչև թափել
ատամունսն 'ի ընդաց նորա. և ետ տանել զնա առ դա-
տաւորն ասելով. Քննեա զդա որպէս և կամիս՝ թէ
յորմէ ազգէ է, և վարեսցիս ընդ դմա ըստ հաճոյից
քոց։ Իսկ նոքա առեալ տարան զնա ըստ հրամանի
ինքնակալին. և 'ի մտանելն նորա առ դատաւորն՝ ծա-
նեաւ զնա վաղվաղակի և ասէ. Ո՞չ դու էիր որ եր-
բեմն եկիր առաջի իմ և ուրացար զՔրիստոսն քո և
զՀաւատն հայրենի, և այնր աղագաւ ազատեցար յառ-
նէն յայնմանէ՝ որում պարտէիր զսակս դահեկանացն.
և ես ընկալայ զքեզ որպէս զորդի հարազատ և
զեղբայր սիրելի, և պատուեալ մեծարեցի արձակելով
զքեզ. արդ ուստի՞ գաս, և զինչ է զոր լսեմն զքէն,
ճշմարիտ են եթէ սուտ, ասա վաղվաղակի, քանզի 'ի
քէն կամիմ ուսանել զզիարդն։ Իսկ սքանչելի այրն
Աստուծոյ և մեծ վկայն Քրիստոսի բարձր ձայնիւ
սկսաւ առաջի բազմամբոխ հրապարակին և յոքնա-
խումբ ռամկին աղաղակեաց համարձակապէս լի ար-
տասուօք 'ի լուր ամենեցուն, և ասէ. Քրիստոնեայ եմ
ըստ շնորհի աւազանին և ծառայ խաչելոյն Աստուծոյ.
և արդ մի՛ լիցի ինձ ուրանալ զնա, այլ խոստովանիմ
զնա Աստուած և տէր և թագաւոր, իշխան և փրկիչ,
և յանձն առնում զամենայն հարուածս տանջանաց
վասն ամենասուրբ անուան նորա. այլ և խնդութեամբ
մեռանիմ՝ զի կացից առաջի նորա զուարթ երեսօք. զի
թէպէտ և 'յանցաւոր գտայ առ Տէրն իմ յառաջա-
գոյն առաջի քոյոյդ ատենի, այլ յուսամ և ակն ունիմ
գտանել և առնուլ 'ի նմանէ զթողութիւն յանցանաց
'ի ձեռն հեղման արեան իմոյ. ահա լուար, ով դա-
տաւոր, զամենայն յինէն ճշմարտութեամբ։

Եւ պատասխանի դատաւորն և ասէ ցնա. Որդեակ
իմ, մի՛ ընդդիմանար խրատու իմոյ, յիշեա զդաշինս
ուխտին զոր հաստատեցեր առաջի իմոյս ատենի. ես
վերստին ընկալայց զքեզ և տայ քեզ դանձս ոսկւոյ և
արծաթոյ՝ առ 'ի բաւականութիւն պիտոյից կենաց
անձին քում; և պատուեալ մեծարեսցիս յամենե-

ցունց 'ի մէնջ 'ի մեծամեծաց և 'ի փոքունց, և լինիս
երևելի 'ի դրան արքունի. որովհետև ընծայեցեր զքեզ
միոյն Աստուծոյ, և կամօք քո ուրացար զանուն քրիս-
տոնէութեան՝ մերոյս անսալով կրօնից. արդ որդեակ,
մի՛ փոխելանար և փոխիր յայնմ բարի խորհրդոյն,
մատնելով 'ի կորուստ զհասակ մանկութեան քո։
Զայս և որ սոցին նման բանս պատրողականս խօսէր
դատաւորն 'ի լսելիս սրբոյ վկային, կարծելով հաւա-
նեցուցանել զնա. իսկ ամենագով սուրբն խցեալ զա-
կանջս իւր՝ ամենևին ոչ ընդունէր զասացեալսն առ 'ի
նմանէ, այլ միայն համարձակաձայն բարբառեալ ա-
սէր. Ո՛հ դատաւոր, խոստանալով ինձ ոսկի և արծաթ
և մեծարանս և պատիւ ընդունել յարքունուստ, այ-
դուիկ կամելով հաւանեցուցանել զիս քոյին կորստա-
կան և սուտապատիր բանիցդ, թողուլ զիս հարկե-
ցուցանես զձանապարհն ուղիղ՝ որ տանի 'ի կեանսն
յաւիտենից, ուր գանձն անապական է և արքայու-
թիւնն անվախճան, և լսել քոյին մոլար խրատու.
վասն որոյ և ես իսկ արտասուեմ զկորուստ անձանց
ձերոց, և զխաւար կուրութեան իմանալի աչաց ձե-
րոց. ուստի ճնայ և պահի ձեզ հուրն անշէջ և որդն
անքուն, որպէս ասաց Տէրն։ Յայնժամ դարձեալ վը-
կային ոյժ առեալ 'ի Հոգւոյն սրբոյ՝ երդմամբ կամե-
ցաւ հաստատել զբանն, և ասէ. Երդուեալ իմ յեր-
կինս և յերկիր և յարարիչ նոցին և 'ի հաստիչ, զի
որպէս ոչ է նոցա հնար ելանել ընդ կարգս սահմանի
իւրեանց, նմանապէս և ես ոչ ևս եմ փոխելոց յիմոց
բարիոք խորհրդածութեանց. արդ զոր ինչ առնելոց
ես արա վաղվաղակի, զի ես պատրաստ եմ 'ի մեռա-
նել որպէս ասացի։ Եւ ամպարիշտ դատաւորն լցեալ
ցասմամբ, ետ զնա 'ի ձեռս չարադև դահճացն հարկա-
նել և տանջել զնա յերկար։ Իսկ սպասաւորք չարին
գանեալ քարամբք զկզակս նորա, մինչև ջաղջախեալ
խորտակեցան մնուրք բերանոյ նորա, առ որս վարդա-
տեսակ արիւնն կայլակացեալ հոսմամբ ոռոգանէր
զերկիրն. և անկեալ կայր առաջի նոցա իբրև զմե-
ռեալ։ Իսկ նոցա մերկացեալ 'ի նմանէ զհանդերձիկն
զոր ունէր, և առիգածեալ սրբոյն՝ տանէին 'ի բանդն
և պահէին զգուշութեամբ։ Իսկ երանելի վկայն

Քրիստոսի մտանելով 'ի բանդն՝ զամենայն գիշերն հանէր 'ի գլուխ յաղօթսն Աստուծոյ, բերկրալից սրբութիւն և անտրտում ուրախութեամբ գոհանայր 'ի վերայ անպատում պարգևացն Աստուծոյ, որ արժանի արար չարչարիլ վասն նորա. ցնծայր և օրհնէր զԱստուած. և այնպէս կայր բաղում չարչարանօք 'ի խաւարչտին բանդին զօրէն փեսայի յառաջաստի։ Եւ իբրև այդ եղև, ածեալ լինէր զառաջեաւ սուրբն հանդերձ կապանօք առաջի դատաւորին յապարանս նորա. իսկ դատաւորն իբրև ետես զբարեյաղթ վկայն Քրիստոսի՝ խօսել սկսաւ ցնա և ասէ. Իմաստնացա՞ր, որդեակ իմ Թէոդորէ. այժմ գիտեմ զի փոխեալ ես 'ի չար խորհրդոցն զոր ունէիր 'ի յանցելում աւուրն. ահա տեսանե՞ս, թէ ո՞րչափ դժուարին է նեղութիւնք մարմնոյ կամ երկիւղ մահու, վասն որոյ և ես իսկ ապաշաւեմ զերիկեան աւուրն զոր սրտմտութեամբ և բարկութեամբ յանցեայ առ քեզ. և այժմ ամաչեմ 'ի քէն, և աղաչելով խնդրեմ թողուլ հայրական ալեացս զտանջանսն՝ զոր առ քեզ ներգործեցի. յաղթեալ 'ի ցասմանէ սրտիս ոչ կարացի համբերել քոյոց ախմար և տղայական բարուցդ և երիտասարդական համարձակութեանդ։ Արդ 'ի բաց դիցես այժմ առ 'ի քէն զտմարդի և զանօգուտ կամն՝ զոր ընկալար 'ի ձեռն խրատու քրիստոնէից, քանզի գիտեմ ես ամենայն իրօք թէ նոքա հրապուրեցին զքեզ կալ հակառակ մերոցս կրօնից. արդ լուր ինձ և դարձ վերստին և վայելեսցես 'ի բաղում բարութիւնս 'ի կեանս աշխարհիս այսորիկ. և ոչ միայն այս, այլ լիցիս հաճոյացեալ յաչս ամենեցուն և սիրեցեալ 'ի դուռն արքունի. ահա ասացի քեզ մեղմով զամենայն, բայց զօգուտ անձին քո դու քեզէն ընտրեսցես։

Իսկ երանելի վկայն Քրիստոսի ասէ ցդատաւորն. Լուայ զասացեալդ առ 'ի քէն զանօգտակարսդ իմ և զանպիտանսդ, որ առ ժամանակ մի է և ապա փութով լուծանի. մի՛ արդեօք ո՞չ լուար դու յինէն առաջի քո և ամենայն ատենիդ երէկ յանցելում աւուրն, որպէս երդուայ Աստուծով իմով, ոչ փոխիլ 'ի հաստատուն յուսոյն իմոյ զոր ունիմ առ Քրիստոս 'ի մանկութենէ իմմէ. ապա եթէ մոռացեալ իսկ է քո,

դարձեալ կրկնեմ և երեքկնեմ և զսոյն ածեմ 'ի յի-
շատակ անդանդաղ և յօժարական կամաց, զի հաւա-
տըն իմ և յոյսն զոր ունիմ առ Տէրն իմ՝ անխախտելի
է և հաստատուն. զի դիւրին է շարժել կամ փոփո-
խել լերինս բարձրացելոց՝ որ կայ հանդէպ մեր, քան
թէ յիմոց մտացս փոփոխել և կամ 'ի բաց կալ 'ի հա-
ւատոցս և 'ի յուսոյն որ առ Քրիստոս. արդ դու որ-
պէս և կամիս արագապէս կատարեա զկամն հրամա-
նաց քոց 'ի վերայ իմ։ Եւ նոյնժամայն բարձր ձայնիւ
գոչեաց փառաւոր և սքանչելի վկայն Քրիստոսի 'ի լուր
ամենեցուն և ասէ. Քրիստոս Որդի Աստուծոյ, որ 'ի
հայրական ծոցոյ խոնարհեցար առ ազգս մարդկան և
առեր մարմին 'ի սրբոյ Կուսէն, ծնար անձառապէս և
առանց արատոյ. և զկանխատեսութիւն մարգարէիցն
կատարելով եկիր 'ի Յորդանան, գառնդ Աստուծոյ՝ որ
բառնաս զմեղս աշխարհի, և նոյնժամայն տեսեալ ցե-
լեալ զերկինս մեծի Կարապետին քո, և Հոգին Աս-
տուծոյ զի իջանէր 'ի վերայ փառակցիդ իւրոյ. որ զա-
մենայն յանձն առեր վասն մեր բայց 'ի մեղաց, և խա-
չիւ և արեամբ ազատեցեր զմեզ 'ի ծառայութենէ
մեղաց. խոստովանիմ զքեզ Աստուած կատարեալ, մի
յԵրրորդութենէդ, համագոյակից և փառակից, պա-
տուակից և իշխանակից Հօր և Հոգւոյդ սրբոյ. խոստո-
վանեա և զիս, Տէր, առաջի Հօր քոյ և հրեշտակաց
սրբոց, որպէս խոստացեր. մի՛ յանարժանութիւնս իմ
հայեսցիս, այլ գթա յիս, և մի՛ անտես առներ զծա-
ռայս քո. և կատարեա զընթացս իմ ըստ կամաց քոց
բարեսիրաց, զի դու միայն ես փառաց և պատուոյ արժանի. և քեզ փառք յաւիտեանս. ամէն։

Իսկ անօրէն դատաւորն ևս առաւել լցեալ սրտմտութեամբ և բարկութեամբ՝ յարձակեաց 'ի վերայ սրբոյն զսպասաւորսն անօրէնութեան, և անտանելի տանջանօք չարչարէին զամենալիկ նահատակն Քրիստոսի, մինչև բաղմաց իսկ ասել թէ մեռաւ. և քարշեալ ընդ փողոցամէջ քաղաքին՝ ունելով զՀերաց գլխոյ, և տարեալ ընկեցին զնա 'ի բանդին. որ և անդ լինէր զաւուրս երիս։ Իսկ երանեալ վկայն կոչեցեալ զայր ոմն քահանայ Ճշմարտախօս և իրաւաբան բարեպաշտօն և երկիւղած յԱստուծոյ, որում անուն էր

Գէորգէոս, որ իբրև լուաւ՝ յօժարական կամաւք եկն առ նա. և ասէ սուրբն. Ո՛հ տէր իմ Գէորգէոս, յարուցեալ երթայցես 'ի վանսն հայրապետին մերոյ, առ եպիսկոպոսապետն և տէրն իմ Անանիաս, և պատմեսցես նմա զամենայն անցս աղետիցս և զկիրս չարչարանաց անձին իմոյ. և աղաչեա զնա աղօթս առնել 'ի վերայ իմ, թերևս արժանի եղեց առնուլ յանձն զմարտիրոսական նահատակութիւն։ Եւ ապա ողջունեալք 'ի միմեանց՝ առաքեաց զքահանայն, և ինքն անդէն յարուցեալ կայր յաղօթս. իսկ նախասացեալ քահանայն եկեալ փութանակի առ կաթուղիկոսն Հայոց՝ պատմեաց նմա զամենայն իրսն ստուգութեամբ։ Իսկ նա ըստ բնածին քուսոյ բարուցն և ըստ առաքինասէր կամացն զոր ունէր առ որքս և այրիս և առ անայցելուս, ևս առաւել առ այնոսիկ որ վասն հաւատոց աբեամբ չափ նահատակէին, որպէս և առ սուրբ վկայիս է տեսանել. զոր իբրև լուաւ զասացեալսն առ նա 'ի քահանայէն վասն սրբոյն՝ յարուցեալ իսկոյն եմուտ 'ի սենեակ իւր հանդերձ սուրբ եպիսկոպոսաւք և ուղղափառ վարդապետաւք և ամենայն եկեղեցական ուխտիւն, և անկեալ յերկիր 'ի վերայ երեսաց իւրեանց՝ աղօթս մատուցանէին առաջի Աստուծոյ հանդերձ ջերմեռանդն արտասուաւք զաչս 'ի յերկինս համբարձեալ յօգնականութիւն զնահատակադիրն կոչէին՝ ապրեցուցանել զծառայն իւր զսուրբն Թէոդորոս, ասելով երգս ինչ 'ի սաղմոսէն միաբանական ձայնիւ. Աստուած յօգնել ինձ նայեաց, և Տէր յընկերել ինձ փութա. և դարձեալ՝ Զայնիւ իմով ես առ Տէր կարդացի. և թէ՝ Տէր լուր աղօթից իմոց. և դարձեալ՝ Բազում նեղութիւնք են արդարոց, յամենայնէ փրկէ զնոսա Տէր։ Եւ անդ կացեալ յաղօթս իբրու ժամն երիս, դարձեալ անդրէն վերառաքեն զնախասացեալ քահանայն Գէորգէոս առ քաջամարտիկ վրկայն 'ի բանդին, և բանս բաղումս միխիթարականս զկնի նորա. և նա յարուցեալ գնաց և պատմեաց զամենայն յորդորական զբանսն և զօրինակ համբերութեան զառ 'ի սրբոյ հայրապետէն ասացեալսն. զոր լուեալ սրբոյ վկային ևս առաւել հաստատեալ 'ի հաւատս անշարժ յուսոյն որ 'ի Քրիստոս. և քահանային

երկրպագեալ սրբոյն՝ դարձաւ անդրէն առ քահանայապետն։ Իսկ կաթուղիկոսին հրամայեալ նոյն քահանայի առնուլ կերակուր ինչ 'ի պէտս մարմնոյ երանելւոյն՝ տանել 'ի բանդն. մնեալ 'ի նեղքս առ նա տայր նմա ուտել. զոր առեալ եկեր առաջի նորա. և ապա յարուցեալ երկոքին միաբան կացին յաղօթս և կընքեալ զինքեանս նշանաւ խաչիւն նստան. և աստուածուսոյց քահանայն սկսաւ երկրորդել նմա զոր ինչ գրեալ է 'ի գիրս աստուածայինս, զնահատակութիւնս բազմաչարչար վկայիցն Աստուծոյ, զնեղութիւնս արդարոյն, զհամբերատար ժուժկալութիւնս սրբոյն, և զհանդէս նախամարտիկ արանցն ընտրելոց 'ի Քրիստոս, զլկանսն, զձաղանսն, զխաչն, զեղէգն. նաև քարոզէր նմա 'ի հին և 'ի նոր կտակարանաց։ Իսկ սուրբն և ամենասուրբն ունկնդրութեամբ լսէր նմա և զուարթութեամբ ուրախանայր, ցանկայր և փափաքէր հասանել երանաւէտ կոչմանն և անթառամ պսակացն։ Իսկ քահանային համբուրեալ զսուրբն՝ յանձն արարեալ զնա ամրածածուկ աջոյն Աստուծոյ Հօր, և ինքն դարձեալ վերստին առ եպիսկոպոսապետն։ Իսկ կաթուղիկոսին զաւուրս վեց զայս այսպէս նախախնամեալ հոգաբարձութեամբ, առաքելով զքահանայն միշտ առ նա որպէս ցուցաք յառաջագոյն։

Եւ ապա զկնի աւուրցն վեցից յղէր դատաւորն 'ի բանդն առ սուրբն 'ի պատուաւորաց իւրոց 'ի մեծամեծ աւագանւոյն[1], 'ի գիտնականացն և յընթերցողացն իւրեանց առասպելաբան ուսմանցն, խօսել ընդ նմա բանս ինչ պատրողականս, թերևս կարասցեն ածել 'ի հաւան զընտիր նահատակն։ Եւ մնեալ ամպարշտացն առ նա 'ի բանդին, տային զողջոյնս մահացու և նստէին առաջի նորա. խօսել սկսան և ասէին ցնա. Ընդէ՞ր կաս և մնաս 'ի դմին յամառութեան և նստիս 'ի խաւարչտին տեղւոջդ՝ մատնելով զանձն քո 'ի մահ, անտես առնելով զկեանս քո. վասն ո՞ւմ առնես զայդ և կամ վասն որո՞յ յուսոյ համբերես այդպիսի լկանաց և անհանդուրժելի չարչարանաց. լուր մեզ և ընկեա 'ի քէն զընդունայն խորհուրդս կամաց

1. Յօր. ասագոյնոյն։

քոց, և յարուցեալ ուղղեկից լեր մեզ, զի գնասցուք առ գլխաւոր մերոյ օրինացն և ընկալցիս բազում ընծայս և պարգևս 'ի նմանէ և 'ի մէնջ ամենեցուն, և զերծեալ ապրեսցիս 'ի տանջանացդ յորում կասդ։ Եւ այսպիսի օրինակաւ բազում բանս հրապուրանաց ասէին առ սուրբ վկայն խափանել կամելով զնա յառաջի եդեալ Ճանապարհէն. այլ նա քանզի աստուածային հրով սիրոյն բորբոքեալ էր՝ ամենևին ոչ այլ ինչ առնէր պատասխանի առ նա եկեղոցն, բայց միայն զայս բան ասելով, թէ՝ Քրիստոնեայ եմ և Քրիստոսի ծառայ՝ ըստ վերստին ծննդեան աւազանին, և Ճշմարիտ խոստովանող աստուածութեանն Քրիստոսի։ Եւ իբրև ոչ կարացին շարժել և խախտել զկարծրութիւն հաստատուն հաւատոյ նորա և տկարացան առ 'ի վանել զամուրս նորա, յարուցեալ այնուհետև ամենայնիցն գնացին 'ի տեղւոջէ անտի։ Իսկ 'ի միւսում աւուրն խորհուրդ առեալ դատաւորն՝ առաքէր առ սուրբն զայլս ոմանս յընչաւէտ և 'ի գոյաւոր իշխանացն՝ բերելով ընդ ինքեանս ոսկի և արծաթ և հանդերձս ազնիւս և մեծագինս. և մտեալ դնէին զայն ամենայն առ ոտս սրբոյն, և ըստ օրինակի առաջնոցն բանիցն խօսէին առ նա։ Յայնժամ ամենայն երանութեանց արժանաւոր վկայն Քրիստոսի՝ տեսանէր իմանալի ակամբ հոգւոյն զարկուած և զփորձանս բանարկուին, զոր ածէր 'ի վերայ ինքեան 'ի ձեռն չար սպասաւորացն անօրինին, արհամարհեալ զնոսա ցըրուէր և 'ի բաց մերժէր զպարգևս ընծայից նոցա զոր բերեալն էին նմա, և թքեալ քամահէր մղելով 'ի նոսա զկորստական ձիրն նոցա. և միայն զայս բան աղաղակէր, թէ՝ Քրիստոնեայ եմ, քրիստոնեայ, ինչք ձեր և խոստումն պարգևաց ձերոց ընդ ձեզ լիցի 'ի կորուստն յաւիտենից։

Եւ իբրև տեսին զանսասանելի զանդուլթիւն հաւատոյ նորին, գնացին և նոքա ամենայնիցն դիմաք զօրէն յառաջագոյն եկեղոցն։ Այսպա զկնի աւուրց ութ և տասանց անցանելոյ՝ վաստակեցան պարտեցան չար սպառազէնքն մարտնչելով ընդ սրբոյ վկային։ Այլ և յետ այսչափ անտանելի չար և դառն տանջանացն զոր անցուցին անօրէնքն ընդ սուրբ մարմին երանելւոյն,

հատին 'ի վերայ նորա զվՃիռ մահու այսպիսի օրինակաւ. Զթէոդորոս այր ժանտ և ապարասան՝ ազգաւ և տոհմիւ և քաղաքավարութեամբ 'ի գաւառէս Դամրրաց, և զկերպարանն և զձև ունելով զաղքատութեան, չքաւորութեան աղագաւ 'ի բաց կացեալ 'ի հայրենատուր հաւատոցն և այժմ անդրադարձեալ պաշտէ զԱստուած ոմն զխաչեալն՝ զոր Յիսուսն անուանեն, որ և ոչ միով իւիք կարացաք զմիտս նորա շրջել կամ շարժել յետս՝ յառաջի եդեալ Ճանապարհէն, ոչ ամենայն մեծութեամբ աշխարհիս և ոչ բընաւ համօրէն տանջանարանօք զոր արկաք 'ի վերայ նորա. այսուհետև հրամայէ մեր դատողական ատեանս կախել զնա կապանօք ընդ փայտն մահապարտաց, և քարկոծ առնել ամենայն բազմութեամբ ըզչարաբաստ մարմին նորա։ Յայնժամ անօրէն դահիճքն ըստ հրամանի դատաւորին եկեալք 'ի բանդն առ սուրբն, սկսան ողբանօք բանիւք ասել ցերանելին. Տէ՛ս ահաւասիկ հատաւ 'ի վերայ քո վՃիռ մահու, արդ զոր ինչ կամիս և առնելոց ես՝ ասա մեզ վաղվաղակի։ Իսկ սուրբ վկայն Քրիստոսի ասէ ցնոսա. Արդ զոր յառաջագոյն ասացի ընդ ձեզ և զնոյն դարձեալ վերստին ասեմ; եթէ բանիցս ձերոց ամենևին ես ոչ եմ լսելոց. քանզի 'ի սմին յայսմ գիշերի տեսանէի յանուրջս զՏէրն իմ Քրիստոս ունելով 'ի ձեռին իւրում թագ իմն թագաւորական և պսակ արքունական. ձայն եղև առ իս ասելով. Թէոդորէ, եկ, ա՛ռ զբրաբիոնն կենաց 'ի ձեռաց պսակադրիս. արդ իմ տեսեալ զայն ամենայն՝ ըղձալի տենչմամբ փութամ գնալ առնա, զի ընկալայց զվարձս վաստակոց իմոց։ Արդ աղաչեմ զձեզ, մի՛ խափան առնէք ընթացից իմոց առ ցանկալին անձին իմոյ, և մի՛ կայք ներհակ Ճանապարհիս որ 'ի կեանս անապականս կարապետէ։ Իսկ նոցա հաւանեալ զնա յարդելարանէն, առեալ տանէին ձեռս յետս կապեալս 'ի տեղի կատարման ասպարիսի նահատակութեանն, և ամենայն բազմութիւն քաղաքին Կեսարացւոց ընթացեալ երթային զկնի սրբոյն 'ի տեսարանն. և մինչդեռ հանէին զնա ընդ դուռն քաղաքին՝ պատահեալ նմա 'ի Ճանապարհի անդ երկրորդ արքային և ասէ ցնա. Այր դու, ընդէր մեռանիս 'ի

տարապարտուց և ընդ վայր. այժմ ասա բան ինչ հայ-
հոյութեան, և անցեալ գնասցես պաշտելով զոր ինչ և
կամեսցիս։ Իսկ քաջամարտիկ և անպարտելի զին-
ուորն Քրիստոսի ամենևին ոչ ետ նմա պատասխանի,
այլ 'ի ձայն բարձր աղաղակեաց ասելով. Քրիստոս
որդի Աստուծոյ՝ որ բնակեալդ ես 'ի բարձունս, և ան-
քուն ակն քո զննեալ տեսանէ զսիրտս որդւոց մարդ-
կան. որ քննես զգաղտնիս խորոց ամենեցուն, խնդրեմ
'ի քէն և աղաչեմ, անքնին և ինքնազօր յամենայնի,
հայեաց 'ի նուաստութիւն մարմնոյ իմոյ և զաներևոյթ
զօրութիւն Հոգւոյդ սրբոյ առաքեա յօգնութիւն տա-
ռապեալ անձին իմոյ, և արժանաւորեա զանարժա-
նութիւնս իմ հասանել անսահման մեծութեանս
այսորիկ և գրիլ 'ի պարս վկայիցն որք հրաւիրեալ են
յընթրիս անմահ փեսայիդ. և հեղմամբ արեամբ ի-
մով շնորհեա զթողութիւն յանցանաց իմոց, և քեզ
փառք յաւիտեանս. ամէն։

Արդ մինչդեռ սուրբ վկայն զայս առանձինն աղօթս
մատուցանէր Աստուծոյ, յանկարծակի հարեալ դահ-
ճին զսուրբն՝ մղէր փութացուցանելով զնա 'ի տեղի
նահատակութեանն. և սուրբն դարձեալ սկսաւ ա-
ղօթել այսպէս. Որդի Աստուծոյ և Տէր ամենակալ,
փառաւորեալ և հզօր յամենայնի, անսահման և ան-
քնին մեծութիւն, զոր ոչ արարածոյ տանին բնու-
թիւնք և ոչ հրեղինաց ոգիքն նկատեն զանակնար-
կելի կամն աստուածութեան քո, և չիք սահման գը-
թութեան և ողորմութեան քո, քանզի ամենայնի
դու ես Տէր՝ որ 'ի բարձրութիւնս և 'ի խորութիւնս.
զի քոյով հրամանաւդ կառավարին արարածք և ակն-
արկութեամբ քոյով խնամարկին և առկայանան յիւ-
րեանց կայանս։ Արդ ես անարժան ծառայս ոչ անյոյս
եղեալ յիմմէ փրկութենէ, և ոչ վհատի սիրտ իմ
յամենագութ ողորմութեանց քոց, զի ամենայն կեն-
ցաղական իրաց փոխանակ՝ զքեզ սիրեցի, զքեզ ըն-
տրեցի, 'ի քեզ հաճեցայ և ամենայն փափագանօք և
բաղձանօք յօժարեցի հասանել անմահ բարեաց քոց։
Արդ որովհետև կանգնեցեր զանկեալս և վերածեր
'ի կեանս անմահս, և կայուցեր զիս 'ի հանդէս վկայա-
կան ասպարիսիս, արդ մի 'ի բացէ առներ յինէն զը-

զորմութիւն քո, և մի տար ապականիչ գայլոյն մտանել յանդաստանս քո, զի դու միայն ես փառաց և պատուոյ արժանի. և քեզ փառք յաւիտեանս. ամէն։

Արդ մինչդեռ սուրբն զայս աղօթս մատուցանէր Աստուծոյ՝ յախուռն յարձակմամբ յարեան 'ի վերայ նորա սպասաւորքն անօրէնութեան, և ըմբռնեալ զնա տարան 'ի տեղի կատարմանն մերձ 'ի փայտն մահու՝ զոր կանգնեալ էին 'ի սպանումն գողոց և աւազակաց 'ի մէջ բազմակոյտ հրապարակին, յորս հաւաքեալ լինէին 'ի կողմանց կողմանց արանց և կանանց հաւատացելոց և անհաւատից, իբրև զմանրամաղ փոշի սքախառն օդով բերեալ լինէին 'ի տեղեաց տեղեաց 'ի տեսիլ նահատակութեան սրբոյն։ Ուրախութեամբ ցնծայր և կաքաւելով հրճուէր ցանկալին զուարթնոց 'ի հանդէսն յայն, մարտ եղեալ մաքառէր հոգւոյն երիտասարդ մանուկն և փափաքելին լուսերամիցն։ Յայնժամ ուժգնակի քարշմամբ բերեալ լինէր 'ի սպասաւորացն մերձ 'ի փայտն նահատակն քրիստոսազգեաց, և պնդեալ զնա ընդ փայտին յոտից մինչև ցլանջսն։ Իսկ անօրէն դահիճն մերձ եղեալ առ սուրբն՝ ասէ. Այս բանս ինչ հայհոյութեան և ապրեսցիս 'ի մահուանէդ, և յետ այնորիկ երթ արա զկամս հաճոյից քոց։ Իսկ Ջատագովն Ճշմարտութեան սուրբ վկայն Քրիստոսի լցեալ զբերան իւր խողխողմ եթուք յերեսս անօրինին, և նա անդրէն դարձեալ անամոթաբար զնոյն բանս խօսեցաւ և ասէ. Երդուեալ 'ի կեանս արքային՝ եթէ ոչ լուիցես խրատու իմոյ՝ փութով բառնամ զքեզ 'ի կենացս։ Այսէ ցնա սուրբն. Դառնասցի քեզ աչք արքային քո եթէ ոչ արագապէս կատարեսցես զկամս չարութեան քո առիս։ Յայնժամ երիցս անիծեալ և թշուառական դահիճն հարեալ ուժգնակի տապարաւ զգագաթն սրբոյն, և նոյնժամայն շեշտակի ձեղքեալ մինչև յունկըն նորա. և այլ ոմն հարեալ վիմաւ զբիբս աչաց նորա՝ և տեսանողականն կախէր զերեսաքն նորա։ Իսկ մեծ վկայն Քրիստոսի, սուրբն Թէոդորոս, ձայն բարձեալ առ նոսա ասելով. Ներեցէք ինձ սակաւիկ մի։ Եւ նոքա ունկնդիր եղեալ անսացին՝ կարծելով թերևս զղջացաւ վասն սաստիկ հարուածոյն։ Սուրբն ասէ.

երդմնեցուցանեմ զձեզ 'ի կեանս արքային ձերոյ, զի թոյլ տալով խնայեսջիք մնալով միսոյ աչաց իմոյ, որպէս զի տեսից զյոշումն և զչարաչար քանցումն մարմնոյ իմոյ, և այնու ցնծացեալ ուրախ եղէց 'ի փրկութեան իմոյ զոր տուաւ ինձ 'ի Տեառնէ Աստուծոյ։ Իսկ ամպարիշտ դահճայն անարգեցին զերանելեաւն և ասեն. Մեք կարծէաք թէ զղջանալով քո դարձցիս 'ի քոյին յամառութեանցդ, վասն այնորիկ ներեցաք քեզ։ Եւ անդէն վերացուցեալ դահճին եհար վաղակաւորաւն զձակատ երանելւոյն և 'ի բաց եհան զըսկաւառակն 'ի գլխոյ անտի. և սուրբ վկայն աղաղակեաց 'ի ձայն մեծ և ասէ. Տէր իմ և Աստուած Յիսուս Քրիստոս, ընկալ զիս որ վասն անուանդ քո մեռանիմ։ Եւ նոյնժամայն հանդերձ կապանօքն շրջեցաւ փայտն ընդ արևելս կոյս, քանզի կանգնեալ կայր ընդ հարաւ. ընդ որ հիացեալ զարմանային 'ի նա ամենեքեան 'ի վերայ սքանչելեացն եղելոց։ Եւ յորժամ դարձաւ յարևելս ամենագով սուրբն՝ յաղօթս եկաց այսպէս. Գոհանամ զքէն, Տէր Յիսուս Քրիստոս, փրկիչ և ստեղծիչ աշխարհի, որ յաղագս դատապարտութեան բանական բնութեանս առաքեցար 'ի հայրական ծոցոյ 'ի խնդիր մեզ մոլորելոցս, և զինքնազօր աստուածութիւնդ խոնարհեցուցեր ընդ մահու լծով, և զբազուկս քո զաշխարհակեցոյց տարածեցեր 'ի վերայ կենդանարմատ փայտին, և 'ի հարուածոյ տիգին ոչ դարձուցեր զթիկունս քո, և ոչ զկերպարանդ Հօր 'ի թքոյն և յապտակէն. արբեր և զքացախն խառնեալ ընդ լեղի և զկողահոս աղբիւր աստուածային արեանդ բացեր լուանալով զվերան Ադամայ, և զմուրհակս պարտեաց ամենայն մարդկան պատառեցեր 'ի վերայ խաչին, և աշխարհակեցոյց մահուամբդ քո փրկեցեր զմեզ 'ի մեռելութենէ մեղաց։ Եւ եթէ անսահման և անքանակ աստուածութիւնդ կրեաց զայս ամենայն վասն մեր, ոչչափ ևս առաւել հողեղինի և ընդ մեղօք բնակեալ բնութեանս՝ պարտիմք հեղուլ զարիւնս մեր վասն աստուածային արեանդ, ևս առաւել իմոյ նուաստութեանս, զոր եթէ բիւր և զանազան վիշտք և չարչարանք կրեր յիմում մարմնի, առաւել ևս պիտոյ էր վասն անբաւ բարերարութեանդ քո որ առ իս.

դարձեալ թէ ամենայն երկնաւոր խմբաւորութեանցն բարբառն էր 'ի բերանի իմում՝ ինչ արդեօք այնու ամենայնիւ կարէի պատմել զանձնառ տնօրէնութիւնդ քո, կամ օրհնութիւն և գոհութիւն ամենօրհեալ աստուածութեանդ քո վերառաքել, եթէ յորքան և յորպիսի անօրէնութենէ հաներ զիս, և յանբաւ և յանձնառ երանութեան մերձեցուցեր. և արդ այսու-հետև քա...[1]։

1. Այստ թերի մնայ օրինակն։

Վկայաբանութիւն Սրբոյն Թէոդորոսի Ստրատելատի։

Զանգնին և զզարմանալի երկնաձիր պարգևսն մեծահրաշ աքանչելեացն Աստուծոյ սրբոց վերկայիցն, և զներգործութիւն համբերատար հանդիսիցն և զանազան առաքինութեանցն պատմութիւնսն՝ ոչ է հնար ասել համասեռ բանակացս, նաև ոչ ըստ բազմաբողբոջ պսակացն նոցունց զգերապայծառութիւն գիտել արդարապէս, և կամ տարացոյց՝ թէ որքան բարիօրինակ տեսլեամբ հիւսեցին պսակս անթառամս, յոգնակորով մարտիրոսութեամբ ամրապինակ վահանօք Հոգւոյն պարսպեալք զմարմինս իւրեանց, իբրև զոսկի 'ի բովս հրափորձեալ անցին ընդ ծածուկ ծով բազմավրդով չարութեան կենցաղոյս, յաղթողք երևեալ 'ի վերայ ընդդիմամարտութեանն բանսարկուին. զորոց և զենաւն իսկ արիութեանցն զյիշատակ՝ 'ի մարմնականացն զարժանապէսն ոչ ոք կարէ բացայայտել. վասն զի միայն աստուածային Հոգւոյն է կարողութիւն պատմել։ Այլ սակայն թէպէտ և անհասանելի է մարդկան՝ նոցա պատմութեամբ պարունակել, սակայն ոչ է պարտ ամենևին լռել. ասասցէ, ըստ բաշխելոյ աստուածային շնորհայ Հոգւոյն է կարողութիւն ծանուցանել աստուածասիրաց անձանց. զի 'ի ձեռն յիշատակի արիական և հոգեղէն զօրականացն Քրիստոսի՝ զարթիցեն մանկունք եկեղեցւոյ և թևակոխեսցեն մտանել 'ի յա-

ռագաստ երանաւէտ կոչմանն այնորիկ, սպառազի-
նեալք զինուորութեամբ Աստուծոյ. զի 'ի ժամանակի
հալածանաց կամ փորձութեանց յառնելոց 'ի վերայ՝
կարասցեն մնանակից լինել այնոցիկ որք խաչակից
գտան Քրիստոսի։ Արդ այսուհետև զյիշատակ գե-
րապայծառ վկային Քրիստոսի սկիզբն արասցուք պատ-
մել զսրբոյն Թէոդորոսի, Թէպէտ և ոչ եմք բաւա-
կան զամենայն քաջութիւն արիութեանն պատմել,
սակայն խուն մի 'ի բազմաց Ճառեսցուք, Թէ ով որ
էր կամ ուստի կամ որպէս սկիզբն եղև և կատարած
վկայութեան նորա, և զժամանակս հալածանաց նորա
պատմեսցուք։ Եւ զի ոչ էր սա Տիւրիոնն Թէոդորոս,
որոյ յիշատակն կատարի յառաջին շաբաթուն քա-
ռասնորդաց պահոցն, այլ սա քեռորդի գոլով նորա՝
պատուեալ եղև 'ի Թագաւորացն ստրատելական իշ-
խանութեամբ. զի նա վկայեաց առ Մաքսիմիանոսիւ
Թագաւորաւ 'ի յԱմասիա քաղաքի 'ի Կապպադով-
կացւոց գաւառին, ոչ հեռի 'ի միմեանց գոլով ժա-
մանակաւ և ազգակցութեամբ։

Արդ 'ի ժամանակս անօրէն և ամպարիշտ Թագա-
ւորին Լիկիանէ, յորում ժամանակի տարածեալ լի-
նէր 'ի նմանէ հրաբորբոք մրրիկ դառնութեան հալա-
ծանաց 'ի վերայ եկեղեցւոյն Աստուծոյ, և ամենայն
ուրեք դիւաձոյլ պատկերաց բագինք ընդ բոլոր տե-
րութեանն Հռովմայեցւոց կարկառեալ կային, և ընդ
ամենայն տեղիս գիր ուրացութեանն տարածեալ լի-
նէր, և հրամանք այսպիսիք ընդ ամենայն քաղաքս և
ընդ գեօղս յոյժ սաստկութեամբ եդեալ լինէին, զի
քարանց և փայտից ձեռագործաց մարդկան երկիր
պագանիցեն, և ողջակէզս և զոհս մատուցանիցեն ա-
նուանեալ աստուածոցն, և 'ի պիղծ կերակրոցն Ճա-
շակիցեն ամենեքեան, և հնազանդեալքն այնպիսի
հրամանի պարգևս և պատիւս ընկալցին 'ի Թագաւո-
րէն, իսկ որք ոչ ախորժեսցեն զայս գործել՝ հար-
կաւորութիւնք, գանք և տանջանք և պատուհասք
սրոյ և հրոյ առաջի արկեալ լինէին. քանզի անհնա-
րին մեզ խաւարի և խռովութեան պաշարէր զամե-
նեսեան. քանզի զբազում 'ի հաւատացելոց ըմբռ-
նեալ մատնէին դատաւորացն, զի արկցեն յաղջա-

մրոջ ինն տեղիսն դառն և անողորմ տանջանաց. և յետ բազում հարուածոց՝ որոյ պատուհասիւ զվձիռ մահու ընկալցին։

Յայնմ ժամանակի ծագեցաւ աստղն լուսապայծառ և զամբարն ճառագայթարձակ, որ լուսաւորեալ փայլատեաց զմէգ խաւարի կռապաշտութեանն, յաղթող երևեալ յամենայնի, քաջն և նախամարտիկ զօրականն, անյաղթ թագաւորին Քրիստոսի սուրբն Թէոդորոս։ Քանզի իբրև էլ հրամանս այս յամպարիշտ և յանօրէն թագաւորէն Լիկինէ, զի զամենասեան որք էին հաւատացեալք 'ի Քրիստոս ըմբռնեալ արկցեն 'ի բանդ և 'ի կապանս անհնարին նեղութեանց և տանջանաց, յայնժամ երանելի և մեծանուն վկայն Քրիստոսի Թէոդորոս, ծնեալ լինէր 'ի քրիստոնեայ և 'ի բարեպաշտ ծնողաց, 'ի գեօղն Եւխայտեայ, որ և մնեալ լինէր և վարժեալ ամենայն բարեկարգութեամբ 'ի Քրիստոս, զարգացեալ հասակաւ և իմաստութեամբ, կրթեալ 'ի հրահանգս աստուածպաշտութեան. և մինչ դեռ յաստիս երիտասարդութեանն՝ ծաղկեալ հասակաւ և գեղեցիկ տեսլեամբ և ամենիմաստ հանճարով առլցեալ, որ և սիրելի և ծանօթ ևս լինէր թագաւորաց և իշխանաց՝ որ էին յայնմ ժամանակի. քանզի և 'ի պատերազմունս բարբարոսաց անպարտելի և յաղթող երևեալ ամենագով սուրբն, վասն որոյ և զառաւելագոյն պատիւ ստրատելական ընկալեալ՝ մեծաշուք պատուով և իշխանութեամբ պատուեալ լինէր։ Արդ 'ի չարասէր արքանեկաց բանսարկուին մատուցեալ յունկն թագաւորին զգացուցանէին վասն սրբոյն թէ քրիստոնեայ է, ոչ միայն ինքն այլ և ամենայն աշխարհն և քաղաքն՝ որ ընդ ձեռամբ նորա էր հանդերձ զօրօքն հրապուրեալք 'ի նմանէ՝ դարձան 'ի կռոյն երկրպագութենէ, անհաւանք լեալք հրամանաց ձերոց, ըստ խորհրդական տօնս աստուածոցն ոչ կատարելով, և ոչ 'ի նուիրական զոհից նոցա ձաշակելով։ Իբրև լուաւ զայս թագաւորն՝ յիմարեալ և ապշեալ՝ լի ցասմամբ վարանէր 'ի խորհուրդս իւր, թէ որպէս կարասցէ ըմբռնել 'ի վարմ մահու զայնպիսի երևելի այր. գրել և կոչել առ ինքն անպատշաճ վարկանէր, զի մի զխոր-

հուրդն նենգութեան իմաստի, և զարհուրեալ ընդ-
դիմասցի հրամանաց մերոց։ Խորհեր 'ի մտի թէ յա-
ղագս պատերազմական գործոյ պատճառս եդեալ եր-
թայցէ զկողմանսն այնուիկ[1], և 'ի նմին քաղաքի ըմ-
բրունեն զերանելին. և յայս խորհուրդ մտաց եղեալ
անօրինին, կամեցաւ առաքել զոմանս 'ի պատուական-
րաց հանդերձ զօրօք՝ յԱռակլիա քաղաք Կապպադով-
կացւոց, յորում էր բնակութիւն երանելւոյն։ Գրեալ
առ նա թուղթ հանդերձ մեծարանօք և պատուով, զի՝
թէ հաճոյ թուեսցի կամաց քոց՝ գալ տեսանել զմեզ
և երկրպագութիւն մատուցանել աստուածոց մերոց
'ի քաղաքն Նիկոմիդացւոց, եկեսցես բազում ճոխու-
թեամբ և երևելի փառօք. ապա եթէ պատճառք ինչ
լինիցի և արգելցիս, արժան է մեզ գալ տեսանել ըզ-
կողմանսդ զայդոսիկ, և զքաղաքդ յորում բնակեալ
ես, զի յոյժ ցանկացեալ եմք տեսանել և վայելել 'ի
սէր քո։

Եւ իբրև հասին առ նա զօրագլուխքն և մատուցին
զգիր հրամանաց հրովարտակին, առ ընթերցաւ և ու-
րախացեալ գոհանայր զԱստուծոյ, զի զոր ինչ յառա-
ջագոյն խորհեր 'ի սրտի իւրում յայտնի լինել յա-
ղագս աստուածպաշտութեանն և վկայ լինել Քրիս-
տոսի, վաղվաղակի արդեամբք կատարէին կամք հա-
ճոյիցն Աստուծոյ։ Ապա յայնժամ մեծաշուք պա-
տուով ընկալեալ զարան, պարգևս շնորհէրնոցա, և զիւ-
րոյ գալստեան եկաւորութեան առ թագաւորն պատ-
ճառեալ յաղագս պիտոյից աշխարհին, աղաչէր զնո-
սա և ինչս խոստանալով նոցա, զի երթիցեն յորդո-
րեսցեն զարքայն հանդերձ բազմութեամբ աստուա-
ծովքն իւրովք գալ 'ի քաղաքն Առակլիա. զի տեսա-
նելով զայն ամենայն բազմութիւն քաղաքիս և գա-
ւառիս, ուրախացեալ ցնծասցեն, և տօն մեծ կատա-
րեսցեն հանդերձ զոհիւք երկրպագութեամբ։ Իսկ
արքն այնոքիկ եկեալ առ թագաւորն, մատուցին զպա-
տասխանիս հրովարտակին. զոր արքայն առեալ ընթեր-
ցաւ, և իբրև զմանուկ մի անմիտ խաբեալ և պատրեալ՝
կամեցաւ չուել 'ի կողմանս յայսոսիկ. համարէր անօ-

1. Յօր. այնոքիկ։

րէնն թէ ամենայն խորհուրդք իւր յանդ ելեալ կա-
տարեցաւ։ Այնուհետև առեալ զբազմութիւն հե-
ծելազօրացն իւրոց գայ հասանէ 'ի քաղաքն Սա-
կլիա. զոր լուեալ սրբոյն Թէոդորոսի զգալուստ Թա-
գաւորին, ել ընդ առաջ նորա մեծաշուք պատուով և
Հոխութեամբ։ Եւ յայնմ գիշերի մինչդեռ ննջէր 'ի
տան իւրում երանելին՝ տեսանէր 'ի տեսլեանն զի ձե-
ղունք տանն վերացան և կայծակունք հրոյ փայլատա-
կեալ իջանէին 'ի վերայ նորա. և ձայն լսելի եղեալ
որ ասէր ցնա. Զօրացիր և քաջալերեա Թէոդորէ, զի
ես ընդ քեզ եմ։ Եւ զարթուցեալ սրբոյն՝ պատմէր
մերձակայիցն զտեսիլն, և ասէր թէ՝ Հաճեցաւ Աս-
տուած զի 'ի տեղւոջս յայսմիկ հեղցի արիւն իմ վասն
անուանն Քրիստոսի։ Եւ յարուցեալ եդ ծունր և կա-
ցեալ յաղօթս. և իբրև կատարեաց զաղօթսն հան-
դերձ արտասուօք, և գոհանայր զՏեառնէ։

Յարուցեալ լուանայր զգեղեցկութիւն պայծառա-
տեսիլ երեսաց իւրոց, և զգենոյր հանդերձս մեծա-
գինս բեհեզեայս, և հրամայեաց կազմել զոսկիակազմ
երիվարս իւր. և հեծեալ հանդերձ զօրօք իւրովք՝ գը-
նաց ընդ առաջ Թագաւորին։ Եւ տեսեալ զարքայն՝
երկիր պագանէր նմա, ըստ օրինակի Թագաւորաց ող-
ջոյն տուեալ նմա ասելով. Ողջոյն քեզ, հզօր և ինք-
նակալ Թագաւոր յԱստուծոյ առաքեալ։ Իսկ Թագա-
ւորն իբրև լուաւ զայն և ետես զմեծանձնութիւն սրբ-
բոյն, վաղվաղակի գիրկս արկեալ մեծաւ գթով և
սիրով ընկալեալ համբուրէր զնա և ասէր. Ողջոյն ընդ
քեզ արեգակնատեսիլ Թագակալս, զի պարտ է և
քեզ Թագաւորել ընդ իս։ Եւ մտեալ 'ի միասին 'ի
քաղաքն հանդերձ բազմութեամբն, որ ելին ընդ ա-
ռաջ Թագաւորին, և իջավանս արարեալ յարքունա-
կան ապարանս՝ կազմեալ ըստ օրինի պալատանն, ար-
կեալ գահոյս և աթոռս Թագաւորին։ Զոր տեսեալ
Թագաւորին ուրախացաւ յոյժ, և գովեաց զքաղաքն
և զքաղաքացիսն, և հրամայեաց Թէոդորոսի նստել.
և ասէ ցնա. Ահաւասիկ ըստ գրեցելոյն աղաչանացն
առ 'ի քէն, ով Թէոդորէ, հիւրաբար մեծարանս առ-
նելով եկի 'ի տեսանել զքեզ և զքաղաքս քո. բերե-
լով ընդ իս զպատուականագոյն և զփառաւորագոյն

յաստուածոց մերոց, զի երկիր պագանիցէք և զոհս նոցա մատուցանիջիք։ Պատասխանի ետ սուրբն Թէոդորոս և ասէ. Ո՛վ յաղթող և մեծ Թագաւոր, բարիոք արարեր զի կատարեցեր զինդիրս ծառայի քո. ուրախացուցանելով զմեզ գալստեամբդ քո, և սառաւել պատուեցեր զմեզ բերմամբ աստուածոցն, զի տեսանելով զնոսա հաստատեսցին ամենեքին 'ի հրամանս աստուածպաշտութեան։ Արդ աղաչեմ զմեծութիւնդ քո, զի փոքր մի հանգիցես յաշխատութեանց ճանապարհէդ, և տացես յիս զփառաւորագոյն զաստուածն ամենայն՝ զի տարեալ 'ի տուն իմ օծիցս իւղոք անուշիւք, և կնդրուկ մատուցեալ խնկեցիցս նոցա, և երկիր պագեալ զոհս մատուցից 'ի տան իմում առանձնական. և ապա զկնի այսորիկ բերեալ 'ի հրապարակս առաջի ամենեցուն զոհեցից. զի հայելով և տեսանելով զայն՝ ամենեքեան յորդորեսցին 'ի նոյն նախանձ բարեպաշտութեան։ Իբրև լուաւ զայս Թագաւորն՝ հաճոյ Թուեցաւ բանք սրբոյն յոյժ, և հաւատայր ասացելոցն 'ի նմանէ։ Եւ հրամայէր բերել և տալ ցնա զամենայն կուռս զոսկեղէնս և զարծաթեղէնս. զոր առեալ սրբոյն տանէր 'ի յապարանս իւր առ 'ի հանգուցանել զնոսա։ Եւ յարուցեալ 'ի գիշերին յայնմիկ, խորտակէր մանրէր զամենայն աստուածսն, և հանեալ բաշխէր աղքատաց և կարօտելոց։

Իսկ յետ երից աւուրց անցելոց, հրամայէր արքայն առ ինքն կոչել զմեծն Թէոդորոս, և ասէ ցնա. Ո՛վ ազնուականդ և փառաւորեալդ 'ի Թագաւորացն՝ որ յառաջ քան զիս էին, և առաւել մեծարեալ և պատուեալ եղեր յիմմէ մեծութենէս. արդ ցոյց զյօժարութեան սէր քո՝ որ առ աստուածսն մեր և առ մեզ, և մատուցեալ առաջի ամենայն ժողովրդեանն զոհեա նոցա, զի սոքա ամենեքեան տեսանելով զքեզ՝ մեծաւ յօժարութեամբ կատարեսցեն զհրամանս մեր։ Եւ մինչդեռ կամէր սուրբն պատասխանի առնել Թագաւորին, ոմն մի յառաջ եկաց յիշխանացն, որում անուն էր Մաքսենտենէս, և ասէ. Ո՛վ արքայ քաջ, ոչ իմացեալ ծանեար զդաւաճանութիւն ամպարիշտ ստրատելատիդ, Թէ որպէս ստեալ խաբեաց զմեծութիւնդ քո յաղագս բարեյաղթ աստուածոցն. քանզի

յեռանդեան գիշերին ելանելով իմ յապարանից ի-
մոց, տեսի զաղքատ ոմն, զի գայր խնդալով և ունէր
'ի ձեռին իւրում զոսկիակուռ գլուխ մեծի աստուած-
ուհւոյն մերոյ Արտեմիդեայ։

Զայս իբրև լուաւ Թագաւորն՝ յոյժ 'ի զարմացման
եղեալ հիանայր, և ոչ հաւատայր ասացելոցն 'ի նմա-
նէ. ասէ ցսուրբն, թէ՝ Արդաւ՞ էն ասացեալքս այսո-
քիկ։ Պատասխանի ետ սուրբն և ասէ. Այո, Ճշմա-
րիտ և արդար էն, ոչ ուրանամ; քանզի արդար արա-
րի զոր արարի. արդ՝ եթէ աստուածք քո ինքեանց
օգնել ոչ կարացին, քեզ զիւրդ կարասցեն օգնել։
Յայնժամ Թագաւորին այլագունեալ երեսքն 'ի բար-
կութենէն, և լցեալ ցասմամբ՝ ասէր. Վա՛յ ինձ, զի
խաբեցայ իբրև զմանուկ մի տղայ, և ծաղր եղէ յա-
ջըս ամենեցուն. արդ զի՞նչ արարից կամ զի՞նչ գործե-
ցից՝ ոչ գիտեմ։ զի ես այր Թագաւոր և իշխան գոլով
այնքան զօրաց և աշխարհաց՝ հանդերձ ամենայն զօ-
րօք իմովք խաբեալ եկի յոտս անօրինիս այս, եղէ նա-
խատինք գաւառիս և քաղաքիս, կորուսանելով զբա-
րեյաղթ աստուածն ամենայն։ Եւ տեսեալ սուրբն
Թէոդորոս զԹագաւորն լցեալ այնպիսի յիմարու-
թեամբ՝ ծիծաղեցաւ ընդ միտս իւր և ասէ. Ո՛վ ան-
միտ դև, լցեալդ ամենայն անօրէնութեամբ, զայդ ո՞չ
ածէիր զմտաւ յառաջագոյն, եթէ ես քրիստոնեայ
գոլով և ծառայ Քրիստոսի, զիւրդ խաբեցայց 'ի
պատրողական և 'ի կորստական հրամանաց քոց։ Այլ
զի ծանիցիս արդեօք խաբեալ իբրև զմանուկ միամիտ,
վասն այնորիկ ցուցի քեզ զտկարութիւն աստուածոց
քոց, զի յամօթ արարի զամպարշտութիւն քո. մնոտի
և անցաւոր մեծութեամբ հպարտացեալ ես, և ոչ
ունիս յոյս և ակնկալութիւն անանց մեծութեանն և
մշտնջենաւոր կենացն, և ոչ ճանաչես զայն որ ետ քեզ
զառժամանակեայ մեծութիւնդ, այլ նանրացեալ ես
խաբէութեամբ բանսարկուին և խաւարեալ 'ի լուսոյ
փառաց Միածնի որդւոյն Աստուծոյ, և ամբարհաւա-
ճեալ չարին ազդեցութեամբ ոչ գիտես զինչ խօսիս։
Իսկ ես զամենայն արարածոց զփառս զայսոսիկ, որք
օտարացուցանեն յԱստուծոյ՝ մնոտիս համարիմ; զի
զչաւիտենական կեանս ժառանգեցիկ, զոր ակն ոչ ե-

տես և ունկն ոչ լուաւ զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց։ Իսկ ձեզ և աստուածոց ձերոց նիւ-թեալ պահի հուրն յաւիտենական, որ պատրաս-տեալ պահի սատանայի և զօրաց նորա։

Թագաւորն ասէ. Ա՛յ հպարտ և ամենաչար ամբար-տաւան Թէոդորէ, զիս թէ անարգես համբերիլց, զի յաղագս անսալոյ իմոյ եկեսցես 'ի լաւութիւն. իսկ զաստուածսն ընդէ՞ր անարգեցեր։ Պատասխանի ետ սուրբն և ասէ. Ա՛յդ իսկ է ցուցումն անմտութեան քո, զի տեսանելով զոչնչութիւն դիւաձոյլ պատկե-րաց քոց, դարձեալ յանդգնելով աստուածս անուա-նես զնոսա, ոչք են իբրև զձիս և զջորիս, զի ոչ գոյ 'ի նոսա իմաստութիւն, առաւել անմտագոյն դուք, և անուանեալ աստուածքն որ 'ի չարագէ մտաց են ա-րարեալ, կուռեալ 'ի ձեռաց ճարտարաց։ Եւ լցեալ Թագաւորն բարկութեամբ ասէ. Յայսմհետէ ոչ համ-բերեցից քեզ, 'ի չարաչար տանջանս մատնեմ զքեզ։ Եւ հրամայեաց դահճացն մերկացուցանել զսուրբն, և տարածել զձեռսն քառակուսի պրկմամբ, և դալար արջառաջլոք անխնայ հարկանել զթիկունսն և զլանջ-սին և զորովայն նորա. և այնքան հարկանէին զերա-նելին, մինչև տանջիչքն անաստուած տկարացեալ լի-նէին։ Եւ մարմինք սրբոյն գզեալ 'ի չարաչար հարկա-նելոյն, և արիւն յոյժ հոսէր 'ի նմանէ. և ապա հրա-մայէր կապարեայ մրճաք հարկանել զպարանոց սրբոյն անխնայաբար։ Եւ մինչդեռ հարկանէին՝ հրամայեաց զի զամենայն մնացեալ մարմին սրբոյ վկային, երկա-թի եղենգամբք քերեսցեն, և ապա հուր մատուցեալ այրեսցեն զամենայն վերս մարմնոյն։ Այրեցին և խո-րովեցին զամենայն մարմինն ըստ հրամանի Թագաւո-րին։ Իսկ սուրբ վկայն առաւել քան զառաւել համ-բերէր 'ի վիշտս անհնարին նեղութեանցն, և գոհա-նայր զԱստուծոյ զի ցանկութիւնք նորա կատարեցան. և իբրև առ ոչինչ համարեալ զայնպիսի անրմբերելի տանջանսն՝ ասէ ցԹագաւորն. Ո՛վ սպասաւոր և որ-բանեակ սատանայի 'և Թշնամի ամենայն արդարու-թեան, ո՞չ տեսանես զի տանջիչք քո տկարացեալ եղեն, և յանդգնութեամբ ամբարհաւաճութիւն քո ցածեալ եղև, և բռնութիւն քո յաղթեցաւ, և բանս-

արկուն Հայրն քո սատանայ յամենի եղև. և որքան վերին մարդս իմ ապականի 'ի տանջանաց քոց, այնքան ներքին մարդս իմ նորոգի 'ի կեանսն յաւիտենից։

Եւ Թագաւորն բարկացեալ յոյժ՝ հրամայեր զինուորացն զի տարցեն 'ի բանդ զերանելին, մինչև խորհեսցի վասն նորա թէ որով մահուամբ սպանցէ զնա. և իբրև արկին 'ի բանդ, յետ աւուրց ինչ հրամայեաց բերել առաջի իւր, և բազում բանիւք հարցափորձեալ՝ ոչինչ կարաց հաւանեցուցանել զերանելին։ Այսպա հրամայեաց զի հանցեն զնա 'ի խաչ, և նետաձիգս լինելով ամենայն բազմութեան զօրացն։ Իսկ վկայն Քրիստոսի մեծաւ ցնծութեամբ երթայր զկնի զինուորացն. և եկեալ 'ի խաչն՝ կապեցին զձեռս և զոտս նորա, և հանեալ կապեցին զնա ընդ խաչափայտին. և բազմութիւն զօրացն նետաձիգ եղեալ 'ի նա՝ հարկանէին զերեսս և զաչս սրբոյն։ Իսկ նահատակն Քրիստոսի համբերելով գոհանայր զԱստուծոյ, և առ ոչինչ համարէր զամենայն վիշտս նեղութեանցն։ Այսպա մատուցեալ յետ այսորիկ հատին զառնացի անդամն նորա, և բազմութիւնն որ շուրջ կացեալ էին՝ լային ամենեքեան։ Եւ Աբգարոս ծառայ և դպիր գոլով սրբոյն, որ հրաման առեալ էի մի ըստ միոջէ գրել զամենայն, իբրև տեսի զանչափ նեղութիւնն՝ 'ի բաց ընկեցի զքարտէզն 'ի ձեռաց իմոց, երթեալ անկայ առ ոտս նորա լալով դառնապէս. և տեսեալ սրբոյն զարտասուսն իմ՝ ասէ ցիս նուաղ և տկար ձայնիւ. Ո՛վ Աբգարոս, մի՛ տրտմիր և մի՛ հեղգար 'ի գործոյդ քումմէ, այլ զոր սկսար՝ կատարեա, և անսա սակաւիկ մի, զի տեսանելով քո զվախճան կատարածի իմոյ՝ գրեսցես։ Եւ զայս իբրև ասաց՝ համբարձ զաչս իւր յերկինս և ասէ. Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Աստուած իմ, որ անձառելի բարերարութեամբ քո մատակարարես զամենայն, որ և 'ի ձեռն միածնի Որդւոյ քո և ճշմարիտ սուրբ Հոգւոյդ՝ պարգևեցեր ինձ համբերութիւն, զի դու, Տէր, յառաջագոյն խոստացար ինձ և ասացեր, թէ՝ Ոչ թողից զքեզ, այլ յամենայն ժամ եղեց ընդ քեզ և փրկեցից զքեզ։ Եւ արդ ընդէր թողեր զիս, Աստուած իմ, և հեռի արարեր զգը-

թուԹիւն քո յինէն. քանզի վայրենաբարու գա-
զանք գիշատեցին զմարմինս իմ վասն սիրոյ անուանդ
քո. բիբք աչաց իմոց արտաքս ելին յինէն, և մարմինք
իմ հալեցան 'ի հրոյ, և մատունք իմ փշրեցան, և ե-
րեսք իմ այլագունեալ եղեն, արտաքոյ եղեն մարդ-
կային բնութեանս, անձն իմ սասանեալ դողացաւ
յերկիւղէ չարչարանաց խաչիս։ Եւ արդ, Տէր իմ և
Աստուած իմ, վասն քո համբերի այսմ ամենայնի,
տարեալ սրոյ և հրոյ և բազում նեղութեանց. վասն
որոյ աղաչեմ զքեզ ընկալ զհոգիս իմ վաղվաղակի, և
հանգո ըստ հաճոյից քոց, զի դու կարող ես յամե-
նայնի։

Եւ զայս իբրև ասաց՝ լռեաց. քանզի ներգևեալ էին
ամենայն անդամք մարմնոյ վկային, և յօշեալ տրո-
րեալ գոդ որովայնի նորա 'ի քերանացն և յոզորա-
ծեծն առնելոյն։ Իսկ անօրէնն և ամպարիշտն Լիկիա-
նէ կարծեցեալ թէ մեռաւ սուրբն, հրամայեաց պա-
հապանս կացուցանել, զի զօրն և զգիշերն ողջոյն 'ի
վերայ խաչին ազդին մարմինքն։ Իսկ յառաջին պահու
գիշերոյն՝ առաքեցաւ հրեշտակ յԱստուծոյ, և ի քնու-
ցեալ 'ի խաչէն առողջացոյց ամենևին զմարմինս նորա,
և ասէ. Ուրախ լեր և զօրացիր, զի Տէր ընդ քեզ էր և
է և եղիցի յաւիտեան. և արդ ընդէր, ասացեր, թէ
հեռացար յինէն. վասն որոյ կատարեաց զընթացս
Ճգնութեան քո, և դու երթաս առ Յիսուս փրկիչն
և ընկալցիս զանապական պսակն յարքայութեան ար-
դարոց։ Եւ զայս ասացեալ՝ վերացաւ յերկինս։ Իսկ
սուրբն Թէոդորոս տեսեալ զմարմին իւր ամենևին
բժշկեալ 'ի վիրաց անտի՝ ամբարձ զձեռն իւր յեր-
կինս, գոհանայր զՏեառնէ և ասէր. Բարձր առնեմ
զքեզ, Աստուած իմ և Թագաւոր իմ, և օրհնեմ զա-
նուն քո յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից։ Եւ 'ի
բազում ժամս աղօթեալ՝ առաքեաց զամէնն։

Եւ ընդ այգն ընդ առաւօտն կոչեաց Թագաւորն
երկուս ոմանս 'ի պատուաւորացն և ասէ. Երթայք
հանդերձ զօրականօք, ի՛ջուցէք 'ի խաչէ անտի զչարա-
մեռ մարմին խաբողին այնորիկ և բերջիք առաջի իմ;
զի հրամայեցից դնել 'ի կապարեայ տապանի և ընկե-
նուլ 'ի խորս ծովու, զի մի՛ յափշտակեալ քրիստոնէ-

ին առեալ պատուեսցեն ըստ սովորութեան իւրեանց։ Եւ իբրև գնացին զօրագլուխքն և մինչդեռ 'ի բացեայ էին՝ տեսին զխաչն ունայն 'ի մարմնոյ սրբոյ վկային և հիացեալ զարմանային։ Եւ ասէ Անտիոքոս ցՊատրիկիոս. Արդեօք Ճշմարիտ է զոր ասեն քրիստոնեայքն, եթէ Քրիստոս յեռ երից աւուրց յարեաւ 'ի մեռելոց, քանզի այժմ տեսանեմք ստոյգ եղեալ զբանն նոցա։ Իսկ Պատրիկիոս ընթացեալ առ խաչն, տեսանելով զսուրբ վկայն Թէոդորոս նստեալ մերձ առ խաչին ամենևին առողջ մարմնով, և պատմէր բազմութեան ամբոխին զմեծամեծ սքանչելեացն Աստուծոյ որ եղեն առ նմա, աղաղակեալ երկոցունցն մեծաւ ձայնիւ և ասեն. Մեծ է Աստուածն քրիստոնէից և չէք այլ ոք Աստուած բայց 'ի նմանէ։ Եւ երթեալ անկանէին առ ոտս սրբոյն հանդերձ զինուորքն որք ընդ նոսա՝ թուով ութսուն և երկու, և ասէին թէ և մեք քրիստոնեայ եմք և Քրիստոսի ծառայք. աղաչեմք զքեզ, ընկալ զմեզ զտգիտացեալքս 'ի Ճանապարհէն Ճշմարտութեան, և աղաչեա վասն մեր զարարիչն Աստուած, զի և զմեզ արժանի արասցէ ողորմութեան շնորհաց իւրոց։ Զայս լուեալ թագաւորն, յոյժ բարկացեալ, հրամայեաց բդեշխին՝ որում անուն էր Կէստոսէն, զի առցէ 'ի զօրականացն անձինս երեք հարիւր, որք երթեալ կոտորեսցեն զնոսա։ Եւ իբրև գնացին ըստ աջողելոյն Աստուծոյ, տեսեալ զսքանչելիսն Աստուծոյ հաւատացին և նոքա 'ի Քրիստոս. և եղև ժողով բազմութեան ամբոխին որք աղաղակէին մեծաձայն բարբառով և ասէին. Մեծ է Աստուածն քրիստոնէից, այն որ այսպիսի սքանչելիս արար, նա միայն է Աստուած. արդ եկայք քարկոծ արասցուք զանօրէնն Լիկիանէս, զի թագաւոր մեր Աստուած է՝ զոր Թէոդորոս քարոզեաց։ Եւ 'ի լինել այսպիսի խռովութեանց՝ յոյժ ամբոխէին ընդ միմեանս, բազում արիւն հեղուլ թիւն լինէր 'ի մէջ խառնիճաղանճ ռամկին։ Իսկ մի ոմն յանօրինացն՝ որում անուն էր Լէանդրոս, հանեալ զսուսեր իւր՝ ընթացաւ 'ի վերայ սրբոյն Թէոդորոսի զի սպանցէ զնա. և տեսեալ զայն բդեշխին՝ ձգեալ զձեռն իւր կորզեաց զսուրբն 'ի նմանէ, և սպան զանօրէնն Լէանդրոս։ Իսկ այլ ոմն՝ որում անուն էր Մեր-

պաս՝ ելեալ ընդ մէջ ամբոխին յարձակեցաւ 'ի վերայ բդեշխին և հարեալ սրով սպան զնա։ Իսկ երանելին իբրև ետես զբազմութեանն խռովութիւն, մտեալ 'ի մէջ նոցա և աղաչանօք խաղաղացուցանէր զամբոխն. և առեալ բազմութեանն զսուրբն՝ դարձան 'ի քաղաքն մեծաւ ուրախութեամբ. և մինչդեռ անցանէին և մերձ եղեն 'ի դուրս բանդին, ուր էին արգելեալ կալանաւորքն ամենայն, աղաղակեցին ամենեքին 'ի բանդին և ասեն. Ողորմեաց մեզ, ծառայ Աստուծոյ բարձրելոյ։ Եւ ժողովուրդն իբրև լուան՝ ասեն. Հրամայեա մեզ զի խորտակեսցուք վաղվաղակի զդուրս բանդին, և ազատեսցուք զարգելեալսն որ 'ի նմա։ Իսկ սուրբն արգել զնոսա 'ի խորհրդոցն. և ինքն մերձ եղեալ առ դուրսն՝ աղօթեաց առ Աստուած, և կնքեաց նշանաւ խաչիւն. և ինքնին բացեալ եղև, և կապանք նոցա լուծան. և ելեալ արտաքս արգելեալքն անկանէին առ ոտս նորա և գոհանային զԱստուծոյ և զսրբոյն, և նա ասէ ցնոսա. Երթայք խաղաղութեամբ յիւրաքանչիւր տեղիս։ Բազում և այլ աքանչելիս կատարէր Աստուած 'ի ձեռն նորա, զի հիւանդք և ախտաժէտք և այսահարք բժշկէին աղօթիւք նորա։

Եւ տեսեալ անօրինին Լիկիանէ զի ամենայն ժողովուրդն Հելլենացւոց՝ ուրացեալ 'ի բաց կացին յաստուածոցն պաշտամանէն և հաւատացին 'ի Քրիստոս, բարկացաւ յոյժ և առաքեաց զօրականս 'ի զինուորացն, զի երթիցեն գաղտ յամբոխէն և հատցեն ըզգլուխս սրբոյն. որք եկեալ վաղվաղակի կատարէին զՀրամանս նորա, հատանելով սուսերաւ զգլուխս երանելոյն։ Եւ այսպէս կատարեցաւ յաղթող և մեծ նահատակն Քրիստոսի սուրբն Թէոդորոս, յամսեանն յօգոստոս որ օր Ի.Զ. էր, 'ի փառս Աստուծոյ։

Իսկ յետ վկայութեան սրբոյն՝ ըստ Հրամանի նորին, որպէս յառաջագոյն պատուիրեալ էր Աբդարու ծառայի իւրոյ, առեալ զմարմին սրբոյն պատեցին սուրբ կտաւաք և անուշահոտ խնկօք, և եդին 'ի տապանի և տարեալ հանգուցին 'ի ժառանգութիւն նորա հայրենի գեղջն Եւխայտեայ։ Եւ բազմութիւն ժողովրդոյն Առակլեայ քաղաքին երթալով զկնի նշխարաց սրբոյն, մոմեղինաք լուցելովք և խնկօք անուշահոտիւք

և երգոք հոգևորք ըստ սովորութեան քրիստոնէից և եդին յիւրում հանգստարանին։ Եւ բազում աքանչելիք կատարեաց Աստուած 'ի ձեռն գերեզմանի նըշխարաց սրբոյն, որ լինի մինչև ցայսօր, որ հաւատով մերձենան 'ի նա. զի յօր յիշատակի վկային լինի բազմութիւն ժողովոց յամենայն ազգաց, որք մեծաւ պատուով և ընծայիւք կատարեն զյիշատակ նորա, զի Աստուած զփառաւորիչս իւր փառաւորէ։ Քանզի սուրբս այս առաւել քան զարեգակն պայծառագոյն՝ աննուաղելի փայլմամբ փայլեցոյց զվարս առաքինութեան իւրոյ ամբիծ և ուղիղ հաւատով, հերքեալ զիշխանն անօրէն հանդերձ գործակցօք իւրովք. սա և զխոստովանութիւն անշարժ յուսոյն հաստատուն պահեաց, և զԱստուած կենդանի 'ի կեանս իւրում փառաւոր արար։ Սա խաչակից և մահակից վկայ եղև կամաւոր չարչարանացն և մահուանն Տեառն, որում փոխանակեալ զմահ իւր՝ մատոյց անուշահոտ պատարագ ըստ հաճոյից նորա։ Քանզի Ճշմարիտ մահ սորա հաշտութիւն եղև հրեշտակաց և մարդկան, բարձումն անիծից և ընտանութիւն առ Աստուած։ Սա և հեղմամբ արեամբն իւրով 'ի բաց ջնջեալ շինջոյց զկռապաշտութիւն մոլորութեանն, և եղև հիմն հաւատոյ, կնիք եկեղեցւոյ, դուռն յերկինս մտողաց։ Սա և 'ի մէնջ պատուի յիշատակաք և տօնիւք պայծառակերպութեամբ։ Զպատմութիւն նահատակութեան նորա գրելով և աւանդելով ազգաց որ գալոց են, զի լիցուք վկայք վկայեցելոյն, մինչև հասցուք ամենեքին առ հանդիսադիրն Քրիստոս։ Սա վասն մեր բարեխօսէ միշտ առ բարեգութն Աստուած, զի և մեզ բացցի դուռն ողորմութեանն, վայելել ընդ նմա յանսպառ բարին։ Արդ որք հաւատով և երկիւղիւ և մեծաւ յօժարութեամբ կատարեն զյիշատակ վկայիս Քրիստոսի, զոր լինչ և հայցեն 'ի Տեառնէ՝ եղիցի նոցա. և մանակից և վարձակից եղիցին գործոց ընդ ամենայն սուրբս 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր, որում փառք և զօրութիւն յաւիտեանս. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Թէոդոսիոսի Եպիսկոպոսի և Թէովնայ կախարդի։

Յամի ինն և տասներորդի Դիոկղետիանոսի Թագաւորի, և յառաջին ամի Հալածանացն, արար Դիոկղետիանոս Եօթանասուն աստուածս ոսկեղէնս, և կոչէր 'ի նոսա մեծ Աստուած զԱպողոնն յարուսն, և յէգսն՝ զԱստղիկ։ Եւ ետ հրաման 'ի Թագաւորութեանն իւրում ասելով, թէ՝ Նոքա են աստուածք որ արարին զերկինս և զերկիր, և որ սոցա հնազանդի՝ կացցէ և առցէ պարգևս բազումս. իսկ որ ոչ հնազանդի Աստուծոյ՝ զոհել և երկիր պագանել, տանջեսցի չարաչար տանջանօք, զի զիմ հրամանս արհամարհեաց։

Յայնժամ Դիոկղետիանոս ետ զնոսա չորից զինուորացդ զոր ունէր յարքունիսն պատուականագոյն, որոց անուանքն են այս. Բասոս, Եւսեբիոս, Եւտիքոս, Բասիլիոս. և ետ զնոսա 'ի նոսա զի պահեսցեն։ Եւ նոցա առեալ մուծին զնոսա 'ի տունն Բասլի 'ի պահ, և էին անդ զամիսս երիս։ Եւ յորժամ կամէր անաստուածն Դիոկղետիանոս նոցա զոհել կամ երկիր պագանել, հրամայէր քրմացն բերել զնոսա 'ի հրապարակ, և բերէին զնոսա քուրմքն սրբելով 'ի նոցանէ զ'ի վերայ անկեալ փոշին, ջնջէին և շողացուցանէին, և այլ պէսպէս պաճուճանս առնէին նոցա, և քարոզ կարդային ասելով. Սոքա են աստուածք որ կեցուցանեն զաշխարհս ամենայն։ Եւ ահ մեծ արկանէին ամենայն

ազգաց։ Եւ յորժամ տեսանէր զնոսա Թագաւորն՝ ա-
ղաղակ անկեալ երկիր պագանէր նոցա. և եդեալ զծի-
րանիս առ ոտս նոցա՝ զոհէր և ասէր. Սոքա են աս-
տուածք որ կեցուցանեն զմեզ։

Եւ այս այսպէս եղեալ, մատեաւ յանկարծակի ե-
պիսկոպոսն, որում անուն էր Թէոպոնթոս, որ յա-
ռաջ վկայեաց յայն հալածանս. և ասաց Դիոկղե-
տիանոսի Թագաւորի. Գիտեա Թագաւոր, զի ոչ են
սոքա աստուածք, այլ ոսկի և արծաթ և փայտ և քա-
րինք, գործք ձեռաց մարդկան. աչս ունին և ոչ տե-
սանեն, ականջս ունին և ոչ լսեն, ձեռս ունին և ոչ
շօշափեն, ոտս ունին և ոչ գնան. գործք ձեռաց մարդ-
կան, հիւսանց, ոսկերչաց և Ճախարակահանաց. ոչ
չար ումեք կարեն առնել և ոչ բարի։ Այլ Աստուծոյ
կենդանւոյ և Ճշմարտի՝ արարչի երկնի և երկրի և ծո-
վու և ամենայն որ 'ի նոսա, և ստեղծչի և արարչի ա-
մենայն աշխարհի, անեղեւութի և անհասի, որ մնայն
յաւիտեանս յաւիտենից, արարչին զերկինս և զեր-
կիր բանիւ իւրով, որ շնորհեաց մեզ շունչ կենդանու-
թեան, նմա պարտ է երկիր պագանել և 'ի նմանէ
երկնչել. հանդերձ միածնաւ Որդւովն նորա Տերամբ
մերով Յիսուսիւ Քրիստոսիւ, որովք արար զարարածս.
նա է Ճշմարիտ Աստուած։ Քանզի վասն փրկութեան
մարդկան խնամեալ՝ առաքեաց զմիածին Որդին
իւր զՏէր մեր Յիսուս Քրիստոս, զի զերծուսցէ զազգս
մեր 'ի մոլորութենէ աշխարհիս. և նա եկեալ փրր-
կեաց զմեզ, զինքն մատնեաց վասն մեր. երկայնամիտ
և բազումողորմ։ Արդ պարտիմք զնա Ճանաչել և գո-
հանալ գիտելով զերկայնմտութիւն նորա, քանզի
նա է Աստուած. այլ սոքա որ 'ի ձէնջ կոչին աստուածք՝
մնոտիք են, քանզի հալին հրով և ապականին, և ե-
թէ տաս ինձ 'ի վերայ սոցա իշխանութիւն՝ տեսցես
զսոսա ոչինչս։

Եւ բարկացեալ Թագաւորն՝ ասէ ցնա. Որպիսւոյ
պատուի ես, զի զայդպիսիդ իշխես ասել։ Եւ պա-
տասխանեալ երանելին ասէ. Քրիստոնեայ եմ և երր-
կիւղած յԱստուծոյ։ Ասէ ցնա Թագաւորն. Քրիստո-
նեայ ես թէ և եպիսկոպոս։ Պատասխանեաց երանե-
լին. Քրիստոնեայ եմ և եպիսկոպոս. այլ աւ՛ժմ լաւա-

գոյն եպիսկոպոսութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ցանկամբ, յաւիտենականին և անապականին. քանզի այսր աշխարհիս եպիսկոպոսութիւնս առ ժամանակ մի է, իսկ յոր յուսացաքն՝ անանց է. և երանելի է մարդ որ զկեանս իւր ամբիծ վարեաց յաշխարհիս յայսմիկ, որ պարծանս եպիսկոպոսութեան ընկալցի 'ի հանդերձելում աշխարհին։

Այսպէս ցնա Թադաւորն. Ոչ 'ի հակառակութիւն բանից կոչեցար 'ի քէն, այլ 'ի հաւանութիւն գործոց յանդիմանականից, զոհել աստուծոյ, մանաւանդ մեծին Աստղոմէի, որ կարողն է փրկութիւն քեզ շնորհել. արդ այժմ գիտեա, թէ զայդ առնես՝ ինչս և պարգևս առնուս յինէն. քանզի որպէս կարող եմ մեծապէս պատուել զլսողս պատուիրանաց իմոց, նոյնպէս և տանջել զընդդիմակացսն իմ։ և այժմ խնայեա 'ի քեզ, և շահեա զտանջանսդ՝ զոհելով, ապա թէ խստանաս ընդդէմ, հարկեսս զիս վշիռ տալ 'ի վերայքո։

Եպիսկոպոսն ասաց. Գիտեա Թադաւոր, զի զայս աստուածս ոչ պաշտեմ և ոչ զոհեմ, քանզի ոչ են աստուածք. և տանջանաց քոց և խոշտանգանաց և կտտանաց՝ և ոչ սակաւ մի հոգամ վասն սիրոյն Տեառն, քանզի գրեալ է, թէ մի երկնչիք 'ի սպանողաց զմարմին և զոգին չկարողաց սպանանել։ Արդ մարմնոյ իմոյ ունիս իշխանութիւն, որպէս կամիս արա ընդ սա. քանզի պատրաստ եմ ամենայն տանջանաց զոր ածես 'ի վերայ իմ՝ համբերել, մինչև խափանեցիս զամենայն իմացս հօրն քո սատանայի, խոստովանելով զանուն Տեառն իմոյ Յիսուսի Քրիստոսի. և ես առաջին վկայ եղէց յայժմու հալածանացս, և համբերութիւն արութեանս իմոյ յօժարեցուցանէ ողբ յետ իմ պատերազմել կամին վասն հաւատոցս այսոցիկ. և յօժարութեամբ վկայեսցեն զիւրեանց փրկութիւնն՝ զՏէրն մեր Յիսուս Քրիստոս։ Վասն որոյ եթէ կամիս տանջել զիս զամիս մի ողջ և կամ զողջ ամն՝ պատրաստ եմ զամենայն տանջանս քո յանձն առնուլ, որ հանապազօր ածես 'ի վերայ իմ։ և ոչ երկեայց վասն հաւատոցս այսոցիկ պատերազմելով, այլ Աստուծոյ զօրութեամբն յաղթեցից քեզ և տանջանաց քոյոց։

Յայնժամ բարկացեալ Դիոկղետիանոսի Թագաւո-

ըի, և մեծաւ ցաստմամբ հրամայեաց 'ի հնոց հրոյ արկանել զնա։ Իսկ անօրէն զօրականքն պատրաստեցին զհնոցն յայգուէ մինչև ցինն ժամն. և հնոցին բորբոքեալ առաւել յոյժ. պատասխանեաց երանելի եպիսկոպոսն՝ մինչև արկեալ էին 'ի հնոցն, և ասաց ցզօրականսն. Այժմ տեսանէք զզօրութիւնն Քրիստոսին իմոյ, զի վասն անուան նորա այս ընդ իս անցանէ։ Եւ զայս ասացեալ ընկէց զինքն 'ի հնոցն առաջի ամենայն զօրականացն և ամենայն բազմութեանն. և էր 'ի մէջ հնոցին փառաւորելով զԱստուած։ Իսկ զօրականացն համարէին զնա մեռեալ, գնացին։

Եւ մօտ 'ի մէջ գիշերին կացեալ երանելին 'ի մէջ հնոցին՝ աղօթեաց և ասէ. Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, վասն որոյ զտանջանս զայս յանձն առնում վասն անուան քո. զի ամենեքեան որ կամին վըկայել յետ իմ՝ զօրացին լինելով նշանօքն. այո Աստուած իմ, և ցոյց անօրինիս եթէ ոչինչ զօրէ։

Եւ զայս ասացեալ երանելւոյ եպիսկոպոսին 'ի հնոցին. և ահա լոյս երևեալ առաջնորդէր նմա, ածելով զնա ուր Թագաւորն 'ի քուն էր։ Եւ կացեալ առաջի դրանն, և նորա բացեալ, և այլ դրունքն միանգամայն բացան, և առաջնորդէր նմա լոյսն՝ մինչև կացոյց զնա 'ի սենեկի Թագաւորին. զարթոյց զնա և ասէ. Թագաւոր, Ճանաչէ՞ս զիս. ես եմ Թէոպոնթոս մարդն Աստուծոյ, ոչ մեռայ այլ կեամ։ Յայնժամ լուեալ Թագաւորն՝ խռովեցաւ յոյժ։ Եւ իբրև այգ եղև՝ հրամայեաց Թագաւորն յառաջ մատուցանել զզօրականսն, և ասէ ցնոսա. Վասն է՞ր զդատապարտեալն յինէն զքրիստոնեայն՝ ոչ արկիք 'ի հնոց հրոյն. կարծեմ թէ արհամարհեցէք զհրամանս իմ։ Պատասխանեցին զօրականքն և ասեն. Թագաւոր, յաւիտեան կաց. մարդն այն յերեկի հետէ բոլորախարշ սատակեցաւ։

Յայնժամ մոլեալ Թագաւորն եկն 'ի հնոցն, և մերձեալ՝ լսէին զօրհնութիւնս նորա և զօրհնելն նորա զԱստուած 'ի մէջ հնոցին։ Եւ իբրև ետես երանելի եպիսկոպոսն զԹագաւորն և զզօրականսն՝ եկ 'ի հնոցէն. և կացեալ առաջի Թագաւորին՝ ասէ. Ահաւասիկ ես եմ մարդն Աստուծոյ. ոչ մեռայ, այլ կեամ, զի զօրութիւն Աստուծոյ իմոյ յայտնեսցի ինև։ Լու-

եալ և խռովեալ Դիոկղետիանոսի Թագաւորին՝ ասաց[1]. Տեսանէ՞ք զզօրութիւն կախարդութեան քրիստոնէից. քանզի լսեմ եթէ զգործ կախարդութեան անուամբն Յիսուսի առնեն, վասն որոյ և յաջողի նոցա։ Եւ կամեցեալ գիտել զեղելոց զարմանալեաց զօրութիւնն, հրամայեաց ըմբռնել շուն և ընկենուլ 'ի հնոցն, և առժամայն այրեցաւ շունն, և այն զի երկրորդ օր էր յետ բորբոքելոյ զհնոցն։

Եւ տեսեալ Թագաւորին և զարմացեալ՝ ասէ ցնա. Յայսմ հետէ գիտացեալ զքեզ կախարդ, անցուցից ընդ քեզ իբրև ընդ անօրէն։ Եւ տուեալ զնոսա չորից զինուորացն, առ որս էին աստուածքն 'ի պահեստի, հրամայեաց զնա ընկենուլ 'ի տուն մի և ծեփել. և ոչ հաց և ոչ ջուր տալ նմա, մինչև նա հրամայեսցէ զառաջեաւ ածել զնա։ Յայնժամ երանելի եպիսկոպոսն արգելեալ զքսան և զերկուս աւուրս ոչինչ ճաշակեալ. և 'ի քսան և երրորդի աւուրն յարուցեալ եպիսկոպոսն 'ի գիշերի՝ աղօթեաց և ասէ. Լուր ինձ Տէր, որ հանապազ լսես կարդացողաց առ քեզ 'ի նեղութեան. ակնդ նկատող՝ որ իմանաս զսիրտս ամենեցուն որ խնդրեն զքեզ ամենայն սրտիւք. աղբիւր կենաց՝ որ արբուցանես զամենայն ծարաւիս՝ որ խընդրեն զքեզ. Ճանապարհդ արդարութեան՝ որ լուսաւորեցեր զբաղումս, զոր ոմանք 'ի մարդկանէ ոչ ծանեան։ Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, վասն որոյ ընդ իս այս անցք անցանեն. լուսաւորեա զիս, Տէր, քաղցր զօրութեամբ, որում ցանկամ բոլորով սրտիւ իմով, աղաչեմ զի ամենայն ոք որ լսիցէ զբանս իմ՝ զօրասցի 'ի պատերազմել վասն հաւատոցս այսոցիկ։

Եւ զայս ասացեալ երանելւոյն՝ 'ի մէջ գիշերի հիմունք տանն սասանեցան, և ամենայն տունն լուսաւորեցաւ. քանզի Տեառն Յիսուսի Քրիստոսի նմանեալ մանկան գեղեցկի լի շնորհօք՝ երևեցաւ նմա և ասէ. Խաղաղութիւն ընդ քեզ, Թէոպոնթոս. մի երկնչիր՝ քանզի ընդ քեզ եմ և զօրացուցանեմ զքեզ մինչև կատարեսցես զմատակարարեալն քեզ։ Եւ ամենե-

1. Յօր. Դիոկղեպիանոսի ասաց Թագաւորին։

քեան որ 'ի տանն էին՝ խռովեցան յերկիւղէ մեծէ։ Եւ իբրև այգ եղև՝ յիշեցին զեղեալ մեծ զարմանալիսն, և ասեն. Զի՞նչ արդեօք իցէ ազգս այս մեծ սորա։ Եւ 'ի քսան և յերրորդում աւուրն կամեցաւ Թագաւորն գիտել, եթէ կենդանի՞ ևս իցէ քրիստոնեայն եթէ մեռաւ։

Յայնժամ բացեալ զդուրսն՝ գտին զնա իբրև զմարդ յուրախութեան 'ի բազում գինեաց, շնորհօքն որ զնովաւ վարէին. և կալեալ զնա ածին առ Թագաւորն։ Եւ իբրև ետես զնա Թագաւորն՝ զարմացեալ հիացաւ, և ըմբռնեալ նա զհանդերձ իւր՝ պատառեաց և ասէ. Տեսանէ՞ք զզօրութիւն կախարդութեան քրիստոնէից։ Եւ երանելւոյ եպիսկոպոսին պատասխանեալ ասէ ցնա. Մինչև ցե՞րբ խաւարեցուցանես զսիրտ քո և ոչ կամիս իմանալ զաքանչելիս Աստուծոյ իմոյ, վասն որոյ զայս չարչարիմ։ քանզի նա է որ տայ ինձ զօրութիւն, և ամենեցուն որ ուղիղ սիրտ ունին առ անուանն Յիսուսի Քրիստոսի, յաղթել քեզ և տանջանաց քոց և հօրն քո սատանայի։

Յայնժամ մոլեալ անօրէնն Դիոկղետիանոս՝ ասէ ցնա. Ո՞վ է Յիսուս. կամի՞ս չարաչար մեռանել. գիտեա զի Յիսուս ոչ կարասցէ փրկել զքեզ, թէ և զկախարդութիւնդ նովաւ առնես. այլ եթէ զոհեսցես մեծի աստուծոյն Ապողոնի՝ կարող է փրկել զքեզ։ Եւ երանելւոյ եպիսկոպոսին պատասխանեալ ասէ. Ոչ զոհեմ։ քանզի անուանեալն 'ի քէն Ապողոնի անուն՝ կորուստ է. վասն այսորիկ ամենայն որ հաւատայ 'ի նա՝ կորնչի յաւիտեան։ Եւ բարկացեալ Թագաւորն հրամայեաց փորել զաջ ակն նորա, և դընել յաջոյ ձեռին նորա. և յետ այնորիկ մրցել զնա 'ի բանդ։ Եւ իբրև եմուտ 'ի բանդն, դարձեալ ըստ սովորութեան 'ի մէջ գիշերի աղօթէր և ասէր. Լուր ինձ, Տէր Յիսուս, վասն գթութեան քո. երկայնամիտեա յիս, Տէր իմ, զի բազում անձինք հաւատասցեն 'ի քեզ վասն զօրութեանց քոց՝ որ լինին առ իս, քանզի ես եմ առաջին վկայ այժմու հալածանացս. և խօսեսցի նշանքս այս ընդ ամենայն երկիր, զբազումն լուսաւորել զօրութեամբ քով։

Եւ զայս նորա աղօթս արարեալ՝ ելոյս մեծ ծագեաց

'ի բանդին, և Եհար զփորեալ ակն նորա և անդէն ողջացոյց իբրև զմիւսն և։ Եւ իբրև այդ եղև՝ հրամայեաց Թագաւորն զառաջեաւ ածել զնա, և տեսեալ զնա երկու աչօք առողջ, բարկացաւ յոյժ, և երդուեալ ասաց. Իշխանութեամբս Հռովմայեցւոց և իմով փրկութեամբս, որ է մեծ աստուած Ապողոնն, ոչ և սլեմ քեզ, մինչև կոչեցից կախարդ մի լաւագոյն քան զքեզ, զի լուծցէ զկախարդութիւնդ քո. և զայս ասացեալ հրամայեաց մրցել զնա 'ի բանդ։ Եւ բարկացեալ նմա հրամայեաց բերել ոսկի լտերս հարիւր և քսան. և հրամայեաց գրել ընդ ամենայն Թագաւորութիւնն իւր և ընդ կուսակալս՝ երդմամբ հաստատել զայս. Եթէ ոք եկեսցէ առ իս կախարդ, որ կարող է խափանել զկախարդութիւն քրիստոնէիս այսորիկ, տաց նմա ոսկի լտերս հարիւր և քսան, և այլ և բաղում պարգևս ընկալցի յինէն։

Եւ լուեալ կախարդի ուրումն մեծի՝ որոյ անուն էր Թէոփնաս, մատուցեալ առ Թագաւորն՝ և ասէ ցնա. Թագաւոր, դու յաւիտեան կաց, ես խափանեմ զկախարդութիւն քրիստոնէին. քանզի ոչ են անհնարինք և ոչ մի ինչ։ Եւ ուրախ եղեալ Թագաւորն՝ գնաց 'ի բաղանիս, լուանալ հրամայեաց նմա և ընդ իւր Ճաշակել։ Եւ 'ի Ճաշէին՝ ասէ ցնա, Զանձրացաք ազգաւ քրիստոնէից, այլ առաւել արամբս այսուիկ զոր այժմ 'ի բանդի ունին, հռչակաւոր եղև 'ի քաղաքիս վասն զօրութեան կախարդութեան իւրոյ. արդ եթէ խափանեսցես այժմ զմենքենայս նորա՝ տուրս և պարգևս ընկալցիս յինէն։

Պատասխանի տուեալ Թէոփնայ կախարդի՝ ասաց. Թագաւոր, միթէ իշխէ՞ ինչ առնել առաջի իմ. այժմ ահա լուծից առաջի քո զամենայն կախարդութիւնս նորա։ Եւ ուրախ եղեալ Թագաւորն՝ ասէ ցնա. Կամիմ այժմ նշան ինչ տեսանել 'ի քէն։ Ասէ Թէոփնաս. Ածցի զուարակ մի. և ածաւ։ Եւ յարուցեալ Թէոփնաս խօսեցաւ յականջս զուարակին, և վաղվաղակի հերձաւ զուարակն ընդ մէջ։ Յայնժամ զարմացեալ Թագաւորն՝ ասէ ցնա. Ի վերայ եղելոյ նշանիդ գիտեմ եթէ արդարև կարող ես լուծանել զկախարդութիւն քրիստոնէիս այսորիկ։ Եւ պատասխանեալ Թէ-

ոմնաս ասաց. Մնա և տեսանես զքանչելագործն և զս. և հրամայեաց բերել կշիռս և կշռեաց զզուարակն, և գտան կշիռ երկոքեան կիսիք զուարակին։

Եւ զարմացեալ 'ի վերայ իրացն Թագաւորն՝ հրամայեաց զառաջեաւ ածել զերանելի եպիսկոպոսն. և եկեալ սրբոյն՝ կացոյց առաջի կախարդին և ասէ. Գիտեմ և հաստատեալ եմ, եթէ կախարդ ես և մոլար, վասն այսորիկ ածի զկախարդս զայս. կամ խափանես զկախարդութիւն նորա ապա թէ ոչ խափանէ զքոյդ. կամ սատակեալ դու զդա, և կամ թէ ոչ՝ դա զքեզ սատակէ, զի գիտացիս թէ ով է 'ի ձէնջ Ճարտարագոյն։ Եւ երանելի եպիսկոպոսն ասէ ցնա. Ամենայն մարդ Աստուծոյ ոչինչ գործէ կախարդանօք, և ոչ ումեք կամի զչար. այլ և վասն թշնամեաց աղօթէ անդադար, և որք ատեանն զնա. վասն այսորիկ և ես վասն նորա առ Տէրն իմ աղօթս առնեմ, զի թողեալ զսովորութիւն իւր՝ եկեսցէ 'ի Ճշմարիտ իմաստութիւնն. քանզի Տէրն մեր Յիսուս Քրիստոս ոչինչ խնդրէ, բայց միայն զփրկութիւն մարդկան, մանաւանդ որ բոլորով սրտիւ խնդրեն։ Ո՞ գիտէ արդեօք եթէ և յայսպիսի աւուրս և սմա ինչ բարի լինիցի, թողեալ զՃանապարհն մոլորութեան իմասցի զՃանապարհէն արդարութեան միայն։

Եւ պատասխանեալ Թէոփնաս ասէ ցԹագաւորն. Երկու նշանք են զոր առնելոց եմ. եթէ 'ի սոսա յաղթէ ինձ՝ հաւատալոց եմ յաստուածն դորա։ Իսկ երանելի եպիսկոպոսն ասաց. Տեսանեմ զի առ սակաւ մի հասանէ 'ի քեզ շնորհքն Աստուծոյ, որդեակ. արդարա զնշանս քո՝ որովք համարիս յաղթել ինձ, զի ցուցից քեզ զառաւել մեծութիւն Տեառն իմոյ Յիսուսի Քրիստոսի, որով պարծիմ և համարձակիմ։ Յայնժամ Թէոփնաս իւրով կախարդութեամբ պատրաստեաց կերակուրս և տուեալ նմա ասաց. Եթէ զդա կերեալ՝ կեցցես, զարմացեալ եմ վասն հաւատոց քոյ։ Իսկ սուրբն Թէոպոնթոս ասէ հենգնելով. Ա՞յս է քո զօրութիւն. այժմ ցուցանեմ զզօրութիւն փրկչին իմոյ Յիսուսի Քրիստոսի. և առեալ կերաւ առաջի նորա և ոչինչ անց ընդ նա. քանզի դեղն եղև 'ի բերան նորա իբրև զմեղր քաղցր։

Յայնժամ զարմացեալ Թէոփէնա ասէ. Նշան մի այլ կամիմ առնել, և եթէ ոչ փնաս ինչ լինիցի քեզ յորժամ ըմպես, հաւատամ յԱստուածն քո։ Եւ առեալ բաժակ խառնեաց իւրով կախարդութեամբն միւս ևս դեղ, կոչեալ 'ի վերայ նորա զանուանս դիւաց ոմանց, որպէս և կարծէր՝ մեծաց, զի դեղն կարասցէ փնասել նմա. և մատոյց Թէոպոնթոսի։ Եւ երանելւոյն տեսեալ՝ ծիծաղեցաւ և ասէ ցնա. Ա՞յս է զօրութիւն քո մեծ. ես ցուցից քեզ զզօրութիւն Աստուծոյ՝ որով պարծիմ և ոչ փնասիմ, և կամիմ զամենայն մարդիկ քաջութեամբ նորա պարծել։ Եւ առեալ զբաժակն՝ տեառնագրեաց զնա անուամբն Քրիստոսի և արբ. և ոչինչ ամենևին փնասեցաւ։

Եւ եղեալ այս այսպէս, Թէոփնաս կախարդ անկաւ առ ոտս երանելւոյն առաջի Թագաւորին, խոստովանելով և ասելով. Արդարութեամբ ոչ է այլ Աստուած, ոչ է այլ համարձակութիւն, ոչ են այլ պարծանք, բայց միայն Յիսուս Քրիստոս. արդ կամիմ ապաշխարել վասն մեղաց իմոց, և այնպէս հաւատալ Աստուծոյն քում։ Իսկ երանելի եպիսկոպոսն պատասխանի ետ նմա և ասէ. Տես մարդ դու, միթէ քեզանո՞վ միայն խոստովանիցիս առանց մտաց. քանզի Աստուած ոչ փորձի. զի նա քննէ զամենայն զմիտս և զխորհուրդս։ Պատասխանի ետ Թէոփնաս և ասէ. Ուղիղ ունիմ զսիրտ իմ առ Տէր, և ոչ ամենևին յերկուացեալ են միտք իմ։ և գիտասցես գործովք զիմ միտս, և հասցես 'ի վերայ անփոփոխ խորհրդոց իմոց։

Եւ եպիսկոպոսն ասէ ցնա. Եւ ոչ մի նախանձ է իմ, եղբայր. Ա՛կ և դու 'ի գիտութիւն Աշմարտութեան. քանզի Տէր մեր Յիսուս Քրիստոս ապաշխարութեան և փրկութեան մարդկան հոգայ։ Վասն այսորիկ և յինքն ոչ խնայեաց, այլ զինքն մատնեաց վասն մոլորութեան աշխարհիս. և մարդիկ ոչ այնպէս երբեք արարին վասն չարչարակցաց իւրեանց, որպէս և նա ետ ցոյց 'ի մեզ՝ որ Աստուածն էր՝ զմեծութիւն իւր և զբարերարութիւն։ Եւ զայս լուեալ կախարդին Թէոփնայ և լցեալ Հոգւով սրբով՝ յանկարծակի մատեաւ առ Թագաւորն և ասէ ցնա. Քրիստոնեայ եմ և ծառայ Յիսուսի Քրիստոսի Աշմարտին Աստուծոյ։ Լուեալ Թա-

գաւորին խռովեցաւ և գոչեալ ասաց. Ո՞ւչափ ծաղ-
կեաց կախարդութիւն քրիստոնէից, տեսանէք յո-
ւրմ զկախարդութիւն իւրեանց կատարեն։ Եւ բար-
կացեալ հրամայեաց զերկոսեանն տանել 'ի բանդ։

Իսկ երանելի եպիսկոպոսն խրատեաց զԹէոփնաս. և
յետ խրատելոյն մկրտեաց զնա յանուն Հօր և Որդւոյ
և Հոգւոյն սրբոյ։ Եւ 'ի վաղիւ անդր հրամայեաց
Թագաւորն յառաջ ածել զԹէոպոնթոս և ասէ ցնա.
Ուրախ լեր, ամենայն կախարդաց վարդապետ. ոչ
փրկեսցէ զքեզ 'ի ձեռաց իմոց զօրութիւնն այն յոր
յուսացարն։ Եւ կոչեցեալ առ ինքն՝ ասէ ցնա գաղտ.
Խրատ տամ քեզ մանաւանդ ինձ լսել, որ կարող եմ
կեցուցանել զքեզ։ Իսկ սուրբ եպիսկոպոսն յուսա-
ցեալ և հաստատեալ 'ի զօրութիւնն Քրիստոսի, մե-
ծաձայն գոչեաց և ասէ. Ո՛վ քան զամենայն մարդիկ
անզգամ, մինչև ցե՞րբ կամիս արգելուլ զիս յաւիտե-
նական եպիսկոպոսութենէն, որով կամիմն յաւի-
տեան կալ։

Եւ բարկացեալ Թագաւորն՝ հրամայեաց հարկա-
նել ցիցս հեռագոյնս և պրկել զերանելին յորովայնն,
և կապել զոտս և զձեռս ընդ ցիցսն, և երեսքն զի հայ-
եսցին ընդ Հառագայթս արեգական։ Եւ ասէ ցնա.
Անցուցանեմ ընդ քեզ իբրև ընդ անօրէն, մինչև գի-
տացիս զզօրութիւն կախարդութեան քո։ Եւ այնպէս
հրամայեաց կոտոր մի սալ մեծ բերել և դնել 'ի վե-
րայ որովայնի նորա։ Եւ բերաւ բարձեալ յութ մար-
դոյ և եդաւ 'ի վերայ նորա։ Իսկ քաջն Թէոպոնթոս
պատասխանեաց նմա ասելով. Ա՞յս է զօրութիւն քո
անամօթ բռնաւոր. ես ցուցից քեզ զզօրութիւն Աս-
տուծոյ իմոյ։ Եւ զայս ասացեալ գոչեաց մեծաձայն
ասելով այսպէս. Տէր Յիսուս Քրիստոս, և յայսմ զօ-
րութիւն շնորհեա ծառայի քո յուսացելոյս 'ի քեզ,
և յայտնեա անօրինիս այսմ զզօրութիւն քո։

Եւ զայս ասացեալ նորա և զինքն շարժեալ, Թա-
ւալեցաւ վէմն 'ի նմանէ հեռագոյն իբրև կանգունս
հնգետասան։ Տեսեալ զայն Թագաւորին՝ զարմացաւ
և ասէ ցնա. Արդարև ոչ գոյ լաւագոյն քան զքեզ
յամենայն կախարդս։ Իսկ երանելւոյն պատասխա-
նեալ ասէ. Կախարդ ոչ եմ, այլ մարդ երկիւղած

յԱստուծոյ. և ամենայն երկիւղածի՝ Աստուած ըսէ յաւուր նեղութեան և վշտի։

Եւ յայնժամ անօրէնն հրամայեաց զնա գլխիվայր զսիւնէ կախել. և ասէ ցնա. Անցուցանեմ ընդ քեզ իբրև ընդ անօրէն վասն կախարդութեան քո. և ե-թող զնա կախեալ յայգուէ մինչև յերիս ժամն։ Եւ յետ այնորիկ հրամայեաց հատանել զչուանն՝ որովք կապեալ էր զձեռս և զոտս նորա, զի անկեալ 'ի գը-լուխն՝ խորտակեսցի։ Իսկ ամենայն գովութեան ար-ժանին՝ զօրութեամբ Տեառն Յիսուսի Քրիստոսի գլխիվայր ոչ անկաւ, այլ ուղիղ անկաւ յոտս իւր։ Եւ բարկացեալ վասն այնորիկ անաստուած թագաւորն՝ ասէ. Կամիս գիտել եթէ կարէ աստուածն քո փրկել զքեզ 'ի ձեռաց իմոյ. կարող էր մեծ աստուածն Ա-պողոն կեցուցանել զքեզ և տալ փրկութիւն քեզ. այլ վասն անլաւութեանդ քո և անզեղջ սրտիդ՝ տը-ւեալ քեզ վՃիռ։

Եւ հրամայեաց զնա գլխատել։ Եւ գիտացեալ զայն երանելւոյն Թէոպոնթոսի, կոչեաց մեծաձայն և ասէ. Կեցուցեր զիս այսօր. քանզի ամբիծ կատարեցի զե-պիսկոպոսութիւնս իմ յաւուրս իմ, խոստովանելով զՏէրն իմ Յիսուս Քրիստոս։ Եւ զայս ասացեալ և օրհ-նեալ զԱստուած, գոհացաւ 'ի վերայ այսոցիկ. և խաղաղութեամբ կատարեաց զվկայութիւն իւր սուրբն Թէոպոնթոս։

Եւ կոչեցեալ 'ի նմին աւուր թագաւորն զԹէով-նաս, որ երբեմն կախարդն էր, և ասէ ցնա. Զոհեա մեծի և անյաղթի Ապողոնի։ Եւ պատասխանեալ Թէոփնայ ասէ. Մի՛ լեցի թողուլ զբարի խրատն երիցս երանելւոյ եպիսկոպոսին և հեռանալ 'ի զօրութենէ Քրիստոսին իմոյ։ Եւ բարկացեալ թագաւորն ասէ ցնա. Որպէս զի ոչ կարաց փրկել զնա Աստուածն նո-րա 'ի ձեռաց իմոց, գիտեա զի և ոչ զքեզ փրկեսցէ։ Ես կամէի պարգևել քեզ ոսկի շատ և տուրս բա-զումս, այլ դու փոխեալնաս և զանզգամայն իրս առ-նես. արդ անցուցից ընդ քեզ ըստ անզգամութեանդ քում։ Եւ Թէոփնաս ասաց. Գոհանամ զԱստուծոյ ի-մոյ, որ կեցուցանէ զիս և շնորհէ ինձ ժառանգել ընդ սուրբս իւր։

Եւ Թագաւորն բարկացեալ յոյժ՝ հրամայեաց խորը խորատ հատանել մեծ և ընկենուլ զնա 'ի նեղքս և Թաղել, զի այնպէս կոխեսցի 'ի ձիոցն ոտից։ Իսկ առաքինի նահատակն համբերեալ այնպիսի տանջանաց՝ արձակեաց զոգին. վկայեալ զբարիոք վկայութիւնն խաղաղութեամբ 'ի Տէր մեր Յիսուս Քրիստոս. որում փառք և զօրութիւն հանդերձ Հարբն և ամենասուրբ Հոգւովն, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Թէոփիլոսի և Պատրոնիկէի կնոջ նորա, և որդւոյ նորա Դամաղիայ։

Ասաւերիոս բդեաշխ Եւրոպի զգեցեալ զզէնն սատանայի և մոլեալ ինքն 'ի պաշտօն կռոցն, հարկ առնէր և ամենեցուն զնոյն գործել. և յաւուր միում մինչդեռ ամենայն հեթանոսականքն ժողովեալ էին 'ի պաշտօն կռոցն՝ Կեսարիոս քրմապետ ասէ ցբըդեաշխն. Հրամայեսցէ ձեր քաջութիւնդ, զմոլորեցուցիչսն և զօտարս աստուածոցն զքրիստոնեայս՝ ածել 'ի պաշտօնս զի զոհեսցեն, ապա թէ ոչ հաւանեսցին՝ զի զանհաւատիցն պատիժս կրեսցեն։ Եւ բըդեշխին հրամայեալ, չոգան զօրականք բազումք և մտեալ յեկեղեցին՝ յափշտակեցին իբրև զգայլս 'ի հօտէն Քրիստոսի ոչխար մի պարարտ հաւատովք, հաստատուն խորհրդովք, արթուն մտօք, որում անուն էր Թէոփիլոս, և ածին առ իշխանն։ Իսկ սուրբն գայր ցնծութեամբ իբրև 'ի Ճաշ թագաւորական, և ասէր. ԶՀանապարհս քո, Տէր, ծանո ինձ, և զշաւիղս քո ուսո ինձ. առաջնորդեա 'ի Ճշմարտութեան քում։ Իբրև ածին, ասէ ցնա բդեաշխն. Զմինչ ազգ ես։ Թէոփիլոս ասէ. Ծառայ Աստուծոյ բարձրելոյ անպիտան, այլ ըստ մարմնական՝ ազատ։ Բդեաշխն ասաց. Տեսանեմ ցած վարս 'ի քեզ և պատուեմ զգեղ երեսաց քոց, գթամ 'ի տղայական հասակդ քո, վասն որոյ խրատ տամ քեզ զոհել, զի սիրելի լիցիս թագաւորին

և բազում ընչից տիրիցես։ Թէոփիլոս ասէ. Ոչ ողոքելի բանիւք քովք հաւանեցուսցես զիս, և ոչ ճրագմամբ խաղրից քոց հաւանեցուսցես զիս. քանզի ունիմ մարգարէս և առաքեալս որ հրամայեն արդարութեամբ ծառայել Աստուծոյ կենդանւոյ, զաստուածս սուտս անուանս կոչեն համերս։ Եւ բդեաշխն ասէ. Կախեսցի և քերեսցի։ Մինչդեռ քերէր սուրբն՝ մեծաւ ձայնիւ ասէր. Քրիստոս, որ խաչեցար 'ի վերայ փայտի, որ զմահ մահու խափանեցեր, և զխաւարեալս լուսաւորեցեր, որ յանօրինաց թուք յերեսս առեր, և քոյով սուրբ թքովդ լոյս շնորհեցեր, բաց ինձ ըզդուռն արդարութեան, զի մտից ընդ այնոսիկ և խոստովան եղէց սուրբ անուանդ քում, զի դու ես որ փրկես զյուսացեալսն 'ի քեզ։

Մինչդեռ նա զայս ասէր, քարոզն աղաղակէր դահճացն՝ յոլովել 'ի քերանսն. և ցայնժամ քերեցաւ՝ մինչև մերկացան ամենայն ոսկերքք նորա։ Եւ սրբոյն առ ոչինչ համարեալ զցաւսն՝ ասէ. Ծանօթ ես 'ի Հրէաստանի Աստուած, ըստ բազում գթութեանդ քո լուր ինձ և ճշմարտութեամբ փրկութեան քո կեցո զիս։ Եւ բդեաշխն ասէ. Շատ կախարդս տանջեցի և սպանի, այլ այդպէս ժուժկալ ոչ ես և ոչ այլ ոք յիշխանացն ետես. և ասէ ցսուրբն. Աստուածովքն, 'ի ձեռն տանջանաց ևս գեղեցկացուցանեմ զքեզ. արդ մատիր զոհեա, զի հաշտեցուսցես զքեզ ընդ նոսա։ Թէոփիլոս ասաց. Որոց աստուածոց։ Բդեաշխն ասէ. Աբրամազդայ և Ապողոնի և մեծին Դիոնոսի։ Թէոփիլոս ասաց. Եւ ո՞ ոք 'ի նոցանէ զոր դու աստուածս կարծես՝ կարէ չար առնել ումեք կամ բարի։ Բդեաշխն ասէ. Ամենեքեան։ Թէոփիլոս ասէ. Խաբիս, ո բդեաշխ, դոքա կուռք են համերք և կոյրք, և ոչ կարեն ումեք բարի ինչ առնել, վասն որոյ պարտ է փախչել 'ի նոցանէ. քանզի կենդանին և մշտնջենաւորն Աստուած ասաց, նման նոցա լինել զյուսացեալսն 'ի նոսա։ Բդեաշխն ասէ. Մի՞ հայհոյեր, մատիր և զոհեա։ Թէոփիլոս ասէ. Զ Աստուած ոչ հայհոյեմ, այլ զկուռս և զդևս աղտեղիս, քանզի քրիստոնեայ եմ և ոչ զոհեմ զի մի՞ մեռայց։ Եւ բդեաշխն հրամայեաց հուր լուցանել և ընկենուլ զնա 'ի ներքս. և իբրև ընկ

կեցին զսուրբն, կացեալ 'ի մէջ հրոյն՝ ասէր. Անյաղթ թագաւոր, անբաժին գանձ, սուրբ օրինադիր, մարդասէր փրկիչ, Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ զզօրութիւն Հոգւոյդ սրբոյ առաքեցեր երից մանկանցն 'ի հնոցին, որք զփառս քո խոստովանեցին առաջի մարդկան, զքաջալերութիւնդ քո շնորհեցեր նոցա, և զբոց հնոցին ցրտացուցեր, Աստուած գթութեանց, Աստուած միխիթարութեանց, Աստուած հարցն. նոյնպէս առաքեա 'ի ժամուս յայսմիկ զհրեշտակ օգնականութեան և ցրուեա զբոցս զայս. Աստուած, կենդանի է անունդ քո յաւիտեանս։ Եւ զայս ասացեալ նորա՝ ցրուեցաւ բոցն, և նա կայր 'ի մէջ հնոցին և փառաւորէր զԱստուած։ Եւ բարկացեալ բդեաշխն, հրամայեաց տանել զնա 'ի բանդն և զգուշութեամբ պահել զտիւ և զգիշեր, որպէս զի սովով և ծարաւով մեռցի. և էր 'ի ներքնումն բանդին փառաւորելով զԱստուած։

Իսկ կին նորա Պատրոնիկէ կայր առ դուրս բանդին և ունէր մանկիկ փոքրիկ 'ի գրկին, և աղաչէր զբանդապետն՝ զի թոյլ տացէ նմա մտանել առ սուրբն։ Եւ բանդապետն զգացուցեալ բդեշխին վասն կնոջն, թէ ունի մանուկ փոքրիկ և կամի տեսանել զերանելին. և հրամայեաց բդեաշխն մտանել, զի թերևս դարձցի տեսանել վասն գթոյ աղեացն։ Եւ կնոջն մտեալ 'ի ներքս և տեսեալ զնա՝ ընկենոյր զմանուկն առաջի նորա, և ասէ ցնա. Երկիր յԱստուծոյ, տէր իմ, և փառաւորեա զանձն իմ, կաց մնաց 'ի խոստովանութեանդ յայդմիկ։ Ցուշ լիցին քեզ արք արդարք, որք վասն Քրիստոսի կապեցան և անկապուտ գանձուցն արժանի եղեն։ Ցիշեա զայն որ ասացաւն, եթէ՝ Որ թողու զհայր կամ զմայր կամ զկին վասն իմ՝ ժառանգորդ լինիցի երկնից արքայութեան. հաստատուն կաց 'ի նահատակութեանդ, զի կոչեցայց ես այրասէր, և ծանօթ եղեց քրիստոսասիրաց. արհամարհեա զժամանակս վասն յաւիտենական անուանս առաջակայ. վազեա 'ի խորոյս 'ի բարձրն, ընտրեա զերկնաւորն, և սիրելիս ստացիր քեզ զՔրիստոս. ոչ ևս կոչեցայց այրի, քո զկնոջորելովդ 'ի գունդն Քրիստոսի, և ոչ ոք անգոնեսցէ զիս քո գրելով 'ի համար թագաւորին երկնից։ Եւ զայս ասացեալ՝ առ զմանկիկ

կրն և մատեաւ հրաժարեալ, և բուռն հարեալ զծընգացն նորա՝ ասէր. Ա՛ռ ժամանակ մի էն կեանք քո այս, տէր իմ, իսկ աներևոյթքն յաւիտենականք։ Եւ երանելին ասաց. Օրհնեալ է Աստուած, որ փառաւորեաց զքեզ, և զխորհուրդս քո խաղաղութեամբ պահեսցէ։ Եւ այնպէս գնաց կինն 'ի տուն իւր փառաւորելով զԱստուած։ Եւ բանդապետն փակեաց զդուրսն։

Եկին պատմեցին զամենայն բդեշխին, և նորա հարցեալ՝ եթէ կերակուր ինչ եբե՞ր նմա. և իմացեալ եթէ ամենևին ոչ, պատուիրեաց մեծաւ զգուշութեամբ պահել զնա։ Եւ յետ աւուրց հնգից հրամայեաց ածել զառաջեաւ. և մինչդեռ գայր սուրբն՝ ասէ. Ա՛ղ Տեառն արար զօրութիւն, աղ Տեառն բարձրը արար զիս. ոչ մեռայց՝ այլ կեցից. Տէր է իմ օգնական, և ես տեսից զթշնամիս իմ։ Զկնի նորա երթայր Պատրոնիկէ և ասէր. Զօրացիր, տէր իմ, 'ի վերայ սատանայի, կատարեա զընթացս քո մինչ դեռ պատրաստ է ասպարէզդ. իբրև զայրասէր երևեցայց ես՝ քո զընթացսդ կատարելով. զի հասարակ զորդեակս մեր զցանկալի յանձն արա քրիստոնէից, քանզի հանդերձեալ եմ և ես պատարագիլ Աստուծոյ, զկնի գոլով քոյոյ հետոյդ. քանզի լաւ է ընդ քեզ ժառանգել զկեանսն, քան մնալ 'ի թշնամութեան աշխարհիս։ Եւ իբրև ածին առաջի զսուրբն, ասէ բբդեաշխն. Զո՞հեա Դիոնոսի։ Թէոփիլոս ասաց. Ոչ զոհեմ, քանզի քրիստոնեայ եմ։ Բդեաշխն ասէ. Զես քրիստոնեայ, այլ կախարդ, վասն որոյ ես կորուսանեմ զքեզ իբրև զմին 'ի նոցանէ։ Եւ հրամայեաց ածել գազանս 'ի ստադն, և զերանելին մուծանել անդ։ Իսկ կինն նորա աղաղակեաց յամբոխին և ասէ. Թէոփիլէ, նահատակ Քրիստոսի, յիշեա զԴանիել, և գազանք վայրենի խաղաղանան ընդ քեզ։ Եւ ամբոխին լուեալ զձայնն՝ երանեցին զնա ամենեքեան. և արձակեցին նմա առիւծ մի մեծ. և առիւծուն երթեալ մինչելով, եկաց առ նմա։ Իսկ սուրբն ասէ. Քրիստոս, որ քաւիչդ ես մեղաւորաց, որ լուծեր զմնասակարութիւնն սատանայի, որ զգանձ աստուածութեանդ քո սրբոց յայտնեցեր, յայտնեա և յիս տառապեալս զիաւս քո, զի հասից որում ցանկամն։ Եւ զայս ասաց

ցեալ նորա վաղեաց առիւծն և հար զնա. և այնպէս աւանդեաց զոգին 'ի Տէր։

Եւ Երանելին Պատրոնիկէ առեալ զսուրբ մարմին նորա՝ եդ 'ի տապանի, և ասէր ցնա. Յանուն Յիսուսի Քրիստոսի՝ ընկալ և զիս խաղաղութեամբ, քանզի փութամ տեսանել զՔրիստոս, որ պսակեացն զքեզ։ Եւ բդեշխին զայն լուեալ՝ հրամայեաց ածել և զնա։ Եւ իբրև ածին առաջի՝ ասէ ցնա. Ցյամառութիւն ինքնահաճութեան առն քո տեսեր և գիտայեր, եթէ անհաւանեալ հրամանին իմում՝ մեռաւ. արդ դու մի՛ իբրև զկին, այլ իբրև զայր մարդ ցոյց ինձ զքաջութիւնդ քո և զոհեա աստուածոցն, զի մի՛ չարաչար մեռցիս։ Եւ սուրբն ասէ. Թէ և մարմնովս կին եմ, այլ խորհրդովս կամ առաջի քո իբրև զայր. պատրաստ եմ յաղթել հնարիցդ քոց՝ առաքինի վաստակովք որ վասն Աստուծոյ։ Եւ բդեշխին լուեալ զայն՝ հրամայեաց ընկենուլ զնա 'ի ստադն, և արձակել նմա մատակ առիւծ մի. և նորա մտեալ 'ի ներքս՝ ունելով զմանկիկն 'ի գիրկն, հայեցաւ յերկինս և ասաց. Օրհնեալ ես Տէր Աստուած, որ ընկալար զպատարագն Աբրահամու, և օրհնեցեր զԻսահակ, և զՅակովբ փառաւորեցեր, և զօրհնութիւն նոցա բազմացուցեր և զՄարիամ պսակեցեր. հայեաց յիս, Տէր, յանարժան աղախին քո և խաղաղութեամբ պահեա. վասն սրբոյ ծառային քո Թէոփիլի լեցի քեզ ընդունելի և հաճոյական պատարագ և մանկիկս այս։ Իսկ մատակ առիւծն եկեալ եկաց մօտ 'ի նոսա. և մանուկն տեսեալ զգազանն՝ ժպտեցաւ և ասէ. Ամէն յերկինս, ամէն Հօր, ամէն Որդւոյ, ամէն Հոգւոյն սրբոյ. ամէն ալէլուիայ։ Եւ այսպէս վախճանեալ սուրբն և Երանելին Պատրոնիկէ 'ի գազանէն՝ հանդերձ մանկամբն, յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. որում փառք և զօրութիւն յաւիտեանս. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Իւղոսի և Դումնայի և Երկուց քիւրուցն։

Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ եղև թագաւորել անօրինին Մաքսիմիանոսի. և յերկրորդում ամի ինքնակալութեան իւրոյ հալածանս յարուցանէր 'ի վերայ եկեղեցւոյն Աստուծոյ, և կատաղի զայրացմամբ վառեալ 'ի պատերազմ ընդդէմ զօրաց Բարձրելոյն, և զամենայն հնարս մեքենայից չարասէր բանսարկուին իբրև զվարմ որսողաց պարփակէր 'ի վերայ այնոցիկ՝ որ քրիստոսական հաւատոցն էին պաշտօնատարք և արհամարհողք մնոտիապատիր դիցն մոլորութեան։

Արդ 'ի սոյն ժամանակի էին բազումք յուղղափառաց դասուցն արք երկիւղածք յԱստուծոյ և Ճշմարտասէրք, հմուտ քերթողական և Ճարտարասան [1] արհեստիցն, և առաւել աստուածայնով գիտութեամբն և քրիստոսապատում վարդապետութեամբն փրկական աւետարանական առլցեալք, որք զամենայն հանդիպեալսն և զանդանօր գործեցեալսն 'ի ժամանակին իւրեանց 'ի ձեռն գրոյ պատմագրէին անմոռաց յիշատակարան թողլով զկնի իւրեանց եկեղոցն։

Յորոց մի էր յայնցանէ երանելին Կիւրղիոս [2] սրբաբաղան քահանայապետն նահանգին Բիւթանացւոց, այն որ զարդարեալն էր քաղաքավարութեամբ. քանզի շինէր նա զեկեղեցիսն Աստուծոյ՝ զանկեալսն և

1. Մի օր. Ճարտասանական։ 2. Մի օր. Կիւրեղոս։

զկործանեալսն յանաստուած Հելլենացւոցն, կանգնէր զմատրունս մարտիրոսացն և հաստատէր զմիայնաստանս Ճգնաւորացն, և բանիւ վարդապետութեամբ իւրով զօրացուցանէր զթերացեալսն սուրբ հաւատոցն, և զամենայն Ճանապարհս Ճշմարտութեան և զգործս արդարութեան սերմանէր 'ի յամենեցունց լսելիս։ Մինչև ձեռնարկեալ ևս նմա առ այնոսիկ՝ որ յարքունական ապարանսն էին բնակեալ, և զյոգունս 'ի նոցանէ հաւանեցուցանել 'ի պաշտամունս քրիստոսադիր արդար օրինացն. որք թողեալ զՀոխութիւն երևելի մեծութեանց աշխարհիս, զինչս և զստացուածս բաշխէին տնանկաց և կարօտելոց, և բոլորովին Քրիստոսի նուիրեցին զանձինս իւրեանց։

Զայսոսիկ լուեալ ամբարշտին և անօրինին Մաքսիմիանոսի, և ներել ամենևին ոչ կարաց, քանզի կրկին պատերազմաւ պաշարեալ էր, թագուցանէր առ ժամանակ մի զթիւնս դառնութեան սրտի իւրում, մինչև հանդէպ բարբարոսական մարտին հասելոյ 'ի վերայ նորա կատարեսցի։ Եւ 'ի զրաւ լինել մարտից պատերազմին, ասէ. Դարձեալ զգուշութեամբ քննեալ խնդրեցից, և 'ի մէջ ածեալ հանդիսիւ պահանջեցից զվրէժս յայնցանէ, որք արհամարհողք են անմահից աստուածոցն, և այպանողք տէրութեանն Հռոմայեցւոց և արդար օրինացն։ Այսպիսի շարժեալ շրթամբք նենգաւորաք՝ 'ի սիրտ իւր ժողովէր զանօրէնութիւն, և մեծաբարբառ հպարտութեամբ և բարձր գոռոզութեամբ[1] ելանէր ընդդէմ բարբարոսացն։ Այլ բարեպաշտութեան ջահն և զամբարն Ճշմարտութեան հուրն այն աստուածային, զոր եկն արկանել յերկիր բոլորից Տէրն, վերստին վառէր. և Քրիստոսի զինուորքն անպարտելի հաւատովք 'ի Ճակատամարտին պատրաստք լինէին 'ի հանդիսանալն։

Այրդ մինչդեռ այսպիսի յոյզ քննութեան 'ի վերայ ամենեցուն հասեալ կայր՝ յանկարծակի երևեցաւ արեգակնափայլ ծագմամբ աստղն բարետեսիլ և վայելուչ յոյժ, գերապայծառ և մաքրամիտ և ամենայն պարկեշտութեամբ զարդարեալ, կոյս մի չքնաղ և

1. Մի օր. Բարձրաձայնութեամբ։

զարմանալի՝ որում անուն Դոմնաս կոչէին, ազգաւ և փառաք երևելի [1], մնեալ 'ի գահոյս թագաւորական առաջաստին. որ և յամպարշտէն Մաքսիմիանոսէ կարգեալ էր 'ի սպասաւորութիւն պաշտաման մնոտի աստուածոյն՝ որ 'ի ներքոյ թագաւորական ապարանիցն էին կանգնեալ, և առաջին իսկ էր սա և գլուխ քահանայութեանցն կարգեալ, և ամենայն զոհիցն և ձօնմանց [2] աստուածոյն եղեալ իշխեցող։ Այլ զի խնդրէր բարի ծառն երկիր բարի, և ձիթենին պըտղաբեր հաստատիլ 'ի տանն Աստուծոյ, յորոյ միտս [3] շարժեալ զօրանայր Հոգւոյն իմաստութեամբ. և սակաւ սակաւ 'ի լսողութիւն եկեալ աստուածային պատուիրանացն, ընդունէր զՃանչ լուսոյ բարեպաշտութեանն. ըղձայր ծարաւի ոգւով հասանել սիրոյ անմահ փեսային։ Որ և 'ի ձեռն իւր ընկալեալ զգիրս սրն աստուածընկալ սրբոյն Պաւղոսի, և հանապազ ընթեռնոյր աշխատաբար խոկալով 'ի նմա 'ի տուէ և 'ի գիշերի, ընդ նմին և զպրակս Գործոց առաքելոցն. և Ճանաչող եղեալ ամենայն հոգեպատում և աստուածահրաշ բանիցն և նշանագործութեանց որ 'ի նմա, և զուարճացեալ ցնծայր և բերկրէր ընդ շահաբերսն հոգւոյ իւրոյ, մանաւանդ զի այնպիսի գանձուց հանդիպեալ եղև, յաղագս ունայն գոլոյն իւրոյ 'ի բարեաց յանցեալ ժամանակաց՝ խորին գիշեր զանցեալ իրս կենցաղոյս 'ի վերայ իւր համարելով, և ոչ այնուհետև իսկ յապաղէր 'ի բարեպաշտութեան հանդէս։

Կոչէր զոմն ծածուկ գաղտաբար 'ի գիշերի առ ինքն՝ կոյս մի հեզ և հմուտ աստուածային օրինացն, դուստր՝ խորհրդական սինկղիտոսի միոյ 'ի պատուաւորաց քաղաքին, և ցանկայր տենչմամբ ստուգել զիրս Ճշմարիտ հաւատոցն Քրիստոսի և պաշտամանցն ուսանել 'ի նմանէ, և քաղաքավարիլ առաջնորդութեամբ նորա յաստուածպաշտութեան. և նովաւ յառաջեալ 'ի գեղեցկագոյն խորհուրդն 'ի մկրտութիւն փութայր։ Եւ յարուցեալ 'ի մէջ գիշերի զանխալաբար յամենե-

1. Մի օր. ազգաւ փառաւք պարծելի երևելի։
2. Մի օր. զոհիցն և զձենմանց։
3. Մի օր. յորոյ միտս։

ցունց գայլին առ սուրբ քահանայապետն Կիւրղոս և հանդիպէին նմա. և նորա ընկալեալ զնոսա ուրախութեամբ մեծաւ, և խրատեալ զնոսա աստուածային պատուիրանաց և վարդապետեալ[1] զհաւատն Ճշմարտութեան, տեառնագրէր զնոսա քրիստոսական նշանաւն, և իսկոյն ընդ երախայսն կարգէր. և կատարել զսովորականն հրամայէր միում 'ի սարկաւագացն, որում անուն էր Ագապիոս։ Իսկ երանելի կոյսն այն յետ այնորիկ յաղօթս և 'ի պահս պարապեալ մոռանայր զհելլենական ցոփութեանցն կրթութիւնն. և ոչ ոք գիտէր զկոչումն ընծայութեան նորա[2] 'ի կեանս անմահ, բայց միայն առաքինութեան նորա մերձաւոր ներքինի մի, որում անուն նորա Ինդոս Ճանաչիւր. ազգաւ և տոհմիւ բարբարոս, թէպէտ և բարքն ոչ ըստ բարբարոսի, այլ և ամենայն արդարութեան ընդունակ։ Սա ոչ նմանապէս կուսին առ հաւատն ընթացաւ, այլ 'ի մարտիրոսութիւն ըղձալի տենչմամբ փութայր թեւակոխել։ Արդ իբրև երկաքանչիւրքն եկեալ հասանէին 'ի սահմանադրեալ կէտ պայմանի մկրտութեանն, և արժանայեալք օծման վերստին արքայութեանն, և որդեգրութեան Հօրն երկնաւորի, յարժանաւոր ձեռաց սրբոյ եպիսկոպոսապետին Կիւրղոսի, զերկնայինն ընկալեալ ըզպատուական մարգարիտն, և հասին հրաւիրմանց Հոգւոյն սրբոյ, ոչինչ աւելի գոլով քան զտասն ամաց տենչալի կուսին. քանզի հոգւով գիտութեան պարփակեալ ամրացոյց զինքն անարատ մաքրութեամբ երանելին այն, հեռացեալ յամենայն զգալի տարբերութեանն զբօսանաց. և 'ի բաց կացեալ 'ի մնոտի և 'ի պատիր խաբէութեանց ստորաքարշ յաւիտենիս այսորիկ, իմանալի կենաց հացին և աստուածային բանիցն միայն պարապելով, թէ որպէս եկեալ հասեալ գործն 'ի կատարումն հասանիցէ։ Արդ երբեմն առեալ 'ի ձեռս իւր երանելին զաստուածային մատեանն Գործոց առաքելոցն, և յընթեռնուլն վերայ հասեալ վաղվաղակի բանին այնմիկ, յորում աշակերտեալքն

1. Մի օր. վարդապետութեամբ պայր նոցա զնոսա։

2. Մի օր. զկոչումն նորա։

առաքելական քարոզութեանն վաճառելով զինչս և զստացուածս բերէին դնէին առ ոտս առաքելոցն զքըսակ արծաթոյն առ 'ի բաշխել զայն կարօտելոցն. և զայս բարեաց յիշատակարան 'ի միտ առեալ ցանկալին կուսից, և որչափ ունէր արծաթեղէն և ոսկեղէն կահ սպասուց և հանդերձս պատուականս՝ ժողովեալ և իւրոց ծառայիցն բարձեալ, գնաց 'ի գիշերի առ Երանելին Կիւրղոս, աղաչէր զնա մեծաւ պաղատանօք ընդունել զայնոսիկ, և ձեռօք իւրովք բաշխել աղքատաց. և զայն ոչ ոք իմացեալ՝ դարձեալ յիւր սովորական առագաստն դառնայր։

Ցայնժամ և սուրբն Կիւրղոս՝ ըստ հոգևոր երկանց վերստին ծննդեան հոգևոր աւազանին հայր նորա՝ լքանելով զերկրաւոր կենցաղս առ երկնաւոր հայրն հասարակաց գնացեալ լինէր, որ և բաղում և հրաշալի նշանք 'ի վաղճանի նորա երևեալ լինէին ամենայն տեսողացն։ Իսկ Երանելի կոյսն կնքեալ պահէր 'ի սրտի իւրում զամենայն դաշինս արդարութեան ճշմարիտ քահանայապետին, առաքինութեան նորին նմանող լեալ. նաև Ինդոս ընդ նմին զանձն պահօք մաշեալ. առ երեկոյսն էր կերակուր նոցա հաց և ջուր միայն, և զամենայն դարմանս պիտոյիցն՝ զոր 'ի Թագաւորական ապարանիցն մատակարարէր առ նոսա, յաղքատս ծախէին. այսպէս առնելով զօրհանապազ, բնաւ ոչ ումեք յայտնելով զկրս՝ ծածկելով յամենեցունց։

Բայց ոչ է պարտ և պատշաճ քաղաքի որ 'ի վերայ լերին՝ թաքչել, և ոչ լուսափայլ ճրագի դնել ընդ գըրուանաւ, կամ աստուածային գանձուցն անյայտաբար ծածկիլ ընդ հողով. անտուստ ուրեմն չարադև արանց մախացեալ ընդ բարի գործս նոցա, հետամուտ եղեալ իրին այնմիկ վերաբերէին զբանն ճառելով մի ըստ միոջէ զամենայն 'ի յունկնմեծի մատակարարին, որ կարգեալ էր 'ի վերայ արքունական պալատանն և գերդաստանաց ինքնակալին։ Զոր լուեալ՝ տանջանս ոչ սակաւս ած 'ի վերայ նոցա և գանս բազումս հասուցանէր, թէ կարգեալքն ձեզ 'ի թագաւորական ապարանիցն՝ որպէս վատնին կամ յինչպէտս ծախին։ Եւ նոքա ոչ յայտնէին զըղձալի գիւ-

տրս հոգևոր շահիցն, այլ մեծաւ համբերութեամբ կային մնային հաստատուն 'ի ջանս նահատակութեանն, զի մի մարդասիրութեանն հասումնն որ առ կարօտեալսն էր՝ խափանեսցի։ Բայց մի ոմն 'ի նեղբինեաց անտի առ իշխանն մատուցեալ՝ զմեծ և զգովելի գործս առաքինութեան նոցա իբրև զպարսաւանս ինչ պատմէր. Մաքուր են, ասէ, և 'ի կերակրոց 'ի բաց կացեալք և հրաժարեալք 'ի հեշտութենէ, և տառապանօք իմն ձնշեալ մաշեն զանձինս. և ամենայն ինչ որ յարքայէ առատատրեալ պարգևք 'ի դոսա հասանեն՝ հակառակորդաց աստուածոյն կերակուր լինին. և եթէ կամիցիս իմանալ ճշմարտութեամբ, բաց զշտեմարանս նոցա և տես թէ զինչ 'ի նոցանէ ունիցին։ Եւ մտադիր յօժարութեամբ լուեալ իշխանին յանօրէն յառնէն յայնմանէ, և վաղվաղակի հրամայէր բանալ զսենեակ սպասուց նոցա, և ոչինչ գտեալ 'ի նմա բայց զնշան տէրունական խաչին, և զմատեան սրբոյ առաքելոյն Պաւղոսի զչորեքտասան թղթոցն, ընդ նոսին և զգիրս Գործոց առաքելոցն, և բուրուառ և ճրագ և փայտեղէն փոքր ինչ տապանակ՝ յորում զնշխար սուրբ հացին շտեմարանեալ պահէին, զառանց աւետարանաց կերակուրն, յորմէ հաղորդեալք լինէին, և երկուս ձորձս շարամանեալս 'ի խոտոյ զոր մերկ 'ի վերայ տրամ գետնոյն եդեալ լինէին, և այն էին պատուասէր անկողինք Դոմնայի և Ինդոսի, աղնուականացն և ճշմարտասէր երանելեացն։ Արդ հարցանէր զնոսա իշխանն ցասմամբ և ասէր. Ո՞ւր է ոսկին մաքուր զարդուցն, և հանդերձքն ձեր պատուական գանագոյնք և անօթքն երևելիք։ Իսկ երանելիքն ոչ ինչ փոյթ առնէին հարցման նորա, և ոչինչ տային ամենևին պատասխանի, այլ գլխակորեալք ընդ երկիր նայէին լռելեայն, և 'ի սիրտս իւրեանց գոհանալով զՏեառնէ աղօթս մատուցանէին, ակն ունելով երկնաւոր վարձուցն և անանց բարութեանցն։ Իսկ 'ի նմին ժամու արքանեակ չարին մատնէր զնոսա 'ի չարչարանս, հարկանելով զմարմին նոցա ջալոտիւք, և արկանէր 'ի բանդ մի խաւարչտին, մինչև ծանուցէ զամենայն իրսն ստուգութեամբ թագաւորին։ Եւ նոցա այնպէս կալով 'ի կապարանին զաւուրս բազումս, և

միայն կենդանի հայն էր նոցա կերակուր և աստուա-
ծային շնորհն էր նոցա ըմպելի. և այնչափ աշխա-
տեալք լինէին՝ իբր զի ոչ էր հնար հաղորդել նոցա
հացի կամ ջրոյ, զի դառն և խաւար էր հրաման
անօրէն իշխանին 'ի վերայ բանդապանացն. քանզի
ասէր թէ փոխանակ այնորիկ զի նոքա զորովայնսն
քաղցիւ լցին, նոյնպէս որովայնքն մաշեսցին 'ի սովոյ,
և կիզեալք ՀՆՇեսցին 'ի տապոյ ծարաւոյ. և այնպիսի
դառն և անողորմ տանջանք 'ի վերայ վկայիցն Աստու-
ծոյ հասուցանէին՝ մինչ զի 'ի ցաւս հիւանդութեան
անկանելով կուսին, և ոչ ուստեք մխիթարութիւն
գտանել։ Նոյն ժամայն իսկ անդանօր ողորմութիւն
գթութեանցն Աստուծոյ հասանէր 'ի վերայ նոցա,
այն որ բանայ զձեռն իւր և լնու զամենեսեան կե-
րակրօք։

Եւ մինչդեռ 'ի հսկման գիշերին զսովորական աղօթ-
սըն կատարէին, երևեցան նոցա երկնային դասապե-
տութեանցն զինուորութիւնքն. յորմէ և 'ի փայլատակ-
մանց լուսոյն արեգակնակերպ ՀԱռագայթիցն՝ երե-
ւէին հիմունք բանդին. և ողջագուրեալք 'ի սրբոց
զուարթնոցն զօրացեալք կային յաղօթս, և սեղան լի
ամենայն բարութեամբ պատրաստեալ նոցա, և քա-
ջալերս տուեալ երանելի կուսին՝ վերացան յերկինս։
Իսկ նոցա հաղորդեալք յերկնային սեղանոյն՝ ոչինչ
յիշէին զանցելոց ժամանակաց վիշտս չարչարանացն,
զի փարատեալ մերժեցաւ 'ի նոցանէ ամենայն ներ-
հակք առաջնիկայիցն. զի թէպէտ և 'ի կապանս բան-
դին կէին[1] տրտմեալք, սակայն 'ի հեշտալի կերա-
կրոցն զուարճացեալք՝ հանապազօր երգէին զդաւ-
թեան նուագն ասելով. Որպէս 'ի ՀԱրպոյ պարարտու-
թենէ լցցի անձն իմ, և շրթամբք ցնծութեամբ օրհ-
նեայէ զքեզ բերան իմ։

Արդ յետ այսորիկ յաւուր միում հասեալ լինէր
անդ իշխանն գիտելով թէ պակասեալ լինին 'ի սովոյ,
զի այնպէս հաւանեցուցանել մարթասցէ զնոսա այնու։
Իսկ յորժամ տեսանէր զնոսա պայծառս և զուարթս
և բերկրեալս և խնդալիս երեսօք՝ հիանայր մեծաւ

1. Մի օր. էին։

զարմացմամբ, և յերկիւղի եղեալ՝ ցնդմամբ մտօք, յաստուածոցն կարծելով զեղեալ սքանչելիսն հրաշիցն [1] 'ի վերայ նոցա։ Եւ հրամայեաց այնուհետև կալ ինալ նոցա ըստ կամաց իւրեանց յանդորրութեան, և զպիտոյից նոցա զկարգս, զինչս և [2] զհանդերձս երեւելիս և զամենայն պէտս դարմանաց՝ ոչ նուազ քան զյառաջագունիցն շնորհէր նոցա։ Այլ կոյսն այն վասն անձին իւրոյ ոչ զիմիք ինչ փոյթ առնէր զայնցանէ և ոչ կարօտանայր, բայց վասն աղքատացն դասուց միայն հոգայր թէ որպէս կերակրեսցէ զնոսա և լցուսցէ զկարօտութիւն նոցա. յաղագս որոյ և զզարդս անձին իւրոյ 'ի բազում մասունս հատանելով բաշխէր աղքատաց, նա և աւուրս ոչ սակաւս անսուաղ կացեալ՝ ըզկերակուր իւր ընձեռէր աղքատաց. զոր տեսեալ և այլոցն ևս՝ բազմութիւնք 'ի դուրս նորա նստեալ դեգերէին. յայնժամ՝ 'ի տարակուսանս ըմբռնեալ ոչինչ ունելով պէտս 'ի լիութիւն բաւականին այնքան ժողովելոցն, ապա դարձեալ կրկին անգամ ձգեալ ըզձեռն իւր 'ի սապատակ զարդուց իւրոց, և զգօտին իւր զայն՝ որ ակամբք պատուականօք և մարգարտով յոյժ պայծառացեալ էր ոսկւով և արծաթով ընդելուզեալ, ժողովէր 'ի միասին ի ջուցանէր ընդ պատուհանն, և առաքէր առ Ագապիոս սարկաւագ, և աղաչէր վաճառել զայնոսիկ, և զգինս նոցա տալ կարօտելոց. և առ այնոսիկ թէ որչափ բազմութիւնք տնանկաց կերակրօք լցոյց՝ ոչ գոյ ասել։

Այլ քանզի ոչ էր պարտ այնպիսի մաքուր և անաղտ [3] կուսութեան և ամենայն առաքինութեան զհետ գնացելոյ անձին՝ շաղկապիլ ընդ պատրանս ցանկութեան մնոտի կենցաղոյս 'ի յարկս մեղաւորաց, կամ 'ի գաւիթս ամբարշտաց թագաւորաց բնակիլ, այլ 'ի վերուստ 'ի հայրաշարժ այս ինչ տնօրինեցաւ 'ի միտս երանելւոյն. զմտաւ ածէր զաստուածահօրն զմեծի մարգարէին Դաւթի զխորհրդական հանդէսն, 'ի ժամանակի յորում փախուցեալ էր 'ի Սաւուղայ, թէ որպէս այլայլեալ զդէմս իւր անզգայապէս արտա-

1. Մի օր. հրաշալեացն։
2. Մի օր. զկերդս զինչս ի իսկ։
3. Մի օր. անաղարտ։

խելեաց նմանեալ՝ յափսիթերս խաղայր, և այնպէս 'ի Ճշմարիտ անդգամաց 'ի բաց Ճողոպրեալ եղև և առ գյաղթութիւնն մեծ։ Նոյնպէս և սա զկամաւորական և զմարտիրոսական կիրս յանձին ստացեալ բերէր, և զչքնաղ գեղեցկութիւն պատկերին իւրոյ անշքացուցեալ յաչս տեսողացն. զի 'ի ձեռն այնր՝ հնար լիցի զերծանել նորա յանդգամացն պակշոտութենէ, զի ամբիծ և անարատ ելցէ յառագաստ վերին հարմնաբանին. յանկարծակի ելանէր 'ի կերպարանս անդգայից շրջշրջէր զաչս իւր, թօթափէր զարտեւանունս իւր, թողացուցանէր զտողունս 'ի վերայ պարանոցին, փրփրէր և անյայտ ձայնս արձակէր, երբեմն զկական լալոյ բարձեալ և յանկարծակի բարկ ծիծաղելով և կրճտելով զատամունսն։ Զայս տեսեալ այնոցիկ որ յապարանս թագաւորին էին, զոմանս փաղաքշանք և զոմանս սխրացումն զարմացման պաշարէր, և դողումն և զարհուրումն ըմբռնէր զամենեսեան։ Զոր լուեալ մեծի հազարապետին՝ որ էր 'ի վերայ ամենայն կայսերական պալատանն, և առ աչս բերելով զեղեալսն՝ թուէր ցաւագնիլ նմա։ Քանզի և յայնժամ յաւէտ ուժգնակի վկայուհին այն սաստկագոյն երևեցուցանէր զախտն՝ յորժամ իշխանն զտեսութիւն աչացն առ նա տարածանէր. ուստի և յերկիւղի եղեալ, բազում պահապանս նմա կացուցանէր, զի մի ինչ վնաս չարեաց կրեսցէ, կամ 'ի վախից մղեալ քարավէժ լիցի. և էր այնուհետև ոչ սակաւ թաղծութիւն պահապանացն վասն նորա. անյայտ աղաղակէր և կոծէր զանձն առաջի նոցունց։ Յայնժամ մատուցեալ նոցա առ ներքինապետն, աղաչէին զնա յաւէժապէս առ քրիստոնեայսն արձակել զկոյսն, զի բազումք ասեն նման սմին զառածեալք 'ի մտաց՝ զառողջութիւն գտին։ Զայս ինչ նոքա վասն անձանց հայցէին, զի թերևս ազատեսցին 'ի ծառայութենէ նորա. այլ Աստուած ըստ կամաց նորա բերեալ՝ հաստատէր զայն որ ինչ կուսին իղձք ցանկութեան էին, զի զանխլացեալ լինէր բանն ըստ առասպելին. Զիոյ խիստերախի թոյլ տալ 'ի դաշտի, և զդելփին առ ջուրս ածեալ բռամբ։

Ունկնդիր եղեալ այսոյիկ իշխանն մտադիւրութեամբ, քանզի և նա կամէր ազատանալ և արձակիլ

'ի ցնորից որ յաղագս նորա էր, յայնժամ վաղվաղակի կոչէ զեպիսկոպոսն առ ինքն զսուրբն Անթիմոս, որ էր յայնժամ 'ի Նիկոմիդացւոց եկեղեցին յետ Կիւրղի յառաջասացեալ քահանայապետին. և եկեալ նորա վաղվաղակի հոգւով ծանեաւ զկիրն՝ որ յաղագս կուսին, և թագուցեալ 'ի սրտի իւրում կայր լռելեայն։ Նոյնպէս և կուսին տեսեալ զքահանայապետն Աստուծոյ, ոչինչ անպատշաճ կամ մոլեկան ցուցանէր զանձն իւր, այլ յերեսաց սրբոյն խորշեալ հեզ և խաղաղական տեսութեամբ զգաստացեալ երևէր, որպէս զի զամենեսեան զարմանս ըմբռնեալ էր, հիացեալ թէ որչափ զօրութիւնս երևեցան յերեսս բարեպաշտին, որ զանզգաստացեալս 'ի զգաստութիւն փոխարկեաց։ Յայնժամ իշխանն մեծաւ աղերսանօք աղաչէր զեպիսկոպոսն առնուլ զկոյսն առ ինքն, ընդ նմա և զինդոս, և ինչս բազումս 'ի պէտս դարմանից նոցա, թերևս հնար լիցի, ասէ, բժշկութեան։ Իսկ նորա խնդութեամբ առեալ առաքեաց 'ի վանս կուսանացն, և որչափ խրախացեալք լինէին, և սիրով Հոգւոյն առլցեալ՝ զբնաւն ոչ գոյ ասել։

Ի սոյն ժամանակի յաղթութիւնքն Մաքսիմիանոսի ընդդէմ բարբարոսացն զկատարումն առնոյր և դառնայր 'ի մարտէ պատերազմացն ուրախութեամբ մեծաւ. և ոչ տնկէր 'ի սիրտ նորա ճանապարհ ճշմարտութեան օրինացն Աստուծոյ՝ խնդրել իմանալ և ճանաչել եթէ 'ի ձեռն նորա ուղղին այսոքիկ, զի նա դիցն օգնականութեամբ մակադրէր զյաղթութիւն։ Վասն որոյ աստուածոց իւրոց զոհս ձօնմանց կատարելով, և զարդարելով զմեհեանս նոցա, ձիրս պատուոյ բաշխէր քրմացն. և 'ի խորամանկ խորհուրդս մտեալ չարին յորդորմամբ, պարուրեալ պատրանօք ջանայր հնազանդեցուցանել զամենեսեան անաստուած պաշտամանցն այնոցիկ և չարասէր կրօնիցն։ Յայնժամ և 'ի ստադիոն ասպարիսին տեսարանս խնջոյից յօրինէր. և պատուէր հրամանի ելանէր 'ի նմանէ, գալ հաստանել ամենեցուն 'ի հանդէս խաղուցն։ Այնուհետև ժողովէին անթիւ բազմութիւնք 'ի տեսարանն ձիրնթաց կառամարտկացն. և իբրև լցեալ եղև բազմութեամբ մարդկան թէատրոնն, և հասանէին անյա-

պաղ փութով 'ի ժամադրեալ կէտ կոչմանն։ Յայն-
ժամ անօրէնն Մաքսիմիանոս 'ի նանիր և չար խորհրդ-
դով լցեալ՝ հրամայէր քրմապետացն զամենայն սուտ-
անուն դիս աստուածոցն զոսկեղէնս և արծաթեղէնս
բերել 'ի տեսարանն, և զարդարէր զնոսա պէսպէս և
հրաշազան պայծառութեամբ, և նախադրէր զնոսա
'ի վերայ թագաւորական գահոյիցն. և հրամայէր ա-
մենեցուն երկրպագութիւն մատուցանել նոցա ընդ-
ինքեան, և զպաշտօնեայս աստուածոցն պակէր ոս-
տովք ձիթենեաց և եսթեմիական շոնիւք, և ցուլս
և զուարակս զենուլ. առնէր տօն աստուածոցն և աս-
տուածուհեացն զօրն զայն, և զարիւն զոհիցն հրա-
մայէր պաշտօնէից զոհիցն և մեհենացն՝ սրսկել 'ի վե-
րայ ամենայն զօրականացն։ Իսկ պաշտօնեայք Ճշմար-
տութեանն որք աներկեւան սրտիւ ունէին զհաւատս
քրիստոնէութեան՝ ոչ հանդուրժէին չարին, 'ի բաց
երթային 'ի տեսարանէն, լաւ համարելով զմահ ան-
ձանց քան զշաղախիլ արեամբ անաստուած զոհիցն։

Յայնժամ ամպարիշտն Մաքսիմիանոս սկսաւ 'ի մէջ
հրապարակին առաջի բազմամբոխ ժողովոյն բարձր
բարբառով խօսել բանս հպարտս և ասել այսպէս.
Ո՛վ արք քաջք և ծերակոյտ իմաստունք, և երևելիք
'ի մէջ Յունաց և Հռովմայեցւոց նահանգիս, որք ստոր-
անկեալ էք ընդ իմով ինքնակալ և անպարտելի թա-
գաւորութեամբս. ընդէ՞ր զլոյսն ստեղծանէք խաւար,
և նախապատիւ զստութիւնն դնէք, և գեր 'ի վերոյ
համարիք քան զըղձալի պաշտամունս մեր։ Եւ 'ի միտս
անկեալ ոմանց ոչ գոլ զսոսա աստուածս կարծելով,
որոց բոլոր աշխարհի խնամարկութիւնք[1] կառավարին։
Ո՞չ տեսանէք զբազմութիւն բարութեանցն յամե-
նայնի մթերեալս առ մեզ. ո՞չ տեսանէք զյաղթու-
թիւն[2] և զնշանս որ 'ի նոցանէ առ մեզ մատակարա-
րին. և թէ ո՛րպէս օրէնք գեղեցկագոյնք և զգուշա-
գոյնք պահին առ մեզ։ Ո՞չ իմանայք զաՃու

զօրու-
թեան մերոյ օր ըստ օրէ. զի այնոցիկ որոց յառաջա-
գոյն տեարքք ոչ էաք[3], այժմիկ իշխեմք նոցա. ո՞չ փառք

1. Մի օր. խնամակալութիւնք։
2. Մի օր. ղյաղթութիւնս։
3. Մի օր. որ յառաջագոյն պէտք ոչ էաք։

մեր բարձրացան. ոչ թագաւորութիւնս մեր անդորրեցաւ յամենայն վրդովմանց. ոչ զքաղաքս ոմանս ընդ հարկաւ արարեալ և զայլս տակաւին առաջի եդեալ ըմբռնեալ և հնազանդեցուցեալ. ոչ ապաքէն ամենայն զօրաւորք երկրի կորացուցին զպարանոցս իւրեանց 'ի ներքոյ գաւազանաց մերոց, և ընծայաբեր եղեն մեզ. և ամենայն ըստ կամաց մտաց մերոց յարդարեցաւ եկաց հաստատութեամբ։ Ոչ՝ արդեօք նախախնամութեամբ այսոքիկ կառավարին, եթէ ոչ ամենաշնորհ և անմահ աստուածոյ մերոյ ակնկալութեամբ, յորոց հրամանէ հուր և ջուր, լոյս և խաւար, ամպք և փայլատակմունք, կաճառք աստեղաց և լուսաւորաց շարժմունք՝ ըստ կամաց մերոց զընթացս կատարեն։ Հաւանեցուցին զձեզ ժամանակացս բարեխառնութիւնք, անձրևաց բարեխառն չափաւորութիւնք, պտղոց առատութիւնք, ընդարձակութիւն ալեաց, ծովու ցածութիւն. զորս քնաւ ոչ ոք կարէ ճառել զբարեացն ձիրս՝ որ պարգևին մեզ յանմահից աստուածոց մերոց, 'ի լիութիւն բաւականին. որ յայսպիսեաց և յայսոցիկ բարեպաշտութեանց շնորհողաց պարտ է զոհս և երկրպագութիւնս ընծայիւք մատուցանել։

Եւ յայսպիսի մահաշունչ նորա դիւաբնակ բերանոյն հուր բորբոքեալ պատրէր զմիտս ամենեցուն. և տակաւին ևս յայլ իրս հայթայթանաց մտաբերէր, զոր ոչ ներէր 'ի վերուստ արդար դատաստան Ճշմարտին Աստուծոյ, զի մի՛ այլոց դիւրափոփոխից և ծուլացելոց կորստեան առիթ լինիցին։ Այլ մինչդեռ թիւնալից բանքն 'ի բերան ամպարշտին կայր, յանկարծակի եղև թնդիւն որոտմանց, փայլատակունք հրոյ 'ի մրրկեալ ամպոց թօթափէին, և մասն ինչ քաղաքին և մեհեան կռոցն կիզեալ եղեն. և խաւար խորին միանգամայն երևէր, և կարկուտ ահեղ հանդերձ հողմով յոյժ և զարհուրեալ՝ 'ի միգապատութենէն[1] արտաքս հոսէր. և ծովածաւալ հեղեղայն յարձակմունք զամենայն սահմանս արտավարացն հանդերձ պտղովքն՝ ծովուն աւանդեաց, դեռ ևս կամէր զամենեսեան 'ի միջոյ 'ի բաց բառնալ. յորմէ յահեղ սպառ-

1. Ցօր. 'ի մգապատմութենէն. Թերևս՝ 'ի մգապատ մթութենէն։

նալեացն որ յԱստուծոյ՝ ընդ միմեանս խառնեալ բազմութեանն, ընթադրելով զմիմեանս՝ բազումք դիաթաւալք յերկիր անկեալ մեռանէին. և ինքն ամպարիշտ թագաւորն փոքր միս[1] ևս ընդ նոցունց կորուսեալ լինէր, եթէ ոչ առ 'ի յԱստուծոյ պատուհասն այն նման նուազ համարեալ լինէր։ Զայսպիսի անակնունելի դատաստան 'ի դիպուածս պատուհասիցն տեսեալ չարաբաստն այն և անօրէն իշխան, ոչ մի ինչ զեղջ բերելով կամ զարհուրումն երկիւղիցն՝ տակաւին կայր և մնայր 'ի նմին յամառութեան։

Յետ այսորիկ նստէր յատեան և հրամայէր ածել զորս յաստուածպաշտութեան գտեալք լինէին, և արդար արեամբ անարատիցն կամէր ցածուցանել զսրբոտմտութիւն սրտի իւրոյ. հարցանէր և վասն Դոմնայի և Ինդոսի և զայլոց ոմանց, զի ոչ երևէին յատենի։ Եւ իբրև լուաւ 'ի նեղքինապետէն, թէ Դոմնա անկեալ է 'ի զգայութենէ, և այժմ առ այնոսիկ է որ զայնպիսիսն գիտեն բժշկել, և ընդ նմա է Ինդոս 'ի պահպանութիւն և 'ի սպասաւորութիւն պաշտամանն նորա։ Իբրև լուաւ զբանս զայսոսիկ թագաւորն՝ բորբոքեալ ցասմամբ թախիծ սրտին բերելով, մեծաձայն աղաղակելով ասէր. Ո՛վ անիրաւ դու և չարագոյնդ 'ի մարդիկ, Դոմնա այսահարեալ, ընդէ՞ր հեռացուցեր 'ի բարերարութենէ աստուածոյն և զԻնդոս պաշտօնեայ աստուածուհեացն, զոր դու անապատս 'ի պաշտամանէ[2] արարեր. երդուեալ 'ի զօրութիւն անմահիցն, զի ոչ անցցէ 'ի քէն յանդգնութեան իրաւունս։ Եւ զայս ասացեալ՝ ոչ յապաղեր, այլ վաղվաղակի հրամայէր լուծանել զգօտի նորա ընդելուզեալն ակամբք և մարգարտով, առնուլ և զայլ ամենայն իշխանական պատիւն՝ զոր զգեցեալն էր, և մերկ խայտառակ շրջեցուցանել ընդ ամենայն հրապարակս քաղաքին, և արկանել 'ի բանդ մինչև անդէն սատակեսցի 'ի կենաց։ Եւ ապա հրամայէր զԻնդոս ածել զառաջեաւ, և վերըստին կարգել զնա 'ի պաշտօն աստուածուհեացն։ Իսկ նա 'ի խորոց սրտին պահէր զաւանդն բարեպաշտութեան, այլ և զբազումս 'ի մոլորելոցն 'ի մտոտի

1. Մի օր. ֆոքր ինչ ընդ նոցունց։ 2. Մի օր. 'ի պաշարմանէ։

պաշտամունս կռոցն՝ ածէր միւսանգամ 'ի գիտութիւն ճշմարտութեան։

Բայց ամպարիշտն Մաքսիմիանոս՝ ոչ հանդուրժէր զսրբազան կրօնիցն ներուումն ինչ ողորմութեան 'ի լսելիս թողուլ, և յայտ ընդդէմ քրիստոսական հաւատոց մարտ եդեալ ցասմամբ չարին՝ զտաճար սրբոցն այրէր, և զմեհեանս դիւաձոյլ պատկերացն շինէր, և պատուէր հրամանի տայր իւրոց զօրականացն զբմբռնեալ քրիստոնեայսն ածել 'ի մէջ. քարոզ կարդայր ընդ ամենայն տեղիս իշխանութեան նորա. Եթէ ոք ասէ՝ ոչ պաշտեմ զԱստուած ինքնակալացն, տաբրագիր ելցէ 'ի կենացս, և ինչք և ստացուածք այնպիսոյն յարքունիս եկեսցեն։ Արձակէր և դատաւորս անողորմիս և վայրենամիտս կողմնակալս որ 'ի բացեայ էին, և սաստիկ սպառնալեօք օրէնս դնէր նոցա, զի ուր և գտցի ոք Նազովրեցւոյն հաւանեալ և ապստամբեալ յաստուածոցն՝ անողորմ և դառն տանջանօք զրաւեսցին 'ի կենացս։ Եւս առաւել, ասէ, զառաջնորդս չար աղանդոյ նոցա Եթէ գտանիցեն ուրեք՝ երկաթեղէն կապանօք առ իս առաքեսջիք, զի ես զարժան վրիժուց դիցն անարգանացն խնդրել մարթացից։ Եւ այսպիսի կատաղի զայրացմամբ և ահագին տագնապաւ սաստիւք զամենայն առ հասարակ դողացուցանէր։

Յայնմ ժամանակի 'ի խոյզ անկեալ քննայոյզ լինէր վասն սրբոյ եպիսկոպոսին Անթիմոսի, և բազում անգամ սուսերամերկ զինուք պատեալ զեկեղեցին ոչ գտանէին, քանզի խոյս տուեալ փախչէր յանապատ տեղիս, վասն անտեղի գործոց անօրինացն. զորս ոչ գտեալ 'ի տարակոյս անկեալ[1] ամբարիշտն, և թախծեալ վարանէր, և իբրև 'ի տապոյ ջերման տոչորէր կիզանող սրտմտութեամբ սրտին, եռանդմամբ արեանն ջերմութեան. քանզի 'ի մտի եդեալ էր ընդանհնարին տանջանօք արկանել զսուրբն Անթիմոս առաւել քան զամենեսեան. զի 'ի ձեռն նորին տանջանացն առաջնորդի ուսմանց աղանդոյն իւրեանց, ասէ, զարհուրեալք ամենեքեան եկեսցեն 'ի պաշտօն

1. Մի օր. 'ի պարակոսի անկեալ։

աստուածոյն և զմեզ անաշխատ արասցեն. մանաւանդ զի թաքոյց զչքնաղագեղն Դոմնա, հեռացուցեալ զնա յապարանից առագաստէ իմմէ. կարծեմ թէ հրապուրեաց և զնա, կցորդակից կրօնից իւրոց արար։

Իսկ յորժամ այս յոյզ քննութեան դադարէր, և ոչ կարացին գտանել զսուրբն Աստուծոյ, յայնժամ յայլ ևս խորհուրդ մտաբերէր հնարագիտութեամբ բանսարկուին, և զկատաղութիւն զայրացմանն ցածնուլ 'ի բարկութենէն, և զվաղակաւոր 'ի պատեանս իւր ամփոփել խոստանայր, և զուարթ երեսս ամենայն հրապարակին ցուցանէր. պատուիրակս հանէր, բարիս խոստանալ քարոզէր, զսրտմտութիւն բարկութեանն 'ի քաղցրութիւն շրջեալ մակադրէր. թերևս երևեսցին, ասէ, յայտնապէս աներկիւղ լեալ յիմմէ պատուհասիցս, ապա միահաղոյն 'ի վարմ իմ ժողովեալ բարձից յերկրէ զյիշատակս նոցա, զի բնաւ մի երևեսցի անուն նոցա 'ի մէջ Յունաց. և այսուիկ մեծափառ դիքն մեր շնորհս բարեաց մեզ հատուսցեն։ Ա.յսպիսի խարդաւանող և կեղծաւոր խորհրդովք պատրէր զամենեսեան. և այնուհետև բազմութիւն քրիստոնէիցն 'ի համբաւ չարիմացին այնորիկ խաբեալք, աներկիւղ համարձակութեամբ 'ի մի վայր ժողովէին, և յայտնապէս կամայորդոր սրտիւք կատարէին զպաշտօն աղօթիցն։

Ա.րդ յաւուր միում յերևելոջ միահամուռ ամենայն հաւատացելոց բազմութիւնն որք 'ի Նիկոմիդա և որք շուրջ 'ի շէնս գաւառին բնակեալ էին՝ միաբանեալ ամենեքեան գային 'ի կաթողիկէ եկեղեցին, զսովորական աղօթսն կատարել. զոր զգացեալ Թագաւորն՝ զօրօք իւրովք վառեալ հասանէր 'ի դրունս տաճարին Աստուծոյ, և աթոռս արկեալ և բեմքս բարձրագոյնս կազմեալ նստէր 'ի վերայ նորա, և բազմութիւն զօրացն սպառազինեալք անշշունչ կային առաջի նորա։ Յայնժամ խօսել սկսաւ Թագաւորն և ասէ ցժողովեալ բազմութիւնն. Ա.նպարտելի և բարեբաստագոյն ինքնակալութեան իմոյ ներուսն մարդասիրութեան՝ յամենայն իրս աստուածոյն նմանեալ լինի. զի և առ բարբարոս Թագաւորսն, որ զլուծ

հարկաւորութեան մերոյ դժուարըմբերելի համարին, և Հռովմայեցւոց տէրութեանս ոչ հնազանդին, ոչ վաղվաղակի զնիզակ 'ի զինուց իմոց շարժեմ, և ոչ նետս 'ի պատկանդարանաց 'ի կիր արկանեմ, և ոչ 'ի ձեռն սուսերաց բարձրացուցանեմ զբազուկս իմ 'ի վերայ նոցա, և ոչ վատնեմ զնոսա փութանակի վահանապատ պատնիշք. այլ հանձարեղ և իմաստուն բժշկաց նմանեալ՝ զբարին ողջակեան խոստմամբ կակղացուցանեմ, և սպեղանիս արկանեմ 'ի վերայ վերացն՝ զմարդասիրութիւնն. իսկ յորժամ տեսանեմ կարեվէր խոցեալ և 'ի խորոյ թաքուցեալ զվէրն՝ խաբանօք խստագունիւք հատանեմք, 'ի վերայ արկանեմք զկարծրագոյն զդեղն և զծանր ըմպելին. և ոչինչ նեղումն ողորմութեան դտցեն այնպիսիքն 'ի մէջ մարդկան։ Վասն որոյ ասեմ ձեզ և աղաչեմ, մի՛ ևս եղիցի ձեզ փորձ առնուլ զիմոյ խուսվութեանց և անտերելի բարկութեանց, այլ մատուցեալ փութասջիք զոհել մեծամեծ աստուածոյն, զի և 'ի մէնջ զհաշտութիւն գտջիք, և պարգևեցից ձեզ բազում մեծութիւնս պարգևաց, և պատիւս երևելի մեծութեանց, և թեթևացուցից 'ի ձէնջ զամենայն սակս հարկաց, և համապատիւս ինձ լիցիք։ Զի եթէ բարբարոսաց և այլալեզուաց ազգաց այնչափ մեծութիւն բարութեանց 'ի մէնջ պարգևին, ո՞րչափ ևս առաւել ձեզ որ Հռովմայեցւոց օրինօքն էք մնեալ և վարժեալ, և հելլենական իմաստութեամբ և հանձարովք խրատեալք։ Այդ մի՛ պատերազմիք ընդ ձերում թագաւորութեանս, զի մի՛ արտաքս անկանիցիք 'ի տանց, 'ի ստացուածոց և 'ի ճոխաձիր քաղցրութենէս։ Ի բաց կացէք այսուհետև յաղտեղի կրօնիցդ. ապա եթէ ոչ՝ զայս գիտասջիք, զի իրաւունք դատաստանի իմոյ ոչ հեռի են 'ի ձէնջ. տեսէք զտունս զայս յոր յուսացեալ էք, հրոյ աւանդեմ զտա, և զձեզ միանգամայն ընդ նմին կորուսանեմ։

Այսպէս ամբարիշտն Մաքսիմիանոս ահագին որոտմամբ և չարաչար սպառնալեօք և թիւնալի մահ բաշխէր յամենեցուն լսելիս. և խեթիւ հայէր յամենայն դասս քրիստոնէից ժողովոյն։ Յայնժամ շարժեալ 'ի Հոգւոյն սրբոյ իմաստախոհն այն երիցս երանեալ քահանայն Գ.ղերիկոս համաշխարհական եկեղեցւոյն որ

'ի Նիկոմիդա, յառաջ մատուցեալ ձեռներէց լինէր յատենին, և բարձրագոյն բարբառով համառօտագոյն առնէր զբանիցն պատասխանիս՝ ասելով. Գիտութիւն լիցի քեզ, ով արքայ, զի ոչ խոստմանց և պարգևաց քոց հաւանիմք և ոչ 'ի սպառնալեաց քոց երկնչիմք, զի ունիմք քաջալերիչ զնախաձայնութիւն պատուիրանի փրկչին մերոյ՝ որ ասէ. Մի՛ երկնչիք'ի սպանանելոյ զմարմին, և յոչ կարողաց սպանանելոյ զոգին. զի բարութեամբդ որով կամիս պատրել զմիտս մեր և հանել զմեզ յայն բարութեանցն՝ զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց, և որով սպառնաս հրկէզ առնել զմարմինս մեր, յաննեղելի տանջանացն կամիս բուժել զմեզ, և անցուցանել անկիզելի ընդ յորդահոսանս հրեղէն գետոցն առ նաւահանգիստն մեր Քրիստոս. զի ոչ են արժանի չարչարանք ժամանակիս հանդերձելոց փառացն որ յայտնելոցն է. և զամենայն զփառս և զպատիւս ժամանակիս իբրև զստուերս և զկղկղանս երազու համարիմք։ Զի 'ի զուր և 'ի նանիր խռովեալ ես, և կափուցեալ զաչս իմանալի հոգւոյդ. զիաՀրդ ոչ իմանաս զօգուտն քո, և կամ ընդէ՞ր ոչ ճանաչես զարարիչն ամենեցուն և զտուիչն քեզ զիշխանութիւնդ. զի յաղթութիւնդ քո որով ամբարհաւաճեալ պարծիս մնոտի և աղբեղէն փառօքդ՝ որով գեր 'ի վերոյ կարծես լինել բազմաց զքեզ, յետ սակաւ աւուրց 'ի կանանց և 'ի մանկանց շարաբառնի 'ի քէն 'ի մերոյ իսկ նահանգիս. զի նանրութեան նմանեալ են կեանք քո, և պայծառութիւն քո ունայնութեամբ իջանէ 'ի դժոխս. և զարմանամք թէ զիաՀրդ այնքան տկարութեամբ իջանէ 'ի դժոխս զանգաճեալք[1], մարտ եդեալ ընդդէմ անպարտելի զօրութեան այնմ՝ որ յոչէից գոյացոյց զամենայն յաւիտեանքս, և կառավարէ զբնաւս բանիւ զօրութեամբ իւրով. և ինքն կայ և մնայ անշարժ հաստատութեամբ յիւրում անհամեմատ և անսփոփոխ բնութեանն, և դու ամպարիշտ մտօք ամբարտաւանեալ զապիրատութիւն'ի բարձունս խօսելով, զանզուգական անունն դիւաձոյլ պատկե-

1. Մի օր. զգոնգեալս։

ըացն կոչես, աստուածս և աստուածուհիս կարդալով զայնոսիկ՝ որ յանկարգ խառնակմանէ և 'ի չարասերմանց սանդարամետականին են առեալ զկերպարանս նմանութեան, զոր և աղտեղի է զամենայնն յայտնել, մանաւանդ զի բազում իսկ այն են՝ որ 'ի շանց և 'ի գազանաց կերպարանս են քանդակեալք. զի այնչափ կուրացոյց սատանայ զմիտս քո, մինչ զի արարիչ երկնի և երկրի կոչես զայնոսիկ, որ 'ի ձեռաց մարդկան կազմեալ են։ Եւ եդեր թշնամանս անմահ զօրութեանն Աստուծոյ միայնոյ և բոլորեցունց պատճառին. որ և բարձրացուցեր զեղջիւր քո, խօսել բանս անհանձարս զՄիածնէ նորա, և 'ի կարգս մեռելոց իջուցանել զանմահութիւն նորա, որ է կերպարան և կնիք և ծագումն անսահման էութեան առաքչին Հօր, և փառակից և էակից ամենազօր և համագոյ Հոգւոյն, որ կամաւոր մահուամբն ելոյծ զիշխանութիւն մահու, և հրաշագործ և սքանչելի յարութեամբն կենագործեաց զմահացեալսն մեղաք, և գայ միւսանգամ դատել զկենդանիս և զմեռեալս, և հատուցանէ արդարոցն բարեաց հատուցումն ըստ արդար վաստակոց նոցա, և զանսուրբսն և զչարագործսն որ իբրև զքեզդ իցեն, մատնեսցէ անանց և մշտնջենաւոր այրմանն անշէջ գեհենին որք ոչ ճանաչէք զնա, և ոչ սպասեալ ակն ունիք մեծի աւուր գալստեանն նորա. զի յակնարկելն մեր միայն առ արարիչն մեր, անյապաղ հասանեն սպառնալիք պատուհասիցն 'ի վերայ քո, ուստի ակն ոչ ունիցիս, զոր և դու յայսմ հետէ ոչ ես ճողոպրելոց 'ի ձեռաց Աստուծոյ կենդանւոյ։

Արդ զայս ամենայն և առաւել քան զսոյն խօսեցաւ երանելին Գրիգորիկոս առաջի Թագաւորին, և 'ի մէջ յոգնաժողով հրապարակին. ուստի և ներելով ունկն դնէր Թագաւորն, և ոչ կամէր առ ժամայն սաստիւք չարչարել զնա, ակն ունէր ողոքանօք ածել զնա 'ի հաւանութիւն, և նովաւ զբնաւ ժողովուրդն հաւատացելոց։ Քանզի ոչ ծագեաց յաստուածային բանից վարդապետութեանց երանելւոյն 'ի սիրտ ամպարշտին լոյս աստուածգիտութեան, և ահիւ մեծաւ պաշարեալ եղև 'ի վերին նախախնամութենէն. ոչ ձգեաց ձեռս առ նոսա, թէպէտ և ամենեքեան զանձինս 'ի

մահ եղեալ էին. այլ եւ գնաց լռելեայն 'ի տաճարէ անտի, և ամենայն ժողովուրդք հաւատացելոցն շնորհս բազումս ունէին Գղերիկոսի իմաստութեանն և աստուածախօս վարդապետութեանցն։

Այլ Մաքսիմիանոս ոչ ընդերկարէր զցասումն բարկութեան, այլ հրամայէր զինուորացն մտանել 'ի սուրբ եկեղեցին Աստուծոյ, և ունել զերանելին Գղերիկոս և արտաքս հանել. զոր բերեալ կացուցին առաջի թագաւորին, և ոչինչ հարցմանց արժանի արարեալ, հրամայէր տարածանել 'ի գետնի և դալար արջառաջլոք հարկանել յոյժ, մինչև վաստակեցան ձեռք դահճացն 'ի հարկանելն։ Իսկ նա զտանջանսն առ ոչինչ համարէր, այլ գոհանայր զՏեառնէ՝ վասն որոյ զչարչարանսն համբերելով կրէր։ Եւ իբրև սաստկացուցին ըզտանջանսն, և սկսան արբանեակքն սատանայի երկաթի եղնգամբ քերել զկողս նորա, և ջահս վառել 'ի վերայ մարմնոյն, որ և 'ի սաստկագոյն քերանացն աբիւնն առոգանէր զերկիրն. և նորա անշնչացեալ և պակասեալ 'ի ձայնէ, ոչ ևս կարէր շարժել զշրթունսն. և քարոզն 'ի հարկանելն այսպէս ասէր. Խնայեա 'ի լեզուդ քոյ, ով Գղերիկէ, և մի՛ լինիր ամբարհաւաճ և պաճուճաբան, և մի՛ խառնակեր զհանդէսս, պատուեա զՀռովմայեցւոց տէրութիւնս և մի՛ շփոթեր զաստեան ինքնակալացն, և մի՛ ընդդէմ Հելլենացւոց իմաստնոցն զայնոսիկ բարբառիր, որ ոչ վայել է։ Եւ այն պիսի բանիւք քարոզն զհրապարակն ընոյր. այլ ոչ տանջելոքն հաւանեցոյց և ոչ ողոքանօքն հնազանդեցոյց։ Իսկ երիցս երանելին 'ի հրապարակին գոչէր մեծաձայն և ասէր. Տէր Յիսուս, միածին որդի, ճառագայթ և կերպարան բարձրելոյ քո Հօր, վստահութիւն իմ և ուժգնութիւն, զօրացո զիս յամենայնի. զի 'ի ձեռն բազմագունակ չարչարանացս՝ բազմասցի առ իս բրաբիոն բարեաց հատուցմունքն ընդ ամենայն սուրբս քո։

Յայնժամ 'ի վերայ բանիցս այսոցիկ սրտմտեալ թագաւորն, ցասուցեալ սպասաւորացն՝ զի առաւելացուցեն զտանջանս սրբոյն։ Եւ նոքա ըստ հրամանի ամպարշտին այնչափ հարկանէին զմարմին նորա՝ մինչև անշնչոց նմանեալ եղէ, թափեալ մորթ մարմնոյն և

'ի յօդոյն փքանալով, և միսք մարմնոյն վատնեալ քանցէին 'ի ջլացն և պատառ պատառ յերկիր անկանէին, և ոսկերքք միայն սոսկ երևէին, մինչև զարմանալ ամենայն տեսարանին։ Իսկ երանելի նահատակն շարժելով միայն զշրթունսն՝ ասէր. Ծառայ եմ միայնոյն Աստուծոյ Թագաւորին յաւիտենից, զմի ևս Տէր որ ամբար զերկինս և զերկիր՝ զնա խոստովանիմ և 'ի նա յուսացեալ սպասեմ անձառ պարգևաց նորա. կռոցն ես ոչ զոհեմ, որ քան զշունսն ևս վատթարագոյնք են։ Իսկ ամպարշտին այնորիկ ոչ հանդուրժեալ համարձակութեան սրբոյն՝ լուծանել զնա 'ի կապանացն հրամայէր, և վճիռ կնքէր 'ի վերայ նորա զի արտաքոյ քաղաքին խաչեսցի, և մարմին նորա հրով մաշեսցի[1]։ Այդ առեալ դահճացն զնահատակն Քրիստոսի՝ քարշէին ընդ փողոցամէջ քաղաքին արտաքոյ դրանն 'ի տափարակ տեղւոջ, մերձ յեզը ծովուն ուր և զփայտն իսկ կանգնեցին. և նորա հայեցեալ ընդ արևելս՝ սկսաւ 'ի ծածուկ աղօթել, շրթանցն միայն շարժելով. և իբրև 'ի հարուստ ժամն աղօթէր՝ յայնժամ առաքեաց զամէնն, և ասէ ցդահիճսն. Եկայք կատարեցէք վաղվաղակի զհրամայեալսն ձեզ 'ի բրոնաւորէն։ Եւ ինքնին դիմեալ 'ի խաչն, տարածեալ զձեռս իւր՝ բևեռեցաւ 'ի վերայ նորա. և ապա սպասաւորքն սատանայի սաստկացուցանէին զհրատ բորբոքեալ բոցոյն 'ի ներքոյ նորա ժամն ինչ, և ողջակիզեալ զնա 'ի բարձրութեան խաչին, և նորա աղաղակեալ 'ի ձայն մեծ՝ ասէ. Տէր Յիսուս, ընկալ զոգի իմ 'ի հոտ անուշից, և խառնեա զիս 'ի թիւ որք սիրեցին զքեզ և զօր երևելոյ[2] գալստեանդ քո։ Եւ իսկոյն աւանդեաց զոգին։

Իսկ Ինդոս 'ի տուն ինչ խաւարչտին արգելեալ՝ զանձնն ողբայր և զկորուստն այնոցիկ որ զոհէին կռոց։ Յայնժամ և լուրն այն հասանէր յականջս թագաւորին, և հրամայեաց ածել զնա. և իսկոյն վաղվաղակի ածեալ կացուցին առաջի թագաւորին. և հրամայեաց ձեռս յետս կապել զնա և անուր երկաթի արկանել 'ի պարանոց նորա, և դնել զոտս նորա 'ի

1. Մի օր. այրեսցի... փողոցամէջն։ 2. Մի օր. երևելի։

կոչեցաւ, և արկանել 'ի բանդ խաւարչտին։ Եւ ինքն մեծաձայն 'ի խնդիր լինէր սրբոյ կուսին Դոմնայի, և պակշոտական յիմարութեամբ մաշէր 'ի միտս իւր վասն նորա, մոռացեալ զոր վասն նորա լուեալ էր, և ասէր. Ո՞ւր է Դոմնա Աբրահամայ և Աթենայ մեծափառիցն քահանայուհին. և նոյնժամայն 'ի պատուաւորաց պալատանն ծանուցանէին զեղեալ իրսն որ վասն Դոմնայի։ Եւ հրամայեաց հատանել զգլուխ նեղբինապետին, սակս հեռացուցանելոյ զԴոմնա յարքունական ապարանիցն։ Եւ զինուորս բազումս սպառազինեալս[1] առաքեաց 'ի վերայ մենաստանեաց կուսանացն, զի զԴոմնա գտեալ 'ի մէջ ածցեն. և զայն իմացեալ երանելւոյն՝ առնական զգեստիւք գաղտաբար խոյս տուեալ գնաց 'ի վանաց անտի։ Եւ իբրև ոչ գտին զկոյսն՝ մրմռեալ իբրև զգազանս արիւնարբուս, նախանձընդդէմ[2] ամենեցուն, խորհեցան և զայլս սրբուհիսն կուսանսն չարաչար քարշել և յանարգանս մատնել։ Իսկ նոցա փախուցեալք յայրս և 'ի ծերպս վիմաց, ընդ գազանս վայրենիս առնելով զբնակութիւնս իւրեանց. քանզի բազումք այնոքիկ էին որք անկան 'ի ձեռս դահճացն, զոր աներևոյթ զօրութիւն վերին խնամոցն, որպէս զհաւատն նոյնպէս զմաքրութիւնն անարատ պահեաց։

Արդ մի ոմն երևեալ 'ի մէջ սրբոցն անհամեմատ գեղեցկութեամբ և բարի վարուք զարդարեալ, որում անուն Թէոփիլա կոչէր, զսա տեսեալ գործունեայք չարին և պակշոտութեամբ յիմարեալք, և ընդ միմեանս խուճապեալք դասուց զինուորացն՝ մոլեկան ցանկութեամբ յափշտակէին զնա 'ի միջոյ քերցն, և բռնաբար վերամբարձեալ քարշանօք մուծանէին 'ի յարկս անօրինելոյն։ Եւ 'ի հռչակ համբաւոյ նորա կուտեցան 'ի տեղին յայն վաւաշոտ տուփանօք երիտասարդք քաղաքին։ Արդ մինչդեռ կայր նա արգելեալ յանարգութեան տեղւոջն յայնմիկ զաչս 'ի յերկինս համբարձեալ, մեծի նաւապետին ակնարկելով, հեղեալ զանձն իւր առաջի հզօրին զօրութեամբ, այնմ՝

1. Մի օր. սպառազինեաց։ 2. Մի օր. Նախանձեալ ընդդէմ ամենեցուն։

որ Եկն 'ի բառնալ զմեղս աշխարհի, և գոչէր ասելով. Տէր իմ և Աստուած իմ, Յիսուս փրկիչ իմ և կեցուցիչ, հայեաց 'ի պատրաստ բնակութենէ քումմէ յանարժան աղախին քո, և մի տար յապականութիւն զքո ժառանգութիւնս, և անաղտ և անարատ պահեա զառագաստ կուսութեանս, զի քեզ խոստացայ պահել զկուսութիւնս իմ անարատ արդարութեամբ։ Եւ արդ երևեցո զերեսս քո, ամբիծ և անապական փեսայդ երկնաւոր, և փութա յօգնել ինձ, և մի մատներ գաղանաց զխոստովանողս անուանդ քո, զի և անուն քո փառաւորեսցի 'ի մէջ բարբարոս և ամպարիշտ ազգաց. զի և ես արժանի եղէց անարատ մաքրութեամբ զընթացս իմ կատարել, և աչալրջութեամբ հանդիպել քումմ փառացդ, և հասանել մասին սրբոցն 'ի լոյս։

Զայսոսիկ հանդերձ արտասուօք պաղատանս մատուցանէր առ Աստուած երանելի կոյսն Թէոփիլա. և իբրև կատարեաց զաղօթսն, մի ոմն յամպարիշտ զօրացն սեղեխաբար վատթարեալ խորհրդով կամեցաւ մերձենալ 'ի նա. և յորժամ հուպ եղև՝ վաղվաղակի ըմբռնեաց զնա ահ և դողումն, լլկեալ 'ի չարէն, սկսաւ սասանել դողալ, և անկեալ յոտս Թէոփիլեայ անշնչանայր իբրև զմեռեալ. և իբրև ժամք բազումք անցին՝ 'ի դուրս ոչ ելանէր, այլ ոմն եմուտ 'ի ներքս և տեսանէր անՀաւ լոյս փայլատակեալ շուրջ զնովաւ, յորմէ 'ի նշողէին առժամայն խաւար եղև 'ի լուսոյ աչացն և ոչ կարէր ելանել ընդ դուռնն։ Իսկ որք արտաքոյ կային առ դուրսն ոչ գիտէին զեղեալսն, մտանէին և նոքա իմանալ զինչ եղև, և նովին պատուհասիւք և նոքա տանջեալք լինէին։ Յայնժամ ժողովքն 'ի միասին մտեալք տեսանէին ահագին իրս հրաշից, զի երանելի կոյսն նստէր լռելեայն առանձինն և ընթեռնոյր զաստուածային գիրսն զոր միշտ յինքեանն կրէր. և երիտասարդ մի կայր առաջի նորա լուսեղէն՝ յորոյ երեսացն փայլատակունք լուսոյ արձակէին։ Զայս իբրև տեսին՝ յերկիւղ մեծ եղեալք հազիւ ուրեմն Հողոպրեալք արտաքս ելանէին 'ի տանէն, ասելով. Մեծ է Աստուածն քրիստոնէից, և անյաղթ և անպարտելի է զօրութիւն նորա։ Եւ յայնմանէ բա-

զումբ հաւատացին 'ի Տէր և ուսան զաստուածպաշտութիւն։

Լու եղև յականջս Մաքսիմիանոսի՝ զի անշաղախ մնաց կոյսն 'ի զինուորացն, և կախարդութիւն զԱստուծոյ մեծապանչ զօրութիւնն համարէր և ասէր, թէ՝ չարիմաց կախարդասար աղանդիւք զայնոսիկ գոլծեն Գալիլեացիքն առ 'ի պատիր խաբէութիւն բազմաց։ Իսկ լուսատեսիլ երիտասարդն կալեալ զձեռանէ կուսին առաջնորդէր նմա անձառ լուսովն մինչև յեկեղեցին, և ասէր. Խաղաղութիւն ընդ քեզ. և ինքն յերկինս վերանայր։ Իսկ երանելին այն երկիւղալից խնդութեամբ պաշարեալ լինէր, զաչս 'ի յերկինս համբարձեալ գոհութիւն մատուցանէր Աստուծոյ մարդասիրին, որ փրկեաց զնա յամենայն մեքենայից սատանայի։ Իսկ բազմութիւնք ժողովոյն եկեալ 'ի մէջ գիշերին 'ի կաթողիկէ եկեղեցին կատարելով զսովորական աղօթսն, և տեսեալ զնա 'ի նեբքս՝ զարմանք կալաւ զամենեսեան. քանզի էր նա ազնուական ազգի ընտանի և ծանօթ բազմաց։ Իսկ նա պատմեաց զամենայն անցս չարչարանացն, եթէ ո՞րպէս զօրութեամբն Աստուծոյ յամենայնէ փրկեցաւ։ Արդ իբրև լուան զայս ամենայն բազմութիւն հաւատացելոցն՝ զձայնս իւրեանց առ Աստուած ամբարձին առ հասարակ, փառս 'ի բարձունս առաքէին արագահաս զօրութեանն Աստուծոյ, և աղբիւրս արտասուաց հեղուին ամենեքեան, մինչև գրեթէ թանալ զատակս սրբոյ տաճարին։ Իսկ սրբուհին Թէոփիլա ընկենոյր զինքն առաջի սրբոյ սեղանոյն Աստուծոյ, և արտօսրահեղձ[1] հառաչմամբ աղօթս մատուցանէր Ամենակալին, գոհանալով յաղագս փրկութեան անձին իւրոյ։

Բայց Մաքսիմիանոսի[2] չարագև գոլով՝ նման նմին պարտ էր լինել, և իւրոյ չար արբանեկացն չար և ս դժնդակ երևեալ, զբարեպաշտութիւն հաւատոցն հետաքրքիրք լեալ խնդրէին. և գտեալ չարին սպասաւորացն զՊորոթէոս, զայն որ փառօքն իսկ և քաղաքական գերագոյն լուսաւորութեամբ պայծառացեալ

1. Մի օր. արտօսրայեղէ։ 2. Մի օր. Մաքսիմիանոս... էրնէլ։

էր, և նախարար և հրամանատար 'ի վերայ ամենայն գործակալաց պալատանն, և զՄարդոնիոս իշխան երևելի, և զՄիգիդոնիոս նորին ընկերակից և զյառաջասացեալն Ինդոս, և զայլ ևս բազում հաւատացեալս 'ի Տէր, որք էին 'ի պատուաւոր իշխանաց արքունական դրանն։ Որոց 'ի ցասումն բարկութեան եկեալ անօրէնն Մաքսիմիանոս՝ ասէ. Երդուեալ յանմահ և յամենակալ աստուածն, զի ոչ խնայեցից 'ի ձեզ, այլ զամենայն տեսակ տանջանաց ածից 'ի վերայ ձերոյ ամբարշտութեանդ, և տաց զմարմինս ձեր գազանաց երկրի և թռչնոց երկնից, զի և այլք երկուցեալք ոչ օտարասցին 'ի պաշտամանէ աստուածոցն։ Եւ հրամայէր զգօտի նոցա վաղվաղակի լուծանել, և մերկ առնել զնոսա յիշխանական հանդերձից. և նոքա միաբանեալք միով հոգւով և միով բերանով աղաղակէին ասելով. Քրիստոնեայք եմք և ծառայք ամենակալին Աստուծոյ, արարողին զերկինս և զերկիր, և որք 'ի նոսա արարածք իցեն. և զամենայն պաշտամունս քո, ով թագաւոր, իբրև զաղբ անպիտան վարկանիմք և իբրև զերազք զարթուցելոցն։ Յայնժամ ևս առաւել 'ի չարութիւն սրտմտութեան բորբոքեալ թագաւորն Մաքսիմիանոս, հրամայեաց առասանօք զոտս և զձեռս նոցա պարաւանդելով տարածանել ի գետնի, և վայրենի մահակօք ընդ յերկար տանջել զնոսա. և դահիճքն շուրջ զնոքօք եղեալք 'ի վաղուէ աւուրն մինչև յերեկոյն՝ յանխնայ հարկանէին զնոսա, ոչ ինչ ամենևին խնայելով հասարակաց բնութեանս։ Արդ մինչ դեռևս կենդանի կային նոքա 'ի տանջանարանս չարչարանացն, հրաման տայր կապեալ ոտիւք և կապեալ ձեռօք արկանել 'ի բանդ, և անյագաբար սուր նորա Ձարակէր զամենեսեան։

Արդ քանզի պարտ էր մեծագունի և խորհրդականի տնօրինեցելոյ Բանին և ծնեցելոյն 'ի կուսէն ընծայաբերել զանձինս իւրեանց՝ որք 'ի նա հաւատացեալքն էին. քանզի մերձեալ էր տօն աստուածայայտնութեան փրկչին մերոյ և ընդ մեզ շրջեցելոյն[1] Աստուծոյ. յայնժամ սինկղիտոսն հանդերձ ամենայն

Epiphanie!

1. Մի օր. շրջելոյն...դասուն։

իշխանական դասուք և գնդօք զինուորացն՝ մատուցեալ առ Մաքսիմիանոս՝ ասէն. Թագաւոր, աւիտեան կեաց. քանզի Ձմմարտիւ գիտեմք զի հանապազ հոգ 'ի մտի եդեալ ինքնակալութեանդ քո բառնալ 'ի միջոյ զաղանդ մոտի յուսոյն Գալիլեացւոց, զի հաստատութեամբ անշարժ մնասցէ օրէնք Հռովմայեցւոցն, և առանց վատթարութեան անքակ եղիցի պաշտօն մեծափառ անմահիցդ բարերար աստուածոց մերոց։ Արդ եկեալ հասեալէ դիպող ժամադրութիւն վրէժխնդրութեան մերոյ 'ի նոցանէ, որ մարթ է ամենևին բառնալ 'ի միջոյ զանհանձար և զչար կրօն նոցա. զի այսօր է դերահռչակ գլուխ տօնից նոցա, իբրու առասպելաբանեն զաստուածն իւրեանց ծնանիլ 'ի կուսէ, զոր և արարիչ ինքեանց կարդան զնա և հանդիսաւոր կցուրդս տօնից կատարեն. ահաւասիկ 'ի մեծէ մինչև ցփոքունս ժողովեալ են 'ի մեծ եկեղեցին։ Եւ հաճոյ թուեցաւ բանս այս Մաքսիմիանոսի, և հրամայեաց ամենայն դասուց զինուորացն սպառազինութեամբ պատել զտաճարն Աստուծոյ շուրջանակաւ, և փակեալ զդուրսն սրբոյ եկեղեցւոյն, զի մի՛ ոք արտաքսս ելցէ 'ի բազմութենէն, և առաջի դրաց տաճարին հրամայեաց կանգնել զմեհեանս աստուածոց իւրոց. և քարոզն աղաղակէր և ասէր. Եթէ ոք կամեսցի ձոզոպրիլ 'ի տանջանաց և ապրիլ 'ի մահուանէ, ելեալ երկիր պաշտէ բարերար աստուածոց ինքնակալին. ապա եթէ ոչ կամիք հաւանել[1] կամաց նորա՝ կենդանւոյն հրոյ ճարակ եղիջիք ամենեքեան առ հասարակ, և մի՛ ոք զերծցի. զի այսպէս հրամայեաց քաջ արանց մեծն Մաքսիմիանոս։ Եւ իբրև բարձրաձայն աղաղակաւ բանքս այսոքիկ պատմեցաւ 'ի քարոզչացն, և նոյնժամայն գործն զկատարումն առնոյր։ Յայնժամ հրեշտակք թագաւորին մտեալ յեկեղեցին՝ մեծապէս գոչէին ասելով. Ինքնակալն առաքեաց զմեզ առ ձեզ, 'ի յայսցանէ երկոցունց ընտրել ձեզ, կամ ելանել զոհել աստուածոցն՝ որ պատրաստական կայ առ դուրս մեհեանն, կամ թէ անհաւան լինելով զամենեսին հրով կիզուլ. արդ զոր ախորժէք՝ ընտրե-

1. Մի օր. Հաղանդել։

ցէք վաղվաղակի, զի ոչ ներէ ձեզ ժամանակս այլ ինչ տալ պատասխանի։

Յայնժամ Երանելի սարկաւագապետն եկեղեցւոյն որում անուն էր Թէոփնաս՝ զօրացեալ 'ի շնորհաց Հոգւոյն, և կացեալ համարձակութեամբ 'ի վերայ բեմին մերձ աստուածայնոյ սեղանոյն, բացեալ զբերան իւր ասաց. Ահք եղբարք և հարք վերին Երուսաղէմի, գիտէք ամենեքին զի հանապազօր երգէաք զերգս Երից մանկանցն, և սքանչացեալ զարհուրէաք ընդ մեծահանդէս ինքնակամ յօժարութիւն նոցա որ 'ի մէջ հրոյն որպէս յառագաստի պարելով, զամենայն արարածս ընդ իւրեանս յօրհնութիւն հրաւիրելով բոլորիցն Աստուծոյ, զոր ոչ միայն երանէաք բանիւք, այլ և հաղորդել նոցունց սուրբ պսակացն ցանկայաք։ Ահդ քանզի եկեալ հասեալ է մեզ օր փրկութեան և ժամանակ ընդունելի, արդ վառեցարուք քաջարիապէս ամենեքին վասն անձուկ սիրոյն այնորիկ, որոյ արեամբն փրկեալ եղաք. փութացարուք, ով սիրելիք, մինչդեռ ժամանակս 'ի ձեռս է, իբրև զինուկս անոյշս մատուցանել զմեզ պատարագս անարատս գառինն այնմիկ[1], որ եկն բառնալ զմեղս աշխարհի։ Եւ վասն զի եկն ետհաս ժամանեաց մեզ օր աւետեաց՝ որում և ցանկացեալ էաք[2] ամենեքին, և դրունք երկնից բացեալ են մեզ այսօր, և աներևոյթ զօրութիւն մեծին Աստուծոյ կալով 'ի միջի ձերում, որպէս յերից մանկանցն, և պսակէ զամենեսին քաղցրութեամբ կամաք իւրովք, և ընդ ինքեան վերացուցանէ 'ի բնակութիւնս հրեղինաց վերին զուարթնոցն, առնելով 'ի մի հօտ և 'ի մի հովիւ։ Ահդ հաստատուն կացէք, միաբան և միախորհուրդ լերուք ամենեքեան, և անշարժ մնացէք 'ի վերայ վիմին հաստատնոյ՝ որոյ գլուխ անկեան ինքն է Քրիստոս. և մի դրդուեսցէ զձեզ մնոտի պատրանք կենցաղոյս, և մի զարհուրիք 'ի շինանուտ հրոյս, և մի ոք օձտեալ արտաքս ելցէ աստուածային գաւթացն, և մի լիցի լուցկի և ձարակ յաւիտենական անշէջ գեհենոյն։

Բազում և այլ շնորհալի աստուածախօս վարդա-

1. Մի օր. անարատ գառինն այնմիկ։ 2. Մի օր. էիք։

պետութեամբ 'ի յորդառատ բանից՝ զօրացոյց զամենայն հաւատացեալսն 'ի Տէր։ Յայնժամ բազմութիւնն հանդերձ նովաւ գոչէին մեծաձայն և ասէին. Քրիստոնեայք եմք և ծառայք Աստուծոյ բարձրելոյ, զաստուածս թագաւորաց ոչ պաշտեմք, և պատկերին նորա զոր կանգնեաց՝ երկիր ոչ պագանեմք։ Եւ իսկոյն հասեալ լինէր բանն առ Մաքսիմիանոս։ Եւ նոյնժամայն հրամայէր սպասաւորացն զՀուրն վառել, ասելով. Մի՛ ոք ձողոպրեսցի և մի՛ ոք ողորմութեան հանդիպեսցի։

Յայնժամ քրիստոսասէրն նահատակացն զերախայսն 'ի մի վայր ժողովելով՝ զաստուածային խորհուրդս մկրտութեանն կատարելով 'ի վերայ նոցա, և անարատ սուրբ խորհրդոյն հաղորդեցուցանէին զնոսա։ Իսկ 'ի նմին ժամու սպասաւորք թագաւորին հասանէին, և զՀուրն շրջապատ բորբոքէին զսուրբ տաճարաւն Աստուծոյ. և ահագին որոտմամբ ելանէր բարձրանայր բոցն, և զամենայն արտաքինսն և զներքինսն ճարակէր։ Իսկ բազմութիւնք ժողովոյն որք յեկեղեցւոջն էին, մեծաձայն գոչմամբ երգէին զերգս երից մանկանցն, և զբոլոր արարածս յօրհնաբանութիւն գոչել ոչ դադարէին, այլ և 'ի մէջ հրոյն ընդ նոսին ձայնք հրեշտակաց լսելի լինէր, և շարժեալ գղրդէր երկիրն ամենայն յահագին գոչմանէ ձայնից, մինչև ամենևին ողջակիզեալ ամենեցունց արանց և կանանց իբրև քսան հազարաց, որոց անուանքն իւրաքանչիւրոց գրեալ են 'ի դպրութիւն կենաց։ Ընդ որոց կամայորդոր ջանն նահատակութեանց ամենայն զօրք վերնոցն հիացեալ զարմացան, մանաւանդ ընդ անքակ միաբանութիւն միակամ և միակրօն վկայիցն Աստուծոյ։

Արդ իբրև աւուրք եօթն անցին, և Հուրն դեռ ևս ճարակէր զնիւթն, և 'ի դադարել բոցոյն՝ հոտ անուշութեան բուրեր չքնաղ և հրաշալի տեսողացն և յոյժ զարմացմամբ, և նշոյլք ոսկեձաձանչ խորշ խորշ ինչ և շնորհալի զարդափայլեր իբրև զձառագայթս նշողից արեգական 'ի ծագել առաւօտուն, և հրաշաձաձանչ լուսով երևէին նշխարքն սրբոցն։ Այլ Մաքսիմիանոս յաղթութիւն մեծ համարելով զգործ իրին

այնորիկ, տօն մեծ և երևելի կատարէր յաւուրն յայնմիկ աստուածոյ իւրոց, և պատուէր հրամանի տայր ամենեցուն գալ հասանել 'ի տեսարան խաղուցն ձիընթացից կառամարտկացն, շինել հրամայէր և առ տեսարանին տաճար մի աստուածուհւոյն Դեմետրեայ, այնմ՝ որ մեծագոյն համարեալ էր նա յաստուածուհիսն. և անցեալ ինքն ամենայն հանդիսական զօրքն՝ կատարէր զտօն աղճատանաց զոհիցն, և զմնացեալ բարեպաշտսն յառաջեցուցանէր 'ի համարձակութիւն աստուածային կրօնիցն։

Յայնժամ մի ոմն 'ի զինուորական գնդին՝ որում անուն Ջենոն կոչիւր, ոչ հանդուրժէր զազրատեսիլ և դիւաձենաձեր զոհիցն. 'ի բարձրաւանդակ տեղւոջ միում կացեալ, գոչէր մեծաձայն և ասէր. Մոլորեալ ես, ով Թագաւոր, քարանց և փայտից անզգայից զոհելով[1], և զտարերս նիւթեղէնս աստուածս անուանելով, և ձեռագործ պատկերաց զոհս և երկրպագութիւն մատուցանելով, որ դիւաց պատկերքք են և ստայոդ կերպարանք։ Ամբարձ զիմանալի աչս հոգւոյդ և նկատեա, հայեաց և տես, ծանիր և իմացիր երևելեօքս զաներևոյթն և ստացական նիւթեղինօքս զաննիւթականն[2], որ զբնաւս ամենայն 'ի յանգոյութենէ 'ի գոյութիւն ած։ Եւ դու թողեր զհաստիչն ամենայնի, և զաննիւթական արարիչն և զշնորհս բարերար կամաց նորա, մնոտեաց զոհս և պաշտօնս մատուցանես, որ և ամենայն աստուածք քո զմիջկի մի զօրութիւն ոչ ունին, նաև անարգագոյնք են քան զնոսա։ Եւ զայսոսիկ իբրև լուաւ Մաքսիմիանոս, հրամայեաց քարամբք ջարդել զկզակս նորա, և զայրացմամբ գոչէր առ դահիճսն, զօրեղագոյն առնել առնա զտանջանս հարուածոցն, զի մի՛ անարգեսցէ զաստուածսն։ Արդ յորժամ ջախջախեցան խեղապատակք գլխոյն նորա և խորտակեցան կզակք, և մնուրք բերանոյն փշրեցան, և ատամունքն չարաչար 'ի բաց թափեցան, դեռ ևս փոքր մի շունչ գոլով 'ի նմա և հանդերձեալ էր մեռանել, հրամայէր քարշել արտաքոյ քաղաքին, և զհամարձակախօս գլուխ նորա սրով հա-

1. Մի օր. երիր պոգանելով։ 2. Մի օր. զաննիւթեղէնն։

տանել։ Ա.յսպէս քաջամարտիկ վկայն Քրիստոսի Ջենոն զվճիռ մահու ընկալաւ, կատարելով զմարտիրոսական ստադիոնն, առ Քրիստոս զր գլուխն է ամենայնի՝ վերաբերեալ լինէր։

Ա.յլ որ հանդերձեալն էր որ Դորոթէոս 'ի ներպարն յառաջագայիլ[1], որ ընդ աստուածայնոյն Անթիմոսի մեծին քահանայութեամբն վառեալ էին, ոչ միալ և նոցա առանց չարչարանաց. զի տնօրինեալ լինէր յաղագս այսորիկ 'ի վերուստ յաստուածային շնորհացն։ Քանզի թուղթ իսկ առաքեալ լինէր առ նոսա 'ի սրբազանէն այնորիկ, զի 'ի Թաքստեան էր 'ի գեօղ ուրեք. և այն ինչ անօրէն Թագաւորին յայտնի լինէր թուղթն, և նոյն ժամայն առաջի նորա կացուցին. զոր տեսեալ և ընթերցեալ, զի էր մակագրեալ 'ի նմա բանս իմաստութեան և քաջալերս վասն աստուածադիր կետի կոչմանն յուսոյ կենացն յաւիտենից, արիապէս հաստատուն կալ 'ի վկայական մրցմանն յաղթանակի վերին կոչմանն։

Յայնժամ ցասմամբ մեծաւ զեղեալ Մաքսիմիանոս, հրամայէր առաջի իւր կացուցանել զարսն, և ասէ ցնոսա. Ընդէ՞ր ապստամբեալ 'ի կամաց իմոց՝ յարեայք 'ի վերայ իմ, և առ այլ ոմն թշնամի իմ խոտորեցայք։ Հրամայէր և զթուղթն ընթեռնուլ, և զբերողն 'ի ներքս մուծանել. զոր տեսեալ սրբոց վկայիցն յոյժ ուրախ եղեն յոգիս իւրեանց։ Իսկ Մաքսիմիանոս խէթիւ հայէր 'ի նա, և ցասմամբ մեծաւ ասէր ցնա. Երիցս թշուառական եղկելի, ո՞վ ոք աւանդեաց զթուղթս զայս, և ո՞ւր ուրեք թագուցեալ է նա և կամ յորո՞ւմ տեղւոջ։ Իսկ արին այն և բարեզուարթայրն, ոչ վեհերեալ 'ի դժնեայ հայեցուածոցն, և ոչ զանգիտեալ 'ի չարաչար սպառնալեաց նորա՝ ասէ. Ով ոք իցէ տուօղ թղթիդ՝ ասացից, այլ թէ ո՞ւր է՝ չասացից, զի ոչ կարեմ մատնիչ լինել հովուին իմոյ. այն որ բաղում շահս օգտից հոգևորս ընդ ամենայն եկեղեցիս մատակարարի 'ի նմանէ. քանզի և նա իսկ յետ փոքր ինչ ժամանակի երևեսցի յայտնապէս բաղմաց, զի ոչ կարէ քաղաք թագչել որ 'ի վերայ լերին կայցէ։

1. Մի օր. որ Դորոթէոսին էր պարտ յառաջագայիլ... վառեալ են։

Զայսոսիկ արիապէս աստուածուսոյց բերանովն պատմէր առաջի Թագաւորին. իսկ անօրէնն Մաքսիմիանոս ոչ հանդուրժեալ համարձակութեան բանիցն՝ զլեզու նորա հրամայէր 'ի բաց հատանել, և ապա քարկոծել։ Իսկ նահատակն այն սուրբ յետ հատանելոյ լեզուին և քարկոծմանցն՝ ապա և նետիւք խոցոտեալ լինէր, և ոչ ինչ փոյթ առնէր զտանջանացն, այլ կարդայր գոհանալով զՏեառնէ և ասէր. Տէր Յիսուս օգնեա ինձ, և ընկալ զհոգի իմ 'ի հոտ անուշից. և այնպէս աւանդեաց զոգին։

Այլ տակաւին և Մաքսիմիանոս ցասմամբ և սպառնալեօք լցեալ էր 'ի վերայ դորոթէոսեանցն, տանջանս դառնատեսիլս և անողորմ արկանէր 'ի վերայ նոցա. և մինչդեռ ձեռք դահճացն վաստակեցան յոգորածեծն առնելոյ զնոսա, այնուհետև քերանօք երկաթի եղնգամբք քանցեցին զմարմինս նոցա. և ծորեալ մաշէին զանձինս նոցա կարօտութեամբ հացի և ջուրբ. բազում անգամ և 'ի ծայրս մատանցն և եղնգացն սայրասուր եղեգունս վարէին, և այնու խոցոտեալք լինէին. և նոքա քաջութեամբ ամենայնի համբերէին վասն երանաւէտ յուսոյն որ 'ի Քրիստոս. և դառնութեամբ յանդիմանէին զամպարշտութիւն Թագաւորին։ Վասն որոյ և ինքն Թագաւորն քաւ վաստակեցաւ 'ի բռնամահ վկայիցն համբերութեանց. ապա դատակնիք մահու հատանէր 'ի վերայ նոցա այսպէս. Զդորոթէոսի զգլուխն սրով հատանել, և զՄարդոնիոս կենդանւոյն ասէ այրեսցի, և զՄիգդոնիոս 'ի խորխորատ ընկենուլ, կարկառս քարանց կուտեսցի 'ի վերայ նորա. այլ զԳոգոնիոս և զԻնդոս և զՊետրոս՝ երկանաքար 'ի պարանոց նոցա կապեալ 'ի ծով ընկեսցին։ Եւ յետ այսչափ զանազան տանջանաց՝ կատարեցան սուրբ վկայքն երանելի մահուամբ, և բարի խոստովանութեամբ ամբարձեալք ելին առ Աստուած յոյսն իւրեանց, և խառնեցան 'ի բանակս երկնաւոր զուարթնոցն, և պսակեցան յարարչէն բոլորեցունց։

Արդ զայս ամենայն իմացեալ մաքուրն այն և ցանկալի կոյսն Դոմնա՝ ուրախանայր, ցնծայր և բերկրէր 'ի սրտի իւրում, մանաւանդ վասն Ինդոսի՝ որ էր ընկերակից սուրբ քաղաքավարութեանն իւրոյ. և յոյժ

տենչալի փափագմամբ հաւասարակից և հանդիսակից մաքուր մրցանաց նոցա 'ի բրաբիոնին ցանկայր լինել. վասն որոյ և ոչ վրիպեաց 'ի բարի ցանկութենէն որ առ Աստուած, թէ զկամն երկիւղածաց իւրոց առնէ Տէր. և որ այնպէս մաքուր զհարսանեացն պահեաց զպատմուճան, և որ բազմայեղց և ջերմ արտասուօք իւրովք սպիտակացուցանէր զզարդ առագաստին. և ամենայն ճգնութեան տուեալ զանձն՝ ցանկալի երևեցուցանէր զինքն անմահ փեսային. զի վասն անտեղի գործոց ամպարշտացն յայրի միում թագուցեալ էր, և իբրև 'ի խաւարչտին սանդարամետական անցուցանէր 'ի գերեզմանի զաւուրս անձկութեամբ, և սակաւ ջրով զովացեալ և կերակրեալ լինէր յարմատոյ բանջարոցն զոր առ ափն քարանձաւին գտանէր։ Յետ բազում աւուրց ինչ[1] իջանէր նա 'ի լեռնէ անտի առնացի ձևով, զի այնպէս զգեցոյց զնա Աղապպէ հոգևոր մայր նորա, և 'ի ձեռանէ պակշոտելոց զեղխիցն ճողոպրեալ ապրեցուցանէր։ Սա զերանելին Աղապիոս խնդրէր, այլ ծանեաւ զի զվկայական ընթացսն կատարեալ էր հանդերձ այլ սուրբ կուսանօքն հրկէզ 'ի տաճարին Աստուծոյ եղեալք։ Ախտանայր հոգւով երանուհին այն, զի և ինքն ոչ եղև ողջակիզեալ ընդ Աղապեայ՝ հաղորդեալ և այլոց չարչարանացն. և կացեալ մերձ 'ի կիզեալ տաճարն՝ յորդառատ արտասուօք ընդ աձիւն սուրբ մարմնոց նոցա խառնէր, աղէկիզեալ տոչորեր մինչև քակտեալ լինէին յօդք մարմնոյ նորա կրծաբախս հառաչմամբ և թախծեալ ոգւով։

Եւ իսկոյն իջեալ յեզր ծովուն տեսանէր նաւ մի պատրաստական զի կազմէին զուռկանսն. և տեսեալ նաւավարացն զերանելին առնացի կերպարանօք, ասեն ցնա. Եկ, ով երիտասարդ, օգնական լեր մերոց աշխատութեանցս, զի հաղորդ արասցուք զքեզ որսոյ ձկանցն։ Եւ նորա մտեալ 'ի նաւն՝ զձկնորսացն ճմլեցուցանէր զաչսն և զոգիս հեզական պարկեշտութեամբ և քաղցրաբարբառ աստուածախօս բանիւքն. և իսկոյն արկին զուռկանսն 'ի ծովն, և թափեցան 'ի նմա բազմութիւն յոյժ մեծամեծ ձկանց, զոր

1. Մի օր. յեպ բազում ինչ ասասրց։

հազիւ և մեծ աշխատութեամբ յեղը ծովուն արտաքս ձգէին. և հանելով՝ի բաց զբազմութիւն ձկանցն՝ տեսանէին և մեռեալ մարմինք պատառ պատառ կոտորեալ՝ի մէջ ուռկանացն։ Եւ խռովեցան յայնմ տեսլենէն, ահիւ և տրտմութեամբ[1] ըմբռնեալք լինէին. և զմարմինսն՝ի բաց թօթափեալք դնէին յերկրի, և զուռկանսն առեալ փութային երթալ յայնկոյս ծովուն որսափոխ լինելով, և որսակից լինել[2] աղաչէին զսուրբն, և նա ոչ հաւանեալ նոցա՝ի բաց գնայր։ Իսկ նաւավարքն հաց և ձուկն տային նմա փոխանակ վարձուց աշխատութեանն, և ինքեանք գնացին։ Եւ նա զինդոսին և զնորին ընկերակցացն[3] զյեղանակ մարտին և զվախճանին, որպէս յառաջագոյն ասացաք, իմացեալ էր. և հասեալ՝ի տեղին յորում անկեալ կային մարմինք սրբոցն, և ստէպ ստէպ շրջելով, և ստուգութեամբ զիւրաքանչիւր ոք՝ի նոցանէ գտնէր արդ. քանզի նկարագիր մարմնոց նոցա հաւաստի ցուցանէին զկերպարանս նոցա։ Իսկ նորա գիրկս արկեալ ողջունէր անյագաբար համբուրելով զնոսա, և արտօսր ոչ սակաւ հեղոյր՝ի վերայ նոցա։ Եւ մինչդեռ դառնացեալ ոգւով փարէր զմարմնովք երանելեացն, ետես նաւ մի գալով՝ի վերայ ծովուն, և նաւավարացն ինքնագեալ զառագաստն՝ թեաք հանդարտաբար եկեալ լինէին առ ափն ծովուն։ Արդ յառաջ մատուցեալ սուրբ կոյսն զնաւապետն ողջունէր որպէս պարտ էր, և ցուցանէր զձկունսն զոր ունէր. և նաւապետն երդմնեցուցանէր զնա յանուն Յիսուսի ասելով, թէ՝ Քանոյ վաճառոյ է։ Յայնժամ աղնուական կոյսն ծանեաւ զբարեպաշտութիւն առնն, և կոչեալ զնա արտաքոյ՝ի նաւէն ցուցանել նմա զմարմին սրբոցն, կցորդ առնել զնա նոցունց գեղեցիկ պաշտամանցն. և պատմեաց նոցա մի ըստ միոջէ ստուգութեամբ զամենայն անցս չարչարանաց վկայիցն։ Արդ իբրև լուաւ զայս ամենայն նաւապետն, անկեալ առոտս նոցա համբուրէր զսուրբ աստուածակիր մարմին վկայիցն, և հանէր վաղվաղակի՝ի նաւէ անտի կտաւս

1. Մի օր. ահոգին պրպռոնէամբ ըմբռնեալք։
2. Մի օր. որսոյիդ լինելով։
3. Մի օր. ընկերոցն։

նորս և հանդերձս սպիտակս և իւղս անուշունս և խունկս աղնիւս, և լուանայր յառաջագոյն մաքուր ջրով, մանաւանդ արտասուօք առաւելագոյն, օծեալ և խնկեալ զմարմին երանելեացն հանդերձ նաւապետաւն, և ամենայն զգուշութեամբ պաստառակալեալ, և բարձեալ տարան զնոսա մերձ առ պարիսպ քաղաքին Հուպ առ ձորակին 'ի դրունսն որ հանէր 'ի համատարածն, յորում տեղւոջ սուրբքն դորոթէոսեանքն[1] ընկալան զվձիռ մահու, և անդ պատրաստեցին գերեզման, և թաղեցին զնոսա զգուշութեամբ. և Դոմնա 'ի նմին տեղւոջ խոստանայր կեալ մինչև 'ի կէտ կոչման իւրոյ, և ոչ մեկնիլ 'ի սուրբ գերեզմանաց նահատակացն Քրիստոսի։ Եւ այնուհետև անդ կեայր[2] համբերութեամբ բազմաւ, աղօթիւք և անուշահոտ խնկօք և անշէջ լապտերօք, միշտ և հանապազորդ զպատիւ յիշատակի նոցա կատարելով, ձեռնատու լինելով նմա և նաւապետն ընչիւք բաւականօք առ այնպիսի պէտս նոցա։

Այդ քանզի ոչ է պարտ և պատշաճ արեգակնափայլ և լուսաձաձանչ ճառագայթիցն ծածկիլ 'ի յերկրի, և՛ս առաւել և ոչ աստուածային ցանկութիւն նորա որ առ յաղթանակ վերին կոչմանն էր վկայական հանդիսիցն՝ առանց կատարման մնալ։ Անտուստ ուրեմն 'ի յայտ եկեալ զրոյցք իրին հասին յականջս չարիմացին Մաքսիմիանոսի. և նորա իմացեալ զանձկալի տրփանս նորա՝ որ առ մարմին սրբոցն դեգերէր, ծափ ծափի հարեալ ծիծաղէր և ասէր. Շնորհեցիս նմա զբաղձալին իւր կատարած, և հաւասարակից արարիս զնա նոցին չարչարանացն, արձակելով զնա 'ի մնոտի յոյսն իւրեանց զոր ունին։ Զայս ասացեալ վաղվաղակի զդահիճս առաքեաց, որք եկեալ հասին 'ի տեղին յորում կայր նա. և տեսին զի երանելին արտասուալից պաղատանօք յաղօթս կայր 'ի սրտի իւրում, շրթանց շարժելով միայն. և մերկացուցին զսուսերս իւրեանց, կամէին ծայրաքաղ առնել զամենայն անդամն նորա. և երանելի կոյսն ոչ ինչ փոյթ առնէր զսպառ-

1. Մի օր. դորոնորոսէանքն։ 2. Մի օր. անդ կայր... մինչև հանապազորդ։

նալիս դահճացն։ Եւ ոչ զանգիտեալ յերկիւղէ մահու, այլ հանդարտութեամբ և ցնծութեամբ կայր յաղօթս 'ի սրտի իւրում։ Եւ ասացեալ զամէնն՝ կրնքեաց զինքն նշանաւ սուրբ խաչին, և խոնարհեցուցեալ զպարանոցն առաջի դահճացն, և այնպէս հատեալ եղև սրով գլուխ գերապայծառ և մաքուր սուրբ կուսին Դոմնայի, յամսեանն դեկտեմբերի, որ օր քսան և չորս էր ամսոյն։

Իսկ յետ վկայութեանն Դոմնայի՝ ըմբռնեալ լինէր և մեծն Անթիմոս սուրբ քահանայապետն Բիւթանացւոց նահանգին, որ զբազումս լուսաւոր վարդապետութեամբն իւրով լուսաւորեաց, և ընծայեաց բանաւոր պատարագ երկնաւոր և քաջ հովուին. զոր 'ի բազում աւուրս քննայոյզ լեալ անօրէնն Մաքսիմիանոս, և հազիւ ուրեմն անկեալ 'ի բուռն՝ կացոյց զնա առաջի ամենայն ատենական բեմբին, և զամենայն տեսիլ տանջանարանաց ածել 'ի վերայ նորա։

Արդ արին այն և քաջ հովիւն բանաւոր հօտին Քրիստոսի ընդ ամենայն հանդէս արիական համբերութեամբ անցեալ, և առեալ զփորձ զիւրաքանչիւր տանջանաց։ Իսկ ամպարիշտն այն իբրև ետես զանդամանդեայ հաստատուն հաւատս նորա, և զանփոփոխելի հաստատութիւն սիրոյ որ 'ի Տէր մեր Յիսուս Քրիստոս, վճիռ սրոյ հատանէր 'ի վերայ նորա. զոր զամենայն հարցափորձութիւն և զհանդէս տանջանաց նորա յիւրում մանրաբար[1] պատմութեանցն է ուսանել։ Արդ ոչ միայն քսան հազարօքս այսոքիւք, որ 'ի միասին 'ի միում վայրկեան ժամանակի եղեն ողջակէզք ընդունելի, պատարագ անուշահոտ բոլորիցն Աստուծոյ, այլ անթիւք և բիւրք 'ի սմա երևեալ վկայք, քաղաքս այս մեծ Նիկոմիդացւոց զարդարեալ լինէր իբրև զերկինս աստեղօք պայծառացեալ, և իբրև զարեգակն փայլէալ արփիափայլ ճառագայթիւք, երկիր եղեալ սա կենդանեաց և ասպարէս երկնաւոր հանդիսիցն, և մանաւանդ սրբոյ առագաստին. հրաւիրեցան 'ի սմանէ 'ի բարձրութիւնս երկնից խորանաց, բացաւ 'ի վերայ սորա փակեալ դրունք երկնից,

1. Մի օր. մանրամասնաբար։

և առագաստ վերինն Երուսաղեմի ընդարձակեաց զսըրահս իւր, իջին փառքն Աստուծոյ 'ի վերայ սորա, եղև սա երկինք յերկրի, վասն զի զերկնայինսն ընկալաւ. հիմունք սորա ներկեալ եղև արեամբ անարատիցն. սերմանիք անդաստանայ նորա խառնեցան ընդ ածիւն մարմնոյ երանելեացն. մաքրեցաւ և օդն ընդունելով զշունչ սոցա, և գոլորշի արեանց սրբեաց զՃենՃերս ծխամած միգապատեալս զոհից կռոցն. պսակեցաւ և ծով ընդունելով զկաթուած արեանց վկայիցն, և եղև հաւատարիմ հազարապետ պահեստի աստուածային գանձուցն. հանապազ աչք Տեառն Աստուծոյ 'ի վերայ սորա, և փառք Տեառն ոչ մեկնի երբեք 'ի տեղւոջէս յայսմանէ։

Այդ զկնի ծագման երանաւէտ կենարարին մերոյ յամի երկերիւրերորդի քսաներորդի ութերորդի [1], 'ի թագաւորութեանն Մաքսիմիանոսի և Դիոկղետիանոսի կատարեցան վկայքս այսոքիկ և մատուցին զանձինս իւրեանց կամաւոր ընծայ պատարագին ծնեցելոյն 'ի Կուսէն. և ընկալան զանթառամելի պսակն։ Որոց Ճգնաւորաց են անուանքս այսոքիկ. առաջինն Գղերիկոս երէց համաշխարհական կաթողիկէ եկեղեցւոյն Աստուծոյ, որ է 'ի քաղաքին Նիկոմիդացւոց, և սրբազանն Ջենոն և Թէոփիլիա հանդերձ Մարդոնիոսիւ, և երանելին Դորոթէոս և Ինդոս և Պետրոս հանդերձ Միգդոնիոսիւ, և երեքին միշտ կուսանք աստուածայինք, Ագապիէ և Թէոփիլիա և Դոմնա, և զկնի սոցա մեծն Անթիմոս եպիսկոպոս մայրաքաղաքին Նիկոմիդացւոց։ Սոքա ամենեքեան ընկալան զվըՃիռ մահու վկայութեամբ յամպարիշտ թագաւորէն Մաքսիմիանոսէ, և ժառանգեալոց են զպսակն անապական 'ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ. որում փառք և պատիւ և իշխանութիւն ընդ Հօր և ամենասուրբ Հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

1. Մի օր. յամին երիերիւրերորդի թուականն հատակութեան սրբ. 'ի Ռոգաւորութեանն։ Այլ սայդ բոցս է 303 ամն Քրիստոսի։

Վկայաբանութիւն Սրբոյն Լաւրենտիոսի և ընկերաց նորա։

Յայսմ[1] աւուր կատարեցաւ վկայութեամբ 'ի Մաքսիմիանոսէ թագաւորէ՝ յեզր Եփրատ գետոյ 'ի տեղին որ կոչի Լաքսավիկ, սուրբ վկայն Քրիստոսի Յովհաննէս, որ էր յընկերաց սրբոյն Լաւրենտիոսի. որում և այլ ևս ընկերաց նորա՝ Լաւրենտիոսի և Ագրիպպայ և երկոտասան հազար վկայիցն և այլոցն՝ ասէն յիշատակ է. որոց ոմանց 'ի նոցանէ կատարու

տոնեայս. որ և սա շինեաց քաղաք մեծ 'ի վերայ Եփրատ գետոյ, և սկսաւ ըստ հրամանի թագաւորին զնախանձ թագաւորին Անտիոքայ և նախնեացն իւրոց քերել յինքն հակառակ Աստուծոյ, և հալածէր զքրիստոնեայսն. որք և փախստականք լեալք թագէին յայրս և 'ի լերինս մինչև 'ի սահմանս Հայոց՝ 'ի Մելիտենի քաղաք մեծ։ Ուստի զորս կալաւ զբազմութիւն հաղարաւորացն 'ի նոցանէ՝ կապանօք արկեալ 'ի բանտս ազգի ազգի տանջանօք չարչարեաց յոյժ դառնապէս կոտանօք, ստիպելով զոհել կռոցն և ուրանալ զՔրիստոս։

Իսկ ամենասուրբ հաղարքն մեծ գոհութեամբ և համբերութեամբ 'ի չարչարանսն զՔրիստոսի աստուածութիւնն վկայեցին, զորս ազգի ազգի մահուամբ սպան անձինս ինն հաղար, յորոց վերայ կատարեցան յետոյ այլ ևս չորք հաղարք, և աւելի ընդ նմին դատաւորին Ագրիպպայ. որ և յետ զինն հաղար վըկայսն կոտորելոյ, դարձաւ 'ի քաղաքն իւր և գրեաց առ Դիոկղետիանոս՝ եթէ հալածեցի զնազովրացիսն, և սպանի 'ի նոցանէ ըստ հրամանի քո ինն հաղար հոգիս որք ոչ զոհեցին կռոցն. արդ առաքեա և այլ ոք մեծագոյն օգնել ինձ 'ի քէն։

Իբրև ընթերցաւ զթուղթն Ագրիպպայ Դիոկղետիանոս՝ ուրախ եղև, և հարցանէր ցմեծամեծս իւր թէ ո՞վ ոք երթիցէ յայն կողմանս օգնել Ագրիպպայ և հալածել 'ի Հրէաստանէ զքրիստոնեայս։ Յայնժամ մի ոմն մեծ իշխան որ կոչէր Լաւրենտիոս, ասէ. Ահաւասիկ, առաքեա զիս։ Եւ ուրախ եղև արքայն յոյժ ընդ նա, և ետ նմա թագաւորն զորս խնդրեաց 'ի յօգնութիւն իւր՝ չորս հաղար զինուորս, և գրեաց թուղթ առ Ագրիպպա և առ ամենայն իշխանս Ասորւոց՝ վասն նորա, և առաքեաց զնա։ Եւ այս Լաւրենտիոս էր 'ի ծածուկ քրիստոնեայ. ընտրեաց 'ի զորաց թագաւորին չորս հաղար այր որ 'ի ծածուկ հաւատացեալք էին 'ի Քրիստոս, և առ ընդ իւր։ Էառ և այր մի որ էր յոյժ կռապարիշտ, վասն հաւատարմացուցանելոյ զթագաւորն։ Եւ ել 'ի Ճանապարհ 'ի սեպտեմբեր ամիս, ոսկի մատանեաւ թագաւորին, և մեծ իշխանական պատուով և փառօք յարքայէն։

Եւ իբրև հեռացան և չգիտէին եթէ եղբարք են 'ի Քրիստոս զորքն ամենայն, յայտնեաց նոցա Լաւրենտիոս զինքն եթէ քրիստոնեայ է և զամենայն ընկերսն։ Իսկ նոքա ուրախացեալ զոհացան զԱստուծոյ. և որք կային ոմանք որ յառաջագոյն ուրացեալք էին յերկիւղէ, խոստովանեցան վերստին զՔրիստոս զըղձմամբ մեծաւ։ Եւ Լաւրենտիոս վարդապետեաց նոցա և քաջալերեաց միաբան խոստովանել զՔրիստոս առաջի մարդկան, զի նա խոստովանեսցի զմեզ առաջի Հօր. զի ոչ ինչ համարեալ են ինձ ամենայն փառք սգալի աշխարհիս։ Եւ այժմ երթիցուք 'ի տերունական գերեզմանն և յայլ սուրբ տեղիսն յերկրպագութիւն, զի ես վասն այնորիկ ելի 'ի Ճանապարհ, և զոր յաջողէ Տէր՝ առնեմք։ Եւ կնքեալ զնոսա սուրբ խաչիւն՝ եկին 'ի սահմանս Անտիոքայ։

Յայնժամ ելին ընդ առաջ նորա ամենայն մեծամեծքն և իշխան աշխարհին։ Եկն և Սգրիպպաս իշխան Միջագետաց յերկրպագութիւն, յորմէ բուրեր գարշելի հոտ ձենձերաց կռոցն, 'ի վերայ որոյ ելաց յոյժ Լաւրենտիոս յաղագս կուրութեան նորա։ Եւ ասէ Սգրիպպաս. Ընդէ՞ր լաս, տէր իմ, զի խնդալ պարտ է այս օր որ տեսաք զմեծութիւնդ քո։ Ասէ սուրբն. Սովորութիւն է զի յորժամ տեսանեն զկրեարս սիրելիք՝ լան 'ի խնդութենէն։ Եւ ստիպեաց զնա Սգրիպպաս մտանել յԱնտիոք, և զոհել և ոճն մեծ կատարել, և յորդորել և զայլ քաղաքն ևս 'ի նոյն. և ոչ լուաւ Լաւրենտիոս Սգրիպպայ մտանել յԱնտիոք, և առնել զոհս կռոցն, այլ խաբեալ զնա՝ ասէ. Արդ կատարեսցուք զհրաման հալածանացն և ապա զայդ։

Եւ եկեալ Լաւրենտիոս 'ի Փիւնիկէ և յԵրուսաղէմ, յորմէ խռովեցան և երկեան ամենայն հաւատացեալքն յոյժ յոյժ. և ժողովեալ յԵրուսաղէմ զամենայն հեթանոսս և զհրեայսն, ընթերցաւ զթուղթն կայսեր, և խնդացին յոյժ հեթանոսքն. և արձակեալ զնոսա՝ ասէ. Գնացէք քննեցէք զորս գտանէք քրիստոնեայս, և եկեալ պատմեցէք ինձ զի արարիցս զհրամանն կայսեր։ Եւ յերեկոյին յղեալ կոչեաց զեպիսկոպոսն Երուսաղէմի, որ էր աշակերտ աշակերտաց առաքելոցն. և նա կասկածանօք և երկիւղիւ խուսայր 'ի

Լաւրենտիոսէ յոյժ. և ապա կնքեաց զինքն, և եկն առ նա 'ի գիշերին միով մանկամբ։ Եւ յարուցեալ անկաւ յոտս նորա Լաւրենտիոս, և ասէ. Բարի եկիր, հովիւ բանաւոր հօտին Քրիստոսի, մխիթարեաց և մխիթարեա զեղբարդ, զի Քրիստոս առաքեաց զիս պատրաստարել հօտի իւրոյ և ձեզ։

Ասէ Եպիսկոպոսն. Օրհնեալ է Քրիստոս՝ որ ոչ թողու զուգժոխոց յաղթահարել զեկեղեցի իւր, որպէս խոստացաւ։ Եւ առեալ զնա՝ յարուցեալ գնացին 'ի սուրբ Գողգոթայն և 'ի սուրբ գերեզմանն, և յայլ սուրբ տնօրինականն, և երկրպագեցին ամենայն զօրքն։ Եւ 'ի միւս գիշերին գնացին 'ի սուրբ Համբարձումն և 'ի Սելովամն և 'ի սուրբ վերնատունն։ Եւ երևեալ նմա Քրիստոս՝ ասէ. Լաւրենտիոս, զօրք քո վկայելոց են ինձ 'ի կողմանս Հայոց, և դու կալոց ես 'ի յատեան կայսերն, արդ փութա դու առ խս։ Իբրև ետես զայս՝ փութացաւ յոյժ, և վաղիւն ելեալ 'ի քաղաքէն որպէս թէ երթայ առ 'ի հալածել զքրիստոնեայսն։ Իսկ զարմացեալ հեթանոսքն հարցանէին ընդ արսն, թէ ընդէր չարար ինչ քրիստոնէիցն որք աստ են՝ ըստ հրամանի կայսերն։ Եւ նոքա ասեն. Հրաման եկն յարքայէն և փութացոյց գնալ աստի. և զայս վասն երկնաւոր թագաւորին տեսլեանն ասէին։ Եւ ելեալ եկին 'ի սուրբ Բեթղեհէմ, և անտի չոգան 'ի սուրբ Յորդանան։ Ապա անցեալ ընդ Ճանապարհ անապատին՝ գնացին 'ի վկայարան սրբոյն Սարգսի և Բագոսի. և եկեալ 'ի Լաքսաւիէ յեզր Եփրատ գետոյ, ուր կատարեալ էր վկայութեամբ 'ի Մաքսիմիանոսէ մի յընկերաց նոցա՝ որ կոչէր Յովհաննէս, եկին անտի յԵդեսիա և երկրպագեցին անձեռագործ պատկերին Քրիստոսի։

Եւ ապա անդ ասէ Լաւրենտիոս. Կատարեցաք զուգաւորութիւն[1] մեր, ժամէ այսուհետև յայտնել ըզհաւատս մեր և նկրտիլ 'ի նահատակութիւն։ Եւ սկսան հայհոյել զկուռս, և քարոզել զՔրիստոս Աստուած միայն և զինքեանս գոլ քրիստոնեայս։ Լուեալ զայս Ագրիպպաս՝ գրէ առ նա. Զինչ է այդ զոր հա-

1. Թուի՝ պրոխպատորութիւն։

կառակ հրամանին կայսեր առնէք. և փոխանակ հա-
լածելոյ զքրիստոնեայս՝ զՀեթանոսութիւն ջանաս
բառնալ։ Իսկ Լաւրենտիոս ասէ. Մեզ չէ փոյթ վասն
կայսեր, զի մեք Քրիստոսի ծառայեմք՝ի կանուխ հե-
տէ, և վասն երկրպագելոյ սուրբ գերեզմանի նորա՝
զկայսրն քո խաբեցաք և եկաք յայս կողմանս։

Յայնժամ գրեաց Ագրիպպաս և ծանոյց կայսերն
զամենայն։ Իսկ Լաւրենտիոս զերիս ամիսս ձմերանոյն
կացեալ՝ի Միջագետս՝ մխիթարէր զՀաւատացեալսն
և քարոզէր զՔրիստոս, գուշակէր և զյառնելն բա-
րեպաշտին Կոստանդիանոսի և զգուշացուցանէր զնո-
սա առ ժամայն խոյս տալ և աղօթել՝ի վերայ ին-
քեանց։ Եւ յետ երեք ամսոց ձմերանն եկն թուղթ՝ի
կայսերէ առ Ագրիպպաս, և իշխան մի հազար արամբ՝
Դոմնաս անուն, զի զՀաւատացեալսն կոտորեսցէն, և
զԼաւրենտիոս կապեալ տարցէն առ նա։ Եւ ժողովեալ
Ագրիպպաս նախանձու բարկութեան երկոտասան
հազար զինուորս, եկն՝ի վերայ Լաւրենտիոսի՝ի դաշ-
տին Եդեսիոյ։ Իսկ Լաւրենտիոս քաջալերեալ զչորս
հազար գունդն հաւատացեալ, և մխիթարութեամբ
քաջալերէր զնոսա նախագիտութեամբ և ասէր. Ո-
մանք՝ի ձէնջ աստ կատարելոց են, և ոմանք՝ի կողմանս
Հայոց, և ես կալոց եմ յատենին կայսեր՝ի Հռովմ։
և՝ի միասին՝ի Քրիստոսէ թագիմք։ Եւ նոքա ջերմու-
թեամբ դաւանէին յանձն առնուլ զմահն Քրիստոսի.
և ուղղեալք՝ի մուտս Համսի լերին՝ որ է կողմն հիւ-
սիսոյ, հասին նոցա հեթանոսքն. և հինգ հարիւր այր
՝ի սուրբ գնդէն ելեալ՝ի բարձր տեղի մի՝ որ կոչէր
Նաւթայ, ողջոյն ետուն միմեանց, և աղօթեալ աղա-
ղակեցին. Քրիստոս է միայն Աստուած, և մեք քրիստո-
նեայք եմք, և զկուռս ոչ պաշտեմք։

Եւ շուրջ եկեալ հեթանոսքն կոտորեցին զսուրբ
վկայսն. և առժամայն տեսին՝ի հեռուստ այլ ևս հա-
ւատացեալքն Աստուծոյ զնոսա, զի պսակք լուսեղէնք
յերկնից իջանէին՝ի վերայ սրբոցն, և խնդութեամբ
սկսան նոքա բորբոքել՝ի սէրն Քրիստոսի։ Իսկ Լաւ-
րենտիոս առաւել յորդորէր զնոսա։ Յայնժամ փո-
խեալ անտի սուրբքն, մտին՝ի լեառն՝ որ կոչի Աշմու,
և բանակեցան առ ստորոտ լերինն՝ի հարաւակողմն.

և եկեալ գունդն հեթանոսաց իջին առ գեղաւն՝ որ կոչէր Մահտակ։ Իսկ 'ի գիշերին տեսանէին հռովմայեցի զօրքն սուրբ՝ սիւն լուսոյ 'ի վերայ տեղւոյն ուր վկայեցին հինգ հարիւրքն։ Եւ առաքեաց Լաւրենտիոս 'ի նոցանէ զի երթեալ թաղեսցեն զսուրբքն, և գնացեալ հինգ հարիւր այր զինեալք Ճառագայթիւ լուսոյն 'ի տեղին՝ որ իբրև զցերեկ պայծառացեալ էր, և հաւաքեալ եդին զսուրբսն յայրի միում և փակեցին, և դարձեալ Ճառագայթիւ լուսեղէն սեանն եկին մերձ 'ի բանակ թշնամեացն, և յայտնեցին զանձինս աներկիւղ բարձր ձայնիւ միայն զՔրիստոս գոչելով Աստուած։

Լուեալ Ագրիպպաս՝ առաքեաց երկու հազար զինուորս. զի եթէ ուրասցին Հռովմայեցիքն զՔրիստոս՝ թողցեն զնոսա, ապա թէ ոչ՝ սպանցեն յանխնայ։ Եւ Հռովմայեցիքն ասեն. Զէ մեզ պարտ մեռանել մինչև երթիցուք առ զօրագլուխն մեր. վասն որոյ պատերազմեսցուք ընդ նոսա զի տեսցեն զզօրութիւն Քրիստոսի. և Ճակատեալ կոտորեցին զերկու հազար զօրսն Աստուծոյ, և մի 'ի նոցանէ ոչ պակասեաց, այլ և ոչ վիրաւորեցաւ ինչ ոք 'ի նոցանէ. և էր այս 'ի մայիս ամիս։

Յայնժամ մրրիկ և մառախուղ ծածկեաց զբանակս անօրինացն, և ամենայն հաւատացեալքն անվնաս մնացեալք եկին 'ի բանակն սուրբ, և պատմեցին զշնորհն Աստուծոյ. և նոքա սխրացեալք փառաւորէին զՔրիստոս։ Եւ անդէն խօսեցաւ յոլովս սուրբն Լաւրենտիոս և պատուիրեաց ասելով. Այժմ ահա տեսայք՝ զի Քրիստոսի է ամենայն յաղթութիւն, և բաւական է այս. բայց այլ մի՛ և՛ս պատերազմեսցուք կամ սպանցուք զոք. և ելեալ մտին յՈՒշաւմու լեառն։

Իսկ Ագրիպպաս սրտմտեալ յոյժ, և զՀետ եհաս նոցա 'ի լերինն որ կոչէր Պհար. և անդ իսկ հազարք և երեք հարիւրք 'ի սրբոցն դադարեալ զտեղի առին, և ընկեցին զզէնս իւրեանց. և ելեալք 'ի բարձրագոյն տեղին Հարմաւոր 'ի ստորոտ լերինն, և ողջոյն սրբեալք միմեանց աղաղակեցին. Քրիստոնեայք եմք, և զՔրիստոս դաւանիմք Աստուած, և ոչ զկուռս թագաւորի պղծոյ. և տարածեալ զձեռս յերկինս կատա-

ըեցան անդրէն 'ի հեթանոսացն։ Իսկ այլ ևս գունդն Հռովմայեցւոց ասէն ցԼաւրենտիոս. Եթէ կամիս երթալ 'ի Հռոմ ըստ հրամանի Տեառն՝ ջանամք և հանեմք զքեզ 'ի դոցանէ զի երթիցես անվնաս։

Իսկ նա ոչ առ յանձն ասելով. Տեառն՝ կամք լիցին։ Եւ գնացեալ բնակեցան 'ի դաշտն Եղլաւէ առ ստորոտ լերինն Սինայի, մօտ 'ի բերդն Սինայ. և զհետ եկեալ Սգրիպպաս բանակեցաւ և նա 'ի դաշտին յայնմիկ. և 'ի մէջ գիշերին ետես Լաւրենտիոս այր մի լուսաւոր որ քաջալերէր զնոսա և ասէր. Մի՛ տրտնջիք վասն բաժանեալ ընկերացն ձերոց որ կոտորեցան. զի ահա զհալածիչդ ձեր զՍգրիպպաս նշանագրեալ եմ 'ի կեանսն յաւիտենից, և տուաւ ձեզ ինքն իւրայօքն ևս որք ընդ նմա են. և դու հաւատա այսմիկ, և յարուցեալ նայեա 'ի կողմն դաշտիս և տես զոր ցուցից քեզ։

Եւ յարուցեալ սուրբն՝ հայեցաւ և ետես 'ի վերայ տեղւոյն ուր վկայքն սպանեալ կային, աստղ մի մեծ լուսաւոր եկեալ եկաց 'ի վերայ բանակին, զի փայլէր և լուսաւորէր յոյժ զտեղին. և կոչեալ զընկերսն՝ տեսանէին զի ինքներ յաստեղէն լուսաւոր պսակ 'ի վերայ վկայիցն ըստ Թուոյ կատարելոց սրբոցն, և ապա նոյն աստղն լուսաւոր եկեալ եկաց 'ի վերայ բանակին Սգրիպպայ եպարքոսին որ կայր 'ի մէջ հեթանոս զօրացն. զոր տեսեալ Լաւրենտիոս՝ ասէ. Ճշմարիտ է զի և Սգրիպպասի ևս գրեալ է ընդ մեզ վկայ լինել Քրիստոսի. և զարմացմամբ յոյժ գոհացեալ օրհնէին զՔրիստոս։

Եւ 'ի վաղիւն ասէ Դոմնաս ցՍգրիպպաս եպարքոսն. Երթիցուք փութով 'ի վերայ Լաւրենտիոսի ունել զնա և առնել ըստ հրամանին կայսեր։ Եւ ասէ Սգրիպպաս ցնա. Հանգիցուք այսօր իսկ, և վաղիւն թողցուք ըզբազմութիւն զօրացս 'ի դաշտիս, և մեք երեք հազար արամբք երթիցուք 'ի վերայ նոցա, զի դժուար է լեառն այն յոյժ. այլ և նոքա թուի ինձ զի յօժար են 'ի մահ և չկամին կռուիլ ընդ մեզ. քանզի չտայ թոյլ նոցա զայս օրէնք Նազովրացւոյն, և ոչ գլխաւոր նոցա կամի առնել կռիւ։ Եւ երեկոյին խորհէր յանձն Լաւրենտիոս՝ թէ ընդէ՞ր արգելան հեթանոս զօրքն յաւուր

յայնմիկ գալ 'ի վերայ նոցա, այլ և հոգայր զմարմնոյ նոց կոտորեալ սրբոցն։

Եւ իբրև ննջեաց՝ երևեցաւ նմա այր մի լուսաւոր և ասէ. Ահա Դոմնաս ամպարիշտն որ էկն 'ի կայսերէ տանել զքեզ, մնալոց է աստէն 'ի տեղի Ագրիպպաս՝ եպարքոս Ասորւոց, զի տէր խափանեսցէ զխորհուրդս հեթանոսաց. և 'ի ձեռն այլոյ որ չիցէ չարաբարոյ՝ երթաս դու 'ի Հռովմ։ և վասն մարմնոց ընկերացն քոց մի՛ հոգար, զի ահաւասիկ հովիւ մի որ ընտրեալ է յԱստուծոյ՝ ետես զլուսեղէն պսակն զոր տեսէք դուք 'ի վերայ նոցա. և այլ ևս ընկերօք զոր առ ընդ ինքեան տարաւ եդ յայրի զմարմին սրբոցն, մինչև այց արասցէ նոցա Տէր. զի գալոց է ժամանակ որ խափանիցն զոհք հեթանոսաց, և շինեսցին անդ 'ի վերայ նոցա եկեղեցիք և տաճար Աստուծոյ. և առաւօտուն գալոց էն 'ի վերայ ձեր զօրքն հեթանոսաց, և յետ աւուր մի՝ ինքն Ագրիպպաս դառնալոց է 'ի ձեզ, և լինի ոչխար Քրիստոսի։

Եւ ասաց նմա և զայլ զամենայն զոր լինելոց էր կարգաւ։ Եւ զարթուցեալ Լաւրենտիոս պատմեաց ընկերացն. և այգուն՝ ելեալ 'ի Ճանապարհ ընդ կողմն Հիւսիսոյ՝ հասին 'ի գետն մեծ, մօտ 'ի գեօղ մի որ կոչէր Ներշի. և անդ հասեալ նոցա հեթանոսքն՝ առին զառաջս նոցա, և զառաջաւորս հաւատացեալ գնդին որ անցանէին ընդ գետն՝ կոտորեցին անձինս հինգ հարիւրս, որք խոստովանելով զՔրիստոս կատարեցան 'ի կողմն գեղջին։ Եւ Լաւրենտիոս առեալ զմնացեալսն էանց ընդ գետն. և հասեալ 'ի տեղի մի գագաթն լերին որ կոչի Գտակ Հռոմոց, և անդ հասին նոցա հեթանոս զօրն, և զի էր երեկոյ՝ օթագայեցան երկու դասքն. և ահա լուսաւոր աստեղք իբրև զբոց պայծառագոյնք երևէր նոցա, զի իջանէին 'ի վերայ մարմնոց սուրբ վկայիցն, և 'ի վերայ երից այլոցն որ 'ի գեղջին Ներշի. զայս տեսին հռովմայեցի զօրն հաւատացեալ, և այլք բազումք 'ի գեղջէն և փառաւորեցին զԱստուած։

Իսկ Ագրիպպաս եմուտ յանկողինն զի ննջեսցէ. և խորհէր ինքն ընդ միտս և զարմանայր, թէ ո՞րպէս սուրբքն յօժարութեամբ տան զանձինս 'ի սուր և 'ի

մահ, զի յոյժ կիրթք են զինուորութեանն 'ի մանկութենէ, և բնաւ կռուիլ ոչ կամին կամ դառնալ ընդդէմ նոցա, այլ ցնծութեամբ զգլուխս իւրեանց սրոյն մատուցանեն. ուր զի 'ի նոցանէ հինգ հարիւրն միայն յառաջագոյն կոտորեցին զերկու հազարսն՝ յորժամ կամեցան. և ասէր 'ի միտս իւր. Մի՞թէ ստուգապէս է ինչ մի ծածուկ 'ի մէնջ զոր նոքա տեսանեն, և մեք ոչ գիտեմք և ոչ կարեմք տեսանել։ Եւ զայս մինչ խորհէր 'ի ննջելն՝ ետես հրեղէն այր մի զի կամէր հրեղէն նիզակաւ հարկանել զնա դառնապէս։ Ետես և զԼաւրենտիոս կանգնեալ մօտ 'ի հրեղէն այրն, և ինքն ապաւինէր 'ի Լաւրենտիոս. և Լաւրենտիոս աղաչէր զհրեղէն այրն խնայել 'ի նա. և նա ասէր Թող զի սպանից զդա, որպէս զընկերս իւր, զի Թշնամի է Քրիստոսի և հալածիչ ծառայից նորա. միթէ դու երաշխաւոր լինիս դմա՝ զի դարձցի 'ի չարեաց իւրոց և ապաւինեսցի 'ի զօրութիւն խաչին Քրիստոսի։ Եւ ասէ Լաւրենտիոս. Եթէ գայ առ իս և ապաւինի 'ի Քրիստոս՝ երաշխաւոր լինիմ։ և ասէր աղաղակելով Ագրիպպաս. Այո, տէր իմ, հրաժարիմ 'ի կռոց և դաւանիմ զՔրիստոս, ողորմեա ինձ, տէր իմ, աղաչեմ։ Եւ առժամայն 'ի բաց ետան զնիզակն 'ի նմանէ, և արկեալ անուր 'ի պարանոց նորա և քարշեալ տարաւ 'ի խորխորատ ինչ լի անշէջ հրով և խաւարաւ և ժահահոտութեամբ, յորում տեսանէր զամենայն գլխաւորս կռոցն զորս ճանաչէր և գիտէր յառաջ Ագրիպպաս։ Եւ ասէր ցնա հրեշտակն. Անդ պարտ է զքեզ արկանել վասն անօրէնութեան քո. և նայեցեալ Ագրիպպաս ետես զԼաւրենտիոս 'ի հեռաստանէ, և աղաղակեալ ասէ. Ով հայր բարեգութ, ողորմեա ինձ և փրկեա զիս։ Եւ նա եկեալ ընդ մէջ կայր ընդ նա և ընդ քերոբէն, և աղաչանօք առնոյր 'ի նմանէ։ Եւ ասէր քերոբէն. Ահա տամ զդա 'ի քեզ մինչև տեսից Թէ զի՞նչ գործեսցէ։ Եւ ձգեալ զձեռս իւր ասէր, տես զվկայն Քրիստոսի՝ զորս կոտորեցիք վասն Քրիստոսի. զի ահա հրեղէն Թագիւ պայծառացեալ են։ Եւ հայեցեալ ետես Ագրիպպաս զսուրբ մարտիրոսն որք նախ կոտորեալքն էին. զի անձառելի փառաք Թագաւորեալ և փափկացեալ կային 'ի դրախտն լուսոյ և յերկնից Թա-

գաւորութիւնն։ Եւ առ ժամայն Եհան Լաւրենտիոս զշղթայսն 'ի նմանէ, և հոգաբարձ եղև Ագրիպպայ սոսկալի տանջանացն։

Եւ նոյն ժամայն զարթեաւ և եբաց զաչս իւր, և ոչ կարէր խօսել. և յարուցեալ՝ հայեցեալ ետես զպըսակսն լուսեղէնս որ ի ջանէր յերկնից 'ի վերայ մարմնոց վկայիցն. և եկեալ 'ի միտս իւր՝ ասէ. Գիտեմ թէ ուստի զերծայ և զինչ յանձն առի։ Ճշմարիտ է զի չունիմ այլ յոյս քան զԼաւրենտիոս և զխաչն Քրիստոսի։ Եւ ոչ կարէր յահէն 'ի վեր ելանել. այլ աղօթէր 'ի միտս իւր ասելով, եթէ՝ Քրիստոս, յոյս քրիստոնէից, ընկալ զիս, և թող զչարիսն զոր առ քեզ գործեցի։

Եւ յորժամ այգ եղև, և առաքեաց Դոմնաս իշխանն առ Ագրիպպաս և ասէ, թէ՝ Փութացիր զի երթիցուք 'ի վերայ ամպարշտացն այնոցիկ. և եկեալ սպասաւորքն Ագրիպպայ պատմեցին Դոմնայի, եթէ ոչ կարէ խօսել 'ի զարմացմանէ տեսլեան գիշերոյս զոր տեսեալ է, և ոչ գիտեմք թէ զինչ եղև նմա զի որպէս մեռեալ կայ։ Եւ ելեալ Դոմնաս եկն առ նա՝ և ետես զի կերպափոխեալ էր յոյժ և հոգիւ կարէր խօսել. և հարցանէր թէ զինչ պատահեաց քեզ. և նա ասէր. Թոյլ տուր ինձ, և դու գիտես զգործս քո զինչ գործեսցես։ Եւ Դոմնաս առաքեաց զզօրսն 'ի վերայ սուրբ գնդին և երթեալ կոտորեցին 'ի հաւատացելոցն վեց հարիւր այր։ Եւ եղև յանկարծակի մրրիկ և կայծակունք և մառախուղ 'ի վերայ հեթանոսացն, և բազումք կորեան յանօրինացն. զի կարկուտ քարեղէն անկեալ խաւարաւ՝ զբազումս շուրջ պատեաց և սպան և ցրուեցան, և այլքն մոլորեցան, բայց սրբոցն ոչ ինչ վնասեաց։ Եւ Լաւրենտիոս միով մնացեալ հազարաւն՝ էջ 'ի մարգ Ճակատեղւոջ որ կոչէր Սալմին, 'ի կողմն արևմտից 'ի ստորոտ լերինն որ կոչէր Եհմու, որ է մերձ լճակի գաւառին այնմիկ։

Եւ զայն ևս յորժամ ետես Ագրիպպաս զի մրրիկն վնասակար 'ի վերայ հեթանոսացն միայն էր, հեծաւ 'ի վերայ ջորւոջն իւրում երկու մանկամբք, և գաղտ գնաց 'ի բանակ հաւատացելոցն՝ թողեալ զհեթանոս գունդն. և մերձ եղեալ առ Լաւրենտիոս, և ի ջեալ

գնայր 'ի կաղս և աղաղակէր. Ողջոյն քեզ երաշխաւորդ իմ, և ողջոյն քո օրհնեալ ժողովրդեանդ, ծառայ Քրիստոսի, ողորմեայ ինձ, զի ուրացայ զկուռս, և ընդ ձեզ դնեմ զանձն իմ վասն Քրիստոսի։ Եւ սուրբքն ուրախացեալք կոչեցին զնա յօժարութեամբ, և եկեալ անկաւ յոտսն Լաւրենտիոսի։ Եւ Լաւրենտիոս գոհանալով զԱստուծոյ յարոյց զնա և համբուրեաց և կնքեաց խաչիւն Քրիստոսի. և առժամայն հաստատեցան անդամք նորա և ողջացաւ, և եկն 'ի զօրութիւն և 'ի միտս իւր, և պատմեաց զահաւոր տեսիլ գիշերոյն, և զլուսեղէն պսակաց վկայիցն։ Ասէ Լաւրենտիոս ցնա. Նոյն այրն հրեղէն զոր տեսերն դու, նա յառաջագոյն պատմեաց ինձ զի փրկելոց էիր և կոչելոց 'ի կեանս։ Եւ աղաղակեցին ամենայն սուրբ գունդքն, թէ և մեք զնոյն լուսեղէն պսակն զոր տեսեր դու՝ որ բաշխէր սուրբ վկայիցն, տեսաք զի եկեալ յերկնից եկաց 'ի վերայ խորանիդ քո և այլոցդ 'ի դասուէ քումմէ։

Եւ Ագրիպպաս գոհացեալ մեծ խնդութեամբ ասէր. Աղաչեցէք զԱստուած, զի մի կորուսցէ զիս 'ի մեղս իմ զոր գործեցի։ Եւ Լաւրենտիոս աղաղակեաց և ասէ. Մի երկնչիր եղբայր Ագրիպպաս, Քրիստոս 'ի ձեռն խաչին իւրոյ և մկրտութեան սրբոյ ընկալեսցէ զամենայն յանցանս քո։ Եւ ասէ ցնա. Խոստովանիս և դաւանիս զամենայն խորհուրդսն Քրիստոսի, և յանձն առնուս զմկրտութիւնն սուրբ։ Եւ նա ասէ. Յօժարութեամբ մեծաւ խոստովանիմ և հաւատամ 'ի բոլոր սրտէ 'ի Տէր Յիսուս Քրիստոս. զի 'ի մանկութենէ ընթերցեալ է իմ զգիրս Նազովրեցւոյ, գիտեմ և զոր ասաց Քրիստոս. Եթէ ոչ ծնցի 'ի ջրոյ և 'ի Հոգւոյ՝ ոչ մտցէ յարքայութիւնն Աստուծոյ. և թէ՝ Ամենայն որ խոստովանի զիս առաջի մարդկան, խոստովանեցայց և ես զնա առաջի Հօր իմոյ որ յերկինս. և թէ՝ Որ ոչ առնու զխաչ իւր և գայ զկնի իմ՝ չէ ինձ արժանի։ Հաւատամ զՔրիստոս Աստուած Ճշմարիտ և Տէր ամենայնի, Հարբ և ամենասուրբ Հոգւոյն. և հաւատամ յամենայն նոր խորհուրդս հաւատոցն։

Եւ գոհացան յոյժ խնդութեամբ զՔրիստոսէ՝ հռովմայեցի զօրքն սուրբ։ Յայնժամ հրամայեաց Լաւ-

րենտիոս քահանային որ ընդ նմա էր՝ զի օծցէ զԱգ-
րիպպաս սուրբ ձիթոփն. և օծեալ և մկրտեաց զնա 'ի
Տէր, և կնքեաց սուրբ մեռոնաւն. և ողջունեցին զնա,
և հաղորդեցուցին սրբոյ գոհութեանն անարատ մարմ-
նոյն Քրիստոսի Աստուծոյ մերոյ և արեան։ Եւ վաղ-
վաղակի գուշակեաց Լաւրենտիոս թէ վաղիւն կատա-
րելոց են ընթացք մերոց ընկերացս, և 'ի միասին կա-
պիմք ես և Ագրիպպաս վասն սիրոյն Քրիստոսի, և տա-
նիմք 'ի տանջանս մեծամեծս։

Եւ առժամայն ահա երեք արք 'ի հեթանոս գրն-
դէն 'ի հեռաստանէ եկեալ կային, և աղաղակեալ
հարցանէին թէ ըմբռնեա՛լ իցէ ոք 'ի նոցանէ, կամ
սպանեալ զԱգրիպպաս եպարքոսն և մանկունք ընդ
նմա, զի կորեան յերեկ։ Իսկ Ագրիպպաս ինքնին ե-
լեալ գոչեաց և ասէ. Ահաւասիկ ես ասա՛ եմ, եր-
թայք ասացէք ցԴոմնաս, թէ ես այսուհետև որոշե-
ցայ 'ի կայսերէն և 'ի ձէնջ. զի դուք ընկերք էք սա-
տանայի, որոց ընդ նմա կորուստն է պատրաստեալ։
Այլ ես ծառայ եմ Քրիստոսի և հաղորդ Լաւրենտիո-
սի և ընկերաց նորա։ Եւ դարձան արքն և պատմեցին
թէ Ագրիպպաս անդ է, և քրիստոնեայ եղեալ է. և
առժամայն աղաղակեաց Դոմնաս և ասէ. Վա՛յ է մեզ
'ի քէն, Յիսուս Նազովրեցի, և յաղանդոյն զոր ուսու-
ցեր աշակերտաց քոց. զի զընտիրս և զմեծամեծս հե-
թանոսաց 'ի քեզ ձգեալ որսաս։ Երդնում 'ի կուռս,
զի թէ ոչ դարձցի Ագրիպպաս, մնամ յԱսորիս մինչև
դառնապէս զնորա վախճանն արարիցս և զամենայն
քրիստոնէից։ Եւ ասեն զօրքն ցնա. Տէր, մնասցուք և
հանգիցուք այսօր, և 'ի վաղիւն արասցուք զոր և
կամիս։

Եւ 'ի գիշերին տեսանէին սուրբքն լոյս յերկնից զի
իջանէր 'ի վերայ վկայիցն որ էին 'ի վերայ գագաթան
լերինն կոտորեալ. և նորահաւատքն առաւել ևս հաս-
տատէին, և գոհանային Ագրիպպաս և իւրքն։ Եւ ասէ
Լաւրենտիոս ընդ Ագրիպպաս, թէ՝ Եւ հինգ հարիւրքդ
ընդ մեզ վկայելոց էք. և զամենայն ինչ ասաց նմա զոր
լինելոց էր։ Եւ իբրև այգ եղև, եկեալ հասին հեթա-
նոս զօրն 'ի վերայ սուրբ գնդին Հռոմոց, և իջեալ
պատեցին և կալան զնոսա. և սկսաւ Դոմնաս հեզու-

թեամբ ողոքել զԱգրիպպաս և զԼաւրենտիոս և զամենայն զօրն զի դարձցին 'ի կուռս. և խոստանայր ասելով. Եղբարք և որդիք իմ, դարձարուք յաստուածսն, զի թողումք զոր ինչ գործեցիք ապաստամբութեամբն, նաև բազում ձիրս ընկալջիք. ապա թէ ոչ՝ կոտորիք չարաչար տանջանօք իբրև զնոքա որ կորեանն. զի ես բազմապատիկ փառս և աթոռս պատուոց առից ձեզ յարքայէ՝ եթէ լսէք ինձ դառնալ։ Աղաղակեաց Ագրիպպաս և ասէ ցնա. Ընդէ՞ր եղբարս կոչես քեզ զեղբարս Քրիստոսի, և որդիս զորդիսն երկնաւոր Հօրն։ Ձեր եղբարքդ դևքն են, որք էք որդիք սատանայի, զորս ուրացաք մեք, դաւանելով զՔրիստոս, զորոյ և վկայեմք զՀշմարտութիւն նորա կենաց և մահու. խոստումնդ ձեր ընդ ձեզ լիցի 'ի կորուստ և կայսերն ձեր, վաստակաւորք սատանայի։ Նոյնպէս և ամենայն սուրբ գունդն Հռովմայեցի աղաղակէին. Մի՛ աշխատիր խաբէութեամբ, ով Դոմնաս, զի մեք քրիստոնեայք եմք, և պարտիմք վասն նորա մեռանել որ վասն մեր մեռաւ. և բազում բանս վկայականս համարձակ խօսեցան։

Եւ բարկացեալ Դոմնաս՝ հրամայեաց զօրաց իւրոց առնուլ զզէնս իւրեանց և կոտորել զնոսա։ Եւ սուրբքն փախստեամբ ելեալ գնացին 'ի գագաթ լերինն որ կոչէր Եհմու, և կացին անդ. զի ասէին թէ կամիմք մօտ յընկերսն մեր որ նահատակեցան՝ կատարել զընթացս մեր. և մինչ ելեալ աղօթէին, հասին նոցա հեթանոսքն, և անդ կոտորեցին զամենեսեան սրով։ Եւ յինքանելն իւրեանց՝ կալեալ կապեցին զԱգրիպպաս և զԼաւրենտիոս և բերին առաջի Դոմնային, և նա բազում բանիւք ջանայր պատրել զնոսա։ Եւ նոքա աղաղակէին. Հաւատամք և դաւանեմք զՔրիստոս, որ պատրաստեաց զմեզ լինել վկայս իւր և եղբարս՝ ընդ այլ վկայեալ եղբարցն մերոց, որ յերկինս են. և բազում յանդիմանութեամբ խրատէին զնա։ Իսկ նա ետ դնել զնոսա 'ի շղթայս ծանրագոյն, և հրամայեաց հաղարապետին՝ որում անուն էր Մարդենիկոս, զի այնպիսի կապանօք մերկ և հետիոտս տարցէ զԼաւրենտիոս առ կայսրն մինչև 'ի Հռովմ։

Եւ Լաւրենտիոս ետ ողջոյն Ագրիպպայ և ասէ.

Քրիստոս զօրացուսցէ զքեզ համբերել վասն նորա ժուժկալութեամբ։ Եւ ասէ Ագրիպպաս. Ամէն. Քրիստոս արժանի արասցէ զմեզ տեսանել զմիմեանս յառագաստ իւր։

Եւ գրեաց Դոմնաս առ կայսր զամենայնն, և վասն եպարքոսին Աստուծոյ Ագրիպպայ թէ որպէս և նա քրիստոնեայ եղև։ Եւ առեալ հազարապետն զԼաւրենտիոս անողորմ կապանօք՝ եւ 'ի Ճանապարհ այլ ևս ընկերօքն սրբովք. և բազում ողորմութիւն առնէր հազարապետն 'ի վերայ Լաւրենտիոսի և ընկերացն, զի տեսանէր 'ի նա բազում աքանչելիս։

Եւ Դոմնաս և այլ չարքն առեալ կապեալ զԱգրիպպաս եկին առ մեծ գունդ բանակին որ 'ի գաշտին նստեալ կային. և իբրև տեսին զօրքն զեպարքոսն իւրեանց զԱգրիպպաս կապեալ՝ զարմացան և զարհուրեցան յոյժ, թէ որպէս փոխեցաւ 'ի ջերմութենէ կռամոլութեանն, և գնաց առ Քրիստոս՝ ընդ որ հակառակէր կռօքն։ Եւ Դոմնաս բազում արս միջնորդս առ Ագրիպպաս յղէր, թերևս դարձցի առ նոսա վերստին։ Իսկ սուրբն անշարժ մտօք հաստատուն կայր 'ի Քրիստոս, և ամենեքեան դարձուցանէր զնոսա յետս։

Եւ ելեալ Դոմնաս 'ի հարաւակողմն լերինն Աւշմոյ՝ խորհէր թէ որպէս տանջեսցէ զԱգրիպպաս, և խորհեցան ընդ նա այլ և ծերքն և ասեն. Կապեսցի Ագրիպպաս ձեռս յետս, և վէմ մի մեծ 'ի վերայ միջացն կապեսցի, և շղթայք 'ի պարանոց նորա, և կապեսցի մերկ 'ի վերայ իշոյ, և մի՛ ընդ Ճանապարհ տարցեն զնա, այլ ընդ խուռն մացառս դժուարինս, զի պատառեսցի և խզեսցի ամենայն մարմին նորա, մինչև 'ի բարձր տեղին որ կոչի Հարդոմոյ։ Եւ արարեալ այնպէս՝ տարան զԱգրիպպաս 'ի տեղին յայն մեծ տանջանօք, մինչ զի զյետին շունչն շնչէր, զի հոսէր արիւնն յոտից և 'ի մարմնոյն նորա, և 'ի հարուածոյ փշոցն և քարանցն՝ պատառ պատառ միսն և մորթ նորա մնայր առ փշովքն և քարամբքն։ Եւ տարեալ 'ի տեղին՝ արկին զնա 'ի վերայ երեսացն, և քարն մեծ կայր կապեալ 'ի վերայ միջացն 'ի վերոյ, և ինքն գլխիվայր անկեալ էր. և սկսաւ աղօթել. Օգնեա ինձ Քրիստոս Տէրդ իմ, զի մի՛ ասիցեն ուր է Աստուած նորա։ Յայն-

ժամ հրամայեաց դատաւորն լարիւք եւ այլ կապել զնա. և կեայր այնպէս չարաչար դառնութեամբ անսուաղ և առանց ըմպելոյ։

Եւ 'ի գիշերին ետես զՀրեղէն քերոբէն՝ որ նախ ահաւորապէս եկն առ նա, զի հեզութեամբ երևեալ ողջոյն ետ նմա, քանզի ոչ կարէր ննջել 'ի դառնութենէն, և ծագեալ լուսաւորեաց զտեղին. և մերձեցուցեալ զնիզակն՝ փշրեաց զկապանսն և ասէր. Ուրախ լեր ընդ կապանս, ով Ագրիպպաս, զի ես եմ որ եկի յառաջագոյն սպանանել զքեզ. ահա այժմ եկի օգնել քեզ. զի կամի դատաւորն յոյժ տանջել զքեզ, այլ մի երկնչիր, զի ոչ թողից զքեզ մինչև նա յամօթ լիցի։ Եւ ետ 'ի նա իբրև պտուղ ինչ և ասէ. Կեր զայս և զօրացիր, և այլ ոչ քաղցնուցուս և ոչ ծարաւիցիս մինչև յետին կիրքն։ Եւ իբրև եկեր զպտուղն Ագրիպպաս, լուսաւորեցաւ միտքնորա, և զօրացաւ և եղև ողջ յամենայն տանջանացն։

Եւ զի անկաւ տարաժամ մահ 'ի տեղին յայն 'ի զօրքն ամենայն, ասէ Հրեշտակն. Խնդրեա զոր ինչ կամիս և տացէ քեզ Աստուած. և աղօթեա զի խափանեսցի տարաժամ մահս այս 'ի տեղւոջէս քումմէ վասն մարտիրոսաց եղբարցն քոց։ Եւ սուրբն միխթարեալ աղօթեաց, և ննջեաց մինչև ցայգն։ Իսկ 'ի պահապանացն բազումք արթուն կացին, և տեսին յայտնապէս զսուրբ զուարթունն, և բազում հիւանդք որ կային յիջևանսն՝ տեսին զի ասէր ցնոսա Հրեշտակն, թէ վասն աղօթիցն Ագրիպպայ ոչ մեռանիք 'ի տարաժամ մահս որ կայ այժմ։ Եւ այգուն՝ եկեալ առ սուրբն աղաչէին զնա. և սուրբն ամբարձեալ զձեռն իւր խնդրէր յԱստուծոյ ասելով. Տէր իմ Քրիստոս, անցո զմահ տարաժամն յիջևանացս։ Եւ իսկոյն երևեցան ամենեցուն յայտնապէս երկու սև արք երկայնք և սոթոթք և ահաւորք, որք ունէին խիշտս երկայնս և հրեղէնս, և եկեալ փութով ելանէին յիջևանացն, և աղաղակէին և ասէին. Ո՞ է ընդ մեզ և ընդ քեզ, Ագրիպպաս, որդի անօրինի, զի եկիր խափանել զմեզ 'ի գործոյս յորոյ վերայ տուեալ էր մեզ իշխանութիւն։ Եւ ասէ Ագրիպպաս. Ոչ ես խափանեմ զձեզ, այլ Քրիստոս է որ հալածէ զձեզ յայսմ իջևանացս։

Իսկ նոքա չկամ եղեալք հեռացան և այլ ոչ երևէին. և ոչք 'ի հիւանդութեան էին և մերձ 'ի մահ՝ վաղ-վաղակի ողջացան դիւրութեամբ։ Իբրև տեսին այլ ամենայն հեթանոսքն՝ ասէին ցդատաւորն. Ճշմարտիւ արժանի է զարմացման որ ինչ եղև ձեռամբն Ագրիպպայ։ Ասէ Դոմնաս. Մի՛ մոլորիք, ով խաւարամիտք, զի սովորութիւն է աղանդոյն Նազովրեցւոյ։ Եւ հրամայեաց բերել զԱգրիպպաս առաջի իւր. իբրև ետես զնա արձակեալ 'ի կապանացն՝ բարկացաւ, և հրամայեաց քննել յամենայն ժողովն, թէ ով արձակեաց զնա. և ամենայն զինուորքն եկեալ պատմեցին թէ հրեշտակ յերկնից եկեալ արձակեաց զԱգրիպպաս։ Եւ չար դատաւորն ասաց. Զայդ ամենայն ստութեամբ պատմէք և 'ի նանիր. և աղաղակեալ բազում բանիւք սպառնայր Ագրիպպայ և ստիպէր դառնալ 'ի հաւատոցն։ Եւ ասէ Ագրիպպաս. Զամենայն ժամանակս իշխանութեանն իմոյ չէի հանգուցեալ 'ի ննջելն որպէս 'ի յայսմ գիշերի. և յոյժ յանդիմանեաց զմոլորութիւն կռոցն։

Եւ հրամայեաց դատաւորն կուտել 'ի ներքոյ Ագրիպպայ քարինս բազում, և երկաթի շղթայիւք կապել զոտս և զձեռս նորա յերկուց կողմանց, և վերացուցանելով հարկանէր սաստիկս 'ի վերայ սրագոյն քարանցն, և մեծ վիմի՝ զոր ոչ կարէին զօրաւոր արք շարժել, հրամայէր թաւալեցուցանել և դնել 'ի վերայ նորա, զի մանրեսցին ամենայն ոսկերք նորա մինչև մեռցի չարաչար. և արարին այնպէս։ Եւ յանկարծակի վէմն զոր 'ի վերայ նորա թաւալեալ էին՝ պատառեցաւ և եհան ձայն մեծ, և թռուցեալ մանրուածք քարին կոտորեցին յանհաւատիցն քսան այր։ Եւ էջ հրեշտակ սուրբ յերկնից, և ելոյծ զկապանս սրբոյն և կացոյց 'ի վերայ ոտից իւրոց, և անյայտ եղև առժամայն. և նա գոհանայր զԱստուծոյ և աղօթէր։

Եւ սկսաւ սուրբն խրատել զնոսա. և Դոմնա աղաղակեաց և ասէ. Ճշմարիտ եհաս աղանդն Նազովրեցւոց չարակենցաղիս Ագրիպպայ. և հրամայեաց խաչել զնա 'ի վերայ փայտի և խեղդամահ առնել. և տարածեալ 'ի ծառ մի երկձղի՝ եդին զգլուխ սրբոյն 'ի հերձեալ տեղիս ծառոյն, և փայտ մի մեծ ոլորակեալ

'ի վերայ գլխոյն, և քարինս մեծամեծս կախեցին զոտիցն. և իբրև մերձ եղև 'ի մահ՝ փայլատակեաց կայծակն և եհար զծառն և Ձեղքեաց յերկուս, և ընկէց յայնկոյս և յայսկոյս, և ամենայն զինուորքն կուրացեալք հարան և անկան յերկիր. և Ագրիպպաս ողջ մնաց։ Եւ մատուցեալ Ագրիպպաս յարոյց զնոսա և բժշկեաց, և նոքա հաւատացին 'ի Քրիստոս. և եկեալ նովաւ 'ի բանակն՝ քարոզէին և վկայէին զՔրիստոս. և ետ դատաւորն կախել զնոսա 'ի միասին որք էին արք տասն և հինգ։

Եւ հրամայեաց ժողովել բազում փայտ և վառել. և առնուլ թանձրագոյն կտաւ և թանալ և օծանել ձիթով և նաւթիւ ծծմով և ձիթով զկտաւն. և ետ պատել կտաւովն զԱգրիպպաս որպէս մեռեալ, և արկանել զնա 'ի հուրն բորբոքեալ։ Եւ սրարեալ այնպէս, պատեցին զսուրբն վառողքն և արկին զնա 'ի հուրն. և իսկոյն երևեցաւ նմա 'ի մէջ հրոյն քերոբէն հրեղէն, և անջատեաց զհուրն 'ի սրբոյն, և զբազումն այրեաց 'ի կռապաշտից, արս վաթսուն և հինգ։

Եւ սուրբն արձակեալ 'ի հրեշտակէն եկաց 'ի վերայ ոտից և չէր ինչ փնասեալ 'ի հրոյն։ Իբրև տեսին զնա հինգ հարիւր այրն որ էին յիւրոց զօրացն՝ զի կայր 'ի մէջ հրոյն կանգուն որպէս հրեղէն, և փայլէր ընդ հրեշտակին, եկեալք առ նա ցնծութեամբ ողջոյն տային և ասէին. Եւ մեք հաւատամք 'ի Քրիստոս Աստուած, և լինիմք ընդ քեզ վկայք նորա. զի ուրանամք զամենայն կուռս հեթանոսաց չար կայսերն։ Եւ սուրբն գոհացեալ՝ գոչէր ասելով. Եկայք առ իս զինուորք իմ, և 'ի յետինս՝ ընկերք իմ օրհնեալք, յառհաւատչեայն կենաց։ Եւ բազում բանս խօսեցաւ աստուածայինս և յորդորականս։ Խօսեցաւ և հրեշտակն ընդ Ագրիպպայ՝ գուշակելով նմա զլինելոցն, և վերացաւ յերկինս։

Եւ ժողովեալ իշխանք զօրուն հեթանոսաց՝ ասեն ցԴիոմնաս, եթէ՝ Ո՞չ տեսանես զի զոր ինչ հնարիս դու տանջանս Ագրիպպայ՝ 'ի յամօթ մեզ լինի և կռոցն 'ի ստութիւն. չէ՞ բաւական զոր նախ կրեցաք 'ի դոցանէ՝ կոտորեալք սրով և քարեղէն կարկտիւ, երեք հազարքն և այլք բազումք. և 'ի տարաժամ մահն մեռա-

նել չորս հազար այր, և այլք բազումք 'ի յոլով տե-
ղիս, մինչ զի և կէսս 'ի մէնջ պակասեաց, այլ և մեծ
եպալրքոն մեր հաւատացեալ ամօթ եղև մեզ. թուի
թէ ամենեքեան մեք սատակելոց եմք, և այսպէս լինե-
լոց. և յոլով բանս մարգարէականս խօսեցան։ Եւ
բարկացեալ դատաւորն հրամայեաց սպանանել զՀինգ
հարիւրսն, եթէ ոչ դարձցին 'ի Քրիստոսէ յետս։

Եւ նոքա սկսան դաւանել և վկայել զՔրիստոս համ
արձակութեամբ Աստուած Ճշմարիտ, և զսուրբն Ագ-
րիպպաս՝ հայր իւրեանց կոչէին։ Եւ Դոմնաս հրամա-
յեաց տապարօք հարկանել զնոսա. և առեալ դահճա-
ցըն զՀինգ հարիւր և տասն և հինգ այրն՝ հանին 'ի
սպանումն 'ի բանակէն։ Եւ աղաչեցին սուրբքն զդա-
հիճսն զի հանցեն զնոսա 'ի վերս 'ի գագաթն՝ ուր կո-
տորեալ էին նախնի սուրբքն, և անդ զինքեանս կոտո-
րեսցեն։ Եւ իբրև ելին անդ՝ տեսին լուսաւոր այր մի
մեծ յոյժ, որ բարձեալ էր պսակս լուսեղէնս և կո-
չէր զնոսա, և բաշխեալ տայր նոցա, յորդորելով և
քաջալերելով 'ի Քրիստոս և ասէր. Ես եմ Միքայէլ
սպասաւորն Աստուծոյ, որ կամ յերկինս առաջի նո-
րա, որ և ոչ թողում զՀալածիչսդ ձեր մինչև առից
զվրէժ ձեր. և դահիճքն զձայնն լսէին՝ բայց զտեսիլն
ոչ տեսանէին։

Իսկ վկայքն ուրախութեամբ մատեան 'ի մահ։ Եւ
իբրև կոտորեցին զինուորքն զամենեսեան զսուրբսն
և եկին առ Ագրիպպաս սպանանել և զնա, տեսին
հուր շրջապատեալ զնովաւ, և յոյժ խռովեցան ահիւ.
և դարձան յետս ամօթով և դողութեամբ զարհու-
րեալք և ահաբեկք, և պատմեցին ընկերացն զահա-
ւոր տեսիլն և զբարբառն սուրբ զոր լուան։

Իբրև լուաւ զայս չարասիրտ դատաւորն զի չէր
սպանեալ զԱգրիպպաս, առաքեաց և ետ բերել զԱգ-
րիպպաս առ ինքն. և սուրբն աղօթելով առ մարմնով
սրբոցն՝ գնաց առ դատաւորն և եկաց առաջի. և վը-
կայեաց դարձեալ բարիոք զՔրիստոս. և ելեալ զար-
մացմամբ դատաւորն բանակաւն 'ի տեղւոջէն և տա-
ւրաւ դարձեալ շղթայիւք հետի զկնի իւր ընդ հե-
ծեալսն զսուրբն. և նա մեծ տանջանօք երթայր ընդ
նոսա 'ի վերայ երեսաց իւրոց 'ի քարշ, և ասէր. Բա-

րի է ինձ զի խոնարհ արարեր զիս, որպէս ուսայց զի-
բաւունս քո։

Եւ գնացեալ 'ի կողմն լերինն ելին 'ի գեօղն Շիկօր,
և 'ի գիշերին արգելին զԱգրիպպաս. և յոյժ նախա-
տելով ստիպէր զի դարձցի 'ի փառն առաջին։ Եւ
սուրբն խօսեալ աստուածային բանս ընդ կինն՝ անար-
գեաց զկուռսն։ Եւ կինն վառէր զԹոնիրն զի եփեսցէ
հաց, և ասէ ցսուրբն. Թէ էր իմ իշխանութիւն՝ 'ի
յայս Թոնիրս այրէի զքեզ։ Ասէ սուրբն. Յերեկեան
աւուրդ յայլ մեծ հուր արկին զիս պիղծ ընկերքն քո
և փրկեցայ, մնացեալ անկէզ Քրիստոսիւ Տերամբ իմով։
Ասէ կինն. Եթէ Ճշմարիտ զայդ յոյս ունիս 'ի Քրիս-
տոսն քո, արի՛ մուտ այժմ 'ի Թոնիրս այս։ Եւ սուրբն
կնքեալ զինքն խաչիւն սրբով՝ յիշեաց զՔրիստոս, և
եմուտ եկաց 'ի մէջ Թոնրին, և առժամայն շիջաւ
Թոնիրն, և լցաւ յոչ գոյից Թոնիրն՝ ջրով. և կինն ան-
կեալ լալով յոտս սրբոյն զղջացաւ և հաւատաց 'ի
Քրիստոս։ Եւ ելեալ սուրբն 'ի Թոնրէն կնքեաց խա-
չիւ զկինն՝ և բացան աչք ոգւոյ նորա, և ետես զՀրեշ-
տակն կացեալ մերձ 'ի սուրբն, և առժամայն խնդրեաց
կինն ամենայն ընտանեօքն զսուրբ մկրտութիւնն.
և Ագրիպպաս առեալ զկինն մկրտեաց 'ի Թոնիրն՝ որ
էր լցեալ ջրովն՝ ամենայն ընտանեօքն իւրովք, և մնաց
Թոնիր ջրովն լի նոյնպէս։ Եւ ապա ննջեաց սուրբն և
հանգեաւ յաշխատութենէն, զի ետես զՀրեշտակն
Աստուծոյ զի ասէր, եթէ՝ Վաղիւն կատարելոց ես 'ի
Քրիստոս, այլ աղօթեա 'ի վերայ աշխարհի՝ զի Թագ-
փառաց պատրաստ կայ յերկինս։

Եւ յարուցեալ գոհանայր և աղօթէր խնդութեամբ
վասն աշխարհի և մարդկան, զի դարձցին 'ի Ճշմարիտ
հաւատս, և ասէր. Տէր, փրկեա զամենեսեան 'ի
չարէ, և թող զմեղս իմ զբազումն՝ զոր գործեցի յան-
գէտս. և որ ոք խնդրէ 'ի քէն անուամբք և մարմնով
մերով զթողութիւն՝ լուիցես և տացես նոցա, բղխե-
լով 'ի մէջ զբժշկութիւնս ամենայն ախտից հոգւոց
և մարմնոց, ներգործելով յոսկերաց իմոց և յոսկե-
րաց այլոց ընկերաց մերոց՝ վկայից քոց. և 'ի հողոյն
ուր կան նշխարքն նոցա զշնորհս Հոգւոյդ սրբոյ և զբար-
ձումն ամենայն պատահարաց, և զօգնութիւն ամե-

նայն մարդկան. և որ ոք կատարէ զիշատակս մեր, հատո նոցա զմեծ քո բարիսդ յերկինս և յերկրի հաբիւրապատիկ, կամ որ նուիրէ ինչ յանուն մեր քեզ՝ տուր նոցա զողորմութիւն քո անսպառ։

Իբրև լուաւ կինն զոր աղօթէր սուրբն, առեալ մանուկ մի այսահար մատոյց, և աղաչէր զսուրբն զի բժշկեսցէ զնա. և սուրբն խաչակնքեալ զամենայն զգայարանս նորա և զսիրտն՝ կոչեաց զանունն Քրիստոսի, և մկրտեալ զնա բժշկեաց նոյնժամայն. և դեռն ելեալ արտաքոյ տանն աղաղակէր և ասէր. Վա՛յ ինձ Ագրիպպաս, 'ի քէն, զի երբեմն հալածիչ էիր քրիստոնէից, և այժմ զդեռս հալածես 'ի նոցանէ։ Եւ սաստեաց նմա սուրբն, և մանուկն ողջացաւ։

Եւ իբրև այդ եղև՝ ածին կապեալ զսուրբն առ դատաւորն. և յետ հարցափորձելոյն ընդ յերկար, և սրբոյն պինդ կալոյ 'ի հաւատս՝ ետ բերել Դոմնաս անմուղ զուարակ մի և ձի մի ամեհի և խրոխտ յոյժ, և կապել ետ հաստ պարանօք զսուրբն Ագրիպպաս ընդ երկուսն՝ երկաթի շղթայիւք, և պնդեալ գոլով ըզսուրբն 'ի մէջ երկուցն՝ ձիոյն և ցլոյն, թողին 'ի դըժուարին վայրս և կարծէին թէ առժամայն մեռանէին. և եզն և ձին առաւել հեզացեալք՝ ոչ շարժէին, այլ որպէս բանաւորք կոյին զգուշութեամբ։ Յայնժամ նախ հազիւ ամենայն բազմութիւնն կապել ընդ սրբոյն կարային, եկեալ տեարք ձիոյն և եզինն արձակել՝ իբրև զքաջ մղեալս տարան զնոսա 'ի տունս իւրեանց, և ամենայն բազմութիւնն աղաղակէր. Մեծ է Աստուածն Ագրիպպայ. և յամօթ լեալ Դոմնաս՝ փոխեցաւ անտի, և հարցափորձեալ այլօք բանիւք ևս պնդագոյն եգիտ զսուրբն։

Եւ ապա հրամայեաց նոյն դատաւորն քաջ և զօրեղ առն միոյ որ կոչէր Զենոբ, զի դլխատեսցէ զսուրբն. և այրն գոչեալ ասէր. Երկնչիմ առնել զայդ, զի մի՛ ընդ առաջինսն կորեայց։ Այլ սուրբն Ագրիպպաս. Եկ այր դու, մի՛ երկնչիր, ոչ պատահէ քեզ չար, զի և դու որդի լուսոյ լինելոց ես. քանզի և ես բազումս կոտորեցի զսուրբ վկայսն, և նոքիմբք կոչեցայ առ Քրիստոս։ Եւ անկեալ սուրբն 'ի ծունկս 'ի վերայ պարապի միոյ՝ աղօթեաց և ասէ. Տէր, ընկալ զոգի

ծառայիս քո. և խոնարհեցուցեալ զպարանոցն, ընկալաւ սրով զկատարումն. և նոյնժամայն յայտնապէս երևեցաւ, զի հրեղէն այրն բազմութեամբ երկնաւոր զօրաց տանէր զՀոգի սրբոյն. զորոց և զձայն բարբառոյն լուան բազումք 'ի հեթանոսացն։ Նոյնպէս այրն որ գլխատեաց զսուրբն ետես զքերոբէն հրեղէն, և լուաւ զսքանչելի բարբառն. և առեալ զարիւն սրբոյն օծանէր զինքն, և հաւատաց 'ի Քրիստոս նոյնժամայն և մկրտեցաւ. և զամենայն ժամանակս իւր պատուեաց զսուրբն և գրեաց զվկայութիւնն և զյիշատակս նորա. որ և ինքն Զենոբիոս չարչարանօք կատարեալ վկայ եղև Քրիստոսի՝ յետ սրբոյն։

Իսկ զօրք անօրինին Դոմնայի սփռեցան երթալ 'ի տեղիս իւրեանց. և հասեալ 'ի գեօղ մի՝ եհաս նոցա ցասումն 'ի հրեշտակէն սրբոյ, և լուան բարբառ և որոտումն մեծ։ Եւ եղև կայծակունք և այրեցաւ դատաւորն 'ի վերայ ջորւոյն. և շրջապատեալ հուրն յամենայն կողմանց՝ և զամպարիշտն այրեաց ամենայն երիվարօքն իւրեանց և զինուորօք, իբրև արս հազարս. և այլքն հազիւ փրծեալ երթեալ առ մեծ գետով գաւառին՝ տանջէին իբրև հրով բորբոքեալք։ Իսկ հեթանոսք բնակիչ գեղջն ուր կատարեցաւ սուրբն, սկսան տարաժամ մահուամբ սատակիլ. որոց քարոզէր հաւատացեալ կինն հաւատալ 'ի Քրիստոս, և առնուլ զմարմին սրբոյ վկային և թաղել պատուով 'ի գերեզմանի. և պատմեաց նոցա զամենայն սքանչելիսն որ եղեն. և ժողովեալ ամենայն գեղջէիցն՝ մեծ պատուով թաղեցին զսուրբն 'ի տեղւոջն ուր պսակեցաւ։

Եւ երևեցան երկու արք սևք զարհուրելիք յոյժ և չարակերպք, որք ունելով նիզակս՝ ելանէին 'ի գեղջէն և աղաղակելով ասէին. Ով Ագրիպպաս, և յետ մահու խափանես զմեզ և հալածես. և նոյնժամայն դադարեաց տարաժամ մահն։ Որով յոյժ հաստատեալ նորահաւատքն մկրտեցան 'ի թոնիրն ջրալից, և առաւել պատուէին զսուրբն, և այնչափ բժշկութիւնք սկսան լինել 'ի լերինն անդէն, և անթիւք եկեալ բժշկէին արագ. բայց մնացեալ հեթանոսքն դարձան տրտմութեամբ և զարմացմամբ։ Իսկ հաւատացեալքն լուեալ փառաւորէին զԱստուած. և որք կատարեցան

և պսակեցան 'ի տեղիս տեղիս 'ի ժամանակին յայնմիկ, լուսեղէն նշանօք փառաւորեցան և այլ սքանչելեօք։

Իսկ Լաւրենտիոս այլ ևս ընկերօք գնացեալ 'ի Հռովմ և կացեալ առաջի կայսերն՝ վկայեաց զՔրիստոսի աստուածութիւնն. և զանազան և սոսկալի տանջանօք առեալ զկատարումն սպանաւ 'ի կայսերէն ընդ այլոց սրբոցն և պսակեցաւ 'ի Քրիստոսէ։

Վկայաբանութիւն Սրբոյն Կալիստրատոսի և որոց ընդ նմա քառասուն և ինն վկայիցն։

Ի ժամանակս Թագաւորութեանն Դիոկղետիանոսի ամպարշտի՝ բազում էր մոլութիւն հեթանոսացին. և ոչ միայն նոքա ոչ ճանաչելով զԱստուած՝ խորխորատ անձանց իւրեանց գործէին, այլ և զամենայն մարդիկ հրապուրէին հաւանել անարժան իւրեանց պաշտամանն. և որք ընդ նոսա հաւանէին՝ մանաւանդ 'ի փառաւոր մարդկանէ, ոչ միայն պատիւս ընդունէին 'ի Թագաւորէն՝ այլ և 'ի մեծագոյն զինուորութեանն պերճանային։ Իսկ որ յԱստուած ամենակալ և 'ի նորին Բանն և 'ի սուրբ Հոգին խոստովանէին, 'ի խնդիրս և 'ի տանջանս մատնէին, անյապաղ զպըստակն և զպատիւ փառայ ընդունէին. բայց ըստ մարդ՝ չարաչար տանջանօք զմարմինս իւրեանց մաշէին։

Յայնմ ժամանակի նախ և միայն քաջ ճգնաւորն Քրիստոսի, որում անուն էր Կալիստրատոս, 'ի Հռովմ քաղաքի, յանձին կալեալ զյաղթութեան պսակն, զսաստիկ նահատակութիւն յաղթութեան նշան կանգնեաց հաւատացելոց 'ի Տէր։ Բանզի այս իսկ Կալիստրատոս զինուորեալ էր 'ի գնդին որ կոչէր Քղկետոն[1]. վասն զի սոքա էին զկնի Սկոմբիտացւոց զընդին՝ որ էր 'ի Քղկետոնի, զորս ակամայ տարան 'ի

1. Թուի՝ Քաղկեդոն Բիւթանացւոց։

Հռոմի ըստ տիւրոնաց[1] օրինի։ Այլ Կալիստրատոս էր 'ի Բզկետոնացւոց յաշխարհէն, յազատ ազգէ, բաբերբարոյ և լցեալ աստուածային իմաստիւք. և նորին նախահաւն Ոկորոս լեալ էր յԵրուսաղէմ յաւուրս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, առ Պիղատոսիւ դատաւորիւ։ Այս Ոկորոս տեսեալ զՓրկիչն 'ի խաչին, զմեռանելն և զթաղելն 'ի գերեզմանի, և զյարութիւնն 'ի մեռելոց, և հաւատաց և մկրտեցաւ յաւուր սրբոյ Պենդակոստէին, յինքման սուրբ Հոգւոյն 'ի սուրբ յԱբաքեալն, և ընդ Գալիլեացիսն հաւանեալ եղև. և եկեալ 'ի քաղաքն իւր ուսուցանէր զորդիս իւր և զթոռունս յուսալ 'ի Տէր Յիսուս Քրիստոս. և նոքա ուսանելով 'ի միմեանց՝ եղեն ուսումնասէրք խրատու հաւուն իւրեանց, մինչև յերանելին Կալիստրատոս։ Սա միայն էր քրիստոնեայ 'ի գնդին իւրում. որ և ամենայն ժամու փառաւորէր զՏէր 'ի ձեռն բանից Հոգւոյն սրբոյ։

Իսկ 'ի միում գիշերի յարուցեալ Կալիստրատոս աղօթս մատուցանէր Աստուծոյ. և ոմանք 'ի զինուորակցաց իւրոց իմացան զայն, և սկսան ասել ցնա. Ոչ է վայելուչ քեզ միայնոյ մանկաբարոյ լինել 'ի մէջ մեր ամենեցուն. արդ հաւանեաց և եկ 'ի պատկերն Աբրամազդայ, և առ լուսանն և արիւն, և ցայտեա 'ի վերայ նորա, և լեր ընդ մեզ սիրելի աստուածոցն. ապա թէ ոչ մեզ մեզ մի դներ, զի հարկ է մեզ պատմել զօրավարին մերոյ զայդ ամենայն։ Իսկ սուրբն Կալիստրատոս պատասխանի ետ և ասէ. Եղբարք, զի ելից զձեզ սատանայ. ոչ ումեք 'ի ձէնջ փնասեցի, և ոչ նեղեցի զոք 'ի ձէնջ. 'ի պատերազմի ընդ ձեզ եմ. յանուանագրի համարուն՝ թերևս նախագոյն կարգեալ եմ քան զձեզ. 'ի հանդիսի ոչ որոշիմ, 'ի գնդի համարուն ընդ ձեզ անցանեմ. իսկ արդ զինչ ունիք չարախօսել վասն իմ՝ ոչ գիտեմ. բայց զի յանձառ մարդասիրութենէն Յիսուսի Փրկչին իմոյ, և յուղղափառ պաշտամանէն որոշել զիս ոչ կարէք, գիտեմ, ոչ միայն դուք, այլ և ոչ բազումք իբրև զձեզ։ Զայս վըկայեսցէ ինձ Քրիստոս՝ որ վկայեաց առաջի Պոնտա-

1. Այսինքն՝ ըստ հրահանգի նորընծայ զինուորաց։

ցոյց Պիղատոսի, որում ակամատեսս եղեալ է Ոկորա հաւն իմ։

Իբրև լուան զայս՝ յարուցեալ ընդ առաւօտն պատմեցին Պրեսինտինոսի զօրավարին, եթէ՝ Մի ոմն 'ի Թուոյ զինուորաց քոց, որ են ընդ իշխանութեամբ քո, ապստամբէ յաստուածոցն պաշտամանէ, և Թագաւոր և Աստուած կոչէ զոմն որ անուանեալ կոչի Քրիստոս, և խոստովանի զնա խաչեցեալ. այլ և աղօթս և պահս զանձամբ առեալ է, և զամենայն խոզենի ռոճիկ և ըզհաց՝ կարօտելոց բաշխէ, և ինքն մի անգամ յաւուր ուտէ աշտուձ լոկ 'ի ջուր Թանալով. բայց զի մի՛ զբազումն ապստամբեցուսցէ 'ի վառեալ զինուորացս գնդէ, վասն այնորիկ պատմեցաք առաջի քո պայծառ իշխանութեանդ։ Իսկ Պրեսինտինոս ասէ. Ո՞վ է նա, և կամ զինչ անուն նորա։ Եւ նոքա ասեն. Բունուս մլքիայ[1], որ Թարգմանի Կալիստրատոս։ Եւ հրամայեաց զօրավարն ածել զնա առաջի իւր. և ասէ ցնա Հռովմայեցի լեզուաւ, քանզի ոչ լսէր զօրավարն յունարէն, զի Հռովմայեցիք ոչ կարեն վաղվաղակի խօսել յունարէն, վասն հարստութեանն լեզուին։ Եւ ասէ ցնա. Կիւդ դիկունդ սոկիէ տուի, փրոփր տէ. կելերիոս դիկէ[2]. որ Թարգմանի. Զինչ ասեն ընկերք քո վասն քո, արագ ասա։ Այս պատմութիւն 'ի Հռովմայեցի լեզուէ գրեցաւ. և այսպէս իսկ խօսեցան որք իմաստութեամբ Թարգմանեցին և ետուն ցմեզ. և մեք նոյնպէս առաքեցաք ընդ ամենայն տեղիս՝ որք զՔրիստոս առաջի աչաց ունին հաւատովք սրբութեամբ։

Պատասխանի ետ Կալիստրատոս և ասէ. Զինչ ես ունիցին վասն իմ ասել, ո՛ տէր իմ, ասասցեն. քանզի ես ոչ ինչ գիտեմ զանձին խիղճ։ Պրեսինտինոս ասէ ցչարահօսն. Զինչ գիտէք վասն Կալիստրատոսի Բունի մելեկի[3]։ Իսկ նոքա ասեն. Հրամայեսցէ քո առաւել պայծառ իշխանութիւնդ դմա, զի զոհեսցէ մեծ աստուծոյն Ամամազդայ, և գտցես զչարաթիւր կամն

1. Այսինքն Bonus miles ըստ լատինականին, որ Թարգմանի բարի զինուոր, որպէս և յունական անունն Կալիստրատոս։

2. Quid dicunt socii tui, propter te, celerius dic.

3. Boni militis.

դորա։ Իսկ զօրավարն ասէ. Զոհեա, Կալիստրատէ, աստուծոյն Աբրամազդայ։ Կալիստրատոս ասէ. Եւ պատարագ օրհնութեան մատուցանեմ մեծին Աստուծոյ՝ որ արար զերկինս և զերկիր և զամենայն ինչ իմաստութեամբ իւրով. որ ստեղծ զմարդն 'ի հողոյ, և եդ զյաւիտենական և զանանց սահմանն. զի ոչ գիտեմ զձեռագործ աստուածս, այլ գնամ որպէս ուսայ։ Բանզի գրեալ է. Ամենայն կուռք հեթանոսաց դեւք են, այլ Տէր զերկինս արար. և զի՝ Կուռք հեթանոսաց ոսկի և արծաթ են, ձեռագործք են որդւոց մարդկան։ Արդ ես, ո՛ տէր կոմս, գործոյ ձեռաց մարդկան երկիր ոչ պագանեմ։ բայց եթէ զինուորեալ եմ քեզ և ընդ ձեռամբ քո եմ, 'ի պատերազմի և 'ի գումարտակի և յամենայն սպասաւորութեանն հնազանդեալ եմ քեզ. միթէ և ոգւոյս իմոյ սպասաւորութեան իշխանութիւն ունիս, քա՛ւ լիցի։ Պրեսինտինոս ասէ. Աստ, ով Կալիստրատէ, Ճարտասութեան ոչ ինչ են պէտք, այլ վասն հաւանութեան մեզ է բան. վասն որոյ հաւանեալ զոհեա, զի մի՛ չարաչար կորուսանել զքեզ հարկաւորեսցես զիս։ Բայց կարծեմ եթէ գիտես իսկ դու, զի յորժամ ըմբռնեմ զոք 'ի մարդկանէ, յառաջագոյն քան զտանջանս մռնչելով իմով հալեմ զնա։ Կալիստրատոս ասէ. Քո մռընչելդ և սպառնալդ՝ ժամանակեայ է. իսկ լալումն և կրծտումն ատամանց՝ յաւիտենական։ Զի եթէ ես ուրացայց զՏէրն իմ Յիսուս Քրիստոս առաջի մարդկան, փակեսցէ զիս արտաքոյ տանուտէրն, և անդ ելցի լալումն աչաց և կրծտումն ատամանց։

Յայնժամ հրամայեաց զօրավարն պրկել զնա և հարկանել բրօք, մինչև փոխեցան ութ այր։ Եւ մինչդեռ հարկանէին, ասէ սուրբն Կալիստրատոս. Երդուայ և հաստատեցի պահել զդատաստանս արդարութեան քո, Տէր։ Նուաղեցաք յոյժ, այլ կեցո զիս ըստ բանի քում, և մի՛ տացես կորուսչին և բազմագլուխ գազանին խնդալ 'ի վերայ իմ։ այլ զօրացո զիս, Քրիստոս, և լեր ինձ լեզու՝ առ 'ի պատասխանել ինձ, և բժիշկ առ 'ի յողջացուցանել զվերս իմ։ զի բազում տանջանք ունին զմարմինս իմ վասն այսմ չարչարանացս։

Իսկ յորժամ ետես զօրավարն զարիւն նորա զի առուացեալ խաղայր 'ի վերայ երկրի, հրամայեաց դադարել 'ի հարկանելոյ զնա. և ասէ ցնա. Զոհեա, Կալիստրատէ, աստուածոյն, զի ապրեսցիս յառաջիկայ տանջանացն. քանզի երդնում 'ի Ճառագայթաբերն Արտեմիս, և յամենայն աստուածոյն ժողովս, եթէ ոչ հաւանեսցիս ինձ՝ մահատոր արարից զքեզ, և զմարմինդ քո շունք կերիցեն, և առիւծք լիզեսցեն զարիւն քո։ Կալիստրատոս ասէ. Յուսամ 'ի Թագաւորն երկնից Աստուած, զի հանցէ զիս 'ի բերանոյ առիւծուց և 'ի ձեռաց շանց զմիամտութիւն իմ; զի մի՛ ես միայն օրհնեցից զնա յայսմ պնդին քո. զի ակն ունիմ յառաջադէմ լինելով երթալ առ նա, և յաղթութեան նշանակ ունելով 'ի վերայ բանսարկուին, որ յարուցանէ զքեզ 'ի վերայ իմ։ Յայնժամ հրամայեաց զօրավարն խեցի ծեծել և արկանել 'ի ներքոյ նորա, և պրկել զսուրբն յորսայս, զի քանցեսցեն զուսս նորա և զվերս խեցեաւն. և ձագար եդին 'ի բերան նորա և հրամայեաց ջուր սափորով արկանել ընդ բերան նորա։ Իսկ քաջ նահատակն Քրիստոսի արիապէս ընկալաւ զտանջանսն։ Եւ յարուցեալ ասէ. Աստուած Աբրահամու, Սահակայ և Յակովբայ, զօրացո զիս առ 'ի հնարագիտութիւնն բանսարկուին, և փրկեա զիս 'ի նմանէ, զի մի՛ կորուսցէ զիս և մի՛ գտցէ տեղի 'ի վերայ իմ։

Զօրավարն ասէ. Զոհեա, Կալիստրատէ, աստուածոյն, ապա թէ ոչ բառնամ զքեզ 'ի կենացս, զի մի՛ կորիցեն ոմանք 'ի գնդէս յայսմանէ վասն քո։ Սուրբն Կալիստրատոս ասէ. Անարժան և անամօթ, փութաս մարտնչել վասն հօտին սատանայի հօր քո, չգիտելով եթէ այս հօտ Քրիստոսին իմոյ է։ Բայց յուսամ 'ի Թագաւորն երկնից 'ի Տէրն իմ Յիսուս Քրիստոս, թէպէտ և կարի յոյժ մրցիս վասն բանսարկուին, սակայն ես գերեցից զնա և յափշտակեցից 'ի թուոյ զօրացքոց և լուսաւորեցից զնոսա և հաստատեցից զեկեղեցի Քրիստոսի 'ի մէջ քաղաքիս այսորիկ։ Իսկ զօրավարն ասէ. Ա՛յ անսուրբ և երիցս թշուառական, ահաւասիկ հրամանս իմ սաստիկ է առաջի աչաց քոց. նոյնժամայն հրամայէ իշխանութիւնս իմ ընկենուլ

զքեզ 'ի քուրձ, և կնքել[1] զբերան նորա, և տանել ընկենուլ զքեզ 'ի մէջ ծովուն. դու զիաՀրդ կարես հաստատել զեկեղեցի Քրիստոսի, և կամ ԵՀրբ լուսաւորեսցես 'ի թուոյ գնդէ զօրականացն իմոց։ Եւ հրամայեաց բերել քուրձ կտաւի և ընկենուլ զնա 'ի ներքըս. և կնքեաց կապարով զբերան քրձին, և ետ 'ի ձեռս նաւավարաց. և տարեալ նաւավարացն 'ի մէջ ծովուն, իբրև ասպարիսօք քառասուն, և ընկեցին զնա 'ի ծովն. և զօրավարն կայր յեզր ծովուն, և ընկեցին զնա 'ի ծովն. և իբրև եկին նաւավարքն, իսկ քուրձն ինքեալ կռուէր 'ի փապարս վիմաց. և մինչդեռ 'ի ներքըս կայր Կալիստրատոս, աղօթս մատուցանէր ասելով. Աստուած աներևոյթ և անքննին, անհաս և անպատում, որոյ աթոռ փառաց անպատմելի է, յորմէ դողայ և սարսէ ամենայն ինչ, որոյ սպառնալիքդ հալեն զլերինս, որոյ անուանակոչութիւնդ պատառէ զանդունդս, յորմէ դողայ ծով՝ հանդերձ գետովք և կիտոսովք, որ քննեցեր զսիրտն Յոհնանու և ընկալար զաղօթս նորա յորժամ էջ յերկիր, որոյ փականք իւր էին իբրև աղնք յաւիտենից, և հաներ զկեանս նորա յապականութենէ. և զիմ զմեղաւորի և զտառապելոյ ընկալ զաղաչանս, և եկեսցեն աղօթք իմ 'ի տաճար սուրբ փառաց. և փրկեա զիս 'ի նեղութենէս յայսմանէ, զի ծանեար 'ի մանկութենէ զգործս իմ։ Դու գիտես, Տէր, զի ցանկացայ հաստատել զեկեղեցի քո 'ի մէջ քաղաքիս այսորիկ. գործակից լեր ինձ 'ի բարի, զի սուրբ է անուն քո յաւիտեանս։

Եւ յետ մատուցանելոյ նորա զաղօթս, դիպեալ քուրձն 'ի կիրձս վիմաց՝ պատառեցաւ, և ընկալաւ զնա ձուկն մի դլփին, և եբեր զնա 'ի խորոցն յափն ծովուն. և եդեալ զնա 'ի վերայ աւազոյն, փախստեայ անդրէն դարձաւ 'ի ծովն։ Իսկ իբրև տեսին զնա զօրականքն և զօրավարն՝ զարհուրեցան յոյժ։ Բայց Կալիստրատոս սաղմոսէր և ասէր. Եկի ես 'ի խորս ծովու, և սահանք ընկղմեցին զիս, այլ ոչ աշխատեցայ աղաղակելով, քանզի լուար ձայնի աղօթիս իմոց. պատառեցեր զքուրձն իմ և սնոցեցեր զիս ուրախու-

1. Յօր. փակել... փակեաց։

թեամբ։ Յայնժամ անկան առաջի երանելւոյն Կալիստրատեայ քառասուն և ինն զինուորք ասելով. Աղաչեմք զքեզ, ծառայ Աստուծոյ բարձրելոյ, փրկեա զմեզ յունայնութենէ աշխարհիս այսորիկ, զի և մեք քրիստոնեայք եմք, զի արդարև մեծ է Աստուածն քրիստոնէից, որ եհան զքեզ յայնպիսի անդնդոց, կարող է նա և 'ի պատերազմի օգնել՝ ում և կամի, զի նա միայն է Աստուած։ Սուրբն Կալիստրատոս ասաց. Տէրն իմ Յիսուս Քրիստոս ապրեցուսցէ զձեզ, և յայսրմ հետէ տեսջիք զարքայութիւնն երկնից։

Եւ աղօթեաց այսպէս. Տէր, որ բնակեալդ ես յաւիտեան 'ի լոյս անմատոյց, նայեաց 'ի վերայ հօտիս այսորիկ որ 'ի քեզ՝ և պահեա զսոսա, զի ողորմած ես հանապազ և յաւիտեանս։ Իսկ Պրեսինտինոս ասէ. Երդուեալ յարեգակն՝ 'ի Թագաւորն, մեծաւ կախարդութեամբ լի է սա, զի զծոցն երերձ, և զսոսա պատրեաց։ Եւ ասէ ցնա. Ես զքո կախարդութիւնդ յանդիմանեցից. ներեա ինձ և գիտասցես թէ ով է Պրեսինտինոս, և ով է Աստուածն զոր դուն պաշտես։ Եւ նստեալ յատենի, հրամայեաց բերել ցուպս, և ետ կարգաւ հարկանել զքառասուն և ինն այրն։ Իսկ նոքա ասեն. Տէր Յիսուս, զայս վասն քո չարչարիմք, օգնեա մեզ, Աստուած փրկիչ, և տուր մեզ համբերութիւն. պահեա և զՀովիւս մեր Կալիստրատոս, զի կատարելապէս ուսուսցէ զմեզ, զի իբրև զանբան անասուն եմք 'ի գիտութենէ կամաց քոց. հաձեաց ընդ փրկութիւն մեր, զի օրհնեալ է անուն քո յաւիտեան։

Իսկ յետ այսորիկ հրամայեաց անարժան զօրավարն դնել զնոսա 'ի բանդի, զի զմտաւ ինչ ածցէ վասն նոցա, քանզի յոյժ տրտմեալ էր՝ զի կորոյս յիսուն այրն 'ի Թուոյ զօրականացն։ Եւ իբրև մտին նոքա 'ի բանդին, սկսաւ սուրբն Կալիստրատոս աղօթիւք հաստատել զքառասուն և ինն այրն. որոց անուանքն են այսոքիկ. Ակակիոս, Դոմնասիոս, Բիբիանոս, Բասիլիսկոս, Բեմարբոս, Դորոթէոս, Գերոնտէս, Աղպիոս, Անթիմոս, Արագսէոս, Անիկտոս, Բիտաղիոս, Գրիգորիոս, Գէորգէոս, Գիդանդիոս, Գենադէոս, Դոմնինոս, Դուղկիմիոս, Դոմետիանոս, Դեդաղիոս, Դաղմա

տիոս, Եւսեբիոս, Եւագրիոս, Եղսիդիոս, Եւտոքիոս, Եւարեստոս, Եւագրիոս, Թարասիմիդէս, Թէոդորոս, Թերասիոս, Լիւսիմաքոս, Լամբլիրիկոս, Լիմինոս, Կոստանդինոս, Կանդիտիանոս, Հեղիադէս, Հիւսիքոս, Հեղոդորոս, Մեմնոս, Միլինոս, Մագրինոս, Մարկիանոս, Նիկատիոս, Նիկողայոս, Ողոմբրիոս, Ուտրիպէոս, Ողիպէոս, Քսանթէոս. սոքա ամենեքեան անկան առաջի սրբոյն Կալիստրատոսի, և խնդրէին զգիտութիւնն Քրիստոսի։ Իսկ սուրբ վկայն Քրիստոսի տարածեաց զձեռս իւր յերկինս, այսպէս ասելով. Աստուած, որ զամենայն՝ ինչ արարեր, որ ամենիմաստ հզօրդ ես, որ յանթիւ զօրաց հրեշտակաց օրհնիս, որ անվթարից արարիչդ ես, Աստուած հարցն մերոց, հայեաց 'ի դոյն իսկ 'ի հօտս յայսմ, եկ և հասիր 'ի մէջ մեր։ Կատարեա, Տէր, զանսուտ խոստումն քո, թէ՝ Ուր երկու կամ երեք ժողովեալ են յանունիմ, անդ եմ ես 'ի մէջ նոցա։ Լուր մեզ, թագաւոր յաւիտենից. ցրուեա, Տէր, զբոց բանսարկուին. անցո, Տէր, զչնոց հրոյն՝ առ 'ի չբարձրանալ քան զքառասուն և զինն կանգունն, որպէս զի տեսցեն ամենայն հեթանոսք զփառս քո, և փառաւորեսցեն զքեզ թագաւոր յաւիտենից։ Տուր ինձ, Տէր, իմաստութիւն և գիտութիւն, որպէս զի հաւատացուցեալ մատուցից առաջի քո զծառայքս քո, զի օրհնեալ է անուն քո յաւիտեանս։

Եւ ամենեցուն միաբան ասացեալ զամէնն, յարուցեալ մի ոմն 'ի նոցանէ՝ որում անուն էր Դաղմատիոս՝ ասէ ցսուրբն Կալիստրատոս. Աղաչեմ զքեզ, տէր իմ Կալիստրատոս, քրիստոնիացո զմեզ, և ուսո մեզ զբանն Աստուծոյ, զի մի երբէք երկմտեսցուք. ցոյց մեզ զյոյսն մեր և զառյապա օգնականութիւնն. պատմեա մեզ զամենայն իմաստութիւնն Աստուծոյ, որպէս զի և մեք շնորհօքն Քրիստոսի փառաւորիչք եղիցուք ընդ քեզ. քանզի ոչ երբէք հարքն մեր ուսուցին մեզ զՀանապարհս արդարութեանն։ Յայնժամ ասէ ցնոսա սուրբն Կալիստրատոս. Որդեակք իմ և եղբարք սիրելիք, տացէ ձեզ Տէր շնորհս և ողորմութիւն, և Աստուածն իմ ածցէ 'ի լոյս զցանկութիւնդ ձեր. Աստուածն երկնից և երկրի լցուսցէ զձեզ ամենայն բա-

րութեամբ. զի գիտեմ ես թէ յոյժ ցանկութիւն ու-
նիք լսել զպատուիրանս Աստուծոյ։ Եւ արդ որ ծա-
բաւիդ էք արդարութեան, լցուսցէ զձեզ Տէր և ար-
բեցուսցէ և զմայլեցուսցէ ամենաբարի բաւականաւ
շնորհօք Հոգւոյն սրբոյ, և ամենայն յուսով զոր ունիք
առ Տէր Քրիստոս։ Բայց սակայն, սիրելիք իմ, ես
տրուպ եմ և տգէտ առ անհաս խորութիւն խորհրդ-
դոյն Աստուծոյ, բայց իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ զի՞նչ
և կամիցիք՝ հարցէք, և աղօթս արարէք 'ի վերայ իմ,
զի յուսամ 'ի Տէրն Յիսուս Քրիստոս՝ եթէ աղօթիւք
ձերովք տացէ ինձ Տէրն բան 'ի բանալ բերանոյ իմոյ՝
համարձակութեամբ, իբրև զթարգման յայտնապէս
խօսել զխորհուրդ տնօրէնութեանն Քրիստոսի։ Յայն-
ժամ Բեմարքոս անկեալ առաջի նորա, երկարց և ա-
սէ. Աղաչեմ զքեզ, տէր, ասա ինձ, զիա՞րդ իմանի
Աստուած և կամ որպիսի՞ օրինակաւ ծնաւ Քրիստոս,
կամ վասն է՞ր պատճառի, և կամ ընդէ՞ր խաչեցին զնա
Հրեայքն և սպանին։

Սուրբն Կալիստրատոս ասէ. Աստուած լոյս է ան-
ստուեր, աներևոյթ և անմատոյց. ոչ սկիզբն ունի և
ոչ վախճան. կեանք անսպառք, միտնջենաւորութիւն
անփոխանորդելի. անսահման և անտեղի գոլով՝ յա-
մենայնի է միշտ, և ոչ երբէք յորում ոչ է. ոչ ոք է
յառաջ քան զնա, և ոչ յետ նորա, և ոչ ոք առ նո-
վաւ. անդիտելի և անիմանալի բնութիւն։ Բայց մե-
րում տկարութեանս ասացեալ է լոյս և կեանք, իս-
կութիւն, անմահութիւն, միտնջենաւորութիւն, զօ-
րութիւն, իմաստութիւն, միտք, և այլ ամենայն ա-
նուանք որ 'ի սուրբ Գիրս լին։ Հայր և Որդի, անախտ
ծնունդ և անքննելի. Բան 'ի սրտէ Հօր, և 'ի Հօրէ
անբաժանելի. ծնունդ անորոշելի՝ իբրև լոյս յարե-
գակնէ. որդի, և ոչ արարած և ոչ ստեղծուած, և
ոչ 'ի խոնարհութեան և ոչ ծառայ. այլ իսկակից
և էակից և անսկզբնակից։ Միշտ 'ի ծոց Հօր, ըստ
սրբոյն Յովհաննու աւետարանչին, որ ասէ. Ի սկզբանէ
էր Բանն, և Բանն էր առ Աստուած, և Աստուած էր
Բանն. նա էր 'ի սկզբանէ առ Աստուած։ Ամենայն ինչ
նովաւ եղև, և առանց նորա եղև և ոչ ինչ որ ինչ եղև։
Նովաւ կեանք էր, և կեանքն էր լոյս մարդկան և լոյ-

սրն 'ի խաւարի անդ լուսաւոր էր, և խաւար նմա ոչ եղև հասու։ Եւ, ԶԱստուած՝ ոչ ոք ետես երբէք, բայց Միածինն որ 'ի ծոց Հօր, և սուրբ Հոգին՝ 'ի Հօրէ բղխեալ և և յառաջ եկեալ. բայց ոչ ծնունդ իբրև զԲանն, այլ բղխումն և ծագումն մշտակայ լուսոյն. ոչ արարած և ոչ խոնարհ քան զՀայր և զՈրդի, այլ զուգակից և էակից և հաւասարակից Հօր և Որդւոյ։ Ամենայն էութիւն Հօր՝ Որդւոյ է. բայց զի ոչ է ծնօղ, այլ ծնունդ. և ամենայն էութիւն Որդւոյ՝ Հոգւոյն սրբոյ է, բայց զի ոչ է ծնունդ, այլ բղխումն և ոչ բղխօղ, այլ բբղխեցեալ. և միութեամբ աստուածութեամբ ընդ Հօր և ընդ Որդւոյ հաւասարապատիւ, և մի փառք և մի աստուածութիւն երրորդութեանն, մի անսկիզբն մշտնջենաւորութիւն Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն. երբեք անձինք կատարեալք, մի ինքնութիւն և թագաւորութիւն, մի կամք, և մի խորհուրդ։ Ամենայնիւ տես է, ամենայնիւ լոյս է, ամենայնիւ լուր է, ամենայնիւ կեանք է. և այլովք ամենայն անուանակոչութեամբք՝ զոր հողեղէնքս ըստ մերում տկար իմաստիցս կոչեմք։ Մի են և զոյգ և հաւասար. բայց զի Հայր է, և նորին ծնունդ Բանն. և բղխումն նորին Հոգին սուրբ, անձամբք երիւք կատարելովք։

Արդ սուրբ և զուգական երրորդութիւնն՝ կամեցաւ և հաստատեաց զամենայն ինչ։ Հայր 'ի ձեռն Բանին Հոգւով սրբով արար զերկինս և զերկիր, և բարժանեաց զերկինս հրով և զերկիր ջրով. արար և զլոյս. ընդ որում գոյացոյց և զերկնային զօրսն. և մեկնեաց զջուրսն 'ի ջուրց, և ձգեաց զպղպջակ հաստատութեանդ։ Եւ զերկիր զարդարեաց բուսովք և տընկովք, և զհաստատութիւնն արեգակամբ և լուսնիւ և աստեղօք. զերկիր չորքոտանեօք և սողնովք և կայտառօք լցոյց, և զոդ թռչնօք, զոր ետ հրաման բղխել երկրի և ջրոց՝ զշունչ կենդանութեանն։ Եւ իբրև հաստատեաց զամենայն ինչ զօրութեամբ ահեղ աստուածութեանն իւրոյ, որ կախեաց զերկինս զանչէ, և զերկիր եդ 'ի վերայ ոչնչի, և զամենայն տարերս գոյացոյց յոչնչէ, յետոյ ստեղծ զմարդն 'ի հողոյ, ըստ պատկերի անմահութեան իւրոյ, և անձնիշխանութեամբ տիրել ամենայն արարածոց՝ որ են 'ի ներքոյ

երկնից։ Եւ բնակեցոյց յանմեղութեան դրախտին փափկութեան, և դոյզն օրէնսդրութեամբն 'ի մեծագոյն ևս փառս խոստացաւ վերածել։ Իսկ սատանայ՝ հրեշտակ էր յերկինս նախաստեղծ. և վասն զի հպարտութիւն ինն եբեր 'ի միտս իւր ներանձնութեամբ՝ ընդդէմ ամենակալին Աստուծոյ, ընդվզեաց և անկաւ 'ի փառաց իւրոց։ Եւ նախանձեալ ընդ մարդոյն, խորամանկութեամբ բազմաստուածութիւն սերմանելով 'ի ձեռն պտղոյն Ճաշակման, և ցանկութեամբ աստուածութեանն զրկեաց զնա 'ի փառացն և Եհան յաստուածամնունդ գրգարանէն։ Այլ վասն զի պատկեր էր անմահին Աստուծոյ, ոչ զօրեաց ընջել և ապականել մինչև խպաւ. այլ անձնիշխանութեամբ և պատրանօք մարտեաւ ընդ ազգի մարդկան, և պէս-պէս չարեօք պղծեաց, եղբայրասպանութեամբք, անօրէն խառնակութեամբք. որք ոչ հնազանդեցան ազգն առաջին՝ քարոզութեան արդարոյն Նոյի, վասն այնորիկ եղծան ջրհեղեղաւն. և մնաց միայն Նոյ և որդիք իւր՝ ոգիք ութ։ Յետ այնորիկ աշտարակաշինութեամբն բարժանեցան լեզուք նոցա 'ի ցեղս ցեղս, եօթանասուն և երկու՝ ընդ ամենայն երկիր, և ապա 'ի կռապաշտութիւն յորդորեաց զնոսա սատանայ. պոռնըկել պաշտամամբք յամենայն ինչ, որպէս արդ տեսանէք, զոր բարձեալ Տէր և կորուսցէ 'ի միջոյ. և անդ իբրև զնախասերմանեալ զբազմաստուածութիւն սկզբնաւորեաց, զոր ասէր ցնա, թէ՝ Աստուածք լինիցիք, զմարդիկ 'ի մնոտի պաշտամունս. և էին ամենայն երկիր 'ի մեծ մեղս։

Առ որս գթացեալ ողորմութիւն մեծին Աստուծոյ՝ ընտրեաց զնախահարսն՝ զԱբրահամ, զԻսահակ և զՅակովբ, և զնոցին զաւակսն սուրբ ինքեան ժողովուրդ սեպհական. զորս Եհան յԵգիպտոսէ 'ի ձեռն Մովսէսի. և ետ նոցա օրէնս. որ և զնոսա խոտորեցոյց սատանայ, որք արարին զորթն յանապատին և պղծեցան 'ի գարշելիսն. և դարձեալ ողորմեալ ետ նոցա քահանայս և մարգարէս, որք և նոցա ոչ հաւանեցան յաղդմանէ սատանայի. ոչ հարուածովք և ոչ գերութեամբք և ոչ հրեշտակացն վերակոչութեամբք, որովք ոչ իրբ բատեցան և ուղղեցան. և ամենայն երկիր խոտորեցաւ

միաբան զկնի սատանայի որսացեալք 'ի նմանէ 'ի նո-
ցին չար կամն։ Իսկ ազնուագուն Աստուած ողոր-
մեալ 'ի վերայ ազգի մարդկան, առաքեաց զՄիածին
Բանն իւր յաշխարհս, որ սրբեալ զկոյսն Մարիամ՝
բնակեցաւ 'ի նմա, և յղացաւ անապական՝ առանց
սերման առն, և առանց ախտի ցանկութեանց ինքեան
ստեղծ անապական մարմին, ըստ հրեշտակապետին
Գաբրիէլի՝ որ ասէր. Հոգին սուրբ եկեսցէ 'ի քեզ, և
զօրութիւն Բարձրելոյն հովանի լիցի 'ի վերայ քո. զի
որ ծնանելոցն է 'ի քէն՝ սուրբ է, և Որդի Աստուծոյ.
և կոչեսցեն զանուն նորա Յիսուս, զի նա փրկեսցէ զժո-
ղովուրդ իւր 'ի մեղաց իւրեանց։ Որ յղացաւն անա-
պական և ծնաւն անապական, 'ի խանձարուրս պա-
տեցաւ, և եդեալ 'ի մսուր յանբանից որպէս զմարդ.
'ի մոգուց պատուեցաւ պատարագօք խորհրդականօք,
'ի հովուաց փառաւորեցաւ, որք ընդ հրեշտակս եր-
գէին. Փառք 'ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խա-
ղաղութիւն, 'ի մարդիկ հաճութիւն։ Թլփատեցաւ
իբրև զմարդ. 'ի տաճարն ընծայեցաւ իբրև զմարդ.
իսկ ծերունին Սիմէոն հայցէր իբրև յԱստուծոյ. հա-
լածեցաւ յԵգիպտոս. և անդ զկռապաշտութեան քա-
ղաքն դարձոյց յաստուածգիտութիւն. դարձաւ ան-
տի և բնակեցաւ 'ի Գալիլեա 'ի քաղաքն Նազարէթ։

Արդ մի՛ ոք 'ի ձէնջ գայթակղեալ ասիցէ թէ 'ի կու-
սէն առ սկիզբն Քրիստոս. զի ըստ մարմնոյ 'ի կուսէն
երևեցաւ, իսկ ըստ աստուածութեան հաւասար է
Հօր, որպէս յառաջն ասացի. և մի՛ ոք ասասցէ՝ յերկ-
նուստ բերել զմարմինն, զի 'ի Կուսէն առ. և ոչ եթէ
լոկ Աստուած էր կամ լոկ մարդ, այլ Աստուած և
մարդ. Աստուած՝ մարմնովն, և մարդ՝ աստուածու-
թեամբն, ոչ շփոթեալ և կամ փոփոխեալ։ Եւ քան-
զի ասէ յԱռակսն. Տէր ստացաւ զիս սկիզբն ճանա-
պարհաց 'ի գործս իւր, յառաջ քան զանդունդս լի-
նել, յառաջ քան զաղբիւրս ջուրց, յառաջ իսկ քան
զամենայն բլուրս ծնաւ զիս. յորժամ պատրաստէր
զերկնս իւր՝ ընդ նմա էի, ես էի ընդ որում ուրախա-
նայր։ Սակայն վասն մարմնոյն ասէ, քանզի խորհուրդ
մարմնաւորութեանն Քրիստոսի յառաջ քան զլինելն
աշխարհի էր. բայց 'ի Կուսէն ստեղծ անապական։

Արդ նոյն ինքն միածին Բանն Հօր, որ մարմնացաւ 'ի սրբոյ Կուսէն, լուեաց ամն երեսուն. և ապա մկրտի 'ի Յովհաննէ 'ի Յորդանան գետ. և ընդ ելանելն 'ի ջրոյն՝ բանի նմա երկինք, և սուրբ Հոգին էջ տեսլեամբ աղաւնոյ 'ի վերայ նորա. և Հայր 'ի բարձանց վկայեաց 'ի վերայ տեսանելի մարմնոյն, թէ՝ Դա է Որդի իմ սիրելի՝ ընդ որ հաճեցայ. զոր Յովհաննու տեսեալ զարհուրեցաւ, և հրաժարէր մկրտել. առ որ ասէր Տէրն. Թոյլ տուր այժմ, զի այսպէս վայել է մեզ լնուլ զամենայն արդարութիւնս։ Որպէս վկայեաց անարատն Յովհաննէս որդի քահանայապետին Զաքարիայ 'ի վերայ Քրիստոսի և ասէ. Ահա Քրիստոս գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի. քանզի Յիսուս 'ի ծննդենէն անուանեցաւ, զոր հրեշտակն քարոզեաց Մարիամու. և Քրիստոս 'ի յօծմանէ սուրբ Հոգւոյն որ էջն 'ի Յորդանան 'ի նմանութիւն աղաւնոյ։ Յետ այսորիկ փորձեցաւ 'ի սատանայէ, և յաղթեաց փորձողին երիւք օրինակօք, զի զքառասուն օր անսուաղ եկաց. և սնափառութեան և հպարտութեան և ագահութեան և ընչասիրութեան որոյ յաղթող եցոյց զմարդն՝ Աստուածն միաւորեալ 'ի նմա։ Շրջեցաւ այլ ևս ամն երիս, և աւետարանեաց զարքայութիւնն երկնից։ Կուրաց տեսանել շնորհեաց, զկաղս գնացոյց, զբորոտս սրբեաց, զդևս հալածեաց, զլեգէոնն՝ խորոց մատնեաց, զմեռեալս յարոյց, և զայլ ամենայն ցաւս և զհիւանդութիւնս բժշկեաց. և այլ ևս բազում զօրութիւն և մեծամեծս արար։ Եւ ոչ ընկալան զնա և ոչ հաւատացին նմա, որպէս ասէ սուրբ աւետարանիչն Յովհաննէս, եթէ՝ Յիւրան եկն և իւրքն զնա ոչ ընկալան. և ամենայն իրօք չոգան մարդիկ զհետ ոչընչի և գտին զոչինչ։

Իսկ Տէրն մեր Յիսուս Քրիստոս վասն այնորիկ եկն 'ի չարչարանս՝ զի լուծցէ զզօրութիւն սատանայի։ Ի վերայ յովանակի նորոյ նստեալ՝ եմուտ յԵրուսաղէմ. որ և զսիրելին իւր զՂազար կոչեալ էր չորեքօրեայ 'ի Թաղմանէ. զդժոխոց կործանումն յառաջ աւետարանեաց, վասն այնորիկ և մանկունքն Հրէից ոստովք արմաւենեաց ընդ առաջ ելեալ երգէին. Ովսաննա՛ 'ի բարձունս, օրհնութիւն որդւոյ Դաւթի, խաղաղու-

թիւն յերկինս և փառք 'ի բարձունս։ Որ և յառաջ
իսկ զայս 'ի թափօրական լերինն գյարութեանն իւրոյ
զխորհուրդս տպաւորեաց յառաջագոյն՝ վկայութեամբ
Մովսէսի և Եղիայի։ Եւ եկեալ Յերուսաղէմ 'ի մեծի
աւուր Ցատկին՝ հին օրինաւոր տօնին, յորում և զոտս
աշակերտացն լուաց, և սուրբ խորհրդոյն հաղորդս
արար, զմարմին և զարիւն իւր բաշխեաց աշակերտաց
իւրոց. և եկեալ 'ի խաչն, բևեռեցաւ 'ի վերայ նորա
յանօրէն Հրէիցն, և հաստատեաց զբարբառ մարգա-
րէիցն որ վասն նորա յառաջաձայնեալ քարոզեցին։
Իսկ 'ի խաչելութեանն նորա՝ արեգակն խաւարեցաւ,
վէմք պատառեցան, երկիր շարժեցաւ, վարագոյր տա-
ճարին ցեղաւ յերկուս. և 'ի նոյն ժամու յորում եղ
Ադամ 'ի դրախտէն, 'ի նմին ժամու եմոյծ զաւազակն
'ի դրախտն, ասելով ցնա. Այսօր ընդ իս իցես 'ի դը-
րախտին։ Էջ 'ի դժոխս միայն, և եղ անտի սաստիկ
բազմութեամբ. արձակեաց զկապեալսն 'ի սատանայէ,
և զնա կապեաց անլոյծ կապանօք 'ի խաւարի, և ըզ-
գանձս խաւարինս ած 'ի լոյս. յարեաւ 'ի մեռելոց
յաւուր երրորդի՝ նովին անապական մարմնովն, համ-
բարձաւ յերկինս, նովին մարմնով նստաւ ընդ աջմէ
Հօր. և գայ նովին մարմնով դատել զամենայն արա-
րածս։

Իսկ յայնժամ, ով եղբարք, ողորմելիք էին որք 'ի
մոլորութեան էին պատրեալք. բայց այժմ 'ի ձեռն
խաչին Քրիստոսի վերացան 'ի փառս անձառս։ Իսկ որ
ուրասցի զնա առաջի մարդկան՝ մատնեալ լինի 'ի ձե-
ռըս դժոխոց։ Բայց դուք մի՛ կարծէք եթէ սակաւք են
հաւատացեալք 'ի Քրիստոս, և բազումք են որ երկիր
պագանեն ձեռագործացս, զի յուսամ 'ի Տէր Յիսուս
Քրիստոս՝ եթէ այնչափ բազմասցի հաւատս մեր, մինչ-
չև առաւելապէս հեղցի 'ի վերայ ամենայն երկրի։ Իսկ
դուք յայս հաւատս հաստատեսջիք, սիրելիք իմ, զոր
ուսուցի ձեզ մտերմութեամբ սրտիւ՝ իբրև հարազատ
եղբարց։

Իսկ յորժամ կատարեաց սուրբն զգլուխս բանիցս,
յարուցեալ Հեղադորոս հարցանէր զնա և ասէր. Ա-
ղաչեմ զքեզ, տէր իմ Կալիստրատէ, յորժամ վախ-
ճանի մարդ՝ զիա՞րդ լինիցի ոգի նորա, ուր Տրթայ, կամ

զինչ գործէ, կամ ուր բնակէ, 'ի տանջանս եթէ 'ի հանգստեան։ Սուրբն Կալիստրատոս ասէ. Որպէս յարեաւ Քրիստոս 'ի մեռելոց, նոյնպէս և մեզ պարտ է յառնել և կալ առաջի ատենի նորա, և իւրաքանչիւր ոք 'ի մէնջ պատասխանի տալոց է ըստ գործոց իւրոց, ըստ բարեաց և ըստ չարեաց՝ յաւուրն վրէժխնդրութեանն. իսկ դրախտն պատրաստեալ է արժանեաց իւրոց։ Իսկ յորժամ գայ հասանէ օր վախճանին 'ի վերայ մարդոյն, դան հրեշտակք առ մարդն. յորժամ տեսանեն զհոգի մարդոյն թէ արդար է՝ խընդան, և առնուն սաղմոսիւք և օրհնութեամբ և տանին ընդ արևելս, և անցուցանեն ընդ վեց պարունակս. ընդ շտեմարանս կարկտի և ձեան, ընդ վտակս անձրևաց, և ընդ ամենայն շտեմարանաց տեղիս, և ընդ այսս չարութեանն՝ որ են յօդս. և հանեն զնա յեօթներորդ պարունակն, և կացուցանեն զնա դէմ յանդիման փառացն Աստուծոյ, և երկրպագէ Աստուծոյ յեօթներորդ պարունակին՝ 'ի ներքոյ հաստատութեանն. ըստ Ժողովողին, եթէ՝ Մարմինն դարձցի 'ի հող ուստի ստեղծաւ, և հոգին դարձցի առ Աստուած որ ետ զնա։ Եւ դարձեալ հոգին 'ի ձեռն տեսչութեան հրեշտակացն Աստուծոյ տեսանէ զդրախտն, և ըստ բարի գործոց իւրոց զհատուցումն, և յուսով հանդերձելոցն զուարճանայ։ Բայց առանց մարմնոյ ոչ կարէ առնուլ զհատուցումն. և անդէն լինելով փառաւորէ զԱստուած՝ լուռ բերանով. և տեղիք կայարանացն են 'ի ներքոյ հաստատութեան՝ 'ի վերոյ քան զարեգակն[1]։ Քանզի յորժամ մեռաւ Քրիստոս և էջ 'ի դժոխս, հոգւոյն ծածկեալ զաստուածութիւնն, քանզի անբաժանելի մնաց աստուածութիւնն 'ի մարմնոյն և հոգւոյն. և իբրև աւարեաց զդժոխս և աղա-

1. Եթէ արդարև սրբոյն Կալիստրատեայ իցէ վարդապետութիւնս այս և եթէ գրուած առնական դպրին՝ որ յետոյ յիշի 'ի կարգի պատմութեանս, և եթէ յայլմէ ումեքէ պատուաստեալ, և թէ էր իսկ սրբոց և հարց ոմանց յառաջին դարս գթեալ յայսպիսի կարծիս, այլ և յոգունց ոչ էր հաւանելի, որպէս վկայէ սուրբ Յուստինոս յԲ գարու՝ որ ինքնին իսկ վրիպեալ էր յայսմ մասին. իսկ սուրբ եկեղեցի ոչ ընդունի. և բանք Առաքելոց և գաւանութիւնք մերոյս իսկ և այլոց եկեղեցեաց ցուցանեն՝ զի այժմէն իսկ վայելեն

տեաց զՀոգիսն որ 'ի բանդի էին, և աւանդեաց զնոսա 'ի ձեռս Հօր, և բնակեցոյց զնոսա յօդս՝ 'ի նեղբոյ հաստատութեանդ, 'ի տեղւոջ որ գերազանցեալ է քան զիշխանութիւնս սատանայի և օդոյս չարութեանցն. քանզի օդային չարութիւնքն պատերազմին վասըն հոգւոցն, և վասն այնորիկ 'ի ձեռն հրեշտակաց աւանդին հոգիքն, և ելանեն 'ի վերագոյնսն քան ըզկայանսն բանսարկուին և զօրաց իւրոց։ Արդ որպէս բարի հոգին 'ի ձեռն բարի հրեշտակաց աւանդին, նոյնպէս և մեղաւորին 'ի ձեռն չար հրեշտակաց. և ոչ եթէ չար են հրեշտակք, քանզի չար միայն բանսարկուն է, և 'ի չար կամն նորա հաւանեալ դեւքն. այլ վասն չարագործաց մարդկան և աղտեղի գնացիցն՝ և հրեշտակք նոցա չար անուանին։ Այսպէս իմացարուք. մի զինուոր առաքի 'ի թագաւորէն 'ի գովութիւն և 'ի պատուատրութիւն բարեաց և առաքինեաց, և 'ի սպանումն և 'ի տանջումն չարագործաց. արդ նոյն է և մի, հրեշտակք սոցա՝ բարիք, և նոցա՝ չար, վասն գործոց իւրեանց. այնպէս և հրեշտակ բարիք են և մարդասէրք, և մարդասիրին Աստուծոյ կամակատար պաշտօնեայք, սուրբք և անարատք։ Արդ յորժամ վախճանի մեղաւորն, առնու զՀոգի նորա հրեշտակն, և տանի սգով և տրտմութեամբ, ամաչեցեալ 'ի գործոց նորա. յայնժամ գան 'ի վերայ նորա կաքաւելով օդային դեւքն, պատերազմ յարուցանելով և իւրեանց անուանելով զնա, ծափ զծափի հարկանեն և վաղեն. սակայն հրեշտակն հարկանելով զնոսա յետս և մռընչելով 'ի նոսա, անցուցանէ ընդ նոսա, և հանէ յեօթներորդ պարունակն՝ 'ի նեղբոյ ջրամած հաստատութեանդ, և կացուցանէ զնա յանդիման փառացն Աստուծոյ, և երկրպագէ ամօթով առաջի Աստուծոյ,

սուրբք զերանական և զաստուածատես կեանս, որպէս և անզեղջ մեղաւորք՝ զտանջանս. թէպէտ և լիակատար հատուցումն երկոցուն իսկ լինիցի 'ի կատարածի աշխարհիս՝ յարութեամբ մարմնոյն։ Ապա ընդունայնք և անընդունակք են պարոնայք և տէրք

խոյրանոց յիշատակեալք յերկաբաձիգ բանդ, զոր միայն իբրև աւանդ հնութեան և նախնեաց թարգմանութեան թողաք, որպէս և զայլսն, շատ համարելով զազգաբարութիւնս՝ յոգնութիւն մեր և ընթերցարարաց։

որպէս և գրեալ է 'ի սաղմոսին. Զամենայն ազգս զոր արարեր՝ եկեսցեն և երկիր պագցեն առաջի քո, փառաւոր արասցեն զանուն քո յաւիտեան. և 'ի ձեռն հրեշտակին տեսանէ զտեղի դատաստանին և զհատուցումն գործոց իւրոց. և տրտմեալ սգայ հանապազ զկորուստ անձին իւրոյ. քանզի յորժամ մեկնի հոգին 'ի մարմնոյն, առաւել իմաստնանայ և տեսանէ զհանդերձեալն իբրև թէ առաջի աչաց։ Բայց մինչև 'ի դատաստանն՝ ոչ վարձս ընդունին հոգիքն և ոչ տանջանս. բայց 'ի գործոցն իւրեանց գիտելով եթէ զինչ ընդունելոց են, և ինքեանք առ ինքեանս խնդան և տրտմին, և ամենուն ձայնիւ օրհնեն զԱստուած անհոգութեամբ։ Բայց արդարքն յոյժ փափագմամբ ցանկան տեսանել զոր հատուցմանն. իսկ մեղաւորքն 'ի գործս իւրեանց հայելով՝ սգան և ողբան, գիտելով թէ որպիսի տանջանս կրելոց են յաւուրն դատաստանի։ Բայց աստուածուստ բարերարութենէն երկայնմտութիւն և հանգիստ պարգևեալ է երկոցունց կողմանցն մինչև յօրն վրէժխնդրութեան։ Բայց քրիստոնէից մեծ յոյս կայ և յետ մահուան. զի թէ իցեն ուրեք ծնօղք կամ եղբարք կամ որդիք կամ ազգակիցք և կամ քնաւ 'ի քրիստոնէից ևս բարեգութք, և աղօթս մատուցեն և պատարագս և ողորմութիւնս նուիրեսցեն, և զսուրբս բարեխօս ունելով՝ կարեն 'ի մեծի հանգստեան առնել զայն որ ակն ունէր տանջանաց. զի հաշտի Աստուած և թողու զմեղս ննջեցելոցն, 'ի ձեռս զենմանն Քրիստոսի՝ որ 'ի վերայ սրբոյ սեղանոյն զենեալ լինի 'ի փրկութիւն և 'ի կենդանութիւն և 'ի քաւութիւն կենդանեաց և մեռելոց։ Արդ, եղբարք, մի խաբիք 'ի սիրտս ձեր, եթէ 'ի ժամու վախճանին ընկալաւ արդարն զվարձս արդարութեան իւրոյ, և կամ մեղաւորն զդատաստան հատուցմանն. քանզի զիաւրդ մարթի այդմ լինել. քանզի մարմինքս մեր աստէն մնան, և հոգին լոկ լինի 'ի յառաջ ասացեալ տեղին. զի եթէ ոչ յարութիւն լիցի և մարմինք մեր 'ի գերեզմանաց յարիցեն և կացցեն առաջի ահաւոր ատենին, և ընկալցին իւրաքանչիւր ըստ գործս իւր, միթէ հնար իցէ մեղուցեալ մարմնոյս կորնչել, և հոգւոյն միայն դատել. թերևս պատճառս

յոգիցէ՝ 'ի մարմինն հանելով զվնաս մեղացն. արդ ոչ արդարոցն հնար է վարձս ընդունել, և ոչ մեղաւորաց ցն տանջանս, մինչև յօրն այն՝ զորմէ Պօղոս ասէ, եթէ՝ Փոշ հարկանի և մեռեալք յարիցեն 'ի քրիստեալ ական։ Զի որպէս մեռաւ Քրիստոս, և յարեաւ նոյն անապական մարմնով. զի ոչ եթէ յետ յարութեանն եղև անապական, քաւ լիցի, այլ 'ի Կուսէն անապական զգեցաւ զմեղուցեալ մարմինն Ադամայ, և զապականութիւն ընկղմեաց աստուածութեամբն, և նովին աստուածացեալ մարմնովն մեռաւ և յարեաւ. որպէս ստուգիւ լուեալ ուսաւ Ոկորոս հաւն իմ յԵրուսաղէմ 'ի սուրբ առաքելոցն, որ և աչօք իւրովք ետես զնա 'ի խաչին, և 'ի գերեզմանի եդեալ և 'ի թաղմանէն յարուցեալ. և յորժամ եկն առ աշակերտսն 'ի վերնատունն՝ յորում զթերահաւատութիւնն Թումայի ընոյր, ետես զնա Ոկորոս հաւն իմ։ և յէջս սուրբ Հոգւոյն յաւուրն Պենդակոստէին հաւատաց և մկրտեցաւ 'ի սրբոյ առաքելոցն։ Արդ և ես 'ի նորա աւանդութենէ ուսայ զայս, և 'ի սրբոյ աւետարանչացն և յառաքելոցն, և յառաջագոյն մարգարէիցն։ Արդ զոր ուսուցանեմն ճշմարիտ ասեմ՝ 'ի Քրիստոս և ոչ ստեմ, զի որպէս յարեաւ Քրիստոս՝ և մեք յարիցուք նովին մարմնովս անապական, և կացցուք առաջի բեմին Քրիստոսի, և վայելեսցուք յիւրաքանչիւր գործոց պտուղս, արդար և անաչառ հատուցմամբ բրն Քրիստոսի։ Այլ և զայս ևս ծանուցանեմ ձեզ, եղբարք, զի յորժամ՝ 'ի մեռելոց յառնեն, այնուհետև ոչ է քաւութիւն և կամ թողութիւն մեղաց, և ոչ բարեխօսութիւն, քանզի փակի դուռնն արքայութեանն այնոցիկ՝ որք ոչ մտին աստէն 'ի մարմնի։ Իսկ այսուհետև զայս ամենայն գիտելով, եղբարք, նախանձաւորք լիցուք գործոց բարեաց, և փութասցուք մտանել յառաջ քան զփակել դրանն։

Պատասխանի ետ Դոմետիանոս և ասէ. Զինչ ասես, տէր իմ Կալիստրատէ. իսկ ապա որ մեղանչեն՝ յայսմ աշխարհի ամենևին ոչ դատին, և ոչ առնուն զհատուցումն աստ, այլ ամենայն անդ մնայ՝ դատաստանին աւուրն։ Սուրբն Կալիստրատոս ասէ. Աստուած երկայնամիտ է և բազումողորմ, ոչ կամի զմահ մեղա-

ւորի որ զղջանայ 'ի վերայ մեղաց իւրոց, և ծանու-
ցեալ զյանցանս իւր խոստովանեսցի և անկցի պաղա-
տանօք առաջի Աստուծոյ, լացցէ և ասասցէ սրտի
մտօք. Աստուած, քաւեա զմեղաւորս, և այնուհետև
արդարագործութիւնս արասցէ. թէպէտ և բազում
իցեն մեղքն, կարող է ջնջել 'ի ձեռն աղօթից և պա-
հոց և ողորմութեան. թողու նմա բարեգութն Աս-
տուած, որ անսխակալն է, որ կամի զի ամենայն մարդ
կեցցէ և 'ի գիտութիւն ճշմարտութեանն եկեսցէ։
Ապա եթէ ոք շաղախեսցի 'ի մեղս բազում յոլով ժա-
մանակս, հայհոյեսցէ զԱստուած, յափշտակեսցէ և
զրկեսցէ զորբս և զայրիս հեղձուսցէ, սուտ երդնլով և
անգոնելով, վաշխս և տոկոսիս յաւելլով, և յանի-
րաւութենէ մեծանայցէ և գանձեսցէ իւր կորուստ,
'ի վերայ այսր ամենայնի և 'ի շնութիւն շաղախեսցի,
և յաղտեղի պղծութիւնն պէսպէս պոռնիկութեանց.
իսկ մարդասէրն Աստուած հայեցեալ 'ի նա եթէ յեր-
կարելով յապաղէ 'ի վերայ չարեաց իւրոց, յայնժամ
տացի նմա յիշատակարան չարեաց իւրոց, յետ ան-
դարձ լինելոյ 'ի չարեացն, և կեանք այնպիսւոյն կորի-
ցեն և եղիցին 'ի յափշտակութիւն, և մարմինք նորա
ապականեսցին, և միայն զչար գործսն առեալ չա-
րապէս ելցէ 'ի կենդանութենէ, ոչ յիւրում երկրի
թաղեալ. որբք նորա եղիցին 'ի յափշտակութիւն, և
կեանք նորա անհետ եղիցին։ Այս բարժին պերճա-
յելոցն 'ի մեծութիւն իւրեանց որ յանիրաւութենէ,
որք ոչ գնացին ըստ պատուիրանացն Աստուծոյ։ Իսկ
եթէ աղքատ իցէ և 'ի նոյն չար ճանապարհ գնասցէ,
աշխատի չարաչար թշուառայեալ լի մեղք՝ 'ի կեանս
իւր, և ոչ լինի նմա գործակից աստուածային զօրու-
թիւն. քանզի ատէ Աստուած զչարագործս՝ որ ոչ
դառնան 'ի չար ճանապարհաց իւրեանց. և գտանի
այնպիսին վրիպեալ 'ի մեծութենէ և ամենայն բա-
րեաց կենցաղոյս, այլ և հարկաւոր պէտք մարմնոյն
ոչ յաջողի նմա։ Եւ եթէ յերկարեսցի ևս յողորմելի
կեանս իւր, և ոչ պարապեսցէ աղօթից և գործեսցէ
զարդարութիւն, եղկելի է նա քան զամենեսեան. զի
վաղվաղակի հասանէ նմա վիշտք և տառապանք ան-
հնարինք, նեղութիւնք անբմբերելիք, և ամենայն

պատճառք կենցաղոյս ոչ յաջողեսցի նմա. այլ ցնորք և հոգք և այլ ևս բազում աշխատանք պատահեն նմա, և ծախեն զմարմին նորա իբրև զիժ, և իբրև զքարբ ծծեն զարիւն նորա. և 'ի գարշելի ցաւս անկանի, յուրկութիւն և 'ի բորոտութիւն, և ցանկասցի գէթ աւուրն պարենի և ոչ գտցէ, և ամենայն ատելի և արհամարհելի լինի, ծաղր և այպն, գարշանք և կատականք տեսողաց. ոլոգայթք եկեսցեն նմա ուստի ոչ գիտիցէ և պատահարք անակնուսնելիք. բազումք իսկ անձանց առնեն դաւ, և անողորմ խողխողեն զինքեանս՝ սակս անհանդուրժելի ցաւոցն, և չարապէս ընչի յիշատակ նորա 'ի կենցաղոյն իւրմէ։ Այս լինի աղքատի՝ որ 'ի պէսպէս մեղս շաղախի, և ոչ զգուշանայ պատուիրանաց Աստուծոյ։ Բայց է և այլ ինչ երկոցունց կողմանցն՝ որք յաղքատութեան և 'ի մեծութեան կեան չարագործութեամբ. զի թէ աստ ներէ ազնուագութն Աստուած և բազումժամանակեայ առողջութեամբ, և ըստ պատշաճի յաճախ յաջողութիւն շնորհէ յամենայն կողմանց, առողջութիւն մարմնոյ, անդոյ քաջապտղութիւն, անասնոց շահեկանութիւն, յարգանք և մեծարանք 'ի մեծամեծաց և 'ի փոքունց, և ամենևին անհոգք յերկար և փառաւոր կեանք, ծերութիւն շքով և պատուով 'ի փառս և 'ի գովութիւն, և վախճան երանելի, և թաղումն մեծ և երևելի. և արդ որ յայսպիսի կեանս կեայ, և ոչ գնայ 'ի պատուիրանս Աստուծոյ, որ լոյս են և լոյս տան աչաց, և զամենայն ժամանակս վայրենաբարութեամբ և խոտորելի գործովք պղծեսցէ զինքն, և ոչ գոհասցի զԱստուծոյ և փառաւորեսցէ զնա բարի գործովք, և ծանիցէ զտուիչն բարեաց, և երկիցէ 'ի նմանէ, որպէս արժան և օրէն է, այլ չար երախտահատոյց լինի Աստուծոյ, և շնորհեալ բարին յԱստուծոյ արժանս իւր համարեսցի, մի՛ ինչ ուրախասցի այնպիսին, քանզի առաւել տանջելոց է 'ի գեհենին, ըստ մեծատանն որ լուաւ յԱբրահամէ, թէ՝ Ընկալար զբարիս քո 'ի կեանս քո, և վիհ մեծ է ընդ մեզ և ընդ ձեզ։ Այլ և Դաւիթ ասէ. Հատո դրացեաց մերոց եօթնապատիկ 'ի ծոցս նոցա՝ զնախատինս իւրեանց զոր նախատեցին զքեզ, Տէր. և դարձեալ.

Տեսի զամպարիշտն վերացեալ բարձրացեալ որպէս զմայրսն Լիբանանու. անցի՝ և ոչ էր, խնդրեցի՝ և ոչ գտաւ տեղի նորա. զի կատարուին նորա հայի յատակըս դժոխոց, ըստ առակողին։ Այս է բաժին ամենայն մարդոյ մեղաւորի, եթէ մեծատուն լցէ եթէ աղքատ. որ վայելեսցէ 'ի բարիսն Աստուծոյ, և ոչ արասցէ ըզկամն նորա։ Այլ և կայ վասն նոցա հարուածք 'ի վերայ աշխարհի, կամ յարձակումն թշնամեաց կամ մահտարաժամ կամ սով կամ կարկուտ կամ այլ պէս պէս հարուածք վասն մեղաց համօրէն մարդկան, որպէս ջրհեղեղն և հուրն Սոդոմացւոց։ Քանզի յորժամ բարկացուցանէ մեղաւորն զարարիչն իւր՝ յայնժամ աստուածային ցասումն գան 'ի վերայ նորա, իբրև ակամայ յապաշխարութիւն մեղաց։

Եւ արդ քանզի դուք նորահաւատք էք և ոչ էք ընթերցեալ զԳիրս սուրբս. քանզի կայ 'ի գիրս Թագաւորութեանն վասն Աքաաբու և Եզաբելի, վասն զի նոքա սաստիկ բարկացուցին զամենեցուն արարիչն Աստուած, կռապաշտութեամբ և զրկմամբ և յափշտակութեամբ. զմարգարէս նորա սպանանէին, զսեղանս նորա կործանեցին, մի միայն մարգարէ մնաց՝ Հեղիաս անուն, նախանձեցաւ զնախանձ Աստուծոյ ամենակալի, և աղօթիւք իւրովք սանձեաց զբնութիւնս ամպոց՝ զի մի տացէ անձրև, և արգելաւ ցօղ յերկնից, զի բոյս երկրի մի երևեսցի 'ի բնութենէ իւրմէ. քանզի բանն յԵղիայէ եղ և զսահմանս յաւիտենից փակեաց, զի զերիս ամս և զվեց ամիս ոչ եղև անձրև, և աղբիւրք ոչ ևս խաղացին յառաջ, զի ցամաքեցան.նուազեաց և ամենայն սողունք, չորքոտանիք և թռչունք, քանզի բարկացաւ Տէր. և ամենայն բոյսք և տունկք որ 'ի վերայ երկրի էին՝ ցամաքեցան. կորեաւ ամենայն վայելչութիւն աշխարհի, պատառեցաւ երկիր 'ի ծարաւոյ մինչև 'ի խորս. և ամենայն իշխանք և մեծատունք երկրի տատանէին. երկինք հընչէին իբրև զպղինձ, և երկիր բշէր իբրև զերինջ, և ամենայն կենդանի ակամայ յապաշխարութիւն էին յաղագս սաստիկ սովոյն. և միոյ միայն մարգարէի բան՝ իշխանութիւն ունէր 'ի վերայ այսր ամենայնի. որ շինեաց սեղան Աստուծոյ և ինքոյց հուր յերկնից,

և կոտորեաց զսուտ մարգարէսն Բահաղու՝ ուԹ հաՀրիւր և յիսուն այր, և ցածոյց զբարկուԹիւնն. և ապա բացաւ դուռն ողորմուԹեանն Աստուծոյ 'ի վերայ աշխարհի։ Իսկ այսպիսի հարուածք վասն մեղաց մարդկան լինին. քանզի խրատին՝ ԹէպէԹ և ոչ իմանան. զի ոչ առնէ Աստուած անպարտ զամպարիշտս՝ զի արդար է և հզօր, և ոչ առժամայն կորուսանէ. զի ողորմած է և երկայնամիտ, ներէ 'ի վերայ չարեաց մարդկան, զի ԹերևՀս դարձցին յապաշխարուԹիւն։ Իսկ որ անդառնալի մնան 'ի չարիսն՝ կորուսանէ բնաւին, իբրև զՈՀոբովամ և զԲասսա և զԱքաաբ, զԹագաւորսն Իսրայելի, որք ազգաբ ՀնՀեցան անարգուԹեամբ։ Իսկ որ դառնան 'ի չարեաց և ապաշխարեն՝ ԹողուԹիւն շնորհէ, իբրև Մանասէի Թագաւորի Յուդայ, և Նաբուգոդոնոսորայ արքային Բաբելացւոյ։ Իսկ որ նախատէ զԱստուած՝ կորուսանէ զնա Աստուած. իբրև զԱենեքերիմ և զՍնտիոքոս զԹագաւորսն Ասորեստանեայց։ Արդ այսպէս խրատէ Աստուած, զոմանս աստ, և զոմանս 'ի հանդերձելումն։ Եւ արդ մեք, եղբարք, հետևեսցուք առաքինուԹեանն՝ զի փառաւորեսցուք ընդ Քրիստոսի աստ և 'ի հանդերձելումն։

Պատասխանի ետ Արեստոս[1] և ասէ. Տէր իմ Կալիստրատոս, ըստ Թուոյ աւուրց վախճանէ Աստուած զաշխարհս՝ եԹէ ըստ հանդիպմանն. և կամ, զիաՀրդ յանկարծակի մեռանին մարդիկ կամ 'ի սովոյ կամ 'ի ծառոյ կամ 'ի ծովու կամ 'ի գետոյ կամ 'ի հրոյ, կամ յայլ պատահարաց հրաժարեն կեանք մարդկան, կամ ընկեր զընկեր սպանանէ, կամ 'ի դիւէ կամ յանկարծակի մեռանի. արդ իբրև մեռանի մարդ կամ 'ի մանկուԹեան կամ 'ի ծերուԹեան, լցեալ լինի օրաԹիւն, և կամ այնք որ 'ի պատերազմունս անկանին. քանզի ահաւանիկ բաղումք անկան 'ի զօրաց մերոց 'ի պատերազմին Պարսից։ Սուրբն Կալիստրատոս ասէ. Ուսարուք և վասն այդորիկ, եղբարք. քանզի 'ի սկզբանն ասաց Աստուած ցԱդամ։ Հող էիր և 'ի հող դարձցիս. և նոյն ժամայն էլ հրաման մահու 'ի վերայ ամենայն մարդկան 'ի ծննդենէ մինչև 'ի ծերուԹիւն. և ոչ է-

1. Այլ օր. Եւարէստոս։

թէ 'ի բնութենէ, որպէս և այլ կշռուածք կարգեալ են անսխալ, եթէ այսպէս է և մահ. այլ սորա գիտութիւն միայն 'ի ձեռս Աստուծոյ է, որ տէրն է կենաց և մահու. և ոչ եթէ կարգեալ է, որպէս ասացի, ամենեցուն հասանել 'ի ծերութիւն. զի բազում անգամ հայր 'ի մանկութեան մեռաւ, և որդիքն 'ի խորին ծերութիւն հասին. և որդիքն 'ի մանկութեան հարցն առաջի մեռան, որպէս 'ի սկզբանն եղև. զի Ադամ եկաց ամ ինն հարիւր և երեսուն, և Սէթ որդի նորա՝ ինն հարիւր տասն և երկուս. իսկ միւս որդին չև ևս հասեալ 'ի հարիւր ամ, սպանաւ 'ի Կայենէ եղբօրէ իւրմէ։ Արդ մահ սահմանեալ է. այլ են որ երկարակեացք լինին վասն արդար գործոց, և է որ կարճէ Աստուած վասն առաւելութեան մեղաց. է որ արտասուաց ողորմի և յաւելու 'ի կեանս, որպէս զեզեկիայն, և է որ այրեաց և որբոց աղօթիւք՝ յաւելու, և է որ ծնօղաց վասն որդւոց արտասուաց, և որդւոց՝ վասն ծնօղաց դարձուցին 'ի մահուանէ. և բազում աշխարհի պիտոյից յաւելու 'ի կեանս մարդկան, յաւելու և պակասեցուցանէ։ Այլ և հարուածք մահու գան վասն մեղաց, երբեմն սրով, երբեմն հրով, երբեմն ջրով, և այլովք հարուածովք և պէսպէս ցաւովք։ Այլ եթէ ոք հակառակի՝ եթէ ոյր չև է հասեալ օրն ոչ մեռանի, և սակս այնորիկ ինքնին յանդգնի մտանել 'ի ծով մրրկեալ, կամ 'ի գետ յարուցեալ, կամ 'ի լեառն բքացեալ, կամ 'ի դաշտ տապացեալ, կամ 'ի մէջ գազանաց, կամ 'ի վնասակար կերակուր, այնպիսւոյն մահն ոչ որոգայթ է և ոչ պատահար, այլ անձնակամ լուծումն 'ի կենաց, և ընդ այնոսիկ համարին որք անձնամեղ մեռանին։ Այլ և այլ տեսակք գոն մահու 'ի խառնուածի մարմնոյն, 'ի մաղասոյ, կամ 'ի մաղձոյ, կամ յարենէ, կամ յայլ իմեքէ ինչ դիպուածոյ լուծանին կեանք։ Արդ որպէս յառաջագոյն ասացի, մահ սահմանեալ է տնկակից կենաց մարդոյ, վասն այնորիկ Տէրն ասաց. Զաղօթս կացէք՝ զի մի մտջիք 'ի փորձութիւն. զի պարտ է յամենայն ժամ յաղօթս կալ անձանձրոյթ և ասել. Մի տանիր զմեզ 'ի փորձութիւն, այլ փրկեա 'ի չարէն, վասն զի բազում որոգայթք 'ի չարէն լինին. զի 'ի բո-

վանգակ կեանս մեր դնէ զորոգայթ մահու, 'ի գետս, 'ի ծովս, 'ի լերինս, 'ի դաշտս, 'ի հուր, 'ի մարդոյ չարէ, 'ի յինքեան խեղդմանէ, 'ի նեղսրտութենէ, որպէս Յուդասն և Աքիտոփէլ. և յայլ իրս բազումս դնէ զորոգայթս մահու, և լինի մահն՝ յորում ըմբռնեցաւ՝ օրհաս։ Բայց պարտ է առ Աստուած յաղօթս կալ հանապազ՝ զի պահեսցէ 'ի չար պատահարաց, և շնորհեսցէ վախճան բարի։ Գոն և այլ մահք, թէ զորմովք քար ընկեսցի առ 'ի չգիտելոյ, կամ 'ի ծառոյ, կամ 'ի ձիոյ, կամ եզն հարկանէ, կամ երթայ 'ի վերայ սուսերի, կամ գազանի պատահէ, կամ օձ խածանէ, և լինի չար պատահարք. և այս վասն այնորիկ լինի՝ զի հպարտանայ մարդ 'ի զօրութիւն անձին իւրոյ, և Աստուած թողացուցանէ զիւր օգնականութիւնն, և նա ծաղրալից եղեալ՝ պատահէ ամենայն մահաբեր որոգայթից. վասն որոյ պարտ է արթուն կալ և աղաչել զԱստուած. զի որ աղաչէ զԱստուած բոլորով սրտիւ, լինի նմա բարւոյ պատճառք որոգայթքն, ըստ Պօղոսի, թէ՝ Արասցէ ընդ փորձութեանն և զելան, զի համբերել կարասցուք։ Արդ ոչ գիտութիւնն ինչ նախատես ևս կայ սատանայի, այլ սակաւ ինչ գիտէ զժամ մահու մարդոյն. թէպէտ և գիտէ՝ հանապազ կայ 'ի չարի մարդոյն. և եթէ ոչ ժամանէր ողորմութիւնն Աստուծոյ ամենայն մարդոյ, կորուսանէր զամենեսեան առ հասարակ. և վասն այնորիկ ասէ Տէրն. Զգոյշ լերուք, գուցէ ծանրանայցեն սիրտք ձեր շուայտութեամբ և արբեցութեամբ և հոգովք աշխարհականօք, և յանկարծակի հասանիցէ 'ի վերայ ձեր օրն այն, զի իբրև զորոգայթ հասանիցէ 'ի վերայ ամենեցուն որ բնակեալ են ընդ ամենայն երեսս երկրի։ Արթուն կացէք և յամենայն ժամ աղօթս արարէք, զի արժանի լինիցիք զերծանել յայնմ ամենայնէ որ լինելոցն է և կալ առաջի որդւոյ մարդոյ։ Այլ պատերազմաց մահ՝ յայտնի է և ոչ 'ի ծածուկ, զի ամենայն որ սուր առնու և երթայ 'ի պատերազմ՝ կամ սպանանէ կամ մեռանի, այլ եթէ ամբողջ մնայ՝ Աստուծոյ նախախնամութիւնն պատահեաց։ Արդ ամենայն ժամանակ կենաց մարդոյն օրհաս է, և ամենայն որոգայթ դիպի նմա 'ի կենդա-

նութեան իւրում։ և եթէ խոնարհի մարդն և անկա-
նի առաջի Աստուծոյ՝ փրկի 'ի նոցանէ. զի թէպէտ և
մարմինն զիւրն պահանջէ, սակայն հոգին խնդալով
երթայ առ արարիչն իւր, ըստ որում օրինակի յառա-
ջադոյն ասացի։

Այլ մեք, եղբարք, հաստատուն կացցուք, քանզի
հաւատամ 'ի Քրիստոս եթէ յուսով նորա ամենայն
հնարագիտութեանց բանսարկուին յաղթեսցուք, և
առցուք զնշանակ յաղթութեան։ Լուարուք ինձ, եղ-
բարք իմ, եթէ դէպ լինիցի ինձ յառաջագոյն վախ-
ճանել, և քանզի դուք հաւատարիմք էք, կամիմ զի
գիտիցէք, զի բազում անգամ մարտեաւ ընդ իս սա-
տանայ 'ի մանկութենէ իմմէ. բայց յուսամ 'ի Տէր
եթէ այժմ յաղթահարեսցի յինէն. զի յոլով տուեալ
է իմ ողորմութիւն, պերճանայի՝ իբրև թէ զա-
մենայն արքայութիւն ստացեալ եմ։ քանզի յորժամ
առնէ մարդ ողորմութիւն, ոչ ասէ թէ յումէ ետ ինձ
Աստուած՝ յայնմանէ կարկառեցի, այլ իբրև թէ զիւր
ինչ տուեալ հպարտանայ, ասելով թէ մեծ ինչ գործ
գործեցի, մանաւանդ զի հրաման ունիմք գարման
տանել աղքատաց. այլ մեք այնպէս տացուք, զի զոր
առնէ աջն, մի՛ գիտասցէ ձախն, այսինքն՝ զբարւոյ կոչ-
մանն արդասիս՝ մի՛ կողոպտեսցէ ձախակողման բանս-
արկուն։ Իսկ դուք զգոյշ լերուք, սիրելիք, զի այս
ամենայն 'ի բանսարկուէն է, զի ամենայն բարեաց
հակառակ է. քանզի բազում անգամ հնարեցաւ գո-
ղանալ զմիտս իմ։ յորժամ տեսանէր զի արտասուօք
աղաչէի զԱստուած օգնական ինձ, զբաղեցուցանէր
զմիտս իմ։ քանզի յայնժամ յուզելով զամենայն հո-
գիս կենացս արկանէր 'ի միտս, և յորդորէր 'ի յորանջ
մունս. իսկ ես արհամարհեալ զայն, վասն որոյ ոչ կա-
ցաց գողանալ ընդդիմացողն. և քանզի ոչ միայն որ
յեկեղեցիս սաղմոսեն և աղօթեն՝ զայն միայն համարի
Աստուած, այլ և զքայլ ոտից և զհետ գարշապարաց
որք մտանեն ամբողջ հաւատով 'ի տաճար Աստուծոյ՝
համարի Աստուած. և զոր ինչ կամի խնդրել մարդն՝
յառաջագոյն գիտէ, և շնորհէ զխնդրուածն որ ըստ
կամաց նորա լինին. և ուր ուրեք իցէ մարդ և ծունր
դիցէ և խնդրեսցէ բոլորով սրտիւ իւրով, ասէ Աստուած

որ տալոցն է, և չնորհէ զենդրուածսն. քանզի թէ ասես՝ Ողորմեաց ինձ Աստուած, գիտէ որպէս ասացեր, և զպատկերս ձայնիցն Ճանաչէ։ Իսկ ուրեմն, սիրելիք, ոչ ինչ շահի թշնամին՝ յորժամ կամի յափշտակել զմիտս մեր, և խորհուրդս բազմապիսիս արկանէ ընդ աղօթսն։ Իսկ զայս ոմ՝ ոք ոչ գիտէ 'ի մարդկանէ, եթէ մարդ 'ի մեզս անդանդաղ է և անաշխատ, և փոյթ 'ի յանցանս. իսկ 'ի յաղօթսն թուլացեալ ծուլանայ և լուծանի, և ձանձրացեալ նիրհէ, և կարծէ թէ բնութեանն են կիրքք և ոչ բանսարկուին գիւտք։ Այլ զայս իմացարուք, եղբարք, զի այն ամենայն՝ չարին են աղդմունք, յորոց պարտ է փախչել, և մտադիւր մըտերմութեամբ փառաւորել զԱստուած՝ որ արար զերկինս և զերկիր, զծով և զամենայն որ է 'ի նոսա։

Պատասխանի ետ Լիւսիմաքոս և ասէ. Արդարև տէր իմ Կալիստրատէ, զերկինս և զերկիր, զծով, ըզլուսին և զաստեղս Աստուած արար։ Սուրբն Կալիստրատոս ասաց. Ո՞չ ասացի ձեզ թէ մինչդեռ ուսանիք կամ աղօթէք՝ նիրհէք. ոչ 'ի միտ առէք զոր յառաջն ասացի 'ի հարցմանէ եղբօրն Բեմաքքոսի։ Բայց աղէ դուք ասացէք. զիարդ ուսայք 'ի հարցն ձերոց, կամ զիարդ պաշտէիք զձեռագործսն զորս աստուածս անուանէիք։ Պատասխանի տուեալ միաբան ասեն. Մեք այսպէս ուսաք, թէ երկինք ինքնին եղեալ են, այնպէս և երկիրս, և արեգակն աստուած է աստուածոց, զի նա տայ լոյս. և աստեղք՝ պատկերք աստուածոց են։

Սուրբն Կալիստրատոս ասէ. Ուսարուք և վասն այդորիկ, եղբարք, զի մի գայթակղեցուսցէ զձեզ սատանայ. այս ամենայն որ տեսանելիքս են, երկնաւորին՝ միայնոյն՝ անսկզբանն՝ անեղին՝ սրբոյ Երրորդութեանն՝ և միայնոյ աստուածութեանն ստեղծուած է, քանզի նա հիմնեցոյց զերկինս և զերկիր. զի զերկինս ձգեաց իբրև խորան և պրկեաց զնոսա իբրև զփեղկս, և զհաստատութիւն ջրայարկ պղպջակին՝ հաստատեաց բանիւ իւրով՝ կամարաձև իբրև զգունդ բոլորշի, և զերկիր 'ի վերայ ջուրց կացոյց, և զջուրս 'ի վերայ ոչնչի. և երկիր դողայ և սարսէ յերեսաց նորա. քանզի զպատառուածս հաստատութեանդ և 'ի վերայ անհուն լայնութեան յորձանացն Ովկիանոսի,

որ ընդ ինքեամբ ունի զամենայն տարերս, զվերինս և զներքինս, նմանապէս և զաստեղս՝ արար և եդ 'ի կամարաձև հաստատութեանդ 'ի լուսաւորութիւն գիշերոյ։ Իսկ արեգակն անդադար ի մն հրամանաւ կատարէ զընթացս իւր. քանզի ելանէ 'ի կողմանէ դըրանցն արևելից, և գնայ ընդ հարաւ թաւալմամբ իբրև զանիւ, մինչև դայ հասանէ յարևմուտս. և մըտանէ ընդ դրունս արևմտից, և այնուհետև տարրաւնայ խաւար 'ի վերայ ամենայն երկրի ձգմամբ գիշերոյ. և մոեալ 'ի ներքոյ անհուն աղխից հարաւոյ՝ առ հաստատութեամբն ներքնով, ընթանայ ընդ աջակողմ՝ մինչև գայ հասանէ 'ի դրունս արևելից, և ծածկէ զխաւարն լոյսն արեգական։ Սոյնպէս և լուսինն կատարէ զընթացս իւր նովին օրինակաւ. աճէ և պակասէ՝ մերձենալով յարեգակնն և հեռանալով յերեսնօրեայ ժամանակի։ Եւ զիաւրդ ՀՇմարիտ է ուսումն ձեր՝ թէ աստուած է արեգակն. եթէ աստուած էր՝ զիաւրդ հնազանդէր հրամանի և ծառայէր մեզ. կամ զիաւրդ ընդ կարեօք անկեալ, երբեմն ամպով ծածկի և երբեմն խաւարի. նմանապէս և լուսինն, նոյնպէս և աստեղք ըստ հրամանին զընթացսն կատարեն. նոյն օրինակ խաղան յարևելից և գնան մինչև 'ի մուտս արևու, և դառնան ընդ աջակողմ հիւսիսոյ՝ ոչ մոռանելով ընդ դրունս երկնից, այլ ինքեանք 'ի հաստատութեան շրջելով՝ զամենայն ընթացս տունջեան ըստ իւրաքանչիւր կարգի կատարեն, մինչև հասանեն յարևելս ընդ հարաւ, որով երևին մեզ շաւիղք գնացից նոցա։ Բայց բաղումք առասպելաբանելով ասեն զերկնից թէ շրջանակին, որոց ընդունայն են բանքն. քանզի անշարժ է հաստատութիւնն, այլ բաղումք յաստեղաց ընթանան շուրջանակի. և կէսք զետեղեալք՝ զիւրեամբք շրջեցուցանեն զաստեղս, որպէս հիւսիսային աստեղքն, որ յոմանց արքտորոս կոչին, իսկ յոմանց հեփտասագրոն, իսկ յերկրագործաց՝ սայլ, և 'ի նաւավարաց բազմոյթ, քանզի սոքա ոչ այլափոխին 'ի գնացս, այլ անդէն շրջանակին։ Բայց այլ աստեղք ժամանակ ինքեանց ունելով՝ զգնացս կատարեն. որպէս արուսեակն և մաղարովթն և ալաւոունքն և հայկն, իւրաքանչիւր ժամանակին ծառայեն՝ որպէս կար-

գէցան. որպէս և գրեալ է. Զլուսին և զաստեղս զորս դու հաստատեցեր. իսկ հաստատութիւն ասելով մարգարէն, ոչ եթէ զի անշարժ իցեն՝ ասէ զանշարժութենէն, այլ հաստատեալ կոչի, զի անյաղթ հրամանին անսխալ ծառայեն առաջի իւրեանց Աստուծոյ։ Եւ արդ, եղբարք իմ, 'ի բաց ընկեցէք զընդունայն վարդապետութիւնն, զի զամենայն արարածս Աստուած արար. և պատուեաց միայն զմարդն պատկերաւ իւրով, և զամենայն ինչ հնազանդ արար 'ի ներքոյ ոտից նորա. և արժան է մարդոյն ճանաչել զնա, զի վասն նորա ամենայն արարածք յոչընչէ հաստատեցան. վասն նորա արեգակն անսխալ զհրամանն կատարէ, և լուսին զընթացս իւր ըստ հրամանին իւրոյ. վասն նորա ամենայն ծերք աստեղաց կարգեցան, զորս ընդունայնամիտքն աստուածս անուանեցին, և կենդանեաց անուանս 'ի վերայ եդին, որպէս խոյն և ցուլն, այծեղջիւրն և կոյսն և լուծն և որ սոցին նման են. ուստի և հարցմունս իմն առնեն, և զլիութիւն և զսով 'ի նոցանէ առնուլ խոստանան. այլ և բախտս և սահմանս կենաց մարդկան նոքօք ասեն լինել, զի խաբեսցեն զմարդիկ անոտի բանիւք. այլ նոքա կարգեալ են ժամանակաց յայտնիչք և 'ի նշանս ճանապարհին նաւորդաց ծովու։ Վասն մարդոյ դետք և աղբիւրք, և ամենայն ծաղիկ խոտոյ և տնկոց՝ բանիւ երևեցան 'ի վերայ երկրի, և մարդն միայն 'ի վերայ երկրի պատուեցաւ պատկերաւ անմահին և բարերարին Աստուծոյ արարչին իւրոյ. և հաւանեալ պատրանաց, անկաւ ընդ մեղօք և եղև մահկանացու, և չարաբաստոյ արտաքոյիւքն, սուտ և ընդ վայր փաղաքշանօքն։ Եւ արդ, եղբարք, մեծ ջան է 'ի վերայ երկրիս այսորիկ ապրեցուցանել մարդոյ զանձն իւր։ Բայց մեք ճգնեսցուք առնուլ զնշան յաղթութեան 'ի պատերազմիս ուր է կռիւ բանսարկուին, և ընդդիմասցուք քաջապէս չար մարտնչողին, և յաղթող գտեալ անօրէն գոռոզին, և նա պարտեսցի 'ի մէնջ անկանգնելի բեկմամբ, և մեք զերծեալք 'ի խաբէութենէ կենցաղոյս՝ ընկալցուք զանթառամ փառաց պսակն 'ի Տեառնէ մերմէ և փրկչէն Յիսուսէ Քրիստոսէ, որում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Եւ իբրև ասաց զայս՝ լռեաց 'ի խօսելոյ, քանզի ե-
րեկոյ իսկ էր, և զգիշերն բովանդակ յաղօթս եկաց
մինչև յառաւօտն։ Բայց էր ոմն ատենական դպիր, լի-
նելով մերձ 'ի բանդն, մտադրելով խօսից սրբոյն Կա-
լիստրատոսի և նշանագրելով 'ի քարտիսի՝ ետ մեզ. և
մեք կարգեցաք Ճշմարտիւ զպատմութիւնն խորհրդոյս։
Իսկ 'ի վաղիւն նստեալ զօրավարն Պրեսիսնտինոս յա-
թոռ դատաստանի, հրամայեաց զնոսա ածել առաջի
իւր. և ածին զնոսա 'ի մեծ հրապարակն, յորում
կանգնեալ կային բազում պատկերք կռոց. անդր ժո-
ղովեցան և գլխաւորք զօրուն և ամենայն թիւ զօրա-
կանացն։ Զօրավարն ասէ. Զիա՞րդ է, Կալիստրատէ,
խրատեցէ՞ր զքեզ և զհրապուրեալսդ 'ի քէն զզօրա-
կանսդ թագաւորին, զոհել աստուածոցն և հրաժա-
րել 'ի տանջանաց։ Սուրբն Կալիստրատոս ասէ. Ես
վասն իմ զայս հաստատեալ ունիմ պատասխանի, զի
ոչ ինչ հաւանեցուսցէ զիս հեռանալ 'ի Քրիստոսէ
յուսոյն իմմէ. այլ վասն դոցա՝ ինքեանք իսկ հաստ-
կալեցք են, ցդոսա հարց։ Զօրավարն ասէ. Դուք զի՞նչ
ասէք, որ պատրեալ հաւանեցայք շաղակրատիդ այդո-
րիկ։ Պատասխանի ետուն և ասեն. Ո՛ անարժան դու
և անամօթ. եթէ կամեցիս ունել զմեզ 'ի գնդի հա-
մարու՝ ոչ ընդդիմասցուք. բայց վասն պաշտամանս մե-
րոյ, հաւատամք 'ի Թագաւորն երկնի և երկրի, յԱ-
ստուածն ամենայնի, և 'ի ծնունդն նորա Յիսուս Քրիս-
տոս և 'ի սուրբ Հոգին, զի նա է Աստուած երեքան-
ձնական, երրորդութիւն և մի աստուածութիւն և մի
զօրութիւն, անարատին այնմիկ և իմաստնոյ, որ էն և
է և կայ յաւիտեան, որպէս ուսոյց մեզ վարդապետն
մեր Կալիստրատոս։ Իսկ նա հրամայեաց տանջել զնո-
սա դալար գաւազանօք. և յետ տանջելոյն՝ հրամա-
յեաց կապել զոտս և զձեռս նոցա, և քարշել զամե-
նեսեան 'ի լճեզրն, և ասէ ցնոսա. Զոհեցէ՛ք աստուա-
ծոյն, ապա թէ ոչ հեղձնոյք 'ի ջուրսդ։ Իսկ նոքա
ասեն. Մեք հաւատամք 'ի Ճշմարիտ Աստուած, դու
զինչ կամիս արա։ Իսկ իբրև հանդերձեցան անկանել
'ի մեծ լիճն, որոյ անուն էր Ովկիանոս, սուրբն Կա-
լիստրատոս եկաց յաղօթս ասելով. Աստուած յաւի-
տենական որ անհասդ ես և ամենակալ, որ հաստա-

տեցեր զերկինս իշխանութիւն աթոռոյ քո անշարժ յաւիտեանս, և զերկիր 'ի պատուանդան ոտից քոց. նայեա 'ի հօտս այս, և լեր ընդ մեզ. և ապրեցո զմեզ յապականութենէս, և շնորհեա սոցա զՋուրս զայս 'ի մկրտութիւն վերստին ծննդեանն. արժանի արա լուսանալ զլուսացումն յաւիտենական և սուրբ, 'ի բաց ընկենուլ զհին մարդոյն զընդունայնութիւն, և բաժին առնուլ ընդ աշխատելոցն 'ի խաչ քո. պարգևեա մեզ, Տէր, հասանել 'ի շտեմարանս քո, 'ի ձեռն լուացմանս այսորիկ, 'ի գործակցութիւն գոլով մեզ Հոգւոյդ քո սրբոյ 'ի Ջուրս այս. զի փառաւորեալ է անուն Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Իսկ իբրև ասացին միաբան զամէնն, ընկեցին զնոսա կապեալս 'ի Ջրակայն. և նոյնժամայն լուծան կապանք սրբոցն, և գնալով 'ի վերայ Ջուրցն Ելին 'ի ցամաքն՝ պայծառացեալ 'ի շնորհաց Հոգւոյն սրբոյ։ Իբրև Ելին 'ի Ջրոյն, եկն ձայն յերկնից և ասէ. Քաջալերեցարուք, սիրելիք իմ, զի ես ընդ ձեզ եմ, ուրախ լերուք զի ահա պատրաստեցի ձեզ տեղի յարքայութեան իմում, ցնծացէք զի զանուանս ձեր գրեցի 'ի գրի իմում 'ի դպրութիւն կենաց։ Եւ եղև որոտումն անհնարին և շարժումն մեծ, մինչև անկան պատկերք կռոցն և փշրեցան։ Իսկ իբրև տեսաք զլոյսն որ ծագեաց 'ի վերայ սրբոցն, և լուաք զերանաւէտ ձայնն և զշարժումն և զխորտակումն կռոցն, հաւատացաք 'ի զօրականացն արք հարիւր և հինգ։ Յայնժամ երկիւղիւ մեծաւ ըմբռնեալ անօրէնն Պրեսիկտինոս, և հրամայեաց տանել զնոսա 'ի բանդ։ Իբրև մտին նոքա 'ի բանդն, դարձեալ ուսուցանէր զնոսա սուրբն Կալիստրատոս և ասէր. Ամբ եղբարք, ահաւասիկ կոչեաց զմեզ Տէր առ ինքն. և քանզի ես 'ի մանկութենէ իմմէ ընկալայ զմկրտութիւն, և զձեզ այժմ կոչեաց. արդ արիք, յաղօթս կացցուք։ Եւ համբարձեալ զձեռս իւր սկսաւ ասել. Տէր, Տէր, որպէս զի սքանչելի է անուն քո յաւիտեան, որ յառաջ քան զամենայն անսահման բանիւ քո հաստատեցեր զամենայն. որ անապական և աներևոյթ և անվթար գանձուց տէրդ ես, պահեա զհօտս զայս, ապրեցուցանելով 'ի բերանոյ ա-

ռիւծուն, և հաստ զսոսա 'ի յաւիտենական փրկու-
թիւն. և արժանի արա զմեզ վախճանել խոստովա-
նութեամբ քո. զերծո զմեզ 'ի մեղսասէր կենցաղոյս՝
անբիծս և անարատս. մոյծ զմեզ ընդ նեղ դուռնն 'ի
տաճար թագաւորական, զի օրհնեսցուք սուրբ ան-
հանգիստ ձայնիւք զամէնօրհնեալ անունդ Հօր և Որ-
դւոյ և Հոգւոյդ սրբոյ, այժմ և միշտ։

Իսկ անօրէն և ամպարիշտ զօրավարն Պրեսինտի-
նոս խորհեցաւ ընդ Վերոնի Փողարի, և առաքեաց 'ի
բանդին և կոտորեաց զնոսա, զի էին թուով յիսուն
զօրականքն Քրիստոսի։ Եւ կատարեցան սուրբքն յամ-
սեանն Հոռի, որ օր քսան և եօթն էր։ Իսկ մեք զի-
նուորքս որք հաւատացաք 'ի տեսլեան սքանչելեացն
և մկրտեցաք յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ,
եկաք 'ի գիշերի գաղտ, և բարձաք զնշխարս սրբոյն և
եդաք 'ի վայելուչ տեղւոջ։ Վասն որոյ զմեզ արժանի
արար Տէր՝ հաստատել եկեղեցի 'ի Հռովմ յանուն
սրբոյն. և շինեցաք անուամբ սրբոյն Կալիստրատոսի
քաւարան մեղուցելոց և ժողովետղ միաբանութեան
հրեշտակաց և մարդկան. 'ի փառաբանութիւն և
յերկրպագութիւն ամենասուրբ Երրորդութեանն,
Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։

Վկայաբանութիւն Սրբոյն Կալիոպեայ վկայի։

Թէոկղիա էր կին ոմն իմաստուն վարուք, ազգաւ ազատ, կեցեալ ընդ առն իւրում ամս բազումս, և ոչ էր ծնեալ որդի. և մօտ 'ի մեռանել առն՝ յղացաւ և ծնաւ որդի, և կոչեաց զանուն նորա Կալիոպիա. և մեռաւ այր նորա և եթող նմա ստացուածս բազումս. և ուսաւ մանուկն զամենայն իմաստութիւն գաւառին Պամփիւլացւոց։ Եւ եղև 'ի ժամանակին յայնմիկ բաղմացաւ ուսումն կռապաշտութեանն, զոհել և երկիր պագանել կռոցն։ Լու եղև դատաւորին վասն պատանեկին, եթէ քրիստոնեայ է։ Իսկ երանելի մայրն նորա Թէոկղիա ետ ոսկի և արծաթ և հանդերձս և ծառայս, և աղաչեաց զնաւավարսն զի առցեն և փախիցեն 'ի դատաւորէ անտի. և նաւեցին 'ի Պոմփէ քաղաք Լիկիացւոց։ Եւ հրաժարեալ նորա 'ի Մաքսիմիանոսէ դատաւորէ, քանզի մաքսաւորութեան կարգէր պատանեկին և տարեկան կռոց։ Եւ իբրև ետես երանելի պատանեակն՝ 'ի խորհուրդս եմուտ ինքեան և պահս քարոզեաց ծառայից իւրոյ քառասնորդս. և եկին առ նա հարցանել և ասել. Տօնք տարեկանաց մերոց են արդ, եկ ընդ մեզ և ուրախ լեր այսօր։ Եւ նա ասէ ցնոսա. Ո՞րպէս կարեմ ընդ ձեզ հաւասարել, զի դուք զոհեալ ուտէք և պիղծ կերակուրս, և ես պահեմ քառասներորդս։

Լու եղև այս յականջս դատաւորին, և հրամայեաց

ածել զառաջեաւ իւրով։ Մաքսիմիանոս դատաւորն ասէ. Կալիոպիա, ամենայն երկիրս լի է քեւ. ասէն, եթէ ինքն մոլորեալ է և զբազում մոլորեցուցանէ։ Կալիոպիա ասէ. Դուք էք մոլորեալ, որ առաջնորդ խաւարի էք. զի թողեալ է ձեր զԱստուած և երկիր պագանէք քարեղինաց։ Մաքսիմիանոս ասէ. Մանկութիւն հասակի քո ստահակեցուցանէ զքեզ, և ածէ 'ի վերայ քո թշնամանս։ Եւ դարձեալ ասէ ցնա. Յորմէ՞ ազգէ ես։ Կալիոպիա ասէ. Յազգէ եմ Պամֆիլացւոց, մեծայ խորհրդոց առաջնորդ եմ ես։ Մաքսիմիանոս ասէ. Այս ինձ, հայր և մայր ունիս։ Կալիոպոս ասէ. Մայր ունիմ, և հայր իմ բազում ամ է զի կատարեցաւ։ Մաքսիմիանոս ասէ. Աստուածովքն իմովք, եթէ հաւանեսցիս ինձ և պաշտեսցես զաստուածսն իմ, միամօր դուստր ունիմ ես, զայն տաց քեզ 'ի կընութիւն։ Կալիոպոս ասէ. Ո՛վ անօրէն, կամիս զիս այնու խաբել. զպիղծ դուստրն քո 'ի կնութիւն առնում ես, և հասանէ ինձ հոգալ զամենայն իրս մարմնոյ, և տալ փոխանակ ընդ դստերն քո. առաւել քան զքոյդ ունի մայր իմ, հարիւր աղջիկ՝ որ կան 'ի սպասուն նմա։ Զայս գիտասջիր զի զհողս զայս զոր ստեղծ Քրիստոս 'ի պատկեր իւր, հաւատամ յԱստուած եթէ այսպէս առանց արատոյ կարող է պահել զիս որ աւրարն։ Մաքսիմիանոս դատաւոր ասէ. Արդ այսու ևս բանիւ գրգռես զիս եթէ արագ արագ վախճանեցայց։

Եւ հրամայեաց զնա ձեռս յետս կապել և տանջել չարաչար։ Կալիոպոս ասէ. Քրիստոս, գոհանամ զքէն, զի վասն անուան քո անարգեցայ։ Մաքսիմիանոս ասէ. Հաւանեա ինձ և տեսանես զգաւառն քո և զմայրն քո, և մի մերժիր 'ի ստացուածոց քոց։ Կալիոպոս ասէ. Ոչ եմ մերժեալ 'ի գաւառէ իմմէ, այլ Տեառն է երկիր լրիւ իւրով. այլ վասն մօրն զոր ասես եթէ տեսանես. Որ պատուէ զհայր կամ զմայր առաւել քան զիս՝ չէ ինձ արժանի, այս է ձայնն տէրունական։ Այլ վասն իշխանութեան՝ ասէ. Լաւ է չարչարել ընդ ժողովրդեանն Աստուծոյ՝ քան առ ժամանակ մի վայելել 'ի մեղս։

Դատաւորն ասէ. Յանեցէք կայծակունս 'ի նեբքոյ

անուոցդ, և շրջեցէք 'ի վերայ դորա։ Յայնժամ պա-
տանեակն վիրաւորեալ՝ ասէ. Քրիստոս, վաղ եկեսցէ
առ իս ողորմութիւն քո։ Եւ վաղվաղակի էջ առ նա
հրեշտակ Աստուծոյ, և թօթափեաց զկայծակունս. և
կամէին շրջել զանիւսն և ոչ կարացին։ Յայնժամ հրա-
մայեաց դատաւորն արձակել զնա անտի և արկանել
'ի բանդ։

Եւ գիտակ եղև մօր նորա, և յառաջեալ արարեալ
մուրհակս ազատել զամենայն ստացուածս իւր. և կո-
չեալ յինքն յիսուն այր, և զոսկի և զարծաթ իւր և
զհանդերձս պատուականս բաշխեաց աղքատաց, և
զագարակս յեկեղեցիս. և ինքն միայն դիմեալ 'ի
գեօղն կիւլիկեցւոց առ երանելի որդին իւր. և իբրև
ետես զնա՝ անկաւ առ ոտս նորա և երկիր եպագ նմա։
Իսկ երանելին կայր կապեալ ընդ այլսն 'ի բանտին,
և ոչ կարաց յառնել և տալ ողջոյն մօր իւրոյ, այլ
զայս միայն ասաց. Բարի եկիր, Ճշմարիտ վկայ Քրիս-
տոսի։ Եւ էր ընդ մօր նորա յիսուն այր. և կացեալ
երանելւոյն յաղօթս և բացան դրունք բանտին, և
ելին ամենայն կապեալքն 'ի բանդէ անտի 'ի գիշերին
յայնմիկ. և անկաւ ահ մեծ 'ի վերայ բանտապանացն.
և մնացին 'ի բանտին Կալիոպոս և մայր նորա միայն, և
ահ մեծ անկաւ 'ի վերայ քաղաքին. ձայն եղև առ
նոսա և ասէ. Դուք էք որդիք Աստուծոյ, նահատակք
Քրիստոսի, և սրբեցէք այսօր զքաղաքս 'ի կռապաշ-
տութենէ, որ թողէք զաշխարհս և զամենայն ստա-
ցուածս ձեր, և վասն Քրիստոսի չարչարիք։

Եւ լուեալ զայս Մաքսիմիանոսի՝ հրամայեաց զնա
խաչել. 'ի հինգշաբաթուոջ հանին զնա 'ի խաչ։ Իսկ
մայր նորա գիտացեալ եթէ խաչեցին զնա, տուեալ
դահճին երկուս դահեկանս, և աղաչէր զնա զի գլխի-
վայր խաչեսցէ, և մի նման Քրիստոսի. և յաւուր
ուրբաթու աւանդեաց զհոգին։ Ձայն եղև յերկնից և
ասէ. Եկայք առ իս, քաղաքացիք Քրիստոսի և ժա-
ռանգորդք արքայութեանն. աթոռ քո պատրաստեալ
է, զի նստցիս ընդ աջմէ Աստուծոյ։ Եւ եղև շար-
ժումն մեծ. երկեաւ երկիւղ մեծ դատաւորն, զի
խաւարեցաւ արեգակն, և եղև խաւար 'ի վերայ
երկրի իբրև ժամ մի, և դարձաւ անդրէն 'ի լոյս։

Եւ առեալ Երանելւոյ մօրն Կալիոպեայ զսուրբ նշխարսն՝ հանդերձ հեղուսիւքն ՝ի խաչէ անտի, և պատեալ զպարանոցաւ որդւոյն իւրոյ. և այնպէս ա-ւանդեաց զՀոգին Երանելի մայրն. և եկին եղբարք և առին զսուրբ նշխարսն և թաղեցին յայրի միոջ. և օրհնեցին զԱստուած, փառաւորելով զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին, յաւիտեանս. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Կիրակոսի և մօր նորա Յուղիտայ։

Սովորութիւն է չար թշնամւոյն մարդկան՝ ընդ բարի սերմանն ցորենոյ սերմանել որոմն. վասն որոյ պարտ է արթուն լինել մանկանց եկեղեցւոյ զի կարասցեն զգուշութեամբ պահել զսուրբ եկեղեցի, զի մի խառնեսցի ժանտ սերմն ընդ միտս աստուածպաշտութեան սերմանն, այլ բուսցին ըստ Աստուծոյ աճեցեալ բարեպաշտութեամբ և բազմապատիկ հատուսցեն Տեառն զպտուղ հոգևոր արդեանցն. զի որք բարեպաշտութեամբ զհետ սրբոցն ընթանայցեն փութաւոր անձամբք՝ գտցեն զՀշմարտութիւնն։ Արդ զայս ասեմք՝ առ քո աստուածպաշտութիւնդ, սիրելի եղբայր, և՝ ի ձեռն գրոյ պատմեմ զիմ կրսերութիւնս[1]. զի Թէպէտ և յԻկոնիոն քաղաքի աստ խօսեալ էր զերանելի և զբարեյաղթ մարտիրոսն Յուղիտայ[2], պատմեմ քեզ և զբարւոք խոստովանութիւնն որ՝ ի Քրիստոս, եթէ ուստի էին և կամ որպէս վարեցան՝ ի կենցաղումն, և կամ որպէս վկայեցին։ Քանզի գտանի առ ոմանս և մանաւանդ առ անհմուտս և վայրենաբարոյ աշխարհականս՝ որք բերեն վկայութիւնս իմն որ բազում հակառակութիւն ունի առ Ճշմարտութիւնն, և դիմադարձութիւն բարւոք գործեցելոցն,

1. Մի օր. Ի՝ յԵռն գրոյդ պատմեմ զիմ կրսերութիւնդ։

2. Մի օր. Վկայն Յուղիտայն։

և ոչ կարգաւորութիւն ինչ կայ և ոչ ուղղութիւն յիմացուածս բանիցն զոր ասեն. և զայսպիսի ստեղծաբանութիւն առեալ 'ի ձեռն՝ ստուգութիւն ոչ ինչ գտանես 'ի նոսա և ոչ գիտութիւն։ Քանզի արդար ոմն 'ի հարցն ասաց վասն ոմանց՝ որ ինքնակամ բանիւք ասացեալ է, որպէս զուղիղ զգործս ոմանց խափանել շոգմոգութեամբ և շատխօսութեամբ իւրեանց. արդարև բազմապատիկ արժանի են յիշելոյ այսպիսի գրով՝ որ զնաբանութիւնս նոցա խափանէ։ Եւ կարծեմ, ով աստուածասէր, եթէ Մանիքեցւոցն են այսպիսի շաղփաղփութիւնք. քանզի այս յայտ իսկ է յօրինակացն, և նոյն իսկ յառաստպելական 'ի գրելոցն հերձուածողացն։ Այլ՝ զի հեթանոսաց գայթակղութիւն և յիմարութիւն զնաչն Քրիստոսի համարեալ։

Բայց ես փութապէս յոյժ խնդրով ջանացայ գտանել ըստ քո հրամանի՝ զվկայութիւնս նոցա. թերևս արդեօք կարացից գտանել Ճշմարտապէս զստոյգ նահատակութեան նոցա պատմութիւն. վասն որոյ ոչ հեղգացայ հարցանել զբազումս, ստուգել և քննել վասն նոցա, և զենակիչս տեղւոյն հայցել՝ զի եթէ գիտիցէ ոք ասասցէ զՃշմարիտն վասն վկայութեան նոցա։ Իսկ այժմ Մարկիանոս ոմն քրիստոնեայ և քրիստոսասէր տրիբուն և դպիր նուիրապետ[1] եղեալ թագաւորին Յուստիանու և առեալ 'ի նմանէ զզօրավարութեան[2] պատիւ, և Ցենոն երևելի այր՝ որ էր նորա աթոռակից յաշխարհէ և յերկրէ Սուրացւոց, և այսպէս յաղագս սրբոյն խնդիր արարեալ, որպէս յոմանց ծերոց լուեալ՝ եթէ տոհմակիցք էին նոցա 'ի գաւառէ Լիկոնացւոց գեղեցիկ ծաղիկն և յաղթող վկայն Քրիստոսի Յուղիտա. անակնածելի վարիւք կեայր, և զՔրիստոս բարեպաշտութեամբ փառաւորէր և զիշատակս նորա հանապազ ունէր յինքեան. բայց և այլ ևս տոհմակիցք նորա պատուով գործէին զայս։

Եւ էր ինքն երանելին Յուղիտա 'ի թագաւորական տոհմէ. և իբրև սկսան դառնաշունչ հողմք հալածանաց ընչել 'ի վերայ քրիստոնէից և խախտել զսուրբ եկեղեցիս Քրիստոսի, 'ի ժամանակս Դիոմետիանոսի

1. Մի օր. Նուիրապետ։ 2. Մի օր. զզբաւորութեան։

դատաւորի, որոյ եկեալ 'ի դաւառն Լիկոնացւոց, այր գազանաբարոյ և յոյժ կամակիր արիւնահեղութեան սուրբ վկայից։ Այս այնուհետև փախստական եղեալ սուրբն Յուղիտա հանդերձ երկու նաժշտաւ և երեմենեաւ մանկամբ միով՝ բարեյաղթ վկայիւն Կիրակոսիւ, 'ի Լիկոնիոն քաղաքէ[1] որ է մայր քաղաքաց Սուրացւոց երկրին, ուր և ամուսնացեալ էր Յուղիտա։ Այդ թողեալ նորա զամենայն զկեանս իւր, զշարժուն և զանշարժուն զբազմապատիկ զստացուածս՝ եկն փախստական 'ի Սելևկիա, որ է և նա մայր քաղաքաց ազգին Սուրացւոց, և գտեալ և անդ բազում խռովութիւնս քրիստոնէից։ Քանզի Աղեքսանդրոս ոմն առեալ 'ի Դիոկղետիանոսէ ամպարիշտ թագաւորէ զդատաւորութեան իշխանութիւն, և եկեալ 'ի քաղաքն Սելևկիա՝ ընկալեալ զարքունական հրամանն, և հրաման տուեալ ամենայն փութով՝ խաշտանգանօք և տանջանօք չարչարել զայնոսիկ որք ոչ զոհիցեն մնոտի կռոցն զոր աստուածս անուանեն. և խորհեալ երանելին Յուղիտա զոր յաստուածային գիրս գրեալ է, եթէ տուք տեղի բարկութեան, որպէս զի մի յանկարծակի ըմբռնեսցի. և անտի ևս փախստական գնաց 'ի Տարսոն քաղաք, որ է մայր քաղաքաց առաջին նահանգին կիլիկեցւոց։ Եւ որպէս թէ 'ի յուզմանէ ուրուք հասեալ 'ի վերայ նորա լիրբ և ժպիրհ դատաւորին Աղեքսանդրի, ըստ բազմապատիկ չարութեանն Դոմետիանոսի[2] առաւելեալ ևս չարութեամբ, և ըմբռնեալ զբարեյաղթող վկայն Յուղիտա, և զինքեան զորդին ունելով 'ի գիրկս իւր՝ զգեղեցիկ տղայն, զաստուածակոչ վկայն զսուրբն Կիրակոս, և կալեալ զնա անօրէնութեան սպասաւորքն ըստ գուշակելոյ օրինակին. և թողեալ զնա նաժշտացն՝ փախեան, և կացեալ 'ի հեռաստանէ հայէին 'ի նա՝ տեսանել զինչ լինիցի։ Եւ կացուցեալ զնոսա առաջի թագաւորական բեմին Աղեքսանդրի՝ հարցանէին զանուն և զբախտ և զաշխարհ։ Համարձակեալ այնուհետև առաջի դատաւորին՝ զՔրիստոս անուն 'ի կիր արկեալ ասէր. Քրիստոնեայ եմ։ Եւ սրտմտեալ

1. Մի օր. 'ի Լիոնիոն քաղաքէ։ 2. Մի օր. Դեմետրիանոսի։

դատաւորին Աղեքսանդրի բազում սպառնալեաց սաստեալ երանելւոյն Յուղիտայ։ Բայց ըստ կամաց իւրոց ոչ ինչ կարաց գործել։

Ապա հրամայեաց առիգածել, և դալար արջառաջլոյք յանխնայ հարկանել, և զմանուկն հանել՝ի գրկաց մօրն. և նա յորդաբուղխ արտասուօք զլալ եղեալ[1] վասն գթոյ մօրն. դարձեալ հայէր՝ի նա երանելի մայրն լի Ճգնութեամբ։ Յայնժամ տարան զնա առ դատաւորն, և զմայրն ըստ հրամանի ամպարշտին դժնեայ անողորմ հարկանէին. և նա ոչ ինչ տայր պատասխանի, բայց բազում համարձակութեամբ ասէր. «Քրիստոնեայ եմ։» Եւ իբրև զանշունչ ընդունէր զչարչարանսն, և նովին ձայնիւ առաւելս աղաղակէր, թէ՝ «Քրիստոնեայ եմ։» Եւ դատաւորին առեալ՝ի գիրկս իւր զմանուկն սկսաւ գգուել, եղեալ՝ի վերայ ծնկաց իւրոց, կամէր համբուրել, և նորա՝ի մայրն հայեցեալ աքսոտելով առաւել ևս կեղէր զիշխանն, և զգլուխն իւր՝ի նմանէ՝ի բաց դարձուցանէր, և ձեռօք իւրովք հակառակէր ընդ նորա, և եղնգամբք որպէս Ճիրանամբ իւիք մագլցէր զերեսս դատաւորին. և իբրև ձագ տատրակի քաղցրաձայն զսասցեալն՝ի մօրէն ասել, թէ՝ «Քրիստոնեայ եմ։» քանզի սովորութիւն է տղայական բնութեան այսպիսի անակնածութեամբ յանդուգն պտսկել[2]. մինչև զայրանալ դատաւորին յոյժ իբրև ըզվայրենի գազան. քանզի ոչ է իսկ արժան զնոսա մարդիկ անուանել ողբ՝ի մարդկապէս գործոց օտար էին։ Բարկութեամբ սրտմտեալ, իբրև զարիւնարբու գազան, կալեալ զոտից մանկանն՝ի բարձրաւանդակ բեմէ անտի զարկուցեալ զսուրբ մանուկն, և զանգիւն բադրոնի միոյ առեալ գլուխն՝ Ճեղքաւ[3] ամենայաղթ մարտիրոսին այսպիսի խոստովանութեամբ։ Եւ այնպէս ջարդեալ գլուխն, մինչև՝ի ցնդմանէ արեանն լցաւ բեմն ուր նստէին. և՝ի ձեռս Աստուծոյ աւանդեաց զՀոգին աստուածազգեաց մանուկն. քանզի հոգիք արդարոց՝ի ձեռին Աստուծոյ են։

Եւ իբրև ետես զայն սուրբն Յուղիտա՝ խնդութեամբ

1. Մի օր. զլալ եղեալ։
2. Մի օր. պապգել։
3. Մի օր. Ճեղեաց։

լի եղեալ ասէր. Գոհանամ զքէն, Քրիստոս, զի արժանի արարեր զորդին իմ կատարել և հասանել անթառամ պսակացն։ Եւ զայս լուեալ դատաւորն առաւել ևս զայրացեալ յինքեան, հրամայեաց զնա կախել և ուժգնապէս քերել, և 'ի կաթսայիցն որ լի էին եռանդմամբ ձիթով՝ առնուլ և արկանել զնովաւ։

Եւ քարոզքն աղաղակէին հրամանաւ բռնաւորին. Ողորմեա անձին քում և զոհեա աստուածոցն, զի մի՛ իբրև զորդին քո մեռանիցիս։ Իսկ սուրբ աղախինն Քրիստոսի բազում համարձակութեամբ ասէր. Ես դիւաց ոչ զոհեմ, քանզի զՔրիստոս պաշտեմ զՄիածին որդին Աստուծոյ՝ որով զամենայն արար, և զՏէր Աստուած Հայր ամենակալ, և ընթանամ զհետ տըղայոյն իմոյ աստուածակերտ մանկանն, զի նովաւ հանդերձ արքայութեանն արժանի եղէց։

Իբրև ետես դատաւորն զսուրբ վկային զհամարձակութիւնն և զանփոփոխելի խոստովանութիւնն որ 'ի Քրիստոս, եհատ 'ի վերայ նորա վՀիւ՝ սրով զգլուխ նորա բառնալ, և զմարմին նորա և զորդւոյ նորա ընկենուլ 'ի տեղի մի մահապարտաց։ Եւ դահճացն հարեալ գայլ'ի բերան երանելւոյն Յուլիտայ, և առեալ տարան 'ի սովորական տեղին կատարել զհրաման բռնաւորին։ Իսկ սուրբն աղաչեալ զդահիճն զի թողացուցցեն նմա սակաւ մի յաղօթս կալ, և խոնարհեալ դահճացն յաղաչանս նորա՝ սակաւ մի թողացուցին նմա. և նորա ծունր կրկնեալ ասէ այսպէս. Գոհանամ զքէն, Քրիստոս, որ կոչեցեր զորդին իմ յառաջ քան զիս կատարել, և արժանաւորեցուցեր զառժամանակեայ և զընդունայնութեան կեանս թողուլ, և յաւիտենական կենաց ընդ սուրբս քո արժանի արարեր. արա և զիս զաղախին քո արժանի մեծի պարգևացդ, զի մտից 'ի թիւ և 'ի համար իմաստնոց կուսանաց, 'ի յաւիտենական յանմահ հարսանիսդ. և օրհնեսցէ անձն իմ զՀայր ամենակալ Աստուած արարիչ ամենայնի, և զամենասուրբ Որդիդ և զՀոգիդ կենդանարար, այժմ և միշտ յաւիտեանս յաւիտենից։

Եւ դահիճն ձգեալ զսուրն եհատ զգլուխ երանելւոյն արտաքոյ քաղաքին. և ընկեցին զպատուական

մարմին նորա՝ ուր էին նշխարք բարեյաղթ վկային Կի-
րակոսի։

Եւ կատարեցաւ աղախինն Քրիստոսի Յուղիտա և
մեծափառ որդի նորա Կիրակոս, որ օր հնդետասան էր
հրոտից ամոյ։ Եւ 'ի վաղիւ անդր եկեալ աղախնայք
նորա 'ի գիշերի և բարձին զնշխարս նոցա և եդին
յայրի միում 'ի սահմանս Տարսոն քաղաքի, մինչև 'ի
ժամանակս բարեպաշտ Թագաւորին Կոստանդիանո-
սի. և մեռեալ աղախնայցն յառաջ քան զյայտնել
սուրբ վկային Քրիստոսի, և Ճշմարտութեանն 'ի լոյս
եկեալ, և եկեղեցեաց Քրիստոսի համարձակութեամբ
պայծառացեալ։ Այս յայտնեցան նշխարք սուրբ
վկային ցուցանելով զտեղին 'ի շնորհաց սուրբ Հո-
գւոյն. և ամենայն հաւատացեալք փափաքելի յօժա-
րութեամբ առին 'ի սուրբ նշխարաց վկային 'ի բժըշ-
կութիւն անձանց։

Եւ արդ զայս ամենայն գրեալ Ճշմարտութեամբ
նշանակեցի աստուածասէր անձին քում, զի աւան-
դեսցես հաւատարիմ մարդոց, զի շինեսցին միտք ա-
մենայն Ճշմարտից, և մի՛ հայեսցին ընդ մանիքէական
շաղփաղփանսն գրոյն այնորիկ, այլ այսմ Ճշմարտու-
թեան հաւանել 'ի Քրիստոս։ Ի ժամանակս բարե-
պաշտ Թագաւորին մերոյ Յուստիանու և սրբոյ հայրա-
պետին մերոյ Զոսիմոսի, բարեպաշտոն մտօք և Ճըշ-
մարտասէր նախանձու խնդիր արարին վասն վկայա-
բանութեան սրբոյն Գեորգայ և երանելւոյն Կիրակո-
սի, զոր մանիքեցւոց մտացածին բանիւք էր ստեղ-
ծեալ. և գտեալ զնա ոչ ուղղապէս, առաքեցին զոմն
Թէոդորոս մեծ եպիսկոպոս և զՅենոն այր երևելի
յաշխարհէ Սուրացւոց, և զՄարկիանոս ոմն քրիստո-
սասէր տրիբուն և դպիր և նուիրապետ Թագաւորին,
որք եկեալ հասին 'ի գաւառն լիկոնացւոց, և մեծաւ
աշխատութեամբ խնդիր արարեալ 'ի գաւառին ուր
նոքայն վկայեցին, և Թագաւորական իշխանութեամբ
քննութիւն արարեալ. վասն որոյ գտեալ զտեղիսն,
յորում այս առաջին վկայաբանութիւնս որ գրեալ էր
'ի քրիստոսասիրաց, որք ականատես եղեալ էին վկա-
յութեան և չարչարանաց և մահու նոցա, որ եղև 'ի
Թագաւորութեանն Դիոկղետիանոսի և 'ի դատաւո-

ըութեանն Աղեքսանդրի. զոր եդեալ պահէին 'ի պա-
հարանի սրբութեան, 'ի սահմանս Տարսոն քաղաքի.
զոր բերեալ աստուածասէր թագաւորին և բարե-
պաշտ հայրապետին, և աղօթս արարեալ գոհացան
զմարդասիրէն Աստուծոյ վասն գիւտի Ճշմարիտ վկա-
յաբանութեանս այսորիկ, որ 'ի ժամանակս վերջինս
շնորհեցաւ յԱստուծոյ առաջին վկայաբանութիւնն
նոցա. և 'ի բաց ընկեցեալ զմանիքէական սուտ ստեղ-
ծաբանութիւն, գրեցին և առաքեցին ամենայն եկե-
ղեցեաց զՃշմարիտ վկայաբանութիւնս զայս.'ի Քրիս-
տոս Յիսուս 'ի Տէր մեր. որում փառք յաւիտեանս.
ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Կոդրատիոսի։

Ի ժամանակս Դեկեայ կայսեր և Վաղերիանոսի, 'ի բազում քաղաքաց յափշտակէին զքրիստոնեայսն 'ի մայրաքաղաքին բիւթանացւոց[1] և արկանէին 'ի բանտ. և ամենայն զգուշութեամբ պահէին և քարշէին յատեան. զի եթէ հաւանեսցին ուտել 'ի պիղծ կերակրոցն՝ առանց տանջանաց արձակեսցեն յիւրաքանչիւր գաւառ[2]։ Բազում երկիւղ այնուհետև կայր 'ի վերայ քրիստոնէիցն յառաջագոյն ասացեալ քաղաքին, ոմանք 'ի լերինս, ոմանք 'ի յագարակս թագչէին։ Նահատակք առաքինիք և պիտանի ծառայք Աստուծոյ՝ քաջալերութեամբ 'ի քաղաքին շրջէին մեծաւ ուրախութեամբ, ասելով, թէ զի՞րդ արժանի լինիցին փառաւորել զԱստուած խոստովանութեամբ նորա մարդասիրութեան[3]։

Ոմն 'ի նոցանէ որում անուն էր Կոդրատիոս, յոյժ զարդարեալ հասակաւ և գեղեցկութեամբ և բանիւ, և վայելուչ[4] յամենեսեան երևեալ, և աստուածպաշտութեամբ՝ որ գլուխ է ամենայնի, և եռանդոտ հաւատով, մատչի առ բանտապետն և առ զինուորսն,

1. Միւս օր. զքրիստոնեայս, և ածէին 'ի Նիկոմիդիա մայրաքաղաք Բիւթանացւոց։

2. Միւս օր. ինքեանքոյ կոյս,... որ. յայնոցին իւրաքանչիւր ոք՝ յիւր գաւառս։

3. Միւս օր. նորա մարդասիրութեամբն։

4. Միւս օր. և ազգաւ և մեծութեամբ վայելուչ։

տուեալ նոցա ինչս բազումն, զի չնորհեսցեն նմա կա-
լանաւորաց եղբարցն որ 'ի բանտին էին՝ դարմանն տա-
նել, և իւրաքանչիւր ումեք զարժանն խնամոց հատու-
ցանել։ Եւ առեալ համարձակութիւն՝ ոչ դադարէր
մտանելոյ առ նոսա. և այնպէս յորդորէր զքաջասիրտ-
սին և զյօժարսն՝ 'ի վկայութիւն Տեառն. աղաչէր
յիշել զինքն անպակաս. իսկ զվատասիրտսն և զվհա-
տեալսն՝ քաջալերէր և մխիթարէր մի՛ երկնչել, այլ
առաւել ուրախանալ. և ասէր թէ բազումք 'ի մարդ-
կանէ ոչ հեշտեաւ ինչ, այլ մեծաւ աշխատութեամբ և
տառապանօք ելին 'ի կենաց յայսցանէ, և ոչ աստ 'ի
ժամանակեայ կեանս հանգստեան ինչ պատահեցին,
և անդ հանդերձելոցն ոչ ժամանեցին և ոչ եղեն
արժանի։ Իսկ որ վասն Աստուծոյ Ճգնեալ՝ բազում և
մեծամեծ բարեաց առիթ լինի և 'ի ժամանակիս և
'ի հանդերձելումն, այս իրաց այսպիսի գործելոյ վասն
հաւատոց նահատակութեան։

Յառաջ ելեալ այնուհետև բդեաշխն նահանգին
այնորիկ, և հրապարակաւ յատենի նստեալ, հրամա-
յեաց զառաջեաւ ածել զծառայսն Աստուծոյ։ Եւ
իբրև եկին կացին առաջի, ասէ ցնոսա բդեաշխն. Ա-
սասցէ իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ զանուն իւր և զազգ
իւր և զպատիւ իւր և զաշխարհ[1]։ Իսկ երանելին Կո-
դրատիոս անյաղ աստուածպաշտութեամբն և ծա-
բաւի ցանկութեամբն նոյնժամայն երթայր վաղվա-
ղակի հասանել առ Տէր. և յառաջ մատուցեալ քան
զեղբարսն ամենայն, վասն զի յետոյ կայր ամենեցուն,
և առանց ուրուք բուռն հարկանելոյ յառաջ վազէր[2],
երկուցեալ՝ թէ գուցէ ոք 'ի յառաջագոյն ձեռնար-
կելոց 'ի Ճգունս՝ վատասրտեալ 'ի տանջանացն ուրա-
նայցէ. վասն զի տեսանէր զոմանս 'ի յեղբարցն գու-
նատեալս և ընդարմացեալս 'ի բազմապատիկ տանջա-
նացն, գուցէ թուլագոյնս[3] խորհրդո

զամենեսեան պատասխանի տուեալ ասէր. Քրիստոնեայք կոչիմք, այս է մեր անուն. իսկ պատիւ մեր ամենեցուն[1] և ազատութիւն՝ մի է, ծառայք եմք Յիսուսի Քրիստոսի երկնաւոր Թագաւորին և աներևութին Աստուծոյ. և քաղաք մեր է երկնաւորն Երուսաղէմ, յորում բնակեցուցանէ Քրիստոս զմտերիմ զօրականսն իւր. ահա լուար զամենայն։ Իսկ բդեաշխն զարմացեալ ընդ առնն համարձակութիւնն, ասէ ցդռնապանսն. Յառաջ ածէք զամբարհաւաճն զայն, զինչ արդեօք օգտիցէ նորա[2] ժպրհութիւն յանդգնութեանն։ Եւ նա ինքնին յայսկոյս և յայնկոյս ապարեալ զեղբարսն՝ յօժարութեամբ եկաց առաջի, և ինքեալ զինքն՝ ասէ ցբդեաշխն. Ինքնակամ յօժարութեամբ կամ առաջի քո, ով բդեաշխ, յառաջամարտիկ եղեալ հօրն քում սատանայի. ես պատրաստ եմ առ ամենայն հնարս՝ որ 'ի վերայ իմ գան 'ի քէն։ Արդ արա զինչ և կամիս, զի գիտասցես 'ի նմին իսկ 'ի փորձոյն՝ եթէ Քրիստոսի զինուորքն անյաղթք են։ Քանզի առեալ մեր զինիք նորա, կամք ահաւասիկ պատրաստք պատերազմել ընդ մեքենայս քո։

Եւ բդեաշխն ասէ. Այսա ինձ, ով աղաչուր դու, նախ զանուն քո և զբախտ։ Կոդրատիոս ասաց. Լուար յառաջագոյն թէ քրիստոնեայք եմք, այլ զբախտն մեք ոչ գիտեմք, քանզի ծառայք եմք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Բդեաշխն ասէ. Զէ արժան քեզ զանձն քրիստոնեայ կոչել, վասն զի սպանանէ զքեզ հրաման Թագաւորին. այլ զի տեսանեմ զքեզ այր իմաստուն և գեղեցիկ, ուստի և կարծեմ թէ 'ի մեծամեծաց տոհմէ իցես. հաւանեա ինձ և ես գրեցից վասն քո առ Թագաւորն, և եղէց քեզ առիթ դատաւորական իշխանութեան, միայն թէ զաստուածոցն գոհասցիս։ Կոդրատիոս ասաց. Մի խժաբաններ[3], ով բդեաշխ, չեն բաղում աստուածք, այլ մի Աստուած Հայր, յորմէ ամենայն ինչ, և մի Տէր Յիսուս Քրիստոս՝ որով ամենայն և մեք նովաւ։ Բդեաշխն ասաց.

1. Միւս օր. այս է անուն և պատիւ ամենեցուն մեր, ազատութիւն մեր է։

2. Միւս օր. օգտիցէ զնա յանդգնութիւն ժպրհութեանն։

3. Միւս օր. մի խոսաբաներ։

են և բազում աստուածք, այլ թագաւոր երկոտասան աստուածք են, որոց հաւանել պարտիս և երկիր պագանել։ Իսկ սուրբն Կոդրատիոս պատասխանի առնէր զովմերական[1] բանն. Զէ բարիոք բազմաթագաւորութիւնն, մի թագաւոր լիցի։ Բդեաշխն ասէ. Զմիւսն ևս չտեսնէր, այլ ընդ այդ տուն ևեթ նայեցար։ Կոդրատիոս ասաց. Զո՞ր։ Բդեաշխն ասաց. Զոր վասն Պիսիդոնի ասէ Ովմերոս, թէ՝ Ժողովեաց զամպս, խառվեաց զծով ամենայն հողմովք, ամպովք ծածկեաց, ահագին որոտաց Հայր աստուածոցն 'ի վերուստ, եկն Պիսիդոնն և շարժեաց զերկիր և զՏրովացւոց[2] քաղաքն, և զնաւս Աքայեցւոց։ Շատ և վասն Աբրամզդայ ասաց, թէ որչափ քաջութիւնս արար. տեսանէ՞ս զմեծութիւն նոցա։ Կոդրատիոս ասաց. Որքան ասաց վասն նոցա Ովմերոս՝ Ճշմարիտ ասաց թէ սուտ։ Բդեաշխն ասաց. Ճշմարիտ։ Կոդրատիոս ասաց. Որ վասն արուագիտութեան և շնութեան և ամենապիղծ և գարշելի մոլար անառակութեանն ասաց[3], պա՞րտ է հաւատալ իբրև Ճշմարիտ ասացելոց, որ աստուածոց չվայելէ այլ մոլեկանաց և պղծոց։ Ես վասն ձեր ամաչեմ, զի թողեալ զԱստուած՝ նման դիւաց պղծոց երկիր պագանէք[4]. և եթէ կամիս 'ի ձերոց իսկ բանաստեղծաց հաւանեցուցանեմ՝ թէ և դեք են գարշելիք։ Բդեաշխն ասէ. Դու լուտալ սկսար, և երկնչիմ թէ գուցէ ցասիցէ ինձ թագաւորն, վասն զի թոյլ ետուք եղ իմով իշխանութեամբս[5] այսպէս բարբառել. այլ արդ բառնամ վաղվաղակի զայդպիսի համարձակութիւն քո։ Կոդրատիոս ասաց. Զիմ համարձակութիւնս և ոչ թագաւորն[6] քո և ոչ այլ ոք կարասցէ բառնալ յինէն։

Յայնժամ բդեաշխն հրամայեաց մերկացուցանել զնա և պրկել 'ի վերայ տախտակի, և հարկանել քըքովք և հարցանել, թէ՝ Այսա զանուն քո։ Եւ նորա ոչ տուեալ պատասխանի. ասէ ցդռնապանսն բդեաշխն. Զինչ կռ-

1. Միւս օր. զովմերական բանն։
2. Միւս օր. զՏրոացւոց։
3. Միւս օր. անառակ մոլորութեանն։
4. Միւս օր. նմանութեան պղծոց երկիր պագանէք։
5. Միւս օր. իմով երկայնմտութիւնս այդպէս։
6. Միւս օր. ոչ դու և ոչ թագաւորն քո։

չի։ Եւ նոքա ասեն. Կոդրատիոս, այլ եւս 'ի մեծէ տոհմէ է[1]։ Բդեաշխն ասէ. Խնայեցէք 'ի դա, և կանգնեցէք զդա 'ի փայտէդ. ասէ ցնա. Ո՛վ այր դու, զինչ արարեր զայդ, թշնամանել ետուր զպատիւդ քո։ Եւ կոչեաց զնա հուպ առ ինքն և ասէ ցնա. Կամեաց հաւանել մեզ, մի՛ զպատիւ քո և զազգն անարգեր կրօնիւք քրիստոնէից՝ յոր պատրեալ ես։ Կոդրատիոս ասաց. Ընտրեցի ընկեցիկ լինել 'ի տան Աստուծոյ մանաւանդ քան բնակել յարկս մեղաւորաց։ Բդեաշխն ասէ. Հաւանեա ինձ և զոհեա աստուածոցն, զի պատուակից եւս ես մեծի Հռովմայեցւոց ծերակուտին, զի մի՛ իբրև զմի ոք 'ի չարագործաց մեռցիս։ Զհրամանս թագաւորաց և զմեծ սինկղիտոսին գիտես թէ քանի բիւրք են արանց քաջաց, հաստատեցին զմի՛ ոք կեալ 'ի քրիստոնէիցն[2]։ Կոդրատիոս ասաց. Երանելի է այր որ ոչ գնաց 'ի խորհուրդս ամպարշտաց և 'ի ճանապարհս մեղաւորաց ոչ եկաց, և յաթոռս ժանտից ոչ նստաւ։ Բդեաշխն ասաց. Մի՛ այլաբաներ զքեզ խաբելով, ով Կոդրատիէ. քանզի միապէս 'ի վերայ ամենայն քրիստոնէից կայ հրամանս այս, թէ աղքատ ոք իցէ և եթէ մեծատուն, եթէ գձուձ և եթէ պատուական, ոչ յոք խնայէ ատեանս։ Կոդրատիոս ասաց. Այդպէս է, քանզի և աստուածեղէն գիրն ասէ, եթէ՝ Ոչ ծառայ և ոչ ազատ, ոչ մեծատուն և ոչ տընանկ, ոչ խուժ և ոչ սկիւթացի, ոչ ելլենացի և ոչ յուդայեան, քանզի ամենեքին մի եմք 'ի Տէր։ Արդ աղաչեմ զքեզ, զհրաման թագաւորացն քոց և զսինկղիտոսին կատարեացես ցիս. քանզի ես քրիստոնեայ եմ և ազգ իմ և պատիւ իմ առ Տեառն իմում՝[3] որ ողջամբ պահէ զպայծառութիւն իմ, և ոչ առ մարդկան՝ որ այսօր է և վաղիւն ոչ եւս է։ Բդեաշխն ասէ. Հաւանեա ինձ և զոհեա, և վայելեա 'ի բարութիւն կենացս և 'ի պայծառութիւն լուսոյս այսորիկ։ Եւ զայս ասացեալ արտասուեաց բդեաշխն մեծաւ հառաչանօք, և վարշամակաւն ջնջէր զերեսն։ Իսկ քաջն Կո-

1. Միւս օր. այլ Ե մեծի տոհմի զոտ ելեալ 'ի դրիսոտոնէիցն։
2. Միւս օր. որ հասատատեցին մի՛
3. Միւս օր. առ Տէր իմում է։

դրատիոս ասաց. Մի՛ ինձ զդժնդակ վիշապին զխորա-
մանկութիւնն և զբեղլիարայ մարդասպանի առաջի ար-
կաներ զարտասուս. գայլ յափշտակող, ոչ կարես
յափշտակել զծառայս Աստուծոյ։ Մաքսիմոս դատա-
ւորն ասաց. Ա՛յ չար այր, տէր իմ մեծավայելուչ ողոր-
մի քեզ և դու թշնամանես զնա։ Կոդրատիոս ասաց.
Զինքն լացցէ և զօր ծննդեան իւրոյ, քանզի ես ոչ եմ
լալոյ արժանի. այլ դու ո՞վ ես որ առաջի նորա բար-
բառիս. շատ է մեզ բդեաշխդ, ապա եթէ և դու կա-
միս դատել՝ Տէր խափանեսցէ զքեզ։ Աստերիոս վա-
ճառապետն ասաց. Ի բախտ քո երդուեալ, տէր իմ
բդեաշխ, եթէ զդա այդպէս թողուս՝ ոչ ակնածէ
զինքնակալ թագաւորն թշնամանել և զաստուածսն
հայհոյել, և ածել՝ի վերայ մեր վտանգ մեծ։ Կո-
դրատիոս ասաց. Բարիոք ասաց աստուածեղէն գիրն.
Ընդէ՞ր ամբարհաւաճեցան հեթանոսք և ժողովուրդք
խորհեցան՝ի սնոտիս. յանդիման եղեն թագաւորք
երկրի և իշխանք ժողովեցան՝ի միասին զՏեառնէ և
զօծեալդ նորա. քանզի և ահա այժմ յամպարիշտ և՝ի
սնոտի իշխանացս դատի Քրիստոս։ Բդեաշխն ասէ.
Մերկացուցէք զամբարհաւաճդ զայդ և դարձեալ հա-
րէք զի հնազանդեսցի տերանց մերոց թագաւորաց։

Իսկ երանելին՝ի տանջանսն գոհանայր զՏեառնէ
և ասէր. Փառք քեզ, Տէր Աստուած իմ Յիսուս Քրիս-
տոս, զի արժանի արարեր զիս զանարժանս և զմեղա-
ւորս վասն քո սուրբ անուանդ զայս չարչարանս կրել.
զի և ես թուակից եղէց ծառայից քոց. գոհանամ
զքէն, Տէր, և առաջի անկեալ աղաչեմ զքեզ Աստուած
իմ, կատարեա զընթացս իմ անուամբ քով սրբով,
կնքեա զխոստովանութիւնս իմ շնորհօք սուրբ Հո-
գւոյդ. պարգևեա ինձ միտս հանձարեղս և անխա-
տորնակ հաւատս. իմաստացո զիս անչափ իմաստու-
թեամբդ քով. պահեա զիս աջով քով, Բարձրեալ.
այժմ է ժամանակ փրկութեան և օգնութեան. այժմ
է ժամանակ խոստմանց քոց, ընկալ զաղաչանս իմ, զի
և յիս փառաւորեսցի սուրբ անունդ քո. կատարեա
զնկատումս իմ, յաջողեա զյօժարութիւնս իմ, մատո
զիս առ Հայրն քո. խոստովանեա զիս առաջի նորա,
Տէր իմ Յիսուս Քրիստոս։

Իսկ դահճացն յօգնեալ 'ի հարկանելն, և հինգ անգամ փոխեալ, 'ի վեր քան զԹիզ յարեաւ ողն սրբոյ վկային, և արիւնն իբրև զգետ ինքանէր հանդերձ մարմնովքն։ Ասէ ցնա բդեաշխն. Հաւատաս գոնեա այժմ յաստուածն։ Իսկ երանելին Կոդրատիոս ասաց. Կուռք հեթանոսաց ոսկի և արծաթ են, գործք ձեռաց մարդկան. բերան ունին և ոչ խօսին, ականջս ունին և ոչ լսիցեն, ունչս ունին և ոչ հոտոտեսցին, ձեռս ունին և ոչ շօշափիցեն, ոտս ունին՝ և ոչ գնան, և ոչ բարբառեսցեն կոկորդք[1] նոցա. նման նոցա եղիցին արարիչք նոցա և ամենայն յուսացեալքն 'ի նոսա։ Պրենիոս բդեաշխն ասաց. Կարծեմ խաբել զմեզ, զի այդպէս խաւարային խօսիս, հաւանեա ինձ և զոհեա աստուածոցն։ Սուրբն Կոդրատիոս ասաց. Որովհետև ոչս քեզ խաւար թուի և ճշմարտութիւնն մոլորութիւն, պայծառ և յայտնի բանիւ լուր. գիտութիւն լիցի քեզ, եթէ զաստուածս քո ես ոչ պաշտեմ, և հրամանի կայսեր և սինկղիտոսին ոչ հաւանիմ. արդ զոր ինչ կամիս առնել՝ արա վաղվաղակի, և յուղարկեա զիս առ երկնաւոր թագաւորն։ Բդեաշխն ասաց. Մեծ անամօթութիւն արկանէ 'ի քեզ ճակատագիրն քո. աստուածովքն, զի ոչ խնայեցիր 'ի քեզ, այլ նոր օրինակ տանջանաց և դառն մահուամբ սատակեցիր զքեզ։

Եւ այնուհետև տարաժամեալ աւուրն՝ հրամայեաց զամենայն կալանաւոր քրիստոնեայսն 'ի բանտ արկանել։ Ցանէին ընդ նոսա զերանելին Կոդրատիոս, և մանր խեցի տարածեալ և զսուրբն 'ի վերայ պրկել, և վիմ մի մեծ 'ի վերայ լանջաց նորա դնել, և զոտս նորա 'ի կոճեղս պնդել ընդ չորս ծակս, և շղթայս 'ի պարանոց նորա արկանել. և լինէր 'ի բազում աւուրս։ Իսկ երանելին Կոդրատիոս իբրև արդարև քաջ նահատակ, բարեպաշտութեամբ և ժուժկալութեամբ համբերէր դառն և անողորմ տանջանացն, և ոչ փոխէր 'ի հաւատոցն Քրիստոսի։ Եւ չու արարեալ բդեշխին 'ի Նիկիկիացւոց քաղաքն՝ հրամայեաց և զսուրբ վկայն զկնի իւր տանել. մտեալ 'ի քաղաքն ետ ածել զսուրբն

1. Միւս օր. Խոսրդեսք... Պերենիոս։

զառաջեաւ։ Իսկ սուրբքն գային մեծաւ ուրախութեամբ, ընդ որս և երանելին Կոդրատիոս, իբրև զառաքինի զօրավար պանծացեալ յիւր զօրութիւնն՝ 'ի ձեռատամարտ մտեալ փայլուն սպառազինօք, խոժոռս հայի 'ի պատերազմն ահանգին, ահագին[1] երեսս ցուցանելով պակուցանէր զգունդս թշնամեացն. այնպէս և նա իբրև զգեղեցիկ ինչ և զպատուական զարդ ըզկապանն զինքեամբ արկեալ՝ հրձուէր և ուրախանայր, և առաջի կացեալ. մինչև զարմանալ Հելլենացւոց փիլիսոփայիցն ընդ քրիստոնէից ժուժկալութիւնն և համբերութիւնն, և ասեն. Արդարև մեծ են հաւատք քրիստոնէից և առաջիկայ յոյս նոցա. վասն որոյ և զայս համբերեալ չարչարանօք և վշտօք, և բազումք 'ի նոցանէ հաւատացին 'ի Տէր։

Եւ իբրև կացուցին զսուրբն առաջի իշխանին, հրամայեաց յառաջ ածել զսուրբն Կոդրատիոս. և կացեալ նորա առաջի ատենին, ասէ ցնա բդեաշխն. Զո՞հեա աստուածոցն, Կոդրատիէ։ Եւ սուրբն Կոդրատիոս ասաց. Ծառայ եմ Քրիստոսի, որ ասաց մարգարէին. Աստուածք որ զերկինս և զերկիր ոչ արարին՝ կորիցեն։ Բդեաշխն ասաց. Հաւանել պարտ է հրամանաց թագաւորացն և ոչ Քրիստոսին՝ զոր ասեսն[2] Աստուած։ Կոդրատիոս ասաց. Ես թագաւորին իմում Քրիստոսի հաւանիմ և ոչ մարդկան, որ ոչ գիտեն զԱստուած. աղօթս վասն նոցա առնել գրեալ է մեզ՝ այլ զոհել նոցա ամենևին ոչ. քանզի զի՞նչ օգուտ առնէք[3] դուք կայսեր՝ եթէ զոհէք պիղծ կռոցն, այլ և բաղում ևս փնասէք և նախ զանձինս։ Բդեաշխն ասաց. Եթէ աղօթս առնես վասն թագաւորին՝ պարտ է և հրամանաց նոցա նորա լսել և հնազանդ լինել, քանզի գրեալ է ձեզ՝ հատուցանել զկայսերն կայսեր և զԱստուածոյն Աստուծոյ։ Կոդրատիոս ասաց. Զամենայն պատշաճաւոր պարտն որ յերկրի՝ որ ինչ պարտ էր՝ լցի կայսերս, փութամ և Աստուծոյ իմոյ ընուլ զամենայն բարեպաշտութիւնս որ 'ի նա։ Մեզ քրիստոնէիցս հրամայեաց թագաւորն կամ զոհել կամ մեռանել. և մեք

1. Միւս օր. խոժոռս հայէր 'ի պատերազմողն, Խ ահագին։

2. Միւս օր. որ ասէն։

3. Միւս օր. զի՞նչ առնէք։

պատրաստ եմք վասն խոստովանութեանն որ 'ի Քրիստոս, ոչ միանգամ մեռանել այլ բիւր անգամ։ Բդեաշխն ասաց. Տեսանեմ թէ որչափ քրիստոնէից բազմութիւնք զոհեցին աստուածոյն։ Կոդրատիոս ասաց. Եւս առաւել քան զնոսա ամենեսեան լաւագոյն և իմաստագոյն եմ՝ եթէ ոչ զոհեմ։ Բայց սակայն ուր են որ զոհեցինն, կամիմ տեսանել զնոսա։ Յայնժամ բդեաշխն հրամայեաց ածել զնոսա առաջի նորա. և իբրև եկին ուրացեալքն՝ պշուցեալ ընդ նոսա զայրացին ցասմամբ երանելին Կոդրատիոս, ասէ ցնոսա. Հէք և ամենաթշուառք, վասն որոյ անցիս[1] այդչափ վաղվաղակի սատանայի մատնեցիք զձեզ, լքեալ զկարգն ձեր և ուրացեալ զՏէր Յիսուս Քրիստոս՝ որ վասն մերոյ փրկութեան փրկանք եղեալ գնեաց զմեզ արեամբն իւրով. ոչ ուսարուք զմեռելոց յարութիւն և զմիւսանգամ գալուստն Քրիստոսի՝ հանդերձ փառաք և հրեշտակական զօրութեամբ, դատել զարդարս և զմեղաւորս, և տանել զարդարսն 'ի կեանսն յաւիտենից, և զմեղաւորսն 'ի հուրն յաւիտենից և 'ի խաւարն արտաքին՝ ուր որդն ոչ վախճանի, և լալումն և կրճտումն ատամանց։ Զինչ պատասխանի տայցէք 'ի վերստանգի աւուրն այնորիկ, յորժամ զօրք հրեշտակաց երկիւղիւ և դողութեամբ կայցեն առաջի, սոսկան տեսանել զմեզ և զահագին ատեանն։ Բացէ՛ք զաչս սրտից ձերոց և ծաներուք, թէ ուստի՞ անկեալք. զյաւիտենից թագաւորն թողէք և անպիտան ծառայի[2] վաճառեցայք, որ զՏէրն իւր արտաքոյ գտեալ՝ հարկանէ զծառայակիցն իւր և սպանանէ, զոր Տէրն եկեալ կտրեսցէ ընդ մէջ և զմասն նորա ընդ անհաւատս դիցէ։ Գիտացէք թէ զինչ գործեցիք յառժամանակեայ տանջանաց երկուցեալք և 'ի յաւիտենից տանջանսն զձեզ մատնեցիք. դուք ձեզէն տեսջիք զլինելոցն ձեզ յարդար դատաւորէն. ոչ լուարուք ձայնին որ ասաց, թէ՝ Մի՛ երկնչիք յայնցանէ որ սպանանեն զմարմին և զոգի ոչ կարեն սպանանել, այլ երկերուք մանաւանդ յայնմանէ որ կարող է զմարմին և զոգի կորուսանել 'ի գեհենի։

1. Միւս օր. վասն որոյ յանցիս։ 2. Միւս օր. անպիտան ծառայի։

Զայս իբրև ասացեալ Երանելին Կոդրատիոս, միաբան ամենեքեան ձայնիւ մեծաւ աղաղակէին հանդերձ արտասուօք և ասէին. Երկեաք, տէր, 'ի տանջանաց և խաբեցաք իբրև զանբան անասունս, և իբրև զոչխարս 'ի մէջ գայլոց օձտեալք[1]. ածին փակեցին զմեզ մեղքն մեր, կամեցեալ մեր կեալ զժամանակեայ կեանս, և մեռաք գյաւիտենականին. և զինչ գործեսցուք այսու հետև թշուառականքս՝ ոչ գիտեմք։ Իսկ Երանելին Կոդրատիոս լցեալ մեծաւ ուրախութեամբ 'ի վերայ դարձի նոցա, և տեսեալ զարտասուս նոցա՝ ասէ ցնոսա. Քաջալերեցարուք, եղբարք, քանզի ազնուագոյնք է և ողորմած Տէր մեր Յիսուս Քրիստոս, անոխակալ և գթած. հանդերձ բազում արտասուօք անկերուք առաջի նորա, կացէք և այժմ հաստատուն 'ի խոստովանութիւն Քրիստոսի, և իւրով արեամբն իւրաքանչիւր ոք'ի ձէնջ սրբեսցի 'ի մեղաց. թէ մարմնով երբեմն հեր քեցարուք, այլ այժմ արի խորհրդովք յաղթեցէք։

Իսկ նոցա կական բարձեալ լացին մեծ ժամն, և ընկեցեալ զինքեանս յերեսս 'ի վերայ երկրի, և հող 'ի գլուխս եղեալ՝ ծեծէին քարամբք զկուրծս իւրեանց, և այնչափ եղև սոսկալի տեսիլն՝ մինչև ոչ զքրիստոնեայսն սգալ[2] ընդ նոսա այլ և զնոսին իսկ զհեթանոսս և զանողորմ զինուորսն, մինչև կարծել թէ անշունչ քարինքն լան և ողբան ընդ նոսա. քանզի ամենայն քաղաքն հիացեալ ընդ ձայն կականին, ժողովեցան 'ի տեղին բազմութիւն արանց և կանանց և մանկըտուց, Հրէից և հեթանոսաց և քրիստոնէից՝ ողբ 'ի թագաստեան էին, մինչև ընուլ զհրապարակն և զփողոցսն և զտանիսն բազմութեանն։ Իսկ բդեաշխն բարկացեալ ընդ այն, հրամայեաց կախել զերանելին Կոդրատիոս և քերել, և ջահս մատուցանել 'ի կողս նորա։ Իսկ քաջն Կոդրատիոս անփոյթ արարեալ ըզտանջանսն՝ մեծաւ համարձակութեամբ քաջալերէր զնոսա և ասէր. Այդպէս բարիոք է, եղբարք, աղօթեցէք յերկար առ Տէր, քանզի ողորմած է՝ ըստ ձեզ։ Եւ նոցա ասացեալ, թէ՝ Զեմք արժանի անուանել

1. Միւս օր. Իբրև զոչխարս 'ի գայլոց օձտեցուք։

2. Միւս օր. ոչ զքրիստոնէայսն զգալ։

զսուրբ անունն Քրիստոսի, վասն զի թշնամանեցաք զնա։ Այլ զօրացուցանէր զնոսա սուրբ վկայն և ասէր. Կարդացէք, եղբարք, կարդացէք, բարերար է Տէրն մեր և Աստուածն. մերձենայ առ այնոսիկ որ կարդան առ նա 'ի յօգնականութիւն. մի՛ յուսահատիք, եղբարք, մնա՛ առ իս եկայք, և քաջալերեցարուք և յուսացարուք 'ի Տէր։ Եւ նոցա ընթացեալք անկան առաջի նորա ուժգին հառաչանօք. լային և ամենայն բազմութիւնն որ 'ի տեսարանն էին [1]։

Իսկ սուրբն Կոդրատիոս զաչս 'ի յերկինս համբարձեալ գոչէր հանդերձ արտասուօք և ասէր. Տէր Աստուած մեծ և ահաւոր, բարերար և աղնուագութ, որ զՄիածին որդիդ քո զՏէր մեր Յիսուս Քրիստոս ծագեցեր մեզ արեգակն արդարութեան, և լուսաւորեցեր զմեզ յառաջագոյն զխաւարեալքս, և նուաւ զքեզ հաշտեցուցեր ընդ մեզ, և նուաւ կոչեցեր զմեզ յառաջագոյն զխաւարեալքս 'ի կոչումն սուրբ, ողորմած, գթած, երկայնամիտ և բազումողորմ և Ճշմարիտ, որ զանց առնես զմեղսք, և ընդունես զամբարտաւանութիւնս մեր. վասն առաւել մարդասիրութեան քո, Տէր, արտասուսիմն արա զնախաչարն և զմարդասպանն, զբարիատեացն և զնախանձոտն սատանայ, զՀայրն կռոց և զառաջնորդն խաւարի. և ընկալ զզօրականքս քո՝ որ առ սակաւ մի գթեցին որոգայթիւքն սատանայի, և այժմ ապաւինեցան 'ի քո ամենազօր բարերարութիւնդ. մի՛ բարկանար նոցա որպէս ապստամբաց. այլ զի թէպէտ և յամառեալ՝ կային անփոփոխք [2]. և եթէ հաշտութեամբ ընդունիս զնոսա՝ ընկալ և զիմ մեղաւորիս պատարագս, և արժանի արա զնոսա խառնիլ յերկնաւոր և Ճշմարիտ գունդն քո, և ցոյց նոցա նշան 'ի բարութեան, զի ոչ գարշեցար այլ ողորմեցար և ընկալար զապաշխարողն։ Տէր Յիսուս Քրիստոս, լուր ինձ ծառայի քում և փոխանակ ընդ նոցա առ զիմ զՀոգիս, զի փառաւորեսցի սուրբ անուն քո յաւիտեան։ Եւ ամենայն եղբարքն միանգամայն ձայնիւ մեծաւ առաքեալ զամէնն, յանկարծակի

1. Միւս օր. որ 'ի գեան էին։

2. Միւս օր. Ընդդէմ ի յամբ, սակայն կացին անփոփոխ։

զամբարքն շինեան, և ձեռք դահճացն լուծան և ամպ լուսոյ 'ի վերայ սրբոցն երևեալ և խաւար սաստիկ, և ծուխ դժնեայ 'ի վերայ բդեշխին և հեթանոսացն տարածեցաւ. մինչև յահէ անտի հիանալ բդեշխին յատենի անդ և ամենեցուն որ ընդ նոսա. քանզի կարծեցին թէ քաղաքն կործանելոց է։ Եւ յետ բաղում լռութեան եղելոյ՝ հրեշտակաց ձայն լսելի եղև, որք օրհնէին և փառաւորէին զԱստուած, մինչև ամենայն քրիստոնէիցն հաւատալ՝ եթէ մեծ ուրախութիւն եղև յերկինս 'ի վերայ դարձելոցն յապաշխարութիւն։ Եւ յետ երկուց ժամուց անցանելոյ, առ սակաւ սակաւ խաւարն լուծանէր, և տեսանէին հեթանոսքն զլոյսն որ զսրբովքն. իսկ որք յամպարշտութիւնն էին, սկսան մեծաւ ձայնիւ և լալով գոչել առ Աստուած և ասել. Մեղաք, Տէր, քաւեա զմեզ մեր. անօրինեցաք հաշտեա ընդ մեզ։ Եւ 'ի միտս իւր եղեալ բդեաշխն՝ հրամայեաց զամենեսին զնոսա արկանել 'ի բանտ, և պահել զգուշութեամբ։ Եւ հրամայեաց զերանելին Կոդրատիոս իջուցանել 'ի փայտէն և պահել ընդ նոսա, քանզի զայնչափ ժամանակս կախեալ կայր առաքինի նահատակն. և ըզգուշանալ հրամայեաց նմա առաջին օրինակաւն. իսկ բազմութիւն քաղաքին երթայր զկնի սրբոցն։

Եւ 'ի միւսում աւուրն նստեալ յատենի բդեաշխն՝ հրամայեաց ածել զնոսա զառաջեաւ, և հարցեալ և քննեալ ճշմարտութեամբ, և գիտացեալ զընդդիմասացութիւն նոցա և զանփոփոխ յօժարութիւնն, հրամայեաց կապել զամենեսեան և յիւրաքանչիւր գաւառ տանել, և կենդանւոյն այրել։ Եւ սուրբքն երթային մեծաւ ուրախութեամբ փառաւորելով զԱստուած և գոհանալով 'ի վերայ անակնկալ փրկութեանն։ Իսկ զերանելին Կոդրատիոս հանդերձ ընկերօք ոմանքք հրամայեաց յառաջագոյն տանել յԵլլեսպոնտոն. և բազմութեան սրբոցն ըստ հրամանի իշխանին երթեալ յիւրաքանչիւր գաւառ՝ կատարեցան 'ի Քրիստոս։

Եւ բդեշխին եկեալ 'ի քաղաքն Ապամացւոց և զոհեալ գարշելի կռոցն, հրամայեաց զառաջեաւ ածել զսուրբ վկայսն. և նոքա յառաջ քան զամենեսին ա-

ծին զերանելին Կոդրատիոս։ Այլ ցնա բդեաշխն. Զո-
հեա այսուհետև աստուածոյն և բուժիս՝ի հանդերձե-
լոյ քեզ տանջանացդ՝ եթէ տակաւին յամառիս։ Կոդ-
րատիոս ասաց. Քրիստոնեայ եմ և ոչ զոհեմ դիւաց։
Եւ տեսեալ բդեշխին զամենայն մարմինս նորա քան-
ցեալս՝ զարմանայր և ասէր. Այլ զի՞նչ ևս մատուցից
բռնամահիս այսորիկ։ Իսկ զօրականացն տարակու-
սեալ՝ի պատասխանւոյ, քանզի տեսանէին եթէ ոչ ևս
կարէր զօրել մարմին նորա տանջանաց, նա հրամա-
յեաց բերել քուրձ և արկանել զնա՝ի նեղքս, և լի-
նել խորափիտ մի և անդ ընկենուլ, և անտի տոռամբք
ծեծել զնա. և յետ ժամու միոյ հրամայեաց հանել
զնա՝ի քրձէն, քանզի համարէր թէ մեռաւ։ Իսկ նո-
րա յարուցեալ եկաց առաջի նորա. ասէ ցնա բդեաշխն.
Զի՞ ևս զգացեր տանջանացդ։ Իսկ սուրբ նահատակն
գոհանայր զԱստուծոյ և ասէր. Փառք քեզ, Տէր Յի-
սուս Քրիստոս. քանզի նեռք տղայոց եղեն վերք նո-
ցա, և տկարացաւ՝ի նոսա զօրութիւն նոցա. դու ես
որ զօրացուցեր զիս, Աստուած իմ, ՝ի փառս քոյոյ զո-
րութեանդ։ Եւ բարկացեալ բդեաշխն ասէ ցնա. Զա-
մենայն անդամն քո յօշյօշ արարից, թշուառական,
թէ և՝ի կախարդութիւն քո վստահես։ Կոդրատիոս
ասաց. Օրհնեալ է Տէր Աստուած իմ։ Հրամայեաց
բդեաշխն դարձեալ տանել յառաջագոյն՝ի Կեսարիա
Եպիսկոպոսացւոց. և իւր անդր երթեալ՝ զԱպամեայ
օրինակն և անդր գործեաց առ գարշելի դևսն։ Հրա-
մայեաց և զերանելին Կոդրատիոս զառաջեաւ ածել,
և հարցանէր զնա եթէ զի՞նչ կամիցի. և գիտացեալ
զհաստատութիւն սրբոյ վկային՝ ասաց. Շատացիր այ-
սուհետև տանջանօքդ զոր կրեցեր, և մատուցեալ զո-
հեա աստուածոյն։ Իսկ երանելին Կոդրատիոս ասաց.
Վասն զի խաղացեր ընդ իս տանջանօքս այսոքիւք, կար-
ծեսցէս արդեօք եթէ հաւանիցիմ քեզ։ Յայնժամ
հրամայեաց բդեաշխն պրկել զնա՝ի վերայ քարանցն,
և դնել՝ի վերայ ձեռաց և ոտից նորա վէմս մեծա-
մեծս և հարկանել զնա քրքովք յերկար։ Իսկ երա-
նելին՝ի տանջանսն սաղմոսէր և ասէր. Բազում ան-
գամ մարտեան ընդ իս՝ի մանկութենէ իմմէ, և ինձ
ոչ զօրեցին. ՝ի վերայ ողին իմոյ հարկանէին մեղա-

ւոյք։ Եւ իբրև կատարեաց զսաղմոսն, բդեաշխն ասաց. Ծեծեսցի յերկար՝ վասն զի ոչ զգաց։ Կոդրատիոս ասաց. Հա՛ր, հա՛ր զմարմինս, զոր համարիս տանջել. քանզի զոգիս՝ որպէս ոչ գիտես՝ ուրախ առնես։ Բդեաշխն ասաց. Զարի դևի տիրեցեր, ով թշուառական։ Կոդրատիոս ասաց. Ի փրկիչն իմ Քրիստոս երդուեալ, և առաւել չարի, և ոչ միոյ միայն և այլ ամենայն զօրութեան նորա տիրեալ է Յիսուսիս Քրիստոսիս Տերամբ իմով. նմա փառք յաւիտեանս։ Եւ բաղմութեան եղբարցն առաքեալ զամէնն։

Բարկացեալ յոյժ բդեաշխն և թողեալ զերանելին Կոդրատիոս, հրամայեաց զերկուս ոմանս 'ի նոցանէ ունել և կախել և քերել, զՍատորնինոս և զՌուփինոս, և կախել զնոսա զմիոջէ փայտէ։ Յայնժամ քերեցին եղնգամբք՝ մինչև ակսան նեբքին անդամք նոցա վայթել. իսկ նոքա 'ի տանջանսն այլ ինչ ոչ բարբառէին, բայց միայն աղաչէին զսուրբն Կոդրատիոս և զամենայն մօտակաց եղբարսն՝ աղօթս առնել վասն նոցա։ Զկնի և ինքեանք իսկ երանելիքն յաղօթս կային և ասէին. Տէր Յիսուս Քրիստոս, որդի Աստուծոյ բարձրելոյ, առաքեա և մեզ զառ 'ի քէն օգնականութիւնդ և պաշտպան լեր խոնարհ ծառայից քոց, Աստուած մեր, և տուր մեզ համբերութիւն և յաղթութիւն մինչև իսպառ։ Եւ յետ բազում ժամուց իբրև ոչինչ ետուն պատասխանի, քանզի 'ի սաստիկ տանջանացն խօսել իսկ ոչ կարէին, յայնժամ բդեաշխն հրամայեաց առնուլ և տանել 'ի պողոտայն որ հանէ յԵլլեսպոնտոն, և անդ սրով սպանանել. և այնպէս երանելեացն վախճանեալ։ Աբք աստուածասէրք 'ի մի վայր ժողովեալք ետուն ոսկի դահճացն և առին զնշխարս նոցա և բերեալ յիւրաքանչիւր քաղաք, հանդերձ մեծաւ պատուով եդին 'ի պահարանի։

Իսկ զերանելին Կոդրատիոս հրամայեաց զՀետ երթալ նորա, հանդերձ այլովք ևս՝ յԱպողոնիդա. և մտեալ 'ի մեհեանն Ապողոնի բռնադատէր զսուրբն զոհել գարշելի կռոցն. ասաց և ցերանելին Կոդրատիոս. Հաւանեա այսուհետև, այր դու, և 'ի մոլորութենէդ յայդմանէ 'ի բաց լեր. ընդէ՞ր թշնամանես զպատիւ քո և զաղգ. ծանիր զաստուածն և կեաց,

և հրամայեցից բժշկաց դարմանել զքեզ. մատիր առ Ասկղեպիոս, և նա բժշկէ զքեզ, երկիր 'ի մեծէն Ապողոնէ և 'ի դիցն Հերակլէ և 'ի թագաւորէն ամենեցուն Աբրամազդայ, և յանձառւոյն Աբեայ[1], և 'ի ծովապետէն Պիսիդոնէ. ոչ արդեօք նաւեցեր ուրեք և ծանեաւ զնորա ահն. երկիր պագ արեգական. միթէ և նա մեռաւ որպէս և դու հայհոյես, կամ թէ չիցէ՞ յերկինս։ Երանելին Կոդրատիոս ասաց. Ես երկիր պագանեմ Ճշմարտին և աներևութին Աստուծոյ, և Միածնի որդւոյ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ փրկչի. և երկնչիմ 'ի սպառնալեաց նորա, և սարսեմ յամենազօր աստուածութենէ նորա, և ոչ ուրանամ զանուն անձառ զօրութեան նորա. մեռելոտի կռոց ոչ հաւանիմ, և 'ի դիւաց ոչ երկնչիմ. զգործս ձեռաց մարդկան արհամարհեմ, այլ զքեզ իսկ՝ որ զժամանակեայ իշխանութիւնդ ունիս։ Քանզի ես յետ աւուրց տասանց երթամ առ Տէրն իմ, և դու չարաչար դառնութեամբ վախճանեսցիս. քանզի ոչ գիտացեր զՃշմարիտն Աստուած, որդի սատանայի և եղբայր Բելիարայ, հաղորդ գարշելի դիւաց, անմտագոյն քան զխոզ, մոլեկան շուն, արիւնարբու վիշապ, վայրենագոյն քան զգազանս մարդակերս[2]. ոչ ամաչես առաջի այդչափ բազմութեանդ՝ որք ոչ ինչ ճաշակեն. խոհակերք պարկեշտագոյնք են քան զքեզ, որք յանուան ծառայք են մարդկան, զի նոքա առտնին զենուն պարկեշտութեամբ 'ի վայելս մարդկան՝ և ոչ դիւաց. դուք քարանց զոհէք, և դուք ձեզէն երգիծանիք։ Արդ եկեսցէ 'ի մէջ ընդունիչ զոհին ձերոյ, և երեւեսցի և խնդրեսցէ ինքնին, և ընկալցի և կերիցէ. ասասցեն քարեղէն աստուածքն ձեր, զինչ կամի եթէ զոհեսցէ ոք նմա. այծ եթէ արջառ, եթէ հաւ[3]. ամաչեցէ՛ք, որդիք ամօթոյ, զի դուք մոլեկանք էք, և կարծէք զմեզ լինել մոլեկանս։

Եւ զայս ասացեալ նորա, հրամայեաց բդեաշխին դահճացն քացախ և աղաջուր ցանել 'ի վերայ վիրաց նորա, և մազեղէն խորդով շփել, և շողացուցանել եր-

1. Միւս օր. յանձառոյ նորա։
2. Միւս օր. մարդակերս։
3. Միւս օր. այծ եթէ հաւ եթէ ուխտ... աղ ցանել։

կաթ և մատուցանել 'ի կողս նորա։ Իսկ Երանելին Կոդրատիոս քաջութեամբ համբերէր ցաւոցն և յաղօթս կայր հեզիկ և շրթունքն միայն շարժէին. և ձայն ոչ ոք լսէր ամենևին 'ի նմանէ։ Եւ իբրև վաստակեցան դահիճքն՝ հրամայեաց իջուցանել զնա։ Ի վաղիւ անդր յառաջագոյն հրամայեաց տանել յԵլեղեսպոնտոն՝ անօթի. և զկնի այնր չու արարեալ բդեշխին և հասեալ 'ի Ռինդակս գետ, պատահեաց անդ նմա իշխանն հանդերձ ամբոխիւ և ռամկաւ 'ի պատճառս գովութեան, այլ ձշմարտութեամբ վասն ծառային Աստուծոյ. զի ցանկայր տեսանել զերանելի նահատակն, քանզի համբաւ նահատակութեան նորա եհաս յԱսիա և յամենայն երկիրն. և հրամայեաց բդեաշխն յառաջիկայ գեօղն տանել զնա, որ կոչէր Տաճարագիւղ. և անդ ապուցեալ, և ընդ առաւօտն յատենի նստեալ՝ հրամայեաց զառաջեաւ ածել ըզսուրբն Կոդրատիոս. և ամբոխն ամենայն շուրջ պատեալ՝ հայէր ընդ նահատակութիւն սրբոյ վկային։ Իսկ Երանելին յարեան թաթաւեալ[1] զուարթ երեսս ցուցանէր բազմութեանն, ըստ գրեցելումն թէ՝ Սրտի բերկրեցելոյ երեսք զուարթք են։ Դարձեալ բերեալ լինէր 'ի դահճացն, քանզի յառաւելութենէ տանջանացն ոչ ևս զօրէր գնալ. այլ և 'ի ձանապարհին սայլիւ բերէին։ Եւ իբրև եկաց առաջի բդեշխին, ասէ ցսուրբն. Իմաստասաիր, ով Կոդրատիէ, և եթէ չէ՞ ևս բուժեալ ես 'ի փոխելութենէդ։ Եւ Երանելին ձայնիւ մեծաւ ասէ ցնա. Ի մանկութենէ իմմէ զգաստանամ[2], և յորովայնէ մօր իմոյ՝ Քրիստոսի ծառայ եմ։

Յայնժամ բդեաշխն ետ բերել երկաթի կրակարան և դնել 'ի վերայ հրատի մինչև եղև հանգոյն հրոյ, և հրամայեաց զսուրբն 'ի վերայ դնել։ Իսկ Երանելին Կոդրատիոս ասաց. Ի բաց կացէք յինէն, արբանեակք սատանայի, ես ինձէն իսկ ելանեմ։ և արարեալ յինքեան զՔրիստոսի կնիքն՝ ել 'ի վեր. և նոքա արսկէին 'ի վերայ կրակարանին ձիւթ և ձէթ։ Իսկ սուրբն Կոդրատիոս սաղմոսէր և ասէր. Աստուած, յօգնել ինձ նայեա, և, Տէր, յընկերել ինձ փութա.

1. Միւս օր. յապէան ԹՕԹՓԷԱԼ։ 2. Միւս օր. ԶԳԱՍՊ ԷՄ։

ամաչեսցեն և պատկառեսցեն որք խնդրէին զոգի իմ, դարձցին յետս և ամաչեսցեն՝ որք կամին ինձ չար։ Եւ կատարեալ զսաղմոսն ասէ ցբդեաչին. Հուրս քո այս լոյծ է, և երկաւթ կրակարանիս կակղագոյն է քան զսիրտ քո։ Եւ իբրև բազում ժամք անցին 'ի վերայ, և հուրն ամենևին ոչ մերձենայր 'ի սուրբն Աստուծոյ, հրամայեաց բդեաշին բառնալ զնա 'ի կրակարանէն, և սակաւ մի արտաքս քան զգեօղն տանել, 'ի բարձրաւանդակ տեղի մի ինչ և անդ գլխատել։ Եւ մինչ տանէին զերանելին Կոդրատիոս, սաղմոսէր և ասէր. Օրհնեալ է Տէր, որ ոչ ետ զմեզ յորս ատամանց նոցա։ Եւ մօտակայ եղբարքն սաղմոսէին և երթային ընդ նմա մինչև 'ի տեղին՝ ուր հանդերձեալ էր կատարել։ Եւ հասեալ 'ի վայր անդր և գոհացեալ զԱստուծոյ, և կացեալ յաղօթս 'ի բազում ժամն՝ այնպէս երանութեամբ կատարեալ զընթացս իւր 'ի Քրիստոս։ Եւ եղբարցն առեալ զսուրբ մարմին նորա եդին զգուշութեամբ 'ի տեղւոջ պատշաճի։ Հանապազ փառաւորեսցուք զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Ղինկիանոսի հարիւրապետի։

Երանելի այրս այս Ղինկիանոս էր յաւուրս Տեառնն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զինուորական հարիւրապետ. որ և մերձ էր 'ի ժամանակի խաչելութեանն, որ և հրամանաւ խոցեաց զկողն Յիսուսի, և տեսեալ զնշանսն խաչին՝ զարեգակն խաւարեալ և զվէմն պատառեալ և զվարագոյրս հերձեալ, հաւատաց 'ի Տէր, որ բախէր զկուրծս իւր և ասէր մեծաձայն. Արդարև որդի Աստուծոյ է սա։ Եւ յետ ժամանակի թողեալ զզինուորութիւն՝ խստամբերութեան զինքն տալ[1], խոկալ 'ի յիշատակարանս Տեառն. և լսէր 'ի սուրբ առաքելոցն զբարերար հրամանս Տեառն։ Այնուհետև զինքն նուիրէր Աստուծոյ, առնէր ողորմութիւնս, 'ի բարեպաշտութիւն անձին իւրոյ առաջնորդէր, և 'ի բարեպաշտութիւն կրթէր զինքն. սուրբ պահէր զմիտսն երկնային վարուք. և ամենայն քրիստոսական առաքինութեամբ զարդարեալ և համբերութեամբ զուարթացունեալ պարկեշտ ձևով և մեղմ հայեցուածովք. հանդարտ իմաստալեօք և խոնարհ մտօք, անցաւ մարմնով և անխռով անձամբ։ Երթեալ 'ի Գամիրս՝ պարապեցուցանէր զինքն 'ի խոնարհ և 'ի միանձնական վարս ամն քսանևութ. և զբազում դարձուցանէր յաստուածպաշտութիւն և յարդարութիւն, խափա-

1. Մի օր. համբերութեամբ պայր զինքն խոխալ պիշատակարանս։

նէր զզոհս կռոցն, սերմանելով զաստուածպաշտութիւն Տեառն։

Այս ամենայն եկեալ հասեալ 'ի լսելիս դատաւորին, հրամայեաց ածել զնա դատաւորն. և իբրև ածին՝ ասէ դատաւորն Ոկտաւիոս. Զի՞նչ անուն է քո։ Եւ նա կատարեալ մտօք և բարեխորհ առ Աստուած ասէ. Քրիստոնեայ եմ։ քանզի, ասէր, պարտ է զբարուոք շնորհացն Քրիստոսի խոստովանել զանուն։ Ոկտաւիոս դատաւորն ասէ. Եւ ոչ ոք յառաջ քան զքեզ օգտեցաւ յանուանէդ յայդմանէ. արդ ասա զի՞նչ անուն է քո։ Եւ սրբոյն պատասխանի տուեալ ասէ. Ղինկիանոս [1] անուն է իմ։ Դատաւորն ասէ. Յորմէ՞ գաւառէ ես։ Ղինկիանոս ասէ. Ի Սիւրացւոց եմ։ Ոկտաւիոս ասէ. Ծառայ ես թէ ազատ։ Ղինկիանոս ասաց. Ծառայ էի յառաջ մեղաց, և մարդասէրն Յիսուս Քրիստոս մատակարարութեամբն իւրով և երկրպագելի խաչին և կողնցն կրկին շնորհօք՝ զիս ազատեաց, մի անգամ ջրով, և այժմ արեամբ՝ եթէ կատարեցայց 'ի յասպարիսի մարտիրոսութեան։ Դատաւորն ասէ. Վասն որոյ իրաց եկեալ ես այսր։ Ղինկիանոս ասաց. Քաղաքացի էի և զինուորեցայ ընդ աշխարհիս այսորիկ [2], և այժմ զինուորեցայ 'ի Քրիստոս։ Դատաւորն ասէ. Ո՞ արժանի արար զքեզ թողութեան 'ի հարկաց քաղաքի, և 'ի զինուորութենէն ո՞ ազատեաց զքեզ։ Ղինկիանոս ասաց. Վասն հարկաց քաղաքիս՝ աղաչեցի յոյժ զեղբարս իմ, և առեալ զըստացուածն իմ՝ թողութիւն արարին, և տային ինձ յամի դահեկանս հարիւր. զոր առեալ իմ ծախէի 'ի պէտս աղքատաց և յօգնականութիւն կարօտելոց։ Եւ այժմ աղաչեցի զՏէր իմ Յիսուս Քրիստոս, զՀշմարիտ և զերկնաւոր թագաւորն, և լուծեալ զիս 'ի կապանաց աշխարհիս այսորիկ, և զերծուցեալ 'ի մարմնական զինուորութենէս շնորհեաց ինձ կրօնաւորական կեանս [3], զի խաղաղութեամբ վարեցայց աստ և փառաւորեսցի անուն նորա յիս 'ի մեղաւորս։

Դատաւորն ասէ. Ազատ և մեծ և փառաւոր ումն ես

1. Մի օր. միշա՝ Ղինգինոս։ հին այսորիկ։
2. Մի օր. զինուորեցայ աշխար.
3. Մի օր. հոգեւոր կեանս։

դու. Հնազանդ լեր այսուհետև թագաւորացն և զո-
հեա աստուածոցն և Ճաշակեա 'ի զոհիցն. և վարէ[1]
դարձեալ զնոյն խաղաղական կեանս քո, զի մի՛ մա-
շեսցիս առ սակաւ սակաւ տանջանօք։ Ղինկիանոս
ասաց. Ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել՝ ողբ ընդ-
դէմ միմեանց խորհիցին. քանզի իմ Աստուածն լու-
սաւորութեան և հանդարտութեան և ժուժկալու-
թեան և անընչութեան և արդարութեան և խոնարհ-
հութեան, և ամենայն առաքինութեան աստուածա-
կան վարուց առաջնորդ և տուիչ է. իսկ քո աստուած-
քըն զհակառակն խորհին, ցանկացող են ամենայն
պռունկութեան և խռովութեան, շփոթութեան, արբ-
ծաթասիրութեան, և ամենայն առաքինութեան ընդ-
դէմ են կռոցն հնարք. արդ զիա՞րդ կարեմ զկռոցն
գործ կատարել, և խոկալ յԱստուծոյ իմոյ պատուի-
րանսն։ Դատաւորն ասէ. Որպէս դուդ ասես, այ ան-
սուրբ, եթէ ընդդէմ խորհին աստուածքն մեր և աս-
տուածն քո՝ զիա՞րդ հեթանոսութիւն օգնէ թագա-
ւորաց և դատաւորաց, և հեթանոսութիւն բարձրա-
նայ և փառաւք բազմացեալ[2], իսկ քրիստոնէութիւնն
խոնարհեալ պակասեալ անպատուութեամբք։ Ղին-
կիանոս ասէ. Ցեսանե՞ս, զի հեթանոսութիւն ընդ-
դէմ է քրիստոնէութեան. համբերութեան արգե-
լիչ, զգաստութեան վնասիչ, աստուածպաշտութեան
խափանիչ, հաւատոց օտարացուցիչ, առաքինութեան
լուծիչ, մտաց խաւարիչ, աչաց կուրացուցիչ, ամենայն
բարեգործութեան և խրատուց քանդիչ, շատկերու-
թեան գործակից, անընչութեան խափանիչ, արծաթ-
սիրութեան ցանկացուցիչ, խոնարհութեան հեռա-
ցուցիչ, ամբարտաւանութեան առաջնորդ, սրբու-
թեան անձին աղտեղացուցիչ, զերկս խորհրդոց բնա-
կութիւն, պատերազմաց գործակից. ոչ բանիւք և ոչ
գործօք կրօնիւք և ոչ խորհրդով ամենեքեան զմարդ,
այլ ամենևին 'ի մոլորութիւն ևս մեզ կացուցանէ[3]։
Արդ եթէ հրամայես՝ ասեմ և քրիստոնէութիւնս ևս։

1. Մի օր. վարէս։
2. Մի օր. և հելլենասուրիան բարբ. հայերեն գրեալ։
3. Մի օր. այլ ամենևին մոլորեան և այլամիտս կացուցանէ։

Ոկտաւիոս դատաւորն ասէ. Բազում իմաստութեամբ ոչինչ բարձրագոյն բարբառեցար. այլ մատուցեալ զոհեա աստուածոցն և Ճաշակեա 'ի մսոյն, և թողութիւն առնէ քեզ աստուածն քո. քանզի տեսանեմ զքեզ ամենևին նուազ և գունատ և անզօր, և տանջանաց ոչ կարողանաս համբերել, գուցէ եթէ սկսեալ 'ի քեզ դառն տանջանաց ոչ կարասցես ժուժել, այլ ամօթով 'ի հարկէ զայդ առնես։ Ղինկիանոս ասաց. Թէ արդարև զայդ ասիցէս դու, մանաւանդ լեր քրիստոնեայ և յանձն առնու թագաւորն քո. վասն զի մեծ աստուած արդարութեամբ ծանեար, ապա եթէ հարկանել կամիցի զքեզ թագաւորն քո՝ ոչ մերձեսցին 'ի քեզ տանջանք. զի եթէ կարի տկար իցես՝ միայն լեր հաւատացեալ, քանզի ոչ զօրանայ ամպարշտութիւն տանջանացն 'ի վերայ բարեպաշտութեանն Քրիստոսի։

Ոկտաւիոս դատաւորն ասէ. Ա՛ռէք ուռն և զատամունս դորա փշրեցէք, և սրով զլեզու դորա հատէք. վասն զի հայհոյէ զաստուածսն և արհամարհէ զինքնակալ զթագաւորն։ Եւ դահճացն արարեալ զհրամանսն նորա, և յարմատոյ խլեցին զատամունս նորա։ Իսկ երանելին Ղինկիանոս զարիականն համբերէր վասն Քրիստոսի բարեպաշտութեամբ։ Եւ ասէ ցդատաւորն. Համարիս աստուածս զնոսա, արդ փշրեմ զնոսա և ոչ օգնեն իւրեանց։ Դատաւորն ասէ. Եւ զգլուխս քո 'ի տանջանս իսկ ընկալեալ[1], ընդէ՞ր ոչ օգնեացէ քեզ Քրիստոսն քո։ Ղինկիանոս ասաց. Տեսանէ՞ս, անզգայ, այսքան տանջանաց եկեալ 'ի վերայ իմ և ոչ մերձեցան յիս որպէս դու կիտես։ Արդ տուր ինձ իշխանութիւն և մանրեմ զաստուածսն քո. եթէ կարէն ՀԱՍԵԼ ինձ՝ հաւատամ 'ի նոսա եթէ աստուածք են. ապա եթէ իմ Աստուածն ՀԱՍԱՍ զքեզ՝ հաւատա 'ի նա եթէ ՃՇՄԱՐԻՏ Աստուած է։ Ոկտաւիոս դատաւորն ասէ. Տուեալ եմ քեզ իշխանութիւն 'ի վերայ աստուածոցն։ Եւ առեալ սուրբն Աստուծոյ փայտատ և մանրեաց զաստուածսն նոցա, և զսեղանս նոցա և զպատկերս նոցա քարեղէնս և զբրսկարանս

1. Մի օր. Ի գլխոյ քո այդպիսի փոնջանս ընկալեալ։

նոցա եհեղ. և վաղվաղակի դևքն որ մտեալ էին 'ի կուռս՝ վաղեցին, և ոմն 'ի նոցանէ հարաւ 'ի վերայ իշխանին[1], և մին 'ի բանդապետն, այլ դևք յայլ զօրականսն. և էին ամենեքեան 'ի մեծ նեղութեան և 'ի մոլորութեան[2] 'ի միասին, հաջէին յանդիմանեալք և ասէին. Զի՞ ածէք այսր զսուրբդ Աստուծոյ զՂինկիանոս, զի զմեզ յառաջ քան զժամանակն հալածեսցէ 'ի բնակութենէս։ Եւ անկեալք առ ոտս սրբոյն Ղինկիանոսի և ասեն. Դիտեմք զքեզ, ով ես սուրբդ Ղինկիանէ, ծառայ Աստուծոյ բարձրելոյ։ Եւ սկսաւ երանելին սաստել նոցա և ասել. Որո՞վ պատճառանօք բնակեալ էիք 'ի զոհարանս յայսոսիկ։ Նոքա ասեն. Գտաք զարդարեալ պատկերս քարեղէն՝ յորս ոչ էր անունն Քրիստոսի և ոչ նշան խաչին 'ի վերայ՝ որում նոքա երկիր պագանեն. և գտաք զզոհարանն և զխառնարան յանուն մեր, բնակեցաք ասա. քանզի ուր Աստուած ոչ անուանի և նշան խաչին ոչ կայ 'ի վերայ՝ այն մեր բնակարանն է. վասն այսորիկ աղաչեմք զքեզ, սուրբդ Աստուծոյ, մի՛ հալածեր զմեզ յանդունդս։

Ղինկիանոս ասաց ցբազմութիւնն որ մերձ կային. Զի՞նչ կամիք. կամի՞ք ունել զնոսա Աստուածս և պաշտել զնոսա. տեսանէք զդատաւորն ձեր փրփրեալ զօրութեամբն Քրիստոսի և անկեալ յոտս իմ։ Եւ բազմութիւնն աղաղակէր և ասէր. Մեծ է աստուածն քրիստոնէից, աղաչեմք զքեզ սուրբդ Աստուծոյ Ղինկիանէ, մի՛ թողուր զդեսդ բնակել 'ի քաղաքիս մերում, 'ի կորուստ և յապականութիւն մարդկան։ Եւ զայս լուեալ երանելւոյն Ղինկիանոսի, ամբարձեալ զաչս իւր յերկինս և սկսաւ ասել այսպէս. Տէր իմ Յիսուս Քրիստոս ըստ բազում ողորմութեանդ քում և մարդասիրութեանդ՝ արա յիս զդթութիւն մարդասիրութեան քո. դիտեմ զի յամենայն ժամ լսես ինձ, և հաւատամ զի յառաջ քան զինդրելն իմ տաս՝ մանաւանդ զփրկութեան խնդիրն. և այժմ վասն բազմութեան մերձաւորացս և անարժան ծառայի քո և փառաց քոյոյ աստուածութեանդ՝ հրամայեա պիղծ

1. Մի օր. հարաւ յիշխանն։
2. Մի օր. մոլեգնութիւն... հաջէին։ ջէին, հառաչէին, և դեռ յանդիմանեալ էղէալ ասէին։

հոգւոյս ելանել 'ի մարմնոյ յայսցանէ, քանզի դորձ ձեռաց քո են։ Եւ զայս ասացեալ սրբոյն գոչեցին դևքն մինչև ելանել մարդկան 'ի քաղաքէն՝ որ զպիղծ հոգիսն ունէին. և աղաղակեալ հարեալ զնոսա յերկրի և գոչէին մեծաձայն և ելին այսքն, և սրբեցան մարդիկն 'ի ժամէն յայնմանէ, և եղև ուրախութիւն 'ի քաղաքին յայնմիկ. և բազումք հաւատացին 'ի Տէր [1]։

Եւ պարապեալ սրբոյն Ղինկիանոսի սակաւ ժամանակ մի. և դարձեալ անամօթն սատանայ Թիւրեաց զսիրտ դատաւորին, և պատերազմէր ընդ ծառային Աստուծոյ Ղինկիանոսի։ Եւ հրամայեաց ածել զնա. և 'ի մտանելն նորա ասէ դատաւորն. Խմացար եթէ ամենայն քաղաքս հեռացաւ 'ի զոհիցն վասն քո կախարդութեանդ. և եթէ լուր լիցի այդ Թագաւորին՝ մահապարտ եմք ես և քաղաքս։ Եւ Սիրոդիտոս բանտապետն ասէ ցդատաւորն. Որ ետ մեզ զփրկութիւնս զայս և զերախտաւոր քաղաքիս՝ դարձեալ տանջէլ հրամայես։ Դատաւորն ասէ. Առաջօք արար կախարդելով զմեզ։ Սիրոդիտոս ասէ. Մեծ է Աստուածն քրիստոնէից, և ոչ լինի նմա առաջօք ինչ և նենգութեամբ։ Մի Թերահաւատեր 'ի նմանէ, և խորհիր չար 'ի վերայ ծառայի նորա, զի մի ևս չար ինչ լինիցի քեզ։ Ոկտաւիոս դատաւորն ասէ. Հրամայեմ հատանել զլեզու քո՝ զի մի խօսեսցի, այ Թշուառական։ Ղինկիանոս ասէ. Գոհանամք զքէն Քրիստոս, զի ցուցեր ևս այլ պատերազմող վասն բարեպաշտութեանդ։

Եւ մինչդեռ հատանէին զլեզու բանտապանին, յոգւոց եհան երանելին Ղինկիանոս առ Աստուած. և վաղվաղակի եղև ձայն Տեառն 'ի վերայ դատաւորին, և լուծեալ եղէ յաչաց լուսոյն. և տեսանելով զնա բանտապետին չտեսանելով զլոյս, աղաղակեաց բանտապետն և ասէ. Արդար ես դու Քրիստոս, և ուղիղ դատաստանք քո։ Դատաւորն ասէ. Եղբայր Սիրոդիտոս, հաւանեցո զտէր իմ Ղինկիանոս՝ զի արասցէ աղօթս վասն իմ, զի շատ անիրաւեցայ 'ի ծառայն Աստուծոյ։ Սիրոդիտոս բանտապետն ասէ. Ա՛յ ամե-

1. Մի օր. յաւելու, 'ի Բազմոս. հինգ հազար ընդ այր ընդ և կին։ Ընդունն հաւատացին 'ի Տէր ոգեւ։ Էրբ։

նաթշուառ այր, ոչ ասէի քեզ թէ մի խորհիր չար 'ի վերայ ծառային Աստուծոյ, քանզի Աստուած մեր անյաղթ է. որպէս տեսեր զիս զանարժան լեղու և անհատ խօսելով[1]: Դատաւորն ասէ. Եղբայր Աւիրոդիտէ, ոչ միայն զաչս իմ կորուսի, այլ և սիրտ իմ չարաչար տանջի: Գինկիանոս ասէ. Եթէ կամեսցիս զի ողորմեսցի՝[2] արագ սպան զիս. զի յետ մահուան իմոյ աղաչեցիս զՏէր իմ Յիսուս Քրիստոս և բժշկեսցէ զքեզ. քանզի այլազգ համարձակութիւն ունիմ առ Տէր իմ:

Եւ վաղվաղակի վՀիւ մահու եդ 'ի վերայ նորա, սրով սպանանել զնա. և եկաց սուրբն յաղօթս իբրև ժամ մի: Այսպէս կատարեցաւ սուրբն Աստուծոյ, հատեալ սրով զգլուխն, և զհոգին յանձնեալ Տեառն խաղաղութեամբ: Եւ վաղվաղակի չոգաւ դատաւորն 'ի մարմին երանելւոյն, և անկեալ յերեսս՝ յոգւոյ հանեալ ասէր. Մեղայ, Տէր, մեղայ, և զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ: Եւ վաղվաղակի ետես և բժշկեցաւ 'ի ժամէն յայնմանէ: Եւ առ զնշխարս ոսկերաց սրբոյն և պատեաց 'ի կտաւս սուրբս և եդ 'ի հանգըստարանի, և հաւատալ 'ի Քրիստոս պարապեաց, քահանայիցն բարեպաշտութեամբ օրհնել զԱստուած[3]:

Այս եղև 'ի Գամիրս, յառաջ քան զութ կաղանդացն օգոստոս ամսոյ, 'ի դատաւորութեանն Ոկտաւեայ, և թագաւորութեան մերոյ Յիսուսի Քրիստոսի. ընդ որում փառք և պատիւ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ միշտ և յաւիտեանս:

1. Մի օր. որպէս պէսսը զիս անարժան լեզուաւ և անհամ խօսելով:
2. Մի օր. զի ողորմիցի, արդ սպան:
3. Մի օր. հաւատացեալ մարդեցաւ 'ի Քրիստոս, և պարապէր փահանայից բարեպաշտութեան, փառաւորելով զԱստուած մինչև ցմահ:

ՎԵՐՋ ԱՌԱՋՆՈՑ ՀԱՏՈՐՈՑՆ

ՑԱՆԿ

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԵԱՆՑ Ի ՀԱՏՈՐԻՍ

Վկայաբանութիւն Սրբոյն Աբգայի եպիսկոպոսի և Որմզդանայ և Սաթնի և Բենիամինի Սարկաւագի 1
» Սրբոյն Աբգլմեհէի 6
» Սրբոյն Ադրիանոսի և կնոջ նորա Անիտոլեայ 26
» Սրբոյն Անթանագինեայ եպիսկոպոսի . . 46
» Սրբոյն Ակակիոսի վկայի 68
» Սրբոյն Ակիփսիմեայ և Այլթալայ և Յովսեփայ 89
» Անդրեի Զօրավարի և զօրաց նորա . . 103
» Սրբոյն Անթիմոսի եպիսկոպոսի . . . 113 Eusebius!
» Սրբոյն Անտիոքի՝ անարծաթ բժշկին . . 135
» Սրբոյն Ապողոնի Ճգնաւորի . . . . . 138 Eusebius!
» Սրբոյն Աքքիպպայ և Փիլիմոնի . . . . 144 (Eusebius)
» Սրբոյն Ափրասայ . . . . . 146 ! J. Afra
» Սրբոյն Բաբելայ եպիսկոպոսի 149
» Սրբոյն Մեծին Բաբելայ . . . . . 158 Eusebius! (4 Sept
» Սրբոյն Բագարատայ Տուռոմենայ եպիսկոպոսի 167
» Սրբոյն Բասսայ և որդւոց իւրոց . . . 180
» Սրբոց Վկայիցն Բասսոսի, Եւսեբի, Եւտիքի և Բասլի 188
» Երանելի եպիսկոպոսին Բարդիշոյ . . . 193
» Սրբոյ առաքելոյն Բարդողոմէոսի . . . 200
» Սրբոյն Բարղամու . . . . . 212 Eusebius!
Պատմութիւն վարուց Հայրապետին Բարսղի 220
Վկայաբանութիւն Սրբոյն Գենարիոսի Պենեվենդոյ եպիսկոպոսի 246
» Սրբոյն Գեորգայ զօրավարին 252
» Սրբոյն Գուրիասայ և Սամոնայ . . . 273

Պատմութիւն վարուց Սրբոյն Գրիգորի աստուածաբանի . 278
Այլ պատմութիւն Սրբոյն Գրիգորի աստուածաբանի . . 283
» Սրբոյն Գրիգորի սքանչելագործի . . . 317
Վկայաբանութիւն Սրբոյն Դեմետրիոսի 332
» Սրբոյն Դիոմիդեայ բժշկապետի . . . 350
» Սրբոյն Երենիոսի եպիսկոպոսի . . . 357
» Սրբոյն Երմոնի Կուսի 360
» Սրբոյն Եւգինեայ Կուսի 371
» Սրբոց մարտիրոսացն Եւգինիոսի, Վաղերինոսի, Կանտիտոսի, Ակիւղասայ և Մակարիոսի 390
» Սրբոյն Եւդոքսեայ և Ռոմելի և Նունի և Մակարայ 414
» Սրբոյն Եւստաթէի 422
» Սրբոց Վկայիցն Եւստաւատիոսի, Եւդինիոսի, Աէքսենտիոսի, Մարդարիոսի և Ովբեստի 435
» Սրբոյն Եփիմեայ կուսին 476
» Սրբոց Եօթն Մանկանց 491
» Սրբոյն Թաղղեայ 503
Պատմութիւն վարուց Սրբոյն Թեկղեայ 513
Վկայաբանութիւն Սրբոյն Թէոդորիտեայ քահանային . . 532
» Սրբոյն Թէոդորոսի զինուորին Քրիստոսի 545
» Սրբոյն Թէոդորոսի Կեսարացւոյ . . . 550
» Սրբոյն Թէոդորոսի Սարատելատի . . 569
» Սրբոյն Թէոպոնդոսի եպիսկոպոսի և Թէոնէայ կախարդի 582
» Սրբոյն Թէոփիլոսի և Պատրոնիկէի կնոջ նորա 594
» Սրբոյն Ինդոսի և Դոմնայի 599
» Սրբոյն Լաւրենտիոսի և ընկերաց նորա . 634
» Սրբոյն Կալիստրատոսի և քառասուն և ինն վկայիցն 656
» Սրբոյն Կալիոպեայ վկայի 687
» Սրբոյն Կիրակոսի և մօտ նորին Յուղիտայ 691
» Սրբոյն Կոդրատիոսի 698
Սրբոյն Ղենկիանոսի հարիւրապետի . 715

Eusebius!
Eusebius!
Eusebius!
Eusebius!

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՆԱԽՆԵԱՑ

—

ՎԱՐՔ ԵՒ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆՔ ՍՐԲՈՑ